

ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆԱԿԱԼ

ԿԱՄ

ԱՌԻԻԾԱՐՔԱՅՆ ՀԱՅՈՑ ՏՐԴԱՏԷՍ

ՀԵՂԻՆԱԿ

ՔԱՐԼ ՊՐԷՅԻՆ

ԹԱՐԳՄԱՆԻԶ

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

(ԵՏԱՆ)

Տ Պ Ա Ր Ա Ն  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ  
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ  
ԱՄՔԻԻԽԱՍ — ԼԻՔԱՄԱՄ  
1 9 6 7

# « Հ Ա Յ Կ Ս Է Ր Է Ն Կ Ի Ի Լ Ե Ա Ն »

## Գ Ր Ա Կ Ա Ն Մ Ր Ց Ա Ն Ա Կ

Ինչպէս հաղորդուեցաւ արտասահմանի Հայ մամուլին, ողբացեալ Հայկ Սէրէնկիւլեանի հարազատները, այրին եւ զաւակը, յաւերժացնելու համար իրենց ամուսնոյն եւ հօր յիշատակը, տրամադրած են չորս միլիոն Փրանսական հին Փրանք, տոկոսը ամէն տարի յատկացնելու համար գրական գործի մը հրատարակութեան :

Միտմանակ, ամէն տարի, մրցանակ չահած գործին հրատարակութեան նպաստելու համար՝ այրին յանձն առած է մայր դուստրին վրայ աւելցնել 100.000 Փրանսական հին Փրանք, 100.000 Փրանսական հին Փրանք եւս՝ զաւակը :

Սէրէնկիւլեան ընտանիքին կողմէ Ժիւրիի անդամ նշանակուած են Յովիկ Եղիազարեան, Կ. Մեհեան եւ Ծ. Նարդուհի :

Սէրէնկիւլեան ընտանիքը եւ Ժիւրիի յարմար տեսան «Սէրէնկիւլեան Գրական Մրցանակ»ին հիմնադրամը ղնել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տրամադրութեան տակ, ի պահ կաթողիկոսութեան յարմար դատած դրամատան մէջ, տոկոսը միայն յատկացուելու պայմանով հրատարակութեան :

Մրցանակի արժանացած գործերը միշտ պիտի հրատարակուին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարանին մէջ, Անթիլիաս :

Մրցանակի համար կրնան ընդունուիլ. —

1 — Հայ գրողի մը մէկ գործը, հայերէն, անտիպ :

2 — Հայ գրողի մը մէկ գործը, օտար լեզուով, անտիպ, բայց պայմանով որ վերաբերի հայ մշակոյթին եւ պատմութեան :

3 — Վանքերու մէջ ի պահ դրուած հայերէն ձեռագիրներ :

4 — Օտար հեղինակի մը մէկ գործը, անտիպ, պայմանով որ վերաբերի հայ մշակոյթին եւ պատմութեան :

Մրցանակի համար զրկուած ձեռագիրները պէտք է ներկայացուին մեքենադրուած եւ, ինչպէս օրէնք է, ծածկանունով, բայց զոց պահարանի մը մէջ՝ իսկական անունը :

Մրցանակ չահած հեղինակը կաթողիկոսարանին կը թողու իր գործէն հարիւր օրինակ՝ ապագրուելէ ետք : Անժառանգ գործերը (հին ձեռագիրներ), տըպագրուելէ ետք, կը վաճառուին կաթողիկոսարանին կողմէ, հասոյթը աւելցուելու պայմանով «Սէրէնկիւլեան Գրական Մրցանակ»ի հիմնադրամին վրայ :

Մրցանակ չահած գործերը պիտի կրեն «Հայկ Սէրէնկիւլեան Մատենաշար» մակադրութիւնը :

Մրցանակները կը յայտարարուին ամէն տարի Հոկտեմբերին :

«Հայկ Սէրէնկիւլեան» Գրական առաջին Մրցանակը տրուեցաւ Քարլ Պրէֆին Զուիցերիացի հեղինակին ներկայ վէպին, ըստ ընազրին՝ «Քրիստոս Ինքնակալ», ըստ թարգմանչին՝ «Առիւծաբայն Հայոց Տրդատէս» :

Ներկայ հատորին յաւելուածական այս բաժնին մէջ՝ Ժիւրիի յարմար նկատեց ներկայացնել.

1 — Հայկ Սէրէնկիւլեանի կենսագրութիւնը, որ պիտի տպուի Մրցանակի արժանացած ամէն հատորի մէջ, նկարով :

2 — Հեղինակին կենսագրութիւնը, նկարով :

3 — Թարգմանիչին կենսագրութիւնը, նկարով :

ԺԻՒՐԻ  
ՀԱՅԿ ՍԷՐԷՆԿԻՒԼԵԱՆ  
ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻՆ

## ՀԱՅԿ ԱՆՔԻՆԿԻՒԼԵԱՆ

(1889 — 1963)

Ծնած է 1889 Սեպտեմբերին, Կարին: Իրմէ մեծ՝ եղբայր մը (այժմ մեռած), եւ քոյր մը (այժմ կ'ապրի Մարսէլ): Մէկ տարեկան էր՝ երբ կորսնցուց հայրը:

Նախակրթութիւնը կը ստանայ Արծիւեան վարժարանին մէջ, զոր աւարտելէ ետք կը մտնէ Սանասարեան վարժարան, որու տնօրէններն էին Յմուլեան, Մատթեան եւ Սողկեան:

Ուսանողներուն մէջ մեծ էր Հ.Յ. Դաշնակցութեան հմայքը: Ականաւոր գործիչներ Կարին կու գային, կարճ ժամանակ մը կը մնային ու կը մեկնէին: Եւ հըմայքը կ'աճէր: Միւս կողմէ, Հ.Յ. Դաշնակցութեան օրկանը, «Դրօշակ», կը բողոքաւորէր երիտասարդութեան ազգային զգացումները: Հայկ Սէրէնկիւլեան կը տարուի այս շարժումէն, Սանասարեանի ուսանողութեան օրերէն սկսեալ:

Կարնոյ մէջ Հ.Յ. Դաշնակցութեան մնայուն գործիչն էր Եղիշէ Թոփճեան, որ Հայկի մէջ տեսնելով Հ.Յ. Դաշնակցութեան ապագայ գործիչը՝ կը քաջալերէ, գործի կը մղէ, ամէն արձակուրդի՝ յանձնարարականով մը կը զրկէ Կարնոյ շրջակայ գիւղերը, — այդ շրջանին՝ դեռ 17 տարեկան էր Հայկ:

Փորձի այս շրջանէն ետք՝ Թոփճեան կ'որոշէ Հայկ Սէրէնկիւլեանը զրկել Եւրոպա, որպէսզի հետեւի մանկավարժութեան, եւ ապագային՝ ուսուցիչ դասնայ հայկական բնաշխարհին մէջ: Արդարեւ, երբ Հայկ կ'աւարտէ Սանասարեան վարժարանը, Թոփճեան ուրիշ երկու ընկերներու հետ զինք կը զրկէ Չուիցերիա, ըստ տանձնելով ուսանողութեան ծախքերը:

Շատ ժամանակ չանցած՝ Կարնոյ մէջ կը ծագի Միհրանական շարժումը եւ Թոփճեան զոհ կ'ընթաց դաւադիր գնդակի մը: Թոփճեանի մահը սուգի կը մատնէ Կարնոյ համայն հայութիւնը, իսկ Հայկ Սէրէնկիւլեան եւ ընկերները՝ խոր թըշուուտութեան:

1910-ին՝ Գարօ Փաստրմաճեան կը հասնի Չուիցերիա: Տեսնելով այս երիտասարդներուն թշուառ վիճակը, կը մտածէ դիմել Վարդգէսի եւ Չօհրապի՝ խնդրելով որ զանոնք թոշակաւոր ուսանող նշանակել տան ի հաշիւ թըքական կառավարութեան: Այս յաջողութենէն ետք, Փաստրմաճեան խորհուրդ կու տայ Հայկ Սէրէնկիւլեանի՝ երթալ Նանսէ եւ հետեւիլ գիւղատնտեսութեան:

Նանսէի գիւղատնտեսական վարժարանը կ'աւարտէ 1914-ին: Ուսանողութեան այդ շրջանին՝ գործօն դեր մը կը կատարէ Եւրոպայի Հայ Ուս. Միութեան մէջ:

Նոր աւարտած էր գիւղատնտեսական վարժարանը, երբ կը ծագի առաջին համաշխարհային պատերազմը: Ֆրանսա իրարանցումի մէջ: Ընդհ. գորաշարժ: Հայկ Սէրէնկիւլեան կ'որոշէ վերադառնալ Կարին, ամէն գնով, մօտն ըլլալու համար:



ՀԱՅԿ ԱՆՔԻՆԿԻՒԼԵԱՆ

մօրը, որու հանդէպ պաշտամունքի հասած սէր մը կը տածէր: Հազար դժուարութիւններով կը հասնի Մարտէյլ ու կը մտնէ թրքական շողանաւ մը, թուրք ուսանողներով լեցուած: Սելանիկի նաւահանգիստին մէջ՝ կը հասնի լուրը թէ թուրքիա եւս կը մասնակցի համաշխարհային պատերազմին:

Շողանաւը կը հասնի Պոլիս: Իրրեւ պետական ուսանող, զինուորական տարիքի մէջ, թակարդ ինկած էր: Պոլսոյ մէջ ծանօթներ չունէր, բայց շնորհիւ աղագասէր օրիորդներու օժանդակութեան՝ փախուստ կու տայ, կը պահուրտի եւ հակառակ ոստիկանական հետապնդումներու՝ կ'ողջունէ 1918-ի Զինադադարը:

Վերապրող Դաշնակցական երիտասարդութիւնը կ'իջնէ հրապարակ: Իրենց առաջին դործը՝ վերակազմել կուսակցութիւնը եւ հրատարակել կուսակցութեան օրկանը: Հայկ Սէրէնիկիւեան կ'ընտրուի Կեդր. Կոմիտէի անդամ: Իրեն պաշտօն կը տրուի չըջիլ Պոլսոյ արուարձանները եւ մօտիկ շրջանները, ինչպէս Պրուսա, Մեծնոր զիւղ, Սէօլօզ, Իզմիթ, Արմաշ, Ատափազար, վերակենդանացնելու համար կուսակցութիւնը: Զուէն պատրիարք իրեն կու տայ յանձնարարական մը, զբաղելու համար վերադարձող տարազիրներու ղեկավար գործով եւս:

1919 Յունիսին կը վերադառնայ Պոլիս, ուր կը դուժարուի կուսակցութեան առաջին Պատգ. ժողովը, որու կը ներկայացնէ ընդհ. տեղեկագիր մը յանուն Կեդ. Կոմիտէին:

Խանդավառութեան օրեր: Հետզհետէ կազմուած են Խնամատարական, Որրախնամ մարմիններ, Հայ Կանանց Ընկերութիւն, Հայ Կարմիր Խաչ, Գաղթականաց Յանձնախումբ:

Հայկ Սէրէնիկիւեան դէպի գաւառ իր շրջագայութեան ընթացքին՝ կը գտնէ Արմաշի վանքը կիսաւեր, ընդարձակ հողերը անտէր: Այստեղ գաղափարը կը յըղանայ վանքը վերածել գիւղատնտեսական վարժարանի մը, որրերը փոխադրելով Արմաշ, առաւօտուն՝ դասընթացքի, կէսօրէ ետք՝ գործնական աշխատանքի ծրագրով: Պոլիս վերադարձին՝ ծրագիրը կը ներկայացնէ կուսակցութեան եւ Գաղթականաց Յանձնախումբին:

Այս ծրագիրն է որ կ'ընդունուի միաձայնութեամբ: Խնամատարութեան ընդհ. անօրէն էպլիդաթեան կ'ապահովէ հիմնադրամ մը վարժարանին յարգարժան, բացման եւ այլ ծախքերու համար: Գաղթականաց Յանձնախումբը գիւղատնտեսական վարժարանին անօրէն կը նշանակէ Հայկ Սէրէնիկիւեանը: Կը պատրաստուի ուսուցչական կազմը, 200 տղաք կ'ընտրուին որրանոցներէն, եւ բոլորը միասին Արմաշ կը մեկնին 1919 Սեպտեմբերին:

Յոուն աշխատանք: Վանքը վերածուած է մեղուներու փեթակի մը: Դասաւանդութիւն, դաշտային աշխատանք, փայլուն գործունէութիւն: Հողերը մըշակուած, հարուստ հունձքի մը խոստումը հրճուանք կը պատճառէ, բայց ահա... Քեմալական շարժումը կը սպառնայ:

Պոլիսէն հրահանգ՝ պարպել վանքը եւ տղաքը փոխադրել Պոլիս, թողլով հարուստ հունձքը թուրքերուն:

200 որրեր, ուսուցչական կազմ ու պաշտօնէութիւն կը թողուն Արմաշի գեղեցիկ բարձունքները, կիները ձիերու վրայ, կը վերադառնան Պոլիս:

1920 Սեպտեմբերին որրուած է «այս դպրոցը» փոխադրել Հայաստան: Հայկ Սէրէնիկիւեան կ'առաջնորդէ զանոնք «զէպի երկիր»: Հայկական հողի վրայ հագիւ դրած իրենց ոտքերը, կը հրաւիրէ վար իջնել շողեկառքէն, շարք կազմել, ծունր դնել եւ համբուրել Հայաստանի հողը: Յուզիչ է պահը, տղաքը արցունքով

կ'ողողեն Հայրենի հողը: Երեւանի մէջ, վարչապետ Համօ Օհանջանեան կառավարութեան շէնքին պատշգամէն կ'ողջունէ որբերը եւ բարեգալուստ կը մաղթէ:

Յետոյ որբերը կը դրկուին Նոր-Բայազիտ, ուր կար գիւղատնտեսական վարժարան մը: Հազիւ տեղաւորուած, կը պայթի համայնավարական շարժումը:

Եւ դարձեալ վերադարձ դէպի Պոլիս: Գիւղատնտեսական վարժարանի ծրագիրը անցած է այլեւս պատմութեան:

Պոլսոյ մէջ Հայկ Աէրէնկիւլեան կը նշանակուի Պանտրմայի դպրոցին տնօրէնութեան: Երկար չի տևեր այս աշխատանքը եւս: Յունական պատերազմին ճախողութիւնները, դարձեալ... գաղթ:

Աէրէնկիւլեան կ'անցնի Ռոտտոթօ, որ խճողուած է գաղթականներով: Պատրիարքարանը մասնաւոր գրով մը զինք կը նշանակէ Գաղթականաց Յանձնախումբի տնօրէն, բայց շուտով կը հարկադրուի թողուլ նաեւ Ռոտտոթօն: Ոմանք կ'անցնին Պուլկարիա, ուրիշներ՝ Յունաստան: Գաղթականաց Յանձնախումբը կը տեղափոխուի Տէրէ-Աղաճ:

Այնուհետեւ կը սկսի Սփիւռքի պատմութիւնը:

Հայկ Աէրէնկիւլեան կ'որոշէ ընտանիքով փոխադրուիլ Ճրանաս: Աներջ մահէն ետք՝ ստացած ժառանգութեամբ կը ձեռնարկէ անհատական գործի մը, ազատ ժամերը նուիրելով կուսակցութեան եւ ազգային կեանքին:

1924-ին, Մարտիլիոյ մէջ, իր գործէն դուրս՝ կը զբաղի կուսակցական-կըրթական աշխատանքներով: Անգամ է ուսումնական խորհուրդին: Քաղաքին կեդրոնը եկեղեցի մը ունէին Հայերը: Կողքին կը հիմնուի նախակրթարան մը: Լեւոն Շանթ, որ կը գտնուէր Մոնփելիէ, կը հրաւիրուի Մարսէլ՝ նախակրթարանին տնօրէնութեան: Աէրէնկիւլեան ինք եւս կը ստանձնէ կարգ մը դասեր նոյն նախակրթարանին մէջ, ինչպէս եւ Դպրոցասիրաց վարժարանին մէջ, Աէլանիկէն փոխադրուած: Ստեղծուած է միաժամանակ Հ.Յ.Դ. զօրաւոր կազմ մը, որու Կեդր. Կոմիտէին անգամ է ընտրուած:

Հայաստանի անկախութեան շրջանին, 1919-ին, Փրոֆ. Խաչատուրեան խումբ մը տիկիներ հաւաքելով՝ հիմնած էր «Հայաստանի Կարմիր Խաչի Մարտիլիոյ մասնաճիւղ» մը, որ ժամանակ մը Լուանդազին գործելէ ետք՝ կանգ կ'առնէ 1925-ին: Երեք տարուան դադարէ մը ետք՝ Արշակ Զամալեանի ջանքերով կը վերակազմուի ձեռնարկը, այս անգամ «Արեւմտեան Եւրոպայի Կարմիր Խաչ» անունով:

Հայկ Աէրէնկիւլեան փարեցաւ այս կազմակերպութեան, աշխատեցաւ, նոր մասնաճիւղեր կազմեց եւ տարածեց կնոջական այս կազմակերպութիւնը:

Իր բնակավայրը, Պոմոն արուարձանը, եկեղեցի չունէր: Իր ջանքերով վարձուեցաւ շէնք մը, վերածուեցաւ եկեղեցիի, ուր կը տրուէին նաեւ Հայերէնի դասեր՝ ամէն Հինգշաբթի: Յետագային Պոմոնի ձեռնընկէջ Հայութիւնը ունեցաւ իր եկեղեցին՝ սեփական հողի վրայ, կից՝ ընդարձակ սրահ մը:

Երբ ծագեցաւ երկրորդ համաշխարհային պատերազմը, Հայ համայնավարները ամէն թշնամութիւն ցոյց տուին Դաշնակցական ղեկավարներուն: Աէրէնկիւլեան շատ հետապնդուեցաւ, բայց չի նկատուի Հայու զգացումէ զուրկ այս մարդոց ձեռքը: Պատերազմէն ետք (1945) ընտանիքով փոխադրուեցաւ Փարիզ, ուր սկսաւ աշխատիլ իր զաղափարական կազմակերպութեան համար, իրրեւ Կեդր. Կոմիտէի անդամ:

Իր երազն էր Մշակոյթի Տուն մը, ուր կարելի ըլլար կեդրոնացնել կուսակցական, ազգային, մշակութային բոլոր աշխատանքները: Դարձնել զաղուծին սիրո

տը, գաղութին ուղեղը: Իր այս մտածումը բաժնեցին ընկերները եւ Շրջ. Ժողովի մը մէջ որոշուեցաւ իրականացնել այս ծրագիրը: Ընտրուեցաւ բազմանդամ Յանձնախումբ մը՝ իր նախագահութեամբ:

Այսօր կանգնած է այդ տունը, բայց դեռ ամբողջացած չէր իր երազը, երբ յանկարծաւ մահը վերջ դրաւ իր ծրագիրներուն:

Վերջին անգամ կ'որոնար «Ոսկի Կամուրջ» անունով ծրագրի մը վրայ, զոր հրապարակ նետած էր Նարդունի: Այս ծրագրով խանդավառուած, որոշեւ էր ըստեղծել Հիմնադրամ մը, շարժման մէջ դնելու համար հայ մշակոյթին նուիրեալները, միջոց ու կարելիութիւն ընծայելու նպատակաւ գրողներուն՝ ճամբորդելու համար գաղութէ գաղութ, հաղորդակցութեան մէջ դնելու համար գրողները մէկ երկրէն միւր, իրրեւ նոր առաքեալներ:

Մշակոյթի տունը եւ Ոսկի Կամուրջը իր կեանքին վերջին ցանկութիւնները եղան:

Այսօր, իր հարազատները «Հայկ Աէրէնկիւլեան» Գրական Մրցանակով կը բերեն այդ երկու գաղափարներուն մէկ ուրիշ ձեւ իրագործումը:

ԺԻՒՐԻ  
«ՀԱՅԿ ԱԷՐԷՆԿԻՒԼԵԱՆ»  
ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

## ՀԵՂԻՆԱԿ

### ՔԱՐԼ ՊՐԷՅԻՆ (1880 — 1957)

Ծնած է 1880 Փետրուար 13-ին, Պագէլ (Զուիցերլա)։ Հայրը՝ Ժաբոյ Մարթէն ՊրէՅին, ուսուցիչ եւ Ս. Պետրոս եկեղեցւոյ երգեհոնահար։ Մայրը՝ Աննա Քաթարինա, ծնեալ Շարտ։ Իրմէ մեծ՝ քոյր մը, իրմէ փոքր՝ երեք եղբայրներ։ Երջանիկ եւ բարեկեցիկ ընտանիք մը։

Մանկութեան օրերէն՝ երգեհոնի սիրահար։ Աւարտելէ ետք գիմնազիոնը՝ իր ծննդավայրին մէջ, կը հետեւի պատուածարանութեան գասընթացքի, յաճախելով Պագէլի եւ Պերլինի համալսարանները։ Պլումհարտ, Քիւթթէր եւ Ռակաղ ստեղծած էին շարժում մը, ընկերային կրօնքի բանաձեւով, — Քարլ ՊրէՅին խորապէս կը կրէ այս շարժումին ազդեցութիւնը, եւ մասնաւոր սէր մը ցոյց կու տայ փիլիսոփայութեան, բնական գիտութեանց եւ քաղաքատնտեսական հարցերու։

Ուսման շրջանը տւարտելէ ետք՝ փոխ-ժողովրդապետ կը նշանակուի Ռումլինկէնի շրջանին, յետոյ, Պրեցվիլի, յետոյ՝ Թէննիքէնի։ 1909-ին կ'ամուսնանայ Տորա Օսէրի հետ, որ թոռն է մեծ նկարիչի մը, Ալպէր Անթէր անունով ծանօթ։ Տասնեւմէկ տարի կը մնայ Թէննիքէն, ուր հայր կ'ըլլայ երեք զաւակներու։ Երէջի իր պարտականութեանց նուիրուած, միաժամանակ կը զբաղի զբաղանութեան եւ պատմութեան զործերու ուսումնասիրութեամբ։ Այդ ուսումնասիրութեանց իրբեւ պտուղ՝ կու տայ երկու վէպ. — «Ունթերտրիք», Նիլթր Ունպերվուստէն» (Հարստահարեալ, բայց ոչ պարտեալ), որու նիւթն է գիւղացիական պատերազմ մը, որ տեղի ունեցած է Պագէլի շրջակայքը, եւ երկրորդ՝ «Քրիստոս Իմփերաթոր» (Քրիստոս աշխարհակալ), որու նիւթն է քրիստոնէութեան ծագումն ու ծաւալումը մինչեւ Հայաստան, ուր կը թաղուի Տրդատ, (վէպը կը սկսի Սոսրովի սպանութենէն ետք՝ երբ արեւմուտք կը փակցնեն Տրդատն ու Սոսրովի դուխար, եւ վէպը կը զարգանայ՝ հետեւելով արքայազունին կեանքին մինչեւ թաղուելու թիւն)։ — այս պատճառով՝ Երուանդ Տէր-Անդրէասեան ուզած է իր թարգմանութեան խորագիր տալ «Արիւծարքայն Հայոց Տրդատէս»։

Այս երկրորդ վէպին մէջ ի յայտ կու գայ հեղինակին մտածման եւ երեւակայութեան ուժը, ինչպէս պատմագիտական ու կրօնագիտական ծանօթութեանց իր հարստութիւնը։ 580 էջերու մէջ ներկայացնելով քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը, Քարլ ՊրէՅին կու տայ անհաւատալի մանրամասնութիւններ հուովմէական եւ հայկական պատմութիւններէն, եկեղեցական կազմակերպութիւններէն, կրօնական վարդապետութիւններէն, արուեստի եւ մշակոյթի ժառանգութիւններէն, Մեծն Կոստանդինոսի օրերէն, այն կայսեր՝ որ եկեղեցին առաջնորդեց զվէպի յաղթանակ եւ Քրիստոսը՝ աշխարհակալութեան։ Այս պատմութեան ընթացքին՝ տուած է նաեւ զարաշրջանի բարբերուն եւ հազուսու-կազուսու նկարագրութիւնը։

1918-ին կը նշանակուի երկրորդ ժողովրդապետ Ռիւնի հիւանդանոցին, 1923ին՝ Ռիւնի ամբողջ շրջանին, ուր կը մնայ 23 տարի։ 1946-ին՝ սրտի տագնապներուն հետեւանքով կը կոչուի հանգստեան։ Այս տաղնապներուն՝ ստեղծած



ՔԱՐԼ ՊՐԷՅԻՆ

տառապանքը աւելի եւս կը սաստկանայ, երբ յանկարծամահ կ'ըլլայ իր մէկ զաւակը եւ կը մեռնի կիներ՝ երկար հիւանդութենէ մը ետք:

Իր կեանքի վերջին տարիներուն՝ կ'երթայ Պազէլ, իր ազնկան՝ Հելէնի մօտ, որ ուսուցիչ էր այնտեղ: 1957 Մարտ 13-ին կը մեռնի Պազէլի մէջ, 77 տարեկան:

Գրական տաղանդն ու շնորհքը, զոր ցոյց տուած էր երիտասարդութեան օրերէն սկսեալ, 1923-ին օգտագործեց գրելով Թատերախաղեր, Աստուածաշունչէն ներշնչուած՝ այլ աշխարհական ձեւ տուած, ի պէտս իր ժողովրդապահութեան: 1934-ին հրատարակեց Սակըմ տէր Լամտշաֆթ, ասպետներու անկումի եւ ճորտերու թշուառութեան շրջանէն քաղուած ամանդութիւններով: 1939-ին՝ Տէր Կոստֆրիտէ, ռոմանթիք վէպ մը, ուր կը ներկայացուի Հոմպուրկէրներու վախճանը Փարնսպուրկի, Փրոպուրկի եւ Հոմպուրկի դղեակներու միջավայրին մէջ:

Գրած է նաեւ Հնիքակնօրեայ Մտածումներ>: Իր փիլիսոփայութիւնը կ'արտայայտէր մտածման ուժ մը, որ կը յորդէր, յաճախ, զրիստոնէական հաւատքի սահմաններէն անդին՝ միշտ վերանորոգութեան եւ յեղաշրջման ծարու:

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

ԵՐՈՒԱՆԴ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Երուանդ Տ. Անդրէասեան(\*) ծնած է 1865-ին, Պարտիզակի, ուր ստացած է իր ուսումը: Այն աստիճանի վերջին դաստիարակը զոհարար դիւղաքաղաքը ուսումնական փայլուն շրջան մը կը բոլորէր, մասնաւորապէս Եղիշէ արքայ. Գուրեանի տնօրէնութեան օրերուն:

Տակաւին շատ երիտասարդ, 17 տարեկան, 1882-ին մտաւ ուսուցչական ասպարէզ, որու փայլուն եւ խիստ պատուարեր ներկայացուցիչներէն մին պիտի ըլլար սպազային:

Պարտիզակի մէջ իր պաշտօնավարութեան առաջին տարիներուն աշակերտած են իրեն շ. Արսէն Ղազարեան, Արտաշէս Սերոբեան (ապա Եկեղեցական անունով՝ Մուշեղ Եպոս.), Մկրտիչ Պիլիճեան (ապա Երուսաղէմի պատրիարք Թորգոմ արքայ. Գուշակեան):

Պարտիզակէն ետք, 1890-ին, պաշտօնավարած է Նիկիտիկա, յետոյ մինչեւ 1895 Արմաշի Դպրեւանքը՝ ուր իրեն յանձնուած էր նաեւ Իմաստասիրութեան դասը:

1895-ին կ'անցնէ Պոլիս, եւ կը հաստատուի Սկիւտար, դառնալով լաւագոյն ուսուցիչներէն մին Պէրպէրեան կրթարանին, ուր տասնըմէկ տարի անընդհատ դասաւանդեց, սերունդներու ուսուցանելով մասնաւորաբար հայերէնը իր ոսկեղինիկ գանձերով: Իր աշակերտներուն մէջ կը համբուին բազմաթիւ մտաւորականներ եւ ամէն ասպարէզի անձնաւորութիւններ:

Երկար տարիներ պաշտօնավարած է նաեւ Ղալաթիոյ Կեղրոնական, Սկիւտարի Ս. Խաչ, եւ Գատը-Գիւլի Ազգ. վարժարաններուն մէջ, մինչեւ Զինադադար: Բայց Եր. Տէր Անդրէասեան սահմանափակուած չէ միայն ուսուցչական ասպարէզին մէջ. այսպէս, զրեթէ 1883-1884 թուականէն սկսեալ՝ նուիրուած է նաեւ զրչի ասպարէզին, աշխատակցելով Սիմոն Գարամաճեանի Ընտանիք ամսաթերթին, Եղիա Տէմիրճիպաշեանի Երկրագունդին եւ այն օրերու Արեւելքին, նոյնիսկ Ալաճաճեանի Փռնչին:

1895-ին, երբ Պոլիս փոխադրուեցաւ, սկսաւ աւելի եռանդուն զբաղան աշխատանք մը, մտնելով խմբագրական ասպարէզը, եւ անկէ ի վեր անընդհատ աշխատած է զրեթէ բոլոր թերթերուն եւ պարբերականներուն, մասնաւորաբար Մասիսի, Արեւելքի, Բիւզանդիոնի, Մաղիկի, Մամուլի Էֆֆեարի մէջ: Զինադադարին հրատարակած է Նոր կեանք օրաթերթը մօտաւորապէս տարի մը, ուր հրատարակուեցան ջարդի եւ հարստահարութեանց ամենէն սարսափելի եւ ամենէն թարմ տեղեկատուութիւնները:

(\*) Ինք կը ստորագրէ միշտ այսպէս, բայց կը կարդայ Տէր-Անդրէասեան ուրիշներ՝ Տէրը ամբողջ կը գրեն:



ԵՐՈՒԱՆԴ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ԱՐԿԻՎ  
ՀԱՅԿ ԳՐԱԳԱՐԱՆ  
ՑՈՒՆԳ



Եր. Տէր Անդրէասեան խոր ու Հազուադիւտ Հայերէնագէտ մը, Նոյնքան քաջ Փրանսագէտ մը, ինքնաշխատութեամբ սորված է նաեւ անգլերէն եւ եղած, երկար ատեն, Բիւզանդիոնի մէջ՝ Լոնտոնեան թերթերու քաղաքական լուրերու թարգմանիչը:

Հետաքրքրական պարագայ մը. — Երբ ուսեւեւագիտն պատերազմը ծագեցաւ եւ Պոլսոյ Հայերէն թերթեր երեք օր կը սպասէին՝ եւրոպական թղթարերէն առնելու համար մանրամասնութիւններ, Տէր Անդրէասեան դիտեց որ վիեննական թերթերը օր մը կանուխ կը հասնին: Անմիջապէս սկսաւ աշխատիլ գերմաներէնի, եւ ամիս մը շանցած՝ արդէն սկսած էր Նայէ-Պրայէ-Փոլսէի թարգմտիչը հրամայել իր աշխատած թերթին: Ասիկա յաղթանակ մը եղաւ թերթին համար, այսպէս որ միւս Հայ թերթերը ստիպուեցան գերմանագէտներ փնտոել կարենալ մրցելու համար:

Յետոյ, գերմաներէնը զարգացնելով՝ թարգմանեց Նիցշէի Այսպէս Խօսեցաւ Զրադաշտը, որ ուրիշ շատ մը աշխատութեանց հետ հրոյ ճարակ եղաւ Սկիւտարի հրդեհին (1921):

Ինչ էր որ Հայ ժողովուրդին տուաւ Ֆրանց Վէրֆէլի վերջին նշանաւոր վէպին՝ Մուսա լերան քառասուն օրերու թարգմանութիւնը (երկու հատոր), հպարտ որ կըրցաւ ոչ միայն յաղթահարել գերմանական ոճին դժուարութիւններուն, այլ եւ ընծայել բնագրին համարժէք ճոխ Հայերէն մը, որ եթէ քիչ մը բնագնացական մթութիւն ունի, ատիկա կու գայ Ֆրանց Վէրֆէլի լեզուական արուեստէն:

Հատորներ թարգմանած է նաեւ ծանօթ անգլիացի եւ Փրանսացի հեղինակներէ, որոնց մէջ՝ ամերիկացի քերթող-գրագէտ Էմըսոնի Տիպար մարդիկ շարքէն՝ Նափոլեոնը, Կեօքէն ու Շեքսպիրը, նաև աստրիացի գորպուտի մը՝ Զօֆմայնսթրի «Հայաստանի մէջէն» խիստ շահեկան երկը:

Աշխարհարարի վերածած է նոյնպէս մեր Եարակաճները:

Դէպի Պոլիս Քեմալական ներխուժումին պատճառով, երբ հեռացաւ Վոսփորի ափերէն, նախ հաստատուեցաւ Պուլկարիա, ուրկէ Պոլսոյ Հայերէն թերթերուն տուաւ Ընդ եղեւնեալ յօդուածաշարքը: Ետոյ, ժամանակ մը ուսուցիչ Դպրոցասէրի, Պալքաններէն անցաւ Մարսէյլ: Ետոյ հաստատուեցաւ Լիոն, յետոյ Փարիզ, յետոյ դարձեալ Լիոն, ուր եւ մեռաւ: Իր կեանքի վերջին այս շրջանին աշխատակցեցաւ Հայերէն բազմաթիւ թերթերու՝ Յառաջ, Ազատ հօսք, Հայրենիք, եւն.:

Գործածած է, իբրև ծածկանուն, գլխաւորաբար Ետան (իր անուան ըսկըզբնատառերով), Տարազ (յատկապէս քերականական դասերու համար, Յառաջի մէջ), եւ Ահուրամազդա:

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

### ՓՈՒԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՂԻՆ ԿՈՂՄԷ

Աշխարհի ներկայ մղձաւանջին առաջին օրերուն իսկ, այս նըշանաւոր երկին հայերէնի քարգմանիչը (\*) գաղափարը ունեցաւ ծառայութիւն մը մատուցանել Հայ ժամանակակից գրականութեան, ոչ միայն պարտաւորեալ անգործութեան զարհուրելի տաղտուկէն եւ ընդհանուր ու անհատական մտահոգութիւններէն բոլորովին չընկնելու նպատակով, այլ նաեւ նոր նարակ մը գտնելու համար իր սեւեռուն գաղափարին, — հատոր մը եւս հայացնել օտար գրականութենէն, որ կը գրադի որեւէ ձեւի տակ, հայկական նիւթով մը: Բարեբախտաբար այդ նիւթը վիճակեցաւ ըլլալ մեր ազգային պատմութեան յոյժ հետաքրքրաշարժ մէկ յորուազը, հայ աշխարհին մէջ հեթանոսութեան եւ քրիստոնէութեան վճռական պայքարին ժամանակամիջոցը, որ ծանօթ է Տրդատի, Գրիգոր Լուսաւորչի, Ագաքանգեղոսի գործունէութեամբ: Յառաջաբանս չէ որ քեքեօրէն պիտի խօսի այդ մասին: Օտար հեղինակին վիպերգելու, պատմելու, վարդապետելու հրաշալի ոճը, հայկական ներկայ տառապակոծ միտքին ու տրամադրութիւններուն քէկուզ աննպաստ, եղբերակական հակումին առիւ յանախ չափազանցօրէն նկարչագեղ ու խորիմաստ ոճը, գուցէ երբեմն ծանր գայ ընթերցողներուս նաշակին, բայց կը համարձակիմ հաւաստել իրենց, քէ ոչ միայն իրբեւ նիւթ մեր ցեղային պատմութեան ու նկարագրին, այլ եւ իրբեւ գրական գմայլելի յարդարանքով սեղան մը պիտի ըմբռնեն անոնք:

ԵՏԱՆ

(\*) Այս քարգմանութիւնը կատարուած է երկրորդ աշխարհամարտին սկիզբը, 1939 Հոկտեմբեր 8-էն Դեկտեմբեր 6:

1914-ին, ճմեռնային գիշեր մը, Հայաստանի եւ անոր տառապանքներուն վրայ բանաստեղծութիւն մը ըրաւ բարեկամս Պատուելի Հանս Նիտէֆըր, Թէննիֆընի մէջ, ուր կը գտնուէի այն միջոցին: Այդ բանաստեղծութիւնն է որ քելադրեց ինծի գրի առնել «ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆԱԿԱԼ» կրօնապատմական վիպասանութիւնը (\*): Վաւերական ազդիւրներուն ուսումնասիրութիւնները առաջնորդեցին զիս ա՛լ աւելի ընդարձակելու պարզ պատմութեամբ մը սկզբնական գաղափարը եւ առաջ բերին այսպէս ներկայ վէպը, որ կը ներկայացնէ համաշխարհային, կրօնական, մշակութային եւ պատմական կարելի եղածին չափ նշգրիտ տուեալներու վրայ քրիստոնէութեան յարթանակը յունահռոմէական հին աշխարհին վրայ եւ, ամենէն աւելի, Միհրական կրօնին վրայ՝ որ այնքան նման է քրիստոնէութեան: Հեղինակէն ստեղծուած մէջբերուած դէմքերը եւս նոյն ժամանակի հանգամանքներուն, վարդապետութիւններուն, սովորութիւններուն, կարճատարբերուն, եւ բարբերուն վրայ հիմնուած են: Բոլոր պատմութեամբները եւ նկարագրութեամբները միշտ վէպին յարակից չեն, բայց չէ պատմութեամբ բան մը, որ ռեւէ տեղ եւ ռեւէ ժամանակ պատահած չըլլայ: Բոլոր անձերը ապրած են կամ տակաւին կ'ապրին յիշակին յատուկ ժամանակամիջոցին: Ազդիւրներուն զանազան հակասութիւնները մեծ դժուարութիւններ յարուցին: Ոչ միայն անոր համար որ մին իրբեւ առասպել կը ներկայացնէ շատ բաներ, որոնք ուրիշներուն աչքին իրական հանգամանք ունին: Ոչ միայն ժամանակագրութեան հակասութիւնները, այլ մանաւանդ դժուարին եղաւ անձնատուրութիւններուն տարբեր տարբեր կերպով ներկայացուած ըլլալը ազդիւրներուն մէջ, քանի որ իւրաքանչիւրը իր պատմիչին կողմէ դատուած է այս վերջինիս կրօնական եւ բարոյական տեսակետովը: Իմ

(\*) Վէպ, վիպասանութիւն, վիպերգութիւն — roman, romance -- ընդհանրապէս կը նկատուի շինծու, մուրացածոյ, բոլորովին երեւակայական նիւթի կամ նիւթերու վրայ պատրաստուած գրական աշխատութիւն մը: Բայց իրազուրիւնը այն է, քէ ինչպէս Մուսա Լեւոն Քառասուն Օրերը, Ջուրիցերիացի հեղինակին այս գործն ալ հիմնուած է պատմական ստույգ իրազուրիւններու վրայ, ինչպէս կը բացատրէ հեղինակը:

Մանօթ. Քարգմանողին

ջանքս եղաւ հետեւիլ, կարելի եղածին չափ ճշդիւ, տարբեր նկարագիրներու եւ բարբերու պատմական ու հոգեբանական սկզբունքներուն, եւ մինչեւ անգամ հեթանոսական ինքնակալներն ու անոնց հետեւորդները իրենց կեանքին յարակից պարագաներէն ու միջավայրէն դուրս նկատի առնել: Ուստի ներկայացուած նկարագիրները երեւակայական չեն, այլ անոնք, հնարաւորութեան սահմանին մէջ, ճշմարտութեան վրայ հիմնուած եւ, ըստ այնմ, վերակենդանացուած իրականութիւն են: Նոր բացատրութիւններու հարկ չկայ ի մասին ազդիրներուն: Երեւակայութեան քիչ մը աւելի տեղ տրուած է Միւրական կրօնքին եւ խորհուրդներուն նկարագրութեան, ինչպէս նաեւ Նիկիոյ ժողովին նկարագրութեան առթիւ: Բայց այս մասին ալ չըկայ բան մը որ ըստ ինքեան հիմնուած չըլլայ իր ժամանակին, հատապիտակներուն, վարդապետութիւններուն եւ պարագաներուն վրայ: Միայն քէ, քերես ընթերցողը քիչ մը նեղսրտի Նիկիոյ ժողովին նկարագրականին հեզնութեան մասին, որ արդիւնք է անցեալին ու ներկային իրերուն բազդատութեան առթիւ զգացուած սրտացաւութեան: Հին եւ արդի ժամանակներուն միջեւ շատ մը զուգակշիռներ դժբախտաբար հաւասար նմանօրինակ պատմութիւններու վրայ հիմնուած են: Համաշխարհային թշուառութեան եւ համաշխարհային նորոգութեան պէտքին այս նկարագրականը — «Քրիստոս Ինքնակալ» — իցիւ ընթերցողին պարտադրէ սա տպաւորութիւնը, քէ քրիստոնէական-ընկերակցական դրութեան մը մէջ միայն կարելի է բաժնաւ մեր արդի համաշխարհային թշուառութիւնը: Եւ հեղինակը իր հարուստ միջոցներուն եւ աշխատութեան համար ասկէ աւելի հարուստ վարձք չ'ակնկալեր:

**ՔԱՐԼ ԳՐԷՏԻՆ**

ՊԱԼ 14 Սեպտ. 1920

**ՓՈՒՐԻԿ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԹԱՐԳՄԱՆԻՉԻՆ ԿՈՂՄԷ**

Այս գեղեցիկ ու կազդուրիչ մատենանին ընթերցումը աննախանձաբար պիտի մղէ հետեւողները արդարացնելու թարգմանիչը, որ ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆԱԿԱԼ-ին իբրեւ երկրորդ տիտղոս կիրարկած է իրաւամբ ԱՌԻԻՄԱՐՔԱՅՆ ՀԱՅՈՑ ՏՐԴԱՏԷՍ: Ամբողջ աշխատութեան առանցքը կը կազմէ Հայ յաւիտենական աշխարհին այդ արքեմի դէմքը, լուսաշող դէմքերէ շրջապատուած: Օտար հեղինակի մը կողմէ այնքան շքեղութեամբ եւ հնարաւոր համակրանքով խմբագրուած այս գործը կ'արդարացնէ ինքնին որեւէ հնարաւոր անճշդութիւն, պատմական քէ կրօնական: Ուշի ուշով ընթերցումը մտաւոր ու հոգեկան ճշմարիտ կազդայր մըն է: Փորձեցէք:

**ԵՏԱՆ**

ԳԼՈՒԽ Ա.

## ԱՐՔԱՅՈՐԴԻՆԵՐԸ

«Այլ բնաւ» : — «Բնա՞ւ, հարկաւ բնաւ : Ունեցածնիս կը բաւէ : Երբ բոլոր ձուկերը կերան եւ գինիով թրջեցին երէկ իրիկուն, իշխանը չհարցուց անգամ թէ հատ մը աւելի կամ պակաս բռնած ենք : Զգէ՛, կը բաւէ եղածը : Ուռկանը ներս առ եւ եկուր օգնէ ինծի համբերու համար գուշին մէջ եղածները» : Այսպէս ըսաւ բարձրաձայն Կուինտոս եւ Սեքստոս վարանումով ետեւէն գնաց : Համբեցին պատրաստ ձուկերը : Ապսպրուած երեսունէն չորս պակաս : «Ի՞նչ կը խորհիս, Կուինտոս, կ'ուզե՞ս որ երթանք չորս հատ ալ բռնենք» :

— «Ես, բնաւ երբեք», պատասխանեց Կուինտոս : «Բարի, ծերուկ իշխանը անգամ ինծմէ չի սպասեր որ այդ աստիճան հաւատարիմ ըլլամ, մանաւանդ երբ ինք հոս ալ չէ : Ո՛չ, Սեքստոս, ես չեմ մոռնար մեր վերակացուին մեր կոնակին իջեցուցած հարուածներէն ոչ մին, մեզ անօթի, ծարաւ թողուլը, չեմ մոռնար երբեք, թէ ինչպէս ամէն տարի կոնակս յոգնութենէն թմբած անզգայացած է : Հաւատարմութի՞ւն...» Հեղնեց մաղերը ճերմկած Կուինտոս գերին : Վտիտ, ջղուտ կերպարանք մը, լայն թեզանիքով անհարթ կտուէ թեթեւ թափանցիկ պարեպօտ մը միայն հագած, որ մինչեւ իսկ լայն մազոտ կուրծքը չէր ծածկեր, այլ թիկնեղ ուսերը եւ թեւերուն վերի մասին կէսը միայն, կը հասնէր մինչեւ ծունկեր, սրունքներն ու ոտքերը միայն ազատ ու անխափան աշխատութեան համար : Ծիչդ նոյն ձեւով հագուած էր նաեւ Սեքստոս : Նոյն տարիքը ըլլալու էր ան ալ : Բայց երեսը նուազ խոժոռ էր, լուռ համակերպութիւն ցոյց կու տար աւելի, եւ մերթ ընդ մերթ, աշխատութեան միջոցին, նոյնիսկ լուռ գաղտադողի ծիծաղ մը, կարծես տեսակ մը դինքը երջանկացնող գաղտնիք կը կրէր ներսիդին : Որքան աւելի կը տրտնջար Կուինտոս

իր ճակատագրին վրայ, նոյնքան աւելի լուռ կը մնար Սեքստոս : Միւսը անգամ մըն ալ թափ տուաւ իր գայրոյթին, կատարելապէս վստահ էր որ Սեքստոս պիտի չմատնէ զինքը : Հոս, դուրսը, բաց ծովուն վրայ, ոչ ոք կրնար զիրենք լրտեսել : Որքան յարմար վայր որ ծերուկ զերին իր սիրտին բովանդակ բարկութիւնը թափէ օդին մէջ : Իր տէրը անգամ, ծերունի Իշխան Լիկիւնիոս, թոյլ կը վարուի : Իրաւ, ուղղակի անոր դէմ դանդատ չունի Կուինտոս, բայց ինչո՞ւ աւելի լաւ չի մտահոգուիր իր գերիններուն վիճակով : Ինչո՞ւ այս խածան չունը իրրեւ վերակացու իրենց վրայ դրած է : Թող որ իրենք ի՞նչ արժէք ունին իրենց տիրոջ առջեւ : Ճիշդ այնքան որքան սա ձուկերը : Ոչխարներու պէս մակաղուած, հայրենիքէն բռնի ուժով յափշտակուած, պատառ մը հացով իրրեւ կերակուր, հոտած ձուկի մէջ նետուած : Եթէ պատահի որ այս բոլոր եղածներուն վրայ սանկ ըիչ մը բարկանանք, յանկարծ մեր գլխուն վրայ կը շաչէ խարաղանը, ճիշդ սա գուշին մէջ գտնուած խեղճ կենդանիներուն նման, ձեզի նման, ով ձուկեր : Ու քչիկ մը վեր առաւ ամանին խուփը եւ նայեցաւ, անձայն խորհելով, քանի մը վայրկեան մահուան նուիրուած սա կենդանիներուն տազնապալից եռուզեռին : Յետոյ դարձաւ նայեցաւ Սեքստոս, թէ ինչպէս տաք արցունքներ կաթիլ կաթիլ Կուինտոսի երեսն ի վար եւ խոռուցած ճերմկած մօրուքն ի վար կը հոսէին ձուկերուն դուշին մէջ : Աչքերը վեր կը յառէր եւ բնաւ ամօթ չէր զգար լալուն վրայ : Բաց աչքերով կը նայէր Սեքստոսին ու կը հարցնէր. — «Աս ի՞նչ վիճակ է» : Միւսը — «Կը սիրեմ քեզ, Կուինտոս» : — «Դուն միշտ բարի եղած ես ինձի համար, Սեքստոս» : — «Իցիւ կարենայի օդնել քեզի, Կուինտոս» : — «Ի՞նչ ընելու համար» : — «Ճամարիտ ազատութեան համար եւ ճշմարիտ ու մնացական երջանկութեան համար» : — «Ոչ ոք կրնայ օդնել ինձի : Կրնա՞ս զիս ձերբազատել գերութենէ : Կրնա՞ս դուն զիս հայրենիքս Հայաստան վերադարձնել : Կ'ուզե՞ս որ փախչինք : Վերջապէս հիմա, կը համարձակիս այսպէս ընել վերջապէս» : — Բոլորովին յուզուած Կուինտոս խոշոր բացած ու խուլարկու աչքերով կը հարցնէր այսպէս, դէմքը Սեքստոսին դէմքին ճիշտ դէմը կը բռնէր : Այս վերջինը կ'ըսէր պարզուկ ձեռով մը «Թող իւրաքանչիւրը մնայ ինչ վիճակի մէջ որ կոչուած է : Այս է մեր փրկութիւնը, Կուինտոս : Ես ալ կը տառապիմ քեզի պէս, միեւնոյն տէրը ունիմ գլխուս վրայ, եւ քեզի հետ գերի պիտի մնամ ցմահ : Բայց — Կուինտոս, ես ազատ եմ դարձեալ : Գիտեմ թէ ես աւելի կ'արժեմ քան սա ամանին մէջի ողորմելի կենդանիները : Երկրաւոր հայրենիքը կորցած յափշտակած են ինձմէ, բայց ոչ ոք կրնայ երկինքը կորզել յափշտակել ինձմէ : Մարդիկ կրնան զիս անօթի ձրգել, ծեծել, մեռցնել, կրնամ կուշտ ըլլալ կամ անօթի, կրնամ լռել

ու կրել, կրնամ զուարթ ըլլալ տրամութեան մէջ — կրնամ այս ամէնը շնորհիւ անոր որ կը զօրացնէ զիս, Գրիստոս» :

— «Փսթ» — ձայնեց Կուինտոս եւ չորս կողմը պրպտեց խուզարկու աչքերով : «Գրիստոնեայ ես» : — «Եմ, այո», խոստովանեցաւ Սեքստոս, «գիտեմ, ինձի կրկին կը սպառնայ հալածանք ու մահ : Զիս մի մատներ, Կուինտոս : Բայց ստիկա կրնայ պատահիլ քու կամ ուրիշի մը միջոցաւ : Կ'ուզեմ քրիստոնեայ մնալ, նոյնիսկ եթէ վրայ տամ երկրաւոր կեանքս» :

— «Կարոս Կայսրէն վախնալիք բան մը չունիք քրիստոնեաներըդ հիմա, քանի որ ան մեծ մասով ժամանակը կ'անցընէ Արեւելքի մէջ, եւ կը մտահոգուի ոչ թէ կրօնքներով, այլ իր անձնական գանձով : Բայց քուրմերն ու պաշտօնատարները, արքունի դրանիկներն ու հարուստները, որոնք քրիստոնէին ամէն ծակ ու ծուկ կը խոթեն ու դրամի ետեւէ ինկած են, ինչպէս ամենուն զիտցածն է, անոնք են որ կրկին հալածանք կ'ուզեն քրիստոնէից դէմ : Ու նորէն պիտի զրգոնեն խուժանը, արդէն քաղաքներու մէջ կրկին կը թնդայ սա աղաղակը, թէ ձիարձակարանի մէջ քրիստոնեայ նահատակներու պէտք կայ, առիւծներուն առջեւ նետուելու համար : Եթէ քառասուն տարի առաջուան եղածին պէս ըլլայ, ինչպէս մեր փարախին մէջ տարիքոտ գերիները կը պատմեն» : — «Այդպէս ըլլայ թէ այնպէս, Կուինտոս, եթէ կ'ապրինք՝ Տիրոջը կ'ապրինք, եթէ կը մեռնինք՝ Տիրոջը կը մեռնինք : Ապրինք թէ մեռնինք Տիրոջն ենք : Մենք քրիստոնեաներս պարտաւոր ենք տառապիլ այս աշխարհի մէջ, տառապիլ — յետոյ փառաւորուիլ» : — «Ինչո՞ւ տառապիլ, մեռնիլ հաւատքի մը համար», հարցուց Կուինտոս, զարմանքէն քար կտրած : «Ձգէ սա քրիստոնեաները, բաժնուէ անոնցմէ, մէկդի թող այդ վտանգաւոր հաւատքը : Բաժնուէ անոնցմէ, քանի ժամանակն է» : — Լայնափեռեկ ականողիքով իր ընկերակցին կը յառէր Սեքստոս, եւ յետոյ բնականութեան հանդարտ շեշտով մը հարցուց .

— «Կուինտոս, ի՞նչ կը պատահի եթէ ձուկ մը ջուրէն ցամաք իյնայ» :

Կուինտոս յարգանքով եւ հիացումով լեցուն անդորրաւէտ նայուածք մը փոխանակեց իրրեւ պատասխան : Երկար ատեն իրարու կը նայէին անբարբառ : Լայն մակոյկը մեղմօրէն կը տատանէր այս ու այն կողմը : Մովը ալեկոծ էր : Զկնորսները ներս առած էին իրենց ուռկանները, ու թիակները ձեռք առած, բայց դարձեալ կը դանդաղէր յառաջացումը : Գարնանային այդ իրիկուան փառքը դուրսը եզէական ծովուն վրայ այսօր այն տեսակէն էր, որ մինչեւ իսկ այս մարդիկը իրենց կոչկոռ կապած ձեռքերով եւ դառնացած ու աշխարհէն կորզուած հոգիներով կը զմայլէին այդ փառքին ի տես :

Ձկնորս, մակոյկ, ուռկան, թեւճակ — ամէն ինչ կարծես բոցատարբ  
ուկի էր, որ ծորելի դարձած կը կայծկլտար ջուրին մէջ, եւ շիթ առ  
շիթ կ'իյար թիակներէն վար, կամ նոյն թիակներուն վերիվայրու-  
մով կը փողփողէր լայնչի, կայծակնաձեւ: Հորիդոնը արեւմուտքին  
ծիրանի ծով մըն էր: Անոր անդրադարձ շողարձակութիւն մէջ կը  
փայլատակէր Ակրոպոլիս, եւ Պալլաս Աթենասի անդրին դոպցես կը  
հալէր կրակի մէջ, մինչ կապոյտ գոլորշիներու շուք մը կը դարէր  
Աթէնք քաղաքին վերեւ իր ճերմակ տուններուն ծովով, անհամար  
մեհեաններով, բազիններով, յաղթական կամարներով եւ դրանդինե-  
րով: Արդէն ծիրանին կը սկսէր գունատիլ հորիդոնին վրայ, տակաւ  
ձեւափոխուելով անփայլ կանանչ եւ աղօտ դեղին: Եզէական ծովուն  
եւ բազում ցանուցիւր կղզիներուն վրայ կը ծփար մթնշաղը վայրէջ,  
եւ նաւորդներու շուրջ ամէն ինչ կը վարագուրէր առասպելանման  
մանիշակագոյն դոլորշիով: Գարիւ դարիւ կղզիները կ'անհետէին  
նաւորդներուն աչքերէն, գիշերասոյզ: Ծովը աւելի ալեկոծ, սեւ-  
ցաւ, եւ շատ հեռուն անդին ծովուն մէջ, եզերքէն կը շողային  
Պիրէոն նաւահանդիստին եւ հոն խարսխող մեծ երկկայծ ու  
եռակայծ նաւերուն լոյսերը: Գերիները սթափեցան իրենց հիացու-  
մէն: Հուժկու բազուկներով ձեռք առին թեւճակները, որոնց կը կառ-  
չէին կարչնեղ ու կպչուն: Ուշ մնացած էին: Խարաղանին երկիւղը  
կը մղէր դիրենք վերջին ծայր փութաջանութեան: Ծովը իր կոհակ-  
ներուն ծովով կ'օժանդակէր անոնց: Ուժգին ցնցումով մը ետեւէն  
կը մղուէր մակոյկը: Կուխնտոս անգամ մըն ալ դարմանահար յառե-  
ցաւ դէպի ետեւ: Եւ նշմարեց հեռաստանէն նաւ մը, որ այն միջոցին  
մեծագոյն արագութեամբ կը մօտենար Պիրէոնի: Յետին մթնշաղին  
կը տեսնուէր ակնյայտնի սուր քամիէն հողմուռոյց առագաստը, կար-  
միր լոյսերուն մէջ ողողուած, նաւեղրին երկայնքը հաստատուած  
լապտերներով: Երբ գերիները իրենց մակոյկը տարին կապեցին ի-  
րենց տիրոջը պատկանող ծովածոցին մէջ, շատ մը ալետատան մա-  
կոյկներու միջեւ, եւ ուռկանը աւազին վրայ փռեցին, այն միւս օ-  
տար նաւը այնքան մօտեցած էր, որ երկու ձկնորսները բացայայտ  
կերպով կ'իմանային մարդկային ձայները, որոնք կ'ուղղուէին ի-  
րենց, խնդրելով որ կենան եւ իրենց օգնեն նաւը դէպի ցամաք քա-  
շելու: Խարաղանի երկիւղի պէտք չկար հոս: Իրենց տէրը հարցնող  
օտար եւ ուշ մնացած նաւաստիներու օգնութեան փութալը պարտա-  
կանութիւն էր իրենց համար: Սեքստոսի վախը այն էր միայն որ  
ձուկերը հիմա անբաւական պիտի ըլլային: Նաւը կը յառաջանար:  
Իր լոյսերը շիկակարմիր նշոյլ կ'արձակէին ծովուն վրայ շուրջը-  
լոր, պարելով ալեծածան: Նաւապետը, յառաջակողմին վրայ, հը-  
րամաններ կ'աղաղակէր յետնակողմը կեցող ղեկավարին, նաւուն եր-

կու կողմի թիավարներուն, նաւուն գերիներուն, որոնք կազմ ու  
պատրաստ կեցած էին պարանները նետելու: Կուխնտոս եւ Սեքստոս  
եզերքն էին, կարծես թելի վրայ, որպէսզի յանկարծ պարանները  
բռնեն: Ու եղաւ: Նաւը դարձաւ իրեն վրայ ճոնչելով, հաստարա-  
զուկ թիավարիկներու մղումներով քշուած դէպի առաջ: Աջ կողմը  
տուաւ ծովեզերքին, խարսխները ինկան: Նաւը կեցաւ հաստարեստ,  
իր բոլոր ազոյցներուն եւ յօդերուն վրայ հեծեծելով, մինչ մանրիկ,  
փրփրագին ալեակներ շուրջանակի կը թրջէին դայն, կանոնաւոր վե-  
րադարձներով, կարծես զայրացած, որ խանդարուած էր իրենց քու-  
նը, եւ անգամ մըն ալ ահա կը պարտաւորուէին իրենց յաւիտենա-  
կան նոյնազգի աշխատանքը ստանձնելու, մոլեգնելով նաւուն եւ  
ափունքին դէմ:

Լեկինիոսի գերիները պարանները փաթթեցին ծառի թանձ-  
րութեամբ ամուր, պինդ դերաններու շուրջ: Նաւուն ներսէն դուրս  
եկան քանի մը ճամբորդներ, որոնք մեծ մասամբ երկար վերարկու-  
ներով ծածկուած, ցրուեցան դանազան ուղղութիւններով: Յետոյ  
կնոջական դէմք մը երեւցաւ նաւուն յետնակողմէն, եւ անգամ մըն  
ալ մտահոգ նաւուն շորս կողմը դիտելով բարեւի կեցող նաւաստիներ-  
ուն մէջէն յառաջացաւ դէպի նաւապետը եւ քանի մը խօսք ըսաւ  
անոր: Նաւապետը յունարէն լեզուով Լիկինիոսի մարդիկը կանչեց  
իր մօտ. «Որո՞նք գերիներն էք դուք»: Կուխնտոս եւ Սեքստոս կռակ-  
նին ծռեցին, աջ թեւերնին երկարեցին դէպի իրենց զլուխը ի նշան  
գերիներու ողջոյնի եւ աղաղակեցին, կարծես միարբերան. «Իշխան  
Լիկինիոսի»: Ուղեւորներուն դէմքը, յլխանոցներէն աղատուած,  
նաւուն ճրագներուն ցանցառ լոյսէն լուսաւորուած, ցոյց կու տար  
հիմա խոր լրջութեան մը հետ նաեւ զոհուանակ անակնկալի տպաւո-  
րութիւնը: Կինը կրկին խօսեցաւ նաւապետին: «Նաւ եկէք, պոռաց նա-  
ւապետը, յանուն Ձեւսի, որ օտարականներուն պաշտպանն է եւ օ-  
տարասիրութիւն կը հրամայէ: Ձեր տիրոջ համար յանձնարարու-  
թիւններ ունիմ ձեզի»:

Երբ անոնք կեցան իրեն առջեւ, նաւապետը խօսեցաւ անոնց.  
«Կ'երթաք կ'ըսէք ձեր տիրոջը, Հայաստանէն ճամբորդներ եկած են,  
եւ պաշտպանութիւն եւ ընդունելութիւն կը խնդրեն արքունիքին մէջ  
Լիկինիոսի հօր, որ բարեկամը եղած է Հայաստանի թագաւոր Սոս-  
րով Բ.ի: Բարձրապատիւ ճամբորդները իշխանին կ'աղաչեն որ նաւ  
իջնէ, երկու տղաքներով կին մը պատգարակով առնելու համար: Մի  
մոռնաք ըսելու, թէ ճամբորդները իրենց մօտ ունին կէսը այն ոսկե-  
կուռ բաժակին, զոր ժամանակին Սոսրով թագաւոր նուէր տուած  
է իշխան Լիկինիոսի ի նշան ցկեանս բարեկամութեան: Իշխան Լիկի-



ները կարճ եւ կտրուկ կը հնչէին: Ամէն ինչ շարժումի վրայ էր: Որդին սենեակէ սենեակ կը վազէր վեր վար, տաք պարեգօտը եւ հօրը արծաթեայ դարդեղէններու արկղիկին մէջ պահուած ոսկեկուտ բաժակին կէսը բերելու համար: Վերակացուն կը վազվոտէր բեռնակիրները կանչելու, պատգարակը պատրաստ պահելու եւ տաք ծածկոյթներով հողալու համար: Կուէնտոս եւ Սեքստոս ճրագներ պիտի բերէին եւ իրենք ալ իրրեւ ջահակիր պիտի երթային: Ահա արդէն դաւակը, պատմուճանը ուսերուն վրայ, ոսկի ճարմանդները թեւերուն հանդրձուած, ջղուտ մասերուն վրայ եւ գլուխը հոլանի ներկայացաւ հօրը: Ծերունին, խորախորհուրդ, մինակ կեցած էր դարատափին վրայ բազմաստեղեան շատրուանին առջեւ եւ հետագօտ կը դիտէր ամպերը, մտիկ կ'ընէր ապրիլեան զով քամիին աւրսրփանքը, որ կը խարշափէր պարտէզին ծառերուն մէջ, ականջ կը կախէր թէ արդեօք որեւէ թռչունի կամ կենդանիի ձայնին մէջ իմանալի բան մը կա՞յ: «Ոչ աստղերուն վրայ, ոչ ամպերու մէջ, ոչ ալ քամիին մէջ ո՛չ մէկ դէչ նշան, Լիկինիանոս: Թռչունի ոչ մէկ շըչունչ — երբեք: Բայց, այսուհանդերձ, գաւակս, դժբախտութիւն մը կը զուշակեմ»: Լիկինիանոսի ձեռքէն անշուշտ առաւ կտրուածքէն սրածայր եղած կէս բաժակը եւ դիտեց զայն լրջօրէն: Եւ աւելի լըրջադէմ վերադարձուց զայն իր դաւակին: «Իժբախտութիւն մը պատահած է, կ'ըսեմ, յանկարծօրէն կեանք մը խորտակուած է, բաժակին սա ծայրին պէս: Ի՞նչ կը նշանակէ ասիկա»:

— «Վախճանին սպասենք, հայր, իմ տրամադրութիւնս ալ դէչ է: Բայց եղածը եղած է: Տեսնենք»:

Լիկինիանոս նստաւ ճոխապաճոյճ դեսպակին մէջ, զոր գերիները քիչ առաջ իրեն առջեւ բերած էին, մարմարակերտ սանդուխէն իջնցնելով: Քանի մը վայրկեան եւս ծերունին մտահոգ նայեցաւ կարմրալոյս փայլող թափօրին ետեւէն: Ջահերը կը շողային պայծառերանդ, ծուխը կը դալարէր զուլայ զուլայ, եւ դէպի ետեւ հեռուն կեցող իշխանին կը բերէր կուպրի բարկ հոտը: Վերջապէս Լիկինիոս զղեակ դարձաւ իր մարդոց մօտ, զանոնք եւ մանաւանդ իր կինը, արժանայարգ Իշխանուհին Լիկինիա, հայկազն հիւրերուն մօտալուտ ժամանումին նախապատրաստելու համար: Իշխանին միշտ մտահոգ դէմքը հետզհետէ առաջ կը բերէր տիրադին տրամադրութիւն մը ամէնուն մէջ: Խօսքի նիւթն էր Հայաստան, հոռոմէական կայսրութեան այս վտանգաւոր դաւաճը, որուն նկատմամբ վերջին ատենները ամէն տեսակ զրոյցներ լսուած էին: Պարսկաստանի Շապուհ թագաւորը անգամ մըն ալ կը փափաքէր փորձել հոռոմէական սուրը: Իշխանը սկսաւ կրկին պատմել, թէ ինչպէս ինքը Աւրեղիանոս կայսեր հետ պարտութեան մատնած էր Պալմիրայի Չենոբիա

թագուհին Անտիոքի առջեւ: Ունկնդիրները ուրախութեամբ կը տեսնէին, թէ ինչպէս քիչ մը կը պայծառանար իշխանին ճակատը, անդամներուն շարժումները կը հանդարտէին, եւ սա բառերը հետզհետէ աւելի դիւրասահ, աւելի ուղիղ կու գային. «Չենոբիա... այո, Չենոբիա»: Բառ առ բառ ճիշդ, ինչպէս միշտ, կը պատմէր իշխանը Աւրեղիանոսի յաղթական մուտքը Հոռոմ, թէ ինչպէս Չենոբիա, մարտագող թագուհին, անոր յաղթական կառքին առջեւէն կը քայլեր հետիոտն: Թագուհին ալ կողմէն կը ձիավարէր ինքը Լիկինիոս:

Մինչ այս մինչ այն, Լիկինիանոս ծովափ դացած էր: Իշխանին հրամանով դեսպակը ճիշդ նաւուն կողին դէմ գետեղուեցաւ: Ջահակիրները դեսպակին աջ ու ձախ կողմերը: Միւս ծառաները, վերակացուն գլխաւորութեամբ ետ քաշուեցան մութին մէջ: Լուսողող նաւուն յառաջամասին վրայ կեցած էր նաւապետը, նաւու վերարկուով ծածկուած: Աջ ու ձախ գերիները հրամանի պատրաստ: Երբ Լիկինիանոս յունարէն լեզուով իր ողջոյնը ծովափէն դէպի նաւը արձակեց, եւ հաստ տախտակներով կամրջակին վրայէն շուտաբայլ երեցաւ նաւուն մէջ, բոլոր գինուորներն ու գերիները խոնարհեցան եւ իրենց աջ բազուկը տարածեցին դէպի գլուխ, աղեղնաձեւ: Լիկինիանոս եւս վերարկուով մը պարածածուկ, որ կը պատսպարէր նրբահիւս ոսկեկամարով սպիտակ բուրդէ շքեղ պարեգօտը, ծոծրակն ու թեւերը կը դոցէր, բաց թողլով միայն ծունկերէն սկսեալ ջլապինդ սրունքները, որոնց շուրջ խաչաձեւ կ'ոլորակէր մոյկերուն չորացը: Ոսկեղէն լայն ճարմանդներով պարուրուած մէկ կարչնեղ թեւը վերարկուին տակէն երկարեց նաւապետին իրրեւ ողջոյն, միւս ձեռքը ծածկուած մնաց վերարկուին տակ, բաժակին կէտովը: Երկու մարդիկը մեղմօրէն քանի մը բառեր խօսեցան, յետոյ յանկարծ երկուքն ալ համրացան, որովհետեւ նաւուն յետնակողմէն կը մօտենար այն կինը, վերարկուով եւ գլխանոցով ծածկուած, երեսը մինչեւ աչքերը պահած ճերմակ թափանցիկ քօղի մը ետեւ: Նուրբ կանանչ կաշիէ կապով կօշիկները միայն աչքի կը դարնուէին կերպարանքին ամբողջական քողարկումէն: Բարձրահասակ կառոյցով: Թեւերն ու ձեռքերն ալ վերարկուին տակ թաքնուած: Գնացքը իր կայքին պէս վայելուէ: Ի՞րնէ մութ, բայց ջահերու լոյսով շողջողուն աչքերը լայնաչի, թեթեւակի կամարակապ ճակատին, ստուար յօնքերուն եւ երկայն արտեւանունքին տակ ցոյց կու տային աչքի դարնող լրջութիւն մը, միանգամայն խնդրողական, պրպտող, անսպառօրէն տրամագին բան մը: Նայուածքին այս սրտայոյզ արտայայտութիւնը, գլուխին դիրքը, զոր խօսելու միջոցին թեթեւակի իմն դէպի ետեւ կը հակէր, եւ բովանդակ խորհրդաքօղ կու թիւնը, որով կը մարմնաւորուէր



կինը, իսկոյն գրաւեցին գերի ըրին Լիկինիանոսը, եւ վայրկեանաբար անոր ալ պարտադրեցին այն ակնածանքը, զոր ան շահած էր ամբողջ ճամբորդութեան միջոցին նաւապետէն ու բոլոր նաւորդներէն: Քանի մը քայլ Լիկինիանոսին առջեւ խոնարհեցաւ գլուխի թեթեւ հակումով, եւ այդ պահուն սիրուն կարմիր մը սնգուրեց անոր տփզոյն այտերը: Լիկինիանոս ողջոյնը փոխադարձեց միեւնոյն կերպով լուռ եւ վայելուչ: Առաջին անգամ ըլլալով լսեց ան տեսակ մը խորահնչիւն, հաճելի ներդաշնակութեամբ տողորուած ձայնը, որ անոր ուղղուեցաւ խեցրեկ յունարէնով մը. «դուն իշխան Լիկինիանոսն ես»:

— Ես Լիկինիանոսն եմ, Լիկինիոսի զաւակը:

— Գիտե՞ս արդեօք պատճառը մեր ժամանումին եւ մեր ցանկութեանը:

— Տեղեակ եմ այդ մասին: Նմանապէս հայրս:

— Բաժակը ձեր հետ բերի՞ք:

— Ահաւասիկ: Լիկինիանոս միեւնոյն ատեն աջ թեւը վերարկուէն դուրս հանեց: Մատանեւոր աջին մէջ բռնած էր այն կէսը, որուն սրածայր եղերքը ան, յայտնապէս յուզուած, օտարուհիին դէմ բռնեց, որ միեւնոյն ատեն իր աջ թեւը ազատեց վերարկուէն եւ միւս կէսը մէջտեղ բերաւ: Նաւուն մէջ անշուշտ լուրթիւն կը տիրէր: Նաւաստիները արձաններու պէս կեցած էին: Զահերը շիկակարմիր լոյս մը կը սփռէին այս կարճառօտ, բայց ամէնուն համար անմոռանալի դէպքին վրայ: Մեղմիկ կը ծփար նաւը գիշերային հովին մէջ, ալիքներուն վրայ տարուբեր: Յունաստանի աստեղազարդ երկինքին տակ լուռ, երկուքն ալ մօտալուռ նոր դէպքերու անվրէպ սպասումով, Լիկինիանոս եւ անծանօթուհին բաժակին երկու եզերքը իրարու դէմ բռնեցին, հնութեամբ եւ հայրերուն բարեկամութեամբ սրբազործուած բաժակին: Երկու մասերը անվրէպ իրարու յարմարեցան, սուր ծայրերը կտրուածքին վրայ, եւ կրկին ամբողջութիւն մը կազմեցին, որուն բաժնուած ըլլալը կը մատնուէր միմիայն ձուլուածքին նմանութեան ծամածուռ գիծով: Կէսերուն իրար բերուելու միջոցին, Լիկինիանոսի աչքին զարկաւ իր պաշտպանեալ օտարուհիին լաւ խնամուած ձեռքին ու մատներուն նրբութիւնը: Թէպէտեւ, կարծես պատկառելով կը զգուշանար ամենափոքր շփումէ մը:

— «Կէսերը կը յարմարին, ըսաւ Լիկինիանոս, սրտատրոփ: Բայց արդարեւ ձեզի հանդէպ այս ապացոյցին ալ պէտք չկար: Հիւրամեծարութեան աստուած եւ օտարներու պահապան Զեւսը վկայ թող ըլլայ, եւ իմ հօր անունով, ի՞նչ բախտ քեզ ու քու ընկերներդ առաջնորդեց հոս մեր մօտ. բարի եկաք մեր յարկին տակ, վստահ ե-

ղէք մեր պաշտպանութեան, մեր հոգատարութեան եւ օժանդակութեան վրայ»:

Այս բառերուն վրայ Լիկինիանոս աջ թեւը վեր բարձրացուց եւ ձեռքը իջեցուց իրրեւ պաշտպանութիւն իր հիւրին գլխուն դէմ:

Գրականաբար հիւսուած դեղին մետաքսէ գլխանոցը ետ տարաւ օտարուհին դէպի ծոծրակը, քօղը վեր առաւ կուպրի պէս սեւ մազերուն վրայ, որոնք վանդրածեւ կը ծածանէին լիափարթամ առատութեամբ ճակատին եւ քունքերուն շուրջ եւ գլուխին ետեւը կ'երթային համախոնուիլ շողշողուն արծաթեայ ծամակալով մը զուսպ:

«Լսէ՛, Իշխան Լիկինիանոս, բախտը որ մեզ ձեզի կը բերէ: Ես Արսինէ (Հարսա) եմ, քրմուհի Անահիտ մեծ դիցուհիին, սենեկապանուհի Աշքա (Աշխէն) թագուհիին, խորհրդակալուհիին եւ քրմուհիին արքայական ամուլին, եւ դաստիարակուհիին անոր երկու զաւակներուն, Տրդատին եւ Քօսմիթայի (Սոսրովիդուխտ)»:

Շատ մօտիկը եկած էր Լիկինիանոսին: Այս վերջինը կրնար անոր բերնին շունչը առնել: Երեսը կորսնցուց ունէ գոյն: Սորասոյդ մեծղի աչքերը սառեցուցիչ սարսափի արտայայտութիւն մը առին եւ խոնաւցան: Մընօտ ու բերան սկսան դողդողալ, բայց ամբողջ դէմքին արտայայտութիւնը եւ մարմնին պինդ կեցուածքը անպայման ինքնազսպումի ծանրակիր հաստատամտութիւն մը կը մատնէին: Լիկինիանոս իմացաւ, զգաց թէ ահաւոր պատգամ մը կը սպասէ իրեն: Զգտումը մեծ էր: Արսինէ քիչ մը առաջ ալ դարձեալ մտահոգ նայուածք մը նետած էր դէպի նաւուն յետնակողմը: Համբարար երեսը նորէն դարձուց իր պաշտպանին, եւ արագ արագ, Լիկինիանոսի համար միայն լսելի, եւ միշտ կայծակի արագութեամբ դէպի ետեւ ակնարկելով գողունի, հծծեց. «Սոսրով թագաւոր սպաննուեցաւ: Անոր դիակին վրայ անձնասպան եղաւ թագուհին: Թագաւորը վերջին շունչը չտուած, հրամայեց ծառայի մը միջոցաւ, որ ես իր զաւակներուն հետ ապաստանիմ Լիկինիոս Իշխանին մօտ, այս բաժակը հետս առած, եւ ձեր պաշտպանութիւնը պաղատիմ: Լսէ, Իշխան, տղաքը ոչինչ դիտեն այս ամենքէն: Յետին կտակն է այս մահամերձ հօր, որ այս զարհուրելի դէպքը թաքուն մնայ ձեր մօտ կարելի եղածին չափ երկար ատեն, մինչեւ որ անոնք զարգանան հասակով եւ զօրանան հանդուրժելու համար այս լուրին: Հիմա իրենց մեռնիլը կ'ըլլայ երբ դիտնան: Բայց... ինքզինքդ բռնէ, Իշխան, տար մեզ ձեր բնակարանը: Սաստիկ յոգնած են տղաքը եւ յանկարծակի քնացան: Կ'ուզե՞ս տեսնել դիրենք»:

Շուրջը դարձաւ եւ յառաջացաւ: Լիկինիանոս անոր հետեւեցաւ խոոված ու չփոթ: Բայց ըստ բաւականին Հոռոմայեցի էր ան, եւ կարեկցութեան տպաւորութեան տակ իր ընկերքին մէջ չէր շուա-

րեր: Կ'ըմբռնէր որ ամենէն կարեւոր բանն էր հիմա արթնցող տը-  
ղաքը... վրիպեցնել, ուրիշ կողմ դարձնելով անոնց ուշադրութիւնը:  
Լուս կ'երթար քրմուհիին ետեւէն: Իր ալ ետեւէն նաւապետը: Նա-  
ւուն ետեւի կողմը կամարածեւ կը կորսնար շատ մը ամուր եւ անձ-  
րեւէ անթափանց առապաստի պաստառ մը: Աջ ու ձախ կային խու-  
ցնր նաւապետին եւ նշանաւոր ուղեւորներու համար: Զախ կողմի  
վերջին խուցին դուրսի պատին դէմ յենարանով փայտէ նստարան մը  
կար: Ամբողջ իրիկունը հոս անցուցած էին արքայորդիները, եղ-  
բայր եւ քոյր, երբեմն նստարանին վրայ, երբեմն նաւուն ամենէն  
ետեւի մասին վրայ տեղ մը, ուրկից կը դիտէին վարօք դէպի շէկն,  
նկատելով, թէ ինչպէս ներսէն դործելով հանդերձ նաւը կը կառա-  
վարէր, եւ թէ ինչպէս կոհակները փրփրելով կու գային խորտակ-  
ուիլ անոր դէմ: Կամ հոն դիպուած սնտուկներէն ամենէն վերի սըն-  
տուկին վրայ ելլելով, երկար առեւն կը նստէին, խնդալով, երգելով,  
ձեռք ձեռքի տուած, հոն վերը, կը նայէին հեռուն ծովուն դէպի ետ,  
մինչ քամին կը ցրուէր կը խանդարէր անոնց երկար ոսկեշողի մա-  
զերը եւ կը կարմրցնէր անոնց այտերը: Երբ ողբ կը զովանար, կ'եր-  
թային իրենց խուցէն առնելու իրենց բուրդէ վերարկուները, որոնց  
մէջ կը փաթթուէին: Արեւամուտը, զոր յառաջակողմի նաւակա-  
մուրջին վրայ Արսինէին հետ անձայն յուղումով ու հիացումով դի-  
տած էին, ամենազան երանգներով պսպղուն ծովուն աննկարագրելի  
փառքը, Եզէական ծովուն մուտքը, դարնանային անդրանիկ դալա-  
րութեամբ մօտեցող կղզիներուն տեսքը եւ ապա մուտքը Պիրէոնի  
մէջ մթնշաղէն դուրս ուրուականաձեւ ցայտող Ակրոպոլիսին կողմը  
հեռաձիգ ակնարկը, եւ քաղաքին ու ծովուն շահապետող Աթենաս  
Աստուածուհիին հսկայ արձանը, Ժամանումին, Իշխան Լիկինիոսի  
ընդունելութեան հեռապատկերը, այն իշխանին որուն խնամքին տակ  
իրենց հօր բաղձանքին համաձայն պիտի կրթուէին Յունաստանի  
լեզուով, դեղարուեստով եւ մշակոյթով — այս ամէնը լուրջ տրա-  
մադրութեան մէջ կը պահէր տղաքը: Վերադարձան նոյն փայտէ  
նստարանին վրայ, իրարու շատ մօտիկ կառչած նստան եւ անբար-  
բառ իրարու ձեռք սեղմած: Տակաւին քիչ մը Ժամանակ ունէին դիտե-  
լու դիչերածածուկ ծովը, և ահա Խոսրովիդուխտ(Քօսովիթա)ի գլու-  
խը կրթնցուց եղբորը կուրծքին: Ան իրբեւ պահպանակ իր աջ բա-  
զուկով շաղապատեց քրոջը դիտքը, զայն ամբողջովին առաջ քաշե-  
լով դէպի ինքը: Տամուկ զովութեան, առուզութեան եւ մազի թան-  
կազին օժանելիքի բոյր մը հոսանուտի պէս վերացու դէպի երեսը  
եղբոր, որ խնամոտ սիրով սեղմեց քոյրը իրեն դէմ, բերանն ալ մա-  
զերուն վրայ: Ակն յանդիման կը զգային անոնք, թէ իրենք միասին  
պաշտպանողական մը պիտի սարքէին ընդդէմ օտարին, ընդդէմ նո-

րին ու անստոյգին: Տրդատ, իր բազուկին ամրապինդ կալանքին  
մէջ, ուր ահա կը հանգչէր Խոսրովիդուխտ, պէտք էր զգացնէր իր  
քրոջ, թէ ինք պիտի պաշտպանէր զայն, երբ եւ ուր որ հարկ էր:  
Այսպէս հրամայած էր իրեն արքայափառ հայրը: Իր մտածումները կը  
սուրային, կը ճախրէին ծովէն անդին, դէպի հայրենի տուն անդրա-  
դարձ: Մինչ իր ալ գանգուր մազերով ծփուն գլուխը յուշիկ կը մը-  
խըրճէր քրոջը գլուխին վրայ: Լիկինիանոս ահա առաջին անգամ  
այս վիճակին մէջ կը տեսնէր զանոնք: Արսինէ (Հարսա), Լիկինիա-  
նոս եւ նաւապետը քանի մը վայրկեան կեցան հանդարտօրէն քնացող  
տղոց առջեւ: Ասկէց աւելի գեղեցիկ պատկեր երեքէն ոչ մին երբեք  
տեսած էր: Լուս ու անդորրաւէտ էր անոնց արտայայտութիւնը:  
Խոսրովիդուխտի դէմքը աղօտ կարմիրով մը կը շողար նաւուն ամէ-  
նէն մօտի լապտերին նշոյններուն տակ: Երկայնատէգ արտեւանոն-  
քը գոցուած կափարիչներուն շուրջ ամենախոր հանդարտութեան եւ  
քաղցրազոյն խաղաղութեան արտայայտութիւնը կու տային լեցուն-  
կեկ, ձուածեւ կերպարանքին: Կարմիր, սիրալիւր շրթունքը թեթեւ-  
օրէն բացուած էին, մեղմիկ, բարեբաստիկ ծիծաղ մը հանդիսադրե-  
լով: Անոր գլուխը կը դարէր եղբորը ծնօտին տակ: Արթնաւէն ան-  
միջապէս առաջ Տրդատին արտայայտութիւնը աչքի զարնելու աս-  
տիճան լուրջ եղած էր: Դէմքը ստուերամած: Երթունքը ամուր ի-  
րարու սեղմուած: Աջ ձեռքով բռնած էր Խոսրովիդուխտի գլուխը:  
Լիկինիանոս երբեք պիտի չկրնար այլեւս մոռնալ այս պատկերը:  
Երբեք այլեւս չկրցաւ մոռնալ, թէ ինչպէս Արսինէ ուժով մը նետ-  
ուեցաւ, կարծես անհետեւ վիթխարի բանի մը կողմը, թէ ինչպէս  
ան, մէկ վայրկեանէն միւսը, անընտել ու բիրտ դժկամակութեան  
մը դժգոհանքի մը, և ապա անմիջապէս մայրական քնքանքի եւ գո-  
րովի, ուրախութեան արտայայտութիւն մը ստացաւ, եւ բարձրա-  
ձայն քանիցս տղոց անունը կանչեց: Անոնք քնաթաթախ, վեր առին  
իրենց գլուխները, աչքերնին չփեցին, եւ շուարած իրենց բոլորտիքը  
կը նայէին:

«Լիկինիանոս Իշխանն է, տղաք: Ողջունեցէք զայն սիրով: Մե-  
ղի պիտի տանի իրեն եւ իր հօրը, որ ձեր հօր բարեկամն է: Օն  
ուրեմն, օն, Աթէնք ենք: Հոս յաւիտեան սնտուկներուն մօտ կ'ու-  
ղէք ըլլալ»:

Արդէն երկուքն ալ ցատկած էին, իրենց քոյարկումները կա-  
տարած, եւ ամենայն սիրով խոնարհութիւն ըրին իշխանին, որ ձեռ-  
քերը անոնց երկարեց եւ սրտազինս բարի գալուստ մաղթեց: Աւելի  
երկար բարեմաղթութիւններու չէր բաւեր տակաւին տղոց յունարէ-  
նը, եւ Լիկինիանոս ալ հայերէն չէր գիտեր: Քաղցն ու գիչերային

ցուրտը միւս կողմէ կը ստիպէին ճամբայ ելլել: Հրամաններ արձա-  
պանակեցին: Նաւապետին դերիները մէջտեղ ելան եւ բեռներ ու սըն-  
տուկներ նաւէն դուրս բերին մինչեւ կամրջակին գլուխը, ուրկէց ալ  
Լիկինիանոսին դերիները զանոնք տարին ավուները: Ոչ սակաւ ոսկե-  
զրամ սահեցաւ Արսինէին ձեռքէն հաւատարիմ ու անձնուէր նաւա-  
պետին ձեռքին մէջ, որ ամբողջ ճամբորդութեան միջոցին Արսինէին  
անմոռանալի բարեկամութիւն ցոյց տուած էր բանիւ եւ գործով:  
Ոտարովիդուխտ եւս արտասուաթոր աչքերով հրաժեշտ առաւ անոր-  
մէ: Տրդատ, հպարտ եւ ուղղաբերձ, գործին մէջէն ելաւ, պարզա-  
պէս ձեռքի ամուր սեղմումով մը: Նաւապետին խոստացաւ, երբե-  
մըն երբեմն Պիրէոնի նաւահանդիստը զալ անոր նաւը դիտելու եւ ի-  
րենն այցելելու: Նաւապետը նոյնքան ուժով բռնեց տղուն ձեռքը եւ  
նշանակալից լրջութեամբ մը ըսաւ.

— «Եւ դուն, արքայազուն իշխան, կատարէ փափաքս: Երբ ան-  
գամ մը հօրդ թագաւորութեան երկիրը վերադառնաս, թոյլ տուր  
որ ես, եւ ոչ ուրիշ մը ծովէն կրկին տանիմ քեզ»:

— «Այդպէս պիտի ըլլայ», խոստացաւ Տրդատ հպարտ, խրոխտ  
պատկառանքով մը: Յետոյ սիրալիբ ողջոյններով վարձան դերինե-  
րուն, որոնք խոնարհեցան, ձեռքերնին վեր դէպի գլուխ բարձրացնե-  
լով, եւ լուռ նայելով անոնց ետեւէն մինչեւ որ անոնք մութին մէջ  
անյայտ եղան:

Իշխան Լիկինիոս կրկին ելաւ, դուրս գնաց, կեցաւ տունին առ-  
ջեւ, կը դիտէր զիշերուան մէջ զէպի Պիրէոն, կրկին դուշակական նը-  
շանները կը դիտէր եւ ականջ կը կախէր ձայներու, թէ արդեօք ա-  
նոնք պիտի հաստատե՞ն իր դժբախտ նախազրացումները, եւ վերջա-  
պէս ալ աւելի խոր մտահոգութեամբ վերադարձաւ ներս իր մարդոց  
մօտ: Իշխանին կինը անդորրութեան մարմնացումն էր: Ան ալ ար-  
տասովոր բանի մը կը սպասէր: Բայց անոր հանդարտ հոգիին մէջ  
իրենց ոյժը կորսնցուցած էին նախանշաններն ու գուշակութիւննե-  
րը, աւելորդապաշտութիւնն ու անօգուտ հոգերը: Եպիկտետոս եւ  
Մարկոս Աւրելիոս ի դուր իր սովորական ընթերցումները եղած չէ-  
ին, եւ Աթէնքի մէջ ու Աթէնքէն դուրս պատկառելի իշխանուհին իր  
չատ ծանօթներէն զատ կարողացած էր ճանչնալ մէկէ աւելի քրիս-  
տոնեաներ, որոնք Լիկինեան դերդաստանի լաւագոյն բարեկամնե-  
րուն կը պատկանէին եւ իրենց հաւատքը կը դաւանէին խօսքով ու  
կեանքով: Այս քրիստոնեայ ծանօթներէն ճիշդ այս իրիկուն ներկայ  
էր նաեւ ան, որ իշխանուհին ամենամերձ մտերիմն էր — Պաւղա:  
Լիկինիոս յայտնապէս նշմարած էր որ այդ քրիստոնեայ կնոջ մտեր-  
մութիւնը իրեն հաղորդած էր ոյժ եւ անդորրութիւն միանգամայն:

Այս իրիկուն մասնաւորապէս աւելի սերտ յարուժ մը կը զգար անոր  
հանդէպ: Պաւղա անսեթեւեթ արժանաւորութեամբ բաղմած էր  
մարմարեայ, ճոխապաճոյճ, բեհեղեայ բարձերով դրուադուած  
նստարանի մը վրայ պատին կից, մինչ բոլոր միւս հիւրերը պարզ  
բուրդէ կամ մազէ բաղմոցներու վրայ տեղ բռնած էին, կամ ոտքի  
կեցած, կամ ժուռ կու գային: Կացութեան հեղձութիւն մթնոլորտը  
հետզհետէ ճնշիչ կը դառնար, եւ երբ իշխանը իր կրկնակի փնտրու-  
քէն դարձեալ ներս եկաւ իր հիւրերուն մօտ, յունական զարնանա-  
յին զիշերներու զովութեան հակառակ մարդարտաշող քրտինքով իր  
խոժոռած ճակատին վրայ, եւ մանկական տարտամութեամբ մը  
յայտնի անձկութեամբ երկար ատեն անբարբառ իր կնոջ կը նայէր,  
եւ վերջապէս, ճարը հատած անոր առջեւ կը կենար եւ «Լիկինիա»  
միայն կրնար կանչել վարանոտ, հիւրերը կարծես թաքուն միաձայ-  
նութեամբ մը այն որոշումին կու գային, թէ լաւ պիտի ըլլար այր  
ու կին առանձին ձգել իրենք իրենց, որոնք ծանր դժբախտութեան  
մը լուրի կը սպասէին: Ու մեկնեցան: Ամէնէն վերջը մեկնեցաւ Պաւղա:  
Հուժկու կերպարանքը վերաբերուի մէջ թաքնուած: Ան խաշով ճերմակ  
քօղ մը կը ծփար զլիւսն ու քամակին վերեւ, եւ կը ծփար ձիւնաս-  
պիտակ մազերը, երեսը եւ լեցունկեկ բոլորչի այտերը: Ամուսինը  
քանի մը քայլ իրմէ առաջ կ'երթար: Պաւղա անգամ մըն ալ ետ դար-  
ձաւ նայեցաւ մարմարեայ սանդուխին առաջին աստիճանին վրայէն,  
եւ ակնարկեց Լիկինիային սիրալառ ակնարկներով եւ րաւ հան-  
դարտիկ. «Գիտենք արդէն: Աստուած զինքը սիրողներուն գործը ի  
բարին կը կատարէ»: Այս խօսքին իմաստին վրայ խորհրդածելու  
ժամանակ չունէր տակաւին Լիկինիա: Հանդարտօրէն կու տար իր  
հրամանները: Ծուտով կը կատարուէին անոնք, հիւրերու համար  
սենեակները, լողարանները, հանդերձարաններն ու արդուզարդի  
խուցերը պատրաստուած էին, ուտելիքները կրակի վրայ, բարձր  
հիւրերուն յատուկ սպասուհիները կազմ ու պատրաստ սանտրուած,  
եւ հիւրերու ժամանումին ակնդէտ: Տունի վերիններուն այնչափ մի-  
այն ըսուած էր, թէ արքայորդիներ կը սպասուին: Բայց ամէնքն ալ  
դիտելով իշխանին անհանդստութիւնը, անոր խուզարկու, հետա-  
քրքիբ եւ ուրիշներէն մխիթարութիւն հայցող ակնարկները, զոր  
կ'արձակէր երբեմն այս, երբեմն այն դերիին վրայ, աղէտք մը կը  
գուշակէին: Երբ Լիկինիոս կէս զիշերուան միջոցին դուրս ելաւ  
կրկին դարտափին վրայ, տառապակոծ մարդուն բերնէն սա ակա-  
մայ աղաղակը թռաւ. «Ահա կու գան»: Դահլիճին մէջ արձագանդեց  
ճիշդ, ներսը տունին մէջ, նման ճիշտ այն վրդովիչ հրամաններէն  
մէկուն, զոր հին ժամանակները Լիկինիոս կ'արձակէր Պարսիկնե-  
րուն զէմ: Լիկինիա վազեց գնաց ամուսինին մօտ, որ բռնեց անոր

թեւը, զոր կ'ընծայէր միւսը անխօս: Այսպէս կեցան կճեայ սանդուղիս վրայ, ճիշտ մէջտեղը, երկայն տաքուկ կարմիր բուրդէ վերարկուներու մէջ: Լիկինիոս ձախ ձեռքը կը բռնէր իր երկայն երենեայ գաւազանը ոսկի դունդով: Հոռոմէական ծերակուտական Լիկինիոս: Քաջամարտիկ եւ աներկիւղ ընդդէմ Պարսիկներուն: Բայց հիմա ծերութեան մէջ երկչոտ ու աւելորդապաշտ: Եւ այս տեսակէտով ալ այն ժամանակի հարապատ Հոռոմայեցի մը: Երկչոտ, երբ խնդիրը ազիտաբեր գուշակութիւններու վրայ է, աներկիւղ, երբ դժբախտութիւնը կամ աղէտքը գիշերուան եւ անստուգութեան մէջէն ի լոյս կու գայ: Լիկինիոս հանդարտեցաւ. լուրջ նայուածքով կը չափէր երկինքը վեր վար, բերանը կիսախուփ: Իշխանական ամոլին ետեւը, անբարբառ, գերիններուն եւ դերուհիներուն գեղազարդուած կըրկին շարքը դահլիճին երկու կողմերը, որուն շատրուանները արենակին կը շողային պատի նոր լեցուած լապտերներուն լոյսով: Կու գան: Օղը կրկին կպրահոտ: Պարտէզին ծառաստանը ուրուականաձեւ լուսաղէս: Թռչուններ կը գեղգեղեն խրտչած ու չմորած: Շուները կը կաղկանձեն: Ջահակիրները ահա: Ետեւէն դեսպակը: Ի՞նչ կայ մէջը: Ի՞նչ կու գայ: Լիկինիոս եւ Լիկինիա: Աստուածները կը պահպանեն իրենց գաղտնիքը: Լիկինիոսի տունին առջեւ կը կենայ դեսպակը, ծանր ու մեծ ապագայ պարփակած: Իր հանդարտութեան օրերը անցան գային: Չաւակը, Լիկինիանոս, երեք չորս ուտումով ցատկեց աստիճաններէն վեր: Ենչասպառ շտապով, հաղիւ քանի մը բառ կը կակաղէ, գլուխը բոլորովին ծռած ծնողքին գլուխներուն, պատահածը, եւ — Աստուած հեռի արասցէ — տղաքը պէտք չէ գիտնան: Ահա ուրեմն դժբախտութիւնը: Ժամանողները ընդունուեցան վայելուչ անդորրութեամբ, հոռոմէական ասպնջականութեամբ: Վերակացուին եւ գլխաւոր դերուհիին առաջնորդութեամբ գերինները իրենց գործը կը կատարէին: Լուռ ու արագ ընդունելութիւն մը: Ինչպէս յաճախ կը պատահի կեանքին մէջ, հոս ալ գաւեշտականը անմասն չեղաւ նեղացուցիչէն: Տրդատ, ըստ մանկական սովորութեան, Լիկինիանոսի հետ բարեկամացած էր, դեսպակին մէջ շատ բաներ պատմելով հայրենիքին, ճամբորդութեան եւ ճամբորդութեան նպատակի մասին եւ դանաղան հարցումներ ըրած էր: Երբ ինքզինք իշխանին եւ պատկառելի իշխանուհիին դէմ առ դէմ տեսաւ, սանդուղիին ամէնէն վերի աստիճանին վրայ իր արքայական ծագումին եւ արժանիքին գիտակցութիւնը վրան եկաւ: Մինչ Արսիւնէ եւ Խոսրովի դուխտ վերարկուով եւ գլխանոցով ու քօղով պարածածկուած, նախ լուցին եւ իշխանական ամոլին առջեւ խոնարհեցան, Տրդատ ալ նոյնը ըրաւ, բայց անմիջապէս շտկուեցաւ, գլուխը վեր առաւ, լիւրջական ճերմակ փաղփուռ գդակը դէպի ծածկոցը քը-

չեց, ոսկի մադերուն խուրճը երկու ուսերուն վրայ ծուփ ի ծուփ: Երկնելով, թոթովելով, անհարթ յունարէնով մը, ծեփծեփուն, նեղը ինկած, խօսք կ'ուղղէր իշխանին, եւ կը ներկայացնէր ինքզինքը եւ իրեն ընկերակիցները: Արդարեւ այդ պահուն տեսարանը սիրուն էր եւ գաւեշտական, հայկազուն արքայաճետին տարազը, անոր ապշեցուցիչ խոչորութիւնն ու գեղեցկութիւնը այնքան աղղեց իշխանական ամոլին եւ ամբողջ ընդոճիներուն վրայ, որ ճամբորդութեան ահաւոր պատճառը վայրկեան մը մոռցուեցաւ, եւ Լիկինիոս ինքնին սիրտ ըրաւ իր հիւրերը ընդունելութեան սրահը առաջնորդել առանց յուզումի: Վերարկուները հանեցին: Սպիտակ աքիտի մորթէ կօշիկներով, քրքմագոյն լայն սունապաններով, նեղ թեղանիքով խոր կապոյտ բուրդէ զինուորական վարապան հագած, ոսկի ճարմանդներով եւ կրկնակի շարքով ականակապ գօտին մէջքը, որմէ վար կը կախուէր փղոսկրով ու թանկագին քարերով դրուագուած փայտեայ պատեան մը, ոսկեձոյլ երախակալով դաշտնը — ահա այսպէս կը կանգնէր Հայաստանի դահաժառանգ Իշխանը, յանդուղն, մշտապատրաստ, անխոնջ, զրուցող, հարցասէր: Խոսրովի դուխտ եւս ճերմակ կօշիկ կը կրէր, կապոյտ մետաքսէ դուլպայակերպ սունապան էւ մինչեւ ծունկերը ճերմակ սնդուսէ շողոցուն լօղիկ մը, ազատօրէն վայրարձակ, նեղ թեղանիքով: Դաստակները կը կրէին նրբաքանդակ ոսկի ապարանջաններ, նոնոչիկ ականջները փոքրիկ մեծարժէք օղեր: Ամէն կողմէ կը պսպղար, կը կայծոտէր ոսկեճամուկ ծաճակալը համակ, որ շրջանակի մը պէս գլուխին շուրջ կը համախրունէր ուսերուն վրայ ինկող գորշ մագերուն խուրճը: Խոսրովի դուխտ լուռ էր եւ յայտնապէս յօղնած: Կերպարանքով ու դէմքով այնքան գեղեցիկ քոյր եւ եղբայր, հիմա սակայն, Արսիւնէին մօտ, բոլորովին ի զօրու չէին: Արսիւնէ, մութ կարմիր շրջապոստին մէջ, որ պարանոցէն մինչեւ մոյկերը պարեգօտածեւ լանջքին վրայէն կ'իջնէր, ահա ոտքի վրայ հոն, քրմատեսիլ կերպարանք մը, տեսակ մը դեղնաշորթ երանգով, սեւաւ, մեզմանչոյլ, մեծարաց, խորասույզ աչքերով զիրար շօշափող յոնքերով, երկայն արտուանուներով ալ աւելի գեղանի: Սրակուր քիթը թեթեւակի աղեղնաձեւ, բերանը լայն, բայց փափուկ կեռասապոյն լեցուն շրթունքք հեշտօրէն շարժուն, գոզցեա ողիկ մը խտրուուն, եւ հիմա յոխորտանքի միանդամայն թախճութեան խառնուրդով մը տպաւորուած: Ծաշտարահին մէջ ու շմանցած կարճ ճաշ մը տրուեցաւ: Չափահասները ուրախ էին որ հայ իշխանը միշտ աշխոյժ էր, ամէն նոր տեսած բանին վրայ կը հիանար, այս կամ այն առարկային մասին հարցումներ կ'ընէր եւ կը խօսի իր ապագայ ծրարիչներուն վրայ: Յետոյ ան ալ հետզհետէ

ձայնը քաշեց: Հրաժեշտ առին, եւ Լիկինիա յողնած հիւրերը առաջնորդեց իրենց լոգանքի եւ քունի սենեակները:

Անդամ մըն ալ, այդ միջոցին, իշխանը դուրս ելաւ դարատափին վրայ: Խոր լուսթիւն կը տիրէր դարձեալ պարտէզին վերեւ: Եղեւիններու եւ նոճիներու աղու սրսփիւնը հեռու միակ արտաքին ձայնն էր, յաւիտենապէս նոյնանման կարկաջիւնին հետ շատրուաններուն, որոնք իշխանին ետեւն էին: Ան մինակ կեցած էր խորապէս յուզուած: Պատերուն վրայ քանի մը ճրագներ միայն կ'այրէին իրենց իւզոտ պատրոյցներով: Այս լոյսերուն տժգոյն ճաճանչին տակ իշխանին ձեռքերուն մէջ կը շողային չալին երկու կտորուած կէսերը: Լիկինիանոս մեղմիկ ետեւի կողմէն եկաւ հօրը քով: Լիկինիոսի արեւհեր զլուխը երթալով ալ աւելի կը խորանար դէպի վար: «Լիկինիանոս» — «Հայր»:

— «Բարեկամս Խոսրով ոչ եւս է: Ան օրհասական վիճակին մէջ ինձի վստահեր է իր զաւակները: Ես անոնց հայր պիտի ըլլամ: Անոնք պէտք է որչափ կարելի է երկար ժամանակ հաւատան, թէ իրենց հայրը կ'ապրի: Քու անունովդ, Ձեւս, դուն Աստուած եւ խնամակալ ասանջականութեան իրաւունքին, կ'ուխտէ Լիկինիոս ահա նուիրական եւ սուրբ պահել այս մեր պաշտպանեալները հոգիով եւ մարմինով»: Լիկինիոս լուսթեամբ երկար ատեն աղօտափայլ աստեղազարդ երկինքը կ'ուզէր իր ակնարկը եւ իբրեւ ուխտադրութիւն աջը երկարեց դէպի առաջ: «Լիկինիանոս», ըսաւ դարձեալ մեղմով, սիրազեղ:

— «Հայր»:

— «Լիկինիանոս, ծանր է պարտականութիւնը որուն հարկադրեց զիս Ձեւս: Պէտք է օղնես ինձի: Տուր աջդ: Տեսար դուն, որքան զեղեցիկ են բարեկամիս զաւակները: Թագաւորի մը զաւակներն են անոնք: Քեզի ալ անոնք պէտք է նուիրական եւ անբռնաբարելի ըլլան: Լիկինիանոս: Ուխտէ ինձի ասիկա իմ ձեռքիս մէջ նաեւ — գեղանի քրմուհիին համար: Ուխտէ յանուն Ձեւսի»:

Ահաւոր լրջութեամբ մը Լիկինիանոսի համար ոչ առանց պատճառի մտահոգուած հայրը զաւակին նայեցաւ:

Լիկինիանոս չկարողացաւ սուտ հանել հօրը մտահոգութիւնները, կասկածները: Լուրջ կամք մը եկաւ անոր վրայ եւ ուխտեց իր հօրը ձեռքին մէջ. «Անոնք երեքն ալ նուիրական եւ անբռնաբարելի պիտի ըլլան ինձի»:

ԳԼՈՒԽ Բ.

## Ի Շ Խ Ա Ն Ա Ն Ա Կ

«Լիկինիա» զղեակին մէջ, տունի գերիները զլիսաւորութեամբ իրենց նեղսիրտ վերակացուին, կարելի եղածին չափ անշշուկ եւ անաղմուկ, արշալոյսէն առաջ առտուան դէմ իրենց առաջին աշխատութիւնները կը կատարէին: Մեծ բակին ու պարտէզին մէջ ալ, զղեակէն բաւական հեռու ախոռին ու լուացարանին մէջ — վերջապէս դրդեակին ամէն կողմը կեանք եւ աշխատանք: Բոլոր գերիները այնպէս կը յուսային, որ իշխանն ու իշխանուհին եւ իրենց հիւրերը սոլորականէն աւելի երկար պիտի քնանային, բայց այսօր հաճելի յուսախարութիւն մը ունեցան: Երբ արեւը երկինքին մէջ այնքան միայն հեռու կը կենար որ իր ճառագայթները կրցան հասնիլ զղեակին եւ թափանցել հայազգի հիւրերուն ննջարանները, ահա, մէկէն ի մէկ, ահանջ կտրեցան բոլոր գոյնով գերիները, ճերմակ, դեղին ու սեւ: Դղեակին մէկ բաց պատուհանէն, որ արեւելք ու Ակրոպոլին կը նայէր կը թնդային օտարոտի եղանակներ, հնչիւններ բաղմամբայն նրազարանի մը հանդիսաւոր, ջերմեռանդ, եւ ահա, խոր, առցուն ներդաշնակութեամբ կնոջական ձայն մը, եւ ապա, բոլոր բարձունքը թափ տուող վճիտ ձայն մը աղջկան, ու վերջապէս, բամբ, առնականորէն իսկ հնչեղ ձայն մը պատանեկան: Մատաներուն ամբոխը, այսպէս, կը լսէր գերզոյցուն օրհներգութեան ձեւով, անհասկնալի օտար բառերով առաջին օրհնարանութիւնը Հայերուն, որոնք բուրգէ վերարկուներով պարածածուկ, դէպի ծաղոյ արեւը դարձուցած իրենց երեսները, լոյսի Աստուածին կը մատուցանէին իրենց երկրպագութիւնը:

Պատկառոտ լուսթիւն կը տիրէ ամէն կողմ: Իւրաքանչիւր գե-

րի, մէջ մի դերուհի կեցած էր իր եղած տեղը, մին իր փոշի լաթով, միւսը աւելը ձեռքին մէջ, պարտիզպանը իր բահով, լուացարարուհին տաշտին առջեւ: Կովկիթը թողած էր կթեղը: Եւ իշխանական ամուր իրենց դարդիճներուն մէջ կ'ունկնդրէին, արթնցած, ջերմեռանդութիւն եւ խորին մեծարանք, պատկառանք տողորած էր ամէնքը: Կարծես ուրիշ աշխարհէ մը բղխող ձայներու պէս անաղատներուն վրայ կու գային կը դռնչէին այս եղանակները: Անոնք որ կը համարձակէին աւելի մօտ երթալ եւ գաղտազողի նայիլ այն պատուհանին, կը տեսնէին Արսինէն, անոր աջ կողմը Տրդատը, ձախ կողմը Խոսրովի դուխտը, ամէնքն սլ այնքան ծածկուած, որ անոնց երեսներն ու ձեռքերը միայն տեսանելի էին: Քրմուհիին եւ Խոսրովի դուխտին ջունքներուն վրայ պսպղուն ոսկիի պէս կը ծփային հերքն հոլանի ուսերն ի վար: Նուաղարանին արծաթեայ մասերը եւ անոր թանկագին քարերը կարծես իբրեւ փոխադարձ ողջոյն կը ցոլացնէին արեւուն լոյսը: Գերիները միշտ կը կենային այնպէս լուռ ու մունջ: Մոռցուած էր պարտականութիւն եւ աշխատանք: Բայց ահա պոռչտուն կանչ մը, դերուհիները կը վազվառտեն կը հեռանան, գերիները կը քաշուին տխուր ու քրթմնջելով, եւ անոնց ամէնուն ետեւէն կը հայհոյէր կը կշտամբէր վերակացուն: Երգը ընդհատեցաւ: Հազիւ քանի մը ուժգնապիւրկ ու խարշափուն միահաղոյն սրսփանք մը թելերու եւ վերջացաւ: Մանր աշխատանքը դարձեալ սկսաւ:

Իշխանական ամուր մրափեց կրկին: Բայց վերը հոն պատուհանին առջեւ երկար ատեն կը կենային Արսինէ եւ իր սաները եւ անմուռնջ զմայլանքով կը նայէին մեհեաններուն, կճեայ անդրիններուն, Զեւի եւ Աթենաս Պալլասի հսկայ պատկերներուն, որոնք ահա տիտանակերպ ըմբերձիկ կ'աշտանակէին այդածին կանանչ կապոյտ երկինքին դէմ: Մովուն աղուահամ քամիէն անոնք ստացած էին թեթեւ, ոսկիակերպ դեղին մորթի թեփ մը, որ հիմա արեւուն փայլին մէջ կը շողար, ինչպէս դեռ ոչ դաղում օրեր առաջ իրենց հօրը ապարանին մէջ Արարատի եղեւիները կը շողողային արշալոյսին: Արսինէ անկարող էր պատասխանելու տղոց որեւէ մէկ հարցումին: Օտար էին իրեն համար Աթէնքն ու անոր շրջակայքը: Օտար: Կարող էր սակայն դուշակել որ տղոց մտածումները եւս ակամայ կը սաւառնէին անդին դէպի հայրենի տունը: Յողնած եւ քնատ էին հիմա: Յօժարակամ անասին: Տղան մտաւ քովի հասարակաց ննջարանը, եւ երեքն ալ կրկին քնացան մինչեւ որ արեւը բարձրացաւ կեցաւ երկինքը:

Խոսրովի դուխտ մինչեւ մեռած օրը չմոռցաւ բնաւ երկրորդ արթննալը առաջին առաւօտուն, Լիկինիոսի տունին մէջ: Այս երկ-

րորդ քնանալուն երազ տեսած էր հայրենիքին վրայ, եւ երազին մէջ կրկին տեսաւ թագուհի մայրը: Հաստատապէս կը հաւատար որ ան իրեն փաթթուեցաւ եւ երազին մէջ կ'ուզէր սարսափահար սրբել արցունքները որոնք մայրիկին աչքերէն իր երեսին վրայ կը հոսէին եւ կրակի պէս կ'այրէին: Երազի այդ պահուն ձեռքի շարժումի մը առտեն Արսինէի դուխտին դպաւ, որ արթնցաւ, բայց այնքան շուտ եղաւ այս ամէնը որ Խոսրովի դուխտ հազիւ ժամանակ ունեցաւ Արսինէն ճանչնալու, որ արդէն հաղուած քնացող աղջկան վրայ ինկած, անոր դուխտը իր երկու ձեռքերուն մէջ առած, բերանը կը համբուրէր ուժգին սիրով եւ անոր երեսը կը թրջէր տաք արցունքներով: Արսինէ ուշի ուշով իր սիրական սանին երազը կ'լմանար, եւ կը տեսնէր, թէ ինչպէս Խոսրովի դուխտին խոշոր, թուխ աչքերը հայրենակարօտ արցունքներով կ'ողողուէին: Բայց այնքան շատ նորութիւններ կային հիմա իրեն շուրջը, որ բնականաբար մինչեւ վերջը հայրենի երգիքին վրայ պիտի չմտածէր աղջիկը: Զարմանալու շատ բաներ կային լողանքի սենեակին մէջ: Իշխան Տրդատին կը ծառայէր լողանքի պետը իր մանաբաժինին մէջ: Առանց հաղուելու իջաւ մարմարեայ աստիճաններէն եւ հեշտադին խողտանքով ջուրին մէջ լուացուելու միջոցին իսկ, իր յունարէնին ներածին չափ կը հարցնէր նըշանակութիւնը լողարանին սա կամ նա կազմութիւններուն, զարդարանքներուն, գերիներու ծագումին եւ տարիքին մասին, եւ հրամաններ կ'արձակէր սպասաւորներուն, որպէս թէ տարիներէ ի վեր այդ տունին իշխանը ըլլար: Քովի սենեակին մէջ ղետեղուած էր փափուկ մորթերէ թանկարժէք բազմոցը, որուն վրայ չփռեցաւ եւ օժուեցաւ իշխանը մինչեւ որ այլեւս ինք ալ յագեցաւ: Որքան մեծ եղաւ իր գոհունակութիւնը, երբ իր սենեակին ծառան իմացուց իրեն, թէ տակաւին մինչեւ հիմա բնաւ ձեռք չէր անցուցած մարմինի եւ անդամներու այսքան ոյժ եւ ղեղեցկութիւն, և տեսած չէր այսքան մարմարազոյն մորթի բնական ճկունութիւն եւ կակղութիւն: Խոսրովի դուխտ նախ չուզեց որ Արսինէն տարբեր մէկը լուայ ու յարգարէ գինքը: Ծիշող երէկուան պէս հաղուած, երեքն ալ միասին մտան ճաշասրահ: Հոն նստած էին արդէն իշխանն ու իշխանուհին, և գորովոտ խնամածութեամբ ամէն ինչ լրացուցած էին իրենց պաշտպաններուն դիւրութեան համար: Իշխանը հրամայեց բերել ճաշը եւ մարդ ղրկեց Լիկինիանոսը կանչելու: Գերին դառնալով իմացուց, թէ իշխանը տակաւին կը քնանայ: Մերակուտականին դէմքին վրայ զայրոյթի եւ շուարումի մութ կարմիր մը քաշուեցաւ: Կապոյտ պարեգօտով գերիները բերին փոքրիկ եռոտանի սեղանիկները արծաթեայ սպասներով եւ դրին իւրաքանչիւրին առջեւ: Այնպէս մը եղաւ ինք-



դէն իր «Բարեկամ»ը եղած էր: Հայր Լիկինիոս հայրական հոգածութեամբ կրները կ'առաջնորդէր Սիւնազարդ Ճեմելիքին մարմարեայ աստիճաններէն վար, ճամբան բռնելով Թեսէոսի մեհեանին, Օտէոնին, Դիոնիսեան թատրոնին եւ Ձիարձակարանին, եւ ապա Իլիսոսի հովիտին մէջէն դէպի տուն: Բայց Լիկինիանոս Հայ գահաժառանգը մինակ կը պտըտցնէր կը տանէր նեղ, ցից, խորափիտ, նենդ ճամբէն, Ակրոպոլիսէն Ողիմպական Ձեւի կոթողները, Ատրիանոսի Դուռնէն դէպի հարաւակոյսը բերդաժայռին, յետոյ Դիոնիսական Թատրոնէն մինչեւ քաղաք: Ամէն լեզուներով ու տարազներով անապարող մարդոց կոհակին մէջէն, քերելով անթիւ անհամար մեհեաններ, բազիններ եւ դիւցական արձաններ, հրաշագեղ դրանդիններէ եւ կոթողաբերձ սրահներէ անցնելով, կրկին հասան «Լիկինիա» դղեակը: Տպաւորութիւններու շրջանը կոյսը, տաքուկ, քնաբեր, մեղմախառն օդը այնքան վարակած էին տղաքը, որ դժուարաւ այլեւս կրցան համբերել մինչեւ վերջանալը առատ ճաշին, քնանալէ առաջ: Լիկինիա պէտք չէր բաժնուեր տղոց մօտէն: Խոսքովիդուխտ անոր թեւէն չէր դատուեր, Տրդատն ալ կապուած էր Լիկինիանոսի, եւ ամէնէն վերջը կու գար ծերակուտականը: Երբ Խոսքովիդուխտ անկողին մտաւ, հրամայական շեշտով մը կանչեց իշխանին եւ անոր զուկին, որ իրեն մօտ դան նստին: Անոնք քովի սենեակն էին Տրդատին մօտ:

Լիկինիանոս յօժարակամ եւ սիրով շուտ մը եկաւ, իսկ հայրը քիչ մը վարանոտ, իր դինուորական դէմքը քիչ մը շփոթած, որովհետեւ ճիշտ այդ պահուն Արսինէ հրամայեց աղջկան աղօթել: Խոսքովիդուխտ ելաւ նստաւ եւ աղօթեց հայերէն լեզուով, զոր Արսինէ վերջը թարգմանեց հիւրընկալներուն:

Միեր, մութ գեշերն ահա կ'առաքելի գաւակներդ: Քու գորութիւնդ քոզ պահէ մեզ չար ոգիներէն: Լոյսդ շիջաւ, սակայն դուն չես քնանար, Եւ ամպերուն ու գիշերուան մէջէն քու աչքդ կը ծագի: Միմ միւսին ետեւէն, քանգի աչքեր ունի քիւր: Քու գաւակդ, ես, անոնց մէկուն միայն հովանի կը խնդրեմ: Ինչ որ դէմ է քու լոյսին, խօսք կամ խորհուրդ Եւ կամ գործ: Խորտակէ խլէ շնորհիւդ, որ դու միայն ես մաքուր: Հազար ունի սկանջներ, որ կը լսեն ամէն մաղթանք: Բայց իմ մաղթանքս անոնցմէ մէկուն միայն քոզ երթայ:

Խոսքովիդուխտին վերջին բառերը քովնսի ուժեղ ձայներէն կու տրուեցան, անոնցմէ կրկնուելով: Տրդատ կը պահանջէր ուժ-

դին, որ հիւրերը իր ննջասենեակը երթան: Ամէնքն ալ հիմա հոն գացին: Տրդատ մեծ ջերմեանով թեամբ նստած կ'աղօթէր, ձեռքերը ծունկերուն վրայ, ծալած, մինչ իր խոշոր աչքերը չորս կողմէն ներկաները կը շափէր կը շափչփէր:

Ով Թիսքրա, բարի արուեստի գիշերավար, հովիւդ ոսկի երամակին, Երկինգէն իսկ հեռի եթէ ինձի երեւնա, գորութիւն ես ինձի, Երբ մութ գիշերն իսկ հասնի, չար ոգիներն ալ շրջապահ: Քու մեղմիկ շոգդ իմ շրջակայքս կ'ապահովէ անվտանգ: Դիշերուան մէջ առաջին, փախչելուն մէջ վերջինն ես դուն, Միերի արեւափայլ օրուան եւ անմահ փայլէն առաջ: Խոնարհ ըրէ զիս, եւ շնորհէ որ անհետիւմ Միերի առջեւ, Արիացուր որ քեզի պէս յաղթանակեմ գիշերուան: Եթէ մամբաս աւարտեմ, գոր ինձ չափով տուաւ Մագդա (Աստուած)

Մի մոռնար զիս, եթէ բարի գործած եմ: Անոյ՛ք երագով մը այս աշխարհէն վերացուր զիս, Որ գերդ աստղիկ պրննազարդեմ Ահուրայի քանցքին եզրը:

Երբ անոնք խոր քունի մէջ ընկղմած էին, Լիկինիոս ընտանիքը Արսինէին հետ տակաւին միասին նստած էին մինչեւ կէս գիշեր: Որովհետեւ հիմա պէտք էր որ խօսուի այս մասին, ինչ որ ծածկուած պիտի մնար տղոցմէ ցաւալի նախատեսութեամբ: Լիկինիա եւ Արսինէ պատերու շուրջ պատրաստուած լայն մարմարեայ նստարաններէն մէկուն վրայ բազմած էին: Մետաքսեայ թանձր բարձեր, գեղարուեստական նմոյշներով: Կիներուն ոտքերը, տնական մուճակներով ծածկուած, կը հանդէպէին կենդանի մազոտ մորթերու վրայ: Իրենց առջեւ փոքր եռոտանի մը սեղանի մը սեւ մարմարեայ սպասով, կանանչ կարմիր պսպղուն մարգարտի զաղտակուրէ: Միւրուն ունկնաւոր կուժ մը Լիկինիանոսի մօտը, որ կը մատուակէր եւ ժամանակ առ ժամանակ կ'ուզէր լեցնել ըրեւելի գաւաթները: Արծաթէ սկահակի մէջ արմաւներ, չորցած խաղողի հատիկներ, թուղեր եւ ամէնազղի քաղցրաւենիներ: Լիկինիոս եւ Լիկինիանոս թուխ պարեզօտներու մէջ նստած էին սեղանիկին ետեւը բրդալից կակուղ անկողնակներու վրայ: Սեղանին կեղրոնին վերեւ պատէն դուրս կ'երկարէր արուրեայ թեւ մը, որ պատին վրայ հաստատուած, բնական կարչնեղ դիրքով նրբակազմ ձեռքին մէջ իւղով լեցուն աման մը կը կրէր այրող պատրոյդով: Լոյսը ըստ բաւականին պայծառ էր փոքր խոմբը լուսաւորելու համար, բայց սրահին աւելի ընդարձակ մասը



աղօս էր: Պատուհաններուն բարձր բացուածքին դէմ սրահը կրկին լուսաւոր էր նորածագ լուսնկային շողով, այնպէս որ բոլոր առարկաները եւ յատակին մարմարեայ արձանները յայտնապէս ճանաչելի էին պատերուն վրայ կամ խորշերուն մէջ, եւ իրենց պաղ, ճերմակ կարմրորակ ցոլքով այս իրիկուն ա՛լ աւելի կը շատցնէին ահռելի տպաւորութիւնը, զոր Արսինէի պատմութիւնը կը ներգործէր իր ասպնջականներուն վրայ: Իր պատմելու ձեւը, իրեն համար ոչ այնքան վարժ յունարէն լեզուին առանց քաշուելու զործածութիւնը, շնորհալի չեղտը, դէմքին եւ շարժուձեւերուն ակամայ ներդաշնակութիւնը խօսած ատեն, Սոսրովի սպանութեան եւ թագուհիին անձնասպանութեան նման զարհուրելի դէպքին լրատուութեան առթիւ անգամ անայլայլ պահած, ինքնագոյնութիւնն ու պատկառանքը, — այս ամէնը այս իրիկուն Լիկինիոսի ընտանիքին մէջ կ'աւելցնէր այն բարձր տպաւորութիւնը, զոր Արսինէ իր մէջտեղ ելլելէն ի վեր առաջ բերած էր ամբողջ տունին մէջ:

Հայր Լիկինիոս տակաւին շատ լաւ կը յիշէր Վաղարշապատը եւ արքունական դղեակը, եւ տարիներէ ի վեր բաւականէն ա՛լ աւելի անոնց մասին պատմած էր իրեններուն: Արսինէ այս պատճառաւ անոնց նկարագրութեան մասին վերապահ դատուեցաւ ուշիմութեամբ, և առանց այլեւայլի կը պատմէր միայն դժբախտութեան ընթացքը, ցորչափ ծանօթ էր իրեն: Թագաւորի մահէն հազիւ երկու տարի առաջ իշխան Անակ Պարսկաստանէն Հայաստան վերադարձաւ: Հայ էր ան: Շատ հարուստ Պարսկաստանի թագաւոր Շապուհի արքունիքին մէջ տարիներով մեծ յարգ կը վայելէր և ամէնէն աւելի վստահելի պաշտօնը կը վարէր: Ոչ ոք չիտէր, թէ ինչու յանկարծ թողուց այդքան բարձր եւ շահաւէտ դիրքը եւ դարձաւ նորէն Հայաստան եկաւ: Բայց Հայոց թագաւորին ուղղեալ պարսից թագաւորէն յանձնարարական ունէր: Շապուհ անոր մէջ կը խոստանար ցկեանս խաղաղութեամբ ապրիլ Սոսրովի հետ, եւ իրեն կը յանձնարարէր Անակը իբրեւ յայտնի ականաւոր խորհրդական որ որքան ուշիմ նոյնքան ալ հաւատարիմ է: Սոսրով, որովհետեւ սակաւախօս մարդ էր, Շապուհի այս տեղեկութիւնները իրեն միայն վերապահեց, հող նուիրեց Անակին, եւ զայն բարեկամ եւ խորհրդակից ըրաւ իրեն: Անակ չքեղ զղեակ մը շինել տուաւ իրեն համար Վաղարշապատի մօտերը: Ամէն օր կ'երթար կու գար մեր պալատը, եւ օրէ օր աւելի ազդեցութիւն եւ դիրք կը ստանար:

— «Այդ մարդուն արտաքին տեսքը ի՞նչպէս էր», ընդմիջեց իշխանը:

— «Սոչոր ու երկայն, վտիտ: Դեղին դէմք մը, բերանը լայն,

եւ միշտ քիչ մը կը խնդար, շատ ալ կը սուլէր ինքն իրեն: Իր պղզտիկ, սեւ աչքերը խկապէս անհաճոյ էին ինծի, Սոսրովի դուրստ կը վախնար զայն տեսնելուն, թագուհին ալ անոր հանդէպ անձկութիւն մը կ'ունենար, որուն պատճառը չէր զիտեր: Բայց իրօք շատ խելացի էր: Կը պարտաւորուէր մտիկ ընել, երբ Պարսկաստանի և Շապուհ թագաւորին մասին պատմութիւններ կ'ընէր: Ասոր համար էր, որ դահաժառանգը մասնաւորապէս կապուած էր անոր: Սակայն հետզհետէ միւս նախարարները կռահեցին որ սուտ խօսող էր ան: Իմացուցին թագաւորին: Անօրուտ: Սոսրով կոյր էր: Սնդրեցին թագուհիէն, ինծի աղաչեցին, քրմապետին եւ ուրիշներու ալ, որպէսզի ազդարարենք թագաւորին: Արդէն երկար ատենէ ի վեր զաղտնի կերպով հսկողութեան տակ առած էինք թագաւորը: Աչքի զարնող բան մը չպատահեցաւ: Անակ ամէն ժամանակ աւելի վստահութիւն կը վայելէր թագաւորին մօտ: Բայց ոչ մէկուն միտքէն երբեք չէր անցած թագաւորին դէմ ոճիրի մը զապախարը: Անվախ կերպով ձի նստած որսի կ'երթար ընկերակցութեամբ իր մասնաւոր ծառային եւ քանի մը պահնորդներու, դղեակէն ոչ շատ հեռի: Գահաժառանգը կու լար կը պոռար, ոտքերը զետիւնը կը զարնէր որ զինքն ալ հետը չի տանիր: Սոսրովի դուրստ հայրիկին կտեւէն ձեռքով նշան կ'ընէր ու կը նայէր մինչև որ ալ չէր տեսներ: Թագուհին եւս հրաժեշտէն վերջ կրկին ննջարանը դառնալով պառկեցաւ. անհանդիստ էր: Առաւօտը արդէն անցած էր եւ կէս օրը մօտեցած: Պայծառ շողջողուն ձիւնոտ օր մըն էր եւ շատ ցուրտ: Թագուհին անկողինէն ելլելով մեզի եկաւ տղոց խաղասրահը: Բայց խիստ նեղուած: Չէր զիտեր ինչու: Գէշ երազ տեսած չէր, գէշ նախանշան մը չէր պատահած: Սակայն օդի կը կարօտէր: Տղոց կողմը կ'երթար, իմ կողմս կու գար, դարձեալ քայլ կ'առնէր դէպի պատուհանը, կը բանար եւ երկար ատեն դուրս կը նայէր: Եւ այսպէս քանիցս: Վերջին վար նայելուն ետ դարձաւ նայեցաւ, կաւիճի պէս ճերմկած էր, ցնորածի աչքերով զիս կը դիտէր, այնպիսի ակնարկով մը զոր երբեք, երբեք պիտի չկրնամ մոռնալ, քովէս անցաւ աճապարանքով, նոյն նման ակնարկով տրդոցն ալ ակնարկեց, որոնք զետիւնը նստած իրենց խաղին վրայ կը ծռէին, եւ դուրս ելաւ շտապելով: Տղաքը եւ ես այլեւս զինքը չտեսանք: Իր ակնարկը կ'ըսէր ինծի, «տղոց մօտ մնացիր, դժբախտութիւն մը եկած է թագաւորին զլիտուն»: Գրեթէ ժամ մը վերջ քրմապետը զիս ճաշի վրայէն կանչեց: Յանուն Միհրի, ինչ լուր կայ արդեօք: Գուրմը, վաղելէն շնչասպառ, թասուն, նշան ըրաւ ինծի որ կտեւէն երթամ: Փութացինք մտանք ամէնէն մօտի սենեակը: Մոզը միշտ հանդարտ է եւ պաղարիւն: Ու երբ երեսս նայեցաւ, անգամ մը

միայն, ամուր, ինչպէս ան միայն կրնայ ըլլալ իր վճիտ կանանչ ան- նկարագրելի աչքերով, ես ալ ինքզինքս շկորսնցուցի, ոյժս պահե- ցի և հանդարտօրէն ականջ կախեցի անոր: Ամէնքն ալ, անհող անվախ, ձիերով վացեր են անտառ, առջեւէն թագաւորը, և ահա յանկարծ նետ մը շէնց շկահեց աջ կողմէն անտառէն դուրս: Սոսկալի ճիչ մը արձակելով թագաւորը գետին ինկաւ: Բոլոր միւսները ձիերէն ի- ջան: Մողը դուրս քաշեց հանեց նետը: Ամէնքն ալ տեսնելով թագա- ւորին սարսափելի ցաւը, ստուգեցին որ թունաւոր էր նետը: Թագա- ւորը գիտցաւ իսկոյն, թէ պիտի մեռնէր, եւ հրամայեց կանչել թա- գուհին, բայց այնպէս մը որ տղաքը բան մը չհասկնան: Արդ, թա- գուհին, ինչպէս ըսի, իմ քովէն ածապարանքով մեկնելէ վերջ էր սպասաւորին հետ դուրս ելեր է: Մինչ այս մինչ այն, թագաւորը մեծ դժուարութեամբ մողին հետ ամէնէն կարեւոր միջոցներուն վը- րայ խորհրդակցեր է: Հիմա հասկցած էր թագաւորը, թէ զաղտնի դաւադրութեան մը դոհը եղած էր: Իր սառած ձեռքին մէջ մովպետը, քրմապետը և Օտա իշխան ուխտեցին արիւնին վրէժը լուծել, անոր դիակը զղեակ բերուելէն անմիջապէս վերջ, զղեակը ամրացնել և պա- հակներով լեցնել ամէն կողմ: Գանձը զղեակին մէջ զաղտնի տեղ մը հողին տակ պիտի ծածկէին նմանապէս թագն ու մականը, տղաքն ալ կարելի եղածին չափ շուտ պիտի բերէին Իշխան Լիկինիօսի, եւ թա- գաւորին հուսկ ողջոյնը անոր պիտի հաղորդէի, վերջին աղաչանքո- վը որ տղաքը իր եղած տեղը գաստիարակէ, եթէ կարելի է օղնէ որ գահաժառանգը ձեռք ձգէ պահն ու պետութիւնը»: Հոս Արսինէ ընդ- հատեց պատմութիւնը, որովհետեւ Լիկինիա դեփղեղին եղած էր եւ արտասուաթոր աչքերով եւ զարհուրանքով պատմողին կը նայէր: Իշխանը ձեռքով աչքերը ծածկած էր, խոր լուծեան մէջ թաղուե- լով: Լիկինիանոս աջ արմուկը կրթնցուց եւ սեւ զոռուզ գլուխը մա- տանիով զարդարուն ձեռքին մէջ գրաւ: Կարծես օժանդակի մը պէտք ունէր իր ստոյիկեան անդորրութիւնը վերստանալու համար, ձեռքը առաւ բիւրեղեայ բաժակը եւ քանիցս գլուխը թոթուելով խորունկ, երկար ձեռով քամեց դայն:

Քրմուհին քանի մը վայրկեան շմորածի պէս էր: Կարմիր լուսամտիօրին շուքին մէջ նստաւ, դունատ, գոց կափարիչներուն եր- կար թարթիչները շուք կը ձգէին աչքերուն վրայ, այնպէս որ Լիկինի- իանոսի թուեցաւ, թէ ամէնէն գեղեցիկ կիներն էր որուն երբեք հան- դիպած ըլլար:

Արսինէ շարունակեց. «Մահամերձ թագաւորին վերջին տառա- պանքն էր ճամբայ մը գտնել իր մահը զաւակներէն ծածկել, որպէսզի անոնք կարենային իրենց երիտասարդական յառաջիկայ տարիները անվրդով երջանկութեան մէջ ապրիլ, մինչեւ որ տարիքով եւ ուժով

զօրացած, կամաց կամաց պատրաստուին հանդուրժել թագաւորին ահաւոր վախճանին: Ուստի այս խորհուրդը տուաւ: Երկար առնէ ի վեր իբր թէ ինքը եւ թագուհին — եւ աս ալ ճշմարիտ է — ծրագիր ունեցած ըլլան տղաքը ինծի հետ Աթէնք զրկել, յունարէն լեզուով եւ դաստիարակութեամբ կրթելու համար: Ուստի տղոց այսպէս պէտք է հաւատացնել, թէ թագաւորը կարելի եղածին չափ շուտ որ- սորդութենէն դառնալով պարտաւորուեր է բանակը ի վէն կոչել, ո- րովհետեւ լուր առեր է թէ Պարսիկները կը մօտենան, թէ պատերազմ ծագած է: Տղաքը պէտք է իր կամքին համաձայն փախցնել տանիլ Յունաստան»: «Եւ ասիկա սուտ ալ չէ» ըսեր է քովը գտնուողնե- րուն, ցաւերուն մէջ խնդալով հանդերձ, «ճշմարիտ չէ՞ միթէ, բարե- կամներ, պատերազմ ծագած է, Անակ նենդեց ինծի, վրէժի ժամը հասած է: Ով Միհր», աղօթեց, «հիմա դուն ոսկի կառքովդ կ'եր- թաս երկինքին մէջ: Քու հազար աչքերդ կը տեսնեն ահա քու ծառադ արիւնյուայ, քու հազար ականջներդ կը լսեն իմ վերջին հռնդիւնս: Ով դուն վրէժի խնդիր ամէն անիրաւութեան, արիւնիս վրէժը լուծէ, օրհնէ զաւակս եւ իր վրէժը: Օղնէ ինծի: Կը սոսկամ կը սարսոսմ նեղ, բարակ մազէ կամուրջին (ճինվաթ) առջեւ, հողիս հեռաւոր ճամբուն առջեւ: Օղնէ ինծի որ մտնեմ լոյսի յաւիտենական թագա- ւորութեան մէջ: Մի ըսէք զաւակներուս, թէ ես մեռած եմ, ըսէք իրենց, թէ կ'ապրիմ, կ'ապրիմ յաւիտեան»: Թագաւորը քուրմին ձեռքը վնտոնեց, եւ մոպետը խօսեցաւ անոր հետ ու աղօթեց, մին- չեւ որ թագուհին թաւալեցաւ ինկաւ թագաւորին կուրծքին վրայ: Ամէնքն ալ քովնտի քաշուած էին յարգանքով: Ոչ մէկ ձայն կը լըս- ուէր: Թագուհին ոչ մէկ արցունք լացած էր: Թագաւորին հռնդիւնը անոր հետեւորդ մարդիկը միայն կը լսէին դողահար: Յանկարծ լը- ուեց ամէն ինչ: Երկու մարմինները անշարժ ահա քով քովի, թա- գուհին թագաւորին զունատած գլուխը ձախ թեւին մէջ բռնած էր, եւ իր մարմինով թագաւորին մարմինը ծածկած: Ոչ մէկ շշուճ այլեւս: Եւ թագուհին ալ չէր շարժեր այլեւս: Անտառին զահանդա- կան լուծեան մէջ կը սահէին վայրկեանները: Ահա, այդ պահուն մովպետը (քրմապետը) յառաջացաւ, ծոցեցաւ դէպի թագուհին եւ վայրկեան մը, անձայն ու քարացած, ծոնկի եկաւ, ձեռքերը երե- սին վրայ սեղմած: Յետոյ ոտքի կանդնեցաւ, թագուհին կուրծքին վրայ բան մը ընելու ձեւը առաւ, եւ թագաւորին հետեւորդներուն տարաւ ախնոտ դաշոյնը, որով թագուհին անձայն, լուիկ մնջիկ ծա- կած էր իր սիրտը, թագաւորին դիակին վրայ: Հիմա ամէնքն ալ խո- նարհեցան արքայական դիակներուն վրայ, գետին նետուեցան եւ կը հեկեկային որբացած զաւակներու պէս: Մովպետ սակայն յորդորեց զանոնք քաջ ըլլալ, եւ իբրեւ Միհրի որդիներ տուալ եւ իր խօսքին

զալ: Յայտնեց անոնց թագաւորին կտակը: Յետոյ ամէնքը հաւաքուեցան մեռեալներուն շուրջ մովպետին կամքին համաձայն, որ թագաւորին տաք արիւնէն առնելով թրջնց իր եւ իւրաքանչիւրին աջը անով, եւ ամէնքն ալ ապա երգում ըրին յանուն Ահուրայի, յանուն Միհրի եւ Անահիտի պահել բռնել ինչ որ պատուիրած էր թագաւորը, եւ օգնել պահապանանդին, որ առնէ թագն ու պետութիւնը: Գիակեալները հսկողութեան տակ առնուեցան, զինուոր կանչուեցաւ, եւ Մովպետ ինօրի գալով պատմեց ամէն բան: Մէկ ժամ վերջ տղաքն ու ես կառքին մէջ էինք, որ թշնամիին առջեւէն փախչելու համար ամէնէն հարկաւոր դործիքն էր: Հեծեալներու հօր դոււարտակ մը մեզի հետեւեցաւ մինչեւ ծով, եւ սպասեց մինչեւ որ տեղաւորուեցանք նաւուն մէջ, որ մեզ ձկնի բերաւ»:

— «Եւ բնաւ բան մը չհասկցա՞ն», դռնեցին կարծես միաբերան երեք սարսափահար ունկնդիրները:

— «Ոչինչ: Անոնք կը հաւատան, թէ թագուհին թագաւորին հրամանին վրայ անոր ետեւէն ճամբայ ելած է, կարեւոր կարգադրութիւններ ընելու համար: Անոնք կը հաւատան, թէ իրենց հայրը, ինչպէս միշտ, պիտի յաղթէ եւ զիրենք պիտի կանչէ նորէն, երբ իրենց յունարէն կրթութիւնը աւարտեն: Ով դիք լուսոյ, ինչ ճամբորդութիւն: Պարտաւոր էի կեղծել խաբել, ես որ բնաւ սուտ խօսած չեմ եւ պիտի շիտխմ: Տարիներ ամբողջ կը դոռայ հիմա պատերազմ, եւ թագաւորը կ'ապրի, իմ թագաւորը կ'ապրի եւ իմ թագուհիս, այնքան ճշմարիտ որքան կ'ապրին Միհր ու Անահիտ»:

Ներկաները ոտքի ելան սկիւմայ տխուր շարժումով մը: «Թուն պարտաւոր ես տղաքը միշտ այդ հաւատքին վրայ պահել, ծածկելով անոնցմէ դարհուրելի վիշտը», ըսաւ իշխանը:

«Բայց ի՞նչպէս պիտի կրնանք հոս տունին եւ քաղաքին մէջ պաղտնի պահել: Մանաւանդ այն ատեն, երբ արքայական ամուսնի սպանութեան լուրը Հոռոմէական պետութեան երկիրներուն եւ քաղաքներուն մէջ փութով իմացուի»:

— «Շատ պարզ է, դիտել տուաւ Լիկինիանոս, տղաքը բնաւ միմակ չենք ձգեր, Արսինէ միշտ անոնց կ'ընկերանայ, կամ մեզմէ իւրաքանչիւրը: Տունին բարեկամներուն կը պատմենք ամէն բան եւ հրահանդ կը տրուի այս մասին որ յաւէտ լուռ մնան տղոց առջեւ»:

— «Պէտք է այդպէս ըլլայ, պէտք է», դռնեց Արսինէ իրօրս ակում: «Թագաւորը զիտէր շատ լաւ թէ ինչո՞ւ այդպէս կը փափաքէր: Ես դիտեմ, թէ անոր հոգին ինչպէս կ'ապուած էր իր դաւանանքէն, եւ Տրդատին սիրտն ալ՝ հօրը: Պէտք չէ որ իմանայ, նաեւ ոչ ալ Խոսրովիդուխտ, կը փճանան եթէ հակառակը պատահի, որովհետեւ երկուքն ալ տաքարիւն են: Արքայական ամուսնու ամէն ինչ էր

իրենց համար: Արքունիքներու մէջ տեսնուած բան չէ այսքան որդեւորութիւն եւ ծնողատիրութիւն: Պիտի տեսնենք որ ամիսներ, տարիներ վերջն ալ, երբ զաղտնիք մէջտեղ ելլէ, անոնք իրենց ցաւէն պիտի չկրնան իրենք զիրենք դտնել»:

— «Պէտք է կամաց կամաց, խոհեմութեամբ նախապատրաստել զիրենք այդ մասին», կարծիք յայտնեց Լիկինիա մայրական հոգածութեամբ:

— «Ղաւազոյն նախապատրաստութիւնը քու բարութիւնդ պիտի ըլլայ, Լիկինիա, ըսաւ իշխանը: Երախտագէտ ակնարկով Լիկինիա ձեռքը ամուսինին երկարեց եւ յարեց խնդալով. «Եւ քու ալ բարութիւնը, Լիկինիոս»: Անրնական խորունկ ձայնով մը, քիչ մը շարժած, Լիկինիանոս դիտել տուաւ. «Պատանին պէտք է կրթել ստոյգիկեան փիլիսոփայութեան համաձայն: Պէտք է սորվի, տառապանքը եւ ուրախութիւնը առնել հոգիի անվրդով անդորրութեամբ, ոչ մէկ դէպքի վրայ ահարկելի եւ իրար անցնիլ, եւ հանդարտութեամբ համակերպիլ եւ նոյնանալ անփոփոխելիին: Պիտի օգնեմ իրեն այս մասին, ու եթէ թոյլ տայ Արսինէ, զայն ամէնէն առաջ մարդկ իմ դիւորներուս մէջ իրբեւ սալպայ ճարտար, ճարպիկ ինքնակալ, որուն թուրը պիտի զզան եւ պէտք է որ զզան իր հայրը սպաննողները»:

— «Եթէ ձեր փիլիսոփայութիւնը օգուտ մը ունի, ատկէց ազէկը չկայ», խնդաց Արսինէ:

— Երբ բաւական է որ դուն անոր բարեկամ եւ ուսուցիչ ըլլաս: Որովհետեւ ուսուցիչի մը արդէն պէտք ունի: Մեր պահապանները անկեղծ է ու բարի, մարդու խօսքի կողայ եւ կ'առաջնորդուի: Վստահելի է եւ անձուէր, բայց կեանք ունի կեանք, կ'ըսեմ ձեզի եւ կամք եւ ոյժ, արդէն այժմէն կը վարնամ որ ես տկար կիսն պիտի չկրնամ այլեւս հասնիլ անոր: Ո՛հ, ով դիք լուսոյ, ինչ պարտականութիւն դրիք իմ վրայ: Այս բեր պիտի ընկճէ գիտ: Ան արքայորդին է: Եւ այժմէն իսկ թագաւոր մեր հաւատքին համաձայն: Արդէն իսկ մայրական արգանդին մէջ անոր վրայ հանդամ է թագաւորի շողը: Թագաւորին եղածը թագաւորական կ'ըլլայ: Անոր հոգին պէտք է մնայ մաքուր ու մարմինը անաղարտ, որովհետեւ երկիրքին եւ երկնաւոր թագաւորին շողը, որուն մենք Միհրական վարդապետութեան հետեւողներս ՀԱՎԱՐԷՆՅՈ ճանունը կու տանք, այո՛, այդ շողը կը հանդիպանոր վրայ: Այժմէն ան մարմնացած տեսանելի պատկերն է Ահուրա Մազդա Աստուածութեան: Ես պարտաւորեալ եմ պահել պահպանել այս դիցական պատկերը, եւ պարտաւորեալ եմ հոգածու ըլլալ անոր: Ա՛յս կը պահանջէ ինձմէ Ահուրա, անաւոր աստուածը Մազդէականու-

թեան: Ով դուք, Միհր, Անահիտ, ով դուք, եօթնօրին սուրբ սպի-  
նեւ, Սպէնտա — Ամեսա, եւ դուք, բարի ոգիներ Եազատայի, ամե-  
նեքին դուք, օղնեցէք ինծի, աջակից եղէք ինծի:

Արսինէ նուիրական յուզումի մէջ էր: Գլուխը ետ տարած էր  
դէպի ծոծրակը, աղօթելու ձեւով, ձեռքերը բարձրացուցած լուսնկա-  
յին դէմ, եւ գրեթէ ակամայ կամ անդիտակից քանի մը հանդիսաւոր  
քայլ առաւ դէպի բաց պատուհանը: Հոն մնաց այնպէս: Յետոյ յու-  
շիկ իր գլուխը մխրճեց լանջքին վրայ, իրբեւ թէ ահա կրկին ու կըր-  
կին կը դպար առաւելագոյն ծանրութեամբ իր պարտականութեան  
մեծութիւնը:

«Սոսրովիդուխտին վրայ չեմ մտածեր, անհող եմ անոր մա-  
սին: Համբի պէս է, ինչ է սուտը, չի գիտեր, եւ ձեր ամէնուն սիրե-  
լին պիտի ըլլայ իրբեւ դուտար եւ իրբեւ քոյր: Բայց միւսը, միւսը,  
եղբայր, որուն ներսիդին երկինքին նուիրական հուրը կայ: Եկէք»,  
աղաղակեց յանկարծ Արսինէ, տեսակ մը խորագրած անձկութեամբ,  
«եկէք, Իշխան Լիկինիոս, աղնուաղարմդ Իշխանուհի, եկուր եւ դուն,  
այս տունին աղնուական դաւակը, հիմա, Ահուրայի դերամաքուր  
լոյսին մէջ, զիշերային լուսթեան մէջ, շրջանակ մը փակեցէք, այս-  
պէս: Ձեռքդ ինծի տուր, Իշխան, քուկդ ալ, Լիկինիանոս, մայրիկը  
հօրը եւ դաւակին մէջտեղ»: Ամէնքն ալ կարծես կամազուրկ, բրին,  
յանկարծակիի եկած, հետաքրքրուած, ինչ որ Արսինէ կ'աղաղակէր:  
«Եւ հիմա ինչպէս որ մեր ձեռքերը միացան, այսպէս մեր հոգիներն  
ալ պէտք է իրարու կապուին ու մէկ կամքով մէկ նպատակով, կ'ու-  
ղենք հսկել եւ աղօթել, որ երկինքին շողը անպակաս ըլլայ դահա-  
ժառանգ իշխանին վրայէն»: Ամէնքն ալ, խորապէս զգացուած քանի  
մը վայրկեան լուռ, անբարբառ: Յետոյ խօսք առաւ Լիկինիոս ա-  
ղօթողի ձեւով: «Երկինքի շողը անոր վրայ թող մնայ»:

Լիկինիա բարձրաձայն դոջեց, դէպի երկինք ակնարկելով.  
«Ամէն»: Լիկինիանոս չէր գիտեր, թէ ինչ պէտք է ըսէ: Գետին կը  
նայէր: Եւ Լիկինիա զգաց թէ իր դաւակը, իր խորհելուն եւ զգալուն  
համաձայն, այսինքն՝ իր դաւանած վարդապետութեան հետեւելով,  
հիմա պէտք չէ որ ուխտակցի այն մասին թէ «երկինքի շողը անպա-  
կաս մնայ Տրդատի վրայէն»: Այո՛, Լիկինիանոս ալ կրնար այդպէս ըզ-  
րալ և ուխտել, բայց ոչ այլապէս: Կիներ կան, որոնց առաջին տեսքը և  
մօտաւորութիւնը տկար այր մարդուն սա նախազգացումը, մինչեւ  
իսկ ստուգութիւնը կու տայ — «Ասոր քով ես մաքուր կը մնամ»,  
նո՞յնն էր արդեօք այս պարագային եւս: Մաքուրը, բարին, քրմա-  
կանը, յայտնաբերուած նուիրական Բարիին հանդէպ հաւատարմու-  
թիւնը եւ հոգածութիւնն էր արդեօք, որ հիմա, այս ըսողին, կը

մղէր Լիկինիանոսը Արսինէի ձեռքը ամրապինդ սեղմելու, փոխանակ  
անստոյլ, դեռ անձամբարիտ բանի մը համար ուխտ ընելու: Արդեօք  
ան, Արսինէն, պիտի օղնէ՞ր իրեն՝ անդունդէն դէպի բարձունքը,  
արդէն իսկ թառամած երիտասարդութեան դժողակ, սնափառ ձր-  
տումներէն եւ ճախճախուտ ուղիներէն յուշիկ, յուշիկ դարձեալ  
վերանալու դէպի շողը երկինքին: Ան, Արսինէն, պիտի տա՞ր արդ-  
եօք դարձեալ իրեն կորուսեալ կրակը: Ան, Արսինէն, արդեօք իրեն  
հանդէպ ունէ՞ր — ո՛վ պիտէ — ամբիծ ինդութիւն, ամբիծ սէր:

Արսինէ եւս ամուր մը սեղմեց անոր ձեռքը: Սեղմեց այնպէս,  
ինչպէս չափահաս, հօր կոյս մը կը սեղմէ ձեռքը այն տղուն, որուն  
ինք առաջնորդն է: Լիկինիանոս խորապէս զգացուած էր: Ան կը ըզ-  
րար. հայրս մայրս ալ ինծի պէս կը զգան. — Վսեմ որոշում մը, ո՛վ  
պիտէ, վերջինը, որ ահա կը վարակէր զինքը: Յայտնապէս երկու  
ճամբայ կը տեսնէր հիմա իր մտքին առջեւ. դուռ մը, որուն մէջէն  
կը փայլէ երկինքի շողը: Դուռ մը, որուն ետեւը կայ աղջամղին  
գիշեր: Պաւղա, այն քրիստոնեայ կինը, մօրը մտերմուհին, իր պա-  
տանեկան տարիներուն, անգամ մը երբ, հայրը՝ Լիկինիոս՝ զօրաժա-  
րի հանգամանքով Հայաստան կը դառնուէր, եւ ինք հոս մօրը՝ Լիկին-  
իայի հետ մինակ էր, պատմած էր իրեն, թէ ինչպէս այն Քրիստոսը  
անապատին մէջ երեք անգամ յաղթեց սատանային: Եւ պատմութիւ-  
նը այսպէս կը վերջանար. «Եւ ահա սատանան ձգեց դայն, եւ Աս-  
տուծոյ հրեշտակները մօտեցան անոր եւ կը ծառայէին անոր»: Ար-  
դեօք ճիշտ այս բառերը հիմա ինչո՞ւ անցնէին իր միտքէն: Անկից ի  
վեր մոռցած չէր բնաւ զանոնք: Եւ ահա կրկին յատեցաւ Արսինէին:  
Արդեօք մէկ հրեշտակն էր ան Ձեւսին, Եհովային, Ահուրային,  
Միհրին, Անահիտին: Լիկինիանոսի համար ի՞նչ պէտք կար աստ-  
ուածներու: Ահա ստուածութիւնը ինքնին եւ անոր հրեշտակը իրեն  
համար, այդ ժամէն սկսեալ, էր — Արսինէ:

Ջահերը կը վառէին դողող: Լիկինիանոսի փնտտած ճիշտ ա-  
ռիթը եկած էր այս անխօս եւ չափազանց հանդիսական կացութենէն  
դուրս գալու: Քայլ առաւ դէպի եռաստիճան պատուանդան մը, եւ  
արծաթ կտուցով թափանցիկ կանանչ ապակեայ ունկնաւոր պտուկէ  
մը թարմ ձկն լեցուց վերի ճրագկային մէջ: Այդ առիթով քանիցս  
ակնարկեց Արսինէին ուսերուն եւ կռնակին վրայ յորդահոս արեւուփ  
մազերուն: Արսինէին գլուխը ճիշտ նոյն ճրագին տակ կը դառնուէր  
սեղանիկին առջեւ, որուն շուրջ դարձեալ հաւաքուած էին: Այդ  
ձէթին մէկ շիթը, անուշարոյր հոտեղէններու խառնուրդ, վարդա-  
հոտ, մանրիկ, դոյզն մէկ շիթը, պտուկին կտուցին ծայրը մարդար-  
տանման շողարձակ շիթ մը ինկաւ Արսինէին անուխի պէս սեւ նշու-  
լագեղ մազին վրայ, իրբեւ նուիրում մը, իրբեւ կայակ երկնաշող:

Աս ալ արդեօք սատանա՞ն էր ու անոր չար շնչիւնը: Աւա՛ղ, մանրիկ, զոյգն կայլակիկ մը միայն, որ արդէն խկ ցնդեցաւ, եւ մարդարտիկի մը պէս դէպի ինքը վերը փողփողեց վարի խորքէն: Արսինէ ոչինչ նշմարած էր եւ նստած էր իր ծնողքին հետ: Բայց, ահա, վար իջնուաւ միջոցին Արսինէին ձեռքը բռնող ձեռքին մէջ Լիկինիանոս կը զգար բոյրը, որ կը ծաւալէր տրադ դաստակէն մինչեւ յետին ծայրը երկար միջնամատին: Կիներու այս փորձ մասնադէտը ճանչցած էր արդէն թէ Արսինէ աղնուական ցեղէ կը սերէր: Ծարժուձեւերուն ու վարժունքին վայելչութիւնը, իրեն համար նոր եզոզ այս տունին եւ սեղանին սոփորութիւններուն դիւրավարժութիւնը, հպարտ կեցուածքը, իշխանավայել զնացքը, ամէն բանի պատշաճ դիրքը, մատանիններուն ճաշակաւոր յետումը, թեթեւակի շարժումը մորթին մաքրափայլ մոյնքը, ճերմկուկ ձեռքերը եւ բազմախնամ մատնածայրերն ու եղունգները — եւ նաեւ ձեռքերուն ազնիւ ու անտաղտուկ տեսակ մը հոտեղէնը, Լիկինիանոսի դեռ անձանօթ այս նարդոսը կամ մեծագին ջուրը — ալ բաւ է սակայն: Լիկինիանոս գիտէր, թէ այս իրենց պաշտպանեալներուն միջակար արդելք մը չէ Արսինէի մասին ճշմարիտ ու մաքուր սէր տածելուն: Այս իրիկուն ան հասկցած էր կրկին թէ ինչ համբաւաւոր ծաղում ու կացութիւն ալ ունենար, անձնապէս արժէքաւոր էր Արսինէ:

«Տղաս, ես կը խորհէի որ այլեւս պիտի երթանք հագստանանք, եւ դուն յոյսին նոր սնունդ կու տաս», դիտել տուաւ հայրը:

Լիկինիոս. «Վր խորհիմ, թէ ամէնուս համար լաւ պիտի ըլլար, եթէ քիչ մը փարատէինք այն սարսափելի տպաւորութիւնը՝ զոր արքայական ամուլին եղերական վախճանը ներգործեց մեզի: Արդէն ոչ ոք կրնայ քնանալ: Քիչ մըն ալ ուրիշ, զուարթ բաներու վրայ խօսինք: Տակաւին կազդուրիչ ունինք ահա»: Եւ այս ըսելով, խոնարհութեամբ Արսինէին եւ ծնողքին երկարեց արմաւի պնակը եւ գաւաթները լեցուց: Բայց հա՛յրը միայն խմեց իր կենացը: Խօսակցութիւնը կրկին շարունակուեցաւ: Լիկինիոս խօսք բերաւ, թէ Կարոս կայսր արդեօք իմացած է սարսափելի լուրը: Արսինէ կը կարծէ թէ արդէն արիւնի վրէժը սկսած պէտք է ըլլայ եւ Խոսրովի ազգականներուն եւ Անակի միջեւ սաստիկ պատերազմ կը մղուի: Լիկինիոս ամէնէն յարմարը գտաւ, որ իր որդին յաջորդ առաւօտ Հոռոմ երթայ ծերակոյտին հաղորդելու պաշտպանեալներուն ժամանումը: Լիկինիանոսս գոհ չմնաց, դժգոհութիւնն ու վարանումը յայտնի էր: Բայց դարձեալ պատրաստ ըլլալը յայտնեց: «Ուրեմն» ըսաւ հայրը՝ դաւալին դառնալով հեզնոտ ծիծաղով մը «այլեւս ելլենք երթանք»:

ԳԼՈՒԽ Գ.

## Ե Լ Լ Ա Դ Ա

Լիկինիանոս դարձանքով տեսաւ առտուն շատ կանուխ Հայոց դահաժառանգն ու Խոսրովի դուխտը, կոկիկ ու կազմիկ, վարը տունին առջեւ կը գտնուէին: Ինք անոնցմէ շատ ուշ ելած էր անկողինէն: Կրկին կը հնչէին դէպի արեւածայրքը նուազարանին արծաթի շէշտերը, եւ արեւուն երեք երկրպագուները իրենց օրհնարանութեամբ կողջունէին Միհրը, որ փրփրերախ արեւանժոյզներով ճաճանչազեղ կը բարձրանար դէպի ոսկիածոյլ քառակուսին երկնակամարին: Լիկինիանոսի առտուն կանուխ Հոռոմ երթալը Արսինէ հարեւանցի մը ըսած էր սողոց: Եւ ինքը դարձեալ անկողին մտած կը մրափէր: Խոսրովի դուխտ արթուն կը մնար: Տրդատ յանկարծ իր սենեակին դրան առջեւ կեցած, բուռն շարժումներով նշան կ'ընէր քրոջը, որ առաջ դայ: Պահ մը վերջ քոյր եւ եղբայր դղեակին մարմարեայ սանդուխներէն վար իջնելով, խնդրեցին իշխանէն որ իրեն պէտք է ընկերանան: Բարձրաձայն խնդաց Լիկինիանոս եւ կրցածին չափ հասկցուց թէ ահարելի է: Չէր ուզեր անոնց ուրախութիւնը խանդարել: Կրնան մինչեւ Պիրէոն, նաւահանգիստը, ընկերանալ իրեն, եւ յետոյ իր ճամբորդութեան գոյքերը տանող գերիներուն հետ մերադառնալ: Քիչ մը վերջը վերակացուն իմացուց Արսինէին ամէն տեսակ ծեփեքանքով եւ քաղաքավարօրէն, թէ ինչպէս արքայորդիները Լիկինիանոս իշխանին ընկերացան, ձի նստած, տեսնէք, կ'ըսէր, ինչ ալ փառաւոր նստած, մաղերնին հովին տուած կը ձիավարէին հետեւորդներուն առջեւէն: Արսինէ ապշած մնաց, զոյնը նետեց: Ամբողջ առտուն մինչեւ կէս օր մտահոգութիւնը չփարատեցաւ: Իշխանն ու իշխանուհին միթիթարեցին զինքը, իրենց գերիներուն հաւատարմութիւնը ցոյց տալով, եւ թէ Արսինէ բնաւ մտահոգ ըլլալու պատճառ չունի

տղոց ձի հեծնելու արուեստին համար: Ուրախ եղաւ որ Լիկինիոս  
զինքը հրաւիրած էր իր մատենադարանի սենեակը: Հոն, լուսթեան  
ու անդորրութեան մէջ, կ'ուղէին ա'լ աւելի խօսիլ տղոց ապագային,  
մասնաւորապէս զաստիարակութեան վրայ: Առաւօտեան արեւը կը  
լուսափայլէր ընդարձակ սենեակը, որուն պատուհանները մէկ կողմէն  
դէպի քաղաքը եւ Ակրոպոլիս բաց կը մնային, մինչ միւս կողմին  
վրայ լոյս կու տային սիրուն փոքրիկ կոթողիկներու, բարձր քիւե-  
րով, եւ լոյսը անարդել կը թափանցէր անոնց մէջ անդաստակէն գա-  
լով, որուն վերեւն էր մեծ սրահ: Մեղմիկ տաքուկ հով մը կը սրը-  
սքփար սենեակին մէկ կողմէն միւսը: Անդաստակին շատրուանէն դէ-  
պի վեր կաղզուրիչ գովութիւն մը թափ կու տար եւ ուռուցիկ այտե-  
րով Տրիտոնին փաղփիւնը կը կայծկլտէր սրահին մէջտակը, ուր հաս-  
տած էր փառաւորապէս բուրեան ծաղիկներու բոլորչի ածու մը,  
որուն կեդրոնը՝ անեցուն շուշանաղզիներէ շագապատուած արուը-  
կայ աշտանակի վրայ կը դարէր յայն եւ նմանապէս արոյրէ ըմպա-  
նակը, զոր կը լեցնէր նրբածօլ Տրիտոնին բաղձածալ բերանը: Հոս  
ու հոն ընդարձակ սրահին մէջ ցանուցիւր, կամ պատերուն երկայնքը  
կանդուն կային թիկնաթոռներ, բաղձօղներ, ամէնքն ալ գեղարուես-  
տական գործեր՝ շողջողուն, այլազան դոյներով քարերէ, կամ փայ-  
տաքանդակներ տունկի կամ կենդանիի զարդերով: Մէկ կողմը բոլո-  
րովին լեցուած էր բաց դարակներ պարունակող ահագին պահարա-  
նով մը, որոնց վրայ գլանաձեւ կամ դիրքի ձեւով կը կենար մազա-  
ղաթեայ կամ պապիրոսէ գրուածներու ահագին զանգուած մը:  
Ծերակուտականն ու իր կինը պատուհանին առջեւ նստած էին.  
Արսինէ անոնց առջեւ, կոնակը թաքնուած ոսկեհիւս փափուկ յենա-  
րանին մէջ: Անոնց դէմ վերօք հեռուէն կը նայէր լըջօրէն Պալլաս  
Աթենասի ինը մեթր բարձր փղոսկրակուռ անդրին, եւ Ակրոպոլիսի  
դիւցական աշխարհին սպիտակափառ կճեայ շողը կը շլացնէր աչքե-  
րը հայազգի քրմուհիին, որ ահա դարձեալ շմբորած, անթարթ կը  
յառէր, ցողցես երայններու մէջ ընկղմած ի տես հելլենական դեղար-  
ուեստին: Յետոյ դարձուց յոյնած աչքերը, եւ իշխանը, հողածու,  
քրքազոյն սնդուսէ վարադոյրը քաշեց քնքոյշ վարդազարդ խոյա-  
կով դիրք կոթողիկները բաժնող յայն պատուհաններուն առջեւ: Երբ  
իշխանը սկսաւ խօսիլ եւ տղոց անունները իր ախանջը շօշափեցին,  
Արսինէի միտքը Հայաստանէն եւ արքայական ամօրին մեռած վայրէն  
ետ դարձաւ: Ինք ալ պատմեց, թէ ինչպէս յաճախ Սոսրով թագա-  
ւոր կը խօսէր տղոց զաստիարակութեան վրայ: Հայաստանի մէջ  
զարգացուածր այնքան յառաջացած չէ: Այս մասին ինչ ծրագրերներ ու-  
նէր Սոսրով թագաւոր: Ինչպէս կը փափաքէր, անդամ մը որ խաղա-  
ղութիւն եւ անդորրութիւն տիրէ երկրին մէջ, արուեստի եւ զարգա-

ցումի, ինչպէս նաեւ աստուածներուն եւ անոնց պաշտելութեան հա-  
մար աշխատանք թափել:

Բայց միշտ նոյն ծանրակշիռ լուսթիւնը: Լուսափայլ աչքերը  
դարձեալ լեցուեցան արցունքով: Վշտակցութեամբ կը լռէին իշխանն  
ու իշխանուհին, մինչեւ որ Արսինէ նորէն ինքզինքը դտաւ եւ յարա-  
տեւող կորովով թագաւորին ծրագրեր պարզեց: «Առաջին տարին  
կարդալ, զրել, հաշուել, ամէն ինչ յունարէնով: Երաժշտութիւն,  
վին, տաւիղ, տղոց փափաքին համաձայն: Եւ իրենց պիտի աւան-  
դեմ իրենց ազգին ու երկրին պատմութիւնը, աթենացի ուսուցիչ  
մըն ալ Յունաստանի պատմութիւնը»:

«Միւսնոյն ատեն ես ալ, իմ համեստ կարողութեանս չափով,  
պիտի աջակցիմ մեր հարուստ զրականութեան ծանօթացնելու զա-  
նոնք»:

Այս բառերուն վրայ ոտքի ելաւ իշխանը, յառաջացաւ դէպի  
մատենադարան, եւ — հոն անգամ մը կեցաւ ճերակուտականը տունի  
յատուկ դորշ պարեգօտով, այնպէս որ այնքան շուտ չթողուց իր  
հիւրերը որ երթան: Երբեմնի զօրապետ եւ այժմեան լուռ, բարե-  
բախտ, անպաշտօն դիտնական, Լիկինիոսի էր խօսքը: Պարզեց տը-  
ղոց դասական զարգացումի ծրագրերը, եւ զարմանահար քրմուհիին  
ցոյց տուաւ ծրար առ ծրար, պատմագիրները, բանաստեղծները,  
փիլիսոփաները: Միւսնոյն կարգը եւ առատութիւնը լատին հեղի-  
նականներուն համար, ամէնէն ծանօթներէն մինչեւ աննշանները: Հը-  
նութեան, կաշիի, մագաղաթի, պապիրոսի սեփական հոտ մը կը  
յորդէր դէպի Արսինէ, եւ այս հոտին հետ տարտամ նախազգացում  
մը նորագոյնի, մեծագոյնի, որուն առջեւ պիտի բացուի իր բարձրա-  
խոհ միտքը:

Իշխանը կը ճառէր հետզհետէ ծաւալուն յորդարորը թարմու-  
թեամբ: Արսինէին զլուխը կը դառնար, կը շփոթուէր անուններէն եւ  
զրուածքներէն, պատկերներէն եւ դժպտութիւններէն, եւ արդարեւ  
կը նեղուէր, երբ իշխանը բարեկամական ապահովութեամբ մը յայ-  
տարարեց, թէ իր ամենամեծ ուրախութիւնը պիտի ըլլայ հիմա անոր  
հետ վայելել Գիտութեան եւ Արուեստի այս ճոխ գանձերը: «Որով-  
հետեւ», յարեց թիւ մը ցած ձայնով, «կինս հիմա ժամանակէ մը ի  
վեր կը նախընտրէ կարդալ Նազովրեցի այն Յիսուսին այլեւս անհամ  
հրաչքներուն պատմութիւնները, եւ զաւակս Լիկինիանոս — ախ,  
զաւակս — որ առտուն կը քնանայ, եւ իրիկունն ալ կ'ուտէ կը խմէ  
եւ տակաւին կ'ուղէ ինքնակալ — կայսր ըլլալ»:

Ծերակուտականը անզուլարար իր երկրորդ նիւթին եկած էր,  
որմէ, անգամ մը որ անոր մասին խօսէր, կարելի չէր ետ կեցնել զին-

քը: Այս պատճառաւ պատկանելի իշխանուհին, առանց նկատուելու, սրահը թողուց մեկնեցաւ: Լիկինիոս հառաչելով կը յամենար մատենադարանին սենեակը: Արսինէ կեցած էր իր առջեւը, երենեայ սիւնի մը կը թնամ, որուն դուռը յակնթեայ բանուածքով կը պսակուէր: Երեսին գունատութիւնը ալ աւելի յայտնի կ'ըլլար իր այժմ պարզ, անզարդ, դեղին մետաքսէ լօղիկին մէջ, որ երկար ծալքերով, եւ զիստերն ալ ոսկեքանդակ դօտիով մը զսպուած, կը ծածկէր կուրծքն ու թեւերը եւ կը տատանէր վար մինչեւ ճերմակ կաշիէ կիսակօշիկները: Մագին եւ օծուն մարմնին բոյրը կը տողորէր սենեակը: Հայրական հաճութեամբ իշխանին աչքերը կը հանդէպին անոր փառաւոր կերպարանքին վրայ: «Կը ճանչնամ՞ Իփիգենի անունը, Արսինէ», հարցուց իշխանը գորովայոյց: Արսինէ ժխտականօրէն օրօրեց զըլուխը: «Որքան դեղեցիկ: Ուստի պէտք է առաջին անգամ քեզի Իփիգենին մասին պատմեմ: Ասիկա դեղեցկացոյն իրիկուն մը պիտի ըլլաւ: Կ'ըմբռնես թէ Հիմա Իփիգենիի վրայ պէտք է մտածեմ: Արսինէ՛, ծանրածանր դժբախտութեան մը մէջէն իմ տունս եկած ես: Ո՛հ, աստուածները ե՞րբ ձեր դժբախտութիւնը երջանկութեան պիտի փոխեն ինձի համար: Տեսէք հարստութիւնս: Բարեկամս Խոսրով կրնայ աւելի հարուստ եղած ըլլալ, եւ իր պալատը շատ աւելի դեղեցիկ բայց ես երջանիկ եւ զո՛հ պիտի ըլլայի լաւագոյն կին ալ ունենալով, բայց Լիկինիանոս, դաւակոս, Լիկինիանոս»: Խորունկ բարձր հառաչանք մը այս անունին վրայ, եւ ահա Լիկինիա ներս մտաւ: Դրան տակ դերուհիի մը ձեռքէն առաւ արծաթեայ սնակ մը ամէն տեսակ նուրբ կարկանդակներով եւ պտուղներով, դինիի եւ մեղրի ամաններով, զայն դրաւ սեղանի մը վրայ, զոր քաշեց բերաւ օտար երկիրներու դաշտանկարներով, ծառերով, տունկերով, կենդանիներով, որսորդական տեսարաններով ասեղնադրած փափուկ պարսկական գորգի մը վրայ, որ ամբողջ յատակը կը ծածկէր, եւ նստաւ, ամուսինին վրայ մտահոյ նայուածք մը արձակելով: Լիկինիոս սիրով բռնեց անոր ձեռքը, շոյեց զայն քանիցս անխօս, յետոյ վրայ բերաւ. «Բայց էութեամբ բարի է ան, այսինքն բարիք կը կամենայ, կը փափաքի բարի ըլլալ, բայց տկար է, կամքով ու նկարագրով տկար: Յունաստանը զայն մեղկացուց: Ելլաղա վնասեց անոր: Իբրեւ սպայ Նունաստանը զայն մեղկացուց: Ելլաղա վնասեց անոր: Զինչո՞ւմ արեւն զայն եւ կը վախնան անորմէ միանգամայն: Շատ բարի է անոնց հետ: Բայց ծառայութեանէն դուրս ծոյլ է եւ կամապաշտ: Զի կրնար իր միտքը աւելի զարգացնել: Կը ծաղրէ խորհողներն ու քերթողները, աստուածներու վրայ կը ծիծաղի: Միմիայն իր բարեկամներուն մօտ, եւ» — իշխանը ընդհատեց եւ կարմրեցաւ — «նմանապէս կ'անարգէ կիները, դինիէն ու խաղէն կը հասկնայ մի-

այն, ուրիշները կը քաշքշէ սրամառութիւն ծախելով: Նաեւ յիմարօրէն յանդուգն ծրագրերն ունի ի մասին իշխանութեան եւ տիրապետութեան, կայսրութեան եւ ծիրանիի, եւ իր բարեկամներուն կը խոստանայ զիրքեր ու պաշտօններ: Իբր բարեկամը Գաղերիոս կայսրէն վերջ ամենաբարձր զօրապետ Դիոկղէսի եղբորորդին, շարունակ կը հրահրէ իր սարսափելի սնափառութիւնը, կը խոստանայ անոր մասին խօսիլ կայսեր մօտ եւ յառաջացնել զայն, եւ չեմ գիտեր դեռ ինչեր: Իր սնափառութիւնը իր դժբախտութիւնը պիտի ըլլայ: Կը տեսնեմ արդէն որ շարիքը իրեն կը մօտենայ: Այս, մեր դաւակին ծնունդին ատեն փափաքուած նախանշաններէն ոչ մէկը տեսնուեցաւ, այնպէս չէ՞, Լիկինիա: Իր ծնունդը գլուխն եղաւ եւ առանց ուրիշ արդեւ զեւրիքի Փոքրիկ գլուխին շուրջ բրտութենէ կամ կոշտէ զոյացած որեւէ ուղեք հետը աշխարհ չբերաւ: Զինքը ծածկելու համար դիպուածաբար իսկ ոչ մէկ ծիրանեղէն պատառ չընթածուեցաւ: Կրեայ կամ արծիւի ձալ ալ զիպուածով չբրեւեցաւ տունին մէջ ծնած ատենը, կամ ծնելէն վերջ: Մնած միջոցին զափնիի որեւէ ծիլ յանկարծ չգտնուեցաւ պարտէզին մէջ: Օ, Լիկինիանոս ինչպէս կայսր պիտի ըլլայ: Նուէրներ ու դրամ չեն պակսիր իրեն: Բայց բոլոր նշանները, բոլոր նշանները: Եւ սակայն ինք կը հաւատայ այդ մասին ուրիշ խաբեպատիր նշաններու եւ զուշակութիւններու, եւ... երթալով կ'իյնայ, եւ մեզ ամէնքս իրեն հետ զէպի անարդութիւն եւ կորուստ կը տանի: Ով Լիկինիանոս, դաւակոս, մէկ հատիկ դաւակոս»: Հեղձամղձուկ ճիւղով մը իշխանը երեսը ծածկեց երկու սպիւտ ձեռքերովը:

Լիկինիայի աչքերը արցունքով լեցուեցան: «Այս առաւօտ Պաւղիային կը սպասեմ», ըսաւ ոտքի ելլելով, եւ դուրս ելլելու միջոցին կարծես կը սպասէր որ մէկը բռնէ զինքը:

Արսինէ առանց այլայլելու վշտակցութեամբ կը նայէր իշխանին, որ ինքզինքը գտած էր եւ կը շտկուէր: Յետոյ Արսինէ ըսաւ անխոռով, եւ միտքարիչ. «Ահուրա եւ Ահրիման, լոյս եւ խաւար, կը կուսին մեր ամէնուս մէջ: Քու դաւակոս, ով իշխան Լիկինիոս, պէտք է պայքարի Ահուրայի թագաւորութեան համար: Պէտք է ան յաղթէ խաւարին թագաւորութեան: Մի՛հր, Աստուած լուսոյ, որ բոլոր զաւակներուն լոյսով կ'օգնէ, պիտի օգնէ անոր ալ»:

«Այո, ան չի հաւատար Զեւսին, ինչպէս պիտի հաւատայ Միհրին: Լաւ կը յիշեմ ես ձեր խորհրդաւոր դեղեցիկ կրօնքը: Յօժարաւ կամ կը լսեմ զայն դարձեալ ձեր բերանով: Եթէ ան չօգնէ իմ զաւակիս, գոնէ թերեւս միտքարիչ գիտ»:

«Պիտի հաւատայ: Պիտի յաղթէ», աղաղակեց քրմուհին, ոգեւորուած: Դուն իշխանը աղետազարմ, միթէ քիչ առաջ չըսի՞ր Լիկի-

նիանոս էապէս բարի է, բարիք կը կամենայ»։ Իշխանը հաւանութեան նշան ըրաւ։ «Բարին լոյսն է մարդոց մէջ, Լիկինիոս։ Լոյսը պիտի յաղթէ, յաղթէ, ինչպէս կը յաղթէ Միհրի արեւը։ Ես պիտի օղնեմ անոր»։

Իշխանը երկարօրէն Արսինէին նայեցաւ երախտաղէտ։ Յետոյ աղաղակեց բեկեալ ձայնով. «Ոհ, եթէ կարողանաս ընել զայն, եթէ կարենաս պահպանել զաւակս։ — Ամէն ինչ, ամէն ինչ քու սեփականութիւնդ պիտի ըլլայ. տունս, զրամս եւ ոսկիս, ծառաներս, իմ — իմ —»։

«Զօրացիր, հայր, եկուր, բան մը կեր», ղոչեց։ — Բայց մոռցանք խօսիլ մեր ծրարքին վրայ, որուն համաձայն պիտի դաստիարակուին մեր տղաքը», ղոչեց Արսինէ ուժովին, բայց մեղմիւ շիկնած։ Իշխանը, փրկուածի պէս, շունչ կ'առնէր, բայց միշտ խանդարուած ու շփոթած։

«Բարէ, ներէ, իրաւցնէ։ Բայց ղուն ալ, սիրելի Արսինէ, ղուն ալ կազդուրուէ»։ Միրալիր, ջղայնոտ փութկոտութեամբ ծերակուտականը ինք մատուակեց, եւ խօսակցութիւնը շարունակեց։ «Այսրնք» առաջին տարին ի՞նչ։ — Ծիտակ։ Գրեւ, կարգալ, հաշուեւ, նուագ։ Երկրորդ տարին պատմութիւն եւ զրականութիւն Յունաց եւ Հռոմայեցոց, աշխարհաբոլորութիւն եւ պատմութիւն ազգաց, նաեւ գծագրութիւն, նկարչութիւն, արձանագործութիւն, եթէ փափաք ունենայ ան, Հայոց զահաժառանգը. ամէն պարագայի մէջ կնոջական արուեստ Խոսրովիդուխտի համար։ Բայց իմ զաւակս — հիմա միտքս կ'իյնայ — դաստիարակութեան իր մասնակցութիւնը պիտի չբերէ գիտութեան եւ գեղարուեստի համար, այլ, միջանկեալ, ձի նստիլ, ձուկ բռնել, որսորդութիւն ընել, մարմնամարզ, ճամբորդել, զինուորական դպրոց, ռազմագիտութիւնը —» — «Ախ, խեղճ տղայ», հառաչեց Լիկինիա մայրական հողածութեամբ, «այս ամէնուն տակէն ի՞նչպէս պիտի ելլէ խեղճ տղան, թող նախ անգամ մը ինքզինքը գտնէ։ Ե՞րբ պիտի մարդէ միտքն ու հողին, կրօնքի եւ աղօթքի ալ հողածու պիտի ըլլայ»։

— «Բարէ, այո», հանդարտեցուց իշխանը, «ամէն բան իր ժամանակին։ Կրօնքն ալ կու գայ, այո, կրօնքը»։ Իշխանը այս ամէնը կ'ըսէր, տեսակ մը անհանգստութեամբ եւ նեղութեամբ։ Ոտքի ելաւ, քայլ մը առաւ, կեցաւ. «Բարէ, այո, նոյնիսկ կրօնքը... հարիւրաւոր կրօնքներէն ո՞րը։ Ո՞րը հաղարաւոր աստուածութիւններէն»։ Նորէն ձայնը կտրեց, շուարելով։ Մէկը այն ժամանակի անթիւ անհամարներէն, որոնք աստուածներէն առաջ Աստուածը չէին տեսներ. որոնց հաւատքը աւելորդապաշտութիւնն էր, որովհետեւ պարտա-

ւորուած էին հաւատալ, թէ պիտի կործանի հին աշխարհը, ժամանակի բոլոր նշաններն ալ ասիկա կը ցուցնէին։

Արսինէ ակամայ քանի մը քայլ առաջ ղնաց ղէպի սրահը։ Յետոյ յաղթափայլ ղէմքով մը կեցաւ իշխանի եւ իշխանուհիին առջեւ, եւ զարմացկոտ, երկարածիղ շեշտերով սա բառերը արտասանեց. «Ո՞ր կրօնքը։ Աստուածներէն ո՞վ։ Տարօրինակ հարցում, ազնուամեծար ամուլ։ Յորչափ կ'ապրիմ եւ աչքերս կը դիտեն Միհրի ոսկի կաթը, ցորչափ կ'ապրի Անահիտի քրմուհին, Միհրը Տրդատի Աստուածը պիտի ըլլայ։ Արիւնս հեղեղի պէս կը վաղէ այս երակներէս ղուրս, քան թէ ես կը ձգեմ որ մահամերձ թաղաւորին վերջին հրամանը մոռնամ, եւ իմ պաշտպանեալներս իրենց ծնողքին ու իրենց թաղաւորութեան հաւատքը ուրանան»։ Նուիրական բոց մը կը վառէր Արսինէի մոլեգնած լուրջ ղէմքը։ Երկու խոշոր քայլերով եւ թեւերը երկարած փութաց ղէպի իշխանը, ծնրաղորեց, լողիկը յառաջամասէն մեղմիկ կը ղողղողար, ճիշտ անոր առջեւ, լանջքը հեւալով կ'օրօրուէր վեր ու վար, կը պայքարէր ինքզինք բռնելու, օդ առնելու համար, կրայոյղ ուժովութեամբ երկու բազուկները բարձրացուց ղէպի ծերակուտականը, զլուխը ետեւ նետեց, եւ պոռաց, ինչպէս մայր մը կը պոռայ զաւակին կեանքին շուրջ, թունդ հանելով երկու ամուսիններուն սիրտերը։

«Ծերակուտականդ ազնուածին, կին ղու ազնուամեծար, տուէք ձեր ձեռքերը ինձի, ուխտեցէք ինձի ձեր եւ մեր աստուածներուն վրայ, թէ հոս ոչ ոք պիտի յափշտակէ տղոցս հաւատքը, թէ ե՛ս, ե՛ս միայն իրենց քրմուհին պիտի ըլլամ, իրենց կրօնուսոյցը եւ պիտի հոգամ անոնց հաւատքը, ճիշտ այնպէս ինչպէս ըրի Վաղարշապատի մէջ ի սպաս արքային։ Թողէք որ ձեր զարաստանին մէջ Միհրի սրբավայր մը շինեմ։ Թողէք որ մենք աղօթենք, պատարագենք, երգենք, խաղանք, որպէս սովոր է մեզի։ Երկինքի շողը պիտի մնայ ձեր եւ ձեր տունին վերեւ, դեւերը պիտի փախչին, ձեր զաւակը պիտի յաղթէ խաւարին, ձեր հողերը երկպատիկ, եռապատիկ, տասնապատիկ պտուղ պիտի բերեն, ձեր զերիները հաւատարմութեամբ պիտի ծառայեն ձեզի, Ահուրայի բոլոր բարի ոգիները պիտի սպասարկեն ձեզի, Միհր ու Անահիտ պիտի պատասպարեն ձեզ հիւանդութեան, աղէտքի, մահուան առջեւ։ Ես կ'ըսեմ, ես կը խոստանամ զայս ձեզի, ես, քրմանոյցս Անահիտի»։

Այս վերջին բարձրագոյ բառերու միջոցին Արսինէ արձակ ձրգած էր ձեռքերը եւ, միշտ դարձեալ ծնրաղիր, բաղկատարած, ձեռքերը վեր, ամուսիններն ու անոնց տունը օրհնելու ձեւով։ Որեւէ հաւատքի մէջ ոյժ մը կայ, որ արդարեւ սիրտէն կ'առնէ կեանք եւ ըզ-



գացմունք: Իշխանը տակաւին այսպիսի տօնական կեանք չէր ապրած: Մայր աստիճան զղացուած, խոնարհեցաւ, ձեռքը տուաւ քըրմանոյչին, զայն յուշիկ դէպի ինքը քաշեց, բարեմոյն ու երկար ակնարկ մը արձակելով անոր աչքերուն մէջ, ըսաւ.

«Ձեր Աստուածը, Արսինէ, Աստուած մըն է լուսոյ: Լոյսը բարի է ու անաղարտ: Ըլլայ Ձեւս, ըլլայ Ահուրա, թէ Միհր, թէ Արամազդ, թէ Վիշնու, թէ Նհովա, թէ Քրիստոս, ամէնքն ալ կը նշանակեն լոյս եւ ամէնքը բարի են: Յանուն բոլոր աստուածներուն եւ ամենաբարձր Աստուծոյ, ոչ ոք պիտի արդիլէ քեզ իմ տունիս եւ դարասանիս մէջ այսպէս կատարելու քու քրմական պաշտօնդ քեզի եւ քու հաւատացեալներուն համար, ինչպէս միշտ կատարած ես: Ընդհուպ աւելի պիտի լսեմ յօժարակամ քու զեղեցիկ հաւատքի մասին»:

— «Նաեւ ես», վրայ բերաւ Լիկինիա եռանդով: «Գեղեցիկ երեկոներ պիտի ունենանք: Ապահովարար Լիկինիանոս եւս պիտի չթերանայ վալ: Եւ Պաւղա ու Յուզիթ, բարեկամուհիներս, անոնք, Արսինէ, քեզ մեզմէ աւելի լաւ պիտի հասկնան: Անոնք մեր Երեքէն տարբեր կը խորհին կը հաւատան, բայց լոյսին ու բարի ոգիներուն վրայ քու զեղեցիկ խօսքերը լսելով, կը նկատեմ թէ Պաւղա եւ Յուզիթ, որոնց երկուքին ալ հաւատքը տարբեր է, անոնք ալ կը խօսէին լոյսի, ոգիի, սուրբ հոգիի մը վրայ: Պէտք է ուրեմն բոլոր կրօններուն հանրական, մեծ, աստուածային բան մը ըլլայ այս լոյսին շուրջ: Ազնուախոհ Արսինէ, զաստիարակէ արքայորդիները քու հաւատքիդ մէջ միայն, այս լոյսին մէջ, որ քեզ իսկ այդքան մաքուր, այդքան զեղանի կ'ընծայէ»: Բաղկատարած, եւ անդիմադրելի ուժէ մը մղուածի պէս, Արսինէ այդ բառերուն վրայ յառաջացաւ դէպի Լիկինիա, եւ թեւերուն մէջ պարուրնց զայն սաստիկ սիրով: Լիկինիա իր հօրանի գիրուկ, գիրդ բազուկները անցուց Արսինէի շուրջ եւ քանիցս համբուրեց զայն ճակատէն: Իշխանը յուշումէն դարձեալ ջղայնացած էր, աճառարեց զնաց դէպի վարագոյրը, քաշեց բացաւ, կարծես թէ չէր ուզեր որ Ողիմպիական Ձեւսը ու իր զուտոր Աթեոնաս հոն վերը Պանթէոնին վրայ անմասն դտնուին այս հանդիսաւոր պահէն: «Անպամ մըն ալ ձեր բարեկամուհիներուն անունները տուր ինձի, մայր Լիկինիա»:

Այս վերջինը անակնկալի եկած անոր նայեցաւ եւ կրկնեց. «Պաւղա եւ Յուզիթ»:

— «Պաւղա, Յուզիթ», տպաւորեց Արսինէ միտքին մէջ: «Գեղեցիկ անուններ: Կ'ըսէիք թէ անոնք տարբեր հաւատք ունին: Անոնցմէ իւրաքանչիւրին կրօնքը ի՞նչ կը կոչուի»:

— «Պաւղա քրիստոնէութիւն կը դաւանի եւ քրիստոնեայ է, Յուզիթ Հրէուհի է: Երկուքն ալ շատ լաւ կը հասկնան զիրար: Մենք

երեքս միասին, ես, մէջերնին հեթանոսուհի, եռակի հաւատքի կը վերաբերինք, բայց սիրով մէկ: Իսկ դո՞ւն, սիրելի Հեթանոսուհի», հարցուց Լիկինիա աղուոր մը խնդալով, «Պիտի օղնե՞ս ինձի, երկուքի դէմ երկու, եւ չորսս բոլոր դարձեալ մէկ սիրոյ մէջ»:

Արսինէ խոփեցաւ: Իրաւ է որ հաստատական նշան ըրաւ: Բայց Լիկինիայի վրայ սեւեռած իր շեշտակի նայուածքին մէջ նոր հոգ մը կը դարէր: Չէ՞ որ արդէն այդ քրիստոնեաներու մասին իմացած էր, չէ՞ որ անոնք ատեցեալ Հրեաներուն կը պատկանին: Չէ՞ որ արքայասպանութեան խառնաշփոթութեան միջոցին եւ իրենց փախուստի ճամբուն վրայ լսած էին որ Հրեայ եւ քրիստոնեայ միասին դաւաճանած են Սոսրովի դէմ, որովհետեւ ան կանուխէն հալածած էր զանոնք: Հիմա քրմանոյչը այս բաները կը յիշէր:

Հարցուց մտահոյ. «Անոնք չար մարդիկ չե՞ն, որդիք խաւարի, սա քրիստոնեաներն ու Հրեաները: Քրիստոս խաչուած չէ՞ միթէ իբրեւ ոճրապարտ»: «Քաւ լիցի», ըսաւ Լիկինիա խնդալով: «Պաւղա ասիկա պիտի պատմէ քեզի: Սքանչելի կերպով կրնայ այդ մասին խօսիլ: Նայէ որ ճանչնաս զինքը եւ ան՝ քեզ, դուն պիտի սիրես զայն, ինչպէս ես կը սիրեմ զայն ու քեզ»:

Բայց զազունի վախ մը եկած էր Արսինէի վրայ: Առանց այս մասին ինք իրեն հաշիւ տալ կարենալու, կը զգար օտար, զօրաւոր ոյժի մը իրեն վրայ յառաջանալը, կարծես հեռուէն, բայց մօտալուտ փոթորիկի մը սկզբնաւորութեան պէս, որմէ ահա շատ կը նեղուէր: Եւ այս զղացումը պարզ անձկութիւն մը չէր միայն, բայց ի՞նչ էր: Չէր զիտեր: Տեսակ մը հետաքրքրութիւն, գիտնալու եւ զարգանալու ձգտում մը, եւ դարձեալ — քանի որ հոս ալ, այս անձանքին մէջ ալ լոյսի մասին կը խօսուէր — նոր ցանկութիւն մը, ջերմ, ջերմ բունն բաղձանք մը դէպի լոյսը, դէպի կատարեալ, ամբիժ, յաւիտենական լոյսը:

Իր հարցումը անսպասով շեշտով հնչեց Լիկինիայի ականջին. «Եւ երկուքն ալ լոյսի մասին կը խօսին, երկուքն ալ լոյսի Աստուած մը կը պաշտեն»: Լիկինիա աչքերը կը թարթէր եռանդազին: — «Ուրեմն երեք կրօններն ալ պէտք է ըլլին երկինքի լոյսէն, Ահուրայի լոյսէն, եւ յարակցութիւն ունին իրարու հետ»:

— «Այսպէս զէչ չէ որ ըլլայ», միջամտեց ծերակուտականը:

— «Մեր մէջ այսպէս է», ձայնեց Լիկինիա:

— «Գիտես, մայր Լիկինիա, քանի մը բառեր, Հրեաներուն եւ քրիստոնեաներուն կողմէ զործածուած այդ լոյսին նկատմամբ»:

— «Ձեմ կրնար ամէնքն ալ միտք պահել, այն փառաւոր բառերը զոր ինձի կ'ըսեն անոնք, անոնք անշուշտ պիտի յեղեղեն քեզի

Նոյն բառերը, որքան որ ուզես: Երկուքը կը յիշեմ»:

— «Տուր անունները», պնդեց Արսինէ: — «Յուզիթին սիրական բառը սա է. իմաստունները պիտի փայլին երկինքի շողին պէս, եւ անոնք որ շատերը արդարութեան առաջնորդած են, աստղերու պէս միշտ եւ յաւիտեան»:

Արսինէ հիացիտաւ, լայնարաց աչքերով կը յայտնէր: Իր նայուածքը դէպի հեռուն սեւեռուն, գլուխը թեթեւակի դէպի ձախ ծռած, որպէս թէ ականջ կու տար մեղեգիներու, սրոնք հեռուէն, հայրենիքէն, լոյսի թաղաւորութենէն կու դային: «Ի՞նչպէս հոս կու գային այս շեշտերը, ձայները, այս անուշիկ հեծեծազին ողբասացութիւններ, այս երկրին մէջ, ս՛րբկէց կու գային Հրեաներուն, ատեցեալ, ամենուրեք հայածեալ, սրբկէց կու գային Յուզիթին: Ան ս՛րբկէց առած է, ս՛րբկէց ունի այս լոյս բառը»:

— «Գիրքէ մը», ըսաւ Լիկինիա: «Սա դիրքէն, ահա», ձայնեց իշխանը, եւ դուարթ քայլերով փութաց իր օդտակար մատենադարանը, որ ահա երկրորդ անդամ օգտակար կ'ըլլար: «Իսկ Պաւլայի, քրիստոնեային, բա՛նք», պնդեց նորէն Արսինէ:

— «Կարծ է եւ լաւ միտք կը պահուի: Նոյն ինքն սպաննուած Քրիստոսին խօսքն է. Ես եմ լոյս աշխարհի»:

Արսինէի երեսին դոյնը նետեց: Նայուածքն ու դէմքը մթազնեցան բարկութենէն, փախէն, հոյէն: Քիչ մը ամբարտաւանութիւն կար իր սա դաւանութեան մէջ. «Յուզիթի բառը, խօսքը ճշմարտութիւն է եւ շատ գեղեցիկ: Պաւլայի բառը շեմ հասկնար: Քրիստոս ի՞նչպէս ինքզինքը աշխարհի լոյսը կ'անուանէ: Իրաւցնէ ան արժանի էր իր մահուան: Այլապէս ս՛վ է լոյս աշխարհի քան նոյն ինքն Միէքը իր մահուան: Այլապէս ս՛վ է լոյս աշխարհի քան նոյն ինքն Միէքը»: Արսինէի դիտակցութեան ներքին ալքին մէջ առաջուրնէ աւելի դգալի եղաւ նոյն անորոշ վախը տեսակ մը օտարի, անծանօթի առջեւ: Քրիստոս անունը սակայն կառչեցաւ եւ դայն չձգեց կրկին: Ահա այս է թշնամին: Ուշադրութիւն, Արսինէ: Դու օղնական Միհրին: Օղնական Անահիտին: Ասոնք էին Արսինէի մտածումները: Մանրախոհ եւ անխօս, կ'երթար կու դար վար ու վեր:

Իշխանը, քաղաքավար ինչպէս միշտ, առաջարկեց ընկերանալ իրեն քիչ մը դարաստանին, այսինքն դղեակին մեծ պարտէզին մէջ: Քիչ ատենէն տղաքն ալ պէտք է դային: Ոչ այնքան հեռի, քառորդ ժամու ճամբայ մը, ահա հոն, ուր սքանչելի կերպով յարդարուած ժարաստանը բնական անտառի ձեւով կ'երկարի բոլորչի կամ քառակուսի շքեղ անկադործութիւններով տկաղձուն, նաեւ ակեր, արձաններ, ընդդաներ, յաւերժահարսեր, քարայրներ ու պուրակներ: Ահա հոն, ուր ճամբայ մը եղեւինի անտառի մը մէջէն կը տանի յուշիկ վե-

րելքով դէպի ուր մը, իր խորհրդաւոր մթութեամբ ամայի ամբարակումով, քարակոյտներով, թեթեւ ու թաց մամուռով մը պարածածուկ, եւ նաեւ վերէն դէպի վար գլզլացող աղբւրով մը: Ահա, Արսինէի կարծիքով, ամէնէն յարմար վայր մը, ուր մարդ կրնայ շինել սրբավայր մը Միհրի եւ Անահիտի համար: Մտածումներու մէջ խորասոյգ կեցած էր ան հոն, եւ ահա յանկարծ բերանը յորդեցաւ անոր զոր իր հոգին կանխաւ տեսած էր, անով որ պիտի ըլլար — լռին, փոքրիկ, պարզուկ Միհրատուն մը, ատրուշան մը, մէջտեղը սուրբ պատկերով մը: Առաջին անգամ նախ իրեն եւ տղոց համար միայն: Յետոյ այցելուներ, նորադարձներ, մկրտուածներ, ընծայեալներ շարքով, եւ փոքրիկ սրբավայրը — հսկայ մեհեան մը ամբողջ Աթէնքի եւ Յունաստանի համար, մոզը, հայր սուրբը, մովպետաց մովպետը (մոզպետը), եւ ինքը, Արսինէ, քրմանոյշ Անահատայ, հոս, ինչպէս էր Վաղարշապատ, դղեակին պարտէզը հաստատուած մեհեանին մէջ, նոճիներով շոճիներով շրջապատուած, մօտիկը լուռ լիճին ձիւնապիտակ վարդերով բոլորուած, եւ վարը խորը ոսկի, արծաթ փողփողուն ձուկերը, Անահիտի խոշոր նուիրական ձուկերը:

Արսինէի միտքէն իսկ չէր անցներ, թէ որքան դեղեցիկ էր այս կիսալոյսին մէջ, դէմքը բոցանշոյլ՝ խանդավառութենէն, աչքերը կայծակնացայտ՝ ներքին հուրէն: Իշխանը մեծ դժուարութեամբ կը ջանար պահել իր լրջութիւնը: Այս նպատակները, Արսինէն բացատրուած, քիչ մը չափազանց առաջ կը տարուէին իր սեփական երկրին եւ շրջավայրին մէջ: Ասկէ գատ, որոշակի կռահած էր որ երկրորդ անգամ ըլլալով մոզի եւ ուրիշ այս տեսակ բաներու յիշատակումը անախորժ եղած էր իրեն եւ իր դիւրազգացութիւնը վիրաւորած էր: Մովպետը մեծ իշխանութիւն պէտք է ունեցած ըլլայ Արսինէի վրայ: Ասիկա շատ հաստատ է իրեն համար: Այս մասին կ'ուզէր աւելի բան իմանալ:

Անդին դղեակէն կ'իմացուէին ձայներ, ծիծաղներ, ձիւն վըրընջիւններ: Քրտնաթաթախ, մինչեւ մորթերնին թրջած, Տրդատ ու Ոսորովիդուխտ ցատկեցին Լիկինիոսի եւ Արսինէի դէմ դիմաց: Լողանքէն եւ օծումէն վերջ ճաշ առին, եւ տղաքը յուզեալ խանդավառութեամբ պատմեցին թէ ինչպէս անցուցած էին առաւօտեան միջոցը. Լիկինիանոսի մեկնումը եւ ամէն բան մինչեւ յետին մանրամասնութիւնը: Յետոյ մէկէն ի մէկ դադրեցաւ խօսակցութիւնը, մանաւանդ իշխանին սա հարցումին վրայ, թէ նաւուն մեկնելէն ի վեր ինչ բրած էին իրենք տակաւին, որովհետեւ, ձիով ըլլալով, կրնային աւելի կանուխ հոս ըլլալ: Ոսորովիդուխտ կաս կարմիր եղաւ, գահածառանգը չփոթեցաւ, Արսինէ թափանցիկ նայուածքով մէկէն

միւսին կ'ականարկէր: «Սարգստիւի տաք էր», հառաչեց Պոսրովի-  
դուխտ:

— «Ելլաղայի մէջ աւելի տաք կ'ընէ քան Հայաստանի մէջ»,  
հաստատեց Տրդատ կորովի շեշտով մը, բայց քիթին տակէն, «այս  
հազուստները հոս չեն անցնիր: Ես կ'ուզեմ ուրիշ հազուստ ունենալ»:

— «Ի՞նչ բրիք, տղաք», նորէն հարցուց Արսինէ սիրալիւ լը-  
ջութեամբ: Այն ատեն զահաժառանգոր իր բազմոցին վրայ ուղղարեւձ  
ձեւով, սկսաւ, սիրուն, անկեղծութեամբ մը, որուն ազդեցութիւնը  
աւելի կը բարձրանար յունարէնին անճշտութիւններով ու անճարա-  
կութիւններով, պատմել թէ ինչ գեղեցիկ է Պիրէոնի ծովածոցը, ինչ  
ազուստ տեսարան մը կը պարզէին բազմութիւն նաւերու առաւաստ-  
ներն ու կայմերը խոր կապոյտ ջուրին մէջ, որուն մէջ Հայելիի պէս  
կը ցոլային ծովեղբորի ծառերը: Ամբողջ ափին վրայ մարդիկ կը  
լուացուէին, նաեւ տղաքներ, որոնցմէ շատերը բոլորովին մերկան-  
դաւած...» — «Եւ...» — պոռաց քրմուհին խիստ յուզուած: — «Եւ ա-  
հա», շարունակեց հանդարտօրէն հայ իշխանապետը: «ասոր վրայ  
մենք ալ լողանք ստինք: Ո՛հ, որքան գեղեցիկ: Լողացինք հեռուն,  
հեռուն, ալիքները մեզ անդին կը տանէին վերը, նորէն խորը վար  
կ'իջնայինք: Վերակացուն շարունակ եղբրքէն բան մը կը պոռար, եւ  
թեւերով ու ձեռքերով կ'ընէր — ա-ի, ա-ի», Տրդատ քահ քահ կը  
խնդար, եւ երկար ատենէ ի վեր կը դիտէր իշխանին մեծ ուրախու-  
թիւնը, իր պատմածներուն եւ ձեւերուն վրայ: «Ուրիշ տղաքներ եւ  
աղջիկներ դէպի մեզ յատուկ կու գային լողալով, անոնց լեզուն չէինք  
հասկնար, բայց իրարու վրայ ջուր կը սրսկէինք — ա-ի, ա-ի —  
մենք ամէնէն մեծերն ու ուժոյններն էինք: Եւ ահա մակոյկ մը եկաւ,  
մէջը ձկնորսներով եւ մենք դէպի այն կողմը լողացինք, եւ ամէնէն  
ետեւի տախտակներուն վրայ նստած աղուսը մը ցամաք եկանք»:

— «Ու յետո՞յ», հարցուց Արսինէ, ամօթէն ու բարկութենէն  
գեփղեղին եղած, զայրացկոտ շեշտով: — «Յետոյ», պատմեց Տրդ-  
ատ հանդարտօրէն մինչեւ ծայրը, «վերակացուն մեր լաթերը աը-  
լաւ, որ պահած էր —», — «Բնականաբար վերակացուն», խնդաց  
իշխանը զլուխը երեւցնելով:

— «Աւելի լաւ պիտի ըլլար, եթէ մեզմէ՝ կ'ընէրէս՝ ես կամ  
Արսինէ հոն ըլլայինք», ըսաւ Լիկինիա լըջօրէն, «բայց, հոգ չէ, տա-  
կաւին տղայ են»:

Արսինէ այլեւս բերանը չբացաւ: Բայց աղանդերէն վերջ ոտ-  
քի ելլելով հրամայեց այնպիսի վեհութեամբ մը. «Ետեւէս եկէք» —  
որ քոյր ու եղբայր լուռ ու անկամ մտիկ ըրին եւ սանահայր ու սա-  
նամայր ոչ մէկ բառ ուղեցին ըսել: Ո՛չ Արսինէ, ո՛չ ալ տղոցմէ մին

այդ օրը չերեցաւ սեղանատան մէջ: Լիկինիա գերուհին զրկեց թէ-  
իրենց կը սպասուի ճաշի, բայց քրմանոյշը լուրջ միանգամայն տը-  
խուր ձայնով կիսախուփ դռնէն պատասխանեց. «Իմացուցէք իշխա-  
նուհին, թէ երեքս մենք իշխանին թոյլտուութեամբ մեր հաւատքին  
պատկան գործով կը զբաղինք»:

Այս բացակայութիւնը իրարանցում առաջ բերած էր գերինե-  
րուն եւ գերուհիներուն մէջ, որոնք վեր վար, առանց հարկի կը դառ-  
նային, իրարու կը հարցնէին, կը լրտեսէին հոս հոն թէ ինչ կ'անցնի  
կը դառնայ, մինչեւ որ գերուհիներուն պետը երեւցաւ որ, իր կար-  
դին, միւս աղջիկները իրեն մօտ կանչեց եւ անոնց բախտաւերէն  
խմացաւ թէ Արսինէին նախ յանդիմանուելը եւ յետոյ ազօթելը լսած  
էն: Յետոյ երեքն ալ լացեր են: Յաջորդ առաւօտ, երբ լողարանին  
մէջ գերին Տրդատին մարմինը կը շփէր ու իւզ կը քսէր, չկրցաւ իր  
զարմանքը բռնել, տեսնելով որ խաբարանի հարուածի հետեւանքով  
արիւնի դիժեր կային, որոնք զահաժառանգին ցաւ կը պատճառէին,  
նաեւ կռնակին վրայ տեղ տեղ սպիներ՝ որոնք կ'այրէջին կարծես:  
Սրտաշարժ տեսարան մըն էր ասիկա գերին համար: Բայց չէր  
կրնար ի հարկէ հարցնել: Այլ լուռ ու մունջ կատարեց իր աշխատան-  
քը, զրուշանալով, մեղմով, ամէնէն փափուկ, ամէնէն պող բալա-  
սանէն առաւ, կը կենար, կ'ընդմիջէր, զլուխը երեւցնելով, եւ տըխ-  
րադին դիտելով իրեն այլեւս աչքին յոյսը եզոզ պաշտպանեալին  
փառաւոր մարմինը: Տրդատ այս ամէնը դիտած հասկցած էր ար-  
դէն, բայց իր բնածին հպարտութիւնն ու պատկասանքը ոչ մէկ նե-  
ղութենէ կ'ազդուէր: Իշխանախոյզի շարժութեանը եւ հպարտօրէն  
իր այտոյցներուն կը նայէր եւ կը խօսէր. «Միհրի եւ թողաւորի  
զաւակ մը ինք իր ձեռքովը կը պատմէ ինքզինքը, երբ իր Աստուածին  
աչքերուն անհաճօյ ընթացքի մէջ գտնուած ըլլայ»:

Պատանի եւ սիրուն գերին գարձեալ կ'երեւցնէր զլուխը. «Ամէն  
մարդ իր Աստուածին պաշտօն կը ասնի, բայց ես պիտի չհաւատայի  
ոեւէ Աստուածի, որ հրամայէ ինձի փոստել եւ փճացնել ինչ որ ինք  
այնքան գեղեցիկ եւ հրաշալի ստեղծած է: Մենք Երրորդայի մէջ ա-  
սանկ բաներու չենք հաւատար, ոչ ալ կ'ընենք: Չեր մարմինին պէս  
մարմին մը, ո՛ր իշխան, ինձի համար Չեւսի մեհականէն աւելի է»: Տրդատ  
զարմանքով մտիկ կ'ընէր գերին, խոջոր ու թուխ պայծառ  
թափանցիկ աչքերը խորխորէն տնկած անոր, իրրեւ շնորհակալու-  
թիւն: «Ինձմէ բոլորովին տարբեր կը խորհիւ: — Արդէն հոս ամէն  
ինչ տարբեր է»:

Քրմանոյշին աչքերուն տակ տղաքը կ'անցնէին դարնան միշտ  
գեղեցիկ, միշտ տաքուկ մնացեալ օրերը: Մշակներուն ձեռքին տակ

դարաստանը դրախտավայել փառք մը կը պարզէր, եւ կանանչ սա-  
ղարթներուն ասեղնագործութիւն մը կը բանուէր իշխանական դըղ-  
եակին շուրջ: Թմբեկացիք զգայալիբի բոյր մը կը լեցնէր օդը: Օ-  
րերով կը տեւէր նորութիւններուն գիւտը տունկերուն եւ կենդանի-  
ներուն վրայ. ամէն կողմ սքանչելի սիրուն հանգստավայրեր հով-  
ուերգական պտոյտներով ժայռէ ժայռ, պուրակներ հովանախիտ,  
դալարագուարթ, որոնց վրայ կ'աղբերանային գովաքիկ ակեր: Գա-  
հաժառանգը միեւնոյն ատեն ժամերով ձիավարիկ կ'ընթանար դա-  
րաստանին միւս կողմը գտնուած ասպարէզին վրայ, կամ ձի կը ցու-  
ցադէր ու կը մարդէր, կամ ձուկ կ'որսար, կամ ասպաստանին մէջ  
կը գրադէր: Խորովիդուխտ եւս ամբողջ առաւօտներ մշակներուն  
մօտ կամ մանարանին մէջ, ուր հիացումով կը դիտէր գերուհիներուն  
ճարտար ձեռքերը, որոնք բուրդէն ու կանեփէն կամ ուրիշ նուրբ  
նիւթերէ նոցին Մեծութեանց զվեստեղէն կը յօրինէր:

Յետոյ շրջագայութիւններ դէպի քաղաք, և նախընծայ հետա-  
քրքրականներու դիւտեր քաղաքին շրջակայքը: Որ չէր անցներ որ ա-  
նոնք արեւմուտին չկենային վերը՝ Ակրոպոլիսի վրայ, ու աչքով ու  
հոգիով չվայելէին աննկարագրելի շքեղութիւնը, որ կ'ընծայէր ի-  
րենց շուրջանակի, վարը կիրճերու, խինձերու մէջ եւ անդին լայն-  
արձակ կապուտակ հեռակայքը: Դիցական անուններ եւ մեհեաններ  
կը քանդակուէին իրենց յիշողութեան մէջ: Աթէնքի եւ Յունաստանի  
ցեղազրական եւ գեղարուեստական պատմութենէն բազմաճմուտ իշ-  
խանը քաղած էր շատ մը շահապրդիտ մասեր, որոնք տղոց աւանդելի  
գեղարուեստին նիւթերը պիտի կազմէին պատմութեան անոնց ա-  
պագայ ուսուցիչին համար: Տղոց միտքն ու զւագմունքը ինքնաբե-  
րաբար կը բացուէին նոր մեծ տպաւորութիւններու առջեւ: Արսինէ  
յարաճուն անապահովութեամբ ու կասկածանքով կը դիտէր տղոց  
կրելիք ու կրած փոփոխութիւնը, եւ ինքզինք երջանիկ կը զգար,  
երբ ինքնին առիթ կը ներկայանար, որ յաջորդ օրերուն երբեմն  
գրեթէ մինակ տղոց հետ շրջագայէր Կեփեսոսի զով հովիտին եր-  
կայնքը «Նուիրական Պողոտայ»ին վրայ ձիթենեաց անտառին մէջ,  
ուր քաղաքին վրայ նայող հովանաւոր բլրակի մը ծոցը կը հանդէ-  
ին: Այդ պահերուն դարձեալ տղաքը իրենն էին, սեփական էին ի-  
րեն: Այդ պահերուն անոնց ակնարկները կ'երկարէին աշտարակնե-  
րուն, մեհեաններուն, կամարներուն, դրանդիներուն վրայէն ծաղ-  
կաւէտող կղզիներուն վրայէն Պիրէոնի կայմանտառին վրայէն հե-  
ռուն ուրուրի թեւակներու նման սպիտակաշող առազաստներուն վը-  
րայէն, կայծկլտուն կոհակներու վրայէն — ասոնց ամէնուն վրայէն  
անդին... դէպի Հայաստան: Մենութեան այդ պահերուն էր որ կ'ըլ-  
լային տղոց հարցումները հայրիկին, մայրիկին համար: Անմեղու-

թեան եւ խաղաղութեան աննկարագրելի պատկերը, ուր երկինք ու  
երկիր սրկուած ու իրարու խառնուած կը թուէին կապոյտին հիւ-  
տանքով ու ներդաշնակութեան քաղցրութեամբ յանկարծ կը փոխ-  
ուէր խոռովախոս ծովու պատկերի մը, ծովափը արեւադոյն ալիք-  
ներով, կանանչ, հեշտ, արդաւանդ, բլուրներով հիւսուածոյ, ինչ-  
պէս հոս, — եւ ահա պայքարի ճիշերով, հայհուհներով, աղօթքնե-  
րով, մահառիթ աղաղակներով կ'արձագանդէ, հոն կը մեռնին մար-  
դիկ: Ընդ տա զաշտերուն նմանող դաշտերուն վրայ անդին հիմա  
պատերազմը կը դուսայ, հունձքերը ոտնակոխ կ'ըլլան, պուտները  
կ'այրին, տաղաւարներ կը հրդեհուին, դիւղերը այրիացուեր, խա-  
ղողի ողկոյղները կը պղպղակեն կրակէն, արքայական դղեակը բոցի  
ճարակ եւ ճարճատելով կը կործանի վաղարշապատ: Մէկ միթա-  
րութիւն միայն. թաղաւոր ու թաղուհի — կ'ապրին անոնք, հայրը  
կը յաղթէ, թաղաւորներ են լոյսին սպասարկուները, ախոյեան Միհ-  
րի եւ Ահուրայի: Միհրը անտեսարար կը պայքարի հօրը թեր, ի-  
րաւունքի եւ յաղթութեան Աստուածը: Հայրը չի կրնար տաղալիլ,  
ոչ մեռնիլ: Հայրը կ'ապրի եւ կը սպասէ, մինչեւ որ ես Լիկինիանո-  
սի մօտ կայսերական պաշտօնին վարժուիմ եւ յունարէն սորվիմ:  
Այնուհետեւ նաւապետը դիւս դարձեալ այն կողմը կը տանի, տուն  
կ'երթանք: Ես կը կուտիմ հայրիկիս քով եւ կը յաղթեմ անոր հետ:  
Այնուհետեւ ան կրնայ հանդէսի եւ ես պիտի տիրապետեմ: Այսպէս  
կը բարբառի Տրդատ: Արսինէ այդ միջոցին նոր հաստարմութիւն  
կ'ուխտէ լոյսի աստուածին, որ իր սիրտին մէջ զրամ է յախտենական  
կեանքի մը այսպիսի ստուգութիւն, թէ ինքը, լոյսի բրմուհին, չի  
ստեր, երբ տղոց կը կրկնէ միշտ. «Թաղաւորը չի կրնար մեռնիլ:  
Թաղաւորը կ'ապրի: Թաղուհին անոր հետ»: Այսպիսի ժամեր  
սովորաբար կը վերջանան անով, որ Արսինէ տղոց պնդումին  
վրայ՝ իրենց պատմէ բաներ Հայաստանի հին օրերէն կամ  
որեւէ պատմութիւն մը: Ախ, ինչո՞ւ արդեօք հոս բնութեան  
գեղեցկութեան միջեւ, այսքան փայլալայնքի եւ պատիւներու մի-  
ջեւ գոր ինքը կը վայելէր իշխանին տունին մէջ, ախ, ի՞նչ է արդեօք  
որ ինք դարձեալ անհանդիստ է, ի՞նչ կայ որ, ինչպէս շուրջ ցերե-  
կին եւ ուրուականը դիշեր ատեն, դիւքը կը հայածէր: Թաղաւորն ու  
թաղուհին կ'ապրին: Ան այս միթաւորութիւնը ունէր եւ միթաւոր-  
ուած էր: Լիկինիոս իրենց ամէնուն համար հայր մըն էր: Բարե-  
սիրտ, բարեխնամ: Իսկ Լիկինիա՞ — Ով մայր Լիկինիա: Իսկ Լի-  
կինիանոս: Արսինէ այս անունին վրայ քիչ մը սիրտի սեղմում կը  
զգայ: Թեթեւ մը կը սարսուռայ խորհելով, թէ ինք, այո, պիտի վերկէ  
զայն: Այս է իր գործը. — խաւարէն ի լոյս առաջնորդել զայն: Ինք  
քրմուհի է Անահիտի նուիրեալ, եւ միմիայն նաեւ թաղաւորին, որ

մարմնացեալ պատկերն է Ահուրայի, երկնաւոր թագաւորին: Ասոր քաջատեղեակ է Լիկինիոս: Անոր իշխանական հրամանն է որ պէտք է հաւատքովս ապրիմ: Յոյժ հայրախնամ է: Յոյժ: Իր զաւակը պէտք եղածէն աւելի շուրջս հոգածու: Պէտք եղածէն աւելի: Իր ձեռքի սեղմումը տաքուկ, նոյնիսկ պիրկ: Բայց — ի՞նչպէս կրնայի ես դայն լոյսի առաջնորդել, առանց ինձի հանդէպ անոր համակրութեան: Անահիտի գործն է այս: Փառք անոր: Պաւլոս, քրիստոնեան, Յուսիւսի դրած, փառք տուէք ճշմարտութեան իբրեւ սպասաւոր յաւիտեանական լոյսին: — Բայց կե՞ղծ էն արդեօք, խաւա՞ր են: Մի զուցկ դեւերը, Ահրիմանին չար ոգիները դարան լարեն Պաւլոսի մաքուր նայուածքին ետեւը: Ո՛չ, ան կրնայ իր կրցածին չափ հաւատալ. Քրիստոս անգամ պէտք է Եղաթա մը եղած բլլայ, քանի որ կրցած է այդքան շող արծակել: Եւ Յուդիթի Եհովայի մասին ըսածն ալ նոյնն է, այնքան նոյն, ո՛հ, ինչ բառեր լոյսին եւ յաղթութեան մասին: Ահա դարձեալ այն լուսաւորիչ անձանօթը, այն կրակէ անուսին: Ահա դարձեալ այն լուսաւորիչ անձանօթիւնը, անհանդուրդութիւնը: Ան իր հաւատքին համաձայն պիտի ապրի եւ տղաքը անոր մէջ պիտի դաստիարակէ: Բայց աւելի կ'ուզէ, ալ աւելի կ'ուզէ: Միհրն է աշխարհի լոյսը: Վերջին հաւաքոյթին մէջ, որքան սիրով եւ ուշադրութեամբ մտիկ ըրին իմ խօսածներուս, կարծես յափշտակուած էին տաւիղիս արեւային օրհնարանութենէն — բարէ, իցիւ շուտ գար: Շուտ, շուտ եկուր, մոգ, սուրբ մովպետ»:

Արսինէ կ'երազէր ինքն իրեն առջեւը նայելով: Գոգին վրայ կը հանդէշը տաւիղը: Այսօր մանաւանդ աւելի թախանձագին եւ փառաքանքով խնդրեցին տղաքը քրմանոյշէն որ երգէ ու նուագ գարնէն: Եւ ի վերջոյ վրան եկաւ արեւին խնդութիւնը եւ սկսաւ խորունկ լիալիր ձայնով. —

Օն, մարդիկ դուք բոլոր, գովեցէք Մաղդան, արթնցէք:

Ելէք կանգնեցէք, թօթափեցէք քունը:

Վանեցէք թախձոտ հոգերն ու դահանդանքը,

Քանզի Միհրը բոլոր դեւերը կը ջախջախէ,

Որովհետեւ Միհրի շողը խաւարը կը հալածէ,

Կը վանէ Միհրը դանոնք, դեւերը բոլոր,

Ձար ոգիները, փէրին, տրուզները,

Քանզի կ'ահաբեկէ չարերը, կը կուրցնէ, կը ջաղխէ:

Տեսէք, իր նետերը կապարճին մէջ կը շողան.

Տեսէք արեւուն դէմ կը փայլին անոր նիզակներուն ոսկի բունները:

Ողջոյն, կարողութիւն եւ զօրութիւն եւ յաղթութիւն քուկդ են, ո՛վ

դիւցադուն:

Տեսէք անոր հերքին խոպոպները հովին մէջ ծովածուփ,

Տեսէք անոր աստղերուն շողը հրեղէն մետաղի պէս,

Ու կը շողան հազար աչքերը անոր,

Բարին ու չարը կը փնտռեն բոլորաշխարհի մէջ,

Կը տեսնեն բարձունքներուն ամենախոր յատակը,

Ու հեռուէն կը նշմարեն հետքը չարին,

Կը հետեւին, վրէժխնդիր, անոր ճամբուն,

Ու կը հանդէշ նետը անոր աղեղին վրայ արծաթեայ:

Էյ, փախիր ուրդիդ դիւերուան, դու ծնունդ չարին,

Միհրը կը տեսնէ քեզ պայծառութեամբը իր շողին:

Միհր, զրկէ քու աչքերուդ լոյսն ու օրհնէք այսօր ալ հոս մեր վրայ:

Քու աչքերէդ մէկը միայն դարձուր մեզի, ամենագէտ,

Ականջներէդ մէկը միայն ամենուրեք:

Քուկն է աշխարհ, քուկն է քաղաք,

Բարի ճանապարհ քեզ, ո՛վ հերոս, շնորհ տուր մեզի:

Փառաւոր շեշտերով տաւիղին վրայ կ'աղբերանար ձայնը, որ

ի վերջոյ հատկեցաւ հազիւ լսելի: Տղաքը նստած էին սարսուղին

եւ հպարտօրէն կը դիտէին իրենց դաստիարակուհին:

ԳԼՈՒԽ Դ.

## ԽԱԽՈՒՑ ԳԵՏԻՆ

Հետզհետէ աւելի մեծ մտահոգութեամբ կը սպասէին Լիկին-իանոսի վերադարձին Հոռմէն: Արդէն շատ իրիկուններ իշխանը տու-նին առջեւ դարատափին վրայ կ'ելլէր եւ գուշակութեան վերաբեր-եալ նշանները կը դիտէր: Արդէն գիտէր որ իր զաւակը Հոռմի մէջ իր քաղաքական եւ զինուորական առաքելութենէն զատ «անձնա-կան» հոգերով ալ աւելի պիտի զբաղէր: Բայց այդ մասին ամէնէն կարեւորը հայրը բնաւ պէտք չէր որ իմանար: Թէեւ իրեն համար անկասկած էր որ իր տղուն կեանքը խախտու գետնի վրայ կը զըտ-նըւի, ամէն անգամ որ Հոռմէն կը վերադառնար, եւ իրեն կը պատ-մէր հոռմէական դաւերը, խարդախութիւնները, ծերակոյտին եւ քաղաքացիներուն ընդհանուր դժգոհութիւնը, եւ մանաւանդ բուն Հոռմ քաղաքին պարագաները եւ սովորութիւնները: Հայրը Լիկին-իանոսի պատմածներէն շատ աւելի բան կը հասկնար, դիտելով ա-նոր անհանդարտ նայուածքները, եւ աչքերուն շուրջ կապոյտ կա-նանչ գիծերը, որոնք իր տղուն դէմքին կու տային մերթ կարմիր, մերթ դեզին գոյն մը: Ահա այս ամէն բաները Լիկինիոսի կը մատ-նէին աւելի բան, քան զոր կ'ուզէր դիտնալ:

Լիկինիանոսի վերադարձէն ետքը հանդիսական փայլուն հա-ւաքոյթ մը ղդեակին փառաւոր սրահին մէջ: Ասիկա առաջին մեծ հանդիսութիւնն էր՝ որուն կը մասնակցէին հիւր Հայերը, որոնք յե-տոյ իշխանին յայտնեցին, թէ այդ խնջոյքը սրահին շքեղութեան, լուսաւորութեան, տունկերով ու ծաղիկներով զարդարանքի, կերա-կուրներու փափկութեան եւ բազմազանութեան, սպասարկութեան ճշդապահութեան եւ համակրելի հանգամանքին, հրաւիրեալներուն ամենազանգուշեաններուն առթիւ հիւրերուն ճաշակին եւ պատկառան-

քին տեսակէտով՝ բնաւ վար չէր մնար ոչ մէկ բանով Վաղարշապատի ամէնէն շքեղ տօնակատարութենէն: Աթէնքի ամենաբարձր շրջանակները իրենց ներկայացուցիչները ունէին: Պաւլոս եւ Յուզիթ իրենց ամուսիններուն հետ հոն էին: Փիլիսոփաներ եւ արուեստագէտներ, հռչակաւոր արձանագործ Ապելէս եւ նկարիչ Վիզիլիոս, ամէնուն կողմէ փնտրուած երիտասարդ բժիշկ Վալերիոս հոն էին: Բուն յատկանշական խօսակցութիւնը սկսաւ աղանդերի միջոցին, երբ լոյսի ու ծաղիկներու, արծաթեղէն եւ ոսկրակուռ անօթներու բազմաթիւ շքեղութիւն մը կը տիրէր: Բայց ամենազղի վայելքներու փարթամութեան այս պահուն — հաւաքոյթին ողին շատ լուրջ եւ ազնուապետական: Լիկինիանոս ինքզինքը կը ցուցադրէր՝ ցարդ նմանը շտեմնուած ձեւով մը, պարծանք իր ծնողքին: Առաջին խօսողը ինքը եղաւ: Բայց ընդարձակածաւալ հոռոմէական կայսրութեան քաղաքական հանդամանքներու մասին իր պատգամը կամ տեղեկաբերութիւնը որքան ծանր էր: Կարոս կայսրը, Հայոց թագաւորին սպանութենէն շատ քիչ վերջ, լուրի մը վրայ իսկոյն ճամբայ ելած էր: Ապէր, Դիոկղէս, Մաքսիմիան սպաները, նաեւ Գաղերիոս անոր հետ: Բնաւ որեւէ նոր լուր չէ հասած: Հոռոմի մէջ ոչ մէկ բան գիտցող կայ տակաւին Հայոց արքայական ամուսին զաւակներուն Լիկինիոսի մօտ սպաստանելու մասին: Այս մասին ինք հարկ եղած զեկոյցը բեր է արքունիքին: Հոռոմի մէջ ընդհանուր խմորում կայ միտքերու, ամէն մարդ գլուխը առած կ'երթայ: Մերակոյտը դժգոհ է, որովհետեւ Պորոս կայսեր սպանութենէն վերջ երկրորդ անգամ ըլլալով նոր կայսեր ընտրութեան մէջ իրբեւ անկարեւոր տարր մէկ կողմ ձգուած է, իր խորհուրդը կամ կարծիքը հարցնող չէ եղած, եւ կարոս միմիայն բանակին ուժովը գահ բարձրացած է: Պրետորեան կայսերապահ գունդը ապստամբական վիճակի մէջ է: Իրենց բարկութիւնը մեծ է այն պատճառաւ, որ իրենցմէ աւելի բարձր դիրք ունին հիմա Իլլիրիացիները, այսինքն Դանուբեան երկրամասին Գերմանները: Արդէն կարոս ալ Իլլիրիացի է, ուրեմն կրկին կը տիրապետէ Գերման մը, այն ծերուկ, ահարկու կարոսը: Իր լաւագոյն որդին՝ Նոմմերիանոսը՝ հետը Պարսկաստան տարաւ, իսկ ցոփակեացը, կարինոս, իշխանակից բրած է իրեն եւ զրկած է Գերմաններուն դէմ: Բայց անոր վրայ վստահութիւն չունենալով՝ օղնական տուած է անոր Կոստանդինոս Քլորոսը:

«Ո՞վ է այդ Կոստանդինոս Քլորոսը», ձայնեցին ոմանք: Իշխանը տեղեկութիւն տուաւ. «Փլավիոս Վալերիոս Կոստանդինոս, անուանի դարգանեանի մը եւ միահեծան Կղաւղիոս Գոթիկոսի եղբոր աղջկան Եւտրոպիոսի զաւակն է»: Լիկինիանոս շարունակեց: «Իլլիրիացիք հետզհետէ հոռոմէական զինուորները իրենց վազեմք

պատիւներէն կը վտարեն», որպէսզի իրենք ըլլան կայսեր անձնապահ գունդը: Արդէն գերմանացեղ կայսրերը Հոռոմ չեն նստիր: Արշաւանքներու ատեն իրենց շուրջը կ'առնեն բնիկները: Պրետորական նոր պահակազօրք մը պիտի կազմուի, Իլլիրիացիներէն եւ ուրիշ Գերմաններէ միայն բաղկացած: Հոռոմ հետզհետէ կը կորսնցնէ ամէն կարեւորութիւն: Անկումը պիտի տեսնէք: Ամէն օր փողոցներու մէջ սպանութիւն եւ մահափորձ: Աղեքսանդրիայէն ցորենի ներածումը բնաւ կանոնաւոր չէ հիմա: Ժողովուրդը անօթի է: Կայսրը այլեւս չի բաշխեր ոչ հաց, ոչ միս, ոչ դինի: Զինուորները չեն ստացած իրենց անվճար թոշակը: Մեհեաններ, լուարաններ, յաղթական կամարներ, շքեղ շինուածքներ փողոցներուն անկիւններն ու ծայրերը — ահա ինչ որ կ'երեւայ Հոռոմի մէջ: Հասկնալի է թէ ինչեր քաշեցին վերջին կայսրերը, ո՞վ կրնայ այսին խաթամուտին մէջ, իր կեանքին մէկ ժամը անդամ անապահով: Ազնուականները, պատրիկներն ու ծերակուտականները պարտաւոր պիտի ըլլան նորէն ենթարկուելու չլսուած չափով մեծագոյն տուրքեր որոշելու: Մեծ մասամբ կ'ուզեն անոնք քաշուիլ երթալ»:

— «Որպէս թէ իրենց նմանները ամէն կողմ չեն գտնուիր հոռոմէական համաշխարհային պետութեան մէջ, որպէս թէ իրենց պէս մարդիկ կը պակսին», ըսաւ իշխան Լիկինիոս հառաչելով: «Կ'երեւի, դժուար է սահմանազուլեններուն վրայ, մանաւանդ Հոննոսի վրայ կենալը»:

— «Ինչ է որ», ձայնեցին շատերը, իրար անցնելով: — «Միշտ ժողովուրդներու փոխադրութիւն եւ տեղափոխութիւն՝ Հոննոսի եւ Դանուբի վրայ: Մէկը միւսը կը քշէ ալիքի նման: Անհանգիստ խռովալից: Այն կողմերը կարծես անսպակաս է որոտումը, փայլատակումը: Ժողովուրդներու ճշմարիտ թափառականութիւն մը: Հսկայ զանդուածներով մարդիկ, նորանոր, անսովոր եւ անպէտ ուժերով լեցուն, դէպ առաջ կը խուժեն, եւ միշտ ուրիշ զանդուածներէ ալ իրենք կը քշուին: Ալէմաններ, Բուրգուններ, Հերուլներ, Քայրոններ, Գոթեր, Վանտալներ, Գեպիթներ: Կարծես այլեւս տեղ չէ մընացած աշխարհի մէջ եւ հողը այլեւս բաւական հաց չ'արտադրեր բոլոր այն զանդուածներուն համար, որոնք Հիւսիսէն ու Արեւելքէն կը խուժեն Հոննոսի եւ Դանուբի դէմ: Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վախճանը: Եթէ գոնէ Լեգէոնները հանդարտ մնան Հոննոսի վրայ, այլապէս՝ վայ եկեր է մեզի ամէնուս»:

Ներկաներուն տրամադրութիւնը ծանրացած էր: «Փրանկներու եւ Մաքսոններու մասին կ'երեւի բան մը գիտցող չկա՞յ», հարցուց իշխանը: Այս մասին Լիկինիանոս սա չափ միայն գիտէր, որ

Կարաւսիոս անոնց դէմ զրկուած էր: Իշխանը եւ Հիւրերէն ոմանք պուստեցին իրենց ճակատը, անվստահօրէն լայնցնելով իրենց բերանը: «Կարաւսիոս», կրկնեց իշխանը, երկարահնչիւն վանկերով: «Կը կասկածիմ, շեմ կարծեր որ անիկա յարմար մարդը ըլլայ խորամանկ Փրանկներուն դէմ»:

— «Է՛հ, յանցանքը կայսեր սխալ հաշիւն է, հարկու վնասն ալ ինք պիտի կրէ», գովեց սպաներէն մին: Այս արշաւանքը մեր բարեկամ Լիկիւնիանոսի ղեկավարութեամբ պէտք էր ըլլար: Ան էր ճիշդ յարմար անձը, ան որ մեր երկրին ներսը բոլորովին փճացուց գողերն ու աւաղակները»: Ուրիշ բարեկամներ ամէն կերպով համամիտ եղան: Լիկիւնիանոս շնորհակալութիւն յայտնելով՝ ամէնուն կենացը խմեց: «Բրիտանիա եւս հանդարտ պիտի շմայ», շարունակեց: Գալլիոյ մէջ — քիչ մնաց պիտի մոռնայի — ամէնէն նորը եւ ամէնէն վտանգաւորը»: Երկար արուեստակեալ դադարէ մը ետք. «Ժողովրդային ամէնէն վարի աղքատագոյն դասակարգերուն մէկ նենգամիտ արարքը: Խոշոր խումբեր կը կազմեն, իրարու մօտ կը հաւաքուին: Պակօտ անունը տրուած է անոնց: Պարազուլներ ընտրած են եւ չորս կողմերը կը կողոպտեն ու կը յափշտակեն: Եւ ամէնէն նշանակալիցը. այս աւաղակները Քրիստոսի անունը կը շահագործեն, ըսելով թէ՛ «Քրիստոս Աստուած եւ օգնական է աղքատներուն եւ խեղճերուն, անոր կ'աղօթեն եւ զանդուածային կերպով քրիստոնէական վարդապետութեան ներածուած են»:

— «Այո, ճիշդ տեղին դարկիք», ձայնեցին քանի մը սպաներ: «Ուր որ ապստամբութիւն եւ գրգռում կայ, քրիստոնեաները հօն են»:

— «Շատ աչքի զարնող բան մը», ձայնեց Պաւղոս: «Քրիստոնեաներու վարդապետութիւնը ուրախութեան աւետիս մըն է աղքատներուն եւ խեղճերուն համար, բայց կայսեր եւ վերին իշխանութեան դէմ ապստամբութիւն չի հրամայեր այդ վարդապետութիւնը»:

— «Բայց երբ անօթութիւնը գրգռէ՞ աղքատները», դիտել տըլաւ Լիկիւնիա՝ արգահատանքի զգացումով:

— «Պետութեան մէջ այլեւս կարգ կանոն չկայ: Ժողովուրդը, զինուորներուն պէս կ'իթան կով դարձած է առեւտրականներուն ձեռքը: Մեզմէ ոչ ոք կրնայ թուել այլեւս թէ ժողովուրդը ի՞նչ կը քաշէ շուկային վրայ: Ամէն ծախող ուզածը կը պահանջէ: Դրամ ունեցողը կը գնէ: Չունեցողը կը գողնայ: Եթէ այսպէս երթայ, զգեստեղէնն ու նպարեղէնը գողնալով միայն ձեռք պիտի բերուի: Օտար դրամն է որ շրջաբերութեան մէջ է, ո՛չ կայսրը, ո՛չ Աստուած գիտէ թէ ուրիշ, յանկարծ պարկով օտար դրամ կը բերուի, խարող խար-

ուողի: Մերակուտականները զանգուածօրէն՝ կը՝ գաղթեն Հոնոմէն, եւ գլխաւորաբար հարուստները: Անոնց տուները պարսպ կը մնան, այլեւս գնող չկայ, եւ ժողովուրդը կը նայի որ ինչպէս գաղտագողի անոնց մէջ մտնեն: Հետզհետէ ահապին տարածութեամբ հողեր անմըշակ կը մնան: Ամէնուն ձեռքը կապուած է: Ով որ մեծաքանակ դրամ կրնայ ծախսել ամէն օր եւ դերիններ ու ստրուկներ գործածել, ան կրնայ բան մը ընել, բայց հիմա ո՞վ մնացած է այդ կարողութեան տէր, հարիւրին 30-40 շահ կը պահանջեն: Վաշխառութիւնը սոսկալի աստիճանի հասած է: Հարուստներու պերճանքը — դուք չէք կրնար դադափար կազմել այս մասին: Գերիններ եւ գործաւորներ մէկ օրէն միւսը կրեսոս կ'ըլլան, իսկ դրամատէրներ, որոնք ասկէց առաջ ամէն բանի տէր ու տիրական էին, իրենց բեռները կը կապեն ու կը հեռանան: Մաքս մաքսի վրայ: Տուրք տուրքի վրայ: Եւ — ամէնէն գէշը — խաժամուժին, գողերուն, պարագլուխներուն եւ քրիստոնեաներուն դործի զլուխ անցնելը, յառաջացումը»:

— «Ներկաները այս արտայայտութիւններէն զգացուած էին, եւ ամբողջ կայսրութեան մէջ տիրող նեղացուցիչ ծանր անհանդարտութիւնը իրբեւ մտաւոր ջախջախում մը կը զգային: Հիւրերը ոտք ելած էին, եւ ման կու գային ընդարձակ սրահին մէջ, երկուական, երեքական, խումբով, եւ նուրբ երկայն, ալիսածեւ փորուած սիւներուն եւ լայն դռներուն մէջէն անցնելով, սանդուխէն վար կ'իջնէին, որ կը տանէր դղեակին ետեւի կողմէն ուղղակի դէպի պարտէզին ամենապեղեցիկ մասը, որ սովորաբար բարձր աշտանակներու լոյսով կը ճաճանչէր, բայց այս գիշեր լիալուսինին փաղփիւնով յորդահասան, գրեթէ ցերեկուան պէս լոյս էր: Գերիներն ու վերուհիները, Ծնորհներու պէս զղեստաւորուած, իրենց ճերմակ կամ երկնակապոյտ, շուշաներփեան, վարդակարմիր, կանաչաուլիտ, դեղին հալուստ-կապուստով, որ աջ թեւը ուսէն սկսեալ աղատ կը թողուր, անձայն կը սահէին սաստկարոյր, գիշերաթուրմ մարդին վրայէն, վարդադրասանդներու, ծաղկափթիթ զափնեվարդերու եւ կզրիններու մէջէն, դինի բաժակներ կը հրամցնէին, փառաւոր պտուղներ, քաղցրաւենիներ բոնած զարգարուն կողովներու մէջ կամ ոսկի, արծաթ ըմպանակներով: Հեռուէն ալ մեղմ, նրբնի, մերթ, զուարթ, մերթ ծանրաչէտ խաղը նուազածուններուն: Այսպէս էր իշխանին փափաքը, ինչպէս միշտ: Իր սեղանին վրայ, ինչպէս սովոր էր ըսել, պէտք էր միանային ծանրախոհ Ուիները եւ զուարթաբարոյ Աուսաները, Արուեստն ու Գիտութիւնը եւ Փիլիսոփայութիւնը, որոնցմէ վերջիններուն կարգը կը հաշուէր Կաւե դէպի կրօնք ձգտումը: Ըստ այսմ արդէն հրաւիրուած էին հիւրերը: Եւ Աթէնքի մէջ բարձր



պատիւ կը համարուէր ել եւ մուտ ունենայ Լիկինիայի Ամարանոց — Իդեակին մէջ, Համարակներու եւ ոչ-գարգապեղաններու Համար հոն տեղ չկար: Հրատարակուածք անուն ունէր արդէն քաղաքականութեան կամ սրեւէ գեղարուեստի մէջ, կամ կարող էր հասկնալ, գասել, գովել ինչ որ այդպիսի երեկոյթներու ասիւթով գերազանց մարդոց եւ կիներու կողմէ կը ներկայացուէր իրրեւ ձառ, իրրեւ բանաստեղծութիւն կամ երաժշտութիւն: Եթէ Լիկինիանս ծանրախոհ քաղաքացիս մը, շատ ապանդատը եւ յայտնի սպայ մը շրջար, որ չկարենար հետաքրքիր բաներ խօսիլ քաղաքական եւ սոցիալիստական տեսակէտներով, եթէ բարեկամական շրջանակի եւ յաճախ նոյնիսկ իրմէ բարձր վիճարանութեան մէջ ցոյց շատը իր բնածին հասկացողութեան ձիրքը, սուր եւ քննադատական ձիրքը, Իշխանին գաւակը անգամ մէկը պիտի ըլլար անոնցմէ, որոնք յստարակամ գիրենք հետի կը պահէին այս գերբնախի շրջանակէն, որ բնականաբար մարդ գիտնալու էր, թէ Փիլիսոսի եւ Պրաքսիթէլի արձանագործութեան արուեստներու գլխաւոր տարրերութիւնը ի՞նչի մէջ կը կայանար. կամ սեւ յիշատակուած խօսք՝ ձեռն ու պարունակութեան համաձայն՝ Սոփոկլէսէն կը բխի թէ Եւրիպիտէսէն, թէ Պլատոնի եւ Արիստոտէլի փիլիսոփայութեան տարրերութիւնը ի՞նչ է, եւ թէ Տարսնացի Պսոփան է արդեօք Լեւ Համայնեցիս թուղթին հեղինակը: Կրնար նոյնիսկ կրօնքի մասին խօսք գտնուել ասանց նեղացուցիչ ըլլալու, այդ պարագային, բնկերային բովանդակ շրջանակին մէջ ընդհանուր յարգ վայելող Պապ կարող էր մէջէն ելլել հանձարեղ, կազմ ու պատրաստ, յաճախ սրամիտ, վսեմախոհ եղանակով, եւ որուն մօտ համեատրէն տեղի կու տար նոյնիսկ գեղանին Յուդիթ, որ աւելի պարզացած էր քան հանձարեղ:

Բայց կերպարանով ու գեղեցկութեամբ ամէնքը կը գերգանցելը Վաղարշապատի քրմանոյր: Չէր կրնար իրմէ խուսափել, թէ ամբողջ երեկոյթին միջոցին իր անձնաւորութիւնը ինչ տպաւորութիւն կ'ընէր ամէնուն վրայ, մասնաւորապէս նկարիչ Վիգիլիոսի եւ արձանագործ Ապոկլէսի վրայ: Քանիցս շիկնելով դիտած էր, թէ ինչպէս արուեստագէտներուն շատ մը նայուածքները հետախոյզ, հաճոյական, կը հանդէպին իր եւ իր կերպարանքին վրայ. թէ ինչպէս ամէնքը յուս հետաքրքրութեամբ խոր ուշադրութիւն կ'ընծայէին Հայաստանի երկրին ու մարդոց վրայ անոր փափաքելի տեղեկութիւններուն, եւ իր աչքին զարկած էր ամէնուն խոր ու անբարբառ համակրանքը իր ու տղոց մասին: Ետեկցութեան, պատուաբութեան կամ բնկերակցութեան միջոցին այբերէն եւ կիներէն ոչ ոք աւելի ուշադրութեան առարկայ կ'ըլլար քան ինքը, որ բաց կանանց չզարչանման նիւթէ ամենազարդ, բոլորովին սեղմ, ծալքուել ծփուն

հանդիսադրեալուն մէջ, արծաթափայլ ժողկերով, հոյանի հերքին մէջ կայծկրտուն շողակներով, եւ ազամանդներով, արեւածու սկուտեղներով, յունականերով եւ ուրիշ ճանանչատեսիլ գարգերով ոսկրածոյ կամարին վրայ ճախենեմէր թաղուհի մը պէս: Պարտաւորուած էր անպայ ցատակ իր հայրենիքին, կրօնքին եւ մեծնական իր սպասարկութեան մասին, եւ անոր համար երջանիկ կը գլար ինքզինքը, մանաւանդ թէ աակէ քիչ առաջ ամբողջ իրիկունը այդ մասին ապերջանիկ եղած էր ներքնապէս, որ ինքը խօսուածներուն շէր կրքցած հետեւիլ, անտեղեակ ըլլալով իրրեւ ոչ-կայացացի: Բայց հիմա իր տարբին մէջ էր. միաքի նոր բնդարձակ, գեղեցիկ աշխարհ մը ծաղած էր իր առջեւ: Ետին եկած էր իրեն վրայ անապահովութեան այն թեթեւ բաց վարանեցող պայտուքը, երբ կը տեսնէր կրկին որ նոյն ալիքը կու գայ գէպի ծովափ՝ որ կեցած էր. յեզու կը հանէ կը լիզէ, եւ փոքր մասնիկներ ափէն պղլալով կը հասնէ հետու, եւ տառաժանելով փոքր քայլ մը նորէն եւ կ'երթար միաքովք: Այն է — կը վախնար որ ազաքը հեղինական պարզացումի այս ծովուն մէջ խորթափանց, կը մոյրքին եւ հայտարուն կրօնական ազգեցութիւնը կ'այլաւերի: Այն անունը՝ որ գինքը շէր թողած պարձեալ շարաթնեղէ ի վեր, որ արդէն ըլլայ գիշեր, ըլլայ արթուն, կամ երազի մէջ, իրեն կը նայէր սեւեաւորիք, կարծես հրակերպեան առաւելով, այս իրիկուն ալ բնաւ շարունկացաւ: Այս իրմէ շատ բարձրաթիւն յեղկերութեան մէջ այս իրիկունն ալիքը իր մասաւոր կզգիին շարժ տարբեր կերպով կը պարնաի եւ կը թրջէ պայն: Արտինէ վաճախակի, երբեմն ասոր, երբեմն անոր հետ կը ճեմէր: Լիկինիանս ալ շէր նեղեր գինքը, այս իրիկուն հիշող եղար պէս հագածու էր իրեն շարժ: Երբեմն իշխանը իր քովը կու գար երբեմն ալ իշխանուհին եւ ասոր քարեկամուհիները: Աւելի երկար ասուն սակայն կը կենար խամքերէն մէկուն մէջ, կորնթական սրննորուն մէկ խամքին մէջ, որոնք մեծուսոյց խօսակներու վրայ կը կրէին երկայն, յայթ, գար: Մարմարեայ մարդակներ, որոնց վրայ կը հանդէպ սրննաւոր ճեմելիքին ասնիքը իր բարձրաքանդակներով: Ապոկլէս եւ Վիգիլիոս արուեստագէտները հոս կը խօսէին իրենց նոր աշխատութիւններուն վրայ, եւ խօսակցութիւնը եկաւ գեղարուեստի, ձեւերու, գիծերու, գիրքի եւ շարժումի ներդաշնակութեան, մեղի ու բնականուն մարդկային մարմինին գեղեցկութեան վրայ: Արուեստագէտները այնքան մաքուր, այնքան աստուածարեալ, այնքան բաց ու բնական կը խօսէին, որ Արտինէի մէջ ինքնարեւարար սա մտածումը բխեցաւ. «Ինչո՞ւ եւ ծածկուիմ յոտից ցոլուիմ»: Եւ մէկէ աւելի նայուածքով Ապոկլէս գուշակած էր. «Թէ որքան ճշգրիտ կերպով անոր կերպարանքը կը պատշաճի իրրեւ կարապար իր նորագոյն ստեղծագործութիւններուն: Իր նայուածքը

գետինը կը փնտռէր: Ու երբ վեր նայեցաւ կրկին, տեսաւ Վիգիլիոսի եւ Ապելիսի աչքերը՝ իրեն վրայ ուղղուած մաքուր, անդորր շողով: Կը զգար, ինչպէս արիւնը զլուխը կը ցատկէր, իրեն այնպէս կուզար թէ գետինը կ'երերայ կը խուսափի իր ներքեւ, եւ թեթեւ մը ծիծաղելով անոնց՝ թախծալին կը քալէր կը բաժնուէր ուրիշ խումբի մը կողմը, որ հաւաքուած էր կարկաշտն աղբիւրի մը մօտ աթոռներու, հանգստարաններու կամ քարէ նստարաններու վրայ, կամ կեցած էր իշխանական ամրին, Պաւլայի եւ Յուզիթի շուրջ:

Աղանդերի միջոցին զարձակ խօսակցութեան սկսան: Գիտնականներէն մին, Տակիտոսի նկարագրութիւններուն համաձայն, խօսեցաւ, խիստ հետաքրքրաշարժ ծանօթութիւններ տալով զերմաններուն ծաղումին, կեանքին, սովորոյթներուն եւ կրօնքին նկատմամբ: Յետոյ Լիկինիանոս քիչ մը խիստ կերպով իր դժգոհանքը արտայայտեց, այն միտքով թէ վերջին ոչ սակաւ դիտուներու կարծիքով այդ Գերմաններն ու Գոթացիք եւ ամբողջ ոչ-հռոմէական բարբարոս խաժամուժը հռոմէական անկեղծ կայսրութեան ժառանգորդները պիտի ըլլան եղեր: Բայց ասով Հռոմին հասած չեն ըլլար: Մինչեւ որ այդ կողմ ու կողիտ խաժամուժը կարենայ կարգաւ եւ գրել, թողունք բարձր զգացումը, արուեստն ու դիտութիւնը, Հռոմ կրնայ տակաւին հանդիստ քնանալ:

«Կը զարմանամ, տղաս», ընդմիջեց Լիկինիոս, «որ դուն բարբարոսներուն այդ թերութեան խօսքը կ'ընես: Իբրեւ սպայ, սակայն, դուն, ինչպէս ես ժամանակին, պէտք է դիտնաս, թէ պատերազմի ատեն վերջին հարուածը կու տան ոչ այնքան արուեստն ու դիտութիւնը, որքան ոյժը, առողջութիւնը, քաջութիւնը եւ հաւատարիմ ծառայութիւնը: Ես Տակիտոսէն դիտեմ, որ Գերմանները, ամէն բանէ առաջ զլիսաւոր կշիռքը կու տան այս առաքինութիւններուն: Եւ այս առաքինութիւնները, Լիկինիանոս զաւակս, Հռոմի շատ սուղի նստեցուցին Վարտն ու իր լեզուները: Հռոմայեցոց համար կորսըւած է ոյժն ու հաւատարմութիւնը: Ասիկա մեր դժարախտութիւնն է»:

— «Կի՛նը նուիրական է Գերմանացիներուն», խօսք առաւ Պաւլայ, մաքուր ու անդորր նայուածքը Լիկինիանոսի յառած. — «Բայց Յոյներն ու Հռոմայեցիք կը պղծեն զայն: Ո՞ւր է հիմա «ընտանիքին հայրը», ո՞վ կը յարդէ զայն: Արդեօք Լիկինիանոս բացառութիւն է»:

— Լիկինիանոս զլուխը ծոկեց, անոյժ մը ինդալով:

— «Ո՞ւր է հիմա զգաստութիւնը, ամուսնական հաւատարմութիւնը, ամուսիններու, ծնողքի, զուակներու սէրը մեր մէջ: Գիտէ՞ք, կը ճանչնա՞ք դուք էմպոնս մը ամբողջ հռոմէական կայս-

րութեան մէջ, որ յաղթահարուած Սարինոսի հետ իննը տարի անտաններուն եւ փապարներուն մէջ ապրի, — այն դալիիական իշխանական ամուրը, — որ անտաններուն մէջ իր փնտռած հատապտուղներով եւ մուրացածոյ կերակուրներով պահեց այրը, եւ իննը տարի վերջ անոր հետ Հռոմ դնաց, Վիտիլիոս կայսեր ոտքը ինկաւ ամուսնոյն կեանքը խնդրելու համար, եւ ի վերջոյ երջանիկ կը զգայ ինքզինքը անոր քով զլիսատուելուն համար» — «Հոյակապ: Գեղեցիկ», ձայնեցին շատերը, կարծես միարեան: Լիկինիանոս լուռ կը մնար: Ժայռայի մօտիկը, եւ բազմոցին ազատ տեղը, նկարէն գեղեցիկ դիրքով մը նստաւ Պաւլայի ոտքերուն տակ, իր ձախ թեւին կրթնած: Ամբուժեան եւ սրբութեան, կնոջական ճշմարիտ արժանաւորութեան զգացում մը եկաւ հիմա իրեն վրայ, իրեն համար անծանօթ կարծես: Յոյներն ու Հռոմայեցիները կը պղծեն զայն, կ'ինը: Ասիկա ի՞նչ կը նշանակէ: Ուրեմն ինչեր կ'ըլլան: Իցիւ Պաւլա տակաւին խօսէր այդ մասին: Եւ անոր քնքոյշ, մտերմիկ, ներքին սէրը հանդէպ իր ամուսնին, սա նայուածքները, որոնք անպատմելի սէր մը եւ փոխադարձ հասկացողութիւն մը կը թուին յայտնել ամէն բանի մէջ, — Արսինէ ասիկա նոյնիսկ չէր տեսած Խոսրովին վրայ հանդէպ թաղուհիին: Այո՛, թաղուհիին կը սիրէր թագաւորը, կը սիրէր զայն սաստիկ եւ անոր հետ մեռաւ: Էմպոնային պէս ըրաւ: Բայց թաղաւորը...: Այո՛, թաղուհիին ամէն կերպով հանգիստ էր, կ'ուտէր կը խմէր, ճշմարիտ է: Բայց յաճախ տըխուր էր: Այս կէտը հիմա աւելի միտքս կ'իյնայ քան սոսքները: Ամուսնական հաւատարմութիւն, ըսաւ Պաւլա: Թագաւորը ուրիշ կ'ինքրաւ կը սիրէր: Զիս ալ: Այո՛: Բայց ես — քրմուհիին էի: Սուրբ ծառայութեան մէջ լուռ լճին մօտ, սրբավայրի մէջ՝ սուրբ աղաւնիներու մօտ՝ որոնք կը մնչէին, կը թրթռային եւ գիրար կը սիրէին եւ զիրար կը ծածկէին իրենց ոսկեկայծ փետուրներով, եւ ուրկէ սուրբ ձուկերը ջուրէն վեր կը ցատկէին, որպէս թէ կ'ուզէին տեսնել թագաւորին սէրը Անահիտի համար, — այս ամէնը ի՞նչպէս մաքուր եւ գեղեցիկ կ'ըլլար եւ — սակայն բարի:

— Արսինէի մտածումները նորէն Յունաստան կը վերադառնային: Մեղք: Մարդոց շատ մը անոյժ խօսքերը իրեն շուրջ հիմա անցան զացին: Երբ Արսինէ արթուն դիտակցութեամբ ահանջ կը կատէր խօսակցութեան, Պաւլա ներկայ այրերուն հետ ծանրակշիռ վէճի բռնուած էր: Յուզիթ միայն իր կողմն էր: Պաւլա հանձարեղ կերպով եւ հեղինակէն այրերուն բոլոր առարկութիւնները կը ջախջախէր, որոնցմով անոնք կը ջանային հերքել Պաւլայի սա պնդումը, թէ կ'ինը կոչուած է տնական ինչպէս նաեւ հանրային կեանքին մէջ

ամուսնոյն համարժէք հաւասարապատիւ ընկերուհին ըլլալու : Կեանքին մէջ անոր պիտի չզլացուի ոչ մէկ իրաւունք, ոչ մէկ ազատութիւն, ոչ մէկ կոչում, ոչ մէկ դիրք : Որչափ ալ անուսումն, անփորձ — չարագոյցած — ըլլայ կինը, հարցուցին ոմանք : Պաւլոս քահ քահ խնդաց : «Քիչ առաջ դուք այրերդ էիք ըսող, թէ ամբողջ հոռմէական սուրբ կայսրութիւնը կործանումի մօտեցած է : Ընդհանուր անկարգութիւն կը տիրէ : Բարոյականն ու առաքինութիւնները ինկած են : Դուք բարի այրեր — ահա ձեր կառավարութեան պտուղները տեսէք : Դուք կոռւիլ ու մեռցնել կրնաք : Դուք կրնէր չարչարել եւ անպատուել կրնաք : — Վայելի եւ ծուլանալ, սա կըրնաք դուք : — Օրէնքներ չինել, որոնք բնաւ չեն դիմանար խօսիլ եւ ոչինչ ընել : Գեղարուեստի զործեր յորինել եւ ժողովուրդը անօթի թողուլ . այո սա է ձեր կրցածը : Կաղաչեմ ըսէք, յորմեհետէ աշխարհը աշխարհ է, այրերը ի՞նչ մեծ բան ստեղծած են, պատերազմէն ու մարդ սպաննելէն զատ : Եթէ անուանէք կամ մէջ բերէք Սոդոմ, Լիկուրոս, Նումա, Դրակովն, Օլոսոսս, — ես ալ հարիւր հազար անգամ հազար անուններ մէջ կը բերեմ ազնուախոս մայրերու, որոնք ձեր փառաւոր պետութեան համար ծնան այրեր պատերազմի, անդործութեան, անպարկեշտութեան միայն կարող : Տասը հազար տարիներ կամ աւելի ժամանակ ունեցած է ձեր սեռը աշխարհը ապականելու : Մասնակից ըրէք կինը ձեր զիմնադիրնին, մարմնամարդին, լուզորդութեան, որսորդութեան, մարմինին կազուրումին, ձեր ոգիմպիական խաղերուն, խորհուրդներուն եւ օրէնքներուն, բացէք անոր առջեւ մանկամասերուն ղոնները, մանարաններն ու լուացարանները, հարիւր տարի ժամանակ տուէք մեզի, եւ մենք ձեզի այրերուդ՝ հաւասար արժէքով պիտի չըլլանք, այլ գերազանց, դուք ձեր եղած տեղը մնաք — դերի ձեր մոլութիւններուն, դերի մարմինին եւ գինիին —» :

Բաւական տեսնէ ի վեր որ Պաւլոս այսպէս կը խօսէր, իր ամուսինը սարսափահար՝ վերէն վար կը սեղմէր ձեռքը որպէսզի կարճ կապէ : Բայց ի զուր : Պաւլոս ա՛յ աւելի կը խանդավառուէր եւ մինչեւ հոն հասած էր, որ կարողացաւ ինքզինքը մտիկ ընել տալ առանց հակասողի : Տրամադրութիւնը ի հարկէ լուրջ էր : Պաւլոսի ճառը տեսակ մը քարոզութեան զոյն առաւ կնոջական արժանիքի եւ այրերու պարտականութեան, ճշմարիտ սիրոյ էութեան մասին : Ինչպէս սովորաբար կը պատահի, մէջտեղ ելաւ այրերէն մին, ծերակուտական Լոնգինոս : Դժբախտ ամուսնութեան մէջ բռնուած, սկսաւ նախատել ամուսնութիւնն ու կինը եւ ամէնէն առաջ նկարագրել իր կրնոջ մոլութիւնները : Արդ, ամէնքն ալ զիտէին որ ըսածներուն մէջ

չատր ճշմարիտ է, եւ եթէ Պաւլոս ներկայ չըլլար, Լոնգինոս պիտի նկատուէր նոր Սոկրատ մը, որ շատ բաներ քաշեց իր կնոջ՝ Քսանտիպոսի ձեռքէն : Բայց հիմա Պաւլոսի աղղկութիւնը տիրապետող էր : Երբ սկսաւ սիրոյ վրայ խօսիլ, եւ ապացուցանել, թէ ինչպէս մարդոց կողմէ սէր կոչուած բանը ուրիշ բան չէ՝ այլ մարմնասիրութիւն եւ վաղանցիկ, յեղեղուկ զպացում մը, անձնասիրութիւն, հեշտասիրութիւն, եւ ահա ամէնքը իրեն իրաւունք տուին : Պաւլոս ինքն ալ համամիտ դոնուեցաւ, թէ ընդհանրապէս երիտասարդական, առողջ երջանիկ ամուսնութեան մը համար այդ բնական փոխազարձ հաճոյքն ու հրապոյրը պատրաստ պէտք է ըլլայ : Բայց սէրը ատրկա չէ, այլ բնական, աստուածատուր ձգտում մը : Իրենք պէտք է ըլլան սէրը : Սէրը այն է, երբ հաստատուն հաւատարիմ կամք մը կը կառավարէ այդ ձգտումը, բնազդումը, ան կը բռնէ՝ երբ անոնք կը փախչին . ան կը հրահրէ՝ երբ անոնք մարել կ'ուզեն : Սէրը այն է՝ երբ մարդ ոչ թէ իր, այլ ուրիշին երջանկութիւնը կը փնտռէ, երբ մէկը միւսին բեռը կը կրէ, ամէն օր համբերութիւն եւ հեռատեսութիւն կը զործածէ :

— «Միշտ հանդուրժել, ներել, յաղթել եւ իրարու հաւատալ ամէն պարագաներու մէջ, նոյնիսկ կեանքէն ալ անդին — այս է սէրը, այս միայն : Կինդ այսպէս սիրեցի՞ր դուն, Լոնգինոս» :

— Այս վերջինը, շուտաւ, վհատած, ցած ձայնով, «Ո՞վ այդպէս կը սիրէ : Ո՞ր Հոռոմայեցին կամ Յոյն : Ասիկա կրնայ ընել միայն քրիստոնէուհին Պաւլոս —» : «Ոչ, ասիկա կրնան բոլոր Քրիստոնէակաները, եթէ անոնք Յիսուսի ճշմարիտ աշակերտներն ու աշակերտուհիներն են : Յիսուսի շնորհիւ միայն զիտենք, թէ ինչ է սէրը : Դուք հեթանոսներդ, նոյնիսկ ձեր մէջէն լաւաւոյնները, ամէն բան կ'ընէք ձեր սիրոյն համար : Ձեր բոլոր մտածումներուն, խօսքերուն, գործերուն եւ արարքին մէջ դուք ձեր միջին կէտն էք, ամէն բան ձեր շուրջ կը կեդրոնացնէք, ձեր յաջողութիւնը, ձեր պատիւը, ձեր վայելքը, ձեր ստացումները, ձեր բարօրութիւնը ամէն բանի մէջ : Դուք զայն միայն կը սիրէք որ ձեզի ամէն բանի մէջ իրաւունք կուտայ եւ ձոր ոտքին տակ կը դնէ ամէն բան : Բայց իրօք կը սիրէ՞ք զայն : — Ոչ, դուք կեղծաւորներ, կ'անարդէք զայն, այս պատճառաւ կ'անարդէք նաեւ կինը, զայն խարելի եւ անոր արժանապատուութիւնը ծախու առնելի վերջ : Եւ տակաւին կը խորհիք երջանկութիւն եւ զոհացում գտնել, երբ ուրիշներուն մարմինն ու հոգին կը խորտակէք դուք : — Եւ ձեր խիզճ խորունկէն կ'ըսէ . — «Ո՞վ որ իր կեանքը կը փնտռէ, պիտի կորսնցնէ զայն» :

Հիւրեր կուգային : Վիճարանութիւնը ընդհատեցաւ : «Լոնգի-

նոս», փսփսաց Պաւղա, ծերակուտականին սկանջին. «Այսօր իսկ սկսէ սիրել կինդ այնպէս՝ ինչպէս բսի, եւ յետոյ կը հասկնաս թէ տունիդ մէջ ինչ հրաշք կատարուած է»:

Ժամանակը եկած էր, որ Հայոց զահաժառանգը վարժուի կեանքի բնականոն եղանակի մը եւ լուրջ աշխատութեան: Երկար ատենէ ի վեր կը փնտռուէր յարմար ուսուցիչը, եւ դժուարութեամբ միայն կարելի եղած էր մէկը ձեռք ձուլել, որ քաջութիւնը ունենար երկու արքայորդիները կրթելու:

Բայց առաջին ժամուն, այսինքն ուսուցչին եւ տղոց առաջին հանդիպումին, ի ներկայութեան արքայական ամուլին եւ Արսինէի, յայտնի եղաւ որ ուսուցիչի սխալ ընտրութիւն եղած էր: Տեսակ մը պատանեկան, բարեկամական, քաղաքավարական ձեւ հաճելի եղած էր նախ իշխանին երբ ուսուցիչը իրեն ներկայացուցին, վախկոտ, համեստ վարժապետ մը, խոնարհութիւն ընող եւ շատ քաջուող: Բայց վերջապէս տղաքը բերուեցան իրենց առաջին վարժապետին մօտ, անոնք տեսան նիհար, երկար-բորակ երխտասարդ մը, կարմիր երկայն կիսակօշիկներով, զորչ պարեպօտով, լերկ դունատ դէմքով, քունքերուն շուրջ դուրս մաղերով, որ կարապի պէս գլուխը կը բարձրացնէր երկար բարակ վիզին վրայ, եւ յետոյ այնքան խորը կիլ-ջեցնէր որ մարմինն ու սրունքները ուղիղ անկիւն մը կը կազմէին, յետոյ դարձեալ վեր կը հանէր արադօրէն, շուարած, ջրականաչ աչքերով եւ ծիրանի այտերով իր իշխանազուն սաներուն կը նայէր, որովհետեւ Տրդատ եւս իր անուակերպ պայծառ աչքերով այնքան խուզարկու եւ քննադատող ձեւով, եւ Խոսրովիզուխտ այնքան սիրալիր զիջողութեամբ անոր կը յտէին, որ չկրցաւ որեւէ յառաջաբան դտնել եւ նոյնիսկ յարմարագոյն առաջին ողջոյնի մը մէջ յաջողիլ: Այլ անդամ մըն ալ ուղղանկիւն մը ձեւացուց քամակը ծռելով դէպի ծունկը իշխանին առջեւ, ի նշան երախտագիտութեան: Երբ երխտասարդ վարժապետը մեղքնալով, արքայազուն աշակերտներուն հետ մինակ ձգեցին, այն ատեն միայն կրցաւ ինքզինքը ժողվել եւ դասի սկսիլ: Թեթեւ, սեւ դրատախտակներու վրայ, ճերմակ մոմ քաշուած, յունարէնի առաջին տտերը քանդակուեցան եղջիւրէ գրբիչով, որուն առջեւ մասը սուր ցցուած, իսկ ետեւը փայտէ փոքրիկ գունդ մը: Եթէ տառ մը սխալ դժուէր կամ անոր մէկ մասը, զունդովը մոմը կրկին պատկանեալ տեղին վրայ կը շտկուէր, կը քսուէր: Ասիկա Տրդատին մանուսանդ շատ հաճելի կը թուէր եւ կը փափաքէր որ սխալմունքը շատ բլլար, մոմին միջամտութիւնը վայելելու համար, բայց պէտք եղածէն քիչ կը պատահէր վրիպում մը: Վարժապետը շատ համբերող, շատ քաղաքավար էր: Որքան

շատ որ Տրդատ հարցնէր թէ պէտք է դարձեալ քսէ մոմը, կրկնապէս կ'ուրախանար, որովհետեւ զործի սկսելէ առաջ վարժապետը քամակը կը կը ծռէր հայ իշխանին առջեւ, բարձրկէկ բարակ ձայնով մը — «Այո արդարեւ, որդիդ դու արքայի», — եւ Տրդատին երկրորդ ուրախութիւնը այն էր որ խորամանկ քրքիջով մը վարժապետը մոմը կ'ողորկէր սեւ տախտակին վրայ: Այդ օրէն սկսեալ, առաւօտեան ժամերուն, կը հնչէին յունարէն լեզուին ձայնանիշերը ուրախութիւն պատճառելով դասարանին քովը գտնուող իշխանին: Մերթ Տրդատ, մերթ Խոսրովիզուխտ, մերթ երկուքն ալ միասին կ'արտասանէին, Ալֆա, Բէթա, Գամմա մինչեւ Օմէղա, եւ նորէն կը սկսէին, խնդուքներով ընդհատուած. Ալֆա, Բէթա, եւ մինչեւ որ կարմրակօշիկ մանկավարժը ուղղանկիւն խոնարհութեամբ տար փակուածի եւ իր գոհունակութեան նշանը: Շատ չանցած, պէտք եղաւ որ չափահասներէն մին կարդով ստանձնէ դասի ատեն կարգապահութեան հսկողի դերը: Մոմին քսուիլը միշտ միեւնոյն հաճոյքը կ'ատթէր հայ իշխանին: Ինչո՞ւ մոմը այնքան կակուղ եւ ճկուն էր, եւ երբ փչես վրան, ալ աւելի կակուղ կ'ըլլայ եւ ամէն տեսակ դիժեր քաշելու աւելի ձեւերնկալ: Երբեմն այնպէս կ'ըլլար որ տախտակին ամբողջ կէսը միայն մոմով ծածկուած կ'ըլլար, միւս կէսը դնդակի կ'ըլլար կըպչուն, ճերմակ կափարիչներու համար զործածելի, կամ կիսարձանի մը երեսը շինելու, կամ այտուտոյց Տրիտոնին տակ ակին ձուածեւ աւազանին համար, որուն կողմը նայելու կը յաջողէր Տրդատ նոյնիսկ դպրոցական նստարանէն դուրս, խորամանկ ձեւերով եւ դժուարութեամբ: Տրիտոնին պատկերէն կ'ախորժէր: Խոսրովիզուխտի հորանի, դիրուկ, մետաքսի նման փափուկ թեւերը եղբորը սուր զրիչին շատ մօտն էին, այնպէս որ Տրդատ շատ կը փափաքէր իմանալ, թէ որքան երկար եւ խորունկ կրնայ խայթել այդ քնքոյշ թեւերը, պայմանաւ որ քոյրիկին ցաւի սրեւէ աղաղակը ուսուցիչին քով չմտանէ իր չարածճի վարմունքը: Բայց ինչ կարեւորութիւն ունէր, Խոսրովիզուխտի թեւը ցաւէր ու սրտար իսկ, մանկավարժը բարոյական կողմին չէր նայեր, այլ առողջական հոգածութեան ետեւը ապաստանելով, քանիցս քամակը կը ծռէր վիրաւորեալ աղջկան դէմ եւ խնամաժու խոնարհ շեշտերով կը հարցնէր. «Քաղաւորին դաւակը անդամ մըն ալ ձեզի ցաւ պատճառեց սրածայր գրիչովը, ով արքայազուստըր: Ահա արիւն կը հոսի: Գարմանի համար մարդ կանչե՞մ», մինչեւ որ քոյր ու եղբայր երկուքն ալ, միշտ հաւատարիմ եւ միահողի, կը խնդային եւ կը պաղատէին որ վարժապետը բան մը չըսէ: Բայց երբ Տրդատ վարժապետին մորթին վրայ ալ փորձեց, Խոսրովիզուխտին վրայ գէշ աղղեց վարժապետին յանկարծական վարանումը այս

անպատշաճութեան երեսէն, եւ գաղտնի կերպով հոգ տարաւ, որ պէտք իրեն եւ վարժապետին համար այսուհետեւ հսկող մը ներկայ գտնուի: Բայց այս ու այսպիսի բոլոր միջոցներուն հակառակ, սորովիլ եւ լաւ վարժունք ունենալ սկզբնական կամ տարրական վիճակի մէջ էին Տրդատին քով, եւ երբ առտու մը իշխան Տրդատ, անդամ մըն ալ, ծարաւէն նեղուած, աթոռի մը վրայ կենայով, չարածճի, խորամանկ ծամածռութիւններով, մէկ թեւովը Խոսրովիդուխտին դէմ կը զրկէր ջրաբաշխ Տրիտոնին ծոծրակն ու գլուխը, եւ միւս ձեռքին մատներովը Տրիտոնին բերանը կը զոցէր, եւ այդ մատներու մէջէն ջուրը նրբին ու սուլող ճառագայթումով մինչեւ վարժապետին կոնակը կը հասնէր, եւ հետզհետէ աւելի ուժով սեղմելով ջուրը, խեղճ վարժապետը կը փախցնէր ամբողջ մատենադարանին ամէն կողմը, ջուրերու մէջ ընկղմելով Խոսրովիդուխտը, կարասիները, առաստաղը, գորգերը Լիկինիոսի զրադարանին: Հարկ եղաւ ուրեմն, աղէկ կամ գէշ, անճարակ վարժապետը ճամբել եւ անոր տեղը աւելի խիստ մը փնտռել:

Արսինէ խիստ բառերով իշխանադուներն կրկին յիշեցուց իր պարտականութիւնները, եւ իբրեւ ապաշխարութիւն կրկին պարտադրեց զինքը ինքնաչարչարումի: Արսինէի սիրտը նորէն կոտրեցաւ, նորէն ինքզինքը տուաւ ազատ օդին եւ ուղեց մինակ ըլլալ տըղոց հետ եւ դանոնք լեցնել իր ողիով ու հաւատքով: Այս կերպով, ամէն ատեն ալ կը յաջողէր իշխանադուներ մեղմացնել եւ լրջութեան բերել, որպէսզի ճանչնայ նպատակը իր աստուածանման արքայական արժանապատուութեան եւ իր բարձր կոչումին: Կը բաւէր միայն անոր յիշեցնել հայրը, Միհրի դիւցազնը: Կամ զիտցածը կը պատմէր Հայաստանի թագաւորներուն եւ հին ժամանակի հերոսներուն, Հայկ դիւցազնի մասին, որ անվրէպ նետով սպաննեց Բելը, բռնաւորը եւ իր ժողովուրդը եւ բոլոր ժողովուրդները Արարատի շուրջ ազատագրութեան իր միջոցով: Յետոյ Արսինէ եւ իր տղաքը կ'երգէին Հայկեան դիւցազններու թիւերը տաւիղի պայծառ ձայնով: Դիւցազն Արամի վրայ որ Հայկի սերունդը Արարատեան աշխարհը առաջնորդեց եւ անոր տուաւ Արմենաստան — Արմենիա — անունը որ իր թշնամին Նիւբարը Արմաւիրի աշտարակին դամեց. Նինուէի, Ասորեստանցոց, Կասպաղովկացոց յաղթականը, որ Հայաստանի չորս թաղաւորութիւնները ստեղծեց, եւ ժողովուրդին տուաւ սեփական, իւրապատուի լեզու մը: Տղաքը յուզուած, ականջ կը կախէին քրմանոյն, Երբ ան տպաւորիչ, խոհուն լրջութեամբ կը պատմէր զեղանի, չար Շամիրամի մասին, անոր սքանչելարուեստ պալատներուն եւ առկախ պարտէզներու մասին. թէ ինչպէս ան ջերմապէս սիրա-

հարուեցաւ Արամի դաւկին Արայի, Հայաստանի զեղեցիկ, բարի թագաւորին, զայն հրաւիրեց իր երկիրը, բայց Արա չէր ուզեր անոր սէրը: Եւ ահա ծագեցաւ սոսկալի պատերազմ մը: Արարատեան դաշտերուն մէջ: Արա ինկաւ, մեռաւ: Բայց Շամիրամ, աստուածներուն օղնութեամբ կրցաւ վերակենդանացնել զայն եւ սիրեց զայն անասելի ուժգնութեամբ իր ապարանքին մէջ: Թէեւ բոլոր մարդիկ կը հաւատային, թէ ան մեռած է: Չար, չար կին մըն էր: Իր բուն ամուսինը Նինոս անոր երեսէն Կրետէ փախաւ: Իր հարազատ զաւակները սպաննել տուաւ: Բայց Նինուաս անունով տղայ մը ազատուեցաւ, եւ երբ Զրադաշտ վերջերք Շամիրամի դէմ ապստամբութեան զրգոց, Նինուաս սպաննեց իր հարազատ մայրը: Բայց ան ծովը նետեց իր համբաւալ ամենաթանկալին մարդարիտները: — «Եւ տակաւին հո՞ն եւ այդ մարդարիտները», ձայնեցին տղաքը:

— «Տակաւին հոն»: — «Ես փնտռել պիտի տամ, երբ թագաւոր ըլլամ: Խոսրովիդուխտին պէտք է ըլլան անոնք, երբ հարս ըլլայ»: — «Ի՞նչ կ'ըսես, Իշխան: Հարս ըլլալէն դուն ի՞նչ կը հասկնաս», կատակեց Արսինէ:

— «Պատմէ նաեւ Հայաստանի իններորդ պսակեալ թագաւորին Տիգրանի մասին: Ամէնէն աւելի անոր նկատմամբ լսել կը սիրեմ: Որուն կ'ուզեմ հաւասարիլ», ձայնեց իշխան Տրդատ ոգեւորուած:

«Ո՛հ, ուրեմն պէտք է քու արժանապատուութիւնդ աւելի լաւ պահել սորվիս, այ անպիտան», խնդաց Արսինէ, եւ իշխանին, լայն, հաստաբետ ծոծրակին թեթեւ հարուած մը տուաւ: «Արտաքինով արդէն դուն կրնաս անոր նմանիլ: Խարտեաչ եւ գանդրահեր էր քեզի պէս, թխորակ, կարճնեղ եւ պինդ լանջքով, մէկ բառով քաջալանջ, խոշոր անդամներով, մէկ խօսքով անձնեայ, նայուածքը հեռատես, ուժով, այլ մեղմ ու վեհ, մէկ խօսքով խորհայեաց, վեհատեսիլ: Բոլոր շարժումներուն մէջ արագ ու ճկուն, ոչ դանդաղ եւ թոյլ, ինչպէս դուն շատ անդամ»: — «Ես ասիկա այսպէս Յունաստանի մէջ եղայ», միջանկեալ, բերնէն փախցուց Տրդատ Լուանդապին: «Տաք օդը զիս ծոյլ կ'ընէ, միշտ քուն ունիմ, Խոսրովիդուխտն ալ: Եւ ես քեզի յաճախ ըսած եմ, մեր զգեստները շատ տաք են հոս եւ շատ նեղ»:

— «Տիգրանինն ալ», փախցուց բերնէն Արսինէ այնքան շուտով որ տղաքը խնդացին: «Մտիկ ըրէ, թէ ինչ կրնաս սորվիլ քու մեծանուն նախատիպէն. ուտելու, խմելու եւ բոլոր հաճոյքներուն մէջ իր հաստատուն սկզբունքները ունէր, որոնց կը հետեւէր»: Քրմամանոյչը մասնաւորապէս ուժով շեշտեց այս կէտը: «Մեծ էր իր իմաս-

տութիւնը» : — «Ի՞նչ է այդ իմաստութիւնը», կ'ուզէր զիտնալ իշխանը : Քիչ մը լուռ խոկալէ վերջ Արսինէ սա գեղեցիկ պատասխանը տուաւ : «Տրդատս, երբ միշտ եւ ամենուրեք խորհիս այն մասին, թէ Ահուրաշի եւ Միհրի կամեցողութեամբ դուն կոչեցեալ ես օր մը թաղաւոր ըլլալ քու երկրիդ եւ ժողովուրդիդ ինչպէս Մեծն Տիգրան, որուն մէկ բաղձանքն էր օղտակար ըլլալ մարդկային սեռին, միշտ խոհական, ամէն խօսքով, ամէն հրամանով : Հնախանձիլ մեծերուն, արդար եւ բարեսիրտ ըլլալ փոքրերուն հանդէպ, ինչպէս քու նախահայրդ երկու հարիւր տարի առաջ — այն ատեն, սիրելի, բարի Տրդատ, այն ատեն դուն ալ պիտի կոչուիս իմաստուն, մեծ թաղաւոր մը, Մեծն Տրդատ» :

— «Մեծն Տրդատ», կատակեց Պոսրովիդուխտ, սիրուն ձեւով : «Իսկ ե՞ս», «Պոսրովիդուխտ, քրմանոյ Անահիտի» : Արսինէ զրկեց երկու տղաքը իր բազուկներով, սեղմեց դանոնք ամուր մը իր կոճեքին վրայ եւ տաքուկ սիրով երկար նայեցաւ անոնց լուռ, անոնց շողարձակ աչքերուն մէջ : Տրդատ սակայն մատակ առիւծի մը պէս Արսինէին տուած էր կոնակը : Ոտքերը իրարու վրայ խաչաձեւ, տարածած ետեւէն, մարմինին վերի մասը կրթնցուցած ուղղանկիւն իրարոք դրուած ծղիներուն, ջղուտ եւ աչքի զարնելու աստիճան խոշոր ձեռքերը իրարու վրայ դրած, ձախ այտը կը հանդէպ Արսինէի սիրտին վրայ, նրբին խարտեաչ բաշտատան մաղերով ուսերը յորդած, եւ թուխ վճիտ աչքերը այնքան լուրջ, բարի, հեռադէտ եւ յաւասար կը նայէին քաղաքէն եւ երկրէն անդին, որպէս թէ հեռուէն կը տեսնէր մեծ գեղեցիկ Պետութիւնը, որ իրեն կը սպասէ : Իր թաղաւորին կը սպասէ : Այո՛, կ'ուզէր ըլլալ զերդ Տիգրան : Կ'ուզէր ըլլալ Մեծն Տրդատ :

«Մտիկ ըրէ, Իշխան : Քեզի բան մըն ալ պիտի պատմեմ, որուն վրայ դուն պէտք է միշտ խորհիս, երբ ուղես կորսնցնել երբեմն վեհ նպատակդ եւ արժանապատուութիւնդ : Մեծն Տիգրան բարեկամ էր Պարսից թաղաւոր Կիրոսի : Որ կ'ուզէր հպատակեցնել Մարերը : Անոնց թաղաւորն էր Աժդահակ : Գիշեր մը երազ տեսաւ, եւ առաւօտուն պատմեց իր բարեկամներուն այս երազը, զունատ եւ դողահար : «Այս գիշեր կեցած էի անծանօթ օտար երկիր մը, բարձր լեռան մը մօտ, որուն գաղաթը սառով ու ձիւնով ծածկուած կը թլուէր : Ասիկա Հայկի սերունդներուն երկիրն էր : Հեռուէն անոր գաղաթին նայեցայ : Հոն վերը կատարին վրայ կին մը նստած էր ծիրանազգեստ եւ երկնակապոյտ քօզով պարածածուկ : Գեղեցիկ էին անոր աչքերը : Կերպարանքը բարձրահայեաց : Երեսին դոյնը կարմիր վարդերու ուլէս էր : Կինը սարսափելի ցաւեր ունէր եւ կարծես կո՛ւրի

մէջ ըլլար, հոս ու հոն կը դառնար, ետ առաջ, եւ ահա անոր մօտ կային երեք խոշոր, հուժկու հերոսներ : Առաջինը նստած էր առիւծի մը վրայ եւ կը նայէր դէպ արեւելք, երկրորդը կ'որսար ընծառիւծի մը վրայ նայելով հիւսիս : երրորդը արծիւի մը վրայ կը յարձակէր ուղղակի մեր թաղաւորութեան դէմ : Ինծի այնպէս կը թուէր, ըսաւ թաղաւորը, թէ կը կենամ պայտախ դարաստանին վրայ : Բոլոր մեր աստուածները հոն էին իրենց վեհափառութեամբ եւ կը մատուցանեմ իրենց խունկ : Յանկարծ արծիւի վրայի հերոսը վար ցատկեց ինծի դէմ, կ'ուզէր ոչնչացնել մեր աստուածները, բայց ես, Աժդահակ, յարձակեցայ իր վրայ, ընդհարեցայ սոսկումով հրէշային հերոսին դէմ : Նախ խորտակեցան մեր նիղակները իրարու դէմ, արիւնի հեղեղներ թափեցան դարաստանին վրայ, պատերէն վար ուրիշ զէնքով շարունակեցինք կռիւը անծայր, մինչեւ որ ես ուժասպառ, քրտնաշաղախ, արթնցայ» : Այսպէս կը պատմէր Աժդահակ : Իր մոգերէն կամ աստղահամներէն մին ձայնեց : «Մեծն Տիգրանն է այն եւ անոր յարձակումը» : Տրդատ, ծանրախոհ, դարձեալ կը նայէր հեռուն եւ կը մտածէր սարսուռն երազին վրայ : Յետոյ հարցուց Արսինէին, թէ ինչո՞ւ այս երազը պատմեց իրեն : «Իշխան Տրդատ պէտք է նմանիս արծիւին, եթէ Մեծ կ'ուղես ըլլալ : Լոյսին թաղաւորութեան մէջ պէտք է ապրիս, բարձր պէտք է ծածանի քու մաքուր ողիդ բոլոր անմաքուրներուն եւ լոյսին մէջ մութը մնացողներուն վրայ : Եւ իշխանութեան բարձունքէն, զոր Ահուրա պիտի տայ քեզի իր ժամանակին, պիտի յարձակիս քու թշնամիներուդ եւ անոնց աստուածներուն վրայ : Յաճախ ինծի այնպէս կը թուի, թէ արթուն երազի մէջ ես կը տեսնեմ արծիւ մը որ կը քալէ քու ապաղայ թաղաւորութեանդ եւ մեր աստուածներուն դէմ, ան ալ հզօր հերոս մը արծիւի թեւերուն վրայ : Ան կը սպառնայ թաղաւորութեանդ, ով Տրդատ, ան կը սպառնայ բոլոր աշխարհի : Յետոյ կըռուէ Աժդահակի պէս, ով Տրդատ, կու՞ն ու հաւատաւ : Միհրն է աշխարհի լոյսը» :

Արսինէ վերջին բառերը շեշտած էր անձկապին, ուժգին : Տրդաքը նեղսրտած, կը հարցնէին : «Ո՞ր հերոսին կ'ակնարկես դուն» : — «Քրիստոս գեւին կ'ակնարկեմ», կրճտեց քրմուհին, եւ աճապարեց ելաւ տուն երթալու համար : Տղաքը հետեւեցան, խոսված :

Միհրի քրմանոյչը աղնուախոհ էր սակայն, եւ նոյնիսկ «Լիկիւնիա» զղակը երթալու ճամբուն վրայ տղոց յայտնապէս դրացուց եւ յանձնարարեց, թէ աստուածները միշտ նշան է տկարութեան, մօտալուտ պարտութեան : Հետզհետէ կը զգար թէ կը տատանէր իր

մտաւոր կեանքին հիմք: Ուր որ կ'երթար ու կը կենար, կը հանդիպէր հետքերուն այն միտքին որմէ ինք կը վախնար, եւ զոր սակայն չէր կարող առել, որովհետեւ մաքուր էր իր սիրտը եւ ճշմարտութեամբ տողորուած: Հատիկ առ հատիկ կ'իյնար կը հեռանար սնորհարարատ երկիրը: Քայլ առ քայլ կը ստարտաւորուէր թուրքալ յունական եւ քրիստոնէական մտածումի ազդեցութեան առջեւ: Յամբորդէն, սակայն ըստ բաւականին զգալի, կը կորսնցնէր իշխանութիւնը հայ իշխանին վրայ:

Ինչ չափով որ Արսինէ ազդեցութիւն կը կորսնցնէր իշխանին վրայ, Լիկինիանոս հետզհետէ ինք կը շահէր այդ ազդեցութիւնը: Ոչ, բնաւ, ան չէր ուզեր վնաս հասցնել ապագայ թաղաւորին, որուն խախուտ նկարագիրը լաւ ճանչցած էր: Լիկինիանոս զազաւիրակից չէր Արսինէի: Յաճախ փորձած էր սխնագարգ վրան զոց ձեմեկիքին կամ վրան բաց դաւիթին մէջ երեկոյեան պտոյտներու առեն անոր յայտարարել, թէ ինչ կական տարրերութիւններ կային յունական եւ հայկական մտածելու եւ ապրելու եղանակներուն միջեւ: Ամէն առեն, այսպիսի փորձի մը հետեւանքով, Արսինէ տխուր եւ անհանդիստ կ'ըլլար: Բայց հիմա ի հարկէ կ'ըմբռնէր, թէ մատաղատի գոտեմարտիկ մը, մտղթի մըցորդ մը, սկաւառակ նետող մը եւ կռիւմարտիկ մը Գիմնազիոնի ասպարէզին վրայ, ուր Տրդատ շաբաթներէ ի վեր կը մարդուէր եւ իր ետեւը կը թողուր երիտասարդ ընկերները ոյժի եւ ճարտարութեան կողմէ, պէտք էր ազատ ցոյց տար մարմինն ու անդամները, շարժումներուն մէջ ազատ ըլլալը, որովհետեւ դպրոցին հրամանը կ'իշխէր, եւ զուն չէր կրնար դիտողութիւն բնել հազուստ կապուստին երկար կամ կարճ ըլլալուն վրայ: Ու, այսպէս, եղաւ որ Տրդատ որ մը ձերմակ, կարմիր եզերքով բրդեղէն սիրուն, շատ թեթեւ ու թափանցիկ պարեղօտով, թեւերն ու սրունքը մերկ եկաւ կեցաւ քրմուհիին մօտ: Արսինէ սակայն պատուեց ճշմարտութիւնը, ինչպէս կը պատուիրէր ուրիշներուն որ պատուեն զայն, եւ հետզհետէ բացէ ի բաց ուրախ հպարտութիւն մը ցոյց կու տար Տրդատի մասին, որ կ'ընտելանար նոր ոգիին: Բայց պէ՞տք էր որ Ոսորովիդուստին զրանար ինչ որ կը թոյլատրուէր Տրդատի: «Իցիւ թողութիւն չնորհէ մեզի Անահիտ, եւ Միհր չբարկանայ», կ'ըսէր Արսինէ: Ոսորովիդուստ, բաց կապոյտ թեթեւ լօղիկով, ծիրանի կապով մը դօտեւորուած, հոյանի թեւերով ու սրունքներով, չըջան կ'ընէր հոս ու հոն շնորհալի արձակ քայլերով: Ասիկա անիրաւ բա՞ն մըն էր, Միհրին անհաճոյ բա՞ն մըն էր ասիկա: Բայց ոչ, անկարելի: Անոր սուրբ աչքերը մաքուրն ու գեղեցիկը միայն կը տեսնէին: Մովպետը ի՞նչ պիտի ըսէր այս եղածին:

Սակայն Պաւղոսի եւ Յուդիթի թեւերն ալ հոլանի չե՞ն միթէ, նաեւ անոնց պարանոցը եւ ծոծրակը, նոյնիսկ ոտքերը, եւ երկուքն ալ դարձեալ կը խօսին լոյսի մասին, եւ կը հաւատան Լոյսի Աստուածի մը: Ինքը, քրմանոյցը, կը նախընտրէ հիւծիլ Յունաստանի այս արեւին տակ, քան թէ Անահիտը ցաւցնել եւ անուանարկել, Միհրի աչքերը ամօթահար բնել, եւ նոյնիսկ իր միտին ամենափոքր մէկ մասնակը մերկանալ: Ասիկա զորժ է խաւարի:

Անոր վրայ քիչ ետքը Արսինէ տղոց հետ Ապեղէսի արհեստանոցին մէջ կեցած էր անձրեւոտ ցուրտ առաւօտ մը: Վերջապէս այդ մասին որոշումը տուած էր: Միտքին մէջ հասունցած էր իշխանին անդատակիւն — սարսկչին մէջ սրբավայրի մը յատակադիծը: Կըրցաւ շատ դիւրութեամբ, ջուրի պէս պարզել իր նախադիծը, նոյնիսկ մաղաղաթի վրայ հարեւանցի ստուերազիր մը ցոյց տալ: Այն իրիկուրնէ ի վեր քանի քանի անգամ Ապեղէս զինքը հրաւիրած էր սիրով: Հիմա առիթ կ'ունենար, քանի որ իրեն անհաճոյ միակ անըստուգութիւնը հիմա փարատած էր այլեւս: Տղաքը զարմացկոտ կեցած էին հոն առանց բառ մը խօսելու: Բարձր կողմնակի պատուհաններէն եւ տանիքի մէջտեղը լայն լուսամուտէն լոյս առնող պատերուն վրայ կանգնած էին պատրաստ ու անպատրաստ կերպարանքներ սպիտակաչող կամ գեղնաչորթ կամ բծաւոր մարմարիոնէ, արուրեայ դէմքեր, զլուխներ, կենդանական կերպարանքներ: Չորս կողմը փոռած անթիւ գործիքներ, նաեւ պատերէն կախուած: Տըղաքը լուռ հիացումով մէկ գործէն միւսին կ'երթային: Նոյն միջոցին Արսինէ վարպետին կը պարզէր յատակադիծը սրբավայրին որ պիտի դարձարուէր Միհրի եւ Անահիտի արձաններով: Ուանդավառօրէն կը նկարագրէր այն վայրը զոր խոստացաւ Ապեղէս զալ տեսնել աւելի մօտէն, եւ խօսքը բերաւ աստուածական արձաններու կերպարանքներուն ու դիրքերուն վրայ: Իրեն այնպէս կը թուէր թէ ջերմեռանդ ողեւորութեամբ հոսանքը կամաց կամաց կը ցամքէր իր մէջ, եւ արգարեւ յանկարծ, առանց դիտնալու թէ ինչու, նեղութիւն մը եկաւ վրան այս բանին համար որ իսկապէս զինքը Ապեղէսին մօտ բերած էր: Այսու հանդերձ Արսինէ սիրով եւ ջանքով նկարագրեց Արգիլի Սուրբ Անահիտի կերպարանքը, այնպէս ինչպէս ան կը կանգնէր Վաղարշապատի արքայական պարտէզին պուրակին ծայրը, պորփիրեայ մեհակնին մէջ, սրբավայրի ամէնէն ներսի կողմը: Բարձրազիր, կանդաղուած, գեղեցիկ, բարեմոյն, մայրական դէմքը միշտ դարձած իր Միհր եղբոր, իր արեւափառ կառքին լոյսին, եւ Ահուրային հօրն լուսոյ, լազուարթ կապոյտին երկինքին: Ահա դադրեցաւ իր խօսքը եւ թեթեւ մը կարմրեցան այտերը: Օգնութիւն

խնդրելու ձեռով իր անապահով դարձած նայուածքները կը թափառէին անդին տղոց վրայ, որոնք խորապէս յուզուած կը կենային մեծ ամբողջացած գործի մը առջեւ:

Ապեղէսի աչքին զարկաւ Արսինէի շփոթութիւնը, որ անբացատրելի էր իրեն համար, եւ օղնութեան եկաւ անոր սա հարցումով. «Ի՞նչ կ'ընէր քու աստուածուհիդ: Հաճեցէք հասկցնել, որպէսզի մենք արուեստագէտներս կարենանք կեանքի մէջ իր աշխատութեան եւ գործունէութեան համաձայն ստեղծագործել ամենալաւ կերպով մեր պատրաստելիք կերպարանքներուն հուրիւնը, պատկերը, դէմքն ու արտայայտութիւնը: Մարդոց կամ աստուածներուն կատարած գործը գիտնալը մեզի համար պայման է, որպէսզի կարենանք ճշգրէ անոնց դիրքը, արտայայտութիւնն ու ամէն բան»: Ապեղէսի ճշգրիտ հարցումին շնորհիւ խօսակցութեան թելը գտած ըլլալուն վրայ ուրախացած, Արսինէ նկարագրեց. «Անահիտ պըտղարբուրութեան աստուածուհին է: Ան կը բերէ անձրեւը, եւ առուներ, հոսանքներ, կ'ուռին անոր միջոցաւ եւ կը վազեն ընդհանուր աշխարհի մէջէն: Այս պատճառաւ ան կը կոչուի նաեւ մեծ հեղեղը: Կանանց ցանքը անոր առջեւ կը ծփայ կը տատանի: Անոր առջեւ կը խոնարհի հարաւունքի, հունձքի դաշտը, երբ Անահիտի շունչը անոր վերեւ սրսփայ»: Հոսը դարձեալ կեցաւ շփոթ անհանգստութեամբ մը Արսինէին խօսքը: «Շատ գեղեցիկ է, բանաստեղծութեամբ լի ինչ որ կ'ըսես քու աստուածուհիդ մասին: Անիկա լոկ բնութեան պտղաբերութեան խորհրդանիշն է, թէ...» — «Ո՛չ», ձայնեց Արսինէ եռանդաղին. «մարդոց ալ»: — «Ալ աւելի գեղեցիկ», յարեց ազնուախոհ արուեստագէտը քրմանոյշին, «նաեւ ուրեմն աստուածուհի սիրոյ, ամուսնութեան, ծնունդի, որդեծնութեան: Այս պատճառաւ պիտի առաջարկեմ քեզի, աստուածուհիին պատկերը կերպաւորել կարելի եղածին չափ մարդանման — կնոջական եւ մայրանման: Արդէն բարի մօր մը նմանող ամէն ինչ աստուածային է: Բարձրահասակ եւ կարչնեղ, թիկնեղ, շողաթեւ, քաջալանջ, լիպող, — այս ամէնը արդիւնք իր առած սնունդին փարթամութեան — գլուխը խորոխօրէն վեր առած իր ծոցի զաւակին վերեւ, բոլորտիք դիտելով երջանակաւէտ, այո', այսպէս պէտք է ըլլայ ան, քու աստուածուհիդ, փառաւոր գործ մը, կը խոստանամ ձեզի զայն»: Արուեստագէտը ճառագայթուն կապոյտ աչքերով հեռուն կը նայէր մտովի: Իր գործը կը նախատեսէր եւ կը մոռնար պահ մը իր առջեւ գտնուող իր նըմոյշին կենդանի քրմանոյշը: Արսինէ ինք բաւական ատենէ ի վեր զուսպ հիացումով անոր կը նայէր: Ըսաւ սիրուն կերպով շիկնած, խոր շունչ մը քաշելով. «Ի՞նչպէս կրնաս դուն ամէն բան այսքան ա-

զատ ու գեղեցիկ ըսել: Այո, ճիշդ այդպէս ստեղծագործէ արձանը, վարպետ Ապեղէս, այո, ճիշդ այդպէս կանդուն է ան Վաղարշտապատի մէջ»: — «Բայց ինչ նմոյշի վրայ պէտք է յօրինեմ աստուածուհին, որպէսզի ճիշդ կենսունակ եւ մայրական ըլլայ: Մենք հոս Դեմետրէն պտղաբերութեան, արդաւանդութեան դիցուհին կ'անուանենք, անոր կերպարանքն ալ յաճախ ներկայացուցած եմ ես: Բայց հիմա Անահիտի մասին առաջարկուած պատկերին յարմարագոյն Ծրմոյշ շունիմ: Ես կ'ուզեմ կենդանի, վառվռուն բան մը»: Արուեստագէտին ակնարկները կամաց կամաց խուզարկու կը սահէին Արսինէի կերպարանքին վրայ դանկէն մինչեւ ոտքերը եւ փոխադարձաբար: Նոյն անվրդով, մաքուր նայուածքը հելլէն ճշմարիտ արուեստագէտին, որ մարմինի եւ անդամներու անթերի գեղեցիկ համաչափութեամբ իրեն առջեւ յայտնաբերուած ստեղծագործ աստուածութեան պատկերը կը տեսնէ: Միեւնոյն նայուածքը, որով Ապեղէս Արսինէն չափած էր հոն Լիկիոնեան դղեակին մէջ, ձեւերու եւ գիծերու մասին իր հարցութիւններուն առթիւ, մինչեւ որ գետինը տնոր ոտքերուն տակ փախչելու պէս եղաւ: Նոյն եւ մի գագուտը եկաւ Արսինէի վրայ, միայն թէ աւելի զօրաւոր: Տղաքը երկար ատենէ ի վեր սքողուած էին մութ կարմիր, լայն վարագոյրի մը ետին, Ապեղէսի աշակերտներուն աշխատանքի եւ ուսումնասիրութեան սրահը: Արսինէ նստած էր տփոյն, մտացիք, գեղեցկութեան մը վերին շունչին տակ, Ապեղէսի աշխատութեան ցած, լայն քառակուսի սեղանին ծայրը, որուն մէջտեղը գորշ աւաղաքարէ դանդուած մը սրուն վրայ քիչ առաջ սկսած էր աշխատիլ: Արուեստագէտը Արսինէի սուղեւն էր իր սեղմ, մոխրագոյն բրդեայ պարեղօտովը, դարակի մը կրթնած, որ բազմաթիւ գործիքներով խճողուած, ու դժգոյնութիւններով, պատկերներով ծածկուած էր իրարու վրայ: Անոր աչքերը, միշտ խուզարկու եւ աղաչողական, կը հանդէպին Արսինէին վրայ: Քրմանոյշին գլուխը կը դառնար: Պատերուն վրայի կերպարանքները, գիմակներն ու որմնանկարները կարծես կ'ողջնային եւ շուրջը կը պարէին: Ճերմակ, մերկ, լըջապէմ եւ ծիծղուն ամբոխ մը. Անձկանքով կը նայէր ու կը նայէր, շեշտակի արուեստագէտին աչքերուն մէջ, եւ անոր աղնուակն անդորրութեան հայեացքը Արսինէին ալ կը վերադարձնէր անդորրութիւնը: Որոշակի կը լսէր սա հարցումը. «Կ'ուզե՞ս աստուածուհին ներկայացնել»: Լուռ էր եւ դարձեալ կամացուկ մը գլուխը կը ծռէր եւ լալալին կը շարժէր զայն: Ապեղէս, հանդարտ, լսաւ. «Քաւ լիցի, որ ես փափաքեմ պահանջել ի՞նչ որ անսուրբ թուի քեզի, սուրբ քրմանոյշիդ: Բայց ըսէ, Արսինէ, դուն կը հաւատա՞ս այս աստուածուհիին, թէ ան կ'ապրի եւ է»: Արսինէ



վարմանքով նայեցաւ անոր — «Եւ դուն իմ մօտ կու գաս, յանձնա-  
րարուելու իրբեւ աստուածուհիին պատկերը, որ պէտք է ներկայա-  
ցընէ ճշմարիտ մայր մը մայրական թեւերով եւ մայրական կուրծ-  
քով, եւ դիեցիկը կը կրէ սիրով ծոցը: Եւ դուն, այդ աստուածուհի-  
ին քրմանոյշը, ինչո՞ւ ամչնաս, ինչո՞ւ անսուրբ համարիս, իրբեւ  
տիպար սպասարկել, քու տիրուհիդ սիրոյն համար, արուեստագէ-  
տին, որ պիտի փառաւորէ դայն, պիտի շքեղապարզէ քու կամքիդ  
համաձայն: Գու, սպասարկող աստուածութեան, ինչպէ՞ս անսուրբ  
կը համարիս ինչ որ քու աստուածութիւնը իսկ կը սրբէ: Ի՞նչպէս  
կ'ուզես քօղած կել ինչ որ քու աստուածութիւնը աղբաւ ու հոլանի  
կը ցուցնէ Երկինքին սուրբ լոյսին: Հրեայ եւ Պարսիկ նման են այս  
մասին: Կը հաւատան Աստուծոյ եւ Աստուածներու, որոնք ստեղծած  
են Երկիրը, մարդիկը, կենդանիները եւ ամէն կենդանի ինչ, եւ յե-  
տոյ անոնք սուրբ կը յայտարարեն, ճշդիւ այն բանը, որուն վրայ  
կը հանդէս ամբողջ կեանքը, որմէ կեանքը կը գետահետի բոտ կամս  
աստուածութեան: Ես ոչ Ձեւսի կը հաւատամ, ոչ Ահուրայի, ոչ Գե-  
մետրի, ոչ ալ Անահիտի, Ապոզոնի, Միհրի եւ բոլոր ինչ անունով  
որ կոչուած աստուածներու, ուր ալ անոնք պաշտուին: Ինձի հա-  
մար անոնցմէ իւրաքանչիւրը անուն մըն է լոկ, խորհրդանշան մը,  
անհուն կեանքին որեւէ մէկ կտորին համար, անուն լոյսի մը, ոյժի  
մը, եւ բոլոր բովանդակ կեանքը իր ամբողջութեան եւ զօրութեան  
մէջ, իր երանգներուն եւ ձեւերուն մէջ, իր սիրոյն եւ իր ատելութեան  
մէջ, կեանքը համակ, ինչպէս որ է, եւ կը դործէ եւ կը ստեղծէ,  
կ'արարչագործէ տիեզերքին մէջ եւ մարդոց մէջ, — կը սիրեմ դայն,  
կը պաշտեմ իրբեւ նոյնինքն Աստուածութիւնը: Եւ մինչեւ իսկ մահը  
իմ բարեկամս է, ան ալ անսուրբ ոչինչ մը չէ, խաւար չէ, ինչպէս  
կ'առասպելաբանեն քու եւ բոլոր կրօնները: Նայէ, մենք յոյներս  
կրնանք ապրիլ, այս պատճառով ալ կրնանք մեռնիլ: Խնճոյքի սե-  
ղանին կը նստինք, կ'ուրախանանք, այս է մեր կեանքը: Կ'ելլենք սե-  
ղանէն եւ կ'երթանք քնանալ, այս է մեր մեռնիլը: Մենք դիտենք թէ  
ծնունդ, կեանք, մահ օղակ մը կը կաղմեն, միութիւն մը անծայրա-  
ծիրին հետ: Այս պատճառաւ բոլոր կրօններուն եւ իւրաքանչիւր հա-  
ւատքի հաւասարապէս կը պատշաճինք: Բաւական է որ մարդ մը  
իր ներսէն նմանի իր հաւատացածին եւ պաշտածին: Ինձմէ արձան-  
ներ, պատկերներ կը խնդրեն հեթանոսական եւ քրիստոնէական տա-  
ճարներու ու տուններու համար: Այսօր կը դրոշմեմ, կը քանդակեմ  
Աստղիկին պատկերին վրայ, վաղը միեւնոյն լրջութեամբ Քրիստո-  
նէից Աստուածին պատկերին վրայ կը բանեցնեմ գշիրս: Եկուր,  
կ'ուզեմ քեզի գործերս ցոյց տալ Արսինէ»: Անկամ, անգիտակից,

գինովցածի պէս, անոր ետեւէն գնաց: Արուեստագէտին խօսքերուն  
ու նայուածքին պայծառութիւնը, մտածումներուն ուղղութիւնը,  
յորդահոս ցնծութիւնը բոլորովին զրաւած էին զինքը: Արսինէին վը-  
ճիտ նայուածքը մէկ անդամով տեսաւ իր մտածումին ու հաւատքին  
միջեւ գտնուած բաժանումը, այս կամ այն կեանքին միջեւ իր հա-  
ւատքին պատճառած անրնական հակասութիւնները, այն է միտքին  
ու հաւատքին աններդաշնակութիւնը, այն է մտածումին ու կրօնքին  
անմիարան գնացքը: Բայց ատելութեան եւ անարդանքի զգացում մը  
եկաւ իր վրայ, երբ Ապեղէս բացէ ի բաց խոստովանեցաւ իրեն, թէ  
ոչ իր եւ ոչ ալ ուրիշ աստուածներու կը հաւատար: Եւ միտքին առ-  
ջեւ բերաւ բոլոր այն անունները, որոնց առջեւ կը դողար: Այն ձեռ-  
քերը որոնք Անահիտի պատկերը պիտի ստեղծեն, միեւնոյն ատեն  
կ'աշխատին քրիստոնէից աստուածին պատկերին: Ահա հոս պիտի  
տեսնէ հիմա քրիստոնէաներու աստուածը: Միբար կը բարբախէր:  
Չէր ուզեր տկար երեւնալ: Ինչ կ'ըլլայ, անոր պատկերն է լոկ:  
Քրիստոնէայ Աստուած չկայ, չէ որ Ապեղէս ալ չի հաւատար անոր:  
Արսինէ նոյն անկամութեամբ իր առաջնորդին ետեւէն կ'երթար:  
Ապեղէս կ'անուանէր եւ կը բացատրէր վսեմ գործերը, խնդութեամբ  
տեսնելով Արսինէին բնածին նրբազգած բնդունակութիւնը, անոր  
բնական ուղիմութիւնը ըմբռնելու համար ինչ որ սեփական եւ լաւա-  
զոյն է մէկ մի գործի վրայ: Գործերը վարագոյրով իրարմէ բաժնը-  
ւած էին: Կարծես, աստուածուհի մը ներս մտած ըլլար, աշխատա-  
ւորներն ու աշակերտները իրենց նստած տեղէն ցատկեցին, խոնար-  
հութիւն բրին, թեւերնին վար առին իրբեւ ողջոյն եւ կեցան լուռ,  
իւրաքանչիւրը ձեռքը իր գործիքով:

Լայնաբաց, արտասուաթուրմ աչքերով ու անբարբառ, Խոս-  
րովիզուխտ բաղկատարած դարձաւ ներս եկող Արսինէին կողմը եւ  
քաշեց տարաւ դայն հանդիպակաց պատին առջեւ: Անմիջապէս Ար-  
սինէի աչքին զարկաւ մարդկայինին չափ խոշոր գլուխ մը, զոր շը-  
քեզ բարձրաքանդակ ոճով մարդու մը երեսը կը կրէր սեւ ձուածեւ  
յատակի վրայ, դեղին մարմարիոնէ: Այդ մարդուն երեսը իր ամենա-  
յետին գիմպիծերով անզուգական կամ անանուն ցանկութեամբ մահ-  
ուան կը դարպասէր որ դայ տանի դինքը: Կոպերը ծանրապէս կը  
կախուէին աչքերուն վրայ եւ դիտողին մէջ կ'արթնցնէին հեղձամրդ-  
ձուկ տառապանքի եւ կեանքի դէմ զգուանքի տպաւորութիւն մը:  
Ինկած, թառամած երեսին վրայ կը տարածուէր մահուան ստուեր  
մը, եւ աչքերուն, բերանին, շրթունքին առանձին գիծերը շատ մը  
փոքր կնճիռներով ու խորշոմիկներով կը յայտնէին կոխ մը, գօտե-  
մարտութիւն մը ցաւին ու մահուան հետ: Եւ սակայն դարձեալ, ամ-  
բողջին վերեւ, վեհութեան, համբերութեան, նուիրումի, ոյժի եւ

յաղթանակելու նախազգացումի տպաւորութիւն մը — եւ այս ամէնը այն մեծ վարպետը միայն կրցած էր ի մի բերել մէկ պատկերի վրայ:

Եւ արդ: Ինչ պատահեցաւ:

Օրհասականի սենեակի մը լուսթիւնը տիրապետեց: Սոսրովի-դուխտի աչքերը արցունքներու մէջ կը լողային: Մէկ ձեռքովը բռնեց ան Արսինէն, որ սարսուռի մեղմիկ կանչով մը քայլ մը ետ գնաց, լայնափետեկ աչքերով, յառեցաւ պատկերին սարսափի դէմքով մը եւ, անդիտակցարար, կարծես վախէն, պատկերին դէմ բարձրացուց աջ թեւը, զդուշանալու ձեւով: Տղոց պատճառաւ չհարցուց պատկերին նշանակութիւնը, իմաստը բացայայտ էր իրեն համար.— մահամերձ Սոսրովը: Սոր ու աւելի խոր, անդիմադրելի կերպով հողիին մէջ դրոշմուցաւ սարսափելի միանգամայն զեղեցիկ պատկերը: Արսինէ գիտէր, թէ այլևս այս տպաւորութիւնը պիտի չանցնի իր վրային: Սոսրովի դուխտին համար ալ նոյնը: Եթէ գիտնար, զուշակէր թէ այդ մահառիթ տառապանքին մէջ ով էր իրեն նայողը: Եթէ ճանչնար այդ պատկերը:

«Կարծեմ, սխալ հետքի մը վրայ ես», փսփսաց անոր արուեստագէտը: «Մահամերձ Քրիստոսն է ան»:

Անգամ մըն ալ Արսինէի դէմքին վրայ նկարուցեալ արդահատանքի սոսկումը, բայց ահա հանդստացումի շունչ մը սրսփաց իր վերեւ, նոյնիսկ թաղուն ուրախութեան շունչ մը: Իր ներսիդին կը խայտար. «մահամերձ Քրիստոս մը չի կրնար լոյս աշխարհի ըլլալ»: Տրդատ բոլոր այս եղածներուն ատեն, աչքը անգամ վեր չառաւ: Բարակ ծակող դործիքով մը ան, անձայն անշուշտ, ծակ մը կը փորէր դեռ չաւարտած աղջկան մը կերպարանքին հոյակապ քանդակուած ոտքին ծայրին վրայ, մէկ աչքը կը շողար, իսկ միւսը կէս մը գոցած կը փորձէր բոլորտիքը նայել: Իրաւ է որ մօտի աշակերտները գիտեցին Տրդատին այս ըրածը, բայց իրենցմէ ոչ մէկը կը համարձակէր խանդարել դայն:

## ԳԼՈՒԽ Ե.

Երանի թէ ինք մինակ իր Տրդատիկը դաստիարակէր եւ միշտ անոր շուրջը ըլլար: Պիտի կրնար կազմել զայն մոմի պէս, վարել տղու մը պէս: Քանի քանի անգամ Արսինէ ինքնիրեն այսպէս կ'ըսէր: Բայց Լիկինիանոս: — Ձէր փարատեր իրմէ այն հօր տպաւորութիւնը որ ունեցաւ Տրդատին վրայ զայն առաջին տեսնելուն: Տրդատ այնպէս Լիկինիանոսին կապուած էր, որպէս թէ հայրը Սոսրով եղած ըլլար ան: Լիկինիանոս եղբորմէ մը աւելի էր անոր: Որովհետեւ հրպարտ էր Տրդատ, զայն իր բարեկամը կ'անուանէր: Տրդատ, անգիտակցարար, անոր մէջ կր փնտռէր ոյժը, իշխանականը Արսինէի իրեն վրայ ունեցած ազդեցութիւնը Լիկինիանոսով ամբողջացնելու համար: Լիկինիանոս միտքէն չէր անցըներ բնաւ Տրդատը Արսինէի ազդեցութենէն քաշել հասնել, շատ կը խօսէր անոր հետ Արսինէի մասին, հարցումներ կ'ընէր անոր ով եւ ինչ ըլլալուն, իրեն եւ Սոսրովի դուխտին հետ ինչէր խօսելուն վրայ, այո, մինչեւ իսկ կ'ուզէր գիտնալ, թէ Արսինէ իրեն նկատմամբ որեւէ բան խօսա՞ծ էր իրենց, որ անոնց միտքը մնացած ըլլայ, եւ իմանալով այդ մասին ի հարկէ խօսք կը բանայ Արսինէին: Տրդատին համար ամէնէն երջանիկ ժամերն էին, երբ մարդանքի դաշտին վրայ անոր կ'ընկերանար, անոր կողմը ըլլար կամ մէկտեղ ձի վարէին: Հոռոտական զինուորական հրամանատարի մը առաջին տպաւորութիւններն էին ասոնք ընդհանուր կրթութեան մէջ: Սաստիկ կը բարախէր Տրդատին սիրտը, թէ երբ պիտի գայ ժամանակը, որ ինք փարփառ պղնձէ զրահը հագած, ծուփ ի ծուփ փետուրներով սաղաւարտը գլուխը, ձիու վրայ աշտանակած, միեւնոյն հրամանները պիտի տայ որոտագոչ ձայնով եւ միեւնոյն հնազանդութիւնը պիտի գտնէ: Երբ կը տեսնէր սիգապանծ զնացքը լեզէնականներուն, որոնք կը յառաջանային պողպատեայ պատի մը պէս, եւ երկիրը կը թնդար, կը դուրսէր անոնց ոտքերուն տակ, ամբարփակ քառակուսի մը կը ձեւացնէին կամ կայծակի արագութեամբ յանկարծ փաղանգի մը կը վերածուէին, կամ արեւուն մէջ

փայլատակող բազմական շեփորներուն դափիւնով շրջանակաձեւ ամբակուռ կեդրոն մը կ'որդէին, ասպարնեւ տակ կը կծկոտէին, եւ վահան առ վահան զիրարելով անծակ տանիքի մը տակ կը մտնէին — այն ատեն Հայոց Գահաժառանգը ձիւն վար կը քրքլէր կը ծիծաղէր, եւ միտքովը շեփորներուն ու եղջերափողերուն շառաշիւնին ի լուր կը գոտար. Մեծն Տրդատ:

Լիկինիանոս անոր նուէր տուած էր կրակոտ մատղշուկ «Հայկական» նոսր մը: Առեւտրի մէջ Հայկական ձիւնը Արարականներէն անմէջապէս վերջը կու գային: Հասարակաց հայրենիքը եւ ձիւնը ստանալու աստիկ վաճառքը իսկոյն յուզիչ բարեկամութիւն մը հաստատեցին ձիւնորին ու իր երկփարին միջեւ: Գերիններ եւ զինուորներ մեծ հաճոյք կը զգային երբ Հայ Իշխանին մօտը ըլլային, հետք խօսէին, եւ ձիւնը ամանու միջոցին կարգը իրենց եկած ըլլար անոր խորհուրդ տալու եւ օգնելու: Գրեթէ ամէն օր հայ արքայազունին աշխատանքն էր կեր տալ, խմցնել, Կեփեսոս գետին մէջ քիչ մը յառաջացնել ձին, անթամբ նստելով, իշխանին գերիններուն մէջտեղ: Երբ մտերը հովին տուած սրանար ասպարէզին վրայ պաշտոնին անդատակին ետեւը կամ Լիկինիանոսի եւ անոր բարեկամներու հետ, կամ անոր լեզունին ձիւնորներուն հետ եւ ցատկէր արդելքներուն վրայէն, ոչ քիչ ատեն առաջինն էր, ոչ երբեք վերջինը, — ասոնք նախամարզանք էին յաղթելու համար, երբ ժամանակը գայ, Ողիմպական կամ Անտիոքեան խաղերուն մէջ, որոնց համար այժմէն դեռատի իշխանազունը խանդավառութեամբ կը պատրաստուէր: Եթէ բանակետոյն մէջ իր զինուորակիցներուն մէջ գտնուէր, կը մոռնար թէ ինք իշխանազուն է, գահաժառանգ է: Զինուորները սիրով մտիկ կ'ընէին անոր, յօժարութեամբ կը գործադրէին լաւ ձեւացուած լրջութեամբ անոր հրամանները զոր փորձի համար կու տար, մանաւանդ երբ Լիկինիանոսին ճիշդ ետեւէն հրամայէր ճակատին ու քիթին վրայ կախուած սաղաւարտով, եւ միեւնոյն ատեն ուժով մը բռնած անոր վահանն ու նիզակը: Զինուորական կեանքին վրայ անոր եռանդարորը նկարաչրութիւնները, իր կատակներուն եւ սրամտութիւններուն վրայ իր տուած տեղեկութիւնները կը հետաքրքրէին մեծապէս նոյնիսկ հանդարտարարոյ Սոսրովիդուխտը, եւ երկուքն ալ բանակետոյն սիրականները եղած էին: Հոն կ'երթային կամ շատ անգամ Լիկինիանոսի հետ կը ձիւնորէին: Իրիկուն մը սակայն ստիպողական պարտականութիւններով զրաղած էր բանակետոյն մէջ, զինուորները չորս կողմը ցրուած էին, կը խաղային կամ կ'երկէին եւ արքայազուն քոյր ու եղբայր խումբէ խումբ, մարդէ մարդ կ'երթային: «Կուզէք արդրնկեցութիւն տեսնել», ձայնեցին յանկարծ քանի մը զինուորներ խորամանկ դէմքերով ու չարամիտ

ծիծաղով: Քոյր ու եղբայր վարանեցան, ետ քաշուեցան եւ հետաքրքրութեամբ հարցուցին, թէ ինչ է այս նոր խաղը: Զինուորները իրենց մօտ կանչեցին կերակուրի աւելցուեցները ժողովողներէն մէկ քանին, որոնք Տրդատի եւ Սոսրովիդուխտի առջեւ երկչոտ ձեւ մը առին եւ ետ քաշուեցան: Քիչ վերջը զուարթ խաղ մը մէջտեղ հանեցին, զինուորները չէին կրնար իրենց խնդուքը զսպել, կոշտ ու կոպիտ: Կանչուած մանչեր ու աղջիկներ կը պոսային կը կանչուրուտէին, երբ զինուորներու կողմէ զինուորական վերարկուներու կամ ձիւն ծածկոյթներու մէջ կը նստուէին, որոնց ծայրերը բռնած էին չորս զինուորներ: Ասոնք յանկարծ վեր կը նետէին դանոնք օդին մէջ եւ նորէն կը բռնուէին նոյն ծածկոյթներուն մէջ: Տրդատ, առաջին մանչերուն վեր նետուելը տեսնելով սկսած էր արդէն խրոնդալէն մարել, չէր կրնար ինքզինքը զսպել, Սոսրովիդուխտ ալ կ'օրորուէր երկու կտոր եղած խնդալէն, եւ հաճոյքի ու ամօթխածութեան զգացումին միջեւ իր ներքին պայքարը հայելիի պէս կ'երեւէր ամբողջ մարմինին շարժումներուն եւ երեսին վրայ: Զինուորներուն, Տրդատին եւ սողոց կանչուրուտեքին եւ հետզհետէ աւելի սաստկացած մեղկ, թոյլ վարմունքին վրայ Սոսրովիդուխտ զեփոզին կտրեցաւ, երբեմն կը կարմրէր, չէր կրնար զսպել խնդալը, դրուխը կը կախէր, մէկ առաջ երկու ետ քայլ կ'առնէր, մինչ սողոց ու աղջիկներուն տեսակ մը անպատկառ ձեւով վեր նետուելը, վար իյնալը կը շարունակուէր: Բայց հիմա կանչուրուտեքը աւելի սաստկացաւ: Զինուորներուն շառաշուն, թնդուն ծիծաղներու միջոցին Հայոց ուժով գահաժառանգը բռնեց քոյրը որ կը թալաթոսէր եւ յուսահատ շարժումներ կ'ընէր եղբորը ձեռքէն ինքզինք ազատելու համար, բայց Տրդատ երկու թեւերուն վրայ բարձրացնելով զայն տարաւ եւ դրաւ մօտակայ զինուորներուն չորս ծայրէն բռնած լայն պաստառին մէջ: Սոսրովիդուխտ թռաւ օդն ի վեր, վար ինկաւ, նորէն թոցուցին զայն, նորէն ինկաւ, նորէն վեր, նորէն վար, զինուորներուն տուած ձայնաչափին կամ ամանակին համաձայն, մէկ վեր, մէկ վար: Սոսրովիդուխտ եւս հիմա գործին խառնուած էր եւ տեսարանին կ'ընկերանար արծաթահունչ ծիծաղով: Քիչ վերջը որքան մեծ եղաւ ամէնուն ուրախութիւնը եւ զինուորներուն սիրտը որքան հանդարտեցաւ, երբ յանկարծ առանց նշմարելու վրայ հասաւ իշխան Լիկինիանոս, եւ մասնակցեցաւ ընդհանուր զուարճութեան, մինչ զինուորները առաջին անգամ սարսափեցան թէ պիտի պատժէր զիրենք: Մինչեւ իսկ անոր ուրախութիւնը միւսներուն ուրախութեանէն աւելի էր, եւ պատճառ եղաւ այսպէս որ սկիզբէն անմեղ խաղը փոխուի զանազան խառնակ ըսի-ըսաներու եւ Սոսրովիդուխտին համար վրան-բաց խօսքերու: Բայց բարեբախտաբար ոչ

Խոսրովիդուխտ եւ ոչ բոլորտիքը դտնուող տղաքը բան մը հասկցան անցած դարձածէն: Լիկինիանոս անգամ մըն ալ ինքզինքը մոոցած էր: Շատ ուշ միտքը ինկաւ տարագիրներուն ժամանումին գիշերը իր հօրը ձեռքին մէջ կատարած ուխտը եւ Արսինէին տուած խոստուածքը: Ոտքերը նորէն տղմուտին մէջ թաթխեց: Բայց բաւական խելացի գտնուեցաւ, եւ տուն երթալու ճամբուն վրայ, տղոց մասնաւորապէս շանձնարարեց որ այդ կասկածելի ժամանցին մասին չխօսին: Թէեւ գիտէր որ ծանր հաշիւ մը պիտի ունենար Արսինէին հետ: Եւ ճիշդ այս միջոցիս Արսինէի հանդէպ սէրը խորապէս արմատացած կը զգար իր մէջ, որովհետեւ եւ հակառակ այն խաղին պատճառած նեղացուցիչ եւ ամօթաւար ընող զգացումներուն յայտնապէս կը ըզգար թէ անոր հետ հանդիպումը ուրախառիթ պիտի ըլլայ իրեն: Եւ ակնկալածին պէս ալ եղաւ: Քոյր եւ եղբայր, Երեսին կարմրած, կէսօրուան ճաշին ատեն անհատնում խնդուքներով խաղը պատմեցին ամենափոքր մանրամասնութեամբ: Իշխանը շատ խնդաց, եւ իր վառ երեւակայութեամբ ամէն կերպով աչքին առջեւ կը բերէր տեսարանը Խոսրովիդուխտով, ինչպէս նաեւ զինուորներուն այդ առիթով ունեցած փափուքները եւ ուրախութիւնը: Յիշեց որ ինք ալ ատենօք իր զինուորներուն այդպիսի ուրախութիւն մը արտօնած էր: Բայց Լիկինիանոս գիտեց որ երթալով լոռ կը մնար Արսինէ: Մտահոգ նայուածքներով Արսինէին աչքերը կը հանդէպին Խոսրովիդուխտի վրայ: Լիկինիանոսի երեսը անգամ չէր նայեր: Թերեւս կնոջական խորապէս վիրաւորուած ամօթի զգացումն էր, որ Արսինէ եւ Լիկինիա անմիջապէս այս ըստ երեւոյթին անմեղ խաղը ուրիշ կերպով նկատի կ'առնէին, եւ անոնց միտքէն դանազան հնարաւոր բաներ կ'անցնէին, բաներ որոնց առջեւ անշուշտ Լիկինիոսի ուրախութիւնն ալ պիտի լռէր: Այդ հնարաւոր բաները ներկայ կացութիւնը տառապանքի փոխեցին երկու տղնուական կիներուն համար, մանաւանդ որովհետեւ Լիկինիանոս անանկ կերպարանք մը ունէր եւ այնքան չփոթած էր յայտնապէս, եւ սակայն ճարպիկ եւ ցանկասէր էր դարձնալ այնպէս որ գիտէր ինք բան մը ինչ որ ուրիշները, նոյնիսկ տղաքը չէին գիտեր: Լիկինիա խօսակցութիւնը ուժով մը ընդմիջեց, ազդարարեց տղոց որ ուտեն եւ բարի վարմունք ունենան, որովհետեւ իրենց մասին սարսափելի բաներ լսեցին: Երբ ճաշէն վերջ Լիկինիանոս առաջարկեց Պրէտն երթալ կառքով եւ կէսօրէ վերջ միջոցը ծովուն վրայ անցընել, քրմուհիին կողմէ սա պաղ ու տափակ պատասխանը տրուեցաւ. «Ոչ: Տղաքը ինծի հետ կու գան»:

Ոչ ոք գիտէր, թէ Արսինէ ուր կ'ուզէր երթալ պաշտպանեալներուն հետ: Ոչ ոք կը համարձակէր հարցնել իրեն: Ան իր ցասկոտ լրջութեան մէջ նման էր մատակ առիւծին, որ իր ձաղերը կ'ուզէ ա-

պահովել: Իր աջ ու ձախ կողմէն տղաքը կը հետեւէին անձկութեամբ: Ժամանակ մը թափառեցան շքեղ յիշատակարաններով եւ կոթողներով երկու կողմէն դարգարուած նուիրական փողոցին վրայ, անձայն հասող Կեփիսոսի կամուրջէն անցան լուռ, պայցին հեռուն մինչեւ արեւմուտք, եւ շատ շանցած իրենց Լուսը ձգած էին քաղաքն ու մարդիկ: Մարդը լուսնա դարձաւ: Եկան զով անտառածորի մը քով: Ոչ մէկ բառ կը խօսուէր: Տղոց սիրտը կը տրոփէր, Խոսրովիդուխտ անպատմելի անձկութեամբ կը տատապէր: Իշխան Տրդատ որքան ալ հարցում կ'ուզէր իրենց երթալիք տեղին, երկրամասին, ծառերուն կամ կենդանիներուն համար, ոչ մէկ պատասխան կը ըստանար: Արսինէի հրամանին վրայ անոնք ակամայ հագած էին հայկական տաք զլեւտներ, որոնք երեսէն ու ձեռքերէն դատ մարմինին ոչ մէկ մասը մերկ կը ձգէին: Քրտինքը վճիտ առուակաձեւ կը հոսէր անվարժ լեռնադնացներուն երեսին վրայէն: Մազերը կը փակչէին զլուխին եւ պարանոցին: Զորը կը տանէր լերկ, անհարթ, ժեռուտ բլուր մը որուն անունը չէր գիտեր Արսինէ: Ամբողջ երկու ժամ բարձրացած էին: Սարսափահար, Խոսրովիդուխտ անգամ միտքէն չէր անցնէր պահ մը նստիլ եւ դեռ այսպէս յայտնալիլ: Ո՞ւր կը տանի մեղ Արսինէ, կը հարցնէին միայն իրարու ժամանակ առ ժամանակ տղոց պարտապարտ փոխանակուած սարսափ յայտնուածքները: Ետ դառնալու ճամբան միտքը մնա՞ց արդեօք: Ի՞նչ է ասոր նպատակը: Մեզ չի կրնար մեռցնել. այսպէս կը մխիթարէր ինքզինքը Խոսրովիդուխտ ներքնապէս, ապահովիչ նայուածք մը արձակելով եղբորը խոժոռ, յանդուզն երեսին եւ անոր հուժկու կերպարանքին վրայ: Բարձունքը հասած պէտք էին ըլլալ: Բայց կարճ միջոց մըն ալ միայն խոր, արեւոտ, քարուտ հեղեղատին երկայնքը եւ ահա կեցան վերը սարին վրայ: Տրդատի կուրծքէն ժայթքեց ցնծալին ճիշդ: Խոսրովիդուխտ անխօս կը կենար, քրմուհիին մահապիւտ դիմադիժերը անգամ քրջիկ մը պայծառացան: Մեհեան մը կար վերը եւ ահագին սիւններուն վրայ կը բարձրանար իր լաղուարթ կապոյտ երկինքին մէջ: Ճերմակ աղաւնիներ կը թռչէին անոր շուրջ: Խորը վարը կը դարէր կապոյտ ծովը: Կզզի մը, լուրջ, ժեռուտ, անձառ, բաց խփիկ կը նայէր փառփառ խարակներով ջուրէն դուրս, որուն ալիքները հեռուն ապառաժուտ ափունքին վրայ կը փչրուէին ծորելի, փրփրոտ արծաթի պէս: Անկէց դէպի ձախ շատ մը փոքր կղզեակներ կ'արտացոլային. աջ կողմ մը մեծ լայն, կանանչ դաշտաղետին մը: Անդին Լուսը, հորիզոնին վրայ, բարձր բլուր մը, կարծես կապոյտ գոլորշիէ կաղմուած, մեղմ շրջապիծերով եւ հոն ուրիշ մը, արեւմուտքին դէմ, անհարթ անոպայ երկնաբերձ սարերով: Արսինէ, բնութենէն յաղթահարուած, կամաց կամաց կ'ընկճուէր, գետին կ'իյնար եւ, միշտ անմոռնջ,

միշտ նոյն թախծութեամբ տղաքը քաշեց վար որ նստին իր մօտ: Երկուքն ալ ծոցին վրայ կը սեղմէր սրտեռանդն զիրարպատու-  
թեամբ: Ասիկա բաւեց որ տղաքը վանեն իրենց վախը: Բայց հար-  
ցում ընելու չէին վատահեր: Արսինէի աչքերը երբեմն հաղիւ կը հե-  
տեւէին այն ձերմակ աղաւնիներուն: Անոնք կը մնջէին, կը կանչէին  
մեհեանին շուրջ եւ յետոյ մեղմիկ խոյանքով կը թրվոյային զէպի  
վար խորը: Հոն Արսինէ նշմարեց բարձր, ուղղահայեաց ավափայ  
ժը, որուն մէջ եւ ուրիշ գուրս կը մտնէին կ'ելլէին աղաւնիները:  
Եւ ահա տղաքը տեսան որ Արսինէի աչքերը հետզհետէ կը խոչորնա-  
յին: Ուրախութիւնը կը յարդէր երեսէն: Ինքն իրեն կը թոթովէր  
հատուկտոր բառեր եւ բան մը ցոյց կու տար վարը բարկաները եր-  
կրնցուցած արեւալոյս ափափայլին ղէմ: Յանկարծ ահա վեր ցատ-  
կեց եւ ճամբան ընկեց փութով զէպի վար: Տղաքն ալ ետեւէն: Ոչ  
խակ քառորդ ժամ — եւ քրմանոյշը հեկեկալով, հեծեծելով ափափա-  
յին ստորոտը կեցաւ պողոտայէն քովնախ, մարմինովը ծածկեց զե-  
տինը, ոտուկն զայն արցունքներով, համբուրեց հողը, կակաղեց,  
ճչեց, միշտ եւ դարձեալ. «Ո՞վ Արսինի Սուրա Անահիտա, ո՞վ Անահի-  
տա: Անահիտա: Աստուածուհիդ իմ: Տիրուհիս: Դուն հոս ես, եւ  
քու աղաւնիներդ: Քու լիծդ: Քու ձուկերդ: Ո՞վ Անահիտա»: Յետոյ  
ծնրադրեց քրմանոյշը, ուրեց թեւերը, ձեռքերը վեր նետեց, մինչ  
ուսերուն եւ քունքերուն վրայէն կուրծքին առջեւ կը ծփային սեւ  
մազերը: Յատկեց վեր, երբեք, կը զեղեւէր, կու լար, կը խնդար  
հողեղմայլ խնդութեամբ: Արհաւրալից անձկութիւն մը նախ պատեց  
պաշարեց Սուրովիղուխտը: Յետոյ անոր վրայ եկաւ յանկնկալս  
Վաղարշապատի եւ լիծին յիշատակը, եւ կու լար կը կանչէր կը խրն-  
դար միանդամայն, այն աստիճան որ լուռ լեռը կ'արձապանդէր:  
Բայց Հայոց Իշխանը հանդարտօրէն նստած էր փոքրիկ աղի լիծին  
ափը: Իր փոքր ինչ մէկ կողմ միտած բարձրադիր իրանը կը հանդ-  
չէր զէպի ետեւ երկարած աջ թեւին վրայ: Ու այսպէս անդորրիկ կը  
յառէր ձուկերուն:

Արսինէ կամաց կամաց հանդատացած էր: Եւ հիմա անոր վրայ  
եկաւ հանդիսաւորութիւն մը, որուն մէջ տղաքը երբեք տեսած չէին  
զինքը: Հիմա արդար եւ քրմանոյշ էր: Մօտեցաւ լճափին: Կանչ մը:  
Ու Սուրովիղուխտ ձախէն, իշխանապունը աջէն կեցան: Երեք կեր-  
պարանքները ստուերադժուեցան դաշն վէտվէտուն մկանունքին վը-  
րայ: Աղօթք մը, առաջին շէշտերուն մէջ անդորրաւէտ, յետոյ հրա-  
նուտ, սրտեռանդն, ի վերջոյ բոցաւուն: օրհնարանութիւն մը բար-  
ձրացած, որ կ'արձապանդէր ափափայլին վերեւ զետահետելով Ար-  
սինէի սիրտէն: Երեքն ալ շղթայուած ձեռքերով կեցած էին ափա-  
փայլին առջեւ: Անոնց գլուխներուն վերեւ ահաբեկ կը թռչէին ա-

ղաւնիները հոս ու հոն: Տղաքը այնքան շատ բան հասկցած էին ա-  
ղօթքէն, որ Անահիտ եւ Միշր արդարեւ ներած էին իրենց խաւարի  
գործին: Քանի որ անոնք կրկին Ահրիմանի շար ուղիներուն ծուղակը  
ինկած էին: Կասկածի ձեւով միայն կ'արթննար Սուրովիղուխտի  
սրտին մէջ սա սարսուղան, թէ ինքը այս ասուտ շատ ծանր կերպով  
մտոցած էր ինքզինքը: Իշխանապունն ալ կը հասկնար, թէ ինք ան-  
գամ մըն ալ հակառակ վարուած էր իր հանդերձեայ նպատակին, եւ  
զոհած էր իր արքայական արժանապատուութիւնը: Հիմա երկուքն  
ալ այս աղօթքին շողին ու խանդին վրայ կ'իմանային թէ այսօր մա-  
նուանդ ծանր կերպով մեղանշած եւ Աստուածութիւնը նախատած  
էին: Տղոց հողիներուն մաքրութեան շուրջ Արսինէի աղօթքը պտե-  
մարտութեան փոխուած էր Ահրիմանի ուղիներուն հետ, միարանու-  
թեամբ Ահուրայի բոլոր բարի ուղիներուն: Յետոյ զրկեց ան իշխա-  
նապունը որ երթայ խոչոր քարեր եւ չոր ճիւղեր բերէ: Հոն, ուր  
մարդաշատ բարձրութեամբ, խիտ եղէղներ աճումնաձիգ կ'երկարէ-  
ին ափէն մինչեւ լիծին մէջտեղը, անոնց ետեւ պիտի լուացուի եւ  
միւրճուելով պիտի աղօթէ, երեք անգամ յանուն Ահուրայի եւ Միշ-  
րի, ինքզինքը փուշով խարաղանելէ վերջ: Առանց առարկութեան  
անյայտ եղաւ Տրդատ: Երբ քանի մը քարերով եւ չոր փայտերով  
նորէն ափը ափափայլին ներքեւ եկաւ, արիւնի կաթիլներ եւ գետինը  
ցանուցիւր կոտրած ու պատուած փուշի ճիւղեր եւ փոքրիկ պաւա-  
ղաններ, նաեւ Սուրովիղուխտի գունատ երեսը անդորր, անմեղու-  
թեամբ լեցուն աչքերը հասկցուցին անոր, թէ իր բացակայութեան  
ատեն Սուրովիղուխտը եւ քրմուհին ինչեր քաշեր էին: Արքայորդին,  
խիտ դրացուած, խորապէս յուզուած, անձայն անշուշտ քարերն ու  
փայտերը դրաւ քրմուհիին առջեւ: Այս վերջինը բոցանուտ նայ-  
ուածքներով կանոնած էր իր առջեւ, ձիւնի պէս ձերմակ կտաւէ  
զգեստի մը մէջ, քրմուհիներու յատուկ իրական պաշտամունքի հան-  
դերձը կը կրէր վրայի հաղածներուն տակէն: Տրդատին այնպէս  
կու գար, թէ կը զգայ աստուածութեան մերձաւորութիւնը եւ ամ-  
բողջ մարմինովը կը դողար:

«Ապաշխարեցիր, քաւեցիր, տղայ»: — Արքայորդին նստաւ  
քրմուհիին առջեւ հողին վրայ եւ անոր սուրբ կօշիկները ծածկեց իր  
ամօթապարտ երեսով: Առանց վեր նայելու, աջովը կը բարձրացնէր  
արեւնադոյն փուշի ճիւղ մը: — «Անահիտի ջուրը սրբե՞ց քեզ»: —  
Իբրեւ պատասխան Տրդատ, ամուր մը սեղմեց բերանը քրմուհիին  
աջ ոտքին վրայ: — «Ոտքի ելիր, եւ չինէ սեղան Անահիտին, պատ-  
րաստէ փայտը, գիտցածիդ պէս»: — Եղաւ այնպէս: Արսինէ իր  
զրպանէն հանեց երեք ձերմակ մետաքսէ պատառ եւ անոնցմով կա-  
պեց իր ու տղոց երեսը մինչեւ աչքերը, որպէսզի ոչ մէկ շունչ չը-

պղծէ նուիրական հուրը, որուն շողին մէջ Անահիտ անտեսօրէն պիտի մօտենայ եւ իրենց անմաքուրութիւնը պիտի սպառէ: Գործիքները պատրաստ էին: Արքայորդիները ծնրադիր: Քօղածածուկ երեսները հողին վրայ խոնարհեցան: Անոնց անդամները գողգոյացին, երբ ափափայլին վրայ հնչեց սուրբ պողպատը: Կրակը կը ճարձատէր քարէ փոքր սեղանին վրայ, որ շինուած էր ժայռի մը դարեւանդին վրայ: Քրմուհին կայծակի արայութեամբ ինքզինքը գետինը նետեց: Կապոյտ մուխը անմոռնչ լուսթեամբ երկարեցաւ լիճին վերեւ, յետոյ ուղղահայեաց վերամբարձուամով յուշիկ ափափայլին վրայ, եւ ցրուեցաւ մաքուր օդին մէջ աղօթքի մը պէս:

Քանի քանի անդամներ Խոսրովի տղաքը Արսինէի առաջնորդութեան տակ ինչեր տեսած էին: Բայց հիմա իրենց քրմուհիին ծանրախոհ սրբութեան առջեւ զողալ սովորեցան:

Ան ոտքի ելաւ, եւ ոսկի ամանի մը մէջէն սուրբ ձեռքերը — Հասմա — թափեց սպառելու վրայ եղող կրակին վրայ: Քաղցրագոյն, դմայելի, խնկանման բոյր մը լեցուց ու քօղարկեց օդը: Կապոյտ շողիէ ամպ մը, արեւէն ալ ազդուած, կը ծածանէր լիճին վերեւ, բաղմապատիկ մանուածներու կը լուծուէր, նարօտակերպ, պարուրածեւ, աղեղնաւոր, զծաւոր, որոնք փոփոխակի զիրար կուլ կու տային, իրարու մէջ կը թափանցէին, եւ հուսկ ուրեմն կ'անհետէին ջուրին վերեւ: Ապաշխարողներու առաջին կազդուերիչը եղաւ այսօր կէսօրէ վերջ նուիրական ըմպելին, որ ձեռքով ու լիճին ջուրով խառնուած սրբադործ ոսկի բաժակին մէջ կազդուրեց երեք հաւատացեալները: Կարծես այլակերպուած էր Արսինէ: Գիտէր թէ սրբուած են իր տղաքը, անոնց յանգանքը քաւուած, ներուած: Երկուքն ալ կը սեղմէր իր կուրծքին դէմ, կը համբուրէր զանոնք, կրկին եւ կրկին անոնց անունները կու տար եւ ճամբայ կ'ելլէր անոնց հետ: Բայց ոչ մէկ պատմութիւն պատմուեցաւ: Մանիշակեայ կապոյտ լերան քղանցքին վերեւ, դիմացը, արեւմուտը, վարը ծովուն մէջ, որ ամենազան երանգներով կը ծփայ ու կը շողայ, վերը Ապոզոնի մեհնանին մօտ, հիմա այլեւս առանց աղանձիներու — բովանդակ աննկարագրելի ոսկեցնցուղ, անձայն փառքը յունական յետ մատնային իրիկնամուտի մը, ծովէն ու ցամաքէն վեր բարձունքին վրայ, վեհատեսիլ ու վեհահնամեմ կ'ազդէր երեք ճեմողներուն վրայ: Նորափթիթ ջերմագին սէր մը կը կապէր զանոնք: Նաեւ տեսակ մը վախ դէպի տուն ճամբուն առջեւ, խորափիտ ձորն ի վար: Լիճը կը շողար թխաթորմի, անգամ մըն ալ վերը: Արսինէ տղոց հետ իջաւ: Յուրտ գիշերը իր սպասածէն աւելի շուտ վրայ հասաւ: Անսովոր լեռնելքի մարմնական յոգնութիւնը, քաւութեան տառապանքը, եւ հոգեկան յուզումը իրենց ազդեցութիւնը զգալի կ'ընէին:

Խոսրովի դուխտ շարունակ կը սայթաքէր եւ կը դանդաղէր կոնակին եւ ոտքերուն ցաւէն: Տղաքը կը հաւատային թէ Արսինէի միտքաբան յայտարարութենէն վերջ ամայի եւ դժուարուտ հեղեղատին մէջ այս ընչերային վայրէջքին արկածն ալ իրբեւ ճշմարիտ ապաշխարանք մը կը համարուի: Բայց երբ Խոսրովի դուխտ երկու երեք անգամ սաստիկ սրտաց սնդեւելով թէ լարձուն կենդանի մը վրայ կոխէ, տկարացաւ կեցաւ եւ չէր ուզեր այլեւս առաջ երթալ: Երկու տղաքը զիտեցին նաեւ, թէ Արսինէի ձայնն ալ կը զօղար: Խոսրովի դուխտ ոյժ առաւ կեցաւ եւ ջանաց քաշել: Ոչ մէկ ջար այլեւս շղալի կ'ըլլար: Եղեւիններու անտառը սկսաւ, մուտքին առջեւ Խոսրովի դուխտի ծունկերը կ'թոտեցան եւ մնաց այնպէս անկարող դեպի: Արսինէ ինչզինքը զուրաւն հաղար կտոր կ'ընէր հանդարտութիւնը սրահելու համար: Բռնեց վեր առաւ Խոսրովի դուխտը, եւ առջեւէն քայլեցուց ետեւէն բռնելով, անոր զուխը թեթեւ մը կուրծքին դէմ սեղմած: Արքայորդին անխօս անոր կը հետեւէր, ուղղակի ետեւէն: Ի՞նչ կը խորհէր արդեօք: Կը տրտնջա՞յ: Եղածը ամէն կերպով կ'ըմբռնէ՞: Իրենք յանցաւոր են: Որչա՞փ: Ապաշխարանքը շատ ծանր չէ՞ր: Այս մտածումները ի՞նչպէս միտքս կու գան կը խորհէր Արսինէ ինքնիրեն, շարունակ Միհրի պաշտպանութիւնը պաղատելով Ահրիմանի դեւերուն եւ զիշերուան բոլոր ոգիներուն դէմ, հանդարտութիւնը պահելով միայն սա մասին, որ ինք տղոց հոգիներուն համար լաւագոյնը ուզած էր ընել: Բեռը կը ճնշէր: Արսինէին կարողութիւնն ալ սպառեցաւ, որովհետեւ հակառակ Միհրին ու Անահիտին ուղղուած բոլոր աղօթքներուն անկարող էր այլեւս տողալ անձկութեան: Նաեւ զիշերուան մէջ ուր գտնուած տեղերն ալ չէր գիտեր: Չէր գիտեր այլեւս թէ ուրիշ անգամ եղած է սա ծառախումբին մօտ, անցած է սա ցից ժայռին քովէն: Աթէնք ո՞ր ուղղութեան վրայ կրնայ ըլլալ: Խորքին մէջ ոչ մէկ լոյս: Յնորական անձկութիւն մը գիշերային դեւերու եւ սատանաներու առջեւ, նաեւ վախը ջղջիկներէն, օձերէն, բուերէն, գորտերէն: Ոտքերը չէին բռնէր, ձեռքերը ուժաթափ, քանիցս թեւերուն մէջէն զուրս կ'իյնար Խոսրովի դուխտ, թէեւ սկսած էր նորէն դանել իր գիտակցութիւնը: Խենթի պէս պոռալով մատներովը Արսինէին կուրծքը կը ճանկէր եւ միտքին դեպի կ'իյնային: Տրդատ ալ արձակեց սարսափի թեթեւ կանչ մը: Ուրիշ պահու մը փալփուուն դանակը պատեանէն հանելով պինդ կերպով գնաց կեցաւ Արսինէին եւ քրոջը առջեւ:

«Ալ կը բաւէ, խելօք կեցէք», բսաւ հրամայողական շեշտով, «ես կը շալկեմ Խոսրովի դուխտը»: Երկուքն ալ լուցին: Տրդատ ծրուեցաւ մութին մէջէն զանոնք շօշափելու համար, եւ ահա Խոսրովի դուխտ կրկին կատաղիի պէս պոռաց մատովը ցոյց տալով կերպա-

բանք մը որ վերտրկուով ծածկուած կամաց կամաց իր վրայ կու գար: Նոր նուազում մը փակեց Խոսրովիդուխտի բերանը: Բայց մատակ առիւծի մը ստոււմով Արսինէ առաջ գնաց երկու բունցքը տնկելով: Իր աջ ազդրին վրայ զգաց տղուն ուժով սեղմուձը, իր աջ թևովը տղան կ'ուզէր իրեն քուշել դանտնք, եւ փարփոյ գաշոյնը միւս ձեռքին մէջ, պատրաստ էր պաշտպանել դանտնք զմահ:

«Հանդարտէ Տրդատիկս», հրամայեց Արսինէ: «Լուռ բոլորովին»: Ահա խոկ եւ խոկ յառաջացող կերպարանքը զողողուն ձայնով զոչեց յունարէն. «Յանուն Ձեւսի, որ պաշտպանն է օտարականներուն եւ տկարներուն: Մենք անդէն ենք, մոյրորած եւ կը փնտռենք Աթէնդի ճամբան, Լիկինիոս իշխանին տունը երթալու համար»: Անձանօթը պատասխան չտուաւ: Աւելի մօտեցաւ յամբօրէն: Արսինէ կը զողողէր, եւ խեղդ ձայնով կանչեց կրկին. «Մարդ թէ ողի, ի՞նչ է միտքդ»: — «Ֆարի», աղաղակեց ձայն մը, որուն քաջածառօթ չէ՛տըր դիւրը լեցուց յուզեալ ուրախութեամբ, բայց միեւնոյն ատեն ստոն սարսուռով: Տրդատ դեռ չէր կրցած ճանչնալ ձայնը: Որսի՛ն տես օտարականին ձայնը յսելուն պէս ցատկեց անոր կուրծքին դէմ, անոր կտուկն փակելու եւ գաշունահար ընելու զայն: Բայց Տրդատին դանակը մետացեալ կուրծքի մը առջեւ դանուեցաւ, զերազանց ոյժ մը տղուն երկու թևերէն բռնելով վեր օդին մէջ հանեց զայն եւ նորէն վար իջեցնելով գետինը դրաւ: «Տրդատ հանգարտ», հեւաց Արսինէ: Եւ ահա նոյն պահուն այն խոշոր, ուժով մարդը, Լիկինիանոս, ինկաւ Արսինէի ոտքը, իր երեսը սեղմեց Արսինէին զգեստին վրայ եւ ամբողջ մարմինը զողահար, ձայնեց. «Արսինէ, ներէ ինձի, Արսինէ փրկէ դիս»: Արքայորդին Տրդատ ժամանակ չունեցաւ մտածելու այս արտակարգ ողջոյնին վրայ, չորս դին կը ցատկէր, մէյ մը Արսինէն կը բռնէր, մէյ մը Խոսրովիդուխտը գետինը, եւ ուրեմն ուրախութենէն գառանցելով կը պոռար ուժգին. «Լիկինիանոս, Լիկինիանոս»:



Խոսրովիդուխտ գետինը պառկած էր տենդահար: Իշխանը արդէն կրկին մոռցած էր դինքը եւ իր միջոցաւ ամբողջ տունը վարակող յուզումը, երբ Լիկինիանոս եւս երկար ատենէ ի վեր ետ չէր զարձած կորսուածները փնտռելէն: Որեւէ մեղադրանք կամ պարտաւ չէր դար իշխանին շրթունքին վրայ, ոչ մէկ դժկամակ նայուածք Արսինէին վրայ: Լիկինիա մայրական մտահոգութեան մը մէջ էր, եւ իր աչքին առջեւ Խոսրովիդուխտի ննջարանին մէջ լուռ համբերութիւն ցոյց կու տար Արսինէ, բայց բացարձակապէս միտքը դրած էր

չձատնել իր կրօնքին ոչ մէկ զաղտնիքը, սակայն ոչ ալ ամենափոքր առարկութիւն մը ընել, Խոսրովիդուխտի քննուելուն դէմ տունին բարեկամ երիտասարդ բժիշկ Վալերիոսի կողմէ: Արսինէ սկսաւ ինք ալ քիչ մը շունչ առնել, երբ բժիշկը առանց ձայնի, Խոսրովիդուխտի կռնակի վրայ գտնուած արիւնաներկ բիծերը շփեց զովացուցիչ իւղով մը, փափուկ հողածութեամբ կակուզ վերմակներու վրայ պառկեցուց, եւ ամէն տեսակ հրամաններ տալէ վերջ դրան տակ զխմամբ քարձրածայն բաւ Արսինէի ձեռքը ուժով մը սեղմելու միջոցին. «Արսինէ, քու կրօնքդ այս օրիորդին համար չափազանց խիստ է»: Ինքն ալ շնորհակալութեամբ սեղմեց բժիշկին ձեռքը:

Պատահեցաւ որ այդ իրիկունը Արսինէ ճաշէն վերջ պարտէզ իջնէր: Որսի՛ն տես Խոսրովիդուխտ կը քնանար: Գորշ մետաքսէ ցփսիով մը ծածկուած էր Արսինէ գլուխէն մինչեւ ոտքերը, եւ մեղմով կը փայփայէր թառամած վարդի թերթիկները, որոնք կը ծածկէին Անահիտի ապագայ սրբափայլը տանող ճամբան, աչնան երեկոյեան մշուշէն թրջած, որ տրամանոյշ տրամադրութիւններով կը լեցնէր զունաթափ պարտէզը: Անձայն լուսթիւն: Հոն կամ հոս, հոփի թէթեւ շունչէն փչուած ոսկեղեղին սաղարթ մը, կեանքէ յոգնած, կ'իշխայ ծառէն կամ թուփէն. հոս շոճիի սուր ծայր մը բուրթ կերպով իյնալով, թունդ կը հանէր երազատես Արսինէն:

Դիւրարերձ դարաւանդին վրայ եղեւիններու պուրակին մէջ կանգնած էր Արսինէ: Իշխանին գերիներբը իրենց հրահանդին համաձայն հողը կը կրէին, ծառերը կը տնկէին, յատակի մէջ կ'առնէին դղջող ակր եւ ջուրը կը բերէին մարմանդներով, մարդերով, նոճիներով շրջապատուած ձկնարանի մը մէջ: Ձիւնի պէս ճերմակ կարայներ կը սահնակէին խոխոջող սեւ ջուրին վերեւ: Պարզ այլ հանդիսաւոր, լուռ ու լուրջ շրջակայոյն պատշաճութեամբ, Ապեղէս մատուոյն կոկիկ չէրբր առաջ տարած էր աւազանին եւ մամուռով, ամէն տեսակ ջրային տունկերով ու ծաղիկներով զարդարուած քարանձաւին վերեւ: Քարէ սանդուխ մը դարաստան կը տանէր: Պատուանդաններու վրայ կը հանդէսէին նրբաւարտ, բուրբի սիւներ, եւ անոնց խոյակին վրայ մարմարէ մարդակները, որոնք տանիքը կը կրէին աւազանին վրայ վար նայող դմբէթաւոր քիւով: Քիւր կճեայ ծոփորով գրուադուած: Սիւները կը կանգնէին իրարմէ քիչ մը հեռաւորութեամբ, որոնց միջեւ ամէն կողմէ կարելի էր նրբանցքը հասնիլ, որ բուն սրբափայլին շուրջ կը գտնար. քառանկիւն աշտարակաձեւ վայր մը, որ իր ցանցաւ լոյսը կը ստանար երկու փոքր լուսանցոյցներէ:

Արսինէ սարսափահար, շիկնեցաւ. — «Դուն հո՞ս, Լիկինիանոս»: — «Ներէ»: — «Ոչ», մերժեց զլուխը երեքցնելով, «չնորհա-

կալութիւն երէկ իրիկուան օգնութեանդ համար» : — «Մեծ տաղնապի մէջ էիք» : Գլուխով նշան ըրաւ հաստատական եւ հարցուց . «Ինչպէ՞ս եղաւ որ հոն մեզի հանդիպեցար, ճամբէն շեղ» : — «Ե՞ս» : — «Այո, դուն իսկ» : — «Ես», սկսաւ Լիկինիանոս վարանումով, կեցաւ, գլուխը կախ մտածեց, յայտնի չփոթութեան մէջ էր . «Ես տղոց համար սաստիկ նեղուած, անհանգիստ էի : Դուն շատ խիստ ես, շատ մաքուր», սրբապրեց, «կերակուրի միջոցին ան ինչ նայուածք էր զոր կ'արձակէիր տղոց վրայ : Նոյնիսկ հայրս մայրս անոնց մասին վախցան : Այս մասին երկար խօսիլ, քու դաստիարակութեանդ դժ մ'ան բռն, ատիկա երբեք չենք ըներ : Ես սակայն վախցայ որ խեղճ տղաքը պիտի տառապին — իմ անխելութեանս պատճառաւ : Կ'երդնում ձեզի Ձեւսի անունով, թէ այն խաղը դէ խաղ էր : Չկրցայ այլեւս հանդստանալ : Տեսայ ձեզ որ նուիրական փողոցին երկայնքէն կ'երթայիք, Կեփիսոսէն անցնելով դէպի բլուրը : Հեռուէն ձեզի կը հետեւէի, որովհետեւ կը վախնայի թէ կը մոլորիք» :

— «Եւ մինչեւ դիչեր, ձորին մէջ, մե՞զի սպասեցիք» : Անպահով, չփոթ այս մը եկաւ Լիկինիանոսի շրթունքէն : Յանկարծ Արսինէի վրայ եկաւ անսուր նախապատգում մը որուն վրայ քիչ մնաց շնչահեղձ պիտի ըլլար : Ափափան — լիճը — սուրբ քառութիւնը — եւ բարձր վերը — ով գիտէ, վայրի աղանիններուն ժայռի ծակերուն մէջ վերը, երկու անսուրբ աչքեր — սա մարդուն աչքերը : — Վրան եկաւ գլխու պտոյտ մը : Դէպի Լտ ճայլ մը առաւ : Չդաստութեան յետին կայծը արդիւնց անոր որեւէ նոր հարցում . եւ Լիկինիանոս ինք ալ օղնէյ հեռանալ այդ դարձուրելի վայրիկանէն, ջանի որ անկասկածելի անկեղծութեան շնորհով ու արտայայտութեամբ երէկ դիչերուան աղաչանքը հիմա կը կրկնէր անոր առջեւ . «Արսինէ, նւրէ ինծի : Փրկէ դիս» :

— «Ինչպէ՞ս պէտք է օղնեմ քեզի : Ընդունէ հաւատքս : Մըլըրտէ հողիդ Ահուրայի լոյսին մէջ, Միհրին կանչէ չար ողիններուն դէմ, փառք տուր Անահիտին, ան կը ցանկայ մարդոց փառքին ու ծառայութեան — ուրիշ ոեւէ օղնութիւն չեմ դիտեր քեզի համար» :

— «Արսինէ, յոյժ ապերձանիկ եմ : Ամէն վայելք ունիմ, ու այնքան ամայի եմ, այնքան եղկելի : Կը հաւատամ, այո, իսկպէս, ինչի որ դուն կը հաւատաս : Պաւղա եւս նոյնը կ'ըսէ, «միայն թէ ան Միհրի տեղ Քրիստոս կ'ըսէ : Կը հաւատամ որ ներքին լոյս մը կայ, որ կրնայ մարդկային իմացողութիւնը պայծառացնել եւ երջանկաբերել : Լոյս մը կայ որ անդորրութիւն կու տայ եւ խաղաղութիւն, որ կը սրբէ : Բայց տես, երբ կ'երեւակայեմ քու Աստուածդ, Ահուրա կամ Միհր, կամ քու տիրուհիդ Անահիտ, այն ատեն — այն ատեն

մարդիկ միայն կը տեսնեմ, միշտ մարդիկ իմ առջեւ : Ահուրա կամ Ձեւս ինծի համար միշտ իմ աղնուական հայրս է, միայն թէ աւելի զօրաւոր : Ձեր տուած ծանօթութիւններուն համաձայն՝ Միհրը ինծի համար ողիմպական կառավար մըն է կամ ցուլամարտիկ մը : Իսկ Անահիտը — Անահիտ — ան յաւէտ — դուն ես» :

— «Ամբարիշտ մարդ», աղաղակեց քրմուհին եւ զայրացած քաշուեցաւ նրբանցքը սիւներու ետին : Բայց Լիկինիանոս անոր ետեւէն գնաց : Արսինէի աչքերը կը կայծկլտէին գիչերացող իրիկնամուտէն դուրս : Անանուէ ամայութիւն մը, գերահոգ երջանկութեան ցանկութիւն մը աւելի առաջ կը մղէր Լիկինիանոսը, խոստովանելու իր սէրը, վերջին որոշումը — տէր ըլլալ Արսինէին եւ անոր փրկարար սրբութեան : Առ այժմ Լիկինիանոսի ուզածը սրբութիւն է միայն : Արսինէի զայրոյթը անգամ կը սրբէր իր հողին եւ կ'այրէր իր հիմակուան տաքուկ ցանկութեան ամենաթեթեւ անմաքրութիւնը : Կը ներխուժէր ան, Լիկինիանոս : Սարսափահար քրմանոյշին ետեւէն կ'երթար, դայն հալածելու պէս, աշտարակին նեղ դռնէն դէպի սրբավայր : Արսինէ պատին քով կեցաւ, կռնակը ուժով մը պատին կրթնցուց, եւ պաղատելով թեւերը վեր առաւ անոր դէմ իրբեւ պաշտպանութիւն եւ անձկագին թեթեւ ճիչ մը արձակեց : Լիկինիանոս կը հեւար : «Մի վախնար, սուրբ, մաքուր քրմանոյշ : Ամենամաքուր, ամենապեղեցիկ, ամենալաւ կին, որուն երբեք հանդիպած եմ : Ես չեմ կրնար թշնամանք ընել քեզի : Բայց անգամ մը մտիկ ըրէ (անոր առջեւ ծունկի եկաւ) թշուառիս : Ես դէչ մարդ չեմ, իմ շատ մը բարեկամներէս լաւագոյն մնացած եմ : Բայց կը նուաղիմ : Ով Արսինէ կը նուաղիմ : Ճահիճը մինչեւ սիրտս կը բարձրանայ, կը մխրձուիմ, կը նուաղիմ — եւ — կ'ուզեմ, ու սակայն չեմ ուզեր» :

Արսինէ քիչ մը հանդարտած էր : Աստուածուհի մը պէս կեցած էր հեծկլտացող մարդուն առջեւ : Խորագրած : Տմոյն, կանաչորակ լոյս մը քանի մը աստղերէն կ'իյնար լուսամուտներէն եւ քիչ մը կը լուսաւորէր վայրը : «Ի՞նչպէս կրնամ քեզի օղնել, հէք Լիկինիանոս : Բարի բարեկամներ ունենալու էիր» : Լիկինիանոս կատակելով խընդաց : Յետոյ ըսաւ, որպէս թէ հանդարտօրէն իր ճակատագիրը կ'արտասանէր . «Քու սէրդ պէտք է ունենամ» : — «Իմ սէրս երկար ատենէ ի վեր ունիս, Լիկինիանոս : Ան կը փնտոէ քու հողիդ, քու երջանկութիւնդ — քու յաւիտենական երանութիւնդ» : — «Քեզ միայն, քեզ», հառաչեց ան : — «Երբեք» : — «Ինչո՞ւ չէ», հարցուց ան, սաստիկ վեր ցատկելով, այնպէս որ Արսինէ ետ ետ փախաւ : — «Ես կապուած եմ» : — «Ի՞նչպէս : Որո՞ւն կողմէ : Ի՞նչով, Ի՞նչ բանի» : — «Անահիտին սուրբ ուխտով : Վաղարշապատի Սրբավայրին» : — «Ան կործանեցաւ» : — Արսինէ երեք անգամ աղաղակեց : «Գի-



տե՞ս: Որո՞ւն կողմէ: «Բարեկամիս Գաղերիոսի կողմէ: Դուն Հոսարդէն սրբավայր մը ունիս: Ան ալ գեղեցիկ չէ՞: Կ'ուզեմ քակել, մեծագոյն, գեղեցկադոյն շինել տալ, անոր վրայ ծախսել ամբողջ գոհարեղէնները, ամբողջ ոսկին: Միհրատունի մը շափ ընդարձակ պիտի բլլայ, խորունկ, հարիւրաւոր աստիճաններ դէպի հողը զոր պիտի իջնցնեն եւ հոն Միհր պիտի ունենայ արձան մը եւ Ամենայն Սրբոց մը, որուն նմանը պիտի չգտնուի ոչ ուրեք Պարսկաստանի, Հայաստանի, Սպանիոյ, Բրիտանիոյ մէջ, Հռենոսի, Դանուբի վրայ: Ապեղէս Հոս պիտի կանգնէ Անահիտի մէկ արձանը, որուն նմանը ոչ մէկը պիտի ունենայ, եւ քու պատկերդ, Արսինէ, քու պատկերդ պիտի կրէ ան»: — «Հեռու: Ի՞նչ է այս խօսածդ: Թշուառ: Դուն կը պըղծես զեւրոսը, Աստուածուհիին պատկերը չեղած: Ես, Աստուածուհիին պատկերը: Կը սարսափիմ: Երդեք»: Բայց յանկարծական յիշատակ մը դայն տարաւ Ապեղէսի աշխատանոցը, եւ կրկին լսեց անոր ձայնը. «Ու եթէ Աստուածուհիին ինք ցանկայ այդ բանին»: — «Եւ», հարցուց Լիկինիանոս վարանելով. «այրող սպասուածով մը: — «Ձի կրնար բլլալ»: — «Ինչո՞ւ համար չէ: Ի՞նչ արգելք կայ քեզի»: — «Դուն», ազադակեց հպարտօրէն: «Անահիտի քրմուհիին պէտք է սիրէ միայն թաղաւորները»: — «Ես ինքնակալ պիտի բլլամ: Ոչ միայն թաղաւոր: Պէտք է կայսր սիրես»: — «Կայսր կամ թաղաւոր տարբերութիւն չկայ: Բայց ան պէտք է արդէն կայսր կամ թաղաւոր եղած բլլայ: Բայց Ահուրայի եւ Միհրի սպասաւորը»: — «Ինչո՞ւ համար միմիայն թաղաւոր կամ կայսր պէտք է սիրես»: — «Ես անոնց աստուածութիւն կու տամ»: — «Ի՞նչպէս: Ի՞նչպէս: Աստուածութիւն»: Լիկինիանոս զարմացած, որպէս թէ սկսած էր կասկածիլ Արսինէի իմացականութեան վրայ, ետ քաշուեցաւ, եւ կրկնեց, կարծես ապշելով. «Աստուածութիւն, Աստուածութիւն: Դուն ի՞նչպէս Աստուածութիւն տուիր Սոսրով թաղաւորին»: Արսինէ կաս կարմիր եղած. «Լիկինիանոս, ձեզ այդ բաները: Ես կ'երգուընցնեմ քեզ. եթէ դանակդ սիրտիս վրայ ալ դնես, իմ շրթունքներս քեզի չեն կըրնար բռնի սուրբ զաղտնիքը, չեն ըսեր: Եկուր տուն դառնանք: Հոս կր սոսկամ ես»: Գիշերային ցուրտ, միզամած դարաստանին մէջէն զղեակ զացին:

Այս կնոջ ոյժը ինչի կարող չէ Լիկինիանոս, կշտապինդ, կը քափէր անոր քովէն: Ձայն համբուրել, անոր ձեռքը բռնել, թեւը անոր մէջքէն անցրնել, մատներու ամէնէն ծայրի մասերը անոր ցփսիին հպիլ — բարէ, այս ամէնը եւ դեռ աւելին ծերունի Լիկինիանոսի կարելի բլլար թերեւս: Բայց հիմա — այդ մասին ոչ իսկ մտածում:

Դղեակին մօտը որ արդէն լուսաւորուած էր տունի լապտերներուն կարմրորակ ճառագայթովը, լուռ կեցաւ: Արսինէ պարտա-

ւորուած հարցուց, «Ուրեմն, ի՞նչ»: — «Կինս պիտի բլլա՞ս, երբ թագաւոր կամ կայսր բլլամ»: «Ամուսնանալ կարելի չէ: Ծնիլը անսուրբ է քրմուհիին համար: Անոր պաշտօնն է դոհ եւ աղօթք: Ձեռական աշխատանքը կը պըժէ դայն Աստուածուհիին առջեւ: Ես — ամուսնանալ: Ով Լիկինիանոս: Ինքնակալին եւ Աստուածութիւն կը պարգևեմ»: Անոր ահաւոր հպարտութիւնը Լիկինիանոսը կը տողորէր դժնեայ բարկութեամբ: Անոր բառերը տաք հովի հոսանքի պէս կը մտնէին Լիկինիանոսի հոգիին մէջ: Կարծես փոթորիկէ մը մըղուած դուրս կու գային Լիկինիանոսի զսպուած փառասիրութեան ձգտումն ու նպատակը: Իր աչքերուն առջեւ կը շողային արքայական ոսկեթաղին սուր ծայրերը բոցավառ թանկագին քարերով, եւ մականը, եւ անոր ներսը իրարու մէջ անցած կը փոթորկէին ինքնակալ, Աստուածութիւն, Ահուրա, Անահիտ անունները:

Արսինէի հարցումը դայն արթնցուց իր երպանքէն, զղեակին մարմարեայ սանդուխին տակը. «Ուրկի՞ց գիտես, թէ դուն ինքնակալ պիտի բլլաս: Քու հայրդ ինծի պատմած է, թէ քու ծնած միջոցիդ գուշակողական որեւէ նշան պատահած չէ»: Ասիկա ըսած ատենը Արսինէի աչքերը չարամիտ կայծեր կ'ունենային եւ անոր լայն բարեձեւ բերանը հեղինական ծիծաղի ձեւ մը կ'առնէր: Լիկինիանոս ինք եւս քրքիջ մը կ'արձակէր եւ կ'ըսէր. «Ուրկի՞ց գիտեմ: Ասիկա իմ զաղտնիքս է: Անիկա կ'ըսեմ քեզի իմ Աստուածութեանս օրը»: — «Բայց ապահով գիտե՞ս, Լիկինիանոս»: Այս վերջինը կը վարանէր, յոնքերը վեր կը հանէր եւ աւելի հանդարտ կը խօսէր. «Ապահովը ի՞նչ է: Ո՞վ կրնայ ասպական բոլորովին ստոյգ ձեռով ճանչնալ»: Արսինէ պատասխանեց. «Ես մարդ մը կը ճանչնամ, որ ապագան ստուգապէս գիտէ»: — «Ստուգապէ՞ս, հարցուց Լիկինիանոս, աչքերը չորս բացած»: «Ստուգապէս: Օրն ու ժամն ալ քեզի կրնայ ըսել թէ երբ եւ ուր, եթէ իրօք Աստուծոյ կամքն այն է»: — «Ի՞նչպէս կը կոչուի այդ մարդը»: — «Սուրբ Մովսէս»: — «Ո՞ր է այդ մարդը»: Արսինէ, ծանր թախիծի մը լուծին տակ, զլուխը ծոց կուրծքին վրայ, եւ ըսաւ անտարբեր ձայնով մը. «Մովսէսը, սուրբ հայրը, քուրմերուն թաղաւորը, Միհրի բարեկամը — բանտարկուած, նահատակուած, անօթի մեռած, լերան ձիւնաբուքի ատեն սառած»:

Ո՞վ սուրբ հայր Մովսէս: Կամ ո՞վ գիտէ: Յանակնկալս ան եկաւ մեր մէջ, առողջ, փրկուած: Ես խոնարհեցայ անոր առջեւ: Իր գեղեցիկ, խոշոր ձեռքերը վրաս դրաւ եւ յետոյ, յետոյ կը լսեմ իր մէկ հատիկ ձայնը. — ոչ ոք անոր պէս կը խօսի — «Ահուրան օրհնէ քեզ, տղաս: Երկինք օրհնէ քեզ, ով քրմանոյճդ Բարձրելոյն»: Ասով արդէն անդաստակ հասած էին: Արսինէ կարծես վերացած էր,

նուազած նայուածքներով եւ հատկաւ ձայնով ինքնիրեն կը գա-  
ռանցէր: Լիկինիանոս Արսինէի հանդէպ բոցակէզ սէրէն գատ կիդիչ  
նախանձ մըն ալ կը զգար, այո, ատելութիւն անձանթիւն դէմ:  
«Արդեօք շա՞տ կը սիրէ զայն: Շա՞տ կը սլաշտէ զայն», կը խորհէր  
Լիկինիանոս, երբ Արսինէ, առանց ձայն հանելու, թանկարժէք կա-  
կուղ զորդով ծածկուած մարմարեայ դարձդարձիկ սանդուխէն վեր  
կ'ելլէր: «Թագուհի, քրմանոյշի արժանավայել: Հրաշալի երեւոյթ  
մը ետեւէն, — նաեւ երբ ետեւ ալ չնայի: Ոչ թէ սպասարկու, աղա-  
խին Աստուածուհիին, ոչ Աստուածուհիին ինքնին: Անահիտ, Պալ-  
լաս, Աթենաս, Ախրողիտէ, Աստղիկ — ինչ որ կ'ուզես, ով ամենա-  
գեղեցիկդ»: Լայն սանդուխին վրայ, պատին խուցը աղջնակի արուր-  
եայ, սիրուն արձանիկի մը եւ սանդուխին առաջին դարձուածին մի-  
ջեւ կեցաւ Արսինէ եւ, գլուխը քիչ մը ետեւ դարձնելով, նայեցաւ:  
Եւ Լիկինիանոսը տեսաւ արտասուլթոր աչքերով կեցած: Արսինէին  
սէրն ալ մատնուած էր: Իր կարմրած երեսը քիչ մը աւելի ետեւ  
դարձուց անոր կողմը, եւ ահա ամբողջ դէմքը: Անոր սեւ մազերուն  
վրայ կը շողշողար ապարօջը: Ճիշդ վերօք կը կանգնէր աղջնակին  
ձեռքը, որ թեւատարած մարմարի դեղնութեամբ վարդի ճիւղ մը  
բռնած էր Արսինէի վերեւ: Կրակ մը կը կայծկլտար իր աչքերէն դէ-  
պի Լիկինիանոս, վերէն վար: Յետոյ օրհնելու ձեռով աջ թեւը իջե-  
ցուց վար եւ ձայնեց դաշն. «Ողջոյն, Կեսար, Ինքնակալ Լիկինիա-  
նոս»: Երանաւէտ անակնկալին այդ վայրկեանին՝ միտքը չինկաւ թէ  
ինչ ըսէր անոր: Բայց հաղիւ թէ Արսինէին լողիկին քղանցքը անհետ  
կ'ըլլար սանդուխին դարձուածին մէջ, լսեց որ Լիկինիանոս բար-  
ձրաձայն կը զոչէր ետեւէն. «Ահուրան օրհնէ քեզ: Երկինքը օրհնէ  
քեզ»:

Երբ շուրջը կը դառնար, վերակացուն արդէն երեսը ծածկած  
էր անդաստակին երկու սիւներուն միջեւ: Լիկինիանոս կը կանչէր  
անոր, որ անոյ մը խնդալով, քիչ մըն ալ շուարած, սովորականէն  
աւելի խորունկ խոնարհեցաւ իր տիրոջ առջեւ: «Ո՞ւր էիր: Ի՞նչ ը-  
րիր հոս»: — «Տէր իմ, հաւատարմութեամբ գիշերային հսկողու-  
թիւնս կ'ընեմ, ինչպէս միշտ այս ժամուս, թէ արդեօք ամէն ինչ  
կարգի՞ն է»: — Լիկինիանոս վերակացուն չափեց ոտքէն գլուխը:  
Վերակացուն հանդարտ նայուածքով հանդուրժեց այդ քննութեան:  
«Գնա», հրամայեց Լիկինիանոս, «ամէն ինչ կարգին է»:

Լիկինիանոս ուրիշ մարդ եղած էր: Նայուածքը աշխոյժ, կեն-  
սալից, յուսալից: Խօսքին ու վարմունքին մէջ պատրաստակամ, յո-

ժարամիտ: Չայնով, շեշտով մտերմիկ, ծնողքին հանդէպ պատկա-  
ռոտ: Կանուխ ելլող: Ճիշդ ժամանակին տունը: Ու հին բարի բարե-  
կամները նորէն իրեն դարձան: Իր կատակներէն եւ սրամտութիւննե-  
րէն ոչինչ կը պակասէր, բայց այս ամէն բաներուն մէջ ամէնէն երջա-  
նիկը ինքն էր: Իշխանը Լիկինիոս — կը ճառագայթէր, եւ իրիկուն  
մը, մտերմական հաւաքոյթի մը մէջ, շնորհաւորեց Արսինէն, թէ իր  
զաւակը հիմա գտած է իր Արիադնէն, կեանքին մէջ քալելու համար  
յարմար թելը իրեն տուող առաջնորդուհին, Լարիւրինթոսէն դուրս  
զալու համար: Չաւակին փոփոխութիւնը այն պատճառով աւելի  
խոստմնալից էր, որովհետեւ Արսինէ ոչ մէկ կերպով անոր հանդէպ  
առաջուրնէ աւելի մօտիկութիւն ցոյց տուած չէր: Ճիշդ է որ Լիկի-  
նիանոս կը զգար, թէ Արսինէ հսկողութեան տակ առած էր իր բո-  
վանդակը բրածը թողածը, Թէեւ դուրսէն բնաւ յայտնի չէր ընէր:

Հայ արքայազունը տուժեց այս նոր փոփոխութենէն: Մինչ  
Խորովիդուխտ, հետզհետէ աւելի լուսէր դարձած, Լիկինիայի եւ  
Պաւղայի համակրող կ'ըլլար եւ անոնց կը կապուէր ի մեծ ցաւ Արսի-  
նէի, Տրդատ ալ աւելի անուպայ եւ անտաշ եղաւ: Իր ոյժը, տարիքին  
բաղդատմամբ, անհաւատալի կերպով կ'աճէր: Արդէն քանիցս Ապե-  
ղէս աղաշած էր քարի մէջ ներկայացնել այս տղուն մարմինին շը-  
քեղութիւնը: Արսինէ չէր յօժարեր: Մարդկօրէն ըմբռնելի էր որ  
այս մարմինը ժամերով դասարանին մէջ աթոռի չէր կրնար կապ-  
ուել, կարելի չէր շղթայել այս կորովը, գսպել այս արիւնը, իր շըր-  
ջաբերութեան մէջ կարելի չէր ամփոփել այս միտքը, ոչ ալ բերանը  
լռեցնել: — «Անուազն քանի մը վայրկեան միայն, արքայազուն»: —  
Երկրորդ մանկավարժն ալ դասի սկսած էր, բայց կարելի եղածին  
չափ վերապահումներ կ'ընէր Տրդատին աչքի զարնող յարափոփոխ,  
թէեւ սիրուն ու սրամիտ պէտքերուն համար: Վարժապետը տասը  
տասնըհինգ վայրկեան կը սպասէր դիրքը ձեռքը, գլուխը վեր վար  
երեքցնելով, շրջադայելով, խեղճ մարդը, կօշիկներուն երբեմն ձախ  
երբեմն աջ առաջամասերովը գետինը ձեծելով համբերատար ան-  
համբերութեամբ, մինչեւ որ մեր արքայազունը վերջապէս որեւէ  
տեղէ մը դառնայ Պիւթապորասի դասանիւթին: Կը սպասէր համբե-  
րութեամբ մինչեւ որ ան նորէն խածնէ սա կամ նա պտուղը, կամ շա-  
քարեղէնէն կտոր մըն ալ փրցնէ, ծամէ կլլէ, վարժապետին թերեւս  
քսան անգամ բրած յայտարարութեան դէմ սա հարցումը ընելու հա-  
մար. «Ես ի՞նչ գիտնամ, վարժապետ»:

Բայց ինչ ալ ըլլար, Տրդատ վարժապետին աչքին լոյսն էր:  
Խաղալով խնդալով նորէն բան կը սորվէր: Միայն թէ անոր կենսա-  
կան աճումը, աշխուժութիւնը կ'եռար կ'եփէր: Արքայազունը աչնա-

նային արեւուն շողէն բռնկած, կրցած էր համոզել վարժապետը դասը բացթեւայ տալու: Բայց վարժապետը փորձանքը դատած էր ասով: Արքայադուստրն էր դասին նպատակը եւ մեթոտը ուղղողը, վարողը: Ուղածը, միտքէն անցածը, աչքովը տեսածը կը հարցնէր ու կը հարցնէր, բուն դասին նայողը ով էր: Վարժապետը ամենապէտ Ձեւս մը եւ թեւաւոր Հերմէս մը պէտք էր ըլլար, հայ իշխանին ծանօթութիւններ տալու համար ամէն բանի մասին, սա քարին, սա ծառին ու ժայռին վրայ, երբեմն ալ Տրդատ լաթերը հանելով յանկարծ կեփիսոս գետը կը նետուէր լողալու, եւ խեղճ մանկավարժը անոր ետեւէն: Ապշահար վարժապետը երբեմն ալ Տրդատ կը փնտռէր, որովհետեւ յանկարծ անյայտացած էր, մէկ վայրկեան առաջ քովն էր, ի՞նչ եղաւ սա չարածճին, եւ ահա կ'իմանար որ բարակ-երկայն եղեւիներ մը գազաթը ելեր է, կ'օրօրուի, մինչեւ որ իր ոտքերուն տակ ճիւղը ճարճատէր, վարժապետը ահուզողի կը մատնուէր, բայց Տրդատ, ճիւղն կապիկի մը նման, ազատ օդին մէջ խայտալով կը ճօճէր, ոստին վրայ կ'ելլէր, անոր փաթթուելով եւ թեւերովը կը բռնէր ամէնէն ծայրը, կը կոտրէր ան մարմինին ետեւ առաջ ուժով մը նետուելովը, եւ անանկ մը կ'ընէր որ կարենար քովի եղեւիներն դազաթը կպչիլ մաղցելով, ծառին մէկ կատարէն միւս ծառին կատարը, եւ մազերուն դանդուրը հովին տուած, փարփառ երեսով, կարմիր բաճկոնակը կոճկած, զորը կանանչ ծառէն դուրս օդին մէջ կը վերելակէր եւ հոս ու հոն, զլուխը միշտ բարձր, կ'օրօրուէր կ'երգէր, կը խայտար, կը քրքար: Մինչեւ որ յոյնէր արքայորդին: Իր սեփական երիվարը, առասպելական ցլալուխ մը, ինչ լաւ կ'ըլլար հիմա որ հոս ըլլար, ոսկեղեղին ձիթենիներու անտառին մէջէն, սրբսրփացող աշնանային չոր ու ցամաք սաղաւարթներուն վրայէն, կամ կակուղ սահուն եղէգնուտին վրայէն վայցնելով երթալու համար: Բայց ի՞նչ օդուտ: Յլալուխը այս վայրկեանին իր դեղին ճերմակ առջեւի ոտքերովը կը դոփէ ասպաստանին գետինը, իր փառաւոր բաշտ ազիով ճանճերը կը վանէ, կը հողմավարէ, կղկաթ կաթոյին իր մատաղատի տիրոջ համար, որ դայ վերջապէս, ու դարձեալ իր արքեւի ճակատը սեղմէ իր ճակատին վրայ, եւ հծծէ մտերմիկ ու ջերմազին. «Յլալուխ»: Բայց ցլալուխը հոս չէ: Անոր ալ ուսուցիչը արքայորդին է, սա ալ բարձր ահիպարանոց երիվարի մը պէս, զլուխ մը ունի որուն վեհ, հարթ ճակատը, խոշոր սեւ աչքերը — պարտաւորիչ կերպով նժոյգ մը կը յիշեցնեն: Յանկարծ կը յառաջանայ: Գլուխը վար բռնած խոհուն: Խորհիլ, զորձեւ — մէկ են: Ուսուցիչը իր ետեւը կը լսէ խուլ դրդին մը, դոյթ մը, ճիւղին վրայ կը զգայ օդի բուռն ճնշում մը, եւ ահա վարժապետը կը տապալի, ամբողջ երկայնքովը, գետինը, ճակատն ու քիթը կ'արիւնին,

չողը կը կարմրի տառապող արդարին արիւնով: Բայց չափը անցուց: Անսանձ զայրոյթ մը կը տիրէ վարժապետին: Տրդատ կրնար անոր սպասել: Յլալուխին նիւսին վրայ ան ստրված էր, սայթաքող ճիւղն վրայէն չիշխալու համար, անմիջապէս կոնակը դէպի ետեւ նետել եւ ոտքերը ամուր մը փակցնել կենդանիին մարմինին: Այս մեթոտը հիմակ ալ գետին տապալուց խեղճ վարժապետին կոնակին վրայ գործադրուեցաւ: Տրդատ վրան կը մնար: Վարժապետին կատաղութենէն եւ սրտիմէն վախնալով իր ուղածէն աւելի տառջ զընաց: Սարսափելի ուժով սեղմեց խեղճին ծունկերը երկու կողմերէն, աշխպէս որ տակինը շունչ չէր կրնար առնել: Ձեռքերովն ալ գետինին վրայ անոր երեսը կը սեղմէ: Անկարող կիսանուաղ վիճակի մէջ էր վարժապետը, մեծ գոտարութեամբ ոտքի ելաւ, եւ կոնակի արքայազունը այդ վիճակով կրեց տարաւ անտառին մէջ, վերաբերուին ծայրովը արիւնը գաղբեցնելով: Վարժապետին կոնակին վրայ վիճարանութիւն ծաղկեցաւ, բայց վերջապէս Տրդատ զղջում յայտնեց, հաշտութիւն կնքուեցաւ, եւ զղեակին առջեւ աւազանի մէջ քղանցքը լուացուեցաւ: Վարժապետին պատուարքը լուծութիւնը այս բոլոր եղածին վրայ երկարաձգեց ստեն մըն ալ իր պաշտօնավարութիւնը, եւ ապահովուց հայ իշխանին երախտապարտ բարեկամութիւնը իրեն հանդէպ: Բարեբախտարար սա ալ Արսինէն գաղտնի մնաց, թէ եւ նոյն իրիկունը երբ Տրդատ բացակայ էր իրիկուան ճաշին, Լիկինիս քաղաքին մէջ գտաւ զայն, որ վրան զլուխը պատուտած, արիւնաթաթախ եղած ճանկրուտներէ, կատաղութեամբ ու շնչասպառ կը հեւար, Աթենացի լաճերու ստորին ջուրի մը մէջ եւ բռունցքով ու ոտքերով կարծես ինքիւրեն հետ կը կոտուէր:

Արսինէ, Տրդատ եւ Խոսրովիզուխտ իրիկուն մը աշնանային վերջին օրերուն շրջապայտութենէ մը տուն կը դառնային: Դաշտեր եւ ձիթենիի անտառներ աչք առնելու չափ հեռուն եւ դեռ անկից անդին կը տարածուէին Պիրէոնի դիմաց վարօք: Մեծ մասամբ իշխանին ստացուածքները: Ամէն կողմ պտուղներով ծանրաբեռնուած ծառերու վրայ կը տեսնուէին իշխանին ստրուկները, խեղճ յոյն դիւղացիներ, որոնք պտուղ կը քաղէին: Հոս ու հոն խեղճ ու կրակ տաղաւարներ, ցիրուցան, առանց պատուհանի քարէ կամ փայտէ հիւղակներ: Շատերէն դուրս կը խալուպէր ծուխը վերը կապոյտ օդին մէջ: Ամենուրեք կը փտար աշխատանք: Խոշոր հաւերու ընտանի կրկջանքը: Երամակի զանդակիներուն փանդիւնը: Այլերքին մէջ կը խայտան արտոյտներ: Բոլոր բովանդակ բնութեան վրայ իրիկնամուտի ոսկին, տաղաւարներուն քարէ կամ կաւէ յատակին վրայ, անզարդ սեղաններուն, նստարաններուն, երկաթէ եւ զինկէ կաթսաներու վը-

րայ, որոնք ակուսթիկ վերեւ կը կախուին շղթաներով, մարդոց եւ կենդանիներու անկողին ծառայող յարգէ՝ դէզերուն վրայ: Տաղաւարներէն մէկուն առջեւ կեցած էին երեք շրջադայողներ եւ կը յուսային թէ պիտի կրնան կաթ ստանալ իրենց ծարաւին համար եւ քիչ մըն ալ հաց: Այս վայրին ներսը տիրող մարբութեան, կարգ կանոնին եւ ցոյց տրուած քաղաքավար ընտանութեան վրայ կը դարձանային: Մայրը, նիհար կին մը լաւագոյն տարիքին մէջ, աշխատանքի եւ ճիգի դրոշմը կրող երեսով, որմէ կը բխէին նաեւ բարեգործութիւն, խաղաղութիւն եւ անզորութիւն: Իր դուստրը, գրեթէ քսան տարեկան աղջիկ մը, թրելով կը դբաղէր, երկուքն ալ գեղջկական մութ գոյն հաղուստով, մէջքերնին դօտի, թեւերնին բաց ուսերէն վար, բոկ մաքուր ոտքերնին փայտեայ կօշիկներով պաշտպանուած: Մայր ու աղջիկ, նախ եւ առաջ, հակառակ մտերմիկ բարեւին, շատ վերապահ գտնուեցան երեք այցելողներու հանդէպ: Բայց սիրով ուզեցին կազդուրիչ մը հրամցնել: Նստան տունին առջեւ նըստարանի մը վրայ: Սեղան մը բերուեցաւ, մաքուր կերպով ծածկուած: Կաթ, պանիր, մեղր, կարագ հրամցուեցան: Արսինէի աչքին զարկաւ որ կինը հակառակ ծառայելու իր պատրաստակամութեան ազատ գրեթէ ազնուականի յատուկ վիճակ մը ցոյց կուտար իրենց հանդէպ, նոյնիսկ այն ատենը երբ դիտցաւ թէ որոնք էին իր այցելուները: Տունէն ոչ շատ հեռի սանդուխի մը վրայ ելած էր իր մէկ հատիկ մանչ զաւակը վերջին խնձորները կը քաղէր: Խոշոր, բարակ ու երկար տղայ մը, պարկը դիտարուն շուրջ: Հայոց արքայորդին արտասուակին աչքերով նոր կտոր մը հացի աչք տնկած, խածածին կէսը կուլ կուտար: Գեղջկուհին ներս մտաւ նորէն կաթ առնելու եւ ահա լսուեցաւ կտորած ճիւղի մը ճարձատիւնը, առնական սարսափելի աղաղակ մը, ծանր մարմինի մը գետին իյնալուն խուլ թնդիւնը, քանի մը խորունկ հառաչանքներ, շունչ առնելու ճիգերով: Մինչեւ որ Արսինէ եւ տղաքը շարժեցան, ցատկեցին, տունին մէջ պոռացին, եւ բոլոր գտնուողները դողդոջուն ծունկերը, անխօս, գոյնեղներն նետած կեցած էին, պատանի մը դիակ եղած էր արդէն: Խորովիլուխտ լեղապատառ փախաւ ահաբեկ եղջերուի մը պէս, բարձրաձայն հայերէն ողբեր արձակելով օդին մէջ: Արսինէ փայտ կտորածի պէս կեցած էր: Անոր ճեփճեփմակ կտորած դէմքին վրայ կը դարէր սուրբ մոլեգնութիւն մը: Արքայորդին քովը, խոշոր, հիաղարհուր, աչքերով կը նայէր մեռուալին վրայ, որ ամբողջ երկայնքով փռուած էր ծառին տակ: Զոյապինդ թեւերը մարմինէն հեռու, երկարած էին խոտին մէջ: Մէկ ձեռքը դեռ պինդ կը բռնէր կտորած ճիւղին մէկ մասը, միւս ձեռքը խոտի խուրձի մը մէջ կարկամած էր զգայազրկումի բուսէին: Դիմազները անաղարտ մնացած էին, խո-

շոր, կլոր, կարմիր խնձորներ փռուած էին իր բոլորտիքը: Պարկը կը հանդէսէր մարմինին քովիկը, դեռինը: Մայրը անոր պուլիին քով ինկած վշտարեկ, անթարթ կը նայէր թէ տակաւին շունչ կ'առնէ՞ր արդեօք, անձայն կը դնէր տականջը կուրծքին վրայ, քանի մը վայրկեան այդպէս: Մօտէն, հեռուէն, արտերէն ու հիւղերէն մարդիկ թափեցան: Սկսան խլացուցիչ հարցումներ, պատասխաններ, ողբեր, արցունքներ: Կը շփէին, կը թօթուէին մեռելը, անոր անունը կը կանչէին: Կինը իրենց կուրծքը կը բանային եւ կը ծեծէին, կ'երզէին, կուլային իրար անցած: Սրինդներ տիրացին եղանակներ կ'ածէին: Ծնողքը, հարսը եւ քոյրերը կը չորցնէին իրենց թափած արցունքները: Արսինէ յուզուած մտահոգութեամբ դարձաւ մօրը. «Կին դու, հոգ տար միեւնոյն ատեն որ մեռելը հողէն վեր առնուի: Հողը կը պղծուի անով: Ես դռնով ու աղօթքով պիտի վանեմ չար ոգիները, որպէսզի անոնք չյափշտակեն զաւակիդ հողին: Տեսէք, ահա արդէն կը մօտենան ճանճերը, անոնք Տրուդներն են, Ահրիմանի ուղիները»: Մայրը քրմուհիին արտասուակութեամբ դէմքին դարձաւ. երկար ատեն անոր նայեցաւ արտակարգօրէն եւ ի վերջոյ ըսաւ հանդարտօրէն. «Հանդիստ թող որ ան պառկի»:

Յանկարծ ամէն կողմ լուսութիւն: Մէկը տեսնուեցաւ: «Բժիշկը», ձայնեցին շատերը անյոյս շեշտով: Եւ յետոյ, ահա կարծես կառապանին ետեւէն բարձր դէմք մըն ալ տեսնուեցաւ: «Եպիսկոպոսը: Եպիսկոպոսը»: Ոմանք մէկ կողմ քաշուեցան, ուրիշներ բոլորովին դուրս ելան: Կրկին քանի մը հողիներ եկան խիտ խուճ մը կալմած, մէջտեղը դիակը, անոր շուրջն ալ իրենները: Արսինէ տեսած էր, թէ ինչպէս մօրը մեռելատիպ դէմքին վրայ ուրախութեան ճառագայթ մը կայծկլտաց, թէ ինչպէս ելաւ կեցաւ լսելով: «Եպիսկոպոսը» ձայնը: Մարդը կեցաւ: Որքան աղչեցան Արսինէ եւ տղաքը, երբ Վալերիոս կառքէն ցատկեց: Մեծարանքի անխուսափելի դրացում մը պարտաւորեց Արսինէն մնալ նոյն տեղը, նոյնիսկ անսուրբ ըլլալու վտանգը աչք առնելով: Ան կարծած էր թէ եկողը յոյն կամ հրեայ քահանան է, եւ կը սպասէր հանդիսաւոր արարողութիւններու մեռելական ոգիները մաքրելու եւ վանելու համար: Բժիշկը Հայերը ողջունեց անակնկալի եկած լուրջ նայուածքով մը, քանի մը բառ խօսեցաւ եպիսկոպոսին, քննեց պատանին եւ ըսաւ տխրագին. «Ձեր զաւակը մեռած է»: Ընդհանուր լաց ու կոծ: Եւ ահա տեսնուեցաւ բարձր, վայելուչ կերպարանքը եպիսկոպոսին որ վերարկուի մը մէջ ամփոփուած քայլ առաւ դէպի մեռելին տէրերը: Մայրամուտ արեւը մեղմ կարմիրով մը կ'երանայէր անոր արծաթի պէս ճեմմակ դրուին ու մօրուքը: Երկու թեւեր տարածուեցան մօրը պռջեւ, երկու խո-

կապոյտ, սիրալառ աչքեր կը ձայնէին. «Եկուր»։ Մայրը յանկարծ գոչեց այնքան բուռն որ շուրջը զանուոյնները զողահար եղան, ա- կամայ միակ ճիչ մը ամէն կողմ, յետոյ մայրը մնաց լուռ իր հովի- ւին թեւերուն մէջ։ Ան քանիցս շոյեց մեղմով մօրը գլուխը, եւ մին- չեւ հեռուն թնդացնող բոլոր ողբերը կակղացնող ձայնով գոչեց. «Մայր, կ'ապրի քու զաւակը»։ Եւ քանի մը վայրկեան մեռելական լուռութենէ վերջ. «Եթէ կ'ապրինք Տիրոջը կ'ապրինք։ Եթէ կը մեռ- նինք Տիրոջը կը մեռնինք։ Այս պատճառաւ ապրինք թէ մեռնինք. Տիրոջն ենք»։ Եւ քանի մը վայրկեան վերջ երկրորդ անգամ աւելի խոր, ափոփիչ լուռութիւն մը, բարձրագոյն ձայնով եւ հոգիի յաղթա- հարող ուժգնութեամբ եպիսկոպոսին պատկառելի դէմքը արեւա- փայլ. «Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ «Ես եմ յարութիւն եւ կեանք։ Ով որ ինձի կը հաւատայ, պիտի ապրի, եթէ մեռնի ալ։ Եւ ով որ կ'ապրի ու կը հաւատայ ինձի, այլեւս բնաւ պիտի չմեռնի»։ Կը հաւատա՞ս դուն»։ Մայրը յուշիկ դուրս հանեց գլուխը եպիսկո- պոսին կուրծքէն, լուսաշող աչքերով արտասուակեցող երեսը անոր դարձուց։ Յոյսը յայտնապէս կը բարձրանար անոր նայուածքին եւ երեսին վրայ, եւ որոշակի ամէն կողմէ լուսեցաւ ամուր հաւատքի ուրախալից «Այո» մը։

Խոսքով իր յարուածքը շարունակ եպիսկոպոսին վրայ էր։ Արսինէ կարծես կեցած տեղը ձուլուած էր, եւ չէր շարժեր։ Ար- քայորդին նորէն երկար ատեն նստաւ հինաւուրց նստարանին վրայ տաղաւարին առջեւ, եւ կուլ կուտար վերջին մասը այնքան յանկար- ծակի ընդհատուած ճաշին։ Բայց երբ տեսաւ որ մեռելը կը բերէին, պարտաւորուեցաւ փախչիլ։ Բերանը լեցուն մէկ կողմ գնաց։ Մեռե- լակիրներուն ետեւէն կ'երթար մայրը, եպիսկոպոսին թեւը մտած, յետոյ քոյրը, հարսը, ասոնց ետեւէն ալ որպէս թէ իրենց ազգականը ըլլար, Արսինէ, եւ հետաքրքրութենէն ու սարսափէն խորազգած Խոսքով իր յարուածքը։ Ծատ մարդիկ իրարու ետեւէն։ Տաղաւարին չորս կողմը կարգով կեցան։ Մեռելը դրուեցաւ պատին մօտ յարդէ խը- տեակի մը վրայ։ Մայրը նստաւ փոքր փայտէ աթոռի մը վրայ։ Ամէն ոք ոտքի վրայ էր, եպիսկոպոսը սենեակին մէջտեղը. Արսինէ եւ Խո- սքով իր յարուածքէն մէջ խրած դրան տակ սենեակին եւ խոհա- նոցին միջեւ, բոց աչքերով, ամէն կողմէ պաննը կը դիտէին։ Բայց իրենք չէին հասկցած։ Աչքերնին չէին հեռացներ երկուքն ալ եպիս- կոպոսին բարձր ու լայն կերպարանքէն, որ զանկովի ձեղունը կը քե- րէր եւ, երբ խօսած ատենը աջ թեւը կ'երկնցնէր լայն մանիշակագոյն վերարկուին մէջէն, այն ձեւը կ'առնէր, որպէս թէ լացող կինը իր թեւին տակ կ'առնէր։ Միշտ սա բառերը կը յեղեղուէին. «Կեանք,

լոյս, յաւիտենական ուրախութիւն, յաւիտենական խաղաղութիւն»։ Արսինէի համար նոր էր խորհուրդ մը, որ կը միտնուէր խորը իր միտքին ու յիշողութեան։ «Մէրը ամէնէն մեծն է, որ յօժարակամ կուտայ սիրուած բանը։ Իրենը չի փնտներ։ Իր զաւակը անգամ կը զոհէ, չի պահեր, եթէ վիճակը սիրածին ինկած է, դեղեցիկ ժառան- ցութիւնը անոր կ'ըլլայ»։

Բայց հիմա ի՞նչ կ'ընեն։ Եպիսկոպոսը կը ծնրապէս։ Մայրը — բոլորն ալ չորս կողմէ կը ծնրապէս։ Ի՞նչ քան քրմուհին կը հար- կադրէ որ մնայ, նաեւ Խոսքով իր լուսար։ Չեն գիտեր։ Քրմուհին գլուխը կուրծքին վրայ խորը ինկած է։ Վերջապէս զիմացինը քա- հանայ — քուրմ — է։ Քահանայ մը լոյսի։ Արսինէ կը զգայ ասիկա։ Իր զղացածը լոյս է, ճշմարտութիւն է։ Տես ինչպէս կ'աղօթէ եպիսկո- պոսը։ Տես, ինչպէս մեղմիկ ու անտեսանելի ալիքներ հեղեղի պէս կը հոսեցնեն մխիթարութիւն, խաղաղութիւն, անդորրութիւն։ Ով սուրբ հայր Մովսէս։ Ճիշտ քեցի պէս։ «Ամէն, ամէն», կ'ըսէր եպիս- կոպոսը։ Աս ինչ կը նշանակէ։ «Ամէն, ամէն», ամէնը կը ձայնեն բարձրագոյն։ Արսինէ եւ Խոսքով իր լուսար ալ կը ձայնակցին, եւ վեր ելած ատեն Խոսքով իր լուսարի աչքին կը զարնէ պարզուկ, անարուեստ դաճէ դէմք մը, վերը ձախ անկիւնը։ Խոսքով իր լուսար կը սարսուռայ, Արսինէ ալ կը նայի, եւ միամտօրէն խուզարկու աչքերով ձեռքով ձեռն կ'ակնարկէ. «Մահամերձ Քրիստոսը», կը հծծէ յուղեալ աղջիկը։ Եպիսկոպոսը ճամբայ բացող բաղնիքէն մէջէն դուրս ելած ատեն աջ ձեռքը վեր առնելով կ'օրհնէ աջ ու ձախ։ Ամէնքը խոնարհութիւն կ'ընեն պատկառալից։ Եպիսկոպոսին թափանցիկ նայուածքը յանա- կընկալս կ'իյնայ Արսինէին եւ Խոսքով իր լուսարին վրայ։ Աղջիկը կը դողար, զոպցես սուրբ սարսուռով։ Եւ ահա Քրիստոսն էր հովիւր խո- շոր ձեռքը Խոսքով իր լուսարին գլուխին վրայ դնելով ըսաւ հայրաբար, «Տէրը օրհնէ քեզ զաւակս»։ Իսկ Արսինէին հանդէպ ինք խոնարհու- թիւն ըրաւ։ Դուրսը, տաղաւարէն ոչ հեռու, կեցած էր կառքը։ Ե- րիտասարդ բժիշկը եպիսկոպոսին կը սպասէր։ Հեռացան լուռութեամբ։ Սգաւորներէն փափկութեամբ հրաժեշտ առնելէ վերջ Արսինէ հար- ցուց մօրը. «Բժիշկն ալ քրիստոնեա՞յ է»։ Մայրը պատասխանեց շնորհակալութեամբ եւ սիրալից արտայայտութեամբ մը, «Դաւա- նութեամբ դեռ ոչ։ Բայց գործով»։

Բայց ո՞ր էր Հայոց արքայորդին։ «Տրդատ, Տրդատիկ», ձայնեցին Արսինէ եւ Խոսքով իր լուսար։ Իրենց մօտէն արձակուած բարձրագոյն քրիշններ զիրենք տարին Տրդատի հետքին վրայ։ Տըր- դատ տաղաւարին ետեւը այժմերուն ախոռին մէջ կուրի բռնուած էր ամէնէն ուժով տարիքոտ նոխազին հետ, որ կապուած ըլլալով հան-

դերձ, դարձեալ դժուարութիւն կը պատճառէր իր արքայազուն աստիճանին, եւ մինչեւ իսկ անդամ մը դայն տապալած էր յորդառատ քակորին մէջ:

Յնծային աղաղակներ կ'արձագանգէին ձիթենիի պուրակներէն եւ այլիներէն: Խոշոր, կապոյտ եւ կանաչ ողկոյզներով լեցուն անաղին կողովներ կառքով կը բերուէին: Կողովներուն եւ տաշտերուն մէջտեղ կեցած էին կթողները, իսկ այգորդուհիները կառքէն վար կախած էին իրենց մերկ ոտքերը: Կ'երդէին, կը խնդային, կ'ուրախանային: Տրդատ կը ցնծար անոնց հետ, բարեւ կուտար, կը պտուր, կը ծիծաղէր ամէն կողմ, եւ չէր հասներ բռնել այլեւս ամէն կողմէ իրեն տրուած ողկոյզները, զոր խնձորի պէս բերանովը կ'ուտէր եւ կուտերը դուրս կը թքնէր, կը զարմանար որ ինչու համար արգեօք Արսինէ եւ Խոսրովիդուխտ հակառակ իր ամէն կանչելուն եւ իրենց պտուղ առաջարկելուն թեւ թեւի տուած կ'երթային, իրեն հանդէպ անտարբեր: Ճաշի ատեն եւ նաեւ ամբողջ իրիկունը խօսակցութեան նիւթը եղած էր տխուր դէպքը: Իշխան Լիկինիոս հանդարտօրէն կարծիք կը յայտնէր, թէ այսպիսի դէպքեր կը պատահին կեանքին մէջ: Իր բազմաթիւ ստրուկներէն որո՞ւն դժբախտութիւն մը պիտի պատահի, ո՞վ կրնայ դիտնալ առաջուրնէ, կեանքը այսպէս է: Արսինէ եւ Խոսրովիդուխտ եւս մանրամասնաբար նկարագրեցին իշխանին տաղաւարներուն, հոն դտնուողներուն եւ ընտանիքներուն կացութիւնը: Լիկինիանոսի կարծիքով ասիկա լոկ պատեհութիւն մըն է, ապացուցանելու համար հողիին անդրդուելի անգորրութիւնը: Ստոյիկեան իմաստասէրներուն վարդապետութեան համաձայն: Լիկինիա շատ զգացուեցաւ եւ, կողմնակի ակնարկ մը նետելով Արսինէին վըրայ, ըսաւ «Լիկինիոս, կը տեսնե՞ս, եպիսկոպոսը հմայեր է Արսինէն: Արդէն քեզի խորհուրդ տուած եմ Պաղայի սիրոյն համար, եպիսկոպոսն ալ հրաւիրել մեր ընտանեկան խնջոյքներուն: Չէ՞ որ արդէն կը փափաքինք քաղաքին իրօք նշանաւոր, զարգացած, աղքեցիկ մարդիկը մեր մէջ տեսնել: Առաջին առիթով պէտք է ան երեւնայ»: «Ան պիտի չզայ, աչքիս լոյս Լիկինիա: Մենք հեթանոս ենք, մի մոռնար ասիկա», պատասխանեց իշխանը:

## ԳԼՈՒԽ Զ.

Զմեռը եկաւ: Երկայն իրիկուններուն իշխանը կը բանախօսէր: Այս մասին կը խօսուէր: Այս մարդոց սիրտերը աւելի հաստատուն կը կասուէին իրարու հետ: Որչափ ալ Արսինէ կ'աշխատէր Լիկինիանոսի հանդէպ իր յարաճուն համակրանքը ծածկել — անոր ներկայութեան շիկնիլ, կողմնակի զողունի ակնարկ արձակել անոր վրայ, իրբեւ թէ անտարբեր ըլլալու ձեւով հարցնել անոր պատահական բացակայութեան պատճառը, անոյշ կատակներ ընել, երբ հաւաքոյթի միջոցին անոր քունը գար, սիրազրկիւ ծաղրանք մը փախցնել երբ ան տունը մնար եւ չ'ուղէր մասնակցիլ պտոյտներուն, սանկ խայթող մանրավէպ մը կամ փոքրիկ երգ մը տաւիղին վրայ — ասիկա կը բաւէր զօրացնելու համար հետոհետէ այն երջանկաբեր յոյսին մէջ, թէ Արսինէ իրենց զաւակին կիներ պիտի ըլլայ: Բայց անձկագին կը զգուշանային նոյնիսկ հեռուէ հեռու շօշափել սուրբ կամ մաքուր սիրոյ զոյութիւնն ու աճումը, ինչ որ էսպէս ալ աւելի սուրբ ու մաքուր պիտի ըլլար ծնողքին համար, քանի որ անոնք կը հաւատային թէ այդ սէրը Լիկինիանոսի պիտի ծառայէր նոր երջանիկ մարդ մը ըլլալու:

Արսինէ եւս որքան աւելի մարդամօտ, որքան աւելի փափկանկատ, եւ փտտահելի եղած էր: Որքան ալ յաճախ մելամաղձոտ եւ մտահոգ երեւնար իր նայուածքը, ձմեռնային երկկոյթներուն միջոցին կը մասնակցէր տունին շատ մը հաւաքոյթներուն, խաղ կը խաղար, կը խայթէր, կատակներ կ'ընէր, մանաւանդ «Ջուր խաղ» ըսուածը իշխանին մատենադարանի սենեակին մէջ: Մէջտեղը Տրիտոնին ձուածեւ աւաղանին մէջ կշիռք մը զետեղուած էր: Արուրէ ոտքը կը հանգչէր աւաղանին յատակը եւ ներսէն դուրս կը ցցուէր ջուրէն վեր: Խարխախէն շեղակի, շարժական հաստատուած կեղրոնին վրայ, սիրուն, արծաթեայ մարդակիկ մը դրուած էր, երկու կողմն ալ այդ մարդակիկին երկու փոքրիկ արծաթէ նժարներ թեթեւ շղթայէ մը կախուած: Նժարները կ'օրօրուէին ջուրին վերեւ: Ասոր նպատակն էր կարելի եղածին չափ հեռուէն ջուրով լեցնել զանոնք եւ մխրճել, մինչեւ որ պաւզանին ջուրին մէջ անյայտ ըլլային:

Այսպիսի խաղերու ատեն, կատակը սովորաբար ա՛լ աւելի դո-  
րաւոր կ'ըլլար, երբ շափահասներն ալ, պատանիներէն մզուած, ընդ-  
հանուր դուարթ տրամադրութիւններէն քաջալերուած, կը մասնակ-  
ցէին, մինչև իսկ պատկառապու Պաւղան եւ Լիկինիան: Կէսօրէ մը  
վերջ իրացնէ տեղի ունեցաւ տարիքոտներուն եւ երիտասարդներուն  
անդադրում ծիծաղաշարժ մէկ տեսարանը, այն աստիճան որ վարր  
գերիններուն սրահն ալ տղւորութեան մէջ էր եւ վարէն վեր պալով  
հաւաքուած կեցած կը դիտէին սպառնար գէմքերով, եւ ամբողջ գե-  
րեխումբը այսպէս, վերակացուին զլիաւորութեամբ քրքիջ կը բարձ-  
րացնէր առանց դիտնալու թէ ինչու:

Երկրորդ վարժապետը, «ձին», ինչպէս սովոր էր Տրդատ ան-  
ուանել զայն, Արքայազունը սկսած էր սեռական զարդոնիքը շօշափող  
զրզոխ հարցումներ ուղղել «ձի»ուն, քոյրը ամօթէն կաս կարմիր  
կ'ըլլար, մինչև իսկ դժադրելով ցոյց կուտար, թէ նկարիչներն ու  
արձանագործները ինչպէս ընտանիքն եւ իրականին համեմատ պար-  
տաւոր են նշանակել, «ձի»ն ժամանակը եկած սեպեց հրաժարական  
տալու, առանց սակայն պատճառ ցոյց տալու, այսինքն առանց  
մատնելու իր արքայազուն անմոռանալի աշակերտը: Արքայազունն  
ալ այս պատճառաւ խոստացաւ, հրաժեշտի միջոցին, զինքը բնաւ  
չմոռնալ, յաճախ այցելել իրեն եւ ժամանակին թաղաւոր ըլլալով  
կանչել զինքը Վաղարշապատ իրրեւ դաստիարակ իր զաւակներուն:

Դժուար էր նոր դաստիարակ ձեռք բերել: Որովհետեւ արքա-  
յազունը պէտք էր դաստիարակ մը ունենար քան վարժապետ: Արդէն  
զանազան ընտրելիներու հետ տեսակցութեան միջոցին այս տարբե-  
րութիւնը ստեղծմով կը կեցնէր շատերը: Վերջապէս մէկը ձեռք  
բերուեցաւ, բայց ասոր ալ երեսն ու ձեռքերը այնքան մազոտ էին եւ  
այնքան տղեղ, որ Տրդատ արդէն նոր դասին առաջին քառորդ ժա-  
մուն կրցաւ մազադաթեայ ժապաւէնի մը վրայ մեղանով գրել եւ կա-  
մացուկ մը իր քրոջ հաղորդել նոր վարժապետին արժանի անուանա-  
կոչութիւնը. «Կապիկ»:

Բայց նոր վարժապետը տեսաւ, առանց բան մը ըսելու թերթը  
առաւ Տրդատին ձեռքէն, պատուեց, խոուացած, կարմրաշորթ յոն-  
քերուն տակէն այնքան խորունկ եւ հանդարտ, այնքան լուրջ եւ ու-  
շիմ նայեցաւ արքայազունին աչքերուն մէջ, եւ սկսաւ անոր հետ կա-  
պիկներու մասին այնքան դժուարին կենդանաբանական ունկնդրու-  
թիւն մը, որ Տրդատ ապուշ կտրած եւ ամօթահար իր տղիտութեան  
մասին, կը հիանար «կապիկ»ին յորդառատ դիտութեան եւ հետա-  
քրքրաշարժ մեկնութեան վրայ, եւ ժամ մը ամբողջ առանց ամենա-  
փոքր խանդարումի մտիկ ըրաւ: Բայց թէ ինչպէս, վարժապետը կա-

պիկներէն վերելակեց Սոկրատին, Տրդատին խելքը անոր չհասաւ:  
Բայց կեանքի յետագայ տարիներուն դեռ կը յիշէր որ ինքը եւ Խոս-  
րովիդուլտ այս երկրորդ դասէն վերջը մեծ հետաքրքրութեամբ եւ  
լուրթեամբ զլուխին զասասեղանին վրայ դրին եւ իրենց յուզումէն  
կը հեկեկային: Վարժապետը նկարագրած էր իրենց Սոկրատին տղե-  
ղութիւնը, անոր կեանքը Քսանդիպոսի հետ, անոր վարդապետու-  
թիւնն ու զործը եւ անոր մահը թունաւոր բաժակի ձեռքին, նկարա-  
գրած էր թէ ինչպէս լմաստունը կը խնդար իր հուսկ յետին րոպէին  
իր արտասուայեղձ բարեկամներուն միջեւ, զեղատոկոյ գէմքովը:  
Անկողին երթալէ առաջ, Տրդատ խորապէս յուզուած իր քրոջ հետ,  
ուղեցին այս նոր վարժապետը սիրել եւ կոչել զայն միմիայն «Սիլէն»:

Սիլէն իր ազդեցութիւնը պահեց արքայազունին վրայ, որ ան-  
թերի եւ ստանց ունէլ առարկութեան չափազանց մեծարանքով մտիկ  
կ'ընէր անոր: Սիլէն ընտանիքին բոլոր անդամներուն կողմէ կը նկատ-  
ուէր իրրեւ տիպար իմաստութեան, գիտութեան եւ ազդեցութեան:  
Իշխան Լիկինիոսի կենդանի բառարանն էր, ամբողջ տունին պատ-  
գամը, խորհրդականը: Եւ տղաքը չէին հանդէս, մինչև որ Սիլէն  
— կը թողուր որ միշտ այս անունով կոչեն զինքը — եկաւ բնակեցաւ  
ղղեակին երկու շքեղ սենեակներուն մէջ: Լիկինիոս յարգանքով ա-  
ռաջին սեղանին հրաւիրեց զայն ներկայութեամբ իր խանդավառուած  
աշակերտներուն: Հայաստանի ապագայ թագաւորը յաճախ կեանքին  
մէջ կը խոստովանէր, թէ ինք իր ամէնէն ճոխ փորձառութիւնը, հրմ-  
տութիւններուն մեծապայսն մասը, մտածելու մէջ յառաջացումը կը  
պարտէր իր «Սոկրատ»ին սեղանին վրայ խօսածներուն: Իր անսպառ  
մարդասիրութիւնը, սրտապին ողջոյններն ու ծիծաղները մինչև իսկ  
ամէնէն վատ գերիներուն հանդէպ զինքը ամէնուն սիրցուցին, մինչ  
իր խորունկ, խուզարկու նայուածքն ալ կ'արթնցնէր անոր հանդէպ  
պատկոտանք եւ հեղինական ու ճիշտ տեղին եղող սրամտութիւններն  
ալ տեսակ մը երկիրդ: Կարմիր ու հողաթափի նմանոյ կօշիկներով,  
զարիճենեկի գոյն երկայն պարեկօտով, գիսախուի շէկ մօրուքով եւ  
թխակարմիր գոուց մուկերով այս պարզուկ գիտնականին հակառակ  
սկսաւ վարուել գերիներուն պետը, վերակացու կոչուածը, իր մաս-  
մաբուր վրայ-դուխով, շտկուած մօրուքովը եւ հեռուէն իսկ բուրոյ  
մաղբովը, իր կատուանման նայուածքով ու զողունի գնացքովը, իր  
սոցոսկուն հետապնդումովը վարժապետին տիրապետող ազդեցու-  
թեան: Իր ծաղրական նայուածքները զայն կը հետապնդէին ամէն  
կողմ: Անոր խայթիչ, խաժան հարցումներուն չէր կրնար պատասխան  
գտնել վարժապետը, որ սովորաբար գերիի մը կը հարցնէր եւ պա-  
տասխանը կը ստանար: Վերակացուին հեղինակութիւնը կը նուազէր

երթալով եւ կ'անցնէր Սիլէնին, զոր գերինները քիչ ատենէն կը յարգէին իրրեւ հայր:

Սիլէն այսպիսի գերադանց կարողութեամբ կը վարուէր իր աշակերտին հետ, անլերատա՛հ: Հասկցած էր արթնցնել անոր մէջ պատիւի գլացումը, զլացնել թէ հմտութիւնն ու ծանօթութիւնները մարդոց վրայ գերադանց իշխանութիւն ունին, եւ երբ Սիլէն Արսի-մարդոց վրայ գերադանց իշխանութիւն հաւատքը փրկարար ուստինին նէր միջոցաւ իմացաւ իր թագաւորին հաւատքը փրկարար ուստինին համար, որ Հալարէնս կը կոչուի միհրական վարդապետութեան մէջ, զիստայս իր սանին արշայադուն Տրդատին վրայ պատուաստել հո-րապէս այդ հաւատքը որուն ինք մասնակից չէր, այնպէս որ վերջ է վերջոյ իր գոտտիարակութեան բոլոր նպատակը կարողացաւ այդ ա-նունին — Հալարէնս, ուստին, փրկութիւն, մաքրութիւն — մէջ ղնել: Հալարէնսն Հայոց Գահաժառանգին համար բոլոր արքայական առա-քինութիւններու բմբունումը, դադափարը դարձաւ, արքայադունին ապագայ վեհապետի իտէալը, կոչումը որուն անպայման հպատա-կեցաւ ան: Երբ Արսինէ դաստիարակին եւ ապագայ կեանքին պատճառաւ, Սիլէն կը մխիթարէր զայն իմաստութեամբ Սոկրատի, որուն աշա-կերտն ու սանը եղած է: «Ամէն առաքինութիւն ուսանելի է: Որով-հետեւ ամէն առաքինութիւն կը հանդէի բմբունողութեան, խելամը-տութեան վրայ: Նիւթ մը հասկնալու համար մարդկային բմբունո-ղութիւնը որքան յստակ ըլլայ ու պայծառ, կամքը այնքան հլու հա-կամէտ կ'ըլլայ գործարելու համար զայն: Ամէն ինչ կը յանգի ճանչնալու եւ դիտնալու: Արքայադունը արտասովոր յառաջդիմու-թիւններ կ'ընէ ճանչնալու եւ դիտնալու, ծանօթութիւններ եւ հըմ-տութիւն համբարելու: Գարնան պիտի դասաւանդեմ իրեն փիլիսո-փայութիւն եւ բարձրագոյն ուսողութիւն — մաթեմաթիք: Յորչափ իշխանագունը մնայ իմ ուղղութեանս տակ, Արսինէ, մի վախնար անոր սպտոյայի համար»: Հաւատաց Արսինէ եւ դարձեալ մխիթար-ուեցաւ: Հաւատաց Լիկինիոս իշխանը եւ զրուատեց զնահատեց Սոկ-րատր եւ Պրոտոնոս եւ Սենեկան: Յուզիթ առիթով մը յանձնարարեց հրէական Օրէնքին եւ Սողոմոնի Առակներուն ծանօթութիւնն ալ հաղորդել հայ իշխանին, ինչ որ Սիլէն ծիծաղող հանդարտութեամբ մը մերժեց սա փաստով, թէ հրէական գրութիւնները չեն պարունա-կեր բան մը որ գրուած չըլլայ իր աւանդած դասերուն մէջ: Բայց երբ պատահէր որ Յուզիթ, Լիկինիոսի տունը իր ոչ սակաւ այցելու-թիւններուն ընթացքին, կարենար տղոց հետ մինակ ըլլալ, կ'աշխա-տէր այս պատիկ, սիրուն շրէուհին ածուխի պէս սեւ գուռը գլու-խովր եւ սեւ փայլուն աչքերովը եւ աղուոր մանր դէմքովը, փոքր

ինչ աղեղնածեւ քթիկովը, տղոց պատմել կենդանի ձեւերով եւ եռան-դով իր ազգին նախահայրերուն եւ հերոսներուն եւ թագաւորներուն պատմութիւնը, նաեւ Մեսիային մասին որ դալուց է, այնքան որ տղոց կողմէ Սիլէնի դասին մէջ նոր պատմութիւններու կրկնուելովը, այս վերջինը իրաւունք տուաւ թէ հրէական գրուածքներու մէջ ալ բա-ներ կան որոնց կ'արժէ հմտանալ: Ձմեռ դիշեր մը իշխանին տաքուկ մատենադարանի սրահին մէջ հաւաքուած ընտիր խումբ մը ուշադիր մտիկ կ'ընէր խանդավառ շրէուհին, որ մէկ շունչով, ի պարծանս իր ամուսինին, պատմեց պայծառ իմացողութեամբ եւ կտրուկ համառո-տութեամբ Դաւիթի կեանքը: Այնուհետեւ Դաւիթ կը պատկանէր հայ իշխանին հերոսական դասակարգին, զոր յանչափս կը յարդէր, որոնց նկարագրի գիծերուն կը ձգտէր, եւ որոնց գործերուն կը հետեւէր այս ձմեռնական օրերու մերթ ձաշարահին, մերթ մատենադարանի սենեակին, մերթ անդաստակին մէջ երբ պատմութեան տեսարանը ծովի կամ լիճի կը կարօտէր, որպէսզի Տրդատ լաւ բացատրէր իր միտքը, Սիլէնի, Արսինէի, Սոսրովիդուխտի օգնութեամբ, այո, նոյնիսկ յաճախ մեծերուն վեհօգի զիջողութեամբ, իշխանին եւ իշ-խանուհին հետ, նոյնիսկ Պաւղայի եւ Յուզիթի հետ եւ, ի հար-կին, վերակացուին եւ ամբողջ գերեխումքի մը հետ: Դաստիարա-կութեան իր բնածին ձիւքովը Սիլէն ուշադրութեան առաւ, թէ ինչ-պէս հայ իշխանին նոր եռանդը ուսման եւ նկարագրի համար օգտա-կար կը հանդիսանար: Արդ, երկուքին համար եւ ամբողջ տունին հա-մար պատուական, անմոռանալի օրեր կուզային: Իշխանը գործի վրայ էր: Հիմա եկած էր անոր ժամանակը, յունահռոմէական պատ-մութեան, դրականութեան եւ գեղարուեստի գիտութեան իր փար-թամ պաշարը բերելու: Եւ այդ մասին կը հիանար Սիլէն: Եւ կը զար-մանար մանաւանդ թէ ինչ ահագին դիւրութեամբ իր սանը կ'իւրա-ցընէ հոմերական տաղերը, կը թափանցէր իր դիւցազներուն մտա-ծումներուն եւ տրամադրութիւններուն մէջ, եւ աչքի զարնող բնա-կանութեամբ եւ գործովով կրնար բացատրել: Սիլէն ոչ նուազ կը զարմանար սակայն, թէ արքայազունին իրեն համար անտեղի մէկ միտումը միշտ ճշտիւ կը քաշէր կր տանէր զայն այն դիւցազներուն եւ անոնց նկարագրին այն աստիճան արժանաւորապէս նմանող կը հանդիսացնէր զինքը: Այն է իւրացնել անոնց նկարագրին ոյժը, ա-հագին կարողութիւնը, անբռնարարելի ու անկաշկանդ կամքը եւ եռուզեռ խանդը գործնական կեանքին, եւ ասոնց շնորհիւ ազատ աս-պարէզ տալ իր ալ ներքին խուժումին դէպի արիական կամք մը, ա-ռանց տկարանալու որեւէ գիտութեանէ, որեւէ իմաստութեանէ, վե-րապահումէ, երկչոտութեանէ եւ ամօթէ, — մէկ խօսքով իւրացնել մաքուր, անաղարտ, փրփրերախ զգայուն կեանք մը: Եւ բարի ու



իմաստունն Սիլվն ճշտիւ անոր մէջ կ'ուզէր դնել ու տեսնել իր յաղթանակը իրրեւ արքայական դաստիարակ, այսինքն ի միտքաբուծիւն Արսինէի եւ ի պատիւ իրեն Տրդատի մէջ գործնականացնել զեղեցիկ ներդաշնակութիւն մը կեանքին եւ հմտութեան, կորովի ու բանակութեան միջեւ: Ասոր մէջ կը կայանար յաշտ իրեն հերոսի իտէալը: Յունական պատմութեան դէմքերը այս լոյսով կրնար ներկայացնել զեղեցիկորէն, եւ կը տեսնէր յարաճուն հոգածութեամբ, թէ ինչպէս Տրդատի աչքերը կը լուսաւորուէին, իր առիւծակերպ նայուածքը եւ կայուղիւրքը արքայավայել, օգոստոսափառ բան մը կը ստանային, երբ ինչ իշխանի իրրեւ Տրդատի պատմութեան ուսուցիչը, անոր առջեւ կը պարզէր զզուանքով Մեծն Ալէքսանդրի անծայրածիր փառասիրութիւնը, ընչաքաղցութիւնը երկրանուաճումի կամ աշխարհակալութեան համար, անոր յեղեղուկ քմահաճոյքը, ուտելու եւ խմելու մոլութիւնը, վերջապէս զինովութեան միջոցին իր երիտասարդ հասակին մէկ բարեկամին սպանութիւնը եւ անոր վաղահաս վախճանը բանդադուշակի եւ զղջումի նոպաներու մէջ: Սիլվն կը դիտէր, թէ Ալէքսանդրի կեսարական դառանցանքը աւելի կը մղէր Տրդատը: Առանց վերապահումի, սանձարձակ գործելու կարողութիւնը զեղեցիկ կը թուէր անոր աչքին: «Վեհապետները ուղածնին պէտք է ընեն», այս էր Տրդատին կարծիքը: Բայց ամէն բանէ վեր կը յարդէր Աքիլլէսը: Միհրը արդէն տակաւ աներեւոյթ եղած էր տղուն երեւակայութեան աշխարհին մէջ, եւ Աքիլլէս երկար ժամանակի համար տիրապետած էր անոր ի գաւ եւ ի նոր մտահոգութիւն Արսինէի: Հիմա ան Աքիլլէսի կ'աղօթէր: Ինչ որ ըրաւ Աքիլլէս ուղիղ է, այս է Տրդատի նախատիպարը: Որովհետեւ Աքիլլէս անկաշկանդ կ'ուտէր ու կը խմէր, ինք ալ կ'ուզէր այնպէս ընել եւ սեղանի վրայ որեւէ բանաւոր վարանում կամ դիտողութիւն ի հանդէս կը բերէր Հոմերոսին «բարկաճայթ Աքիլլէսը», այն կերպով որ օրերով կը տեւէին ճակատին կնճիռները, նշան զայրոյթի, ասդին անդին կը վազէր խոժոռած, ձառադէմ, իր սպառնալից, վճիտ թուխ աչքերէն կայծակներ կը ցատկէին եւ բան մը չէր խօսեր այլեւս: Այդ միջոցին Սիլվն կը հրաժարէր իր հեղնութենէն եւ տունին զերինները կը զրուշանային խրտչելով: Կրկին եւ կրկին գործադրուեցաւ տեսարանը, ուր Աքիլլէս աղջկան մը պէս հաւուած ուրիշներու մէջ ինք ալ բուրդ կը մանէ: Յետոյ կուգան յոյները որոնք առանց Աքիլլէսի չեն կրնար Տրովազան գրաւել, խորամանկ Ողիսեսը իրենց գլուխը: Շեփորները կը գոռան բերդին բակին մէջ (անգաստակ): Աքիլլէս կը ցատկէ, կը նետէ դուրսը, եւ կրակոտ քայլերով կը փութայ յոյներուն հետ քալել դէպի Տրովազա:

Տրովազա: Ոչ մէկ գրիչ կրնայ նկարագրել ինչ որ այս անունը

կը նշանակէ ապագայ թագաւորին համար: Հոմերոս անոր գլուխին բարձին տակ կը պառկի: Արեւուն նախընծայ ճառագայթը կ'իյնայ անոր վրայ, եւ դիչերը Արսինէի հրամանով Տրդատի ննջարանին մէջ այլեւս չէին լեցուեր ճրագները Հոմերոսին պատճառաւ: Տրովազայի կործանումը զայն ներքնապէս այնքան կը գրաւէ, որ յաճախ արտասուողին աչքերով եւ խանդարուած երեսով կուզար նախաձառի: Երբ ինք կը յիշէր տեղը, կամ Խոսրովիդուխտին եւ կամ իշխանին կողմէ յիշատակուելը կը լսէր. «Պիտի գայ ժամանակ որ սուրբ Իլիոն կործանի...», հայ արքայազունին բորբոքած երեւակայութիւնը կը տեսնէր, իրրեւ իրականութեան մէջ ծխաշունչ բերդը, եւ քաղաքը, եւ կը սկսէր արտասուել բարձրաձայն: Ագամեմնոնին պատճառաւ չէ՞ր միթէ որ Աքիլլէս այնքան ահաւոր ոխ պահած էր զեղատեսիլ Բրիսանոյչին: Ի՞նչ հարկ զարմանալու, երբ Տրդատ-Աքիլլէս եւս ուզէր իր Բրիսանոյչը ունենալ: Երկար ատեն բաւեց իրեն Խոսրովիդուխտ, այնքան մանաւանդ որ Աքիլլէսի համար քրոջ եւ եղբոր սաստիկ սէրը զիրենք իրարու կը կապէր աւելի քան երբեք: Բայց համեմատութիւնը «պատմական» չէր: Իշխանը այնքան շատ առիթ ունեցաւ հասկնելու Տրդատին, թէ Բրիսանոյչ քուրմի մը առեւանգըւած աղջիկն էր — անգամ մը որ Տրդատ — Աքիլլէս զերիններուն ամէնէն աղուորը իրրեւ իր Բրիսանոյչը յայտարարած էր, — ոչ ոք պիտի համարձակէր զլանալ զայն իրեն: Բայց մեծերուն միջեւ պայքար մը ծագեցաւ, այն մասին թէ ինչ կերպով Հայ իշխանագունը կարելի է բուժել այս առաջին սէրէն, ամէնէն աւելի շուտ: Լիկինիոս Իշխան եւ զաւակը Լիկինիանոս համամիտ էին թոյլ տալու որ ան ըստ կամս գործէ: Սիլվն խոստացաւ աշխատիլ որ Տրդատ աղնուախոհ չափաւորութեամբ իրարու հետ զուգորդէ սէրն ու գիտութիւնը, Լիկինիա եւ Արսինէ ուխտեցին լուռ ու մունջ դիտել մատաղատի սիրողները իրենց ամէն մէկ քայլին: Մնաց որ այն աղջիկը իրրեւ Տրդատի Բրիսանոյչը այնքան յարմար չէր: Գերուհին այնքան խրտչող, այնքան վարանոտ էր որ յաճախ կուլար ուրիշներուն կատակող խօսքերուն վրայ, Տրդատին քով կը նստէր, նուէր ստացած ծաղիկները ձեռքը, զեղեցիկ ապարօջ մը մաղերուն մէջ, այնքան համր ու թանձրամիտ, որ Հայ ապագայ արքային առաջին սէրը քիչ ատենէն պաղեցաւ եւ բաւականացաւ դարձեալ Խոսրովիդուխտով, որ իր դերը միշտ պատմութեան համաձայն կը խաղար, եւ Աքիլլէսի սէրը կը փոխանակէր տաք համբոյրներով ու զիրկընդխառնումներով: Բուրբովին աւելորդ էր նաեւ, որ Արսինէ իրիկուն մը զերուհիներուն յատկացուած վայրին առջեւ անմեղունակ Բրիսանոյչին ճամբան սպասեց, քանի մը քայլ մութին մէջ մէկ կողմ տարաւ զայն, ծոծրակէն բռնեց, իրեն քաշեց, դաշոյն մը շողացուց դողահար պոռացող խեղճ աղջկան աչ-

քերու՛ն առջեւ, եւ տաք շունչով մը փսփսաց անոր ականջին. «Այս դանակով կը սատկեցնեմ քեզ, եթէ արքայազունը զլիսէ հանես»: Աղուոր աղջիկը սարսափահար կակաղեց. «Արքայազունը յաճախ ամէնէն գէշ բանի համար զիս գլխէ հանել ուզեց: Ես ոչ ոք գլխէ կը հանեմ, եւ չեմ ալ գլխէ ելլեր: Ես կը սիրեմ Յիսուսը»: Կարծես շանթահարուած, Արսինէ թողուց աղջկան օձիքը: Կ'ուզէր անոր ետեւէն ձայնել սիրալիր բառ մը իբրեւ շնորհակալութիւն, իբրեւ յարգանք, բայց անստճման ամօթահարութեան եւ անձկութեան ըզգացում մը կոկորդը կը խեղդէր: Դաշոյնը կը բոցավառէր ձեռքին մէջ: Կատաղութիւնը եւ արհամարհանքը կ'ուզէին որ Արսինէ անով Տրդատին վրայ յարձակի: Աս ինչ ծանր բեռ իր կոնակը հանած էր Պոսրով: Եւ ինչ սարսափելի հրաման մըն ալ կտակած: Ասիկա Պոսրովի դաշոյնն էր: Հապա եթէ յաջողէ՛ր... Եթէ Տրդատ կորսուէր Միհրի թագաւորութեան համար: Հիմա ժամանակ՞ն էր: Հիմա՞ արդէն: Արսինէ դողահար ծունկերով քայլ առաւ դէպի դղեակ: Մարմարեայ սանդուխին աստիճաններուն վրայ տեսաւ Սիլէնը եւ Տրդատը որոնք անդաստակին մէջ կ'երթային կուղային: Յայտնապէս կը լսէր Սիլէնի սա հայրական բառերը. «Ամէն ինչ դիտութիւն է, դաւակա: Գիտութիւնը ամէն ինչ է»: Քրմուհին կատաղութեամբ ձեռքը ճակատին զարկաւ որ ճարճատեց եւ ինքնիրեն խօսեցաւ կիսաձայն. «Գիտութիւն, դիտութիւն, դիտութիւն: Բթամիտ կապիկ: Ո՞րը ուրեմն: Սոկրատ, Միհր, Քրիստոս»:

Ձմերուան շարքները անցան դացին, կարծես թռչելով: «Հեթանոսները» կը պատրաստուէին ամէն կողմ իրենց բազմօրեայ ծոմապահութեան, ի պատիւ «անպարտելի» արեւ աստուածին: Հոկտեմբեր 21-ը, ձմեռնամուտի օրը, հասաւ: Արքայորդիներուն նուէր տրուեցան կարկանդակներ եւ խաղալիքներ, ինչպէս ամէն կողմ տղոց: Պոսրովի դուլխտ մայրական ճշմարիտ ուրախութեամբ մեծապէս մարդու նմանող նուրբ ճենապակիէ գլուխով ու շարժուն աչքերով խոշոր պուպրիկը սիրտին վրայ կ'ողջադուրէր: Տրդատ ամբողջ օրը անդաստանին հարթ ու ողորկ յատակին շուրջ լուսերանդ շնչաւնը կը քչէր: Մինչ Աթէնքի մէջ թափօրներ եւ պարահանդէսներ տեղի կ'ունենային, եւ փողոցները կը մաքրուէին ամէն կողմ, Լիկինեան զղեակին մէջ դարձեալ տեղի ունեցաւ լուռ ու մեծաշուք հանդէսներէն մին: Որքան դարձացաւ Արսինէ ծաղկաբոյր հանդիսական դահլիճի վերածուած ճաշարահին մէջ մտած ատենը տեսնելով բոլոր ծանօթ հիւրերուն մէջ այն մարդը, որուն վեհ երեւոյթը այն պատանիին մահէն ի վեր չէր տեսած. Եպիսկոպոս Աթենակորաս: Իշխանին անշուք բարեկամական հրակէրը ընդունած էր առանց որեւէ

ձեւակերպութեան եւ ծերակուտականին ուղղեալ սա պատասխանը յանձնած էր գերիին, իր եւ իր կնոջ համար մեծ պատիւ կը համարի մասնակցիլ խնջոյքին: Երկուքն ալ տեղեակ էին Հայերու ճակատագրին, թէ եպիսկոպոսը եւ իր կինը յունական խնջոյքի բոլոր սովորոյթներուն եւ ձեւակերպութիւններուն հմուտ էին, ասիկա զարմանալի չէր, որովհետեւ ամէն ոք գիտէր թէ երկուքն ալ բարձր ծագում ունէին, եւ իրենց տունն ալ նշանաւոր էր: Բայց ամէնքն ալ հիացան անոր գիտութեան եւ ամէն մարդի մէջ անվարան, ազատ դատումներուն մասին: Մեծ պայծառութեամբ եւ անվրէպ մասնագիտութեամբ ան կ'ամբողջացնէր կամ կը սրբադէր իշխանին կամ զաւակին Լիկինիանոսի քաղաքական աշխարհահայեացքը, տեղեակ էր Հոննոսի եւ Դանուրի վրայ գերմանական ժողովուրդներուն ամենավերջին շարժումներուն, հայկական պատերազմին վիճակին, գիտէր հարկ եղած բոլոր տեղեկութիւնները տալ Հայաստանի երկրին եւ ժողովուրդին վրայ, այնպէս որ Արսինէ եւ տղաքը հայրենակարօտ նայուածքներով անոր բերնէն կը կախուէին: Եւ ճաչէն ետք, երբ խումբեր կազմեցին եւ սրահին մէջ շրջան կ'ընէին, ան խումբէ խումբ կ'երթար, անկաշկանդ ազատ եղանակով խօսակցութիւններուն կը խառնուէր, կը մասնակցէր հանճարեղ բառերով, երբեմն հոս, երբեմն հոն: Ապեղէսի հետ տաք խօսակցութեան մը բռնուեցաւ անոր ամենանոր գործերէն մէկուն վրայ, եւ արուեստադէտը լուրջ ուշադրութեամբ կ'ունենդրէր եպիսկոպոսին դատաստանին եւ ըմբռնումին: Մերթ կը խօսէր Վիգիլիոսի հետ իր նոր պատկերներուն վրայ, երբեմն ալ Վալերիոս բժիշկին հետ, քաղաքին հիւանդներէն ոմանց մասին, ամէն կողմ, հոս կամ հոն, կը ցցուէր անոր վեհ, իշխանական կերպարանքը: Եւ — ինչ որ դիտելի էր — ուր որ կ'երթար կը կենար, հոն էր Պոսրովի դուլխտ, յաճախ վիճարանող մարդոց շրջանակին մէջտեղը, եւ կը դիտէր յաճախ երկար ատեն ու անքթիթ, եպիսկոպոսին երեսը: Կիները կը զգացուէին ասկէց, եւ Լիկինիա ատեն մը կամացուկ մը փսփսաց եպիսկոպոսին կնոջ «Ոեղճ աղջիկը — հայրենիքին եւ հայրիկին կարօտը ունի: Ձեր ամուսինը անոր թագաւոր հայրը կը յիշեցնէ»: Եպիսկոպոսն ալ երկար ատենէ ի վեր դիտած էր անոր հետաքրքրութիւնը իրեն նկատմամբ, եւ յանկարծ ձեռքը տուաւ Պոսրովի դուլխտին եւ միսմինակ անոր հետ ամէնէն երկար շրջանը բրաւ պարտէղին մէջ: Անբացատրելի վախ մը տիրեց Արսինէին: Իրեն այնպէս կուզար թէ Պոսրովի դուլխտ իրմէ կ'ելլէ Քրիստոսի ձեռքը կ'անցնի, կը հեռանայ, կը հեռանայ, եւ ալ չի դառնար ետ:

Բայց, շատ չանցած, Պոսրովի դուլխտ նորէն անոր դարձաւ հաւատարմաբար ինչպէս միշտ իր հեռատես, միշտ հայրենակարօտ

աչքերով: Գիշեր եղած էր: Երեկոյթը կ'անցընէին իշխանին պայծառօրէն լուսաւորուած մատենադարանի սենեակին մէջ: Կը նստէին, կը կենային, ժուռ կուզային, առանց քաշուելու կը վայելէին ուտելիքը եւ խմելիքը, որոնք միշտ դարձեալ կը հրամցուէին ոսկի, արծաթ ամենազեղեցիկ դաւաթներով կամ ճենապակիէ եւ փղոսկրէ անօթներուն մէջ, տունին ամէնէն զեղեցիկ սպասարկուներուն կողմէ: Հայ գահաժառանգը ամէնուն հետ աշխոյժ խօսակցութեան կը բռնուէր: Այո, մինչեւ իսկ զեղարուեստագէտներէն եւ դիտնականներէն ոմանք համարձակեցան ընդունիլ անոր հետ առաջարկուած մենամարտը, եւ ճաշարահին ու պարտէզին մէջ արդէն բունն դատմարտը կը շարունակուէր, որուն առիթով յաճախակի յողթող տղուն մարմնական ոյժը հիացում կը պատճառէր բոլոր խնդացող հանդիսատեսներուն: Ուտելու եւ խմելու առնելու հաւատարիմ մնաց Աքիլլէսին, ինչ չափով որ կը հանդուրժէր Սիլէն: Եպիսկոպոսին հետ այնքան չէր բռնուեր: Տրդատ առաջին բոպէին իսկ զգաց անոր բարձր սպասարկութիւնը իրեն վրայ, եպիսկոպոսն ալ գիտէր այս կէտը: Յաճախ անոր բոլորտիքը կը դառնար, երբ ան ետանդով խօսքի բռնուած ըլլար ուրիշ հիւրերու հետ, կը դառնար անոր չորս կողմերը կը նայէր, եւ ասիկա քանի քանի անգամներ, կը քաշուէր, նորէն կուզար, երկիւղի եւ ակնածանքի զգացում մը: Բարերարոյ Սիլէն այս իրիկուն պէտք եղածին պէս ինքզինքը չկրցաւ ցուցնել: Իր իմաստասիրական բմբռնումը, սովորատեան — շնական կենցաղամարտութիւնը, որուն հետեւող ըլլալ ուխտած էր Լիկինիոսի տունին մէջ ալ, Լիկինիոսի եւ Արսինէի գորովալից պնդումին հակառակ, չէին թոյլատրեր իրեն սովորականէն տարբեր կերպով երեւնալ այդ իրիկուան խնջոյքին, թէեւ բնատնիքը պատիւ պիտի համարէր իրեն համար տարբեր վարժունք մը: Իշխանը իրեն բան մը ըսած չէր եպիսկոպոսը հրաւիրած ըլլալուն մասին եւ — քիչ մը խորամանկութեամբ եւ ուրիշի վրայ խնդալու չարածճի ձեւով — խորհած էր որ Սիլէն եւ եպիսկոպոսը հետաքրքրաշարժ բախում մը պիտի ունենան: Արդէն վարը ճաշարահին մէջ հիւրերուն ընդունելութեան միջոցին Լիկինիոսի աչքին դարկած էր, թէ ինչպէս Սիլէն նեղուելով երեսը թթուեցուց, կարմիր յօնքերը պըռքսեց, խոսակցուց եւ մօրուքին մէջէն բան մը մրմռաց: Յետոյ իր կարմիր, հինցած հողաթափները ոտքը խոթեց, եւ կզմինտրի պէս կարմրած սովորական վերարկուն այնքան ծիծաղելի եւ անյարմար ձեւով, որ ամէնէն առաջ եպիսկոպոսին վրայ սա սպասարկութիւնը արթնցուց, թէ կ'ուզէ այս կերպ վարուելով ծածկել ներքին անվրստահութիւն մը եւ անսիրելիութիւն մը: Եպիսկոպոսը ողջունեց զայն խոհական անդորրութեամբ եւ փոքր ինչ դարձացումով: Արդէն Սի-

լէն երեսը միւս կողմ դարձուցած էր իրեն ամէնէն մօտը կեցող հիւրերէն մին ողջունելու համար եւ յետոյ իր սղեղ ղէմքին կէսը դարձընդունիլ անոր հետ առաջարկուած մենամարտը, եւ ճաշարահին ու ետ եպիսկոպոսին կողմը դարձուց, նենդամիտ ծիծաղով մը, եւ կատակեց. «Կը կարծէի թէ քրիստոնեաները իրենց վարդապետին ուսուցումին համաձայն աղքատ ու խոնարհ պիտի ըլլան մեզի Ծնականներու պէս»: — «Կը սխալիս, բարեկամ: Քրիստոս խոնարհութիւնը մեր սիրտին մէջ դրաւ, եւ խոնարհութիւնը պէտք չունի կարմիր ըլլալու վերարկոյին վրայ, քու խոնարհութեանդ պէս»: Սիլէն քիթը կախեց եւ կերակուրի առնելու ամէնուն աչքին կը դարնէր անոր լուծութիւնը: Ամէն պարագայի մէջ, յաջողեցաւ այս իրիկուն իր արժէքը ճանչցնել զխոնականներուն, արուեստագէտներուն, նոյնիսկ եպիսկոպոսին առջեւ, իր գիտութեամբ պատրաստախօսութեամբ բաւարարուելով, մանաւանդ երբ կը պարզէր հեղինոյի իր հանգամանքը եւ կամ ծանրաբարոյ ու համեստ մարդու մը ձեւը: Վերը մատենադարանին սրահին մէջ եպիսկոպոսին հետ բաւական լուրջ եւ հանդարտ վիճաբանութեան մը բռնուեցաւ, ամբողջ սրահը լեց եւ ամէնքն ալ լարուած մտիկ կ'ընէին խօսակցութեան: Ասկից անկից խօսելով ներկայ տօնին նշանակութեան մասին կարծիք յայտնելու եկած էր կարգը: Երկուքն ալ համամիտ էին, թէ այս ամբողջ բաղմօրեայ խոնարհազանչը իր զիմակաւոր պարբերով, թափօրներով, խրախճանութիւններով եւ արբեցութիւններով ժողովուրդին համար ապականութիւն մըն է, որովհետեւ չկայ խելքը գլուխը մարդ մը որ մասնաւոր արեւային աստուծոյ մը հաւատայ, այլ գիտէ թէ ձմեռնային արեւադարձը աստղաբաշխական երեւոյթ մըն է լոկ: Երկուքն ալ համակարծիք էին, թէ այս տօնական օրերուն հանրային բանախօսութիւններով ժողովուրդը պէտք է բերել սա գիտակցութեան, թէ մարդկութիւնը ինչ կը պարտի կապէս լոյսին: Սիլէն նոյնիսկ անմիջապէս ետանդապին համամիտ գտնուեցաւ եպիսկոպոսին, թէ ինչպէս լոյսով միայն բաւական չէ օգնել մարդկութեան, այլ անիկա պէտք ունի նաեւ ներքին լոյսի մը: Բայց այս կէտէն անդին իրենց տեսութիւնները տարբերեցան: Եպիսկոպոսը գլուխը շարժելով եւ խոհականօրէն ծիծաղելով տեղի տուաւ ետանդով խօսող փիլիսոփային, թէ միտքը, բանականութիւնը այս ներքին լոյսը կը նշանակեն մարդուն համար: Միւս ներկայ գիտնականները, ամէնէն առաջ Լիկինիոս, համամիտ գտնուեցան փիլիսոփային: Բայց փիլիսոփան — Սիլէն — այս ներքին լոյսը, բանականութիւնը, փառաբանեց իբրեւ միակ աղբիւրը բոլոր գիտութիւններու եւ բոլոր բարիքին, այն առնելու եպիսկոպոսը ժխտելով երեքուց գլուխը եւ սա կարծիքը մէջտեղ դրաւ. եթէ գիտութիւններու կամ ծանօթութիւններու միակ աղ-

բիւրը բանականութիւնը ըլլայ, այն ատեն գիտութիւնը եւ խիղճը պէտք է բաւարար ըլլան ամէնուն, իրենք միայն: Քիչ մը խորհրդածելէ ետք Սիլվէն հաւանեցաւ: «Բայց», վրայ բերաւ եպիսկոպոսը հանդարտօրէն, «պէտք չէ անշուշտ ենթադրել ուղես, թէ մարդոց մէջ մէն միւսակ եւ հաւասար կամ ըստ ամենայնի նման գիտութիւն կամ ըմբռնողութիւն ըլլայ: Չեմ ուզեր խօսիլ անբանաւոր կարծիքներուն վրայ որոնց համեմատ աշխարհ եւ մարդիկ, նոյնիսկ աստուածները ծագում առած են, նաեւ ոչ այն մասին, թէ հասարակ մարդուն բանականութիւնը չի բաւեր բնութեան օրէնքներն ու կարգերը ըմբռնելու: Մարդոց մեծ խորհողներն ու վարդապետները — կ'աղաչեմ ձեզի, ո՞ւր է արտաքին աշխարհի եւ բնութեան մասին հասարակաց եւ միակ գիտութիւնը, ըմբռնումը, թողունք միւսները: Ի՞նչ բան աւելի բանաւոր է, ամէն ինչ ջուրէն կամ օդէն — կամ կրակէն — կամ խորհրդաւոր «անսահմանել»է մը յառաջ եկա՞ծ յայտարարել: Կամ Թաղէս, Անաքսիմանդը, Անաքսիմինէս, Հերակլիտէս իրաւունք ունին»: — «Բայց ոչ: Կարելի չէ՞», ձայնողներ եղան: «Առէք հոյակապ Պղատոնը, ա՞ն իրաւունք ունի թէ Արիստոտէլ: Սկզբունքով կամ մին կամ միւսը: Եւ երկուքն ալ անբանաւոր մարդիկ չեն: Դեմոկրիտէս աշխարհը կը մեկնէ առանց ողբի, միտքի մը: Հիւլէնները կը բաւեն: — Անաստաղօրաս, ինչպէս նաեւ Սոկրատ, աշխարհի բանական կարգուսարքը կը վերադրեն աստուածային ընդհանրական բանականութեան մը, Օրէնքի մը, աստուածային ողբի մը»: — «Աս ալ ճշմարիտ է», հաստատեց Սիլվէն, շուրաբ ծիծաղով մը: «Գալով Իրաւունքին Բարիին գիտութեան: Ասիկա հասարակաց է ամէն մարդու: Արդեօք աւելի՞ բանաւոր է Ստոյիկներուն պէս կարեւորութիւն չտալ ոչ ուրախութեան, ոչ ցաւին, ոչ մէկուն ոչ միւսին, կամ աւելի բանաւոր պիտի ըլլայ Ենականի մը պէս պարզուկ եւ առանց որեւէ յաւակնութեան ապրիլ Դիոգինէսի կամ շունի մը պէս, ինչ որ մօտաւորապէս օգտակար պիտի ըլլար մեր կիներուն որոնք հիմա մեծ դժուարութիւններու կ'ենթարկուին հանդիսական ճաշեր պատրաստելու: Կամ արդեօք իրաւունքը Եպիկուրոսի՞նն է, եւ արդեօք բանականը այ՞ն է որ Հայոց դահաժառանգ իշխանին պէս կարելի եղածին չափ մարդ շատ ուտէ խմէ»: Ամէնուն աչքը Տրդատին կողմը դարձաւ, որ անդին անկիւն մը քաշուած փառաւոր անուշաղէնի մը արծաթ պնակը առջեւը, կը սպառէր ախորժակով մինչեւ յետին կտորը: Ընդհանուր ծիծաղ մը պահիկ մը բնդհատեց այս լուրջ տեսակցութիւնը: Եպիսկոպոսը շարունակեց. «Գիտնական փիլիսոփաները եւ անոնք որ մեր մէջ տեղեակ են պատմութեան, թերեւս ինձմէ աւելի լաւ կը ճանչնան Հերոդոտոսը: Դուք գիտէք թէ որքան իրարմէ բոլորովին տարբեր ժողովուրդներ կը նկարագրէ ան: Եւ այդ

ժողովուրդներէն իւրաքանչիւրը ունի տարբեր իրաւունք, տարբեր օրէնք, որոնք, եթէ կ'ուզէք, ամէնքն ալ բանաւոր են: Միտք բերէք Հնդկաստանի Պետէները: Ան ալ բանաւոր չէ՞ արդեօք, որ երբ մարդ մը հիւանդանայ կամ ծերանայ, պէտք է մորթել զայն եւ ուտել»: Կիները սարսափահար եղան եւ իրարանցումի ձայներ լսուեցան: «Բանաւոր չէ՞ արդեօք, որ զօրաւորը իր վայելքին եւ առաւելութեան վրայ միայն մտածէ եւ առնէ ու վայելէ որչափ որ կրնայ: Կամ, տկարը խորդախութեամբ եւ խարկութեամբ եւ սպանութեամբ զօրաւորին գէժ էլլէ: Աս ամէնը բանաւոր է, եւ նոյնիսկ երբ մարդ ուզէ եւ կարող ըլլայ իր իրաւունքն է: Արդէն այսպէս կը խորհի ամէն հարազատ Հոմայեցի»: — «Ճշմարիտ է», հաստատեց Սիլվէն, «Բայց, Սոկրատի համաձայն, ամէն մարդ բարի գեւ մը ունի, հետեւաբար տեսակ մը աստուածային ձայն իրեն մէջ, այս է ուղիղ, ճշմարիտ տեսակ մը աստուածային ձայն իրեն մէջ, այնոր հետեւի»: — «Այսինքն կը հաւատաս», յարեց եպիսկոպոսը թաքնուած ծիծաղով մը, «թէ Սոկրատ, իբրեւ միշտ իր ներքին ձայնին հետեւող, անոր ալ հաւատարմօրէն հետեւեցաւ, Քսանտիպոսը իրեն կին առնելով»: Հիմա իրաւունք Սիլվէն, եպիսկոպոսին կտրուկ խօսքին վրայ, խոժոռած կռնած գէժքովը, եւ ուրրած բերանովը կապիկի մը նմանեցաւ: Պատասխանեց, «Իերապաժառ, պէտք է սակայն ընդունիս, թէ, երբ բոլոր մարդիկ յաջողին ըմբռնել Պղատոնի մը, Սոկրատի մը, Սենեկայի մը, Պլոտինոսի մը, կամ, ինչպէս ներկայիս, Պորփիրի մը եւ Կամբրիկոսի մը առաքինութիւնները, եւ այս առաքինութիւններուն համաձայն գործադրէին իրենց կեանքը, ժողովուրդները գերծ պիտի ըլլային հիմակուան մոլորութիւններէն եւ մոլութիւններէն»: — «Միւրի վարժապետ, դուն կը մտնաս որ «երբ»ով ու «բայց»ով չի պայքարուիր, ուղիղ խորհող մը այդպէս չ'ընէր: Ե՛րբ: — Նոյնիսկ երբ ժողովուրդները ամէնքն ալ, ուր որ մարդիկ կը բնակին, Պատոնի եւ Սոկրատի ըմբռնումին ժամանեն, ինչ կ'ըլլայ: Բայց դուք փիլիսոփաներդ ի՞նչ կ'ընէք գիտութիւնը, ըմբռնողութիւնը տարածելու համար: Եւ չէք գիտեր, թէ նոյնիսկ Պղատոն մը ոչ մէկ յարմար առիթ ունեցաւ իր բարձր գիտութիւնը տարածելու հասարակ ժողովուրդին մէջ, ուր մնաց բոլոր մարդոց մէջ: Իր գիտութիւնը մեծերուն, նշանաւորներուն համար է լոկ, հարուստներուն, զարգացածներուն համար: Ձեր Պղատոնին հո՞րն է հատեր բնդհանուր աշխարհին համար դրաղելու: Անոր հո՞րն է գերիները, խեղճ կիները»: — «Այո, ճշմարիտ է: Այդպէս է», ձայնեցին հիւրերուն մէջ դտնուող Պղատոնականները: «Եւ միւս «երբ»ը, շարունակեց եպիսկոպոսը, «երբ անոնք առաքինութիւնները գործադրեն իրենց գիտութեան համաձայն»: Եպիսկոպոսը կեցաւ: Լուրջ կերպարանքով, հարցուց, իր

Թափանցիկ նայուածքները փարփառ ու գորովայից աչքերէն ժողովին ամէն կողմը դարձնելով. «Ո՛հ, ո՞վ — ո՞վ կրնայ բնի, թէ ինք իր ըմբռնումին, իր դիտութեան համաձայն կը գործէ, կը վարուի: Ամէն օր ինձի մարդիկ կուզան, բարձ, յաճախ աթենացի ուսանողներ, հռետորներ, սպաներ, դիտուորներ, զարդացածներ, գիտութեամբ եւ հմտութեամբ լեցուած: Բանականութիւնը հոն է, գիտեն աշխարհի, իմացականութեան, հոգիներու ներդաշնակութեան օրէնքները, կը զզան այն աստուածային դեւը եւ զայն՝ զոր հեթանոս եւ քրիստոնեայ առհասարակ կը ճանչնան. Խիղճը: Կարող են ճշտիւ հաշուել իրենց զործերուն հետեւանքները — եւ կ'իյնան սակայն փորձութեան ու մոլութիւններու մէջ եւ կ'աղաղակեն իրրեւ յուսահատներ, իրրեւ շղթայակապ կալանաւորներ, իբրեւ ընկղմածներ — ինձի, խեղճ, տկար, մեղաւոր մարդուս. Եպիսկոպոս, փրկէ զիս»:

Արսինէ յայտնապէս շուարած, չփոթ վիճակի մէջ էր: Լիկին-իանոսի վրայ կը մտածէր. ան կեցած էր իրեն առջեւ. ան իրեն կը կանչէր: Ասիկա ուրկէ՞ց գիտէ եպիսկոպոսը: Լիկինիանոս ասկէց առաջ անոր քով եղա՞ծ էր: Այս պահուս Արսինէ կը տեսնէր, թէ ինչպէս եպիսկոպոսին խուզարկու աչքերը Լիկինիանոսի վրայ կը հանդէպին գորովով, մինչ միւս կողմէ կը խօսէր: Լիկինիանոս գլուխը շատ կախած էր, եւ Լիկինիա զաղտագողի աչքերը կը սրբէր:

«Պղատոն»ը — կը խօսէր եպիսկոպոսը — «ինք ալ զլաց, թէ ինք չի կրնար մարդոց տալ ճշմարիտ լոյսը: Վարժապետ, գիտե՞ս այս մասին Պղատոնի դաւանանքը. «Պէտք է սպասենք մէկուն — ըլլայ Աստուած կամ աստուածարեալ մարդ — որ մեզի սովորեցնէ մեր կրօնական պարտականութիւնները եւ մութը փարատէ մեր աչքերէն»: — «Պղատոնի այլ խօսքը չեմ գիտեր», խոստովանեցաւ Սիլէն: Եւ եպիսկոպոսը շարունակեց. «Ես կը հաւատամ — որքան որ մենք՝ վերջէն եկողներս՝ կրնանք դատել անստոյգ աւանդութեան վրայ. Պղատոն մաքուր էր եւ մնաց: Սոկրատ եւ Սենեկա չկարողացան անոր նման դիմադրել մարմինին ցանկութիւններուն: Թողէք որ խօսքը չընեմ մեր օրերուն, մեր ընկերութեան, վերէն վար: Հմտութիւն, սիրելի վարժապետ, որքան որ կ'ուզես, քայց կորով ոչ մի»: Ահա Արսինէի լեցուն, մաքուր ձայնը հնչեց եպիսկոպոսին շուրջ կեցող, նստող ընկերութեան մէջէն: Վճիտ ու հանդարտ կը խօսէր, բայց իր ձայնին մէջ կը դողար իր ներքին տրամադրութեան շարժումը. «Թոյլ տուր ինձի, որ ես քեզի պատասխանեմ, եպիսկոպոս: Բոլոր բաժնեւորուող համամիտ եմ: Գիտեմ որ մարդկային բանականութիւնը եւ դիտութիւնը չեն բաւեր: Մարդ վերէն լուսաւորութեան պէտք ունի: Երկինքին լոյսը պէտք է անոր հողիին մէջ գայ, այլապէս կը թա-

փառի մոլորութեան եւ խաւարի մէջ, եւ Ահրիմանի բոլոր չար ոգիները դարան կը լարեն անոր: Բայց լոյս է Ահուրա եւ անոր քով խաւար չկայ: Միհրի եւ Անահիտի միջոցաւ ան կուտայ ամէնուն՝ որ լոյսը կը սիրեն՝ Գիտութիւն, եւ տկարներուն կուտայ ոյժ՝ բարիք ընելու համար, երբ չար դեւերը փորձեն զայն: Ան է անոնց խաղաղութիւնը, հովանին, ապաւէնը, եւ զանոնք կ'առաջնորդէ իրրեւ հովիւ բոլոր վտանգներուն մէջէն զէպ իր յաւիտենական թաղաւորութիւնը: Միհրի առջեւ կը դողան դեւերը եւ կը փախչին: Փրկութիւն, փրկութիւն Միհրի քով է: Ան հիմա կրկին կը յաղթէ իր լոյսով բոլոր խաւարին: Կը վերելաիկէ անոր արեւակառքը: Խաւարը, չար ձրմեռը կը փախչի, եւ լոյս եւ կեանք կը վերադառնան»:

Արսինէի բառերը իրրեւ խաղաղաբեր դաւանութիւն մը մարեցան: Ամէնքն ալ լուութեամբ մտիկ բրած էին, եւ եպիսկոպոսին նայուածքը տակաւին անոր վրայ կը հանդէպ սիրալիւր հասկացողութեամբ: Խոր լուութիւն կը տիրէր: Տրիտոնին ճողփիւնը միայն կ'իմացուէր: Յետոյ սկսաւ Աթենակորաս շնորհալի խոնարհութեամբ մը Արսինէի հանդէպ:

«Եթէ մեր քրիստոնէական հաւատքէն զատ տակաւին կարենար ուրիշ հաւատք մը լոյս աշխարհի կոչուիլ՝ ան ձեր հաւատքը պիտի ըլլար, ազնիւ քրմանոյց: Եթէ համօրէն մարդիկ ունենային ձեր հաւատքը եւ քու հողիիդ մաքուր սէրը, որքան մթութիւն անհետ պիտի ըլլար: Յօժարութեամբ կը խոստովանիմ. եթէ Քրիստոս չըլլար, ես Միհրի աշակերտը կ'ըլլայի: Միհր եւ Քրիստոս կը պայքարին տիրապետութեան համար: Պէտք է մէկը յաղթէ, պէտք է միւսը փախչի: Կը թուի թէ Միհրը յաղթել կ'ուզէ: Իմաստունները անոր կը վիճակին: Պատերազմողները զայն կը պաշտեն բանակին մէջ, կայսրեր անոր մեհեան — բաղին կը շինեն: Եւ սակայն, շնորհալի քրմանոյց, մի ասով շլանար — ո՛չ քեզ ցաւեցնել կը փափաքիմ, ո՛չ ալ հաւատքդ տկարացնել ժամանակէն առաջ: Միհրը եւս լոյսը չէ՝ որ կը լուսաւորէ բոլոր մարդիկը: Միհրը եւս չի կրնար ճշմարտապէս փրկել — Միհրը եւ իր լոյսը մարդկային պատրանք է, քրմական իմաստութիւն է, Միհրը մտածում մըն է, լուսաւոր երազ մը, եւ ով որ զայն կը ճանչնայ միայն, երկիւղի եւ խաւարի մէջ կը մնայ»: — «Լուէ: Կը ստես: Դուն դեւ մըն ես, Ահրիմանի մէկ դեւը լոյսի զգեստով: Ահուրա: Միհր: Անահիտ: — Ողիք լուսոյ ընդդէմ դեւաց խաւարի»: Ամէն ոք սարսափէն ու յուզումէն ոտքի դատկած էր Արսինէի մոլեգիւն կատաղութեան եւ կիրքի պոռթկումին վրայ: Երթունքները կը դողանային, աչքերը կը կայծէին, ձեռքերը կը դնդանային: Նոր ընդդիմութիւն մը կը պատրաստուէր, երբ Աթենակորաս ընդմիջեց զայն.

«Ազնիւ կին: Մի մոռնար, թէ Միհրը քու հաւատքիդ համաձայն մեծ է եւ դորաւոր: Ուրեմն իրեն պատիւ չի բերեր, երբ դուն ցատումով ու ատելութեամբ կը կապիս իրեն համար: Մեր՝ քրիստոնեաներու մէջ ցատումն ու ատելութիւնը խաւարի կը պատկանին: Տէրն մեր լուսոյ, Քրիստոս, կը վարդապետէ մեզի: «Երանի հեղոց զի նոքա ժառանգեցեն զերկիր: Երանի խաղաղարարաց, զի նոքա սրգիք Աստուծոյ կոչեցին»: Եւ կը խորհիմ, Միհրը կենդանի Աստուած մըն է լոյսի, նաեւ Աստուած մը ճշմարտութեան, եւ մեր ամէնուս վրայ պիտի իջի: Ի լոյս, ճշմարտութիւն: Այսպէս չէ՞, շնորհալի կին: Հանդարտ, բայց տաղնապած, եւ իր բոցակարմիր այտերով ու վարանոտ նայուածքներով աչքի զարնող աղուորութեան մէջ Արսինէ հաւանութիւն յայտնեց:

«Մեր մէջ ալ ատելութիւնը խաւար եւ ճշմարտութիւնը լոյս է: Բայց Միհրի թշնամիներուն ատածը խաւարը չէ, այլ լոյսն ու բարին: Միհրը եւս կ'ատէ իր թշնամիները եւ կը հալածէ դանոնք սուրով եւ հուրով: Անոնց արտերը հրոյ ճարակ կ'ընէ, անոնց տաղաւարները կը վառէ: ամէն տեսակ տառապանք եւ կտտանք կը զրկէ անոնց կեանքին մէջ, եւ մաղի պէս բարակ Շինվաթ կամուրջէն վար կը նետէ դանոնք յաւիտենական խաւարին ու չարչարանքին թագաւորութեան մէջ»: Նորէն բոցալառուեցան անոր աչքերը, եւ ընդհանուրին յոռի տպաւորութեան մէջ զղալի եղաւ, որ Աթենակորաս Արսինէի աչքին Միհրի թշնամին կ'ըլլայ: «Այսպէս լոյս լոյսի հակառակ: Ճշմարտութիւն ճշմարտութեան հակառակ», — ըսաւ եպիսկոպոսը հանդուճաւորի պատգամներէ — «Մեր Տէրը ատելութիւն չի ճանչնար, ոչ մէկը կը հալածէ սուրով: Ոչ մէկը կը դատէ, այլ դատողը իր խօսքն ու կեանքն է, սէր միայն կը ճանչնայ, սէր միայն ցմահ, ցմահ խաչին վրայ: Օրհնեց զինքը անիծողները, եւ կ'աղօթէ անոնց համար որ զինքը հալածեցին ու սպաննեցին: Այսպէս պէտք է ընեն նաեւ անոնք որ Քրիստոսի աշակերտ են: — Շնորհալի կին, քրմուհիդ լուսոյ», աղաղակեց յանկարծ Աթենակորաս այնքան բարձրաձայն եւ ազդու, որ Արսինէի վրայ սարսուռ մը եկաւ: «Ձեր Աստուածը ասիկա ալ կը սովորեցնէ՞: — Ոչ»: — Կը սովորեցնէ իր աշակերտներուն աղքատները կերակրել, ծարաւիներուն ջուր տալ, մերկերը հագուեցնել, բանտարկեալներուն այցելել, հիւանդները խնամել: Կը հաւաքէ՞ քրորտները եւ ձեր ձեռքերով կը դարմանէ՞ք դանոնք հիւանդանոցին մէջ: Կը փութա՞ք մահուան սնարը ժանտախտաւորներուն եւ պատրաստ էք մահամերձներուն հետ մեռնիլ: Ձեր ճակատին քրտնքովը վաստակած դրամով կը փրկանաւորէ՞ք բանտարկեալները աւազակներուն որջերէն, կը փնտռէ՞ք կորուսեալները, կ'օգնէ՞ք վիրաւոր ին-

կածներուն: Կը թաղէ՞ք օտար մարդոց դիակները զոր ծովը ցամաք նետած է»: — «Մենք առատորէն կ'օգնենք բոլոր աղքատ ու հիւանդ հաւատակիցներուն»: — «Մենք», աղաղակեց Աթենակորաս, «կ'օգնենք բոլոր մարդոց, որոնք օգնութիւն կը խնդրեն: Մեր լոյսը սէրն է: Որովհետեւ Աստուած աշխարհը այնքան սիրեց որ իր «մէկ հատիկ զաւակ»ը տուաւ, որպէսզի անոնք որ անոր կը հաւատան, չկորսուին, այլ յաւիտենական կեանքը ունենան»: Աստուածայայտնութեան դանդակներուն ձայնին նման հանդիսաւորուցէս, այս բառերը կը թաւալին հաւաքոյթին անձայն լուռութեան մէջ: Խոսրովիդուխտ Արսինէին մօտ պացած կեցած էր, թեւ անոր ձախ ուսին վրայ դրած: Աղջիկը կը զգար, թէ ինչպէս Արսինէ ամբողջ մարմնովը կը դողար, եւ չէր կրնար հասկնալ, ինչու համար: Քրիստոնէից հովիւր սակայն այնքան գորովալից եւ մեղմարարոյ էր: «Շնորհալի կին, կրնա՞մ նոր հարցում մըն ալ ընել քեզի»: — «Հարցուր միշտ», խորտաց Արսինէ, թիչ մը հեղնօրէն մտտ շրթունքը խորշոմելով: «Դուն շատ կը խօսիս մաքրութեան վրայ: Հողիին մաքրութիւնն ալ լոյս է, եւ ամէն անմաքրութիւն խաւար: Եթէ Միհրը մաքուր է, Ահուրայի ընդարձակածաւալ կապոյտ երկինքին պէս մաքուր, ինչպէ՞ս կրնայ հանդուճաւորութիւնը կապոյտ երկինքին պէս մաքուր, ինչպէ՞ս կրնայ հանդուճաւորութիւնը կապոյտ երկինքին պէս մաքուր մատուցուի իրեն կամ իր աստուածարուն քրոջ Անահիտի, իրենց մեհաններուն մէջ: Տէրն մեր Քրիստոս կ'ըսէ «Երանի որ սուրբք են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»: Եւ, «Եթէ ոք հայի ի կին մարդ, առ ի ցանկանալոյ նմա, արդէն իսկ շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում»:

Արսինէ զլուսը թաղած էր կուրծքին վրայ: Մինչ եպիսկոպոսին թափանցիկ աչքերը իրեն վրայ կը հանդէժին եւ կրակի պէս կ'այրէին իրիցին վրայ, Արսինէ, յանդէտս, երկու ձեռքերովը իր ուսէն վար քաշած էր Խոսրովիդուխտի թեւը, եւ միշտ աւելի ուժգին կը սեղմէր երկու ձեռքերովը: Խոսրովիդուխտ հոլանի թեւին վրայ կը զգար Արսինէի սիրտին արագ, ուժով հարուածները: Յայտնի կերպով կը զգար ան, որ Աթենակորաս զինքը կը դիտէր, եւ այս պատճառաւ չէր համարձակեր աչքերը վեր առնել: Եպիսկոպոսին ձայնէն ան հասկցած էր որ այդ մարդը ամէն օրն զիտէ — Վաղարշապատի գաղտնիքը: Կարծես խարոյկի լոյսով կը տեսնէր Վաղարշապատի նուիրական բարեբաստիկ պուրակը, սիրով, լոյսով, երանութեամբ յորդահոսան, թագաւորին հանդէպ նուիրումը — երկնանուէր պաշտօն, — Ահուրայի հետ կապ, Աստուածութեան միջնորդութիւն:

— Սակայն հիմա, «Երանի որ սուրբք են սրտիւք — նոքա զԱստուած տեսցեն», բայց մէկ նայուածքը անգամ կը համարուի — շնութիւն: Ձոհի պուրակը կը մթննայ, լոյսը կը չիջանի աղջամղջին

գիշերուան մէջ, եւ Արսինէի միտքին առջեւ յանկարծակի կը ցորանայ պաակեր մը, որ սարսուռ կը պատճառէ իրեն. թազուհին թագաւորին գիտկին վրայ, դաշոյնը հաւատարիմ սիրտին մէջ: Արսինէ քանի մը վայրկեան մտիկ կ'ընէր միմիայն հեռալուր խորունկ մըրմունջի մը, ծովափին դէմ հեռուէն կոհակներու բախիւնի պէս լուռ գիշերուան մէջէն: Այս մըմունջը եպիսկոպոսին քիչ առաջ արտասանած հանդիսաւոր բառերն էին:

«Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած: Ամենայն ինչ նոյաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ որ ինչ եղեւ: Նոյաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան: Եւ լոյս ի խաւարի անդ լուսաւոր առնէ, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու: Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ դամենայն մարդ որ դալոց է յաշխարհ: Յիւրսն եկն եւ իւրքն զնա ոչ ընկալան: Եւ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն յորդիս Աստուծոյ լինել»: Եւ սա ամէնէն վերջին բառերը, հզօր, ազդու ձայնովը եպիսկոպոսին արթնցուցին Արսինէն. «Եւ Բանն մարմին եղեւ: Եւ բնակեցաւ ի մեզ, եւ տեսաք զփառս նորա, զփառս առ ի հօրէ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ»:

Ամէնքն ալ աչք կտրած մտիկ կ'ընէին, շունչերնին բռնած: Շատ քիչերը դիտէին, թէ ուրիշէջ էր այդ բառերուն ազդիւրը, նաեւ թէ ինչ կը նշանակեն: Պաւլոս ուրախութեամբ ու բարձր ձայնով եպիսկոպոսին հետ միասին ըսած էր վերջին բառը: Ահա անպամ մըն ալ լսուեցաւ Արսինէին ձայնը. «Քահանայդ Քրիստոսի», ըսաւ Աթենակորասի ուղղեալ, փափկահնչիւն ու աղօթական ձայնով: «Ես չեմ կրնար ատել քեզ: Գիտեմ, դուն սպասաւոր ես լուսոյ: Քրիստոսն ալ չեմ կրնար ատել: Անոր մասին քու ըսածդ սուրբ է եւ բարի: Ես ալ կ'ուզեմ անոր հաւատալ: Բայց, մի ըսեր, կ'աղաչեմ, մի ըսեր այլեւս, թէ Միհրը չ'ապրիր, չկայ — ով Աթենակորաս, սա չի կրնար ըլլալ, ըսէ թէ ան կ'ապրի, թէ կայ, թէ Անահիտա իմ աստուածուհին, Ահուրա լոյսին հայրը — թէ անոնք կ'ապրին — սա ըսէ: Դուն գիտես սա: Ո՛հ, մի լռեր»:

Արսինէ այս բառերուն միջոցին ցատկեց ելաւ եւ մեղմաբաց բերանով, չիթ նայուածքներով եւ ձեռքերը առջեւ բռնած, եպիսկոպոսին դիմացը կեցաւ, որպէս թէ մահու կամ կենաց վճիռ մը կը սպասէր, որպէս թէ սա վայրկեանին իր ամբողջ անցեալը արքենի շողարձակութենէն եւ լազուարթ երկնակապոյտէն պիտի իյնայ անդունդ մը խաւարի եւ մոլորութեան, մեղքի եւ անարդութեան: Եւ Աթենակորաս ըսաւ խոհական վերապահումով եւ փորձ հոգեւորականի մը ներողամիտ սիրով. «Ով որդիդ լուսոյ եւ ճշմարտութեան: Դուն կը սիրես լոյսը, եւ լոյսը քեզ պիտի պահպանէ: Դուն կը սի-

րես ճշմարտութիւնը եւ ճշմարտութիւնը քեզ պիտի ազատէ: Տէրն մեր Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Որ ի ճշմարտութենէ լսէ ձայնի իմում»: «Ձեռք կրնար երկու աստուածներու ծառայել: Ունինք հայր մը լուսոյ, որմէ կուզայ ամէն բարի եւ կատարեալ պարգեւ, եւ որուն քով ոչ մէկ փոփոխութիւն կամ փոխանակութիւն կայ լոյսի ու խաւարի: Ճշմարտութիւնն ու զիտութիւնն ալ կուզայ, եւ մենք ունինք Տէր մը, Յիսուս Քրիստոս, որ է լոյս աշխարհի: Նա միայն»: — «Դուք կ'ըսէք Միհրը զաղափար մըն է լուկ, մտածում մը: Բայց Միհրը եւս ծնած է, կ'ապրի տակաւին»: — «Անոր ծնունդին վրայ դուն ինձմէ աւելի գիտես: Աս հիմա հոս մենք քու բերանէդ կը լըսենք: Կ'ուզե՞ս ըսել մեզի, Միհրը ինչպէ՞ս եկաւ աշխարհ եւ ի՞նչ ըրաւ հոն»:

Ամէն կողմէ Արսինէն կը կանչուէր: Աղաչեցին, պաղատեցան: «Աս պէտք է երգեմ, սա չեմ կրնար բառերով ըսել: Տաւիղը բերէք: Ես իմ լոյսիս Աստուծոյն պիտի երգեմ: Խոսրովիդուխտ, առ բեր տաւիղը»: Լուսութիւն Սրահին մէջ: Քրմանոյը ձեմեց վեր վար, խրոխտապանձ վերդ թազուհի, սակաւիկ մը դինի խմեց իր բաժակէն, ամփոփեց պարեգօտին ծիրանեվառ քղանցքը, կայծկլտուն դօտին քիչ մը վեր առաւ լանջքին տակ եւ զժայլելի դիրքի ու դեղեցկութեան մէջ առաւ բազմալար տաւիղը Խոսրովիդուխտի ձեռքէն: Արծաթաթիւղ ու խոր, ստուար հնչիւններ մարդարտայեռ կը փրփրին ընդարձակ վայրին մէջ: Ապա ձայնի բամբ ոլորակումներ: Եւ նրբանուէր, երկայնաձիղ հաստատուեցաւ հոյակապ ձայնը այսպէս. —

«Նուիրական գետի մը ափը կը կանգնէր  
Ծառի շուքին մէջ ժայռ մը:  
Բոլորովին խորհրդաւոր ժայռ մըն է ան:  
Ոչ մէկ մարդ հոն: Կէս գիշերին ահա սկսաւ  
Ժայռը երկնել, ընդարձակուիլ ու լայննալ,  
Ինք իր վրայ ծննդականի պէս գալարուիլ:  
Հուսկ ուրեմն ան բացաւ արգանդը ամրապինդ,  
Սողաց ներսէն պատանեկիկ մը գեղադեմ,  
Կը շողային ականդիքն ու երես,  
Արեգական վնիս փառփուն լոյսին պէս:  
Ծոծրակին վրայ ոսկիի պէս հոսանուտ  
Հերքը ծայծայ սաղաւարտ մ'ալ Փոխուական:  
Մէկ ձեռքին մէջ վաղակաւոր, միւսին մէջ քահ,  
Որ հրակարմիր լոյսով ու բնիկ շողով Միհրին  
Կ'օժանդակէ գիշերուան դէմ յաղթանակին:  
Լոյսին փայլէն հրապուրուած ահա կուգան





Բարի հովիւ, կը պահպանէ անդէորդին հօտն ու դաւար :  
Իսկ երկրի վրայ ցորենն անի լիառատ,  
Եւ օտառուն վրայ հասնին ամէն տեսակ պտուղներ :  
Ս'արդիկ եղան, որ վայելեն ուտեն գանձնի  
Անխրտն ու դիւր անվաստակ, եւ բոլոր փառն Ահուրայի  
Տեսնան ցնձան գորդ մանուկներ անմեղունակ :  
Մ'իհրն է անոնց վերակացուն ու պաշտպան,  
Ու ախոյեանն ապականիչ աստուածին դէմ :  
Ան, — Ահրիման — երաշտութեամբ բոցակէզ  
Կուգէ աւրել փնացնել, մարդն ու արօտ,  
Բայց Մ'իհր իր նօտը կ'արձակէ ժայռի մը դէմ,  
Ու ժայռն իսկոյն կուտայ գետեր ջրալից :  
Այն ատեն ալ չարին կողմէ ահա վերէն ու վարէն  
Օրելով ու շաքաթներով ջրհեղեղներ կը գոռան,  
Ամբողջ աշխարհն ու համօրէն մարդիկն ընել ջրասոյգ :  
Լոյսին բարի Աստուածը ազդարարեց մարդու մը  
Ձիւնն ու բոլոր իր նախիր պատսպարել նաւու մը մէջ :  
Ու մինչ Չարը գիշեր ատեն կրակով  
Աշխարհն ու մարդ, կենդանի, տուն ու ախոռ,  
Ու գեց այրել, մոխրակոյտի վերածել —  
Մ'իհր կրկին բորբոքեց հաւրն իր ցասկոտ  
Եւ վերջ տուաւ իր մեծամեծ գործերուն,  
Ու իր պաշտօնը վերջացաւ երկրի վրայ :  
Անգամ մըն ալ սիրոյ նաչ մը իրեններուն,  
Ոհ, ինչ ճնճոյշ էր այդ նաչը վերնատան մէջ :  
Հրածեշտի վիշտէն բոլորն զգացուած :  
Հաց ու գինին կը պարգեւէ — այսպէս իրենք ալ յաւէտ  
Ի յիշատակ պէտք է ընեն երկրի վրայ :  
Կը մօտենայ ահա ժամը, վայրկեանն ահա  
Կը տեսնեն որ ան անձայն կը բաժնուի իրենցմէ :  
Արեւալոյս նժոյգներով կը համբառնայ  
Ոսկեցնցուղ կայծակնահրատ ծիրի մը մէջ :  
Նժոյգներուն երկու ոտքերն ոսկի, երկուքն արծաթ,  
Ան կ'ակնարկէ — վերէն կ'օրհնէ ու կ'ողջունէ :  
Կը շոռաչէ ովկիանոս, գայն կուլ տալու խայտանձով,  
Բայց իրենները կը լսեն որ ան կ'երգէ բարձունքէն,  
«Արիացէ՛ք, ես գամենայն աւուրս ընդ ձեզ եմ, մանկունք,  
Եւ պիտի գամ ես ղարձեալ, ինչպէս հիմա կը համբառնամ» :

Նուազուն շեշտերը, հազիւ արդէն լսելի, շողիացան միջոցին

մէջ եւ հաւաքոյթին մասնակցողներէն ոչ մին կը շարժէր տեղէն :  
Ապեղէս քար կտրած կը նայէր երգչուհիին, արմուկները ծունկին եւ  
ծնօտը ձեռքին կրթնցուցած : Ոմանց դուրսը խորունկ դէպի գետին,  
ոմանցը ուղղաբարձ, եւ ամէնուն աչքերը կ'երազէին դէպի հեռաս-  
տան : Իշխանը Լիկինիայի երկու ձեռքերը բռնած էր եւ տակաւին  
թող չէր տար, անպիտակ : Խոսրովիդուխտ դուրսը դրած էր երգ-  
չուհիին դեռ սաստիկ շնչող կուրծքին վրայ, իսկ երգչուհին շտ-  
կուած լուռ կը յառէր եպիսկոպոսին, որ ճիշտ անոր դէմ տարածուած  
բաղձած էր ցածուկ բաղձոցի մը վրայ, սպիտակափառ դուրսը աջ  
ափին կրթնցուցած :

Օրհնարանութեան ճնշիչ աղբեցութիւնը եւ անոր անձայն լը-  
ռութիւնը լուծուեցաւ դաւեշտական դէպքով մը : Տրգատ երկար ա-  
տենէ ի վեր, ոչ մէկուն կողմէ տեսնուած, Աքիլլէսի օրինակին հա-  
մեմատ սրահին հետեւի կողմը հլու կամակատար գեղանի գերուհինե-  
րուն իրեն սպասարկել կուտար պտուղ, կարկանդակ եւ գինի, այն  
աստիճան որ բայ ծխնելոյգէն կրակին մօտ մարմարեայ աթոռին վը-  
րայ, ուր նստած էր, քունը տարաւ : Անոր մասին բան մը չէր լսուած :  
Ձինքը տեսնող եղած չէր : Բայց հիմա, հաւաքոյթին ամենախոր  
լուռութեան մէջ, աղօտալոյս հետեւի մասէն սղոցածեւ հատկուած  
շեշտեր ծայր կուտային : Ներկաներու լարուած վիճակը մեղմօրէն  
փախուցի մը լուծուեցաւ, յետոյ յանկարծ նախ թեթեւ, վերջապէս  
բարձրաձայն քրքիջի մը, երբ մէկէն ի մէկ գետինը ինկած մէկու մը  
խուլ շահիւնին վրայ իմացուեցաւ, որ Հայոց իշխանը քունին մէջ  
վար ինկած էր աթոռին ողորկ եզերքէն : Եւ ահա սրահին լուսաւոր  
աջակողմէն երեւցաւ կռակող լեփեցուն զանդուած մը որ զարմա-  
նալի արագութեամբ ոտքի կ'ելլէր եւ աներեւոյթ կ'ըլլար վարագոյրին  
մէջ :

«Փառաւոր վայելք մը պատճառեցիր մեզի, ազնուուհի : Ըն-  
դունէ նաեւ իմ շնորհակալութիւնս : Այս անգամուան համար ալ կը  
դադրի խաղաղ վէճը : Երդդ հրաշալի էր եւ Միհր չի կրնար ասկից  
աւելի փառաւորուիլ» : — «Ոչ սակայն», խօսեցաւ Արսինէ եպիսկո-  
պոսին : «Հիմա կարգը քուկդ է : Երգէ՛ եւ նուագէ՛ դուն ի պատիւ  
քու Քրիստոսիդ, եւ ես պիտի լսեմ ու վայելեմ» : Եւ եռանդով եր-  
կարեց տաւիղը ծերունիին : Ան մերժեց ամէն կողմէ, բայց պահան-  
ջողները տեղի չտուին, եւ պարտաւորուեցաւ երգել կամ պատմել իր  
Աստուծոյն ծնունդը : Եպիսկոպոսը ոտքի կանգնեցաւ, եւ մօտեցաւ  
Տրիտոնեան աղբիւրին շուրջ յարգարուած ջուրի խողովակին : Կէս  
գիշեր էր գրեթէ : «Ժամանակը անցած է, կին դու : Ահա սուրբ գի-  
շերը : Կանուխ պէտք է ելլեմ վաղը : Ձանգակները կը հնչեն եւ հա-

լատացեալները վերարկուններու մէջ փաթթուած կուգան ճրագներ ի ձեռին եւ ես ուրախութեամբ պիտի աւետարանեմ իրենց մեծ ուրախութիւնը որ բոլոր ժողովուրդին համար է: Եկէք վաղը ամէնքդ կանուխ, հոն պիտի լսէք ու տեսնէք»: — «Մեզի համար շատ կանուխ է», ձայնեցին քանի մը երիտասարդ հիւրեր: Եւ ուրիշներ. «Քարոզ չենք ուզեր: Միայն թէ պատմէ մեզի Քրիստոսի ծնունդը»: — «Ձեր սիրոյն համար»: Ու եպիսկոպոսը մօտեցաւ մեծ լայն պատուհաններուն, ճերմակ, թափանցիկ մազաղաթով ծածկուած փեղկերը բաժնեց իրարմէ եւ դուրս նայեցաւ մութին մէջ: Սրահին ներսէն իսկոյն լոյսը խուժեց դուրս եւ անոր ոսկի շողին մէջ հիացումով կը տեսնեն, թէ ինչպէս հանդիսական, անշուշտ լուսեան մէջ գուլայ գուլայ վար կը թափի խաղալով կակուղ խողտուն ձիւնը: Բովանդակ հեթանոսութիւնը լուսը էր փողոցներու մէջ: Եւ ահա միեւնոյն ատեն կը լռէր ան սրահին մէջ ալ: Մեծ մասով հեթանոս էին հոն գլուխները, բայց ամէնքն ալ իրենց ձեռքին համաձայն ձգտում ունէին դէպի Լոյսը: Եպիսկոպոսը չերգեց: Սակայն տեսակ մը երգ էր, օրհնարանութիւն մը առ Միհր օրհնարանութեան պէս, ուստի ամէնքը իրենց ուշադրութիւնը սեւեռեցին հիմակ ալ, ինչպէս քանի մը վայրկեան առաջ ըրած էին Արսինէին համար, ամէնքն ալ ըմբռնուած լուսաւորող մարդուն ցնցումովն ու յուզումովը, երբ կը պատմէր:

«Ու եղաւ որ այն ժամանակին հրաման ելաւ Օգոստոս կայսրէն, աշխարհապիր ընել հոռմէական պետութեան ամէն կողմը: Եւ առաջին աշխարհապիրն էր այս, այն միջոցին երբ Սուրբոյ կուսակալ էր Կիւրենիոս: Եւ ամէն մարդ կ'երթար որ իր քաղաքին մէջ աշխարհապիրն մասնակցի ու արձանագրուի: Նոյնը ըրաւ նաեւ Յովսէփ Գալիլիայէն, Նազարէթ քաղաքէն Հրէաստանի, եւ դնաց Դաւիթի քաղաքը որ կը կոչուէր Բեթղեհէմ, որովհետեւ ինքը Դաւիթի տունէն եւ սերունդէն էր, որպէսզի արձանագրուի իր խօսեցեալ կնոջ Մարիամին հետ, որ յղի էր: Ու երբ հոն հասան, եկաւ անոր ծնելու ժամանակը: Եւ ծնաւ իր առաջին զաւակը եւ խանձարուրին մէջ փաթթեց զայն եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ օթեւանին մէջ ուրիշ տեղ չունէին: Եւ հովիւներ կային միեւնոյն դաւառին մէջ դաշտը եւ գիշերանց կ'արածէին իրենց հօտը: Եւ ահա Տիրոջ հրեշտակը մօտեցաւ անոնց, եւ Տիրոջ փառքը ծագեցաւ անոնց, եւ վախցան մեծ վախով: Եւ հրեշտակը խօսեցաւ անոնց. մի վախնաք դուք, եւ ահա կ'աւետարանեմ ձեզի, մեծ ուրախութիւն, որ բոլոր ժողովուրդինը պիտի ըլլայ, որովհետեւ այսօր ծնաւ ձեզի Փրկիչը, որ է Քրիստոս Տէր, Դաւիթի քաղաքին մէջ: Եւ ասիկա պիտի ունենաք իբրեւ նշան. դուք պիտի գտնէք մանուկը խանձարուրքի մէջ փաթթուած եւ մսուրի մը մէջ

դրուած: Եւ ահա հրեշտակին մօտ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը եղաւ, որոնք Աստուածը կ'օրհնէին ու կ'ըսէին. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Հրեշտակի խօսքերը երբ դադար առին, նոյն լուսեանը տիրեց դարձեալ, ինչպէս Արսինէի երգէն վերջ: Եպիսկոպոսին ճերմակ, ձիւնի պէս պսպղուն մաղերուն վերեւէն անդին կը նայէին բոլոր ներկաները մութին մէջ: Աթենակորաս եւս դարձաւ: Հանդիսաւոր մանիչակադոյն պարեպօտը լայն բարձր ուսերէն մինչեւ ոտքերը կ'իյնար ծանր ու մութ ծալքերով: Ամէն ոք լուռ ներսէն դուրս կը նայէր: Նոյն եւ մի գուլաները յարածուփ կը տեղային: Ներսի կողմը կը կարկաչէր Տրիտոնին ջուրը: Այլպէս ոչ մէկ ձայն: «Գիշեր սուրբ», կ'ըսէր եպիսկոպոսը: Ու լռիկ բաժնուեցան իրարմէ:

Այժմ ոչ մէկ պատճառ կայ Քրիստոնէից Աստուծմէն վախնալու: Իմ Աստուածս ապառաժէն ծնաւ, եւ արեւային նժոյգներով կ'ամբառնայ երկինք ոսկեկառքին մէջ: — Մանկիկ մը, աղքատիկ կնոջմէ մը ծնած, ... մէջ ... Ի՞նչ է անունը ծնած վայրին — Բոլորովին անծանօթ: Ախտին մէջ ... յարդին վրայ — Աշխարհի Լոյսը ախտին մէջ: Արսինէ կը ծիծաղէր մուշտակներով եւ սնդուէ բարձրով յարդարուած բազմոցին վրայ: «Ոոսրովիդուխտ, ի՞նչ է անունը այն վայրին, ուր Քրիստոնէից Աստուածը աշխարհ եկաւ»:

Ուաւարտչին վայրին մէջէն կը նշէր Ոոսրովիդուխտի ամբիծ ձայնը բազմոցին դէմ: Բառ մը միայն, բայց այնքան յուզեալ, այնքան նուիրեալ, որ Արսինէի անգամ ձայնը չելաւ, եւ արտասովոր զգացումէ մը բռնուած, ապշած, խոռված, յուսախարուած, անգամ մըն ալ իմացաւ, բայց շատ մեղմ, «Բեթղեհէմ», մաքրահնչիւն զանգակի մը անհետ եղած շեշտի մը պէս:

Լոյսը դարձեալ յաղթող հանդիսացաւ: Կիւրեղէ վերստին գտած էր Ատտիսը, Իսիս իր Ոսիրիսը, արթնցուցած, վերակենդանացուցած, եւ ի պատիւ անոր դարձեալ կը ծագէր Փերոս-Ապոլոն-Միհր, Լոյսին Աստուածը, որուն փառքը երեք անուններով նոյնքան նուազ որքան հազար անուններով կարելի էր տրուել: Իրեն ի պատիւ Մայր Երկիրը իր դողը կը բանար եւ կը բուսցնէր իր ոյժը, խոտն ու ծաղիկը, կոկոնները կ'ուռէին, Եւոզոս կը բանար սենեակները եւ կ'արձակէր մեղմիկ փափկաթեւ զեփիւռն ու սիւքը, Պոսիդոն ծովը կրկին կը գունազեղէր խորամուխ լիալիր կապոյտով եւ ընդոստ կ'արթնցնէր Նայեաղներն ու Ներէիդները: Պանի հովուական սրինգը կը թնդայ անտառներուն մէջ եւ Փաւոնաներն ու Սատիրաները կը սկսին իրենց

պարերուն: Աթենաս — Պալլաս կրկին սպիտակն ու ոսկեչող կը ճա-  
ճանչէ Ակրոպոլիսի վրայ դէպի վեր, եւ խրոխտ ու վէս կ'ակնարկէ  
դէպի վար Աթէնքի տուններուն շրջիկ ծովուն վրայ, եւ նորաղար-  
թոյց կեանքին եւ շարժումին վրայ մարդոց, որոնք հողմածուկ  
զգեստներով կ'երթան կուզան քաղաքին փողոցներուն, հրապարակ-  
ներուն եւ սինապարգ ճեմելիքներուն մէջէն: Յունաստանի պարունը  
կրկին ահաւասիկ: Արսինէի եւ տղոց պտոյտները վերսկսան: Հայաս-  
տան ահա կրկին կ'երազուէր հեռաձիւղ, լայնատեսիլ բարձունքներու  
վրայ, կամ ստուերամած մենաւոր պուրակներու հովուերգութիւն-  
ներու միջոցին, եւ տղաքը տակաւին կը հաւատային իրենց հօր —  
թաղաւորին յաղթանակին, կը հաւատային թէ ան կ'ապրի, թա-  
ղուհին ալ, եւ հաշիւ կ'ընէին թէ տակաւին ո՛րչափ պիտի պարտա-  
ւորուին սպասել ցլրումն իրենց հելլենական դաստիարակութեան, եւ  
ե՛րբ պիտի զայ ժամանակը հայրենիքի ճամբան բռնելու նոյն նա-  
ւապետին նաւով: Արսինէ, այդպիսի պտոյտներէն մէկուն ատեն  
խօսակցութեան ընթացքին, ամէն ժամանակէ աւելի յայտնապէս զի-  
տեց, թէ Սոսրովիդուխտ քրիստոնէական խորհելակերպին մէջ որ-  
քան զօրաւոր կերպով ազդուած էր Պաւղոսի կողմէ: Սոսրովիդուխտ  
եւս բացէ ի բաց կը խոստովանէր իր մեծ յարգանքը Քրիստոսի հա-  
մար, որուն ծննդեան պատմութեան ամեն ինչն իր զիտէր հիմա: Բայց  
մանկական հաւատքի միամտութենէն ի հարկէ չէր սղասուեր տա-  
կաւին որեւէ քննութիւն, որուն պատճառաւ տարակուսէր Միհրի  
մասին: Ո՛չ, Սոսրովիդուխտին համար հետզհետէ Քրիստոս եւ Միհր  
միեւնոյնն էին, կը հաւատար երկուքին ալ, կ'աղօթէր երկուքին ալ:  
Քրիստոս ալ պարզապէս Աստուած էր լուսոյ, բարի Եազատա մը եւ  
Միհր մը բոլոր աստուածներէն վեր, Աստուած լուսոյ: Սոսրովի-  
դուխտ միեւնոյն յօժարութեամբ, ինչպէս մինչեւ հիմա, կը լսէր  
Միհրի մասին քարոզութիւնը, կը խմէր սուրբ ուտիւնը, կը ծնրա-  
դրէր դարաստանին սրբալուսարին մէջ, ուր դեռ կը պակսէր Անահի-  
տի արձանը: Սոսրովիդուխտ անոյշ, քաղցրաբարոյ էր, միայն թէ  
քիչ մը չափազանց մարդամօտիկ, ինչ որ անսովոր է ընդհանրապէս  
արքայազուն իշխանուհիի մը համար, որովհետեւ Լիկիոնիոսի գե-  
րուհիներուն մէջ Բրիսանոյշէն դատ ունէր նաեւ բաւական թիւով  
բարեկամուհիներ, եւ մինչեւ իսկ անոնցմէ խիստ աննշաններուն եւ  
հակակրեյիներուն հանդէպ չափազանց բարեմիտ ու հոգածու: Ոչ,  
մինչեւ այն ատեն իրեն մնաս հասցուցած չէ քրիստոնէից Աստուա-  
ծը: Նոյն պտոյտներու միջոցին Արսինէ նպատակաւոր կերպով կը  
թողուր որ Սոսրովիդուխտ պատմութիւններ ընէր: Բայց տեսակ մը  
զազանի մխիթարութիւն կը զղար որ Տրդատ այն կողմերը չէր ի մա-  
սին Քրիստոսի կամ անոր հաւատքին, այլ սովորաբար այդպիսի խօ-

սակցութիւններու միջոցին ան կը հեռանար եւ բաւական ժամանակ  
անցնելէ վերջ կը վերադառնար, ամէն անգամ ալ իր արկածախնդրու-  
թեան յաղթական մէկ նշանակը հետը բերելով — երբեմն դեռ ոս-  
տոստուն գորտ մը կամ դօղօշ, կամ օձ, թիթեռներ, ճճիներ, մո-  
ղէզներ, դանազան գեղուններ, ու դաշոյնով ալ զինուած, խնդալով  
կը վայէր Արսինէի եւ քրոջը վրայ, այնքան որ այս վերջինները սուր  
ճիչեր արձակելով տեղէ տեղ կը ցատկէին կը հեռանային: Միհրի  
ճշմարիտ ախոյեանը սակայն կենդանիի այս կոտորածն ալ չէր ըմ-  
բռներ, նոյնիսկ Լթէ ասով Ահրիմանի չար ողիները իբր թէ կը  
պակսին: Արսինէ այսպիսի կոշտութեան դէմ ըստ բաւականին հիմ-  
նաւոր փաստ չունէր պայքարելու համար: Այս զղուելի, անհրապոյր  
կենդանիներուն փճացումը, որոնք խաւարի եւ ստուերի մէջ կ'ապ-  
րին, դիցուք թէ բարի դորժ մ'ընէր: Բայց Արսինէ նկատի չէր առ-  
նէր, թէ այսպիսի աւելորդապաշտութեան մը հետեւանքն էր Տրդա-  
տի միտումը դէպի տիրապետելու ցանկութիւն, որ երթալով անոր  
մէջ կը զօրանար, նաեւ միտումը դէպի բռնական դորժեր եւ մարմնա-  
սիրութիւն, եւ միտքէն ալ չէր ու չէր վախնար, թէ օր մը Հայ իշ-  
խանադունին այս տրամադրութիւնը կրնայ իրեն դէմ դառնալ: Ոչ,  
իրօք տակաւին հիմ չկար այսպիսի կասկածի մը համար: Առ այժմ  
զոնէ ան կը հպատակէր իր Արսինէին ուղղութեան: Կրկին ահա կը  
դառնուէր ան բարձունքին վրայ քաղաքին եւ ցամաքին վերեւ, այն  
մատաղ առիւծը, ամէն ատեն քիչ մը աւելի խոշորցած եւ աւելի  
ուժովցած, եւ կը թողուր որ Արսինէ չոյ՛է փայլայէ իր բաշերը,  
բռնէ կղակր, եւ մերթ խորունկ ու արտակարգ նայուածքներով անոր  
կը նայէր, եւ ջերմապէս համբոյրներ կը դրոշմէր անոր ազուր ու-  
րուրումնակտ ձեռքերուն վրայ: Եւ ճիշտ այսօր, այս դարնանային  
կապոյտ, քաղցրաբարոյ տաւալտուն, — արդեօք խնթեցե՞ր էր Տրդ-  
դատ: Բայց — անպատճառ շարութիւն չէր, որ Տրդատ այս առտու  
չի կրնար հանդարտ պահել իր թեւերը, եւ անոյշ անոյշ ան կը չոյ՛է  
Արսինէն, կը համբուրէ, իր երկայն կակուզ մաղերով Արսինէն կը  
ծածկէ ու նորէն կը մերկացնէ, կը կամթէ զանիկա պոռացնելու աս-  
տիճան, եւ Արսինէ ի դուր կը փորձէ ինքզինքը ազատել անոր թե-  
ւերէն, երբ վերջապէս չարաճճին թեւերը շղթայի պէս կ'անցընէր  
անոր ճիտը, եւ «մանկական» սիրով անոր աչքերուն մէջ կը նայէր  
խորունկ ու թաց նայուածքներով: Այո, տղայ էր ան, իր Տրդատիկը,  
սիրտին խորը մաքուր որեւէ յանցանքէ, եւ բարի ու ճշմարիտ: Եւ  
հաւատարմօրէն ալ կ'աղօթէր Միհրին եւ Անահիտին, Ռեալինը կը  
խմէր, լուռ եւ լուրջ էր պաշտամունքի եւ հրազոհի ատեն: Հիմա ճիշտ  
հիմա Արսինէ կ'ուզէր հարցնել անոր, թէ արդեօք այլեւս համբուրած  
չէ՞ր Բրիսանոյշը, ինչպէս հաստատ ուխտ ըրած էր իրեն, թէ արդ-

եօք այլեւս խօսք տրուած էր անոր որ երբ թագաւոր ըլլայ, պիտի ամուսնանայ իրեն հետ: Ծիկնեցաւ նախ Տրդատ, եւ ոտքի ելած ատենը իր դաստիարակուհիի Արսինէի պատասխան տուաւ այնպիսի տեսարան մը պարզելով, որ առաջին անգամ ըլլալով Արսինէ հասկըցաւ, թէ Տրդատ իր կարծածէն շատ աւելի չափահաս է: Յատկեց բռնեց թեւին վերի մասը դամի պէս ամուր փակչելով անոր, Արսինէ անկարելի էր որ թեւը աղատէր այդ կալանքէն: Տրդատ ճակատը սեղմեց Արսինէին վրայ, բերանը անոր բերանին, եւ երբեցուց զայն ասդին անդին: Արսինէի աչքերուն առջեւ ահա խելայեղ կախարդական աչքեր, լուսացայտ նայուածքներով, կից իր աչքերուն: Խորունկ, հատկաւ ձայնով մը Տրդատ, ազատ համարձակ կոչտ ու կոպիտ ծիծաղով մը քրքջաց, Արսինէն սարսափահար ընելու աստիճան: Յետոյ յանկարծ արձակեց զայն իր ճանկերէն եւ սկսաւ նոյն վարձունքը քրոջը հետ, որ ալ աւելի ապշած ու անդիմադիր, չէր գիտեր թէ ինչ կ'ըլլար: Վերջապէս փոթորիկի հարուածի մը պէս սրացաւ, նախ թուփ մը փրցուց, յետոյ մատաղատունկ եղեւին մը, ապա մըրտենիի բուն մը եւ անխօս բերաւ զայն Արսինէի: Մտածումներու մէջ ընկղմած անխօս ու անբարբառ, Արսինէ եւ Խոսրովիդուխտ, թեւ թեւի տուած հեռուէն կ'երթային անոր ետեւէն:



Աթէնքէն կէս ժամ հետի, մրդաստաններու եւ այդիններու մէջտեղ թաղուած կը մնայ նկարչադեղ պերճութեամբ Ալօփէքէ գիւղապարտի, Արիստիդէսի եւ Սոկրատի ծննդավայրը: Կէս օրուան ճաշին Սիլէն դարձեալ գովասանքով Սոկրատի խօսքը ըրած էր, եւ առաջարկած էր կէսօրէ վերջ եւ երեկոյեան Ալօփէքէ անցընել: Մասնաւոր հրաւեր եղաւ Պաւղայի եւ Յուդիթի, եւ ընկերական խումբը վրան բաց, ուրախ զուարթ երկրուծ սայլով ճամբայ ելաւ: Անվիճելի կերպով Սիլէն մտաւոր կեդրոնն էր խօսակցութեան, եւ ան կրցաւ իր կանխաւ պատրաստած գեղեցիկ խօսակցութեան շնորհիւ մեծերը նախ կապել իրեն եւ մանաւանդ սանձել բռնել շայ Արքայադուներ, եթէ կարելի է այսպէս ըսել: Պաւղա անդամ չէր կրնար ծածկել իր հիացումը Արիստիդէսի մասին, որուն կեանքը կը պատմէր Սիլէն: Արիստիդէսի անունը, Արդար, պատճառ տուաւ վիճարանութեան մը, որովհետեւ Պաւղա, ինչպէս միշտ, հիմակ ալ, նպաստաւոր պատեհութիւնը ձեռք ձգեց եւ իր քրիստոնէական հաւատքին խոստովանութեան համար արտայայտեց, թէ այն միջոցին կարելի էր մարդու մը այդպիսի ստորոգելի «Արդարն» տալ, բայց հիմա այդ անունը մէկու մը միայն կըրնայ տրուիլ արժանապէս՝ Քրիստոսի: Երբ Սիլէն եւ Իշխան Լիկինիոս ընդդիմախօսեցին, Պաւղա դիտել տուաւ թէ իր կարծիքով այսօր ան

միայն կարելի է Արդար կամ Ամենարարի կոչել՝ որ արդարութիւնը կամ ամենամեծ բարիքը բերած է մարդկութեան: Աշխարհի մէջ բարի, լաւ, ամենալաւ բանը, ի՞նչ է, այս մասին խօսեցաւ: Սիլէնի համար՝ Գիտութիւն եւ Առաքինութիւն: Իշխանին համար՝ Գիտութիւն եւ գեղարուեստ: Յուդիթին համար՝ Օրէնք: Պաւղային համար՝ Աէրը: Բացօթեայ ճաշէ մը ետք՝ խումբը պտոյտ մը բրաւ աղուոր դիւղին մէջէն դէպի բացը: Պաւղա իր թեւը առած էր Խոսրովիդուխտը, Լիկինիոս, որ այդ բողբոջին շատ ուրախ եւ զուարթ տրամադրութեան մէջ էր, Արսինէին թեւը առաւ, եւ չուղեց փախցնել աղուոր առիթը ծաղիկներու բոյրով ու մեղուներու բոյրով վարակուած այս հեշտաւէտ դարնանային իրիկուան, իր ձեռքի մեղմ ու կարծ սեղմումով զգալի ընել իր տղուն ապագայ երջանկութեան յոյսերը: Իր գեղանի ընկերուհիին շնորհակալութեան, բայց փոքր ինչ կասկածոտ ծիծաղը բաւական եղաւ որդեսէր հօրը համար, որ յայտնապէս կը խոստովանէր իր դաւկին հարսնացուն ապահովելով՝ հող տարած ըլլալ թէ՛ իրեն համար եւ թէ՛ իր գեղեցկագիտական պէտքերուն համար, որովհետեւ այսպիսի կիներու հետ պաշտոնական շրջադաշտութիւնը գեղարուեստական պէտքի մը իրրեւ գոհացում կը նկատէր: Լիկինիանոս եւ երկար ատենէ ի վեր Արսինէի թեւին տակ զտնուիլը պարսաւելի բան մը չէր համարած: Եթէ ցարդ բացակայ է, պատճառը այն է որ տկարութեան համար պարտաւորուած էր անկողին մնալ, եւ ներողութիւն խնդրել: Արսինէ կը կարմրէր իշխանին իր թեւը մտնելուն վրայ եւ լուռ կը քալէր առաջ: Արդէն ժամանակէ մը ի վեր ինչ ինչ կասկածելի նշաններով իշխանին տղուն իրեն հանդէպ մտերմութեան անմեղութիւնը խնդրական դարձած էր իրեն համար: Առաւօտեան եւ Կէսօրուան ճաշերուն զերին յաճախ կուզար հաղորդել իշխանին. «Իշխան Լիկինիանոս տակաւին կը քնանայ»:

Պաւղա եւ Խոսրովիդուխտ կեցած էին հողէ եւ փայտէ շինուած գեղջկական խրճիթի մը առջեւ: Այս շէնքին շրջակայքը, ինչպէս նաեւ բուն շէնքը աչքի դարնելու աստիճան մաքուր էին: Մացառոտ ցանկով պարտէզին մէջ, որ լիցուն էր ծաղկազարդ պտղատու ծառերով ու ծաղիկներով, բազմապարզ մեղուի փեթակներով, հոս ու հոն կ'աշխատէին, զանազան տեղերու վրայ ըստնուած, մարդ մը, կին մը, եւ քանի մը տղաք: Ասոնք մասնաւորապէս սրտապին ողջունեցին Պաւղան, իրենց տեղերը մնալով հանդերձ: Խրճիթին առջեւ հին փայտեայ նստարանի մը վրայ նստած էին երկու փոքր աղջնակներ եւ կը խաղային տղեկի մը հետ, որ ողորմելի, կոչտ շապիկ մը միայն հագած էր: Մարդ արարած ըլլալը գուշակելով միայն կարելի էր հասկնալ, այնքան կը նմանէր անասունի: Հիւրերը կենալով շրջ

չապատեցին տղան, որ քրոջը դիրկն էր: Սոսկում մը պատեց զամէն-  
քը, բացի Պաւղայէն, որ ընդհակառակն կը շոյէր զայն եւ շաքարե-  
ղէններ կուտար անոր: Տղան կապկանման ձեռքով թանձր, սեւ, մա-  
զոտ թեւը երկարելով, առանց ձայնի նուէրը առաւ Պաւղայի ձեռ-  
քէն, եւ դանոնք բերանը տարաւ: Լայն ու տղեղ էր բերանը, ամուր  
փայլուն ալուաներով լեցուն: Քիթը տափունչ, դրեթէ վերի շրթուն-  
քին փակած: Խոտուցած սեւ յօնքերուն տակ կ'աղբերանային երկու  
անփայլ, խոշոր, արտայայտութենէ թափուր աչքեր, ակնակապիճ-  
ներէն դուրս ցցուած, եւ կատարեալ ապշութեան ահաւոր պաղու-  
թեամբ կը յառէին հիւրերուն, շարժելով հոս ու հոն: Մեքենական  
շարժումներով կը ճանկէր իր մարմնին այս ու այն կողմը եւ շարու-  
նակ կ'ուտէր: Այս անդեղեայ միտածին նայուածքը ամէնուն վրայ  
արդարեւ սարսափազդու տպաւորութիւն մը կ'ընէր բաց ի Պաւղա-  
յէն: Խոտուրդուրով վախով կը կենար, Պաւղայի թեւէն բռնած, եւ  
երբեմն աչքերը արցունքով կը լեցուէին: Տրդատ կը կենար կը դիտէր,  
սրունքները իրարմէ բաց, եւ ղլուխը առջեւ երկարած ճիշտ տղուն  
մօտիկը, եւ զայն կը դիտէր լուրջ հետաքրքրութեամբ եւ անյայտ  
սոսկումով: Լիկինիա, արդահատայից, իր կարեկցութիւնը կը յայտ-  
նէր կրկնակի կոչերով: Իշխանը զղուանք կը զգար եւ կը ստիպէր որ  
հեռանան: Սիւն, շատ զգացուած, ձայնեց. «Սարսափելի է աս, ոչ  
մէկ ըմբռնումի ընդունակ»: Արսինէ սակայն ձայնեց գրգռուած,  
«Ահրիմանի ստեղծուած է աս: Ինչո՞ւ մնաց կեանքի մէջ»: Իշխանը  
հանդարտօրէն համամիտ դտնուեցաւ Արսինէին, եւ նոյնիսկ յայտա-  
բարեց, թէ իր տեսութեամբ այսպիսի միտած մը պէտք էր փճացնել,  
ինչպէս հին ատենները միշտ կ'ըլլար: Այսպիսի կերպարանք մը կը  
խանդարէ համաշխարհային պատկերին ներդաշնակութիւնը, եւ դար-  
գացած մարդոց վրայ զղուելի տպաւորութիւն կը գործէ: Բայց Պաւ-  
ղա չէր դադրեր փայփայելէ դժբախտ տղուն ղլուխը, եւ ձայնեց  
բարձր ձայնով անոր անունը. «Յովհաննէս»: Եւ ամէնքը կը տեսնէին  
թէ ինչպէս, այս անունին վրայ, երկու աչքերը սկսան ողբերուել:  
Նայուածքը կառչեցաւ Պաւղային: «Հէք, կապուած արարած, սպա-  
սէ, սպասէ, դուն ալ ազատ պիտի ըլլաս ազատութեամբ Աստուծոյ  
որդիներուն»: Այսպէս խօսեցաւ Պաւղա սրտառու ձայնով եւ ձայնեց  
ծնողքին: Մայրը մօտեցաւ, նիհար խոշոր կին մը, սսկրոտ, ոչ-դե-  
ղեցիկ երեսով, որուն սակայն անկեղծ ու հրապուրիչ արտայայտու-  
թիւն մը փոխ կուտային բարութեամբ ու փայլով լեցուն երկու հան-  
դարտ աչքեր:

«Սաղաղութիւն ընդ քեզ, Յուլիա», ողջունեց Պաւղա կինը: «Եւ  
ընդ հոգւոյդ քում, մայր Պաւղա», եղաւ պատասխանը: «Յոյց տղուր

այս Պարոններուն եւ Տիկիններուն, թէ քրիստոնէական մայրենի սէ-  
րը ինչ ընելու կարող է», փափաք յայտնեց Պաւղա: Տղուն մայրը ան-  
միջապէս հասկցաւ Պաւղայի միտքը, քայլ մը առաւ դէպի տղան,  
անոր նայեցաւ եւ լայն բերանը կնճռեց անխօս փոխադարձ ծիծաղի  
մը համար: Տղուն աչքերը լուսարձակ շող մը ստացան: Սեւեռեց զա-  
նոնք մայրիկին վրայ, որ դարձապէս սիրով բարձր ձայնով անոր  
անունը տուաւ: Տղան քանի մը անասնական, սուրբ ճիշեր արձակեց:  
Դաժան, ձուռպէմ երեսը փոթոթեց յայտնի ծիծաղի: Ուրախութիւն  
եւ երջանկութիւն չողացին անոր վրայ: Թեւեւը յամբօրէն երկարե-  
ցան դէպի մայրը, որ իսկոյն սեղմեց տղեկը իր կուրծքին վրայ: Հէք  
մտնուելը հիմա մայրական կուրծքին բարձունքէն յաղթական կը նա-  
յէր վար ամէնուն վրայ: Լիկինիա եւ Խոտուրդուրով զարմացումի  
ճիշեր արձակեցին: Արսինէ դէպի ետ քաշուեցաւ սարսափահար եւ  
իրեն ձայնեց տղաքը: Լիկինիոս, ջղայնացած, երթալ փութաց: Սի-  
լենոս Տրդատին թեւը բռնեց եւ ըսաւ վարդապետելով. «Կը տեսնե՞ս,  
հոս ալ, ինչպէս կենդանիի մը վրայ, բան սովորու, ըմբռնելու բան  
կայ»: — «Ոհ, Սիլենոս», ձայնեց Պաւղա, բարութեանէն ճառագայթ-  
արձակ, «ձեզ սա քու ողորմելի դիտութիւնդ ու ըմբռնումդ: Գուշա-  
կութիւնները կը չքանան, լեզուները կը դադրին, դիտութիւնը կը  
համբանայ: Այլ կը մնան Հաւատք, Յոյս եւ Սէր, այս երեքը, եւ  
սէրը մեծագոյն է ասոնցմէ»: — «Քանի՞ կը վաճառես ինձի քու հէք  
ղաւակը»: Մայրը անչափելի զարմանքով Պաւղային նայեցաւ, յե-  
տոյ ճառագայթուն դէմքով ձայնեց ու ծիծաղեցաւ հեղնօրէն. «Չա-  
լակս ծախե՞լ: Ոչ իսկ Աստուծոյ զահոյքին փոխարէն»: — «Ինչո՞ւ  
զայն Յովհաննէս մկրտեցիր»: — «Որովհետեւ մեր բովանդակ եր-  
ջանկութիւնն ու օրհնութիւնն է այն»: — «Ձեր երջանկութիւնը»,  
ձայնեց Արսինէ հեղնելով, «բրածդ կատակ է եւ կը ստես: Խաւարի  
այս ծնունդը ինչպէս կրնայ քու երջանկութիւնը ըլլալ»: — «Գնա  
կորսուէ ասկից, հեթանոսուհի», աղաղակեց տղուն մայրը, անոր  
սեւ աչքերը բորբոքեցան, բռունցքները զնդացան: Արսինէ ետ քաշ-  
ուեցաւ, բայց երկուքին միջեւ կռուելու պատրաստ եկաւ կեցաւ Հա-  
յոց Մեծաց Արքային գահաժառանգը: Պաւղա կամացուկ մը բառ մը  
ըսաւ Յուլիայի, եւ անոր դէմքը կրկին ցոյց տուաւ ասկից առաջ-  
ուան բարութիւնը, կռուի ըրած ձեռքը բացուեցաւ եւ երկարեցաւ  
դէպի հեթանոս քրմուհին. «Ներէ բարկութեանս: Մենք քրիստոնեա-  
ներս պէտք չէ բարկանանք»: Շինականի կորովով Յուլիա սեղմեց  
Արսինէի ձեռքը՝ զոր ան վարանումով երկարեց եւ ըսաւ անոր անմո-  
ռանալի բառ մը, «Կ'աղօթեմ Աստուծոյ որ քու կեանքիդ մէջ քեզի  
պարգեւէ գոնէ կէսը միայն այս սիրոյ, զոր այս տղան ամէն օր կ'ըն-  
դունի մեր ամէնքէն»: Այս խօսքը յայտնի տպաւորութիւն մը գործեց

Արսինէին վրայ: Վերադարձի ճամբուն վրայ եւ տունն ալ իշխանին մօտ այս դէպքը խօսակցութեան նիւթ եղաւ: Իշխանը, Սիլէնը եւ Արսինէն միշտ այն կարծիքէն էին, թէ այսպիսի էակներ չեն պատշաճիր աշխարհի, եւ այսքան բազմածախս ու շռայլ հոգածութիւն մը ժամանակի եւ ոյժի վատնում է, որմէ դժբախտ էակն ալ որեւէ օգուտ չի քաղեր: Յուզիթ եւ Պաւղա կը պնդէին Հին Կտակարանի պատուիրանին վրայ. «Մի սպանաներ», եւ այս պատուէրին դէմ բացառութիւն չէին ընդուններ: Բայց Յուզիթ սա կարծիքէն ալ էր, որ այս տղուն կրած տառապանքներուն մէջ որեւէ չափով կամ ձեւով անոր ծնողքն ալ յանցապարտ է: Որովհետեւ այսպիսի դժբախտութիւն մը, ինչպէս նաեւ անդաւակութիւնը, Աստուծոյ մէկ պատիժը պէտք է ըլլայ: Արսինէ եւս իր կրօնքին բերումով համամիտ գտնուեցաւ ասոր: Պաւղա եռանդապին պաշտպանեց չէք արարածին ծնողքը իր կեանքին ընթացքովն ու փորձառութեամբը: Բայց Յուզիթ կը պնդէր, թէ այս դժբախտութիւնը մէկու մը յանցանքէն կ'ըլլայ: Պաւղայի համար անկարելի էր ընդունիլ հօր մը ամուսնութենէն առաջ անցուցած կեանքը բարոյական յարաբերութեան մէջ ըմբռնել յետագայ դէպքերուն հետ: Այս կէտը Աստուած միայն գիտէ: Բժիշկ Վալերիոս այդ բնույթին ներս մտած էր, եւ սրտագին ողջունելէ ետք, իսկոյն մասնակցեցաւ սիրով այս հետաքրքրական խօսակցութեան: Ան յայտնեց թէ Յուզիթ իրաւունք ունէր ոչ սակաւ պարազաններու մէջ: Բայց այսպիսի դէպքերու համար միշտ յանցապարտութիւն ենթադրելը կամ ընդունիլը անկարելի է եւ անարդար: Բժիշկը ալ աւելի երկար խօսեցաւ եւ իր փորձառութենէն պատմեց երկու տեսակէն ալ դէպքեր, որոնք ընդհանուր զարմանք պատճառեցին: Յետոյ բացատրեց վիժածի մը բնական պատճառը եւ իր գիտնական ու բազմահմուտ բանախօսութեամբը կախարդեց բոլոր ունկնդիրները: Բայց բնական բացատրութիւն մը չբաւեց ամէնուն: Յանցապարտութիւն կամ ոչ յանցապարտութիւն: — Վերջին պատճառը դարձեալ միշտ Աստուծոյ անքերնելի կամքին կը մնայ: «Արդարեւ, ուր որ ծնողքներուն խիղճը կը խօսի, իրենց զաւակը իրենց մեղքը կը կրէ, եւ անոր անմեղ տառապանքը պէտք է գոնէ օժանդակէ՝ իր ծնողքին սիրտը առ Աստուած դարձնելու: Անոր անմեղ վշտակցութեան մէջ կը յայտնուի մեղքը, միանգամայն Տիրոջը արդարութիւնը, որ կատակ չի վերցնէր: Եւ նոյնիսկ, երբ մեղք ալ չկայ, դարձեալ Տիրոջը կամքին համեմատ չէք մանուկը կը կրէ ամէնուն հետ ամէնուն մեղքը: Անբարբառ, համր արարած մը, որ ինկած է մեղքի, կարօտութեան եւ մահուան թագաւորութեան մէջ, այս անիծապարտ աշխարհին մէջ: Կը հեծեծէ անգիտակ, բաղձալով փրկութեան, որպէսզի անցեալին ծառայութենէն դառնայ մտնէ Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեան

կողմը: Աստուած կ'ուզէ որ ան տառապի: Ան իր անխօս վշտակրութեամբ պէտք է ըսէ «Տեսէք դուք, ով մարդիկ, այսպէս չէի ըլլար ես, եթէ Աստուած ձեր մէջ ըլլար, ես ապուշ չէի ըլլար, եթէ դուք իմաստուն ըլլայիք. ես կապուած չէի ըլլար, եթէ դուք ազատ ըլլայիք եւ Աստուծոյ միայն ծառայէիք ի սկզբանէ անտի: Ամէնուն մեղքը կը ծանրանայ իմ՝ հէք տղուս վրայ: Ուր որ Աստուած ձեր մէջ ըլլայ, հոն ամբիժ փրկութիւն եւ առողջութիւն կ'ըլլայ, ոչ մէկ կարօտութիւն, ոչ մահ: Ես կ'ուզեմ օգնել քեզի, Աստուածը փնտռել ու գտնել, ով հէք ծնողք. ես կ'ուզեմ ձեզի սէր սովորեցնել եւ խոնարհամտութիւն եւ երկայնամտութիւն, ես ձեր խաչն եմ, բայց ձեր խաչը ձեր վերին երանութիւնը պիտի ըլլայ, անոր միջոցաւ Աստուծոյ հուժեան նմանող պիտի ըլլաք: Ողորմած պիտի ըլլաք: Այսպէս կ'ըսէ այս տղան: Ես գիտեմ ասիկա», ձայնեց Պաւղա ողբերգուած, մինչ միւսները կը խնդային, «ես գիտեմ ասիկա, տղան պիտի օգնէ աշխարհը ազատելու, պէտք է խաղաղութիւն առաջ բերէ, պատերազմները վանէ եւ Աստուծոյ թագաւորութիւնը ներգործէ: Ուստի մարդ պէտք չէ սպաննէ ամէնէն խեղճերէն ոչ մէկը, երբեք անհամբերատար չըլլալ հանդէպ անոնց, որովհետեւ դանոնք կ'ուզէ Աստուած, եւ Քրիստոս դանոնք կ'օրհնէ»: — Գիշերը ոչ ասեն Արսինէ պարտաւորուեցաւ ձեռք առնել դարձեալ տաւիղը: Կէս գիշեր էր գրեթէ, երբ Արսինէ դարձեալ երւեց իր Միհրական գեղօններէն մին, զմայլում առթելով ամէնուն:

- Հարցս քեզի, պատասխան տուր, Անուրա:
- Սկիզբէն ո՞վ հայրը մաքուր էակներուն:
- Ո՞վ պրետուն եւ աստղերուն շինեց ճամբան:
- Ո՞վ պատճառեց աճումն, հիւժուժը լուսնին:
- Աս եւ ուրիշ բաներ գիտնալ կը փափաքիմ, ով Մագդա:
- Ո՞վ կը բռնէ անսիւն երկիրն, որ չիյնայ.
- Ո՞վ ջուրերը, ծովն ու լեռներ ու ծառեր:
- Ո՞վ քեւ յօդեց ամպրոպներուն եւ հովերուն:
- Ո՞վ արարիչ մարդոց: Կ'ըզձամ գիտնալ գայն,
- Եւ այլ բազմիցս ըզձամ գիտնալ կաթոգին:
- Ո՞վ ի բարին մարդոց շինեց լոյսն ու խաւար:
- Ո՞վ կերտեց ֆունն ու արքնութիւնն ալ նայապէս:
- Ո՞վ գիշերներն ու արշալոյսն ու միջօրէն:
- Ո՞վ Օրէնքին ու չափին խորհող մարդը ստեղծեց: —
- Սուրբ հոգիով, առողջ միտքով, մաքուր բանիւ եւ գործով
- Ո՞վ տուաւ մեզ լիութիւն, անմահութիւն եւ բարիք,

Եւ բանական, իմացական հաննար, ըսէ, ո՞վ, Ահուրա :  
Դուն ալ սուրբն ես երկինքներուն երկինքին :

«Հատ մըն ալ, հատ մըն ալ, Արսինէ . . . Ախ, հատ մըն ալ  
դոնէ — Համառօտ հատ մըն ալ լոկ» : — Արսինէ սիրուն ժպիտ մը  
ունեցաւ եւ ցոյց տուաւ փառաւոր ատամնաշարր, յետոյ զլուխը ծը-  
ռեց դէպի ետեւ բարձրոցին եղերքն ի վեր, եւ կը մտածէր, աչքերը  
դէպի ձեղուն բարձրացուցած : Եւ ահա հիմա մտաները թելերուն վը-  
րայ : Աշխոյժ, դաշն, թել թել շեշտեր եւ ամանակներ կը թնդային,  
մարդարիտներու պէս կը քակուէին տաւիղէն : Արսինէ յանպատրաս-  
տից կ'երգէր . —

Թրքոացուր լարերդ դուն, ով իմ տաւիդ,  
Գեղեցկագոյն եղանակներն հնչեցուր .  
Տաղիկ մ'անգամ հրաշաֆնէոյ ի կը ներգործէ  
Օրհնաբանել ու երգել դրուատիքը լոյսին :  
Թէ չգտնես պատկան ձայներ, ով իմ տաւիդ,  
Ոչ մէկ գեղօն ըստ արժանւոյն կրնայ նկարել  
Գովարանել լոյսը, այն լոյսն աստուածեղէն,  
Ոսկեցնցուդ նառագայթներն արեգական :  
Շողիկդ դու Ահուրայի երեսին,  
Ուղղուած այս ստուերամած երկրին վրայ :  
Կայծք դու շողակնայեռ երկնաբնակ գունդերուն,  
Երկրագունդին կուտաս սնունդ եւ ջերմութիւն  
Քու բոցաթեւ փայլակումով ու նաճանչով,  
Բոցալեզու քու բերանով կ'աւետես  
Թէ մարդիկ «Որդիք Լուսոյ կոչեսցին» :  
Դուն երփներանգ կը հիւսես պատմութեան երկրին,  
Կեանքով . խինդով կը տոգորես ամէն բան :  
Դուն կը կակդես սրտին ցաւերն ու տառապանք,  
Դուն լուսափայլ եւ մեծայաղթ արեգակ :  
Քեզմով երգը կ'արթննայ թեւառորին կուրծքին մէջ,  
Անոյ բոյրը գեղատեսիլ վարդին մէջ :  
Ով որ կ'ապրի ու կը շնչէ, բերկրապատար կը ցնծայ  
Ու բազմերանգ ու բազմաձայն կ'օրհնաբանէ քեզ յաւէտ,  
Բիւրաւորներ քեզի համար պարանցիկ՝  
Ծանր հոգերէ ազատուած փառփոյ համար կը դառնան,  
Փոշիներն իսկ թունդ հանելով քու շողով,  
Գոզցես անոնք մաքուր ոսկի ըլլային : —  
Լաէ, տաւիդ, թող մարի երգս անշունչ,

Անհնար է որ յաջողիս դուն երբեք  
Գտնել շեշտը վեհինաքեմ, գերամաքուր,  
Լոյսին մասին գեղօնիկ մը երգելու :

Ձայնանիշերը, տրտմահողորդ, թախծալին, հաղիւ ահա լսե-  
լի, կը մարէին կ'անհետէին դէպի հեռաստան, կարծես հոս, օտար  
երկրի մէջ հնչելէն ամօթահար : Արսինէ դարձեալ հայրենակարօտ ու  
մեղամաղձիկ, զլուխը հակեց խորը ետեւ : Հրաժեշտի պահուն Պաւղա  
չկարողացաւ շարժակալութեամբ փոխարինել Արսինէի արուեստէն  
կրած յուզումը : Թեւերուն մէջ առաւ սեղմեց զայն եւ համբուրեց :  
Արսինէ ապշահար ետ քաշուեցաւ : Պաւղա այս իրիկուն ալ նորէն իր  
առջև եւ իրեն հակառակ քրիստոնեայ ատելի անունը տուած էր :  
Այս իրիկուն, այս տեղ իսկ փորձեց Պաւղան ատել իր բոլոր ուժովը,  
բայց չէր կրնար : Ան կ'ուզէր ճշմարիտ ըլլալ, ճշմարիտ եւ անա-  
ղարտ, լուսաւոր ու մաքուր մինչեւ հողին խորը : Եթէ կ'ուզէր ճըշ-  
մարիտ ու լուսաւոր ըլլալ, պատրաստ էր ուրեմն սիրել Պաւղան, ու-  
րովհետեւ ան ալ կը փնտռէր ճշմարտութիւնը, կը սիրէր լոյսը : Անոր  
հոյակապ սքանչելի աչքերը . . . Ոհ, սա Պաւղային ահանողիքը, ան-  
քննելի սիրով դեղուն . . . Այսպէս խօսեցաւ Արսինէ ինքն իրեն մէջ :  
Եւ ճիշտ ահա իրիկուն արձագանդի մը պէս իր սիրտին մէջ կը հըն-  
չեն Պաւղայի բառերը . «Արդ, կը մնան Հաւատքը, Յոյսը եւ Սէրը, եւ  
ասոնցմէ մեծագոյնն է սէրը» : Ու քնացաւ : Երազին մէջ խոռովիչ  
սարսափ մը . Պուշխանկտա, փոքր, զունատ, վտիտ դեւը, իրեն մօտ  
եկաւ եւ ստտանայաբար ծիծաղեցաւ եւ ձայնեց բաժնուելու ատեն .  
«Սիրէ զայն, սիրէ զայն, սիրէ զայն, Արսինէ» : Եւ դարձեալ կ'երե-  
ւար զետինը :

## Վ Ա Ր Դ Ա Վ Ա Ռ

«Երբ կը փթթին դարձեալ ծաղկունք, դարձեալ ծաղկունք» ...  
Կ'երդէր Արսինէ ինքն իրեն, երբ իրիկուն մը դղեակին դարաստանին  
մէջ իշխանին հետ առանձինն միւս հրաւիրեալներուն գալէն առաջ,  
կը ճեմէր եղեւնուտքը տանող ճամբուն վրայ:

— Երբ կը փթթին դարձեալ ծաղկունք, յետոյ ի՞նչ, աղջիկս:

— Ես դեռ չկամ, խնդաց Արսինէ:

— Ինչո՞ւ համար դեռ ոչ, կատակելով յանդիմանեց իշխանը:

Ձաւակս Լիկինիանոս յաջողութիւն ունեցած է արշաւանքին մէջ:  
Կայսեր գովասանքին արժանացեր է, ինչպէս Գալերիոս կը գրէ իրեն  
Հայաստանէն: Կը յուսացուի որ աստիճանի նոր բարձրացում պիտի  
ունենայ: Բայց ինչպէս իրմէ իմացած եմ, հպարտ քրմուհին ինքնա-  
կալով միայն կը գոհանայ:

— Ոհ, եթէ Լիկինիանոս ինք իր անձին վրայ կարենար գոնէ  
ինքնակալ մը ըլլալ, պատասխանեց Արսինէ լրջութեամբ:

— Ատիկա ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ ուրիշ կերպով եթէ ոչ Ար-  
սինէի հետ ամուսնութեամբ եւ ատիկա կը յուսամ քու ազդեցութե-  
նէդ, Ազնուամեծար Իշխան, բայց պէտք է այրը հրամայէ կնոջ: Ին-  
ծի կը թուի, թէ այր մը մինչեւ վերջը չի կրնար հանդուրժել կնոջ  
առաջնորդութեան, եւ եթէ ատիկա իրեն համար օգտակար ալ ըլլայ,  
ուղիղ կին մը ասով երջանիկ չի կրնար ըլլալ, այսինքն ունենալ այր  
մը, որ չի կրնար ինք իրեն հրամայել եւ հպատակիլ ինք իրեն: Եւ...:

— Եւ ... յորդորեց իշխանը Արսինէն որպէսզի խօսքը շարու-  
նակէ:



— Ախ, ով բարի եւ հայրագութի բարեկամ, միշտ անպակաս ըրէ քու սէրդ ինձմէ, եթէ նոյնիսկ չկարենամ բռնադատել սիրտս: Ես, այո, շատ տկար եմ, շատ անապահով եմ ներքին ճանաչումով, շատ ... շատ պղտիկ եմ սիրոյ մէջ, եւ այս ճամբուն վրայ շատ, շատ բաներ կան:

— Ի՞նչ ուրեմն:

— Չեմ կրնար ըսել:

— Ինձի՞ ալ ոչ, աղջիկս:

Իշխանը թեւր անցուց Արսինէի մէջքին, անոր աչքերուն նա-  
յեցաւ բարեմօտն ու մտերմիկ, եւ ըսաւ.

— Արսինէ, կ'ուխտեմ քեզի քու սրբավայրիդ վրայ. իմ հայ-  
րական սէրս անպակաս պիտի մնայ քեզի, Լիկինիանոսը ընտրես թէ  
ոչ: Ուստի վստահացիր ինձի: Ուրիշ մը աւելի՞ կը սիրես:

Արսինէ լուռ մնաց եւ կարմրելով զլուխը կախեց:

— Ապեղէ՞սը:

Արսինէ զլուխը շարժեց ժխտելով:

— Վիզիլիոս նկարի՞ չը:

— Վալերիոս բժի՞ չը:

Արսինէ. — Հա՛յր Լիկինիոս, ես քու դաւակղ ամէնքէն աւելի  
կը սիրեմ, դայն միայն կը սիրեմ, բայց ...:

Կեցաւ:

Բայց խօսէ բացէն, վստահութիւն ունեցիր:

— Ես ... կը վախնամ սուրբ Մովսէսէն:

Արդէն սովորական ակումբը եկած հաւաքուած էր:

— Հիմա, քիչ մը ետքը քու մեծ տօնդ պիտի տօնուի, Արսինէ,  
ձայնեց Իշխանուհի Լիկինիա:

— Վարդավառ, ձայնեց Արսինէ խանդավառ, եւ վազեց իշխա-  
նուհիին կողմը: Ինչպէ՞ս կրնամ շնորհակալ ըլլալ ձեզի ազնուամե-  
ծար ասպնջականներ, որքան բարութիւն ցոյց տուիք մեզի, եւ հիմա  
այս տօնը, իմ Աստուածուհիս տօնը, անոր Վարդատօնը:

Պաղպաղ, Յուզիթ, արուեստագէտները, բանաստեղծները, ամ-  
բողջ ակամբաւոր հիւրերը, ամէնէն աւելի երիտասարդները երկուսն  
այնտեղ էին ամէնքը: Խօսակցութեան նիւթն էր տօնը, ուրիշ ամէն  
նիւթէ գերազանց ողիով եւ վեհ ճաշակով: Բայց, հակառակ ամէն  
պնդումի, Արսինէ բնաւ բան մը չհրապարակեց «զաղտնիքին» վրայ,  
որուն մասին ամէնքը գիտէին եւ կը խօսէին:

Տօնը եկաւ: Բոլոր մասերու կարգադրութիւնը յանձնուած էր  
Արսինէի կամքին: Անահիտի յատուկ տօնը պիտի ըլլար, ըստ ամե-

նայնի Հայկական սովորութեամբ, առտուն կանուխէն մինչեւ ամառ-  
նային այս զով եւ աստեղածիծաղ դիշերը: Ճշմարտապէս Վարդատօն  
մը: Կարմիր վարդեր, ոլորուն, ծալ ի ծալ դրասանքներով դարաստա-  
նին սպիտակ կճեայ արձաններուն շուրջ պատաղիճ կազմած, ճեր-  
մակ վարդեր, սեղաններուն եւ խորաններուն սալաքարէ սիւններուն  
փաթթուած: Վարդեր, վարդեր, դեղակին վեհիւնածեմ սիւններուն  
չուրջ, ներսը, դուրսը, վանդակապատերուն շուրջ, աղբիւրներուն  
չուրջ: Հսկայարեւմ վարդակամարներ դրանդիներու պէս, յաղթական  
կոթողներու պէս, որոնց ներքեւ հիւրերը, իրենք ալ յոտից ցզլուխ  
վարդերով ծածկուած կը ձեմէին խնդամիտ, եւ ամէնէն աղուոր,  
գեղանի, պճնաւոր գերուհիները կը պատուասիրէին, վարդապսակ:  
Մով մը վարդերու, կամ ծով մը վարդաստան: Կոհակաձեւ տատա-  
նում մը գզլիւիչ բուրմունքի: Ամէնուն վերեւ ալ Ելլադայի ամառնա-  
յին երկինքը: Բոցակիծ տապ մը կենդանի ալերու ընդոտ ցայտում-  
ներով միայն դոյզն ինչ մեղմացած: Նստիլ եւ ուտել, ոչ բնաւ այս-  
օր այսպէս, ոչ բնաւ սովորական աղանդեր: Ժուռ գալով, կենալով,  
նստելով, պառկելով միանգամայն կ'ուտեն կը խմեն ըստ պիտոյից  
եւ նախասիրութեան, ամենաթանկ պտուկներէ, ամենազգի անօթնե-  
րէ ոսկեձոյլ, արծաթակուռ, ճենապակեայ, բիւրեղեայ, իսկ ըմպա-  
նակները բաժակ, գաւաթ, ապակեղէն եւ եղջերային, ամէնքն ալ  
վարդապալար պարուրուած: Բոլոր հիւրերը սպիտակազգեստ, ճա-  
ճանչաւուխտ պարեգօտ, թեթեւ թափանցիկ, գալարուն, հանդէճ  
լօղիկ, հոլանի թեւ, վիզ, ծոծրակ. ստքեր բոկ, կամ ճերմակ հողա-  
թափով, որուն խրացը — ինչպէս դօտիներն ու ապարօշները — պըս-  
պըղուն քարերով ու մարդարիտներով յեռուած: Լաւազոյն երգիչ-  
ներն ու երգչուհիները եւ երաժիշտները այսօր իրենց արուեստը կը  
նուիրէին օտար Աստուածուհիի մը: Այսուհանդերձ, ամէնէն հոյա-  
կապ նուազները եւ դաշնակութիւնները հեղեղի պէս կը յորդէին կը  
գետահետէին առաւօտէն մինչեւ գիշեր քրմանոյշին հազագէն ու տա-  
ւիղէն:

Արդարեւ, այսօր Արսինէ իր ոսկեման ասեղնագործ եւ լայնշի  
ոսկեհուռ եղբերքներով ծուփ ի ծուփ սնդուսէ լօղիկին մէջ, երկար,  
բաց թեղանիքներով, փարփառ դորշապահանդը լանջքին եւ շողար-  
ձակ ապարօշը գլխուն վրայ, որոնց կարանին մէջ յեռուած կը պըս-  
պղան ոսկի արեւակներ ու լուսնակներ, ու այսօր մանաւանդ, գեր ի  
վեր պայծառութեամբ, վարդերու բոյլ մը անոր ալեծուփ հերքին  
մէջ, լանջքին ու լօղիկին վրայ, բերկրապատար դէմքովը, քրմանու-  
շանային նուիրումով արտափայլած, — այո, այսպէս արփիանոյշ  
Արսինէն աստուածացաւ ամէնքէն, բաց ի Պաղպաղէն եւ ուրիշ մի

քանի մոլեռանդ մարդոցմէ: Իշխանը՝ Լիկինիոս Արսինէին քովէն անդին չէր երթար, եւ հարեւանցի միայն կը մասնակցէր հոս կամ հոն տեղի ունեցած ուրախութեան մը, քաղաքաւարութեամբ կը հետեւէր միւս հիւրերուն շարժումներուն եւ բնաւ չէր թերանար իր փափուկ փոքրիկ հողածուծութիւններուն մէջ ասոր կամ անոր համար, իր դէմքը փոքրիկ հողածուծութիւններուն կը ճառագայթէր սրամտութիւններու պատճառաւ ուրախութեանէն կը ճառագայթէր սրամտութիւններու հանդէպ: Սիւէն իր հին կարմիր հողաթափերուն վրայ մէջմէկ ճերմակ վարդ կը կրէր, եւ չէկ մաղերու շուրջ ճերմակ մեխակներու փունջ մը: Տունին վարժապետը բազմազարդ շարաթներ անցուցած էր: Իբրեւ պաշտօնական բանախօսը եւ արտասանողը իշխանին դատեր տուած էր եւ մասնաւոր արտասանութիւններ ըրած էր, այնպէս որ այսօր իր դէմքը շատ տփուռնած էր, իր հողաթափերուն վարդերուն նման, եւ իր ճանաչողութիւնը կամ դիտութիւնը կը սպառնար պակաս վալ բազմատմամբ տօնին պայծառութեան եւ ներկայ ականաւոր ակումբին: Ուրբան ուրախ պիտի ըլլար, եթէ յաջողէին իր արտասանութիւնները եւ յարմարադոյն ըլլային խօսածներն ալ: Սոսրովիդուխտ կը ճեմէր մերթ այս մերթ այն դարպասողին հետ, որոնք Աթէնքի առաջնակարգ շրջանակներէն էին, հարսնցուի մը պէս: Իսկ Տրդատին վրայ հսկող ըլլալու աշխատութիւնը իրարու մէջ բաժնած էին Սիւէն, Իշխանը, Լիկինիոս, եւ քանի մը գերիներ:

Սիւէն հանդէսէն երկար ժամանակ առաջ սիրով եւ եռանդով հասկցուցած էր անոր, թէ ինչ ձեւ ինչ ընթացք պիտի բռնէր, ինչ պիտի խօսէր, ինչ կերպով որ կը վայելէ ինչպիսի մը վարուելու ու խօսելու այսպիսի առիթի մը: Արտասոսովոր ուրախութիւն ցոյց չտալ, բարձրաձայն խնդալ չխօսիլ, ամէն բառ կշռելով խորհրդածելով ըսել: Այսօր խնդիրը մարմինին մարզանքին վրայ չէր, այլ միտքին: Երբ մար վայրկեանին յարմարը եւ ուղիղը ըսել, իր մտածումները, իր գիտցածը յայտնել, եւ մանաւանդ ուտելու եւ խմելու ատեն պահել իմաստունի մը համար անխուսափելի բայց պեղեցիկ չափաւորութիւնը: Հայոց դահաժառանգը հաւաքեց իր ամբողջ ոյժը եւ ջանաց հինմա նոյնիսկ յուսահատական ճիղեր ընելով, չափաւորել իր մինչեւ հիմակուան յանչափս շուստ կենցաղը, որ այսօր, ամէն խոհեմութեան հակառակ, գինքը բորբոքած էր վարդերու բոյրով ու երաժշտութեամբ, ամէն տեսակ կորովի ու պեղեցիկ անձերու հետ իր յարաբերութեամբ, այս ամէնը այսօր անդամադրելի խոյանք մը յառաջ բերած էր իրեն վրայ: Ահա այս խոյանքը նուազեցնելու, յաղթահարելու կը միտէր այսօր: Նոյնիսկ միտքը դրած էր որ գոնէ այսօր անտես ընէ այն ազուրդիկ գերուհիները, նոյնիսկ համալսող Բրիտանոյշը, որոնք պէտք եղածէն աւելի, ըլլայ տունին, ըլլայ դարաս-

տանին մէջ, այսինչ տեղը քարայրի մը մէջ, այնինչ տեղը մէկուսի թաքուն վայր մը, իրեն կը հանդիպէին, եւ շնորհալի շարժումներով ու յայրատ նայուածքներով կը հրամայէին ծաղկապարոյր սակառիկներ ուտելիքներով լեցուն, եւ խմելու համար ալ բաժակներ, կամ — ինչ որ ամէնէն աւելի կը սիրէր — եղջերեայ փողեր իրեւզաւթ: Կրկնեք թէ Տրդատի շատ անուշ կուզայ այդ կոտորէ փողիկներուն մէջէն խմել գինին:

Օր տօնին Անահտայ: Անահիտ, ամէնուն բերանն էր ան: Անահիտ, օրուան աղղանչանն էր ան: Արսինէ այնքան շքեղապանծ եւ տօնավայել էր դիմազծելով, հայեցուածքով, կայքով ու գնացքով, որ ոչ ոք կրնար տարակուսիլ այն մասին, թէ ան կը հաւատար իր Աստուածուհիին եւ բարեբախտ էր որ Անահիտ այսօր կ'արժանանար այնքան փառքի եւ պատիւի օտար երկրի մէջ:

Երբ Արսինէ կրկին ձեռք առաւ, խանդավառուած, իր տաւիղը, եւ սոխակի մը պէս օրհնարանութիւնը վերացուց դէպի ամբաւ երկինքը, դէպի անամպ կապոյտը, գեղգեղելով, ճռուողելով, եւ այսպէս օտար հողի վրայ սփռեց, երկայնքէն լայնքէն, հայկական յորձանապտոյտ ձայնական թրթռումները եւ ցնծալից խոյանքը, զոր յանկարծ երգուհիին կ'ընդհատէր ով գիտէ ինչ հայրենաբաղձ ներքին հեծկլտութի մը հետեւանքով, եւ իր նուազի գործիքին արծաթ շեշտերը անթերի ձայնանիչելով վէտ ի վէտ կը կարկաջէին — ահա տեսակ մը հիագարհուր պատկառանք կը գրաւէր առաւօտուն իսկ դարաստանին մէջ խմբուած ամբողջ ակումբը, պայծառակերպութեամբ հրաշագարդուած, այդ այնքան մտացի, բարձր գարգացումով օտարուած մարդիկը, որ տեսակ մը նուիրական ցնցում կը զգային, ակամայ իսկ, այս օտարոտի հաւատքին հանդէպ: Արսինէ շատ լաւ գիտէր, թէ անոնք ամէնքը, իսկապէս իրմէ զատ ոչ ոք կը հաւատար իր Աստուածուհիին: Բայց եկած են դարձեալ տօնակից ըլլալու ի պատիւ անոր տօնին: Ներկաները, խումբ առ խումբ, իրենց հանձարեղ խօսակցութիւններուն մէջ, հոն ստուերախիտ աւազանին շուրջ, կամ հոս անձաւի մը մէջ, կամ ոտքի կեցած եւ ճեմելով սիւնասարահին ճեմավայրին երկայնքը, արուեստագէտները այսօր Անահիտի մէջ կը մեծարեն Արուեստը, փիլիսոփաները, Իմաստութիւնը եւ Բանականութիւնը: ուրիշներ ալ նոյն Անահիտին մէջ կը պաշտեն Սէրը, Պատիւը, Պողարբութիւնը, բոլոր բնութեան ծոցը: Կրնան անոնք Մինէրվա, Աթենաս, Աստղիկ, Ափրոդիտէ անուանել զայն, երբ ահա առաւօտեան պահուն, արդէն, արուեստագէտներէն ոմանք Ապեղէսի նախատիպարին համաձայն Արսինէին երենալուրն պէս, անոր վրայ վարդեր կը նետեն, վարդի ճիւղերով բռնաւորուած թե-

ւերու գեղեցիկ շարժումներով ակնարկներ կ'արձակեն անոր կողմը, խոնարհութիւն կ'ընեն, կը ծնրադրեն անոր առջեւ, եւ կարծես կախարդուած, «Անահիտ» կը ձայնարկեն — այս ամէնը ի պատիւ եւ ի փառս Աստուածուհիին չէ՞ր միթէ :

Արսինէ ինքն ալ դիտակից էր, թէ այս պատիւներէն ոչ մին, նոյնիսկ արուեստագէտներուն եւ երգիչներուն հոյակապ գեղօններն ու արտասանութիւնները իրեն չէին պատկաներ, այլ կ'ուզողուէին Աստուածուհիին բազմագիշտ շնորհապարտութեամբ :

Անդամ մը յանակնկալս փոքր, մեկուսի ճամբու մը վրայ ծաղկափթիթ մը տնայնակներու աղեղնաձեւ կամարին տակ հանդիպեցաւ Պաւլոսի եւ Խոսրովի դուխտի : Իր աստուածարեալ յափշտակութեան մէջ վաղեց դէպի Խոսրովի դուխտ, սեղմեց զայն իր հեւացող ծոցին վրայ եւ խայտաց բարձրաբարբառ. —

— Ո՛վ տղայ, մեր հայրենի երգիքին տակ ենք : Անահիտի օրն է այս : Միհրի Լոյսն ու Երանութիւնն է այս :

Խոսրովի դուխտ ժամանակ չունեցաւ շունչ առնելու, ուր մնաց խօսելու — քրմանոյշը արդէն աներեւոյթ եղած էր : Այս կերպով անգամ մըն ալ Տրդատին դէմ ելաւ եւ զայն ալ կ'ուզէր սեղմել իրեն եւ նոյնը ձայնարկել : Բայց ինք Տրդատ բռնեց զայն կրկին իր առիւծի թաթերով անոր հոլանի թեւերէն լայն թեղանիքներուն տակ եւ իր երեսը սեղմեց Արսինէի երեսին, եւ ի մեծ ապշութիւն Արսինէի վրնջելու ձեւով քրքիջ մը թող տուաւ ի դովեստ եւ ի պատիւ Անահիտի : Գինիի սաստիկ հոտ մը կը բուրէր անոր բերնէն Արսինէի երեսին : Զայրոյթով ձկեց զայն, որպէսզի երթայ փնտռէ գտնէ Սիւլենը, անոր դաստիարակը : Վերջապէս գտաւ, սրբավայրին մօտերը, որ ընդարձակ աղեղի մը ձեւով դոցուած էր փոռուած պաստառներով : Հոն, հանդէսէն բոլորովին հեռի, Սիւլեն կը վարդապետէր եւ կ'արտասանէր եռանդով, եւ միեւնոյն ատեն խոշոր սաղարթներով կը զոտացնէր իր քրթնաթոր ձակատը : Արսինէի երեւնալուն վրայ շփոթեցաւ եւ կասկարմիր եղաւ : Ինքզինքը բռնեց եւ արտասանեց. —

«Եւ պարտէզէն դուրս աղբիւրի պէս կը յորդէին վարդեր բոյլ ի բոյլ եւ մեխակներ : Մաղիկներուն եւ մարդոց մէջ չքեղօրէն հազուած մէկը միայն կայ անմահ, անդուղական. Եւոս ինքն իսկ է հաս, վարդամասն Եւոս, Աստուածուհիին արչալոյսի : Ո՛հ, փառապանծ այս տօնին բոլոր հանդերձանքին մէջ ես բան մը միայն կը ցանկամ. անոր վարդարոյր բերանին շունչէն հեւքի մը :

— Շատ լաւ : Շատ գեղեցիկ, Սիւլենոս : Բայց արքայազունին ալ ուշադիր եղիւր : Ինծի կը թուի, թէ ան ինք իրեն ձգուած է, եւ գիտակցական ճանաչողութիւնը դարձեալ որեւէ քայլ չէ առած իր

բազմապատիկ պէտքերուն մէջ : Ուշադրութիւն ըրէք, բարի Սիւլեն, որպէսզի արքայազունը չաղարտէ իմ մեծ ուրախութիւնս :

— Պաշտեցեալ եւ ամենագեղ Աստուածուհի, որքան կարող եմ, պիտի կատարուի : Արդէն ուսում տուած եմ իրեն լուսադոյն կերպով : Արսինէ արդէն իսկ աներեւոյթ եղած էր :

Կէս օրը եկաւ : Ահագին տաքը կը թխտէր ապարանքին եւ դարաստանին վերեւ : Երաժշտութիւն եւ բանաստեղծութիւն, ծիծաղ եւ դրուցատրութիւն լռեցին : Շատրուանները միայն կը խոխոջէին, եւ երփներանգ թիթեռնիկներ կենսախայտ կը թևէին վարդածովին վրայ վարը : Միջատներուն բոցիւնն ու տոբիւնը կը թնդար հեռակայ, դաշն ալեկոծումի մը պէս : Ահրիմանի դժոխային պարը : Ամէն ինչ կը ննջէր : Քրմանոյշը ոչ :

Անբացատրելի անհանդարտութիւն մը եկած էր վրան : Կէսօրուան ժամը վտանգաւոր էր : Ահրիմանի ուղիները պահակ կը հսկեն : Երբ լոյսն ու ուրախութիւնը շատ մեծ է, դեւերը շատ մօտ կ'ըլլան : Վարդերէն դուրս կը լրտեսեն կը դաւեն : Անոնք բարի ուղիները կ'օրօրեն կը քնացնեն, եւ երազի մէջ կ'աղարտեն կը խանդարեն անոնց հողիները : Պաւլոս եւս կը քնանայ : Խոսրովի դուխտ կը քնանայ : Ո՛ւր է Լիկինիոս : Ո՛ւր Ապեղէս : Արքայազո՞ւնը : Ոչ ուրեք : Ինք Արսինէ, մինակ կը հսկէ արթուն՝ բոլոր ննջողներուն մէջ, ինք միայն ընդարձակածաւալ դարաստանին մէջ : Նորէն զնաց կեցաւ սրբավայրին դէմ : Հոն զգաց յայտնապէս, թէ ինչպէս կ'աւելնայ անձկութիւնը : Արտասովոր նեղութիւն մը կը խեղդէր զինքը : Գաղտնիքը հոն պաստառներուն ետեւն է, դաղտնիքը զոր հիւրերէն ոչ մին կը զգայ, եւ որ այս իրիկուն պիտի պսակէ տօնը, արժանաւոր, սուրբ, գեղեցիկ, եւ ո՛վ գիտէ : Աստուածուհիին նշան մը կ'ընէ — կը յայտնուի — կը ցուցնէ թէ ինք ոչ միայն խորհրդանշան մը, պատկեր մըն է, այլ եւ կ'ապրի : Եւ սակայն սա նեղութի՞ւնը : Ինչո՞ւ արդեօք : Արսինէ ձեռքերը կը սեղմէ բարախուն սիրտին վրայ հոն ուր կը կենայ մենակ, եղեւնուաքին մէջ, բլուրին ստորտը : Աւաղ, եթէ Անահիտի հիւրերը անարժան ըլլան, եթէ իրիկունը պէտք եղածին պէս լուրջ ու սուրբ չըլլան : Ո՛վ Բագոս, ո՛վ Դիոնիսոս, դուք վայրի աստուածներ Ելլադայի մի աղարտէք տօնս, մի ոտնակոխէք վարդերս : Եւ նեղութիւնը դարձեալ : Պաւլոս ի՞նչ պիտի ըսէ գաղտնիքին, եւ իր Աստուածը Քրիստոս : Ի՞նչ պիտի ըսէ Յուդիթ եւ իր Եհովան : Լիկինիոս ի՞նչ : Լիկինի՞օ : Լիկինիանո՞ս : Խոսրովի դուխտ : Արքայազո՞ւնը : Մէն մի անունի վրայ կը մտածէր թէ իւրաքանչիւրը ի՞նչ պիտի ըսէր : Լիկինիանո՞ս : Արսինէ կը նեղուէր անոր առջեւ, անկէ կը վախնար, հիմա կը զգայ զայն յայտնի կերպով : Բայց Լիկինիանոս

այլևս նոյնը չէր: Քաղաքավար, ամէն ատենուան պէս: Նոյնիսկ փափկանկատ, քնքոյշ, այո՛: Բայց միշտ անվստահելի, նեղացուցիչ, որովհետեւ ան երբեք, երբեք ինքնակալ պիտի չըլլայ, եւ բնաւ, բընաւ պիտի չընդունի պիտի չդաւանի Ահուրա աստուածը: Ան չի գիտէր գաղտնիքը: Ինչպէ՞ս պիտի ընդունի:

Եւ դարձեալ նոյն անձկութիւնը, նեղութիւնը առաջուրնէ աւելի մեծ:

Սրինդ մը սկսաւ ածել մօտերը դաշն, մելամաղձիկ, հայրենաբաղձ հովուերգութիւն մը: Արսինէ կը դողդար: Յոյները անտառային աստուածներու կը հաւատան: Այս ժամուն կը հսկէ Պան, նեղացուցիչ հովուերգիք: Բայց հիմա ոչ ոք կը հաւատայ անոր: Կարատեն մը, մազոտ մորթով, նոխաղի ոտքերով, մարդեանսուն ատեն կը երեսով, եւ փոխանակ ականջներու եղջիրներ, չարածճի, կատակասէր, դոյախասէր, շուայտ աչքերով, սրինդը լայն բերանին վրայ: Ոչ փախչիլ կարելի, ոչ ճանչնալ կարելի: Արսինէ բոլոր անդամներով դողահար օչնութիւն աղաղակեց, Պանի հուժկու, մազոտ թեւերուն մէջ, եւ ի զուր կ'աշխատէր ինքզինքը ազատել անոր տաք թեւերուն մէջ, եւ ի զուր կ'աշխատէր ինքզինքը ազատել անոր տաք թեւերուն մէջ, եւ սրբապէս Պան արձակեց Արսինէն, Նոխաղի պէս համբոյրներէն: Վերջապէս Պան արձակեց Արսինէն, Նոխաղի պէս համբոյրներէն, եւ սուրակին մէջէն կը հնչէին սրինդին ցատկեց հեռացաւ անկից, եւ սուրակին մէջէն կը հնչէին սրինդին կատակող, ծաղրածու, ոնդային եղանակները: Կը թափանցէին ջրմուսկիսին սիրտին մէջ, որ իր գաղտնիքին մօտը հասած, բոլորովին ծածկուած թառամ վարդերով, դաշած ինկած էր եղեւինի մը ստորտը եւ կուլար դառնապէս: Քիչ ետքը դղեակին մօտերէն լսեց բարձր կոխններ, ճիչեր, սարսափահար մարդոց, յետոյ ընդհանուր քրքիջ մը որ հետզհետէ կ'աճէր: Արսինէ ոտքի ելաւ հետաքրքիր, շտկեց հագուստն ու մագերթ, եւ ուղղուեցաւ դղեակին կողմը կամաց կամաց, դէպի աղմուկը: Աւաղանին շուրջ կը պարէին Պան եւ դեռ քանի մը Յուշկապարիկներ, Փառնաններ եւ Սատիրաններ ծաղրաքանի մը Յուշկապարիկներով եւ ամէն կողմ զառնալով եւ Պանի սրինդին տակ ծուն ոստումներով եւ ամէն կողմ զառնալով եւ Պանի սրինդին տակ պարելով արթնցուցին քնացուցները, վախցուցին հեղինքին աղջիկները, որոնք սակայն եւ ուրիշներ ալ իրենց հետ, կը խնդային, շուրջ կը թափէին անոնց վրայ եւ քարի կտորներ կը նետէին: Անդին խորհուրդ կ'ընէին կը վիճէին, թէ ո՞վ է իրաւցնէ Պան, եւ ո՞վ կրնար Ըլլալ միւս կերպարանքները: Պակասծները կը փնտռէին ամէն ծայր, ամէն անկիւն ամբողջ դարաստանին մէջ, եւ ի վերջոյ հասցուեցաւ, թէ դիմակներու տակ ծածկուած պէտք է ըլլան Լիկինիանոս, Ապեղէս, հայ արքայաղուներ եւ ակումբէն ասոնք անոնք: Արքայազուսէն չէր սպասուեր, որովհետեւ տակաւին ամէնէն պղտիկն էր, բայց ամէնէն յանդուգն ու խելայեղ ոստումները կ'ընէր, կը մագլցէր ար-

ձաններուն եւ աղբիւրի կճեայ դուրիներուն վրայ եւ ամէնէն աւելի աղջիկներուն ետեւէն ինկած կը նեղէր զանոնք: Եւ այս ամէնը կ'ըլլար, մինչ մեր խելացի Սիլէնը կ'ողկէր շարունակել իր խորապէս ստամոսսիրած ճառը: Հաղիւ սկսած էր աւաղանին առջեւ արտասանել գեղեցիկ լեզուով իր մտացի տաղերգութիւնը, ունկնդիրներու ստուար շարք մը իրեն շուրջ հաւաքած, որոնք արդէն քանիցս ողբերկայ ծափերով ողջունած էին դինքը, ահա Պանի վայրի եւ անընտել խումբը յարձակեցաւ եւ լեղասպտատու բրաւ ամէնքը եւ դատեց իրարմէ, դուարձալի հայհուաներով: Բայց Սիլէն, իրեն հարպատ փիլիսոփայ, չէր վրդոված, կը սպասէր հանդարտօրէն ծաղրական խոնարհութիւնները կ'ընդունէր լըջօրէն, իրեն առջեւ ալ կը պարէին կը կանչէին, նոյնիսկ յանկարծ կը փաթթուէին, կը համբուրէին եւ փաթթուողը եւ համբուրողն ալ իր սանը Տրդատն էր, բոլորտ կենդանիի մը կերպարանք մտած: Սիլէն կը սպասէր նորէն, կը սկսէր նորէն, եւ վերջապէս աւարտեց իր ճառը, ի մեծ գոհունակութիւն իրեն, բոլորովին միակ ձգուած, աւաղանին ժայռէ անձաւին առջեւ, ուր կը խորհէր թէ կը բնակէին հոգեպէս Պղատոն, Սոկրատ եւ իր հին ու նոր մտաւորական բարեկամները: Սիլէնի արժանի միակ հանդիսաւոր հանրութիւն:

Քրմանոյշին արիւնը կը պճրտար: Սուրբ գայրոյթով վարակուած: Քիչ մնաց որ դիմակաւորներուն մէջ պիտի մտնէր, պիտի պատռէր անոնց դիմակները, եւ սրինդը ժայռին դէմ ջարդուփշուր պիտի ընէր: Արսինէի աղատարարը Սիլէնը եղաւ միայն, որ կարողացաւ հանդարտեցնել խիստ խոռված քրմուսին: Երկար ատեն միասին մնացին, եւ Սիլէն պարտաւորուեցաւ առաջին անգամ ըլլալով Արսինէին իրաւունք տալ, թէ անասնական բնազդը մարդոց մեծագոյն մասին մէջ վերջապէս աւելի զօրաւոր էր, քան իմաստութիւնը եւ իմացողութիւնը: Յետոյ վար ծռելով երկաթեայ վանդակափեղկէն, որ հիմա բոլորովին վարդերով պճնուած էր, նայեցաւ ձուկերուն եւ կարապներուն եւ վայրկենաբար Վաղարշապատի յիշատակը արթնցուց այնպիսի հայրենաբաղձութիւն մը, անսահման օտարութեան եւ լքումի զգացում մը հոս, Անահիտի այս Վարդավառին, այնպէս որ անպամ մըն ալ իր զգացումներուն տիրապետութեան տակ ընկճուեցաւ եւ տաք արցունքներ կը հոսէին, որոնք աւաղանին մէջ կը պլասպային արդէն իսկ մառնամուտ արեւուն լոյսին տակ:

Պէտք էր սակայն բռնէր ինքզինքը: Ակումբը կը մօտենար: Պաւղա, Յուզիթ, Խոսրովիդուրիտ կուշային Վալերիոս բժիշկին, Ապեղէսի, Վիզիլիոսի եւ ուրիշներու հետ: Դիմակաւորները անհետ եղած էին: Աղմուկի եւ ճիչերու տեղ, դղեակին ճաշարահէն կը լըս-

ուէր փառաւոր երաժշտախումբ մը եւ ղեկարուեստապէս մարդուած ձայներ մերթ դաշն, մերթ ուժեղ ու բամբ երգասացիկ: Քիչ մը ետքը կրկին հաստատուեցաւ տօնի առաւօտեան առաջին հանդիսաւոր տըրամադութիւնը: Ամէն ոք ականջ կտրած էր: Մօտէն ու հեռուէն, դարաստանէն կուզային հիւրերը խումբ խումբ, զոյգ զոյգ կամ առանձինն դէպի աւազանը: Ամէնքն ալ կազդուրուած, կայտառ, թարմ վարդերով պսակուած բայց միշտ լուրջ ու պատկառոտ:

Անահիտայի զործն էր այս: Ոստած էր, դեւերը հայածած, եւ ահա բարի ուրիշները հոն են: Այսպէս կը խայտար, կը ցնծար Արսինէ իր հողիին մէջ, եւ հիմա զարձեւալ իր տաւիղին շէշտերը առաւօտէն աւելի յուզիչ ու լիալիբ կը ղեղղեղէին հետզհետէ զովացած դարաստանին մէջէն: Յատուկ, սպասողական տրամադրութիւն մը տիրեց բոլոր հիւրերուն, որ նստարաններու, աթոռներու, բազմոցներու, մարդերու վրայ լայն կիսաշրջանակ մը կը կազմէին, նախապէս Արսինէի եւ Սիլէնի շուրջ: Յաջորդեց ապա հանդիսական խնջոյքը անկարագրելի շապուածեամբ ուտելիքներու, ըմպելիքներու, շքեղ ըսպաններու, ղեկարուեստական պերճութեամբ եւ ազնուութեամբ սպասարկող աղջիկներու, որոնք երգերով, պարերով կուզային կ'երթային: Ահա Սիլէն, ամէնուն կողմէ պահանջուած կանչուած, միշտ ի պատուի, եւ որուն շէկ գոռոզ մաղերը հիմա փոխան դափնիի վարդապսակ ընդունած էին, հակառակ իր դիմադրութեան: Դրուատիք, ղեղօն, քերթուած ասպնջականին եւ անոր դերգաստանին հասցէին իրարու յաջորդեցին անմիջապէս: Եւ յետոյ Ապեղէսի ճառը, որ այս հանդիսաւոր օրուան «սրբուհի»ին մասին ամէնուն տրամադրութիւնը ոգեւորեց եւ ընդարձակեց: Որհնդաւոր պաստառներով քողարկուած սրբալայրին յիշատակութեամբ, Ապեղէս ճարտարօրէն գրաւած էր ամէնուն լուռ ուշադրութիւնը: Ժամանակին սովորութեան հետեւելով, ղեկարուեստական հանձարեղ դարձուածքներով զովեստը բրաւ ասպընջականին, իշխանին, իշխանուհիին եւ ամէնուն համաձայն անոնց ընկերական դիրքին, ստացուածքին, տարիքին եւ պատիւին, համբաւեց ամէն բանէ առաջ Լիկինիա ղղեակը իբրեւ առաջնակարգ վայր յունահռոմէական ղեկարուեստին, եւ ասիկա զնահատեց իբրեւ առաջին նշանը ծերակուտականին եւ նախորդ մեծ հրամանատարին ճշմարիտ զարգացումին ամբողջ ելլադայի մէջ, թէ իշխանութիւնը, հարստութիւնը սխալ ուղղութեան չեն դրած դայն, որ կոյր բռնութեամբ ճնշէ յունական մտածումը եւ կեանքը, այլ Լիկինիոս ինք ալ Յոյն եղած է, եւ ազատ ճամբայ եւ ասպարէզ տուած է յունական ղեկարուեստին եւ զարգացումին: Ուստի իր տունին բազմաթիւ բարեկամներուն բաղձանքը այն է որ, այս տունին միակ զաւակը, հօ-

րամոյն կորովով, նոյն ուրիշով, նոյն յաջողութեամբ հոտմայեցի եւ յոյն միանգամայն — բաղձանքը այն է որ Լիկինիոս Լիկինիանոս, երբ աստուածները կամենան, ընդունի ծիրանին եւ ապաղայ ինքնակալը ըլլայ:

— Ողջո՞յն, կեսար ինքնակալը, Լիկինիոս, ազաղակեց Ապեղէս խանդալառ:

— Ողջո՞յն, կեսար ինքնակալը, ձայնեցին ամէնքը չորս կողմէն բացի Պաւղոսէն:

Ճակատապրական վայրկեան մը Արսինէի համար: Պէտք է որ նկատի առնէ կղածը: Պէտք է որ ձայնակցի ինք ալ: Արդեօք Լիկինիանոս իրեն պիտի նայի՞, իր ձայնին ուշադիր պիտի ըլլա՞յ: Սանկ՝ մը նայեցաւ, ան ալ արդէն երկար ատենէ ի վեր իրեն կը նայէր, եւ անոր — Լիկինիանոսի — խոչոր տմոյն աչքերէն հիմա կը շողային ջերմ ցանկութեամբ լեցուն նայուածքներ: Արսինէ ձայնակցեցաւ եւ երկարեց, ինչպէս երբեմն, թեւ ու ձեռք, մեկուսի ուղղուած աղեղնաձեւ, բայց անոր դէմ, ձեռքը բռնած մեղմարոյր վարդի ճիւղ մը: Լիկինիանոս կարմրելով ծիծաղ մը արձակեց դէպի Արսինէ: Ապեղէս շարեւէ չէր նշմարած եւ կը շարունակէր ճառը:

Անով ալ յայտնի է մեր ամենապատուական ասպնջականին մտաւոր բարձրութիւնը, որ իր տունին մէջ պաշտպանութիւն եւ հովանի կը զտենն ոչ միայն զարդացեալներ, արուեստագէտներ եւ դիւանականներ, այլ եւ կրօնքը: Եւ ոչ միայն Հոռոմի հին պաշտօնական պետական կրօնքը, այլ եւ բոլոր կրօնները, բոլոր աստուածներն ու աստուածուհիները: Նաեւ ան որ կը պաշտէ ոչ թէ աստուածներ, այլ միայն բանականութեան կրօնքը, որ ղեկարուեստը միայն կը ճանչնայ: Նաեւ ան որ կը պաշտէ Ամենայն իր անհունութեան մէջ, այն է Տիեզերքը, այո, ասոնք ալ արժանապէս եւ լի փստահութեամբ կ'ընդունուին, բուական է որ սիրեն իմացողութիւնը եւ զարդացումը եւ ըլլան ազնուախոհ: Այլ նաեւ ան որ կը պաշտէ Ձեւը, կամ Արամազդը, կամ Եհովան, կամ Ահուրան, կամ Աթենասը կամ Անահիտը, հոս սիրով կ'ընդունի իր Աստուածին հետ: Պէտք է անուանել Քրիստոսը: Եւ Միհրը պէտք է պաշտուի անոր հետ: Ժամանակը այսպէս կը պահանջէ: Իմաստունին այսպէս ընել վայելուչ է: Բազում հաւատք եւ սակայն միայն մէկ: Բազում աստուածներ, եւ սակայն մէկ է էապէս միտքը որ ամէն ինչ կը լեցնէ, ամէն բանի կը թափանցէ, Ամենայնը, Նախամիտքը, Նախադրիւրը ամէն կեանքի, որուն մասին քրիստոնեայ չեղինակ մը իրաւամբ կ'ըսէ, եւ նաեւ անով ամենանոր կրօնքը, քրիստոնեաներունը, բոլոր միւսներուն հետ կը կապէ իբրեւ միակ մարդկային կրօնք:—

Անոր մէջ կ'ապրինք, կը հիւսենք ու ենք:

— Պիտի խնդրենք ձեզմէ, մեր կրօնքը այդ կապակցութենէն դուրս հանել, Ապեղէս, ձայնեց Պաւղա միջանկեալ, մեր դաւանանքը կ'ըսէ թէ Փրկութիւնը ոչ մէկ ուրիշի մէջ է, նաեւ ոչ մէկ ուրիշ անուն տրուած է մարդոց, այլ միայն Յիսուս Քրիստոս անունը:

Ապեղէս լուռ վերջացուց, եւ հիւրերն ալ լռութեամբ միայն լսեցին տարբեր տարբեր զգացումներով այս համառօտ դաւանանքը, թէեւ ամէնքը դարձեալ յարգալից է մասին Պաւղայի: Սակայն Արսինէի սիրտին մէջ կրկին սկսաւ դործել երկիւղը եւ ան կրկին ակներեւ կը զգար ատելութիւն Քրիստոսի դէմ, քանի որ ան կը յաւակնէր միակ Աստուածութիւնը ըլլալ ամէնուն վրայ: Աստուան նեղութիւնը դարձեալ եկաւ եւ աւելցաւ իսկ, երբ Ապեղէս «չաղտնիք»ին յիշատակութիւնը ընելով ամենամեծ հետաքրքրութիւնը յառաջ բերած էր:

— Իշխանը իր ազնուախոհ եւ սրտաբաց ասպնջականութեամբ բարեհաճեցաւ արտօնել Անահիտի քրմուհին, որ այսօր անոր իսկ կարգադրութեամբ այս փառաւոր Վարդավառ տօնը կատարուի, վարդերու տօն մը, որուն նմանը տեսած չէինք: Մենք ամէնքս արվարդերու տօն մը, որուն նմանը տեսած չէինք: Մենք ամէնքս արբեցանք լոյսով եւ ուրախութեամբ եւ ամէն ժամանակ աւելի մեզ մօտ կը զգանք աստուածութեան: Մեր սիրտերուն մէջ կը ծածանի բարեպաշտութիւնը խունկի նման, նաեւ շնորհակալութիւն: Բայց մէկ բան կը պակսի — եւ այս մէկ բանին հիմա կը ցանկան մեր հողիները: Յանկալ — շատ քիչ է, կ'այրին մեր հողիները, կ'այրին կը մրկին ցանկութեամբ:

Բոլոր աչքերը ուղղուած էին Ապեղէսի վրայ, քանի մը հիւրեր նոտքի ելած էին:

— Աստուածութիւնը դիտել:

Ապեղէս այս վերջին հատուածը աղաղակած էր, երկար դարձ մը ետքը, կարծես դէպի երկինք յափշտակուած: Ծիշտ — շատ լաւ հաշուած — այս վայրկեանին սրբավայրէն կը հնչէին մեղմաշունչ, անոյշ, քնքոյշ, հմայիչ օտար շեշտեր: Ապեղէս խօսքը դադարեցուց: Աննկարագրելի ձգտում մը ամէնուն վրայ եւ անխօս լռութիւն: Սրբավայրէն եկած տաւիղի ու սրինգի սլաքիւններուն իրրեւ արձագանգ, հիմա դաշն կը հնչէր քրմանոյշին տաւիղը հրաշալի, արծաթահունչ քնքանքով: Հիմա ամէնուն աչքերը անոր վրայ էին: Ահա կեցած է գերերկրային գեղով: Արցունքներ կը վաղեն անոր գունատ այտերուն վրայ: ճերմակ — կարմիր — դեղին վարդերուն յղփութիւնը, անոր մագերուն միջեւ հիւսուած կը հոսէր իր ձիւնասպիտակ լօղիկին վրայ: Շողշողուն ատամներով անոր լայնաբաց բն-

րանէն կուգային եղանակները, այնքան ներծոր, այնքան զիրզ ու քաղցր, որքան զօշոտիչ ու թովիչ: Ահա մնչիւն մը աղաւնակերպ, ահա աղու սրնդարուի նուազում մը սոխակաձեւ, ահա ձայնարկը ան, աղօթիկը, թախծօրէն երկարածիւղ արտայայտութիւն մը սրտաճմլիկ հայրենարարութեան, հրատուչոր ցանկութեան, յետոյ ցնծալից խայտանքով մը համանուազ թրթուամներու, ոստոստուն ամանակներու, սրտնք իրարու կ'ընդհարին ուժգին, մեղմ, նուրբ ու դաշն փոփոխակներով, մինչեւ իսկ մարդ կը զգար թէ պատասխան կուտայ ան, թէ դտած է փնտածը, կը զգայ շունչը աստուածութեան, կը լսէ անոր ձայնը, եւ կը պարէ հրճուազին անոր առջեւ: Եւ ահա, պուրակն է որ կը կարմրաւորի հրակերպեան կրկներկոյթով մառնամուտ արեւուն: Եղբիւնները պղնձաչէկ կը կանդին: Սպիտակ աղաւնիներ յանկարծ դարձարձիկ կը թրվան կատարներուն վերեւ, եւ խմբովին ահա հանդարտունակ, եւ մերթ հիացկոտ հիւրերուն գլուխներուն վերեւ կը տատանին, կը քաշուին դարձեալ, որպէս թէ ուղէին յորդոր կարդալ. «Յէկէք, եկէք, ու տեսէք»:

Կարծես քրմանոյշին կախարդող ճպտոտին տակ ամէնքը ոտք ելած կը հետեւին անոր, որ գլուխը ետեւ նետած ու այլակերպուած երեսով, բարձրադոչ երգասացութեամբ, հատկտելով ոսկի ու մարդարիտ շողացող տաւիղը, կը յառաջանար սրբավայրը տանող ճամբան, պատկառելի ու չափածոյ: Անմիջապէս իր ետեւէն կուգար Սոսրովիդուխտ, արքայազունը Տրդատ, Ապեղէս, իշխանին ընտանիքը, եւ վարանոտ, հետաքրքիր հետզհետէ ամէնքը: Ամէնէն վերջը Պաւղա եւ Յուրիթ, միշտ անորոշ ու տարտամ, թէ պէ՞տք էր երթային, հարկ կա՞ր երթալու: Բայց կ'երթային: Քրմանոյշը հիմա կրնար սրբավայրէն քանի մը քայլ անդին բլուրը հասած ըլլալ: Զոյգ առ զոյգ, եղէպնուտին նեղ ուղիէն կը հետեւէին հիւրերը, մութին մէջ խարխափելով: Ամբողջ սրբավայրը փակող ճերմակ պաստառները ներսէն կարմրեցան ահա: Մատուռին շուրջ սուրբ խարոյկներ կը վառէին եւ բարկ հոտ մը կը տարածուէր խունկի ամպերով պուրակին մէջ: Մուտքին առջեւ կը կենար քրմանոյշը եւ անընդհատ երգելով ու տաւիղը օձելով կը թողուր որ յառաջանան հիւրերը եւ իրեն առջեւ հաւաքուին կիսաշրջանակաձեւ:

Հազիւ թէ Ապեղէս պիտի սկսէր խօսիլ, ահա ծնծղանները գոռացին վերը Ակրոպոլիսի վրայ: Ամէնքն ալ սարսափահար: Լիկինիոս եւ որդին, իրենք դիտակ էին նշանին:

Ապստամբութիւն, վտարանջութիւն, խռովութիւն քաղաքին մէջ:

Զօրահաւաքում:

Լիկինիանոս արդէն Արսինէի վրայ երկար տխուր նայուածքէ մը վերջ հիւրերուն մէջէն ճամբայ մը բացած էր իրեն համար եւ հասած էր մինչեւ վերջինները, որոնք անտառի ճամբան կը գտնուէին դեռ, Պաւղա եւ Յուդիթ, Սիլէն, եւ իր կողմը կուգային արդէն երկու ենթասպաններ, կատարելապէս սպառապէն, լուր բերելով:

— Կարո՞ս կայսր սպաննուած Պարսկաստանի մէջ:

Լիկինիանոս պահ մը խորհրդածեց, թէ այս մասին պէ՞տք է ակումբին բան մը հաղորդել, կամ թէ այս ահաւոր լուրը կրնա՞յ վերջապէս քրմանոյշին տօնական խնդուելունը աւելցնել: Կարո՞ս սպաննուած: Հիմա ծիրանին ազատ է այլևս: Ուրեմն,

— Ողջոյն կեսար Լիկինիանոս:

Ան կրնար աճապարանքով կարգալ Արսինէի աչքերէն հեռի, իսկ հիմա՞: Բուռն սէրը իրեն մէջ կը ծփար այնպիսի, կը յածէր նաեւ գաղտնիքին շուրջ որ իրեն համար բոլորովին անծանօթ էր: Միայն թէ չուտ, դեռ վայրկեան մը: Թերեւս այս միջոցին ալ կը բացուի:

Զինուորները ահա կ'երթան հարկ եղած հրամանով: Լիկինիանոս պէտք է քանի մը վայրկեանէն երթար: Պուրակէն վեր, կողմնակի ճամբաներուն վրայ, թուփերուն եւ մացառներուն մէջէն, կը վազէ դէպի սրբավայրը:

Աս ի՞նչ է: Ի՞նչ կը խօսի Ապեղէս: Արդեօք չիտա՞կ կը լսէ Լիկինիանոս:

— Գեղարուեստին իրաւունքն է, այո՛, պարտականութիւնն է, իր ամենարարձը պաշտօնն է անտեսանելի աստուածայինը ներկայացնել երկրի վրայ տեսանելի կերպարանքով: Պարզուկ մարդը, հասարակ ժողովուրդը ի՞նչ կը հասկնայ անտեսանելիին: Ան չի կրնար ըմբռնել անտեսանելին, ան՝ չի կրնար աղօթել բանի մը, զոր չի կրնար պատկերացնել կամ միտքին առջեւ բերել: Մենք դիտնականներս եւ արուեստագէտներս լաւ սիրտենք, թէ մեր ձեռակերտները ճշմարիտ աստուածութիւնը չեն, այլ կը ձգտինք կերպարանքներու եւ ձեւերու, մարմնի եւ պատկերի, մենք կ'ուզենք եւ պարտաւոր ենք տեսանելի ընել ամէն անտեսանելի, աչքի առջեւ դնել ունենալ իշխանութիւնը Զեւսին մէջ, իմաստութիւնը Աթենասին մէջ, գեղեցկու՜նութիւնը Չեւսին մէջ, Որուն որ կրօնքը արդիլած է իր Աստուածին թիւնը Աստղիկին մէջ: Որուն որ կրօնքը արդիլած է իր Աստուածին մէկ պատկերը չինել, եւ բարեպաշտ տրամադրութիւնը, միտքին մէկ պատկերը չինել, եւ զայն մենք ալ կը յարգենք: Եհովա ամէկ կը պաշտէ իր աստուածը, զայն մենք ալ կը յարգենք: Եհովա անց պատկերի ռազմարան է յաւիտենականութեան եւ իշխանութեան: Բայց նոյնիսկ քրիստոնեաները կը քաղձան իմ ձեռքէս ելած Գրիստոսի պատկեր մը ունենալ, որպէսզի կարենան իրենց աչքին առջեւ դնել իրենց Աստուածը, եւ զիս յարգողներէն ոչ մէկը պէտք

է ըսէ, թէ ես հեթանոսաց աստուածներուն մէջ աւելի ուժ եւ արուեստ կը գնեմ, քան քրիստոնէից Աստուծոյն: Եթէ ես պարտաւորուէի Եհովան պատկերացնել, Փիլիասին Զեւսը պիտի նախանձէր անոր մեծութեան եւ շքեղութեան համար: Այսօր ես ձեզի կը պատկերացնեմ իմ մէկ շատ աւելի համեստ ձեռակերտս: Մենք Յոյներս եւ Հռոմայեցիներս վարժուած ենք մեր աստուածութիւնները, այսինքն բնութեան ու մարդոց ոյժն ու ձիրքերը, գեղեցկութիւն, իմաստութիւն, ոյժ, ստղարբութիւն կամ որդեծնութիւն, ամէնէն առաջ ներկայացնել կնոջ նշանապատկերին մէջ: Եւ արդարեւ գեղեցկութիւնը կնոջ մէջ յայտնագործուած է, եւ անոր ձեւերուն ու կերպերուն մէջ կը գտնուի գեղեցկութեան անթերի արտայայտութիւնը: Եւ այսպէս, բարեկամներ, համարձակեցայ ես հաւանիլ համակերպիլ մեր Հայ Քրմանոյշին խնդրանքին, աւելի իր բուռն բաղձանքին: Իմ կողմէ շինուած այս սրբավայրը, բազիլիկ, մատուռը, խորանը, որը որ կ'ուզէք, պէտք էր կրէր Անահիտի մէկ պատկերը: Ահա այսօր հոն է ան, այնպէս ինչպէս է եւ կը պաշտուի Հայաստանի մէջ:

Այս վայրկեանին վար կ'իջնեն պաստառները: Եւ սարսուռ ազդող զուգարկութեամբ մը իրարու ետեւէն կը գոռան Ակրոպոլիսի շէփորները, ծնծղաները, ստիպողական, բարձրազգակ, որոնք կը հրամայեն Լիկինիանոսի, որ եղևինի մը ետեւ թաքնուած մտիկ կ'ընէր ահա առաջինը ըլլալով, քանի մը ոստումներով փութաց թափանցել բազիլիկ սիւներու ձեմավայրին մէջէն: Եւ ահաւասիկ կանգուն էր հոն վերէն յորդած լոյսով փաղկուն կնոջական կերպարանք մը, որ սեւ մարմարէ ըստ բաւականին ցած պատուանդանի մը վրայ, դրեթէ ռազիլին ձեղունը կը դաշէր իր գլուխովը: Մարդկային մեծութենէ աւելի: Մանրութեամբ հոն ու կեանքով առցուն կերպարանք մը: Վիզ, կուրծք, թև, մարմինին ամբողջ վերի մասը մերկ, լոզիկը գետինը դադած դօտիէն վար կախուելով: Գօտին կուրծքին տակ ամփոփ կը բռնէր նոր ձիւնի պէս պսպղուն երկար, ծալ ի ծալ վերարկուն: Յաղթ ու յուսթի ստիւքին վրայ կը պառկէր տղայ մը — արդէն մինակ սա առնելով զչիրի հրաշակերտ մը մինչեւ իր յետին անգամիկը —, մօրը ձեռքերէն զորովով բռնուած կը թուէր ծծել մէկ ստիւքէն: Մարիբը դուրայ դուրայ ձիւնակերպ կը տեղային զանկէն մինչեւ լայն ուտերը եւ քամակին վերեւ: Քրմական նուիրումի պատկաստազու երեսը այնքան արտայայտիչ էր, հակաստ, քիթ ու բերան անոր դիմադեմուն մէջ այն աստիճան ակներեւ էին, որ Լիկինիանոս պահիկ մը բնկարմացած մնաց նեղ դրան սեմին վրայ ներսի բոլորչի շնքը մտնելու ատեն: Մէկ նայուածք բաւական եղաւ իրեն որ ճանչնայ Արսինէն հոյակապ արձանին մէջ: Ակրոպոլիսէն շէփորներու նորագոտ զգրգիւններ արթնցուցին զինքը:

— Ապեղէ՛ս, կրճտեց :

Գունատ, ինչպէս արձանը ինքնին, էր անոր երեսը : Մէկ ստուամով դուրսն էր, ու ծակող թափանցող նայուածքով մը, որ Ապեղէսի դէմ մահացու ատելութեամբ լի էր, եւ Արսինէի դէմ ալ պաղ արհամարհանքի նայուածքով մը, թափով անցաւ երկուքին ալ քովէն, եւ երթալով դէպի Իշխանը, բարձր, ու խեղդուկ ձայնով գոչեց :

— Վարդավառը լմնցաւ : Հոռմէական կայսրը սպաննուած կը պառկի Հայաստանի մէջ : Հիմա եկաւ լուրը :

Նորէն չեփորածայն դղրդաղին :

— Սպաներս իմ ետեւէս կուզան հետիոտն կարգը պահպանելու համար :

Եւ արդէն աներևոյթ եղած էր : Ենթասպաներէն մէկ քանին առաջի հարուածներուն վրայ աճապարած էին եւ Լիկինիանոսը փրճուած էին եւ անորմէ առաջ հասնելով բանակատեղին տեսան զայն ձիու վրայ կազմ ու պատրաստ, սաղաւարտին գարգամնակը հովին, սարսափազոլ սրտամուրթեամբ լեցուած :

Արդէն չեփորի նշանները ընդհանուր անհանգստութիւն մը յառաջ բերած էին հիւրերուն մէջ, եւ զրեթէ բոլորովին խանգարուեցան ճիշտ վերջին րոպէին ուրախ տրամադրութիւնները «գաղտնիք»-ին բացումին համար : Կրկնակի չեփորները կ'աւեցնէին յուզումը : Հետաքրքրութիւնն ու վախը շատերը հեռացուցին անկէջ եւ երբ Լիկինիանոս կայսեր սպանութեան լուրը տուաւ, ընդհանուր խառնակինիանոս կայսեր սպանութեան լուրը տուաւ, ընդհանուր խառնաշրփոթութիւն մը ծաղած էր : Փողոցներուն մէջ տուններու եւ գորշըփոթութիւններու դէմ յարձակումի վախը կար, ժողովրդային ածառնութիւններու դէմ յարձակումի վախը կար, ժողովրդային ապստամբութեան մը սպառնալիքը, նոյնիսկ կրնար վտանգուիլ դըժեակ վերադառնալու ճամբան : Ուստի աճապարանք ամէն կողմ, շքանորհակալութիւն եւ հրաժեշտ միեւնոյն ատեն իշխանին եւ իշխանուհիին հետեւէն հեռու : Ու փախչող փախչողի : Լիկինիոս ի դուր Ապեղէսի եւ արուեստագէտներուն հետ կը ջանար տաղնապետները համոզել որ կենան : Շատ քիչեր միայն համակերպեցան : Պաւղա եւ Յուզիթ սրբավայր մտած էին : Արսինէ մտացրիւ կեցած էր : Պուզարկու աչքերը չփոթ ու խոռվայոյզ : Պաղ քրտինքով թորուած երեսն ու ձեռքերը : Կը պայքարէր ներքնապէս նուազումի մը դէմ եւ դադար կը փնտռէր : Ապեղէս եւս յայտնի յուզումի մատնուած : «Լիկինիանոս միտքէն ի՞նչ կրնայ անցուցած ըլլալ», կը հծծէր Արսինէ հեռանալու միջոցին : «Պաւղա», կ'ըսէր Արսինէ արհամարհոտ :

— «Դուք միայն հանգիստ եղէք, ես բոլոր յանցանքը վրայ կ'առնեմ» :

— «Ան զիս պիտի մեռցնէ» :

— «Նախ զիս ուրեմն : Ինքզինքդ բռնէ Ապեղէս» :

Մնացեալ հիւրերուն փոքր խումբն ալ բազինին բոլորչի վայրին առջեւ կեցած էր : Իրարու ետեւէն ներս կը մտնէին եւ կը դիտէին արձանը, վսեմ գեղարուեստին հմայքին տակ : Առաջին ակնարկով ամէնքը կը հասկնային, որ Արսինէի կենդանի ու հաւատարիմ պատկերն էր արձանը մինչեւ երեսին յետին դիմագիծերը : Ոմանք կը յայտնէին իրենց անխառն ուրախութիւնը եւ հիացումը, կը դրուատէին քարձրածայն այս գեղարուեստական ձեռակերտը եւ շինողին կը մաղթէին բարեյաջողութիւն ամենամեծ եւ ամենագեղեցիկ նոր արարուածի մը համար : Բայց քրմանոյշին զննող աչքերէն չէր վրիպէր, որ քաղաքին ականաւոր շրջանակներուն պատկանող նրբաճաշակ կիներէն ու օրիորդներէն ոմանք յուսախար կերպարանքով եւ պոստած յօնքերով կը ձղէին վայրը, կասկարմիր կտրած եւ, առանց այլեւս Արսինէի եւ Ապեղէսի վրայ ակնարկ մը ուղղելու, անհետ կ'ըլլային : Իշխանը չեփորներու առաջին հարուածէն վերջ ծայրայեղ յուզումով դղեակ փութացած էր : Լիկինիա առաջին մեկնող հիւրերուն ընկերացած էր մինչեւ դղեակ հրաժեշտի համար : Ի վերջոյ, ոչ ոք մնացած էր սրբավայրին մէջ բացի քրմուհիէն, Ապեղէսէն, Պոսրովիդուխտէն, Պաւղայէն : Չորս կողմը կը բորբոքէին սուրբ խաւրովները, սպասարկութեամբ գերուհիներուն :

Արսինէ տիրապէս դէմքով նստաւ իր արձանին պատուանդանին վրայ, երկու ձեռքերը տաւիղին կրթնցուցած : Պաւղա անոր մօտեցաւ եւ, դորովագուրթ մօր մը պէս, սկսաւ անխօս շոյել քրմանոյշին մագերը : Արսինէ արտասուաթոր աչքերով անոր կը նայէր :

— «Դուն հոս մնացեր ես — դուն քրիստոնուհիդ : Մեր մէջ դտնուած լոյսին հաւատքը դո՞ւն ալ ընդունեցիր եւ այլեւս չես հաւատար թէ մեր մէջտեղը խաւար կայ : Ես ուղեցի մեծարել Աստուածուհին : Անոր համար տուի իմ պատկերս, որովհետեւ Ապեղէս փափաքեցաւ եւ ասով միայն Աստուածուհիին պատկերը այսքան չքեղ կրցաւ ըլլալ : Բայց միւսները արհամարհեցին զիս, տեսայ հասկցայ ստիկա : Անոնք անմաքուրին հաւատացողներ են, քանզի իրենք անմաքուր են : Այդպիսիներու համար ես կաղապար մըն եմ միայն, խառնակուց մը, բոյ մը : Ով Ապեղէս, կթէ ինձի մտիկ ըրած ըլլայիր, եւ դոնէ քու միտքէդ միայն ստեղծած ըլլայիր կնոջական պատկեր մը : Բայց եղածը եղած է. զիրար բռնենք : Ի՞նչ է քու այս մասին կարծիքդ, Պաւղա» :

— «Ես կը հաւատամ մաքուր լոյսին քու մէջդ : Արսինէ, Անահիտի հանդէպ քու սէրդ քեզի ընել տուած է ամենամեծ զոհողութիւնը, դոր երբեք ըրած ես Աստուածուհիին : Իսկ դուն, Ապեղէս, վարժ



ես դուն մաքուր աչքերով ամէն ինչ մաքուր տեսնել, եւ այս պատ-  
ճառով քու զեղարուեստդ ալ, ահա սա ձեռակերտդ այսքան մաքուր  
է ու զեղեցիկ: Ես Անահիտին չեմ հաւատար, բայց ուրախ եմ իրրեւ  
կին, որ դուն Աստուծոյ ձրքովը այսքան բարձր պատուած ես մեր  
հէք, ողորմելի, ճնշուած սուր: Դուն, դեռ հեթանոս, այսքան զե-  
ղեցկորէն ներկայացուցած ես պատկերի մէջ ինչ որ մեր քրիստոնէս-  
կան հաւատքին համեմատ պէտք է ըլլայ կինը. ուղիղ, զօրաւոր, ան-  
կեղծ, առողջ, խրոխտ իր կոշուծով, զլուխը բարձր բռնած, աչքերը  
ուղղած հեռաւոր երկիր իրրեւ մայր երկրին, եւ անկէջ վեր դէպի յա-  
ւիտենական աշխարհ մը ու անոր փառքը, զոր նոյն իսկ ամէնէն հէք  
կնոջ պարզեւած է Աստուծոյ»:

— «Հասկցած ես դորձս, Պաւղա: Քու հաւատքդ մեծ է ու  
լայն: — Բայց ո՞ւր է ամուսինդ: Կրնամ առաջնորդել ձեր տունը»:

— «Ամուսինս պիտի դայ առնել դիս, կամ զերիներուն միջո-  
ցաւ պատգարակով պիտի փոխադրէ»:

Այս րոպէին լսելի եղաւ խշրտոց մը, թուփերու եւ չոր ճիւղե-  
րու կտրտուքի պէս բան մը: Ապեղէս ցնցուեցաւ, ետին նայեցաւ  
եւ մոխիր կտրած երեսով ճիշտ դէմ առ դէմ եկաւ Լիկինիանոսին ե-  
ւ զեւինի մը ետեւը, սպայի համակ հայուստով, սուսերամերկ, այն-  
քան մօտիկ որ կրնար ամէն բան լսած ըլլալ: Ապեղէս այս պարա-  
զային կր պարտի իր կեանքը: Ան կը մօտենար, կատաղութենէն տըժ-  
զոյն, թաւալոր աչքերով: Խոսքովիդուխտ վախէն պոռալով հեռուն  
ցատկեց: Լիկինիանոս Ապեղէսի առջեւ տնկուեցաւ.

— «Ձեր խօսակցութիւնը դիս առ նուազն այնքան անփստահ  
ըրաւ, որ ես կրնամ հիմա քեզ հոս սուսերահար ընել: Ապրելիք ու-  
նիս եղեր, թշուառական: Քու արուեստդ արդարեւ առաջին կարգի  
պաշտպանողական վերարկու մըն է քու ցոփութեանդ համար, ով  
դուն կնապիղծ, դուն վատահամբաւիչ, դուն սրտորասի, դուն խար-  
դախող, խարերայ չուն, դուն կեղծաւոր—»:

— «Դուն կ'ընես...»

— «Լո՛ւ», որոտաց կատղածը սարսափահար արուեստագէտին,  
«ալ ոչ մէկ խօսք: Իմ սուրս քու դուրէզ, գէլիքդ աւելի սուր է, նոյն-  
իսկ երբ ուրիշ գործերու սահմանուած ըլլայ քան... — Հոլանի կի-  
ներ արձանագործել—»:

— «Ալ կը բաւէ», դոչեց Ապեղէս դայրագին, «Վար դիր սա  
սուրդ, դուն վատ, դուն խելագար, դուն մեղկարարոյ, ամէնէն ա-  
նամօթ մարդը ամբողջ Աթէնքի մէջ, դուն որուն առջեւ որեւէ ապա-  
հովութիւն չունի ոչ վատահամբաւ քողը եւ ոչ ալ ամէնէն մաքուր  
կինը: — Այո, թաւալէ աչքերդ, վեր առ սուրդ, դարկ, սուսերահար  
ըրէ դիս, եթէ կրնաս: Այս զէպքին համար ես պէտք եղած միջոցը

ձեռք առած եմ, որպէսզի քանի մը ժամէն ամբողջ Աթէնք դիտնայ,  
թէ ինչու Ապեղէս պարտաւորուեցաւ մեռնիլ: Միտքդ բեր ծիրանիդ»:

Մէկ քանի ահաւոր վայրկեաններ անթարթ յառեցան իրարու,  
երկու մարդիկը բարկաճայթ աչքերով յուշիկ յուշիկ առկայծ լապ-  
տերներուն տմոյն յետին լոյսովը: Ապեղէսի նայուածքը իր անմեղու-  
թեան զիտակցութեամբ եւ սիրտին լիուլի մաքրութեամբ կը պահէր  
զեր ի վեր ոյժ մը, որուն առջեւէն կամաց կամաց կը խուսափէր Լի-  
կինիանոս: Մեքենարար թուլցան ինկան ձեռքն ու սուրը, կամաց  
կամաց փախաւ դայրոյթը, եւ իր երեսին վրայ եկաւ հեզնոզ զգուան-  
քի, կեանքէն ձանձրացած ըլլալու, թէ՛ իր անձը եւ թէ՛ բոլոր ուրիշ-  
ները արհամարհելու արտայայտութիւն մը, այնքան որ Ապեղէս զար-  
հուրեցաւ:

— «Որեմն միշտ կը հաւատաս որ ես անիրաւութիւն մը գոր-  
ծած եմ», հարցուց:

Լիկինիանոս հեղնոտ դէմքով կը խորհրդածէր, խոռվայոյզ,  
բայց միշտ խեղ: Յետոյ դիւական ծիծաղով մը հեզնեց բարձրաձայն,  
դառնասիրտ, մինչ միաժամանակ կը ցատկէր դէպի անտառ «Ուրիշ  
կերպ կարծողը ապուշ կ'ըլլայ»: — «Ապուշը դուն ես», կ'ուզէր Ապե-  
ղէս անոր ետեւէն պոռալ կատաղորէն, բայց նոյն վայրկեանին սըր-  
բավայրին ներսէն զոռում զոռում մը լսուեցաւ, որ երբեք կրնայ զալ  
սիրտէ մը, վերջին դիմադրութեան րոպէին ցաւին առթած աղաղակ  
մը: Ապեղէս ցատկեց ներս բազինը: Քրմանոյչը իր Աստուածուհիին  
ստորոտը ինկած պառկած էր նուազուն, հեւալով, պայքարելով չուն-  
չի համար: Վարդերը փրցուցած էր մաղերէն, թերթերը խլած կոր-  
զած: Վայրապորէն կը ծեծէր կուրծքը բոռնեցնելով, եւ ահա իր  
արտասուածութեամբ թեւերն ու ձեռքերը կ'անցընէր արձանին ոտքե-  
րուն եւ սրունքներուն, յուսահատական նայուածքներ արձակելով  
վեր դէպի Աստուածուհին:

Պաւղա անոր ետեւէն ներս մտած էր եւ առանց խօսելու աշխա-  
տեցաւ խելքը զլուխը բերել: Ապեղէս ալ եկաւ: Իր յուզումը հան-  
դարտեցաւ, երբ Արսինէ լոնց, եւ մեղմիկ միայն սկսաւ լալ տղու մը  
պէս: Աս ալ դադրեցաւ: Պաւղա եւ Ապեղէս պահ մը սպասեցին ան-  
խօս: Յետոյ Պաւղա Արսինէին խոնարհեցաւ, շոյեց համբուրեց զայն,  
իր թեւը անոր ծոծրակին անցուց եւ դաշն ձայնով մը հարցուց. «Ար-  
սինէ, կ'աղօթե՞ս Աստուածուհիիդ»: Քրմանոյչը հառաչեց անզամ  
մըն ալ, իրրեւ մեռնելու պատրաստ, հոգիին բոլոր խորքէն, սար-  
սըռալով, քայքայուելով. «Ո՛հ, ալ չեմ կրնար»:

Մահահանդոյն երեսը վարը պատուանդանին վրայ սահեցաւ:  
Պաւղա Արսինէի զլուխը բռնեց եւ կամացուկ մը գետին դրաւ: Ապե-

դէս ցատկեց զնաց անկէց տուն պատգարակը ապսպրելու եւ զինի ու ջուր բերելու: Իշխանն ու իշխանուհին դարաստանին մէջ անոր հանդիպեցան: Մինչեւ որ ամէնքն ալ եկան նուազածը տանելու, արդէն աչքերը նորէն բացած էր: Պաւղա նստած էր պատուանդանին վրայ Արսինէին գլուխը ծոցը առած եւ թեւերը իրար բերած: Արսինէ նուազումէն արթնցած, իր բոլորտիքը կը նայէր անթարթ: «Ուր եմ ես», կը ձայնէր անձկազին: Կը նայէր Պաւղայի աչքերուն մէջ, սիրով ու անդորրութեամբ թաթաւուչ: «Մայր Պաւղա»:

«Ձաւակ»: — «Աղուոր Վարդավառ մը չեղաւ»: — Պաւղա. «Կայսրը սպաննուած: Ապեղէս զրեթէ սպաննուած: Արքայազուն Տրդատ զինովցած, եւ զերինները շարկած տուն տարած են զինքը: Խոսրովիդուխտ կուլայ անկողնին մէջ: Վարդերը թառամած, ոտքի կոխան: — Ով Արսինէ, ես լաւագոյն Վարդավառի մը մասին զիտեմ: — Պատգարակը կուզայ, ահա: Ել, ուրեմն»:

ԳԼՈՒԽ Ը.

## ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Քառորդ տարի անցաւ: Անդաստանին մէջ կրկին կը փչէ աշնանային հովը եւ կը մերկացնէ թուփ ու ծառ: Մշտադալար եւ ծանրարեոն կը կանգնին միայն նոճիները աւազանին մօտ քարայրին շուրջ եւ եղեւիններն ու շոճիները Անահիտի բլուրին վրայ: Աստուածուհիին արձանին առջեւ կը ծնրադէր քրմանոյշը: Տամուկ ցուրտ մշուշ մը կը լեցնէր անդաստակը, այնքան որ կանուխ կը մթննար: Ներսը բազինին մէջ կը վառէր նուիրական հուրը ցած քարէ ակութի մը մէջ ետեւի պատին մօտ, ախորժ ջերմութիւն եւ ռետինին անոյշ բոյրը տարածելով: Արսինէ իր մոխրագոյն վերարկուին մէջ պարածածուկ: Աղօթքն վերջ նստաւ պատուանդանին վրայ ու տժգոյն դէմքով կը յատէր ճարճատող բոցին: Իրեն առջեւ գետինը կը մնային սուրբ գաւազանիկները, բարսմունք: Շարունակ իրարու ետեւէ իրար կը բերէր զանոնք, վեր կը վերցնէր, կը դնէր, ձեռքէն կը ձգէր եւ այդ փայտիկներուն առած նոր դիրքերը կը դիտէր: Այս գուշակական գաւազանիկներուն — բարսմունքին — միջոցաւ Անահիտ իր պատասխանը պիտի տայ: Իր Աստուածուհիին վրայ Արսինէի հաւատքը դարձեալ ամբացած էր: Ասկից առաջ երբ նուազած ինկած էր արձանին պատուանդանին վրայ Վարդավառին այն դժբախտ վերջաւորութեան ատեն, աւելի քան անքուն պիտի մը անցուցած էր, եւ մինակ կամ տղոց հետ մենաւոր ճամբաներ կ'երթար, եւ նոյնիսկ իր հաւատքը կը մղէր բոլոր աստուածավախ մարդոց Աստուծոյ լքուած ըլլալու պատերազմը եւ կը հարցնէր. «Ով իմ Աստուածուհիս, ինչո՞ւ լքեցիր զիս: Դուն յաղթութիւնը կը թողուս խաւարի չար ոգիներուն: Կը ձգես որ վայրենարարոյ Պանը յարձակի վրաս եւ պղծէ զիս: Խա-



— «Ով լոյսի աստուածներ: Ոստարը կրնայ զիս կուլ տալ, եթէ չհաւատամ: Ախ, իցիւ քար ըլլայի սա արձանին պէս: Ոստէ, ըսէ ինծի ամէն բան, Լիկինիանոս, ճշմարտութիւնը լոյս է, եւ լոյսը ճշմարտութիւն: Պիտի հանդուրժեմ ճշմարտութեան, ան ինչ ալ ըլլայ: Այո, երկար ատենէ ի վեր զիտեմ, թէ դժբախտութեան համար ծնած եմ ես»:

— «Ուրեմն իրարու կը պատկանինք: Իմ կեանքս ալ դժբախտութիւն է»: Հանգարտօրէն կնքուած նամակ մը դուրս քաշեց վերարկուէն, եւ զայն Արսինէին տուաւ, խնդրելով որ ինք մինակ իրեն համար կարդայ: Արսինէ նամակը դրաւ պարեգօտին տակ գօտիէն վեր եւ քար կտրած կեցաւ, բառ մը ըսելու անկարող: Հետզհետէ թանձրացած մշուշին մէջ նայուածք կը նետէր արտակարգօրէն չիտթ: «Իրիկուան ճաշին ժամանակն է պրեթէ: Ծնողքդ շատ ուրախ պիտի ըլլան քու անակնկալ վերադարձիդ համար: Մանաւանդ հայրդ շատ ուրախ պիտի ըլլայ, որ դուն ինքնակալութեան բռնը պիտի չկրես»:

— «Արսինէ», ըսաւ հիմա Լիկինիանոս կակուղ սրտաբուխ ձայնով, ճիշդ անոր մօտը յառաջանալով, «ես տկար եմ, կամքով շատ տկար, բայց չեմ կրնար կեղծ ըլլալ: Քեզ միշտ պիտի սիրեմ, քեզի միշտ, միշտ հաւատարիմ պիտի ըլլամ, միայն դուն, միայն դուն կրնաս զիս փրկել: Ամենամեծ դոճը ես քեզի պիտի բերեմ, Արսինէ: Քու սիրոյդ համար ուղեցի ես կապուելի, մերժել ամէն ազատութիւն, ծիրանի, ամէն փառք ու պատիւ-ուղեցի ընդունել քու հաւատքը, քու աստուածներդ — մեծ դոճողութիւնը դուն ալ բեր, իմ կինս եղիր, իմ բուն, միակ հաւատարիմ կինս: Հիմա գիտեմ, որոշակի դիտեմ հիմա, իմ փրկութիւնս պիտի ըլլայ մաքուր կին մը, ամուսնութիւնը, կարգաւորութիւնը եւ խաղաղութիւնը ընտանեկան երջանկութիւն մը, ասիկա կը պակսի ինծի, աս պիտի փրկէ զիս: Իցիւ հայր ըլլայի եւ կարենայի հոգ տանիլ իմ իններուս համար, քեզ երջանիկ ընել, քեզի տալ հայրենիք եւ հանդիստ, պատիւ եւ խաղաղութիւն: — Ինչո՞ւ կը շարժես կ'երերցնես գլուխդ: Կրնա՞ս ինծի չնեղել, չվստահիլ, ուրեմն կ'ուզե՞ս զիս ճահիճին մէջ աղտեղել: Միտքդ բեր նաեւ քու ծագումդ: Ի՞նչ կ'ուզես ընել, քու տէրդ մեռած է: Արքայազունը... հիմա գիտես որ քու իշխանութիւնը անոր վրայ փճացած վերջացած է: Ընդունէ հայրենիքը դոր ես քեզի կուտամ, միտքդ բեր հայրս, մայրս: — Արսինէ, ըսէ: Ըսէ բառ մը: Բայց, ոչ մի ըսեր, աղօթէ, վրան խորհէ, եւ շուտով խօսք տուր ինծի: — Կ'ուզե՞ս»: Յանձունս տխուր, բայց անոյ ճանճ նայուածք մը Արսինէի արտասուած խաղաղ աչքերէն խոնարհեցաւ Լիկինիանոսի աչքերուն մէջ: Երկար ատեն ոչ մէկ խօսք ըսաւ: Երթունքը միայն կ'երերային: Հիմա

գրաւուած Արսինէի երեսին փափուկ, վշտալից, անդորրութիւն փնտոող արտայայտութիւնը կրնարու զիւրապագութիւններուն հըմուտ ու փորձառու Լիկինիանոսին յայտնի կ'ընէր, թէ ան ասկէց աւելի նպաստաւոր եւ լաւագոյն վայրկեան չէր կրնար գտնել իր նոր, լուրջ զարպասումը ընելու համար: Ինք, Լիկինիանոսն ալ, այլեւս բան մը չբաւ: Իրենց նայուածքները միայն կը խօսէին: Եւ յայտնապէս երբեք ցարդ չէր զրպացած, թէ յաղթութեան տյութան մօտ եղած ըլլայ: Այս պատճառաւ երբեք ինքզինքը յուսախար չէր զգար, երբ Արսինէ սիրագեղ արամազրութեամբ ըսաւ. «Լիկինիանոս, քու սէրդ զիս կը յուզէ: Ծնորհակալ եմ, դուն բարի կը խորհիս ինծի եւ իմ ապագայիս համար: Բայց նոր տառապանք միայն կը ստեղծես ինծի: Գիտցիր. զարհուրելի երդումով մը կապուած եմ ես: Իմ իշխանական ծնողքս զիս Ահուրայի ծառայութեան նուիրած են, ես Աստուածուհիին սեփականութիւնն եմ, մաքուր լոյսի մէջ միայն պարտիմ, ապրիլ, թագաւորներու միայն սպասարկել: Ով Լիկինիանոս, ուրիշ մը ընտրէ, եւ դուն գոնէ երջանիկ եղիր»:

— «Ոչ առանց քեզի, Արսինէ: Ես ի՞նչպէս: Հապա եթէ Անահիտի եւ Միհրի հանդէպ քու հաւատքդ ցնորք մը միայն ըլլար, եւ քու ուխտդ ցնորք մը: Ո՛հ, Արսինէ, զիս ու քեզ ապերջանիկ չըրած, անգամ մըն ալ միասին քննենք այս հաւատքը: Տես Ձեւար ինկած է: Ամբողջ աստուածներուն երկինքը փլած է: Իւրաքանչիւր զարգացած մարդ այսօր հեղծօրէն կը խօսի աստուածներուն վրայ, որոնց առջեւ կը դողային հին սերունդները: Բանաստեղծութիւն եւ առասպել եղած են անոնք: Եւ կրօնք մը միայն լուրջ կ'առնուի հիմա լուրջ մարդոց մէջ, Քրիստոսի կրօնքը»:

— «Եւ Միհրի կրօնքը», մէջտեղ նետեց Արսինէ եռանդով: «Ասոր ապացոյցը տուաւ նոյնինքն Քրիստոնէից եպիսկոպոսը: Ես չեմ լքեր Միհրը, եւ ոչ Անահիտը: Միշտ դուք կ'ըսէք, թէ ան չ'ապրիր իրականին մէջ, ան խորհրդանշան մըն է միայն: Նոյնը կարելի չէ՞ միթէ ըսել Քրիստոսի եւ բոլոր աստուածներու մասին: Ինչո՞ւ համար պէտք ունինք խորհրդանշանի, արձանի: Որովհետեւ չենք կրնար տեսնել եւ ըմբռնել աստուածներուն ոյժը, կեանքը, բայց ես կը զգամ, թէ Ահուրան է, կայ, կը տեսնեմ անոր լոյսը, զիս մաքուր եւ երջանիկ կ'ընէ, ես կը սիրեմ Անահիտը, զայն ինծի մօտ կը զգամ: Ան ինծի համար խորհրդանշանէ աւելի է, սա արձանէն աւելի բան մըն է: Ես անոր միմիայն իմ պատկերս փոխ տուած եմ, որպէսզի աւելի լաւ խորհիմ անոր մասին, աւելի շատ սիրեմ զայն եւ աւելի շատ կարենամ խօսիլ անոր հետ: Երբեք, բնաւ, Լիկինիանոս, չեմ կրնար լքել զայն»:

— «Ո՞վ կ'ըսէ ատրկա: Ո՞վ կրնայ արգիլել քեզ որ Անահիտը չպաշտես, անոր չծառայես, երբ իմ կինս ըլլաս»:

— «Ուխտը, Լիկինիանոս, չես կրնար գիտնալ թէ ինչ տառապանքներ ինձի կը սպասեն հանդերձեալ աշխարհի մէջ, եթէ ուխտս խզեմ»:

— «Ո՞վ սովորեցուց քեզի», հարցուց Լիկինիանոս խնդալով:

— «Սուրբ Մովսէսը, դուն ղիտես, ես վստահութիւն ունիմ անոր վրայ»:

— «Չափազանց է վստահութիւնդ, կ'ըսեմ քեզի: Գուն չես ճանչնար մարդիկը, նաեւ քուրմերը: Այո, մանաւանդ վերջինները»:

— «Մովսէսը մաքուր է երկինքի պէս: Անիկա Աստուածորդի մըն է, Լիկինիանոս»:

— «Կրնայ ըլլալ: Ծատ կը փափաքիմ տեսնել դայն: Սուրբերը միշտ ինձի համար ամէնէն կասկածելիներն են: Անոնք կը դատեն մեզ իբրեւ հէք սկար մեղաւորներ, եւ յանկարծ իրենք ալ կ'իյնան»:

— «Մովսէսը ոչ բնաւ», ձայնեց Արսինէ սուրբ յուզումով մը եւ ճամբայ ելաւ տուն երթալու: Լիկինիանոս, լուռ, անոր ետեւէն կ'երթար, մինչեւ որ վար կ'իջնէին ահա նեղ, միզամած, թաց, ժեռուտ ճամբէն անձաւին մօտ: Այդ ճամբուն ծայրը Արսինէ սահեցաւ սաստիկ, վախէն պոռաց եւ ի դուր ասդին անդին զլուխը կը դարնէր հաւասարակշռութիւնը գտնելու համար, եւ վերջապէս պարտաւորութեամբ, եթէ չէր ուզեր կոնակին յորս իյնալ, Լիկինիանոսի բաց թեւերուն մէջ իյնալ: Լիկինիանոս կանոյ առաւ, ինչպէս պատերազմիկ կռիւի մէջ: Քրմուհին, անոր յայնչի լանջքին տուած կոնակը, ողորկ ճամբուն դէմ կը կրթնցնէր ստերը: Քանիցս կը սահէին դարձեալ ոտքերը, եւ կրկին կը պարտաւորուէր յակամայս ուժով մը կրթնել Լիկինիանոսի լանջքին: Գլուխը խորունկ մը ծռած էր լանջքին դէմ: Լիկինիանոս թեւերու ամենաթեթեւ սեղմում մը իսկ չէր ներեր ինք իրեն: Երբեք բոպէ մը իսկ աւելի չպահեց ան այս անոյ թեւը իր կուրծքին վրայ, երբ Արսինէ վերջապէս դտաւ իր կուռանը: Երբ սակայն անտառի լայն ճամբուն վրայ իրարու քով քովի պուրակն ի վար կ'երթային, Լիկինիանոս ըսաւ լրջօրէն. «Ես քեզի քիչ առաջ կայք տուի, դուն ալ կայք տուր իմ հէք կեանքիս համար»: Արսինէ սա պատասխանը տուաւ միայն. «Շնորհակալ եմ քեզի, բարեկամս»:

Լուռութեամբ կ'երթային մշուշին մէջէն: Ծառերէն ու թուփերէն կաթիլներ կ'իյնային: Գունատ սաղարթներ կը դալարէին հողին վրայ: Ծոճիի եւ եղեւինի խողաններ վար կը թափէին: Խորունկ թախծութիւն մը կը դարէր կը դադարէր դարաստանին վերեւ: Կը մօտենային դղեակին, որուն մէջ դեռ լոյսեր կը վառէին: Փափկաճաշակ,

տաքուկ ուտելիքներու հոտը իրենց դէմ կը փչէր: Ծանօթ ձայներ կը թափանցէին իրենց ականջներուն եւ հետզհետէ կը մօտենային: «Հիւրեր կան: Աս Պաւղայի ձայնն է, ան Յուդիթի ձայնը: — Իրենց ամուսիններն ալ» — հծծեց Լիկինիանոս քիչ մը նեղուած: «Ապեղէս հոն չէ: Հանդիստ եկուր: Չենք կրնար խուսափիլ, երեսնիս չենք կրնար ծածկել»: Արդէն ղիրենք դիմաւորելու համար ցատկած էր Հայոց գահաժառանգը եւ ուրախութենէն կը պոռար. «Եկէք, եկէք, Լիկինիանոսն է»:

— Ձաւակս, դաւակս, ձայնեց Լիկինիա եւ սանդուխէն վար փութաց:

— «Ձաւակս եւ աղջիկս», պապաչեց դողդոջուն ձայնով իշխանը, յուզումէն լալկան շեշտով: Ամէնքն ալ խնդացին, եւ այս շեշտով վրայ ոչ ոք այնքան ուրախ էր որքան Լիկինիանոս, որ միտքէն կ'անցընէր թէ շատ պաղ եւ նեղուած ընդունելութիւն մը պիտի ըլլար իրեն:

Ճաշէն ետք մատենադարանի սենեակը քաշուեցան, ուր արդէն բաւական ատենէ ի վեր ընտանի վառարան մը կը տարածէր ախորժ ջերմութիւն մը: Ամէնքն ալ արտասովոր հետաքրքրութեամբ իմացան, մասնաւորապէս այրերը իբրեւ հին ղինուորներ, եւ Յուդիթի ամուսինը իբրեւ մեծ վաճառական, Լիկինիանոսի ամենանոր տեղեկութիւնները օրուան քաղաքական դէպքերուն: Ծեր, խստաբարոյ Իլլիրիացիին ինքնակալ Կարոսի սպանութեան լուրէն վերջ Աթէնքի մէջ առանց լուրի մնացած էին: Ամենուրեք ամենամեծ հետաքրքրութեամբ կը սպասէին կայսերական ընտրութեան: Աթէնքի շատ մը շրջանակները հայր կամ որդի Լիկինիոսի ընտրութեան կը սպասէին: Հոռմի մէջ Լիկինիանոս շատ կուսակիցներ ունէր: Լիկինիոս ծիրանին իրեն համար միտքէն չէր անցընէր, իր դաւակին համար ալ այնքան չէր սպասէր, եւ անձկութեան ու մտահոգութեան էր մատնուած Լիկինիանոսի անկարապրելի շփոթութեան եւ առանց լուրի անոր երկար քացակայութեան վրայ: Իր կատարած բոլոր դոճերը եւ դիցական պատարագները, նաեւ դուշակային նշաններու հետախուզութիւնը ամէն օր, վերջապէս ամէն ժամ ուրիշ բան չէին հաստատեր եթէ ոչ ինչ որ արդէն ղիտէր Լիկինիանոսի ծնունդէն առաջ, թէ ան երբեք ինքնակալ պիտի չըլլար: Աթէնքի մեծ առեւտրական տուններուն համար ալ անցեալ շաբաթները սպասումի տաղնապալից շրջան մը եղած էին, եւ Յուդիթին մարդը անձկոտ անհամբերութեամբ այսօր դարձեալ այս պատճառաւ եկած էր դղեակ, իմանալու համար թէ Լիկինիանոս կայսերական ընտրութեան մասին բան մը լսած էր: Իր նպարեղէնի վաճառատան ահագին եկամուտները շատ աւելի պիտի

ճոխանային կամ պիտի նուազէին — այս կէտը անկից կախում ունէր, թէ նոր կայսրը արդեօք անփոփոխ պիտի պահէ՞ վաշխին — տողոսին — սակը, թէ պիտի միջամտէ՞ մանր ու մեծ առեւտրական գործառնութիւններուն թէ ոչ: Նստած, կեցած եւ պառկած էին տաքուկ վառարանին շուրջ: Զէթի ամաններով աշտանակները շարուած էին կարգով եւ անոնց այրող պատրույնները ախորժելի, գուռայ լոյս մը կուտային: Կաթ, դինի, պտուղի անոյշներ ամէն տեսակ, կարկանդակ, պտուղ, արմաւ ամէն կողմը սրահին շրջանը կ'ընէին սպասարկուներուն միջոցաւ, կամ հիւրերը իրենք լոյս նախասիրութեան անձամբ կ'առնէին: «Արդ, կը բաւէ, Լիկինիանոս, ինչ որ իմացանք քու ճամբորդութեանց եւ անձնական յարաբերութիւններու մասին», ձայնեց նստած տեղը տանջուած Հրեան, Յուզիթին մարդը, «Ո՞վ ընտրուեցաւ»: Ամէնէն վերջին լուրը գիտե՞ս: Ո՞վ է կայսրը:

— Գուշակեցէք, յարեց Լիկինիանոս:

— Էյ, ինչ, դոչեց հրեայ առեւտրականը, բռնկած ածուխներու վրայ կը նստեցնես զիս:

— «Պէտք չէ ոսկիի վրայ ալ նստիլ, ան ալ կ'այրէ», ձայնեց անոր Պաւղա: Վաճառականը դարձեալ, ընդհանուր քրքիջներու հակառակ, «Լիկինիանոս, կացութիւնը լուրջ է, շատ ծանր: Կը տանջես զիս: Ո՞վ է կայսրը»:

— Գուշակեցէք ուրեմն:

— Նումերիանոս, ձայնեց իշխանը:

— «Որդին, ըսաւ լրջօրէն. Նումերիանոս պատրաստած է իր պատանքը, եւ երկրի վրայ այլեւս ծիրանիի պէտք չունի»: Ամէնքն ալ տակն ու վրայ եղած առաջ բերին. «Ի՞նչ, Նումերիանոս ալ մեռած: Ի՞նչպէս: Սպաննուած ան ալ, թէ մեռած»: Լիկինիանոս երեք-ցուց սեւ դռուզ գլուխը. «Ասիկա տակաւին միշտ պաղտնիք մըն է, եւ թերեւս այնպէս ալ մնայ: Ահաւոր փոթորիկի մը ատեն պատգարակով կը տարուէր: Կայծակին եւ անձրեւին դէմ պատգարակը ամուր գոցուած էր, որովհետեւ Նումերիանոս խիստ շատ կը վախնար փոթորիկէն, գէշ օդէ: Երբ պատգարակը բացուեցաւ, կայսրը մէջը մեռած փռուած էր»:

— «Կայսրը մեռեր է կայծակէն ու որոտումէն վախնալով», զիտել տուաւ Պաւղա հեզօրէն: Ամէնքն ալ զարմացած անոր կը նայէին: Լիկինիանոս դարձեալ խորհրդաւոր կերպով գլուխը երեքուց եւ յարեց. «Կը կարծուի թէ ան պատգարակին մէջ երկար ատեն չլսեց որոտումին ձայնը»:

— Զարհուրելի բան: Սարսափելի: Սպանութիւն սպանութեան վրայ, գոչեցին իրարու մէջ եւ իրարու ետեւէ:

«Եւ Կարոս ի՞նչպէս մեռաւ, ա՞յլ զիտցող չկայ դեռ», հարցուց իշխանը: —

— Զաւակը «ոչ» պատասխանեց:

— «Բայց, ահա, վերջապէս, ո՞վ է հիմա Ինքնակալը, թպրրդաց սեւ մազերով հրեան դարձեալ»:

«Ըսէ, վերջապէս, Լիկինիանոս: Մարդս հիմա կը մեռնի ասոր համար», ձայնեց Յուզիթ գաւեշտական շեշտով, աղաչելով հանդերձ, ձեռքերը վեր առնելով, ափերը իրարու սեղմելով: Յուզիթին մարդն անպամ խնդաց բարեմտօրէն:

«Աւելին գուշակեցէք»:

— «Հարկաւ ոչ իր միւս որդին, Զուելի Կարինոսը»:

— «Ոչ: Հայր Կարոս զանիկա գերմաններուն դէմ զրկած էր, Նումերիանոսի հետ Պարսկաստան երթալէ առաջ»:

— «Լաւ, Կոստանդիոս Քլօրոսի կը մնայ պահել զայն», ծիծաղեցաւ նախկին սպան, Պաւղայի ամուսինը:

«Վերջ ի վերջոյ ա՞ն: Կոստանդիոսը», ձայնեց Պաւղա, ոգեւորուած: Արսինէ անոր ուղղեալ սա սրամիտ զիտողութիւնը ըրաւ. «Այ, քրիստոնեայ կայսրը»: Պատրաստարան Պաւղա. «Ամէնէն աղէկը կ'ըլլար քրիստոնեաներուն, հրեաներուն եւ հեթանոսներուն համար»: Շատերը նոյնը հաստատեցին. «Ապահովաբար: Կոստանդիանոս երիտասարդ է, բայց իբրեւ մարդ եւ հրամանատար հաւասարապէս գործունեայ»:

— «Նաեւ անուրթ, երբ հարկ ըլլայ» ձայնեց Լիկինիանոս, միջանկեալ: «Գազանները ցականաւին մէջ չէին ուզեր այլ եւս ուտել դերի բռնուած Գաղիացիները, որքան կ'շտացած էին մարդկային միսէն»:

— «Քստմենելի», աղաղակեց Լիկինիա: «Իրա՞ւ է», հարցուց Պաւղա տակնուվրայ եղած:

— «Այնքան իրաւ, որքան եթէ մօրաքոյր Պաւղա գերի բռնուած Գաղիացիները ինք Հռոմի մէջ աչքերովը տեսած ըլլար, թէ ինչպէս Կոստանդիանոս անոնց ուսերուն տախտակները ծակելով թամբակալ անցուց եւ կառք քաշել տուաւ անոնց գրաստներու պէս»:

— «Քրիստոնեաներուն Աստուածը արդեօք այդպէ՞ս ընել հրամայեց իրեն», հեզնեց Արսինէ:

«Ոչ: Տէրն մեր Քրիստոս չի ցանկար եղան պատարագի Միհրին պէս, ան ինքզինքը պատարագեց խաչին վրայ», յարեց Պաւղա ծանրախոհ: «Մենք Քրիստոնեաներս Կոստանդիանոսը մեր մէջէն չենք հաշուեր, թէեւ իր քաղաքականութիւնը կամ կրթութիւնը զինքը մեղեցին խնայելու մեզի»:

— «Մաքսիմիանոսն է կայսրը», ձայնեց իշխանը: «Գրեթէ  
գուշակեցիք»:

— «Գաղերիանոս», — «Աւելի մօտեցաք»: Քանի մը լուռ  
վայրկեաններ եւս ընդհանուր խորհրդածութիւն: Յետոյ ձայնեց ծե-  
րունի զօրավարը. «Պահակազօրքին պետ Ապէ՞րը» (\*): — Լիկինիանոս  
դարձեալ խիստ լրջախոհ. «Ան ալ այլեւս ծիրանիի պէտք չունի»:  
Յայտնի ահուգող մը պատեց զամէնքը: Իշխանը գունաթափ եղաւ եւ  
ձայնեց. «Ոսէ, դաւակո, դաւակո: Ըսէ, Ապէ՞րն ալ մեռած է: Ու-  
րեմն հոն անդին ինչեր կը պատահին, ով աստուածներ: Ուրեմն ճշ-  
մարտութիւն կայ նախանշաններուն մէջ: Ըսէ»: Լիկինիանոս կեցած  
էր ջերմոցին առջեւ, վեհօրէն պարեղօտով ծածկուած, եւ ձայնեց  
հաստատելով. «Ապէր մեռած է: Կինճը զարնուած է»: Ամէնքը իրենց  
նստած տեղերէն ելլելով հաւաքուեցան կրակին մօտ Լիկինիանոսի  
չուրջ, աչքերնին չորս քայտ: Եւ պատմեց Լիկինիանոս. «Ապէր  
կասկածելի թուեցաւ զօրավարներուն, թէ ան մաս ունի Կարոսի եւ  
Նումերիանոսի մահուան մէջ»:

— «Բայց Ապէր, ինքը Նումերիանոսի աներն է», ձայնեց Պաւ-  
ղայի ամուսինը: «Նոյնիսկ եթէ», շարունակեց Լիկինիանոս: «Ան  
պէտք է տեղեակ եղած ըլլայ թունաւորութեան միջոցաւ դաւադրու-  
թեան եւ խորհրդաւոր սպանութեան»:

— «Կարելի չէ», ձայնեց հրեայ վաճառականը: «Ան իմ ամէնէն  
հաւատարիմ պարտապանս էր: Բայց ես նորէն բան մը չեմ կորսն-  
ցըներ: Ես երաշխաւոր ունիմ, ապահովուած եմ, ինչ ալ որ պատահի:  
Օրհնեալ ըլլայ Եհովան: Յուզիթ, փառք տուր Եհովային»:

— «Բերանդ քեզի քաշէ հիմա, ծեր, հրամայեց Յուզիթ: Եւ  
ան. «Շարունակէ, Լիկինիանոս: Կը տանջես զիս: Ապէր մեռած: Ա-  
պէր մեռած»:

— «Բայց ես երաշխաւոր ունիմ, ապահովուած եմ, ամուրի  
կապած եմ: Կորսնցնելիք չունիմ: Օրհնեալ է Եհովան, փառք քեզ,  
Եհովա»: Լիկինիանոս շարունակեց. «Նումերիանոսի թաղումէն ան-  
միջապէս վերջ զօրավարները դադտնի պատերազմական գատարան  
մը գումարեցին: Ապէր ազատ կամքովը ներկայացաւ: Դատարանին  
մը գումարեցին: Ապէր ազատ կամքովը ներկայացաւ: Դատարանին  
վարի կողմը, մինչ իրմէ վեր կիսաշրջանակ կը կազմէին զօրավար-  
ները: Բայց ունկնդրութիւնը չէր վերջանար, բուն Ապէրի դէմ ամ-  
բաստանութիւն չկար, ոչ մէկ ապացոյց անոր դէմ, եւ ահա» — «Եւ  
ահա, եւ ահա...» պոռաց վաճառականը, միջանկեալ: — «Եւ ահա,

ինչպէս արծիւը իր երկար ատենէ ի վեր դարանակալ եղած որսին  
վրայ, նոյնպէս զօրավարներէն մէկը սուսերամերկ յարձակեցաւ  
յանկարծակիի Ապէրին վրայ եւ անոր մարմինին մէկ կողմէն միւսը  
մխեց հանեց սուրը: Արիւնը հեղեղի պէս կը հոսէր, դետինը ինկած,  
տախտապարտուած, ան առանց ճիչ հանելու հողին փշեց: — Յան-  
ցաւո՞ր: Անմե՞ղ: Ո՞վ կրնայ ըսել: Այս է զօրավարներուն տեղեկա-  
գիրը երէկ չէ առջի օրուան ծերակոյտին ժողովին մէջ»:

— «Ով համօրէն աստուածներ», ըսաւ նախ իշխանը ընդհանուր  
լուռութենէն վերջ: Եւ կրկին յաջորդեց խորունկ լուռութիւն: Եւ ահա  
Յուզիթին ամուսինը խնթի պէս ասդին անդին կը վազվզէր: Արդա-  
հատանքն ու շահախնդիր վստահութիւնը կը պայքարէին անոր մէջ:  
Բայց շատ չանցած, վստահութեան զղացումը յաղթեց զհոգնակու-  
թեան ակնբերւ. արտայայտութեամբ եւ չէր կրնար վերապահ դտնուիլ  
սակայն, թէ եւ Յուզիթ բարկութեամբ անոր բերանը դոցել կ'ուզէր  
ձեռքովը, որ չիտի: Բայց հրեան նորէն ցատկեց տեղէն եւ ձայնեց.  
«Փառք Եհովայի: Փառք Տեառն Եհովայի: Սակայն ապահովուած  
եմ, կորսնցնելիք չունիմ խեղճ Ապէր: Ես երաշխաւորուած եմ: Գոր-  
ծըս ապահով է: Օրհնեալ ըլլայ Եհովան, Յուզիթ»:

Հիմա կը թնդար Պաւղայի լեցուն ձայնը, իր հոգիին խորունկ  
յուզումովը ցնցուած. «Յանցաւո՞ր: Անմե՞ղ: Դատաւորն կենդանեաց  
եւ մեռելոց Տէր Յիսուս Քրիստոս զիտէ միայն եւ պիտի յայտնէ  
զայն: Աստուած ողորմի անոր հողիին»:

— «Միհրն ալ զիտէ զայն: Անոր հազար աչքերը կը տեսնեն  
զայն: Իցիւ ան մեռեալին հողին ողորմութեամբը անվտանգ առաջ-  
նորդէ նեղ կամուրջին վրայէն»:

— «Բայց հիմա ո՞վ է կայսրը, ո՞վ է կայսրը», կը շէջը կը  
մրմոար հրեայ առեւտրականը, ուժով մը քաշելով Լիկինիանոսի  
պարեղօտէն: Լիկինիանոս զլուխը տնկեց ելաւ եւ ձայնարկեց. «Ա-  
պէրին մարդասպանը»:

— «Բայց ոչ, ոչ բայց: Եհովան պահպանէ զայն», գոչեց հրե-  
եան:

Լիկինիանոս կրկնեց. «Ապէրի մարդասպանը, այսինքն սպան-  
նողը. Դիոկղէս»:

— «Ի՞նչ, Դիոկղէս», ձայնեցին ամէնքը: «Ա՞ն, կարելի՞ բան  
է: Հանդարտարարոյ, սակաւախօս, քաջարի սպան, բնիկ Դիոկղէս  
զիւզէն, Պորոս փրիստփային զպրոցէն բարեպաշտ Դիոկղէսը»:

— «Նոյն նա», հաստատեց պատմողը: «Ինչպէ՞ս եղաւ», հար-  
ցուցին: Մտիկ րբէք ինչ որ պատմեցին Հոռմի մէջ: Արդարեւ խոր-  
հրդաւոր բաներ կը պատահին այս աշխարհին վրայ: Նախանշաննե-  
րըն ու գուշակութիւնները արհամարհելի բաներ չեն: Ամէնքը ծայր

(\*) Ապէր=էպէր: Վերջինը կը նշանակէ կիճն, վարագ, վայրի խոզ: Հեղի-  
նակը բառախաղ կ'ընէ: (Ծանօթ. թարգմանողին):





լարերուն մէջ, որոնցմէ դուրս երկրախտը աղբւրի պէս կը հոսէր վայրով, կեղերջական արտասուքով: Թախիծ, անրջական եղանակներ, սեփական ապրումով վանդիւններ, որոնք խտոյն ունկնդիրներն ալ կը վարակեն նոյն եւ մի գլացումներով: Անոր աչքերը, գոգցեսաղիպուածարար, պինդ այլ տխուր նայուածքներով կ'ուղղուէին կիւղինիանոսի վրայ, եւ այնուհետեւ ահա սքանչելի ձայնը դէրդ ու ազու մելամաղձիկ հիւսքին թելերը կը մանէր տաւիղին լարերուն վրայ: Կ'երգէր.—

Հովը սաղարքն այերփին մէջ  
Սաստկամունչ կը հալածէ,  
Շառաչիւնին մէջ համօրէն  
Սաղարքին կանչը կը լսեմ.  
«Ով դու քամի մոլեգնախանձ  
Ինչո՞ւ դուն գիս կը հալածես:  
Անգե՞տ ես դուն բոլորովին  
Կամ բնաւին չե՞ս յիշեր դուն.  
Երբ դեռ մատղաշ ու գեղանի  
Ծառին վրայ կը կենայի,  
Այնքան մեղմիկ ու հեշտօրօր  
Կը փչէր ընդ լեռ ընդ ձոր:  
Ամբան քնքաշ այն օրերուն  
Փայփայէիր գիս ըսելով  
«Դուն տերեւիկ, կը սիրեմ քեզ  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեան»:—  
Քամին խնդաց ու հեզմելով  
Փըչեց ուռցուց իր այտերը,  
«Սիրուն տղայ, դիտէ ինչպէս  
Թառամեր է հոս ամէ՞ք բան.  
Մատղաշութեանդ փառքին հետ  
Քու մասին սէրս ալ մեռաւ»:—  
Նոր ուժով մը ահա քամին  
Քշեց տերեւն ու տարաւ.  
Կակուղ ձիւնը տեղալով մեղմ  
Հանգիստ ձիւնը տեղալով մեղմ  
Հանգիստ տուաւ հէ՛ք տերեւին,  
Ծածկեց ամէն ցաւ, տառապանք  
Ողորմելով այն տկարին:  
Քամին կրկին կը մոլեգնի  
Ցնծայ, երգէ դաշտին վերեւ.

«Ես հերոսն եմ հզորագոյն  
Որ կը յազթէ ամէն բանի»:

Տաւիղը կը նմանցնէր մոունչքը փոթորիկին, եւ հուսկ մահա-  
մերձիկ գանդիւններով կը հեւար, կարծես հաղիւ զգալի սղոխի մը  
պէս: Ոչ մէկ ընդդիմութիւն գորեց: Արսինէ անգամ մըն ալ ստիպուե-  
ցաւ ձեռք առնել նուագի գործիքը: Տխրաշունչ, սեւամաղձիկ եղա-  
նակը կը սկսէր, ու Արսինէ կ'երգէր.—

Արեւելի մէջ քուրմ մը կար,  
Որուն մեռած էր կինը:  
Կ'ուզէր որ իր ռստեր ձեռքին  
Զըլլայ ոչ մէկ մարդ քեցնաձու:  
Ու եղաւ որ վայրագ թաքար  
Իշխան մը քուրմին ըլլայ աշակերտ:  
Քուրմը վտանգ մը տեսնելով  
Ազդիկն ըրաւ ապահով:  
Բայց հզօր է սէր, տաֆուկ սէր,  
Կ'այրէր ազդիկը սիրահար:  
Քուրմը գիտէ բոցն ազդկան,  
Եւ իրարմէ գատ կը պահէ:  
Բայց հզօր է սէր, տաֆուկ սէր,  
Տղոց սիրտը բարբաճ է:  
Քուրմը գիտէ բոցն ազդկան,  
«Ո՞րն արագ է, քէ՞նը քէ սէր»:  
Քուրմը բաժնեց թաքար իշխանը՝ Քիարամ  
Ու իր ազդիկը՝ Մամիկա իրարմէ:  
Իշխանն հիմա աշուղ դարձած, վինն ի ձեռին,  
Իր Մամիկան կը փնտոէ ամէն կողմ,  
Երկրէ երկիր թափառայած, սիրտովն ալ  
Քուրմին անէժճ կարդալով:  
Ծաղիկներուն, ծառերուն եւ լիներուն կը պազատի,  
Արեգակն, լուսինն եւ աստղերուն ու գետերուն.  
«Ոհ, ըսէ՛ք, տեսա՞ք արդեօք իմ սիրականս երբեք  
Ոհ, ցոյց տուէ՛ք մամբայ մը իմ ոտքերուն»:  
Սրափացին ծառեր, գետերն ալ միասին,  
Շղնչեցին ծաղիկներ, ալիքներն ալ միաբան  
Հովին շունչին եւ լուսինին շողին հետ,  
Բառերը սա ստուերամած եւ թախծոտ.  
«Ով Քիարամդ դու հէ՛ք, սիրաբարբաճ, վշտահար,

Տեսանք հայրը, տեսանք նաև հարսնացուն,  
 Ինչպէս արագ ու հեռուն կը փախչէին, միշտ հեռուն —  
 Բայց չենք կրնար պատմել ըսել ինչ որ տեսանք»:  
 Աշուղն ուստի կը քափառի կրկին անդու ու կ'երգէ  
 Լեռներուն մէջ, հովիտներուն ծոցն ու մէջը ձորերուն:  
 Բարէ ահա, արծաթաեռնչ ձայն մը հնչէ յանկարծուստ:  
 Քիարամ ու Մամիկա զիրար գտան:  
 Փապար մը հոն կ'ըլլայ բազին, կ'ըլլայ երկինք ու ոսկի:  
 Անպատմելի է հիմա երանութիւնը անոնց:  
 Անհունօրէն Քիարամ եւ Մամիկա կը խայտան:  
 Հայրը զանոնք որսալու համար նամբայ ելած է: —  
 Սէրը հօր, սէրը տափուկ է սակայն,  
 Կ'ուզէ շոյել եւ համբուրել ու ձուլուիլ:  
 Անոնց համար չկայ երբեք բաժնուիլ:  
 Բայց փութը որ շատ բան գիտէ սիրոյ շուրջ  
 Կ'ըսէ. «Սէրը պիտի այրէ երկուքն անոնք»: —  
 Հայրը կանխաւ կախարդած է իր աղջկան  
 Համար շինած իր լօղիկը:  
 Հալածանքէն ետ կը դառնայ ու կ'երգուի,  
 «Մահուան մէջ իսկ զանոնք երկուքն ալ կը բաժնեն»:  
 Գերեզմանէն դուրս բարձրանան երկու քուփեր վարդերու,  
 Որոնց ոստերը իրարու կը միտին սերտ:  
 Ո՛վ փութը դու, տես սէրն որքան գեղեցիկ է:  
 Կարելի՞ է այսպիսի սէր մը ազարտել:  
 Սէրն հօր է, տափուկ է սէր,  
 Վարդերն որքան կ'ուզեն զիրար համբուրել:  
 Բայց սիրոյ շուրջ շատ բան գիտէ փութը Ասլի —  
 Երկու վարդին մէջտեղը քուփ մը տատասկ կը տնկէ:

Գեղծին տպաւորութիւնը չէր վրիպեր: Լիկինիանոս տմոյն,  
 վատուժած, յանկամս, դացեր ինքզինքը սահեցուցած էր բազկաթո-  
 ուի մը վրայ եւ թափուր նայուածքով կը յառէր ջերմոցի կրակին:  
 Լիկինիայի աչքերը անոր՝ իր դուկին վրայ կը հանգչէին արտօնա-  
 շող: Լիկինիոս կամացուկ մը դուրս ելաւ: Ճնշուած ծանր տրամա-  
 դրութիւն մը կը մնար ակումբին վրայ, մինչեւ որ «երախանն լու-  
 ծաւ» եւ հիւրերը հեռացան իրենց կառքերուն մէջ: «Մի մոռնար Ա-  
 պեղէսի նամակը»: — Լիկինիանոսի համառօտ հրաժեշտն էր այս  
 Արսինէին ուղղեալ, իրարմէ բաժնուելէ առաջ: Ննջասենեակին դրան  
 առջև պահակ կեցող սպասուհին Արսինէին խուցը տարաւ վատուած  
 լապտերը: Խոսքով իրարմէ կը ննջէր: Այտերուն վրայ կը դարձէր

սարդոնական կարմիր մը: Շրթունքներուն վրայ կը խաղար երջան-  
 կաւէտ ծիծաղ մը: Ինչեր արդեօք նորէն պատմած էին իրեն Բրիսա-  
 նոյլ եւ ուրիշ քրիստոնեայ դերուհիներ եւ Պաւղայի հոգեզաւակ աղ-  
 ջիկը, ի մասին Քրիստոսի, Աւետարանէն եւ քրիստոնէից պաշտա-  
 մունքէն: Ապահովաբար, Միհրէն ու Անահիտէն զատ ան կրկին Քրիս-  
 տոսի ալ աղօթած էր: Արսինէ բուն անձկութեամբ երկար ատեն դի-  
 տեց անդորրաւէտ ու խաղաղիկ ննջող դեղանի երեսը:

ԱՊԵՂԷՍԻ ՆԱՄԱԿԸ

ԱՊԵՂԷՍ ԱՌ ԱՐՍԻՆԷ

Սիրեցեալ Արսինէ. — Անպարտաւորով, երկարժամանակեայ  
 մեկնումէս առաջ: Պարտաւորուած եմ փախչիլ: Լիկինիանոսի համար  
 չէ: Երկար ատենէ ի վեր հաշտուած եմ: Բայց քեզի եւ անոր համար:  
 Անոր քեզի ունեցած սէրը անսահման է: Այս պատճառաւ ալ անոր  
 գայրոյթը այնքան բուռն եղաւ: Կ'ն: գեմ հեռանալ, հակառակ որ իմ  
 սէրս առ քեզ ոչ նուազ մեծ կրնայ ըլլալ քան Լիկինիանոսինը: Պէտք է  
 որ ան քեզ ունենայ, նահիճը չիյնալու համար: Քեզմէ գատ ուրիշ  
 փրկութիւն չունի: Ես արուեստ ունիմ: Բայց ասիկա անգամ կարող  
 չէ մեզ բոլորովին մահուր պահել եւ պահպանել խաւարէն: Ոչ մէկ  
 իրաւունք պիտի ունենամ փութ սիրոյն եւ հոգիին վրայ: Այս պատճա-  
 ռաւ կը հեռանամ: Փրկէ ազատէ Լիկինիանոսը, իմ բարեկամս: Թող  
 երկինքին լոյսը շողայ ձեր վրայ: Շնորհակալութիւն փութ սիրոյն  
 համար:

ԱՊԵՂԷՍ

Պարեգօտին ծալքերուն մէջէն Արսինէ կը տեսնէր իր սիրտին  
 տրոփունները: Արիւնը դուրսը կը խուժէր: Ահա պիտի մարէր: Մեղ-  
 մով քիչ մը իրարմէ բաժնեց պատուհանին մագաղաթէ փեղկերը:  
 Մշուշը փարատած էր: Բարերբը ցուրտ մը կը խուժէր իրեն դէմ:  
 Սեւաթորմի գալարուն ամպեր հանդարտօրէն կ'անցնէին երկինքին  
 վրայ: Քանի մը մանր աստղեր կը փայլէին: Արսինէ սպասեց, մինչեւ  
 որ սիրտը հանդարտեցաւ եւ տրամադրութիւնը տեղը եկաւ: Յետոյ  
 հանուեցաւ յուշիկ: Հոյակապ մարմինը դուրս եկաւ իր քողարկու-  
 մէն, մաքուր, անաղարտ մնացած, աշխարհի մը մէջ, ուր մարդիկ  
 վաւաչտուտութեան, ցոփութեան մէջ կը թաթխուին, ինչպէս կենդա-  
 նինքը ճախճախուտքին մէջ: Ու հիմակ ալ ասա եկեր կը ցանկան  
 այսպիսի մարմինի մը եւ քրմուհիի մը մաքուր հոգիին, որ կը պար-  
 տի միայն մէկը սիրել, Միհրը, իմ եղբայրս, իմ փեսաս, իմ բարի  
 հովիւս, Անահիտ, անարատ երկնաւոր թագուհի, քեզի, միմիայն

քեզի այս մարմինը, այս հոգին: Անարատ, անարատ, — մարդոցմէ միայն մէկու մը նուիրուած, եւ ան ալ թաղաւոր էր:

— Նուիրական ունելիով ճմլեց պատրոյզին բոցը: Մուժ գիշերը կը պատէր զինքը: Նոճիներուն կատարները միայն կը սրսփային պարտէզին մէջ իր դիմացը: Կը տեսնէր զանոնք որ սեփսեւ ու ծանրածանր դէպի երկինք կ'երկնային: Քունը չ'ուզէր գալ: Ինչեր պատմեցին այսօր թաղաւորներու եւ կայսրերու վրայ: — Դիակաւորանոս ալ Միհրապաշտ է: Սպանութեան մը շնորհիւ ան Ինքնակալ դարձաւ: Սպանութիւն, սպանութիւն թաղաւորներուն քով: Կարինոս լկտի մըն է: Ու ասոնք են աստուածական, ասոնք ներսն կ'արինոս լկտի մըն է: Ու ասոնք են աստուածական, ասոնք: Իսկ Սոս է Աստուածութիւնը: Ահուրայի երեւումներն են ասոնք: Իսկ Սոսը՝ — Մաքոն էր ան: Ան իմ մէջս Անահիտի Աստուածութիւնը եւ ոյժը եւ իմաստութիւնը կը փնտոէր, թէ . . . Ու Արսինէի միտքին առջեւ բովանդակ պայծառութեամբ, հակառակ մութ գիշերուան, կը յայտնուէր սա կարելութիւնը, թէ Խոսրով իսկ կրնար ուրիշ բան փնտոած ըլլալ: Անորմէ, Խոսրովէն ալ յուսախաբ, եւ Ապեղէս ու Լիկինիանոս նոյն նոճարին մէջ: Թաղաւոր ըսածը ալ վերջ ի վերջոյ մարդ չ'է միթէ: Խաւարոյն հոգիներով ու աղջամուղջի գործերով մարդ չ'է՞ միթէ: Թաղաւոր մը կրնա՞յ այդ երկնային շողը, ռեթաղաւորահայրէն: Թաղաւոր մը կրնա՞յ այդ երկնային շողը, ռեթաղաւոր մը կրնա՞յ այդ երկնային շողը, ռեթաղաւոր մը կրնա՞յ այդ երկնային շողը: — Ահա մեր արքայազունը: Վայ տինը, կորսնցնել չար գործով: — Ահա մեր արքայազունը: Վայ Տրդատին ու իր արքայազոյ ուստիին: Անորմէ եւ անոր արքայական բարձրութենէն կախում ունի իմ ճակատագիրս, իմ ապագաս: Բայց ահա ան ալ կը թաւալի մարդոց տղմուտքին մէջ . . . յետոյ . . . Արսինէ սոսկումով ծածկեց երեսը բարձին մէջ: Պատկեր պատկերի վրայ իրարու ետեւէն կ'անցնին անոր ամրափակ աչքերուն առջեւէն, բայց միշտ ամէնէն աւելի որոշ կը տեսնէ իր սեփական ապագային պատկերը, որմէ կը սարսոսայ իր հոգին եւ որմէ չի կրնար փախչիլ, հէք, անհայրենիք, պատառատուն ցնցոտիներով մուրացկանուհի, դուն Արսինէ, որ նախանշաններով ու դուշակութիւններով կ'ապրիս. սովալըլուկ աղջիկ մը պարտաւորուած մարմինը ծախու հանելու, հոն, Վալարչապատի կործանուած որբայայրին մէջ: Բայց, սրտեակդ իմ, դուն դեռ Անահիտը ունիս: Եւ Միհրը յաւէտ իմ մօտս է, ցորչափ աչքերս անոր ճառագայթները կը տեսնեն: Իսկ ան, ով հեշտութիւն անմահութեան — անոր հայել, անոր հաղար աչքերուն յառիլ, Ահուրայի գոգը ընկղմիլ, անոր կապոյտ, հրազարդ, անծայրածիր երկինքին մէջ մուտ գործել: Բերկրալից սարսուռ մը ցնցեց զինքը:

Բայց առաջին յաջորդ ըստէին ահա տարակոյսը կրկին կը սողոսկի ներս: Խորհրդանշան, խորհրդանշան, զգալի նշան երկինքի — բնութեան — յաւերժական ոյժին եւ օրէնքին, ինչպէս սովոր է ըսել Ապեղէս: Զեւս ինկած է, դահագուրկ: Վերը Ակրոպոլիսի վրայ անոր հսկայարեքմ արձանին մէջ կը ցատկերտեն ասդին անդին առնէտներ ու մուկեր, կ'ըսէ Լիկինիանոս: Ոչ մէկ դարգացած Յոյն կամ Հոմայեցի կը հաւատայ այլեւս աստուածներուն: Ի՞նչպէս: Ե՞րբ, ո՞չ, ո՞չ, Ահուրա մեկ օրնական: Ո՞վ Անահիտ, պոռոց տառապահոծ Արսինէ, այնքան բարձր, որ Խոսրովիդուխտը քունէն ցատկեց: Բայց լուս, ապիկար յորտս, դոչեց Արսինէ, եւ բարախուն սիրտով եւ ուղղարեքմ զուլտով կը նայէր, թէ Խոսրովիդուխտը դարձեալ կը քնանա՞յ: Անկողինին շուրջ կը դառնայ Արսինէ անհանդիստ: Զի կրնար հանդիստ ըլլալ: Քուն չի գար: Ուստի կասկած կասկածի վրայ: Ախ, սա խորհրդանշանը: Սա խելացի Յոյները: Երբ դայ Մովպետը . . . Սուրբ Մովպետը, ան ալ մարդ է, կը փսփոսայ տարակոյսը, եւ խոսոված նայուածքներուն առջեւ արդէն դարձեալ կը տարածուի ճահիճը, ուր մարդիկ կը թաւալին կենդանիներու պէս: — Ի բաց, ի բաց, կը պոռայ սիրտը: Լոյսի աստուածներ: Միհր, շուտ եկուր քու արեւակառքովդ, շուտ եկուր, լուսաւոր առաւօտ, եւ փախցուր դեւերը: Դեւերը ահա, Ահուրա, Ահուրա: Դեւերուն աչքերը խաւարէն դուրս, Ահուրայի ողիները: Խոսրովիդուխտը նորէն կը շարժէր: Լուսոյ քրմանոյցը, Արսինէ, դարձեալ կը կշտամբէ զինքը. Ո՞ւր է քու հաւատքդ: Քու բանականութիւնդ: Ցատկեց անկողինէն եւ յոտից ցլուկս պաղ քրտինքով ծածկուած, դէպի պատուհանը, եւ երկար ատեն մայրերուն ծուփ ի ծուփ հոյլէն միայն պատասպարուած, կը դողար ցուրտէն, եւ փեղկերուն բարակ ճեղքերէն, երկինքին երկայնքը յառեցաւ դէպի աստղերը, դէպի դուշակական նշան: Ո՞չ մէկ աստղ լայնքէն թէ հեռուէն: Ո՞չ մէկ նախանշան: Գիշեր: Գիշեր, որքան հեռուն որ նայէր: Ծանր խաւարի անծայր, անխորի դանդուած մը: Կը դառնայ դէպի անկողին կարկաչող բերանով: Եւ դեւերը կուզան կրկին ու կը հարցնեն ու կը չչեն ու կը սուլեն. «Ո՞վ է Ահուրա: Ո՞վ է Զեւս: Ո՞վ է Բահագ: Ո՞վ է Եհովա: Ո՞վ է Եհովա: Ո՞վ է Աստուած: Ո՞վ է Քրիստոս»:

Մինչ անքուն կը հսկէր ու կը տառապէր, կը լսէր Խոսրովիդուխտի շունչին մեղմ տուրեւտը: Կը քնանար գոցցես բարի հովիւին թեւերուն մէջ: Քովի սենեակին գոց դուռնէն կանոնաւոր դարկերով դուրս կը խուժէր խորհրդացող Տրդատին ուժով շունչը: Երբ հեռացաւ Միհր, Արսինէի ալ քունը տարաւ:

\*\*

Սիւլէն, յաւիտենապէս միեւնոյն աղիւսակարմիր զիտնականի վերարկուով եւ միշտ դունաթափ հողաթափներով, տակաւին զիտութեան կամ ճանաչողութեան իր վարդապետութեան մանկավարժական միեւնոյն աստիճանին վրայ կը կենար Հայոց արքայազունին դասաւանդութեան համար: Ծճարիտ է որ տեսակ մը իշխանութիւն ունէր անոր վրայ, բայց Տրդատ ամէն օր իր անառակութիւնները կ'ընէր, ապակի, յախճապակի կամ քիւրեղ կը կտորէր կը թափէր, ամէն օր լուսացարանէն կամ անդաստակէն դուրս կամ հեռուոր տընկարանէն աղջիկներուն պոռչտուրը անսպակաս էր նոյն Տրդատին երեսէն: Ամէն օր Բրիսանոյշ կ'ընդունէր անոր այցելութիւնը եւ ծաղիկները կամ անուշեղէնները: Բայց յամառ կը մնար, եւ իր ետեւը կը գտնուէր եպիսկոպոսը, արթուն սիրով ու լրջութեամբ հայր մը իրեն համար: Անկնունք երախաներու կրթութեան մէջ իր ազդեցութիւնը եւ յառաջիկայ դատկական տօնին, զրիստոնէից եկեղեցիին մէջ հաւաքուած հաւատացեալներուն առջեւ իրրեւ անչափահաս անդամ մը ընդունուելուն իր երկչոտ բայց ուրախառիթ սպասումը, իրրեւ պաշտպանութիւն կը ծառայէին իրեն: Խոսրովիդուխտ, յանդէտս Տրդատի, մտերիմ բարեկամութեամբ կապուած էր Բրիսանոյշի, ինչպէս նաեւ Պաւղայի մէջ հոգեդաւակ աղջկան հետ, որոնց ամառանոցին մէջ Խոսրովիդուխտ երկար ատենէ ի վեր ուզածին չափ կ'ելլէր կը մտնէր: Խոսրովիդուխտի այս բնատուր աղնուական էութիւնը Արսինէի լոին հիացում կը պատճառէր եւ վերջերը ա'լ աւելի շնորհալի դարձաւ: Անկեղծ, ճշմարտախօս, մեղմարարոյ, անուշիկ բնաւորութեամբ, նոյնիսկ հանդէպ իր անհամբոյր, դաժան եղբոր, որ սակայն չէր թերանար իր քրոջը թեւերուն կամ ձեռքերուն վրայ իր առիւծի թաթերուն դրոշմը տպաւորելուն մէջ: Խեղճ աղջիկը հաղիւ ճիշտ ժամանակին եղջերուի պէս փախչելով տունին եւ անդաստակին մէջէն, կը յաջողէր նուազ մնասով դուրս դալ այդ եղբայրական սիրոյ տպաւորութիւններէն...: Բայց քարձր դասու ընկերութիւններուն, ուսուցիչներուն, նոյնիսկ Սիւլէնի փաղաքշանքները, եւ իր զեզեցկութեան առթած հիացումը երիտասարդ բժիշկ Վալերիոսի, որուն աչքերը ամենուրեք զինքը կը փնտռէին, փաղաքշական գովասանքները, ամէն կողմ վայելած յարգանքը, բոլոր անեցիներուն իրեն համար հետախոյզ զարմացումը, քաղաքացիներուն, մանաւանդ ուսանողներուն դարպասումը — այս ամէնը անոր քնքոյշ սիրտին համար բոլորովին անտարբեր բաներ չէին, երբ նկատի առնուի նաեւ որ ամբողջ Աթէնքի մէջ Խոսրովիդուխտի առթած ընդհանուր հիա-

ցումը իրեն եւ իր տունին պարծանք ու պատիւ կը բերէր Լիկինիոս իշխանին զեղեցիկ մէկ խօսքին համաձայն: Ծիշտ այս պատճառաւ ամէնուն, նոյնիսկ արքայազունին համար ուղիղ չէր որ Խոսրովիդուխտի անձը կամ էութիւնը լուռ, իր աչքերուն արտայայտութիւնը երազային եւ լուրջ մնար տակաւին: Ամէնէն թանկագին քարերը ամէն կողմ կը մնային առանց դործածուելու, եւ զժուարաւ քանի մը հատը կը ստիպէին որ գործածէ: Վրոնն ղլուխը եւ մայրը յարդարող զերուհին ամէն առաւօտ պիտի աղաչէր որ համակերպի եւ սենեակ երթայ: Դժկամակութեամբ կը թողուր որ մարմինը չփեն, մարմեն, իւղ քսեն, վարդի, մեխակի, կամ մանիշակի ջուր սրսկեն, մինչեւ իսկ առանց վեր վար նայելու իր արդուզարդի այդ վայրկեանին, ինք մազաղաթի վրայ բաներ մը կը կարդար: Իրաւ է որ ժամանակէ մը ի վեր սկսած էր ամէն սպասարկութենէ վերջ շնորհակալութիւն յայտնել գերուհիներուն: Աղնուական, նուիրեալի յատուկ շնորհ մը անոր վրայ: Կարեկցարար կը նայէր եղբորը, երբ ճաշի ատեն ան չափ չէր պահէր, ոչ ալ արժանապատուութիւն, այլ ծամածոութիւններով, սրամտութիւններով, անշահ չաղփաղփութիւններով բնդհանուր քրքիջ առաջ կը բերէր: Եւ ինչ որ ամէնէն աւելի աչքի կը դարձնէր, Խոսրովիդուխտ սկսաւ հետաքրքրուիլ իշխանին բոլոր զերիններուն եւ գերուհիներուն ծաղումին, սնունդներուն, առողջութեան եւ ամէն տեսակ պէտքերուն համար: Այցելութիւն կուտար հետունները, քիչ ատենէն զիտցաւ կարգ մը անուններ եւ կենսադրական պատմութիւններ, հիւանդութիւններ ու ցաւեր, որոնց մասին կը պատմէր սեղանին վրայ, դրամ, ուտելիք եւ դեղ կը խնդրէր, եւ ամբողջ տունին մէջ, առանց հասկցնելու, այնպէս մը կ'ընէր որ ամէնքը կ'ախորժէին իրմէ, ու միայն Տրդատին յիմարական եւ տաղտկալի կը թուէին ըրածները: Միայն թէ երբ Խոսրովիդուխտ բացառաբար դարձեալ իրեն հետ թատրոն խաղար, կամ ուրախութենէն ու խնդալէն պոռալով կանչելով ընկերային դաւեչտ, մանաւանդ «Քօթթապօս» կոչուածը, եւ սիրուն կերպով սրածայր ըրած բերնովը ջուրը սրսկէր արծաթէ փոքրիկ դաւաթին մէջ, կամ դասի ժամանակ, երբ Խոսրովիդուխտի պայծառ միտքը նոյնքան թեթեւօրէն, ինչպէս Տրդատ, ահանջ կը կախէր Սիւլէնի ուսողութեան դասին կամ յունական ողբերգութիւններէն անոր յուղիչ ընթերցումներուն, կամ երբ ինք, յաւէտ Հայուհին, Արսինէին եւ Տրդատին հետ պտոյտներու ժամանակ ձիւնապատ վայրերու մէջ, կամ ներսը, տունը մատնադարանի տաքուկ սրահին մէջ, կ'երգէին ու կը խօսէին իրենց ծնողքին, Վաղարշապատի պալատին, Հայաստանի երկրին ու ժողովուրդին վրայ, այն ատեն երեքն ալ կը զղային արդարեւ, թէ Խոսրովիդուխտի նոր ստացած միտքը կամ փոփոխութիւնը զայն չէր բաժնած երեքի խում-

բէն, ուրկէց ալ եկած ըլլայ այդ նոր ոգին: Բայց թէ ճշտիւ ո՛ւրկէց կուգար այդ փոփոխութիւնը, Խորովիդուխտ սանկ քիչ մը այդ մասին բացուած էր: Արսինէի հոգիին մէջ Միհրէն փոխանցուած բաւական լոյս կար հասկնալու, ճանչնալու համար թէ «իր տղու», Խորովիդուխտի մէջ զործող նոր ոգին կամ փոփոխութիւնը լոյսի բարի ոգի մըն է, եւ ոչ բնաւ խաւարի ոգի: Եւ այդ ոգին նոյնիսկ եթէ Քրիստոսէն եկած ըլլայ — ան Քրիստոսն ալ եօթը Ամեաններէն մէկն է, եւ Խորովիդուխտ անոնց հաւատալով հանդերձ չէր թերացած Անահիտի հանդէպ իր հաւատքին մէջ: Միայն թէ կամաց կամաց սկսած էր փափուկ ու կնճռոտ հարցումներ ընել: Չոր օրինակ վերջերս. «Ի՞նչ է պատճառը որ Անահիտ Աստուածուհին, զոր ոչ ոք կրնայ աչքովը տեսնել, պուրակին մէջ իր արձանին վրայ ճիշտ նմանը ըլլայ Արսինէին»: Քրմուհին շատ ուրախ էր որ ինքը ասկէց առաջ կրցած էր բարձրաթուի բացատրութիւններով խօսիլ խորհրդանշանի եւ մարդկային դէմքով աստուածները ներկայացնելու սովորոյթին վրայ, եւ աղջիկն ալ լսած էր իր խօսածը: Բայց Խորովիդուխտ անհասկնալի աստուածաբանութենէ կը խորչէր եւ սա միամիտ խոստովանութիւնը կ'ընէր, թէ Քրիստոսի մասին բոլոր պատմուածները շատ աւելի պարզ են: Ինք այդ ամէնը շատ լաւ կը հասկնայ:

Իրիկուն մը — արդէն տակաւ կը մօտենար զարունը — հայորդիներու ժամանումէն ի վեր երրորդը — ճաշէն վերջ Արսինէ եւ Խորովիդուխտ ժուռ կուզային դարաստանին մէջ: Մեղմ եւ կակուղ էր դուրսը: Նախընծայ պայծառ կանանչը կը ցցուէր կոկոններուն եւ տերեւներուն վրայ: Գարնանային նախազգայութիւն մը կը դարէր այերքին մէջ: Խորովիդուխտ առտուն առանց Արսինէի գիտնալուն Պաւլայի պատգարակով անոր հետ քրիստոնեաներուն հիւանդանոցը տարուած էր, եւ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով կը տեսնէր քրիստոնէական մարդասիրութեան դործը: «Դեռ հիմա ձմեռնական մեծ պարտէզի մը մէջտեղ, դուրսը ընդարձակ բացօթեայ վայրի մը մէջ կը դառնուի հիւանդանոցը: Մեծ տուն մըն է, որ մինչեւ հեռունները կը փայլի իր ճերմակ պատերով եւ շատ մը բարձր պատուհաններով: Աւագ դրան առջեւ աջ ու ձախ կը կանգնին մայրիներ: Ծառուտան մը կը կարկաջէ: Աղանիներ եւ ոչ սակաւ դեղափետուր թռչուններ կը բունեն հոս եւ կ'երգեն եւ կը ցնծան, որպէս թէ կ'ուզէին ներսը գտնուած հիւանդները մխիթարել: Ո՛հ, այս ամէնը որքան լոխ ու խաղաղաւէտ: Եւ ներսը տունին մէջ, շատ մը ճերմակ մաքուր անկողիներուն մէջ պառկած են հիւանդները, եւ մասնաւոր սրահի մը մէջ ալ կը նստին շատ մը ծեր, անկար անկարող մարդիկ, կողերն ալ աթոռներու վրայ պառկած: Երեւակայէ, Արսինէ, անմաքրութեան զգացումը ինչ է չեն գիտեր, ոչ վախ ունին

ոչ սարսափ: Սարկաւագուհիները կամ մայրապետները անձայն անշքուկ կը դառնան տունին չորս կողմը եւ կ'այցեկեն հիւանդներուն, համակ սպիտակազգեստ: Չանոնք ամէնքն ալ տեսայ: Ո՛վ Արսինէ, լացի, հեկեկացի անոնց անկողիներուն առջեւ, տղու մը պէս: Պաւլա ինծի կ'ընկերանար անկողինէ անկողին, սրահէ սրահ: Հիւանդները ձեռքերնին Պաւլայի կ'երկնցնէին եւ արցունք թափելով շնորհակալութիւն կը յայտնէին: Ամէնքը Պաւլան կը սիրեն իբրեւ մայր: Անոնց կը տանի շատ մը կապուերիչ եւ դորացուցիչ բաներ, գինի եւ ուտելիք: Ամէնուն սրպիտութիւնը կը հարցնէ այնքան սրտազին կերպով, այնքան կարեկցարար եւ սիրալիր, թէ ի՞նչպէս են եւ թէ ի՞նչ բանի պակասութիւն ունին: Թէ ի՞նչպէս կրնայ Պաւլա այն մխիթարական խօսքերը գտնել, դուն ականջովդ լսելու ես, թէ ի՞նչպէս կրնայ յորդոր կարողալ համբերութեան եւ հաւատքի, գոհութեան եւ յուսոյ: Անոնք պէտք չէ որ իրենց ցաւերը հասկնան իբրեւ պատիժ մը աստուածներուն կամ Աստուծոյ կողմէ: Աստուած սէր է միայն եւ կ'ուզէ որ դանոնք ցաւերու շնորհիւ դէպի երանութիւն եւ փառք առաջնորդէ: Յիսուսի շարձարաններուն եւ խաչին վրայ անունի բաներ կը պատմէ որ մարդուն սիրտը չի դիմանար: Յիսուս, կ'ըսէ, օրինակ մը թողուց մեզի, թէ մենք պէտք է իր հետքերուն ետեւէն երթանք եւ նոյնիսկ կրնանք անոր պէս շարձարուիլ, եւ մեռնիլ, հանդարտօրէն եւ վստահ: Յետոյ Պաւլա կ'աղօթէ անոնց ամէնուն հետ, եւ նաեւ հիւանդանոցի սենեակներուն մէջ ամէն բան մաքուր եւ անաղարտ է ինչպէս տաճարի մը մէջ: Ես քանի մը հիւանդներ տեսայ — ո՛հ, Արսինէ, չես հաւատար, որքան կը տառապին: Ապահովաբար, չար սատանաներն են որ հիւանդներուն սրունքները, ոտքերը, ձեռքերը շարունակ կ'երերցնեն, կը դողացնեն, յաճախ ամբողջ մարմինը: Յետոյ ի խորոց սրտի կը հառաչեն եւ կը պոռան կենդանիներու պէս: Ոմանք այնքան նողկալի վէրքեր ունին. ուրիշներ շատ դժուարաւ կը շնչեն եւ արին կը թքեն կոնքերու մէջ, զոր Պաւլա կամ մայրապետները կը բունեն անոնց առջեւ: Քաղաքին ամենալաւ, ամենահարուստ աղջիկներէն ամէն օր կուզան հիւանդներուն ծառայելու, ուրիշներ բոլորովին հոն կը մնան եւ ցմահ կը կատարեն այդ հրաշալի ծառայութիւնը: Յաւէտ համբերատար, երբեք չեն սրտնեղիր հիւանդներուն րրածներէն, կը ներեն անոնց խիստ կամ կոշտ սակամ նա խօսքերուն, անոնց անհամբերութեան իրենք կը հանդուրժեն: Եւ ինչպէս ալ կրնան սպասել մինչեւ որ հիւանդները իրենց պէտքերը ընեն — ո՛հ, Արսինէ, ասիկա մեր երկուքին ընելիք զործը չէ: Վալերիոս եւս շատ սիրով կը վարուի հիւանդներուն հետ: Ան մեզի ցոյց տուաւ այն սրահը, ուր հիւանդներուն վէրքերը կը դարմանուին եւ անոնց անդամները կը կտրուին: Ամբողջ սնտուկ մը լե-

ցուն է դանակներով, մկրտաներով եւ ամէն հնարաւոր սարսափազ-  
դու գործիքներով, իրաւ ալ սարսափելի բան է, Արսինէ: Բայց շատ  
սիրով կը վարուի եւ իր ձեռքերը խիստ փափուկ ու քնքոյշ են, Ար-  
սինէ»: — «Պոսրովիդուխտ», — ձայնեց Արսինէ բարձրաձայն խրն-  
դալով, զգուշացնելով: — «Երանի թէ մայրապետուհի ըլլայի, օգ-  
նէի իրեն»: — «Դու՞ն — դո՞ւն, իշխանուհի՞դ, լոյսի դաւակոյ այս  
խաւարին մէջ, Ահարմանի թաղաւորութեան մէջ»: — «Ինչո՞ւ չէ:  
Միւս աղջիկները ինչո՞ւ կ'երթան: Ի՞նչ պիտի ըլլայ իմ ճակատա-  
զիրս: Որեւէ իշխանի մը հետ ամուսնանա՞մ, ասիկա ես չեմ կրնար:  
Կամ մինչեւ վերջը Տրդատին քմահաճոյքը կրել, մինչեւ մեռած օրս:  
Կամ ձանձրոյթի, տաղտուկի, անգործութեան, ամայութեան մէջ  
հիւծիլ, եւ հուսկ ուրեմն անօգուտ կեանքէ մը վերջ — հակառակ  
սնդուսէ լողիկի — որդերուն կերակուր ծառայել»: Այսպէս ըսաւ  
ու ըսաւ Պոսրովիդուխտ լուսաշող աչքերով եւ շատ մը յուզուած  
շարժուածներով հանդէպ Արսինէի, որ զլուիք կախ, խորհրդածելով,  
անոր հետ ձամբուն մէկ կողմէն միւսը կ'երթար: Բայց ամէնէն աւելի  
զգացուած նայեցաւ պատմող ու շարժումներով պատմող աղջկան ե-  
րեսը, եւ շուարած մնաց էր ան սա հարցումով կ'ուզէր զիտնալ.  
«Ինչո՞ւ իրաւցնէ Հայաստանի մէջ այսպիսի հիւանդանոցներ բնաւ.  
չկան: Ինչո՞ւ համար Միհրը չէ պատուիրած հիւանդները հաւաքել  
եւ դարմանել զանոնք»: Երկար սպասում մը Արսինէի կողմէ իր մա-  
տաղատի բարեկամուհիին առջեւ, եւ հիմա նորէն կը զգայ, ճիշտ  
տեղին, թէ միակ ողորմելի պատասխան մը կրնար տալ, որ թէեւ  
սուրբ, մաքուր, սակայն պաղուկ էր եւ սէրէ թափուր. «Պոսրովի-  
դուխտ, մեր կրօնքը կ'արդիւն մեզի դպչիլ անմաքուր բանի: Հիւան-  
դութիւնը պիղծ է: Խաւարի թաղաւորութեան մաս կը կազմէ: Ան-  
շուշտ հիւանդներուն չգտար, չէ՞, Պոսրովիդուխտ»: — «Ոչ, —  
բայց քու սիրոյդ համար միայն, Արսինէ»: Լոկեց եւ շուարած գետինը  
կը նայէր: Պոսրովիդուխտ շարունակեց. «Չար մարդոց, բանտարկ-  
եալներուն համար ալ բարիք չենք ըներ»: — «Ոչ: Անոնք չար ոգիներ-  
ուն ծուղակը ինկած են»: — «Եւ տէրունական ընթրիքը, ուր ամէն  
օք, մարդ, կին, տէր եւ գերի, միեւնոյն հացէն կ'ուտեն իրարու  
հետ, միեւնոյն դաւաթէն կը խմեն, որովհետեւ իբրեւ եղբայր եւ  
քոյր կ'ուզեն ըլլալ, իբրեւ անդամ միեւնոյն մարմինին — կ'ըսէ  
Պաւղոս. — ու ամէնքը կը ճնրադրեն, եւ կ'երգեն եւ կ'աղօթեն իրենց  
տիրոջ — անոնք կ'ըսեն — Տէր Յիսուս Քրիստոս — եւ կը հաւատան  
թէ ան իրենց մէջ է անտեսանելի կերպով — այսպիսի սուրբ տօն մը  
մենք չունի՞նք, չէ՞»: — «Ոչ» — վարանեցաւ Արսինէ: «Մեր կրօնքը  
կը ճանչնայ այդպիսի տօն մը այն մարդոց համար, որոնք միմիայն  
բացառաբար Միհրի մտերիմ բարեկամներն են եւ անոր գաղտնիքին

նուիրուած»: — «Եւ միայն մարդո՞ց համար», հարցուց Պոսրովի-  
դուխտ, բայց սաստիկ բողբոջելով: «Միմիայն Միհրի նուիրեալներուն  
համար: Անոնք պարտաւոր են ահաւոր բաներու հանդուրժել եւ զի-  
մանալ մինչեւ որ հասնին յետին կէտին: Մոյպետար կ'ըսէ, կինները  
բնաւ չեն զիմանար, կը կորսուին: Մենք Անահիտը ունինք: Եւ ան  
քեզի չի՞ բուեր արդեօք, Պոսրովիդուխտ»: — «Եւ Անահիտը կը սի-  
րեմ», յարեց Պոսրովիդուխտ մպրտով մը, «ինչպէս քեզ կը սիրեմ:  
Դուն Անահիտ ես ինձի, այսպէս կ'երեւակայեմ զայն, քեզի պէս մէ-  
կը, այնքան զեղեցիկ, այնքան բարի, այնքան մաքուր: Բայց...» —  
«Բայց, բացէն ըսէ, Պոսրովիդուխտ»: — «Բայց, — իցիւ անոր ու  
Միհրի մասին աւելի բան զիտնայի: Քրիստոսի մասին ալ  
շատ բարի եւ սիրուն բաներ զիտեն, ո՞հ, այն ինչ հրա-  
շալի գործեր եւ խօսքեր, բոլորովին տարբեր, — ի՞նչպէս ը-  
սեմ — ահա, իբրեւ մարդ, իբրեւ վարդապետ, բժիշկ, մխի-  
թարիչ, Աստուածորդի: Ո՛հ, որքան կը փափաքիմ այդ քրիս-  
տոնեաները անգամ մը տեսնել իրարու մօտ, երբ կը պաշտեն ի-  
րենց Աստուածը եւ Տէրունական ընթրիքը կը տօնեն, տիրոջը օրը,  
«տէրունական օրը»: Այս անունը կուտան ասոնք Արեւ Աստուածին  
օրուան: Անոնք ատուտ իրիկուն իրենց եկեղեցին կ'երթան միասին»: —  
«Գիտե՞ս, ո՞ւր է»: — «Ոչ: Պաւղոս չ'ուզեր զիս հետը տանիլ, ո-  
րովհետեւ քու կամքիդ հակառակ բան մը ընել չ'ուզեր: Ի՞նչ է քու  
կամքդ, Արսինէ»: Միտուն շողիկ մը կը դարէր աղջկան աչքերուն եւ  
վարդաշունչ երեսին վրայ, հաւատարմութիւն մը եւ երախտագիտու-  
թիւն մը, այնպէս որ Արսինէ, բոլորովին զրաւուած, յանկարծ եր-  
կար լուրջ նայուածքով մը եւ ետանդապին սիրով պարուրեց Պոսրո-  
վիդուխտը, սամբոջը ոյժովը զայն կուրծքին դէմ սեղմելով: Պոս-  
րովիդուխտ, զարմացած, զլուիք նորէն վեր առաւ, իբրեւ պատաս-  
խան ցոյց տալով իր երազային աչքերը: Արսինէ ըսաւ յուզուած.  
«Պոսրովիդուխտ, զնա դուն լոյսին ետեւէն ուր որ ան երեւի, փայլի  
քեզի: Դուն ման կուզաս, կ'երեւի, մեծապայծառ լոյսի մը մէջ: Կը  
հասկնամ»:

— «Եւ դուն, Արսինէ, բարի ու սիրեցեալդ: Չեմ կրնար քեզ  
տխուր տեսնել: Այս վերջին օրերուս շատ տխուր ես դուն: Կարծեմ,  
աւելի հայրենակարօտ ես մեր ծնողքին եւ զգեակին քան մենք եր-  
կուքս: Ահա երեք տարի եղաւ: Ու միշտ տակաւին պատերազմ: Բայց  
ծնողքին առողջութեան յուրերս կ'ատնենք, անոնք հանդիստ են, հայ-  
րիկը կը յաղթէ եւ քիչ ատենէն կը կանչէ մեզ: Այնպէս չէ՞: Բայց —  
հոս ալ ազուոր է, քրիստոնեաները շատ բարի մարդիկ են»:

Քրմանոյչին սիրտը շափաղանց լեցուած էր: Դարձաւ եւ կա-  
մաց կամաց Անահիտի սրբավայրին ձամբուն երկայնքը կ'երթար: Կը

կարծէր թէ Խոսրովիդուխտ ետեւէն կուզար: Երբ քանի մը քայլ առնելէ վերջ ետին դարձաւ, տեսաւ աղջիկը որ կանանչ թուփերու միջեւ անհետ կ'ըլլար խոշոր, փարփառ, նախծին թիթեռնիկի մը պէս թռչուն մազերով ու ծփանուտ ժապաւէններով: Արսինէ իր ճամբան շարունակեց տխրութեամբ: Ալ աւելի տխուր ետ դարձաւ քիչ ետքը: Արդարեւ Արսինէի համար այլեւս դժուար կուզար միշտ երկուութիւն դնել Աստուածուհիին մատուցած իր աղօթքին ստեղծ: Ես չեմ պաշտեր իմ սեփական պատկերս, այլ իմ պատկերիս տակ ես կը պաշտեմ անտեսանելի երկնաւոր թագուհին: Որքան կը փափաքէի հաստալ, այս, հաւատալ, ինչպէս միշտ, սիրել միշտ հին տաքուկ սիւստալ, այս, հաւատալ, ինչպէս միշտ, սիրել միշտ հին տաքուկ սիւստալ լոյսին աստուածները, ամէնքը, եւ մանաւանդ վեհապանծ Արտով լոյսին աստուածները, ամէնքը, եւ մանաւանդ վեհապանծ Արտով Սուրբ Անահիտը: Իր հոգիի սաստիկ պայքարին մէջ ներսիդին արթնցաւ նաեւ փափաք մը դէպի հին հաւատքը, դէպի հին սէրը, հին ժամանակներու բուն հաւատքը, բայց, ի՞նչ ընելու էր ասոր համար, ի՞նչպէս կրնար ըլլալ ասիկա: Սա արձանը, Ապեղէսի հրաշակերտը, կանգնելէն ի վեր, կարծես բաժնող պատ մըն ալ, անջըպետ մըն ալ կանգնեցաւ իր եւ Աստուածութեան միջեւ, եւ քրմանոյշին յաճախ այնպէս կուզար, թէ իր աղօթքները կ'երթային կը դարձնէին Աստուածուհիին ցուրտ գեղեցկութեան եւ իրեն ետ կը դառնային պարապ: Կը փափաքէր հոս սրբապայրին մէջ միամիտակ փակուիլ ու խարաղանել ինքզինքը, ծունկերը քերել ու արիւնել, պատարաղները կրկնապատկել, եռապատկել, ըմպել ռետինը, Հասման, եւ սուրբ արեցութեան մէջ թաւալիլ: Իցիւ կարենար հառաչել, պաղատիլ, գոտեմարտիլ իր ներսիդին բորբոքող հին սիրոյ կրակին շուրջ, — հոն ներսը, սրբապայրին մէջ մնալ մեռած եւ սառած, եւ դուր կամքովը եւ միջոցներովը չէր կրնար արդիւնել որ, մինչ չըթոննքները կ'աղօթեն, մտածումները մերթ արձանը ստեղծող Ապեղէսին, մերթ Լիկինիանոսի կողմը չթափառին: Միտքովը այս բաները կ'ուրանար, կը խնդար այս բաներուն վրայ, բայց սիրտը, զգացումը, ցանկութիւնը եւ կարօտը սուտ կը հանէին զինքը, ստախօս կը յանդիմանէին զինքը — Արսինէ, դուն երկուքն ալ կը սիրես: Ահա նոյնինքն Անահիտի դէմքին վրայ տարակոյսը: Խորհրդանշան: Արուեստագէտի դործ: Արդարեւ աւելի բարձր, աւելի լաւ չէ՞ր միթէ Յուդիթին կրօնքը: «Մի շինք քեզի ոչ մէկ դրօշեալ (արձան), ո՛չ երկինքին մէջ եղածին, ո՛չ երկրի վրայ եղածին պատկերը մի շինք, ո՛չ ալ երկրի տակ եղածին պատկերը: Ու մի՛ պաշտեր զանոնք եւ մի՛ ծառայիր անոնց: Քանզի ես, քու Տէր Աստուածդ, նախանձոտ Աստուած մըն եմ»: Եւ Խոսրովիդուխտ. «Քրիստոսի մասին շատ աւելի բան դիտեն»: Հապա սէ՛րը հանդէպ խոնարհներուն, անշաննեբուն: Իրաւ է, Սէր: Սէր հանդէպ թշնամիներուն, գերիին, ասիկա

չեն պատուիրած անոնք — Անահիտ, Ահուրա, Միհր: Արսինէ, հարցուփորձի ձեւով, Աստուածուհիին երեսը նայեցաւ, եւ երկար, երկար դիտեց այդ հրաշակերտ դրուագուած, դրոշմուած դէմքը: Ի՞նչ գեղանի կերպարանք, քանիտն նրբանուրբ դիմածիծեր, որքան լուսայեղջ արտայայտութիւն երեսի: Կորով, կամք, գեղեցկութիւն, խրոխտութիւն, մայրական հպարտութիւն, մայրական սէր, ամէն սէրը, սէրը հանդէպ թշնամիին, հանդէպ հիւանդ գերիին, հանդէպ ինչ ահա: Բայց մայրական սէրը այնքան շա՛տ է որքան Քրիստոսի մահամերձ աւազակին: Ո՞վ չի սիրեր իր դաւակը: Անահիտ սերմ կուտայ մարդուն, եւ արգաւանդութիւն՝ կնոջ: Բայց մարդասիրութիւն, զայն չեմ տեսներ ես այս երեսին վրայ: — Բայց յանկարծ Արսինէին միտքը ինկաւ, որ ինք անոր վրայ իր սեփական երեսը կը դիտէ: Սարսուած, եւ թափուր ի սիրոյ ու կրկնակի ապերջանիկ դարձեալ ինկաւ իր սեփական պատկերին ոտքը:

Հողեկան ծանր չարչարանքը, դէւերու հետ կռիւը անքուն գիշերուան մէջ, Տրդատի եւ Խոսրովիդուխտի մասին մտատանջութիւնը, իրենց ծնողքին մահը տեսականօրէն անոնցմէ ծածկելու համար միշտ մեծագոյն դժուարութիւնը, որովհետեւ միշտ աւելի հարցումներ կ'ընէին իրեն այս մասին, որեւէ լուրի, նամակի եւ նուէրի սպասելով եւ կը սկսէին տանջուիլ Հայրենիքին կարօտախտով — այս ամէնը կը սպառէր կը մաշեցնէր քրմանոյշին ամուր ոյժը: Աչքերը փայլ կը կորսնցնէին, այտերը կը տփգունէին, ձայնը իր հնչիւնը կը խաթարէր: Տաւիղը կը հանդէպէր: Իշխանն ու իշխանուհին մեծ մտահոգութեամբ կը ջանային իր փոփոխութեան պատճառը իմանալ, եւ ինչ որ կրնային ընել կ'ընէին:

Ապեղէս այլեւս առաջուան պէս չէր երեւնար: Լիկինիանոս իր Լեզէոնին հետ դէնքի տակ էր: Նոր ինքնակալ Դիոկղետիանոսէն հրաման էր իրեն Յունաստանի ամբողջ սահմանը պաշտպանել որեւէ արտաքին յարձակումի դէմ, որեւէ ներքին ապստամբութիւն արգելել: Իր գահակալութենէն քիչ վերջը կայսրը քաճ էր Պարսիկները եւ բունի հաշտութիւն պարտադրած էր անոնց: Յետոյ իրեն հետեւող խանդավառ բանակովը Պարսկաստանէն դառնալով Պելժիոյ կողմերը եւ Դանուբի վրայ վճռական կռիւր կը գոռար իրեն եւ Կաթոսի որդւոյն Կարինոսի միջեւ: Ջեղձ ցոփ մը, անառակ մը իր անձնական կեանքովը Կարինոս սակայն բնաւ նետուելիք, անկարելորդ զինուորական մը չէր: Իտալիոյ մէջ իր հակառակորդը Յուլիանոս յաղթահարուեցաւ իրմէ: Մարկուսի մօտ իր եւ Դիոկղետիանոսի բանակին միջեւ սաստիկ կռիւ մը անորոշ մնաց, եթէ Կարինոս չյաղթեց: Եւ ահա սպաննուեցաւ Կարինոս եւ Դիոկղետիանոս ճանչցուեցաւ երկու բանակներուն ալ կողմէ: Աթէնքի մէջ ալ մեծ հետաքրքրութեամբ կը

Հետեւէին պայքարին, որ խօսակցութեան նիւթ էր կուսակցութիւններուն եւ ընտանիքներուն մէջ: Արսինէ թէեւ ներքնապէս շատ կ'աշխատէր որ ինքզինքը դասէ — բայց չէր կարողանար այնպէս մը ընել որ շխտօյի, չկարմրի, երբ իշխան Լիկինիոս իր սիրալիր ու քաղաքավար ձեւերը կը շտայնէր, եւ Լիկինիոս միշտ աւելի ամէն բանի մէջ իրրեւ մայր կը հանդիսանար անոր: Բայց երբ իշխանը վարդերու եղանակին միջոցին խորամանկ ծիծաղով մը նորէն վարդալառ մը առաջարկեց անոր, Արսինէ տխուր ձեւով մը գլուխը երեւցուց միայն եւ խոսով ծիծաղ մը ունեցաւ: Դղեակին շուրջ ցամաքէն կտոր մը ջուրին մէջ վազը կ'ողակ մը դարձած էր, եւ աս ալ երթալով կը պոսիկնար Արսինէի աչքին, որովհետեւ ամէն օր ջուրը մաս առ մաս պոսիկնար Արսինէի աչքին, որովհետեւ ամէն օր ջուրը մաս առ մաս միտքովը կը փնտռէր Միհրը կամ Անահիտը եւ կը տեսնէր — կամայ թէ ակամայ — Քրիստոսի պատկերը որ այլեքներու վրայ կը ճեմէր, խեղդուելու պարզ մարդու մը ձեռքէն բռնած: Քրիստոսի գէմ ամէն ատեւութիւն մեռած էր Արսինէի սիրտին մէջ: Ինք ալ չէր գիտեր թէ ինչպէս ինք անոր մօտեցեր էր: Ոչինչ այնքան զբաւած էր Խոսրովի գիղուխտի սիրտը քրիստոնէից հաւատքին համար, եթէ ոչ տեսարանը սիրոյ եւ ողորմութեան, որոնց արդիւնքը կրցաւ ճանչնալ քրիստոնէական հիւանդանոցին տուած յաճախակի այցելութիւններովը: Քրիստոնեաներուն սիրոյն հանդէպ Խոսրովի գիղուխտի այս հիացումին համահաւասար ոչինչ կարողացաւ հանել Արսինէ: Իր խորհուրդներուն եւ կեանքին մէջ թերի մը կար: Բնականէն այնքան բարեմոյն եւ ճշմարտախօս էր, որ կը զզար այս պակասը, կը ճանչնար զայն իր հաւատքին մէջ, կը զզար թէ Խոսրովի գիղուխտին, Տրդատին, Լիկինեան ընտանիքին, նոյնիսկ իր պաշտած աստուածներուն հանդէպ իր ունեցած ամբողջ սէրը իր գործերուն արդիւնքը չէր, այլ բոլորովին բնական զոյգում մը, մայրական սիրոյ, կարեկցութեան, հպարտութեան, ուրախութեան կամ երախտագիտութեան պէս բնական զոյգում մը, ոչ թէ կրթութեան կամ հաւատքի գործ: Արսինէ հասկրցած էր, թէ խաղաղութեան, պատիւի, հանգստութեան եւ ապահովութեան իր ցանկութեամբը ինքն ալ իր սիրոյն միջնէ եւ իր աղօթքին եւ զոհերուն կեդրոնը կը կենայ, այսինքն իր սիրոյն ու աղօթքին բուն նպատակը խաղաղութիւն, պատիւ, հանգստութիւն եւ ապահովութիւն գտնել է: Մոմ պահելը, ապաշխարելը — ինչո՞ւ կ'ընեմ ասոնք — մաքուր բլրալու համար: Ինչո՞ւ կ'ուզեմ մաքուր բլրալ: Որպէսզի հաճոյ բլրամ Ահուրային, անոր յաւիտենական լոյսը գիտեմ եւ յաջողութեամբ անցնիմ անտար կամուրջին վրայէն: Ես: Ես: Դարձեալ Ես: Ես մինչեւ Ահուրայի երկինքին մէջ, մինչեւ իմ երանութիւնս: Միշտ ուրեմն Ես: Բայց Եսէն դուրս, ի՞նչ կ'ընենք անոնց

համար, որոնք կը թափառին խաւարին մէջ: Խոսրովի գիղուխտ հիմարքան բարեկամ ու սիրող է զերուհիներուն: Թէեւ չափազանցութեան կը տանի: Չէ՞ որ անցեալ օր տեսայ, թէ ինչպէս երկու գերուհիներ, իր սենեակին սպասեակներէն, Խոսրովի գիղուխտի կոնակէն կը խնդային: Եւ զինքը ծաղրող այս երկուքն են որ զինքը կը սիրեն — կ'երեւի ասոնք ալ քրիստոնեաներուն հաւաքոյթին զարդներն են: Անոնք երկար ատեն իմ ետեւէս եկած են: Միշտ գլուխ գլխի տուած գաղտնիք մը ունին, եւ իմ զալ յանկարծակիի կը բերէ զանոնք, մեր սենեակները մաքրելու եւ աւելու միջոցին: Յաճախ ինծի այնպէս կուզար որ ննջասրահին դուռնէն կամացուկ մը կը սահին կը հեռանան երբ ես բանամ: Եւ կարծես հրաշքով Համոսն ալ սրուակին մէջ կը պակսի, հակառակ շատ լաւ զոցուած ըլլալուն: Օ՞ անոնց կեղծաւոր շողքորթ կատուի երեսները: Ի՞նչպէս ալ կրնան համեստօրէն խոնարհութիւն ընել անոյ ծիծաղով: Քանի անգամ պատահած է ինծի հասկնալ որ անոնք Հայկէս գիտեն իմ ազգատ ըլլալս եւ ասոր համար ուրախ են: Քրիստոնեաները իրենց ապագային հողը չունին: Պաւլոս վերջերս վայրի շուշանին վրայ աղուր խօսք մը ըսաւ ինծի — անգամ մըն ալ ըսել պիտի տամ: Քրիստոնեաները իրենց թշնամիները կը սիրեն, Քրիստոս հիմակ իսկ պիտի սիրէր սա զլուելի աղտոտ աղջիկները, որքան ալ սիրուն ըլլան — եւ ես — ես կ'ատեմ զանոնք: Եւ յայտնապէս կը զզար Արսինէ ատեւութեան գալը, որքան աւելի մտածէր այն երկու գերի աղջիկներուն վրայ: Միտքը դուրս խնդրել Լիկինիայէն որ երկու ուրիշ սենեկապանուհի տայ իրեն:

\*\*

Տրդատ եւս քրիստոնեաներուն վրայ ամէնէն առաջ տեսած հասկցած էր սէրը, որ կը հանդուրժէ ամէն բանի, կը հաւատայ ամէն բանի, կը յուսայ ամէն բանի եւ կը կրէ ամէն բան: — Վերջին ամառնային օրերէն մէկն էր: Երեք Հայերը դարձեալ անգամ մը դուրս ելած էին, եւ զովացուցիչ Իլիսոսի երկայնքէն պացին մինչեւ Լիւկաբէտոս բլուրը նշանաւոր իր քարահանքերով, որոնց մէջ կ'աշխատէին հարիւրաւոր գերիներ եւ ազատ բանուորներ: Ահադին քարէ պատերուն մէջտեղ գոռալով վար կը թափի Իլիսոս եւ կ'երթայ հովիտը: Ամբողջ շրջապայտութեան ատեն արտասովոր զուարթութիւն մը ցոյց կուտար Տրդատ պայծառ կապոյտ, փրփրաղէկ հեղեղատին երկայնքը: Յաճախ կը քաշէր կը հանէր պարեպօտը, եւ երկար միջոցներ կը վազէր գետնի վեր կարճ պատմութեանով, ողորկ քարերուն վրայ սահելով, կոռուելով հաւասարակշռութիւնը պահելու համար: Քիչ վերջը յետին հազուատին կտորն ալ նետեց գետինը, եւ կը վազէր իր-





մուրճին կոթին վրայ խաչածեւ: Ճիշդ ասոր վրայ էր որ Տրդատ բորբոքեցաւ, մինչև իսկ արհամարհական ձեւ բռնեց հսկային դէմ, եւ ուրիշ բան չկրցաւ ընել բարկութենէն եթէ ոչ զըզուել զայն վրէժ լուծելու, հեղնական խօսքեր ուղղելով անոր, յայտնելով նաեւ թէ պատրաստ է օգնելու իրեն: Բայց արդահատական նայուածքով մը Տրդատին կը նայէր, կարծես ըսել կ'ուզէր. «Կը խորհի՞ս, տղայ, որ երբ դորձել ուզեմ — քեզի պէտք կ'ունենամ»: Այլևս աչքերը չթաւալեցուց, սպառնական նայուածք շարձակեց բոլորտիքը, մուրճին կոթը սահեցուց ձեռքերէն, եւ ահա կեցած էր հիմա իրբեւ անպաշտպան դառնուկ մը իր տմարդի ու վայրագ հալածիչներուն, նեղիչներուն առջեւ: Ուրեմն ասոնց ամբողջ աշխատութիւնը ի դերեւ ելաւ: Անոնք կը սպասէին որ հսկան մուրճովը նետուի իրենց մէջ, իրենցմէ մէկը վեր հանէ եւ դետինը ձգելով ջախջախէ: Քրիստոսի ողին յաղթանակ տարած էր անոր մէջ: «Նրանի ձեզի, երբ մարդիկ ձեզ ինձի համար հալածեն ու նախատեն»: Բայց լակոտը ասով չզոհացաւ: Սրածայր, դանակի նմանող քար մը օդին մէջէն թռաւ եւ խորը ծակեց մտաւ հսկային զլուխին ետեւի կողմը: Հսկան անմոռնչ գետին թաւալեցաւ եւ իսկոյն աչքերը դոցեց: Արիւնը մութ կարմիր կը հոսէր բերանարաց վէրքէն եւ լայն շրջապիծով կը կարմրցնէր աւազուտ գետինը: Լակոտը տեսաւ հսկային իյնալը, ուզեց խնդալ, բայց արդէն Տրդատին կռուիք խուլ թնդիւնով իջած էր անոր զլուխին վրայ, այնպէս որ դարձաւ ինք իրեն եւ զլորեցաւ: Հիմա մէջտեղը Հայ Արքայազունն էր: Արքենի դէմքով մը հրամայեց որ կապեն լակոտը եւ հսկողութեան տակ առնեն, մինչև որ վերակացուները զան: Ձեռքերէն ու ոտքերէն կապուած մարդասպանը կառք տարին եւ հեռացուցին: Ինկած քրիստոնէին շուրջը միւս քրիստոնեաները շարունեցան: Անոնցմէ առաջ արդէն եկած էր Պոսրովիգուխտ: Արսինէն քաշեց զայն բայց անոր ձեռքէն ինքզինքը ազատելով ծնրադրեց իրբեւ առաջին օգնութիւն հսկային քով, որուն արիւնահոս զլուխը դետինէն վեր առաւ եւ պահիկ մը բռնեց իր զողջջ ձեռքերուն մէջ: «Այո՛, կը մեռնի — Պոսրովիգուխտ, թո՛ղ, եկու՛ր, պիտի պղծուիս, դիակին ողիները, Պոսրովիգուխտ», ձայնեց քրմուհին իր բոլոր ուժովը, բոլորովին յուսակոտր: Պոսրովիգուխտ տեղէն անգամ չչարժեցաւ: Ամառնային նրբահիւս, ճեմակ, թեթեւ պարեգօտին մէկ ծայրովը ջանաց դադրեցնել անդադար աղբիւրի պէս հոսող արիւնը, միշտ աւելի դդեստը դործածեց, վրան զլուխը արիւնէն թաց, պարեգօտը հանեց: Ջուր բերին Իլիսոսէն: Մահամերձը բերանը չառաւ: Երթալով դեղնեցաւ ու դեղնեցաւ: Պոսրովիգուխտ անշարժ անոր ետեւէն զլուխը իր երկու ձեռքերուն մէջ բռնեց ծնրադրած, եւ վերէն վար հսկային կը նայէր որ ահա յուշիկ կ'աւանդէր հողին: Արիւնը

դադրեցաւ: Պոսրովիգուխտի ձեռքերը թաց էին արիւնով ու պաղ քրտինքով: Առանց իր ակնարկը մահամերձէն հեռացնելու, մեռեալին զլուխը բռնեց, ինք ալ անոր շափ ճեփճեմակ եղած, այլ անդորր ու այժմ անխուով լրջութեամբ: Քրիստոնեաները կեցած էին անոր երկու կողմը ծունկի վրայ, կուլային ու կ'աղօթէին որ Տէրը ներէ իրենց եղբորը մեղքերուն, եւ ազատէ անոր հոգին եւ ընդունի զայն դրախտին մէջ: Մին կ'աղօթէր բարձրաձայն. «Տէր, փրկէ նաեւ իր թշնամիին հոգին եւ իր մեղքը մի սեպեր անոր»: Երբ Պոսրովիգուխտ լսեց ասիկա, չկրցաւ ինքզինքը բռնել, հեծեծեց, երեք անգամ զոչեց, ամէնքն ալ ի գութ շարժելով. «Օ խաւար, խաւար, խաւար»: Եւ յետոյ, ուրախութենէն թրթուռն արտաստովոր ձայնով մը. «Յիսուս Քրիստոս — դուն, դուն ես լոյս աշխարհի»: Անգամ մըն ալ մեռեալին երեսը նայեցաւ: Քարահանքին պատերը կը պսպղային կարծես միլիոնաւոր սկեհատիկներով: Արիւնաներկ լայն շրջանակին բոլորտիքը գետինը կը վառէր բորբոքած ազամանդներու զաշտի մը պէս: Հանդիսաւոր լուծիւն մը կը տիրէր: Իլիսոս միայն կը փրփրար: Թռչունները կը ճոռուղէին: Քիչ մը հեռուն քրմանոյշը քարի մը վրայ նստած կը յառէր աւազին մէջ: Արքայազունը բնկերացած էր խուճրին, որոնց մէջտեղը լակոտը կը տարուէր վար գէպի դատարան քաղաքին մէջ: Պոսրովիգուխտ եւ Արսինէ, թեւ թեւ, կը հետեւէին լուռ գէպի տունը: Արսինէ այլևս չէր վախնար պղծուել:

Ամառնային իրիկունը վարդերու, մեխակներու, նարգիսներու իր բուրմունքին ծփանքով, եւ եղեւիններուն ու նոճիներուն հոտով իշխանին ընտանիքը կը համախմբէր ժեռուտ անձաւին աւազանին մօտ դարաստանին կեղրոնը: Պաւղա հոն: Դէպքին վրայ կը խօսին: Պաւղա երկար առեն Պոսրովիգուխտի զլուխը բռնեց իր սիրտին վրայ եւ աղջնակին ձեռքերն ալ իր ձեռքերուն մէջ: Այսօրուրնէ սկսեալ հաւատակից եղած էին: Երբ Լիկինիոս յայտարարեց թէ լակոտը արդէն կախուած պէտք է ըլլայ, սարսուռ մը անցաւ Պոսրովիգուխտի ամբողջ մարմինէն: Լիկինիոս եւ Սիլէն իրաւունք տուին արքայազունին, որ արհամարհոտ արտայայտութիւններով վատութիւն եւ յիմարութիւն համարած էր այնքան հեղութիւնը այնքան կորովի մարդու մը համար: Արդէն ասոր համար է որ բնաւ չի կրնար քրիստոնեայ ըլլալ:

«Ինչո՞ւ զարկիր պատիկին», հարցուց Պոսրովիգուխտ: «Անշուշտ, ան շատ առաջ դնաց: Անանկ քար նետելը հակառակ է օրէնքին եւ ամէն իմացողութեան, վատ, ողորմելի»: Պոսրովիգուխտ զայրոյթէն զողալով ձայնեց, «Սիլէն, քու իմաստութիւնդ այժմէն մարդասպան կ'ընէ Տրդատը: Ասիկա ես կ'ըսեմ քեզի»: — «Լուրջ չես», խնդաց Սիլէն, բորբոքած կրակ կտրած Տրդատը հանդարտե-

ցընելով: «Ի՞նչպէս ասիկա կ'անցնի միտքէդ, Խոսրովիդուխտ»: — «Օ՛, դուն տեսնելու էիր աշակերտդ, ինչպէս կը խնդար, կը պարէր, ձեռքերը ոտքերը իրար կը զարնէր ուրախութենէն, կռիւ տեսնելուն վրայ: Պատիկին զլսուուն ու բերանին զարնելէն վերջ ալ չկրցաւ զըսուակ բարկութիւնը: Դժբախտութենէն ետք ինքնակալի մը պէս մօտեցաւ, ինչո՞ւ ոչ անկէց առաջ: Ինչո՞ւ չպաշտպանեցիր դուն, դուն հերոս, դուն Աքիլէս, դուն վատ, դուն ողորմելի —»: Պաւղա զգուշացուց զայն ձեռքը սեղմելով: «Լուռ, լուռ, տղաս»: Արքայազունը կատղած ցատկեց Խոսրովիդուխտի դէմ, բայց արդէն Արսինէ կեցած էր անոր ու իր վաղեմի սիրելի «Տրդատիկ, իմ Տրդատիկս»ին առջեւ: Ասիկա բաւ էր: Արքայազունը մրմռալով անհետացաւ մութին մէջ:

Փիլիսոփան, շփոթած կը պտըտէր վար վեր, քանիցս կը հազար, եւ վերջապէս բարեկամօրէն դիտել տուաւ Խոսրովիդուխտին. «Պէտք է քեզի իրաւունք տամ, իշխանուհի, թէ եւ ոչ ամէն բանի մէջ: Անշուշտ այդ պարագային աւելի լաւ պիտի ըլլար սկիզբէն զսպել կամ խեղդել կռիւը: Բայց արքայազունը իր այս հասակին մէջ, այդքան ուժով, եւ երբ կեանքը կը փրփրար անոր մէջ չէր կրնար ըստ բաւականին իմացողութիւն ունենալ հեռատեսութեան համար, թէ ուժերու այն շղթայազերծ խաղը մինչեւ ուր պիտի երթար: Ինծի կ'երեւի, թէ արքայազունը կռիւը սկսելուն սպասեր է ուժերու այնպիսի լարումի մը, տեսակ մը ողիմպիական մրցումի, որուն ինք կը մասնակցի երկար ատենէ ի վեր ամէն օր գիմնազիոնին մէջ, ան կը սպասէր տեսակ մը գօտեմարտութեան, մեծ յաջողութեամբ: Այսչափ, եւ ոչ աւելի: Անոր մէջ շարիք մը չէր կրնար տեսնել, նոյնիսկ յարկելի ծերակուտականը ոչ»: — Ծերակուտական Լիկիւնիոս իշխան համամիտ գտնուեցաւ զօրաւոր կերպով, ինչ որ քաջալերական մը եղաւ Սիլէնին:

— «Խոսրովիդուխտի կողմէ այնքան դատափետուած իմ դասերու ազդեցութիւնը կրնայ ըլլալ որ Տրդատ, մեր սիրելի արքայազունը, անդիտակցարար յիշած ըլլայ ուսուցչապետ Եմպետոկլէսը, որ, ինչպէս յայտնի է, ամէն բաներու ծագումն ու փոփոխութիւնը կը վերադրէ քարչողական եւ վանողական ուժերու, եւ քարչողականները Սէր, ու վանողականները Ատելութիւն կ'անուանէ: Եւ մենք կը ճանչնանք, կ'ընդունինք այս իմացողութեան ճշմարտութիւնը բովանդակ տիեզերքէն եւս: Ամենուրեք եւ ամենայն ինչ Կռիւ է, Միացում, Անջատում, Սէր, Ատելութիւն: Մարդուն միայն տրուած է իմացողութիւն իր նմաններուն անջատումը ի գործ դնել բանականութեամբ եւ հանդարտութեամբ, առանց հողիի անտրամարան ու ինքնայոյզ կարիքներուն, ինչպէս ասիկա կ'ըլլայ կենդանիներու մէջ: Մարդ ներքնօրէն պէտք չէ ատէ, բայց բարկութիւնը, ատելութիւնը եւ

վրէժխնդրութիւնը կը յաղթանակեն, եւ հանդարտօրէն կը բաժնուին կ'անջատուին այն մարդէն, որուն հետ իր բնութիւնը չի փոփաքիր որ սիրոյ եւ բարեկամութեան միացում ըլլայ: Բայց ով որ, ինչպէս այդ լակոտ ըսուածը, այսպիսի իմացողութեան հակառակ կը դործէ, — անբանաւոր կերպով եւ կուրարար կը հպատակի բարկութեան կամ անզուսպ ու անապօրոյն կիրքին անխորհուրդ ու անոպայ կարիքներուն, ան պէտք է պատժուի, զայն պէտք է բանական մարդոց միարանութենէն, հասարակութենէն անջատել զատարանի եւ արդար դատաստանի միջոցաւ եւ սուրի միջոցով»:

— «Իսկ այնպիսիին հողի՞ն», ձայնեցին, զրեթէ միարերան, Արսինէ, Պաւղա եւ Խոսրովիդուխտ: Փիլիսոփան ուսերը թօթվեց, եւ յակամայս առաջ նետեց, թեթեւ մը ծնրադրելով, կարմիր հողաթափով իր ձախ ոտքը. «Յարգապատիւ Տիկիներս, իմ իմացողութիւնս եւ դիտութիւնս այդքան հեռուն չեն հասնիր: Նոյնիսկ Սոկրատ չէ համարձակած իբրեւ ապահովեալ, իբրեւ աներկայ իրողութիւն մը ընդունիլ հողիին անմահութիւնը: Կը խորհիմ, թէ աւելի լաւ է որ մենք փափաքինք այդ լակոտին հողիին մահկանացութեան»: Պաւղա պատասխանեց հանդարտօրէն. «Ձեր ազնուութիւնն է որ դուն այսքան համեստօրէն կը սեղմես քու իմացողութեանդ սահմանները: Բայց ի՞նչ է քու կարծիքդ միւս սահմանին, այսինքն չարիքին վրայ: Ի՞նչպէս կ'օգնես դուն, ի՞նչ միջոց կայ օգնելու այն մարդուն որ գիտէ բարիին իմացողութիւն, այսինքն կը ճանչնայ բարին, եւ սակայն չի դործադրեր զայն: Կամ երեւակայեց թէ մարդ մը ներքնօրէն իր սիրտին մէջ կը ձգտի ուրիշի մը հետ միանալու, միաբանելու, կը սիրէ զայն, երախտապարտ է անոր, պէտք է իսկապէս սէր ու բարիք միայն բնծայէ անոր, եւ սակայն իր սեփական կամքին հակառակ միշտ կրկին ցաւ ու նեղութիւն կը պատճառէ անոր, մինչեւ որ անոր սիրտը կտորուի, ու այնուհետեւ անոր դիակին վրայ ալ կ'երթայ կուլայ, կտորձքը կը ծեծէ ըսելով, «Ախ, ի՞նչպէս կըրցայ ես սիրտդ ցաւեցնել, սա կամ նա բանը ընել քեզի, սապէս կամ նապէս վարուեր եմ քեզի հետ եւ — եւ սակայն ես քեզ կը սիրէի»: Փիլիսոփան պարեպօտը վրան քաշեց նեղցուց, զլուխը կ'երեւցնէր խորհրդածելով եւ յայտարարեց. «Իմ իմացողութեանս նայելով, հոս սա պատասխանը միայն կարելի է. կամ այն է որ պատկանեալը, այսինքն քու ենթադրած մարդը կը կարծէ ճանչցած ըլլալ բարին, եւ սակայն չէ ճանչցած: Որովհետեւ եթէ ճանչցած ըլլար, իբրեւ բանական մարդ պիտի դործէր: Այս պատճառաւ, մոլորութեամբ կամ սխալ ճամբով միայն կ'երեւի կը ձգտի ճշմարտութեան եւ իմացողութեան: Կամ դարձեալ — այդ քու ենթադրած մարդը իրօք կը ճանչնար բարին, սակայն չէր ըներ, չէր գործադրեր, ուրեմն խելագար, եւ

ցնորամիտ է, եւ պէտք է լակոտին պէս բռնութեամբ տարուի բանականութեան հանդէպ հնազանդութեան — այս իսկ է բուն դաստիարակութիւնը, պատիժին ու դատարանին նպատակը — կամ ամէնէն աւելի զէչ պարագային — հիւանդագին, ախտաժէտ մոլութիւններով եւ բացարձակ անբաւարարութեամբ վարակուած ոճրագործներու պարագային, — Մահով, մահապատիժի միջոցաւ անջատուած մարդկային ընկերութենէն: Նոյնը կը պահանջեմ ես, կը դատեմ ես անոր մասին ալ որ կը սիրէ իր մերձաւոր ընկերը, եւ սակայն ցաւ միայն կը պատճառէ անոր: Կամ այն է որ ան միտք ունի սիրել իր ընկերը, բայց ինքզինքը կը սիրէ լսկ, եւ իսկապէս կ'ատէ միւսը: Կամ այն է որ իրօք կը սիրէ իր ընկերը, նոյնիսկ — պարտաւոր է բարի կամենալ անոր ու ընել զայն հանդէպ անոր, բայց չ'ըներ — ուրեմն անբանաւոր, ախտաւոր մարդ մըն է ան, զոր պէտք է ձգել ինք իր վիճակին: Այսինքն Բարին բանաւոր է, Չարը անբանաւոր: Սէրը բնութիւն, բնականութիւն է, Ատելութիւնը անբնութիւն, անբնականութիւն է մարդոց մէջ: Որովհետեւ այն բանաւոր կամ բանական մարդիկ, որոնք չեն ձգտիր միարանութեան, միանպատակ գործունէութեան, հանդարտօրէն իրենց ճամբան կ'երթան —» — «Եւ կը փճանա՞ն, ըսել կ'ուզէք», ձայնեց Պաւղա, զրացուած: «Կը կորսրէ՞ն, ըսել կ'ուզէք», կրկնեց Խոսրովիդուխտ: «Եթէ վախճանին այդպէս պիտի ըլլայ, այսինքն այդ ձեռով երթալով կամ այն է որ մինչեւ իրենց բնական մահուան օրը կը հասնին, կամ մարդոցմէ կը պատժուին, կը մահանան, կը փճանան կը կորսուին, քանի որ որեւէ բանականութիւն չի կրնար օգնել այդպիսիներուն», պատասխանեց Սիլէն անվրդով հանդարտութեամբ եւ ուտերը թօթվելով: Եւ ահա Պաւղա եւ Խոսրովիդուխտ փութացին ճամբան բռնել: Եւ ակումբն ալ համանդամայն լուծուեցաւ եւ ամէն ոք մեկնեցաւ պաղ լուծութեան մը մէջ:

ԳԼՈՒԽ Թ.

## ԿՈՐՍՈՒԱԾ ԳԵՏԻՆ

Արքայազուներ առանց որեւէ հրաժեշտի անկողին զացած էր: Առանց բարեւելու իսկ: Օրերով տեւեց «Աքիլլէսին վրէժը»: Թաւալուն աչքերով, կրճատուն ակռաներով, ճակատի կնճիռներով եւ դատան ղիմագիծերով, որուն առջեւ զերիները, նոյնինքն վերակացուն կ'ուզէին քաշուիլ, Տրդատ ման կուգար չորս կողմը: Ճաշերու միջոցին ոչ մէկ բառ կուգար իր շրթունքէն: Բայց բարկութենէն ա'լ աւելի կ'ուտէր կը խմէր: Ու նորէն կ'ելլէր կ'երթար: Սեղանի վրայ կամ սեղանէն դուրս: Սիլէնի համոզիչ խօսքերը ի զուր, ինչպէս իշխանին: Խոսրովիդուխտ կը խուսափէր եղբորմէն լացող աչքերով եւ ամէն օր ա'լ աւելի կը տառապէր այս կացութեան տակ, որ այս օտար երկրին մէջ ա'լ աւելի դաւառին կ'ընէր հայրենիքին կարօտը, որ կրկնակ ծանրութեամբ հետզհետէ կ'ընկճէր զինքը: Արսինէ եւս այս պատճառաւ աւելի կը տառապէր ոչ միայն Տրդատի վարմունքին համար, որովհետեւ որոշակի կը զգար թէ ինչպէս հիմա իրեն համար անկարելի էր սիրել Տրդատը, աւելի սիրել քան ասկէց առաջ, կամ նոյնիսկ անոր համար աղօթել, ինչ որ — իր գիտցածին նայելով — կ'ընէր Խոսրովիդուխտ: Խոսրովիդուխտին կողմէ մերձեցումի որեւէ փորձի կը պատասխանէր Տրդատ աչքերը թաւալելով, երեսը ուրիշ կողմ դարձնելով եւ առնել քալելով: Խոսրովիդուխտ չէր ուտեր, սեղան չէր դար: Բայց արքայազուներ հետզհետէ աւելի շատ կ'ուտէր եւ անյադ: Ամբան վերջին օրերուն իրիկուն մը ճաշի ժամանակ փոթորիկ մը ելաւ, որուն նմանը տեսած չէր արքայազուներ, այնքան սարսափահար ըրաւ զայն որ դգալը ձեռքէն ինկաւ, ամէնքն ալ ոտքի կանգնած ապշութեամբ կը նայէին Լիկինիոս իշխանին, որ

իրեն յատուկ քիչ մը աւելի բարձր նստարանին վրայ ելած կեցած էր: Այս հինաւորաց զօրավարին բարեմոյն եւ միշտ սիրուն ընտանի դիմապծերը անհետ եղած էին: Ճակատն ու բերանը Երկաթեայ կը թուէին: Աչքերէն կատաղութիւն կը կայծկլտէր եւ խռուացած յօնքերուն տակէն շանթեր կը տեղային Հայոց Գահաժառանգին վրայ: Թանձրամազ ալերեկ պեխին տակ բերանը բացուեցաւ կամաց կամաց. այդ րոպէին ճայթեց, պայթեց Լիկինիոսի զայրոյթին ամպը այնքան զզրզազին, որ Տրդատ ցնցումին տակ Երթալով պղտիկցաւ, գլուխը երթալով թաղուեցաւ զօրը եւ հուսկ ուրեմն քայքայուած նստաւ իր բարձրաթոռին վրայ: Ազնուաբար իշխանը ոչ այնքան վաշելուչ ակնարկութեամբ շօշափեց իր տունին բարեկործութիւնները, իր անձին յիշատակութիւնը չըբաւ բնաւ, ջատագովուեցան միմիայն տունին տիկինները, Լիկինիա, Արսինէ, Խոսրովիդուխտ, Պաւղա, Յուդիթ: Անոնց դիմացը հայ իշխանազունը ոչ թէ իբրեւ իշխանազուն եւ ապաղայ թագաւոր կը հանդիսանար, այլ իբրեւ քրթմնջող գերի մը, Խոսրովիդուխտին դաւաճանած էր, ուրացած էր զայն օտար երկրի մէջ, եւ հիմա իշխան Լիկինիոս կը փափաքէր որ Տրդատ այլեւս վերջ մը տայ ամէնուն նեղութիւն պատճառող այս կացութեան: Պէտք է հաշտութիւն դոյանայ այս իրիկուն, ապա թէ ոչ՝ Հայ իշխանը պիտի զրկուի ասպնջական իրաւունքէն: Կարծես Տրդատ, իր հակառակութեան մէջ ալ այսքան դժբախտ ու անյաջող, իրմէ գերազանց ուժի մը կը սպասէր: Անմիջապէս կտորեցաւ իր ընդդիմութիւնը, դիմապիծերը պայծառացան, ճակատին կնճիռները փարատեցան եւ խոշոր աչքերը իշխանին կը յառէին հիացումով, յակճիռս, նոյնիսկ երախտապարտ:

Արսինէ խելացութեամբ անմիջապէս օգուտ քաղեց վայրկեանէն, եւ ճաշէն վերջ տղոց հետ — ինչպէս միշտ կ'անուանէր Խոսրովիդուխտն ու Տրդատը — դուրս ելաւ պտոյտի: Ժուռ կուզային Պիրէոնի ուղղութեամբ ձիթենեաց պուրակին մէջ, որ մթնշաղին աւելի զորջ կ'երեւար, գորջ արծաթ մետաքսով դողցես ընդելուզուած: Խոսրովիդուխտին մը կը տիրէր, եւ երեք անհայրենիքները սաստիկ բուզի սիրտերով, երեքն ալ հաշտութեան համար հոգի տալով, երկար ատեն բառ մը չխօսեցան: Իրարու քովէն կ'երթային: Արսինէ Խոսրովիդուխտի ձախ թեւը մտած էր: Արքայազունը կը քալէր Արսինէի քովէն: Յանկարծ ձեռքը անոր աջ թեւին վրայ դրաւ, Արսինէ թեւը վար առաւ եւ Տրդատ, առանց ձայն հանելու, իր թեւը դրաւ Արսինէի թեւին մէջ: Նորէն այսպէս դացին քիչ մը ատեն:

«Ուրեմն դարձեալ մեր բարեկամը եւ պաշտպանը պիտի ըլլաս, չէ՞, Տրդատիկ», հարցուց Արսինէ յանկարծ փափուկ սիրուն շեշտով մը: Տրդատ լռեց եւ մեղմիկ անոր թեւը միայն սեղմեց: Արսինէ

կեցաւ եւ խուզարկու նայուածքով արքայազունին ուղղուելով հարցուց. «Ի՞նչպէս եղաւ որ այդպէս ըրիր, Տրդատիկ»: Գուռը խոպուպիքով գլուխը կախեց արքայազունը Արսինէի լանջքին դէմ եւ լռեց նորէն: Քանի մը քայլ եւս առաւ քրթմնէին, յետոյ նայուածքն ու հարցումը կրկնեց: Հիմա ըսաւ Տրդատ մեղմօրէն. «Նարկութիւնը ինձմէ աւելի զօրաւոր է: Երկար ատենէ ի վեր խօսիլ կ'ուզէի, կը խորհէի, թէ որքան տղեղ արարքի մը մէջ պէտք է գտնուած ըլլամ. դիս արհամարհեցի ես ինքս, կշտամբեցի ես դիս ինքս, նոյնիսկ խաղաղանցի ես իմ անձս, եւ աղօթեցի Միհրին, բայց դեւերը կապեցին դիս, կը դրայի: Արսինէ, Խոսրովիդուխտ, եկէք, ներեցէք ինձի, ես շատ կը սիրեմ ձեզ, չեմ կրնար ըսել, ինչպէս կը սիրեմ — եւ պարտաւորուեցայ սակայն ատել ձեզ: Բայց ասոր համար շատ ապերջանիկ եմ: Եւ ամէն ինչ իմ մէջս խաւար դարձած է»:

Բռնած էր Արսինէի եւ Խոսրովիդուխտի ձեռքը, իր բերանին շուրջը կը դողար կը սարսուար մկանունքը ջլազարի պէս, աչքերը արցունքով կը լեցուէին, եւ անդամ մըն ալ աղաչեց. «Ներեցէք ինձի»:

— «Միտով կը ներեմ քեզի, Տրդատիկս, բայց Խոսրովիդուխտ ալ աւելի պէտք է ներէ քեզի»:

Քոյրը փոխան պատասխանի եղբորը կուրծքին վրայ նետուեցաւ այնքան յանկարծակի, հրաբորբոք բուռն թափով, որ պարտաւորուեցաւ ետ ետ փախչիլ: Սակայն Խոսրովիդուխտի բազուկները շաղապատած էին անոր պարանոցը, եւ հետուն իսկ կը թնդար սա երիցս հեկեկաձայն կանչը. «Օ Տրդատիկ, Տրդատիկ, Տրդատիկ»: Տրդատ հուժկու թեւը դրաւ անոր ծոծրակին, քաշեց սեղմեց զայն եւ կ'արտասուէր անոր զիրզ ու քնքոյշ մագերուն վրայ: Երբ վերջապէս դիբար թողուցին եւ կը նայէին իրենց շուրջը, Արսինէ արդէն կանխած էր գիրենք ճամբու վրայ: Մթասուտեր պուրակին մէջ քրթմնոյշը կերպարանքով ու գնացքով՝ շրջազայտ Ստուածուհիի մը կը նմանէր: «Նորէն հիմա ամէն ինչ բարեւոք է, դարձեալ բարեւոք ամէն ինչ, տղաք», ձայնեց ուրախութեամբ, երբ դարձաւ շուրջը եւ իր կողմը փութացող տղաքը իր բաց ու հոլանի թեւերուն մէջ զրկեց փակեց: «Ի՞նչպէս պիտի ուրախանայ իշխանը»: Դարձեալ կը քալէին թեւ թեւի: Բայց ընդհուպ դարձեալ թախծոտ լռութիւն մը եկաւ ծանրացաւ քոյր եղբոր վրայ: «Դեռ ամէն ինչ բարեւոք չէ, Արսինէ», ըսաւ Տրդատ յանկարծակի: «Ինչ պակաս ունիս, Տրդատիկս», հարցուց մտատանջ: «Հայրիկը երբեք չի գրեր ոչ ալ պատգամ մը կը դրկէ: Ահա երեք տարի եղաւ, եւ տակաւին միշտ պատերազմի մէջ: Բաւական է որ անդամ մը ոտքս հայրենիք դնեմ, խոշորցած ու զօրացած եմ, Լիկինիանոս արդէն շատ բան սորվեցուցած է ինձի ի

մասին զինուորութեան եւ պատերազմական հրամանատարութեան: Ապահովաբար պիտի կրնամ օժանդակել հայրիկին որ յաղթութիւնը շահի: Իրաւ, հոս ամէն ինչ զեղեցիկ է: Ամէն ինչ, ամէն ոք լաւ ու բարեւոք է մեզի հանդէպ, բայց կարծեմ թէ հոս ես չեմ կրնար միշտ պահել ազնուականութիւնս եւ բարութիւնս: Հոս մարդիկ Մովսէսին ու քու սորվեցուցած հաւատքէն տարրեր հաւատք ունին: Իշխանը ծերացած է այլեւս, եւ յաճախ կ'ըսէ ինծի, թէ ինք ալ ժամանակին եղած է երիտասարդ եւ քիչ մը խենթուկ, եւ կը խնդայ: Սիւն շատ լաւ եւ զեղեցիկ կը բացատրէ ինծի թէ ինչ է վայելչութիւնը, աղ- նըութիւնը եւ առաքինութիւնը, շատ լաւ կը հասկնամ եւ կը ջա- նամ ըստ աշնմ գործել, բայց իմ մէջս ուրիշ ձայն մը կը խօսի. «Ար- քայազո՛ւն, հակառակը գործէ», եւ զիս կը մղէ կը հրապուրէ զիս, մինչեւ որ ընեմ ինչ որ խաւարին է ու չար: Յետոյ կը զղջամ: Բայց շատ ուշ է: Հայրիկը կը պակսի ինծի, հայրիկս: Հոս ամէնքն ալ չա- փազանց բարի են ինծի հանդէպ: Խոսրովիդուխտ շատ բաներ կը խօ- սի ինծի Քրիստոսի վրայ: Բայց ես չեմ կրնար հայրիկս ցաւեցնել: Ան կը հաւատայ Միհրին, Միհրին կը հաւատամ նաեւ ես»: — «Ես երկուքին ալ կը հաւատամ», մէջտեղ նետուեցաւ Խոսրովիդուխտ: «Դուն ոչինչ զիտես Քրիստոսի մասին, մտիկ ալ չես ընեմ, երբ ես քեզի անոր մասին կ'ուզեմ պատմել ինչ որ Պաւղոս եւ քրիստոնեաները ինծի կը խօսին անոր վրայ» — «Բայց, բայց, ես արդէն անոր վրայ շատ լսեցի», ձայնեց արքայազունը խնդալով, «երբ կ'ուզեմ համբու- րել Քրիստոսը, անիկա միշտ ինծի Քրիստոսով կը սպանայ, եւ կ'ըսէ, ասիկա պէտք չէ որ ընէ անոր հաւատացողը: Խաւարին Աստ- ուած մըն է Քրիստոսը, որ տխուր կ'ընէ մարդիկը: Այս պատճառաւ դուն միշտ տխուր ես, Խոսրովիդուխտ, եւ երկար ատենէ ի վեր խըն- դալդ չեմ տեսած: Քու հաւատքիդ նայելով մարդ պէտք չէ հաճոյա- սէր ըլլայ, պէտք չէ զինքը նախատողին, անուանարկողին դէմ բան մը ընէ, կամ ինքզինքը պաշտպանէ, այլ պէտք է սիրէ նոյնիսկ զայն որ զլիսուդ քար կը նետէ ու կը սպաննէ քեզ: Եթէ ասանկ երթայ, ես ոչ թաղաւոր ըլլալիք ունիմ, ո՛չ կոտուղ, մարդիկ պիտի չհնազանդին ինծի եւ միշտ պիտի մտածեն. «Քրիստոսնայ է այս թաղաւորը, ա- նիկա չի բարկանար, ոչ մէկը կը գարնէ կը ծեծէ եւ կը սպաննէ: Ո՛չ, ես չեմ կրնար այս ձեւով թաղաւոր ըլլալ»:

— «Քեզ բռնադատող չկայ որ Քրիստոսի հաւատաս. եթէ իրօք կ'ուզես Միհրի բարեկամ մնալ, ան պիտի օգնէ քեզի, քայլել լոյսի մէջ, եւ նոյնիսկ քու թշնամիներուդ դէմ գլուխ ելլել», ըսաւ Խոս- րովիդուխտ: «Թշնամին պէտք է ճզմես «աղաղակեց Տրդատիկ, եւ աչքերը կը փայլատակէին: «Հապա աղքատնե՞րը, հիւանդնե՞րը, բո-

րտնե՞րը» կամաց մը հարցուց Խոսրովիդուխտ: «Անոնք ալ — կը մուրան եղածին պէս, եւ կը մեռնին, ինչպէս միշտ»:

Ետ դարձան եւ կրկին, լուծեամբ բոնեցին տունին ճամբան: Տրդատ կրկին խօսքը բերաւ ծնողքին վրայ: Անոնց եւ հայրենիքին մասին շատ մը յիշատակներու կարգին՝ հասան անտառի ելքը, նստան փողոցին եզրերը եւ ձիթենիի մը տակէն դիտեցին քաղաքը, որուն վերեւ կը դարէր իրիկնային լուռ, մեղմ երկինք մը մանիշակազոյն, վարդակարմիր, զեղին եւ դէպի արեւմուտ ծիրանի վառ երփներան- գութեամբ: Ամպերու արտակարգ կուտակումի մը թափօրը զօրա- գունդի մը պէս կ'երթար կը քայլէր երկինքի վրայ: Երեքը յանդուզն երեւակայութեամբ կը պատկերացնէին ամպերէն ձեւացած զանազան կերպարանքներ, երես, քիթ, ծնօտ, մօրուք, անդամներ, դիրք, շարժում, գէնք, կիներ իրեւ թագուհիներ, քրմանոյշ, սպասուհիներ կը հետեւէին, եւ ծայրը — սիրուն միզանման ամպիկ մը սպիտակ կարմիր, նրբաւարտ, ծփուն կարճ յօդիկի ձեւով: — «Ո՞վ է այս», ձայնեց արքայազունը: Եւ Արսինէ ու Խոսրովիդուխտ, կարծես միա- բերան, խնդալով «Ֆրիսանոյշ» — «Ֆրիսանոյշ» հաստատեց արքա- յազունը երկարաձիգ վանկերով:

Խոսրովիդուխտ յանկարծ նայեցաւ ամէնէն դուրսի ծառին վը- րայ հանդիպակաց փողոցին եզրը, անտառին ելքին մօտ, խոշոր, մարմնեղ բան մը, որ կախ զլուխով, փետուրներուն մէջ թաքնուած խնամով, կարծես զիշերային հանգիստի համար, սրածայր, կողմնա- կի բռնած ականջներով կը թուէր երկար ատենէ ի վեր մտիկ ընել, եւ իր մեծ, կլոր, սեւափայլ աչքերով շարունակ վար կը նայէր Խոս- րովիդուխտի վրայ: Քանի մը վայրկեան օրիորդը լուռ դիտեց դէպի վեր, եւ հանդարտօրէն յառեցաւ թռչունին, առանց այս մասին ու- րիշներուն բան մը ըսելու: Բայց շատ չանցած, իր նայուածքին սե- ւեռուն անդորրութեան արտակարգ զգացում մը գրաւեց զինքը: Ար- մուկով կամաց մը մղեց Արսինէն եւ հծծեց. «Նայէ հոն ծառին, սա ծառին դիմացը, ամէնէն վարը երրորդ ոստին վրայ»: Արսինէ անմի- ջապէս բուն դիտեց եւ լոնց, բայց շարունակ աչքը հոն էր: Յետոյ մղեց ինք ալ Տրդատը եւ երեքը անձայն կը նայէին վերը բուն: «Մի դուցէ Աթենաս Աստուածուհիին բուն ըլլայ», ըսաւ Տրդատ: — «Կամ թերեւս նոյն ինքն Աստուածուհիին», ըսաւ Խոսրովիդուխտ: Տրդատ խնդաց: «Բայց ասիկա անկարելի է: Աստուածները ի՞նչպէս կրնան կենդանիի փոխուիլ»: — «Աստուածները ամէն բանի կարող են», դիտեց Խոսրովիդուխտ: «Ասիկա կարելի՞ է, Արսինէ», կ'ուզէր գիտ- նալ արքայազունը: «Աթենասի մասին չեմ գիտեր: Բայց, գիտցէք որ մենք Հայերս կը հաւատանք որ բարի եւ չար ոգիները կենդանիներուն

մէջ կ'երթան եւ անոնց աչքերէն դուրս նայելով կը դիտեն մարդիկը . բարիներ կ'օրհնեն զանոնք, կամ կը զուշացնեն զանոնք, կամ նշանացի կ'ակնարկեն, երբ վասնդի մէջ ըլլան : Չար ոգիներ կը մոլորեցընեն մարդիկը, կը կախարդեն զանոնք, երբ երկար ատեն անոնց աչքերուն մէջ նային : Չէ՞ք դիտեր, տղա՛ք, — երբ բարի մարդիկ, — ինչպէս հայր կամ մայր, կամ բարեկամ մը մեռնին, անոնց հոգիները կրնան զեղեցիկ թռչուններու մէջ երթալ, եւ անոնք կը նստին ճիւղերու վրայ, որոնց տակ իրենց տղաքը կամ բարեկամները կը նստին եւ կը լսեն ինչ որ կը խօսին եւ կը սիրեն եւ կ'օրհնեն» : Սարսուռ մը պատեց երեքն ալ, որովհետեւ կարծես՝ ի հաստատութիւն այս հաւատքին՝ նոյն բողոքին երբ հաղիւ Արսինէ իր խօսքին վերջը բերած էր, բուն արձակեց ողբաղին կեղերջանք մը, որ հեռուն անտառին մէջ կը թնդար, աշխարելի կանչ մը արձագանգոտ : «Եթէ հայրիկը եւ մայրիկը մեռած ըլլան, առանց մեր դիտնալուն, եւ հապա եթէ անոնք ըլլան որ ծառէն վար մեր վրայ կը նային», ըսաւ արքայազունը խորհրդաւոր ձայնով մը : «Ատ ի՞նչ կ'ըսես, Տրդատ : Սոսկում կը պատճառես ինձի» շնչեց Սոսրովիդուխտ, ղեփեղին կտրած : «Մնողքը կ'ապրին, այո, չէ՞, Արսինէ» : Լուսթեան կարճառօտ վայրկեանը արդէն խիստ երկար եղաւ . Սոսրովիդուխտին համար : Կարծեց թէ Արսինէ չլսեց իր հարցումը, եւ աւելի թախանձադին կրկնեց, «Կ'ապրին, այո, չէ՞, Արսինէ» : — «Ո՛վ» : — «Անոնք, մեր ծնողքը» : — Արսինէ իրբեւ յակամայս ձեռքը սիրտին վրայ սեղմեց եւ ըսաւ հանդիսաւոր ձեւով . «Կ'ապրին, Սոսրովիդուխտ : Կ'ապրին» :

Սաւարամած անտառին մէջ կ'երկարաձգուէր սա դիմացի ծառէն դանդաղկոտ ահուկի կեղերջ մը, խորունկ թախիծով ու սպառիչ հայրենարդձութեամբ : Արսինէ սարսափահար վեր ցատկեց եւ խելայեղ ձայնեց . «Եկէ՛ք, տղաք, հոս վատախտարակ է : Թերեւս թռչունը բան մը կ'աղղարարէ Մեղի» : Տրդատ սակայն ցատկեց ծառին դէմ : Արսինէ, ինքնիրմէ դուրս ելած կ'աղաղակէր ճոնչող ձայնով մը . «Տրդատիկ, կ'ուզե՞ս դալ» : Բայց Տրդատ չչող շեշտերով, կանչերով, ձեռքի եւ թեւի շարժումներով կը ջանար կենդանին փախցնել, խրտչեցնել : Արսինէ աճապարեց հեռանալ, որչափ որ կրնար : Սոսրովիդուխտ քիչ մը հեռուն գնաց կեցաւ աղաչելով կանչեց եղբորը : Տրդատ մինչեւ իսկ փայտի կտոր մը նետեց մինչեւ այն ատեն անշարժ հանդարտ մնացող կենդանիին դէմ : Հերոսին համբերութիւնը հատաւ : Գանակը պատեանէն քաշելով եւ աջ ձեռքովը բռնած զայն, սկսաւ մազլցիլ դէպի բուն : Փոքրիկ միջոց մը միայն դինքը կը բաժնէր կենդանիէն, որուն կիսադէմքը լոկ տեսանելի էր հիմա սաղարթին ու իրիկուան երկինքին ներքեւ : Բայց միշտ հոն էր անխլիրտ : Երբ

Տրդատ աջ ձեռքը վերցուց զարնելու համար, յանկարծ իրեն դէմ բացուեցան երկու ատրաչէկ աչքեր բորբոքած ածուխի պէս, երկու հուժկու թեւեր, ճարճատելով բախեցան սաղարթին ու ճիւղին, Տրդատին երեսին դէմ արձակելով հովի բուռն հարուածներ : Եւ այնուհետեւ շէլին մը, սուլում մը, շնչիւն մը, այնքան սուր քասքնելի, որ դանակը ձեռքէն ձգեց Տրդատ սոսկումէն : Չարհուրելի ճիւղ մը թնդաց անտառին մէջ, անձկալից աղաղակ մը : Ետեւէն անմիջապէս Սոսրովիդուխտին մոնչաձայն կանչը օգնութեան : Տրդատ լեղապատառ կը գոչէր խելայեղ . «Հայր, Հայր Սոսրով, դո՞ւն ես, Դո՞ւն ես ատ : Ով լոյսի աստուածներ : Ահուրա, Միհր, Անահիտ, օղնութիւն : Ահա Ահրիման եւ դեւերը» : Այս ճիւղին կը կցուէր կրկին Սոսրովիդուխտի անձկաղին աղաղակը : Ահա մրմռալ մը, մոնչել մը կարծես թեւաւոր սատանաներ ծառէն դուրս կը թռչէին . ծառին կատարին վերեւ լայն բարձր աղեղի ձեւով ահա կեղերջաձայն փախաւ թռչունը, մութ անտառը լեցնելով վայերով : Պաղ քրտինքով ծածկուած, կիթոտ ծունկերով արքայազունը երկրեալ կը տատանէր, ծառէն իյնալէն վերջ, դէպի քոյրը, որ իր բաց գոյնով լողիկին մէջ քարուտ ճամբուն վրայ ծնրաղիր, սկանջը հողին կը քսէր : Երբ Տրդատ իրեն եկաւ, կը լսէր որոշակի Յիսուս Քրիստոսի անունը որ ջերմապին խանդով կը շրջէր Սոսրովիդուխտի բերնէն :

Քոյր եւ եղբայր անկարգ ու խռովալից փախուստի ձեւով Արսինէի ետեւէն հասան : Քրմուհին դարձեալ դառն մեղադրանքներ ուղղեց Տրդատին, որ դարձեալ խօսք մտիկ չըրաւ եւ իր կանչելուն վրայ չեկաւ : Այս ամէնը պատիժ պիտի բերէ իր գլխուն : Բայց Արսինէ իր ներսիդին բովանդակ պայծառութեամբ ինք իրեն կը խոստովանէր, թէ անգամ մըն ալ ահա փորձառութիւն կ'ունենայ, որ կամ այն է թէ Միհրի եւ Անահիտի օժանդակութեան մասին իր հաւատքը շատ տկար է, տաղնապին յաղթելու համար, կամ . . . Չկրցաւ աւելի մտածել : Գիշերէն առաջ ամէն ինչ արդէն կը մթննար իր առջեւ : Երբ տուն վերադարձողները գաւիթին նախասրահին լոյսերը տեսան, սիրտերնին բացուեցան : Բայց այս իրիկուրնէ սկսեալ իշխանը գիտցաւ որ դարձեալ անակնկալ մը կը պատրաստուի իրեն եւ իր տունին գլխուն, կամ մօտալուտ դժբախտութիւն մը : Անկէց քանի մը օր վերջ, թռչուններու թեւերը օդին մէջ որոշ միջոցին մէջ զուլակել կուտային զոհելի կենդանիին մարմինին ցնցումները, որոնց մասին հարցուցած էր քուրմին, թէ դժբախտութիւն մը կա՞յ : Ծերակուտականը տրտում տխուր ու նախապաշարուած կաղմ եւ պատրաստ կը սպասէր, տունին ու դարաստանին մէջ ու շրջակայքը թափառելով, քաղաք երթալով եւ միշտ շատ մը նորութիւններով տուն կը դառնար : Դիտկեցախանոս միակ ինքնակալ, տիրապետող եղած էր եւ իր

բնակավայրը փոխադրած էր Նիկոմիդիա, Բիւթանական երկրամասին մէջ, հսկայ միջնամատի մը պէս դէպի Փոքր Ասիա սողոսկող գեղեցիկ Աստակոս ծովախորշը, Գաղկեդոնի դէմ յանդիման :

Քիչ ատենէն լուր պիտի գար, թէ Հայաստան ինչ վիճակի մէջ կը գտնուի, ինչ պիտի ըլլայ Տրդատի դահլ. ապարանքը եւ արքունի զանձերը ինչ եղած են, Մովսէսը (մոպսեոս) ինչ կ'ընէ եւ ինչ եղած է Անահիտի բազինը : Օրէ օր պատգամ, պատգամապիր կը սպասուէր : Ամէն օր աւելցող նեղութեամբ վերջապէս կը տեսնէին, թէ մօտալուտ է ժամը, որ սարսափելի լուրը հաղորդել հարկ է տրոց : Լիկին-իանոս վերադարձած էր : Նիկոմիդիոյ մէջ ան նորընտիր կայսեր ուխտած էր հաւատարմութիւն՝ իրբեւ պետ յունական լէյէոնին, եւ ստացած էր կայսերական շնորհին ու բարեկամութեան խոստումը : Օրերով տեսց իր տեսակցութիւնը : Հիւրեր հիւրերու վրայ կուգային, իմանալու համար, թէ ինչ կերպարանքով է նոր կայսրը, ինչ տեսակ մարդիկ կը գտնուին անոր շուրջը, եւ ինչպէս կը խորհի կառավարել : Յուզիթի ամուսինը կրնար շատ կէտերու վրայ ամբողջացնել Լիկինիանոսի տեղեկատուութիւնը, որովհետեւ արդէն ինք ալ արքունիք գտնուած էր, եւ նոր կայսեր՝ Դիոկղետիանոսի յայտնած էր իր քշելիք ապրանքներուն մէկ քանիին գիները, եւ այս առթիւ իրեն եւ իր առեւտրական տունին համար ինչ ինչ հաւաստիքներ եւ ազատութիւններ ձեռք բերած էր : Բերնին ջուրերը կը վազէր Դիոկղետիանոսը գովելու ատեն, որուն հետ, կ'ըսէր, ամէն ոք կարող է խօսիլ իրբեւ իր ընկերով հետ : Հոկտեմբերի սկիզբն էր : Մութ, պաղ, անախորժ, անարեւ առաւօտ մը : Ակրոպոլիս արձաններու իր անտառով կարծես փաթթուած էր սեւ քողերով : Բուռն քամիները կը փրչէին ծովէն եւ չոր սաղարթներ ու ոստեր կը գալարէին դարաստանին մէջ ամէն կողմ : Լիկինիոսի տունին մէջ այդ օրը շատ տխուր, սոսկալի էր : Առանց մասնաւոր նշանի, յանակնկալս, եւ առանց մէկը զինքը հարցնելու, Լիկինիոս այդ պէս օրը ելած էր անկողինէն կանուխ, օր մը՝ զոր ոչ ոք, նոյնիսկ իր յետին դերին չէր մոռցած :

Առաւօտուն : Արքայագունը արդէն քիթը կախած, տխուր, քրթմնջող ձեւով մը ելած էր անկողինէն, ամէն բանէ առաջ կարգալու համար առանց որեւէ փափաքի : Եւ այսօր Սիլվն մասնաւոր փոյթ մը ունէր սորվեցնելու արտայայտութեան կամ ոճի ճշտութիւնը, եւ զաղափարի բացարձակ ըմբռնումը : Այս մտաւոր մարդանքները երբ վերջացան, կարգը եկաւ հոտորութեան կամ ճարտասանութեան, եւ այն ատենուան յոյն-հոռմէական զարդացեալներուն դաստիարակութեան մեթոտին համաձայն, պէտք էր որ արքայագունը սովորէր նաեւ թէ ճառ արտասանելու կամ խօսելու ժամանակ, ինչ զիմաղիծեր,

չարժուձեւեր անհրաժեշտ են, թէ ինչպէս պէտք է շարժել մատները, ձեռքերը, սրունքը, ոտքերը, ամէն ինչ վայելուչ, ճառին մտաւոր պարունակութեան յարմարապոյն : Այսօրուան դասին էր որ Սիլվն մասնաւորապէս պիտի աշխատէր Տրդատը խանդավառել եւ իր՝ Սիլվնին՝ դաստիարակին գերազանցութիւնը զպալի ընել անոր : Տրդատ կը կարգար, Սիլվն գիտողութիւնները կ'ընէր երբեմն սա կամ նա նախադասութեան յարմարապոյն տեղին վրայ, երբեմն արտասանութեան մասին, երբեմն ալ տաղերու ամանակին կամ ինչ չեչտով եւ ուր հանդէպուն համար : Այս դասը վերջ ի վերջոյ օղտակար ընծայելու համար իր նպատակին՝ Սիլվնի կողմէ երկու — երեք անգամ պիտի կրկնուէր, նոյնը նաեւ մեր Տրդատը ընել պարտաւոր էր : Բայց հայ արքայագունը, իր ծանօթ տրամադրութեան տակ միշտ, ակամայ երեսով մտիկ կ'ընէր : Այնպէս որ Տրդատին դէմքին արտայայտութիւնը բնաւ համաձայն չէր դասի ճառին բովանդակութեան : — «Տրանջող գէմք մը եւ յաղթութեան ու աւարի ուրախ լուրը — իրարու համաձայն չեն, սիրելիս : Ոչ ոք պիտի հաւատայ քու յաղթութեանդ» : — Հարկ եղաւ դարձեալ ամբողջ ճառը կրկնել ուրախ արտայայտութեամբ : Բայց հիմակ ալ անցործ մնացին ձեռքերն ու ոտքերը : «Բայց անգամ մըն ալ բսեմ, արքայագուն, գլուխդ, ձեռքերդ, թեւերդ, ոտքերդ պէտք է ուժով շարժես — ամէն ինչ պէտք է ուրախութիւն եւ յաղթութիւն ցոյց տայ, ներկայացնէ : Այսպէս, նայէ, ես ինչպէս կ'ընեմ» : Եւ Սիլվն ամբողջ տեսարանը ներկայացուց : Տրդատ եռանդուն դաստիարակին ետեւը կեցած՝ լեզուն դուրս կը հանէր, իրբեւ թէ զղուելով վարժապետին ըրածէն : Նորէն սկսաւ փորձը : Արդէն Տրդատ բան մը չէր տեսած, բան մը չէր հասկցած Սիլվնին ներկայացումէն եւ նորէն ամէն բան ծուռ ըրաւ : Սիլվն կրկնեց անդրդուելի համբերութեամբ իր ապացուցմունքը, եւ ձեռքերով ու ոտքերով, շունչը կարճ կարճ առնելով, Տրդատին առջեւ կարծես սուսերամարտութեան փորձ կը կատարէր, շարժելով շարժակելով : Ինչպէս բսինք, այդ փերձերու միջոցին Տրդատ Սիլվնի ետեւը կեցած կ'ըլլար : Արդ, դաստիարակի միտքէն, ուրկէց ուր, անցաւ, անգամ մը ետեւը նայիլ, թէ Տրդատ ուշադրութիւն կ'ընէ : Ի՞նչ տեսնէ — Տրդատին լեզուն դուրս կախուած էր այնքան երկար, որքան կարելի էր երեւակայել, եւ անոր նայուածքին ու դէմքին արտայայտութիւնը որոշապէս կը մտտնէր Սիլվնին, թէ Տրդատիկ առտուան ճաշէն մնացած կտորները բերնին անկիւնէն վար զրկել կ'ուզէր : Սիլվն ուսուցիչ մնալ ուղեց : Դաստիարակին կը վայելէ ոչ մէկ վախ ցոյց տալ : Յանդիմանական մըն է սկսաւ : Մտախօս մըն ես դուն, ըսաւ արքայագունին : Դուն վատ ես, գերի մըն ես, ոչ բնաւ իշխան, ոչ երեք թաղաւոր : Ոչ մէկ ատեն լման մարդ եղած ես, ո-





Այդ պատին ներսը փողոսկրեայ բարակ տախտակներով շինուած խուցը կը պարփակէր քրմուհիին թանկագին իրերը եւ կրօնական սրբութիւնները: Ողորկ բիւրեղէ ամանի մը մէջ, բաժականման ոսկի հիւքով ծածկուած, կը գտնուէր սուրբ հիւթը: Տակի կողմը բարամունքը, նուիրական փայտիկներու, գաւազանիկներու խուրճը, նաեւ ձեռնոցները, կրակի ունելիները, բերնի կապերը, վերի ծայրէն դուրս արձակուած մաղոտ կաշիի բաղմապատիկ կապերով խարազանը: Դարակը բաց էր, մէկ խօսքով: Հասօմայի սրուակին խիցը սխալ գոցուած, ուրիշ ամէն բան մէջտեղը: Աղջիկները իրենց քննութիւնները պիտի վերջացնէին, երբ Արսինէի վալուն վրայ յանկարծակիի եկան: Ուժասպառ բլլալու աստիճան գրգռուած ինկաւ անկողինին վրայ: Անհանդարտ կէս մրափով պտոկած էր, ամէն բան կը դառնար իր բոլորտիքը, ինք ու իր անկողինը վեր վար կ'իջնէին կ'ելլէին ծովու ալիքներուն վրայ եղածի պէս: Աշնանային տաքուկ արեւոտ յետ միջօրէ մըն էր, եւ սենեակին մէջ կը տարածուէր անըջային լուսթիւն մը: Արսինէի պտոկած բարձր ոտքերով անկողինին տակ յանկարծ զոռելի ծիծաղ մը թնդաց, անասունի, ոչ թէ մարդու նման, բորենիի նման, ցնորքի կամ դինովութեան մէջ արձակուած ծիծաղ մը, որ իզական ձայնէ մը միայն կրնար առաջ գալ: Ուղեծուծը դղրդող աղաղակով մը Արսինէ ցատկեց, անկողինին վրայ բռնեց ինքզինքը, վար չիյնալու համար, քանիցս նորէն պոռաց, հաւատարմով թէ դեւ կամ կենդանի մը կայ բաղմոցին տակ: Ծիծաղը լռեց, եւ յաջորդեց անհասկնալի շփոթ ու խառնիխուռն կակաղում մը, թոթովում մը երգի, խօսելու կարողութիւնը կորսնցնող եւ սակայն բոլոր ուժովը խօսելու ճգնող մարդու մը պէս, եւ անհամար կամաց առաջ կը սողոսկէր սեւ դուռը մագերով ծածկուած գլուխ մը, խափշիկի պէս սեւ վիզ մը, երկու աչքեր սաստիկ փեռեկուած եւ կարմիր եղբերով, որոնք զազանային անմտութեամբ խորունկէն կը յառնէին վեր դէպի Արսինէ: Թանձր կարմիր շրթունքները կը թոթովէին եւ կը մրմռային: Դարձեալ նոյն զոռելի ծիծաղը: Արսինէի անձկութիւնը անցաւ: Անմիջապէս ճանչցած էր կարճըլիկ, տղեղ խափշիկ գերուհին, լուացարար աղջիկը, որ գերուհիներուն գերուհին էր, ամէնուն հնազանդ, ամէն բանի սպասարկող, քաւութեան նոխազ ամէնուն համար, որ իր լայն սեւ կոնակին վրայ կը հաւաքէր բոլոր հարուածները: որոնց արժանի էին միւսները, բայց խստապահանջ վերակացուն այս խեղճ խափշիկին գլխուն կը պայթեցնէր իր գայրոյթը: Այս խափշիկը ամէնուն ծաղրանքին առարկայ, միշտ խնդացող, ծաղրող — աս էր անհողինին տակ պահոււրտողը: Երկու սենեկապանուհիները բաւական խելացի էին իրենք իրենց վրայ չփորձելու համար օտար երկրի եկած խմիչքի մը աղբեցութիւնը: Ատիկա փորձեցին եւ յաջողեցան խափ-

չիկուհիին վրայ: Աչքի եւ նշանացի շարժումներով, նոյնիսկ իրենք խմելու ձեւեր ընելով եւ այդ խմիչքին իբր թէ անուշութենէն ծամածուծներ կեղծելով, սեւին ախորժակը սրղոցեցին, եւ շատ շանցած խեղճ գերուհիին վրայ դոճուսակութեամբ սկսան դիտել այդ սարսափելի կերպով դինովցնող խմիչքին աղբեցութիւնները: Հիմա ալ չէին կրնար դասել դինովը, չէին կրնար քաշել տանիլ, երբ կը լսէին Արսինէին ոտքերուն ձայնը, եւ հաղիւ թէ ժամանակ ունեցան, Արսինէն մէջտեղ չելած, անկողինին տակ քշելու ուշաթափ աղջիկը, որ ոտքի վրայ չէր կրնար կենալ: Ահա այնուհետեւ եկաւ այն վայրկեանը ուր Արսինէի հողին, բոլոր քարի ողիններէն լքուած, դոճ ինկաւ խաւարի իշխանութեան, հին բանականութիւնը եւ բարի լոյսը խեղդուեցաւ իրեն մէջ, Ահրիման ու անոր շար ողինները յաղթանակեցին — բայց ատիկա անոնց վերջին յաղթութիւնը եղաւ: Քրմուհին խելայեղ կատաղութեամբ Անահիտի վրէժը լուծելու համար յարձակեցաւ խափշիկուհիին վրայ, որ տակաւին կէս մը անկողինին կառչած էր, միշտ քթին տակէն երգեր թոթովելով, միշտ բորենիի նման ծիծաղի նոպաներու բռնուած: Կատաղութենէն փոխ առնուած ուժով մը Արսինէ բռնեց անոր մազերէն ու թեւերէն, եւ քաշքշելով առաջ պատուեց անոր միակ զոռեւորը, այսինքն կապոյտ կտաւ խեղճ ու կրակ պարեկօտը, դէպի պատին մէջ բացուած դարակը վաղեց, առաւ խարազանը եւ զորս դու պատուիրեցեր, անոր կողերը կոտորելու չափ, տուաւ ու տուաւ հարուածները: Ան դադանի մը պէս կը պոռար կ'ոռնար, կը թաւալէր ամբողջ սենեակը ծածկող եւ բաղմբանդ մետաքսէ զանազան տունկերու նմուշներու համեմատ հիւսուած փառաւոր դորդին վրայ: Արձաններ դետինը կ'իյնային: Թանկագին անօթներ կը ջախջախուէին: Գորդը կը կարմրէր ինք իրեն վրայ զալարող ու կծկտող կնոջ արիւնովը: Վերջապէս հիմա բացուեցաւ դուռը, Լիկինիա եւ գերուհիները հաւաքուած էին առջեւը: Տանտիրուհի իշխանուհիէն ոչ մէկ մեղադրանք լսուեցաւ: Հանդարտ կը սպասէր, մինչեւ որ Արսինէ զաղբեցուց հարուածները, եւ խելայեղութենէ, բանզաղուշանքէ արթնցող մարդու մը պէս շփոթ, շուարած, կապուտացած դէմքով, դժուարաւ շունչ առնելով, իշխանուհին տեսաւ: Այս վերջինը հրաման տուաւ խափշիկուհին դուրս քաշել տանիլ, սենեակը ամբողջ մաքրել: Թեւը երկնցուց Արսինէին, անոր ձեռքէն առաւ խարազանը եւ գերուհիներուն շարքին մէջէն տարաւ իր արդուարդի յատուկ սենեակը: Ամէն կողմէ լուռ գայրոյթի եւ արհամարհանքի նայուածքներ կը հետեւէին Արսինէի:

Իրիկուան: Քոյր ու եղբայր Տրդատ եւ Սոսորովիդուխտ լուռ ու մունջ կը ձեմէին դարաստանին մէջ: Սիւլէն վերստացած էր ամբողջ գիտակցութիւնը, մխիթարական բառերով ներած էր արտասուող

Տրդատին եւ ապա դացած էր հանդատանալու: Խոսրովիդուխտի ծունկերը դեռ կը դողդղային Արսինէն տեսնելուն վրայ, որ սաստիկ յողնած կը քնանար իշխանուհիին ննջասենեակին մէջ: Խոսրովիդուխտ ներսէն եկաւ եղբորը հետ բացօդեայ երթալ շրջան մը ընել: Առանց խօսելու բաւական ատեն կը ճեմէին քով քովի, մերթ այս մերթ այն ճամբան: Տրդատ բռնեց Խոսրովիդուխտի թելը: Սովորականէն աւելի մեղմ ձայնով քոյրը վերջապէս ըսաւ եղբորը. «Տրդատիկ կը հասկնաս հիմա որ դիտութիւնը, իմացողութիւնը մինակ օդատկար չեն կրնար ըլլալ: Տես չարը քու մէջը աւելի արագօտն է քան դիտութիւնը կամ դիտութեան միջոցաւ ձեռք բերուած մարդկային ծանօթութիւնները: Դուն պէտք է օգնական մը ունենաս, որ քեզմէ աւելի զօրաւոր ըլլայ: Այլեւս չե՞ս աղօթեր, Տրդատիկ»: Լուռ ու մունջ գլուխը երեւցուց Տրդատ: «Այլեւս չե՞ս հաւատար որ Միհր կրնայ քու օգնականը ըլլալ, երբ կանչես անոր»: Յուսահատական հնչեց Տրդատին բացէ ի բաց խոստովանութիւնը. «Ո՞վ է Միհրը: Գաղափար մը, երազ մը մեր կողմէ: Ոչինչ է Միհրը: Միհրը արեւն է որ կրնայ չօգնել ինձի»:

— «Ուրեմն Քրիստոս պէտք է օգնէ քեզի եւ քեզմէ բոլորովին նորոգ մարդ մը չինէ, ով Տրդատիկ», ձայնեց Խոսրովիդուխտ, անոր գիրկը նետուելով, «վախս այն է որ դուն ձեռքէս կ'ելլես կը կորսուիս, քու բոլոր ձիրքերովդ: Էհ, աշխարհի վրայ ի՞նչ մնացած է արդէն ինձի: Ախ, դուն այդ ձիրքերով ինչ մարդ եւ ինչ թագաւոր կարող էիր ըլլալ, եթէ քրիստոնեայ ըլլայիր»: Նոյնքան յուսահատական հնչեց դարձեալ Տրդատին հարցումը. «Ո՞վ է Քրիստոս: Գաղափար մը: Երազ մը, Միհրէն աւելի անհաւատալի: Երբեք, երբեք չեմ կրնար Քրիստոսի հաւատալ, բոլոր իմ բանականութիւնս եւ ոյժս կը ծառանան անոր դէմ: Թագաւոր մը չի կրնար քրիստոնեայ ըլլալ»:

— Տրդատիկ, այդպէս մի ըսեր, Քրիստոս ալ թագաւոր է: Կը հաւատամ անոր, կը սիրեմ գայն, ես քրիստոնուհի պիտի ըլլամ: Դուն բնա՞ւ չկարդացիր անոր մասին քեզի ցոյց տուածներս: Մտիկ չես ըներ, ահանջ չես կախեր քնաւ, երբ ես կը փափաքիմ պատմել քեզի անոր մասին, չես ճանչնար գայն, այդ պատճառաւ այդպէս կը խօսիս: Տրդատիկ, ինձի կուզայ որ դուն տակաւին շատ, շատ բաներ պիտի քաշես, եւ յետոյ, ով դիտէ, քրիստոնեայ պիտի ըլլաս»: Տրդատ հպարտօրէն ծառայաւ: «Ե՞ս քրիստոնեայ: Երբե՞ք, երբե՞ք, Խոսրովիդուխտ: Հաւատա՞լ դուն, ինչի որ կրնաս: Աղջիկներն ու կիները պէտք ունին կրօնքի, քանի որ կ'ուզեն հաւատալ եւ աղօթել: Ես երկուքն ալ չեմ կրնար այլեւս, եւ պէտք է որ ես օգնեմ ինձի»:

— «Բայց ի՞նչպէս»:

— «Սիլէն իրաւունք ունի սակայն: Գիտութիւն եւ բանականութիւն: Ամէն օր կամքը մարդել: Այս է միայն որ կ'օգնէ, ու եթէ ասիկա չբաւէ, ուրեմն ոչինչ կը բաւէ»: Խոսրովիդուխտ հանձարեղօրէն խորամանկ ծիծաղով մը դիտել տուաւ. «Ինձի կը թուի, թէ Սիլէն իր գիտութեամբը արդէն բաւական բան ձեռք բերաւ: Բայց ըսէ, ան ի՞նչ ըսաւ քու ահանջիդ, ցասկոտ Աքիլլէս»: Իր եղբոր շատ մօտիկը դացած էր եւ շնորհալի սպասումով մը կը դիտէր անոր մեծարաց, չարահայտ աչքերը եւ թեթեւակի բաց խնդումերս բերանին շուրջ, որպէսզի պատասխան մը տայ: Բայց Տրդատ կը մերժէր խօսիլ: Աւելի մօտը դնաց եղբորը. «Ըսէ՛, ըսէ՛, Տրդատիկ»: Եւ անգամ մըն ալ զլուխը երերցնելով. «Տրդատիկ, իմ սիրեցեալ, կ'աղաչեմ, Տրդատիկ»: Տեղէն ցատկեց հեռացաւ: Խոսրովիդուխտ ալ անոր ետեւէն եւ բռնեց անոր ձիրքն լայն ժպտաւէնով ճերմակ պաքեղօտը: Տրդատ կեցաւ ու խնդաց: «Ըսէ՛, խօսէ՛, Տրդատիկ»: Տրդատ ճիշտ նմանցնելով Սիլէնի շեշտը եւ արտայայտութիւնը, «Տրդատիկ, կարծեմ թէ Գիտութեան մեր վարդապետութիւնը պարտաւորուած ենք նորէն սկսիլ բոլորովին առաքինութեան եւ գիտութեան վարդապետութեամբ, այսինքն այնպէս մը ընել որ առաքինութիւնը հաշտուի, հնարաւոր ըլլայ գիտութեան հետ, կամ պէտք է դուն քրիստոնեայ ըլլաս»: Խոսրովիդուխտ յանդիմանեց եղբայրը. «Կը տեսնես, չարածրձի, դուն քու վարպետդ դետին տապալեցիր անոր քեզի սովորեցուցած վարդապետութեան հետ, եւ ան քու չարութեանդ կը հաւատայ, ոչ թէ առաքինութիւններուդ»:

— «Ո՛չ, ո՛չ», խնդաց արքայազունը, ցոյց տալով իր հուժկու սպիտակափայլ ատամնաշարը. «Սիլէն ըսաւ, թէ զրգուած ըրած եմ ինչ որ ըրի եւ բարի չեմ եղած: Ես ալ բացէն խոստովանեցայ թէ զրգուած էի, դիտութիւնս եւ առաքինութիւնս փորձի ենթարկելու համար»:

— «Ուրեմն իրօք առողջ, ամբողջ չէիր դուն, Սիլէնի դէմ այն վարմունքին մէջ»: Արքայազունը յանկարծ իր ճակատը դրաւ Խոսրովիդուխտի ճակատին, վրնջեց — ինչ որ կը լսուէր հեռուէն ալ — եւ ձայնեց «Օ, այն բարի կապիկը դեռ շատ չ'ըներ որ կը ճանչնայ դիս եւ կ'ըսէ ամէն վայրկեան. «Արքայազուն, ես քեզ կը ճանչնամ ճշտիւ, կը ճանչնամ քեզ ճշտիւ»: Ես — ես առողջ, ամբողջ չե՞մ, Խոսրովիդուխտ, բայց ես Է՞րբ հիւանդ եղած եմ: — Բրիսանոյճին աչք տնկած եմ: Ա՞ս է հիւանդութիւնս»: — «Ամչցիր, չարածձի», ձայնեց Խոսրովիդուխտ, նեղուած եւ զղուած, եւ երկուքը նորէն առաջ կ'երթային լուռ:

Գարաստանին երկաթ դուռին առջեւ եկած էին, եւ ուզեցին ճամբանին դարձնել, որովհետեւ տեսան քիչ մը անդին խումբ մը

տղաքներ մարդու մը մօտ կեցած, որ միջակ մեծութեամբ, բայց ամուր կազմուածքով մէկն էր, պարսկական դղակ, երկայն ճերմակ մազերով եւ խոշոր մօրուքով: Պարսիկ առեւտրականի մը ղեղեցիկ, զունաւեղ բազմածալ պարեկօտը հալած: Նաեւ պարսկական բարձր կօշիկներով թուխ կաշիէ: Արտասովոր համակրութիւն կը թուէր ցոյց տալ տղոց: Կը խնդային բարձր, հետաքրքիր կը նայէին անոր զարմանալի անտուկին որ հաստ կապերով լայն ուսերուն վրայ հաստատուած խաշածեւ, իր մարմինէն վար կը կախուէր իբրեւ անոր փերեղակի սեղանը: Նոյնիսկ տղաքը իրենց ձեռքերուն մէջ կ'առնէին օտարոտի, պսպղուն առարկաները, կը շօշափէին, կը փորձէին, արեւուն դէմ կը բռնէին եւ բարձրաձայն հիացումով կը տեսնէին զոյներուն շքեղ խաղը: Քանի մը տղաք գնումներ ալ ըրին: Բայց անիկա ծախելու ետեւէ չէր այնքան, այլ աչքը հոս հոն էր, ուր դարաստանին դրան առջեւ կեցած էին արքայազուն քոյր եղբայր, որոնք երթալով աւելի հետաքրքրուեցան: Ո՞վ կրնար ըլլալ այս մարդը: Ինչի՞ եկած էր: «Խոսքով իրաւաւոր, նուէ՞ր մը»: «Օ, միշտ նոյն հին, եղբայրական անյեղի սէրդ»: Արդէն եկած հասած էին վաճառականին կամ փերեղակին մօտ եւ հաղադին քանի մը քայլ անդին անոր առջեւ: Տղաքը ամէնքն ալ տեղ ըրին, եւ անոնց ետեւը դարձեալ կիսաշրջանակ մը կազմեցին հետաքրքրութեամբ: Փերեղակը հանդարտ կեցած էր եւ անանկ մը կ'ընէր որ իրր թէ զինքը բոլորովին անտարբեր կը թողու հոգակաւոր տղոց ժամանումը: Անոնք նախ եւ առաջ խուզարկու նայուածքով զիտեցին անոր երեսը: Թխորակ, աչքերը բաց կանանչ, բայց անփայլ, աւելի ոչ-մտացի, ու անտարբեր մէկը: Քիթը կարճ, ծուռ, քիչ մը դէպի ձախ աղեղնածեւ: Անդարդ ձեռքերը մեծ մասամբ կը բռնէր իր այն տեսակ մը խանութին տակ ծածկած: Արդեօք միտքէն ի՞նչ կ'անցընէր Խոսքով իրաւաւոր, որ այդ ծերին կը նայէր լուռ, միշտ աւելի ծանրախոհ, եւ միշտ աւելի հարցասէր նայուածքով: Տրդատ ատենէ մը ի վեր կը դառնար անտուկին ետեւը առջեւ, եւ կը ջանար միայն, առանց փերեղակին ակնարկ մը իսկ նուերելու, փնտռել յարմար նուէր մը Խոսքով իրաւաւորին համար: Ծերը շարունակ կը խուսափէր Խոսքով իրաւաւորի խուզարկու նայուածքէն: Եւ ահա Խոսքով իրաւաւորը հարցուց յունարէն. «Դուն Պարսի՞կ ես»: Ծփոթած դիմապիծերով ու ուսերը թօթիկելով հասկուց թէ այդ լեզուով չի հասկնար զիրենք: Խոսքով իրաւաւորը հայերէն կրկնեց իր հարցումը: Օտարականը հիմա գլուխով նշան ըրաւ անտարբեր մը: «Միհրին կը հաւատա՞ս»: Օտարականին դէմքը ճառագայթեց եւ քանիդս եռանդով նշանացի հաստատեց: Ո՞րիկէց կուզայ, Հայաստանը կը ճանչնա՞ր եւ Խոսքով իրաւաւորն ու Վաղարշապատը, սրբազան Մովսէսը, համօրէն մոգերուն քուրմերուն Մոգպետը, որ կ'անուանուի

Մովսէս, կը ճանչնա՞ր Միհրին եւ Անահիտին տաճարը, հարցուց Խոսքով իրաւաւորը, յուզեալ, երբ Տրդատ անոր աչքին առջեւ կը բռնէր մէկէ աւելի զոհարեղէններ եւ կը հարցնէր թէ ո՞րը կ'ուզէ: Բայց Խոսքով իրաւաւորը կը մերժէր, պէտք չունէր եւ չէր ուզեր որեւէ նոր զարդ, ինք ունէր շատ, լուսանկարներ, արեւակներ, հոտեղէնի սրուակներ այլեւս չի կրեր վրան: Տրդատ նորէն պիտի գրուէր քրոջը դէմ, բայց այս վերջինը զոյղ մը սիրուն ոսկի օղեր առաւ եղբորը սիրոյն: Ասկէց զատ փղոսկրեայ ասեղնոց մը ծովափրփուրի գրուագով եւ ոսկեգօծ խիցով: Փերեղակը լրջօրէն երկուքին կը նայէր, առանց խօսելու որեւէ մէկուն հետ: Լուռութեամբ առաւ դրամը, զոր Տրդատ հանց տուաւ գօտիէն կախուած թանկադին կաշիէ քսակէն Խոսքով իրաւաւորի սիրուն ասեղնազօրութեամբ: Միւս տղաքը հետաքրքիր, զիրար հրելով, իրարու հետ կուրծակելով, զիրար ծեծելով կը դիտէին այս առուծախի զործողութիւնը: Հիմա ճիշտ մօտիկէն կը տեսնէին քաղաքին մէջ հանրածանօթ զեղանի իշխանուհին, եւ նոյնիսկ անոնցմէ մէկ քանին մանկական ծիծղուն սիրով լեցուն իրենց հիացկոտ նայուածքը անոր վրայ ուղղած էին զղուշաւոր եւ շատ թեթեւ մը քսուելով անոր լաղուարթ լօղիկին: Տղաքը կը հիանային արքայազունին վրայ յոտից ցլուխ: Նոյնիսկ անոր ալ քսուիլ յանդգնած էր պղտիկ ողորմելի լակոտ մը յանդուզն սօթտած քիթով եւ թխաթոյր աչքերով, բայց արքայազունը բոլորտիքը նայած չունէր:

«Պէտք է անպարենք իրիկուն ճաշին», յորդորեց Խոսքով իրաւաւորը: Տրդատ եւս անոր հետեւելու վրայ էր, երբ փերեղակը անտուկին մէջ պահած պղտիկ զորոցի մը մէջէն քաշեց հանեց կարմիր մետաքսէ քսակ մը, որ վերի կողմէն ծալուած էր իրար բերուած ոսկեհուռ լարով: Գոյները աղօտած էին, կարծես հնութենէն կամ անձրեւէն:

«Հոս նայեցէք իմ արքայազուն տղաքս, ասիկա ես ձեզի նուէր կ'ընեմ ձեր բրած առուտուրին փոխարէն, ուրկէ ես շահեցայ: Այլեւս զեղեցիկ չէ քսակը, բայց զաղտնիք մը կայ մէջը»: Քոյր եղբայր ետ դարձան տարտամօրէն իրար նայելով: «Առէ՛ք, առէ՛ք, բեռ չէ, վրտանդ չկայ: Կախարդութիւն ալ չկայ: Տեսէ՛ք — ոչինչ, ոչինչ մէջը», — լարը քսակեց, տարածեց քսակը, հանդրիճեց, ծալեց — «ոչինչ բնաւ մէջը: Բայց զաղտնիք մը»: — «Ի՞նչ ուրեմն», հարցուցին Խոսքով իրաւաւորը եւ Տրդատ, գրեթէ միաբերան: «Պէտք չէ երեւան հանեմ ես: Քսակը ինք պիտի ըսէ անիկա: Առէ՛ք, ուրեմն, աներկիւղ եղէ՛ք»: Երկար ատեն իրարու նայեցան, վարանեցան եւ ուզեցին երթալ: Օտարականը, գրգռուած, ձայնեց. «Քսակը հետերնիդ տարէ՛ք: Ծատ պիտի զղջաք, կ'ըսեմ ձեզի»: Անոր դիմապիծերուն վրայ այն-

պիտի լրջութիւն մը կար, կանանչ աչքերը այնքան ստիպող թափ մը առին, որ քրոջ ու եղբոր անանկ եկաւ թէ դէշ բան մը ըրած կ'ըլլային: Տեսակ մը բանադրանքի տակ էին կարծես, նորէն ետ դարձան եւ դարձեալ վարանեցան խորհրդաւոր նուէրը առնել: Օտարականը ըսաւ, «Առէ՛ք: Պիտի ըսեմ ձեզի անոր գաղտնիքը»: Քոյր եւ եղբայր աչքերնին սեւեռած էին անոր քարի պէս, եւ երկուքն ալ չէին կարող այլեւս իրենց նայուածքը հեռացնել անկէջ: Միւսը շարունակեց. «Քսակը ձեզի պիտի խօսի հայրիկին ու մայրիկին ինչպէս ըլլալուն մասին: Առէ՛ք»: Պարտաւորուեցան առնել զայն: Եւ ձեռքերնին իրարու երկնցնելով երկուքն ալ անտարբեր մեկնեցան: Օտարականն ալ տողոցմէ շրջապատուած փութով քաղաք դնաց:

Հազիւ երեք շորս քայլ անդին, կանգ առին քոյր եղբայր: Հօրը եւ մօրը մասին քսակին հարցումներ ուղղելու անյադ փափաքը սպասել չտուաւ իրենց: Բայց ի՞նչպէս հարցափորձել քսակը, Սոսրովիդուխտ չէր համարձակեր, չէր վստահեր ինքն իրեն հպիլ անոր: Տրդատ առաւ զայն, քացաւ նայեցաւ անոր վրայ, մէջը, եւ բան մը չըտաւ: Աւելորդապաշտ ողի մը եկաւ վրան: Արդեօք աստուածային ձայն մը, քսակին մէջ պահուցող զեւ մը պատասխան կուտա՞յ, եթէ մէջը ձայնէ: «Մի բներ, Տրդատ, մի բներ», զոչեց Սոսրովիդուխտ անձկապիտ: Բայց Տրդատ պատասխան կ'ուղէր, որովհետեւ իր հոգիին մէջ հայր բառը արթնցուցած էր յանկարծական հայրենարարութիւն մը, եւ ցանկութիւն մը դէպի ստուգութիւն, դէպի ճշմարտութիւն: Չայնը կը դողար յուզումէն, երբ բաց քսակին մէջ դէպի ներսը ձայնեց. «Հող մէջը ողի մը կա՞յ արդեօք, բարի կամ չար, կ'երդուընցնեմ քեզ, կը պաղատիմ քեզի, խօսէ մեզի, ո՞ր էն հայր եւ մայր, կ'ապրի՞ն, յաղթե՞ց, դարձեալ մեր օջախը պիտի երթա՞նք»: Երկուքն ալ պատասխանի մը կը սպասէին, շունչերնին բռնանած: Սոսրովիդուխտ եւս մէջը կը նայէր անթարթ: Ոչ մէկ պատասխան: Ոչ մէկ նշան: Բայց երբ Տրդատ բարկութեամբ ձեռքին մէջ ճղմեց քսակը եւ նետելու վրայ էր զայն տուող օտարականին հասցէին հայհուցով մը, լսելի ըլլալու աստիճան բարձր բան մը ճռնչեց կարծես հաստ մաղաղաթէ մը: Սարսափահար երկուքը իրարու երես նայեցան: Ասիկա նշան մըն էր արդեօք: Տրդատի համար մէկ րոպէի դորձ եղաւ դանակը պատեանէն քաշել, ներքնամասին աստառը տակէն վեր տեղէ մը պատռել. երկրորդ րոպէին Տրդատ դուրս քաշեց մաղաղաթեայ երկը մը, դալարեց զայն, ծունկի եկաւ, Սոսրովիդուխտ քովը, եւ վերջին մթնշաղին սկսան լուծել օտար, հազիւ ընթեռնելի սա հայերէն գրութիւնը:

«Արքայազուն իշխան Տրդատ: Ահուրայի եւ անոր եօթը բարի հոգիներուն միութարութիւնը քեզի եւ Քու քրոջ հետ ըլլայ: Գիտ-

ցի՛ր եւ տոկա՛ — Հայրդ, Սոսրով թաղաւորը, երեք տարի առաջ, ճիշտ քու Աթէնք մեկնելէդ առաջ սպաննուեցաւ Անակ իշխանէն: Քու մայրդ մեռաւ անոր զիտկին վրայ իր սեփական ձեռքովը: Պալատը կործանուած է: Թաղաւորութիւնը աւերակ դարձած է պարսիկներէն: Քու օգնութեանդ կը սպասենք: Քու հաւատարիմներդ»:

Մէն միակ նայուածքով պարունակութեան տեղեկացան, գոնէ ամփոփ կերպով: Նախ Տրդատ կարդաց, լուռ մնաց, եւ ի վերջոյ երկուքը կարդացին անխօս: Մերադրեցին կարծես շանթահար եղած: Արքայազունին թաց ձեռքերուն մէջ թուղթը կը դողար մէկ կողմէն միւսը: Տրդատ տեսաւ որ քրոջը դէմքը զիտկի պէս տօգունած էր, դիմապիծերը կարծես քարացած: Վեր ցատկեց, եւ դողցես, դիւահալածերը կարծես քարացած: Վեր ցատկեց, եւ դողցես, դիւահալած, կը վազէր դէպի դարաստանը, օդը լեցնելով ահարկու ձայներով: Բեկբեկ, հեղձամղձուկ, աւելի անասնական քան մարդկային ձայներ, որոնք մերթ սրտածմբիկ չարչարանք, մերթ խելայեղ զայրոյթ, մերթ լափող վրէժ կը մատնէին: Մէկ ձեռքին մէջ կը շողար բաց դաշոյնը դաւիթին լոյսերուն արտափայլումէն, միւս ձեռքը ջղայնօրէն կը բռնէր մաղաղաթն ու քսակը, մէկ զնդակ դարձած: Արքայազունին մաղերը կը ճօճէին ամէն կողմ: Իր ետեւը կը ցատկըրտէր մահուան համար հալածուած եղջերուի մը պէս Սոսրովիդուխտ: Մերթ ընդ մերթ իրմէ կը հնչէր մինչեւ հեռուները լսուող մոնչիւն մը: Գերուհիները կը լսէին ահարեկ եւ կը փախչէին: Վերակացուն ծանր քայլերով ածապարեց լոյսերու մէջ ողորուած տունին առջեւէն եւ ձայնեց դէպի վար, խաւարամած դարաստանը. «Ո՞վ կը կանչէ օգնութիւն»: Գիշերէն դուրս սանդուխէն դէպի վեր սրացաւ առիւծի ծածանող բաշ մը, հատ մըն ալ: Ահաւոր ձայն մը դարկաւ վերակացուն ալանջին, երկու հագուստներ սրսփալով անցան քովն ի վեր եւ ահա նոյն րոպէին, դղեակին սրահները արձագանգեցին տարարախտ քոյր եղբոր անդադրում ողբերէն: Ճաշարահէն, ուր նոր սկսած էր ճաշը, դուրս խոյացան իշխանը, իշխանուհին, Լիկինիանոս, որ քանի մը օրերէ ի վեր տուն դարձած էր: Արքայազունը Լիկինիոսի դիրկը նետուեցաւ այնպիսի ուժգնութեամբ որ իշխանը թաւալեցաւ եւ քիչ մնաց գետինը պիտի իյնար: Զաւակը հազիւ փութաց օգնութեան: Տրդատին դաշոյնը շառաչեց գետնի վրայ: Զախ ձեռքը միշտ տակաւին կառչած էր աղետառեր դիրին եւ քսակին: Սոսրովիդուխտ եւս նետուեցաւ մայր իշխանուհիին դիրկը, կուլար կը հեկեկար բարձր եւ ջղապար չեշտերով: Որքան որ իշխանն ու իշխանուհին, կամ Լիկինիանոս կը հարցնէին, թէ աստուածներուն սիրոյն ըլլայ, ինչ պատահած է, որեւէ պատասխան չէին ստանար: Լիկինիանոսի համբերութիւնը սպառեցաւ, յուզումէն նեղսրտած, արքայազունին թեւէն բռնեց ուժգին եւ պոռաց անոր. «Տրդատ, իրօք

դուն իմ զինուորս ես թէ վատասիրտ մը, եղերամայր մը: Ոսէ՛, ըսէ՛: Ի՞նչ պատահեցաւ»: Երբ դարձեալ պատասխան չելաւ, այլ տըղոց պոռչտուքէն հետզհետէ ընդարձակ դաւիթը լեցուեցաւ նոյնպէս կականաբարձ գերիններէ եւ դերուհիներէ, Լիկինիանոս որոտաց ղէպի վերակացուն, որ անմիջապէս իր ետեւը առաջին կարգին վրայ կը կենար. «Սա անիծեալ վոհմակը դուրս կորսնցուր, հետաքրքիր թեթեամբիտ մարդ, հող ի՞նչ կեցեր ես»: Մէկ բոպէի մէջ սրահը պարպուած էր արդէն, եւ քարէ սանդուխին ամէնէն վարի աստիջաններէն մէկէն միայն վերակացուն վեր կը նայէր, Լիկինիանոսի նոր մէկ հրամանին պատրաստ: Կը տեսնէին, ինչպէս նախ Սիլէն, զլուխը կապած, դարձդարձիկ սանդուխէն ղէպի վար, եւ ձեռքերը վեր առած յուսահատ մարդոց վրայ կը նայէր, եւ յետոյ, ինչպէս քրմուհին, հերարձակ, գիշերային ճերմակ պարեգօտով, բարձրադաղակ, նոյն սանդուխն ի վար վաղեց տղոց վրայ, մատակ առիւծի մը նման: Սոսրովիդուխտ եւ իշխանազունը դարձեալ ճիշ բարձրացուցին, երբ տեսան Արսինէն, մինչեւ որ վերջապէս Լիկինիանոսի հուժկու բազուկները զիրենք Արսինէին հետ ճաշասրահ փոխադրեցին: Ոչ ոք դպած էր ուտելիքներու: Արքայազունը, ջղաձգութիւններով երերուն, մազազաթը երկնցուց իշխանին, ուղեց խօսիլ, չկարողացաւ ոչ մէկ բաւ արտաբերել եւ ամէնէն մօտի բազմոցին վրայ ինկաւ զրեթէ անզոյ: Տաք զլուխը ծածկեց իր խոշոր ձեռքերուն մէջ, պտուկած, կը հոնդար, կուլար, կը պոռար, երկու կտոր եղած, մինչ Սոսրովիդուխտ, ձայնը կտրելով, երկայնքովը փոռուած էր ուրիշ բազմոցի մը վրայ, զլուխը իշխանուհիին գիրկը, մինչ Արսինէ անկողինին ծայրը նստած, ձեռքերուն մէջ կը բռնէր Սոսրովիդուխտի դունատ, զողոջուն ձեռքերը: Իշխանն ու որդին պատի մեծ լապտերին տակ կը շարունակէին կարգալ խորհրդաւոր գիրը եւ ենթադրութիւններ կ'ընէին, թէ ուրկէց կ'ընար առաջ գալ: «Իցիւ կարենային խօսիլ եւ պատմել», հառաչեց իշխանը: «Թող նախ ուզածնուն չափ լան», յորդորեց հայրը: Եւ ինք սենեակին մէջ կ'երթար կուզար փութկոտ քայլերով: Կրկին եւ կրկին խոր մտատանջութեամբ կը կենար Տրդատին առջեւ, ձեռքը անոր զլուխին վրայ դրած կը շոյէր մեղմիւ եւ դարձեալ կը պտրտէր հեծեծելով: Սիլէն կարմիր հողաթափերովը անօդնական սենեակին մէջ կը դանդաջէր ասդին անդին, դժբախտութեան վրայ յոյն եւ լատին հեղինակներուն կողմէ ըսուածները ան հաւաքեց իր տկար զլուխին մէջ եւ կը կրկնէր, բայց ասոնք ամէնքը առանց որեւէ ազդեցութեան կը բախէին միայն արքայազունին կքած կթոտած գանկին: Տկարութիւններ, վէրքի ցաւեր, արդահատանք եւ իր փիլիսոփայութեան անկարողութեան մասին դպացած զաղտնի նեղութիւններ այնպէս կ'ազդէին հէք ապաքինող վարժապետին, որ վերջ ի վերջ, ինք

ալ լալով մօտեցաւ հոն պառկող արքայազունին եւ ըսաւ անոր. «Հէք, հէք իշխանազուն: Ոյժ կը պակսի մեզի բարիի եւ միսթարութեան համար: Գոնէ ձեռքը տուր, եւ դպայ թէ ինչպէս կը ցաւակցիմ քեզի: Պէտք է որ ես նախապատրաստէի ձեզ այս հարուածը կրել կարենալու, բայց Պաւղա իրաւունք ունի. իմ վարդապետութիւնս կորով չունի»:

Տառապանքին մէկ նոր պատկերն էր այս — ներքին ծանր վատութեան մէկ արտաքին պատկերը, զոր ահա այսօր կ'ապրէր բարին Սիլէն, — երբ Տրդատ, առանց վեր նայելու, իր թաց, ճաթրտած ձեռքը ազնիւ ուսուցիչին երկարեց, այնքան ամուր սեղմեց եւ ցաւցուց Սիլէնի ձեռքը, որ այդ խեղճ մարդը թթուեցուց իր դունատ երեսը, եւ մարմինին ու զղացումին տկարութենէն ընկճուած, նաեւ ճշմարտութեան ճամբան ու նպատակը վրիպած ըլլալուն համար յուսահատ, պատերը բռնելով սենեակէն մեկնեցաւ եւ գնաց իր անկողինը:

Արքայազունը ոտքի հանելու բոլոր փորձերը ապարդիւն մնացին: Ծնրադիր գիրքի մէջ կը մնար, երեսը ձեռքերուն մէջ թաղած՝ բազմոցին վրայ: Լուռ վայրկեաններ կը փոխանակուէին մեղմ վընկոցներով, մերթ զողոջուն, յանկարծական հեկեկանքներով խորունկ կուրծքերէ լխած, կամ սա բարձրադոռ, կրկնակի կանչով. «Հա՛յր, ո՞վ հայր: Հայր եւ մայր, երկուքն ալ մեռած»: Իշխանը Սիլէնի երթալէն վերջ փիլիսոփայական միսթարողի դերը ստանձնած էր, բայց պատահած ազդեցին հանդէպ սուգին անօգուտ ըլլալուն, որեւէ փոփոխութիւն ալլեւս անկարելի ըլլալուն, ինքզինք բռնելու, աղէտքին հանդուրժելու իբրեւ մարդ, իբրեւ հերոս, իբրեւ իմաստուն — այս ու այսպիսի բարենպատակ խօսքեր անօգուտ էին: Տրդատ աչքերը վեր չէր հաներ: Գոյր եւ եղբայր զլուխնին երերցնելով կը մերժէին որեւէ յորդոր բան մը ուտելու՝ որպէսզի ուժասպառ չըլլան: Բայց բազդատմամբ Տրդատին Սոսրովիդուխտ քիչ մը հանդատացած էր: Աչքերը զոց սակայն միշտ անշարժ պառկած էր Լիկինիայի թեւերուն մէջ: Մեռելի գոյն առած, կարծես մարմարիոնէ կտրուած դէմք մը, նաեւ չրթունքները ճեփճեմակ, որոնք իրարու վրայ կը սեղմուէին դեղեցկայար գիծերով, գոգցես հաստատ մճաւկանութեամբ փակուած: Գոց աչքերէն դէմքին վրայ կ'իյնային խորապէս սեւ յայն արտեւանունքը, եւ ճակատին, քունքերուն ու ծոծրակին յուրջ խաղացող մաղերով յուզիչ հակապատկեր մը կը կադմէին մեյամաղձութեան շունչով ծանրացած եւ շուշանի պէս ճերմակ երեսին հետ: Յանկարծ բազուկեցան դունատ շրթունքը եւ յայտնապէս լսելի ձայն մը շեց. «Պաւղա»: — «Պաւղան կ'ուզէ», ըսաւ Լի-

կինիս: «Ժամը քանի՞ն է»: — «Սնդիրը չէ», ձայնեց իշխանը, դուրս ելաւ աճապարանքով եւ դեսպակը դրկեց Պաւղայի բնակարանը:

Անդորրութիւն եւ իննդ կը տարածուէին Սոսորովիդուխտի դէմքին վրայ: Դարձեալ բացուեցան անոր շրթունքը, առաջուրնէ աւելի բարձր ձայնով հարցուց. «Ինչո՞ւ համար մեզմէ ծածկեր են այսօր երկար ատեն մեր ծնողքին մահը»: — «Ձեր մահամերձ ծնողքին փափաքը այս էր», պատասխանեց Արսինէ: «Անոնք ուղեցին որ ձեր մանկական տարիները հոս անվրդով մնան, եւ սարսափելի լուրը այն ատեն միայն իմանաք, երբ դուք մարմինով ու միտքով բաւական զօրացած ըլլաք»:

— «Շնորհակալութիւն քեզի, Արսինէ: Դուն ծնողքին կամքը կատարեցիր հաւատարմութեամբ եւ խոհեմութեամբ: Բայց — չէ՞ որ ըսուած է. Ահուրայի տղաքը սուտ չեն խօսիր բնաւ»: Ասոր վրայ տակաւ բացուեցան ճերմակ ծաղիկի թերթերու պէս աչքին կափարիչները, արտեւանունքը դժուարութեամբ վեր ելան, եւ երկու խոչոր, տմոյն, անփայլունակ աչքեր ուղղուեցան Արսինէի վրայ պատժապահանջ: Մահուան լուսնի քանի մը վայրկեան: Յետոյ թնդաց բովանդակ ձայնը Արսինէի, իբրեւ անմեղութեան եւ ճշմարտութեան յաղթանակով. «Տղաք, երբեք, երբեք ես ձեզի սուտ չխօսեցայ: Չըսի բնաւ, թէ ձեր ծնողքը դեռ կ'ապրին երկրի վրայ, թէ զանոնք կրկին պիտի տեսնէք այս աշխարհին վրայ: Ես կ'ըսէի. Թագաւորն ու Թագուհին կ'ապրին, Թագաւորը յաղթեց, դուք պիտի տեսնէք զայն կրկին իր Թագաւորութեան եւ իր հայրենիքին մէջ: Ես ըսել կ'ուզէի Ահուրայի Թագաւորութիւնը եւ երկինքը: Եւ հիմակ ալ նոյնը կը ձայնեմ, կը հաւատամ, դիտեմ. Թագաւորը կ'ապրի: Թագուհին կ'ապրի: Պիտի տեսնէք զանոնք զարձեալ»: Լիկինիս գլուխը կախեց Սոսորովիդուխտի դանկին վրայ: Իշխանը խորայոյզ կը ճեմէր, Տըրդատի առջեւ կը կենար եւ կ'ըսէր. «Թագաւորդ Հայաստանի, ոտքի ելի, քու հայրդ կ'ապրի, ան չ'ուզեր որ դուն անօգուտ սպաս, դուն պէտք է կ'ազդուրուիս, պատրաստուիս հօրդ Թագաւորութիւնը ստանձնելու: Հաւատարիմները քեզի կը սպասեն»: — «Եւ պիտի ճամբորդեմ, կայսեր մօտ պիտի երթամ, քեզի համար լէպէտն մը պիտի խնդրեմ եւ պիտի օղնեմ քեզի Թագաւորութիւնը ստանձնելու: Ուրեմն ել հիմա: Այս համր ողբերգութիւնը կը խոսովէ զիս»:

Արքայազունը, իշխանին հուժկու խօսքէն կարծես յափշտակուած, շտկուեցաւ կեցաւ, թաց գանգուրները աչքերէն հեռացուց, պարեգօտին թեզանիքներովը սրբեց արտասուայեղձ դէմքը: Թեթեւ սարսուռ մը զգացին նոյնիսկ պատերազմի վարժ այս երկու մարդիկը, հայր եւ որդի, երբ կը նայէին Տըրդատի աչքերուն մէջ: Գիշակե՞ր կենդանի մը աչքերուն պէս կայծեր կը տեղային: Քիչ բացուած բե-

րանը լայնցած էր, հուժկու ատամնաշարքը իրարու զարնուելով կը ճարճատէին, ծնօտը ցցուած, բոունքը գնդացած: Հազարով, թասելով, դէպի Լոտե հակամէտ գլուխով, վեր ու վար ելող իջող կուրծքով երկար ատեն կը կենար անխօս, մերթ իշխանը, մերթ անոր որդին Լիկինիանօտը, մերթ կիները դիտելով կարգաւ: Հիմա բացուեցաւ բերանը եւ սրահին մէջ երեք անգամ որոտաց ահաւոր ձայն մը արտակարգ կատաղայեղձ շեշտերով. «Վրէ՛ժ, վրէ՛ժ, վրէ՛ժ»: Ուժասպառ ինկաւ բազմոցին վրայ եւ այնպէս մնաց երկար ատեն, արմուկները սրունքներուն վրայ, ծնօտը ձեռքերուն ետեւին կրթնցուցած, մինչ աչքերը լապտերին անփայլ լոյսին մէջ կը լողային տըխրամած: Իրենց բոլորտիքը անցած դարձածէն նորէն բան մը չէին իմանար, ականջները ոչինչ կը լսէին, բայց երբ առաջին անգամ Սոսորովիդուխտի պառկած բազմոցին վրայ Պաւղայի սրտազին ձայնը հնչեց, Տըրդատ ալ շուրջը նայեցաւ նայեցաւ Պաւղային, բայց այնպիսի արհամարհանքով, որ Պաւղայի երեսը, նախ վախի թեթեւ կանչով մը, յետոյ իսկոյն կարմրելով Տըրդատէն հեռու եւ Սոսորովիդուխտին կողմ դարձաւ: Պաւղայի մեծղի կերպարանքը քանի մը վայրկեան կեցաւ օրիորդին առջեւ եւ խորհրդածող անդորրութեամբ եւ մայրական սիրով ծոցեցաւ վար օրիորդին վրայ, որ անբարբառ անոր կը նայէր մեծարաց աչքերով: Կարծես մեղադրանք մը կար այդ աչքերուն մէջ. «Դուն ալ գիտէիր մեր դժբախտութիւնը եւ ոչինչ ըսիր մեզի, մեզ ձեզիք այն հաւատքին մէջ, թէ անոնք կ'ապրին: Քրիստոնեաներուն մէջ՞ ալ սուտ կը խօսին»: Պաւղա կարծես նայուածքը հասկցաւ եւ ըսաւ, Սոսորովիդուխտին դառնալով. «Իրաւունք չունէի ահաւոր զաղտնիքը ձեզի մատնելու, եւ ուրախ եմ այս մասին, որ դուք գոնէ մինչեւ հիմա երջանիկ եղաք: Այո՛, կատարեալ ճշմարտութիւն է ինչ որ ձեզի ըսուեւ է. ձեր ծնողքը կ'ապրին: Մենք քրիստոնեաներս ալ կը հաւատանք որ բոլոր հոգիները կ'ապրին եւ կը վերադառնան առ Աստուած: Մենք ոչ մէկ մահ կը ճանչնանք, մենք քրիստոնեաներս: Մեր Աստուածը Աստուած է կենդանեաց եւ ոչ մեռելոց: Այս մասին կը խորհինք եւ կը հաւատանք ձեզի պէս, Ահուրայի հաւատացեալներուն պէս: Մենք կը հաւատանք նաեւ, թէ հոգիները կը համբարանան լոյսի Թագաւորութեան մէջ, ուր ուրախութիւն, անդորրութիւն եւ անվախ երանութիւն կայ: Մեր Աստուածն ալ լոյս է, եւ բոլոր մաքուր սիրտերը կը գտնեն անոր լոյսը»: — «Հայր եւ մայր բաւական մաքուր էին յաւիտենական լոյսը գտնելու եւ Ահուրայի Թագաւորութեան մէջ երթալու համար: Միտքդ բեր ձինվաթ կամուրջը, մաղէ կամուրջը» — ձայնեց Սոսորովիդուխտ իբրեւ տեսզահար ուրուականային նայուածքովը եւ ակռաները անձկութեամբ զիրար կը ծեծէին — «Օ՛, այդ զարհուրելի կամուրջը ձինվաթ — արդեօք

Հայրիկը ու մայրիկը Հանգիստ անցո՞ւց իր վրայէն: Ստրաօչա արդե֊  
եօք հազուեցո՞ւց անոնց մերկ հոգիները, անոնց ուտելիք տուա՞ւ:  
Ո՞վ աղօթեց անոնց համար, եւ ո՞վ տուաւ քուրմերուն հազուստ եւ  
ուտելիք եւ խմելիք, որպէսզի բռնկեցնեն սուրբ կրակը, վախցնելու  
փախցնելու համար չար ողիները, օ, ո՞վ արդեօք խորհեցաւ այս մա֊  
սին: Արդարեւ, մոռցած են մեռելական պատարազը, եւ դիակները  
անթաղ մնացին» — «Ո՛չ, ո՛չ, Խոսրովիդուխտ, արդարեւ ամէն հոգ  
հաւատարմաբար տարուեցաւ, սրբազան Մովսէսը խոստացաւ ինձի  
զայն ընել, մեր ճամբայ ելլելէն առաջ» — «Միտքդ բեր չար Աս֊  
տովիդէտը խեղդկապո՞ւ ձեռքը, միտքդ բեր օգին աստուածը Նաէ եւ  
սարսափելին Այէշնա, որոնք հոգիներուն ետեւէն կ'իջնան եւ կը բռն֊  
են» — «Ստրաօչա, Միհր եւ Վէրէթրազնա պիտի պաշտպանեն  
ծնողքին հոգիները, հանգիստ եղիր, Խոսրովիդուխտ, մի նեղուիր»,  
պաղատեցաւ Արսինէ: Խոսրովիդուխտ տենդէն կրկին սկսաւ զող֊  
ղըղալ: Իր նայուածքները երթալով խոշորցան: «Յամուրջը, զար֊  
հուրելի ձինվաթ կամուրջը» ձայնեց կրկին, եւ իր աչքերը, լայնա֊  
փեռեկ, ակնարկեցին դէպի վեր, որպէս թէ կը տեսնէր զարհուրելի  
կամուրջը Սաքատի-Տայթիք լեռնէն դէպի աշխարհի մէջտեղը երե֊  
րուն, դժոխսխոր, սարսափազդու փրփրակոծ, մոնչաձայն անդուն֊  
դին վերեւ դէպի կատարը էլպրուզի եզրը երկինքին:

«Չէ՞ք տեսներ կամուրջը: Անշուշտ կը տեսնէք: Օ՛, որքան  
նեղ լարի մը պէս, մազի մը պէս: — Ինչպէս շող կ'արձակէ, ծիրանի  
դօտիի պէս, եւ վերեւը երկինք կը լուսաւորուի մինչեւ հեռուները,  
հեռուները եւ կապուտակ սահմանները, այնքան կապոյտ որքան ծո֊  
վը կէս օրին: Բայց կամուրջին տակ, որքան խորունկ, խելքս կը դառ֊  
նայ, ձեռքերս վեր ղոնեցէք, վար կ'իջնամ» — առանց որեւէ զիտակ֊  
ցութեան բռնեց Պաւղայի եւ Արսինէի ձեռքերը: Լիկինիա ամուր կը  
բռնէր Խոսրովիդուխտի մէջքէն, եւ սուր ներկաները կը ձայնէին  
իրերախառն կանչով. «Հանգարտէ՛, Խոսրովիդուխտ, մեր քով ես,  
մենք քեզ կը բռնենք, եղածը պարզ տենդ մըն է»: — «Աղջկան միտքը  
վրան չէ, Վալերիոսը պէտք է կանչել», աղաղակեց իշխանը, տակն ու  
վրայ եղած է, «Օ՛, ինչ օր», եւ դուրս վազեց դնաց, դեսպակը բը֊  
ժիչկին զրկելու համար: Այն միջոցին Տրդատ կը նստէր, կարծես  
անդիտակից անցած դարձածներուն, եւ վրէժի զգացումով կատրած  
կը յառէր լապտերներուն, որոնց ամանին մէջ Լիկինիանոս իւր կը  
լեցնէր, որովհետեւ կիսամութը աղետալի կը թուէր, եւ զբաղումն  
ալ կը սթափեցնէր զայն:

Խոսրովիդուխտի տենդը կը սաստկանար հոգիի եւ ջիզերու ա֊  
հագին յուզումէն: Արդէն իսկ կանուխէն դիւրազրդիւ եղող աղջկան  
տազնապալի երեւակայութիւնը թունդ ելած էր յանկարծական,

սաստիկ հոգեկան քայքայումին պատճառաւ, յիշատակներ յիշատակ֊  
ներու վրայ, եւ կը ստեղծէր անիրական պատկերներ կերպարանքնե֊  
րու եւ ծառերու, որոնք իր աչքերուն առջև կը ծառանան մարդկա֊  
յին մեծութենէն սկսեալ մինչեւ անհեթեթ, սոսկալի ձեւերով դէմքեր,  
այնպիսի ցնորական անձկութիւն մը իր մէջ առաջ կը բերէին, որ  
յոտից ցլուխ պաղ քրտինքով ծածկուած, մերթ մեռելատիպ, մերթ  
հրակարմիր կ'ըլլար, եւ միշտ բարձրագոյ կ'աղաղակէր օգնութիւն,  
դադար, փրկութիւն: Աչքերը ակնակապիճներէն դուրս կը խուժէին,  
որպէս թէ կ'ուզէին փախչիլ անկէց զոր պարտաւոր էին տեսնել, ակ֊  
ռաները կը ճարձատէին, յաճախ հիւանդ աղջիկը սարսափէն լեզուն  
կը խածնէր եւ բերանէն արիւն եւ թուք կը հոսէին փրփրազեղ: Պաւ֊  
ղա Խոսրովիդուխտի ճակատը կը զովացնէր թաց լաթերով եւ ժա֊  
մանակ առ ժամանակ բերանը կը մաքրէր: Հեթանոսական աւելորդա֊  
պաշտութեան ամողջ ահագնութիւնը կարծես կը սարսափեցնէր  
նաեւ հիմա այլեւս աշատութեան մէջ հանդէպ հոգին: Արսինէ կը  
սարսուար, կարծես սառած էր: Ամէն միւրթարութիւն եւ ընդդիմա֊  
խօսութիւն անօրուտ էին: Դէպի յաւիտեանական լոյսը ճամբորդու֊  
թեան մէջ ծնողական հոգիներուն ամբողջ ճակատադիրը կը յուզուէր  
աղջկան հոգիին մէջ, եւ բոլոր դէպքերուն կ'ընկերանար նայուածք֊  
ներով, դիմապիծերով, բառերով, կոչերով, զգուշալից եւ տաղնա֊  
պալից ճիչերով: Կը տեսնէր ու կը ճանչնար ծնողքին կերպարանք֊  
ները կարծես մթին նուրբ մշուշի մէջ ծածկուած, ձեռք ձեռքի կ'եր֊  
թային անոնք: Սեւ ամպ մը կը թաւալեցնէր զանոնք, իրերարախ լայն  
թեւերով, զգուելի սեւ երեսներով եւ ածուխի պէս հրացայտ աչքերով  
հսկայ շղջիկներու նմանող դեւեր ամպին մէջ անոնց ետեւէն ինկած  
կը հալածէին: Աստովիդէտ ժամանակ առ ժամանակ խեղդկապը կը  
նետէր եւ միշտ, երբ ան դաչէր թագաւորին ոտքին կամ ձեռքին,  
Խոսրովիդուխտ իր ցնորքին մէջ կը պոռար կը կանչէր, որպէս թէ  
զգուշացնելու համար իր ծնողքը խեղդկապէն կամ թակարդէն.  
«Հա՛յր, հա՛յր»: Անդորրութեան քանի մը վայրկեաններ յաջորդեցին  
եւ ահա յանկարծ խանդարուած աչքերը լուսաւորուեցան ուրախու֊  
թեամբ եւ զոհութեամբ: Սրաօչայի վեհ, լուսաճաճանջ կերպարանքը  
Քրիստոսի նման դէմքով դարձեալ հալածած վտարած էր դեւերը:  
Հոգիները եկած էին կամուրջին զլուխը: Ոսկի նժարներով կ'չիռք մը  
ահա հոն, անոր ետեւը Միհր, Սրաօչա, Բաշնու, դատաւորները:  
Խոսրովիդուխտ մեռելի պէս կը պառկի: Հազիւ կը լսուի շնչառու֊  
թիւնը: Աչքերը շատ հեռուները կը յամենան արծիւի ակնարկներու  
պէս: Մէկ նժարին մէջ զրուած են ծնողքին բարի մտածումները,  
խօսքերը եւ գործերը: Միւսին մէջ չարերը: Անհունութիւն մը կը  
տեւէ դատաստանը: Ահա թագուհին կեցած, կը տեսնէ, թէ ինչպէս



Թագաւորին կեանքով նժարները հաւասարակշռութիւնը կը պահպանեն: Պոսորովիդուխտի պոռալը կուզայ, պիտի պաղատի, բայց անձկութիւնը, տառապանքը հաղաղը կը խցէ: Ճակատին վրայ կ'երեւան արիւնի կայլակներ: Միհր, այլապէս այնքան լուսաւոր, այնքան բարեբարոյ, կը նայի մահադոյժ լրջութեամբ: Դեւերը կը յառաջանան լէզէոններով: Գիշերուան պէս մութ կ'ըլլայ, դատաւորներուն զգեստները միայն կը փայլին արեւու լոյսին եւ կշիռքին ոսկիին պէս: Թագաւորը ծունկի կուզայ, ձեռքերով աչքերը ծածկած: Յանկարծուտ լոյս մը կը ճառագայթէ, պատառելով եւ արտափայլելով խաւարը հարուն: Միհրը բարիներուն ըստակին մէջ դրած է ուտինը, Հավարէնօն: Բայց խաւարը կը վերազանայ աւելի խաւարտիւնը, եւ կ'ըստով անտիւնը: Պոսորովիդուխտ կ'առնէ ձայնը Թագաւորին, որ կը գոչէ, կը մոնչէ, կը կեղերջէ, տաղնապի կանչեր, ուղեղը թնդացնող, կը խուժեն կը թափանցեն անոր լայնաբաց բերանէն: Գերեզմանական լուծիւն կը տիրէ: Յաւերժական պահ մը: Ճինձիւթ կամուրջին անդունդը կը գոռայ: Մետաղեայ եփուն ծովը կը բորբոքի հոսուն երկաթի պէս, կը փրփրի, կը ցայտէ դէպի Թագաւորը: Դեւերը թեւարախ: Հեռարձակ ջուրերէն ասդին գոռացող ճիշեր կարծես: Անոնց բիւրաձայն շառաչիւնը կը թնդայ, ինչպէս երբ բանակ մը կուտակառքերով կը յառաջանայ աւազին ու քարին վրայ: Անոնց, այդ դեւերուն աչքերը կը վառին բոցանուտ հսկայազոր ծխնելոյղի մը անթուելի ածուխներուն պէս: Յաւերժականութիւնը կ'օրորուի, անձայրութիւնը, անեղբութիւնը կը դողայ Թագաւորին հոգիին շուրջ: Հայրիկը կամ մայրիկը քանի անգամ, Արսիւնէն քանի անգամ եւ սրբազան Մովսէսը յայտարարած են դասի ժամանակ, թէ կշիռքը որեւէ մարդու սիրոյն համար մաղի չափ իսկ վեր վար չ'ելլեր, չի փոխուիր: Իշխաններ եւ Թագաւորներ հաւասարապէս կը կշռուին ամէնէն խեղճ մարդոց պէս: Հայրիկին բոլոր մտածումները, բոլոր խօսքերը, բոլոր գործերը ահա մէջն են: Եւ Պոսորովիդուխտ հայրիկին մաքուր ըստի գործերը միայն գիտէր: Երկինքը որքան մաքուր պէտք է ըլլայ, որ իր Հավարէնօն գոյնը նետէ: Հայր, ի՞նչ մեղք գործեր ես: Պոսորովիդուխտ չի տեսներ Թագաւորին պիղծ կամ անմաքուր մտածումները, խօսքերն ու գործերը: Չի տեսներ Թագուհիին արցունքները որոնք նժարէն կը կաթկթին հայրական մեղքերուն հետ, չի տեսներ զերիներուն, սպաննուած քրիստոնեաներուն արցունքներն ու արիւնը: Հաղարակնեայ Միհրը միայն կը տեսնէ զանոնք: Հիմա յանկարծ լոյս մը կը ծփայ ահա, երթալով վճիտ, Թագուհիին ձեռքէն կը բխի ան եւ կը զգեստաւորէ զինքը վարդերանդ պսպղուն, այնպէս որ գոգցես իրիկնամուտին ծիրանիին մէջ կեցեր է, եւ իրմէն ալ լոյսի կոհակներ կը տատանին կը

ծփան Թագաւորին վերեւ, կշիռքին վերեւ, Թագաւորներուն վերեւ: Միհրի երեսը արեւու պէս կ'ըլլայ, դեւերը ափ ի բերան կ'ըլլան, աչքերնին կը գոցեն իրենց թեւերով: Մետաղեայ բոցանուտ ծովը հայելիի պէս կ'ողորկանայ, եւ հրաբուն կարմիր շառայլին մէջ կը բերէ կը խառնէ Թագուհիին ճառագայթող լոյսը: Մաղէ կամուրջը կ'ընդարձակուի լայն ճամբայ մը կ'ըլլայ, երկինքը միւս ծայրէն կը բացուի: Հաղուարթ լուսահեղեղներ առատահոս կը բխին գուտ այնրային սիւներով կերտուած դուռներէն, ծիրանիի դօտիի ճաճանչաւուխտ գոյներով: վարդաստաններով ու շլացիկ կերպարանքներով յղփացած երկինք արեւափայլ երեսներու եւ զգեստներու: —

Պոսորովիդուխտ կը պարտաւորուի ձեռքերովը աչքերը դոցել: Հոն լուս կը կենայ եւ մասններուն մէջէն ուրախութեան արցունքներ կը կաթկթին: Բերանը կը բացուի, ափ ի բերան պակուցումի, երկրպագող հիացումի, ջերմաջերմ սիրոյ ձայներ, կանչեր կը հեղեղեն, կը դողան ուրախութենէ, շունչը կը թռի, կ'ուղղուի վեր, կը շտկուի զէպի բարձրը, աւելի լաւ տեսնել կարենալու համար, թէ ինչպէս ծնողական հոգիները իրարու փաթթուած ներքնապէս աներկիւղ կը քալեն խորափիտ ցնորակոծ անդունդին վրայէն եւ կ'երթան կը մտնեն Ահուրայի երկնային տիրապետութեան մէջ: «Բացէք, բացէք», կ'աղաղակէ միշտ Պոսորովիդուխտ, ձեռքերը իրարու կը զարնէ եւ կը ցնծայ կը նայի փրկուելով շունչ առնող կիներուն: «Ազատուեցան, ազատուեցան»: Երբ Վալերիոս եկաւ եւ Պոսորովիդուխտը տեսաւ, ըսաւ զարմանքով. «Ի՞նչ ունի օրիորդը»: Ամէն բան պատմել տուաւ ինչ որ Պոսորովիդուխտ տեսած լսած էր: Բոլոր ներկաները յուզուած կեցած էին Պոսորովիդուխտի անկողնին շուրջ: Ան հիմա բարձրաձայն Տրդատին կը կանչէր: Եկաւ եւ Պոսորովիդուխտ սաստիկ սիրով կախուեցաւ երկու թեւերովը անոր վիզէն, կը հեկեկար ուրախութենէն եւ ձայնեց կրկին. «Տրդատի՛կ, անոնք կ'ապրին, դիտեմ ես, իրապէս կ'ապրին, եւ երջանիկ են վերը: Տրդատի՛կ, կ'ապրին անոնք: Ուրախացի՛ր»: Տրդատ շփոթութեամբ կը նայէր քրոջը եւ րսաւ սառնօրէն. «Պատրուկէսի ողին այն ատեն միայն հանգստացաւ, երբ Աքիլլէս թափեց անոր զերեզմանին վրայ Հեկտորի արիւնը: Վրէ՛ժ, Պոսորովիդուխտ, վրէ՛ժ»: Վալերիոս հանդարտութիւն հրամայեց եւ բազմօրեայ հանդիստ: Եղբորը հուժկու բազուկներուն վրայ փոխադրուեցաւ Պոսորովիդուխտ:

Երբ Պաւլա եւ Վալերիոս պատգարակով ներս մտան դարաստանին դուռնէն, երկուքն ալ որոշ կերպով տեսան քիչ մը հեռուն կերպարանք մը որ աճապարանքով ետ կ'երթար: Մութ վերարկուի մը մէջ ծածկուած, մութ ալ զլխանոց մը, պարսկական տիպարով եւ երկար ցուպ մը ձախ ձեռքը: Պաւլա հարցուց. «Վալերիոս, ո՞վ է

ան հոն» : Վալերիոս . «Կը տեսնեմ զայն : Չեմ գիտեր հոս ինչ կ'ուզէ ընել : Օտարականի կը նմանի : Քաղաքը կը փնտռէ» : Հազիւ Վալերիոս խօսած եւ պատգարակին մէջ կոնակը ետեւը տուած էր , հծծեց Պաւղա . «Վալերիոս , նայէ' , նայէ'» : Կ'երեւի չիմացաւ : «Բայց նայէ' , նայէ' , Վալերիոս» : — «Ի՞նչ կայ որ» : — «Ուշ մնացիր : Օտարականը կծկտեցաւ , ինքզինքը չցուցնելու համար , եւ զիշերուան մէջ աչքերուս առջեւ աներեւոյթ եղաւ» : Վալերիոս խնդաց , «Աւագակ կամ ուրուական կամ երեւակայութիւն : Ամէնքս ալ յուզուած ենք Խոսրովիդուխտին երեւոյթին վրայ : Կեցնեմ , ի՞նչ կ'ըսես» : — «Ո՛ր : Թող աճապարենք» , պնդեց Պաւղա . «Տէրը մեզի հովանի է» : Վալերիոս ձեռքը դաշոյնին տարաւ :

«Ի՞նչ է քու կարծիքդ այսպիսի երեւոյթներու վրայ , ինչպէս Խոսրովիդուխտի ունեցածը , Վալերիոս» , Հարցուց Պաւղա քիչ մը ետքը : «Ջիզերու եւ ուղեղի ծայրայեղ զրգուում : Աչքերուն առջեւ եւ ականջովը լսածը ու տեսածը ամէնքն ալ մանկութենէն իրեն մէջ դրոշմուածներէն են , որոնք արդէն տղայ եղած ատենը սարսափելի տպաւորութիւններ ըրած են անոր վրայ , որոնք հիմա կ'արթնան իր դիւրագրգիռ անձկայոյզ հոգիին աղղեցութեամբ , կենդանի պատկերներու եւ ձայներու համեմատութիւններ առնելով» :

«Հեթանոսութեան ոյժը եւ ազդեցութիւնը սարսափելի է» , պատասխանեց Պաւղա : «Եւ սակայն — որքան ճշմարտութիւն , որքան ահաւոր լրջութիւն կայ Խոսրովիդուխտի դէմքին վրայ : Յուզիթ ալ կը հաւատայ այդ կշիռքին եւ հիմակուրնէ զողի մէջ է : Քրիստոնեաներն ալ պիտի դողան Քրիստոսի առջեւ , երբ ան դայ երկինքի ամպերու մէջէն դատել զկենդանիս եւ զմեռեալս : Ո՛վ Վալերիոս , բայց ձգէ հիմա սա դաւանարանական խնդիրները , դառնա՞նք մենք մեզի , մեր օրերուն , ինծի կը թուի թէ դժուարին ժամանակներ պիտի գան : Հալածանք պիտի պայթի մեր վրայ : Պիտի տառապինք , պիտի չարչարուինք : Կը հաւատամ որ մօտ է Տիրոջ դալուստը ի դատաստան : Դուն իբրեւ բժիշկ կրնաս իրաւունք ունենալ Խոսրովիդուխտի տեսիլքին քու մեկնութեանդ մէջ : Բայց ասով զուլջացիր դուն , ազդարարութիւն մը տեսիր ասոր մէջ : Աստուծոյ եւ իր Քրիստոսին , Օծեալին , դատաստանը կուզայ , Վալերիոս : Մենք երկուքս ալ դողահար պիտի կենանք մեր մեղքերուն մէջ կորսուած Տիրոջ արեգակնափայլ երեսին առջեւ ինչպէս Հայոց թագաւորը Միհրին առջեւ , եւ պիտի կորսուինք , եթէ Տէրը իր արիւնէն չիթ մը չկաթեցնէ մեր մեղքերուն նժարին մէջ : Օրհնեալ է Աստուած յաւիտեանս յաւիտենից , որովհետեւ Յիսուսի Քրիստոսի , Որդւոյն Աստուծոյ արիւնը մեզ կը մաքրէ բոլոր մեղքերէն : Այս պատճառաւ բաց է երկինքը մեզի , ուղիղ ճշմարիտ երկինքը Հօր Աստուծոյ եւ ամենայն

փառաց նորա : Մահ , ո՛ւր է քու խայթոցդ : Դժոխք , ո՛ւր է քու յաղթութիւնդ : Փառք Աստուծոյ , որ յաղթութիւն տուաւ մեզի շնորհիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» :

Ազնուական տիկինին այս դաւանանքը , ահա այսպիսի վսեմ ցնծութեան եւ խայտանքի ձեւ առած , իր տպաւորութիւնը գործեց Վալերիոսի վրայ : Լուռ նստած էր Պաւղայի մօտիկը , կոնակը տուած դեսպակին պատին փափուկ կաշիէ բարձին : Ուշիմ ու մտախոհ դէմքով գեղայարմար գլուխը թեթեւ մը դէպի առջեւ ծռեց , կարծես ակնի լաւ դիտելու , մտիկ ընելու համար , եւ աչքերը կը յամենային խուզարկու մնալ պատգարակին կամ դեսպակին բաց դուռնէն դէպի հետզհետէ աստղերով ցանուցիւր երկինքը : Տօնական լուսութիւն : Գիշերուան զովացիկ հովը , մեղմ ու քնքուշ , կը փայփայէր պատգարակին շուրջ : Կառաձիգներուն կանոնաւոր քայլափոխը եւ անոնց փոքր ինչ լսելի հծծիւնը միայն կար : Երկար լուսթենէ վերջ Պաւղա նորէն հարցուց :

«Վալերիոս , կ'ուզե՞ս դարձեալ դաւանանքի խօսք լսել : Երախաներուն հետ եպիսկոպոսին դասախօսութիւնը սկսած է : Մտղկաղարդին կրնայի մկրտուիլ : Ով Վալերիոս , գիտես , որքան կը սիրեմ քեզ , մօր մը պէս ես քու հոգիդ կը փնտռեմ : Գիտեմ , դուն Քրիստոսը կը սիրես եւ կը յարգես քրիստոնեաները» : — «Այո , կը սիրեմ զայն , սիրտովս կը պաշտեմ զայն ըստ իմ գիտութեան եւ իմացողութեան» , սկսաւ Վալերիոս , «քեզ ալ կը սիրեմ ես , Պաւղա , իմ սիրելի մօրս պէս , եւ կը սիրեմ այն քրիստոնեաները որոնք քեզի պէս են . ամէնքն ալ քեզի պէս չեն : Շատերը իրենց համար պատիւի ետեւէ ինկած են , որեւէ առաւելութեան , շահու ետեւէ : Իմ հեթանոս հիւանդներուս մէջ շատեր կան որոնք ակնի քաջ , պատուական , համբերատար եւ երախտաղէտ են քան քրիստոնեաներուն շատերը հիւանդանոցին մէջ» : — «ձիւտ այդ պատճառաւ մենք պէտք ունինք քեզի պէս տիպարի մը , Վալերիոս» յարեց Պաւղա , պատրաստաբան : «Բժիշկ մը դժուարաւ կրնայ քրիստոնեայ ըլլալ» , ըսաւ Վալերիոս քանի մը վայրկեան լուսթենէ վերջ , յուսալով թէ փախուստի լաւագոյն ճամբայ մը կը գտնէ : Բայց Պաւղա տեղի չտուաւ : «Ինչո՞ւ համար բժիշկ մը» : — «Որովհետեւ հաւատք եւ գիտութիւն դժուարաւ կը միաբանին» : — «Ով Վալերիոս , գիտութիւնը փուռ է , քամի է , իսկ սէրը կը բարւոքէ» : — «Կ'ուզեմ սիրել Քրիստոսն ու քրիստոնեաները : Բայց հաւատալ — հաւատալ ինչ որ դուք ամէնքդ կը հաւատաք , ատիկա չեմ կրնար : Ոչ մէկ բժիշկ կրնայ» : Պատգարակը կեցաւ Պաւղային ամարանոցին առջեւ : Իր գերիները փութացին ընդառաջ գալ : Վալերիոս ցատկեց դուրս եւ ձեռք տուաւ Պաւղային որ իջնէ : Երիտասարդ եւ շատ փնտռուած բժիշկը , փոքրացած , վտիտ ,

կը կենար Պաւղայի հօր կերպարանքին քով: Պաւլթին լոյսը կը շո-  
ղացնէր իրենց դէմքերը: Պաւղայի դէմքին վրայ կը դարէր խաղա-  
ղութիւն եւ անոր աչքերէն կը ցոլար բծիշկին կողմէ անըմբռնելի ե-  
րանութիւն մը: Անոր գիրդ ու քնքոյշ ձեռքը տաքուկ մը կեցաւ Վա-  
լերիոսի ձեռքին մէջ: Մտերմական կը հնչէին անոնց հրաժեշտի բա-  
ռերը. «Իրաւունք ունիս, Վալերիոս: Քրիստոսի հետեւողութիւնը  
քու ուժէդ բարձր է հիմնապէս: Հաւատքի կը կարօտի: Բայց սէրը  
կ'առաջնորդէ հաւատքի եւ խաչի»: Վալերիոս առանց խօսելու քիչ մը  
առջեւօք բերաւ Պաւղայի ձեռքը, գլուխով խոնարհութիւն ցրաւ, եւ  
անոր վրայ համբոյր մը դրոշմեց: Պաւղա ուժով մը սեղմեց անոր  
ձեռքը եւ ըսաւ. «Սաղաղութիւն Տեառն մերոյ ընդ քեզ, Վալերիոս»:

Պատգարակը յուշիկ տատանումով կ'օրօրուէր դէպի բծիշկին  
մօտակայ տունը: Ուրիշ պատճառ մը, հիմնաւոր պատճառ մ'ըն ալ  
կրնար տալ Պաւղային, թէ ինք ինչու քրիստոնեայ չի կրնար ըլլալ:  
Քանիցս բերանը բացուած էր, իր սիրտը այս մասին բանալու Պաւ-  
ղային, ըսելու համար, թէ որքան կը տառապէր Խոսրովիդուխտին  
համար: Յորչափ Խոսրովիդուխտ քրիստոնեայ չըլլար, ինք ալ պար-  
տաւորուած էր ընտրութիւնը բաց թողուլ Քրիստոսի կամ Միհրի  
համար:

Խոսրովիդուխտ հանդարտ կը քնանար: Անոր փոքր ինչ դարձ-  
եալ կարմիր երանգուած դէմքին վրայ կը հանգչէր խնդութիւնը ծը-  
նողքին փրկութեան համար, զոր տեսիլքը յայտնած էր իրեն: Արսի-  
նէ պարզ օրուան զգեստով աթոռի մը վրայ նստած էր ջահին տակ,  
որ ձեղունէն կը կախուէր արուրեայ եւ ծաղիկի սաղարթներով պա-  
րուրուած մոյթերով: Ձեռքերուն մէջ կը բռնէր քսակը, զոր Լիկին-  
իոս իրեն տուած էր ննջասենեակ ելլելու ատեն անոր հետ: Անտար-  
բեր ձեւով մը առած էր զայն, եւ այն ատեն միայն դարձեալ լըջօրէն  
անոր նայեցաւ երբ արդէն քնացած էր Խոսրովիդուխտ, եւ նաեւ ար-  
քայաղունը քովի սենեակը դացած գլուխը վար դրած էր ասդին ան-  
դին տատանելէ վերջ երկարօրէն եւ սաստիկ: Բայց Արսինէ միշտ  
կ'իմանար դարձեալ անոր թեթեւ մը հառաչելը, եւ յետոյ նորէն  
բարձր հեծեծանքը, ահաւոր խորզալը, կանչ մը որ հանդիսաւոր  
վրէժխնդրութեան երդումի մը կը նմանէր, ու ապա վերջապէս լուռ  
լաց մը: Ոչ մէկ հանդիստ ունէր այսպէս Տրդատ: Արսինէ երթալով  
աւելի հետաքրքրութեամբ կը դիտէր քսակը: Իրօք յիշատակ յիշա-  
տակի վրայ կ'արթնցնէր ան. առաջին վարձատրութիւնը իր մեհենա-  
կան ծառայութեան Վաղարշապատի մէջ: — Այո, ճիշտ ու ճիշտ թա-  
գաւորը զայն իր իսկ ձեռքով իրեն Արսինէին երկարած էր ոսկելար  
կարմիր քսակի մը մէջ: Բայց որքա՛ն ժամանակ առաջ: Բայց տասնկ  
քսակներ ուրիշ տեղեր ալ չկա՞ն միթէ: Եւ ի՞նչպէս կրնար իմինս

այդ օտարազդի փերեղակին ձեռքը անցած ըլլալ: Բայց իմի՞նս, ի՞նչ  
եղած է: Արսինէ անձկութեամբ կը խորհրդածէր ինքն իրեն: Բայց  
քսակը յիշատակի քսակ մըն էր: Ամառնային գիշեր մը Վաղարշապա-  
տի արքայական պարտէզին մէջ: — Անահիտին մէկ վարդատօնը,  
Վարդայիտ: — Շլացիկ, փողփողենէջ լողիկներու վէտ ի վէտ ծը-  
փանք մը, տատանք մը — հոն դափնեվարդերուն ետեւը — քարէ նըս-  
տարաններուն վրայ, խմբակ մը հանդէսին յոյնողներու, շունչ առ-  
նողներու, որոնք լուռութիւն, ամայութիւն կը փնտռէին եւ իմ տաւի-  
ղիս կ'ունկնդրէին — ո՞վ էր նայիմ: Թագաւորը — Թագուհին, —  
Մովսէսը եւ ես: Քսակը դօտիէն կը կախուէր: — Ոսկի ճարմանդ մը  
կարելի չեղաւ բռնել զգեստին վրայ, ուստի պահեցի զայն մետաքսէ  
լաթի կտորի մը վրայ եւ քսակին մէջ դրի: Այ դուն նշանաւոր քսակ,  
դուն հիմա ձեռքերուն մէջ, մնացած բոլոր բաներն ալ ինչպէս փայ-  
լուն կերպով հիմա կուզան աչքիս առջեւ: Մութ անկիւն մը մեր  
մտնելէն առաջ քսակը կը կախուէր դօտիէս: Բայց մեր նորէն դուրս  
պարտէզ դալուն, քսակը չկար: Անօրուտ ամէն խուզարկութիւն:  
Ամէն մարդ ըսաւ թէ երկար ատենէ ի վեր կորսնցուցած պիտի ըլ-  
լաս: Ալլելու չտեսայ զայն: Ո՞վ կրնար զայն զողնալ մարմինիս վրա-  
յէն: Անշուշտ ոչ ոք: Բայց ասիկա բոլորովին ուրիշ քսակ է: Գրողը  
տանի:

Տկարութենէն, ինքն իրեն մէջ խորհրդածելէ յոգնած դրաւ  
զայն ափրիկեան նոճիէ թանկագին կլոր սեղանին վրայ, որուն վրա-  
յի տախտակը քառակուսի սիրուն դրուադումներով պճնազարդուած,  
կը կրէր ամուր բուն մը, եւ որուն ոտքերուն ծայրերը առիւծի երեք  
թաթերու մէջ կը վերջանային: Հանուեցաւ, լոյսը մարեց եւ պառ-  
կելու վրայ էր, ահա շողարձակում մը սեղանին վրայ, ուր կը գլու-  
նուէր քսակը, շողիկ մը կը պլպլար մեղմ կապոյտ շառալ մը եւ  
տկար ճաճանչով կը լուսաւորէր ամբողջ սենեակը: Անձկութեան եւ  
հետաքրքրութեան զոյացում մը կը տողորէր Արսինէն: Շողը այնքան  
մեղմ, այնքան շնորհալի որքան աստեղալոյսը հեռատանէն, ամե-  
նահեռի երկնադարձունքէն, սփոփիչ, ոչ զահանդական: Կանչով մը.  
«Թագաւորին մատանին», վեր ցատկեց Արսինէ, սեղանին դէմ: Գու-  
ռին ետեւէն արդէն կը ձայնէր մշտարթուն եւ բոլորովին հագուած  
արքայազունը քաղմայոյց. «Ո՞ւր է թագաւորին մատանին»: —  
«Սպասէ, Տրդատիկ, պէտք է հալուիմ, յետոյ կրնաս տեսնել»: Ա-  
ճապարանքով պարեգօտը վրան քաշեց եւ թեթեւ մը բացաւ արքայա-  
զունին: Ան լոյսին նայեցաւ անխօս: Քանիցս սարսուռ մը կը սողոս-  
կէր անոր մարմինին մէջ: Մութին մէջ Արսինէի ձեռքը փնտռեց եւ  
ամուր մը սեղմեց զայն: «Ի՞նչ կրնայ ըլլալ այս», հծծեց Տրդատ:  
«Այսպէս կը շողար մատանին գիշերը, զոր թագաւորը ինձի նուէր

ըրած էր եւ զոր ես բոլորովին խորհրդաւոր կերպով կորսնցուցած էի»: — «Կ'ուզեմք տեսնել, ի՞նչ է», ըսաւ իշխանազունը: «Ո՛հ, թողուր, կը բարկանամ», արդիւնց Արսինէ դողողալով: «Միրուն լոյս մըն է, որ չի կրնար վնասել», փսփսաց Տրդատ: «Թող տեսնեմ»: Եւ սեղանին քով էր: Վարանումով, զոլուլութեամբ շօշափեց լոյսին դէմ եւ դպաւ ոսկեհուն լարափունջին, որուն մէջէն լոյսը կը ցոլար: Կարծր կէտ մը կար: Տրդատ մատին ծայրը վրան դրաւ, լոյսը աներեւոյթ եղաւ, բայց կը լուսաւորէր դարձեալ, անմիջապէս որ մատը մէկ կողմ տանէր: Ուզեց դանակին ծայրէն օդտուիլ եւ զաղանիքը թափանցել: Արսինէ սակայն խնդրեց իրմէ, լոյսը իրեն թողուլ եւ առտուան սպասել: Չեռք ձեռքի նստած Արսինէին անկողինին վրայ եւ ուրախ սոսկումով մը կը դիտէին շողարձակումը: Այդ պահուն լսեցին Խոսրովիդուխտի խորունկ ու հանդարտ շնչառութիւնը: Տըրդատ հծծիւնի շեշտով նկարագրեց անգամ մըն ալ քրմուհիին ինչ որ միտքը մնացած էր օտարական փերեղակին ըսածէն: «Բոլորովին անկարելի՞ կը սեպես, թէ ան Մովսէսն է», հարցուց հիմա Արսինէ արքայադուին, հազիւ լսելի ձայնով, բայց իր բերանով այնքան մօտիկը անոր որ, իր շունչը Տրդատին երեսը կը շօշափէր: Արսինէ կը նկատէր կը զգար որ արքայազունը որքան կը սարսուար:

«Ի՞նչպէս: Ի՞նչ կ'երեւակայես: Փերեղակը, իրաւ է թէ, ալեբեկ մագեր ունէր եւ մօրուսաւոր էր եւ դրեթէ սեւ ալ: Քիթը, բերանը եւ աչքերը միայն նման էին: Ասիկա ըսած էր Խոսրովիդուխտ, որ շատ երկարօրէն դիտած էր զայն: Բայց, Միհրը վկայ, սրբազան Մովսէսը այս ձեւով չի դար»: — «Իրաւունք ունիս, Տրդատիկ, միայն թէ ինչո՞ւ այս զաղափարին կրցայ դալ: Ախ, եթէ դար, քեզ պիտի մխիթարէր, Տրդատ, եւ մեղի պիտի պատմէր, թէ մեր փախուստէն վերջ ի՞նչ պատահեցաւ: — Առտու չ'ըլլար տակաւին, արքայազուն, ինծի այնպէս կուգայ որ դիշերը յաւիտենական է: Չե՞ս ուզեր քնանալ»: — «Չեմ կրնար քնանալ: Ախ, հայրիկը: Հաւատարիմ մայրիկը, դոնէ ան մեղի մնար: — Քեզ միայն ունիմ Խոսրովիդուխտէն զատ, դուն ինծի մօր մը պէս պիտի ըլլաս, ես քու գաւակը պիտի ըլլամ, ես պիտի պաշտպանեմ քեզ, պիտի յարգեմ մինչեւ մահը, երբ թագաւոր ըլլամ, վստահ եղիր վրաս»: Մինչեւ որ Արսինէ կարողացաւ արդիւնել եւ ինքզինքը պաշտպանել, ան՝ Տըրդատ երկու թեւերովը փաթթուեցաւ իրեն եւ երեսն ու կուրծքը այնքան ուժով սեղմեց, որ Արսինէ բարձրաձայն հեծեծեց: «Գոնէ հայրիկին նմանող եղիր, Տրդատ, թագաւոր մը լոյսի թագաւորութեան մէջ, այսպէս ամէն ինչ բարի պիտի ըլլայ»: Տրդատ լալով իր սենեակը դնաց: Արսինէ իր անկողինին վրայ աչքերը քար կտրած կը յառէր կապոյտ լոյսին, որ երթալով մխիթարիչ եղաւ իրեն: Եւ —

տարօրինակ կերպով — որքան որ աւելի կը նայէր անոր, այնքան ալ աւելի ստոյգ կ'ըլլար իրեն համար, թէ Մովսէսը մօտերն է: Ի՞նչպէս: Ի՞նչ տրամադրութեան մէջ է: Իրօք ուրա՞խ է սիրտը: Այո՛, ասիկա կը զլայ ինքը, մեծ, եռանդալին, ուրախութիւն մը, ջերմիկ ցանկութիւն մը: Ա՛խ, եթէ իրեն հետ բերած ըլլար բան մը հայրենիքէն, եւ ինք ալ քանի մը ժամէն հոս ըլլար, օ՛, որքան պիտի ուղղուէր իր հաւատքը դարձեալ, Խոսրովիդուխտն ու Տրդատը պիտի բերէր կրկին մանկութեան հաւատքին, առողջութիւն եւ կորով անոր աչքերէն ու ձեռքերէն կրկին պիտի հոսէր իրենց վրայ: Օ՛, ապահովաբար, ամէն ինչ, ամէն ինչ դարձեալ լաւագոյն պիտի ըլլար: — Բայց Մովսէսի աչքերը, աչքերը, ծաւի ծովագոյն, ամէն բանի թափանցող աչքերը, որոնք կը թուին ամէն ինչ հարցուփորձել, ամէն ինչ դիտնալ: Ի՞նչպէս պիտի փորձեն ու թափանցեն զիս: Լիկինիանոսի հանգչպ իմ սէրս մէջտեղ պիտի հանեն: Իսկ Անահիտի պատկե՛րը: Ապեղէ՛ս: Ուրախութիւն եւ անձկութիւն կը պայքարէին Արսինէի մէջ մինչեւ առաւօտ, ու երբ կապոյտ լոյսը մարեցաւ այլալոյսին առջեւ, իր սիրտէն շատ, շատ հեռացաւ դարձեալ Մովսէս: Կարծր կէտին վրայ կոխեց որոշակի: Քար մը պէտք է ըլլայ, որ առանց կէտին վրայ կոխեց որոշակի: Քար մը պէտք է ըլլայ, որ առանց լարափունջին ոսկեհուն նուրբ մասերը աղարտելու, ձուլուեր է քանի մը ոսկի օղակներու միջեւ: Գոյնին նայելով թագաւորին մատանիին քարը պէտք է ըլլայ: Բայց ո՞վ պիտի կրնար ըսել, թէ այն քարն է: Արսինէ, զլուխը պտուտեցելով, հազուեցաւ: Խոսրովիդուխտ արթնացաւ, բայց ինքզինքը այնքան տկար զղաց եւ յոյնարեկ, որ սիրով հետեւեցաւ Վալերիոսի դարմանումին եւ պառկած տեղէն չելաւ:

Արսինէ առջի բերան ծածկեց դիշերուան դէպքը, նշան տուաւ գերուհիներուն, որոնք վախով դողով ներս մտան Խոսրովիդուխտին եւ Արսինէին մատուցանել իրենց առաւօտեան սպասարկութիւնը: Վերը արքայազունին մօտ ամէն ինչ լուռ էր: Խոսրովիդուխտ եւ Արսինէ կը կարծէին, թէ վերջապէս դոնէ առտուան դէմ հանդիստ գտած էր եւ կը քնանար: Բայց արդէն կը հնչէին անոր ամուր քայլերը: Անոր դարձեալ ամուր, բայց աւելի ցասկոտ ձայնը կը խնդրէր ներս մտնելու արտօնութիւն: Եկաւ սպառազէն, սաղաւարտով, վահանով, տէղով, սոնապաններով եւ հրաժեշտ առաւ յանկարծակիի եկած կիներէն: Իշխանն ու Լիկինիանոս առաջարկած էին իրեն այցելութիւն մը տալ իր Աստուծոյ պէս յարգած Աքիլէսին գերեզմանին, ինչ որ նախապէս որոշուած էր, ասով ժամանց մը եւ կ'ազդուրում մըն ալ եղած կ'ըլլայ: Աննանային վերջին օրերուն արեւի գաղջ շողի մը մէջ իշխանին շքեղ երկկայմը կամ ցուկանաւր, սեւ երկայն սրածայր դրօշկներով զարդարուած, Փալերոնի նաւահանդիստէն ելաւ դէպի լուռ ծովը, եւ փառաւոր դնացքով մը Լիկինիոս, Լիկին-

խանութի իշխանները, Տրդատ եւ քանի մը բարձրաստիճան սպաներ նաւարկեցին դէպի Ատտիկէի հարաւակողմը, Տրդատի սիրոյն համար մտան Պատրոկլէս կղզին, յետոյ քանի մը օր նաւելով քերեցին հարաւային ծովեզերքը, եւ Մակեդոնիոյ ու Փոքր Ասիոյ միջեւ ծովամէջը քիչ մը կենալով շարունակեցին դէպի Քիոս, Լեսբոս, Տէնոզոս, Լէմնոս կղզիները: Ելլես-Պոնտոսէն եւ Պրոպոնտիսէն — Մարմարա — Եւքսինեան Պոնտոս — Սեւ Ծով —, յետոյ ասոնց տրեւմտեան ծովեզերքի երկայնքէն վերջապէս դէպի նպատակակէտ, Լեւկէ կղզիին, Դանուբի գետաբերանէն ոչ հեռի: Ճերմակ ապառաժուտ լեռ մը վերէն վար կախուած ափափաներով կը բարձրանայ ծովէն դուրս: Ո՛չ մէկ բնակութիւն: Ո՛չ մէկ մարդկային ձայն՝ ո՛չ ծովափունքը, ո՛չ ալ մենաւոր խոր հովիտներուն ծոցը: Ճերմակ թռչուններու տարմեր միայն խարակներէն կը ճօճէին: Նուիրական սարսուռ մը կը վարակէր նաւորդները: Աքիլլէսի մեհեանը այցելելէ եւ հին այցելուներուն կողմէ նուիրուած բնիկները դիտելէ ետք, իրիկուան նորէն նաւ նստան: Բայց Տրդատի բնկերացողներէն ոչ մին բնդդիմացաւ անոր փափաքին, — հոս ապրիլ լուսնկային տակ այն սարսուղ-ղեցիկ գեղեցիկ դիշերը: Եզերքը խարսխեցին նաւը: Անոր ցոռկին եւ ժեռուտ ծովափունքին միջեւ լուսնաշող կոհակները ծածանելով, խոխոջելով, կանոնաւոր ճողփիւններով փրփրակուտակ, կը վաղ-վաղէին դղչելով, դարդափելով: Կղզիներու կիրի եւ կաւիճի ահագին գուղձերը կանաչափառ կ'արտափայլէին եւ մահասարսուռ տրպաւորութիւն մը առաջ կը բերէին: Նաւուն ժամանումէն խրտչող ճերմակ ծովային թռչունները — Աղկիրոնները — որոնք հաղարներով կը ծածկեն ապառաժէ պատերը, իրենց բոյները քաշուած էին: Գերեզմանական լուսթիւն: Իշխանը երկար առեւն քնացաւ նաւուն մէջ, իր բոլորտիքը քանի մը հինաւուրց սպաներ: Կղզին արքայազունին այցելող բնկերները քաշուեցան իրարու ետեւէ: Մնացին լոկ Լիկինիանոս եւ Տրդատ, եւ փոքրիկ կղզիներուն մէջ ժուռ եկան տաքուկ երկայն բուրդէ վերարկուներով: Իրենց առջեւ կ'երկնային ստուերներ յապուրակի: Ժամանակ առ ժամանակ վերէն վար կախուած լեռնային պատերէն քար մը կը քակուէր, վար կը թաւալէր ու կը ջախջախուէր որտապոզ լեռան ցցուածքներու վրայ, կամ ապառաժուտ յատակը, կամ լեռան կոնակի կողմէն կ'իյնար ուղղահայեաց խուլ դրնդիւնով կոհակուտոյց ծովուն մէջ: Արքայազունը անդադար ժուռ եկաւ ամէն ուղղութեամբ, հարիւրաւոր քայլեր առաւ միամիտակ դէպի ամայի պատառոտուն լեռնապատը, անտարբեր կրթնած տէգին սեւատատան ծովը կը դիտէր, մինչ Լիկինիանոս, անհամբեր, ցրտասարսուռ, քունէն գինովցած կը սպասէր ափափաներուն ստորոտը: «Տրդատ, հիմա նաւ դնա, ցուրտ է եւ քունի պէտք ունիս: Ի՞նչ

կ'ուղեւ վերջապէս, աղիտաբեր, լուակեաց: Ի՞նչի, որո՞ւ կը սպասես»: — «Աքիլլէսի ողբին եւ իրեն հետ եղող հերոսական ողբինըն, ո՛վ դիտէ — թերեւս հայրիկն է, հոն է»: — «Բթամիտ պատանի», քրթմնջեց Լիկինիանոս, տաղտրկացած, «երբ պիտի վերջապէս խելքդ գլուխդ դայ: Սպասէ քու Աքիլլէսիդ, մինչեւ դայ վարդամատն արշալոյսը — ես կ'երթամ պառկել»: — «Դուն դնա միայն», խնդրեց աղաչեց Տրդատ, «դուն նայէ որ երթաս: Զիս մինակ ձգէ, խորասոյղ առանձնութիւնը հաճելի է ինծի: Այս դիշերը նորէն ինծի կը դարձնէ ոյժս: Ես առտու նաւ կուգամ»: Լիկինիանոս զնաց գլուխը երեւցնելով: Ժայռի մը ցցուածքին վրայ նստած, վերարկուն ամուր մը վրան քաշած, գլուխը գրեթէ մէջը խրած, Տրդատ կը նայէր անոր ետեւէն մինչեւ որ աներեւոյթ եղաւ դիշերուան մէջ: Ո՛չ մէկ երկիւղ Տրդատի համար, միայն հանդիսաւորութիւն մը, զոր երբեք չէր զգացած: Այնքան ապահովաբար կը հաւատար Աքիլլէսի երեւնալուն, որ ասկից դատ ուրիշ որեւէ մտածում, առանձնութեան որեւէ զգացում չտիրեց իրեն մէջ: Հոս իր լուսափաղիփօրէն արթուն միտքին առջեւ յոյն հերոսին ամբողջ կեանքը կը խաղատուէր, իրեւ ողբերգութիւն մը ի պատիւ հանդուցեալ հօրը, ծնունդէն մինչեւ մահը, իրեն առջեւ, որ ահա մէկ հատիկ հանդիսատեսն էր ծովախաղաց կղզիին մէջ:

Բայց ոչ մէկ ձայն լսելի էր, ոչ մէկ ողբ կ'երեւնար: Գիշերը անցաւ զնաց: Ժայռերուն կատարները եւ պատերուն առլեփները կը կարմրէին ու հետզհետէ կը բոցակիզէին ատրաչէկ ծիրաներփեան: Ծովը կը հեւար սաստկակոծ: Սպիտակ թռչուններ կ'արթնային, եւ ահա աղխատրոյգ ամբոխումով, խլացուցիչ մոնչիւնով կը թեւածէին կղզիին վերեւ հոս ու հոն, մինչեւ ծովը խորասոյղ եւ յետադարձ: Անոնց արծաթ փետուրները յուշիկ կարմրանդ հանդէպ այգալոյսին: Հայոց ապագայ թագաւորը անխիրտ նստած կը նայէր բոլորտիքը, թէ ինչպէս կենդանիներ, առանձին առանձին, հետաքրքիր, երկչոտ, զգուշաւոր, կը մօտենային իրեն: Ամէնէն առաջուան թրոչունը, մասնաւորապէս յոյր ու գեղեցիկ, պինդ պարանոցով եւ կրտուցով եւ սուր աչքերով, ցցուն գլուխովը քանի մը քայլափոխ կեցաւ արքայազունին առջեւ եւ դայն կը դիտէր անշարժ, աներեր: Արքայազունն ալ տեղէն չչարժեցաւ, եւ կը նայէր միշտ լարուած, ճրգտուած, կենդանիին բաց դեղին դարանակալ աչքերուն մէջ: Վայրկեաններ կ'անցնէին: Այդ ամէնէն առաջուան թռչունին ետեւը լուռ ու մունջ հաւաքուեցան, միեւնոյն դիրքին մէջ յառաջակարկաւ գրլուխներով եւ լրտեսող աչքերով, իրարու, իրարու ետեւէ, կղզիին յատակը, ափափաներուն սուր սայրերուն եւ ցիցերուն վրայ — անխօս, դարանակալ, սպիտակափայլ ամբոխ մը հարիւրաւոր սեւ կէ-

տերէ դուրս, բաց դեղին ցոլացիկ վոհմակ մը — անօրինակ հաւա-  
քում մը առնչտներու — արքայազունին սեւեռած ակնապիշ: Ան մին-  
չեւ աչքերը վերարկուով պարածածուկ: Տէրը քանի մը քայլ հեռի  
ժայռէն վար սահած էր: Հապա եթէ այս կենդանիները յանկարծ ի-  
րեն վրայ յարձակէի՞ն: Եւ իր առաջին մէկ շարժումին վրայ շատ  
կարելի էր ասիկա: Արդեօ՞ք ասոնք կրնան ըլլալ նաեւ երանելի ողի-  
ները Աքիլլէսի եւ իր հերոսներուն: Արդեօք երանելեաց կղզի՞ մըն  
է ասիկա: Առաջին թռչունը աւելի մօտեցաւ: Ետեւինները այնքան  
երազ հետեւեցան, այնքան անճիկ, որպէս թէ հրաման մը լսեցին,  
զոր միայն իրենք կրնան լսել: Դարձեալ մահահանգոյն քարացած  
անդորրութիւն մը: Արքայազունը նեղուեցաւ: «Բայց ի՞նչ բան կա-  
րելի է: Երբ սա առաջինը, սա — Ո՛չ, կարելի չէ»: Թռչունը ոստոս-  
տեց: Ետեւինները յաջորդեցին: Հիմա մարդ ու թռչուններ իրարու  
աչքի մէջ կը նայէին մօտէն: «Լիկինիանոս դիտէ՞ արդեօք ասիկա,  
ան որ կը հեզնէ ամէն ինչ որ չ'ուտուիր կամ չի խմուիր: Բայց ինչո՞ւ,  
միտքէս անցածը ճշմարիտ չըլլայ: Հոս շատ լուռ, շատ սուրբ է  
մեռեայներու հողիներուն համար, եւ այս թռչունները իրենց ճեր-  
մակ փետուրներով շատ մաքուր եւ դեղեցիկ են: Ոչինչ կը խոռովէ  
հոս զիրենք: Ո՛չ ցաւ կայ հոս, ո՛չ ողբ: Արդարեւ, հո՛ս իսկ է Բրի-  
սանոյշին հողին եւ հոս են բոլոր հողիները, զոր կը սիրէր Աքիլլէս:  
Օ՛, իցիւ հայրիկին ու մայրիկին հողիներն ալ հոս ըլլային: Եւ ես,  
Պոսրովիդուխտ, Բրիսանոյշ եւ Արսինէ գայինք մենք ալ հոս»:

Առաջուն թռչունը վերցուց թեւը եւ մեղմ, անլսելի, կարճ  
խոյանքով մը սահեցաւ փափային ցցուածքին վրայ առկախ անտաշ  
քարերու միջեւ, որուն վրայ կծկտած էր վերը արքայազունը: Ակոա-  
ները կճրտեց, որպէսզի կարենայ անշարժ մնալ, բայց ճիտին վրայ  
զգաց սիրտին տրոփիւնը: Մարդու մէկ քայլափոխ միայն հեռի էր  
թռչունը իրմէն: Միակ հզօր թեւարախումով ամբողջ վոհմակը ե-  
տեւէն խլրտեցաւ առաջ, եւ իշխանագունին վերեւ ամբողջ ապառա-  
ժը, ամէն ինչ սպիտակ ծածկուած, լուսացնցող թռչուններէն:

»Ոգիդ Աքիլլէայ», հեծեծեց իշխանագունը ներսիդիէն: Գողու-  
նի կողմնակի նայուածքով մը լրտեսեց ծովափը, ուր նաւը կը հանդ-  
չէր, շատ հեռուն, առաւօտեան բարակ մշուշէն կարծես հիւսուած,  
հոսանքէն վերուվայր տատանելով: Կապոյտ ծուխ մը կը բարձրա-  
նար խոպոպաւոր սիւնաձեւ, այգածին պող բաց այերքին մէջ: Մոյ-  
կեզերէն վեր, աչնանային փառաւոր օր մը աւետելով: Ի՞նչ պէտք էր  
ընել իշխանը: Բանտարկեալի մը պէս նստած էր հոն: Պարադուլիսը  
ցատկեց առաջ: Ու նորէն առաջ: Տակաւին մէկ ոտնաչափ արքայոր-  
դիէն հեռի: Անգամ մըն ալ աւելի փոքրիկ թիւ մը — թռչունը նստաւ  
արքայազունին աջ ծունկին վրայ եւ խուզարկու կը նայէր աչքերուն

մէջ: Նուիրական սուրբ սարսուռի եւ տաքնապող անսուղութեան  
անանուն զգացում մը զբաւեց զայն: «Դո՛ւն ես Աքիլլէսը», սրպիա-  
ցին իր շրթունքը, եւ զգաց թէ կը սառէր ամբողջ մարմինը: Բայց  
թռչունը մնաց լուռ, գլուխը կը ծռէր մերթ ալ մերթ ձախ, վեր կը  
հանէր մերթ ձախ, մերթ ալ շիկորակ ոտքը պչրուն, որպէս թէ կ'ու-  
ղէր որեւէ ձեւով արքայազունին նշան մը տալ կամ յարգանքի ցոյց  
ընել: «Դուն Աքիլլէ՞ս ես», սրպիաց կրկին հաղիւ շրթունքը բացած:  
Թռչունը յամառեցաւ իր դիրքին մէջ: Իր ետեւէն միւսները ցցուած-  
քին վրայ մինչեւ Տրդատին ոտքերը: «Կրնա՞ս զիս հասկնալ, Աքիլ-  
լէս: Կը ճանչնա՞ս զիս: Գիտե՞ս, ինչ պատահեցաւ ինձի»: Առանց  
դոնէ վայրկեան մը հաշուելու, ինքը աղկիոններո՞ւն թէ Աքիլլէսի  
ողիին հետ կը խօսի, թռչունին փսփսաց կարճ բառերով իր մեծ տա-  
ռապանքը: Ոչ մէկ լսելի ձայն իր շրթունքին վրայ, այլ խորունկ սու-  
ղը դարձեալ դարեցաւ անոր անքուն ցուրտ, առաւօտեան մէզէն թաց  
երեսին վրայ, եւ թաւալուն արցունքներ տաքցուցին անոր այտերը:  
Միշտ թռչունին կ'ողբար վստահարար իր ցաւը, եւ թռչունին կ'ուխ-  
տէր բորբոքած զայրոյթով վրէժ, հետեւիլ ամէն բանի մէջ իր տի-  
պարին Աքիլլէսի, եւ չհանգստանալ մինչեւ որ «լուութեան աշտարա-  
կին» վրայ դրուին իր հայրը սպաննողներուն դիակները եւ ինքն ալ  
Հայաստանի թագաւոր ըլլայ: Գլուխը մէկ կողմ կախած թռչունը  
համակրութեամբ տակէն կը նայէր արքայազունին: Այսպէս թուե-  
ցաւ Տրդատին: Այս պատճառաւ չսոսկաց, երբ աղկիոն իր յանդուգն  
խուզարկողի ճամբորդութեան վերջին քայլը առաւ եւ վերջապէս  
արքայազունին աջ ուսին վրայ թռաւ, Չեւսի մէկ արծիւին պէս Տրդ-  
դատի գլուխին վրայ գահակալեց վեհափառ հանդարտութեամբ:  
Արքայազունին ծունկերուն վրայ թռան մօտակայ թռչունները, միւս-  
ներն ալ մօտեցան, եւ շատ չանցած արքայազունը շրջապատուեցաւ  
ամէն կողմերէն: Ոտքեր, սրունքներ, ձեռքեր, թեւեր, ուսեր, ամ-  
բողջ մարմինը ձիւնասպիտակ փետուրներէ ծածկուած, որոնք ար-  
շալոյսին դէմ կը կայծկլտէին, երբ ան — արշալոյսը — արեւելա-  
կողմէն կ'ոստնուր հրակերպ բոցատարր տիտանական զնդակի մը  
պէս, եւ ցոլք ցոլք ծովը կը խաղցնէր աղամանդէ վիթխարի դաշտի  
մը պէս: Արքայազունին վրայ այնպիսի տարրական նոր կեանքի ու-  
րախութիւն մը եկաւ, եւ իր սառած մարմինը թափով տաքցնող ա-  
րեւուն ճառագայթներուն հետ այնպիսի արամազրութիւն մը եւ կո-  
րով մը հոսեցաւ իրեն մէջ, որուն նմանը դեռ ինք չէր անգրած: Թանր  
երազէ մը արթնցածի պէս արեւածագին եւ հորիզոնին վերեւ գոյնե-  
րուն ցարդ անզուգական փառքին վսեմ խաղարկութիւններէն հմայ-  
ուած, ան կը նայէր Եւքսինեան Պոնտոսի վրայ, միտքովը կը փնտռէր  
այն ուղղութիւնը, ո՞ւր կը գտնուէր արքայական հայրենիքը: Այ-

ցունքներու հեղեղ մը սաստկապէս կը հոսէր աչքերէն: Վեր ցատկեց, իրեն վրայ դարած թռչունները բոլորովին մոռնալով, եւ իր արդէն իսկ առնականութեան ապացուցուած ծայր կը թնդար լուռութեան մէջէն, պատառուածքներու եւ պատերուն մէջ կ'արձակուէր կրկնա-ծայն արձագանգով, «Յանուն քու ճառագայթող լոյսին, Ո՛վ Միհր, — յանուն քու ոգիիդ, ով Աքիլլէս», եւ քու հերոսամարտիկ ընկեր-ներուդ, յանուն քու ոգիիդ, հայր, կ'երդնում — վրէ՛ժ, վրէ՛ժ, վրէ՛ժ»: Փապարներէ եւ յափափաներէն յետադարձող պատասխանը կուգար, — վրէ՛ժ, վրէ՛ժ, վրէ՛ժ: Արքայազունը խելայելի պէս: Միտքէն իսկ չէր անցըներ արձագանդին վրայ խորհիլ: «Ողիդ Աքիլ-լեայ, ողիդ Աքիլլեայ», կը գոռար ան բովանդակ կորովովը մարմի-նին: Գարծես ի հաստատութիւն որոտադոչ կը դառնային կրկին իր սեփական բառերը: Թռչունները երկար ատեն տաղնապով կը ծփային իր բորբոսիքը, անոր ծայնէն սարսափահար, անոր սաստիկ շարժում-ներէն կասկածող: Բարձրաթռիչ թաւալելով ու շառաչելով, տարմո-վին կ'ակմբէին անոր շուրջ: Ծովափէն կը խուժէին շփոթներու գոռ դարկուածները դէպի կղզին լերան ընդերքներուն մէջ ահնկէց ծայնարկութեամբ: Ալ աւելի կասկածոտ, կը պտուտքէին աղկիոն-ները թեւարախ ու յողնահառաչ, ճերմակ ամպերով ծածանելով ա-նոր շուրջ: Մեծանուն հերոսին ոգին իրեն վրայ եկած էր: Այս ան-մոռանալի առաւօտը թաղադրութիւն մըն էր իրեն համար: Երբ, ուրուրներէն շրջապատուած, իր կայծկլտուն նիզակովը վար կ'իջ-նէր եւ կը վաղէր դիմաւորելու իշխանը, Լիկինիանոսն ու սպաները, ուրախութենէն ու արիութենէն կը ճառագայթէր դէմքը: Կորովա-ձիգ կը ճօճէր նիզակը, ինչպէս ըրած էր Աքիլլէս, ու երբ իշխանը մտերմօրէն հարցուց իրեն, թէ Աքիլլէսը տեսա՞ծ էր — բոցավառե-ցան իր արծիւի աչքերը եւ սա հրձիգ պատասխանը ամէնուն համար անմոռանալի մնաց. «Ի՛նչ կ'ուզէք ըսէք: Հոս կ'ապրի Աքիլլէսի ո-ղին»: Ընկերացողներէն ոչ մին բառ մը ըսաւ, երբ Տրդատ ինքզինքը նետեց անտաչ, ժանգոտած քարերով անծածուկ տաճարը, դարերու հնութենէն անճանաչելի դարձած նուիրումի ընծաներու մէջտեղ, երկրպագեց, իր սրտեռանդն աղօթքն ու ուխտը մատուցանելով իր հերոսին:

Ու ապա խոր լուռութեամբ ահա կը նահէր նաւը լուսափաղփ ծո-վուն վրայէն: Յոռուկին վանդակին վրայ Հայոց արքայորդին ահա կեցեր է թռնդ սպառազէն, հանդրէճ, ամփոփ, կոկ ու կոփ: Քամին, սիւզահանդոյն, կը փչէ, դողցես չչելով զարգամանակին մէջ, եւ սա-ղաւարտին ներքեւ առատարուի յորդած դանդուրներուն հետ կը խա-ղայ, կարմիր կը շպարէ այտերը եւ կ'ողբուրէ քնատ զգայարանքը Տրդատին: Անխօս կը նայի ետին դէպի կղզին, մինչեւ որ ան վեր-

Չապէս անհետ կ'ըլլայ իբրեւ ճերմակ բիծ մը շլացիկ արեւուն այգա-ցող շողին մէջ, եւ այլեւս ոչ մէկ թռչուն կը ճանչցուէր այերքին մէջ: Նաւը կ'երթայ ուղիղ ճամբայ ետ դէպի Աթէնք, Արքայազունը կը մրափէր եւ արթնցաւ այն ատեն երբ նաւը, Չահաւորուած եւ ճրապալոյց, կը մտնէր Աստակոսի ծովածոցին — Նիկոմիդիոյ ծոցը — նաւահանդիստը, ուր դեռ աղօտալոյս չըջաղիծերով քաղաք մը կը ճանչցուէր: — Նիկոմիդիա: Որչափ շատ, որքան անհամբեր որ կրցաւ հարցնել արքայազունը, թէ ինչո՞ւ հոս ցամաք կ'ելլեն, հոս ի՛նչ ունին ընելիք, ընկերացողներու վերապահումին պատճառաւ ոչ մէկ տեղեկութիւն ստացաւ: Մեծ անակնկալ մը կար յառաջիկային: Այս սպասումով ամէնքը պացին ճոխ ճաշին, ուչ ատեն պիչերը, նա-ւուն մէջ, եւ ապա անկողին:

ԳԼՈՒԽ Ժ.

## ԴԻՈՎՂԵՏԻԱՆՈՍ ԻՆՔՆԱԿԱԼ

Յաջորդ առաւօտ արդէն իշխանները հայր, որդի արքայազուներ եւ սպաները, բացառիկ հոգածութեամբ յարդարուած եւ հանդերձուած, դէպի քաղաք ճամբուն վրայ էին, եւ տակաւին արքայազունը չէր դիտեր, թէ ինչ պիտի ըլլայ յառաջիկային: Զուարճալի խօսակցութեան նիւթ մըն էր բոլոր միւսներուն համար, թէ ինչպէս հայ իշխանազունը, երբեմն փաղաքշանքով, երբեմն աղաչանքով, երբեմն ալ հետևորդներէն այսինչին կամ այնինչին կողմէ իբր թէ խիստ հրամաններ բերելով, կը կարծէր թէ պիտի կրնայ թափանցել դաղտնիքին: Ոչ ոք մէջտեղ կը հանէր զաղտնիքը: Առաջուց վազած էր զինուոր մը, որ արդէն առտուն կանուխ ճամբան փնտռած եւ լուր բերած էր բուն իրենց երթալիք վայրին վրայ: Եւ ինք առաջնորդեց զանոնք քաղաքին մէջէն, զարմացկոտ մարդոց շարքերուն մէջէն, քաղաքին միւս ծայրը հաստատուած հռոմէական բանակատեղին: Նոյնիսկ այդ կեդրոնին զինուորները թողուցին ամէն աշխատութիւն, կարգ կարգ իրարու մօտ եկան եւ զարմացումով կը նայէին օտարազգի հիւրերուն: Տրդատ կը տեսնէր, թէ ինչպէս ամէնուն աչքը իրեն վրայ էր: Բայց վարժուած էր: Բաւական հետուէն կը ճանչցուէր արդէն ճերմակ հունձքի արտերով զոզցես հիւսուածոյ հրամանատարին մեծ վրանը, որուն վրայ կը ծածանէին հռոմէական արծիւներով դրօշները: Երբ հիւրերը մոտեցին մօտեցան, զինուորներուն կողմէ ներսէն վեր առնուեցան լայն վարագոյրները, եւ վրանէն երկու հոգի դիմաւորեցին զիրենք. այդ երկու հոգին կերպարանքով ու տարիքով շատ կը նմանէին իրարու: Հրամանատարութեան յատուկ համազգեստ կը կրէին: Մէկը կռնակին վրայէն ուսերուն վրայ ձգած



էր մութ կարմիր ծիրանիէ վերարկուն, ձիւնասպիտակ կակուղ բուր-  
դէ ժապաւինուած: Զրահապատ համազգեստին լանջքին կողմին վը-  
րայ արծիւը, ալ ձեռքը մականը. նոյն ինք ինքնակալ Դիոկղետիանոս  
եւ իր բարեկամը Մաքսիմիանոս: Ողջունումը ըստ ամենայնի զին-  
ւորական էր, սակայն մտերմական: Կայսեր նշաններէն դուրս ոչ մէկ  
բան կրնար մատնել անոր բարձր զիրքը: Վրանը ներսէն պարզ, ան-  
զարդ, ըլլայ ճաշարանը, ըլլայ ննջարանը: Կոշտ փայտէ սեղաններ,  
զինկէ սպասներ, սովորական շատ պարզ սիւններէ ու տախտակներէ  
անկողիններ կամ կազմածներ, կարծր, եւ ծածկուած մորթերով ու  
զինուորի չին վերարկուներով: Արքայազուներ կատակերգական ասպ-  
շուքեամբ նստաւ սեղանի անտաշ նստարանի մը վրայ, առանց ձայն  
հանելու կերաւ զինուորական ուժով ասպուրը եւ շատ պարզ կերա-  
հուրը փայտէ պտուիի մը մէջէն եւ խմեց ծռած ծոմոսով զինկէ ըմ-  
պանակէ մը: Գաւաթին կամ զգալին վրայէն միշտ զոգունի նայուածք  
մը կը նետէր դէպի ինքնակալը, զայն կը նմանցնէր իր ասպնջական  
իշխանին, Լիկինիանոսին, եւ շատ շանցած հասկցաւ որ զիտուութեան,  
դաստիարակութեան, քաղաքավարական սովորութիւններու եւ կեն-  
ցազովարութեան տեսակէտով Լիկինիոս իշխանը եւ իր ամբողջ հե-  
տեւորները նոր կայսրէն շատ աւելի բարձր էին: Տրդատ զիտած էր  
նաեւ, թէ ինչպէս Լիկինիանոսի աչքերն ալ կայսեր ուղղուած էին, եւ  
առանց յայտնի ընելու — ինչպէս կը կարծէր — արհամարհանքի,  
մինչեւ իսկ ծաղրանքի արտայայտութիւն մը կը ստանային: Տրդա-  
տին ալ կողմը Կոստանդիանոս, Կոստանդին Քլօրոսի եւ մօրը Հե-  
զինէի որդին, պատանի մը ճիշտ Տրդատին պատկերը տարիքով,  
կերպարանքով, ուժով: Զախ կողմը, լուռ ու մունջ եւ բթամիտ,  
Մաքսենտիոս, Մաքսիմիանոսի որդին, որ շարունակ ուտելով, միեւ-  
նոյն ատեն տակէն ու քովէն Տրդատը կը դիտէր: Ծաշէն ետք հայր  
եւ որդի, Լիկինիոս եւ Լիկինիանոս, մինակ մնացին ինքնակալին եւ  
Մաքսիմիանոսին հետ: Խօսքի նիւթն էր կայսրութեան կացութիւնը:  
Բազօտները ջարդուփշուր եղած են: Լիկինիանոս Գաղիացիներուն  
դէմ արշաւանքին պետը պիտի ըլլար, Մաքսիմիանոսն ալ Բազօտնե-  
րուն գործը բոլորովին պիտի լմնցնէր, իսկ ինք Դիոկղետիանոս,  
մտադիր էր Սարակինոսներուն դէմ քայլել, Պարսիկները ալ աւելի ետ  
քշել, յետոյ Եգիպտոսի կողմը դարձնել ուժը, եւ Աղեքսանդրիոյ  
մէջ պաշարել բռնադրաւիչ Աքիլէոսը: Ահաւոր վրէժ կ'ուզէր լու-  
ծել: Այդ ուխտը ըրած միջոցին ինքնակալին պայծառ կապոյտ աչքե-  
րէն կրակ կը տեղային այնքան սպառնական, նուրբ, ճերմակ մորթով  
գեղեցիկ դէմքը այնպիսի վեհութիւն մը կ'առնէր, բարձր բայց աւե-  
լի նրբաւարտ կերպարանքը այնպիսի արքեանի կեցուածք մը կ'ուսնե-  
նար, որ Լիկինիանոս յակամայս կը զգար տեսակ մը պատկառանք

եւ յարգանք: Դէպի ետեւ նետած խորխտ գլուխը երբեմն դարձեալ  
դէպ առաջ կը խոնարհէր կախ, եւ ահա, ասով, կայսրը կը ստանար  
սովորական հաճելի զիրքը, որ պարանոցին ու գլուխին թեթեւ կըռու-  
մով — մազերը քիչ մը կանուխ ճերմկած, եւ բաց խարտեալ կարճ  
մօրուքով կայսերական ամբողջ անձնաւորութեան կուտար վայելուչ,  
մտախոհ, հոգատար, հայրական հանդամանք մը: Այս տպաւորու-  
թիւնը աւելի շեշտուեցաւ արդարեւ բարի նայուածքովը խորասոյզ  
աչքերուն, որոնք կը հովանաւորուէին կոպերով եւ երկայն նուրբ  
թարթիչներով: Ինքնակալը խուզարկու, նոյնիսկ դարանակալ կարող  
էր նայիլ ուրիշներուն աչքերուն մէջ: Խօսակցութեան միջոցին կար-  
զը եկաւ խօսիլ ժողովուրդներուն դաստիարակութեան, արուեստին,  
հոգեկան եւ մտաւոր տրամադրութեան, բարօրութեան եւ խաղաղու-  
թեան մասին, երբ կայսեր զեղեցիկ, հեռանկատ, ծաւի աչքերը  
կրնային լայնօրէն բացուիլ եւ ստանալ տաքուկ շող: Բարեացակա-  
մութիւն եւ բարեսրտութիւն կը խօսէին այդ աչքերէն աներկայօրէն  
եւ լման նայուածքին մէջ կը դարէր երազի պէս բան մը, կարծես  
ապագայ հեռուոր պատկեր մը, որ զինքը արդէն իսկ ուրախութեամբ  
կը տողորէր: Ապագայի այս պատկերին կը վերաբերէին տարրական  
եւ բարձրագոյն զպրօցներ, գեղարուեստի եւ զիտութեան ակադեմի-  
աներ, մատենադարաններ, քաղանիքներ, մինչեւ հիմակուաններէն  
չքեղ, կրկեսներ, թատրոններ, հոյակապ պարտէզներ, ամէնուն առ-  
ջեւ բաց ու ձրի, ճաշասրահներ, մեհեաններ, մեհեաններ, շատ, շատ  
մեհեաններ. աստուածավախ սերունդ մը դարձեալ պէտք է մէջտեղ  
բերել: Պէտք է կրկին ուայ այնպիսի ժամանակ մը, ուր հանգչին  
ղէնքերը, արտաքին պատերազմներուն ծայրը եկած ըլլալով, խռո-  
վարարները պատժուին, վերջապէս նորէն գայ «Ոսկեղար»: Լոյսին  
աստուածը երթալով հիմա կը տկարանայ: Երջանիկ պէտք է ըլլան  
ժողովուրդները, իմ կայսրութեան ժողովուրդները, ես կ'ուզեմ կոշ-  
ուիլ «Հայր Մարդկային Սեռին»: Իրաւունք եւ արդարութիւն պէտք  
է տիրեն իմ օրով: Այսպէս ահա պայծառօրէն կ'երեւար ինքնակալին  
միտքին առջեւ, եւ հիմա կը խօսէր լուսաշող աչքերով երկարօրէն  
հայր Լիկինիոսի, որ միշտ կայսեր վստահութիւնը կը գրաւէր, եւ  
որուն հիմա դարձեալ կը հաղորդէ արժէքաւոր տեղեկութիւններ  
Յունաստանի եւ Հռոմի քաղաքական պարագաներուն վերաբերմամբ:  
Մաքսիմիանոս եւ Լիկինիանոս միասին կը խորհրդակցէին Բազօտ-  
ներուն եւ Գաղիացիներուն արշաւանքին համար, եւ Լիկինիանոս  
կ'իմանար, թէ Գաղիոս Դիոկղետիանոսի քեռորդին հիմա դեռ  
Պարսկաստանի մէջ կը զբաղի հռոմէական երկրամասին պաշտպա-  
նութեամբ, եւ երբեմն ալ կը խորհի Լիկինիանոսի այցելել եւ անոր  
հիւր ըլլալ: Բայց երեքն ալ զլիսաւորաբար ուշադիր էին ամենամեծ

Հետաքրքրութեամբ Լիկինիոսի պատմութեան ի մասին Պոստոլի մահուան, արքայազունին զարդացումին, անոր կեանքին եւ ձգտումներուն, եւ քանիցս վրանը կը թնդար հոն դաժնուողներուն քրքիջնէն: Դիոկղետիանոս կը պատմէր, ի մէջ այլոց, ի մեծ զարմացումն Լիկինիոս իշխանին, թէ քիչ ժամանակ առաջ Պարսից պարտութենէն կինիոս իշխանին, թէ քիչ ժամանակ առաջ Պարսից պարտութենէն վերջ, հայ սպայ մը եկեր է, եւ Կարոս կայսեր եւ ամբողջ սպայակոյտին բերեր է Պոստոլի սպանութեան սարսափելի լուրը եւ միեւնոյն ատեն մահամերձ թագաւորին հրամանով իրենց ճշտիւ նկարագրեր է, թէ ուր պահուած են թագաւորին դանձերը, եւ զաղտնի դղեակին բանային ալ անոնց տուեր է: Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս չկրցան պէտք եղած կերպով տալ այդ տեղեկարբ մարդուն արտաքին կերպարանքին զիծերը ճշտիւ, միայն ըսին թէ ամուր, հուսկաւ, յոյր մէկն էր, յիսուսի դացող տարիք մը, աչքի զարնող սուր զիմպիծեր, արծուուունգն, կանանչ աչքերով, խարտեաչ մօրուքով եւ պիտով, այսչափը դեռ կը յիշեն: Լիկինիանոս կայսեր ներկայացուց արքայազունին ջերմ փափաքը կարելի եղածին շափանդանով հօրը թագաւորութիւնը, բայց երկուքն ալ, թէ՛ Մաքսիմիանոս եւ թէ՛ Ինքնակալը, միաժամանակ ձայնով մը մերժեցին այդ փափաքը իբրեւ անկարելիութիւն: Նկարագրեցին Արեւելքի կացութիւնը, ցեղային սոսկալի կոիւնները, դժտութիւնները եւ ջարդերը Պոստոլի եւ Անակի տունին միջեւ, եւ պարսիկներուն անջարդերը: Դիոկղետիանոս տարիներ կը հաշուէր, մինչեւ որ անդորրութիւն եւ կարգ կանոն տիրէ երկրին մէջ: Միայն, ամէն պարագայի մէջ, պիտի խորհին թէ կարելի չէ՞ արդեօք ժամանակ անցնել վերջ, Տրդատը իբրեւ սպայ գործածել Հայաստանը Պարսիկներէն գրաւելու համար երթալիք հոռոմէական բանակին մէջ: Հայ արքայորդին կրկին առարկայ եղաւ խօսակցութեան, եւ վերջապէս երկու հրամանատարները փափաք յայտնեցին փորձով տեսնել անոր ոյժը, ճարպիկութիւնը, անոր սրամտութիւններն ու կատակները, որոնց մասին այնքան գովեստով եւ լիաշուք խօսած էր Լիկինիոս: Վրանին առջեւ գացին եւ նայեցան հեռուն՝ բանակատեղիին վրայ, այսինքն հոռոմէական բանակումին վրայ: Պահակներէն եւ միւս զինուորներէն, որոնց առջեւէն անցած էին իշխանները, իմացան թէ Տրդատ, Մաքսիմիանոս եւ Կոստանդիանոս պտոյտի ելած էին դէպի ծովափը: Ծառէն քիչ վերջը հոն հասնելով ժամանակ անցուցեր են թիավարելով եւ լողալով եւ այդ երկու մարդին մէջ ալ Տրդատ իր ուժովը եւ ճարպիկութեամբը առաջին հանդիսացեր է, ամէն պարագայի մէջ ցամաք ելեր է իբրեւ յաղթական, խիստ յոգնած, ինչ որ ըսել է թէ յաղթութիւնը դիւրաւ չէ գրաւած: Արդարեւ, այն երեք փառաւոր մարմինները դիտողը չէր կրնար դիւրաւ ըսել թէ ո՞վ է

ամէնէն զօրաւորը: Երեք երիտասարդները կշիռքով ու լայնութեամբ իրարու կը նմանէին աչքի զարնելու աստիճան: Բայց մրցումին մէջ քիչ ատենէն յայտնի եղաւ Տրդատին դերադանց ուժը: Մերկ կը մըրցէին, նախ Մաքսիմիանոս եւ Կոստանդիանոս: Վերջինը դժուարաւ յաղթական մնաց: Տրդատ շատ աւելի դիւրաւ յաղթեց Մաքսիմիանոսին, որ գտեմարտիկ կոիւնի մէջ աւաղին վրայ թաւաղոր պարտընցաւ, բայց սուեղ անուպայ ծիծաղներով, անիմաստ ու թշնամական սրամտութիւններով — հակառակ իր յաղթուելուն — մատնած եղաւ թէ ինչ ուղի դաւակ է, ինչ խմոր է շինուած է: Տրդատ ալ խնդաց, բայց իրաւունքով: Ամէնէն պտոյտիկը Կոստանդիանոս կը կարմրէր, կ'ամչնար եւ չէր խօսեր: Ասոր ուժէն եւ բուռն կորովէն աւելի, որով ան միշտ նոր յարձակումներով եւ տոկուն մրցումով Տրդատին Լուսէն ինկած էր — Տրդատ կը զարմանար կոիւնի միջոցին Կոստանդիանոսին բարոյական լրջութեան վրայ, որ կնամարդի ոչինչ ունէր, այլ իր պատանեկան թարմ ուժով, իր յաղթելու սաստիկ կամքով, իր լռակեաց եւ խուղարկու նկարագրով, անմոռանալի տպաւորութիւն կը գործէր Տրդատի վրայ: Ասկից զատ Կոստանդիանոսի ձուլածեւ համարձակ դէմքը յանդիսորէն ցցուած ծնօտով, խելք եւ սրամտութիւն յայտնող երգիծական բերանով: Հուսկու, պինդ, աղեղնաձեւ քիթը կ'աւելցնէր ապագայ տիրապետող բնութեան մը տպաւորութիւնը: Ոռչոր, մեծարաց, յառաջակարկառ աչքերը սրաթափանց, որպէս թէ կ'ուզէին մէկ ակնարկով ամբողջ աշխարհը պարփակել եւ որպէս թէ չէին կրնար յագնալ միջօրէի շողիւնին մէջ հանգստացող ծովուն լայնածիր շեղութիւնը դիտելով, վերեւը կապուտակ երկինքը, եւ Մարմարայի ծովափունքի շուրջ ճերմակ դիւղերն ու ամարանոցները: Տրդատ յաղթած էր: Երկուքն ալ աւաղին մէջ նետուեցան հինինալով եւ կը սպասէին շնչել հանդարտօրէն: Յետոյ ամէնքն ալ հագուեցան եւ նստան բուրդէ վերարկուներու մէջ ծածկուած: Ուսերուն վրայ ալ զինուորական դառատօղբ, ծունկերը ամփոփ, ձեռքերը խաչածեւ, եւ կը հանգչէին: Տրդատ եւ Կոստանդիանոս սկսան շուտով իրարու աւելի մօտենալ եւ հարցումներ ուղղել իրենց ծագումին եւ հայրենիքին, ուսուցիչներու եւ կրթութեան մասին: Իրարու բանդիտութիւն կը ծախէին, եւ շատ չանցած յայտնի ըրին տիրապետելու իրենց ցանկութիւնը: Տրդատ իբրեւ արքայորդի եւ վաւերական դահաժառանգ Հայաստանի կը ճանչցուէր երկուքին կողմէ անընդգիծակ: Կոստանդիանոս կը պարծէր հայր ունենալուն համար նշանաւոր Դարգանիոսի «Հարաւային Սերպիա» մը Եւտրոպիոսի գաւակը Փլարիանոս Վալերիոս Կոստանդիոս Քլորոսը, եւ մօր կողմէ ալ Կղաւզիոս Գոթիկոս կայսրէն սերած ըլլալուն համար, որուն քեռորդին ալ իր մայրը Հեղինէն էր: Կոստանդիանոս գիտէր թէ

ժօտալուտ ժամանակի մը մէջ իր հայրը Անդրիա պիտի փոխադրուի խոտվարար Կարաւստիոսը զսպելու եւ ընկճելու: Որքան կը փափաքէր հօրը ընկերանալ: Վերջապէս Մաքսէնտիոս ալ եկաւ խումբին խառնընկացաւ եւ պատմեց, թէ իր հայրը Մաքսիմիանոս Դիոկղետիանոսի հետ միեւնոյն օրը ծնած է: Երկուքն ալ իբրեւ սերունդ իշխանական գերդաստանի, բնիկ Դաղմատիայէն, Դիոկղէա քաղաքէն, իր հայրը Մաքսիմիանոս բնիկ Սիրմիոմէն: Երկուքն ալ իրենց հասակակից Մաքսիմիանոսի սկսեալ գիտէին, թէ իրենք մեծ մարդիկ եւ ինքնամանկութենէն սկսեալ գիտէին, թէ իրենք մեծ մարդիկ եւ ինքնակալներ պիտի ըլլային, հայրն ալ պիտի ըլլայ ինքնակալ, ինքն ալ: — «Դո՞ւն», պոչեցին Տրդատ եւ Կոստանդիանոս իբրեւ միարեան: «Ո՞վ ըսաւ ատիկա քեզի»: — «Հայրս կայսր պիտի ըլլայ, ես ալ կայսր պիտի ըլլամ», կրկնեց Մաքսէնտիոս վճռաբար: Յետոյ հանդարտ կեցաւ միւս երկուքին առջեւ, եւ չափեց զանոնք իր զնգածեւ խոշոր, անընտել աչքերուն խայթող սեւ բիրբերուն դարանակալ, չար նայուածքներով: Այս մարդուն արտաքին երեւոյթը արդէն անհրապօյր էր Տրդատին եւ Կոստանդիանոսի համար: Դուրս ցցուած վարի շրթունքը իր պղտիկ բերանին կուտային քրթմնջող, անհամբօյր, շուշայտ, խեղ բան մը: Կարճ ծնօտը երեսէն հեռի անամօթ կը կենար: Ատելի էր պարզապէս ճշուած տափակ քիթը: Խոշոր ականջները տեւեւներու պէս գլուխէն հեռի կը կենային: Լայն, ոսկրուտ, ցած ճակատին վերեւ կը կախուէին ծոպածեւ կարճ մազեր, աւելցնելով այդ մարդուն անհրապօյր տպաւորութիւնը, որ հակառակ իր շքեղ համազգեստին եւ զրահապատումին բարբարոսի մը, բռնական արարքներու եւ ամէն տեսակ դէշ գործերու կարող մարդու մը տպաւորութիւնը կ'ընէր: Իր ամբողջական տղիտութիւնը անկարող կ'ընէր զինքը որեւէ խօսակցութեան մասնակցելու, որ քիչ շատ դաստիարակութիւն կը պահանջէր: Անպղայ եւ անտարբեր, ան պաղած սպուրի պէս կը նայէր ամայութեան մէջ, կամ կը ջանար շարունակ իրր թէ սրամիտ կատակներով եւ շատ հասարակ տեսակէն խօսքերով խօսակցութիւնը իրեն վրայ բերել կամ թելը ձեռք առնել: Ասով զինուորներու մէջ մեծ յաջողութիւն ունեցած էր: Այս պատճառաւ նաեւ պարգեւներու, պատիժներու ներումի, խմիչքի նուէր դրամ տալու միջոցներով, նաեւ անոնց հետ մտերմական վարմունքով կրցած էր բանակին մէջ շատ կուսակիցներ ճարել իրեն: Ու եթէ զինով զինուորները ուզէին զինով սպային «կեցցէ» ըսել եւ յատկապէս փառաւորել զայն, կը պոռային կատակելով: «Կեցցէ ինքնակալ Մաքսէնտիոս»:

Տրդատի եւ Կոստանդիանոսի առջեւ կեցած էր հիմա, եւ կատաղաբար աչքերը բացած կը նայէր երբեմն մէկուն, երբեմն միւսին ոտքին կոխելով, շփոթութենէն ինչ ընելը չգիտնալով: Ինչո՞ւ համար անոր չափ պիտի չկրնար ինք ալ կայսր ըլլալ: Ասիկա կ'ուզէր

գիտնալ: — Կայսր մը պէտք է կարդալ գրել գիտնայ: — Գիտէր, կը յաւակնէր Մաքսէնտիոս: Բայց Կոստանդիանոս կը յայտնէր թէ Մաքսէնտիոս հազիւ հազ շիտիկ շիտակ կրնայ կարդալ կայսերական հրամանադիր մը: Նաեւ Մաքսէնտիոս դիպուածաւ միայն կրնար դիտցած ըլլալ թէ հոռմէական պետութեան պատկանած զանազան երկիրներ եւ զաւաններ ո՛ւր կը գտնուին: Երբ այսպէս Մաքսէնտիոս իր տղիտութեան պատիժը կը կրէր, միւս կողմէն Կոստանդիանոս սկսաւ, Տրդատէն ալ ոյժ գտնելով, մէջտեղ հանել Մաքսէնտիոսի դէմքին տղեղութիւնը: Ոչ մէկ մասը մոռցուեցաւ, եւ ամբողջովին մէջտեղ զրին անոր դէմքին դործած տպաւորութիւնը անասնական կոշտութեան եւ բթամտութեան իբրեւ յայտարար: Մաքսէնտիոս կրակ կտրեցաւ: Տրդատ եւ Կոստանդիանոս խայթիչ եւ հանճարեղ խօսքերով իրարու հետ կը մրցէին իրենց դժբախտ զոհին դէմ, որ հակառակ իր մարմնեղ բոլոր ուժին անկարող կը մնար հաւասար ուժով սակայն խելքով շատ աւելի օժտուած այդ երկուքին դէմ, որոնք կը շարժարէին զինքը: Ասիկա կը տեսնէր ինքը, որչափ ատեն որ կըրցաւ զսպել կատաղութիւնը: Բայց երբ Կոստանդիանոս անոր դէմքի տղեղութենէն, տղիտութենէն, ձեռքերուն կոշտութենէն եւ անոր կենցաղավարութեան բոլոր անոպայ ձեւերէն փորձեց ասպցուցանել, թէ ինք ու իր հայրը, ինչպէս նաեւ նոր կայսրը կը սերէին ստորին վիճակէ, այսինքն — եղնարածներու սերունդ էին, այլեւս սպառեցաւ Մաքսէնտիոսի համբերութիւնը, եւ մութ կարմիր բոց մը ծածկեց անոր դէմքը: Իր սեւ գունդ աչքերէն եղեռնական ատելութեան բոցը կը վառէր: Բայց չէր համարձակեր Կոստանդիանոսի վրայ յարձակիլ: Տրդատ անոր կողմն էր, ուստի կը ճարակէր իր կատաղութիւնը:

«Բայց, ըսէ, ուրեմն, Մաքսէնտիոս, դուն տակառագործդ ի՞նչպէս եղաւ որ ինքնակալ ըլլալու վրայ մտածեցիր»: — «Դու չակական նշաններու վրայ», պատասխանեց Մաքսէնտիոս Կոստանդիանոսին: «Ի՞նչ տեսակ»: — «Բոլոր հարցումներուս հաստատականութիւնը»: — «Թո՛ղիներու թո՛ղիքէն»: — «Հազար անգամ»: — «Աղիքներէ՞ն»: — «Անթիւ անհամար անգամներ: Եւ միայն կենդանիներունը չնայեցայ», ինդաց Մաքսէնտիոս կոշտօրէն եւ հեշտութեամբ: «Հապա ուրիշ ի՞նչ: Ուրիշ ի՞նչ աղիքներու կամ ընդերքներու վրայ նշաններ տեսար թէ ինքնակալ պիտի ըլլաս», հարցուցին միւս երկուքը, իրար անցած ձեռով: Մաքսէնտիոս դոչեց հեղուութեամբ. «Ես ձեր չգիտցածը գիտեմ, հէ՞»: Եւ անոր տղեղ դէմքին վրայ կը սահէր չարամիտ ուրախութիւն մը եւ դիւական ծիծաղ մը դեռ գոց մնացած դաղանիքի մը մասին, որ այնքան բարի ալ չէր թուեր: Խիստ մը սեղմեց իր պոկօշ շրթունքը: Բայց իր հակառակորդները աւելի խորա-



առանց յապաղելու քնացած էր իր անկողինին մէջ: Բայց Լիկինիոս տեսակցութեան ընթացքին, ինչպէս եղաւ, խօսքը բերաւ հոռոմայեցի քերթողներուն եւ իմաստասէրներուն մասին, եւ զարմանքով տեսաւ որ Դիոկղետիանոս ամէն բանի հմուտ էր եւ նրբին կերպով կր գատէր զրական եւ իմաստասիրական հարցեր: Կը պատմէր իր ամենօրեայ ընթերցումներուն մասին, զոց հատուածներ կ'արտասանէր Ուլիդիոսէն, Վիրգիլիոսէն, Որազիոսէն եւ անգամ մըն ալ խօսեցաւ լուսափայլ դէմքով ապաղային իր բանալիք զպրոցներուն եւ համալսարաններուն նկատմամբ: Յետոյ խօսեցան կրօնքի վրայ: Լիկինիոս խոստովանեցաւ թէ ինք աղատախոս մըն է, իր կրօնքը իր փիլիսոփայութիւնն է, Ջենոն, Պղատոն, Սենեկա, Մարկոս Աւրելիոս, Եպիկտետոս: Դիոկղետիանոս բոլոր ասոնց ծանօթ էր: Անմոռանալի մնաց Լիկինիոսի համար, թէ ինքնակալը ինչպէս իրեն խոստովանեցաւ որ բոլոր այդ իմաստունները զինքը մէջտեղ ձգած են, այսինքն անոնց հետեւելով չանդերձ տեսած է թէ իրենցմով միայն զործ չի լմննար: Ոչ մէկ ճակատամարտի մէջ զող ելած է, պատերազմի դաշտին վրայ ոչ մէկ մահէ սոսկացած է, այն պատճառաւ միայն որ ժամանակ չէ ունեցած մահուան վրայ մտածելու: Եւ սակայն երբ ժամանակ ունեցած է մահուան վրայ մտածելու, վախցեր է անկէջ: Շարունակ դիշեր ցերեկ կը վախնար ուղիներէ, դեւերէ, թռչուններէ, փոթորիկէ, իր սպաներէն, Մաքսիմիանոսէն, իր բարեկամ Գաղերիոսէն, իր զարմիրներէն — նոյնիսկ ինքիւրմէ կը վախնար, եւ ասիկա զուտ արգիւնք է մտածելուն, միտքին զործունէութեան, իմաստասիրութեան, դիտութեան, որը որ կ'ուզէք, հաւաստեց Դիոկղետիանոս: Պէտք կը զգայ այս տեսակ անձկութիւններէ, տապալաններէ փրկուելու: Այս պատճառաւ Միհրի հաւատացող զարձաւ եւ Միհրի խորհրդաւորութիւններուն մէջ հանդիստ կը գտնէ: Լիկինիոսի միտքը ինկաւ Ապէլի (վարադին) մահ: Սպաննուած էր: Գաղխացի վհուկը շիտակ մարգարէացած էր: Դիոկղետիանոս կայսր եղաւ: Լիկինիոս անոր առջեւ նստած, կը նայէր անոր զեղեցիկ, հանճարեղ, աղնուական դէմքին, կը նայէր անոր հաստ, բայց աղուոր ձեռքերուն: «Ախ, սա ձեռքերը օր մը պիտի մեռնին», կը հառաչէր Լիկինիոս ինքն իրեն, «Սեղծ Դիոկղետիանոս, դուն ինչ պէտք ունիս վախնալու»: Լիկինիոս շատ կը փափաքէր զիտնալ թէ քրիստոնէութեան մասին կայսրը ինչ կը մտածէ, ուստի հարցուց իր կարծիքը: Երկար ատեն բան մը չըսաւ, միայն տխրազին կը նայէր հոս ու հոն տարուբեր, թեթեւ անշարժ մոմի լոյսին որ իրենց երկուքին մէջտեղը կը գտնուէր: Բանակատեղիէն այլեւս ոչ մէկ ձայն: Դիոկղետիանոս արմուկը սեղանին կրթնուցուց եւ գլուխը ձեռքին մէջ դրաւ: Դիմագիծերը գունատեցան, գրեթէ տխուր: Երկար խորհրդածութենէն վերջ պատասխանեց,

«Քրիստոնէից Աստուծմէն, Քրիստոսէն ալ կը վախնամ: Արդէն կ'ըսեն թէ ան կ'ապրի, իբրեւ ողի իրենց մօտն է, կուզայ նորէն, պիտի դայ շատ չանցած իբրեւ երկինքի դատաւոր ամպերու վրայ, Լիկինիոս, իրաւ սարսափելի բան պիտի ըլլայ, ամպերէն դէպի վար, եւ երկինք ու երկիր պիտի փճանան, պիտի անցնին զարհուրելի փլուզումով: Այն ատեն ամէն բան մերկապարանոց պիտի ըլլայ: Մէն մի յանցանք: Եւ ամէն ոք պիտի ընդունի արդար վճիռը: Լիկինիոս, ահա հաւոր բան պիտի ըլլայ»: — «Ինչո՞ւ համար», հարցուց Լիկինիոս անմեղութեան հանդարտութեամբ: «Դուն երկրի վրայ մարդկային ունէ դատաւորէ չես վախնար, երբ անմեղ ես: Քրիստոսի հետ ինչպէս պիտի ըլլայ չեմ դիտեր, բայց դիտեմ որ ես զերծ եմ յանցանքէ եւ անիրաւութենէ: Ես ոչ մէկ դատաւորէ կը վախնամ ոչ մէկ մահէ»: — «Անոր վրայ մի խօսիր», ըսաւ կայսրը կամաց մը: «Սօսքին եւ զործին մէջտեղ թաքուն առնչութիւններ կան, զոր մենք չենք ճանչնար: Գալով քրիստոնէաներուն, կրնան ապրիլ ու սլաշտել իրենց Աստուծոր: Մնաց որ անոր պաշտամունքը եւ հաւատքը շատ նման է Միհրի հաւատքին եւ պաշտամունքին: Բաւական է որ մէկը զիս պաշտպանէ դիշերուան ողիներէն եւ զիս փրկէ, Միհր կամ Քրիստոս, ի՞նչ կարեւորութիւն ունի»:

— Լիկինիոսի քունը չէր դար բնաւ: Քովնտի սենեակին մէջ ծայրը չէր գար վեր վար ծանր ծանր քայլերուն: Երբեմն գիւրքի թերթերու խշրուք, երբեմն լոյս վառելու, կայծ հանելու շղթոց, երբեմն մարելու ձայն, պտուկելու, նորէն ելլելու, դուրս գալու եւ նորէն ներս գալու զանազան աղմուկներ, երբեմն հառաչանք մը, հեծեծանք մը, եւ անգամ մոն ալ Լիկինիոսի այնպէս եկաւ որ Դիոկղետիանոս ինքն իրեն կը խօսի: Շունչը բռնեց եւ ականջը դրաւ միջնորմով բաժնուած վրանին պատին: Որոշակի լսեց սա բառերը. «Զի՞նչ օդուտ իցէ մարդոյ՝ եթէ զաշխարհ ամենայն չահեսցի եւ զանձն իւր տուժեսցէ: Կամ, զի՞նչ տացէ մարդ փրկանս անձին իւրում»: Տակաւ առ տակաւ, մտախոհ, արթուն կայսրը կը կարգար Քրիստոսի ծանրակշիռ խօսքերը, եւ թախճազին անձկութեան խուլ շեշտ մը կը դողողար լսելի:

Քանի մը ժամ կ'ազդուրիչ քունէ մը վերջ Լիկինիոս արթնացաւ հառաչանքի շուրջէ մը: Կայսեր անկողինին կազմածքը կը ճոնչէր կը ճարճատէր ինքնակալին անհանդիստ տարուբերուած ու նետուած մարմինին տակ: Կիսաձայն, մղձկուտ կանչ մը վրանին վրայէն կուդար Լիկինիոսի ականջին եւ սարսափ կ'ազդէր իշխանին, «Գնա, գնա, Յուլիոս Ապէլը»: Լիկինիոս սովորութիւն չունէր աղօթելու, բայց հիմա որեւէ աստուածի մը գոհութիւն կուտար որ ինք Լիկինիոսն է հոս եւ ոչ կայսր:

Երկրորդ օրը, կէսօրուան ատենները, Լիկինիոսի նաւը պատ-  
րաստ էր ճամբորդութեան: Յոուկին կողմը կեցած էին իշխանները,  
սպաներն ու Տրդատ, ծովկրը Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս:  
Օղը փոխուած էր: Երկինք ամպոտած, ծովը խիստ յուզուած: Ա-  
լիքները մոնչաձայն եղերքը կը ձեռնէին, երկու մարդիկը միշտ կը  
պարտաւորուէին ետ քաշուիլ ղէպի ցամաք: Նաւը կը տատանէր ան-  
համբեր այս կամ այն կողմ, վեր վար, մինչեւ որ իշխանը հրամայեց  
չուն, եւ հողմուռոյց առաւապտներով ճամբայ ելաւ բաց ծովը: Երբ  
զրեթէ մէկ մղոն ցամաքէն հեռացան, զերին ողնափայտին ծայրը  
տեսաւ մութ առարկայ մը, որ ցամաքին եւ նաւին միջեւ փոքր, ան-  
հանդարտ կէտի մը պէս կարծես ղէպի նաւը կը շարժէր: Այս երե-  
ւոյթը աչքէն չհեռացուց: Երթալով մեծցաւ եւ որոշակի աւելի մօ-  
տեցաւ: Գերին իր գննութիւնը իմացուց նաւապետին եւ ահա ասոր  
մօտ կը կենային իշխանները, Տրդատ եւ սպաները, եւ ամէնուն աչ-  
քերը ուղղուած էին միշտ աւելի մօտ եկող առարկային: «Մակոյկ  
մըն է», պոռաց Լիկինիոս: «Կը յուսացուի որ մէջը մարդ չկայ»,  
հոգաց Լիկինիանոս: «Ինչո՞ւ չէ», ձայնեց Տրդատ: «Հա — Օ: Թան-  
կազին բան մը պէտք է ըլլայ»: — «Մակոյկ մը», ձայնեցին ամէնքը,  
հաստատելով: Իշխանը զովեց իր սուր աչքերը: Հիմա որոշակի կը  
տեսնուէր, թէ ճերմակ լաթ մը օղին մէջ բարձրացուցած են, նստո-  
ղին կերպարանքը որոշակի կը ճանչցուէր, անոր թեւերուն բուն  
շարժումները թիափարելու համար: Նաւապետը հրաման տուաւ թիա-  
փարիկներուն նաւուն արադութիւնը մեղմացնել: Անախորժ տատա-  
նում մը յակուրջի պէս: Ալիքներ որոտազին կը զարնուէին նաւուն  
կողերուն, ամէնքն ալ վանդակներուն կառչած էին: Լուրջ եւ լի յու-  
սով, ակնկալութեամբ: Խնդիրը հիմա մարդկային կեանք մը աղա-  
տելուն վրայ էր: Իշխանը ձայնեց բարձր մօտեցող նաւափարին.  
«Փրկուի՞ր կ'ուզես, թէ աճապարանքով լուր մը կը բերես»: — «Փր-  
կութիւն եւ պաշտպանութիւն, բարի իշխան», բարձրաձայն եւ լսելի  
հնչեց ջուրին վրայէն: Ձայնը ամէնէն առաջ Տրդատին ծանօթ երեւ-  
ցաւ: «Յանուն Պոսիդոնի եւ Չեւսի: Պաշտպանութիւն եւ ուղեկցու-  
թիւն պիտի շնորհուի քեզի: Իցիւ քու գալուստդ յաջողութիւն բերէ  
մեզի մեր տեղը հասնելու համար»: Թիակներու հուժկու ճողփիւններ  
ջուրով շատ մը լեցուած մակոյկը այնքան մօտեցուցին նաւուն, որ  
ասկէց կարելի էր տեսնել քաջասիրտ նաւորդին մահուան վտանգը:  
Իրենց աչքին առջեւ ահա մակոյկը թաղուեցաւ: Լայն, հաստ կոնա-  
կով փառաւոր մարմին մը մէկէն ի մէկ դարձեալ փայլուն մորթով  
փրփրաղէզ հոսանքէն դուրս ելաւ, սեւ գոռու գլուխը ջուրերու մէջ,  
ջուրերէն վեր ուղղարեւրձ: Հուժկու բազուկները վեհօրէն երկուքի  
կը բաժնէին ալիքները, երկու հուժկու ձեռքեր ազատարար պարանը

կը բռնէին, եւ մերկանդամ, քրքիջ արձակելով, Կոստանդիանոս  
խիստ եղած նաւն ի վեր մազլեց եւ անդադրում ծիծաղներով եւ  
ցնծութեամբ ողջունուեցաւ: Տրդատ իր խուցը տարաւ դայն, իր  
զգեստներէն հագցուց անոր: Սանտրուած, քսուած, զարդարուած,  
ողիմպական յաղթականի մը պէս դարձեալ երեւցաւ ընկերութեան  
մէջ: Բարկ զինին ցրտութենէ պահպանեց դայն, եւ ուժի եւ ուրա-  
խութեան տրամադրութիւն մը արձակեց անոր մէջ, հանձարեղ խօս-  
քերու, կատակարանութեան ձիրքը փոխ տուաւ անոր, իբրեւ բարե-  
կամը Տրդատի ինքը անոր ճանապարհորդակիցը կ'ըլլայ այսպէս եւ  
սիրով կ'ընդունուի: Որքան զարմացաւ, իմանալով որ ծերունին  
Մաքսիմիանոս իր որդիին կասկածելի մահուան համար անտարբեր  
դատուեցաւ զրեթէ: Մաքսէնտիոս այս առտու ղեռ պառկած էր այն-  
պէս, սթափած, բայց սաստիկ զլիսու ցաւով, եւ զրեթէ միշտ արին  
կը կորսնցնէր քիթէն: Կոստանդիանոսի բոունցքը ամէն կողմէ ըստ  
արժանւոյն հիացումի առարկայ եղաւ եւ Մաքսէնտիոսի ճակատա-  
դիրը անոր արժանաւոր պատիժ համարուեցաւ: Սպաները աւելի մօտ  
մանրամասնութիւններ տուին անոր մոլութիւններուն եւ դուշակա-  
կան տրամադրութիւններուն վրայ, այնքան որ իշխանը լաւ համա-  
րեցաւ խօսակցութիւնը ընդհատել երկու երիտասարդներուն սիրոյն  
համար: Հարցուցին իրեն թէ ի՞նչ ընել մտադիր է եւ ի՞նչպէս եկած  
է այս մակոյկով, Կոստանդիանոս ուրախ զուարթ պատասխանեց, թէ  
երէկ իրիկուն անցուցած էր քաղաքին կապելաներուն մէջ, նաեւ  
ծովկերքի զինետուններուն մէջ, որոնք նաւափարներուն յատուկ են:  
Մէկ կապելայէն միւսը կը փախչէր, յետոյ երկար ատեն դարձեալ  
ծովափը, հոս հոն թափուեցաւ, բայց կարելի չէր մինչեւ վերջը դի-  
մանալ ցուրտին եւ նորէն ներս մտաւ: Իշխանին նաւուն մէջէն լուր  
առած էր թէ երբ ճամբայ պիտի ելլէ: Քանի մը ժամ առաջ մակոյկը  
վարձեց եւ իրենցմէ առաջ կանխեց: Երբ զիտցած ըլլար թէ Մաքսի-  
միանոս իր զաւակը աքաղի հարուածի մը միայն արժանի գտած է,  
ամէն պարտադարի մէջ փախչելու համար չոր ու ցամաք ճամբայ կը  
նախընտրէր: Իր բոլոր ըսածներէն եւ երեսին լուրջ արտայայտու-  
թենէն դատելով, ամէնքը կը գուշակէին թէ երիտասարդը արդարեւ  
կենաց եւ մահու կոխ մը մղած էր ալիքներուն հետ: Շնորհակալու-  
թեամբ ընդունեցաւ իշխանին հրաւերը, իրենց հետ Բիւզանդիոն եր-  
թալ նաւով, որպէսզի ասկէց, Լիկինիոս իշխանին դրամովը, Դանուբ-  
եան եւ Հոնենոսեան երկիրներուն մէջէն կարենայ փախչիլ իր հօրը  
Կոստանդիանոս Քլորոսի քով: Ո՛վ որ տեսնէր երկու երիտասարդ-  
ներուն կենալը հոն նաւուն ցուռիկին կողմը, թեւերին կոնակին ան-  
ցուցած դէմ առ դէմ, երկար մտղի փունջերնին հօլի տուած, շատ  
գէշ օղէն ալ աներկիւղ, ո՛վ որ կրնար մտիկ ընել անոնց սիրալիբ  
բարեկամական խօսքերը, անոնց ծրագիրները ի մասին պատերազմ-

ներու, երբ թագաւոր ըլլային, ի մասին շինուածներու եւ իրենց համբաւը անմոռանալի ընելու ծառայող բարեկարգութիւններու, ո՛վ որ տեսնէր անոնց կորովը, անոնց նայուածքը, եւ կը ճանչնար անոնց բնատուր ձիրքը, կը դուշակէր ստուգապէս, թէ ահա երկու մարդիկ որ կը դիմադրեն հովին ու կոհակին, ճակատադրին կողմէ կոչուած են, իրենց ձեռքը դնելու ժամանակին զեկին վրայ եւ հիմնելու ժողովուրդներուն բախտը: Այս փոթորկալից ճամբորդութեան միջոցին իրենց բոլոր խօսակցութիւններէն Տրդատի համար անմոռանալի մնաց մահուան մասին խօսակցութիւն մը, երբ անգամ մը յանկարծ թուեցաւ որ նաւը պիտի ընկղմէր եւ ամէնքը սարսափահար, զուճատ, կը դողային: Փոթորկի եւ ալիքի մասին Տրդատին ուրախութիւնը անգամ ահա վերջ գտած էր: Անխօս եւ գեփ դեղին կրտրած, կեցած էր Կոստանդիանոսի մօտ, նաւուն վրան դոց մասին մէջ գերանի մը կռնած: Ան որոշապէս կը տեսնէր սակայն, որ Կոստանդիանոս աներկիւղ մնացած էր: Ասիկա հանելուկ մըն էր Տրդատի համար: Կոստանդիանոս մտերմական խօսակցութեան մը մէջ, երբ ընկղմումի վտանգը բարեբախտաբար անցած էր, Տրդատին յայտնեց թէ իր մայրը, Հեղինէ, դաղտնի կերպով քրիստոնեայ է եւ իրեն սովորեցուցած էր աղօթել քրիստոնէից Աստուծոյն: Ինքը եւ իր հայրը Կոստանդիանոս քրիստոնեայ չէին, սակայն երբ վտանգ մը զգայ եւ ինք ալ չկրնայ յաղթել իր երկիւղին, այն ատեն կ'աղօթէ քրիստոնէից Աստուծոյն եւ ամէն անգամ ալ անվտանգ կ'ելլեն մէջէն: Ինք պիտի չհալածէ բնաւ քրիստոնեաները: «Ինք ալ քրիստոնեայ պիտի ըլլա՞յ արդեօք», հարցուց Տրդատ յուզուած: «Ատիկա դժուար», ըսաւ Կոստանդիանոս, «բայց երբ իմ կտաւովարութեանս համար լաւագոյն ըլլայ ատիկա, ինչո՞ւ չէ»: — «Ինչպէ՞ս լաւագոյն կրնայ ըլլալ, հեղինեց Տրդատ, սա ողորմելի մարդակոյտը քրիստոնեաներուն, սա բթամիտ, աւելորդապաշտ, ստորին մարդիկը, այդ ուղղութենէն պիտի հրաժարիս»: — «Հիմա դեռ ոչ, Տրդատ: Ապագային կը տեսնենք: Քրիստոնեաները ոյժ մը պիտի ըլլան մեր մէջ: Տես»: —

Բիւզանդիոնի ծովափունքը կը կենար կրակոտ երիտասարդը եւ կը դիտէր նաւուն կողմը, մինչեւ որ մութ մշուշին մէջ անհետացաւ իր աչքերէն: Յետոյ ոտքով, կառքով եւ նաւով անցաւ ցոկանաւը կամ եռակայմ նաւ մը եւ ժամանեց Մօզէլի ափը, երբ նաւատորմը խարխալ վերցուց Կոստանդիանոսը տանելու համար Կարաւսիոսի դէմ, որ Բրիտանիոյ մէջ ապստամբած եւ իշխանութեան տէր կանդնած էր: Հօրը հրամանին տակ Կոստանդիանոս սեփական զուռի մը գլուխը անցած սկսաւ իր աշխարհածանօթ պաշտօնին եւ դործին: Հոն արդէն սիրուեցաւ զօրքերէն, եւ Բրիտանիոյ մէջ յաճախ գիներբուքի սեղանին վրայ հպարտութեամբ դիտել տրուած էր զինուորներուն կողմէ. «Ահա Ինքնակալ մը եւս իր ժամանակին»:

ԳԼՈՒԽ ԺԱ.

## ՄՐԲԱԶԱՆ ՄՈՎՊԵՏԸ

Տրդատի բացակայութեան առաջին ժամանակին Սոսրովիդուխոս զեռ անկողինն էր, Վալերիոս կը դարձանէր զայն եւ պէտք եղածէն աւելի կ'այցելէր: Լիկինիա, Պաւղա եւ Արսինէ ամէն ժամանակէն աւելի իրարու կապուած էին: Սոսրովիդուխոսի անկողինը կեդրոն մըն էր, որ զանոնք ամէնքը ի մի կը բերէր. վայր մըն էր, ուր անոնք ամէնքը ամէնէն մտերմական, խոր գեղեցիկ խօսակցութիւնները կը վարէին: Պաւղայի գործելու կերպին մէջ ոչ մէկ բռնադատութիւն, ոչ իսկ ամենափոքր դիտում դաւանափոխութեան կամ որեւէ ապացուցումի Աւետարանի ճշմարտութեան համար: Միայն թէ երբ միւս կիներն ու հիւրերը խնդրէին իրմէ յաճախ, այն ատեն իր կարծիքը կ'ըսէր խօսակցութեան նիւթին մասին եւ այդ առթիւ ալ Աւետարանին դիրքը կը լուսարանէր, եւ ասիկա բաւական էր, առանձնութեան այս օրերուն եւ ծովուն վրայ գտնուողներուն հանդէպ հոգածութեան բերմամբ քրիստոնէական հաւատքին ամբողջ միտքաբութիւնը ամէն ժամանակէն աւելի ուրիշներուն հաղորդելու համար: Արսինէ Տրդատի բացակայութենէն ի վեր շարունակ անձկութեան եւ մտածումի մէջ էր անոր համար: Հիմա, եւ մանաւանդ, երբ փոթորիկը զոռար դղեակին շուրջ, եւ չոր սաղարթները կը խաղցնէր ճաղատ դարձած դարաստանին մէջ, եւ մթին ամպերը կը թուէին քողարկել Ձեւի գլուխը Ակրոպոլիսի վրայ, ճիշտ հիմա կը հասկնար թէ այս որքան կը սիրէ եղբի Տրդատը: Որքան ցաւ կը պատճառէր իրեն Տրդատի մասին իր հոգածութեամբ, այնքան աւելի կը գիտակցէր, թէ իր հաւատքը Պաւղայի հաւատքին ոյժը չունէր: Բայց ներկայիս ամէն ժամանակէն աւելի, չէր կրնար վրայ տալ իր հաւատքը:

Բայց գաղտնի չարածճի ուրախութեամբ մը կը տեսնէր, թէ ինչպէս անդենականին, Ահուրայի կապոյտ երկինքին եւ անոր երանութիւններուն մասին Միհրական կրօնքին փառաւոր յոյսերը ալ աւելի կը բարձրացնէին կը վերացնէին Սոսրովիդուխտի սիրտը: Չէր կրնար սակայն չափել թէ Միհրական կրօնքին տուած այդ յոյսերուն որքան նպաստած էին Պաւղոսի պարզ, անպաճոյճ խօսքերը քրիստոնէաներուն ալ ունեցած յոյսին վրայ: Արսինէի սիրտը եւ բովանդակ էութիւնը այս օրերուն փառաւոր եւ հանդիսաւոր տրամադրութեան մէջ էին: Մօտալուտ մեծ ու շքեղ ուրախութեան մը իրեն համար ալ անմեկնելի նախադրացումը կը տողորէր դինքը: Տրդատն զատ ոչ ոք բան մը զիտէր մատանիին մասին, որուն կապոյտ փոքրիկ աչքը ամէն զիշեր կայծերու կողմն մը կ'արձակէր, նաեւ քսակի մասին որ խորհրդաւոր փափաքի մը ընդունարանն էր: Այլեւս երկիւղ չէր զգար ներսէն: Մատանիին կապտալոյս աչքը չէր կրնար սատանայի աչք ըլլալ, ան շատ մեղմ էր, շատ բարեհամբոյր, կարծես անմոռուկ մը զիշերուան: Նաեւ իրեն այնպէս կուշար, չէր զիտեր ինչպէս, թէ ան շատ մօտիկ է, ան իրեն քով է, սրբազան հայրը Մովսէս: Ու եթէ ըլլայ որ ինքը այլեւս չէր ապրեր, ուստի իր ուղին պէտք է ըլլայ, որ եկեր Արսինէն պարուրեր է, անոր ուղիին աչքը, որ իրեն կը յառի անոյճ ու մխիթարիչ, երկնալոյսով: Որովհետեւ ի՞նչպէս կրնայ ըլլալ որ, ա՛խ, ի՞նչպէս կրնայ ըլլալ որ նորէն իր ձեռքը հասնի երկար ատենէ ի վեր մոռցուած քսակը, մոռցուած մատանին: Ո՞ւր գացեր կեցեր է, ասոր վրայ կը խորհրդածէր Արսինէ: Աննկարագրելի օծութիւն մը, նուիրում մը կուշար իրեն վերեւ: Ասիկա ամէնուն աչքին զարկած էր տունին մէջ, նոյնիսկ ծառաներուն անոր յուսալից, նորափետուր ամբողջ էութեան փոփոխութեամբը, անոր գոգցես պայծառակերպուած հայեացքովը, որ իրեն միայն ծանօթ երանաւէտ գաղտնիք մը եւ երջանկութիւն մը կը մատնէր: Անոր տաւիղին ու ձայնին թրթռումները կրկին սկսած էին թնդալ տունին մէջ եւ դարաստանին վերեւ: Ախ, անդամ մը գոնէ կարենար գտնել այս օտարազգի փերեղակը: Ծատ գերիներ գաղտնի կերպով հոս հոն զրկեց զանիկա գտնելու համար: Անյայտ կը մնար: Յայտնութեան այն ահաւոր օրէն քանի մը օր վերջ օտարականի մը յանկարծական երեւնալը զղեակին մօտերը: Գիտնական մը ըլլալու է մագերուն եւ հազուատին նայելով, ինչ կերպով որ նկարագրեցին Տրդատ եւ Սոսրովիդուխտ: Երկայն խոպոպաւոր թուխ մագեր, թուխ երկայն պարեգօտ, կաշիէ կարմիր մուճակ: Լիկինեան զղեակին գերիներէն ոմանք աշխատութեան երթալու ատեն իրենց ճամբուն վրայ տեսեր են զայն, ինչպէս նաեւ քաղաքին դուռներուն առջեւ, ձեռքը շատ բան բռնած, աչքի զարնուելու չափ շատ բան: Այդ օտարականը իրենցմէ շատե-

րուն կամ մէկուն, շատ սիրալիք ձեւերով, հարցուցեր է իշխանին, իշխանուհիին եւ ուրիշ բնակողներու մասին: Ամէնէն աւելի հետաքրքրուած կը թուի եղեր հայազրի հիւրերուն, մանաւանդ Արսինէի նկատմամբ: Մէկէ մը որչափ տեղեկութիւն ստանար, այնքան աւելի շատ ոսկեղբամ կը զլորէր անոր ձեռքին մէջ: Կուինտոս եւ Սեքստոս ծովեղբրք ձկնորսութեամբ կը զբաղէին, օտարականը անոնց մօտեցեր է: Իբրեւ թէ հարեւանցի կը նայի ձկնորսներուն կողմը, եւ աւելի կը ձեւացնէ ծովուն բացերը նայել, տաքուկ թանկագին վերարկու մը հագած: Հայերէն ձայներ հասան ականջին: Կուինտոս դարձեալ ձուկ որսալու ելած էր, վերակացուն հեռուն կը կենար, եւ Սեքստոս, քրիստոնէայի գերին: Օտարականը քանի մը վայրկեան վերջ, վերարկուով եւ զլխանոցով, սահուն հայերէն խօսակցութեան մը բռնուեցաւ երկու ձկնորսներուն հետ: Կուինտոսն ինչ որ կ'ուզէր գիտնալ, զիտցաւ այս խօսակցութենէն վերջ, զիտցաւ թէ ասիկա կրնար ըլլալ իր ուղած դործիքը, մինչ Սեքստոս կը խուսափէր իրմէ եւ միշտ լուռ կը մնար: Օտարականը արդէն քաղաքին ուղղութեամբ անհետ եղած էր բուական ժամանակ, Կուինտոսի նիհար ձեռքէն վար ինկան փայլուն ոսկեղբամները, իր զրեթէ առանց ակոյալի բերանը խնդալէն բաց մնաց, իր չորցած երեսը փայլեցաւ, իր աչքերը բոցավառելով ծակեցին ոսկին, որպէս թէ կ'ուզէին հալեցնել զայն, եւ ապա կարծես լուալ ուղելով զայն իր լաւագոյն միջոցովը, զոր երբեք ունէր, տաք արցունքներ թափեց անոր վրայ, եւ լացաւ ու խնդաց փոփոխակի: «Վերջապէս, վերջապէս երջանկութիւն», ձայնեց իրարու ետեւէ Սեքստոսին եւ շողշողուն շահ՛ը՝ բռնածը միշտ բռնեց անոր աչքին տակ: «Կը տեսնե՞ս, տե՛ս, Սեքստոս, Միհրն ալ բարի է, ո՛չ միայն քու Քրիստոսը, Միհրն ալ հաւատարիմ է, եւ կը լսէ մեզի հէք վերիններու: Այդ մարդուն պիտի ծառայեմ, եւ պիտի ընեմ ինչ որ հրամայէ, եւ ասանկով քաւականը, ինծի պէտք եղածը պիտի ունենամ, Սեքստոս»: — Կուինտոս չարախինդ ծիծաղ մը ունեցաւ զողալով հանդերձ եւ արցունք թափելով ծովուն նայեցաւ մինչեւ հեռունները: — «Հո՛ն, հոն, ձերուկ վերի, ո՛վ զիտէ, դուն հոն հայկական հողին վրայ զլուխդ հանդիստ պիտի պառկեցնես»: — «Կ'ազդարարեմ քեզի, Կուինտոս», ըսաւ ընկերը անկեղծօրէն: «Մի շլանար ոսկիէն: Նախ քննէ քու անծանօթ պարգեւատուն, ինչ կ'ուզէ, ի՛նչ կը խորհի: Ես կը կասկածիմ կը վախնամ անոր նայուածքէն մինչեւ հողին: Ատանկ նայուածք ես երբեք տեսած չեմ: Միտքս Յուդան ինկաւ, որ մեր Տէրը մատնեց: Կամ նոյնիսկ ստիպուեցայ Սատանան միտքէս անցընել: Կուինտոս, ուշադիր եղիր»: — «Այո, տուած ոսկիին լաւ ուշադրութիւն կ'ընեմ, աւանակ: Դուն խեղճ ողորմելի աղքատ, սատկած դիակ, ի՞նչպէս կրնաս այդ խօսքը ըսել, երբ կեանքիս մէջ գոնէ



անգամ մը արդար Միհրը կ'ուզէ, ստուգիւ վերջին անգամ ըլլալով, վարձատրել իմ քաջած նեղութիւններս: Այս որչափ գէշ բաներ կը մտածես օտարականին մասին: Ընդհակառակն ես ամէնէն աւելի անոր նայուածքին հաւանեցայ: Մեծ գիտնական մըն է ան, կ'ըսեմ քեզի Սեքստոս, նայէ անոր աղուոր երեսին, սուր բերանին, քիչ մը աղեղ-նաձեւ քիթին, կանանչ աչքերուն, ինչպէս երբ ծովը բաց կանանչ գոյն մը կ'առնէ: Ես անոր առաջին նայուածքէն բռնուեցայ, տարուեցայ նայիլ մինչեւ աչքերուն մէջը, Սեքստոս, պէտք է հետեւիմ անոր, անիկա շատ բան կրնայ խոստանալ: — Եւ ոսկի, սա ոսկին: Եւ ուրիշ շատ ալ բաներ»: — «Եկուր ձուկ բռնենք», բաւ Սեքստոս, «կը սառիմ ահա, պէտք է շարժում բնենք»: — «Դո՞ւն կը սառիս, Սեքստոս», խնդաց Կուինտոս, «Դուն ալ ճարպիկ գտնուէ: Չես գիտեր որքան տաք կը պահէ ոսկին»: — «Եթէ գոնէ ոսկի ըլլայ», խորնդաց Սեքստոս: Կուինտոս այս խօսքին վրայ ականջները տնկեց: «Ի՞նչպէս: Ուրեմն ի՞նչ կրնայ ըլլալ ասիկա»: — «Ոսկի քուած, ոսկեգօծ բան մը: Երկաթ, կապար, պղինձ, արծաթ: Բայց զոյճ եղիւր, Կուինտոս, եւ մի հաւատար թէ օտարական մը քեզի պարապ տեղը ոսկի կը թափէ ձեռքիդ մէջ»: — Երկար ատեն Կուինտոսի աչքերն ու ականջները բաց մնացին: Կը տեսնուէր արդէն, ուրախութիւնը սկսաւ փախչիլ երեսէն: Տարակոյս եւ անապահովութիւն կը շարձարէին զինքը: Բայց դարձեալ ինքզինքը կը միտիթարէր. «Այն նայուածքը, այն նայուածքը: Խարերայ մը ատանկ նայուածք չի կրնար ունենալ, այնքան ապահով, այնքան հաստատուն, Սեքստոս»: — «Քննել տուր ոսկիդ», ձայնեց Սեքստոս չոր ձայնով մը, եւ ուռկանը խորունկէն քաշեց: Ցատկուտող ձուկերով լեփ լեցուն: Տուն դառնալու ճամբուն վրայ Կուինտոսի մտմտուքը սկսած էր արդէն եւ կը խորհրդակցէր Սեքստոսի հետ, թէ ուր պէտք է պահէ ոսկին: Եւ յետոյ երբ նորը եւ աւելին դայ: «Կը տեսնե՞ս», ծիծաղեցաւ Սեքստոս, ուրախ եւ երջանիկ, «ես քեզմէ աւելի հարուստ եմ, ես բան պահելու պէտք չունիմ, ոչ ալ ասոր համար մտածելու, հոգ ընելու»: — «Մի մատնէր զիս, եթէ կեանքդ սիրելի է քեզի, Սեքստոս»: — «Ինչո՞ւ քեզ պիտի մատնեմ եղբր, Կուինտոս: Մենք քրիստոնեաներս, ուրիշին ոսկիին, դրամին աչք չունինք: Աւելի աղէկը կը ճանչնանք»: — «Անանկ տեղ մը ըլլայ, որ աչքի չզարնէ, եւ իշխանը կամ վերակացուն չնշմարէ երբեք»: Անկողինիս տակը, գլուխիս բարձին տակ հողին մէջ կը պահեմ»: — «Ե՞րբ եւ ի՞նչպէս կ'ուզես փորել, առանց ընկեր գերիէ մը տեսնուելու կամ լսուելու»: Կուինտոս անհանգիստ կը մտածէր, խորհուրդ կը հարցնէր, թէ ի՞նչ կերպով կրնար նպատակին հասնիլ: Ո՛չ աղաչանք, ո՛չ խոստում, ո՛չ կատակ, ո՛չ հայհոյութիւն կարող չեղան Սեքստոսը համոզել կամ վախցնել որ կամակիր

կամ օգնական ըլլայ Կուինտոսի: Անոր Քրիստոնէական խիղճը ասոր կը հակառակէր: Այդ ոսկիին մասին խօսք ընել չէր ուզեր անիկա: Արդէն իսկ ներքին գաղտնի վայս մը անկարելի կ'ընէր անոր մէկ հաս իսկ դրամ մը առնելը, որովհետեւ որոշակի կը հաւատար թէ այդ դրամը կախարդուած է: Կուինտոս այն աստիճան տարուած էր իր աւարը դիտելու, զոր պարեզօտին տակ ձախ ձեռքին մէջ կը կրէր, այնքան լեցուած էր միտքը այդ դրամին թաքստոցին ծրագիրով, որ երկուքն ալ տուն դառնալու ատեն շաղին մէջ չնշմարեցին կնոջական կերպարանք մը, որ վերարկուով ու գլխանոցով ծածկուած, յանկարծակի իրենց ետեւէն կուզար եւ իրենց խօսակցութիւնը մտիկ կ'ընէր:

Երկուքն ալ աղաղակ մը փրցուցին իրարմէ զատուելով, երբ յուզուած, բարձր, բայց իրենց ծանօթ ձայն մը հնչեց իրենց ետեւէն. «Ոսկիդ ինձի տուր, Կուինտոս, ես հաւատարմօրէն կը պահեմ զայն քեզի համար: Ոչ ոք բան մը պիտի իմանայ այդ մասին: Միայն շուտ ըսէ, օտարականին արտաքին երեւոյթը ի՞նչ է: Ի՞նչ լեզու կը խօսէր»: Երկուքն ալ փութացին ճշտիւ իրենց գլխուն եկածը նկարագրել, օտարականին մասին ամենափոքր տեղեկութիւնը անգամ տուին, եւ Կուինտոս սիրով եւ վստահութեամբ Արսինէին յանձնեց դրամը: Արսինէ ամէն բան լսեց իմացաւ առանց խօսելու: Երեսները կը վառէին: Աչքերը կը փայլէին տենդահար, երբ ոսկիով լեցուն ձեռքերը պարեզօտին մէջ ծածկած, զղևակին սանդուխէն վեր կ'ելլէր եւ իր սենեակը կը փութար հարկ եղածը ընելու ոսկիին համար: Հիմա, ահա, ոսկին կը խաղար իր ձեռքին մէջ, մէկէն միւսը, աչքերը կարծես պիտի ծակէին դայն, ուզելով շատ մօտէն քննել եւ տեսնել որեւէ նշան մը որ կարենայ մատնել անոր ծագումը: Ոսկին կը մնար սեւեռուն ու քարացած, ու համբ, բայց կը շարժուէր իր ձեռքերուն մէջ, կարծես ջերմ կը բռնէր, եւ Արսինէին ամբողջ մարմինին մէջ անձկութեան եւ ուրախութեան զգացում մը կը յորդէր: «Մովպետ, սրբազան Մովպետ»: Աս ըսելով վար դրաւ լայն տուփի մը մէջ դարակը: Եւ վար իջաւ Խոսրովիդուխտին մօտ: Յաջորդ գիշերը քնացաւ, շատ յովնած ըլլալով, բայց կանուխ արթնցաւ անպատմելի ուրախութեան մը վրայ, զոր ինքն ալ չէր հասկնար. երա՞զ էր տեսածը, թէ արթուն եղած ատեն յիշատակը եկած թուած էր իրեն վերեւ, կամ այս ուրախութիւնը ի՞նչպէս կրնար վրան դալ: Կապոյտ սիրուն լոյսիկը կը շողար ըստ սովորութեան: Հիմա անբացատրելի ստուգութեամբ մը գիտէր. — Մովպետ հեռու չէ: Ժամերով աչքը բաց պահեմ էր մեծարժէք մորթէ անկողինին մէջ, ոչինչ, ոչինչ այլ ինչ, այլ Մովպետը, դարձեալ Մովպետը, միշտ Մովպետը կուզար կը կենար իր միտքին առջեւ: Ինչ մեղքեր որ Արսինէ կրնար

փնտռել իր յիշողութեան մէջ, աչքին առջեւ կը բերէր զանոնք, խոստովանանք պէտք է ըլլալ: Կ'ուզէր երկու կամ երեք անգամ հանդուրժեւ կրել բոլոր իր պատիժները եւ նուաստացումները: Իր աչքերուն տակ ամենափոքր մանրամասնութիւններուն մէջ կը նկարէր, թէ ինչ կերպով պիտի ընդունի դաշն, զղեակին որ սենեակները իրեն պիտի յատկացուին եւ ինչպէս պիտի յարդարուին: Այս զիշեր մոտոցուցան Տրդատ ու իր ճակատագիրը փոթորկալից վտանգաւոր ուղեւորութեան ընթացք: Հիմա մէկ ջան միայն արժէք ունէր. Մովսէս կը մօտենայ եւ կրկին լրին կուտայ Ահուրայի հաւատքն ու ուրախութիւնը: Երբ լըջացաւ առաւետը եւ կապոյտ աչքը շեջաւ, իրեն այնպէս եկաւ թէ դարաստանին վրայօք կը լսէր մեղմիկ արծաթաթիւնդ շեշտեր, որոնք ականջը կը թափանցէին: Ուշի ուշով մտիկ ըրաւ: Մարմինով երկնցած: Նստաւ կուրծքը զլուխը բարձր բռնած, հերքը կը ծփար կը ծալուէր, աչքերը խոշոր խոշոր բաց, կարծես հեռուները միտուած, արծիւի նայուածք մը, բերանը մի քիչ բաց: Յանուրները միտուած, արծիւի նայուածք մը, բերանը մի քիչ բաց: Յանուսան խուժել փրփրածայն թրթռումներ, անկարկատ, լման դաշնակումներ ջերմաջերմ, սիրախանձ, կղկաթ անձկութեան, ցանկութեան: Պատասխանը նոյն տաւիղին ընդերքէն կրկին կը հնչէ, կարծես զոյգ մը թռչուն կը զեղգեղեն իրարու փոփոխակի: Դադար մը: Ու ահա Արսինէ կ'երգէ եւ խորունկ ձայն մը հայկական բարբառով ետ կուտայ կշտապինդ շեշտեր զոռ ու հնչեղ, ուշեղ:—

«Արսինէ, Արսինէ, կը լսե՞ս դուն Պարոպար քաջունը, Ան կը թոչի դիցական կարմրայգէն առաջ, կը ձայնէ. «Ե՛լ, կանգնէ՛, ե՛լ, կանգնէ՛, եւ փառք տուր Անարատ լոյսին. ով որ կանուխ կ'ելլէ առտուն կը հալածէ դեւերը, կ'երթայ Դրախտը Ադին»: Ահա Յուրանկտա ձեռքերովն իր երկայնավերջ կուգայ արդէն բիրտ հիւսիսէն դէպի հոս, Արսինէ ուշ դրաւ ու ախանջները գոցեց, Որ շլտէ Բուշխանկտայի գեղօնը: Քնացէ՛ք, ո՛վ մարդիկ, ֆնացէ՛ք, Արթուն կայտառ ֆնացէ՛ք փունն երանաւէտ. կը մեղանչէ արքունը, ֆանգի մեղքը կեանք է, Քնացողը կը թմրի, ֆնացողը կը թմրի. Թմրիլ ու ֆնանալ կեանք է երանաւէտ:

Արսինէ պատասխան տուաւ.—

«Քեզ պիտի, ո՛վ Ահուրա, բարեբանեմ, Մեծ արարիչդ դու մաքուր արարչութեան:

Քեզ պիտի փառաբանեմ, Միիր ու ֆու արճայութիւնդ,  
 Քեզ, ո՛վ սուրբ Սրաօշա, յաղթ հասակովդ անուսնաճիգ,  
 Նիզակագէն ընդդէմ խուսքին դեւերուն,  
 Քեզ, ո՛վ սուրբ Բանն Աստուծոյ, դու յարաշողդ,  
 Քեզ, ո՛վ երկինք անեգրութեան,  
 Քեզ, ժամանակ անվայնամ,  
 Քեզ, դուք այերք ի բարձունս,  
 Քեզ, հողմ, պատգամ Ահուրայի թեւառք,  
 Քեզ, Տիստրա, ո՛վ արուսեակդ շողարձակ,  
 Քեզ կ'ողջունեմ, կ'ողջունեմ, Ահուրա  
 Ոչ, ես կ'ուզեմ արքուն մնալով յաղթիլ ուժով  
 Մեղքի ֆունին: Ահա անամպ կարմրայգին առջեւէն  
 կը թոչի հաւը Պարոպար,  
 եւ Բուշխանկտայի ձեռքերէն  
 ես կ'ուզեմ դառնալ Միիրի: —

Ձայներն ու երգ մարեցան: Տօնական այգալոյս մը կը դարէր կը դադարէր քաղաքին եւ դաշտագետնին վերեւ: Թեթեւ մշուշ մը կը պատէր եւ կը շփոթէր առարկաները: Որչափ յաճախ որ Արսինէ կը կարծէր դարաստանին մէջ կերպարանք մը նշմարել, այնքան ալ կը փշրուէր ան իր աչքերուն առջեւ մշուշին մէջ, եւ անոր տեղը կը կանգնէր փուշ մը կամ ծառ: Բայց ոչ անկողինը կրնար մնալ, ոչ ալ սենեակը: Քանի մը վայրկեան վերջ պարտէզ կը վազէր: Ո՛չ մէկ գերի, ո՛չ մէկ մարդ կը տեսնուէր: Իր վերարկուին մէջ ծածկուած, դարաստանին մէջէն հոս հոն կը ցատկէր կը վազէր կարծես դիւահալած, թառամած տերեւները իրեն առջեւէն կը փախչէին: Վերջապէս, չգիտցաւ թէ ի՞նչպէս, գացած կեցած էր սրբավայրին առջեւ, բայց չէր կարողանար ներս մտնել: Որչափ ժամանակ է վեր Անահիտ չէր ստացած իր ուտինը եւ ողջակէզը: Որչափ ժամանակ եղաւ որ ինք հոն չէր գացած: Մարսուռ մը եկաւ վրան: Անձկութիւն զրաւեց զինքը: Արդեօք ձայները ասկէ՞ց հնչեցին: Արսինէ անձկագին նայուածքներով զետինը կը նայէր չորս կողմը, իբր թէ կը փնտնէր հետքեր, ոտքի նշաններ: Հոս չկան անոնցմէ: Արդեօք սրբավայրին ետե՞ւր: Ոչ, անկէց ոչ ոք կրնայ ներս մտնել: Մա վերի ձուռածեւ, բարակ, նեղ լուսամուտէն ալ մարդ չի կրնար ներս մտնել: Արսինէ խորանին չորս կողմը կը վազէր կը վազվզէր: Մարսափի թեթեւ յանկարծական կանչով մը ոտքի հետքեր երեւան բերաւ կակուղ կաւէ գետնին մէջ խորանին ետեւը: Անոնց հետեւեցաւ մամուպատ կակուղ գետնին վար պուրակը: Մարդու հետքեր էին, որոնք սակայն կորսուեցան շատ շանցած: Արսինէի սիրտը վախէն ուրախութեանէն

կը դողար: Ետ ցատկեց մուտքին առջեւ, անկէց ալ անդին վախէն,  
դարձեալ միեւնոյն տեղը եկաւ յոյսով մը. յետոյ կարծես անտեսա-  
նելի ոյժ մը քշուած, այս անգամ բուն ներսը: Միջակ մեծութեամբ  
մարդ մը կեցած էր հոն: Իր աջ թեւը կը փարէր Անահիտի մարմնին:  
Ձախը բռնած էր տաւիղ մը: Սեւ վերարկու մը, պատուտած, կարկա-  
տած, աղտեղութեան եւ արիւնին հետքերով կը ծածկէր կարծ ու  
հաստ մարմին մը, բայց կուրծքին լայնութիւնը յայտնապէս բաց կը  
ձգէր: Խոշոր լեռնակօշիկներ կը ծածկէին ոտքերը: Գլուխը կ՛ըկտած  
զլիանոցի մը մէջ, որ հաստատուած էր վերարկուին: Եկէ թուխ մօ-  
րուքը եւ զլիսու մայրը քիչ մը տեսանելի էին: Ծակատը չէր տես-  
նուեր: Խրճանցած թարթիչներուն եւ յօնքերուն տակ երկու ծաւի  
անյատակ աչքեր, որոնք արտակարգ նայուածքով կը սեւեռէին Ար-  
սինէի վրայ: Անդրի կուզ քեթ մը կ'աւելցնէր անընտանի կակին տը-  
պաւորութիւնը: Բերանը մօրուքէն ու պեխերէն կորսուած: Երկու  
բարակ կարմիր ամրափակ շրթունքներ միայն տեսանելի էին կրակէ  
նեղ դիծի մը պէս: Կերպարանքը միշտ հոն կանդուն՝ անշարժ, ան-  
բարբառ: Երկու կանանչ աչքեր միայն կը յառէին քրմանոյձին, որ  
անձկութենէն սարսափահար զլիսահակ, կը կ՛ըկտէր օտարականին  
ոտքերուն տակ: Ամէն ընդդիմութիւն, ամէն կամք խորտակուած:  
Դիւթուած էր: Զէր դիտել, ո՛վ էր օտարականը, եւ սակայն չէր  
կարող հարցնել անոր: Աչքերուն նայուածքը, անոնց բուռն ու խու-  
ղարկու եղանակը միմիայն Մովսէսին վրայ մտածել կուտային իրեն:  
Տաղնապալից կը սօրսօտար Արսինէ, բայց անդադար այս աչքերուն  
մէջը կը նայէր: Թախիծ, կշտամբանք, դայրոյթ, հարցում, ներո-  
ղութիւն, շնորհ, սէր — ամէն ինչ կար ու կը փոխանակուէր այս  
նայուածքին մէջ: Ահա Անահիտի քրմուհին, անպաշտպան յանձ-  
նուած՝ օտարականին նայուածքին: Նուազկոտ վիճակի մը մէջ էր  
զրեթէ, եւ կը լսէր միայն, թէ ինչպէս իր ականջին կը զարնէր շատ  
հեռուէն ձայն մը, զանդակի խորունկ թինդի մը պէս: Բայց առաջին  
թինդը արդէն այնքան ընտանի հնչեց որ բարեմոյն տպաւորուեցաւ  
Արսինէի միտքին մէջ. նորին այնքան շատ յիշեց Մովսէսը, որ խել-  
քը զլուխը եկաւ եւ սիրտն ալ հանդարտեցաւ: «Ո՞վ ես դուն: Դուն  
Մովսէսն ես, սրբազան Մովսէսը», քանիցս ըսաւ հատկաձ շուն-  
չով: «Պօսէ: Կ'աղաչեմ քեզի: Դուն Մովսէսն ես»: Սա խորունկ  
ձայնը իրեւ ազդարար. «Ո՞ւր է Հոսաման (ուտինը, Անահիտէն ան-  
բաժան): Ո՞ւր է Հուրը»: Արսինէ ցցուեցաւ: Եւ ահա քանի մը  
վայրկեանէն Հոսամայի զոհին անուշակ, խնկանման շողին կը դա-  
լարէր դէպի վեր փոքրիկ սեղանէն: Սուրբ բարամունքը արդէն պատ-  
րաստ էր խորանին խոռոչին քառանկիւն ոսկեղէն ընդունարանին մէջ:  
Կայծերը կը ցատկէին կայծքարէն: Տակաւին մութ խորանը կը յոր-

դէր կարմիր շողով եւ լեցուած էր տաք շունչով ու շողիով: Միշտ  
դեռ անշարժ կը մնար օտարականը: Բայց իր աչքերը միշտ դարձեալ  
կը յառէին Ապեղէսի հրաշակերտին եւ դարձեալ իրեն առջեւ խելա-  
յիղի նման խուղարկու ծնրադիր կնոջ: Դարձեալ ձայնը. «Աստուած-  
ները նման են մարդոց եւ մարդիկ աստուածներուն»: Ո՞վ ստեղծեց  
Անահիտին պատկերը ըստ պատկերի քում, կին դու»: Հփինացող  
կուրծքով, զլուխը զրեթէ օտարականին ոտքերուն հակած, Արսինէ  
հաւատարմօրէն պատմեց զեղարուեստաբանի պործին ծագումը: Սուր  
չչեց ասոր վրայ կրկին օտարականի ձայնը. «Ապեղէս Միհրի կամ  
Ահուրայի հետեւող չէ: Կին դու, ի՞նչպէս կ'ուզես յունական սիրտի  
մը մէջ զանազանել լոյս եւ խաւար, մաքրութիւն եւ չար ցանկու-  
թիւն, յարգանքը՝ Աստուծո՞յ ուղղուած թէ իր անձին: Դուն սակայն  
կ'ուղէիր Անահիտը յարզել: Գիտեմ ես»: Արսինէ երախտագիտու-  
թեամբ վեր առաւ զլուխը եւ արտասուածքով աչքերը դէպի օտա-  
րականը: Բայց անոր աչքերը միշտ քար էին ու արտասովոր: Առանց  
որեւէ տեղեկութիւն պահանջելու որեւէ բանի վրայ, որպէս թէ եր-  
կար ատենէ ի վեր ծանօթ էին իրեն Լիկինեան տունին բոլոր անցու-  
դարձերը, Տրդատի եւ Խոսրովի դուխտի վարմունքը եւ իրենց հին  
հաւատքին հանդէպ իրենց զիրքը, օտարականը համառօտ եւ հա-  
տուկտի ակնարկութիւններով յիշատակեց Տրդատին շեղումները,  
Խոսրովի դուխտին միտումը դէպի քրիստոնէական հաւատք, քրմա-  
նոյձի երեքեալ տատանեալ տրամադրութիւնները մերթ Լիկինեանո-  
սին, մերթ Ապեղէսին կողմը: Օտարականին կշտամբանքները բոցա-  
նուտ նետերու պէս կը դիպէին Արսինէի սիրտին ու խիզճին: Ամէն  
ինչ օտարականին ըսածին պէս եղած էր: Արսինէ տեղի տուաւ, կակ-  
դացաւ, տկարացաւ, չկրցաւ ինքզինք ոռնել. Խոսրովին զաւակները  
հայրական հաւատքին մէջ դաստիարակելու իր վեհ պաշտօնին անար-  
ժան եղած էր եւ անկարող: Անահիտայի հանդէպ իւրայատուկ սէրն  
ալ թուլցած էր: Ինք հողածու եղեր է միայն ինք իր անձին եւ ասոր  
համար մոռցեր է Անահիտի զոհերը: Հեկեկաւով կը լսէր օտարաֆա-  
նին տրտունջները եւ ծանր հառաչանքները, որոնք կը թնդացնէին  
փոքրիկ սրբափայրը: Օ՛, ինչպէս ալ իրարու վրայ կրնար սրտածմբկ  
ճշտութեամբ տալ անունները Խոսրովի, Վաղարշապատի, Անահիտի,  
միշտ Անահիտի, Ահուրայի, եւ տառապանքի ու հայրենարդձու-  
թեան որպիսի արտայայտութեամբ: Արսինէ փրեւ մեղաւորուհի մը  
կեցած էր անոր անարուեստ, աղտոտ կօշիկներուն առջեւ: Իր ողբէն  
կը ցուային դժոխքին կրակները, Ահուրայի աչքերը կը փայլատա-  
կէին իրեն վրայ: Օտարականը կը կարգար իր սիրտին մէջ, կը կար-  
դար Լիկինեանոսի եւ Ապեղէսի վրայ անոր ունեցած մտածումները,  
Մովսէսի մասին մտածումները, եւ ամէն ինչ կը խօսէր անխնայ

բացայայտութեամբ ապաշխարողուհիին վրայ: Այս վերջինը, — Արսինէ — արտասուելով կը խոստանար կրել կատարել ապաշխարութեան եւ շարչարանքի համար իրեն բոլոր հրամայուածը, բայց օտարականը ըսաւ, թէ ոչինչ պիտի կրէ, ոչինչ պիտի ընէ, այլ միայն ճամբայ եւ տեղ պատրաստել Լիկինիոսի տունին մէջ սրբազան Մովսէսին համար, կարելի եղածին չափ գեղեցիկ եւ շքեղ. օժանդակել անոր եւ օգնել պարտաւոր է. եւ ուխտել նուիրական երդումով լուծութիւն պահել անոր — Մովսէսին — ըրածին, թողածին վրայ: Արսինէ թեւերը վեր առաւ, բռնեց Անահիտի պատկերը, անոր կարկանդակով իր անարիւն, մատանեղարդ ձեռքը, եւ հնազանդութիւն եւ լուծութիւն երդուընցաւ սրբազան Մովսէսին մօտ:

Եւ ահա վայրկենաբար օտարականին ծաւի աչքերէն անհետացաւ ամէն խստութիւն, կարծրութիւն, քարացում: Ողորմութեան, դժութեան, եւ սիրոյ ճառագայթ մը անոր աչքերէն հոսեցաւ վար, տաքցաւ ձայնը, մտերմացաւ, թանկազին կայծկլտուն մատանիներով աղուոր, բարեխնամ, ճերմկուկ ձեռքը բռնեց քրմանոյշին կարկառած ձեռքը, երեք անգամ ամուր մը սեղմեց, մինչ վաղածանօթ, անձկալի, անուրանալի միջարկութեամբ ձայնը կը դոչէր. «Արսինէ»: Մեծաթինդ աղաղակ մը արձագանդեց խորանին մէջ. «Մովսէս, Սրբազան Մովսէս»:

Արսինէ քանի մը քայլ դէպի պատը ետեւ խուսափեցաւ, երկու թեւերը օտարականին դէմ պարզած, բերանը լայնարաց, աչքերը լուսաշող — այս վիճակին մէջ կեցաւ հոն, եւ կը տեսնէր, թէ ինչպէս ձեռքերու քանի մը շանթերազ շարժումով աներեւոյթ կ'ըլլային գըլխանոց, դլխու մաղեր, մօրուք ու պէխ. վերարկուն շղարչի մը պէս ինկաւ անոր ոտքերուն տակ, քողարկեց քիրտ լեռնախօշիկները եւ գետինը գտնուած լաթին ծալքերէն ոսկեխրաց ճերմակ մուճակներով ճիւղասպիտակ եւ մինչեւ ոտքերուն կոճը երկարող նափորտով ահա նոյն ինքն սրբազան Մովսէսը: Ոսկեհուռ գօտի մը, ոսկեցանց հիւսկէն նրբանուրբ աշխատութեամբ ճարմանդներով, որոշակի կ'անջատէր լանջքն ու մարմինը, նոյն հոյակապ նափորտը ակնախտիդ ծալքերով դէպի վար իջեցնելով: Իրարմէ փոքր ինչ միջոցներով գօտիին վրայ կը շողային գինիի կարմիր դոյնով կարկեհաններ, Մովսէսին աչքերուն նման կանանչ դմրուխտներ, հրաշագրան մանիչակերանդ մեղեխիկներ, աղու կապուտակ շափիւղաներ: Մարգարտագարդ, ահանակուռ փողկապ մը կը պարուրէր հաստ ու ամեթ պարանոցը: Կամարածեւ եւ ծոծրակով բոլորչի գլուխը, ցած բայց լայն ճակատը ճաղատ էր, աչքերը առանց յօնքի, վերնաշուրթն, ծնօտ, այտուկը՝ կարմրաշող: Մովսէս, ահա հոն, օգոստափառ, քրմապետական անթերի զգեստաւորութեամբ, պատարագի կեցած էր գողցես Վաղար-

չապատի տաճարին մէջ պատարաղի, այո՛, բայց ծաւի աչքերը կ'ակնարկէին Արսինէին, բարութեամբ զեղուն: Արսինէ եկաւ մօտեցաւ ցնծալից, սարսուղին, ծունը դրաւ առ ոտս Մովսէսին, երեսը վեր առաւ, արտասուեց, դէպի Մովսէսը սեւեռուն: Կ'ուզէր աղօթել բայց չկարողացաւ խօսիլ, արտասանել: Անոր դողընջուն շրթունքներէն կուգար միմիայն. «Մովսէս, Հայր, Սրբազան»: Մովսէսը իր երկու ձեռքերը դրաւ անոր վրայ, օրհնաբան մրմունջով, եւ պահիկ մը իր աչքերը, անշարժօրէն, թողուց որ դամուին Արսինէի երեսին վրայ, հոն հանդէն, եւ ըսաւ. «Աներկիւղ եղիբ, Արսինէ, սրտապինդ: Թողեալ լիցին քեզ մեղք քո: Էանց խաւարն: Երեւեցաւ լոյսն: Յամօթ լիցի Ահրիման: Յաւելուլ յաւելցի տէրութիւն Ահուրայ: Աշէմ-Վօհու (Ամէն): Հիմա տար զիս Խոսրովիդուխտին եւ Իշխանուհիին»:

Գաւիթին մէջ առաւօտեան աշխատանքներով զբաղող գերինները հիացկոտ պատկառանքով եւ երկիւղածութեամբ խոնարհեցան: Մատակարարը խորին խոնարհութեամբ բացաւ ճաշասրահին վարագոյրները: Երկու հիւրերը, ցուրտէն եկած, ախորժ ջերմութիւն մը զգացին հոն, որ զոհարանին խորքէն վեր կը բարձրանար, գետնի ծակերուն միջոցաւ: Իշխանուհին դեռ կը քնանար: Խոսրովիդուխտ նմանապէս: Բայց Արսինէ, իբրեւ տնեցի, Մովսէսին համար ապահովեց իշխանական սպասարկութիւն մը: Արդէն երկար ատենէ ի վեր իշխանը պատուիրած էր իրեն՝ ամէն ինչ ի դործ դնել Մովսէսին զալու պարագային: Ան լուսացք առաւ նոյն ինքն իշխանին անձնական շքեղ լոգարանին մէջ, եւ բուրումնաւէտ հանդերձուած եւ օծուն առնոյ իւղով, կրկին մուտք գործեց սրահ, կ'աղլուրուելու ճօխ նախաճաշով մը: Արսինէ չվայելցուց իրեն որ իբրեւ գերուհի մը սպասարկէ անոր: Սպասաւորները կը բերէին կաթ, կարագ, պանիր, թարմ հաց եւ կարկանդակ մինչեւ սրահին մուտքը, ուր Արսինէ կ'առնէր անոնց ձեռքէն եւ ծնրադիր կը գետեղէր Մովսէսին եռօտանիւն վրայ, որուն առջեւ իշխանաբար կը հանդէ՛ր, աչք պտըտցնելով սրահին եւ տեսնելու արժանի իրեղէններուն եւ առարձաններուն վրայ: Արսինէ երկարատեւ ճաշի միջոցին անոր կը բացատրէր կը մէ՛նչէր պատկերներ, արձաններ եւ անօթներ: Յետոյ երկուքը նորէն լուռ կը մնային, Արսինէ ծունը կը դնէր Մովսէսին առջեւ, միշտ անոր նայելով, տղու մը պէս ուրախութենէն այլակերպուած, կարծես չկարենալով խելք հասցնել, որ իրօք հայրը վերադարձած է օտար երկրէ: Սրբազան Մովսէսն ալ անոյ՛ յանոյ՛ կը նայէր Արսինէին, յուզեալ ձեւով, մինչեւ իսկ անգամ մը աջ ձեռքովը շոյեց անոր մաղերը՝ որոնց վրայ դեռ կը թրթռար գիշերային գոթութեան խոնաւութիւնը եւ ըսաւ. «Ահուրա օրհնեսցէ զքեզ, որդեակ իմ»: Հայաստանէն իր փախու-

տին եւ ճամբորդութեան ընթացքին կրած չարչարանքներուն պատմութեան միջոցին էր որ իշխանուհին մուտք գործեց առտնին գորշ լողիկովը, իր այգալոյսի թարմութեամբ ամէն ժամանակէ աւելի առինքնող, հոյակապ: Քրմապետին ժամանումին լուրը պերիներէն առնելով, բարեկամութենէն զրգուած, ուղեց որ սրտազին կերպով ընդունի Մովսէսը, եւ փութաց անոր կողմը: Քրմապետին ծաւի աչքերէն սակայն դողցես կը շանթէր իրրեւ ազդարութիւն, իրրեւ հրաման. «Ետ: Մի դաչիւր ինձի»: Քրմապետը աջ ձեռքը բարձրացուց շատ քաղաքավարօրէն մերժումի ձեւով շարժելով Տանտիրուհին դէմ, որ սարսափէն քայլ մը ետ գնաց եւ անշափելի դարմանքով սրահին չորս կողմը նայեցաւ, իրր թէ համողութեամբ համար որ արդեօք իր բնակարանին մէջ է, եւ կամ կը փնտռէր իշխանն ու գաւակը՝ որպէսզի պաշտպանեն զինքը իրեն համար օտարոտի, անընտանի ոյժի մը դէմ: Բայց Մովսէստին աչքերը անմիջապէս շնորհալի արտայայտութիւն մը ստացան: Իր ձայնը լեցուց ընդարձակ սրահը արդէն թեթեւ խօսելովը, երբ յարգալից դիմազիծերով, սակաւիկ մը ծիծաղով, ըսաւ. «Մի վախնար, իշխանուհի. իմ լոյսս կը չլացրնէ միայն, չի սպաններ: Կրնայ խոփել եւ մեռցնել» — եւ այս խօսքին վրայ՝ իր աչքերը զարհուրելի, անկարագրելի կերպով ահաւոր տպաւորութիւն մը ստացան, եւ իշխանուհին տակաւին իր կեանքի մէջ այդպիսի մարդկային նայուածք չէր տեսած — «Մի վախնար, իմ լոյսս քեզի է եւ քու ամբողջ տունիդ փրկութեան եւ խաղաղութեան պիտի ծառայէ: Միայն թէ դուն եւ քու բոլոր ծառաները իմ շատ մօտս պէտք չէ ըլլաք: Իմ ձեռքս քեզ օրհնելով քիչ մը հեռուն պիտի բռնէ: Որովհետեւ ես սուրբ եմ: Դուք ամէնքդ անսուրբ էք, մեղքի եւ խաւարի մէջ: Անահիտի քրմուհիին՝ Արսինէի միջնորդութեամբ ես պիտի հաղորդակցիմ ձեզի հետ: Ահուրայի օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ ինձի համար: Քու տէրդ եւ զաւակը, իմ գաւակս Տրդատ, անոնք անփնաս պիտի վերադառնան, բայց շատ վըտանդներու եւ նեղութեան մէջէն անցնելով: Այս բոլորին խեղդուելու վտանգին մէջ են: Իմ ողիս կը տեսնէ աշտարակի չափ բարձր կոհակներ, երկկայմ մը յուսահատ պայքար կը մղէ ջուրերուն հետ: Այլ ի զուր: Նաւը ետ կը նետուի — ետեւի մասը կ'ընկղմի — ամէնքն ալ ցոռակին կողմը կը վազեն — ամուր կը բռնեն ինքզինքնին — կ'որոտայ — ցերեկը դիշերուան պէս է: — Դէմքեր—մահուան պէս գունատ, ամէնէն գունատը՝ Լիկինիանոսինը — իցիւ կարենայի գոնէ ձայնել իրեն. Լիկինիանոս մի վախնար: Ան որ ինքնակալ պիտի ըլլայ ծովուն մէջ չի խեղդուիր»: Մովսէստին նայուածքները խիստ հեռուններ կը յառէին, բայց միեւնոյն հաստատուն կէտի մը վրայ, մահուան նման ծանր պատկերի մը վրայ: Իր դիմազիծերը ստոքի չափ

պաղեցան, չրթունքները իրարու վրայ սեղմուեցան անարիւն: Բայց շատ մը վայրկեաններ այլեւ ձայն մը չէկաւ իրմէ: Իշխանուհին ահահոն — անձնաւորեալ սարսափ մը: Աջ ձեռքովր բերանը բռնած, ձախը ճակատին վրայ, զլուխ ու քամակ խորունկ ծռած: Արսինէ ցտկեց եւ ձայնեց. «Հայր Մովսէս, սրբազան հայր, փրկէ՛, փրկէ՛՛՛ զանոնք»: — «Փրկուած են» թնդաց հանդիսաւորապէս սրահին մէկ ծայրէն միւսը: Չայնը հնչեց խիստ հեռուն: «Օրհնեալ է Ահուրա: Փառք ցուլին: Փառք Սուրբ կովին: Հոս են, հոն են: Զուրը կը քաշեն»: Արսինէ Մովսէստին առջեւ ծնրաղիբ՝ համբուրեց անոր կեջն»: Արսինէ Մովսէստին առջեւ ծնրաղիբ՝ համբուրեց անոր կեջն»: Մովսէստին նայուածքները, խուզարկու բայց ոչ բռնադատեալ, կը հանդէպին նորէն անոր վրայ: Իշխանուհին վրայ սարսափ մը եկաւ, իրեն համար անբացատրելի: Նետի արագութեամբ ան երկչոտ, վեհերոտ նայուածք մըն ալ նետեց Մովսէստին վրայ, եւ նոյնքան ալ արագ դուրս ածապարեց: Կարծես հալածուած էր, քանի մը դերիներուն քովէն անցնելով մտոյց սանդուխէն վեր ելաւ եւ կէս անդիտակից ամուսինին անկողինին վրայ ինկաւ: Ոյժ մը կար տունին մէջ: Ի՞նչ տեսակ ոյժ: Ի՞նչ կ'ուղէ, Ի՞նչ պիտի պատահի: Բող ելած կը խորհրդածէր Լիկինիա, թէ ինչ տարօրինակ մարդու հանդիպած է: Մովսէստ, մինչ այս մինչ այն, հրաման տուաւ դերիներուն վերակացուն իրեն կանչել: Ան երեւցաւ, ծայր աստիճան վայելչաղկատ, արդէն իսկ նախապատրաստուած՝ այդպիսի առիթի մը համար, կատուանման ճկունութեամբ, կոնակը ծռելով, ծունկի դալով ինք ալ համբուրեց Մովսէստին կեցած տեղը, եւ քրմապետին նայուածքէն ու պատկառանքէն իսկոյն դիւթուած, ծնրաղիբ ստացաւ հրամանները, օրուան ընթացքին առնուազն երկու բռնակառքերով Պիրէոն երթալ եւ իր՝ քրմապետին սնտուկները, ծրարները բերել: Արսինէին միջոցաւ վերակացուն յանձնեց մաղաղաթեայ նամակի պահարան մը քանի մը կնիքներով դրոշմուած, մթերանոցին վարիչին ուղղեալ: Նամակին հետ նմանապէս, առանց վերակացուն նշմարելը, ոսկի մը սահեցուց անոր ձեռքը: Վերակացուն, մարմինին ամբողջ երկայնքով, առաջ ծռելով եւ օձի գալարումներով սողալով դէպի Մովսէստը, երեք անգամ համբուրեց անոր կօշիկներուն ամէնէն դուրսի ծայրերը: Մովսէստ վերէն վար դիտեց զայն յայտնի արհամարհանքով, եւ յետոյ հարցուց խորհրդաւոր միանգամայն խոստումնալից շեշտով մը. «Կ'ուղի՞ս ծառայել ինձի, գերի»: Պահիկ մը ընդհանուր լուրթիւն սրահին մէջ: Վերակացուն կարճ կռիւ մը մղեց ինք իրեն հետ: Քրմապետին դէմ իրեն մէջ ծառայան հպարտութեան եւ պաշտօնի զգացումները: Մովսէստին ձեռքերէն դարձեալ ոսկի մը սահեցաւ անձայն կակուղ գորգին վրայ, հատ մըն ալ ետեւէն: Վե-

րակացուն անհամ մըն ալ համբուրեց քրմապետին ոտքերուն ծայրերը եւ աչքերը դդուելի ձեւով մը դարձնելով վեր նայեցաւ, եւ շատ կամաց ձայնով ըսաւ. «Կ'ուզեմ քու ամենանուստ եւ ամենահաւատարիմ ծառան ըլլալ, սրբազան Տէր»: — «Գնա եւ հոգ տար յանձնարարութեանս Պիրէոն», հրամայեց Մովսէսը: Գերիի պատշաճ բարեւոյթով, դէպի ետեւ քայլ առնելով, վերակացուն անյայտ եղաւ վարագոյրին ետեւը, ուժով եւ տիրարար իր հրամանները տալու եւ կառքերը պատրաստելու համար:

Սոսրովիդուխտ արթնցած էր: Վալերիոսի այցելութիւններն ու արուեստը յաջողութիւն ունեցած էին: Հիւանդութեան վտանգը անցած էր: Միայն թէ տակաւին ուժը տեղը չէր դար: Բժիշկը անպակաս էր ամէն օր, որ ժամանակ կ'ունենար, եւ կը փափաքէր իրիկունը դալ, իր մնացած շատ մը հիւանդները դարմանելէ վերջ: Որքան դարմացաւ այս իրիկուն, երբ Սոսրովիդուխտ հագուած, թարմ ու կարմիր երեսներով, ամէն ժամանակ աւելի աղուորցած, սովորական սենակը մտաւ իրեն առջեւ: Վալերիոս ա'լ աւելի դարմացաւ, երբ իրեն ներկայացուեցաւ Մովսէսը եւ իմացաւ որ Սոսրովիդուխտ ուրախութենէն կ'ազդուրուեր է: Քնացած ատենը զպացած էր թէ մէկը պիտի կը դիտէր, թէ յետոյ հաստ ձեռք մը իր ձեռքը կը բռնէր, ոյժի կեանքի հեղեղ մը կը ցնցէր պինքը եւ կ'արթնցնէր: Մովսէսը իր առջեւ կեցած էր քրմապետական սպիտակափայլ նստիւորտով: Ուրախութեան ազդակ մը փրթաւ Սոսրովիդուխտի շրթունքներուն վերեւ եւ յետոյ յայտարարեց պնդելով. «Ես առողջ եմ»: Մովսէս՝ հակառակ երկարատեւ բաժանումին՝ պրեթէ անտարբեր կը մնար: «Ելիր, Սոսրովիդուխտ, եւ կէս օրուան ճաշք մեկի հետ ըրէ ճաշարահ»: Մովսէսին հեռանալէն վերջ աղջիկը ելաւ հաղուեցաւ: Ամէն տաղնապ եւ տկարութիւն անհետ եղած էր: Առանց օգնականի ուժով քաշելով, ի մեծ ուրախութիւն ամէնուն, Սոսրովիդուխտ մուտ դործեց ճաշարահը: Ուժը մնաց այնպէս ամբողջ կէս օրէ վերջ մինչեւ իրիկուն, երբ առանց յոյնելու անվերջ հետաքրքրութեամբ, շունչ անգամ չառնելով, Արսինէին եւ իշխանուհիին հետ մտիկ կ'ընէր Մովսէսի պատմութեան՝ իր փախչելուն եւ յանդուգն արկածներու նկատմամբ: Իր հօրը՝ Սոսրով թագաւորին լաւագոյն բարեկամն ու խորհրդականը եղող այս մարդուն առջեւ իր երբեմնի, յաճախ անհիմն ու անբարենի վախը մոռցած էր: Հիմա անոր մասին անսահման հիացում միայն ունէր: Իրեն նկատմամբ Մովսէսին վերապահումը եւ պաղարիւնը աւելի խորհրդաւոր եւ յարգելի կ'ընծայէին զայն իր աչքին: Որքան խելացի դէմք: Ինչ նայուածք այս աչքերունը: Ոյժ համակ անոնց մէջ, մաքրութիւն եւ նուիրում դէմքի եւ զգեստաւորումի: Սոսրովիդուխտ այսպէս կը

խորհէր եւ կը զգար, երբ Վալերիոս ներս մտաւ: Սիրով ողջունեց, մանաւանդ Սոսրովիդուխտը, եւ բժիշկի խուզարկու աչքերով նայեցաւ անոր քանի մը վայրկեան: Անոր ձեռքն ալ երկարօրէն բռնեց իր ձեռքին մէջ, եւ բաղկերակն ալ նայեցաւ: Նորէն նայեցաւ անոր աչքերուն եւ երեսին, եւ բոլոր ներկաները, մանաւանդ Մովսէսը, կը դիտէին, թէ ինչպէս բժիշկին գեղեցիկ եւ հարազատ յունական դէմքին այտերը կը կարմրէին, նոյնիսկ ճակատը՝ մինչեւ բաց խարտեաչ գոուզ մաղերուն տակը: Անոր նայուածքը մտահոգութիւն կը մատնէր: Բայց այդ մտահոգութիւնը որո՞ւն համար: Սոսրովիդուխտի՞ն թէ իրեն համար: Արդեօք ուրիշ բժի՞շկ ալ բերեր են: Ո՞վ հրամայեց է իրեն անկողինէն ելլել: Ո՞ւրկէց այս յուզումը, որ կրկին կրնայ նեղութիւն պատճառել եւ ա'լ աւելի մեծ տկարութիւն: Մովսէս սրահին ներքին մասը քաշուած էր եւ անխօս կը դիտէր գեղեցիկ դոյզը: Ծիշտ հիմա կը տեսնէր Վալերիոս — աչքերը Սոսրովիդուխտէն քիչ մը հեռացնելով — Արսինէն եւ Մովսէսը: Մովսէսին առաջին տպաւորութիւնը անմոռանալի պիտի մնար Վալերիոսին: Ասանկ երեսն ան բնաւ տեսած չունէր: Գեղեցկութիւն, խոհեմութիւն, խելացուութիւն, լրջութիւն եւ անդորրութիւն՝ միացած խորամանկութեան, ճարպիկութեան, յամառութեան եւ տիրապետելու բացարձակ կամքի հետ, նոյնացած այս յատկութիւնները նոյն երեսին վրայ. նոյնիսկ Վալերիոս հմայուեցաւ այս երեսին ազդեցութենէն: Իրեն այնպէս կուզար որ հոն անկիւնը գտնուողին կանաչափառ աչքերը շարունակ պինքը իրեն կը քաշէին: Քանի մը քայլ առաւ դէպի Մովսէսը, բայց իսկոյն կեցաւ վարանումով, որովհետեւ սարսափը աւելի զօրաւոր եկաւ իրեն վրայ, երբ աւելի մօտեցած էր այդ մարդուն, որուն երեսին վրայ հազար սուղծուածներ կը դիտէր: Մովսէս արքեւի շարժումներով աջ ձեռքը անոր երկարեց: Պատի լապտերներուն լոյսով լուսափայլած էր Մովսէսը համօրէն: Աչքեր, զգեստ, դէմք, թանկազին քարեր, ամէն ինչ կ'արտափայլէր, եւ այսպէս, մուսլ ուժի մը հանդէպ գտնուելու զպացումը տիրեց Վալերիոսի պայծառ միտքին: Ու ահա հնչեց, լեցուն ու խոր, կանչը Մովսէսին. «Վալերիոս, լեր ուշադիր: Իմ լոյսս կը սպաննէ: Դուն բժիշկ ես եւ քու կոչումդ քեզ անսուրբ կ'ընէ: Ես քեզի կ'ողջունեմ հեռուէն միայն օրհնութեամբ Ահուրայի»: Մովսէսը մեղմիկ շարժումով իր աջ ձեռքին ետեւի կողմով Վալերիոսին փչեց օրհնութիւնը: Բժիշկը քարացած կեցած էր, չփոթած երբեմն Մովսէսին, երբեմն միւսներուն եւ վերջապէս խնամող սիրոյ յուզիչ արտայայտութեամբ մը Սոսրովիդուխտին կը նայէր, որ լուռ պառկած էր ակութիւն մօտ բաղմոյցի մը վրայ, կրակին կարմիր շողէն տմոյն պայծառութեամբ: Յետոյ դարձաւ Սոսրովիդուխտին կողմը, անգամ մըն ալ Մովսէսին նայեցաւ, եւ

Պոստովիդուխտի ձեռքը բռնելով՝ հարցուց ցած ձայնով. «Մա մա՞ր-  
դը հրամայեց քեզի որ անկողինէն ելլես»: Պոստովիդուխտ հաստա-  
տական նշան ըրաւ, անոր նայելով երախտադիտական զգացումով եւ  
սիրալիբ: Բայց անկիւնէն հնչեց Մովսէսին ձայնը. «Ես կը հրամա-  
յեմ մարդոց ոտքի ելլել ու անոնք կ'ելլեն. ես կը հրամայեմ մարդոց  
պառկիլ եւ անոնք այլեւս ոտքի վրայ չեն մնար: Ես կը սպաննեմ եւ  
ես կենդանի կ'ընեմ, որովհետեւ իմ միջոցաւ կը գործէ Ահուրայի  
ոյժը»: Ձեռքի սաստիկ սեղմում մը, անասելի տառապանքէ մը բխած  
չփոթ նայուածք մը, ջերմ սիրով ու մտահոգութեամբ լեցուն — եւ  
Վալերիոս դուրս ելած էր արդէն: Բժիշկին հաւատարիմ գեսպակա-  
կիրները զարմանքով իրարու երես նայեցան, երբ իրենց տէրը իր  
ամբարնոցին առջեւ հարցուց իրենց դեփ դեղին ու տակնուվրայ ե-  
ղած, թէ ինչո՞ւ պատդարակը ճամբան այնքան ասդին անդին կը  
շարժէր խախտած ձեւով:

Պոստովիդուխտ առողջ մնաց: Մովսէս անոր հայրն ու խոր-  
հրդականը եղաւ: Որքան աղնիւ կ'ըլլար ան իրեն նկատմամբ, այն-  
քան աւելի Պոստովիդուխտ իր սիրտով կը կապուէր անոր, անոր խոս-  
տովանեցաւ Վալերիոսի հանդէպ իր կացութիւնը, եւ Մովսէս անոր  
բոլոր խօսքերէն կրցաւ հաստատել իրեն մէջ այն տպաւորութիւնը՝  
զոր բժիշկը իսկոյն բրած էր իրեն վրայ անոնուական, մաքուր, բարի:

Եւ որքան աչքի դարձող պարագայ: Նոյնիսկ Քրիստոսի մասին  
Պոստովիդուխտ ազատօրէն անոր պատմեց, թէ Մովսէս յարգանք կը  
պարտէր քրիստոնեաներուն համար, եւ այս մասին ալ շատ իրա-  
ւունք ունէր. ամէն ինչ որ Քրիստոս է՝ է նաեւ Միհր, ինչ որ քրիս-  
տոնեաները ունին, ունին նաեւ Միհրի հաւատացեալները: Ինչո՞ւ  
ուրանալ Միհրը: Ինչո՞ւ ոտնակոխ ընել, ինչո՞ւ չյարգել չպաշտել  
երկուքն ալ եւ երկուքին ալ չծառայել: Որքան գեղեցիկ եւ հրաշալի  
կ'արթնար կրկին մանկութեան հաւատքը Պոստովիդուխտին սիրտին  
մէջ: Ինչպէս կրկին կը զգար Մովսէսին մօտաւորութիւնը, երբ այս  
վերջինը անզուգական արուեստով մը կը յիշատակէր իրենց սուրբ  
գիրքին՝ Ավետայի ամէնէն գեղեցիկ կտորները կամ կ'երգէր գա-  
նոնք իր տաւիղին վրայ: Ինչ սուրբ գիրքներ, երբ Մովսէս ու Ար-  
սինէ ազօտ լուսաւորուած սրահին մէջ տաւիղներու ձայներով կ'եր-  
գէին ի մասին Արուսեակին՝ Տիստրայի, կը խօսէին Վաղարշապատի  
վրայ, թաղաւոր թաղուհի ծնողքին վրայ, եւ հետոն Ահուրայի կա-  
պոյտ թաղաւորութեան մէջ իրենց վարած կեանքին վրայ, Միհրի եւ  
Անահիտի վրայ: Արսինէի գեղօնը կրկին ստացած էր սիրալաւ բուռն  
թափին հինաւուրց հուրը, անոր տաւիղին ձայները կրկին աղբիւրի  
պէս կը հոսէին, սառոյցէ դերձ առուններու նման: Ուրախութիւն,  
անդորրութիւն, ապահովութիւն եկած էին դարձեալ իրենց բոլոր

էութեան եւ կերպերուն մէջ կը թնդային իրենց գեղօններէն եւ կը  
փայլատակէին շողարձակումով թաթաւուչ անոնց թուխ, խոշոր աշ-  
քերէն: Ոչ ոք կրնար դուրս մնալ նոր ուղիին ազդեցութենէն եւ ու-  
ժէն: Նոյնիսկ իշխանուհին յակամայս կ'ընէր ինչ որ Մովսէս կը  
փափաքէր կամ կը հրամայէր, մանաւանդ ալ աւելի, երբ անգամ մը  
որ իր ազդեցութեան մասին ապահովուած եղաւ, ծայր աստիճան  
քաղաքավարութիւն ցոյց կուտար Լիկինիայի հանդէպ, եւ օր մը  
օրանց ալ բռնի դաւանափոխութեան ամենափոքր խօսք մը չըրաւ  
իշխանուհին: Եւ ահա այս պատճառաւ հետզհետէ տանտիրուհին  
վրայ կը ներդրծէին Հայաստանի մովսէտին (Մովսէս) անձին  
անդորրութիւնը, անոր ուղիին կամ միտքին պայծառութիւնը, անոր  
իմացականութեան սրութիւնը, անոր դիտութեան եւ ապրումներուն  
անհաւատալի առատութիւնը, որոնց մասին իր պատմութիւնները  
յունական մէն մի հացկերոյթը տօնական իրախճանքի կը բարձրա-  
ցընէին զուարթ կենդանի հաճոյքներով եւ դիւրահաղորդ ազդեցու-  
թեամբ: Մովսէսի ժամանումէն ի վեր Լիկինիա ծանր գործ մը թօ-  
թափած էր իր ուսէն. ծառաներուն վրայ հսկողութիւնը: Հաղիւ երեք  
օրեր անցած էին, Մովսէս ամէն բանի տեղեակ էր, ամէն ծակու-  
ծուկ գիտէր զղեակին եւ անոր ամբողջ շրջակայքին մէջ, — խոհա-  
նոց, ախոռ, լուացարան, գերետուն: Նաեւ ո՛չ մէկ գերի, ո՛չ մէկ  
գերուհի — զոր չճանչնար Մովսէսը: Իր երեւնալը միայն կը բաւէր՝  
բացարձակ հնազանդութիւն պարտադրելու: Լուութիւն կ'ըլլար հոն՝  
ուր Մովսէս վրայ կը հասնէր, այո՛, մինչեւ իսկ իր ետեւէն դարձ-  
եալ նոյն լուութիւնը, կարծես թէ ամէնուն վրայ թեթեւ սարսափ մը  
ձղած էր: Որքան ինքնաշարժօրէն իրեն առջեւ կը ծռէին բոլոր կրո-  
նականները, իր վրայ գալուն պէս՝ բոլոր թեւերը կ'երկարէին խորունկ  
խոնարհեցուցուած գլուխներուն վրայ, ի նշան ողջոյնի: Շատեր կը  
հետեւէին վերակացուին եւ կուխնոսի օրինակին, որոնք ամբողջ  
մարմինով գետինը կը փռուէին Մովսէսին առջեւ: Վերակացուն եւ  
գերիները՝ որոնք իր ժամանակին գացած Պիրէոնէն բերած էին Մով-  
սէսին սնտուկներով ու արկղներով ունեցած հարուստ գոյքերը, տա-  
կաւին կ'ուսումնասիրէին այն խնդիրը, թէ ինչպէս մթերանոցին վա-  
րիչը կրցած էր հարցնել իրենց, թէ ինչո՞ւ համար այս գոյքերը այս-  
չափ երկար առեկէ ի վեր առնուած չէին նաւահանգիստէն, քանի որ  
անոնց տէրը իր գոյքերուն հետ Անտիօքէն նաւով Աթէնք ճամբորդած  
պիտի ըլլայ: Մովսէս սակայն հաղիւ քանի մը շարաթ առաջ մուրաց-  
կանի հազուստով, Հայաստանէն փախած, Աթէնք եկեր է լեռնէ լեռ  
անցներով, Բիւզանդիոնի, Թրակիոյ, Մակեդոնիոյ վրայօք: Ձէին  
կրնար ըմբռնել այս կէտը, նմանապէս իշխանուհին ոչ, թէ բոլոր  
սնտուկները զղեակին ամէնէն լաւ հիւրասնեակներուն մէջ, դեռ

դոց եւ իրարու վրայ դիզուած կը մնան անանկ պատերուն մօտ, փոխանակ ամփոփուելու տրամադրուած դարակներուն, խցիկներուն մէջ, այն պատրուակով թէ անոնց մէջ «սրբութիւն» կայ եւ Մովսէսի պատ ռչ մէկ մարդու ձեռք պէտք չէ դաշի անոնց, նոյնիսկ ռչ ռքէ պէտք է տեսնուի: «Հոս բացողը կը մեռնի»: Մովսէսին այս խօսքը թեւ առած շրջան ըրաւ բոլոր ծառաներուն մէջ, երկիւզ եւ հետաքրքրութիւն արթնցնելով: Մէկը միայն կար սր Սրբազանին անսպասելի դիմադրութիւն մը կ'ընէր, ընդդիմախօսելու ձեւով, ժամանակէ մը ի վեր: Սիւն: Սիւն իր պարեզօտին մէջ, հիմա միայն լան մը եղած էր, զորը իշու գոյնով, կարմիրէն դեղինի փոխուած իր տունի կօշիկներով, իր աւելի խուսացած անխնամ մագերով եւ մօրուքով — Սիւն դարանակալ, աչքերը չորս դին տնկած, հովի պէս կը դառնար նախ նեղ, բայց հետզհետէ լայն շրջանակներով նոր արեւին (Մովսէսի) շուրջ, որ երթալով խաւարեցուցած էր զինքը: Շատ չանցած, այլեւս սեղանի ալ չէր գար, որովհետեւ Մովսէսի աչքերուն հետ պայքարը յոգնեցուցած էր զինքը: Ոնեղ Սիւնի ճկուն լեզուն վարժութիւնը կորսնցուցած, թանձրացած էր, ու եղաւ որ բերանը չէր համարձակեր բանալ Մովսէսին առջեւ, յիշողութիւնը փախաւ, իր գաղափարները իրենց յստակութիւնը կը կորսնցնէին, երբ Սիւն պարտաւորուէր նայիլ Մովսէսին քարեղէն դիմադիծերուն, եւ խոհական խորախորհուրդ երեսին, քիչ մը հեզնական շըրթունքներով: Նաեւ սեղանին վրայ, Մովսէսի ընկերական ճարպիկութեան եւ նրբամտութեան, համարձակ վարմունքին հանդէպ, մանաւանդ կիներուն հետ կենցաղավարութեան մէջ, սկսեալ իշխանուհիէն մինչեւ վարը յետին գերուհին, Սիւն երբեք ինքզինքը այս աստիճան անճարակ ու անընդունակ չէր զգացած: Թէեւ անոր հատուցութիւնը եւ իմացականութիւնը, նոյնիսկ Մովսէսին դատումով, սովորական երեւոյթ մը չէր: Բայց շատ ետ կը մնար Մովսէսին կորովամտութենէն: Սիւն յոյն փիլիսոփաներուն, մանաւանդ Արիստոտէլի ծանօթութեան մէջ, իր միտքը բոլորովին կը շուարէր, կարծես գիտցածը կը մոռնար, ուր մնաց՝ եթէ Մովսէս մտնէր բարելոնական, պարսկական աստղագիտութեան սահմանին մէջ: Ու եղաւ որ Սիւն այլեւս աներեւոյթ եղաւ յանկարծ առանց հրաժեշտ առնելու, ինչ որ անկեղծ ցաւ պատճառեց բոլոր տնեցիներուն եւ ծառաներուն: Մովսէս բարձր այցելութիւններ կ'ընդունէր, զանոնք ճաշի կը հրամայէր, գիշերները եւ ամբողջ օրեր կը հիւրասիրէր զանոնք: Ինք ալ շատ այցելութիւններ կ'ընէր քաղաքը եւ շրջակայքը: Աթէնքի մէջ չկար դէպք մը կամ զրոյց մը, որ սեղանին վրայ խօսքի եւ ուշի ուշով քննութեան նիւթ չըլլար Մովսէսին կողմէ: Լիկինեան ապարանքին բոլոր մարդիկը չէին գիտեր թէ որքան դիւրութեամբ եւ ա-

բազութեամբ կ'անցնէին երկար օրերն ու շաբաթները, որոնց գալը եւ երթալը մէկ կ'ըլլար: Մովսէս իր ժամանակը գերիներուն ալ կը նուիրէր: Սովորական մեթոտով, անոնց հանդիպելուն պէս կը կեցընէր եւ կը սկսէր խօսակցութեան, կը հարցնէր, կը սորվեցնէր, կը պատժէր, կը մխիթարէր: Եւ ոչ քիչ անգամ ամէնէն վարերէն մէկուն զլխուն վրայ կը դնէր մատանեզարդ շողշողուն ձեռքը եւ քրմապետական կամ քահանայապետական պատկառանքով անոր վրայ կը ձայնէր. «Ջաւախ — աղջիկ — ո՞րն է քու հաւատքը»: Ընդհուպ Մովսէս, ձայն ձուն չհանած, դտած էր գերիներու փոքր հաւատարիմ խումբ մը, որոնք պատրաստ էին իրմէ դաս առնելու: Գերիներու յատուկ մէկ սենեակին մէջ անոնք յուզուած ու սրտաթունդ, մտիկ կ'ընէին Այլեստայի վարդապետութիւններ, երկնային երանութեան եւ զժոխքի շարձարանը կը տարածուէին կարգ ըստ կարգէ անոնց երեսներուն վրայ, քրմապետին խօսքերուն համեմատ, որուն դէմքն ու նայուածքը աւելի կը ներդրածէին քան իր խօսքերը: Ամէնքն ալ սա զգացումը ունէին, թէ ան կը կարգայ իրենց աչքերէն ու երեսներէն, թէ ինչ կը խորհէին, թէ ինչ մեղքեր գործած էին: Տաք արցունքներ կը հոսէին խորափիտ աչքերէ, գունատ, թառամած այտերու վրայ, երբ Մովսէս անոնց կը խօսէր կապոյտ երանաշխարհին փառքին, Ահուրայի սկի գահօքին, եօթը սուրբ ողիներուն եւ երկինքի ուրիշ գաղտնիքներու վրայ: Ի՞նչպէս ալ գիտէր արթնցնել ցանկութիւն, հայրենարազձուութիւն, սէր հանդէպ ամէն ազատութեան եւ երանութեան, ախ, ով սրբազան Մովսէս: Գերիներուն վերակացուն միայն կը զարմանար, թէ Մովսէսը ո՞ւրկէց կ'ընար գիտցած ըլլալ գերիներուն թերութիւններն ու բարեմասնութիւնները միանգամայն, քանի որ ինք՝ վերակացուն՝ այդ մասերու վրայ բերան իսկ բացած չէր անոր առջեւ: Արդեօք մարդարէն ուրիշ շատախօս լրատունե՞ր ունէր: Կ'ուզէր լրտեսել այս մասին:

Որքան որ Մովսէսի անձը ապարանքին բոլոր տրամադրութիւններուն կը բաւէր եւ ամէն ինչ կը լեցնէր իրմով, սակայն օրէ օր աւելի կը մեծնար սա փափաքը, թէ երբ պիտի դառնային իշխանն ու իր ընկերացողները: Ոչ թէ անոր համար որ Մովսէսին տէրութիւնը նեղութիւն կը պատճառէր իրենց, ընդհակառակն, ամէնուն հայր եւ խորհրդական դարձած էր ան: Եւ սակայն վախի ու սարսափի անորոշ, տարտամ զղացում մը կար ամէնուն վրայ:

Մովսէս առտու մը քաղաք գացած էր: Ամէն ատենուան պէս լեզուանի, կը պատմէր տեսածներն ու լսածները, բայց յանկարծ լեզուն քաշեց լռեց, իր աչքերը դարձեալ առին հեռաձիգ, տեսակ մը բացակայ նայուածք, որ կարծես պատերէն ու դուռներէն ներս կը թափանցէր: Ամէնքն ալ լռեցին: Կերակուրը կէս մնաց: Թեթեւ սար-



սուռ մը ամէնուն վրայ: Արդեօք մահուան նոր վտաճեց մը կար նա-  
ւորդներուն համար: Ո՛չ: Մովպետի հեռաձիգ այս նայուածքը պէտք  
էր ուրախութիւն ըլլար: Մովպետի ձայնը տարօրինակ կը հնչէր հե-  
ռուէն հեռու, որպէս թէ ծովէն կուգար: «Կը տեսնեմ Լիկինիսոսի նա-  
ւը: Գրեթէ վեց ժամ հեռի Աթէնքէն: Իրիկունը Պիրէոն ցամաք պի-  
տի ելլեն»: Ուրախութեան ճիշ մը փրթաւ իշխանուհիէն եւ Խոսրո-  
վիդուխտէն: Արսինէ լուռ կը մնար եւ կարմրեցաւ մինչեւ մութ կար-  
միրի աստիճան: Վեր չէր նայեր: Մովպետի աչքերը կրակի պէս կ'այ-  
րէին՝ Արսինէի վրայ ինչպէս: Արսինէ գիտէր ասիկա, պիտէր Մով-  
պետը թէ ևս ինչ կը խորհիմ — Լիկինիանոսը:

Իրիկունը նաւը յաջողութեամբ ու անվտանգ հասաւ Պիրէոնի  
նաւահանդիսար: Մանիշակադոյն մասնամուտ մը ծովուն եւ նաւա-  
հանդիստին վերեւ: Զիւրը պատրաստ կեցած էին: Գերիները պատաս-  
խանելով զարմանահար իշխանին հարցումին, թէ ո՞ր կէջ պիտէին որ  
այս իրիկունը կը հասնին եւ ո՞վ հրաման տուած էր իրենց ձիւրով  
դալ, բսին «Սրբազան Մովպետը», եւ նկարագրեցին փոփոխակի Մով-  
պետին անձը եւ կերպերը: Իշխանը ափիբերան մնաց: Լիկինիանոս  
կասկարմիր նեղութենէն ու յուսախաբուցութենէն: Յուզուած կը խոր-  
հէր ան Արսինէի յատկացուած փոքրիկ սեւափայլ արկղիկին վրայ,  
թանկագին մարդարիտներով, մատանիներով, թելի ու պարանոցի  
զարդերով լեցուն: Գերի մը կը կրէր զայն իշխանին յատուկ ճամբոր-  
դութեան սակառին մէջ ուսին վրայ եւ կը քայլէր ճիշտ Լիկինիանոսի  
ձիւնը քովէն: Տրդատին բերանը չէր բացուեր եւ վար առջեւը կը  
նայէր: Ուրախանա՞ր, վախնա՞ր — ինք ալ չէր գիտեր: Հոգեկան  
քայքայումէն հազիւ ապաքինած, պիտի տեսնէր իր հօրը մահուան  
ականատես վկան, պիտի իմանար նորագոյն լուրեր եւ դեռ ինչե՞ր:  
Իսկ իր ազատութիւնը: Իր ուսումնական շրջա՞նը: Սրբազան Մով-  
պե՞տը: Քանիցս այս անունը կրկնեց քիթին տակէն: Յիշատակներու  
հեղեղ մը կը յորդէր իրեն մէջ: Արդէն Վաղարշապատի մէջ յաճախ  
իր ուսուցիչ ու քուրմ Մովպետին հետ պայքարի կը բռնուէր իր կա-  
մապաշտութեան պատճառաւ: Հիմա ի՞նչ պիտի ըլլայ:

Մարմարեայ սանդուխին առաջին աստիճանին վրայ կեցած էր  
Մովպետ, եւ Լիկինիային, Արսինէին ու Խոսրովիդուխտին հետ կը  
սպասէր ժամանողներուն: Անթերի քահանայապետական զգեստաւո-  
րումով, մուրացածոյ բոլոր բովանդակ պերճափայլութեամբ հոն կե-  
ցած էր Մովպետը, յոյժ անդորր, չափ ու կշիռ ըստ ամենայնի ուրա-  
խութեան եւ շփոթութեան առանց որեւէ արտայայտութեան: Ոչ մէկ  
քայլ՝ ժամանողները դիմաւորելու համար: Զեռքը սակայն վեր կ'առ-  
նէր օրհնարանութեամբ եւ կ'երկարէր դէպի հազիւ սանդուխին կէսին  
վրայ կեցող իշխանը, եւ կը ձայնէր լիաձայն.

Փառք եւ երկրպագութիւն Ահուրա — Մագդայի

Տեսնեմ երկնից եւ երկրի:

Փառք սուրբ ցուլին, միածնին,

Փառք եւ երկրպագութիւն Միհրի, որուն հազար աչքերը

Պահպանեց ձեզ՝ իշխանները եւ ետ դարձուց անվտանգ:

Փառք եւ երկրպագութիւն Անահտայ, մեծին Աստուածուհոյ:

Եկեցէ ի տունս եւ ի բնակութիւնս ձեր

Գոհութիւն, օրհնութիւն, նշարտութիւն, իմաստութիւն սրբոց:

Այս գերդաստանին եւ անոր տիրոջ թող երեսայ

Սրբութիւն, իշխանութիւն, օրհնութիւն, օրհնութիւն մարդոց եւ  
անասուններուն:

Սուրբ Սրաօշան թող զարնէ սատակէ անհնազանդը, ապստամբը,

Անոր խաղաղութիւնը թող զարնէ անխաղաղաբարը, անոր

բարեգործութիւնը՝ ժլատը,

Իմաստութիւնը՝ նախատողը, նշարտութիւնը՝ ստախօսը:

Անպակաս թող մնան պատարագն ու ազօթքը:

Սուրբ պատարագն ու ազօթքը, կերակուրը բարի,

Երջանիկ, սիրագեղ օգնականութիւն:

Թող այս տունին մէջ բնաւ չմարի շողն ու վեհութիւնը:

Աշէմ — Վօհու: Աշէմ — Վօհու: (Ամէն, ամէն: Այժմ եւ միշտ):

Մինչ Մովպետ շատ վերապահութեամբ ընդունեց իշխանը եւ  
Տրդատն ալ ողջունեց լուկ հարեանցի, յարգալից ծիծաղով մը, աջ  
ծունկը պատկառանքով խոնարհեցուց Լիկինիանոսի առջեւ, կարելի  
եղածին չափ խորը թաղեց գլուխը ափիբերան եղողին առջեւ, դարձ-  
եալ վեր առաւ, դէպի Լիկինիանոս ուղղուելով անոր նայեցաւ տեսա-  
նողի այն հեռանկար նայուածքով, եւ ձայնեց բարձրագոյն. «Ողջոյն  
կեսար Ինքնակալ Լիկինիանոս»: Այս վերջինը բարկացած անոր նայե-  
ցաւ: Ոչ միայն Արսինէի պատճառաւ որ հիմա, երկար բաժանումէ  
մը վերջ սանդուխին վրայ կրկին տեսութեան միջոցին ամէն ժամա-  
նակէ աւելի զեղեցիկ եւ ցանկալի կը հանդիսանար, որուն կը ձգտէր  
ինք բովանդակ կարողութեամբը, այլ նաեւ, որովհետեւ Մովպետի  
այն ձեւով ուսուցիկ ողջունարեութիւնը իրբեւ անախորժ շողջոր-  
թութիւն մը եկաւ իրեն: Մովպետ կարողացաւ նշմարել ասիկա,  
բայց յամառեցաւ իր դիրքին մէջ, գիտցածէն չչեղեցաւ, նոյնիսկ  
աւելի աւելի ուժովուց հեռանկար նայուածքը, եւ վերջապէս կըրկ-  
նեց առաջուրնէ աւելի հանդիսաւոր, բարձր. «Ողջոյն կեսար Ինքնա-  
կալ Լիկինիանոս»:

Հիմա հայր եւ որդի վարանեցան, անճրկած էին, եւ երկուքն  
ալ արտակարգ զարմանքով մը, ապշուցեցան մը կը նայէին կրկին

նոքի ելլող Մովսէսին, որ, կարծես փոխուած, եւ ինք իրեն նորէն դարձած, դամէնքը կը հրաւիրէր միեւնոյն շատախօսութեամբ, ներս գալ: Մովսէսի վրայ վերադարձողներու զարմանքը ժամէ ժամ կ'աճէր, օրէ օր կ'աւելնար: Յարզ իշխանին միայն պահուած ամենալաւ հիւրասենեակներուն յատկացումը, զերիներուն անպայման հընազանդութիւնը, ամէն կողմ տիրող կարգ կանոնը, զերեսունին մէջ զերիներուն արտասովոր հանդիսական երգեցողութիւնը, կիններուն կողմէ Մովսէսին վայելած սաստիկ եւ մոլեռանդ յարգանքը, ամէն ինչ այնքան մաքուր, — ամէն ինչ այլակերպուած, կարծես երկնային լոյսով եւ տօնական օրերու շողակաթումով: Իշխաններուն հիացումը աճեցաւ, երբ այդպիսի իրիկուն մը կը նստէին մատենադարանի սրահին մէջ, իմացան Սոսրովիդուխտին առողջանալը, եւ Մովսէսին փախուստին եւ կրած նեղութիւններուն մասին: Մինչ բոլոր նայուածքները կը կախուէին փառաւոր պատմողին բերանէն ու աչքերէն, Սոսրովիդուխտ աճեցուն հիացումով մը զիտել տուաւ, թէ ինչ ինչ աննշան մանրամասնութիւններու մէջ Մովսէսին այս իրիկուան պատմութիւնը կը տարբերի նախորդ պատմածներէն: Բայց իսկոյն համոզուեցաւ եւ դարձեալ այն հզօր միտքին հմայքին ենթարկուեցաւ: Մովսէս յաղթական մնաց: Իր նայուածքն ու խօսքը կը տիրապետէին ամբողջ ընկերութեան, որուն վրայ դարձեալ կը հանդէպ անոր հանդէպ սարսափի եւ պատկառանքի հետ խառնուած զոսացումը, ծինելոյցին կրակին եւ քանի մը արոյրէ աշտանակներու աղօտ լոյսին մէջ: Այս էր տրամադրութիւնը: Մովսէսը ասկէց օգուտ քաղեց եւ անողորմ մանրամասնութեամբ նկարագրեց հանդիսութիւնները արքայական ամօրին յուզարկաւորութեան անթիւ: Բայց — զարմանք արդարեւ — իր աչքերուն դիւթանքին տակ, իր բառերուն անխռով հանդարտութեան եւ սակաւութեան վրայ՝ որեւէ լացող չեղաւ: Իրաւ է որ Սոսրովիդուխտ արտասուածքներով աչքերով կը նայէր սրահին մթութեան մէջ ամէն կողմ, եւ Տրդատ գլխահակ կը նստէր մարմարեայ աթոռի մը վրայ ծինելոյցին մօտ եւ թախծադին աչքերով տակէն վեր շարունակ Մովսէսին կը նայէր, որպէս թէ կ'ուզէր մէն մի բառը, մէն մի շարժումէն զինել ու միտք պահել: Մովսէսին պատմածէն կը տեսնէին, այո, կը տեսնէին, թէ չար ողիները մահամերձիկներուն հոգիներուն վրայ դարան լարեր են, կը տեսնէին դիակներուն լուացուիլը, մաքուր կտաւներուն մէջ փաթթուիլը, երկաթեայ դադաղներուն մէջ պտուկիլը Վաղարշապատի սիւնադարդ սրահին կեդրոնը, կը տեսնէին Մովսէսը որ սուրբ ուստիւնը կը կաթեցնէր մեռեալներուն բերանին եւ ականջին մէջ: Դիակի զգուելի ճանճը կը թռչի, Ահրիմանին կողմէ զրկուած, դիակախարդի կերպարանքով, բայց չորս աչքով շունը, ճակատին

երկու ցցունքովը կը վտարէ չար ողիները: Դեւերը քշող ծուխը, ճանդան փայտէն առաջ եկած, կրակի ամանէն դուրս կը դալարի: Մեռելներու դադաղէն երեք քայլ միայն բացէն՝ Մովսէս եւ ուրիշ քուրմեր մեռելական աղօթքները կ'արտասանէին, սպիտակազգեստ, ճերմակ ժապաւէններ յերանին առջեւ: Երկու ուրիշ քուրմեր կը վախտէին շարունակ դեւերը որոնք կը խուժէին ճանճերու եւ մթեղներու կերպարանքով: Սպիտակազգեստ դադաղակիրները կուգան, ծուխէն պարածածուկ, երեսին մինչեւ աչքերը քողարկուած: Ահագին բազմութիւնը դադաղներու կը հետեւի մամիջաձայն աղօթքներով: «Լուութեան աշտարակ»ները (Դախմա) կը յայտնուին: Վաղարշապատէն մղոններով հեռի, ազգականներ ու պաշտօնատարներ կը կենան, ետեւ կը մնան, եւ հեծեծագին կը նային բիւրաւոր ժողովուրդին, որ բարձրակառանջ, վրէժ երդուրնայով՝ կը հետեւէր յամբարձրաց դադաղներուն: «Լուութեան այդ Աշտարակները ի՞նչ ձեւ ունին», ընդմիջեց իշխանը Մովսէսին խօսքը, այս առաջին անգամ ըլլալով: «Տասներկու ոտք բարձր», բացատրեց Մովսէսը զլուսի շնորհալից հակումով եւ աչքերու քթթումով, «կլոր, քարէ աշտարակներ: Տանիքը, չորս կողմէն դէպի ներս շեղ երեսով, բաւական լայն, կլոր բացուածքի մը վերեւ, ուրկից դիակներու ոսկրները եւ կմախքը աշտարակին մէջ վար կ'իյնան, կոր տանիքին վրայ երկինքին թռչուններուն կողմէ մտաքանց ըլլալէ, եւ անձրեւին տակ փտելէ վերջ»: — «Ինչո՞ւ անոնց դիակները չէք այրեր կամ չէք թաղեր», ձայնեց Լիկինիանոս բարկութեամբ: «Վայ, վայ, վայ», դոչեց սրբազան Մովսէսը զգուանքի եւ սարսափի բոլոր նշաններով, դէպի ետ իյնալով, ձեռքերը ամէն կողմ շարժելով, որպէս թէ պարտաւորուած էր դեւերը փախցնել: «Վայ, վայ: Ի՞նչ ալ կը մտածես, դուն կը մեղանչես սուրբ կրակին դէմ, սուրբ հողին դէմ: Լուութեան Աշտարակը ոչ մէկ անգամ պէտք է կենայ սուրբ հողին վրայ: Բայց որովհետեւ ուրիշ կերպ չի կրնար ըլլալ, ուստի Դախմային չորս փայտէ սիւններուն շուրջ ոսկեղէն բուրդէ լար կը քաշուի: Ասիկա կը նշանակէ, թէ Դախման իսկապէս պէտք է օդին մէջ կենայ: Ահուրան եւ լոյսի աստուածները այս մասին մարդոց կամքը կը հաճին ընդունիլ իբրեւ գործ, իբրեւ իրականութիւն»: Լիկինիանոսի հեզակական ծիծաղը չվրիպեցաւ Մովսէսի աչքերէն: Մովսէսին դանակի պէս սուր ակնարկը անոր հանդիպեցաւ: Ի՞նչ կար այդ նայուածքին մէջ: Գրեթէ սա. «Ես քու կարծածէդ աւելի գիտեմ, Լիկինիանոս»: Եւ ահա ասոր վրայ Մովսէսին երգիծական դիտողութիւնը. «Հոռո՞ւ եւ Յունաստանի աստուածներն ալ իրենց հետեւողներուն կամքովը աւելի գոհ կ'ըլլան քան գործադրութեամբը»: — «Շարունակեցէք պատմել, զերապատիւ Մովսէս», խնդրեց ծեր իշխանը, որ ամբողջ այս իրիկունը Մովսէս

պետին ազդեցութեան տակ ինկած էր յայտնապէս, եւ լուռ ու ինք  
իրեն մէջ թաղուած, կը նստէր ծաղիկի տերեւներ եւ կենդանիի գը-  
լուխներ չքեղօրէն փորագրուած աթոռին վրայ: «Ուստի մտիկ ըրէք  
դարձեալ, լոյսի դաւակներ», շարունակեց Մովսէսը: «Մինչ ար-  
ծիւներ եւ անպղնձեր կը սպառէին արքայական դիակները եւ գիշերն  
ալ Տրուիդները (գիակի դեւեր) կարմիր բոց աչքերով եւ սեւ թռիչ-  
ներով կը սլանային Դախմային շուրջ եւ դարանակալ էին մեռելոց  
հոգիներուն, արքայական ամուլին հոգեհանգիստին համար բոլոր մեր  
արարողութիւնները մեր կողմէ հաւատարմօրէն կատարուեցան:  
Սուրբ կրակը ինն օր վառեցաւ տաճարին եւ պալատին մէջ: Լապ-  
տերները չմարեցան, շուրին կուժը միշտ լեցուած էր: Երեք օր ծոմ  
պահեցինք ամէնքս: Առտու իրիկուն աղլականները ծաղիկներ կը  
բերէին, ամէն օր կ'արձագանդէին մեր աղօթքները (Կահ, Փաթէթ  
եւ Աֆրիկան) ի պատիւ փրկողին՝ Սրաօշայի: Զօթ եւ Բասպի երեք  
օր լոկի մնջիկ նստան դիմացը եւ ձեռքէ ձեռք տուին ծաղիկները ար-  
քայական սրահին մէջ, ուր մեռելները դադարներուն մէջ գրուած  
էին: Արդարներուն օրհնութիւնը՝ Աֆրիտեան Դահման փակեց սուզի  
առաջին օրը: Երկրորդ օրը ծագեցաւ: Սրաօշա ընդունեց իր հացա-  
զոհը, Տրօնա՝ տափակ կարկանդակ, կամ Տօրում կոչուած, հե-  
տեւաբար նաեւ այս ամբողջ տօնը Սրօշ — Սրաօշայէն եկած, որ մեր  
օրհնարանեալ փրկիչն է — եւ Տօրում նաեւ կը կոչուի Սրօշտօրում:  
Չոհաբերումէն վերջ սուրբ հացը բաշխուեցաւ եւ յետոյ տեղի ու-  
նեցան աղօթքներ, երգեր, զոհեր սուրբ գիրքին կանոններուն համա-  
ձայն: Սուզի երրորդ օրուան կանոնները միայն չգործադրուեցան:  
Մահամերձ թագաւորը, որուն արիւնահոս վէրքին առջեւ ես ծնրա-  
դրեցի, հրամայեց ինծի ամենաբարձր անուններու վրայ եւ ինծի  
միայն» — կրկնեց Մովսէսը հանդիսաւոր լրջութեամբ մը շուրջը  
գտնուողներուն վրայ նայելով — «որ ես պահպանեմ արքայական  
դանձը, եւ վտանգի ժամանակ ծածկեմ դադտնի տեղ մը: Ուստի ոչ  
մէկ կտակ բացուեցաւ եւ երրորդ օրուան տօնը — կտակի բացում —  
բարձի թողի եղաւ: Զորրորդ օրուան մթնշաղին մենք ամէնքս,  
քուրմ, ազգական եւ լացող ժողովուրդին ամբողջը, կը մրցէինք ի-  
րարու հետ արքայական ամուլին հոգիներուն փրկութեան շուրջ, ո-  
րոնք կը թափառէին մաղէ նեղ կամուրջին վրայ, Միհրի դատաստա-  
նին առջեւ ելլելու համար: Ո՛չ մէկ պատարադ, ո՛չ մէկ աղօթք մոռ-  
ցուեցաւ: Անդադար կ'աղօթէինք մինչեւ որ ես տեսայ թէ անոնք  
փրկուած են, ձինվաթէն «մաղէ կամուրջին» անցած են: Մենք քուր-  
մերս յետոյ թագաւորին զգեստներուն մեծափարթամ գանձէն իւրա-  
քանչիւրս առինք տօնական հագուստ մը: Ես առի թագաւորին սա  
մութ կարմիր ծիրանի վերարկուն զոր հոգին տուած ատեն ինծի

խոստացած էր, որպէսզի իր եւ իր կողակիցին հոգին չմտի յարու-  
թեան ատեն»: Ալ բաւական էր: Իշխանին գլուխը երթալով աւելի  
խորը թաղուեցաւ կուրծքին վրայ: Կիները մեղմիկ կ'արտասուէին:  
Լիկինիանոս ոտքի ելած ժուռ կուզար խոշոր քայլերով սրահին շուրջ,  
յետոյ դարձաւ եկաւ եռոտանի սեղանին մօտ, որ դետեղուած էր Մով-  
սէսին բազկաթոռին առջեւ եւ դաւաթ մը լեցուց խմեց: Տրդատ  
նեղսրտած կը նայէր Մովսէսին, անոր չէր վայլեցներ ծիրանի վե-  
րարկուն որ Մովսէսին կերպարանքը կը ծածկէր վերէն մինչեւ ոտ-  
քերը թանձր սեւ ծալքերով: Մոռցած էին լապտերներու մէջ իւր լե-  
ցընել, եւ անուխը արծարծել ծխնելոյլին մէջ: Կրակին դուր ջեր-  
մութիւն կը տարածէր եւ փողփողուն շուքեր պատերուն վրայ եւ գե-  
տինը: Ոչ ոք կը խօսէր այլեւս: Մովսէս աթոռին վրայ անշարժ  
փռուած էր եւ լուրջ խորհրդածութեամբ կը յառէր գոլին եւ իր խա-  
ղերուն: Երեսը կարմիր լուսաւորուած: Իշխանին աչքը Մովսէսէն  
չէր հեռանար, սա հոնտեղի մարդը, կ'ըսէր ինքն իրեն, ծնօտը ձեռ-  
քերուն մէջ առած եւ թեւերը ծունկին կրթնուցած, իր նմանը չտես-  
նուած երեսովը առեղծուած մը կը թուի ինծի, սա անմաղ երեսին մէն  
մի ծալքը, մէն մի խորշումը, բերանին մէն մի անկիւնը կարծես բան մը  
կ'ըսեն: Հիմակ ալ, նայեցէք, քարացած անշարժութիւն մը կը դարի  
իրեն վրայ, կարծես Սփինքսի դէմքն է, խորհուրդի մը, յիշատակի  
մը, որոշումի մը արտայայտութիւնը շուքի մը պէս կը սրսփայ այդ  
դէմքին վրայ: մերթ թեթեւ, հազիւ նշմարելի ծիծաղ մը, մերթ  
դարձեալ քարացած անգորրութիւն մը: Այս մարդը ի՞նչ կը մտածէ,  
ի՞նչ կը խորհրդածէ: Այսպէս կը խորհէր Լիկինիոս: Կերեւի, թէ  
այդ րոպէին Մովսէսը իր խորհրդածութիւններուն ծայրը հասած  
էր: Անխօս, առանց բոլորտիքը նայելու, ոտքի ելաւ եւ անապարեց  
դուրս երթալ, ինքնակալ մը ծիրանաւոր: Ընտանիքը միայն լուռ-  
թեան մէջ էր: Ամէնքն ալ նստած էին կամ ընկողմանած, ինչպէս որ  
թողուցած էր գիրքնք Մովսէսը, երբ վերադարձաւ ան, մէկ ձեռքը  
տաւիղը, միւս ձեռքին մէջ, զոր կուրծքին վրայ բռնած էր, առար-  
կայ մը կար սեւ լաթի մէջ փաթթուած: Ամէնքն ալ անոր կը հետեւէին  
նայուածքներով, անոր որեւէ շարժումին, զոր կ'ընէր: Կը տեսնէին,  
թէ ի՞նչպէս յաճախ կ'երթար մէջտեղը գտնուած եռոտանիին քով  
ամէնուն իր կոնակը դարձուցած, եւ յետոյ նոյն հանդարտութեամբ  
երերալով կը դառնար իր բազմոցին կողմը, գլուխը ետեւ նետած,  
հանդիսաւոր ձեւով, վայելչօրէն կը տեղաւորուէր, երեսը ամէնուն  
դարձուցած հիմա, տաւիղը կ'առնէր բազմոցին վրայէն եւ կը սկսէր  
ածել: Եռոտանիին վրայ կային երկու ձուածեւ սպասներ ձիւնասպի-  
տակ գածէ: Անոնց մէջէն դուրս կը բարձրանային թագաւորին ու  
թագուհիին պատկերները, հարթ քանդակ բնական մեծութեամբ,

մեռելական դիմակները կատարեալ բնականութեամբ: Երեբուն լոյսերը իրենց վերջին կարմիր շողը կարձակէին փողփողենէջ, մեռելական պատկերներու վրայ: Իրիկնամուտի կարմիրը փռուած էր անոնց վրայ: Պաղատութիւն եւ անդորրութիւն: Թագաւորին երեսը մահուան ծանրախոհութիւնը ունէր: Շրթունքը խիստ պրկուած: Աչքերը փակ: Բայց դէմքին վրայ խոր հանդարտութիւն որ մխիթարութիւն կը ներդրածէր: Թաղուհին թեթեւ մը գոցած էր աչքերը, չրթունքը մեղմիկ ամփոփած, ամբողջ դէմքին վրայ կը հանգչէր աղնուական, վեհափառ հպարտութիւն մը եւ բարեբաստիկ ծիծաղի մը յուշիկ, հազիւ տեսանելի դրոշմը: Մովսէսի ձայնը հնչեց եւ իր տաւիղին խորունկ ձայնարկութիւնները կը կարկաջէին անդեղեւուն, երգեցիկ, ազդու, զուարթ մեղեդիներով մահատիպ լուսութեամբ սրահին մէջ: Մովսէս կ'երգէր.—

Զրադաշտ հարցուց, «Ահուրա—Մագդա,  
Դուն երկնաւոր, Սուրբ, Ստեղծիչ արարածոց,  
Սուրբին հոգին ո՞ր կը բնակի իր մեռնելուն առաջին օրն»:  
Ահուրա այսպէս. «Գլխուն մօտերը կը բնակի այն գիշեր»:  
Օրինեալ ա՛յն մարդն որ փրկութեան պատճառ ըլլայ ամէնուն:  
Այդ գիշերը անոր հոգին անպատմելի ուրախութեամբ կը հրճուի:  
Հարցուց կրկին Զրադաշտ. «Երբ սուրբ մահուր մարդ կը մեռնի,  
Երկրորդ գիշերն ո՞ր կը բնակի անոր հոգին»:  
Ահուրա. «Գլուխին մէջ: Լիով նովին խնդութեամբ»:  
Զրադաշտ հարցուց. «Երրորդ գիշերն ուր կը բնակի»:  
Ահուրա պատասխանեց. «Նոյն եւ նման — գլխուն մէջ»:  
Բայց երբ երրորդ գիշերը խոյս տայ առտուն,  
Եւ լոյսը խոր կը տարածուի երկրի վրայ,  
Սրբակրօն մարդուն հոգին փայլեր առնել ևր սկսի,  
Հոգեպաշար անոյշ բոյրով տունկերուն,  
Դէպի առաջ եւ դէպի վեր, երեսն ի վեր կը փչէ  
Բուրումնալից հով մը որուն նման չկայ երկրի վրայ,  
Բոյր մը բխած ծաղիկներէ, պտուղներէ,  
Շքեղ հով մը գայն կը բերէ հարաւակայս երկրէ մը,  
Եւ արդարեւ գայն կ'ըմպէ իր հոգիին խորքին մէջ,  
Եւ ինքն իրեն կը խօսի զարմանահրաշ հիացումով.  
«Այս հովն ո՞ր կէտ, խնկաւետուած ու նարդունի,  
Երկրի վրայ երբեք ռնգունեփս այսպիսի հով չպարարեց»:  
Սիրուն աղջիկ մը պատասխան բերաւ անձամբ արդարին,  
Շողակաբ թեւերով, ստինքներովը յուռթի,  
Անեցուն հասակով, երեսոյթով նրբաւարտ,  
Եւ բուրած տարիներու թիւ մը հազիւ տասն եւ հինգ,

Սուրբին հոգին կը հարցնէ աղջկան ո՞ր կէտ կ'երթայ,  
Եւ ո՞վ է ինք: Եւ պատասխան կուտայ ան,  
Դո՛ւն սուրբ անպիղծ, չե՞ս քանչնար գիս: Ես քու անձն եմ, դուն  
ինքնին:

Քու խորհուրդը, քու խօսքերը, քու գործերը աշխարհի մէջ,  
Քու սեփական բարի օրէնքդ, որով երկրի վրայ կեանքդ վարեցիր:  
Նոյն մեծութեամբ, նոյն բարութեամբ, գեղեցկութեամբ միտքի,  
մարմնի,  
Բուրումնաւետ, յաղթապանծ, եւ անտրտում, ինչպէս դուն ինձ  
կ'երեւաս:

Համանման ինձ, բարեխորհուրդ, բարեխրատ եւ բարեգործ,  
Ահուրայի բարեբարոյ օրէնքներուն հնազանդ:  
Մեծ, գեղեցիկ ու մահուր ես ղուն, ինձի պէս որ կ'երեւնամ»:  
Արդար հոգին իր առաջին փայլը առաւ, ու դրախտին առջեւ կեցաւ.  
Երկրորդ փայլը դէպի Հուխտա, եւ փիչ մըն ալ աւելի.  
Երրորդ փայլը դէպ Հավարտա, ալ աւելի ճառագայթուն.  
Չորրորդ փայլը հուսկ ապա դէպի լոյսը լիալիր:  
Ու հոն ահա սաւառնաթեւ կը նեմեն հին արդարներն համօրէն.  
«Ըսէ, արդար, փրկակիցդ մեր եղբայր, քամբան երկա՞ր ու  
ծա՞նր էր քեզ,

Երբ մարմնասէր մարդոց երկրէն, դրամապաշտ միջավայրէն,  
Եւ երկրաւոր գոյքերէն, քոյսութենէն համօրէն  
Եւ աղցաւոր ու ծանրակիր երկրէն դուրս,  
Ճամբայ ելար դէպի անանց անախտակիր Միտքն ու լոյս:  
Թախծալից միանգամայն սիրահաղորդ ակնարկելով, արդարն  
ըսաւ.

«Մի հարցներ: Եկայ, եկայ, գերծ վերջապէս տառապանքէն,  
Եւ ահաւոր աղջամղջին այն քամբէն,  
Ուր մարմինն ու հոգին կ'ապրին անջատ իրարմէ»:  
Եւ ահա անոր բերին կեանց հացը ու ըմպելին,  
Եւ մանաւանդ ... մտացութիւն երանաւետ:

Բովանդակ ընկերութեան մէջ ոչ մէկ անգամ կը շարժէր: Ոչ  
մէկ արցունք կը հոսէր: Բայց Մովսէսի երգած միջոցին Տրդատ  
ոտքի ելած էր: Եւ անձայն քալեց գորդին վրայէն դէպի եռօտանին:  
Երբ Մովսէս վերջին բառերը կ'երգէր եւ տաւիղէն աղբիւրի պէս կը  
դգջէին երանաւետ սփոփանքներ, ահա տեսնուեցաւ Տրդատ ծունկի  
եկած եռօտանին առջեւ: Զեռքերուն միջեւ բռնած էր հօրը պատ-  
կերը: Դուռը գլուխը, կարմիր գոլի հեղեղին տակ, կը կախէր պատ-  
կերին վրայ: Շրթունքները կը սեղմէին մեռած թագաւորին շրթունք-  
ները: Այսպէս յարատեւեց ան մինչեւ որ վերջապէս սպառեցան Մով-  
սէսի տաւիղին հազիւ ալլեւս լսելի շեշտերը:

## ՄՈՎՊԵՏԻ ԺԱՄԲԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Լիկինիոս իշխանին համար մտաւոր վայելքի եւ բարձրութեան բոլորովին նոր ժամանակներ եկան հասան, վայելքներ եւ բարձրութիւն զոր չէր ունեցած ցարդ այդքան ուժով: Առաւօտ չէր անցներ որ ինքը եւ Մովսէս մատենադարանի սրահին մէջ դէմ առ դէմ չը նստէին եւ գիտական խորունկ խօսակցութիւններու չընունէին: Հոռոմայեցիներուն եւ Յոյներուն քերթողները կը կարդացուէին եւ խօսքի նիւթ կը դառնային: Կրօնները, փիլիսոփայութիւնը, գեղարուեստը, օտար ժողովուրդներու սովորոյթները եւ բարոյականութիւնը, աստղագիտութիւն եւ երկրաբանութիւն կը փոխանակուէին բնական կարգով իրրեւ նիւթ խօսակցութիւններու, եւ իշխանը յաճախ խորին լըռութեան մէջ կ'ընկղմէր Մովսէսին գիտութեան եւ գաղափարներուն անսահման լիութեան առջեւ եւ անոր իմացականութեան անլուր ճշգրտութեան հանդէպ: Լիկինիոս բոլորովին անձնատուր եղած էր անոր: Միհրական կրօնքին գաղափարային աշխարհին հանդէպ անոր յարգանքը եւ մոգերու իմաստութիւնը որուն մէջ ներածեալ մըն էր, շատ չանցած այնքան մեծարելի դարձած էր իշխանին համար, որ Մովսէս առտու մը հազիւ թէ հեռուէն հեռի փափաք յայտնած էր Դարաստանին բլուրին վրայ Անահիտի սրբավայրին մօտ Միհրատուն «Ատրուշան» մը կանգնելու, իսկոյն իշխանը համամիտ գրտնրեցաւ պատանեկան խանդավառութեամբ: Ծրագիրներ կազմուեցան, ծախքերը հաշուուեցան, Ապեղէս ճարտարապետ որոշուեցաւ: Քաղաք ըրած իր պտոյտներուն եւ այցելութիւններուն առթիւ իշխանը հետզհետէ իմացաւ, թէ իր հիւրը արդէն որքան ծանօթ եւ յարգըած էր գիտնականներու եւ արուեստագէտներուն շրջանակներուն

մէջ, թէ քրիստոնեաներուն եւ թէ հեթանոսներուն կողմէ, եւ նոյն-  
իսկ փողոցի պարզ ու վար շրջանակին մէջ: Ոչ մէկ տեղ յայտնած չէր  
իր կրօնքը, ոչ մէկ տեղ հրապարակաւ խօսած, կամ հռետորներու  
յատուկ սովորական ճեմավայրերու մէջ կամ Արիստոփոսի եւ կամ  
Ակոդեմիոյ պարտէզներուն մէջ չէր մասնակցած հրապարակային վի-  
ճարանութիւններու: Բայց անոր հանդիպողը կը կենար անոր ետեւէն  
կը նայէր: Զով որ լրջօրէն եւ խորապէս քննէր խուզարկու նայուած-  
քով, որու որ ժպտէր սիրայիր, կը հմայուէր այնպիսին, կը կենար  
կը նայէր, պահ մը անոր հետ ժուռ կուզար եւ վստահութեամբ լե-  
զուն, կ'ըսէր անոր ինքնաբերաբար որ, թէ ո'ւրկէց կուզայ, թէ ո'վ  
է ինքը, ինչ է նպատակը, ո'ւր կ'երթայ, ինչի կը հաւատայ, ինչ  
գիտէ եւ ինչ չի գիտեր: Շատերուն խորհուրդներ եւ դարմաններ  
ցոյց տուած էր եւ քանի մը օր վերջ անոնք իրենց ցաւերէն կ'ազատ-  
ուէին: Քիչ ժամանակի մէջ անիկա ճանչուեցաւ իբրեւ օտարազգի  
բժիշկ: Ուրիշները կարողացաւ մխիթարել սքանչելապէս Քրիստոսի  
կամ Առաքեալներու խօսքերով եւ քիչ ատենէն քաղաքին մէջ անուն  
հանեց նաեւ իբրեւ օտարազգի քրիստոնեայ եպիսկոպոս: Ուրիշներ կը  
լսէին Մովսէսի բերանէն Մարկոս Աւրելիոսի կամ Սենեկայի խօսքերը  
կամ անձանօթ խորախորհուրդ իմաստութիւն մը հեռաւոր արեւել-  
քէն եւ, այսպէս, անոնց աչքին Հայոց թագաւորին քրմապետը կամ  
քահանայապետը փիլիսոփայի, մոռի հանդամանք ալ կը ստանար  
յաճախ: Պաւղա եւ Յուդիթ, շատ ծանօթներ, որոնք իշխանին եւ իր  
զաւակին ճամբորդութեան միջոցին քիչ կամ ոչ եւս կուզային Լիկիւն-  
եան զղեակը, հիմա կուզային նորէն, յաճախ կուզային, եւ Մովսէս  
շատ իրիկուններ կը խօսէր մատենադարանի սրահին կամ տօներու  
յատուկ մեծ սրահին մէջ Աթէնքի ամենաբարձր շրջանակներուն առ-  
ջեւ: Ընդհանրապէս հանդարտ կը նստէր հիւրի մը պէս Լիկիւնիոսի  
քով սրահին յառաջակողմը մէջքը ծիրանի դօտին փաթթած: Զիւնաս-  
պիտակ վերարկուն իբրեւ պճղնաւոր, քունքերուն շուրջ դոճարազարդ  
ապարօջ մը, մատանեշող ձեռքերը տափակ կողմէն ծունկերուն վրայ  
դրած, անշարժ: Աչքերը միայն կը չափէին հաւաքոյթը եւ ի վերջոյ  
բոլոր ունկնդիրները կը մնային անոր անխուսափելի հմայքին տակ:  
Կը թուէր գիտակ ըլլալ ներկաներուն հաւատքին, որովհետեւ հաւա-  
կը թուէր գիտակ ըլլալ ներկաներուն հաւատքին կը շօշափէր մէն մի  
սար ջերմիկ յարգանքով եւ ծանօթութեամբ կը շօշափէր մէն մի  
կրօնք, ամենաջերմ կերպով հրէականն ու քրիստոնէականը, եւ ամէն  
բանէ առաջ կրնար ի ներկայութեան Յուդիթի եւ Պաւղայի անոնց ա-  
մուսիներուն հետ քննել միհրական հաւատքին եւ նոյն երկու կրօն-  
ներու միջեւ գտնուած առընչութիւններուն վրայ: Յուդիթ բոլորո-  
վին աչք ու ահանջ կտրած էր, երբ Մովսէս խօսէր, եւ Յուդիթին  
մինչեւ ներքինը շօշափող անոր կողմնակի նայուածքը մերթ ընդ

մերթ նշանակալից էր: Յուդիթին ամուսինը անհանդիստ կ'երբար  
այս ու այն կողմը իր աթոռին վրայ, երբ ի մեծ դարձացումն իրեն  
Մովսէս հրեային սեղանաւորական աշխարհին գաղտնիքները կը  
պարզէր եւ ձեռքով շօշափելու աստիճան պայծառութեամբ կը նկա-  
րադէր ոսկիին դեւերը: Պաւղա կը հիանար Նոր Կտակարանին մա-  
սին անոր խոր ծանօթութեան վրայ, նաեւ թէ ինչ ճարտարութեամբ  
քրիստոնեաներուն կ'արտայայտէր իր գաղափարները, ըլլայ խօսքով  
ըլլայ պատկերներով: Լիկիւնիանոս որքան ալ դուրսէն անկախօրէն  
կը թուէր վարուել Մովսէսին հանդէպ, — բայց ան ալ բոլորովին  
Մովսէսին հմայքին դերի դարձած էր, եւ քրմապետը կ'օգտագործէր  
որեւէ առիթ կամ պատահութիւն, իրեն զգալի ընել տալու համար  
դաստիարակութեան, գիտութեան եւ խորհելու արուեստին մէջ ու-  
նեցած թերութիւնները: Նոյնիսկ ռազմավարութեան մարզին մէջ  
Մովսէս իշխանին եւ Լիկիւնիանոսի առջեւ կը պարզէր ճատրակի սե-  
ղանին վրայ տեսական տեղեկութիւններ եւ ընդհանրապէս երկուքն  
ալ կը պարտուէին Մովսէսին կողմէ: Բայց Մովսէս շատ աւելի  
կ'ազդէր երիտասարդ իշխանին վրայ, որովհետեւ ան գիտէր թէ որ  
տեղերէն պէտք է դառնալ Լիկիւնիանոսի շուրջ, թէ անոր տրամա-  
դրութիւնները ինչ են: Մայր աստիճան հանդարտութեամբ, իբր թէ  
բոլորովին տարբեր Լիկիւնիանոսի մը մասին կը խօսէր, սեղանին վը-  
րայ կամ իրիկունները բնտանեկան շրջանակին մէջ, յաճախ մինչեւ  
իսկ հիւրերու առջեւ, ակնարկութիւններով, առակներով, պատմու-  
թիւններով, Մովսէսը կրնար, առանց Լիկիւնիանոսի երեսը նայելու  
եւ առանց բնաւ զոգացնելու, թէ իրեն մասին է բոլոր այս այլաբա-  
նութիւնը, կրնար, այո՛, անոր պատշաճեցնել որեւէ ապրում մը,  
դէպք մը, յիշատակ մը, բոլորովին անտարբեր տեսութեամբ, բայց  
այնքան ճշգրիտ նկարագրականով որ Լիկիւնիանոս կը սկսէր առջեւը  
նայել դեղնած կամ կաս կարմիր, Մովսէս ո'ւրկից կրնար գիտցած  
ըլլալ իր կեանքին գաղտնիքը, մինչեւ իսկ իր մտածումներուն խորը  
մտնել: Այս ի՞նչպէս կարելի էր: Մանաւանդ որ Մովսէս բռնած էր  
զայն անոր ամէնէն տկար կողմէն — անսահման փառասիրութիւն,  
որուն անունը եւ զոհացում տալ — բաւական էր ծայրայեղ եւ խելա-  
յեղ աւելորդապաշտութիւնը: Սկսեալ այն ժամէն երբ Մովսէս, ա-  
նոր ծովային ճամբորդութենէն վերադարձին, ողջունած էր զայն  
իբրեւ ապագայ ինքնակալ, Լիկիւնիանոս ամէն ժամանակէ աւելի  
հաստատապէս կը հաւատար հիմա, թէ իրեն պիտի վիճակի օր մը  
ծիրանին: Մովսէս յաճախ դարձեալ կ'անուանէր զայն ինքնակալ  
միեւնոյն հանդիսաւոր ձեւով, եւ չէր թերանար անոր խոստանալ,  
անոր բացայայտել ապահով նշանները, անմիջապէս որ պարագաները  
նպաստաւոր ըլլան: Քանի քանի ամպային ձեւեր պատկերները զանց

ըրած էր Լիկինիանոս, այնպիսի ձեւեր, որոնք Մովսէսին հասկացողութեան համեմատ, երկար ժամանակէ ի վեր իրեն պէտք էր գուշակած ըլլալին ծիրանին: Բայց միշտ դարձեալ կ'երկմտէր Լիկինիանոս: Այն ատեն Մովսէս այդ պատեհութիւնը կ'օգտագործէր, անոր զգացնելու համար իր մէկ նոր թերութիւնը — փոփոխամտութիւնը, անհաստատ, յողողող տրամադրութիւնը, մէկ ճիւղի վրայ մնալու անոր անյարմարութիւնը: Բնաւ կամք չունի: Իր բանակութիւնը չի բաւեր իր յաջողութիւնը ստեղծելու ինք իր ձեռքով, ու երբ աստուածները իր ճամբուն վրայ կը բերեն մարդարէ մը եւ կը թողուն որ իր ապագան գուշակէ, այն ատեն ալ չի հաւատար: Մովսէս Լիկինիանոսը այնքան հեռունները կը տանէր, որ իր կամ Մովսէսի սենեակին մէջ գետինը պառկած, դուրսը ձեռքերուն մէջ թաղած, կուլար եւ կ'աղաչէր որ Մովսէսը փրկէ զինքը: Եւ հպարտ հոռոյտ յեցին հայկազուն քահանայապետին, այդ խորաթափանց ճարտար քրմապետին կը խոստովանէր բոլոր իր մոլութիւնները եւ զինքը հատցնող այրող սէրը Արսինէին համար: Մովսէս մտիկ կ'ընէր լուսթեամբ, ոտքի կը հանէր դայն, չոր ու ցամաք կամ անտարբեր կերպով կը հաստատէր Արսինէին արտաքին եւ ներքին առաւելութիւնները, եւ կը ներկայացնէր դայն իր ծագումին, պաշտօնին եւ ուրիշ համաձայն, Լիկինիանոսին համար զրեթէ անհասանելի բարձունքի մը վրայ: Իշխանը կը հռուսէր. «Ինչո՞ւ, ո՞ւր, ինչո՞ւ աւելի կանուխ ճամբուս վրայ չեկաւ լոյսի այս հրեշտակը: Ինչո՞ւ ոչ, ո՞վ աստուածներ: Ի՞նչ տեսակ սխալ ճամբաներէ պահպանած պիտի ըլլայիք զիս»: Մովսէս պաղ կերպով դիտել կուտար. «Աստուածներուն մասին բարձր յաւակնութիւններ կ'ունենաս, Լիկինիանոս: Դուն հայր մը ունէիր — Լիկինիոս: Մայր մը — Լիկինիա: Երկրորդ մայր մը — Պաւղա: Ու սակայն կորսնցուցեր ես ճամբան, չես եղեր ուշադիր այն նշաններուն, որոնք դիզուած էին քու ճամբուն վրայ եւ կը ձայնէին քեզի. մի կորսնցնէր արժանապատուութիւնդ, Լիկինիանոս, Աստուածութիւնը քու մէջդ կը բնակի եւ կ'ուզէ քու թագովդ յայտնելի ժամանակին աշխարհի վրայ: Հիմա պէտք է դայ Արսինէ ու օգնէ քեզի: Ան ըրաւ այդպէս, եւ աշխատեցաւ հոս ըլլալէն ի վեր: Բայց հիմա գիտցիր, իշխան: Մտիկ ըրէ, մարդ եղիր... — Ոչ թող որ խօսիմ»: Մովսէսին աչքերը բռնադատեցին Լիկինիանոսը որ զըլուխը ծռէ, խոնարհի: Նստաւ, պաշտպանութեան համար երկարած թեւերը ծոցը դրաւ եւ ապուշ ապուշ կը նայէր Մովսէսին: «Դուն չես կրնար Արսինէն կին ունենալ: Ան նուիրեալ է Ահուրայի, Անահիտի նաժիշտ եւ չի կրնար կին ըլլալ, չի կրնար ծնիլ, այլ միայն վերնական լուսոյ Աստուծոյն Ահուրայի, Միհրի պարտաւոր է բանալ ծոցը, եւ երկրաւոր թագաւորին, տալ Ահուրայի եւ Միհրի ոյժը»:

— «Ուրեմն բնաւ, բնաւ, երջանիկ բնաւ», աղաղակեց Լիկինիանոս, «բնաւ մաքուր, ճշմարիտ սէր չդունե՞լ...»: — «Բայց, յարեց Մովսէսը հանդարտօրէն, դուն, այո, Ինքնակալ պիտի ըլլաս: Բայց պէտք է դուն ըլլաս Ահուրապաշտ եւ Ահուրայի յայտնութիւնը երկրի վրայ: Այն ատեն միայն Արսինէ կրնայ ծառայել քեզի»: — «Ախ, ե՞րբ, ե՞րբ, ուրեմն ես Ինքնակալ պիտի ըլլամ»: — «Արդէն ես դուն, Լիկինիանոս: Ընկալաւորութիւնն է որ Ինքնակալ կը չինէ: Ուրեմն ապրէ արքայարար եւ մաքրապէս, որովհետեւ մերձ է քու թագաւորութիւնը»: — «Ո՞ր կից զիտես, Հայր Սրբազան»: — «Եկ, Լիկինիանոս»: Ու դայն տարաւ պատուհանին առջեւ: Արդէն կոխած էր մթնշաղը: Երկինքը աղօտ կանանչ լուսաւորուած Արեւմտեան հորիզոնին վրայ, ասրաքատակ, վարդակարմիր ամպիկներ մինչեւ ծովուն վերեւ հեռունները: «Այսօր աստուածները քեզի կը պարզեւեն իրենց կամքին յայտնութիւնը: Այսօր կը պատշաճին բոլոր նշանները: Այս առաւօտ արծիւր սա մեր երկրի խոյանքի սահմանէն սլացաւ սրացաւ դէպի վեր երկինք»: — «Հաւնոցին մէջ աքաղաղը կէս օրէ վերջ երեք անգամ հոգ տարաւ միեւնոյն հաւուն վրայ: Պարտաւորուեցայ այս անգամ երեք ժամ սպասել», տեղեկացուց Լիկինիանոս քիչ մը շիտթ, բայց եռանդուն: «Բարենշան ըլլալու համար քիչ մը շատ երկար», դիտեց Մովսէս քննադատական դէմքով եւ բերանի ծամածոռմով: «Բայց նշաններուն ամբողջութիւնն է ազդեցիկը: Հիմա տես, ուշադրութիւն ըրէ, իշխան Լիկինիանոս, սա ամպիկներուն»:

Լիկինիանոս, խիստ յուզուած, դէպի վեր նայեցաւ սա ծիրանեկառ դարձած ամպիկին, եւ Մովսէս լուռ էր: Երկուքն ալ անթարթ կը յառէին մէջի փոքրիկ ձեւերուն, որոնք կամաց կը քաշուէին: Աւելի մեծ, բայց քիչ մը աւելի պայծառ ամպ մը կարծես ուղղակի այրեցին մէջ կեցած կը տատանէր: Միւս ամպիկները մէջտեղի կամ կեղրոնի ամպիկները կը շրջապատէին հաւկթաձեւ կերպով, անոնց հետ կը տատանէին եւ իրարու ետեւէ ալ կը տփզոնէին, մինչեւ որ կեղրոնի մնացած ամպիկը անբերելոյթ եղաւ: «Մեկնութեան պէտք ունի՞ս» — «Ոչ», շնչեց Լիկինիանոս, նախազգացումի ու երանութեան հմայքին տակ: «Միեւնոյն պատկերը պիտի բխի, Աստուածները չնորհ կ'ընեն, եթէ ջուրին մէջ իւր թափենք»: Մովսէս առաւ աշտանակին իւրին ամանը, եւ անոր արծաթ կտուցէն քանի մը կաթիլ իւր թափեց յղկուած բիւրեղէ խորունկ պտուկի մը մէջ: Մովսէս հազիւ թէ սեղանի վրայ դրած էր դայն, եւ հազիւ Լիկինիանոս կայծաքարը զարկած էր լոյս հանելու համար, իւրի շատ մը փոքր գնդիկներ աւելի մեծի մը շուրջ հաւաքուեցան կեղրոնը: Լիկինիանոսի ծունկերը կը դողդոջէին յուզումէն: «Տեսնե՞ք սակայն միւս նշան-







րարը»: Մովսէսի աչքերը քրմանոյշին աչքերուն մէջ ծակեցին խորաթափանց: Արսինէ իրեն առջեւ կը տեսնէր հիմա միմիայն երկու կանանչ անդնդախոր աչքեր: Կը հաւատար տեսնել Քաղափա լիճը եւ ծալ ի ծալ կոհակները: Սրբավայրը կը թնդար, երբ Արսինէ ոտքի ելած, բազկատարած դոչեց. «Ես կ'ուզեմ ըլլալ կոյսը: Ես կ'ուզեմ ծնիլ Ազատարարը»: — «Ահուրա ըստ հաւատոց քոց տացէ քեզ», ըսաւ Մովսէս հանդարտած: Վար իջան եւ կ'երթային պարտէզին մէջէն: Միշտ նսեմ էր եւ ձմեռնական: Իշխանը կը սպասէր Մովսէսը այգորելուն:

Աթենակորաս եպիսկոպոսը իր զրասեղանին առջեւ նստած էր, խորապէս կըքած: Իրեն առջեւ Նոր Կտակարանը մազաղաթի վրայ յունարէն լեզուով: Ժամանակ առ ժամանակ կը նօթադրէր մտածումները, զոր այս իրիկուն զործածել կը փափաքէր: Զատիկ էր: Գարնանազայր ջերմութիւնը կը թափանցէր եպիսկոպոսին աշխատութեան անշուք սենեակը, հարթ հաւասար հողին վրայ, եւ որուն պատուհանէն կարելի էր տեսնել Աթէնքի քրիստոնեայ փոքրիկ հասարակութեան մօտակայ եկեղեցին, եւ եկեղեցիին վրայօք, մեղմ բլուրի մը առեփին վրայ, հիւանդանոցը: Նորարողոյթ թփաստանին եւ ծաղիկներուն բոյրը կը թափանցէր սենեակին մէջ: Միջատներ եւ բզէզներ կը տղղային, կարծես եկեղեցիէն դէպի հոս կը հնչէին լաւոր զործիական նուազարաններու խոր եղանակներ: Կէս օրէ վերջ, իրիկնամուտի մօտ: Քաղաքին մէջ կը տիրէր սովորական ժխորը, բայց քրիստոնեաներուն տուններուն մէջ լուռ ու մունջ կը սպասէին մատաղատի հաղորդուողները, տօնական ճրագալոյցի ժամուն, երբ անոնք հաւաքուած հաւատացեալներուն առջեւ պիտի ընդունուին իբրեւ անկախ անդամներ եւ պիտի մասնակցին տէրունական ընթրիքին: Աչքի դարնող անհանդարտութիւն մը կար Աթենակորասի վրայ: Իր թուխ ընտանի պճղնաւորին մէջ մերթ ոտքի կ'ելլէր, մերթ կը նստէր դարձեալ եւ կը նստադրէր դիժ առ դիժ: Եպիսկոպոսին Տիկինը երեւցաւ եւ կրկին դուրս ելաւ անձայն: Առանց որեւէ պատասխան ստանալու: Երկու ժամ անընդհատ պայքար եւ անհանդարտութիւն: Եպիսկոպոսը ելաւ կեցաւ պատուհանին առջեւ եւ փոքր վիմակերտ եկեղեցիին կը նայէր շողջողուն խաչը առջեւօք: Մտածումուտի շատայլ լին մէջ: Դուրսը խոր լուսութիւն պարտէզին մէջ եւ դերեղմանատան վերեւ եկեղեցիին մօտ: Եւ մասնաւորապէս իր աչքերը ուղղուած էին հիւանդանոցին վրայ: Եպիսկոպոսին զործն էր ան: Հոն էր Վալերիոս: Եպիսկոպոսը անձկութեամբ անոր կը սպասէր: Վերջապէս տեսաւ փոքր խումբ մը, որ տունէն դուրս ելլելով անտառին ճամբէն

վար կուղային: Շատ շանցած պատգարակը կեցաւ Եպիսկոպոսին տունին առջեւ: Անսովոր փութկոտութեամբ ողջունեց Վալերիոսը, բոնեց անոր թեւէն եւ կ'ուզէր ներս առաջնորդել: Բայց նախ դեսպակալիներուն դատնալով հրամայեց. «Դուք տուներնիդ պացէք եւ ժամերդուրթեանէն վերջ միայն եկէք պարսնը առնելու: Շատ խօսելիք ունիմ անոր»: Վալերիոս եւ Աթենակորաս նստան դէմ առ դէմ կ'ըստ սեղանին առջեւ սենեակին մէջտեղը: Եպիսկոպոսը անմիջապէս խօսքը բերաւ իր անհանդիստ ըլլալուն վրայ: Մովսէսը երկու մարդոց միջեւ երկար ատենէ ի վեր լուրջ խօսակցութեան եւ մտատանջութեան առարկայ դարձած էր: Բժիշկին, Պաւղային եւ ամէն արհեստէ ու կոշումէ հասարակութեան շատ մը անդամներուն միջոցաւ իր հօտին հաւատարմօրէն ծառայող հովիւը յաճախ լուր կ'առնէր Մովսէսին մասին: Սկիզբէն իսկ կասկածոտ մնացած էր: Իրեն ծանօթ էր Միհրին այդ քուրմին զործելու սիրական եղանակը — ամէն օտար կրօնքի յարմարիլ, իր պաշտամունքը դարձեալ անթերի կատարել, եւ բոլոր տարբերութիւնները մէկ ջուրով լուալ, մինչեւ որ մոլորեալ ուշխարները խարէ եւ իր փարախը տանի: Այս նոր մարգարէին վրայ իր բոլոր յաճմները իր կասկածը միայն կը զօրացնէին եւ օրէ օր իր անհանդստութիւնը կ'աւելցնէին: Մովսէսը քաջածանօթ անձնաւորութիւն մը դարձած էր: Ամէն կողմէ փնտռուած, զովարանուած բանախօսն էր, որ հանրային վայրերու վրայ, սիւնաւոր ճեմելիքներու մէջ, Արիսպագոսին վրայ հարիւրաւորներու կը խօսէր, որոնք բան ու գործ ձգած կուղային իրեն մօտիկ կ'ընէին: Լիկինեան զգեակին դահլիճը այլեւս չէր բաւեր պարունակելու խուռն բազմութիւնը ընտրեալներուն, որոնք կարողացած էին թափանցել Մովսէսին դադափարային աշխարհին զաղտնիքներուն, եւ միշտ անհամբերութեամբ կը սպասէին իրենց տեսնելիք հրաչքին: Նոյնիսկ եպիսկոպոսին հասարակութենէն միշտ զաղտնի կերպով աւելի շատեր կ'երթային Մովսէսին բանախօսութիւններուն, եւ ինչ որ ամէնէն աւելի մտահոյ կ'ընէր Աթենակորասը — Վալերիոս եւ Պաւղա եւս դրաւուած կը թուէին Մովսէսի ուղիւն: Այս պատճառաւ հրաւիրած էր զիրենք: Աթենակորաս կը փափաքէր զիսնալ Վալերիոսի տպաւորութիւնը իրբեւ բժիշկ, թէ ինչ էր իր զաղափարը Մովսէսի անձին եւ զործերուն նկատմամբ:

Վալերիոս լուսութեամբ մտիկ ըրաւ: Բազկաթոռին կոթնած էր, ու պատմեց հանդարտօրէն. «Դուն զիսես, ո՛վ քրիստոնեաներու եպիսկոպոս այս, արտակարգ մարդուն հետ իմ առաջին հանդիպումէս ի վեր, անոր իմ վրաս զործած տպաւորութիւնը բնաւ այլեւս շանցաւ, նոյնը մնացած է միշտ: Այն կողմէն կ'ատէի զինքը, որովհետեւ կը վախնայի թէ պիտի արդիլէ ինձի համար իմ մուտքս Խոսրովի-

դուխտին մօտ: Կը կարծէի, թէ ինքը բժիշկ է եւ յաճախորդներս ձեռքէս պիտի առնէ: Բայց հիմա, առաջուան պէս կը հրաւիրուիմ իբրեւ բժիշկ եւ ընկերային մարդ նոյն զղեակիր, առաջուան պէս ազատօրէն կը հաղորդակցիմ Պոստօլիզուխտի հետ եւ — ո՛վ գերազնիւ եպիսկոպոս, — Պոստօլիզուխտ կարծես ինծի հանդէպ աւելի սիրովաւ եւ սրտապին է Մովսէսի ներկայութենէն ի վեր»: Այս ամէնը ըսաւ Վալերիոս, թեթեւակի կարմրած եւ շատ ուրախ ու գոհ արտայայտութեամբ: Աթենակորաս լրջութեամբ հարցուց նորէն. «Ի՞նչ է քու կարծիքդ անոր մասին»: — «Իբրեւ խօսող հրաշալի է: Ասիկա նոյնիսկ չի կրնար անոր զլանալ մեր ամէնուս կողմէ զրուատեալ Աթենակորասը»: — «Են այդպէս չեմ ընեք, որովհետեւ լսած չեմ զայն»: — «Իր բանախօսութիւններուն հիմնական գաղափարը միշտ լոյսն է», յայտնեց Վալերիոս: «Ան համաշխարհային բովանդակ րնթացքը կը նկատէ իբրեւ լոյսի բխում առհաւական լոյսէն, զոր ան կ'անուանէ Աստուած, Երբեմն Չեւս, Երբեմն Արամազդ, Երբեմն Բահազ, Եհօվա, բայց մեծագոյն մասամբ Ահուրա: Մարդկային հողիները մասնիկներ են, որոնք անհնազանդութեամբ, ամբարտաւանութեամբ, կամօվին հետզհետէ հեռացեր են առհաւական լոյսէն, Ահուրայի լոյսէն, այնպէս որ չեն կրնար այլեւս վերադարձի ճամբան գտնել: Եկեր են անլոյս նիւթին մէջ, տունկերուն, կենդանիներուն, մարդկային մարմիններուն մէջ: Ահուրա, զթալով անոնց կը զրկէ այնքան միայն լոյս երկինքէն, որպէսզի բոլորովին չփճանան չվատթարանան խաւարին մէջ, այլ զէպի հին կայքը չուելու ցանկութենէն սողորուած, փնտռեն գտնեն վերադարձի ճամբան առ Հայրն լուսոյ: Այս պատճառաւ պարտաւոր են մտածել, աղօթել, ծոմ ու պահք պահել, զգուշանալ ամէն պիղծէ, ոչ իսկ միս ուտել, ոչ իսկ զինին խմել. այլ շատ մը լուսացուիլ, եւ մաքրուիլ, եւ վերջապէս, երկար, երկար, երկար թափառումներէ ետքը բուսական, կենդանական եւ մարդկային մարմիններու մէջ կրկին գառնան առ աղբիւրն ամենայն լուսոյ»: — «Օ — ինչ ալ աղուոր կը խօսի, եպիսկոպոս, Մովսէսը այս ամէնը սքանչելի կը ներկայացնէ կը պատկերացնէ»: — «Սիստ շատ խանդավառուած ըլլալ կը թուի անոր ճառերէն», զիտել տուաւ Աթենակորաս, քչիկ մը հեղինորէն: «Իր գործերու մասին նոր բան լսած ես»: — «Շատ»: — «Պատմէ, կ'աղաչեմ»: — «Վերջերս իր հուժկու բանախօսութիւններէն մէկուն մէջ յայտարարեր է, թէ պիտի ապացուցանէ որ ինք Յիսուսի Քրիստոսի գործերն ալ կ'ընէ: Միհրի պաշտօնեան նոյնը եւ աւելին ալ կրնայ ընել, բսեր է: Աթէնք քաղաքին բոլոր անկիւններն ու ծայրերը ամէնուն բերանն է, թէ կոյրերուն տեսնել կուտայ, անդամալոյծներուն քալել, համբերուն խօսիլ»: — «Իուն տեսա՞ր անոնցմէ»: — «Ոչ, բայց պիտի տեսնեմ եւ պիտի

քննեմ գաղտնիքը: Բժշկուածներուն մէջ կը գտնուին իմ հիւանդներէս, եւ քու հասարակութենէն անդամներ»: — «Անունները տուր»: — «Ոչ այնքան սիրով, եպիսկոպոս»: — «Իմ սիրոյս համար, պէտք է դիտնամ յանուն սուրբ Աստուծոյ, Երկնաւոր թագաւորին», աղաչակեց Աթենակորաս ոտքի ելլելով, եւ մեծաքայլ փութաց շրջանը ընել սենեակին: «Ուրեմն, լսէ՛, եպիսկոպոս, բայց, կ'աղաչեմ հանդարտ կեցիր: Գայիտ մինչեւ անցեալ շաբթու սկիզբը զլուխի սարսափելի ցաւով կը տառապէր: Իմ բժշկական միջոցներս անօգուտ մնացին: Քու աղօթքդ, անոր զլխուն վրայ ձեռք դնելը ալ օգուտ չտուեցաւ: Մովսէսը կանչեցին: Մովսէս յայտնեց է թէ այն ատեն միայն կուզայ, երբ ես արտօնեմ եւ ըսեմ թէ ես այլեւս զեղ չունիմ այս հիւանդին համար: Յօժարութիւնս տուի, եւ Մովսէս եկաւ, ձեռքերը վրան դրաւ եւ անմիջապէս ցաւերը դադրեցան: Այսօր Գայիտ քաղաքին շրջանը կ'ընէ ողջ առողջ»: — «Ձարմանալի բան», զիտել տուաւ եպիսկոպոսը: «Աւելի դարմանալիին հանդիպեր է իմ պաշտօնակիցս», շարունակեց Վալերիոս, «Ան հոն կը գտնուէր, երբ զիշերանց Մովսէսը կանչուեր է ծերակուտական Վարոսի տունը իր իմ պաշտօնակից Ալպինոսի յօժարութեամբ, որովհետեւ այս վերջինը այլեւս անկարող էր բան մը ընելու անոր աղջկան Չրային ցընցումներուն դէմ, այն աստիճան որ խեղճ աղջիկը զիշեր ցերեկ ոչ մէկ հանդիստ ունէր, զլուխը, ձեռքերը, ոտքերը կը ցնցուէին, մինչեւ որ ուժասպառ նուազեցաւ, փրփրեցաւ, կը հեծէր, կը հառաչէր եւ կը պոռար: Ամբողջ քնտանիքը երբեք ալ տատանաւ հիւանդ աղջրկան անկողինին շուրջ կեցած, կը սարսափին նաեւ դեւերուն գալին: Ամենամիբընի զիշերներէն մէկը Մովսէսը կանչեցին»: — «Ի՞նչ ըրաւ»: — «Տեսցիները ծունկի եկած օդնութիւն կը հայցէին, ան ըսաւ՝ հիւանդին վրայ կարծ ակնարկէ մը վերջ. շար ոտնացող դեւ մը կայ անոր մէջ, բայց Աստուած Ահուրա միայն կարող է վանել զայն: Յետոյ իւզով մը չփեց հիւանդին ձակատը եւ քունքերը, ձեռքերը, ծունկերուն եւ ոտքերուն յօդուածները, վերջապէս կոնակը, ուժով մը: Միեւնոյն ատեն աղօթքի մէջ խորասուզուած հիւանդին մարմինին վրայ ձեռքերով շարժումներ ըրաւ, որպէս թէ շար ողին վռնտելու ձեւով: Յետոյ խոստացաւ նորէն գալ եւ ապահովաբար վտարել դեւը: Պաշտօնակիցս եւ Վարոս ընտանիքը չէին հաւատար իրենց աչքերուն. Մովսէսին երթալէն առաջ, աղջիկը հանդարտօրէն քնացաւ, խորունկ չունչ սկսաւ առնել եւ այլեւս անդամները չէր շարժեր»: — «Որչափ ատեն», հարցուց եպիսկոպոսը քննադատական ձեւով: — «Ծնողքին ըսածին նայելով, մինչեւ որ պաշտօնակիցս Մովսէսին հետ որոշուած ժամուն նորէն եկաւ: Մովսէս հիւանդը նորէն չփեց: Յետոյ լաթի մը մէջէն դուրս հանեց կաւէ պատկեր մը,

որ աղջկան մը մարմինին կը նմանէր եւ գլուխին մէկ կէսը իշու, միւսը առիծի կը նմանէր: Սարսափելի բան մը, բայց շատ լաւ աշխատուած: Հետը բերած էր նաեւ փոքր, սեւ, կաւէ շուն մը: Այս երկու պատկերներն ալ Էրեք օր անշարժ պիտի մնային հիւանդին սնարը: Արդէն ոչ ոք կը վստահէր իրեն այդ բաներուն դպչիլ: Մովպետ նորէն եկաւ բժիշկին հետ: Պատկերները կտորել եւ թաղել տուաւ պարտկզին մէջ, վրան ալիւրի ջուր սրսկելով, եւ այս ամէնուն միջոցին ալ տարօրինակ աղօթքներ եւ երգեր... Աղջիկը ողջ պտող է»: — «Այս յաջողութեան դուն ի՞նչ մեկնութիւն կուտաս, Վալերիոս»: — «Ես կը կարծեմ որ Մովպետ ծպտուած բժիշկ մըն է, եւ արդարեւ նշանաւոր հանդիսացած: Քիթը հոտ կ'առնէ հետախոյզ շունի մը պէս, սուր կը տեսնէ արծիւի մը պէս, կը լսէ արջամուկի մը պէս, եւ հիւանդներու նայուածքէն, դիմադիժերէն եւ տուած պատասխաններէն կը ճանչնայ հիւանդութեան պատճառը: Կը գործածէ այնպիսի դեղեր, զոր մենք հոս չենք ճանչնար եւ չենք ալ համարձակիր գործածել: Ամէն բանի մէջ վճռական մարդ մըն է, արտակարգ կամքով, որ արդէն կը յայտնուի իր աչքերէն. եւ ահա ասոր մէջ է գաղտնիքը — իր աչքերուն մէջ: Բռնի կ'առողջացնէ: Իր նայուածքներէն, եւ իր ձեռքերուն միջոցաւ ոյժ մը կը հոսի, զոր մենք չունինք»: — «Մենք ալ կ'ունենայինք եթէ հաւատք ունենայինք», ընդմիջեց Եպիսկոպոսը — «եւ նաեւ կ'ունենայինք ձիրքը մարդոց աչքերէն անոնց մտածումները կարդալու: Յիսուս խոստացաւ իր աշակերտներուն իրմէն ալ աւելի մեծը ընել»: — «Մովպետ ալ աւելին կրնայ: Գիտէ, թէ ո՞ր կը մնան կորսուած առարկաները, հրաման կուտայ թէ ո՞ր եւ ինչպէ՞ս պէտք է փնտոել զանոնք եւ գտնել»: Աւելի առաջ տարաւ Վալերիոս: «Ատիկա՞ ինչպէ՞ս», հարցուց Եպիսկոպոսը խիստ հետաքրքրուած: «Ես կը սոսկամ այս մարդուն առջեւ»: «Այս խորհրդաւոր դիտութեան մասին օրինակ մը գիտե՞ս»: Բժիշկը կ'ուզէր սկսիլ, բայց դուրսէն տիկիններուն որպիսութիւնը հարցունելու ձայներ լսուեցան: «Պաւղան է», ըսաւ Եպիսկոպոսը: Տիկինները ներս մտան: Եպիսկոպոսը հանդարտած էր, երբ Պաւղայի աչքերուն մէջ նայեցաւ: Երկու կիները մեծ հետաքրքրութեամբ բժիշկին խօսքին ականջ կը կախէին: «Սեղանաւորին տունին մէջ — կը ճանչնա՞ք ընտանիքը» — ամէն կողմէ հաստատական ակնարկներ — տիկինին մատանին կորսուեցաւ: Բնականաբար տունին մէջ խուզարկութիւն: — Մտաները լսուեցան: — Գերուհիները իրարու ետեւէ գիրար զրպարտեցին: — Խարոզանի հարուածներ: — Տանջանք, բելարան: — Օրերով պոռալ կանչել: — Հայհուցներ: — Վերջապէս Մովպետ կանչուեցաւ: Գերուհիներէն մէկը աչքին զարկաւ, զայն դրաւ մութ սենեակի մը մէջ աթոռի մը վրայ եւ տուաւ անոր ջուրով

պնակ մը: Վրան ալ թափանցիկ լաթի կտոր մը: Գերուհին անոր մէջ պիտի յտոյի, կոնակը տալով Մովպետին վեցհազարեակին: Քիչ ժամանակ վերջ կը հարցնէ անոր, ետեւը կեցած. «Ի՞նչ կը տեսնես»: — «Զիտաւր՝ լայն զգեստներով»: — «Թողուր որ երթան», հրամայեց Մովպետ: Քանի մը առածներէ վերջ, նորէն կը հարցնէ. «Ի՞նչ կը տեսնես»: — «Կիներ սեւ զգեստներով»: Մովպետ. «Թողուր որ երթան»: — Այսպէս կ'անցնին նաեւ տղաքներ կապոյտ զգեստով, եւ աղջիկներ ճերմակ ծփուն լողիկներով: Աղջիկը վերջիններուն կը հարցնէ եւ անոնք կը պատասխանեն. «Պարտկզին մէջ մատանին: Հարտէզը եօթը մասի բաժնէ եւ շարունակ կանչէ. Արբակադարար: Պէն մի եօթներորդը դարձեալ եօթներորդի բաժնէ, միշտ կանչէ — Արբակադարար: Վերջին եօթներորդին մէջ ծառ մը կայ: Փնտոէ բոլոր ուտներուն վրայ, բոլոր ճիւղերուն վրայ — բոլոր տերեւներուն տակ — ամէնէն վերջինին տակ կը մնայ մատանին: Արբակադարար»: «Մատանին դտնուեցաւ»: — «Մերկապարանոց խարէութիւն: Ամբողջ քաղաքին մէջ բողբոն ու ոճրադործները այդ սինլքորին կողմը բռնած են», աղաղակեց Աթենակորաս, խիստ դայրացած: «Քու կարծիքդ ի՞նչ է անոր մասին, սիրելի Պաւղա»: — «Ի՞նչ ըսեմ, Եպիսկոպոս», ի՞նչ է անոր մասին, սիրելի Պաւղա»: «Կ'ուզեմ, եւ պէտք չէ ուրանամ, թէ սին, մտահոգ ու խուզարկու: «Կ'ուզեմ, եւ պէտք չէ ուրանամ, թէ Մովպետ գեղեցիկ, ճամարիտ խօսքեր կը խօսի խորունկ մտածումներով լեցուն: Գերի կ'ըլլայ մարդ անոր աղբեցութեան: Ասիկա շատ ճամարիտ է: Իր նայուածքը խօսուն է ամէնէն աւելի, իր դէմքին ու բերանին արտայայտութիւնը, իր ձայնը — ամէն ինչ կ'օգնէ իրեն, գրաւելու ունկնդիրները եւ անոր հաւատացնելու: Ի՞նչպէ՞ս կրնայ հմայել, կախարղել, սարսել, յուզել, եւ յաճախ, երբ այսքան հեռուն կը տեսնէ, շատ մեղմ կը խօսի միայն, եւ երեսը կը փայլատակէ, երբ խօսի երկնային փառքերու վրայ, եւ յետոյ, պէտք է դժբախկէ, երբ խօսի երկնային փառքերու վրայ, եւ յետոյ, պէտք է դժբախկէ, երբ խօսի երկնային փառքերու վրայ, եւ յետոյ, պէտք է դժբախկէ, երբ խօսի երկնային փառքերու վրայ, եւ յետոյ, պէտք է դժբախկէ: — Ուշադրութիւն հաւատալու, փափաքը կուգայ զայն սիրելու»: — «Ուշադրութիւն չըրէ՞, Պաւղա, զգուշացի՞ր: Մատանան յաճախ լուսոյ հրեշտակի կերբընէ՞ր, Պաւղա, զգուշացի՞ր: Մատանան յաճախ լուսոյ հրեշտակի կերբընէ՞ր պարանք կը մտնէ: Ես խարէութենէն կը վախմամ: Չեմ ուզեր գէշ խօսիլ մարդուն վրայ յանիբաւի: Բայց շատ խաբբանք կան, շատ խաբբախ մարդիկ մեր օրերուն, եւ մեր քրիստոնեաներն ալ շատ դիւրահաւան են»: — «Բայց Աստուած չի՞ կրնար միթէ՞ հեթանոսներու քահանային ալ ոյժ տալ բժշկելու եւ իմաստուն խօսքեր ըսելու, երբ ան անկեղծ է եւ կ'ուզէ իր Աստուծոյն ծառայել», հարցուց Պաւղա: — «Աստուած կրնայ անուշտ: Բայց ես կը խորհիմ, որ երբ հեթանոս քահանայ մը քրիստոնեաներուն մէջ կ'ապրի եւ անկեղծ է, պէտք է բացէ ի բաց քրիստոնէութիւն դաւանի: Օ՛ր, այն հրաշքներն ու նշան-



եկեղեցիին մէջ: Գիւղացին միւսներուն հետ եկաւ մուտքին առջեւ եւ կեցաւ դրան ետեւը: Ներսը կը բարձրանար հուժկու շեշտերով, օրհներգութիւն, ընկերակցութեամբ լարաւոր ու փողաւոր նուագարաններու: Աստուածային պաշտամունքին առթիւ ժողովուրդին յուզումը կը զողզար երգին մէջ: Կ'երգէին Քրիստոսի, յարութեան եւ յաւիտենական կեանքի մասին: Բառերը բուռն ու զուարթ գորութեամբ բաց դուռնէն դուրս կը խուժէին լուռ զիշերուան մէջ. «... յարուցեալ, յարուցեալ է Տէր, արդարեւ յարուցեալ»: Եղեւինի անտաշ փայտէ պարզուկ սեղանի վրայ եպիսկոպոսը կանգնած էր իր սովորական մանիչակադոյն, մետաքսեայ լայն նարտէ նափորտով: Անսովոր կերպով լուրջ: Քրիստոսական կերպարանք մը: Գունատ, գեղեցիկ դէմքը ճերմակ մօրուքով շրջափակ: Իրեն առջեւ նստած երիտասարդ ու պատանի շարքին վրայ ուղղուած մտահոգ ու բարեխընամ աչքեր: Անձայն անշուշտ լուրջութիւն: Քարոզութեան պահուն ամենախոր յուզում: Մեղմիկ լացեր հոս ու հոն: Եպիսկոպոսը յօտընկայս, հասարակութիւնը կը հետեւէր անոր շարժումներուն: Նախ կը յառաջանան մկրտելիները առանձինն, եւ ահա նախ սկսաւ Բրիսանոյ դաշն, վճիռ, թափանցիկ ձայնով իր դաւանութիւնը պարզել, տալ. «Կը փափաքիմ ընդունուիլ Տէր Յիսուս Քրիստոսի հասարակութեան մէջ, քրիստոնէական հաւատքին մէջ հրահանգուելէ վերջ: Կը փափաքիմ մկրտութեան եւ Տիրոջը ընթրիքին, եւ կ'ուխտեմ շնորհիւ Հօր Աստուծոյ եւ Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն հաւատքին հրաժարիլ բոլոր աշխարհէն, բոլոր ցանկութենէ, բոլոր մեղքերէ, սատանայէն եւ անոր թագաւորութենէն, եւ վարել ստուածահաճոյ ջերմեանդն կեանք մը»: Գիշերային ընթրիքը սկսաւ: Եկեղեցիին առջեւ մարդ մարդասանք չմնաց: Բժիշկ Վալերիոս միայն նստած էր իրերէ ոչ քրիստոնեայ ամէնէն ետեւը փայտէ անհարթ նստարանի մը վրայ եւ իր խոհուն աչքերով տօնական արարողութիւնը կը դիտէր: Բայց ամէնէն աւելի իր նայուածքները կ'ուղղուէին աղջկան մը վրայ, որ տարիքոտ եւ պատկառելի տիկինի մը քով նստած էր եւ անշարժ կը նայէր եպիսկոպոսին եւ կը հետեւէր տէրունական ընթրիքին բաշխումին: Խոսրովիդուխտ եւ Պաւղա այսպէս նստած էին հոն: Բժիշկը այնքան բռնուած էր Խոսրովիդուխտի նայելուն մէջ, որ չնչմարեց թէ արարողութեան ընթացքին մէկը նստած էր անոր մօտ, եւ նոյնպէս անշարժօրէն կը դիտէր քրիստոնեաներուն ընթրիքը: Մերունի ուխտաւորն էր: Եւ անոր մօտ ալ երիտասարդ գիւղացին: Ծարականներ ընդմիջեցին տէրունական ընթրիքին կամ հաղորդութեան երկարատեւ տօնը: Վերջին քրիստոնեաները սեղանի մօտեցած էին եւ հասարակութեան երգեցողութեան տակ հաց ու գինի կ'ընդունէին: Հոն ոտքի կանգնած են երկու օտարականներ, եկեղեցիին քա-

րէ յատակէն կ'անցնին կ'երթան դէպի սեղան եւ կը կենան եպիսկոպոսին առջեւ իրրեւ վերջինները: Եպիսկոպոսը թափանցիկ սուր աչքերով նայեցաւ անոնց: Յայտնապէս կը լսուէր անոր մեղմ դողդոջուն ձայնը. «Դուք քրիստոնեա՞յ էք»: Խոր, անոյշ ձայն մը պատասխանեց. «Քրիստոնեայ, եպիսկոպոս, մենք երկուքս ալ, հայր եւ որդի, քրիստոնեայ թեսաղոնիկեցի, որ Աթէնք եկած ենք մեր եղբայրներուն այցելութեան: Կը փափաքինք մասնակցիլ Տիրոջը ընթրիքին: Ահա մեր եպիսկոպոսին յանձնարարականը»: Եւ Աթենակոբասին ցոյց տուաւ մաղաղաթեայ թերթ մը մեկնով դրուած: Եպիսկոպոսը առաւ դայն, ճշտիւ աչքէ անցուց, սեղանին վրայ դրաւ եւ խօսեցաւ, աւելի լուրջ, կարծես կ'աղօթէր դիտելով մին միւսին ետեւէն. «Առէք, կերէք, այս է մարմին իմ»: Առին ու կերան: «Առէք, արբէք, այս է արիւն նորոյ ուխտի, որ վասն ձեր հեղանի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: Առին ու խմեցին, ետ դարձան եւ հասարակութեան մէջէն պայծառակերպ դէմքով եւ երկնահայեաց աչքերով անցան դայն: Անմիջապէս անոնց ետեւէն հնչեց աղաբար ծանրութեամբ եպիսկոպոսին բերանէն. «Ո՛վ որ անարժանարար կ'ուտէ եւ կը խմէ, ան իր անձին համար դատաստան, վճիռ կուտայ, որովհետեւ չի խտրեր Տիրոջը մարմինը»: Օտարականներ նորէն նըստան Վալերիոսի մօտ: Վերջին շարականը: Քրիստոնեաներուն դատկական ուրախութիւնը պայծառ ցնծութեան բարձրացաւ: Մերուկը զրկեց իր զաւակը եւ ուրախութենէն դողացող բարձր ձայնով կանչեց. «Քրիստոս յարեալ»: Եւ զաւակը կանչեց բարձրաձայն. «Արդարեւ յարեալ»: Քանիցս համբուրեցին իրարու ճակատէ եւ այտերէ: Յետոյ ծերունին յանկարծ նայեցաւ Վալերիոսի: Այս վերջինը դեռ ուշադրութիւն իսկ չբրած եւ չլիտցած թէ ինչպէս կը նայէր իրեն, օտար ուխտաւորը անոր վրայ ծոցեցաւ որկեց դայն, սիրտին վրայ իյնալով եւ քանիցս համբուրեց, արտասուելով ձայնելով. «Քրիստոս յարեալ: Ողորդութիւն ընդ քեզ: Մի տարակուսիր: Դուն ալ ուրախ եղիր, զաւակս»:

Անյօժար, եւ զգուանքի թեթեւ կանչով մը Վալերիոս ինքզինքը քաշեց ծերունիին թեւերէն, եւ ճակատն ու այտերը սրբեց պարեգօտին քղանցքովը: Քրիստոնեաները բազմութեամբ կ'երթային: Օտարականներն ալ անոնց մէջ, եւ ոչ ոք այլեւս հետք մը տեսաւ անոնցմէ:

Քրիստոնեաներուն Տէրունական ընթրիքի տօնին եւ Խոսրովիդուխտի բաղակայութեան միջոցին վերը մատենադարանի սրահին մէջ նստած էին Լիկինիոս, եւ Լիկինիա, Յուդիթ եւ իր մարդը: Վարտ ճաշարահին մէջ միս միմակ լուսնկային բաց պատուհանին առջեւ: Լիկինիանոս եւ Արսինէ: Ակրոպոլիսի կճեայ կերպարանքները հսկայաբերձ փայլակնաշող վերէն կը նայէին իրենց վրայ: Մաղիկ-

ներու բոյրեր կը ցողէին դարաստանէն դուրս եւ հողին հոտը անոնց մէջ աւելի բարկ, աւելի կծուահամ, աւելի տամկացած, քանզի զիշեր էր: Արսինէ կը կրէր մատանինն ու ապարանջանները, զոր Լիկինիանոս վերջին ուղեւորութենէն հետը բերած էր: Սեւ մետաքսէ ասեղնազործ ծաղկանկար քրքմազոյն երկար պարեկօտին մէջ, տարածուած հանգստաւէտ անկողինի մը վրայ, զլուխը ձախ ձեռքին մէջ, արմուկները բազմոցին կըրը յեցած: Կը խօսէին անոր, Մովսէսին վրայ: Լիկինիանոս նախ ինք համբերութեամբ մտիկ կ'ընէր, յետոյ ոտքի ելաւ, դէպի պատուհանը դնաց, քանի մը քայլ առաւ սենեակին մէջ եւ նորէն նստաւ: Չէր կրնար հասկնալ Մովսէսին գործերը, չէր ուզեր Արսինէին խանդավառութիւնը պաղեցնել, խախտել անոր հաւատքը, բայց պարտաւորուած էր անդամ մըն ալ գիտնալ, թէ անո՞ր կարծիքը ի՞նչ էր, թէ ի՞նչ կը զգար անոր հանդէպ: Արսինէ Մովսէսին մէջտեղ գալէն ի վեր շատ վերապահ եղած էր: Իր հոգիին լոյսին ու փրկութեան շուրջ շատ, շատ հոգ կ'ընէր, յետոյ Լիկինիանոսին ուր երթալուն, որո՞ւն կամ որո՞նց հետ տեսնուելուն վրայ կը հետաքրքրուէր կը տանջուէր, ու կը հարցնէր անոր: Եւ Լիկինիանոս տղու մը պէս հաշիւ կուտար: Հաւատարիմ մընացած էր: Լուռ ու մունջ հանդուրժած էր բարեկամներու եւ սպաներու շատ մը կատակներուն: Անձայն դերազանց երջանկութիւն մը դտած էր իր այն հաւատքին մէջ որ երթալով կը զօրանար, թէ մօտեցած է իր Ինքնակալութեան եւ Արսինէին հետ կապուելուն ժամանակը: Ինչպէս որ իր Արսինէին ըսածին հնազանդութեամբ մտիկ ըրած էր Մովսէսին ալ կամքին համաձայն, այլեւս Արսինէի հետ մէկ խօսք անդամ չէր ըրած սիրոյ եւ ամուսնութեան մասին: Կը բռնադատէր զինքը որ անխախտ պահէ իր հաւատքը Մովսէսին եւ անոր հրաշքին վրայ: Կ'ուզէր հաւատալ գերբնականին եւ խորհրդաւորին, որքան ալ իսկապէս այս հաւատքը տարօրինակ թուէր իր բնութեան եւ բանականութեան: Բայց գարնանային այսօրուան օրը շատ կը պատշաճէր իրեն: Այս իրիկուն դժուար էր իրեն համար զսպել իր սիրոյն նոր փոթորիկը: Արսինէ տիրական եւ զօշոտիչ վայելչութեամբ եւ մարմնական հրապոյրի լիակատար փթթումով ահա փռուած էր իր առջեւը: Մազնիսական բռնութեամբ մը միշտ կը տարուէր կը քշուէր աւելի մօտը անոր եւ անոր շուրջը: Որչափ շատ որ ծածկաբար իր ձեռքը երկնցնէր ուսերուն եւ ծոծրակին վերեւ անոր գետահոս մաղբուրն, այնքան շատ Արսինէ կը կախէր իր զլուխը: Ու Լիկինիանոս քաջութիւն չէր դտներ քրմանոյշին զպչելու: Այլ կը պատրաստուէր սրկէ նրկէ պատմել, թէ ինչպէս Մովսէս զարմանալի նշաններով ծիրանին գուշակած էր իրեն համար: Մովսէսին բառերով իսկ կը յայտարարէր, կը մեկնէր քրմանոյշին, թէ

ինչպէս ինքը Լիկինիանոս Աստուածութեան յայտնութիւնը, այո՛, անոր մարմնաւորեալ պատեանը պիտի ըլլայ, յետոյ...: Հոս դարձեալ կեցաւ Լիկինիանոս, եւ իր մեկնութիւնը նորէն սկսաւ: Արսինէ ըմբռնեց ըսածը եւ օժանդակեց իրեն: Իր վճիտ ձայնը ամուր կը հնչէր Լիկինիանոսի. «Լիկինիանոս, սրբազան հայրը չէ մարդարէացած քեզի, թէ ես քու կինդ պիտի ըլլամ: Դուն սուտ կը խօսիս»:

Եւ ահա կը կենար հոն կարծես արմատացած, ուղղաբերձ, կանդնաւոր, կապոյտ բուրդէ պճղնաւորին մէջ, զիստերուն վրայ ոսկի կամարը, մարդարտայեռ ապարօջ մը երկայնքէն ձգուած սեւ խոպոպիններուն մէջ, հզօր զօրութեամբ, զուգես հրամայելու լէզոնին առջեւ: Սրտմտութիւնը կը կայծէր կը շանթէր սեւ աչքերէն գուրս: Դեփ դեղին: Արսինէին աւելի մօտ գալով ըսաւ անոր: «Յանուն քու սուրբ աստուածներուն, յանուն Ահուրայի աստղազարդ երկինքին: Է ինչպէս որ ըսի: Մովսէս գուշակեց ծիրանին եւ քեզ ապահովցուց ինձի երգումով»: — «Լիկինիանոս», զուցեց Արսինէ եւ հանգստաւէտ անկողինէն վեր ցատկեց: Երկուքն ալ այսպէս կեցած, տժուոյն, թասուն, դէմ առ դէմ: «Սրբազան Մովսէսը չի ստեր բռնաւ: Երկինքէն աստղերը չթափած, Արարատը չկործանած, Մովսէս սուտ չի խօսիր: Հեոի ինձմէ, Լիկինիանոս: Կ'ատեմ քեզ, եթէ դեռ դուն այդ կողմերն ես: Դուն խաւար ես, ո՛չ լուսաւոր եւ պայծառ: Մտութիւն է խաւար»:

Լիկինիանոս, ճնշուած, պատասխանեց. «է, ինչպէս ըսի քեզի. Մովսէս քեզ ինձի խոստացաւ: Եւ — իմա ես դուն, ես կ'ուզեմ որ դուն իմա ըլլաս եւ մնաս, ես, ես կ'ուզեմ — ես պէտք է քեզ ունենամ»: Արսինէի ամէն ընդդիմութիւն, օգնութեան ամէն աղաղակ, աղաչանք մարեցան, մահացան Լիկինիանոսի երկաթեայ զրկապընդումին եւ անդուլ անդադար սիրաբորբոք համբոյրներուն տակ: Արսինէ, կարծես ջարդ ու փշուր, ինկաւ թուլակի անկողինին վրայ կոնակն ի վար, եւ կաւճանման երեսով կը յատէր դուրս լուսնակ գիշերին: Իշխանը անոր առջեւ կանդնած էր իրրեւ պահակ, անոր շարժումներէն մէկն միտոյն ակնպիշ: «Դուն իմ ձեռքս ես, Արսինէ», կը կրճտէր: Արի լանջքը Լիկինիանոսին արդարեւ հեւ ի հեւ կ'ուռէր ու կ'իջնէր թասելով հինինալով: Ռնդունքը կ'երբերային:

«Հիմա կամ երբեք», կը թասէր կը թառանչէր: «Հիմա ձայն տուր, կանչէ: Որոշումդ տուր: Կամ այն է որ դուն կինս կ'ըլլաս, ի հեճուկս Մովսէսին ու բոլոր ապուշներուն, կամ ասկէց կ'ելլես կ'երթաս: Չեմ կրնար քեզ այլեւս տեսնել, եթէ զիս անարգես»: — «Ես քեզ չեմ անարգեր, Լիկինիանոս: Քեզ կը սիրեմ, քեզ միշտ սիրեցի, բայց ես Անահիտի եմ նուիրեալ, ես պէտք է լսեմ ու հնազանդիմ Ահուրայի, Միհրի, իմ Աստուածիս: Մովսէս կը գուշակէ ին-

ծի. ամէն բանի վախճանը մտալուտ: Մեծ դատաստանը մերձեալ է: Զրադաշտ կուգայ: Անոր սերմը սուրբ կոյսին կը սպասէ, որ լողանք կ'առնէ Քաղաքի լիճին մէջ, ան պիտի յղանայ Զրադաշտը, Շատ-շիանտը եւ պիտի ծնի: Ես սեծամեծ բաներ ունիմ ընելիք եւ տառապելիք, Լիկինիանոս, ես Մեսիան պիտի ծնիմ: Լոյսին զաւակներուն փրկութեան պիտի օժանդակեմ ես: Ուրախ լեր, Լիկինիանոս: Վսեմ յաղթանակը լուսոյն կը մերձենայ»: — «Իսկ ես», ձայնեց Լիկինիանոս, դող ելած, ուժասպառ, «իսկ իմ երջանկութիւնս, իսկ իմ կեանքս: Ի՞նչ կ'արժէ ինձի ծիրանին առանց քեզի: Ինչի՞ համար տակաւին ասլոյս»: — «Այո՛, այլեւս ծիրանիւ պէտք չունիս, Լիկինիանոս», ձայնեց Արսինէ, բարձրադոյ, «պէտք չունիս կնոջ, ոչ եւս Երկրաւոր սիրոյ: Աշխարհը կը վառի, ամբարիշտները կը տապալին բոցավառ յորձանքին մէջ: Ո՛վ Լիկինիանոս, աղատէ՛, աղատէ՛, աղատէ՛, քու հողիդ, մաքրուէ՛ սրբուէ, զոհէ քեզ ու քու սէրդ ինձի Ահուրայիս: Անոր սէրը կը զրաւէ մեզ երկուքս: Յաւիտենական լուսոյն թագաւորութեան մէջ ես քուկն եմ, քուկդ յաւերժօրէն, Լիկինիանոս»:

Լիկինիանոս Արսինէն կը նկատէր իբրեւ խելագարուհի մը: Անարգանքի բառերու կծու թափօր մը կը կենար շրթունքին շուրջ, որ չփոթ ու այլայլած կը դալարէին: Թունաւոր հեղանքով մը ըսաւ. «Տարօրինակ մարդարէ մը այդ Մովսէսը: Քեզի աշխարհի վախճանը կը գուշակէ. ինձի, ես երկու տարիէն կայսր պիտի ըլլամ եւ դուն իմ կինս: Ինձի կը խոստանայ, պաշտնի միջոցներով առ իս սիրով լեցնել քեզ, քեզի կ'արդիւն կին ըլլալ ինձի, եւ առջեւ կը թափէ անմիտ ու անբանաւոր բաներու շողփաղվութիւն մը: Քեզի կը պարտաւորէ սրբութիւն, ամէն ուրախութիւններէ եւ վայելքներէ զըրկըւելու, բայց ինք իր հաճոյքին անձնատուր, Տրդատին հետ գիշեր ցերեկ խորհրդաւոր գոհակ կեանք մը կը վարէ»:

«Լիկինիանոս», գոչեց Արսինէ, եւ անոր երեսին դէմ բարձրացուց ձեռքին տափակ կողմը: Աչքերէն կայծեր կը ցատկէին: Մնտ ու շրթունք կ'երերային: Բառ չէր գտներ, եւ յանկարծ թեւերուն վրայէն փրցուց ոսկի ապարանջանները, շղթան ալ պարանոցէն եւ բովանդակ ծանրութեամբը նետեց խելայեղին ոտքը: Կրկին բացաւ իր դողդոջ շրթունքը, բայց ի վուր, բառ չէր գտներ: Չայնն ալ կը մերժէր զալ: Խեղդուկ վանկեր կուգային միայն: Խելայեղ ցատկեց դէպի դուռը, անգամ մըն ալ շուրջը նայեցաւ, եւ յաւատ չկրցաւ Լիկինիանոս մոռնալ անոր նայուածքը, որով կը հարցնէր. «Լիկինիանոս, իրօք սո՞ւտ կը խօսի Մովսէսը»: Տունին մէջ վեր վար կը վազէր, սանդուխէ սանդուխ, ելաւ իր սենեակը, Մովսէսի սենեակին առջեւ, ձայնեց. «Մովսէս, Մովսէս, սրբազան հայր»: Չայնեց

Տրդատին: Մատենադարանի սենեակին առջեւէն վազեց, բայց ետ դարձաւ, բացաւ. «Մովսէսը հոս չէ՞, Տրդատը ո՞ւր է»: — «Հոս չեն»: Ետ: Վար, պարտէզը, դարաստանին մէջ Անահիտին սրբավայրը, նորաչէն ատրուշանը, Միհրատունը: Ոչ ուրեք Մովսէս: Դարձեալ ետ, արմաւենիներուն հանդիսական սրսփանքին մէջէն դէպի դարաստանին դուռը: Խոսրովիդուխտ եւ Բրիսանոյշ կուգային, իրենց ետեւէն Պաւղային գերիները: Խոսրովիդուխտ բնաւ բան մը չըսաւ, եւ շթողուց ալ որ Արսինէ խօսի, այլ ինկաւ անոր սիրտին վրայ եւ ձայնեց բարձրադոյ. «Քրիստոս յարեաւ»: Բրիսանոյշ քովը կեցած էր լուռ: Իր ճերմակ լոզիկը եւ մեղմածուկի քողը կը շողային գիշերուան մէջ: «Ի՞նչ ունիս, Արսինէ, սիրտդ շատ դէշ կը նետէ», ձայնեց Խոսրովիդուխտ, ետ ետ երթալով: «Ո՞ւր է Մովսէսը: Ո՞ւր է ան: Ո՞ւր է Տրդատը», աճապարեց Արսինէ, եւ աչքերը չորս բացած կը նայէր զերթէ ցերեկուան պէս պայծառ գիշերուան մէջ: «Ո՞չ մէկ տեղ տեսաք զանոնք»: — «Ոչ», ըսին երկու աղջիկները, եւ Խոսրովիդուխտ խոր հառաչանք մը արձակեց. «Այլեւս չեմ հաւնիր Տրդատին: Միայն շատ կ'ուզեմ գիտնալ, թէ ատոնք երկուքը զլուսինին առած ո՞ւր կ'երթան միշտ: Գաղտնի գործ մը ունին միասին, ներսը կը փակուին, գիրքեր կը կարդան, դոր իրենցմէ զատ ոչ ոք կը հասկընայ, կէս գիշերին դուրս կ'ելլեն —» — «Ի՞նչ տեսած ես արդէն», հարցուց Արսինէ, տակնուվրայ եղած: «Օ՛, քանի անգամներ: Իմ գարմանքս այն է միայն, որ ասոր տակէն ի՞նչ պիտի ելլէ: Ծամբան ոչ մէկուն հանդիպեցանք: Մեր ետեւէն բաւական հեռի միայն կուգային ծերունի մը պարեպօտով եւ երիտասարդ գիւղացի մը, որոնք յունարէն կը խօսէին: Բայց յանկարծ անոնց ձայնն ալ այլեւս չլսեցինք»: Արսինէ գլուխը երեւցնելով կանխեց, աղջիկներն ալ ետեւէն: Բրիսանոյշ գերետունին մէջ կարծր անկողինին վրայ պառկեցաւ: «Յարեաւ, արդարեւ յարեաւ», այսպէս կը թնդար շարունակ գերուհիին հողիին մէջ, մինչեւ որ քունը տարաւ: Այնուհետեւ անյայտ եղաւ իր հողիին առջեւէն յարուցեալին պատկերը: Յոյն գիւղացի երիտասարդը կը կանգնէր հիմա իրեն առջեւ, բայց գլխանոցին ետեւէն դէպ առաջ կը դիտեն Տրդատի խոշոր թուխ աչքերը, եւ երազին մէջ յայտնապէս կ'իմանար երեք անգամ անոր ձայնը: «Բրիսանոյշ, կը սիրե՞ս գիտնալ»:

Խոսրովիդուխտ անքուն պառկած էր իր անկողինին վրայ: Լուսինը ցերեկուան պէս լոյս կուտար սենեակին: Մէն մի առարկայ ճանաչելի էր: Պիտի գա՞յ արդեօք: Ինչո՞ւ պիտի չլսէր իր աղաչանքը: Ինչո՞ւ ուրիշներուն երեւնալ եւ իրեն՝ ո՛չ: Եւ սակայն կը սիրէր զինքը: Մարիամ Մագթաղենացիին այն սիրով որ իր ծունկերուն փարիլ կ'ուզէ: Ապաշխարութեան եւ սիրոյ արցունքներով կ'ու-



զէր լուալ անոր սուրբ ոտքերը, իր մազերովը չորցնել: Խորովի-  
զուխտ մետաքսէ բարձին վրայ փռած էր անթիւ հոյլը իր փարթամ  
մազերուն, որոնք բալասան կը բուրէին, անոնց մէջ կը թաղէր դէմ-  
քը եւ կ'արտասուէր յիսուսասիրոյ տաք արցունքներ: Այսպէս պառ-  
կած կը սպասէր: Կը սպասէր Յիսուսին, յարուցեալին, Բրիսանոյշին  
պէս: Բայց չէր գար: Եւ Խորովիզուխտին ալ քունը տարաւ, պառկած  
ձեւովը, դէմքը մազերուն մէջ ծածկուած, թեւերն ու ձեռքերը շո-  
ղասպիտակ ծոծրակին վերեւ խաչածեւուած:

Արսինէ նորէն բոլորտիքը ինկած Մովսէս կը փնտռէր: Չեկաւ:  
Չէր գար: Ոչ ալ Տրդատ: Թերեւս ուսանողներուն կամ արուեստա-  
գէտներուն քով է: Հետզհետէ իրենց տեղերը կը քաշուէին հիւրերը,  
իշխանն ու իշխանուհին եւ ծառաները: Լիկինիանոս եւս անյայտ ե-  
ղած էր: Ո՛չ ոք զիտէր ո՛ւր: Արսինէ մոլեկոնելով զարդեղէնները անոր  
ոտքը նետելէն եւ քովէն հեռանալէն ետքը, Լիկինիանոս շփոթու-  
թեան եւ անորոշութեան քանի մը վայրկեան հոգ ինք ալ սրահը թո-  
ղած էր:

«Վերակացու», կ'որոտար գաւիթին մէջ: Ամէն կողմ գերիները  
վար թափեցան սարսափահար, եւ կարծես տրուած հրամանի մը վը-  
րայ ամէնքն ալ կոնակ ծոնցին, թեւեր բարձրացուցին խորապէս  
ծռած իրենց գլուխներուն վերեւ: Ոմանք ալ անկէց դուրս վազելով,  
վերակացուն պոսին փնտռելու: Լիկինիանոս ոտքը գետին կը դար-  
նէր կատաղութենէն եւ անհամբերութենէն: Գերինները կը յարատե-  
ւէին իրենց յարգալից անշարժ խոնարհութեան մէջ, որովհետեւ իշ-  
խանը տակաւին շիտակ կենալու նշանը մոռցած էր տալ: Վազեց  
դղեակին մուտքը, դարատափին եզրը, քարէ սանդուխտին գլուխը եւ  
հեղձամղձուկ ձայնով կը դուրս լուռ գիշերուան մէջ. «Վերակացո՛ւ,  
սատկած դիակ դուն, անասուն, դեւ, կամ աստուած, կտորդ պիտի  
չթողում»: Այդ միջոցին լուսնին լոյսով կարծես երկինքէն փրթած  
հեռաւոր արեւելակողմի մեղմիկ բլուրէն կը հնչէին քրիստոնէական  
եկեղեցիին զանգակները կէս գիշերուան ատենները: Լիկինիանոս կե-  
ցաւ ու աւանջ կախեց ուշով: Ինչպէս ալ անոյշ է — օ, ո՛րքան ալ  
կը հանդարտեցնէ: Բայց ի՞նչ կը հնչեն: «Ո՛վ դուն, քեզի կ'ըսեմ,  
ի՞նչ ձայներ են ասոնք», պոռաց թափով մօտը կեցող գերիի մը:  
«Իշխա՛ն, քրիստոնէաները Ձատիկ կը տօնեն: Քրիստոնէական եկե-  
ղեցիին նշաններն են ասոնք»: — «Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսել է Ձատիկ»: —  
«Իշխան, իրենց Աստուծոյն Յարութիւն ի մեռելոցը կը տօնեն»: Լիկինիանոս հեղնանքով շրթունքները պճրթկեց եւ հպարտութեամբ  
ծիծաղեցաւ: Վերակացուն եկաւ ցատկելով: Գաւիթին մէջ չարածճի  
ուրախութիւն ցոյց տալով կը խնդային գերինները իրենց խտասիրտ  
վերակացուն ենթարկուած աճապարանքին եւ ձեւերուն վրայ: Գե-

րինները յարդանքով կեցած էին իրենց տիրոջ՝ Լիկինիանոսի ետեւը,  
որ հանդարտօրէն դէպի ճաշարահը կը տանէր պուստի եղած  
դրանիկը որ չորս կտոր կ'ըլլար իշխանին առջեւ, անոյշ անոյշ կը  
խնդար անոր հաճոյք պատճառելու կերպերով: Լիկինիանոս ժամա-  
նակ չունէր, թեւը կը սեղմէր որ շուտ ընէ, բայց վերակացուն, թե-  
ւին ցաւին ալ չնայելով, Լիկինիանոսին քովէն կ'երթար: «Ո՛ւր էիր  
նորէն, չուն», պոռաց իշխանը եւ ներս սենեակը հրեց զայն: Վերա-  
կացուն գերիի նման խոնարհեցաւ եւ այն ձեւին մէջ մնաց, մինչեւ  
որ իշխանը հրամայեց իրեն շտկուել եւ պատասխան տալ: «Մտաւնիդ  
ծոյլ ու անդործ չէր, իշխան: Անոր աչքերը գիշեր ցերեկ բաց են եւ  
չատ բան մէջտեղ հանեցին, տէր իմ: Նմանապէս ականջներս շատ  
բան լսեցին հոս քաղաքին մէջ»:

Որ գիշեր էր, երբ երկուքը իրարմէ բաժնուեցան: «Վարձա-  
տրութիւնս քու հաւատարմութեանդ համար, վերակացու, հոն գե-  
տինն է: Փնտռէ: Քուկն է»: Լուսնկային, պատուհանին մօտ գետինը  
կը փաշիւղէր Արսինէի նետած գարդը: Վիզն ու գլուխը խորունկ ծը-  
ռած, վերակացուն պատուհանին դէմ կը սողոսկէր ու գետինը չորս  
կողմը կը փնտռէր: «Մօտը, անկողինին մօտ, իշու քակոր: Չե՛ս  
տեսներ», պոռաց նորէն իշխանը բարկութեամբ: Վերակացուն անոյշ  
մը խնդաց եւ ուրախ խանջուելով մը ցոյց տուաւ իր երջանիկ դիւտը:  
Իր տիրոջ տարաւ զայն ինչպէս կ'ընէ մարդուած չուն մը: «Քուկդ է,  
ըսի»: «Իմս», կակաղեց վերակացուն: «Այս թանկագին իրը, Տէր:  
Աս ամէնը ոսկի է: Ի՞մ, Տէր: Հինգ սատերի արժէք ունի»: — «Երեք  
մնաս ոսկի: Եթէ դիտցած ըլլայիր», խանչեց իշխանը: Կատաղու-  
թիւնը նորէն վրան եկաւ: «Գնա հիմա եւ գործդ աղէկ տեսիր: Տա-  
կաւին ոսկի կայ քովս եւ աւելի լաւ դիրքեր»: Իշխանը երթալ կ'ու-  
զէր, բայց վերակացուն կեցուց զայն երկու ձեռքերովը պճղնաւորին  
վրայ: Ետեւր նայեցաւ: Վերակացուն ծնրադրեց եւ բերանը սեղմեց  
անխօս երախտադիտական շարժուձեւերով իշխանին հազուստին  
քղանքքին վրայ: Քղամիւր (գիմուորական վերաքիւլ կամ տառատոկ)  
բերել տուաւ եւ քայլ առաւ դէպի գաւիթին դուռը: Քայլեր կը դրըն-  
դէին քարէ սանդուխտին վրայ: Տրդատ եւ Մովսէս կուղային, գլխա-  
նոցով վերարկուի մէջ փաթթուած: Տրդատ իր առաջին նայուածքո-  
վը իսկ չափազանց գիծի խմած ըլլալը մատնեց: Դիմագիծերը դեղնա-  
չորթ, աչքերը անփայլ: Բերանին շուրջ խոզված, տարտամ ծիծաղ  
մը: Մովսէս քահանայարար կը քալէր ինչպէս միշտ եւ հանդիսա-  
կան ողջոյն մը տուաւ Լիկինիանոսին. «Կ'ուզե՞ք նոր նշաններ տես-  
նել, իշխան: Նշանները լաւ կ'երթան: Սէրն ու բախտը քեզի համար  
նպաստաւոր են: Բայց ո՛ւր այսքան ուշ»: — «Ձեր նշանները նուազ  
բարի են, սրբազան Մովսէս»: Իշխանը դարանակալ, չարածճի նայ-



լորովին մօտեցուցած անոր երեսին: Աչքերը գլորեց թաւալեցուց անոր վրայ. «Կ'ուղե՞ս Հարուստ ըլլալ: Կ'ուղե՞ս որ բաժնենք»: Վերակացուն եռանդով հաստատական ակնարկեց: Իր կենսական ոյժերը անմիջապէս դարձան նորէն: «Զիս թող որ ոտքի ելլեմ, Կուինտոս: Դուն անկեղծ եւ ազնուախոհ ես»: — «Ազնուախոհ քեզի չափ, շո'ւն»: — «Թող բարեկամ ըլլանք, Կուինտոս: Պիտի օգտուիս: Քու ազատութիւնդ պիտի առաջարկեմ, երբ որ ուզես եւ քեզի օգնական ըլլալ ամէն բանի մէջ: Կրնաս տալ ինձի ինչ որ կամենաս»: — «Երգուընցիք ինձի հաւատարմութիւն, շո'ւն, դու, երգուընցիք յանուն Միհրի, որ հազար ականջ ու հազար աչք ունի»: — «Կ'երգնում յանուն Միհրի, որ հազար ականջ եւ հազար աչք ունի», կրկնեց հլու վերակացուն: Կուինտոս փսփսաց նորէն, իր աչքերուն խոր ակնակապիճներէն թափանցիկ նայուածքներով, իր ոսկրուտ երեսը ամբողջովին վերակացուին երեսին դէմ բռնելով, բռունցքը դնողացած թեւերը ետեւը տարածած. «Երգուընցիք յանուն Բուշիանկտա երկայնաձեռն դեւին»: — «Յանուն երկայնաձեռն Բուշիանկտայի»: — «Երգուընցիք յանուն սուրբ ցուլին»: — «Յանուն սուրբ ցուլին»: — «Երգուընցիք յանուն Ահրիմանի եւ անոր բոլոր դժոխային դեւերուն»: — «Յանուն Ահրիմանի եւ բոլոր անոր դժոխային ոգիներուն»: — Գերեզմանական լռութիւն: Հաստատութիւնը կը ճառագայթէր երկինքին վրայ, կարծես Միհրի հազար աչքերը իրօք իրենց վրայ կը նայէին: Եւ վերը դարաստանին մէջ դիշերային քամիէն կը սրսփային արմաւենիներ, շոճիներ, նոճիներ, կարծես դժոխքի բոլոր ոգիները կ'աղաղակեն Ահրիմանին հետ խմբովին. Ամէն: Գերին կերկրաձայն պատմեց արարքները Մովսէսին հետ: Այս պատկական դիշերուան յարուցեալ Քրիստոս էր ինք քրիստոնեաներուն ղերեզմանին մէջ: Ինք մին էր այն կոյրերէն, որոնք տեսան շնորհիւ Մովսէսին, մին էր անզամալոյժներէն, որոնք բուժուեցան Մովսէսին շնորհիւ: Այս օրերուս ալ պիտի ըլլար այն մեռեալը, զոր Մովսէս կ'ուղէր ամբողջ ժողովուրդին առջեւ արթնցնել ի հեծուկս եպիսկոպոսին: Մովսէս եւ Տրդատ այս գիշեր զիւղացիի կերպարանք մտած, քրիստոնեաներուն հաւաքոյթին մէջ էին, իրրեւ արտասահմանի քրիստոնեաներ վայելցիին Տէրունական ընթրիքը: Երբ աստղերը տժգունեցան, եւ լուսինը կը կանգնէր արեւմուտքի մէջ, Կուինտոս իր ծառայութեան վարձքին կէսը սահեցուց վերակացուին ձեռքերուն մէջ, որոնք սառի պէս պող էին: Երկուքն ալ լուռ ու մունջ իրարմէ սահեցան բաժնուեցան: Երբ Կուինտոս կը պատրաստուէր իր նորաչաճ դրամը դնել իր յարդէ անկողինին տակ ծակին մէջ, առաջուանը համբարձած էր: Քուն չեկաւ. Կուինտոսի վրայ: Իր թաց աչքերը թափ տուին խաւարին մէջ: Իր բոլորտիքը գերիները կը շնչէին անդորր, օրուան դժուարին աշխատանքէն պարտասած:

ԳԼՈՒԽ ԺԳ.

## ԱՇԽԱՐԻ ԶԱԽԱԿՆԵՐԸ ԼՈՅՍԻ ԶԱԽԱԿՆԵՐԷՆ ԱԻԵԼԻ ԽԵԼԱՑԻ ԵՆ

Աթէնքի հարաւ-արեւելեան կողմը, Ագրիանեան փողոցը Ագրիանոսի դուռնէն կը տանի դէպի Իլիսոս գետը: Հոն, Լիսոսի հովիտին մէջ, ուր բարձրէն դէպի բլուրն ի վար կը դահակալէր Զեւսի մեհեանը իր հսկայ Կորնթական սիւներով, կամուրջին մօտերը, կը կանգնէր հիւրանոց մը, որ առաջակողմովը կը նայէր դէպի փողոցը, ետեւի կողմովն ալ շինուած էր փրփրոտ Իլիսոսի վրայ: Տակի պղտիկ կապելան բաց մուտքով բոլոր անցորդներուն համար ազատ էր, եւ այս պատճառաւ գիշեր ցերեկ լեցուն: Վերի մեծ սենեակը, աւելի սրահ մը, գետին դէմ չորս պատուհաններով, կը պարունակէր շատ մը կակուղ բաղմոցներ, եռոտանիներ, սեղանիկներ, քանի մը աշտանակներ եւ կանթեղներ, պատերուն վրայ որսորդական պատկերներ, քանի մը գեղեցիկ արձաններ, գաճէ կամ մարմարէ գլուխներ, դէմքեր, դաւաթներով, խմիչքի ծառայող եղջիւրներով, բաժակներով լեցուն քանի մը դարակներ — այս էր սրահը, զոր խումբ մը աթենացի ուսանողներ ամէն տարի կը վարձէին: Բայց այս ուսանողներուն իրրեւ հայրախնամ խորհրդական, բարերար, եւ երիտասարդ մնացած հինաւուրց բարեկամներ կը հանդիսանային մէկէ աւելի պատուաւոր անձնաւորութիւններ ամէն հասակէ եւ դիրքէ: Փիլիսոփաները, քերթողները, երաժիշտները, արուեստագէտները, համբաւաւոր սպաները հոն կը մտնէին կ'ելլէին շարունակ: Հոս ընտանի էին Ապեղէս, Վիգիլիոս, Վալերիոս: Հոս մինչեւ իսկ Աթենակորաս եպիսկոպոս հանճարեղ բանախօսութիւններ տուած էր, եւ

երբեմնի բաղմաթիւ ուսանողներուն վրայ անպակաս եղած էր անոր մեծ ազդեցութիւնը: Հոս վայր մըն էր մտածումի, խօսքի, պայքարի. հոս կ'ապրէին, կ'երգէին, կ'արեւին, կ'ըմբռնէին, կ'ըմպէին. հոն կ'ըտրէին Աթենաս, Երոս (Սէր), Փերոս, Ապոլոն, Զեւս: Հոս ժամանակէ մը ի վեր ընդունուեցաւ Տրդատ, եւ հիացումի առարկայ եղաւ Մովսէս: Մովսէս ուսանողներուն պաշտելին էր: Եթէ չերթար, կ'ըհանուէր կ'ըհրաւիրուէր յատկապէս: Այն գատակական գիշերէն քանի մը օր առաջ էր: Բոլոր ուսանողները անձայն անշուշտ կ'ունկնդրէին Մովսէսի բանախօսութեան: Երկու վարպետներուն միջեւ արձանագրիչ պաշտօնեան ներս կուգար եւ Մովսէսին անունը կուտար: Մովսէս կ'ընդհատէր իր բանախօսութիւնը եւ ուսանողներէն եւ արուեստագէտներէն կ'ըտրէր ներողութիւն քանի մը վայրկեանի համար: Նորէն իսկոյն կ'ըլերադառնար, բայց իր ճերմակ զլխանոցը առնելու եւ անոնց ըսելու համար, թէ հիւանդի մը կ'ըհանուի գարձեալ: Եւ արդարեւ վարը մարդ մը կ'ը սպասէր վերաբերուով եւ զլխանոցով: Ոսկրուտ կերպարանք մը դուրս կուգար վերաբերուէն, անհամբոյր, շողջողուն աչքեր դարանի կեցած ձեւով Մովսէսին կ'ը յարկէին: Գիտմամբ բարձր կ'ը խօսէր, որպէսզի անցնող դարձողները կարենային հասկնալ ամէն բառ եւ երկուքին ալ կողմը նայիլ: «Այս անգամ պէտք է ըլլայ, սրբազան հայր, այս անգամ ապահով»: — «Անշուշտ, անշուշտ, դաւախ: Ահա կուգամ», հանդարտեցուց Մովսէսի խորունկ ձայնը շնորհարար: Շուրջը կեցողները ի հարկէ կ'ը կարծէին, թէ դարձեալ հիւանդի մը կ'ըհուած է: Ամէնքն ալ կ'ը ձանձնային դայն իսկոյն, շատերը կ'ողջունէին խորին խոնարհութեամբ եւ հանդիսական կանչով. «Պաղատութիւն ընդ լեզ, Մովսէս սրբազան»: — «Այս անգամ փախուստի ճամբայ չկայ», կ'ը կրկնէր Կուրխտոս բարձրաձայն, սպառնալիք: «Անշուշտ ոչ, Կուրխտոս, ես կուգամ, այս': Ընկերացի'ր ինձի, գիտեմ թէ ինչ կ'ուզես: Եկու'ր»: — «Հիմա տուր ինձի խոստացուած դրամը, Մովսէս, հոս տեղն ի տեղը, ապա թէ ոչ բոլոր ուժովս կ'ը պոսամ թէ դուն ինչ ես, դուն ինչ րրած ես»: — «Դուն կ'ուզես հոս այս ամէնուն առջեւ պարզել իմ բոլոր րրածներս, սիրելիս», ձայնեց Մովսէս բարեացակամօրէն, բայց աւելի բարձր, զլուխը երեքցնելով եւ ձեռքերը երկնցնելով Կուրխտոսի դէմ: Արդէն կ'ը հաւաքուէին հետաքրքիրներ եւ շատերը Մովսէսի կողմը կ'ը յառաջանային դայն պաշտպանելու համար: Մովսէս հայերէն յեղուով րաւ Կուրխտոսին. «Ուշադրութիւն րրէ, իմ կուսակիցներս թիւով շատ են, այնպէս որ քու դէժ գիտաւորութիւնը արժէք չունի: Լռէ', եկուր, ինձի հետեւէ»: Կուրխտոս վտանգը հասկցաւ: Մովսէսին հետ առաւ քալեց եւ բաւական տեղ անոնց հետեւէն դացին աթենացիներ, մինչեւ

որ վերջապէս Մովսէս ձեռքով նշան րրաւ անոնց, թէ պէտք է կենան ալլելու: Եւ հիմա երկուքը կ'ըրթային գիշերային փողոցներէն: Կուրխտոս իր ունեցածները այնքան Եոսանով համբերու գրադած էր որ րնաւ ուշադիր չեղաւ, թէ Մովսէս գինքը ուր կ'ը տանէր: «Ամէն, ամէն բան պիտի ունենաս, դուն իմ ամենահաւատարիմ ծառաս: Ինչ խեղացի ինչ տաղանդաւոր ես եղեր դուն: Այս ձիրքը, այս կարողութիւնը Մովսէսին գատ ոչ ոք պիտի Ենթադրէր քու վրայ: Որո՞ւր կ'ը պարտիս դուն քու խնայողութիւններդ, հինաւորց գերի: Փախչելու եւ հայրենիք ճամբորդելու պիտի րաւ՞ ունեցածդ»: Կուրխտոս լուց: Մովսէս կրկնեց իր հարցումը: Նորէն լուց Կուրխտոս: Երբորդ անգամ ըլլալով հարցուց Մովսէս եւ սարի վրայ մնաց: «Մէկ մասը ինձմէ գողցած են», մրմոսց գերին ակունները խաճնելով: «Վա՛յ, բարի մարդ: Ի՞նչպէս ալ կարելի է գողցնել: Ի՞նչ կ'ըլլայ: Մնացիլ իմ ծառայութեան մէջ եւ հարիւրապատիկ պիտի ընդունիս: Ո՞վ կ'ընայ քեզմէ այդ գողութիւնը րրած ըլլալ»: — «Վերակացուէն գատ ոչ ոք»: — «Վերակացու'ն»: — «Ոչ ուրիշ մէկը», պնդեց Կուրխտոս: «Եկու'ր հետս: Ես ամէն բան պիտի պատմեմ քեզի, Մովսէս: Իրաւ է որ Ահրիմանի չափ գէշ ես դուն, բայց բարի ես ինձի հանդէպ»: Աւելի առաջ դացին մութ ու ամայի գոհններէ, եւ Կուրխտոս տղու մը պէս հեկեկալով պատմեց իր անցուցածը վերակացուին հետ, անոր կռիւր: Բայց հիմա անիկա իր ազդեցութեան տակ է: Ամէն բան գիտէ անիկա, եւ գրեթէ իր բոլոր ունեցածը պարտաւորուեր է վերակացուին յայտնել, ալլապէս ամէն բան կ'ը կորսնցնէ, վրայ կուտայ: Այս պատճառաւ ստիպուած է Կուրխտոս հետզհետէ աւելի պահանջել Մովսէսին: Առանց խօսելու, իր սովորական պաղ հանդարտութեամբ Մովսէս իմացաւ որ Կուրխտոս գինքը մատնած է: Ոչ մէկ մեղադրանք այս պատճառաւ: Ընդհակառակն. «Ոնեղձ Կուրխտոս, ոչ ոք պարասպ տեղը կ'ը ծառայէ Մովսէսին: Անհոյ եղեր, ամէն բան նորէն պիտի ունենաս, եւ շատ աւելի: Եկուր, վերջին կապելան հոս մօտն է: Անօթի եւ ծարաւ ըլլալու ես: Հոն քեզի նոր ըսելիք ունիմ»:

Կուրխտոս սիրով ետեւէն դնաց: Դարձեալ յուսով եւ վստահութեամբ լեցուն: Գիշերային թեթեւ անձրեւ մը կ'ը տեղար: Թաց օդը կ'ը բուրէր հող եւ խառնակ հտեր: Ազատալոյս պանդոկը տանող ճամբուն վրայ Մովսէս շարունակ կ'ը մխիթարէր Կուրխտոսը եւ անոր հաղորդեց, թէ ինք քանի մը օրէն նոր գեր մը պիտի կ'ընայ խաղալ, եւ այն առնել բոլոր կորսնցուցածը նորէն պիտի շահի: Կուրխտոս հետաքրքրութեանէն զլուխը վեր չէր առնել: Գլուխը խորունկ կ'ը կախէր զլխանոցին մէջ եւ անձայն մտիկ կ'ընէր Մովսէսին: «Այս շարթու ալ ես եւ քրիստոնեայ եպիսկոպոսը Արիսպագոսին վրայ բո-

լոր ժողովուրդին առջև իրարու հետ պիտի վիճինք: Նախ իմ իմաստութեամբ պիտի յաղթեմ անոր, յետոյ հրաշք պիտի դործեմ, գիտես արդէն, Կուինտոս:» — «Այո՛, Տէ՛ր, կոյրերը կը տեսնեն, խուլերը կը լսեն, կաղերը կը քալեն»: Գործի մարդու չոր ու ցամաք չեչտով Կուինտոս հաստատեց պէտք եղածին պէս ըլլալիք դործը: «Եւ», շարունակեց Մովսէսը, «Կուինտոսը յարուցանել»: — «Եւ Կուինտոսը յարուցանել», հաստատեց Կուինտոս, նոյն պաղ ու անտարրեր չեչտով, առանց բնաւ մտածելու, թէ այդ փորձը ի՞նչպէս պիտի ըլլայ: Բայց կ'ուզէր որ աս ալ ըլլայ: Կապելան փողոցի մը անկիւնը խորր ծածկուած էր: Փողոցէն կը մտնէին երկու լայն վարագոյրներու միջեւ, որոնք անձրեւներէն աւրուած կերպարանքներով եւ դաշտանկարներով ներկուած էին: Գետինը, սեղաններուն, աթոռներուն, եւ շատ նստուելով գոյնը նետած բազմոցներուն վրայ նստած ու պառկած էին մարդիկ, կիներ, չարածճի տղաքներ եւ աղջիկներ, նաւաստիներ, ծեր դիմուորներ հինցած գործի վերարկուներով, իրենց տէրերէն փախչող գերիներ, բողբոջ բաց մազերով, հորանի կուրծքերով, կամ միմիայն հաղիւ մինչեւ ծունկը համող կոշակտակէ շապիկ մը հագած, սարսափելի աղտոտ: Գինիի բարկ հոտը կը լեցնէր ամէն բան: Հոս խորհրդաւոր շշուկներ, շշուկներ. հոն բարկաճայթ հայհուջներ, կռուփի հարուածներ սեղանին վրայ. անդին պոռչաւոր եւ դռնհիկ քրքիջներ: Գարձեալ ուրիշ անկիւնէ երգել, ճչել, կանչուրտել: Միջանկեայ մատղաշ աղջիկներ եւ պանդոկի ծառայող աժանային գերուհիներ, մարմնական ամէն կարելի տկարութիւններէ բռնուած, ուտելիք եւ դինի կը բերեն: Սխտորի, սամիթի, սոխի հոտեր հին հագուստներու, մաղի իւղերուն, զանազան քսուելիքներու արտաբուրումին հետ խառնուած: Վրան բաց խոհանոցէն դուրս կը յորդին հոտած ճարպի շոգիները, որով կը տապկուին կամ կը խորովուին աւրուած ձուկի կամ հաւեղէնի մասեր: Մովսէսի աչքերէն արցունք կուզային այս կծու աղտեղութիւններուն պատճառաւ: Աչքերը կը գոցէր եւ չփսխելու համար շնչառութեան մարզանքներ կ'ընէր: Երկար ատեն սեմին վրայ մնաց, ետ դառնալիք բռաւ, եւ վերջապէս երեսը վարագոյրներուն ճեղքերէն դուրս կը նայէր երբեմն դիչերուան օդը առնելու, եւ ներսի սարսափելի օդը դուրս դրկելու համար: Միեւնոյն ատեն Մովսէս կաթմակի արագութեամբ մօրուք եւ կեղծամ անցուցած էր, տեսակ մը փոշիով յօնքերը, թարթիչները, կոպերը, շրթուքը եւ ճակատը շպարած, այնպէս որ Կուինտոս անպամ Մովսէսին դէմքէն սարսափահար ատեն մո վարաշորին ետեւը փախաւ եւ հարգուց անոր, թէ իրօք Մովսէսն է: Ահաւոր նայուածք մը կը յորդորէր զայն, լռէ՛: Այս նայուածքը եւ ամբողջ հրամայողական կերպարանքը օգտակար եղաւ

Մովսէսին, նաեւ այն միտքով որ իրեն հանդիստ ժամանակ չձող շաղակրատ յաճախորդները սկսան խելօք մը նստիլ, կամ վախնալով հեռուները նայիլ, քննել ուշի ուշով դինքը եւ ընկերը Կուինտոսը, խնդիր չէ թէ քիչ վերջը նորէն կը սկսէին իրենց խաղին զրուելի մոլութիւններուն: Այս խաժամուծին մէջ Մովսէս օգնականներ կը ճարէր իրեն: Գիչերուան այս տղաքներէն մէկուն կամ միւսին վրայ խիստ յաճախ կը սեւեռէր իր աչքերը, եւ հետեւանքը այն կ'ըլլար որ այդ տղան կամաց կամաց անոր կը դարձնէր նայուածքը, կարծես հմայուած, եւ այնուհետեւ այլեւս Մովսէսին ահարկու աչքերուն աղղեցութեան տակ կը մնար, մինչեւ որ իր աչքերը ուրիշ կողմ դարձնէր: Իրմէ թեթեւ սարսուռ մը կը բխէր ամէնուն վրայ: Իրեն չուրջ հետզհետէ տիրող լուսթեւէն կը հասկնար որ անոնք դանդան ենթադրութիւններ կ'ընէին, թէ ո՛վ կրնայ ըլլալ այս մարդը, եւ այս կերպով, կը սկսէին իրմէ վախնալ: Կուինտոս կ'ուտէր ու կ'ուտէր, եւ կը խմէր եւ ուզածը կ'ապսպրէր, վճարողը չէ՞ որ ուրիշն է: Մովսէսի հրամանը այդպէս էր: «Բեր տեսնեմ, դինիիդ հոտը ի՞նչպէս է»: Կուինտոս ամենայն հնազանդութեամբ կ'երկնցնէր գաւաթը: Մովսէս ձեռքը կ'առնէր եւ կը հոտառէր: Յետոյ ետ կը դարձնէր գաւաթը՝ անոյշ մը ծիծաղելով անոր:

Բոլոր հիւրերը կը կենային, կը նստէին կամ անշարժ կ'ընկողմանէին, շարունակ նայելով Մովսէսին աչքերուն, եւ ձեռք, ոտք, սրունք եւ թեւ կը բարձրացնէին, ինչպէս որ Մովսէս հրամայէր իրենց, կը նստէին, կը ցատկէին, կ'ոտոտոտէին, կը պարէին կամ մասնաւոր դիրքի մը մէջ կը մնային կարծես կախարդուած: Ոչ ոք դիտէր այլեւս, թէ ուր էր: Դէպի ետեւ, զաղանադուսպի մը պէս, կը քաշուէր Մովսէս կամաց կամաց, եւ արջու մը պէս, անտեսանելի պարանին կողմը քշուած, Կուինտոս իր գլխանոցով դէպի Մովսէսը կ'երթար ընդոտ: Բոլորովին Մովսէսին հմայքին գերի դարձած: Դուրսը անձրեւը դադրած էր: Ամպերու սեւ ծուէններու միջեւ կը պլպլային աստղեր եւ կիսալուսինը կը հեւար: «Օն, ուրեմն, տո՛ւն, Կուինտոս»: — «Տո՛ւն, տուն, Մովսէս: Ո՞ւր — եմ ես»: — «Աթէնք, մայրաքաղաք Յունաստանի: Ահա հոն է Լիկիւնեան դղեակը: Բայց ո՞ւր էիր դուն, մարդուկս: Նորէն շա՞տ խմեցիր»: — «Ամէն ատենէ աւելի քիչ: Ընկերութեանէն քաշուեցայ»: — «Քու արհեստակիցներէ՞դ»: — «Մովսէս, նեղուած եմ»: — «Իմ ներկայութեամբն ալ սիրելի եղբայր»: — «Եկուր, աճապարենք Արիսպագոս երթանք: Հոն քեզ պիտի արթնցնեմ եւ պիտի ցուցնեմ, թէ ինչպէս կրնաս ընել ամէն բան: Այս ամէնը պիտի տեսնես տեղուոյն վրայ: Քու վարձքդ պիտի ըլլայ երեք մնաս ոսկի»: Կուինտոսի ականջներուն մէջ սկսան երգի ձայներ լսուիլ, եւ հնչել: Ականջները զանգակի պէս կը խօ-

սէին: Երանութիւն մը եկած էր վրան, որուն նմանը չէր ճանչցած: Իր այս երանութեան հետ փտահութիւնն ալ աճեցաւ Մովսէսի վրա, որ անդադրում ճառով մը Հայաստանի մասին կը խօսէր, այդ երկրամասը այնքան որոշակի կը նկարագրէր, որ Կուինտոս սկսաւ ըսել, թէ այդ երկիրը բուրբոյլին իրենն է, որպէս թէ կը տեսնէր զայն: Այլեւս չէր նշմարել թէ իրենք քաղաքը թողած էին եւ կամաց կամաց ցից նեղ ճամբէ կը բարձրանային դէպի Արիսպագոս: Խորը կ'որոտար ջուրը եւ տժգոյն լուսնկային մէջ կը տեսնուէր ջուրին փրփուրին ցատկելը փոշխոցած ամպիկներու ձեւով: Յետոյ կուզային լայն, ճերմակ մշուշի կոյտեր, որոնք կը քաշուէին ժայռին բարձր պատին երկայնքը, եւ տմոյն լուսինին պատիւր շողին մէջ ընդարձակ, դիշերային արդի մը երեւոյթը կ'առնէին: Միշտ եւ յաւէտ կը խօսէր Մովսէս, Կուինտոսը եւ ներկաները այս տեսակ կախարդանքի տակ պահելով, սնիրական պատկերներու զերի դարձուցած: Կուինտոս կը հետեւէր անոր խօսքերուն, ինքնիրմէ դուրս ելած: «Ինձի կը թուի թէ հայրենիքիս հոռոյ կ'առնեմ, Մովսէս»: — «Հոտոտէ միայն: Եւ հոն ահա Արարատի դադարը: Նայէ՛, նայէ՛»: Մեռելներու դէմքերու պէս կանանչ ճերմակ կը շողային աղօտ Պարնէսի եւ Պէնտէլիկոնի սարերը դէպ իրենց կողմը: «Արարատ, Արարատ», կը թոթովէր Կուինտոս: Մունկերը կը սկսէին դողալ, մտածումները շփոթ, կը հաւատար ժուռ զալ Հայաստանի մէջ, հայրենի օջախը ըլլալ: Հոն է, ահա, քարերու մէջէն անցած ատենը կը զլտորի, կը սահի, կ'ելլէ կ'իջնէ: Լուսինը ամպերու ետեւը անհետ եղած է: Մրշուշը պարածածկած էր Կուինտոսը: Խորը անդունդին մէջ կը դոռայ հեղեղատը: Բայց անդունդին երեսը ծածկուած է մշուշին կոյտերէն: Կուինտոսի վրայ դարձեալ տկարութիւն եկաւ: Մունկերը իրարու մէջ կ'անցնէին: Ակոսները կափկափելով ահա կը կանգնի հոն, անձանաչելի հեռաւորութեան մը կը յառի անխտիր, առանց պիտնալու թէ ո՛ր, եւ Մովսէսին կը պոռայ կը կանչէ: Ոչ մէկ պատասխան: Ջուրը միայն կը գոռար ու կը փրփրէր: «Մովսէս: Մովսէս»: Ահա որոշապէս տակէն մէկը կը կանչէ զինքը, իրբեւ շատ հեռուներէն: Մովսէսի ձայնն է. «Կուինտոս, եկո՛ւր»: Ջարհուրելի ճիշ մը, անձկալից, տագնապալից կը խզէր դիշերուան լուրթիւնը: Մովսէս քանի մը վայրկեան կը յառէր, յետոյ, բոկոսն, քարայծ որսացողի մը պէս, մազից Արիսպագոսին դիւրասահ, փտանդաւոր ժայռի աստիճաններէն, Արիսպագոսէն աճապարեց վեր Ակրոպոլիս, Չեւսի կոթողներուն վրայօք, անցնելով Ադրիանեան դուռնէն դէպի հարաւակոյս Դիոնիսոսի բաց թատրոնը: Հոս Մովսէս հանդիստ առաւ քարէ նստարանի մը վրայ:

«Կեանքն ալ թատրոն մը չէ՞», բարկութենէն խնդաց Մովսէս:

Իր դերը կատարողը կը հեռանայ կ'երթայ, ինչպէս դերասանը թատերաբեմէն»: — Յետոյ մահուան անդորը լըջութեամբ «Վերակացո՛ւ, պատրաստուէ՛»:

Առաւօտուն նախ եւ առաջ վերակացուն ամէն կողմ Կուինտոսը կը փնտռէր, որուն շատ կանուխէն ամէն բան պատմած էր Աեքստոս փախնիփախը: Բայց ոչ մէկ կողմ Կուինտոս, եւ իր անկողինն ալ անգործածելի մնացած: Ընդհանուր փնտտուք մը սկսաւ դարաստանին մէջ, քաղաքին մէջ: Քանի մը ժամէն ետք, իշխանը այլեւս ինքնիրեն ըսաւ թէ դերի մը պակաս ունի, եղածը այս է միայն: Գերիները ամբողջ օրը այս մասին միայն կը խօսէին, եւ Աեքստոսէն դուրս ոչ ոք կը կարծէր թէ սուրբ Մովսէսը Կուինտոսի այս անհետ անյայտացումին մէջ մատ ունի: Ընդհանուր կարծիքը այն էր թէ փախած է: Բայց վերակացուն փոխուած ձեւը, կերպարանքը ամէնուն աչքին կը զարնէր, իշխանին, իշխանուհիին, ծառաներուն: Առաջուան պէս խիստ ուշադիր չէր դերիներուն աշխատութեան, քիչ կը մնար գաւթթը, պարտէզը, դաշտը, եւ գերիներուն հետ հազորդակցելու միջոցին յայտնապէս մտացիր էր, զոյնը կը նետէր, կարծես շարունակ տագնապով մը լեցուած է: Ան ամէն ատեն սարսափ մը կը դգար Մովսէսին առջեւ, կը խուսափէր անորմէ, ո՛ւր որ կրնար եւ կը հեռանար անոր դացած ճամբաներէն: Իրենց նայուածքները իրարու կը հանդիպէին եւ երկուքն ալ դիտէին որ զիրար փճացնելու վրայ կը մտածեն: Մովսէս իր ազդեցութեան բարձր կէտին վրայ էր: Արսինէ, Խոսրովիդուխտ ամէն ժամանակէ աւելի դարձեալ անոր հմայքին տակ էին: Իշխանը միշտ անոր փութաջան, միշտ հաւատացող աշակերտն էր: Լիկինիա միայն, տանտիրուհին, Պաւլայէն եւ Յուդիթէն խրատուած, կը մնար իր կանուխուան վերապահումին մէջ եւ արդէն բարկացած էր անոր դէմ իր գաւկին համար, որովհետեւ կը հաւատար, թէ Մովսէս ապագայ տիրապետութեան եւ Արսինէի սիրոյն խոստումներով ապուշի տեղ դրած էր իր գաւակը Լիկինիանոսը: Բայց Լիկինիանոսի սէրը այնքան զօրաւոր էր, որ Մովսէս պիտի չկարենար աւելի երկար յրթմնջել Արսինէի պատճառաւ Լիկինիանոսի բռնելիք ամէն մէկ ընթացքին դէմ: Երկար ատենէ ի վեր հաշտուած էին եւ Լիկինիանոս համոզուած էր մինչեւ իսկ, թէ սխալ հասկցած էր ինք Մովսէսը: Մովսէս նոր նշաններ տուած էր իրեն մօտալուտ տիրապետութեան մասին, եւ Լիկինիանոսը ապահովացած էր նորէն թէ Արսինէն իրենը պիտի ըլլար:

Տրդատ բոլորովին նուիրուած էր ուսանողներու եւ արուես-

տաղէտներու կեանքին, եւ հիմա շատ քիչ անդամ տունը կը դտնուէր : Ոչ մէկուն միտքէն կ'անցնէր այլեւս զինքը անջատել իր Բրիտանոյ- շէն :

Ամառը անցաւ շարունակական հանդիսութիւններով Լիկինեան զղեակին մէջ, եւ շքեղ Վարդավառ մըն ալ երեւան բերաւ կրկին Մովսէսի ոգին, աղղեցութիւնը եւ անոր գիրքը զղեակին մէջ :

Այս ամառուան ընթացքին քացաւորիկ դէպք մըն էր Լիկինիա- նոսի բարեկամ Գաղերիոսի այցելութիւնը : Քանի մը օրեր միայն մը- նաց ան, բայց ամբողջ քաղաքը հիացաւ անոր վրայ եւ տօնեց Գաղ- մատացի հովիւի մը այն հսկայ դաւակը, որ իր հօրեղբայր Դիոկղետ- իանոսին շնորհիւ կայսր եղած էր, եւ հիմա Պարսկաստանի վրայ մեծ յաղթականը դարձած, եւ հռոմէական զերիշխանութեան տակ կրկին Հայաստանի ապագայ տիրապետութիւնը իշխան Տրդատն կրկին Հայաստանի ապագայ տիրապետութիւնը իշխան Տրդատն յատկացուցած էր : Լիկինեան զղեակին տօնական մեծ սրահը կամ յաւաքուցած էր : Լիկինեան զղեակին տօնական մեծ սրահը կամ զհաւիճը հագուել կրցաւ բաւել հիւրերու բազմութեան, որոնք կը փա- փաքէին տեսնել Գաղերիոսը : Բայց մատենադարանի սենեակին մէջ միայն, ուր անոյ կուզար զինին, ամբողջ ընտանեկան մտերմական հաւաքոյթին մէջ, առանց վերապահումի Գաղերիոս կը պատմէր բացէ ի բաց, թէ ինչպէս երկու ճակատամարտներ անորոշ մնացին, թէ ինչպէս երրորդն ալ կորսնցուց կարէի եւ Եփրատի միջեւ ամա- յի դաշտապետին մէջ : Դժբախտաբար անխոհեմ դտնուելով չափա- ղանց արագութեամբ գործած էր, հակառակ Դիոկղետիանոսի հրա- մանին, որ Անտիոքի ընդհանուր բանակատեղիէն Աղեքսանդրիա ար- շաւեց, Եփրատոսի մէջ Աքիլոսի ապստամբութիւնը ճնշելու համար : Մերունի իշխանը ուշադրութեամբ կը հետեւէր Գաղերիոսի կենդանի վաւճուան նկարագրութեան : Իսկ Տրդատ բոլորովին ինքնիրմէ դուրս ելած էր ասանկ բաներ մտիկ ընելով, որոնք մասնաւորապէս կը շա- հագրողէին զինքը : Գաղերիոս պարտուած բանակին հետ Սուրիոյ ճամբով Անտիոքի բանակատեղին դարձաւ : Ամէնքն ալ կարեկեց ե- ղան Գաղերիոսի, որ ինքն ալ յուզուած, կը պատմէր թէ ինչպէս ճամբուն վրայ յանակնկալս ինքնակալին հանդիպեցաւ, որ յաղթա- կան կը վերադառնար Եփրատոսէն, եւ իրեն Գաղերիոսի օգնութեան կուզար արդէն լէզէն մը անպարտելի Իլլիրիացիներով եւ Գոթացի վարձկաններու գունդով մը : Գաղերիոսի պարտութիւնը իմանալով՝ Դիոկղետիանոսի բարկութիւնը չափ ու սահման չունէր : Ամբողջ Դիոկղետիանոսի բարկութիւնը չափ ու սահման չունէր : Ամբողջ բանակին աչքին առջեւ Գաղերիոս պարտաւորուեցաւ գլուխը բաց, հետիոտն, տաք արեւուն տակ եւ սուրիական անապատին կիզիչ ա- լազին մէջ, ծիրանին հագած, մէկ մղոն քայել, վազել Դիոկղետիա- նոսի կառքին քովէն : Սպաներուն առջեւ ծունկի գալով աղաչեց պա- դատեցաւ որ կայսրը ներէ իր պարտութեան եւ հրաման տայ նոր

ճակատամարտ մը մղելու . . . Ինքնակալը յօժարեցաւ վարանելով եւ 25.000 հողի տուաւ անոր : Գաղերիոս Եփրատի միւս կողմը դարձաւ Լեոնային Հայաստան, ուր նուազ երկիւղալի կը համարէր պարսկա- կան ահազին բանակը : Տրդատ բերանարաց եւ ականափեռեկ, կ'իմա- նար, թէ ինչպէս Գաղերիոս միայն երկու ընկերներով զիշերանց լրտեսեց պարսկական կեդրոնը : Իշխանը եւ Լիկինիանոս անգամ ափ ի բերան եղան այս յիմարական յանդիմութեան վրայ : Մնացեալը ծանօթ էր : Յարձակումը, ջարդը, Գաղերիոսի նմանը չտեսնուած յաջողութիւնը, որուն ձեռքը ինկան ոսկիով ու գանձերով եւ առատ նպարեղէններով լեցուն պարսկական բանակատեղին, թագուհին եւ ուրիշ շատ արքունի կիներ : Թագաւորը՝ Ներսէս վիրաւորուած փա- խաւ Մարաստան : Արգ, կիներուն համակրութիւնը զլիսաւորաբար շատ մեծ եղաւ Գաղերիոսի այս վերջին պատմութեան վրայ : Լիկի- նիա, Արսինէ, Սոսրովիդուխտ, ուղեցին ճշտիւ գիտնալ, թէ յաղթա- կանը ինչպէս վարուեցաւ այդ հէք կիներուն հետ : Գաղերիոս կրցաւ անոնց հանդէպ բռնուած վարմունքը որակել իբրեւ վեհօգի եւ յոյժ բարի, եւ հաշտութիւն կնքուելուն պէս անոնք կրկին իրենց երկիրը զրկուեցան : Հռոմի մէջ յաղթական թափօրի առթիւ ամէն պարագայի մէջ կեղծեցին ուրիշ պարսիկ զերիներ ներկայացնել իբրեւ թագուհին ու միւս պարսիկ պալատական կիները յաղթական կառքի մը մէջ : «Եւ արդ», գոչեց Տրդատ, ճառագայթող դէմքով մը Գաղերիոսի վրայ ցատկելով, «Հայաստան ազա՞տ է կրկին» : — «Հիմա, այո», հաստատեց Գաղերիոս, «եւ, ասկէց դատ, աւելի մեծ քան հօրդ ա- տեն : Ամբողջ Քրիստիստանը եւ ամբողջ վերին Տիգրիսի երկրամասը մինչեւ Վանայ ծովը հռոմէական կայսրութիւն դարձած է» : — «Ե՞րբ, ե՞րբ ես թագաւոր պիտի ըլլամ», աղաղակեց Տրդատ, հետա- քրքրութենէն ընդոտ : «Ատիկա պէտք է Ինքնակալին հարցնես : Գիտես արդէն, երիտասարդ, թէ Ինքնակալը ինչ կը պահանջէ : Ոյժ, ունիս դուն, եւ քու զինուորական ընդունակութիւններդ լաւ են : Բայց զիտցիր», — կամաց մը բաւ Գաղերիոս եւ ծանրախոհ ձեւով, խո- նարհելով Տրդատին առջեւ — «Ինքնակալը շատ ջերմեանդ է եւ իր ֆշխանակեցներուն վրայ կը փնտռէ, թէ անոնք աստուածապաշտ եւ մաքրակենցա՞ղ են» : Տրդատ կաս կարմիր եղաւ եւ շփոթած կը նայէր Լիկինիանոսին, որ ճիշտ այդ պահուն փառաւոր բիւրեղեայ բաժակի մը մէջէն կը կոնծէր եւ քննադատողի նայուածքով մը Գաղերիոսին կը նայէր : Դիոկղետիանոսի նկարագիրը կրկին խօսակցութեան նիւթ եղաւ, եւ չէին կրնար բմբոնել, թէ ինչպէս մէկ մարդու մէջ կրնան այսքան իրարու մօտեցած ըլլալ արիութիւն եւ կասկածամտութիւն, տիրապետական կորով եւ այնքան սրտաշարժ զիրարադրիւ մարդա- սիրութիւն : Կայսեր կրօնքին ականարկութիւնը առիթ եղաւ Մովսէս-

տին համար միջամուխ ըլլալ այդ նիւթին, եւ նոյնիսկ Գաղերիոս, մուկեանդ Միհրապաշտ մը, չկրցաւ ինքզինքը զերծ պահել Մովսէսին ազդեցութենէն: Միայն թէ Գաղիանոս տակաւին սա կէտը չէր կրնար ըմբռնել, թէ այս դէմքը, այս աչքերը, այս քիթը հիմա չեն այնպէս ինչպէս ժամանակին ինք՝ Գաղիանոս Պարսից վրայ Դիոկղետիանոսի յաղթութենէն ետք, Խոսրովի մահէն վերջ, տեսած էր այն Հայ սպային վրայ որ Դիոկղետիանոսի յանձնեց Հայ արքունի թագուն գանձարանին բանալին: Բայց սրբազան Մովսէսին հոգը չէր այդ պարպան, այդ մասին ոչինչ կ'ուզէր գիտնալ, այդ սպան անպայման ուրիշ մը եղած պիտի ըլլայ: Ինք այս միջոցին լեռ փախաւ ուխտաւորի մը ծպտումով, եւ անպատմելի նեղութիւններէ վերջ կրցաւ հոս գալ. — ամէնքն ալ Մովսէսին համամտութիւն կը յայտնէին — բարեբախտաբար կային դեռ ուրիշ կանանչ աչքեր եւ ծուռ քիթեր: Սակայն Գաղերիոս իր գիտցածէն չէր շուարեր, միշտ շիւ շիւ կը նայէր կը քննէր Մովսէսը եւ երկու մարդոց այս աստիճան նմանութիւնը տարօրինակ կը թուէր իրեն: Երբ վերջապէս մարդիկը առաւօտեան մթնշաղին իրարմէ բաժնուեցան, Լիկինիանոս իր բարեկամին հարցուց, թէ ի՞նչ էր իր կարծիքը Մովսէսին եւ Արսինէին մասին: Գաղերիոս ինք ալ բռնուէր էր Արսինէին, եւ իր բարեկամին համար հայցեց բոլոր աստուածներուն օգնականութիւնը որ ձեռք ձգէ Արսինէն: Գալով Մովսէսին, ան կամ աստուած մըն է — կամ դեռ մը: «Զգուշացի՛ր, Լիկինիանոս»:

Միւս օրը Գաղերիոս փառաւոր տողանցք մը կատարել տուաւ իր առջեւ լէզվոնական զինուորներուն: Յայտնի է, թէ Դիոկղետիանոս անոր յանձնած էր տիրապետութիւնը Յունաստանի, Դաղմատիոյ եւ Դանուբեան երկիրներուն: Բանակին զինուորական քաջարութիւնները, բանակետղին կացուղիքը, Լիկինիանոսի ամբողջ պաշտօնավարութիւնը այնքան զոհունակութիւն պատճառեցին Գաղերիոսի, որ բարեկամին խոստացաւ ամէն ինչ ընել ինքնակալին մօտ, բարձրացնելու համար զինքը Իշխանակից — Կայսր աստիճանին, նոր ընտրութեան մը պէտքը ներկայացածին պէս: Լիկինիանոս պէտք է աւելի վստահի Գաղերիոսի ազդեցութեան, քան թէ Մովսէսին գուշակութիւններուն: Գաղերիոս ինք ալ կը հաւատար գուշակութեան, մանաւանդ Դիոկղետիանոսի ինքնակալ ըլլալէն ի վեր, բայց Մովսէսին չի վստահիր: Գաղերիոս եւ Տրդատ մտերիմ բարեկամներ եղան: Տրդատ, իր զինուորական ընդունակութիւններէն եւ մարմնական ոյժի փորձերէն զատ ուտելու խմելու տոկունութեամբն ալ աշխատեցաւ համոզել Գաղերիոսը, թէ ինք կարող մարդ մըն է թագաւորութիւն մը վարելու: Գաղերիոս լաւագոյն յիշատակ կը պահէր բոլոր այն զինուորներու եւ սպաներուն հանդէպ, որոնց հետ իրբեւ

պարզ ընկեր կը հաղորդակցի ամբողջ օրերով: Ինք համակ զինուոր, փառաւոր ուսող խմող մը, եւ միշտ ուղիղ ու անկեղծ, բիրտ, անտաշ, հարազատ Դակեան մը, ինք ալ իր ոյժի փորձերը տուած է գոտեմարտութեան, քարընկեցութեան, հեծելութեան մէջ եւս, որոնց մէջ իր նմանը չունէր, կը թուի: Յաճախ կը կատակէր, Տրդատին հետ կ'իյնար Բրիսանոյշին պատճառաւ, զոր անպայման տեսնել կ'ուզէր, եւ իրօք — պարտաւորուեցաւ գովել Տրդատին ճաշակը: Բայց Տրդատ չի կրնար վերջնապէս խոհանոցի այս ջնջոցը Հայաստանի թաղուհի ընել, հեղնեց Գաղերիոս Տրդատը, մինակ մնալով հետը: Երբ Տրդատ անխորհուրդ կերպով խնդաց, Գաղերիոս աչքերը բանալով անոր նայեցաւ եւ սպառնալին ազդարարեց. «Կիներու առջեւ ինքզինքդ գիտցիր, տղայ՛: Նախ եւ առաջ սովրէ տիրել»: Լիկինիանոս եւս շատ մը խիստ, բիրտ յորդորներ ստացաւ, եւ տեսակ մը նախանձով եւ ամօթի զգացումով հասկցաւ, թէ Գաղերիոս, հակառակ իր քիչ մը խոպան բնականութեան, առողջ, բարոյական անձ մըն է: Ամէն պերճանք, ամէն քնքշանք, փայփայանք անխորժ էր իրեն: Լիկինեան զղեակին մէջ շատ բաներ աղնիւ ու գեղեցիկ էին իրեն համար: Հաճոյք կը զգար բանակատեղիին կապելային մէջ սպաներուն հետ ըլլալէն, հոն քիչ մը ինքզինքը կը մոռնար եւ ամէնուն հետ ընկեր կ'ըլլար: Գաղերիոս յանչափս կ'ատէր քրիստոնեաները եւ հոս Աթէնքի մէջ անոնց մասին երբեք պիտի չխորհէր, եթէ այս օրերուս անոնք ամբողջ քաղաքին խօսակցութեան նիւթ չըլլային:

Արիսպազոսի մէջ վիճարանական ժողով մը պիտի գումարուէր քրիստոնեաներուն եւ Մովսէսի միջեւ: Մեծ բաղմութիւն հաւաքուած էր: Աթենակորաս մինչեւ վերջին ժամը պայքարած էր ինք իրեն հետ, թէ պէ՞տք է արդեօք հետեւանք տայ Մովսէսի հրաւերին: Իր կնոջը եւ իր հասարակութենէն քանի մը վստահելի հինաւուրց մարդոց առջեւ աթոռի մը վրայ ինկաւ զողողալով եւ գոչեց. «Զեմ կրնար: Աստուած չ'ուզեր: Աստուծոյ դատաստանները արդար են: Դուք զացէ՛ք: Ես չեմ կրնար»: — Ամէն կողմէ քաջալերեցին զինքը: Ըսին թէ Վալերիոս բժիշկն ալ իր քանի մը բարեկամներուն հետ հոն դացած է արդէն: Մովսէսի բոլոր արարքը քննութեան պիտի ենթարկէ: Բայց եպիսկոպոսին կարծիքը այն էր, որ Վալերիոս անգամ Մովսէսի գրպանը մտած է եւ անկարող էր դիմադրելու անոր նենգութիւններուն:

Կէս օրը անցաւ: Հոգիով ու կեանքով ցայտուն, փրկութեան եւ լոյսի մասին երբեք չլսուած քարոզութիւն մը յափշտակեց քրիստոնեաներուն եւ հեթանոսներուն ստուար շարքը: Սրտաբուխ կոչեր սպաշխարութեան, սրտաճմլիկ բռուր առ Աստուած՝ վերադարձի,



փրկութեան, հաւատքի եւ խաղաղութեան: — Քրիստոս կամ Միհր  
— մի է եւ նոյն — կը փափաքի շահիլ հոգիները: Երկուքն ալ փրկիչ  
են, երկուքն ալ Աստուծոյ գրկուած, փրկելու հաւատացեալները,  
կանգնելու անհաւատները: Երկուքն ալ պիտի գան աշխարհը դատե-  
լու: Մերձ է դատաստան: Երկուքն ալ կուզան երկինքի ամպերուն  
մէջ: Երկուքն ալ, Քրիստոս կամ Սրաօչա: Ամէն օր, ամէն դիշեր,  
այս գիշեր իսկ կրնան դալ: Ո՞վ պատրաստ է: Ո՞վ մաքուր է ըստ բա-  
ւականին: Ո՞վ կ'ուզէ ապաշխարութիւն ընել: Ո՞վ կ'ուզէ Քրիստոնե-  
այ — կամ Միհրի աշակերտ ըլլալ: Ո՞վ որ կը հաւատայ կրնայ փրկ-  
ութիւն գտնել ցաւերէն: Ո՞վ կրնայ համբել հիւանդները, զոր այս  
քաղաքին մէջ Միհր կ'միջոցաւ առողջացուց: Ո՞վ կ'ուզէ փրկու-  
թիւն: Առանց փոխարինութեան, ճրի կրնայ դայն ունենալ: Ոյժ, ա-  
ռողջութիւն: Փրկութիւն ամէն ախտերէ: — Մովպետին աշքերը բոց  
կը տեղան, երբ կը խօսի: Վեհափառութիւն մը կը կաթի անոր վրայ,  
որ պարտաւորիչ կ'ընէ հաւատքը: Նաեւ ամառնային երեկոյ մը, ծո-  
վու եւ երկինքի եւ մեհեաններու նշուլաղեղ շողալն ու ծփալը, եւ  
այնպիսի լուսիւն մը որպէս թէ բացուել կ'ուզէ, ահա պիտի բաց-  
ուի երկինք: «Մովպետ, սրբազան Մովպետ», կ'աղաղակէ ահա յա-  
փրշտակող ձայն մը, ուրիշ ձայներ կը դադարին, կը խուժեն դէպի  
անոր ոտքերը, զգեստը կը շօշափեն կը համբուրեն, անոր ձեռքերը կը  
բռնեն եւ կը դնեն իրենց զլխուն վրայ: Հիւանդ, առողջ, հարուստ,  
աղքատ, քրիստոնեայ, հեթանոս, ամէն ոք կ'ուզէ առողջութիւն,  
թողութիւն, շնորհք, կ'ուզէ փրկութիւն ցաւերու, բժշկութիւն հի-  
ւանդ իւրայիններու: Եւ արդարեւ — հրաշք կը պատահի, ցաւեր  
կ'անհետին, կոյրեր կը տեսնեն, համբեր կը լսեն, կաղեր կը քալեն,  
կը նետեն իրենց անթացուպերը եւ կ'աղաղակեն իրենց յուզումէն:  
Շատեր ետ կը վազեն, իրենց տունները, տեսնելու համար թէ իրենց  
հիւանդները բժշկուեցա՞ն, իրենց կաղերը կը քալե՞ն, ուրիշներ կը  
փութան ետ դառնալ կը հաւաքուին Մովպետի առջեւ, թէ իրենց հի-  
ւանդները անկողինէն ելա՞ծ են, եւ շրջակայքը կը դիմեն: Յնորք մը  
դրաւած է մարդիկը: Ոչ մէկ հակակշիռ կարելի է: Հաւատք էր ամե-  
նայն ինչ: Մովպետ ահա կեցած էր Աստուծոյ մը պէս եւ սիրով ու  
յարդալից կը խնդայ բոլոր յացող, խնդացող, ծնրադրող, շնորհա-  
կալու, ցնծալից մարդոց առջեւ: Միշտ կը տարածէր թեւերն ու  
ձեռքերը եւ կ'օրհնէր ամէն կողմ ժողովուրդը: Եւ ահա — ճիշ մը:  
Պատանի մը կ'երեւայ կը տատանի, կ'իյնայ իրեն օգնութեան փութա-  
ցողներու վրայ եւ կը պառկեցնեն դայն նուաղած: Վալերիոս, բժիշ-  
կը, մօտեցաւ եւ ցատկեց առաջ: Մովպետ հեռու էր եւ ժողովուրդէն  
նեղուած: Նուաղողին շուրջ ամբոխ մը, մերթ տաղնապալից աղա-  
ղակներ, վասնզի Վալերիոս կը յայտարարէր, թէ բազկերակը դադ-

րած է այլեւս: Ականջը դրաւ կուրծքին վրայ եւ պատանիէն ոչ մի  
սրտի տրոփիւն: Շփեցին, թօթփեցին դայն: Գինի եւ ջուր բերին: Վա-  
լերիոս կը յայտարարէր, մարդը մեռած է: Երկու ուրիշ բժիշկներ  
յայտարարեցին — մարդը մեռած է: Եւ շուրջը գանձողները ճանչցան  
վերահաս մահուան դեղնութիւնը եւ դողն ի դողը կը կենային հոն:  
Բաւական ժամանակ անցաւ, մինչեւ որ Մովպետին դացին բազմու-  
թիւնը ճեղքելով եւ հազարեցին տխուր լուրը: Մովպետ պոռաց հը-  
զօր ձայնով. «Պիտի դամ եւ պիտի արթնցնեմ դայն»: Շուրջը կե-  
ցողները սարսափահար ետ ետ քաշուեցան, որպէս թէ խօսողը Աս-  
տուծոյ ղէմ հայհոյեց եւ յիմարարար խօսեցաւ: Մովպետ զոչեց  
յաղթական. «Հաւատացէ՛ք, եւ պիտի տեսնէք Աստուծոյ զօրութիւ-  
նը»: Գոչեց արքայարար տեղ տուող ամբոխին մէջէն եւ մօտեցաւ  
մեռեալին: Մոտեցաւ եւ նայեցաւ հանդարտօրէն. «Կը յայտարարէ՛ք,  
թէ այս պատանին մեռա՞ծ է», հարցուց բժիշկներուն: Երեքն ալ ը-  
սին. «Մեռած է»: — «Թող ուրեմն այդպէս ըլլայ: Ես ալ բժիշկ էի,  
թողէ՛ք տեսնեմ»: Մովպետ շօշափեց բազկերակ ու սիրտ, կուպերը վեր  
առաւ եւ խուզարկու նայուածքով դիտեց մեռեալին աշքերը, — ծըն-  
րադրեց եւ յառեցաւ, յետոյ ելաւ եւ աղաղակեց. «Այդպէս է, մե-  
ռած է»: Այնուհետեւ երկար աղօթքի կեցաւ, ընկողմած զլուխը խո-  
րապէս կուրծքին վրայ: Ոչ մէկ անգամ ամբոխին մէջ կը շարժէր:  
Հարիւրաւոր աշքեր սարսափահար անթարթ կը նայէին Մովպետին:  
Բժիշկները կը հետեւէին մէն մի զիմպիծին, մէն մի շարժումին:  
Նորէն ծնրադրեց, զլուխը դրաւ վար մեռեալին զլուխին վրայ, մինչ  
բերանն ալ ականջը կը շօշափէր: Բժիշկները բոլորովին մօտը եկած  
էին Մովպետին: Մարդիկ ալ խուժեցին: Եւ հեռուն բոլոր ժողովուր-  
դին վրայէն կը թնդար Մովպետի կանչը. «Պատանի, ես կ'ըսեմ քե-  
զի, արի»: Երբ մեռեալին ոչ մէկ անգամ շարժեցաւ, դեպի դեղին  
կտրեցաւ Մովպետ եւ բարկութեամբ նայեցաւ մեռեալին երեսին: Եւ  
հիմա աւելի բարձր պոռաց անոր ականջին միեւնոյն բառը: Ի զուր:  
ժողովուրդին մէջ ահա լաց ու կական եւ մեծ վրդովում: Մովպետ  
կրկին վեր առաւ մեռեալին աշքին կուպերը: Թոթփեց դայն ուժով մը  
զլուխէն եւ ուսերէն, որպէս թէ կը գտնեմարտէր մահուան հետ  
նուիրեալի մը մոլեղնութեամբ: «Ահուրա, Աստուծոյ կենաց, ցոյց  
տուր քու զօրութիւնդ, մի՛ լքեր քու ծառայ: Փախցո՛ւր Ահրիմանը:  
Փախցո՛ւր խաւարին ուղիները»: Եւ դարձաւ, թրթուռն ձայնով մը,  
պատանիին ականջին մէջ թնուաց. «Արի՛, արի՛, կեայց»: — Ոչ մէկ  
նշան կեանքի: Ամբոխումը ստուարացաւ ժողովուրդին մէջ: Աղա-  
ղակեց Մովպետ սուրը ցատումով առլցուն, մինչ քրտինքի վճիտ շի-  
թեր մարդարիտի պէս կ'իյնային իր ճերմակ ցուրտ ճակատին վրայ:  
«Մահ, պիտի ցուցնեմ քեզի, ո՞վ Տէր է: Յանուն Ահուրայի, Միհրի,

Քրիստոսի, իշխանութիւններ լուսոյ»։ Ոսկի դօտիին տակ իր պարե-  
դօտէն դուրս հանեց սեւ սրուակիկ մը զոր բացաւ փութով։ «Ի վեր,  
ո՛վ սուրբ Հասօմ րմպելիզ, ուտինդ։ Կեանք դործէ եւ յաղթէ մահ-  
ուան»։ Այս բառերով սրուակը բռնեց մեռեալին քիթին տակ եւ միշտ  
աղօթելով լուռ կը դիտէր դէպի երկինք, եւ յետոյ փտտահութեամբ  
լի մեռեալին երեսը։ Ժողովուրդին հետաքրքրութիւնը դադարեցնակե-  
տին հասած էր։ Գլուխ գլուխի ձնշուած, զիրար հրելով, խուժելով,  
կը կենան, առաջին կարգին վրայ եղողները կը ծնրադրեն, կամ կըռ-  
նակին կը ծոեն, ետեւը գտնուողները կը կենան ուղիղ, յառելով  
անթարթ մեռեալին կամ Մովսէսին երեսին։ Միշտ ձեռքն է սրուա-  
կը եւ կ'աղօթէ մրմնջելով։ Մեռեալին դէմքին վրայ երեւցաւ հագիւ  
դիտելի կարմիր մը։ Առաջին անգամ տեսաւ Վալերիոս եւ գոչեց,  
զարհուրազին. «Կեանքը կուգայ»։ — «Կուգայ»։ — Կը յաղթէ։ —  
Կուգայ։ — Կը յաղթէ», ըսաւ Մովսէս հանդարտօրէն, եւ իր դէմ-  
քին վրայ ալ եկաւ դարձեալ առաջին կարմիրը։ Նորէն գոչեց բարձ-  
րաձայն պատանիին ականջին. «Կեա՛ց։ Կեա՛ց։ Կեա՛ց»։ Մեռեալը  
կամաց կամաց բացաւ աչքերը։ Սուր ճիչ մը անմիջապէս։ «Բա՛ց բե-  
րանդ», հրամայեց Մովսէսը։ Պատանին բացաւ բերանը, եւ Մովսէս  
անոր մէջ թափեց սուրբ րմպելիէն քանի մը կաթիլ։ Մովսէս անոր  
ձակատն ու ձեռքերը լուաց ջուրով։ Քանի մը վայրկեան վերջ անոր  
ձեռքէն բռնեց եւ դարձեալ ձայնով գոչեց. «Արի»։ Պատանին կանգ-  
նեցաւ եւ զարմացած կը նայէր Մովսէսին երեսին եւ շուրջը բազմու-  
թեան։ Եւ ահա շատերը Մովսէսին ոտքերը ինկան եւ կ'ուզէին պաշ-  
տել զայն։ Սաստիկ մերժեց, եւ թեւը վեր առնելով իրիկնամուտի  
երկինքը ցոյց տուաւ։ Երբ պատանին Մովսէսին հետ կ'ուզէր մեկ-  
նիլ Արիսպագոսէն, բժիշկները խնդրեցին որ մնայ։ Կ'ուզէին ամէն  
կերպ հարցումներ ընել անոր։ Յայտնեց թէ մահու չափ յողմած է  
եւ պէտք է տուն երթայ։ Մովսէս այս անցուդարձը կը դիտէր եւ  
քայլերը կը յապաղէր։ Մէկ բժիշկը պատանիին ճամբան կտրեց եւ  
ըսաւ սիրալիբ, թէ իր մէկ ընկերը վարը Արիսպագոսին ստորոտը  
կ'ուզէ զինքը կառքով տանիլ բնակարանը, միւս բժիշկներն ալ պիտի  
դան հոն եւ կարող մը հարցումներ պիտի ընեն իրեն։ Բայց մերժեց։  
Վալերիոս կը տեսնէր, թէ ինչպէս Մովսէսի երեսին գոյնը նետեց  
անգամ մըն ալ եւ անհանդարտ նայուածքներ կ'ուզէր իրենց։ Մով-  
սէս անոնց մօտ եկաւ եւ հարցուց իշխանաբար. «Ի՞նչ կ'ուզէք պա-  
տանիէն, ան կ'ապրի, առողջացաւ»։ — «Գիտութեան անունով կը  
փափաքինք անոր քանի մը հարցումներ ընել, Մովսէս»։ — պատաս-  
խանեց յարդանքով Վալերիոս։ «Բայց թողէք հիմա որ երթայ։ Շատ  
յողմած է։ Ինձի հարցուցէք ինչ որ եւ որչափ որ կ'ուզէք»։ — «Ո՛չ։  
Մենք կը փափաքինք զայն միայն խօսեցնել։ Սրբազան Հայր, ձեր

պատկառանքն ալ կը պահանջէ որ մենք քանի մը վայրկեան զայն  
միայն խօսեցնենք»։ Դարձեալ հետաքրքիրներ Մովսէսին շուրջ հա-  
ւաքուած էին։ — Հանդարտութիւնը կը կորսնցնէր։ Դէմքը կորսըն-  
ցուց ամէն գոյն եւ մէկէն ի մէկ թօշնեցաւ, սեւցաւ, անզօր եղաւ,  
որովհետեւ բժիշկներուն ետեւը կը տեսնէր խուժմը մը դինուորներուն  
զալը, հետերին պատգարակով մը։ Քաղաքին ոստիկանապետը,  
պաշտօնական համազկեստով, Մովսէսին առջեւ ելաւ եւ շատ քա-  
ղաքավար եւ վճռական կերպով յայտարարեց, թէ հրաման ունի այս  
պատանին տանելու եւ հսկողութեան տակ առնելու։ Վալերիոսի հրա-  
մայուած է դատական հարցաքննութեան ներկայ դտնուիլ։ Մովսէս  
դիմազիծերը շաւրեց ընաւ եւ ըսաւ շոր կերպով. «Առէք զայն ինչ-  
պէս կ'ուզէք։ Հարցաքննութեանն էտքը այսչափ միայն պիտի դիտ-  
նաք որքան անկէց առաջ։ Հաւատքը միայն կ'ըմբռնէ Աստուծոյ  
զազտնիքները»։ Եւ կարեւորութեամբ նայեցաւ պատանիին, եւ երբ  
պատգարակը կը մտնէր ան, ետեւէն ձայնեց. «Մի մոռնար քու կեան-  
քիդ ազատարարը, Եւտրոպիոս»։

Գաղերիոս վերջին որոշումը տուած էր ճամբորդութիւնը շա-  
րունակելու։ Ամէն ինչ լաւ անցաւ Աթէնքի մէջ իրեն համար։ Բացի  
սակայն անկէց որ հոս քրիստոնեաներուն ամէն ազատութիւն տրուած  
է, անխափան ամէն ինչ ընելու։ Բանակին մէջ ալ շատ քրիստոնեայ  
զինուորներ կային, որոնք որեւէ հաղորդակցութիւն չունէին ինքնա-  
կալին փոխանորդ կայսեր հետ, ներկայ չէին ըլլար հեթանոսական  
դոհերուն եւ հոռմէական պետութեան եւ բանակին նկատմամբ հոգա-  
ծութիւն չունէին, անոնց մասին չէին խորհեր։ Սուրբ, դուրս ցցուած  
աչքերուն սպիտակուցը միայն կ'երեւէր բարկութեանն, երբ քրիս-  
տոնեաներուն խօսքը կ'ընէր այսպէս, հաստ վիզին երակները կ'ու-  
ռէին կը կարմրէին, հսկայ բուռնցքները կը գնդանային եւ կը թըն-  
ցըէին եւ վար կ'իյնային, եւ քրիստոնեաներուն դէմ այսպիսի կա-  
տաղութեան նոպայի մը վախճանը սովորաբար այն կ'ըլլար, որ Գա-  
ղերիոս իրեն խորհրդանշան իր ընկերքին երբ ինքնակալ ըլլար, դի-  
նիով դաւաթ մը լեցուց եւ տղեղ քրքիջով մը պոռաց. «Այսպէս պի-  
տի հոսի անգամ մըն ալ դարձեալ քրիստոնեաներուն արիւնը։ Կորիցէ  
Քրիստոս։ Կեցցէ Միհր, Աստուած պատերազմաց»։

Դժբախտաբար Գաղերիոս տակաւին այս իրիկուն ըստ երե-  
ւոյթին լաւ փաստ մը ունեցաւ Աթէնքի քրիստոնեաներուն դէմ իր ա-  
տելութեան համար։ Դղեակին մէջ, ուր Գաղերիոս վերջին գիշերը  
կ'անցընէր, իմացուեցաւ որ ամբողջ քաղաքը խռովութեան մէջ է։  
Բոլոր տուներուն մէջ, բոլոր փողոցներուն եւ հրապարակներուն վը-  
րայ կը խօսուէր միմիայն Մովսէսին եւ անոր ըրածներուն վրայ։  
Արիսպագոսէն իր մեկնումէն առաջ նորէն աւետեր է, թէ Քրիստոս

և Սրաօջա նորէն պիտի դան, ո՛վ գիտէ, թերեւս այս դիշեր: Պէտք է ուշադրութիւն ընեն ու շքանան: Ահապէս բազմութիւն մը խռոնըւած էր քրիստոնեաներուն ղերեղմանատան մէջ եւ շրջակայքը: Բայց նոյնիսկ ոչխարներուն հովիւը բարի եպիսկոպոս Աթենակորաս, արթուն մնացեր է եւ հոս ու հոն մարդիկ դրեր է: Աթենակորասի համար հողեկան ահապէս տառապանքի ժամեր էին: Արդեօք հաւատացող չէ՞ր: Արդեօք ծո՞յլ էր հաւատքին մէջ: Արդեօք զաղջ, թո՞յլ էր սիրոյ մէջ: Արդեօք ըստ աշխարհի՞ կը մտածէր: Արդեօք չէ՞ր հաւատար այն խօսքին որ յայտնապէս Տիրոջ կրկին զալուստը կ'աւետէ: Այսպէս Աստուծոյ պաշտօնեան ինքզինքը կը քննէր ծունկի եկած, եւ իր խոցին մէջ ազօթքի խորերը թաղուած: Կ'իմանար ձայներուն շուրջը: Կը լսէր երգեր եւ կոչեր Քրիստոսի եւ Միհրի անուններուն: Երթալով կը սաստկանար, կը ստուարանար երգելն ու հնչելը: Բոլոր տրամադրութիւնները լարուած էին: «Օ՛, երանի իրաւ ըլլար, զա՛ր Տէրը: Ախ, է՛կ, է՛կ, Տէր Յիսուս: Պատառէ՛ երկինքը եւ իջ՛ի վար, փրկէ՛ մեզ այս աշխարհին ամէն խարէութենէն եւ բոլոր ցաւերէն որոնք մեր վրայ պիտի դան»: — Այսպէս կ'ազօթէր ու կ'ազօթէր եպիսկոպոս բոլոր անդամներուն վրայ զօղով: Ոչ ոք պէտք էր խանդարեր զայն: Ամէն ինչ պատրաստուած էր — ընդունելու երկինքի տէրը, կամ բմբերանելու անամօթ խարերան, որ վերջերս, երբեմն հոս, երբեմն հոն դիշերը կ'երեւայ իրրեւ Քրիստոս — Միհր, եւ տեսնուած էր հաւատացեալներէն: Բայց եպիսկոպոսին չորս քրիստոնեայ զինուորները արթուն կը հսկէին բազմութեան մէջ: Երկաթի պէս մկանունք, մուրճի պէս ձեռքեր ունէին, կապելու համար չուան, ի հարկին, եւ ոսկիի պէս սիրտեր, պատրաստ Տէրը պաշտելու, եթէ ան ըլլար: Ոստիկանապետն ալ իր գունդով կազմ ու պատրաստ էր: Գալով, թէ Մովսէսին դէմ խոստովանութիւններ ընել տալու համար «արթնցող» պատանիին ենթարկուած չարչարանքը ինչ ազդեցութիւն ըրած էր, վերջ ի վերջոյ ոստիկանապետը հասկրցած էր որ այն իրիկուան զիշերային երեւոյթները աւելի մարմնական քան հողեկան տեսակէ բաներ մը եղած ըլլալու են:

Մինչ այս մինչ այն, մատենադարանի սրահին մէջ ղեռ աղանդերի նստած էին Լիկինիոս, Գաղերիոս, իշխանները եւ քանի մը սպաներ, ճաշէն վերջ: Կարելոր հարցեր. Բանակ, Կայսրութիւն եւ Կառավարութիւն նիւթ եղան եռանդուն խօսակցութեան: Կիները դուրս մնացած էին: Խոսքովիդուխտ եւ Լիկինիա Պաւլոսի տունն էին: Այս օրերուն Արսինէ այլակերպուածի պէս էր: Բուն ճաշէն դուրս, քիչ անդամ կ'երեւար ընկերութեան մէջ: Առաւօտները շատ կանուխ Անահիտի սրբաօյայրն էր: Միհր եւ Անահիտ — Ահուրա զարձեւալ ամէն ինչ եղած էին իրեն համար, եւ այն աստիճան, որ

Պաւլոս եւ Խոսքովիդուխտ յայտնապէս կը զրպային, թէ ինչպէս քրիստոնեաներուն դէմ նորէն միեւնոյն սկզբնական ատելութեամբ տոգորուած էր: Պահեցողութիւն կ'ընէր, այլեւս միւս չէր ուտեր, ոչ ալ գինի կը խմէր: Կոնակին վրայ կը կրէր խորապանի վէրքեր եւ սպիներ: Մունկերը ազօթելէն կոշկոռ կապած էին: Քիչ կը խօսէր, եւ երկնաւոր զաղանքի մը պէս բան մը կը դարէր անոր վերեւ: Այդ օրը ան բնաւ մ'ըջտեղ չէր ելած: Բայց վերակացուն, որ քանի մը օրերէ եւ գիշերներէ ի վեր զննական ծանրածանր աշխատութեան մը մէջ ընկղմած էր, գիտէր որ այսօր Արսինէին զլստուն բացառիկ բան մը եկած էր: Ինք, Արսինէին շափ կանուխ ելլելով, պարտկոթ թուփի մը ետեւը տեսած էր, թէ ինչպէս Արսինէ ատուան ատաջին լոյսին ծնրադրած էր սուրբ աւազանին — ձկնարանին — եղերքը, երեսը արցունքներով ողողուած, զէպի արեւելք ուղղուած, բերանն ալ կը զողար, ամէն կերպով զէպի երկինք քաղկատարած: Յետոյ, կարծես սրբութեամբ յորդառատ, Արսինէ լիճը իջաւ, սուրբ սերմը յանալու, ծնելու աշխարհի փրկիչը Զրաղաշտ: Լիկինիանոս այս ամէնը իմացած էր վերակացունի միջոցաւ: Բայց ուխտ ըրած էր, թէ Արսինէ անխռով պէտք է սպրի իր հաւատքովը: Արսինէն ի՞նչ կը փրձտէր սուրբ ջուրին մէջ — ասիկա ոչ վերակացուն գիտէր եւ ո՛չ ալ Լիկինիանոս: Բայց այս իրիկուն, ասիկա պիտի հասկնային երկուքն ալ: Գաղերիոս եւ Լիկինիանոս միմեկին չքեղ սենեակին մէջ: Իրենց վերջին խօսակցութեան առարկայ էր Արսինէն: Լիկինիանոս տկար էր, եւ լալու մօտ, որովհետեւ այն տեսարանն ի վեր լքած էր Արսինէի մասին իր յոյսը: Եւ յանցաւորն ալ ահա այն այլակերպուած վիճակը, այն զաղանքը, որ կը տիրէ անոր վրայ: Ի՞նչ կրնար ըլլալ ասիկա: Մովսէսը կը խոստովէր իրմէ՝ Լիկինիանոսէն, զուշակութիւն զուշակութեան վրայ կուտար, բայց ինքը կը խուսափէր: Ահա մօտ է, մերձ իսկ է ծիրանին: Արսինէ, բոցավառ սիրով, կը սպասէ Ինքնակալ Լիկինիանոսի հետ զուգութեան օրուան, անոր — առաջին անգամ ըլլալով — աստուածութիւն պարզեւելու: Ահա Մովսէսին զուշակութեան արդիւնքը: Գաղերիոս ինք ժողովրդային դասակարգէն պարզ կնոջ մը հետ ամուսնացած, եւ հայր գաւազի մը Կանդիդիանոս, սկիզբները թոյլ ու թոյլատու էր Լիկինիանոսի ցանկութեան հանդէպ: Հիմա իրարու աւելի մօտ եկած էին բարեկամները: Գաղերիոս լուռ էր, կը խորհէր, եւ այսպէս երկար ատեն անխօս մտիկ կ'ընէր իր աւելի երիտասարդ բարեկամին, որ իրեն կը յայտարարէր բացէրաց, թէ առանց Արսինէի այլեւս չի կրնար ապրիլ, ի՞նչ յաջողութիւն եւ բարեբախտութիւն ունենայ: Բայց ատանկ խօսքեր մտիկ ընելու ժամանակ չունէր Գաղերիոս: Նախ եւ առաջ ինք պէտք

է վրնուոր ըլլայ: Ինք ընդհանրապէս չափազանց զեղեցիկ եւ փափուկ կ'ապրի, մինչ վրնուոր մը իր երջանկութիւնն ու կեանքը պէտք չէ կապէ մէջ մինակ կնոջ մը: Եթէ հարկ ըլլայ, իր բարձրացումին համար Գաղերիոս պատրաստ է իր մէկ հատիկ կրնն ալ զոհելու եւ ի վերջոյ... «էյ, Ի՞նչ», հետաքրքրուեցաւ Լիկինիանոս: — «Վայսեր աղջիկը բնորէլ»: — «Յնորած ես»: — «Ես, Գաղերիոս, երբեմն եղնապան: Դիտիղեաթիանոսի հօ՞յրը ինչ էր որ: Քաջութիւն, Լիկինիանոս: Մենք կը բարձրանանք: Ես պիտի օգնեմ քեզի ծիրանիին համար: Բայց — հիմակուրնէ մի սատկեցներ սիրող, այդ որբուհիին համար»: Լիկինիանոս աթոռի մը վրայ նետուեցաւ յակամայս երեսը ձեռքերուն մէջ թաղելով: «Առանց Արսինէի — ոչ մէկ ծիրանի», ձայնեց յանդնորէն ու խեղ եւ նորէն ցատկեց նստած տեղէն: «Յանուն սուրբ ցուլին: Եթէ զուն ուրեմն այդքան սիրարորոք ես անոր հանդէպ, ինչո՞ւ մինչեւ հիմա բռնութիւն չգործածեցիր: Յուր վկայ, ան մինչեւ հիմա շատոնց քուկը էր»: — «Դուն ալ ատանկ պիտի չընէիր»: — «Ե՞ս — ի՞նչ կամ ո՞վ պիտի բռնէր ձեռքս»: — «Արսինէին մաքրութիւնը»: — «Փա, փա, փա: Կնիկը կնիկ է: Կինը լոյս կ'ուզէ սիրտին մէջ, եւ բռնութիւն մարմինին վրայ»: — «Ան՝ ո՛չ, բնա՛ւ: Դուն տակաւին այնպիսի կին տեսած չես: Ան Միհրին գործն է, կ'ըսեմ քեզի, Գաղերիոս»: — «Կրնայ ըլլալ — բայց, փառք ցուլին: Յզութիւնն ալ Միհրին գործն է: — Դուոր կը դարնուի»:

Լիկինիանոս ցատկեց գնաց դուռին կողմը: Գաղերիոս իմացաւ յուզումնալից փափառք մը: Եւ ահա Լիկինիանոսին ետեւէն ներս մըտաւ վերակացուն, ձեզուենէ կախուած կանթեղին աղօտ լոյսովը հազիւ լուսաւորուած, յուզումէն դեփ զեղին կտրած, շնչասպառ հեւի հեւ: Անոնց փափառքէն սաստիկ կը հետաքրքրուէր Գաղերիոս: «Բարձր չազակրատէ, զիակ զուն, կամ լո՛ւ, չեմ կրնար փափառք լսել», պոտաց սպաննալից: Վերակացուն այլ յայլմէ եղաւ եւ տաղնապալից նայուածքով հարցուց Լիկինիանոսին, թէ կրնա՞յ բարձր խօսիլ: «Ան ամէն բան զիտէ, կայսրը, բարձր խօսէ»: Վերակացուն տեղեկատուութեան սկսաւ լեզուի ձկունութեամբ մը, վայելչութեամբ մը, որ դարձեալ հետաքրքրութիւն առթեց Գաղերիոսի: Մովպետ եւ Արսինէ մինակ էին Միհրատունին, ատրուշանին մէջ: Ինք վերակացուն իր տիրոջ հրամանին հլու հնազանդ, կը հետապնդէր անոնց քայլերը, սրբաւայրին կոնակը պատին վրայ փոքրիկ սանդուխը դրած պատուհանին եզերքէն մէկ աչքովը վերէն վար կը նայէր: «Ի՞նչ տեսար, հետախոյզ շուն», բաւ Գաղերիոս, «քու այդ մէկ աչքովդ»: — «Ի՞նչ», դռնեց Լիկինիանոս, եւ անդիտակցաբար վերակացունի մազերէն բռնեց: Վերակացուն սաստիկ ցաւէն քաշեց կաս կարմիր կտրած երեսը եւ անոյ՛ մը խնդաց: «Ոչինչ գէշ, նախ եւ

առաջ, Տէր իմ: Արսինէ ծնրադրած էր Մովպետին առջեւ, եւ կարծեքին վրայ ծալած ձեռքերովը այլակերպուած Մովպետին կը յառէր: Ո՞վ Տէր, երբեք այնքան զեղեցիկ տեսած չես դուն զանիկա»: — «Սուէ՛, խօսէ՛», ձայնեց Լիկինիանոս: «Ամբողջովին կարմիր լոյս մը կը յորդէր վրան, սուրբ հուրը կ'այրէր, խօսնկը կը բուրէր, եւ Մովպետ կ'աղօթէր անոր վրայ: Իմ այ արօթելու ու լալս կուզար — այնքան սրտաշարժ էր տեսարանը: Մեկը, եթէ ցաւ մը զայ անոր զըլխուն»: — «Յանուն Ահարայի, երկնուոր թաղաւորին»: — «Յանուն սուրբ ցուլին», ստացին Գաղերիոս եւ Լիկինիանոս: «Ի՞նչ կ'ըսես: Ցաւը ինչ է, բա՛ւ ցաւդ: — Փութա՛ — Եկուր Գաղերիոս, օղնէ՛»: — «Է: Դուն կրնաս ինծի պէտք ունենայ միայն այն ատեն, երբ հարկ ըլլայ փրկել տառապետ խեղճ կինը»: Բայց դարձեալ ստորի ելլելով Լիկինիանոսին ետեւէն կ'երթար, զլուխը երեքցնելով եւ քրթմնջելով, բայց նախ եւ առաջ սրուակ մը դինին կոնծելով փառաւորապէս, մինչ ինչպէս վաղելը չէր զիտեր խեղճ Լիկինիանոս: Վերակացուն դէպի Միհրատուն ճամբուն վրայ լուր կուտար թէ Մովպետի աչքերը ինչ այլանդակ ձեւ մը առած էին: «Պէտք չէ այդ աչքերով ուղղակի ինչ այլանդակ ձեւ մը առած էին: «Պէտք չէ այդ աչքերով ուղղակի իրեն նայիլ — վախէն կը դողար Արսինէ — խեղքս կը դառնայ», կ'ըսէր Մովպետին: «Աստուածութենէն յղացուած — Մեսիան ծնող — եւ» — «Լո՛ւ, կ'ըսեմ քեզի, բաւական զիտեմ», շնչեց Լիկինիանոս: «Արսինէ»: — Լիկինիանոս եւ վերակացուն կատուներու պէս իրարու փակած, անձայն, սրբաւայրին ետեւի կողմը կծկուած, մարդին վըրայ: Լիկինիանոս սանդխակէն վեր ելաւ: Մարդ մարդասանք չկար ներսը: Կարծես պիտի պոռար կանչէր կատաղութենէն: Պիտի ազաղակէր ցաւէն: Բայց պաղարիւնութեան յետին հետք մը վերապահուածի ոյժ մը տուաւ իրեն: Վար իջաւ: Երեք հոգի, հոգիւ լսելի, կը փափսային ամառնային կուպրի պէս սեւ գիշերուան մէջ: Վերակացուն ճիշտ օձի պէս դարձաւ դետինը աւազանին զէմ զէպի վար: Լիկինիանոս Գաղերիոս կը շականջէին մէջ մի ձայնի: Վերակացուն սողոսկ, փորի վրայ, ետ եկաւ եւ շեց. «Եկէք, եկէք»: Գաղերիոս եւ Լիկինիանոս, իրարու քով քովի, սողոսկեցան քիչ մը վերօք խոտոր ու կտորտուք փայտերով ծածկուած բլրակ մը եւ ճակատնին դըրին բլրակին ափին վրայ: Բան մը չիմացան: Բան մը չտեսան: Բայց աւազանին եզերքը, որուն առջեւ լրտեսողները կը կենային, այլքներ եկան զարկին, բայց խնդիրը այն էր որ հովի շունչ մը անգամ չկար: Վերակացուն փափսաց սրտադողով. «Տէր իմ, արդարեւ, դժբախտութիւնը պատահած եւ լմնցած է: Քրմուհին կը լուացուի: Հիմա ա՛լ ընելիք չկայ: Իր հաւատքը խարեց գինքը»: Լիկինիանոս շրթունքը խածած կծկտեցաւ աւազանին եզերքը, անմտօրէն Գաղերիոսի ականջին կ'ողբար իր վիշտը: Քանի մը վայրկեան քստմնելի

լուծիւն: Վեց աշքերը կը ծակէին զիշերը եւ անթարթ ու քարա-  
կերպ կը զամուռէին վերօք ափին, քարայրին ուղղութեամբ, խորա-  
նին քիւին տակ: Այլիքներուն զգշիւնը աւելի սաստկացաւ, քրմուհիին  
զժուար շնչառութիւնը կը լսուէր, կը լսուէր անոր աղօթելն ու լալը:  
Երանութեան նուագները կը հնչէին: Լիկինիանոս եւ վերակացուն  
կարծես պիտի փափաքէին որ իրենց սիրտին տրոփիւնը դադրի: Գա-  
ղերիոսի հսկայ կերպարանքը մերկանդամ եղած, քաշուեցաւ, ան-  
ձայն, զնաց վարի եղերքը եւ անյայտ եղաւ անմիջապէս դարձեալ  
անձայն, ջուրին մէջ: Նորէն քանի մը վայրկեան հեւ ի հեւ սպասում  
ու լուծիւն: Եւ ահա սարսափի քանի մը բարձր կանչիւն, ջուրին  
վրայէն, խելայեղ մոնչաձայն վրդովում մը, ձայնը մարելու աստի-  
ձան, որպէս թէ ջուրին տակ գացած բլլայ: Պահիկ մը եւս լուռ, եւ  
ահա Գաղերիոսի ձայնը որոտաց անտառին մէջ. «Լիկինիանոս, ու-  
շաղորութիւն: Մովպետը կը փախչի — ես գանիկա ձեր կողմը կը վա-  
նեմ: — Ստանա — ո՞ւր ես: Այ — ահա — Ո՞ւր»: — Ոտնակոխ  
ճիւղերուն խշրտուքը, թռչունի պէս թեւաւոր շունչի շունչ, Լիկին-  
իանոս եւ վերակացուն առանց որոշ յատակադիժի կը վազէին խաչա-  
ձեւ, շեղ, կ'արձակէին հայհուհներ, կ'իյնային, քիթերնին, ձեռքեր-  
նին, ոտքերնին կ'արիւնէր: Գաղերիոս ցուրի մը պէս կը պոռար կատ-  
ղած եւ կը հայհուհէր, թէ ինչպէս Լիկինիանոս եւ վերակացուն տա-  
կաւին բան մը չեն իմացած: «Կանչէ շուտ գերիներուդ, Լիկինիանոս,  
զնա կանչէ, վերակացու, սրիկան պահուրտած է տեղ մը — սատա-  
նայ, դեւ է ան, մարդ է, երբեմն մօտն է, երբեմն հեռուն, մերթ  
պղտիկ, մերթ մեծ, ինծի չափ խոշոր — Հերակլէս վիկայ, սոսկալս  
կուպայ: Վազէ, վերակացու, օգնութիւն կանչէ»: Տեղէն չէր շարժեր  
եւ Լիկինիանոսին փակած էր: «Վազէ, ուրեմն, օն» — կը զոռար  
Գաղերիոս: Վերակացուն շան մը պէս կը կծկտէր իր տիրոջը ոտքե-  
րուն տակ, եւ Լիկինիանոս կը ձայնէր. «Գնա, ես ալ կուզամ ետե-  
ւէդ»: Երեքն ալ դարաստանին մէջէն անտառի ճամբան վար ցատկե-  
լով կ'երթային: Քանի մը վայրկեանէն դարաստանը լոյսերու մէջ կը  
լողար: Գերիները սուրբով, ձողերով, շուաններով, կը թափան-  
ցէին ամէն կողմ, պուրակ, խորան, քարայր, ամբողջ երկար դա-  
րաստանը: Կէս զիշերը անցած էր: Լիկինեան զղեակին առջեւ երեւ-  
ցաւ ոստիկանապետը երկու զունդով, առանց իրարանցումի եւ զի-  
շերային լուծեան մէջ Մովպետը ձերբակալելու համար: Անոնք ալ  
փնտուեցին ու փնտուեցին: Մովպետ աներեւոյթ եղած էր: Արսինէն  
ալ հետք չկար: Մովպետին պճղնաւորը հազած դարաստանին մէջէն  
Պաւղային տունը փախած էր եւ երկար ատենէ ի վեր անոր պաշտ-  
պանութեան տակ էր: Մովպետին սենեակը, սնտուկները, արկղները,  
մեծ ղղեակին բոլոր անկիւնները խուզարկուեցան: Առաւօտը կիսա-

լոյս էր, երբ ամէնքը, յուզումէն եւ անյաջող խուզարկութենէն ու-  
ժասպատ, հանգստանալու պացին: Լիկինիանոսի յգկտնականներէն  
զինուորներ պաշարեցին տունն ու դարաստանը, ոստիկանապետին  
հրամանով: Երբ գերիները իրենց պառկած տեղերէն նորէն մէջտեղ  
եկան, վերակացուն կը պակսէր: Գացին զարկին իր դուռը: Բացին  
դուրսէն: Վերակացուն, կծիկ մը զարձած ինք իրեն վրայ, ցաւա-  
տանջ զէմքով, փայտ կտրած, կապուեցած, ինկած էր գետինը իր  
անկողինին առջեւ: Սեղանիկին վրայ, ըստ սովորութեան, վերակա-  
ցուն ջուրին պատթը կար: Պարսպ էր: Վաղերիոս քիչ վերջը վե-  
րակացուն մնացորդները եւ աղիքները քննելով հաստատեց, թէ  
մահառիթ թոյնի մը տառապալից զոհը եղած է: Ամբողջ տունը  
մահուան սարսափին տակ: Ոչ ոք այդ օր կրնար ուտել, խմել: Մով-  
պետին ողին կը բունէր, այս վայրկեանէն սկսեալ, Լիկինեան զղեա-  
կին մէջ: Բայց անոր հետքը երկար ատեն չգտնուեցաւ: Այն ատեն  
միայն, երբ գերիները կը պարպէին խորունկ ականը, սոսկումով  
դտան հոն վերարկու մը, զոյց մը երկայն կօշիկ, զլիսանոց մը, զոյլ  
մը կաշիէ ձեռնոց, աննկարազրելի վիճակի մէջ ամէնն ալ: Մովպետ  
գետինն տակ փորուած ականի աւազանին մէջէն լողալով անցնելէ  
վերջ այդ ամէնը կախած էր երկաթեայ կեռերէն մէկուն վրայ, եւ  
ինք ալ մաքուր մնացած ներքնաղկեստով ականէն վեր ելած էր հան-  
դիստ ապահով: Երկաթեայ ծանր կափարիչը նորէն զգուշութեամբ  
վրան դրաւ եւ ինք աներեւոյթ եղաւ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

## ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Քաղաքացեալտարանի սիւնադարդ ճեմավայրերուն մէջ նոր ուսուցիչ մը մէջտեղ ելած էր: Սակաւաթիւ ունկնդիրները, որոնք նախորդ ատուոն ոտքի վրայ մնացած էին եւ բանախօսութեան մինչեւ վերջը մտիկ բրած էին, յաջորդ օրը նորէն եկան: Կրկնակի եռապատիկ: Մեծ մասամբ ուսանողներ, ոչ սակաւ տարիքոտ գիտնական պլուխներ, քանի մը զարգացած կիներ իրենց աղջիկներով: Չորրորդ օրը օտարազրին քաղաքին ամէնէն համբաւատենչ անձնաւորութիւնն էր արդէն, բանախօս մը, որուն նմանը լսուած չէր Դեմոսթենէսէն ի վեր: Պղատոնական փիլիսոփայութեան մէկ մեկնարանիչը, որ բոլորովին նոր տեսակէտներէ կը բացատրէ Պղատոնը եւ իր լեզուին յստակութեամբ ու զեղեցկութեամբ ամէնքը կը հմայէ եւ կը գինովցընէ: Սօսած ատենը նուիրական հուրով մը կը շողան իր աղօտ, մեղմահայեաց աչքերը: Բանախօսելու միջոցին՝ այնպիսի երեւոյթ մը կ'առնէր, որ կարծես ունկնդիրներէն, քաղաքէն եւ աշխարհէն անդին կը նայէր հողիին գերերկրային աշխարհին, այն յաւիտենական դաղափարներուն եւ նախապատկերներուն, որոնց երկրային նըմանութիւնները անմաքուր, ստուերական ընդօրինակութիւնները միայն կ'ըլլան: Բայց երբ խօսի հողիին վրայ, որ բանտարկուած արծիւին նման մարմինին զնտանին մէջ կը ցանկայ հայրենաբաղձութեամբ յաւիտենական աշխարհին երազուած ազատութեան եւ երանութեան, եւ մաքրուելով եւ աշխարհէն անջատուելով կրկին կրնայ գտնել այն ազատութիւնը, — իր ձայնը այն ատեն կը դողայ ներքին յուզումէն, եւ ահա ամբողջ հաւաքոյթը տօնական խանդավառութեամբ կարծես խորանին առջեւ կը գտնուի: Պղատոնի մասին դասա-

խօսութիւններ ծանուցած էր ընել ամբողջ ամբան շրջանին: Ակա-  
դեմիոյ ընդարձակ պարտէզները եւ քաղաքապետարանի սիւնասարահ-  
ները շատ պղտիկ կուգային: Բանախօսութիւնները, ըստ այսմ, փո-  
խադրուեցան Արիստոտելի վրայ: Ամէնէն ազնուական տուներ համ-  
բաւուր ուսուցիչը ճաշի եւ խնջոյքի կը հրաւիրէին: Եւ կը վարդա-  
պետէր մեծատուններու շքեղ սրահներուն մէջ: Իր սեփական անունը  
«Ակաթանդեղոս» հանրածանօթ էր: Իր ծագումին եւ ցեղաբանութեան  
մասին կը պիտոյէր միայն, թէ ան Կապադովկիոյ Կեսարիայէն է,  
եւ Դաւիթ անունով իշխանի մը գաւակն է: Իր բարձր, նրբաւարտ,  
կորովի կերպարանքը, իր աչքի զարնոյ խելացի, ձուածեւ գէճքը  
բարձր ճակատով, հանդարտ նայուածքով, որ բարձրութիւնները կը  
հմայէր, ազնուական, սակաւիկ, հանդարտ շարժումները, դաշնա-  
կաւոր, բայց միշտ հանդարտ եւ չափաւոր ձայնը — այս ամէնը կ'օգ-  
նէր բարձրացնելու ազդեցութիւնը, որ օր ըստ օրէ կը զօրանար:  
Ամենամեծ անունները մոռցուեցան: Ակաթանդեղոսի բնամոյժն հա-  
մեստութիւնը առանց իր պիտութեան՝ ընդհանուրին սիրելի ընծայած  
էր զայն: Յոյն, Հռոմայեցի, Հրեայ, Քրիստոնեայ, հաւասարապէս  
կ'երթային ունկնդրել զայն: Աչքի կը զարնէր պատանիներուն թիւը,  
նաեւ ոչ-ուսանողներ, նոյնիսկ առեւտրականներ, արհեստաւորներ,  
որոնք իր գասախօսած սրահները կը խուժէին: Հետզհետէ Աթէնք  
քաղաքին բարոյականութեան գասախօսը դարձաւ Ակաթանդեղոս:  
Մերով կը պատասխանէր ամէնուն բարեւին: Կը ժպտէր տղոց: Այ-  
նրականներուն հետ կ'երթար: Կը կենար կը խօսէր բանասիրներուն  
եւ գերիներուն հետ: Թատրոնին մէջ ամէն կողմէ կ'ողջունէին զինքը:  
Միմիայն մէկ տաճարի մէջ բնաւ չէր տեսներ: Նախանձով կը նա-  
յէին անոր միւս ուսուցիչները: Ոչ ոք կը հաւասարէր անոր պիտու-  
թեան, պերճախօսութեան, բարոյական կորովին: Շատ չանցած,  
բնականաբար կը պատմուէր, թէ Աթէնքի առաջին տանտիրուհինե-  
րէն ոմանք փորձեր են իրենց աղջիկ զաւակները բերել քաղաքացինե-  
րէն ամէնուն բերանը եղող մարդուն: Բայց քիչ ատենէն պատմուե-  
ցաւ, թէ այլեւս այդ տեսակ փորձ եղած չէ:

Իշխոսի ափը հիւրանոցին ուսանողական միութեան մէջ ալ  
Ակաթանդեղոս ամէնուն բերանն էր եւ իր բանախօսութիւններու  
մասին քննութիւններ ու գատումներ տեղի կ'ունենային: Եւ որքան  
ալ երբեմն բարոյախօսին մասին խայթումներ ալ կ'ուղղուէին, ամէ-  
նուն կը յարմարէր ան, մանաւանդ որ իր գասախօսութիւններուն մէջ  
կը զուէրանար կրօնքի որեւէ ակնարկութենէ: Բոլոր իր ըսածներուն  
մէջ տիրապետող բանն էր զաղափարներուն ոյժը, կարողութիւնը:  
Լոյսին զաղափարը անոր խօսածներուն մէջ միշտ դարձող եկող հիմ-  
նական մտածումն էր: Ուսումնակիցներուն մէջ ընդհանուր կերպով

ցաւ կը յայտնուէր որ Տրդատ յաճախ կը բացակայէր այս Միութեան  
գասախօսութիւններէն՝ երիտասարդ սպաներու հետ զինուորական  
երկար պտոյաներուն պատճառաւ: Իրեն շատ օգտակար պիտի ըլլային  
Ակաթանդեղոսի քարոյնները լոյսի մասին: Ամէնքն ալ այս տեսակէ-  
տը ունէին: Խօսակցութիւնը եկաւ Տրդատի եւ իր վերջին թեթեւ-  
մբտութիւններու վրայ: Թէ ան սակէց քիչ ժամանակ առաջ խենդ ու  
խելառ բաներ կ'ընէր, սրդեր բռնելով մանրեր եւ Լիկիոնեան զղեակին  
խոհանոցին մէջ զաղանի կերպով կամացուկ մը ծեծած միսին հետ  
խառներ է, եւ սեղանին վրայ իշխանին եւ ամբողջ ընտանիքին հետ  
ուրախ զուարթ կերեր է, — այս պատմութեան վրայ ոմանք իրենց  
ծիծաղը, քրքիչը չկրցան զսպել եւ ուրիշներ զզուանքով իրենց բազ-  
մոցներուն վրայ ինկան փսխելու ձեւով եւ խմեցին, որպէս թէ կ'ու-  
ղէին վար զրկել սրդերուն ճաշը: Գտնուեցան նաեւ որ Տրդատէն  
զանկելով՝ առաջարկեցին զայն իրենց միութեանէն վտարել: Բայց աղ-  
քատ դերասաններ, աղքատ ուսանողներ, արուեստագէտներ, նկա-  
րիչներ, արձանագործներ՝ որոնք Տրդատին քսակէն կ'ապրէին, կո-  
րովի կերպով անոր կողմը բռնեցին: Այլեւս իրարու ետեւէ կուգային  
Տրդատի այդ կարգի քաջագործութիւններու պատմութիւնները: Հե-  
տոյցհետէ լուրջ եւ երկարօրէն խօսք բացուեցաւ Բրիտանոյժի հետ  
Տրդատին յարաբերութեան վրայ: Ամէնքն ալ դժբախտութիւն մը  
անխուսափելի կը նկատէին: Իրարու կ'առաջարկէին լրջօրէն ետ կեց-  
նել Տրդատը անկից: Բայց իւրաքանչիւրն ալ կը ծիծաղէր այդ դե-  
մութիւն անկարելիութեան վրայ: Աւելի զիւրին է, կ'ըսէին, առիւծի  
մը երախէն զառնուիր յափշտակել քան Բրիտանոյժը Տրդատէն: «Մեղք  
իրեն»: — «Մեղք Բրիտանոյժին»: — «Ձի կրնար կարգուիլ այդ աղ-  
ջրկան հետ»: — «Երբեք: Այդ բանը պիտի չընէ բնաւ: — Արքայա-  
ղուն մը — Հայաստանի թաղաւոր մը — խենթեցե՞ր ես»: — «Բայց  
խեղճ աղջիկը»: — «Փա, քրիստոնէութիւն մը — գերուհի մը, ի՞նչ ար-  
ժէք ունի»: — «Չայնդ քեզի քաշէ», կ'ըսէր ընդզիմախօս մը, «զնա  
մտիկ ըրէ անդամ մը Ակաթանդեղոսի քարոյնութիւնը պերիներու ի-  
րաւունքին, կրննրու իրաւունքին վրայ»: — «Ամէն պարագայի մէջ  
պղատոնական չէ որ անոնք իրաւունք ունենան»: — «Կրնայ ըլլալ»,  
պատասխանուեցաւ, «այդ մասին մենք Պղատոնը պերագանցած ենք»: —  
«Քրիստոնէութեան ազդեցութիւն», ձայնողներ եղան: «Եթէ Բրի-  
տանոյժի զլիտուն փորձանք մը զայ, Ակաթանդեղոսի քրիստոնեաները  
անոր դատը կրնան վարել»: — Կէս զիշերէն ալ աւելի տեւող երկար  
զինարբուքին ծայրը զալուն վրայ, առաջարկուեցաւ որոշում մը  
տալ, թէ Միութիւնը պէ՞տք է հրաւիրէ Ակաթանդեղոսը թէ ոչ: Ան-  
նչան փոքրամասնութեան մը դէմ որոշուեցաւ որ Միութեան կողմէ  
պատգամաւորութիւն մը երթայ Ակաթանդեղոսի բնակարանը եւ

խնդրէ, թէ կը հաճի՞ իր այցելութեամբ պատուել Միութիւնը եւ իր գաղափարները հաղորդել ազատ եւ անկաշկանդ տեսակցութեան ձևով: Ընտրուած ներկայացուցիչները փիլիսոփային այցելեցին Աղօրայի հրատարակին վրայ վարձու բնակարանը:

Կտան զայն իր աշխատութեան սենեակին մէջ սեղանին վրայ, որ ծածկուած էր զիրքերով եւ մազադաթներով, թուղթերով: Մեծ ուրախութիւն ցոյց տուաւ զալ, երկարօրէն տեսակցեցաւ ուսանողներուն հետ, որոնք երկշոտ աշակերտներու պէս նստած էին անոր առջեւ եւ քիչ ատենէն զղջացին իրենց զալուն վրայ: Որովհետեւ աբիւնք չբարձր մասն, կարմրեցան կակաղեցին, շուարեցան իրենց զիտցարն ու խորհածին սէջ, եւ երբ Աղաթանդեղոս մանրամասն կը քննէր զիրենք իրենց մինչեւ հիմակուան ուսանողական ընթացքին, իրենց կարողութեան վրայ: — Ասիկա արդէն բաւականէն աւելի էր: Սակայն Աղաթանդեղոս նոր հարցումներ ըրաւ, թափանցիկ եւ սււււտուն նայուածքներով, իրենց կենցաղավարութեան մասին, թէ առուտները ե՛րբ եւ ինչպէս կ'ելլեն, ե՛րբ կը պառկին, նաեւ իրենց բարեկամներուն, ծնողքին, քոյր եղբայրներուն, իրենց բարեկործութեան, ճշմարտախօսութեան մասին, եւ վերջապէս ամէնէն բնական իրաւունքի մը շեշտով, թէ մարմինով ու հոյիով մինչեւ հիմա մաքուր մնացած են: Ի՞նչպէս եղաւ սակայն որ երեք ուսանողներ առանց վարանելու — փիլիսոփային պատասխանին պատասխան տուին, դաւանութիւն դաւանութեան վրայ պարզեցին, եւ հրաժեշտի պահուն, կարծես կախարդուած, անոր զեղեցիկ, հուժկու ձեռքին մէջ լըջօրէն ուխտեցին՝ այս վայրկեանէն սկսեալ իր բարեկամները ըլլալ եւ ճշմարիտ հաշիւ տալ իրեն՝ իրենց գաղափարներուն եւ կեանքին վրայ: Երբ դրան սեմին առջեւ էին արդէն, Աղաթանդեղոս ձայնեց իրենց. «Ըսէք, Հայ իշխան մը ձեր միութեան մէջ կուզայ կ'երթա՞յ»: Անոնց միասին «այո» ըսելուն վրայ, ետ կանչեց զիրենք: Նոր սկսուած տեսակցութիւնը հարուստ ժամ մը տեւեց: Սուսափիլ չկար: Երբ փիլիսոփան ամէն բան իմացաւ, ինչ որ կ'ուզէր զիտնալ ի զարմանս իր նոր աշակերտներուն, թողուց որ մեկնին: Իրարմէ բաժնուեցան քիչ մը չփոթած, իւրաքանչիւրը իր տունը դնաց: Իւրաքանչիւրը կը վախնար Տրդատին վերադարձէն: Եւ իրաւունքով: Տրդատ ամէն ժամանակէ աւելի բիրտ ու անտաշ վերադարձաւ զինուորական ճամբորդութենէ մը: Նոր բարեկամ մը բերաւ հետը: Առանց հարցնելու՝ Միութեան յաջորդ երեկոյթին ներս առաջնորդեց զայն: Աղաթանդեղոս տակաւին մէջտեղ չէր ելած: Ընկերները ուղեցին որ Տրդատ իր բարկութիւնը թափէ իրենց վրայ, ինչպէս կը սպասէին, որպէսզի այնուհետեւ ներս հրաւիրեն փիլիսոփան: Աղաթանդեղոսը իրենց մէջ առնե-

լու, հրաւիրելու իրենց զիտաւորութենէն չէին ուզեր ետ կենալ որեւէ պարագայի մէջ: Եթէ հարկ ըլլայ երկուքէն մէկուն քաշուելը, Տրդատը պէտք է ըլլայ: Բայց վերջնական վճիռին առջեւ ամէնքն ալ կը վախնային: Երկար ատենէ ի վեր հաւաքուած էին, դեռ Տրդատ չեկած: Եւ տրամադրութիւնները նեղուած, ճնշուած էին: Կամաց կը խօսէին: Աղաթանդեղոսի մօտ պացուլ երեք պատգամաւորները յայտնապէս նեղ կացութեան մէջ էին, յաճախ իրարու կը նայէին՝ իրարու միտք հասկնալու համար, կը ձեմէին, կը նստէին, պատուհաններէն մինչեւ գետինը խորութիւնը կը չափէին, դրան մօտ եղող տեղերը իրենց կը վերապահէին, փոփոխակի դուրսը մուտքը կը դիտէին, եւ վարն ալ հեղասահ կարկաջիւնը Իլիսոս գետին: Տրդատին ճիշտ սպասուած ժամանակ, ընդհանուր խուլ լուութիւն մը եղաւ: Երեք պատգամաւորները բացէ ի բաց պաշտպանութիւն խնդրեցին: Ամէնքն ալ ոտքի ելան եւ շրջանակ մը կազմեցին անոնց շուրջ, վերջին անգամ ըլլալով ամենածանր մեղադրանքները ըրին անոնց դէմ իրբեւ դաւաճան իրենց ընկերոջ եւ Միութեան, յետոյ սակայն երեքն ալ ձեռք կարկառեցին, եւ ամէնքն ալ ուխտ ըրին անոնց, պաշտպանել զիրենք ցմահ: Ամէնքն ալ ուխտեցին՝ Տրդատի կենցաղավարութեան մասին անոնց դաւաճանութեան վրայ ոչ մէկ բառ երբեք չհաղորդել Տրդատին: Տրդատ մէջտեղ ելաւ: Սիրով եւ ուրախութեամբ եւ զուարթախօսութեամբ, ամէնքը ուրախացան, խնդացին: Իրեն ընկերացող նոր անդամին բարի զալուստ մաղթեցին ամէնքն ալ: Սեւ գոռոզ գլուխ մը, լայն ճակատով, տափակ քիթով, փոքր, մուրթ, փարփառ, անհանդարտ, կկոցեալ աչքերով: Մնօտը ցոլած առաջ, լեցունկկէ էր եւ բոլորակ: Երթունքը կարմիր, փքացած: Երբ խնդար, լայն բերանը այնքան կը բանար որ իր հուժկու ճերմակ առամնաշարը ամբողջ կը տեսնուէր: Երեք բարեկամները գաղտնի երկիւղի համար դօրաւոր պատճառ ունէին: Քանի մը ժամեր սահեցան պացին Տրդատի մանրամասն պատմութեան միջոցին, որուն կը հետեւէին ամէնքը լարուած, պատմութիւն մը՝ որ յաճախ տեղի կուտար նաեւ տեւական բուռն ծիծաղներու: Եզիպտոսի վրայօք փառաւոր ծովային ճամբորդութիւնը, ծովեզերքները, նեղոսի հովիտը, Աղեքսանդրիա, անոր բնակիչները, հագուստ կապուստը, Համալսարանը, ուսանողները — Տրդատին միջոցաւ այս ամէնը կրկին կը տեսնուէր, կ'ապրուէր: Եւ հիմա իր նոր բարեկամութիւնը. Աղեքսանդր Աղեքսանդրացի: Տրդատէն հրաւիրուելով, ինք ալ խօսք առաւ եւ պատմեց իր կեանքը եւ իր առաջին ապրումը Տրդատին հետ: Աղեքսանդր լաւ տունէ կը սերէր: Իր եզիպտական հայրենի լեզուէն զատ՝ քաջահմուտ էր նաեւ յունարէնի եւ լատիներէնի: Հայրը սպայ էր: Ինք ալ պիտի ըլլայ եւ չարքաշ երիտասարդութիւն մը անցուցած է



զինուորական կեանքի մէջ, ջուրի եւ ցամաքի վրայ: Արդէն թերէի  
Լէպէտնին մէջ սպայ էր Դիոկղետիանոսի օրով, երբ ասիկա կայսր ե-  
ղաւ եւ դորաւար Ալեքսանդրիոյ մէջ իր ծանօթ ապստամ-  
բութեան յանդեպ եւ հաղարաւոր զինուորներ իրեն քաշեց: Անոր  
անձնական ազդեցութիւնը անդիմադրելի էր: Կամ հարկ էր սիրել  
զինքը կամ վախնալ իրմէ: Աղեքսանդր անձնուէր անոր: Կը յուսար  
անոր միջոցաւ եւ անոր հետ Եդիպոսի մէկ մասին տիրապետել: Բո-  
լոր ներկաները ամենամեծ ուշադրութեամբ կը հետեւէին Աղեքսանդ-  
րի կենդանի նկարագրութեան՝ ի մասին ապստամբութեան դժբախտ  
ելքին: Հիմա ամէնքն ալ, Լիկինիանոս եւ Տրգատ եւս, տպաւորու-  
թիւն մը կը ստանային Ինքնակալ Դիոկղետիանոսի եւ անոր հօր ե-  
րեւումին մասին: Իրենց առջեւ կը պատկերանար, երկվարի վրայ աշ-  
տանակած, բարձրադիր հրամանատարը, որ երզում բրած էր Աղեք-  
սանդրիոյ մէջ այնպիսի ջարդ մը առաջ բերել, որ իր ձին մինչեւ  
ծունկերը արիւնի մէջ թաթխուի: Բայց քաղաքին զրան կտելը, շատ  
չանցած այդ խօսքին վրայ յաղթականին ձին սահեցաւ արիւնլուայ  
զիակի մը վրայ, եւ քիչ մնաց կայսրը պիտի տապալէր քթին բերնին  
վրայ: Ասոր մէջ ան տեսաւ իր Աստուծոյն մէկ նշանը: Հրաման  
տուաւ զուշանալ սրեւէ ջարդէ եւ սպանութենէ: Երախտազէտ բնակ-  
չութիւնը ինքնակալին ի պատիւ յիշատակարան մը կանդնեց, հոն,  
ուր իր ձին սահեցաւ եւ բխեցաւ ներողութեան հրամանը: Ինքնակա-  
լը այդ յիշատակարանին մէջ կը նստի, զլուխը բարձր բռնած ետեւօք,  
տապալելու վրայ եղող ձիուն սանձը բուռն զօրութեամբ բռնած: Ա-  
քիլէոսի զլուխը ինկաւ: Աղեքսանդր իր զլուխը կը պարտի կայսեր  
չնորհին: Բայց բանակէն վտարուեցաւ: Հոս եկած է հիմա շատ մը  
սխալ ճամբաներէ եւ սխալ ուղղութիւններէ վերջ քրիստոնեայի մը  
հետ միասին, որ քրիստոնեաներուն վրկութիւնը այնքան ջերմօրէն  
եւ պայծառօրէն պատկերացուց իրեն եւ քրիստոնեաներուն հաւա-  
քումներուն հրաւիրեց զինքը որ հետեւեցաւ իրենց կրօնքին, վերջա-  
պէս: Այդ քրիստոնեաներէն սէր միայն տեսաւ: Հազուեցուցին զին-  
քը, կերակրեցին, մինչեւ որ աշխատանք դատաւ: Եւ ի բոլոր սրտէ ե-  
ղաւ քրիստոնեայ: Հրահանուեցաւ եւ մկրտուեցաւ: Այս երկար ա-  
տենէ ի վեր արդէն տեղի ունեցած դէպքին պատմութեան միջոցին  
պիտեւ տրուեցաւ Աղեքսանդրի, թէ իր կեանքին ամէնէն լաւ եւ ամէ-  
նէն երջանիկ ժամանակը այդ ժամանակը պէտք է ըլլայ: Բայց Տր-  
գատ ժամանակ չձգեց անոր որ այն երջանիկ յիշատակներուն նուիր-  
ուի: Ինք առաւ խօսքը եւ շարձածի ծիծաղով մը պատմեց ինչ որ  
Աղեքսանդր կ'ուզէր լսել. «Հետզհետէ աւելի լաւ սովորեցաւ ճանչնալ  
զանոնք, այդ քրիստոնեաները: Խարեցին զինքը եւ ստեցին անոր,  
այդ քրիստոնեաները նախանձեցան անոր մատուցած ծառայութեան  
վրայ, ամբաստանեցին զրպարտեցին զայն եպիսկոպոսին մօտ, անոր

զրամը գողցան եւ վերջապէս վտարեցին զայն, որովհետեւ շատ մօ-  
տէն ճանչցած էր զիրենք, եւ բաւական ճարպիկ էր իրենց բոլոր ցըն-  
դած առասպելներուն շահատարու համար: Եւ Հռոգոսի այս հսկայ  
արձանը անպորժ նստաւ, ան որ եօթը սլիմապական պսակներ շահած  
էր մրցումներուն մէջ յաղթական հանդիսանալով, ան որ ամէնէն  
ուժով հակառակորդ մարտիկը մժղուկներու պէս կը քամէր կը ճըզ-  
մէր, քիթէն մինչեւ ոտքերուն ծայրերը մերկ, իրեւ ճգնաւոր Նե-  
ղոսի ճահիճներուն մէջ, հիմա մժղուկներէն կը խայթուէր եւ մար-  
մինը ախտաւոր այսայցներով կը թարախոտէր, իր Աստուածը պատ-  
ուելու համար թողուց որ իր մազիկները աճին վայրի եղան պէս, եւ  
անոր նման ալ բաշ ունենայ, այնպէս որ իմ որսի ընկերներս զանիկա  
իրօք տարօրինակ անասուն մը սկսան համարել: Բայց սուրբը այս-  
չափով ալ չզոհացաւ: Սկսաւ ունալ եւ ցատկել: Այն ատեն վրան գա-  
ցինք: Նախ սուրբը քիչ մը համեստօրէն քաշուեցաւ, ամօթխած ե-  
ղաւ կոյսի մը պէս, բայց փախչել չկար, այնպէս չէ՞, ըմբիշ, մեղ-  
քերդ քաւելու եւ աշխարհէն ձեռք քաշելու համար քու դաւանութիւն-  
ներից երկար տտեն չդիմացան: Մենք քեզի նոր աշխարհ մը բերինք:  
Կուիի, մրցումի ասպարէզ մը — ու ես՝ ամէն կողմս կտրտած՝ աղ-  
բերու մէջ մնացի: Զինուորական վերարկու մը իրեն վրայ եւ ճըզ-  
նաւորը իմ բարեկամս է եւ բարեկամս կը մնայ: Ապագային, Հա-  
յաստանի մէջ ան պիտի ըլլայ իմ լաւագոյն սպան, զօրավարը, իմ  
սեղանակիցը»:

Ամէնքն ալ խնդացին: Տրգատի բարեկամներէն մէկ քանիները  
միայն մնացին լուրջ եւ չխօսեցան, զպացուած ըլլալով: Տրգատի այս  
հեղինական խօսքերուն միջոցին ամէնէն աւելի լուռ կեցողն էր նոյն  
ինքն Աղեքսանդր: Կարծես, իր առջեւը նայելով կը խորհրդածէր  
կորսուած, շատ շուտով ձեռքէ ելած երջանկութեան մը մասին:  
Ամէնքն ալ ձեռով լուծեան մը ենթարկուած էին: Երեք պատգամա-  
ւորները, թէեւ պահ մը հանդարտած, նորէն կը զգային առաջուան  
ճնշումը իրենց սիրտին վրայ: Տրգատի առիւմանման աչքերը խու-  
զարկու վարձանքով մը կը նայէին չորս կողմ, սրպէս թէ կ'ուզէր դու-  
շակել այս ընդհանուր ծանր լուծեան պատճառը: «Ի՞նչ ըրիք չը-  
րիք տեսնեմ, երբ մենք հեռու էինք: Ի՞նչ եղաւ չեղաւ: Յանուն  
Սփինքսի: Ինչո՞ւ ձեզմէ ոչ մէկը չի խօսիր: Ամէնքդ ալ քրիստոնեա՞յ  
դարձաք»: — «Ատիկա ոչ», ձայնեց վերջապէս մէկը, «բայց մէկ  
քանիները պղատոնական դարձան»: — «Պղատոնակա՞ն», զոչեց Տր-  
գատ հեղինելով: «Ատ ալ գէշ չէ: Կը յարմարի մեր Միութեան, որ  
տակաւին իր կերածին ու խմածին պարտքը վճարելու անկարող է,  
եթէ ես հաշիւը չմաքրեմ: Կ'երեւի, խելքերնիդ թոցուցեր էք: Ուրե-  
մըն, այլեւս չէ՞ք զգար միտքի աղատութիւնը: Երբ հեռանամ, աղա-

տութիւննիր ալ վրայ կուտաք: Գինի բերէք: Կեցցէ Բաղոս, ազատութիւն, սէր, արբեցութիւն»:

Տրդատ շատ շուտով նորէն շահեցաւ իր նմանները եւ դանոնք ուղեւորեց իր հաճոյատիրութեամբ, կենցաղափարութեամբ: Խնդարեցին եւ զոչեցին անոր հետ. «Կեցցէ Բաղոս, սէրը, արբեցութիւնը», եւ խմեցին դաւաթներով, եղջիրներով ու բմպանակներով: — Ամէնէն լուրջ բարեկամներէն մին խօսք առաւ դարձեալ եւ պատմեց ընդհանուր ուշադրութեան միջոցին Ազաթանդեղոսի եւ անոր անօրինակ յաջողութեան մասին: Որքան զարմանք ամէնուն համար, որքան թեթեւութիւն զղացին երեք պատգամաւորները, երբ Տրդատ իր կատարեալ հաւանութիւնը տուաւ Ազաթանդեղոսը Միութեան մէջ առնելու գաղափարին, եւ ընդհանուր սղեւորութիւն եւ զուարթութիւն տիրեց ամբողջ հաւաքութիւն մէջ:

Զմեռնային ամէնէն տխուր երեկոյ մը — Աթէնքի փողոցները մութի մէջ էին արդէն — անդամ մըն ալ, կեանքի դեւէն հալածուած, Տրդատ միս մինակ կը թափառէր փողոցները, հոս ու հոն վազելով, շեղ, խաշածեւ, առանց կանդ առնելու, զրգուած, ու ինքն իրեն քիթին տակէն բարձրաձայն խօսելով, տմարդի կերպով խնդալով, երբեմն ալ ցնծալով խաղալով: Ամէն ինչ խոյս կուտար անոր առջեւ: Զփախչողը Տրդատին հուժկու նստոյ տեղիին հարուածովը մէկ կողմ կը քշուէր եւ կը զլտորէր: Ոչ տարիք, ոչ սեռ, ոչ զիբք կամ աստիճան, բացառութիւն չկար: Ոմանք պատիւ կը համարէին իրենց եւ կը խնդային արքայազունին վառվռուն կենցաղատիրութեան վրայ: Ուրիշներ կ'աւելցնէին թիւը անոնց՝ որոնք երկար ատենէ ի վեր խօսք տարածած էին, թէ վերջապէս քաղաքը պէտք էր մաքրել այս հրակայէն եւ ասոր համար ալ մէկը պէտք էր: Գիշեր եղած էր: Գլխաւոր պողոտային վրայ Տրդատ, յանդէտս, Ազաթանդեղոսին հանդիպեցաւ: Բաղմաթիւ անցորդներու կողմէ յարգալից ողջունուեցաւ զիտնականը, որ մութ գոյնով երկայն անձրեւանոց մը հազած, լայնեղբ մորթէ զլիտարկով մը գնաց ուղղակի Տրդատին կողմը: Եւ յամբօրէն մօտեցաւ անոր: Թափանցիկ, լուրջ նայուածք մը ինկաւ Տրդատին վրայ: Տրդատ շուարեցաւ, վարէն վեր նայեցաւ անձանթին՝ որ զլուխին չափովը իրմէ բարձր էր: Մոսկալի հարուած մը յետոյքին ձախ մասովը — եւ Ազաթանդեղոս սալայատակին վրայ թռաւ: Գլխարկը թեւ առաւ...: Գլուխը տեղ մը դարկած ըլլալով՝ Ազաթանդեղոս վայրկեան մը ցնցուեցաւ, թմրեցաւ: Անցորդներ իսկոյն փութացին արդէն: Մարդոց բազմութիւն վայրկեանաբար: Նախատակո՞ծ բառերու հեղեղ մը թափեցաւ Տրդատին վրայ, որ պահիկ մը լուռ մնաց, ինք ալ շուարած ըլլալով կարծես, բայց խորամանկ ուրախութիւն մը եւ

կուռելու փափաք մը երեսին վրայ, բոունցքներն ալ արդէն կաղմ ու պատրաստ էին: Կնոջական եւ առնական կուռփներ ամէն կողմէ իրեն դէմ կը բարձրանային: Կամաց քայլերով մտաւ անոնց մէջ: Քաղաքին լաւագոյն շրջանակներէն օրիորդ մը, փիլիսոփային ամէնէն խանդավառ յարգողներէն մին, քանի մը քայլ Տրդատին օձիքը չթողուց, կարծես անոր ոտքի մասններուն վրայէն քալելով: Տրդատ նախ ձեւացուց թէ ուշադրութիւն չ'ըներ: Եւ ահա նոյն ազդիկը անոր ծոծրակին անդամ մը իջեցուց: Տաղնապի կանչ մը, մէկ անգամով, ամբողջ օդը լեցուց, բայց քրքիջի շառաչիւն մը յաջորդեց իսկոյն: Տրդատ կայծակի արագութեամբ ետին դարձած, բռնած էր ազդկան ձեռքը եւ յետոյ զլուխը, եւ անոր երեսին իրարու վրայ քանի մը շառաչուն համբոյրներ դրոշմած էր: Ամէնուն ծիծաղներուն վերեւ շրջան կ'ընէր սակայն յուսահատ օրիորդին ձայնը: Տրդատ կը համբուրէր ու կը համբուրէր: Ազաթանդեղոս շատոնց կծիկը դրած էր: Ազաթանդեղոսին հետ այս առաջին շարադէպ հանդիպումին պատճառաւ պէ՞տք էր արդեօք որ Տրդատ ետ մնայ զինարբուքէն՝ որուն այս իրիկուն առաջին անգամ ներկայ պիտի ըլլար արկածեալ փիլիսոփան: Տրդատ — ետ մնա՞լ: Ընդհակառակն:

Հրաշալի կերպով յարգարուած էր սրահը: Առաջնակարգ ազանդերի պատրաստութիւն մը: Երկար ցած սեղան մը: Ծուրջը բազմոցներն ու աթոռները: Ապեղէս քանի մը փոքր արձաններ արտօնած էր բերել, Վիգիլիոս եւս իր ամէնէն նոր պատկերներէն: Ժամանակի ընթացքին, երբ դեռ Ազաթանդեղոս զինքը հրաւիրելու գացող բարեկամներուն հետ մէջտեղ չէր ելած, Վալերիոս բժիշկը, Լիկինիանոս եւ Տրդատ եկած էին: Սրահը խուռն բազմութիւն կար: Սեղաններ, արձաններ, պատկեր, անօթներ, լապտերներ, աշտանակներ, ամէն ինչ ծաղիկներով զարդարուած, կամ բաղեղով ու դափնիով պարուրուած: Երաժիշտները գեղեցիկ եղանակներ կ'ածէին լարաւոր նուագարաններով: Հանդիսաւոր սպասու՞մի մը անակնկալը ամէնուն վրայ: Ազաթանդեղոս ամենամեծ պարզութեամբ մուտք գործեց: Քանի մը վայրկեանէն ազատ ու անկաշկանդ խօսակցութիւն մը ծայր տուաւ մտերմիկ շփոթերով: Փիլիսոփան կեցած էր Ապեղէսին քով որմէ իսկոյն հաճոյք զգաց, միւսները երկուքին շուրջ խմբուած էին: Սրահին քովնտի անկիւններէն մէկուն մէջ յանկարծ Ազաթանդեղոսի աչքին զարկաւ Տրդատը, որ սրունքները իրարու վրայ դրած կծկտած էր բազմոցի մը վրայ եւ բան մը կ'ուտէր, հաղիւ թէ անտարբեր մը իրեն՝ Ազաթանդեղոսի նայելով: Մեղմ կարմիր յորդեց իսկոյն փիլիսոփային դէմքին վրայ: Կարծես այլեւս չէր իմանար շուրջը գրտնրուներուն կողմէ իրեն եղած հարցումները, եւ յանկարծ նկատեց նոր արթնցածի պէս, թէ ամէնքը զարմանքով իր երեսը կը նայէին:

Կը տեսնէին որ Ազաթանդեղոս աչքերը Տրդատին վրայէն անդին չէր տաներ, ուստի ուղեցին Տրդատը անոր ներկայացնել, թէ եւ տարտամօրէն: Այդ միջոցին էր որ Ազաթանդեղոս խնդաց եւ սրահը չափելով վեր վար, ձայնեց. «ներկայացնելու հարկ չկայ: Զիրար կը ճանչնանք»: Ազաթանդեղոս Տրդատի երկարեց իր աղուոր հաստ ձեռքը: «Պիտի օգնեմ քեզի որ ոտքի ելլես», ըսաւ Ազաթանդեղոս, զուարթօրէն: Տրդատ Ազաթանդեղոսին ձեռքը պարփակեց իր հսկայ ձեռքերովը եւ հեղնօրէն փիլիսոփային երեսը կը նայէր: Բայց սխալեցաւ Տրդատ: Միտքէն շանցած ոյժ մը զինքը քաշեց առաջ ու վեր, եւ յանկարծ արդէն ոտքերուն վրայ էր, ապա՛ս: Հիմա վերաւոր առիւծի մը պէս կը դառնար Ազաթանդեղոսի շուրջ, ամէն կողմէ զիտելով զայն ուշադրութեամբ: Վերջապէս առջեւը նայելով եւ զլուիւր շարժելով ըսաւ ինքնիրեն. «Կը հաւնիմ այս մարդուն, կրնայ պղատոնական ըլլալ կամ ինչ որ է, խնդիրը այն է թէ ոյժ ունի: Կը հաւնիմ այս մարդուն»: Ազաթանդեղոս, ուսանողներուն ստիպումին վերայ, աղանդերի սեղանին կեդրոնը տեղ բռնած էր: Ամէնքն ալ իր կեանքին կը խմէին: Խօսքերը երթալով կը տկարանային, եւ հետըզհետէ հատան: Ամէնուն աչքը փիլիսոփային վրայ էր, որ պարզ ուսումնակիցի մը կամ աշակերտակիցի մը պէս նստած էր, որպէս թէ ինք ալ միւսներուն պէս կը սպասէ որ մէկը բանախօսութեան սկսի: Ոչ ոք կը խօսէր: Լուռ խորհողին աչքերը խուզարկու ձեւով ուղղուեցան Ապեղէսին: «Այս աստուածները դ՞ու՞ն ստեղծեցիր, Ապեղէս»: — «Աստուածներուն այս պատկերները, Ազաթանդեղոս», սրբապրեց Ապեղէս խնդալով: «Ինչո՞ւ Աստուածներու պատկերներ կը ստեղծես, քանի որ այնքան քիչ կը հաւատաս Աստուածներուն, ինչպէս մենք ամէնքս»: Ապեղէս. «Մեզի արուեստագէտներու համար Աստուածները ոյժի, լոյսի, բեղնաւորութեան, կեանքի եւ ուրախութեան խորհրդանշաններ են»: — Ազաթանդեղոս. «Մենք ալ Աստուածները այդպէս կը հասկնանք: Բայց իրաւցնէ կ'ընդունի՞ս դուն, Ապեղէս, թէ մեր բոլոր ճանչցած ոյժերը միակ, առհասարակ ոյժի մը դանաղան տեսակները եւ ներդրութիւններն են»: Ապեղէս. «Անշուշտ այդպէս: Առհասարակ ոյժի մը, որ կը հոսի ամենայնին մէջ, որ կը կրէ ու կը բովանդակէ ամէն ինչ»: Ազաթանդեղոս. «Կը հաւատա՞ս դուն, Ապեղէս, թէ այդ ոյժը օդն է, կամ ջուրը, կամ կրակը, կամ անծայր միջոցը, թէ ան ոյժ մըն է միայն, առանց սեփական դիտակցութեան, առանց խորհելու եւ զգալու կարողութեան, ինչպէս մենք»: Ապեղէս. «Իմ կարծիքս վերջին ենթադրութիւնն է, Ազաթանդեղոս. անդիտակից առհասարակ ոյժ, նախօյժ, ոչ կրակ, կամ ջուր, կամ օդ եւ միջոց, այլ միմիայն ոյժ, որ սակայն միւս բոլոր բաները առաջ կը բերէ, թերեւ ինքն է որ կը փոխուի կրակի, ջուրի,

օդի եւ կը լեցնէ անծայր միջոցը»: Ազաթանդեղոս. «Ինչո՞ւ համար, Ապեղէս, հաւանական կը համարիս թէ նախօյժը ինքնին մտաւոր չէ, ինչպէս կ'ենթադրէ Անաքսագորաս, եւ որ չի կրնար խորհիլ եւ զգալ: Ինչո՞ւ հակառակը չըլլայ ճշմարիտը»: Ապեղէս. «Իմ կարծիքս այն է, Ազաթանդեղոս, թէ անծայրածիր, անփրջ ոյժ մը եւ անձնական ոյժի մը կամ միտք մը չեն կրնար իրարու հետ միանալ, ասիկա բացարձակ անբաւարար է»: Ազաթանդեղոս. «Ինչո՞ւ»: Ապեղէս քիչ մը կեցաւ. «... Որովհետեւ այդպիսի ենթադրութիւն մը կը հակասէ անձի կամ անձնաւորութեան մասին մեր կայմած զողովարին. չէ՞ որ անձը խորհող էութիւն մըն է, ինչպէս մենք ենք: Անձը սահմանաւոր է: Մեր խորհուրդը, մեր ըմբռնումները եւ պատկերացումները, ամէնքն ալ ժամանակաւոր են եւ տեղափոխուին սահմանափակ, եւ չենք կրնար երեւակայել ոյժի մը, յանձ մը որ այս բոլոր սահմաններէն բարձր եղած ըլլայ»: — «Ինչո՞ւ գոյութիւն չունենայ այդպիսի ոյժի մը, այն առարկութեամբ թէ մենք չենք կրնար երեւակայել այդպիսի բան մը»: — Ապեղէս. «Ես չեմ հաւատար»: Ազաթանդեղոս. «Ապեղէս եւ Վիդիլիոս, ի՞նչ է ձեր առաջին գործը, առաջին սկզբնաւորութիւնը, երբ կը ստեղծագործէք իրրեւ արուեստագէտ»: Կը խորհէին եւ իրարու երես կը նայէին: Ապեղէս ձայնեց. «Մտադիր»: Վիդիլիոս. «Նախադի՛ծ»: Ազաթանդեղոս. «Մխալ»: Ընդհանուր լուծիւն: Հեռաւոր անկիւնէն խանչեց խորունկ մրմոցող ձայն մը. «Գաղափար բռնէք, այնչա՞փն ալ չէք դիտեր, ուզտ»: — «Ճիշտ տեղին, արքայադուն իշխան», ձայնեց Ազաթանդեղոս: «Գաղափար: Պատճէն կամ նախապատկեր առարկայի մը, նիւթի մը»: Վիդիլիոս, Ապեղէս եւ ամէնքը հաւանութեան նշան տուին եւ ըստ այնմ ձայնեցին ալ: Ազաթանդեղոս. «մեզի՛ խորհողներուս եւ քերթողներուս համար զողովարները հետեւեալ ձեւով են. Մենք զողովարներ ունինք միայն, երբ միտքերնիս զան իրենք իրենց — Ուրախիտ այս պատճառաւ կ'աղաչէ Մուսաներուն — իսկ դո՞ւք, արուեստագէտներդ» — «Նոյնը նաեւ մեզի համար, Ազաթանդեղոս, պարտաւոր ենք տեղի տալ: Մեր գործերուն զողովարները կամ նախապատկերները պէտք է տրուին մեզի»: Ազաթանդեղոս. «Միայն պեղարուեստի՞ն զողովարները, թէ մէն մի զողովար որեւէ առարկայի կամ նիւթի համար, մէն մի զղացում, մէն մի յիշատակ: Մենք կարողութիւն ունի՞նք ուրախանալու, սիրելու, ատելու, երբոր ուղենք»: — «Ո՛չ: Այդ ամէնը կուզայ մեր վրայ, յաճախ նոյնիսկ մեր կամքին հակառակ»: Ազաթանդեղոս. «Ձե՞: Ո՞ւրկէց կուզան այս ոյժերը, այս զողովարները, այս խորհուրդները մեր վրայ, մեր վերեւ»: — «Մեր բնութենէն դուրս», ձայնեցին ամէնքը: «Ի՞նչ է բնութիւնը»: Ապեղէս ձայնեց. «Մեր բոլոր ուժերուն ամբողջութիւնը մեր մէջ»: Ա-

դաթանդեղոս. «Բայց Ապեղէս քիչ առաջ պնդեց, թէ ուժերը կարողութիւն չունին խորհելու, եւ մենք չենք կրնար մեզի տալ մեր միջոցով խորհելու — գաղափարներ կազմելու կարողութիւնը: Ի՞նչպէս կ'ըլլայ ուրեմն: Ի՞նչ է բնութիւնը»: Ընդհանուր լուծութիւն յաջողեց: Ազգաթանդեղոս շարունակեց. «Մենք չենք գիտեր, թէ ինչ է մեր իսկական բնութիւնը: Մեր մէջ գտնուած ուժերը միայն կը ճանշանանք, եւ դիտենք թէ մեր բնութենէն պէտք է տրուած ըլլան մեզի Ապրիլ, Սորհիլ, Չոյալ, նոյնիսկ կամենալ: Այսպէս, ինչպէս մեզի, այո, այսպէս նաեւ մեր նախահայրերուն, առաջին խորհող մարդուն համար: Արդեօք առաջին մարդը, կամ նախամարդը, ընդունա՞կ էր, կարո՞ղ էր ինք տալու իրեն կեանք, խորհուրդ, զգացում եւ իր մարմինին գաղափարը, վերջապէս ինք գինքը ստեղծելու: Ոչ անչուշտ, Ապեղէս, Վիլիլիոս, այլապէս ինչո՞ւ այս արձաններն ալ իրենք իրենցմէ գիրենք շիրման ստեղծել: Չէ՞: Ապեղէս քու հրաշակերտ պատկերներուդ, մարդկային կերպարանք ներկայացնող անդրիններուդ ոչինչ կը պակսի, ոչինչ, այլ միայն — կեանք եւ Սորհուրդ կամ, Ապրիլ ու Սորհիլ: Ապրիլ ու Սորհիլ բնութիւնը տուաւ մեզի: Ուստի պէտք է բնութեան մէջ գտնուի կենայ կարողութիւնը խորհելու, քանի որ ան կրնայ խորհելու ձիրք տալ մեզի: Ան — բնութիւնը — պէտք է իրեն մէջ կրէ գաղափարները, զոր կը փոխանցէ արուեստագէտին: Ան պէտք է սէր ունենայ, քանի որ կրնայ Սէրը փոխանցել հօր, մօր եւ զաւակին սիրտին մէջ: Պէտք է ուրախութիւն ունենայ, քանի որ մարդը ուրախութեամբ կը լեցնէ, նոյնիսկ մտղուկը, որդը: Ան — Բնութիւնը — պէտք է կարենայ տիրիլ, վշտակցիլ, լալ, բարկանալ, ատել, քանի որ անոնցմով կը լեցնէ մարդը: Կը հաւանի՞ք ըսածներուս»: Ազգաթանդեղոս այս ըսպէն Տրդատին կը նայէր: Մընտըր ձեռքին կրթնցուցած, քիթը ևրկորդ եւ երբորդ մատին մէջն զուրս ցցած, Տրդատ ճակատը կնճոկելով եւ հետախոյզ աչքերով շարունակ փիլիսոփային կը յառէր: Ազգաթանդեղոս գոհունակութեամբ զգաց ստիկա եւ շարունակեց. «Կը հաւանիք, կ'ընդունիք ուրեմն. բնութեան մէջ կայ խորհելու, զգալու ընդունակութիւնը կամ կարողութիւնը: Բնութիւնը զայն տուած է մարդուն: Ամենամեծ մասամբ արուեստագէտներուն: Բայց այս ձիրքերուն ամենատուար մասը Բնութիւնը ինք վերապահած է իրեն: Ձեր ստեղծագործութիւնները, Ապեղէս, Վիլիլիոս, վեհ են: Ես ալ կը հիանամ անոնց վրայ: Բայց, ներեցէք, Բնութեան գործերուն քով անոնք ընդօրինակութիւններ են, եւ անկատար եւ — մեռած: Ձեր մեղեդիները գիրի պատճէններ են, արձագանդները այն ներդաշնակութիւններուն զոր Բնութիւնը կ'երգէ ձեզ արուեստագէտներուդ ականջին, ճիշտ այնպէս ինչպէս տղուն ռամկական երգը փողոցէն դացած ատենը: «Այդպէս է», ծիծաղեցան

երաժիշտները: «Եւ Վալերիոս, սիրեցեալ բժիշկ, դուն տակաւին անգամատութեան սեղանին վրայ հիւանդ մարմինը եւ դիակը տեսնելով կը հիանաս բնութեան արուեստին վրայ որ այդպիսի գործանաւորութիւն մը ստեղծած է —» — «Եւ կը հաւատամ արարիչի մը, յարեց Վալերիոս ծանրութեամբ: Հաւատոյ գաւանդութեան մը պէս բան մը: Լաւ: Ծարունակինք: Ապեղէս կ'ընդունի՞ս որ բոլոր ուժերը մէկ նախոյժի մը տեսակներն ու ներգործութիւններն են միայն»: Ապեղէս հաստատական նշան բրաւ: «Աս ինչպէս եղած է քու ստեղծագործութեանդ առթիւ: Բոլոր ուժերը միակ ուժի մը չե՞ն վերադարձիր: Բոլոր ուժերը, բոլոր ձիրքերը, ամէն ստեղծագործութիւն, որեւէ գործ մէկ կամքէ, մէկ գիտակցութենէ առաջնորդուած: Մենք — որ բնութեան մէկ մասնիկն ենք միայն, — անոր պատկերը: Ինչ որ կրնանք, ան ալ — բնութիւնը — պէտք է կարենայ: Պէտք է ան ալ ունենայ ոյի եւ բանականութիւն, կամք եւ իմաստութիւն, անձայրօրէն աւելի, քանի որ իր գործերը մերինները կը գերազանցեն: Ի՞նչպէս ուրեմն մենք, ո՞վ Ապեղէս, այս ոյիին կը համարձակինք ըսել, թէ դուն չես կրնար ըլլալ, որովհետեւ մենք քեզ չենք կրնար ներկայացնել: Հոս միտական չի կրնար ըլլալ մեր փափաքը, կամքը, մեր երեւակայութիւնը կամ ոչ — երեւակայութիւնը: Հոս վճռական է միայն իրողութիւնը. նախոյժ չի կրնար անդիտակից ոյժ ըլլալ, — պէտք է ոյի — անձայրածիր իմաստութիւն — Սէր ըլլայ»: — Եւ ահա ամէն կողմէ ընդդիմախօսութիւն: Ամէնուն վրայ կուզայ կեանք եւ շարժում: Ազգաթանդեղոս, լուռ ետեւ կրթնած, զլուր վեր մտիկ կ'ընէր ամէն իրեն ուղղուած առարկութիւնները: «Կ'ընդունի՞մ քու փաստարկութիւնդ, Ազգաթանդեղոս», ձայնեց Ապեղէս, «բայց մարդուն խորհող ոյիին համաշխարհային խորհող ոյի մը ենթադրելու քու եզրակացութիւններդ ինծի բռնադրօսիկ կը թուին: Այո, իրօք կը հաւատամ, թէ ամենայնին մէջ պէտք է մտաւոր, հոգեւոր բան մը, յաւիտենական բանականութիւն եւ բարութիւն մը ըլլայ: Ամենայնը ամրողջին մէջ տիեզերքն է, անբացատրելի ճառագայթող անհուն արուեստի գործ մը: Բայց համաշխարհային համաշափ համալոր, նոյն եւ նման ոյիին ի՞նչպէս կրնայ առաջ գալ այնքան ալ յիմարութիւն, անկատարելութիւն, այն հաւասար, համաշափ, համալոր, նոյն եւ նման սէրէն այնքան ատելութիւն եւ խաւար»: — «Քու աստուածութեանդ ներդաշնակութիւններուն մէջ կը մոռնաս աններդաշնակութիւնները, Ազգաթանդեղոս», ձայնեցին երաժիշտները: «Կ'ընդունի՞մ որ, բաւ Վալերիոս, մարմնական գործարանաւորութիւնը մեծ ամենայնին, տիեզերքին պատկերը, պատճէնն է, գեղարուեստի գործ մը անձայրածիր իմաստութեան, ամէն ինչ ստեղծուած կեանքին նպատակին, վախճանին պատշաճարար — բայց երբ կը տեսնեմ հիւանդներս որ

կը չարչարուին խլիրդէ, որդեր կ'ուտեն անոնց մարմինը, անոնց միտքը կը մթաղնի, անդամները կը լուծուին, երբ մահը մօրը թեւեւ-րէն կը յափշտակէ դաւակը — Ազաթանդեղոս, եկուր, այցելէ ան-գամ մը իմ հիւանդանոցս: Չեմ գիտեր, որքան տառապանքներ, ցաւեր տեսած ես արդէն—»: — «Չեմ գիտեր», դռնէ խուլ ձայն մը այդ միջոցին, «թէ Ազաթանդեղոս իմացած է արդեօք, որ իր այդ յաւիտենական սէրը իբրեւ բարի համարած է իմ ձեռքէս խլել իմ թա-զաւոր հայրս մարդասպանի ձեռքով եւ իմ սիրտիս մէջ դնել միակ, անլուրի ցանկութիւն մը մարդասպանը կամ մարդասպանին դաւակը փնտուելու եւ իմ ատելութեանս բոցը լռեցնելու անոր մահուան շար-չարանքները գիտելով»: Խոր լուրթիւն: Ամէնքն ալ Ազաթանդեղոսին երեսը կը նայէին, եւ կը գիտէին որ ան պահ մը անթարթ նայեցաւ Հայոց Փահաթառանդին, եւ գունաթափ եղաւ բոլորովին: Բայց իս-կոյն բռնեց ինքզինքը եւ ըսաւ. «Արքայորդի: Քու վիշտդ պէտք է այնքան մեծ ըլլայ ինչպէս ատելութիւնդ, սխալ: Արդիւնքը պատճառին հետ կապուած է: Կ'ըմբռնեմ, կը հասկնամ քեզ: Մարդասպանին յան-ցանքը այնքան մեծ է որքան սէրդ էր քու հօրդ հանդէպ»: Տրդատ յուզուած կ'երեւէր: Կ'ուզէր ցոյց չտալ յուզուած ըլլալը, ինչպէս իր սովորութիւնն էր, բայց ջիթը քաշեց, հազաց թեթեւ մը, հեւաց եւ կատաղօրէն առջեւ կը նայէր: Ազաթանդեղոս նեղիչ ու խուլ լուր-թեւէ մը վերջ, որ կը խլուէր միայն մերթ ընդ մերթ գինիի բաժակ-ներուն եւ սրուակներուն թեթեւ բախիւններէն, խօսք առաւ. «Քարե-կամներ», սխաւ ան շափուած ձեւուած եղանակով, «եւ ալ կը ճանչ-նամ թէ ինչ է ցաւը, տառապանքը, եւ իմ կեանքիս վրայ կը դարի ծանր մթութիւն մը: Բայց միշտ ջանացած եմ անկեղծ ըլլալ կեանքին հանդէպ: Մարդ միայն ցաւ ու տառապանք չի տեսներ, սովորաբար անճիշտ է ասիկա: Կեանքը ցաւի եւ ուրախութեան հաւասար խառ-նուրդ մըն է: Անկարգին դէմ կարգը: Աններդաշնակութեան կամ ան-համաձայնութեան քով ներդաշնակութիւնը: Հիւանդութեան քով ա-ռողջութիւնը: Դժբախտութեան քով բախտաւորութիւնը, ատելու-թեան մօտ սէրը, մահուան քով կեանքը: Ո՛վ որ չլացած այլեւս չի կրնար տեսնել, ցաւ միայն կը տեսնէ: Այնպիսին ցաւ, դժբախտու-թիւն, գէշութիւն միայն կ'ուզէ տեսնել: Բայց ուրախութիւնը յա-ճախ յանակնկալս կուզայ, բարեբախտութիւնը, յոյսը, սէրը կը հասնի, որ կրնայ կեանքին անխորտակելի ոյժը, յորդութիւնը այն-քան զօրացնել, որ նոյնիսկ կրնայ անցորդները փողոցին վրայ սալա-յատակին միւս կողմը նետել»: — Ամէնքն ալ խնդացին, մանաւանդ ամէնէն շատը եւ բարձրէն Տրդատ — «եւ այն ատեն, ներողութիւն, արքայազուն, սուգը կատակերգութիւն կը դառնայ, մարդ սուգ կը բռնէ հիմնաւոր կերպով, այնպէս որ մարմինն ու հոգի այդ հիմնա-

ւոր պատճառին հետեւանքով կը քայքայուի եւ կը տկարանայ կեան-քին ծայրայեղ եռանդը»: Քանի մը վայրկեան ընդհանուր քրքիջ վերջ Ազաթանդեղոս շարունակեց. «Կատակը մէկ կողմ: Կը բաւէ, աւելի քան կը բաւէ ինչ որ բուռեցաւ ի մասին ցաւին, աւելիչ ուժե-րուն, որոնք կան աշխարհի մէջ, բլլան մեծ, բլլան պղտիկ — եւ ի-րաւունք ունիք, բարեկամներ, իմաստութիւն եւ յիմարութիւն, սէր եւ ատելութիւն միեւնոյն էութեամբ ու հանդամանքով շեն գար: Աստ-ուածային իմաստութեան նկարներուն մէջէն ծակ մը, պատուածք մը կ'անցնի, կայ: Ներդաշնակութեան մէջէն կ'անցնի, կայ աղաղա-կող անհամաձայնութիւնը, սխալ ձայնը: Միթէ անիրա՞ւ է Պապոսն, որ կը հաւատար թէ ողիները ինկան աշխարհը դեռ չսկզբնաւորուած: Հրեաներուն սատանան, պարսից Ահրիմանը, Հնդկիներուն Վրիթրան, Եգիպտացիներուն շար Սեթը շարութեան խորհրդանիշն՞ը են միայն, թէ խաւարի, շարութեան ահաւոր ոյժեր, պատճառ բոլոր ցաւերու, ապստամբող ընդդէմ լոյսին աստուածութեան, փորձիչ եւ ապակա-նիչ մարդոց, հայր դեւերու»: Բժիշկ վալերիոս ձայնեց. «Չարիք, շարութիւն ըսուածը մեծ մասով մոլորութիւն է եւ տգիտութիւն, շարութիւն ըսուածը մեծ մասով մոլորութիւն է եւ անպարծութիւն: Դեւերը հիւանդութեան նիւթեր են մարդուն մէջ, մոլորութիւնները եւ ոճիրները կուզան ուղեղին ախ-տաւորութեան միջոցաւ: Ի բաց տարէք ուրեմն մեղքով անկումի եւ սատանաներու սա հին փերեղակութիւնը: Մարդը անասնական գո-յութենէն վեր բարձրացած է: Իր բարձրագոյն դաստիարակութենէն գիտելով՝ ան ցածր գտնուողները իբրեւ շար, կամ շարիք կը նկատէ: Դաստիարակութիւն եւ գիտութիւն կը վանեն դեւերը»: Ապեղէս ձայնեց. «Եւ անձնապէս կը հաւատամ շար զօրութեան մը, որ կրնայ շարիքի մղել մեզ: Աշխարհի իրերուն վրայ կամ մարդոց վրայ ցան-կութիւն մը, կիրք մը կրնայ բորբոքել, որ տանի մղէ մեզ դէպի ա-պականութիւն կամ կործանում: Ասոր կը հաւատամ»: — «Եւ ալ», ձայնեցին շատեր: Ազաթանդեղոս. «Փորձութեան ալ կը հաւատա՞ք»: Ըսին. «Այո՛»: Վալերիոս անգամ յայտնեց թէ ինք կը հաւատայ տե-սակ մը փորձութեան: Ազաթանդեղոս. «Քարեկամներ, Ամէնքդ ալ լսած էք, գիտէք դիւցազն Աքիլլէսը: Իր մայրը թեոփս, ինչպէս կ'ըսէ զրոյցը կամ աւանդութիւնը, գայն անփրաւորելի, անխոցելի բրաւ, տղայ եղած միջոցին, սուրբ ջուրի մը մէջ մխրճելով մկրտելով գայն: Բռնած էր անոր մէկ ոտքին կրունկէն: Այդ մասը մոռցաւ եւ ջու-րին մէջ չմխրճեց: Ատկէց խոցելի մնաց: Պարիսի նետը ատկէց հան-դիպեցաւ անոր Տրոփազայի առջեւ: Ու մեռաւ, բարեկամներ»: — Առաթանդեղոս լրջաբար ամբողջ ահումբին նայեցաւ չորս կողմէն: «Մենք ամէնքս ալ մեր էութեան մէջ տեղ մը ունինք — անկէց խոցելի ենք: Անկէց հակամէտ ենք անկումի: Այսպէս չէ՞ ընչաքաղցութիւնը

գրամի համար, նաեւ պատիւի եւ համբաւի համար: Այսպէս չէ՞ հը-  
պարտութիւնը, դիւրադրողութիւնը, սնափառութիւնը, ինչպէս բար-  
կութիւնը, առելութիւնը, նախանձը: Այսպէս չէ՞ բղջախոտնութիւնը  
կամ անժողովարութիւնը ուտելիքի կամ խմելիքի համար: Այսպէս չէ՞  
ցանկական կիրքը, մարմնասիրութիւնը կամ հեշտախոտութիւնը:

Ամէն մարդ անկուսի տրամադիր բլրայու բան մը ունի: Փոր-  
ձութիւնը ամէն առն շի բիտր շի դար մեր բնկերակից մարդոցմէ:  
Ան կը ծնի մեր մէջ: Կոչ կ'ընեմ ձեր փորձառութեան: Ո՞վ շի զի-  
տեր, թէ ինչպէս փորձութիւնը կուզայ կը փայտայ, կը շոյճ, կը  
հրապուրէ, կը խոստանայ, կը թմրեցնէ խիզձը, ինչպէս արթուն կը  
հսկէ դիշերը եւ ցերեկն ալ բնաւ չի յոգնիր, ինչպէս մեկ կը կշտամբէ  
իրբեւ ապուշներ կամ վախկոտներ, որ չենք օգտուիր պատահութիւն-  
ներէն եւ չենք թաւալիր մոյութիւններու մէջ, ինչպէս երբեմն ըստ  
երեւոյթին կը խոստափի, ցանկութիւնները, մեղքերը աւելի զրգոխչ,  
զրգոխչ բնկու համար: Կը կուսինք փորձութեան գէժ, եւթադրենք,  
կը վճռենք խիզձին հետեւելու — դիտենք թէ բարին կ'ուզենք, ոչ թէ  
շարր: Բանակոտնութիւնը եւ խիզձը կ'ազդարարեն, կը կանչեն, կը  
պոռան, գիտենք թէ պարտականութիւն ունինք եւ կ'ուզենք բարին —  
Բայց շարիք կ'ընենք եւ կ'իյնանք: Մեր բարի կամեցողութեան, մեր  
մաքուր սիրտին միջնաբերդը կը կործանի: Մինչեւ դեռ քիչ առաջ  
լաւ պաշտպանուած էր, բայց պատին մէջ աչքէ եւ ուշագրութենէ  
վրիպած պատառուածքներ կային: Ահա այս ծերայն ներս կը սողայ  
օձը: Հրեղէն նետը կուզայ կը դաշի կրունկին կամ դարչապարին:  
Փորձութիւն, կ'ըսես դու, Ապեղէս: Ի՞նչ է փորձութիւնը, որ մեզ-  
մէ աւելի խորամանկ է: Խորամանկութիւնը ոչինչ է, մեր ուզին է,  
մեր խորհրին է: Փորձութիւնը ոչինչ է: Փորձիչը հաճոյք կը պատ-  
ճառէ մեզի: Չարին ուզին: Սատանայ մը: Ահրիման մը: Երկու ուղի-  
ներու մէջ կը կենանք մենք: Երկու ուղիներ կը պայքարին կը մար-  
տնչին մեր հոգիներուն շուրջ: Ահուրա-Ահրիման: Լոյսի Աստուածը  
Միհր մեզ կ'արթնցնէ առաւօտեան շողով: Բուշիանկտա դեւը երկայն  
ձեռքերովը արշալոյսէն առաջ կը վազէ կուզայ, եւ վերէն կը կանչէ  
մարդոց, «Քնացէք, ո՞վ մարդիկ, քնացէք, մեղանշական ողջեր:  
Քնացէք դուք որ մեղաւոր կեանք մը կը վարէք»: Լոյսի բարի ուղիներ-  
րէն դաշնակցութիւն մը պէտք է հիմնենք: Այսօր իսկ: Հիմա: Ան-  
միջպէս: Ո՞վ կայ հոն: Ամբողջ Աթէնք է պէտք է դրայ եւ աչքե-  
րովը տեսնէ, երբ լոյսը դայ: Բարեկամներ կոչ կ'ընեմ ձեզի: Եկէք:  
Միասին մտէք: Թող հիմնենք լոյսի դաշնակցութիւն մը»: —

Հրեղէն ոյժ մը կը ըխէր Ադաթանգեղոսէն: Ամէնքը ոտքի  
կանգնած շրջանակ մը կը կողմէին: Ապեղէս խանդավառ կը գոչէր.  
«Աքանջելի դաշնակցութիւն մը պիտի ըլլայ, եթէ կարելի ըլլայ գո-

յացնել մեր մէջ: Մեր ժամանակի բոլոր կրօնները, բոլոր դադափար-  
ները կը ձգտին դէպի լոյս: Ջերմադին տաքուկ կեանքի մը կարօտը  
ունինք: Եւ ինչպէս որ արեւը բոլոր մարդիկ, նոյնիսկ շարերը, կը  
լուսաւորէ, մենք բոլոր մարդիկս ալ անխոր կ'ուզենք սիրել եւ ոչ  
մէկուն առջեւ խափանել արեւուն լոյսը եւ անոր Էրջանկութիւնը»: —  
«Ես աւելին կը ցանկամ, Ապեղէս», բնդմիջեց Ադաթանգեղոս: «Ես  
պիտի փափաքէի — թող ներէ փիլիսոփան — գիտնալ, թէ լոյս ըսե-  
լով Ի՞նչ կ'ուզենք հասկնալ: Մաքրութիւն-կեանք-սէր, կ'անուանէիր  
դուն, Ապեղէս: Բառերը չափազանց վերացական ընդհանրական են  
ինծի համար: Ո՞ր մաքրութեան, ո՞ր կեանքին, ո՞ր սիրոյն կ'ուզենք  
կամ պէտք է ձգտինք: Տեսնենք կրնա՞նք արդեօք միաբանիլ այս մա-  
սին, թէ Ի՞նչ է լոյսը: Կ'ուզենք փնտռել եւ շղաղրել, կ'ուզենք անօթի  
եւ ծարաւի մնալ մինչեւ որ ճանչնանք թէ Ի՞նչ է Աստուած: Եթէ  
ճանչցած ենք Աստուածը, պիտի չուզենք աշխարհի ոչ մէկ բարիքը,  
ոչ մէկ վայելքը, ոչ դրամ, ոչ պատիւ, ոչ արուեստ, ոչ գիտութիւն,  
ոչ մարդիկ Աստուծմէ աւելի սիրել եւ կամ վախնալ աւելի անոնցմէ  
քան թէ Աստուծմէ: Այն առն միայն կրնանք բոլորովին մաքուր  
ըլլալ, եթէ մենք բոլոր սէրը, բոլոր փառք ու պատիւը Աստուածու-  
թեան տանք: Այնպէս մը պէտք է քայլենք եւ երթանք, որպէս թէ  
Աստուածութեան աչքերը մեր վրայ ուղղուած են: Ոչ մէկ բանի  
պէտք է նմանցնենք Աստուածութեան պատկերը, ո՛չ երկնաւոր ո՛չ  
երկրաւոր, ոչ ստորերկրեայ որեւէ բանի: Աստուծոյ պատկերը պէտք  
է մեզի համար անբաղդատելի ըլլայ, ինչպէս արեւը: Պէտք է աղօ-  
թենք Աստուածութեան, որովհետեւ մենք կը հաւատանք, թէ ան,  
Աստուածութիւնը, կը լսէ մեզի ամէն ժամանակ, կը պաշտպանէ  
կ'օյնէ բարձրագոյն մաքրութեան, մխիթարութեան եւ խաղաղու-  
թեան համար, եւ կրնայ փրկել մեզ բոլոր մեր նեղութիւններէն եւ  
նոյնիսկ մահուան խաւարէն: Պէտք է ճշմարիտ ըլլանք, մեր մէջ,  
աշխարհի վրայ եւ մարդոց մասին, ամէն ինչ միշտ ճանչնալ եւ ըն-  
դունիլ այնպէս ինչպէս է եւ ոչ բնաւ այլապէս, եւ ըստ այնմ միայն  
յործել, ոչ այլապէս խորհիլ քան ինչ որ կ'ըսենք ու կը խօսինք, ոչ  
ալ այլապէս լսել կամ խօսիլ ինչ որ կը խորհինք, այսինքն մեր խոր-  
հածէն տարբեր չխօսիլ, եւ մեր խօսածէն տարբեր չխորհիլ: Ահա  
թէ Ի՞նչ է ճշմարիտ ըլլալը: Պէտք է Երբեք բան մը փոխ առնել եւ  
այլեւս չվերադարձնել: Ամէն բաներու առթիւ պէտք է հարցնենք,  
թէ Աստուածութիւն այդ բաները Ի՞նչ բանի զործածութեան սահ-  
մանած է, եւ իրենց նպատակին համաձայն միայն պէտք է զործածել  
կամ օգտագործել զանոնք, ոչ թէ բնաւ ուրիշ բանի: Այս իսկ մաք-  
րութիւն հոգիի: Այս պատճառաւ միտքով, գաղափարով պէտք է ը-  
նենք միայն ինչ որ կը պատշաճի բարձրագոյն նպատակին, բոլոր

մարդոց երջանկութեան, նոյնիսկ եթէ մեր այս ընթացքը թուի թէ աննպաստ է մեզի: Այս պատճառաւ պէտք է մէկ կին միայն սիրել եւ անոր պարպեւել բոլոր սէրը եւ հաւատարմութիւն պահպանել: Այս կերպով միւս կիները պիտի յարկենք բարձրագոյն աստիճանով եւ մաքուր սիրտով անոնց հետ զօղել մեր միտքին, հոգիին հաղորդակցութիւնը: Այս պատճառաւ նաեւ ո՛չ մէկը տակել, նոյնիսկ ո՛չ թշնամին, որովհետեւ ատելութիւնը խաւար է եւ յուշտ անարդար, որովհետեւ բարկութենէն եւ ատելութենէն եւ նախանձէն կուզայ մարդասպանութիւնը: Բայց մենք պէտք է իւրաքանչիւրին շնորհենք ի սրտէ իր երջանկութիւնը, իւրաքանչիւրին որ մեզ ցաւացուցած է ներել ի սրտէ, պէտք է չար նայուածքին եւ երեսին փոխադարձենք սիրալիր երես մը, չար բառին բարի բառ մը, չար դործի մը բարի մը: Եթէ կարելի է փրկել մարդու մը կեանքն ու հողին, պէտք է մենք զրկուենք, յանդիմանուենք, զանակոծուենք, եւ, եթէ հարկ է, մեռնինք եւ զոհենք մեր կեանքը ուրախութեամբ: Պէտք է մեր բոլոր ժամանակը, բոլոր ոչքը, բոլոր կեանքը վտանգենք այն բանին համար որ այդ սէրը կարենայ լոյս տալ աշխարհի, իբրեւ զեղեցկագոյն լոյսը: Ասով միայն կրնանք մեզ հաւաստել իբրեւ մաքուր հանդէպ Աստուծոյ եւ մարդկան, եւ մարդիկ մեզի պիտի հաւատան: Ճշմարիտ լոյսը պէտք է լուսաւորէ, պէտք է մարդիկ տեսնեն զայն, պէտք է տաքցնէ եւ բարեկործէ: Բարեկամներ, հաւատացէ՛ք լոյսին յաղթութեան, եւ անոր յաղթանակը պիտի դայ: Ձեզի հետ, իմ երեք բարեկամներուս հետ, որ կը մնանք ինձի, կը հիմնեմ լոյսին դաշնակցութիւնը, Աստուծոյ եւ մարդասիրութեան դաշնակցութիւնը»:

Երեք բարեկամներ մնացած էին, բոլոր միւսները մէյմէկ ճամբայ գացին: «Գիտէ՞ք, ըսաւ Ազաթանդեղոս մեղմօրէն, ո՞վ սովորեցուցած է ինչ որ ես ձեզի կը վարդապետեմ»: Ուսանողները իրենց տաքցած երեսները Ազաթանդեղոսի կողմը բարձրացուցին. «Այո՛, Յիսուս Քրիստոս», փսփսացին իրարու հետ: Ազաթանդեղոս լուսաշող նայուածքով նայեցաւ անոնց ամէնուն, եւ մատը դրաւ բերնին վրայ:

Ազաթանդեղոս որոշակի կը սպասէր, որ Տրդատ տուն գացած պիտի չըլլայ, այլ վարը կապելային մէջ նստած, ո՞վ զիտէ, նորէն զինովցած վիճակի մէջ է: Հազիւ իրեն ընկերացողները անհետ եղած էին, Ազաթանդեղոս կրկին իր սենեակէն դուրս ելլելով բուրդէ վերարկուն հագած փողոց իջաւ, եւ Աթէնքի լուռ ու ամայի դռնհներէն անցնելով երկրորդ անգամ, զգուշութեամբ հիւրանոցին մօտեցաւ, պանդոկի դրան վարադոյրը վերցուց քիչ մը եւ ներս նայեցաւ: Տրդատ, աչքերը քար կտրած, կը նստէր, ճնկող ուսանողներու եւ գինով գռեհիկներու խումբէն մէկուսի, ցած, աղտոտ, մաշած բազմոցի

մը վրայ: Կիսամերկ աղջիկ մը իր դիրկը: Եւ կը քծնէր հետը: Առաւօտը կը ճերմկէր քաղաքին վերեւ, երբ Ազաթանդեղոս գինով Տրդատին հետեւեցաւ: Նոյն չափ ալ գինով երկու ուսանողներ անոր կ'ընկերանային: Տրդատ նախ մէկը, յետոյ երկրորդն ալ գետին տապալելէ եւ զանոնք այնպէս ձգելէ վերջ, ինք ալ կամաց կամաց կքեցաւ ինկաւ գինովութենէն: Ազաթանդեղոս շարկելով տուն տարաւ զայն: Կէս օրին ամբողջ քաղաքը զիտցաւ եղածը: Իրիկուան դէմ արքայազունը մինակ, գլխու սաստիկ ցաւով, Պերիկլեսան փողոցն ի վար կը թափառէր, Պիրէոնի ճամբուն վրայ: Յաճախ կը փսխէր, նստաւ փրփրած կտոր մը պատի վրայ, երկար ատեն գլուխը ձեռքերուն մէջ բռնեց, գետին կը նայէր պաղած պաղած, թմրած վիճակի մէջ շարժեցաւ եւ կը հեռանար: Ազաթանդեղոս բաւական երկար ատեն անոր ետեւէն ցնաց առանց նկատուելու: Տրդատ Պիրէոնի շրջանը ըրաւ դարձաւ ձախ, ծովեզերքին երկայնքը, միշտ քաղաքէն եւ մարդոցմէ աւելի հեռի: Ազաթանդեղոս կեցաւ մթնշաղին: Որովհետեւ կը տեսնէր թէ Տրդատ լաթերը կը հանէր եզերքը: Աստուածանման կամ դիցակերպ կերպարանք մը, Մարտի մառնամուտ արեւուն յետին աղօտ ճաճանչին տակ լուսափաղփ, իջաւ ծովը: Ո՛չ մէկ ցայտք ջուրի, ոչ մէկ կայթիւն կամ ցնցում: Լուռ, հսկայ ձուկի մը պէս Տրդատ կը լողար շուրջը: Երբ ջուրէն դուրս ելաւ, Ազաթանդեղոս, լույանքի հսկող հաւատարիմ գերիի մը դիրքին մէջ ծովափ կեցած, իր սեփական պարեպօտը երկնցուց իշխանին որպէսզի անոր ուսերուն վրայ ձգէ: «Կը նուաստացնես դուն քեզի, Ազաթանդեղոս», ըսաւ Տրդատ առանց նեղուելու եւ առանց զարմանալու: «Ի՞նչ գործ ունիս իմ քով: Չեմ հասկնար: Ինչո՞ւ մինչեւ հոս եկար, այդպիսի ծառայութիւն մը ընելու համար, մինչ համօրէն Աթէնք լեցուած է քու համբաւով»: — «Թող քու ծառայ ըլլամ, իշխան Տրդատէս»: Եւ սկսաւ շփել Տրդատը շորցնելու համար: «Սեյքի՞դ կուզայ: Ինչո՞ւ այս դիրքը կ'առնես ինձի հանդէպ»: Ազաթանդեղոս. «Ես Միհրին մէկ բարեկամն եմ: Պարսից եւ Հայոց կրօնքէն գիտեմ, որ իրենց թագաւորը նուիրական սեփանք իրեն վրայ կը կրէ: Երբ թագաւորը մեռնի, իր սեփանքը կը փոխանցուի զաւկին եւ յաջորդին: Դուն, արքայազուն իշխան, քու մէջը կը կրես սեփանք: Դուն Հայաստանի թագաւոր պիտի ըլլաս: Արքայական արին կայ երակներուդ մէջ, Միհրի եղբայրն ես եւ Ահուրայի զաւակը: Հօրդ ողին քու մէջն է, — եւ դուն — իշխան — կը խայտառակես հօրդ ողին, կը կորսնցնես սեփանքը, արքայափառ պատկառանքը եւ արքայական իրաւունքը: Կ'ըսէիր, թէ հայրդ կը սիրես, թէ կ'ատես անոր մարդասպանը, եւ, — ո՞ր է քու սէրդ: Քու հօրդ ողին, որ կ'ապրի եւ քու շուրջը է, կ'աղաղակէ իմ հոգիիս մէջ. «Ազաթանդեղոս, իմ յաւիտենական հան-

գիտիս սիրոյն համար, բարի հրեշտակ մը եղիր իմ գաւազինս: Արդէն Միհր երես դարձուցած է իրմէ, արդէն խաւարը կ'իջնէ անոր վրայ եւ Ահրիման իր ձեռքերը կ'երկնցնէ դէպի անոր ուտինը: Ան ինկած նուաստացած, ստորնացած է զինովի վիճակի, եւ զերի եղած է վաւաչոտ կիրքերու եւ կիներու: Մոռցած է սէրն ու նուիրական վրէժը, եւ իր տան փայլը խաւարին մէջ կ'աղօտանայ: Լոյսի հրեշտակ մը եղիր անոր: Փրկէ զինքը, Ազաթանդեղոս»: — Այդ միջոցին Տըրդատ հագուած էր առանց բերանը բանալու: Յետոյ զնաց հանդարտօրէն մարդին վրայ եւ զլուխը հետզհետէ թաղեց: Ո՛չ մէկ խօսք: Ազաթանդեղոս կրկնեց. «Կրնամ քու ծառադ ըլլալ, Իշխանդ Տըրդատէս: Հրնամ օղնէլ քեզի, խաւարէն դէպի լոյս»: Տըրդատ խնդաց. «Ի՞նչպէս կրնաս այդ բանը զլուխ հանել: Միհր — Ահուրա — Հաւարէնօ (ռետիմ) — մանկութեանս ամբողջ հաւատքը խորտակուած է, ամէն ինչ ինծի համար մոլորութիւն է: Հօրս սպաննէր զիս ալ սպաննած է: Ահուրան ինչո՞ւ համար մարդասպանին նետը հօրս սիրտէն չվրիպեցուց: Ի՞նչ կ'արժէ Աստուած մը, որ չի կրնար դեւին յաղթել: Ո՞ւր էին Միհրի հաղար աչքերը, հաղար ականջները, երբ մարդասպանը խաւարին մէջ կ'երկնէր դիւական յատակազիծը: Ի՞նչ է Հաւարէնօն: Ի՞նչ է արքայափառ պատկառանք ըսածդ, որ որեւէ արժէք չունի մարդասպանին համար: Ի՞նչ նպատակ կայ արքայօրէն տրամադրուելուն մէջ, դէպի լոյս, դէպի արդարութիւն, դէպի սըրութիւն եւ ճշմարտութիւն ձգտելուն մէջ — ի վերջոյ մարդասպանին ձեռքին տակ իր Հաւարէնօն թքնելու եւ ուրիշի մը փոխանցելու համար»:

Ազաթանդեղոս. «Իշխան Տըրդատէս, դուն հօրդ ոգիին վրէժ-խնդրութիւն երդուրնցար: Անոր Արիւնին քաւութիւնը քու սուրբ ուխտդ է: Անոր ոգին չի հանդիւր — այս քու հաւատքն է — մինչեւ որ դուն չգործադրես այս սուրբ երդումը, մինչեւ որ մարդասպանը կամ մարդասպանին գաւազը վրէժիդ չդոհես, մինչեւ որ հօրդ գահը եւ թագաւորութիւնը չվերահաստատես եւ չգատես երկրիդ մէջ ըստ իրաւանց եւ արդարութեան: Եւ ասիկա ընելու համար — Իշխանդ Տըրդատէս, ոյժ, կորով պէտք է: Այս նպատակին ո՛չ ոք կրնայ հասնիլ, որ իր հոգին ու մարմինը Ահրիմանին կը ծախէ, մոլորութիւններու մէջ կը խեղդուի, ջղակոտոր եղած ու վատուծած, հիւանդ եւ ուժաթափ, վիճակուած մահուան, եւ իր թաղը անարդարօր օտարի մը — ո՛վ զիտէ — ի վերջոյ մարդասպանին, կամ մարդասպանին տըղուն կը թողու — «Ներքեք ու երքեք — բնաւ ու բնաւ», կ'աղաղակէ Տըրդատ: Մէկ ուտումով Ազաթանդեղոսի քով թռաւ: Իր ամբողջ կերպարանքը կ'երեւար: Շրթունքները կը դողային եւ գիշերական ծովէն դուրս կը դուրս իր կոչը ատելութենէն ու զղջումէն կտըրտուէր. «Հայր, հայր, ներէ: Կուգամ: Ահա կ'ելլեմ: Հայր, ներէ քու

անառակ գաւազիդ, որ մոռցաւ քեզ, վրէժը մոռցաւ: Ո՛հ, օ, հայր, հայր»: Ամբողջ երկայնքովը ահա հոն հեկեկալով պառկեցաւ երեսն ի վար, եւ կուլար զլուխը զիշերային մշուշէն թաց մարդին մէջ: Մարմինը ցուրտէն ու տատապանքէն կը թոթվէր: Ազաթանդեղոս կծկտեցաւ քովը, բռնեց ձեռքը եւ ըսաւ ամենասրտապին շեշտով. «Արքայադուն, սոքի ելիր, եկուր: Արդէն բարի ուղիները քեզ ընդունեցան: Նոր օր մը կը ծաղի քեզի համար: Նոր Հաւարէնօ մը կը շողայ: Եկուր, ինծի հետեւ դէպի տուն, որպէսզի տաքնանք եւ խօսինք վրէժի եւ թաղի վրայ»: Տըրդատ սոքի ելաւ: Երկուքը, անխօս, կ'երթային դէպի Ազաթանդեղոսի բնակարանը: Ծարձատող ակութիւն մօտ նստած կը տաքնային, հաց կերան եւ տաք կաթ խմեցին: Մութ կարմիր սնդուսէ իր հանգստաւէտ բազկաթոռին յեցած, Ազաթանդեղոս իմացաւ Տըրդատին զլիտուն եկածները հօրը մահէն մինչեւ վերջին ժամանակները: Առանց դիմադիժները կնճռելու, մտիկ կ'ընէր Տըրդատին ըաց խոստովանութիւններուն: Թէ որքան ինկած էր իր Հաւարէնօն, թէ մոլորութիւններէ որքան աղտոտած էր մարմինն ու հոգին: Բարեկամը սրտածմլիկ կերպով կ'իմանար, թէ Աթենացիներուն որեւէ մոլորութիւնը օտար չէ մնացած Տըրդատին: Տակաւին քսանամեայ, բայց որքան տարիքոտ կ'երեւի: Ինչպէս մաշած, ինչպէս տկարացած սա փառաւոր կերպարանքը: Որքան անզօր իր նայուածքը, յօգնած, անյոյս համակերպութեամբ մը լեցուն, եւ որքան լուռ ու անխօս յայտնութիւններով թաթաւուց: «Ես կապուած եմ, չլթայակապ եմ, քակէ չլթաներս: Ես կորսուած եմ, փնտռէ զիս: Ես ինկած եմ, օղնէ որ կանգնիմ, Ազաթանդեղոս»: Կապոյտ կանանչ, լայն կիսադիժեր օղակի պէս կը շրջապատէին աչքերը: Տըրդատ ետեւ կրթնած էր: Ազաթանդեղոսի համար դժուար չեղաւ իմանալ Տըրդատէն, թէ ի՞նչ կ'ընէր, ո՛ւր ժամանակ կ'անցընէր, ինք կ'ամբողջացընէր Տըրդատին շրջանները, թէ գիշերները շուայտութեամբ կ'անցընէր, կէս օրին անկողինէն կ'ելլէր, թէ զինքը ասպնջականող Լի-կինիոսի դրամը կը վատնէր, առանց վստահ ըլլալու թէ պիտի կարենայ հատուցանել, թէ շատ դէժ կը վարուի Արսինէին եւ Խոսրովի-դուխտին հետ, խաբելով զանոնք, թէ կը ստէ, կը դողնայ, թէ անհոյ գտնուած է իր զարգացումին: Յետոյ — յանկարծ զլուխը վեր առնելով, շտկուելով, ահաւոր լըջութեամբ մը, Ազաթանդեղոս Տըրդատին նայելով, սա հարցումը բրաւ անոր. «Եւ — իշխան Տըրդատէս»: — Տըրդատ լարուած կը նայէր: — «Բրիսանո՞յժը»: Մութ կարմիրը շրպարուեցաւ արքայադունին երեսին վրայ: «Ուրկէ՞ց զիտես ամէն բան, ամէն բան իմ մասիս, Ազաթանդեղոս: Ես կը սարսափիմ քեզմէ: Մատնուած եմ»: — «Ո՛չ տակաւին, արքայադուն: Ո՛չ: Ի՞նչպէս: Միհրի հաղար աչքերը ու հաղար ականջները հոս չեն»: Երկուքն ալ խնդացին: Ազաթանդեղոս կրկին մեծ լըջութեամբ. «Իշխանդ Տըր-



դատէս, շատ անկեղծ եղար ինծի համար: Այնքան վստահութիւն ցոյց տուիր, ինծի արդէն — անգամ մըն ալ անկեղծ եղիր, բան մըն ալ խոստովանէ ինծի: Բրիտանոյշին հետ արդէն իսկ մեղանշած չե՞ս տակաւին»: Տրդատ ձայնեց ուրախութեամբ. «Ո՛չ, Աստուածները վկայ, ո՛չ Ազաթանդեղոս»: «Փառք լոյսին Աստուծոյ», աղաղակեց Ազաթանդեղոս, ոտքի ելլելով: «Եւ, եթէ հօրդ ուրիշ չհանդարտի — իշխանդ Տրդատէս — եթէ թաղաւորութիւնը եւ թաղը պահանջեն, որ —» ... «Բնաւ երբեք, բնաւ, լռէ, Ազաթանդեղոս: Կը փլցնես ամէն ինչ որ շինեցիր իմ մէջս, կ'առնես ինչ որ տուիր ինծի — ես կ'ատեմ քեզ, ես — ես — ես կը մեռնեմ քեզ, Ազաթանդեղոս, եթէ ուզես ձեռքէս յափշտակել Բրիտանոյշը», պոռաց Տրդատ, վեր ցատկելով եւ գնդացած կուսկներով Ազաթանդեղոսի առջեւ ցցուելով: Տրդատին կայծկլտուն աչքերուն կը հանդիպէին երկու յուշիկ շողով նայուածքներ, պաղարիւն, խոհական անդորրութեամբ օծուն, բարի եւ սիրալիր: Չայնն ալ նոյնպէս. «Աքիլլէս տուաւ Բրիտանոյշը եւ հրաժարեցաւ բարկութենէն երբ իր բանակը ջարդուեցաւ Հեկտորէն: Տրդատ պիտի գոհէ Բրիտանոյշը, եւ պիտի թողու հովիւի մը տղուն, երբ իր եւ իր հօրը թաղաւորութիւնը այնպէս ընել պահանջէ»: Տրդատ իր բարձրոցին վրայ ինկաւ յուսարեկ ու կը հռոպէր. «Չեմ կրնար»: — «Ուրեմն պէտք է զայն կին առնես: Թաղաւորութեան աւազանին եւ անոնց կիները արդարեւ պիտի զոյուանան եւ չյարաբերուին թաղուհի մը հետ, որ անծանօթ ծաղումով գերուհի մըն է: Նախանձ եւ անսիրելութիւն սկիզբէն պիտի խանդարեն խաղաղութիւնը: Եւ թէ եւ Բրիտանոյշ ձիրք ունենայ թաղաւորութեան թագուհին ըլլալու — աղուական դասակարգին բոլոր կիներուն եւ աղջիկներուն համարժէք ըլլալ — ասիկա դուն ինքնին պիտես, իշխան: Մէկ բան կայ որ կասկած չի վերցնէր. կամ Բրիտանոյշ թագուհի պիտի ըլլայ — կամ ազատ պիտի թողու: Այդ աղուոր աղջիկը ինչու բողբոջես — դուն, լոյսին կորսուած բայց նորէն գտնուած տրդան»: — «Ո՛չ», արտասանեց Տրդատ ամուր ձայնով. «Ան թագուհի պիտի ըլլայ»: Ազաթանդեղոս. «Որհնորձէ, իշխան: — Անդին Պիրէոնի ծովեզերքը կ'ըսէիր, թէ այլեւս չես կրնար հաւատալ: Ահուրա — Միհր — Անահիտ — ամէն ինչ քեզի երազի մը պէս է»: — «Անոյշ երազ մը», արձակեց ցաւով Տրդատ: Ուրեմն, Վաղարշապատի պալատը — մեհակներ — լիճը — ամէն ինչ երազ: Սպաննող դաշոյն մը — նետ մը — ասոնք ալ երազ... Տրդատ աչքերը գոցեց եւ օրօրեց բաշտ գլուխը: «Իրականութիւն», հաստատեց Ազաթանդեղոս: «Ահուրա — Միհր — Անահիտ — ոչ իրականութիւններ, ինչպէս կը դատես դուն եւ Ոսորովիդուխտ — նաեւ Չեւս, Ապողոն, Աթենաս, Պոսիդոն, ոչ բնաւ իրականութիւններ, ինչպէս Դիտիաս

պատկերացուցած է զանոնք: Բայց Աստուածութիւն մը — միակ, բարի, սուրբ Աստուած, լի լուսով ու կեանքով, որ ներկայ է ինծի, քեզի եւ ամէնուն, որ ամէն ինչ դիտէ եւ կ'իմանայ — մէկ Աստուածը — որուն ես կը հաւատամ»: Տրդատ խոստովանեցաւ. «Ես եւս չէի հաւատար այլեւս: Բայց քու վերջին տրամախօսութիւնդ Աթենասի չէնքին մէջ շահադրուեց դիս, պէտք է ըսեմ»: — «Իշխան Տրդատէս, պիտեմ, դուն հիմա կը զղաս դօրաւոր իղձ մը դէպի նոր, մաքուր կեանք մը: Սիրտիդ խորերէն կը ձգտես խաւարէն ի լոյս: Բարին լոյս է: Չարը խաւար է: Ահուրան անուանէ Աստուած լուսոյ: Բոլոր աստուածներուն անունները առնչութիւն ունին լոյսին հետ: Քու Միհրիդ ներքին կերպարանքին մէջ դիր ամէն ինչ որ բարի է, զեղեցիկ եւ ճշմարիտ, հաւատարմութիւնը, սէրը, անկեղծութիւնը, ուղղութիւնն ու պատուաւորութիւնը — այսպէս կը հաւատայիր դուն անոր, այսպէս աղօթեցիր անոր, երբ մանուկ էիր: Քու սիրտիդ մէջ կրկին ստեղծագործէ Միհրը, ուխտէ անոր, իր էութեան համաձայն կեանք վարել, իրրեւ սուրբ իտէալ մը, մաքուր, ճշմարիտ եւ հաւատարիմ, ինչպէս ան: Երեւակայէ խորհէ զայն քու մէջդ, քու շուրջդ, քու վերեւդ, ինչպէս օրուան լոյսը, եւ ջանա, Միհրի պաղափարին վրայ այս հաւատքով, ոտքի կանգնիլ, նոր կեանքին համար: Ես պիտի օգնեմ քեզի, իշխան: Թոյլ տուր օգնեմ»: «Այլեւս ինծի «իշխան» մի ըսեր», խնդրեց Տրդատ, հանդարտ ու խոհուն զարձած, «ինծի Տրդատ ըսէ, եւ բարեկամս եղիր, իմ բարի հրեշտակս: Ըսէ ինծի իմ թերութիւններս: Յորդոր կարգա ինծի: Հանդուրժէ, համբերող եղիր ինծի: Ես շատ չար եմ: Բայց կ'ուզեմ եւ կրնամ բարւոքիլ: Պիտի տեսնես»: — «Դուն քեզի համբերող եղիր, բարեկամս, ինչպէս ահա քու արտօնութեամբդ կ'անուանեմ քեզ, բարեկամ: Ոստովանեցար թէ դուն կապուած ես, շղթայակապ ես: Կը հաւատա՞ս, թէ դուն քեզն պիտի քակես այդ շղթաներդ»: — «Ինչո՞ւ չէ»: — «Փորձէ, Տրդատ ջանա՛: Անգամ մը կարգացի սա պատուական խօսքը. «Կա՛մք, ունի՛մ, այո՛, բայց բարին գործադրելու ատեն, չեմ գտներ կամքը»: — «Չեմ հասկնար ատիկա», յարեց Տրդատ: «Ես ուզածս կրնամ: Ասոր համար թաղաւոր պիտի ըլլամ: Կը հրամայեմ: Եւ կ'ուզեմ: Եւ ուզածս պէտք է կատարուի»: Տրդատ «պէտք է» ըսած ատենը ոտքը զարկաւ, այնպէս որ դետինը զրոգեցաւ:

Ազաթանդեղոս ելլելով դնաց դէպի պատուհանը: Այդը ծագած էր: Գիտնականին սենեակը լրջացած: Պատրոյցները առաւ ճըրպաններէն: Երկու բարեկամները դէմ դիմաց կեցած էին պատուհանին առջեւ լուռ: Ազաթանդեղոս խզեց լուսութիւնը: Տրդատի երկու ձեռքերը բռնեց: Ակնյայտնի տխրութեան մը նայուածքով մը, եւ գոգցես ահարեկ, կամաց մը ըսաւ Տրդատին. «Գիշերը անցաւ զնայ:

Բայց օրը ահա մօտ եկաւ: Այսպէս, մերկանանք խաւարին դործերը եւ հաղնինք լուսոյ զէնքերը»: — «Գեղեցիկ խօսք», յարեց Տրդատ: «Ո՞ւրիցէ կ»: — «Աս ալ տեղ մը կարդացած եմ, Տրդատ»: Ձեռքերնին արձակեցին: Տրդատ այդաչող փողոցներէն դնաց, կարծես Երազատես: «Օրը ահա մօտն է, եկաւ: Մերկանալ խաւարին դործերը: ... Հաղնիլ լուսոյ զէնքերը...»: Այսպէս իր նոր բարեկամին բառերը կը թնդային իր հիացկոտ սիրտին մէջ:

Առաւօտեան ժամը տասնին զարդացելոց եւ ուսանողներու րազմութիւն մը կը թափէր զէպի Արիսպազոս: Այսօր ամէն ատենէ աւելի բուռն, հօր խօսեցաւ Ազաթանդեղոս: Նիւթն էր Մարդկային կամքը: Տրդատ սակայն կը քնանար Լիկինեան զղեակին մէջ: Բրիտանոյ թաղուհի էր Երազին մէջ: Բայց Տրդատին անձանօթ պիտի չմնար այն տպաւորութիւնը զոր Ազաթանդեղոս այսօր ամէնուն վրայ է գործ դրած էր: Միւսնոյն շարթուն Ազաթանդեղոս երեւցաւ ուսանողական ակումբին մէջ իրիկունը, եւ վերջին անգամուան հիւրերը եւս դարձեալ ներկայ էին: Շատ շանցած փիճարանութիւնը իր լրիւ ընթացքին մէջ էր: Որովհետեւ Վալերիոս ակնարկած էր Ազաթանդեղոսի Արիսպազոսեան ճառին, եւ առաջարկած, որ այդ իրիկունը օգտագործեն իրենք ազատ կամ անազատ կամքին նիւթը փիճարանութեան ենթարկելու համար: Արիսպազոսի մէջ Ազաթանդեղոս մեծ ճարտարութեամբ եւ հանձարով ապացուցած էր, թէ մարդուն ազատ կամքը լոկ երեւակայութիւն է: Մարդ միշտ կը գործէ արտաքին տպաւորութիւններու համաձայն, բնազուտի, փափաքներու, հոգեբու, երկիւղի համաձայն: Մարդուն նկարագիրն ու խառնուածքը ծնողքէն եւ նախահայրերէն կը ժառանգուին: Իժիշկ Վալերիոս, Ապելլէս եւ ուրիշներ այս իրիկուն համամիտ եղան փիլիսոփային: Տրդատ եւ շատ մը երիտասարդներ ընդդիմախօսեցին Ազաթանդեղոսի, եւ երթալով աւելի ուժգին ու բարձր շեշտերով պաշտպանեցին կատարեալ, լրիւ ազատութիւնը: Մարդ իր ուզածը ազատօրէն կրնայ բնել: «Ուզած ատենը ոտքի կրնայ ելլել», ձայնեց Տրդատ անհամբեր, եւ ցատկեց, իրիւ տպացոյց իր ըսածին: «Ո՛չ, Տրդատ», ձայնեց Ազաթանդեղոս հանդարտօրէն, «դուն կը ցատկես, որովհետեւ ցուցնել կ'ուզես, թէ դուն կրնաս ցատկել: Բնազուտին կը հետեւի քու միտքդ տպացուցանելու համար: Այլպէս դուն հիմա ցատկած չէիր ըլլար»: Ամէնքն ալ խնդացին: Տրդատ զրդուեցաւ: «Դժոխքի շունին Կերրերոսին երեք զլուխներուն վրայ կ'երդնում, թէ վերջերս օրը հինգ զաւաթ պակաս խմեցի եւ տասը երշիկ պակաս կերայ — Լոնդինոս եւ Մարտիոս կրնան վկայել ըսածիս»: — Սրահը զզրդեցաւ ընդհանուր քրքիջն ուր ալ աւելի սաստկացաւ, երբ բժիշկ Վալերիոս ձայնեց Տրդատին. «Նորէն սխալ, իշխան: Սովորական մահականա-

ցուի համար անկարելի կողոզ քու սնունդդ պակասեցուցեր եւ դայլերուն համար սովորական չափի մը, որովհետեւ եւ քեզի դուշակեցի որ դուն քիչ ատենէն պիտի մեռնիս ուտելէդ — հոս ուրեմն ո՞ւր է ազատ կամքը»: Տրդատ բարկութենէն խնդաց բարձր ձայնով, կըռնակը տուաւ բարձին, եւ խնդալով փոփոխակի Երեմն ձախ, երբեմն աջ ծունկը առաջ նետելով: Սրահին ամէն կողմը իր հասցէին բուռն նետուած կատակարանութիւններուն թիրախ եղաւ — ուղեւժով թէ չուղեւժով առաւօտները կը քնանայ, Բրիտանոյը կը համբուրէ, ուղեւժով թէ չուղեւժով: Ծրեաները կը շարքէ եւ դանազան փոշիներ կը քսէ, ուղեւժով թէ չուղեւժով: Եւ ճիշտ էր որ այս իրիկուն Տրդատ հրաշալի նարդոս կը հոտէր զարձեալ: Եւ իր երեսը կը շար կարծես փարզակարմիր մոմէ ըլլար: Ազաթանդեղոս նախատեսած էր, թէ Տրդատ այդ ձեւով պիտի երեւնար: Փոքրիկ տուփի մը մէջ փիլիսոփան քանի մը խոշոր աղբանոցի ճանճեր բերած էր հետը: Եւ կամացուկ մը պարեղօտին տակէն հանելով թոցուցած էր փիճարանութեան տաք բոյլներուն, երբ ոչ ոք ուշադրութիւն կ'ընէր: Ժանճերը սկսան տղղալ թրթռալ սրահին մէջ բազմաձայն նուազածութեամբ: Ազաթանդեղոս եւս անպարտ անմեղ նայուածքներով ճանճերուն կը հետեւէր: Եւ ճիշտ ատենին: Անոնք զայցին դտան անուշահոտութեան աղբիւրը: Արդէն սա կամ նա կողմը ձեռքերը սկսան գործի, մէկը երեսը, ուրիշ մը մազերը կը շփէր, ճանճ կը վանէր, կամ սեղանին վրայ կը վարնուէին ափեր, ուրիշ մըն ալ իր մօտը նստողին ծոծրակին կը փակցնէր ճանճ վանելու համար: Բայց բուն զոհը Տրդատն էր: Անոնք ամէնքը — աղբանոցի ճանճեր — հաւաքուեցան անոր վրայ: Նախ հանդարտօրէն, ձեռքի քաղաքալար շարժումով, յետոյ, մեղմօրէն, յետոյ բարկութեամբ, մէկը միւսին ետեւէն կը զարնէր, հսկայի ձեռքը ի գուր կը խարազանէր երեսը, սկսաւ հայհուցներուն, վեր ցատկեց, ձեռքի զինիի բաժակով կը վանէր, մութ կարմիր զինին վրան թափեց, եւ իր ուսանող ընկերներուն քրքիջն ըլլորովին զրդուած սկսաւ կանոնաւոր որսորդութիւն մը ճանճերուն ետեւէն: Բարեկամները քովէն փախան: Բարձրուն, աթոռներուն, սեղաններուն վրայ, առաստաղին կողմը, դուռին մօտ, պատերուն երկայնքը կը փոխադրուէր, փոփոխակի, ճանճորսութեան ճակատամարտը Տրդատին միջոցաւ, մազերը հովին, դաշոյնն ալ ձեռքը: Ամբողջ կէս ժամ: Երեք հատ ճրմեց ձեռքովը պատին վրայ, երեք հատ ալ մատներուն մէջտեղը: Ուրիշներ զաշոյնին ծայրը անցըած հետուն աշտանակի մը բոցին վերեւ, կրակի երկարատեւ անյութ մահուան մը նշաւակ: Հաղիւ թէ անորբութիւնը վերահաստատուած էր, իմացուեցաւ բժիշկ Վալերիոսի ծաղրարանող ձայնը: «Տրդատ, ազատ կամքովդ շարժարեցիք ճանճերը, թէ բարկութեան

«Նշումին տակ» : Տրդատ խնդարով գաւաթ մը պարպեց Վալերիոսին կեանքին . «Գլխաւորը յաջողութիւնն է» :

Երկար ատենէ ի վեր կատակը մոռցուած էր նոյն նիւթին շուրջ վիճարանութեան լրջութեան առթիւ : Տրդատ չէր ուզեր հաւատալ, թէ մարդը իր սեփական կամքովը չի գործեր : Ագաթանդեղոս նորէն կամացուկ մը պարեզօտը բռնեց եւ կարճ լար մը առաջ բերաւ որուն վրայ իրեն միայն ծանօթ կոճակ մը կար :



«Բայց երթալով կը վատթարանար Տրդատի վարմունքը» : Այսպէս կ'ըսէր Արսինէ Խոսրովիդուխտին, հառաչելով : «Ահրիման բոլոր ողինները մէջտեղ հանած է, մեր Տրդատին հոգին խաւարին մէջ քաշելու համար» : Խոսրովիդուխտ կը մխիթարէր Արսինէն : «Բայց կը հաւատամ, որ նոր բարեկամը աղքեցութիւն ունի անոր վրայ : Ագաթանդեղոս նկատողութեան արժանի մարդ մըն էր : Չեմ գիտեր ինչու, որքան տեսնեմ եւ խօսիմ իրեն հետ, ինծի... չեմ գիտեր ինչպէս» : — «Խոսրովիդուխտ», եկաւ զգուշարար Արսինէի շարաճճի դարձած շրթունքներէն եւ աչքերէն ալ կրակ կը տեղար : «Միտքէդ ի՞նչ կ'անցնի, Արսինէ» : — Բայց Խոսրովիդուխտ անոյ՛ մը կարմրեցաւ : «Ո՛չ, ո՛չ» : — «Այո՛, այո՛» , խնդաց Արսինէ, «բայց Վալերիոս խեղճը» : — «Դուն, սրբազան Մովսէսը երկար ատենէ ի վեր չվճռեցիր, չվճռեց, թէ արքայազուտը մը չի կրնար ամուսին ունենալ բժիշկ մը : Բժիշկը անսուրբ է եւ Վալերիոս վար սերունդն է : — Ագաթանդեղոս իշխան մըն է, կ'ըսէր քեզի, բարձր սերունդ է : Պաւղա պատմած է ինծի, վերջերս ուրիշներու հետ եպիսկոպոսին մօտ է եղեր : Երկար ատեն դաւիթի սրահին մէջ անոր են սպասեր : Վերջապէս, մթնշաղին, բարձր, նրբաւարտ մարդ մը, բոլորովին ծածկուած վերարկուով եւ գլխանոցով, եպիսկոպոսին խօսարանէն դուրս կուգայ : Պաւղա օտարականին դէմքը հազիւ բոկէ մը կը տեսնէ : Ծեփ ճերմակ եղեր է : Աչքերուն շուրջ սաստիկ կարմիր : Ագաթանդեղոսը ըլլալու է ապահովարար : Եպիսկոպոսը ամբողջ օրը իրեն քով վար դրեր է դայն : Այս մասին բան մը չէ խօսեր : Տխուր, ծանրակշիռ դժբախտութիւն մը պէտք է պատահած ըլլայ անոր : Զինքը մօտէն ճանչցողներուն կարծիքը այս է : Ինչ աղքեցութիւն, ոյժ անոր աչքերուն մէջ : Օ, օ, Մովսէսին բոլորովին տարբեր : Այնքան մաքուր : Ծիշտ ինչպէս քրիստոնեաները կ'երեւան : Խորհէ, քաղաքին մէջ շատեր կը հաւատան, թէ ան քրիստոնեայ է» : — «Լուռ կեցիր, անխելք», դէմքը խոթոտեց Արսինէ, «Գիտես որ ես հոս ամէնէն շատ կը վստահիմ ձերուկ իշխանին» : — «Օ, Ագաթանդեղոս, ազատէ Տրդատը», ըսաւ

Խոսրովիդուխտ, աղաչելու ձեւով, խորհուրդներու մէջ ընկողմած : Այս ամէնը Արսինէի անկողինին վրայ խօսուեցաւ : Խոսրովիդուխտ, իր ամէնօրեայ սովորութեան հետեւելով, դուրս ելլելէ առաջ, կ'երթար Արսինէի անկողինը կը ցատկէր : Անոնց մէկ անկողինի մէջ զիրար զգուշը, համբուրելը, գրկելը, իրարու հետ կատակելը եւ կըրկին համբուրուիլը մէկ կողմէն, միւս կողմէն ալ ճիշտ մօտը խորհացող Տրդատին հանած զանազան ձայները իրար կուղային : Երեկոյեան, մթնշաղին մէջ դարձեալ սալալատակին վրայ աջ ու ձախ անցորդներ կ'անցնէին կը դառնային : Լուսինը երբ կը բարձրանար եւ Մարտի կիսախալ գիշերուան սեփական տրամադրութիւնը կը հոսէր տանիքներուն, պարտէզներուն եւ դաշտերուն վրայ, Տրդատ իշխանը կը կենար Ագրիանեան Դրան առջեւ միւս միւսակ Իլիսոսի եղերքը եւ իրր թէ մէկու մը կը սպասէր : Աին ի վեր, ափն ի վար կը վաղէր, նորէն կը դառնար քաղաքին կողմը կը նայէր, ոտքը գետինը կը դարնէր եւ բարձրաձայն հայհուհներ կ'արձակէր : Վերարկուով եւ գլխանոցով կերպարանք մը վերջապէս երեւցաւ հեռուէն : Աւելի մօտեցաւ : «Ա՞ն է արդեօք» : Տրդատ ճակատը կնճռոտեց եւ դուրսն ու կուրծքը ծոկեց : «Ուրիշ ո՞վ կրնայ ըլլալ : — Վերջապէս, վերջապէս — հիանալի գեղեցկութեամբ դանձ մը, Ափրոդիտէի մէկ հովիւր : Աստուածապղին Աւկուստուլա» : Տրդատ սկսաւ պարել, դէպ առաջ ցատկելով, ծունկերը գետին դպցնելով, թեւերը չափով վեր ու վար տատանելով : Իրարու ետեւէ զանազան փաղաքշական անուններ կարծեցեալ Բրիսանոյչին հանդէպ : Սիրավազը մը : Լայնատարած բաղուններով, օն անդը, փոթորկայոյզ դէպի կերպարանքը : Երկ մարդու խնդարու ձայն մը հեռուն կը թնդայ : Կարծես ջրասոյզ կեցած էր հոն Տրդատ, խոնարհեցնելով դուրսն ու ձեռքեր, եւ երկար ատեն ոչ մէկ բառ : Դեւերու ժամն էր : Ամօթ եւ ատելութիւն, բանականութիւն եւ կին կը մրցէին անոր կամքին շուրջ : Ագաթանդեղոս կը զգար, թէ մեծ վտանգի մը կողմը դացած է : Վտանգը մեծ էր : Մոլեղնեցաւ Տրդատ : Առանց իր կամքին կուսիները դնդացան : Ամէն ինչ կը դողար իրեն շուրջը : «Ուրախութիւն աւրող», կը շնչէր կերկերեալ : «Ո՞ւրիշ գիտես իմ դիտաւորութիւնս» : — «Մի՛հրը հազար ահանջ, հազար աչք ունի, Տրդատ» : Կուսիի հարուած մը : Ագաթանդեղոսի դուրսը ցնցուեցաւ : Արիւնը կը վաղէր քիթէն բերնէն : Անտրրտունջ ետ դարձաւ : Երկրորդ հարուած մը ծոծրակին եւ Ագաթանդեղոս անդղայ ինկաւ գետին : Զուրելի հայհուցութիւն մը, կարճ, սարսափազողու, անեղանակ քրքիջ մը : Տրդատ ինք իրեն վրայ դարձաւ դարհուրած : «Կրակին վրայ ճանճ տապկողը, կրնայ մարդիկն ալ շարչարել», ըսած էր ան : Երկար ատեն Տրդատ վաղեց դիւահարի պէս : Բոլորտիքը, չորս կողմ : Միշտ դարձեալ, իբրեւ պարտաւոր-

ևալ, ետ դառնալով անդիտակից բարեկամին մօտ: Բրիսանոյշ յիշո-  
ղութեանը եկաւ դարձեալ: Դարձեալ ատելութիւն: Ան է յանցաւորը,  
աճա հոս: — Աքացի մը: Ազգաթանդեղոսի հոնդիւնը: Բրիսանոյշ չէր  
զար: Ո՞վ մատնած է յատակազիւր: «Բրիսանոնները», կը փոփան  
դեւերը, եւ նոր ատելութիւն մը կը զալարի ներսիզին: Բայց բանա-  
կանութիւնն ալ կը վերադառնայ: «Հատա եթէ մեռնի՞ր»: Տրդատ իս-  
կոյն դէպի Ազգաթանդեղոս կը նետուի: Վալերիոսին կողմէ տեսածն ու  
զիտցածը կը դործածէ: Իլիսոս կը կարմրի բարեկամին արիւնէն:  
Զգայութիւնը տակաւ առ տակաւ կուզայ: Տրդատ փախչիլ կ'ուզէ:  
Զի կրնար այլեւս թոթովել մահատիւյ ձեռքը որ իրեն կը կառչի: Զըզ-  
ջում: Ամօթ: Լոյսի ողինները կ'երգեն: Տրդատ տակնուվրայ եղած  
կը կենայ բարեկամին մօտ եւ իր սեփական պարեզօտովը կը ծածկէ  
զայն: Ո՞չ մէկ օղնութեան ազազակ: Ո՞չ ոք պէտք է բան մը իմանայ:  
Ազգաթանդեղոսի սէրը ոյժ կուտայ Տրդատին: Ներուժի, յանցանքի,  
կորսուած ըլլալու մասին ոչ մէկ բառ կ'ուզէ լսել: Տրդատի խոստո-  
վանութիւնը միայն կը կենդանացնէ եւ կ'ուրախացնէ մահահանգոյն  
դէմքով Ազգաթանդեղոսը, թէ Տրդատ այլեւս կը հրաժարի սեփական  
կամքին եւ յամառութեան եւ ինքնափրկութեան հաւատքէն, եւ թէ  
առանց Ազգաթանդեղոսի երեւնալուն Տրդատ այս զիշեր պիտի խզէր  
Բրիսանոյշը խնայելու, այսինքն անոր հետ իր յարաբերութիւնը  
ծայր աստիճանի շտանելու համար բրած երգումը: Ազգաթանդեղոս  
փորձեց ոտքի ելլել: Վար ինկաւ: Տրդատին թեւը մտաւ, բայց նո-  
րէն սահեցաւ գետինը: Տրդատ զայն կանակը առնելով, արիւն քրտինք  
մանելով, տուն տարաւ: Տունին գերին քունէն արթնցաւ վարը ոտ-  
նածայն լսելով: Հիմա հանդէպաւ Ազգաթանդեղոս իր ննջասենեակը  
անկողինին վրայ, եւ իր սենեցած ծանօթութիւնները բաւական ե-  
զան, եւ հարկ չեղաւ որ Տրդատ բժիշկ կանչէր: Երկու բարեկամները  
մինչեւ առտու մթնշաղին իրարու հետ խօսեցան: Հիմա զիտցաւ Տրդ-  
ատ, թէ ինչպէս կը հասկնայ Ազգաթանդեղոս կամքին ազատութիւ-  
նը: Մարդը ոչ մէկ ազատութիւն ունի, բացի անկէց, որ կրնայ ըն-  
տրութիւն ընել լոյսին եւ խաւարին միջեւ: Բարի եւ չար ողիններուն  
միջեւ: Մենք պէտք է ընենք այն բանը որուն կը մղեն մեզ լոյսին  
բարի ողինները, կամ չար ողիններուն մղումին համաձայն: Հլու է մեր  
կեանքը, ազատ կամ անազատ: Բնազգումներ կը մղեն մեզ վեր կամ  
վար, ձախէն կամ աջէն: Մէկ հնարաւորութիւն ունինք միայն: Կըր-  
նանք սպասել զործելու համար, մինչեւ որ փորձենք ողինները, յետոյ  
կը հակամիտենք մեր կամքը վեր կամ վար, այս կամ այն կողմը, եւ  
անմիջապէս կամքը կրկին կը մղուի, եւ մարդը, առանց կամքի, պէտք  
է քալէ երթայ բարձրագոյն լոյսին մէջ կամ խորագոյն խաւարին մէջ:

Ամառնամէջին՝ Աթէնքի մէջ տօնուեցաւ Ապոլոնի տօնը: Վե-  
րագարձ մը եղաւ հնագոյն, հեթանոսական սովորութիւններուն:  
Մատաղատի զոյգ մը պիտի քուէր ամէնուն մեղքերը, մարմինը,  
վիզը, թուերը, ձեռքերը եւ ստքերը կապուած: Բոյր ժողովուրդը եւ  
քուրմերը կը մասնակցէին աղօթքներով եւ երգերով, Աթէնքի փո-  
ղոցներուն մէջէն, սկսեալ Պիրէոնի փողոցէն մինչեւ ծովը, եւ ծովէն  
ալ նաւերով մինչեւ խորը: Այս հին կրօնական սովորութիւնը զարե-  
րու ընթացքին ժողովրդային կատակներու վերածուեցաւ բիրտ, անո-  
պայ ձեւերով ու ծաղրանքներով: Մատաղատի զոյգին տեղ ծեր,  
խեղճ մարդիկ ընտրուեցան, այդ առիթով լաւ հագուած, լաւ կերած,  
զրամ ալ կը վճարէին: Ամէնէն վերջը ծովը կը նետէին զանոնք, բայց  
բարբախտաբար ճիշտ ժամանակին ջուրէն դուրս կը քաշէին երկար  
կեռերով, ձուկ բռնածի պէս: Ո՞վ էր այս զոյգը՝ որ անձնատուր  
կ'ըլլար այդպիսի բանի մը՝ ասիկա միշտ զազանիք մը կը մնար: Ո՞վ  
կրնար ըլլալ այն ամօլը՝ որ այնքան յիմար եւ այդպիսի արարողու-  
թեան մը այնքան սիրահար եղած ըլլար, որ թոյլ տար իրեն ծերուկ  
ըլլալ ճերմակ կեղծամներով, դունաւոր նեղուկ վերարկուններու մէջ  
փաթթուիլ, այնպէս որ բոլոր անդամները երեւան ճիշտ բնականին  
մէջ եղածին պէս, ծաղրանքի առարկայ մեծին, պղտիկին, որոնք ոչ  
միայն ծաղիկ կը նետէին այդ ամօլին վրայ, այլ նաեւ քար, մինչեւ  
իսկ քակոր, եւ, բոլոր այս ամէնուն վրայ, պարտաւորուած են ցատ-  
կել ցատկոտեւ, տրոփել, դոփել գետինը, զիտողներու հաճոյք պատ-  
ճառելու համար: Հակառակ այս անախորժութիւններուն՝ այս խայ-  
տառակ ցոյցին անպակաս կ'ըլլան նաեւ քուրմեր, եւ նոյնիսկ հին տօ-  
նական օրհներգութիւններ, ի քառութիւն մեղաց եւ ի հաշտութիւն  
աստուածոց, որպէս թէ այդ զոյգը կը տատապի յանուն եւ ի զիմաց  
բոլոր ժողովուրդին: Կոշտ, նողկայի, տղեղ բարեկենդանական խայ-  
տառակութիւն մը, որ կը վերջանար զոյգին եւ ժողովուրդին մօռնա-  
ձայն ծափածայն ունտմներուն մէջ, մինչ ջուր կը թափուէր հեղեղ-  
ներով եւ, ի վերջոյ մերկանդամ ամօլը վայրեններով մուտքով կը  
թաւալէր ծովուն մէջ: Պահ մը լարուած լուսութիւն: Մեռելական լու-  
թիւն ծովափին վրայ, երբ սպասուածէն աւելի երկար ատեն ծովա-  
սոյգ ամօլը մէջտեղ չէր ելլեր, եւ աճա սպասուած տեղէն տարբեր  
տեղ մը մէջտեղ կուզային, նորէն կ'ընկզմէին եւ վերջապէս դժուա-  
րութեամբ միայն կեռերով ձողերով կարելի կ'ըլլար արտակիտել:  
Արդէն քաղաքին մէջ թափօրին միջոցին՝ ժողովուրդին շարքերէն սա  
ազազակը կը լսուէր. «Հայ իշխանը»: — «Տրդատ»: — «Բրիսանոյշ»:  
Հիմա Պիրէոնի մէջ հանրաձայնօթ զաղտնիք մըն էր այս: Գաղտնի

լրտեսները երկար առանձն ի վեր ժողովուրդին մէջ կը պտըտէին սա լուրը տարածելով, թէ Բրիտանոյշ եւ Տրդատ երկուքն ալ Լիլիինեան զղեակին մէջ չեն:

Գիշեր ուշ առան էր որ Տրդատ, աղուոր հազուած, մազերը յարդարուած, շատ լուրջ ու պաղարիւն վերապահուածով մը Աթենասի Սրահին մէջ իր ուսումնակից բնակերներուն կողմէ բնդունուեցաւ: Ազգաթանգեղոս զունատ եւ տխուր էր աղանդերի միջոցին: Իր բանախօսութիւնը յայտնապէս զգացուած էր Տրդատի հարուածէն: Դադարներ, լեզուի փոքր սխալներ, դանդաղութիւններ արտասանութեան միջոցին, մինչեւ իսկ խօսելու սխալներ, սիրտին յանկարծական թերացումը, կարմիր ու ճերմակ դոյներու անակնկալ փոխանակութիւնը զէմքի վրայ — բանախօսը ի՞նչ ունէր արդեօք: «Ազգաթանգեղոս հիւանդ է»: — «Գլխուն ի՞նչ փորձանք եկած է»: Ամբողջ քաղաքը այս մասին կը խօսէր: Եւ սակայն իր անձին ու խօսքերուն տպաւորութիւնը այսօր աւելի մեծ եղաւ, այս երեւոյթին հետեւանքով: Ունկնդիրներու աւելի խուռն բազմութիւն մը: Այս իրիկուն սրբահին մէջ երբ կը բարեւէր Տրդատին, իր ձեռքը դեփ դեղին էր: Աչքերուն եւ դիմապիծերուն մէջ խոր մտատանջութիւն կար: Լայն, աղուոր, տմոյն բերին շուրջ կը խաղար խորունկ թախիծ մը, շըրթունքներուն ձերմակ, նեղ գիծերը դանդաղօրէն կը բացուէին: «Տրդատ, լսեցի որ քու պետինիդ սրուակը երէկ իրիկուն ջուրը ինկեր է»: Խնդացող չեղաւ: Ընդունելութեան ընդհանուր պաղութիւնը զրգուած էր Տրդատը: «Սիրելի Տրդատ, այնպիսի բան մը ըրած ես որ խորունկ նշանակութիւն ունի, եւ դո՛ւ մը կատարած, որուն դուն ընդունակ կամ կարող չէիր, թերեւս ոչ մէկը մեղմէ, այդպիսի զոհողութիւն մը ընելու»: — «Ի՞նչ է եղեր»: — «Ներկայացուցչական կամ փոխանորդարար տառապանք»: — «Խենթութիւն», ձայնեց Տրդատ հեղնական ծիծաղով, որուն մասնակցեցան, ոյժ տուին շատ մը ուսումնակիցներ: «Ասով ի՞նչ կ'ուղես հասկցնել, Ազգաթանգեղոս»: — «Մէն մի մարդու պարտականութիւնը՝ իր ընկերին համար որեւէ բանով մը վշտակրելու, վշտակցելու»: — «Ասիկա բնաւ պարտականութիւն չի կրնար ըլլալ»: — «Ո՞վ պիտի ուզէր ընել դայն»: — «Ո՞վ կարող է դայն ընելու»: — «Ասիկա մարդուն բոլոր բնութեան հակառակ է»: — «Մարդ իրեն յատուկ, սեփական ցաւն ու տառապանքը կ'ատէ եւ կը փախչի անկէց, եւ սակայն պարտականութիւն կը համարի եղբի իրեն վրայ առնելու, ստանձնելու ուրիշին, օտարին ցաւերը, օ՛»: Ահա այսպէս կը թնդային ընդդիմախօսութիւնները Ազգաթանգեղոսի հասցէին: Ազգաթանգեղոս անվրդով ու անմոլոր հանդարտութեամբ շարունակեց: «Փոխանորդարար տառապիլ, արդէն ամէն մարդ կ'ընէ ասիկա, առանց գիտնալու: Աշխարհը աշխարհ ըլլալէն

ի վեր, ամէն ինչ ենթարկուած է սա օրէնքին, թէ էակ մը ուրիշ էակի մը համար կը վշտակրի, կամայ ակամայ: Նորատունկը կը մեռնի հպարտ ծառերուն շուքին տակ, եւ կը պարտաւորուի անոնց տեղ սնունդ եւ լոյս տալ, մինչեւ որ անոնք ալ իրենց կարգին իննան մարդուն տապարին տակ: Մոյուն եւ օղին եւ անտառին եւ դաշտին մէջ պղտիկ անասունը պարտաւորուած է կեր ըլլալ մեծին: Անասունին իրաւունքին շափը իր սյծն է: Վալերիոս պիտի կրնար բսել մեղի, թէ մայրերը ինչ ցաւեր կը քաշեն, մինչեւ որ տղան ծնի, ինչպէս յաճախ կը մեռնին՝ մինչդեռ իրենք կեանք կուտան տղուն: Ինչեր կը քաշեն դերիները, գիւղացիները, կիները մեղի համար — այրեր, հարուստներ, գիտնականներ, արուեստագետներ, ինչեր կը քաշեն գիտնորները, նաւաստիները: Տեսէք, ամբողջ կեանքին բոլոր խաւերուն մէջ ահաւոր օրէնք մը կը գործէ: Փոխանորդարար կամ ներկայացուցչական ցաւը, վիշտը, տառապանքը: Եթէ մէկը առողջ է, մէկը պէտք է անոր համար հիւանդ ըլլայ: մէն մի գուարթ, երջանիկ եղողին համար մէկը պէտք է տխրի, մէն մի հարուստի համար պէտք է մէկը աղքատ, մէն մի յարգուածի համար մէկը պէտք է անարդուի, մէն մի ողջի համար մէկը պէտք է մեռնի: Կեանքը ուրիշ կերպով չի կրնար գոյանալ, եթէ մին միւսներուն համար չվշտակրի: Ասիկա ամենամեծ մասամբ յանգէտս կը պատահի: Երջանիկ ամենամեծ մասամբ չի գիտեր, թէ ուրիշ մը իր երջանկութեան համար կը վշտակրի, գժրախտը չի գիտեր թէ ո՞ր բախտաւորին համար կը վշտակրի: Անոնք իրարու մօտ կամ ծանօթ ըլլալու պէտք չունին: Կրնան աշխարհի ծայրերը իսկ բնակիլ, ծովով իրարմէ բաժնուած ըլլալ, եւ սակայն օրէնքը օրէնք է — իրարու համար կը վշտակրին, կը տառապին: Բայց ո՞չ թէ յանգէտս — գիտնալով պէտք է իրարու համար վշտակրինք, կամովին, զոհունակ: Որչափ աւելի բան իմանանք երկրին մարդոց մասին, անոնց աշխատութեան, անոնց ցաւերուն մասին, այսինքն որքան փորձառու ըլլանք, որքան աւելի որ անոնք մօտը դան վաճառականութեան եւ հարդարակցութեան միջոցներով, այնքան աւելի պարտաւորուած ենք իրարու եղբայր ըլլալ: Աս կը վարդապետեն մեզի ստոյիկեանները, թէ բոլոր մարդիկ եղբայր են, եւ բոլոր աշխարհ հայրենիք մըն է, եւ Աստուածութիւնը ամէնուն հայրն է: Ահապիտակաւ տառապանք մը կը պատէ կը պաշարէ մեզ ամէնքս հակայողոր ուռկանի մը, ցանցի մը պէս: Ո՛չ ոք կը պրծի: Իւրաքանչիւրին համար կուզայ իր ժամը ուրիշներուն համար վշտակրելու: Բայց տեսէք, բարեկամներ, ես բսել կ'ուղեմ նախախնամութեան կամքը այն է որ ամէնքը գիտնալով, ո՞չ թէ յանգէտս, տառապին փոխանորդարար: Իւրաքանչիւր ոք պէտք է ուրախութեամբ աշխատի, եւ նաեւ պէտք է աշխատի ը-

նել այն մասը որ իր բնկերը այլևս կարող չէ կատարելու: Իւրաքանչիւրը պէտք է ամէնուն փրկութեանը, առողջութեանը զոհ ընդն առնելու իր ժամանակէն, ուժէն, ուրախութենէն և փափաքներէն, իր իրաւունքէն, իր սպասութենէն: Եւ ո՞վ որ ճակատագրին ձեռքով, այսինքն դժբախտութեամբ, հիւանդութեամբ կամ ծերութեամբ այլևս չի կրնար մասնակցիլ կեանքի պայքարին, այնպիսին պէտք է ատանց քաշուելու ատանց փախնալու սպրիլ գործարներուն աշխատութեամբ»: Տրդատին և իր բնկերներուն ընդհանուր և հետզհետէ բարձրագոյն բնոյզիմարանութեան մէջ Ազգայնական շարունակեց, ձայնը աւելի բարձրացնելով, «խմատունները, բարիները, մաքուրները, ճշմարտախօսները, բարեպաշտ աստուածափախները, արդարակորովները — ի՞նչ վարդապետած են ամէն ժամանակներու մէջ, ի՞նչ բրած են: Վարդապետած են վշտակրիլ փոխանորդարար: Եւ ուր որ արդիւուեցան, հայածուեցան ու սպաննուեցան, կրեցին մահը ուրախութեամբ, պայքարին մէջ ինկան, կամ ատանց պայքարի և սուրի ինկան իրենց վարդապետութեան և քարոզութեան լուս, անմոռն ժառանգ մէջ: Այնուհետեւ մարդիկ հաւատացին անոնց և շրտին այլևս թէ այսինչը կամ այնինչը կը խօսի և կը դործէ միմիայն վարձքի, պատիւի, անձնական ազդեցութեան համար: — Անոնք իրենց արիւնք տուին, և հետեւարար մարդիկ հաւատացին անոնց: Անոնց սուրբ կենցաղէն յուզուած հաւատացին ճշմարտութեան, ապաշխարեցին և անոնց քարոզութեան և տիպարին համեմատ դործեցին: Այսպէս կ'ըսէ Պրոֆեսոր արդար մարդոց համար: Այսպէս մեռաւ Ազգայնականի գուտարը Իրիկեանի: Այսպէս Սոկրատէս: Այսպէս քրիստոնեաներուն Քրիստոսը, այս է պատճառը որ այնքան հալածանքներու ի հեճուկս, արմատախիլ չեղան, այդ քրիստոնեաներ»: — «Մարտնչացիք մը, ապստամբ մը, ցնորած մը այդ Քրիստոսը որ բրածին պէս այ քաշեց», պրոֆեսոր Տրդատ կատարարար: «Հաւատքի դործ, բարեկամ», հանդարտեցուց Ազգայնականը, «իրողութիւն է որ հիմա այնքան հայածանքներէ վերջ մէկ միլիոն մարդիկ այդ Քրիստոսը կը յարգեն իբրև իրենց թաղաւորը, և պատրաստ են ամէն վայրկեան թողուլ անոր համար մարմին ու կեանք»: — «Կարդ մը ապուշներ», արտասաց Տրդատ: Ազգայնականը շարունակեց, անվրդով: «Եւ արդ, բարեկամներ, ներքին մղում մը կը դգամ դարձեալ ձեզի առաջարկութիւն մը ընելու: Արդէն անգամ մը ձեր ձեռքը ինծի տուիք ուխտելու համար որ դաշնակցութիւն մը կազմենք: Այն ատեն քիչ էինք երբ կնքեցինք դաշինքը, լուսոյ դաշինքը: Դուք լոյս ներդրածեցիք Աթէնքի մէջ: Գիտեմ: Հիմա կ'առաջարկեմ: Կը շարունակենք քայլ յառաջ, միշտ յառաջ, միշտ ի վեր, ի լոյս: Լոյսի դաշնակցութեան մէջ եղող իւրաքանչիւր ոք թող կամովին տառապի

բնկեր մարդոց համար և ստանձնէ տառապանքը փոխանորդարար: Փոխանորդարար գիտութեամբ և գիտաւորութեամբ: Թող փնտաւ հիւանդները կամ սպառնները կամ սպաւորները, անկեանները և մուրթեան մէջ թաթխուածները, թող խաւարին թաղաւորութեան մէջ մտնէ և գիշերուան Իշխանին ձեռքէն թող խիլ անոր զոհերը — թող ամէն բանի մէջ խօսի ճշմարտութիւնը, թող գործէ կատարեալ պատուաւորութեամբ և անկեղծութեամբ և ուղղութեամբ, և թող կրէ ստախօսներուն, անուղղաններուն, ժլատներուն և ապահանջներուն ատելութիւնը: Թող գաւառի գինքը ամէն ուրեք իբրև ախոյեան լուսոյ — և թող կրէ ատելութիւնն ու մահը ուրախութեամբ: Թող չեթալ այլևս որեւէ կրկէս, որ կենդանիներ և մարդիկ կը գրգռուին կրուելու ու մրցելու: Թող ճամանակցի որեւէ մենամարտի: Ոչ մէկ զէնքի: Թող ճամանակցի բռնութեան, պատերազմի, գիմարարութեան — տառապիլ, տառապիլ, տառապիլ, այս թող ըլլայ իր յաղթութիւնը: Քաղցրութիւն, հեղուութիւն, համբերութիւն, ներողութիւն թող ըլլան իր զէնքերը: — Ով եղբայրներ, կը դուշակեմ ձեր կեանքը, կը զոհեմ թէ ինչպէս պիտի ըլլաք, հեռուէն կը տեսնէք լոյսին թաղաւորութիւնը որ կը շողայ երկինքին շողին մէջ: Կը լսէ՞ք, ահա կը ձայնեն, կ'երկեն, կը հնչեն: Սաղաղութիւն, խաղաղութիւն երկրի վրայ: Տառապանքը խաղաղութիւն կը ստեղծէ: Տառապանքը փրկութիւն կը բերէ: Տառապանքը դործ է, ոյժ է, զօրութիւն, յաղթութիւն — Ո՞վ մտաւ ներս:

Այն առաջին երեքն զատ քանի մը հոգի ալ եկան: Եւ միւսները ետեւ մնացին: Տրդատ երկար ատենէ ի վեր պատուհանէն վար իջնելով, կապելան գացած նստած էր: Առաւօտը կը ծագէր, երբ Ազգայնականը հաւատարիմները իր ձեռքերուն մէջ ուխտեցին, թէ կ'ուզէին իբրև ախոյեան լուսոյ ուրախութեամբ գիմարել բոնութեան և որեւէ ուժի, որ հոգեւոր ու մտաւոր չէ, և յօժարակամ օգնել որ լոյսը յաղթէ խաւարին: Ազգայնականը լոյսի իր բարեկամներէն առաջին երեքն բաւ իր բնակարանին առջև. «Գիտէ՞ք, ո՞ր կէտ կ'անենք փոխադարձարար տառապանքի, շարժարանքի գաղափարը: Միասին ըսին, խորապաշտ. «Գողգոթայէն»:

ԳԼՈՒԽ ԺԵ.

## Դ Ի Ո Ն Ի Ս Ո Ս

ԱՌԱԻՕՏՆ ԹԵԼԻՑ ՄԱՐԶԷ ՎԱՐԴԱԿԱՐՄԻՐ ԹԵՒՕՔՆ ՅԱՌՆԷՐ ...

Ու կը զեզերփնէր արեւելեան հորիզոնը, կարծես կ'ուզէր յամրաժաման վարդներ ցանցնել երկնքին վրայ: Փերոս կը թաւալէր յառաջ բոցացնցուղ ալեքակառքին մէջ: Կարծես կ'ուզէր տօնազարդ Աթէնքին վերեւ չքթել իր բոլոր շառայները: Հողմադիքն Եւոզոս իր փապարներէն ու ամենապարփակ այրերէն դուրս կը ժայթքէր ամէնէն քնքուշ զեփիւռները, որոնք սրսրփալով, խարշափելով կը հովեն կը հողմահարեն աշնանակերպ երփնաւորուած դարաստանին մէջէն եւ Տրդատին պատուհաններուն առջեւ: Ան արդէն երկար ատենէ ի վեր պատուհանին քով կանգնած անհանգստութեամբ կը սպասէր օրուան զարթնումին: Երբ նախընծայ վարդամպիկներէն շիկնեցաւ երկինքը, փախաւ դնաց եւ սենեակին շրջանը կ'ընէր ցասկոտ: «Միմիայն այսօր եւ վաղը ոչ, Այդդ դու: Երրորդ օրը, եւ չես կրնար ուրեմն սանձել ջուրդ, ո'վ դու ալեւորդ Ձեւս»:

Տրդատ անդամ մըն ալ չափեց երկինքը: Վարդամպիկները կ'աւելնային եւ կ'ըլլային հրակարմիր, ատրաչէկ: Տրդատ իր բուռն ու հաստ կռուփները պնդացուց, ցցեց Արշալոյսին դէմ: Բրիսանոյշին վրայ կը մտածէր եւ պառկեցաւ: Տիտանեան կերպարանք մը դարձած էր: Դարգիճը կը ճռնչէր անոր մէն մի շարժումէն: Բոլոր գէշ տրամադրութիւնները կարծես բոյն դրած էին հոն: Բրիսանոյշն ալ անշուշտ վարդեր ունի վրան եւ մագերուն մէջ այծտերեւուկներ եւ ոսկեծաղիկներ եւ շողշողուն քղանցքով կտաւէ զգեստին վրայ աստղածաղիկներ եւ ոսկեծաղիկներ: «Արշալոյս, դուն ի՞նչ ես հանդէպ

Բրիսանոյշի: Եւողոս, հով տուր անոր մետաքսաթել մազերուն, ոսկեղոյիկ ծամբուն, քու ամենաքաղցր զեփեւոտիդ: Փերոս, թափէ անոր վրայ քու ամենազեղ լոյսդ: Զեւս, եթէ անձրեւի բռնուի ան քու պատճառովդ, Զեւս, եւ արուի անոր զեղեցիութիւնը, տես ի՛նչ կ'ընեմ քեզի»: Աւ աս բռնելով ցատկեց Տրդատ, եւ կը վազէր իրբեւ թէ մենամարտելու զրան քով պատին կանգնած Ողիմպականին կճեայ արձանին զէմ: Բոնեց անոր զլուխէն եւ պոսոց սպառնաղին ձայնով. «Էւս, կ'երդնում քեզ Ստրեքսի վրայ, թէ դուն կտոր կտոր պիտի ըլլաս, եթէ անձրեւ բերես: Օրհնէ Բրիսանոյշը, Զեւս: Հերա, Տիկինդ Էրէնից, տաք պահէ վրաս Բրիսանոյշը»: Յետոյ քրքիջ մը բարձրացուց, այնքան որ Սուրովիդուխտ եւ Արսինէ քունէն արթնցած եւ սարսափա՛տար կանչեցին, թէ ի՛նչ ունիս, Տրդատ: «Բրիսանոյշ», ազգականեց ամեհի, եւ երկու բռունցքովը զարկաւ զրան: Սուրովիդուխտ եւ Արսինէ լուռ ու մունջ: Բայց Տրդատ որոշակի իմացաւ զսպում, խորունկ հառաչանքի մը տկար շեշտը: Մուկնաբար նորէն ինքզինքը նետեց անկողինին վրայ եւ իր զժկամակութիւնը բարկութեան թափէն հասաւ բարձրագոյն կատակի եւ հակառակութեան Քրիստոսի եւ քրիստոնեաներու զէմ: Սուրովիդուխտ նոր հաւատքին ծախում էր, տակութիւնը Տրդատին մէջ զայրազնեցաւ քրոջը զէմ: Ան չէր փափաքեր որ Բրիսանոյշը իրենը ըլլայ: Բայց Բրիսանոյշ աւելի խոհեմ էր: Մովպետ ամուր կապած էր անոր զործը: Երնորհապարտ եմ քեզի, սուրբդ Մովպետ, ուր ալ ըլլաս: Դարձեալ զղուշի անուպայ ծիծաղ մը: Տրդատ կը նայէր կը քննէր իր հուժկու մարմինը, խնամով կը դիտէր մէն մի անգամը, կ'երկնար, կը լայնանար, կը փուռէր ամէն կողմով, զարդիճէն դուրս ցատկելով զարձեալ: «Բազոս, դուն ոչինչ ես: Բայց ես եմ Բազոսը: Փառաւոր Բազոս մը, ես»: Պատուհանին առջեւ նետուեցաւ: Մեծաշուք կը տօնախմբէր այդերկինքը: Ակրոպոլիսի զիջերն ու դիցանոյշները կանդնած էին կարծես հրդեհի մէջ: Հսկայաբերձն Զեւս ծանրախոհ գահակալ: «Ինչո՞ւ այդքան ծանրախոհ, Հայր Զեւս: Ես նստած եմ չիթիկ վրան եւ առնէտ բռնած եմ փորիկ մէջ: Ինքզինքդ այդքան ծանրախոհ մի ծախեր: Եւ դուն, բարի Պալլաս, ես քու ուսերուդ վրայ ելած հաց կերած եմ եւ անկից վար տոած եմ երկրի վրայ քու հօրդ Զեւսին անձրեւելուն պէս»: Դարաստանին մէջ առաջին վազալարայց զերկները զարմացած կը նայէին եւ չորս կողմերնին կը զիտէին թէ ուրկեց կուզար այս զզրգալից քրքիջը: Եւ տեսան Տրդատը մէջքէն վեր մերկ պատուհանին առջեւ կեցած եւ բարձրաձայն խընդացին իրենք ալ անոր կողմը: Քիչ մը ժամանակ վերջ Տրդատ գաւթի թիւն ու զարաստանին մէջ ժուռ կուզար ընդհանուր զուարճութիւն պատճառելով ծառաներուն եւ պերուհիներուն, որոնք վերերէն կը

դիտէին զայն, եւ այն այլանդակ վիճակին մէջ տեսնելով կը փախչէին, իրենց վախէն կը պոռային, կամ կը ծիծաղէին, հեռուէն լսուելու աստիճան: «Բազոս աստուածը ահա մէջտեղ ելեր է: Դեղնաշորթ պարեկօտ մը միայն ուսերէն մինչեւ վերը ծունկերը: Դեղին կօշիկները մինչեւ սրունքին կէսը: Բոցի պէս կարմիր զօտի մը պարեկօտը կը բռնէր սիրուն ծալքերով: Գօտիկն կը կախուէին աշունին խորհրդանշանները: — արծաթէ փոքրիկ այլակութի զանակներ, փոքրիկ կլոր մանգաղներ, սոկի ողկոյցներ, արեւակներ, լուսնակներ արծաթէ եւ ոսկիէ: Մարգարտապարզ եւ ականակուռ խոյր մը իր տակը հաւաքած էր անոր զանգրահեր խոպոպները որթատունկի տերեւներէ շրջանակուած, աշնանային ամէն զոյներէ մինչեւ վարդ զինեկոյնը: Հայնչի ճակատին շուրջ ամբահիս նարօտ մը թուխ կաշիէ, եւ անոր մէջտեղէն կը ցցուէր շողշողուն, սրածայր, ոսկեզօծ եղջիւր մը: Ամբողջ մարմինը պարուրուած էր բարունակներով եւ այծտերեւուկի սաղարթակեղ ճիւղերով: Աջ ձեռքին մէջ կը կրէր Տիրսոսի կամ Տիւրեան մահակը — հաստ, մարդաչափ ծառի բուն մը, տակէն մինչեւ վերը նմանապէս բարունակներով շրջանակուած: Այսպէս կ'ընթանար եւ կ'ոտնուր ամէն կողմ մեր Տրդատը, մարգրեկով բազոսական շարժումներուն եւ վազքերուն մէջ: Ամէն ուրեք կը փնտռէր Բրիսանոյշը: Բայց ան արդէն կը գտնուէր իշխանուհիին սենեկապանուհիներուն ձեռքին մէջ, սանարուած, մաղերը հիւսուած, եւ աշնանային ծաղիկներով, բարունակներով, մարգարիտներով, ազամաններով եւ ամէն երեսակայելի զարդերով յարգարուած ու պաճուճուած իբրեւ պարապետուհի բազոսահարսներուն: Ամէնուն հրաշալեղ հիացումն էր: Դեղին սնդուակ հանդիսաւոր լողիկին մէջ փորձած էր նմանցնել Բազոսական յաւերժահարսներուն շարժումները, յատաշին հալիւ նշմարելի շարժումներէն սկսեալ մինչեւ անընտանի, խեւ, շրջաշող, թոշուն թեւաւոր շարժումները, որոնցմով հին ատենները կը վերջանային Դիոնիսոսի հանդէսները, եւ մուկիցին խոյնքները բազոսեան պարուհիներուն, որ ուրիշ անունով կը կոչուէին աստուածապարարի, այսինքն ի պատիւ Բազոսի կամ Դիոնիսոսի պարարկուներ: Լօղիկին ծալքերը եւ զոյները մանաւանդ աչքի կը զարնէին: Յնձապին ազգապիներ եւ ծափողջոյններ վարձքն էին անոնց շահատակութեան: Վերը իր ննջարանին մէջ նստած էր Սուրովիդուխտ արտասուաթոր, ուսերուն վերեւ կեցած էր Աշխէն: Երկուքն ալ փակուած էին ներսը: Երկուքն ալ զիտէին թէ դառն դրժբախտութիւն մը պիտի բերէ այդ օրը: Սաւարը պիտի յաղթէ լոյսին: Տրդատ ինքզինքը պիտի մոռնայ եւ ոչ ոք կրնայ անոր ընդդիմանալ: «Սեղճ, դժբախտ Բրիսանոյշ» կը պոռայ Սուրովիդուխտ բոլոր ուժովը: «Պէտք է վար իջնեմ: Ես կ'ուզեմ»: — Արսինէ ամուր բռնեց



զայն: «Թողուր դիս, ես պէտք է...: Բրիսանոյ», պոռաց կրկին իր բոլոր ուժովը: Իրբեւ պատասխան գերիներուն յարկէն հոս կ'արձագանդէին վայրենի, վռնջուն քրքիջներ, երկսեռ: Եղջերափող ծնծղայ, չեփոր կը շոնչէին, թմրուկ, զանդակ, կիթառ-համանուալ ամէն կողմէ, փորձ, խալ: Միջանկեալ կ'որոտար Տրդատի առիւծանման ձայնը, որ կարդի կը դնէր թափօրը, բոլոր հիւրերը, գերիներն ու գերուհիները, որոնց ամէնքը պիտի մասնակցին, քանի որ իրենց կերպարանքով եւ խառնուածքով կրնային սա կամ նա կերպով հանդէսին փայլը աւելցնել: Թափօրը պատրաստուեցաւ: Առջեւէն նուազածունները, սրնկահարները, փողահարները բաց կանանչ եւ ողկոյզի պէս կապոյտ բաձկոնակներով, յետոյ Դիոնիսոս առաջնորդը պատանիներուն, ամէնքն ալ անոր պէս հազուած, բայց առանց թաղի կամ խոյրի եւ եղջիւրի: Բրիսանոյ շքադիր օրիորդները՝, ամէնքն ալ քրքմալոյն շողշողուն համադրեստով եւ ճերմակ կօշիկներով, մաղերուն մէջ բարունակ եւ այծտերեւուկ: Յետոյ կարգով կուզային այգորդներ իրենց հազուատ կապուստով, հնձանահարներ, լայն կողովներով, եղերքներէն ճոխաբար կախուած բարունակ եւ ողկոյզ, որսորդներ, որսորդուհիներ կանաչադրեստ, աղեղնաւոր եւ նետաձիղ, Սպանդարամետեան կամ Բաղոսեան քրմանոյններ աղուէսի մորթով, կարգ մը որեար կենդանիի մորթերով ու զլուխներով, առիւծներ, վաղրներ, կինճեր, վայրի եղներ: Շահուն, շառաշուն եւ րաժշտութեամբ, սրուարով, կանչելով, հրաժեշտի ակնարկներով մեկնեցան զղեակէն եւ ամէնքը քաշուեցան քաղաք: Խոսրովիդուխտ եւ Արսինէ ծունկի եկած կ'աղօթէին Տրդատի եւ Բրիսանոյի համար: Սանդուխին վրայ կեցած էին իշխանն ու իշխանուհին եւ հրաժեշտի նշաններով թափօրին ետեւէն կը շարունակէին նայիլ:

Գաղաքը պարտէզ մըն էր, սաղարթի եւ որթատունկի անտառ մը: Փողոցները կը վխտային մարդոցմով: Ինչպէս առուակը դէպի դետր, այսպէս ալ բոլոր փողոցներէն ու գոթիներէն ծպտեալ անհատներ կամ խումբեր դէպի շուկային հրապարակը կը քաշուին: Մայրը չտեսնուած թափօրը շարժիլ սկսաւ: Հեծեալներ, կառքեր, հաղարաւորներ հետիոտն, քուրմեր, պաշտօնատարներ, հիւպատոսներ, դատաւորներ, Աթէնքի ընտրանիին լոյսերու մէջ ճերմակ զղեստներով, կիները հոլանի մաղերով: Խոյրեր, մարդարիտներ, ազամանդներ, ոսկի շղթաներ եւ ապարանջաններ կը շողան լիալիւր, ջերմիկ այգալոյսին մէջ, ինչպէս ցօղը դաշտին վրայ: Շատրուանները փոշիանալով կը նետուին դէպի վեր: Պատուհաններ, պատշգամներ, քիւեր ծածկուած էին մարդոցմով, օղը բալասանով հոտաւէտ, խունկով ու ծաղկարոյրով արդաւանդ: Անձրեւ մը ծաղիկներու, պտուղներու եւ ամենազգի դարզեղէն առարկաներու կը տեղայ տօնական թափօրին

վրայ, վէտ ի վէտ բազմութեան վրայ: Վազող վազողի, ձեռք անցընելու համար առարկաները, իրարու ձեռքէ յափշտակելու, վիճելու, նեղսրտելու տեսարաններ: Մարդկային ձայներու ծովամռնչիւն մը: Դիոնիսոսի կամ Բաղոսի ողի: Կեանք: Անկաշկանդ, անհող կեանք մը խոր կապոյտ անամպ յունական տօնաչողին մէջ: Գլխաւոր փողոցներուն մէջէն թափօրը խղունջի պէս կը շրջըջի ներքին քաղաքին շուրջ, յետոյ դուրսը պարտէզներուն մէջ Պիրէոնեան փողոցին ձիթենեաց անտառէն դէպի նաւահանդիստը, հոն հանդէսելու եւ ծովեղերքը զովանալու արեւափայլ, զունադեղ, վխտացող խումբերով, կամ գինիով, պտուղով եւ միսով բեռնաւորուած մակոյկներուն մէջ: Կայմերուն ամէնէն բարձր ծայրերը զրօշաղարդուած են: Ամէնէն բարձր կէտին վրայ կը կախուի Դիոնիսոս: Ժողովուրդին, քաղաքին, ծովուն վերեւ արձագանդ կուտան ի սլատիւ անոր ցնծադին աղաղակները, կայմերուն եւ պարաններուն վրայ բանուորներ, կը տատանին ոստեր ու դաւաղաններ, կը կանչեն կը հրճուին, կը կայտեն: Մովային թռչունները արեւնալ, փարփառ թեւերով կը շրջանակեն: Ափը դալարաւէտ եւ մետաքսանման քնքուշ մարդին վրայ կը ընկողմանի Բրիսանոյ իր աստուածապարարկ ընկերուհիներուն միջեւ: Ոչ մէկ ծերակուտականի տիկնոջ, ոչ մէկ տանտիրուհիի այսօր աւելի պատիւ չեղաւ որքան իրեն Բրիսանոյի, Լիկինիոսի գերուհիին:

Կէսօր: — Ժողովուրդը երամովին լուսարձակ կը փութայ, երկար շար ի շար, երբ դեռ մունետիկները չեն հնչած ճամբայ ելլելու նշանը երկար արծաթաշող շեփօրներով: Դէպի թատրոնը Դիոնիսոսի: Գիշերուընէ ի վեր արդէն պաշարուած էր հաղարաւորներէ, որոնք դուռներուն առջեւ կը սպասէին ահադին ամփիթատրոնին լաւագոյն տեղերը իբրեւ առաջին լեցնելու համար: Իրենց քով ունէին գինի եւ ուտեստեղէն: Տօնական թափօրը երբ մօտեցաւ, շեփօրներն ու եղջերափողերը կը գոռացնէին նուազախումբի վայրին մէջ: Դուռները բացուեցան: Մարդկային հեղեղը ներս յորդեց: Թափօրը լեցուց միջոցը: Օղոստոսի տաքին ուժովը արեւը կ'այրի անհամար զլուխներուն վրայ:

Յետ միջօրէի ամբողջ ժամանակը թատերախաղին նուիրուեցաւ: Ամբողջ ժողովուրդը իրեն վերեւ գտնուած երկինքին պէս լուռ էր, երբ բացումի համար նշանները գոռացուցին, եւ Իդիպոս թաղաւոր երեւցաւ թատերարեմին վրայ:

Թատերադրութեան աղեցուցիւնը ահադին եղաւ: Վերջանալէն ետքն ալ երկար ատեն ոչ մէկ անդամ կը շարժէր հանդիսատեսներու բազմութեան մէջ: Եւ ահա ծափերու փոթորիկ մը, որ օղը կը դղրդէր: Դերասանները յուզուած կեցած էին: Մաղիկներու հեղեղներ կը թափին անոնց վրայ, արտասահմանեան փառաւոր տունկերու ամ-

բողջ սակառներ անոնց առջեւ դրուեցան : Սանդալառութեան փոթորիկը այն ատեն միայն դադրեցաւ , երբ դերասանները իրօք թաղուած մնացին ծաղիկներու բլուրի մը տակ :

Սառնաչիօթ բոյրեր կը տոգորէին այիւրքը : Ասոնց մէջ ղինիին , թարմ նպարեղչններուն , պտուղներուն , քաղցրաւենիներուն , փոշիի եւ արդուզարդի վերարեւակ առարկաներուն հտար : Ճօճում մը , տատանում մը կարծես մըջիւններով լեցուն լերան մը մէջ : Իզիպոս մոռցուեցաւ : Դիոնիսոսեան ողին տակաւ կրկին կը գրաւէր հաւաքոյթը : Զանուածները իրարու մօտ ու վերօք հեղեղի մը պէս կը հոսէին , դուրսը , ներսը : Կորսուած ծանօթներ կը փնտռէին եւ այս առթիւ բոլորովին նոր ծանօթներ մէջտեղ կ'ըլլէին , զիրար կը բարեւէին , կը խնդային , կը խօսէին տօնին , թատերախաղին , օղին , Տրդատին եւ Բրիսանոյչին , քաղաքականութեան եւ վաճառականութեան , կայսեր եւ պետութեան մասին , մինչեւ որ շեփորներու շառաչիւնը երկրորդ թատերախաղին սկզբնաւորութիւնը ծանուցանէր , եւ ամէնքը հեղեղի պէս կուզային իրարու ետեւէ իրենց տեղերը բռնելու : Արեւը կը խոնարհէր դէպի մուտքը : Բոցեղ իրիկնամուտի մը կարմիրը եւ խոր մանիշակագոյն երանգ մը կը զեղերփնէին բաց կանանց երկինքը : Յերեկուան ամառնային տաքը մնացած էր : Թատերարեմին բարձր աշտանակներուն վրայ ահագին ճրագներ կը վառէին եւ հետզհետէ մթասքօղ հանդիսավայրին վերեւ կուպրի ու խէժի հոտ մը կը տարածէին : Ամբոխը անհամբեր կը սպասէր երկրորդ թատերախաղին բացումին որ պիտի արթնցնէր դարձեալ բազոսեան տրամադրութիւնը եւ ընդհանուր զմայլում մը : Հիմա ամէնուն բերանն էին Տրդատին եւ Բրիսանոյչի անունները : Տրդատ քերթողն էր եւ ինք անձամբ պիտի խաղար զլիսաւոր դերը : Բրիսանոյչ , անոր հանրածանօթ , շատ խօսուած սիրուհին , կատակերգութեան հերոսուհին պիտի ըլլար : Ոչ ոք չէր պիտէր , թէ ի՞նչ պիտի խաղացուի :

Ինչո՞ւ համար չեն սկսիր խաղը : Բազմութեան համբերութիւնը սպառեցաւ : Կոշեր , սոյլեր կը թնդային : Կը դոփէր կը դզուէր գետինը : Ամէն ինչ շարժումի մէջ էր : Առաջին շարքերուն նստարաններէն ոմանք վար իջան դէպի բեմին առջեւօք , եւ կը հարցնէին սպասաւորներուն յետաձգումին պատճառը : Շատ չանցած , ամբողջ թատրոնին մէջ տարածուեցաւ լուրը , թէ Բրիսանոյչ կը մերժէր խաղալ : Քանի մը վայրկեան վերջ ամբողջ թատրոնը դիտէր , թէ Բրիսանոյչ քրիստոնեայ է : Հեղինակն ծիծաղներ , կատակի խօսքեր , կանչեր քրիստոնեաներուն դէմ կը դուռային հանդիսասրահին մէջ : Կատաղութիւնը գրաւած էր երիտասարդութիւնը մանաւանդ : Ընդհանուր գրգռում , վտարանջութիւն կը սպառնար պայթիլ : Բրիսանոյչը կը պահանջէին հետզհետէ բարձրացող սաստկացող թշնամական գոռ գո-

չումներով : Երեք անգամ մոնչեցին շեփորները : Եւ անմիջապէս լուռութիւն մը թաղաւորեց : Թատրոնին ետեւի կողմէն , որուն շրջապատին վերի ծայրերը կարծես աստղերուն կը դպչէին , շուայտ , շաղաշուտ աչքեր դէպի թատերարեմը կը յառէին , աչքեր , անթուելի անշափելի աչքեր , հանդիպելու համար Բրիսանոյչին , քրիստոնէուհիին :

Ընդհանուր պակուցումի կանչ մը ամբողջ բազմութեան մէկ ծայրէն միւսը թափ տուաւ , երբ ծփուն , ճօճացող վարապոյրները եղիպտական դաշտանկարի մը հսկայական զծաղրութիւններով , կանանց նեղոտով , արմաւենիներով , կոկորդիլոսներով , բուրգերով եւ կոթողներով , Եղիպտոսի զիւղացիներ իրենց արօրով ու եղներով , պատերազմիկներ , ջուրմեր Ապիս կովին հետ , խառնափնդոր նկարներու այս հաւաքածոն պարունակող վարապոյրները երբ վերջապէս ինկան , եւ Եղիպտական արքունի սրահ մը սխնեցով ու Սփինքսներով , կարկաջահոտ աղբիւրներով , կանանց ամպօզմանիին տակ ոսկեթաղով ու թաղաւորով , տեսանելի եղաւ : Ռամփախիտոս թաղաւոր շատ կարեւոր զաղանապահութեամբ մը իր ճարտարապետին հետ միս մինակ կը խօսէր յատակադիծի մը վրայ , թէ ի՞նչ կերպով կարելի կ'ըլլայ իր ահադին դանձերը զաղանի ու ապահով պահպանել գոյութիւնն , երկրաշարժէ եւ հրդեհէ : Երկուքին միջեւ խորհրդակցութիւնները , թաղաւորին տարբեր ծրագիրները , ճարտարապետին խոհական առարկութիւնները եւ իր վերջնական խորհուրդը կը կազմէին առաջին արարուածը , որ սկիզբէն լարուած հետաքրքրութեան մէջ բոնեց ամբոխը , եւ ժամանակ առ ժամանակ խորամանկ ճարտարապետին գաւեշտական զիրքին պատճառաւ որոտընդոտ զուարճութիւն եւ ծափ առաջ կը բերէր : Գիշերուան պէս լուռ , հանդիսականները կը հետեւէին յաջորդ ընթացքին : Ճարտարապետը հիւանդացաւ , եւ անկողին պառկած է մահամերձ : Իր կնոջ միջոցաւ կը կանչէ իր երկու գաւակները եւ արքունի դանձին զաղանիքը անոնց կը մատնէ եւ կը պատուիրէ որ ամենամեծ զոռչութեամբ մաս առ մաս կամաց կամաց վերցնեն : Առկայծ լապտերներուն խոփիչ , կասկածելի աղօտ լոյսը յոյց կուտար երկու զողերը որոնք կ'աշխատին ահա պալատին պատին վրայ : Բանայիներու ճոնչիւնը զերեզմանական լուռութիւնը ծակելով կ'երթայ մինչեւ թատրոնին ամէնէն վերի նստարանները : Քարը վեր կ'առնեն : Մէկ եղբայրը ներս կը սողայ , միւսը ձեռքերը կը բռնէ : Ոսկին ահա կը շողայ : Գլխանոցով երկայն վերարկուներու մէջ փաթթուած երկուքն ալ կծիկը կը դնեն :

Պայծառ լոյսը կը ճառագայթէ ամբողջ թատերարեմին վրայ , կարծես ցերեկ է : Թաղաւորը միս մինակ կը ձեմէ իր գանձատունին մէջ , եւ կորուստը աչքին կը դարնէ : Գոյութեան տեսարանը կը կրկնուի : Թաղաւորը աղուէս բռնելու յատուկ ծուղակ մը կը դնէ : Երկ-

բորդ գիշերը դողը կը բռնուի մէջը: Ամբողջ թատրոնին մէջ կը լսուին ծուղակը ինկողին աղիողորմ ողբն ու կոծը, պոռալ կանչելը: Հիմա երկու եղբայրները կը խորհրդակցին, թէ ի՞նչպէս կարելի է գաղտնիքը պահել եւ աղատ մնացած եղբայրը մահուանէ փրկել: Հանդիսավայրին մէջ բարկութեան աղաղակներ կը փրթին, որովհետեւ աղատ մնացած եղբայրը մէկ ձեռքին մէջ ոսկիով լեցուն քսակը բռնած է, եւ միւս ձեռքին մէջ ալ եղբորը զլուխը: Թաղաւորը առաւօտուն սոսկումով ու սարսափով կը գտնէ դիակը եւ հրապարակաւ կախել կուտայ դայն: Արքայական պահակներ նիզակաղէն եւ շղթաներ ի ձեռքին կը հսկեն դիակին: Ո՛վ որ դայ եւ ողբայ լայ կախուողին չուրջ, յէտք է բռնեն դայն եւ թաղաւորին տանին: Երկու զաւակներուն մայրը զաւելատական միանգամայն եղբրական մուտք մը կը դործէ տեսարանին վրայ, ուր կը դանուէր նաեւ միւս զաւակը: Նախ յանդիմանական մը անոր, յետոյ ողբուկոծ եւ սպառնալիք ամէն բան թաղաւորին մատնելու, եթէ իր սիրելի եղբոր դիակը չառնէ ու չթաղէ: Զաւակը կ'ուխտէ ընել: Գեղացիի հազուատ հազած մէջտեղ կ'ելլէ էջով մը, որ երկու կողմէն բեռնաւորուած է անասունի մորթէ գինիի տիկերով: Պահակներուն հետ երես առ երես գալէ առաջ գեղացին քիչ մը կը բանայ տիկերէն մէկուն բերնի խիցը: Գինիի հոտը խկոյն կ'ելլէ: Պահակները քիթերնին վեր կը քաշեն, եւ քիչ ատենուան մէջ ծծելով կուլ կուտան վրայէն վաղող գինին, գաղտնի կերպով: Բուրբուրի ժողովրդային քիչ մը շատ անշուք տեսարան մը կը պարզուի լուսնիային տակ, որ կեղծուած է թատերարեմին վրայ, խնդացող խնդացողի, պոռացող պոռացողի, հաղիւ թէ կախաղանը եւ անդլուխ կերպարանքը կրնան ամենափոքր վերապահում մը առաջ բերել ամբողջին մէջ, մեղմացնելով գոնէ ծափերուն դղրդիւնը: Բայց տեսարանը երթալով զուարճալի կը դառնայ: Ծպտուած իշապանը հայհուհներ կ'արձակէ, կը սպառնայ, կը յարձակի պահակներուն վրայ, մինչ ասոնք, բերանին բռնած եւ առանց որեւէ շարժում ընելու կը խնդրեն կը պաղատին որ լռէ: Գինեակը պահակներուն աչքերուն եւ դէմքի խաղը իրենց սաղաւարտներուն, զէն ու զբահին ու կարճ տառատոկներուն պաշտօնականութեամբ վերջին աստիճան ծիծաղաչարժ աղղեցութիւն կ'ընէ հանդիսականներուն: Պահակները, գինով, կը ցատկուտեն տիկերուն շուրջ, կը շէն կը սուլեն, վերջապէս ինքզինքնին չեն կրնար ոտքի վրայ բռնել եւ իրարու վրայ կամ իրարու մօտ կ'իյնան կը պառկին, էջն ալ մէջներնին: Որովհետեւ իշապանը ի վերջոյ բարեմտութիւն ձեւացնելով, տիկերը իրարու ետեւէ բացաւ հրամցուց անոնց որոնք հիմա քաղաքին ծախած ահա գետին ինկած են անդրայ, եւ կը խորդան: Այդ բոլորին գեղացին իր եղբոր դիակը կը կտրէ վար կ'առնէ, իշուն կը բեռնէ, պահակներուն

աջ երեսին մաղերու մէկ մասն ալ թեթեւ մը կ'ածիլէ եւ էջը նստելով կ'առնէ կը քալէ: Յաջորդ տեսարանները խոկապէս ծիծաղի ու ծափի յատուկ իրարանցումի մը տարին դործը: Բրիտանոյց երեւցաւ բեմին վրայ, աներկիւզ, համարձակ, սրտատ, եռանդուն, թէեւ ձայնը յուզումէն կը դողար, երեսը գունատ եւ խոժոռ, յայտնի էր որ տաղնապ մը կ'անցնէր ան, բայց իր դերը իրբեւ արքայազուստը կախարդիչ հմայքով մը խաղաց, վարպետի յատուկ մասնադիտական անառակութեամբ եւ խորամանկութեամբ: Թաղաւորին ուղածին պէս, գիշեր ցերեկ կը նստի շատրուանին եղբորը, իր գլուխին դպչող գիշի ծառին ճիւղերուն տակ, եւ ճամբէն անցնող ամէն մարդ ու պատանի պիտի գայ անոր պատմելու իր դործերը, եւ ո՛վ որ ամէնէն խելացի գործը տեսած է, իր փեսան պիտի ըլլայ: Թաղաւորը ստով կը յուսար թէ պիտի կրնար դողը բռնել նենդութեամբ մը: Բայց դողը թաղաւորէն աւելի խելացի էր: Նորէն ծպտելով, գիւղացին շատրուանին վրայ գետեղուած ճրագներու առկայծ լոյսով կուզայ կը մօտենայ թաղաւորին աղջկան, որ իր երբեմնի խաղընկերուէին եղած է: Աղջիկը չի ճանչնար դայն: Ամէն բան կը պատմէ այնքան ճշտիւ, տեղն ի տեղը, առաջին գոյութենէն մինչեւ եղբորը մահը: Արքայազուստը կը հաւնի ուշիմ երիտասարդին, հաճոյք կը զգայ անոր սիրային բառերէն, սիրալառ նշաններէն, դոր կը փոխանակեն իրարու հետ: Ծրագները կը մարին: Տեսարանը արդարեւ չափազանց հետաքրքրական է: Ամբողջին աչքերը մեռելական լուսութեամբ շուայտութեամբ մը բռնուած կը ծակեն թատերարեմին վրայ տարածուած խաւարը, որ հաղիւ կը խլուի առկայծ ճրագի մը տկար լոյսով: Հանդիսականներուն մարմնական գրգռումը չափ ու սահման չունի: Հանդիսասրահին կարմիր ու կանանչ լապտերներուն լուսացնող նրբանուրբ տաղաւորութիւնը, արծաթաշող փայլը շղարշանման, սիրաբորբոք հիւսուածոներուն, որոնք Բրիտանոյցին մարմինն ու անդամները կը ցուցադրէին սպիտակափառ մերկութեամբ, անոր մէն մի շարժումին, կիսասքող սիրային սիրադործութեան համբ տեսարանը — այս ամէնը խելախորոյս կ'ընէր ամբողջը: Ամէնքը հեւ ի հեւ, շատերը կը պոռային, երբ արքայազուստը օշնութիւն կ'աղաղակէ թաղաւորին պահակներուն: «Ձեռքս է, կը բռնեմ դայն, շուտով», կը ձայնէ Բրիտանոյց թատերարեմին ետեւէն, բարձրագոյց: Ամէն կողմէ ճրագներ կը տեսնուին: Թաղաւորը կ'երեւայ, թատերարեմը կը լեցուի պահակներով, ասպետներով, ծառաներով: Գիշերային հանդերձանք, կիսազգեստ եւ կէս արթուն գիտակցութիւն: Արքայազուստը ընդհանուր խառնաչփութեան մէջ կը նստի եւ միշտ կը բռնէ ջղապիրկ — պաղ թեւը սպաննուած գողին: Խորամանկ եղբայրը փնտռէ որ գտնես: Բրիտանոյց — արքայազուստը օդը կը լեցնէ իր սիրային

հառաչներով, կը մխիթարեն զինքը հայրը, նշանաւոր ասպետները եւ պաշտօնատարներ, որչափ որ կրնան: Բայց ի դուր ամէն մխիթարութիւն: Աղջիկը կրակ կտրած կը պահանջէ կը ցանկայ փնտուել զտնել փախչող սիրեցեալը: Ան կ'ուզէ զայն միայն, եւ ո՛չ ուրիշ մէկը: Իր ոսկի թաղով անմիտ թաղաւորին շփոթութիւնը, զբանիկներուն, պալատականներուն անխօս նշանացիները եւ հարցական զիմպոլիտները եւ կապկանման կոտորուածները — այս ամէնը կը պատճառէին որոտապոչ քրքիջներ, որոնք այն չափին բարձրացան ոտքերու դոփիւնով եւ ոտնոցներով մինչեւ որ զողը մէջտեղ ելաւ եւ երեւան եկաւ որ ան մեռած ճարտարապետին զաւակն է: Ամէն յանցանք իրեն ներուեցաւ թաղաւորին յատուկ հրովարտակով: Եւ յաջորդեց քաւութիւնը: Հարսանիք առասպելական շքեղութեամբ եւ լուսադարձութեամբ: Ուշիմ եղբայրը ամենաբարձր խորհրդական անուանուեցաւ: Թատերաբեմը ցերեկուան պէս լուսափայլ: Հազարներով զործակիցներ թափած են թատերաբեմին վրայ եւ շուրջը ահալին թատրոնին: Եղջերափողերու, շեփորներու, կիթառներու, ծնծղաներու եւ ամենազօրի նուազարաններու մխոր, աղխատրոյ խառնակութիւն մը ահանջները կը խլացնէր: Ժողովրդային խաղեր, զանազան մրցումներ, մենամարտ, դօտեմարտ, արշաւամարտ: Եւ համօրէն ներկայացումը կը փոխուի Դիոնիսեան — Սպանդարամետեան — Բաղոսեան պատմական, աւանդական զինարրութիւն եւ խրախճանութիւններու: Բաղոսին եւ իր հետերդներուն պարերը սկսան: Յունական սովորութեան համաձայն երիտասարդներն ու երիտասարդուհիները կը պարէին, մէն մի զոյգ առանձինն, ինքն իրեն: Տրդատ իրբեւ Բաղոս կը վարէ շարքը: Բրիսանոյ աղջիկները: Մէն մի խումբ, մէկը միւսին ետեւէն, նախ հանդարտ քայլերով ու կշռակի շարժումներով, սրինդներու եւ սուլիչներու քնքոյշ, տեղական երաժշտութեան մը ընկերակցութեամբ, կիսաշրջանակներ կը կազմէին, եւ կեղրոնը կուզային ամէնքը լիալիր բոլորելու: Տրդատին եւ Բրիսանոյին աչքերը իրարու դէմ բոցիկներ կ'արձակէին, ամէն անգամ որ պարի զգլխիչ ալրուցքին առեն իրարու հանդիպէին: Այդ բոցերը կը հեռացնէին, կը պատռէին բոլոր միջանկեալները, առարկայ թէ մարդ: Աստուածապարարկներու այն է Բաղոսեան խրախճանքին նուիրուած պարուհիներուն խաղերը պարզապէս զմայլանք, խոյանք, թրթռանք կ'առթէին զպատուարուած միմիայն որթատունկի բարունակներով, կամ աղուէսի մորթերով եւ կենդանիի զլուխներով: Խաղացողները ըլլան, թէ հանդիսատեսները, ամէնքն ալ Կրօնականին, Խորհրդաւորին տըւաւորութիւններուն հմայքին դերի եղած են: Երաժշտութիւնը ամենհի կը դառնայ, երթալով շուայտ ու վաւաչոտ, զրգոխիչ, մէկ խօսքով: Ամբոխը բռնուած է կիբքով ու հուրքով: Շատ հանդիսականներ կ'ել-

լեն կը պարեն յանակնկալս եւ չեն իսկ զիտեր թէ ի՛նչ կ'ընեն: Վայրագորէն պարարկուներու Բաղոսի: Դիոնիսոսի ոսկի եղջիւրը հոս ու հոն շանթող պալարող կայծակի մը կը նմանի: Առիւծակերպ ոստումներ: Ո՞վ կրնար հետեւիլ այլևս այդ խելայեղ վաղքին: Բրիսանոյ կը վառի: Այտեր, ծոճրակ, ամբողջ մարմին կարծես բոցերու մէջ է: Իրեն բոլորտիքը կ'որոտայ ծափ ու խնծիլ: Ամէն ինչ իրեն մէջ, իրեն շուրջ, իրեն տակը, իրեն վերեւ կը պարէ, կը խլրտի, կը պալարի, կը ծփայ: Հեղեղի մը պէս որ ցամաքը կը կոխէ բաղոսուհիներուն պարը վերջապէս կը խզուի, ամէնուն առջեւ Տրդատ, իր ետեւէն Բրիսանոյ, թատերաբեմէն կ'իջնէ վար, հանդիսավայրին մէջ, նրբանցքներէն վեր, վերնայարկի խոցերու շրջանակին մէջ, եւ հուսկ կատաղի վաղքով բովանդակ թատրոնին բոլորտիքը: Ամէն ինչ կը փախչի Տրդատին եւ Բրիսանոյին առջեւէն քովտի, անոնց անցնելէն նորէն խումբեր կը կազմուին, խմորուող, եռացող, շնչելու կարօտը քաշող զանգուած մը խելացնորներու: Հարիւրներով կ'իյնան անզայ: Անոնց վերեւ կ'եփի թափօրը: Աստուածութիւնը մերձ է: Յնորքը, խելայեղութիւնը կրօնք դարձած է, սուրբ դարձած է: Դիոնիսոս իր խորհրդանշանին՝ Տրդատին մէջ քրմաւորուած է: Բրիսանոյ լեցուած է Տրդատի ոգիով, աստուածութիւն եղած է: Վերջինը, ահաւոր միայն կը պակսի դեռ: Արիւն, արիւն: Սուրբ ցուլին արիւնի մէջ կրնայ արբենալ աստուածութիւնը: Արդէն կը դոայ տօնին ցուլը թատերաբեմին ետեւը: Պահակները հաղիւ կրնան բռնել զայն զուսպ իր պարաններով: Տրդատ առաջ կը նետուի, խելացնոր մարդկային գրոհը իր ետեւէն, ահաւոր կծիկի մը պէս: Աստիճան եւ զիրք, սեռ տարիք, բարեկամութիւն եւ թշնամութիւն — ամէն ինչ կը լուծուի սրբանուէր ցնորքի մը մէջ: Տրդատ Աստուած է: Բրիսանոյ աստուածուհի: Այերահերձ աղաղակի մը պէս, որուն մէջ կը զողզան հեշտութիւնն ու անձկութիւնը, ամբոխը թատերաբեմին վրայ կ'ողջունէ արձակուած ցուլը, որ բոլոր դուեւաւոր լապտերներէն, երաժշտութեան եւ կեցցէ աղաղակին անծայր ծփանքներէն շփոթած, զրդուած, պինչը վեր կը բռնէ, կատաղաբար կը ծեծէ ազիով, քանիցս կը դոայ եւ վերջապէս բուռն ոստումներով կը յարձակի Տրդատի դէմ, որ լայն նիղակով եւ հսկայ կացինով մը զինուած, իր կոնակովը կը պաշտպանէ հետերդները: Քանի մը վայրկեան խուլ լուծութիւն: Կը լսուի կատաղած անասունին սմբակին զոռոյթը թատերաբեմին տախտակէ յատակին վրայ, եւ մերթ ընդ մերթ անոր բարձր, շոյ շնչող խանչիւնը: Աչքերը սպառնացայտ կը ժայթքեն ակնակապիճներէն դուրս: Ճերմակը կը շանթէ: Յուլին մէն մի ոստումին ամբոխը Տրդատին ետեւէն կատաղաբար կը գոռայ, եւ քանիցս կը լսուի դողդոջուն անձկութեամբ լեցուն ձայն մը. «Տրդատ,

Տրդատ» : Եւ կը կանգնէր յետոյ պատի մը պէս , լուռ ու անշարժ , կարծես կ'ուզէր նշան առնել տեղի մը անասունին վիզին վրայ : Տըրդատ վեր առաւ նիզակը , ցուլին բոլոր շարժումներուն եւ ոստումներուն հետեւեցաւ , ինք ալ բարձրացուց իր ցլանման կանչը , եւ ամբոխը նմանցուց իր ձայնը : Ամէնուն սոքերուն տակ կը գոգար գետինը : Օդը կը ճչէր , երբ անասունին առաջին արիւնը ցայտեց : Եւ վայրենամոռունջ ցատկեց Տրդատին դէմ : Կացինը կը շողայ եւ երեք անգամ մահուան դարձուրելի ազդակով ցուլը տախտապարուեցաւ հեղեղի պէս արիւն կորսնցնելով : Պահելի մը — Ձեռք ունեցողը ձեռքերը լեցուց արիւնով , ծծեց զայն աղբիւրի ջուրի պէս , եւ նորէն լեցուց : Ետեւ դանուողները հրեցին , խուժեցին , քշեցին առջեւ եղողները : Կը զարնեն , կը դոփեն , կը հայհոյեն : Կը խեղդուին , օդ կ'ազդակեն , եւ կարծես իրենց գերեզմանէն դուրս գալով ձեռքերով բաներ մը կը բռնեն ամբոխին մէջէն : Ի վերջ : Ամէնքն ալ կ'ուզեն հաղորդուիլ Աստուածին : Ամէնքն ալ կ'ուզեն թողութիւն , փրկութիւն , կեանք , յաւիտենական կեանք : Գերբնական եղանակով կ'ուզեն միանալ Աստուածութեան հետ — ապշած կը նային : Ձոհին արիւնին մէջ Աստուածութիւնը կ'ըմպեն : Յուլին մարմինէն հազարաւոր կըտորներ կը փրցնեն ձեռքերով , եւ այս հոս միսին մէջ Աստուածութիւնը կ'ուտեն :

Կ'այլադանայ առաւօտը : Մեղմ դաղջ անձրեւ մը կը կաթկթէ տխուր ծանր ամպերէն , որոնց յետին պատաստուն ծայրերը կարծես թատերաբեմին կը վերաբերին իրրեւ կողմնակի մուտք : Ճերմակ սղոխներ կը բարձրանան ծովէն վեր եւ ահա կը պարածածկեն արիւնաշաղախ բեմը : Լայնասփիւռ հանդիսասրահը կ'ամայանայ եւ կը լքուի : Արիւն — քրտինք — գինիի հոտ կը լեցնեն ամէն ինչ : Յատակը , նրբանցքները , նստարանները լիք են թառամ ծաղիկներով ու պսակներով :

Ժողովուրդը հետզհետէ կ'անհետանար , որովհետեւ բաւական ատենէ ի վեր կ'անձրեւէր : Թատերաբեմին վրայ մարդակոյտին ետեւը , ամէնէն անդին , Տրդատ եւ Բրիտանոյշ : Սիրոյ զլայազիրկ արբերակներուն սիրակարօտ եւ արիւնի ծարաւի բազմութիւնը կը յարձակի անոնց վրայ : Տրդատ , ուժաթափ ու թուլցած , չի կրնար այլեւս ինքզինքը պաշտպանել խուժանին դէմ : Չզայարանքները կը լողան անհուն երանութիւններու մէջ : Ոչինչ գիտէր այլեւս ինք իր վրայ : Երբ վերջապէս գիտակցեցաւ , տակաւին թատերաբեմին վրայ կը ոտնուէր : Ո՛չ մէկ մարդ կար այլեւս : Իր թեւերուն մէջ կը բռնէր Բրիտանոյշին դիակը : Բազոսին ոսկի եղջիւրը հեշտանքի ամենաբարձր եւ զրգոտ րոպէին մահուան հարուածը տուած էր անոր մա-

տաղ կեանքին : Ո՛հ , քանի մը պահ դժոխային սարսուռի եւ հողեկան ահազանդի , տառապանքի : Հէք Տրդատ : Քանի մը անդիտակից , տարերային ցնցումներ , ջղոստումներ , սանդալ եւ թարտալ , այս հուժկու մարմինին , անասելի դարձուրանք — եւ , յետոյ , խոււարակուս զիչեր Տրդատի աչքերուն առջեւ : Գոպեւ անկենդան փլու գիակին վրայ , կրկին անդիտակից : Երբ արթնցաւ , պառկած էր իր անկողինին մէջ : Իր ձեռքերէն մին ալ վայրերիսի ձեռքին մէջ , միւսը բռնած էր Խոսրովի ուլտա , որ դարպիճին առջեւ ծնրաղիւր , երեսը կը ծածկէր եղբորը լանջքին վրայ , որ շունչի կարճ , ծանր տուր եւ առով կ'ելլէր կ'իջնէր : Պատին մօտ Ձեւսի արձանը հիւանդին վրայ կը նայէր :

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

Բ. Մ Ա Ս

ԳԼՈՒԽ ԺԶ.

## ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ՅՈԳԵՐԸ

Դիտկղետիանոսի զինուորական հրամանատարութեան յատկացուած պարզուկ վրանին տեղը պալատ մը շինուած էր, որ կրանիթէ կոփածոյ պորչ քարերով կը բարձրանար բանակատեղիի նման ուղղանկիւն ձեւով: Հաստաքեստ չորս աշտարակներ, չորս անկիւններուն վրայ, պալատին կուտային մեծաշուք այլ տխրական տեսք մը: Փառաւոր զարաստան մը կը շրջապատէր դայն եւ իր ներքին մասով կը հասնէր դէպի վար մինչեւ կապուտակ Մարմարա ծովուն դէմ: Իւրաքանչիւր վեց հազար հոգինոց երկու լէգէոններ բանակումի լայն շրջանակ մը կազմելով կը պահպանէին եւ դարաստանը եւ պալատը: Ո՛չ մէկ մարդ այլեւս առանց միջնորդի կրնար ժամանել կայսեր առջեւ: Առանց կանխաւ տեղեկութիւն տալու կայսերական անձնապահներուն սպային, առանց կանխաւ տալու անուններ եւ առանց խնդրելու կանխաւ արքունի վերին հրամանատարէն, որ, իր կարգին, հարկ եղած դիմումը պիտի ընէր արարողապետին, ո՛չ ծերակուտական, ոչ իշխան, իշխանազուն այլեւս չէին կրնար տեսնել կայսեր երեսը: Բոլոր աստիճանները զինուորական էին: Մէն մի պաշտօնատար քղամիդ կը կրէր ծիրանեղոյն կաշիէ գօտիով, որ մարմինին վրայ կը գոցուէր ոսկեկուռ ճարմանդով: Պալատին ամբողջ գետնայարկը տրամադրուած էր կառավարական գործերուն:

Ամէն սենեակ իր մասնաւոր դրասեղանը, վաւերազրերու զարակը, զրազիրները ունէր: Այդ բոլոր սենեակներուն շարքին կամ թեւին մէջտեղը խոշոր սրահի մը մէջ հաստատուած էր կայսերական աշխատութեան սենեակը: Պալատին վերի մասը կամ յարկը կը պարունակէր բնակութիւնը, հանդիսական սենեակները, հիւրանոցները եւ լողարանները: Հոյակապ տմատ մը նիւթով յարկ վերեւ: Կատալապական սրահին մէջ բաց բարձր պատուհաններուն առջեւ կեցած էին երկու Ինքնակալներ Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս: Կը կրէին վերտ դրահ սուկի արծիւներով եւ ծիրանի:

Արդէն ճիշտ ժամ մը երկուքը տեսակցած էին Պետութեան վիճակին վրայ եւ կարծիքներու փոխանակութիւններ բրած էին:

Մաքսիմիանոս Ինքնակալին կը հաղորդէր իր վերջին արշաւանքին վրայ ճշգրիտ տեղեկութիւններ: ՅՈՂ-ին ճամբայ ելլելով Քէօլնէն, Դիոկղետիանոսի հրամանով անցած էր Ափրիկէ, ապաւտամբները զսպելու համար: Նոյնը բրած էր արդէն Հռոմոսեան երկրամասին մէջ փտարանջող Գերմաններուն եւ Գոթերուն: Ափրիկէի մէջ ապստամբութիւնը արմատախիլ բրաւ, եւ ահա այս մանրամասնութիւններն էր որ կը գեկուցանէր Ինքնակալին: Դիոկղետիանոս իր բոլոր կարգադրութիւններուն հաւանեցաւ: Բայց կայսեր (այսինքն՝ Ինքնակալին իշխանակից Մաքսիմիանոսին) ճակատը պոստեցաւ, ամպոտեցաւ՝ Դիոկղետիանոսի սա հարցումին վրայ:—

«Թերէի լէպէտննե՞րն էին որ ապստամբեցան: Ի՞նչպէ՞ս»: Փոխանակ ուղղակի պատասխանելու Մաքսիմիանոս կրակ կտրեցաւ եւ սկսաւ խիստ անուպայ անարդանքներ, հայհուհներ ուղղել այդ լէպէտներուն, որոնք ամէնուն կողմէ բանակին մէջ կը ճանչցուէին իբրեւ ամէնէն քաջ եւ հաւատարիմ զինուորներ, թէլեւ Վերին Նիւրպոսէ սերած այդ լէպէտնականները մեծ մասով Քրիստոնեայ ըլլային: Մաքսիմիանոս յայտնեց թէ «առաջնորդները գէշ չէին, բայց ետքերը չուղեցին անսալ իմ հրամաններուս» — «Ուրեմն ամէնքն ալ ջարդե՞լ տուիք», վրայ բերաւ Դիոկղետիանոս, զայրացած: «Ոչ, սկիզբները միայն քանի մը հողի», յարեց կայսրը՝ այսինքն իշխանակից Մաքսիմիանոս, բարկացրտ հեղեղութեամբ մը, «յետոյ ուրիշներ, եւ վերջապէս բոլոր այս Ափրիկեցի բուրդ գլուխները»: — «Բայց խենթ ու խելաւ հրամաններ տուեր ես, առանց կանխաւ ինձի հարցնելու: Ի՞նչ անցաւ իրօք միտքէդ: Առանց խորհրդածելու, եւ միմիայն քու շարքմայքներէդ մէկուն անսալով»: Մաքսիմիանոս նեղուած ամառնային առաւօտեան տաքէն, մրմուռացող արջու մը պէս անկողինի մը վրայ նետեց ինքզինքը: Անկողինը իր ծանրութեան տակ ճոնչեց, ճարճատեց: Ինքնակալը իր կոշտ ու փոշոտ կօշիկները իրեն քաշեց: Մաքսիմիանոս թեւերը խաչակնքեց գլխուն տակը: Իր ահազին ու սեւաչող

աչքերը տակէն վեր Դիոկղետիանոսի կը նայէին: Տեսակ մը հեգնութիւն կար իր նայուածքին մէջ, տեսակ մը թեթեւ արհամարհանք իր ծանր, թանձրամիտ մարմինին նողկալի զիրքին մէջ: Բայց Դիոկղետիանոս տեղի չտուաւ: Աւելի զրգուած դուրս եկաւ իր ձայնը. «Կը խորհիմ որ ան՝ որ իր երիտասարդութեան հնօրեայ բարեկամը բարձրացուց իշխանակցութեան՝ կայսերակցութեան պատիւին, իրաւունք ունի զիմանալու, թէ ի՞նչու համար կոտորել տուիք այն քաջ թերացիները»: Առանց անդամ մը շարժելու, կամ առանց նայուածք մը Դիոկղետիանոսին վրայն քաշելու, մրմուռաց Մաքսիմիանոս. «Դիոկղետիանոս բարի թերացիները իրենց հայրենիքէն տեղահան բրաւ, անոնց անհնազանդութեան պատճառաւ: Անոնց անհնազանդութեան պատճառաւ ալ Մաքսիմիանոս թրէ անցուց դանոնք»: — «Չուղեցի՞մ միթէ քեզի հետ Ափրիկէ գալ»: — «Հը՛մ — ճիշտ այդ չէ: Բայց չուղեցի՞ն օղնել, բանակին մէջ եւ Գերմաններուն ու Չուրցերիացիներուն մէջ դաժնուած անիծեալ քրիստոնեաները բնաջինջ ընելու զործին: Անիծեալ զնդապետ Մաւրիտիոս շնորհակալութիւն յայտնեց իր զինուորներուն, որ կայսերական ջարդի հրամանէն բնաւ չսարսափեցան: Նաեւ յայտարարեց անոնց, թէ մինչեւ հիմա հաւատքի համար ինկող մարտիրոսներու մասին լսած էին, հիմա ահա աչքովնին ալ կը տեսնեն, որոնց իրենք ալ պէտք է հետեւին անասան: Եւ քրիստոնեայ ջարդուած զինուորներու դիակներով չըջապատուած, անոնց արիւնով կը սրակէր իր մարմինը» — Մաքսիմիանոս հոս խընդաց տմարդի կերպով — «Եւ կը ցնծար կ'ուրախանար որ անոնք իրենց համբաւեալ նահատակ ընկերներուն օրինակին կը հետեւին: Այս կերպով այդ անպիտան սրիկայ Մաւրիտիոս լէպէտնի կէսը իրեն հետ փճացուց: Լէպէտնին զրօշակակիրը, Եկուպերիոս, դրօշ ի ձեռին մնացած լէպէտնականները կը քաջալերէր իրենց նահատակ ընկերներուն հետեւելու: Ասիկա դաւաճանութիւն չէ՞: Մեոցուելու արժանի չե՞ն այդպիսիները»: Մաքսիմիանոսի կատաղութեան նուազանք, ցատկեց պառկած տեղէն եւ սկսաւ բերնէն եկածը փսխել քրիստոնեաներուն դէմ, հայհուհել, նախատել, այնպէս որ պալատին զրասնեակներուն մէջ զրազիրներու զրիշները դադրեցան աշխատանքէ, եւ բոլոր աշխատաւորները դուռներուն քովի պատերուն դրած իրենց ականջները, մտիկ կ'ընէին, եւ այս հետաքրքրութիւնը քիչ մը ոչ անախորժ փոփոխութիւն կը բերէր վիճակադրական, հաշուական, ընդօրինակութեան վերաբերեալ անոնց չոր աշխատանքին մէջ: «Իրաւունք չունէիր այդպէս ընելու», կը լսուէր Դիոկղետիանոսի որոտադոջ ձայնը: «Ինչո՞ւ: Ինչի՞ս կայսրն եմ ես»: — «Դուն մինչեւ իսկ օրէնքը չես գիտեր, ապուշ, այլապէս պէտք էիր գիտնալ թէ քրիստոնեաները քառասուն տարիէ ի վեր հաւատքի եւ պաշտամունքի

ազատութիւն ունին» : — «Դժոխքին շունը ուտէ քու օրէնքդ», պոռայ Մաքսիմիանոս : «Եթէ դուն չէնքով չնորհքով ինքնակալ մը ըլլայիր, պարտաւոր էիր դուն այս երրորդ սեռը, մարդոց վիժածը, այլասերած տարրը կոտորել ջարդել, մինչեւ վերջին քրիստոնեայ շունին պոչը ջնջել : Անոր համար է որ դուն կը պահես քրիստոնեայ սենեկապաններ, գրադարանի վերակացուներ, բանախօսներ, քու անձնապահ գունդիդ մեծ մասը քրիստոնեայ են, եւ ասո՞ր համար է որ անհոն, գրեթէ պալատիդ մօտը կը կանգնի այդ իշու զլուխ պաշտօններուն ճերմակ ախանը : Անոնց աղօթատունը, գոր մոռցար փլցնել տալու՝ այս պալատը շինած ատենդ : Անոնք կ'աճին զլսուող վերելք, անհ կ'ըսես՝ քեզի, Դիոկղետիանոս, ես քու հաւատարիմ իշխանակիցդ : Կը ձգես որ անոնք տարածուին, ընդարձակուին, մինչեւ որ ոյժ մը ըլլան եւ քեզ պարտաւորեն որ դուն ալ քրիստոնեայ ըլլաս» : Դիոկղետիանոս հեղինակ քրքիջ մը արձակեց «Դուն եւ իշխանակից կայսրերն են որ անոնց ճամբայ կը բանան այդ մասին : Ի՞նչ պէտք ունիմ ես անմեղ արիւն թափելու» : — «Իմ ըրածս առաջինը չէր, բարեկամս» : Եւ Մաքսիմիանոս չարամիտ ուրախութեամբ մը խորունկ խորունկ ինքնակալին բացած էր աչքերը : Դիոկղետիանոս վարի չրթունքը խածած կը դրադէր նայելով վաւերաթուղթերու ստուար դէպի մը վրայ : Երբ աչքերը վեր առաւ, տեսաւ Մաքսիմիանոսը իրեն մօտ, որ իր ծանր թեւը Դիոկղետիանոսի ուսին վրայ դրած էր : Իրարու երես նայեցան առանց խօսելու : «Բարկացա՞ր, ինքնակալ» : — «Ոչ : Մեր բարեկամութիւնը աւելի ամուր կը մնայ : Կը ճանչնամ քու սիրտդ, զիւրազրգիւ, հին հիւսիսային արջ : Եթէ զիրար չըռնենք, ամէն ինչ կը կործանի : Բայց, չէ — տուր աջդ, բարեկամ — այսպէս — չէ՞, մեր բարեկամութիւնը չի կրնար տկարանալ : Քու ներքինդ պատուաւոր, քարի եւ հաւատարիմ է : Դուն զիս մինակ չես ձգեր, այս հսկայ պետութեան լեռնանման ընդ չես ձգեր որ մինակ կրեմ : Ասոր համար մէկ ժամու ծնած ենք, երկուքս իրրեւ մէկ մական ենք — Մաքսիմիանոս, մի լքեր զիս : Բոլոր նշանները լաւ են, երբ ես նայեցայ քեզի համար : Դեղփիսի եւ Միլոյի պատգամները հաստատեցին քու հաւատարմութիւնդ» : — «Մեծ վատահոթիւն ունիս, պէտք է ըսեմ որ ամէն անկիւններէ եւ ծայրերէ պրպտելէ հաստատած ես իմ հաւատարմութիւնս», նետեց խնդալով Մաքսիմիանոս, միջանկեալ : «Ներողութիւն», պաղատեցաւ Դիոկղետիանոս, «մի չարանար ինձի : Դուն գիտես, կը ճանչնաս իմ վերջին աստիճան աւելորդապաշտ տրամադրութիւնս : Միշտ նշաններու եւ երգումներու կը կարօտիմ : Մտիկ ըրէ : Եկուր, երեսդ մի դարձներ», փափսայ յուզուելով Դիոկղետիանոս, եւ ամբողջ սրահին չորս կողմը Մաքսիմիանոսի ետեւէն կ'երթար, աղաչելով, պա-

ղատելով, միշտ ստիպողաբար : «Անգամ մը միայն, իշխանակից Կեսար» : «Ոչ» : — «Անգամ մը միայն» : «Ոչ» : — «Միայն այս վերջին անգամն ալ իշխանակից Կեսար» : — «Ախ, ասիկա կը վնասէ ինձի, աւելորդապաշտ սադ» : «Օ, չնորհք եւ գոհութիւն քեզ, իշխանակիցդ դու», խայտայ Դիոկղետիանոս, ուրախութենէն : «Ուստի, անգամ մըն ալ երդուընցիր ինձի հաւատարմութիւն մինչեւ գերեզման» : — «Կարճ կապէ, ինքնակալ», հառաչեց Մաքսիմիանոս, «Սարսափելի ծարաւ եմ» : Դիոկղետիանոս քահ քահ մը փրցուց եւ յետոյ սկսաւ : «Երդուընցիր յանուն Հերակլէսի» : — «Յանուն Հերակլէսի» : — «Երդուընցիր, յանուն Արամազդի» : — «Յանուն Արամազդի» : — «Երդուընցիր, յանուն Եհովայի» : — «Ո՞վ է այդ «յանուն»ը : — «Հրէից Աստուածը : Եհովա» : — «Նաեւ յանուն հրէից Աստուծոյն, միշտ հաշտ պիտի ըլլամ քեզի հետ : Այսինքն յանուն — Եզովայի» : — «Ո՞չ, Եհովա» : — «Յանուն Զեւսի շանթին ուրեմն, յանուն Եհովայի» : Մաքսիմիանոս արդէն շարունակ ետ քաշուելով Դիոկղետիանոսի առջեւէն մինչեւ դրան մօտ պացած էր : «Երդուընցիր յանուն Ստիւքսի» : — «Յանուն Ստիւքսի» : — «Երդուընցիր, յանուն հաղարակնեան Միհրի» : — «Հաղարակնեան» : — «Երդուընցիր, յանուն հաղարունկեան Միհրի» : — «Հաղարունկեան», լսեց Դիոկղետիանոս : Այս վերջին կոչին ընկերացող վռնջաձայն ծիծաղով մը Մաքսիմիանոս դուռնէն դուրս ցատկեց : Դիոկղետիանոս գնաց կեցաւ գոցուած դուռին առջեւ :

Զարնուեցաւ դուռը : Երեք անգամ ալ մինչեւ որ իմացաւ Դիոկղետիանոս : Իր կանչելուն վրայ ներս մտաւ արարողապետը եւ իմացուց թէ ունկնդրութիւն խնդրողներուն թիւը հիմա աւելի մեծցած է, այնպէս որ ինքնակալը չի կրնար զանոնք ամէնքը լսել այսօր : «Զե՞ս կարծեր» : — «Հաղիւ կը կարծեմ, Օգոստափառ» : — «Առաջինը թող մտնէ» :



Մէկի տեղ չորս եկան : Երկու հուժկու Գերմաններ խարտիչահեր, խոշոր անընտանի մօրուքներով : Կոշտ կտաւէ շապիկները անփակ կը ցուցադրէին անոնց մերկ, լայնչի լանջքը, որ ծածկուած էր սեւ գուռով մալերով, որոնք մօմոյն կարմիր, լայն սպիսներու միջեւ խաչաձև ու շեղ կը շողային : Զորսին այտերը, երեսները եւ ճակատներն ալ կը կրէին կատաղի կոխներու հետքերը : Երկու սպաներ, սպառազէն կը հսկէին աջ ու ձախ : Գերմանները կամ Գօթերը զլուխնին տնկած, միշտ դէպի ետեւ ձեւով խրոխտօրէն կեցած էին ինքնակալին առջեւ եւ շարունակ կը նայէին հանդարտ, խոշոր, կապոյտ աչքերով : Կենդանիի մորթը կռնակնին, մորթին առջեւի թաթերը



վերօք կուրծքին վրայ մինչեւ վիզը իրարու փակցուած, անոնց կուտար տարերային, բնամոյն տեսք մը: Անոնց գունատ այտերը եւ նիհար աչքերը միայն գուշակել կուտային, թէ իրենց վերջին բնակութիւնը հոսնոսի կամ Դանուբի վրայ եւ Գերմանիոյ անտառներուն սէջ չէր եղած, այլ Նիկոմիդիոյ բանտին մէջ:

Ինքնակալին նայուածքը ուղղուեցաւ. «Բազող»ներուն երկու պարազլուխներուն, որոնք ապստամբութեան մղած էին ցեղը, թափառաշրջիկ շարք մը խեղճ ողորմելի, կիսահեթանոս, կիսաքրիստոնեայ Գերմաններու եւ Գոթերու: Մաքսիմիանոս երկար եւ դժուարին կոխն'ը՝ վերջ խորտակած էր զանոնք եւ այս երկու պարազլուխները հետը տարաս էր Հոսմ իր յաղթական թափօրով: Հոսմի փողոցներու մէջէն մարդկային խուռն շարքերուն կենդանի պատերուն միջեւ, անոնք Մաքսիմիանոսի յաղթակառքին առջեւէն հետիոտն կը քալէին իրարու շղթայակապ: Իր կամքին համաձայն պէտք էր որ մեռնէին անոնք: «Ինչո՞ւ դարձեալ զէնքի դիմեցիք եւ ապստամբութիւնը վարեցիք: Բայց դուք զիտէիք, որ ձեր արարքին պատիժ մահ կը սպասէր»: — «Մենք մահէ չէինք վախնար», պատասխանեցին երկուքը միարեարն: «Ինչո՞ւ մտիկ շըրիք եւ հանդիստ չկեցաք»: — «Անօթութիւնը մղեց մեզ», յայտարարեց մէկը: «Պարտաւորուեցանք փախչիլ խուժող Գոթերուն առջեւէն, Դանուբէն Հոսնոս: Հոն ալ մեր դէմը դատանք հոռմէական բանակը, որ չէր ուզեր մեր աւելի առաջ երթալը: Ի դուր ազաւեցինք: Հարկը կոխի մղեց մեզ: Ապա թէ ոչ՝ անօթի պիտի մեռնէինք կին ու զաւակ: Քրիստոնեաները միայն բարի զրտնըւեցան մեզի: Կերակրեցին մեր սովալլուկ կիներն ու զաւակները: Մեր հիւանդները իրենց անկողիններուն մէջ պառկեցուցին: Իրենց Աստուածը, Քրիստոս, բարի է, եւ հեթանոսները բարի մարդիկ կը դարձնէ: Քրիստոնեաները մեզի կարողաւ տուին իրենց սուրբ զիրքերը: Իրենց Տէրը, Քրիստոս, բարի է աղքատներուն համար: Ան կը ձայնէ. վա՛յ հարուստներուն եւ զօրաւորներուն, որոնք մեզ հալածեցին եւ կողոպտեցին: Ան աղքատներուն կը խոստանայ երկինքի արքայութիւն մը: Այդ արքայութեան մէջ Քրիստոս Ինքնակալ է: Պիտի ունենայ ամէն իշխանութիւն եւ բոլոր ձեր իշխանութիւնները պէտք է քայքայէ»: — «Ուրեմն, դուք ալ կը հաւատաք քրիստոնեաներուն այդ Աստուծոյն»: — «Կը հաւատանք անոր», ձայնեցին երկուքը ուժով եւ եռանդով: «Ան մեր իշխանն է: Մեր ամէնուս կուտայ յաղթութիւն եւ հաց եւ պատսպարան»: — «Այդպէս... Բայց ինչո՞ւ թողուց որ յաղթուէիք»: — «Անոր թագաւորութիւնը այս աշխարհէն չէ»: — «Մենք պէտք է հոս չարչարուինք, տառապինք, բայց կուզայ երկինքի մեծ թագաւորութիւնը, այն ատեն պիտի ուտենք եւ խմենք անոր հետ, իրեն համար պիտի կուռինք եւ բոլոր իր

թէնամիներուն պիտի յաղթենք: Բոլոր կայսրները պիտի տապալին, աշխարհի բոլոր մեծատունները տակ պիտի երթան, նաեւ քու թագաւորութիւնդ, ով Ինքնակալ, եւ Քրիստոս միայն պիտի տիրապետէ»: — «Ուրեմն, սպասենք, տեսնենք, մարդիկ: Քանի որ Քրիստոնեայ էք, պէտք է ուրեմն մեռնիք: Գթութիւն կը հայցէ՞ք»: — «Ոչ մէկ շնորհք»: — «Ի՞նչ: Այս ըմբոստութիւնը: Սուրո՞վ կ'ուզէք մեռնիլ»: — «Կարեւորութիւն չունի, ամէնը մէկ է մեզի համար: Մեռցուր մեզ Ինքնակալ եւ Քրիստոսի քով զրկէ: Մեր կիներն ու զաւակները զերի են, մեր բնկերները սպաննուած: Ի՞նչ պէտք ունի մեզ կեանք»: — «Գացէք: Ես կ'ուզեմ փրկել ձեր կեանքը: Դուք արժանի չէք մահուան»: Երկուքը ողջուեցին եւ յուզեալ աղաչանքով ձայնեցին. «Ինքնակալ, արժանի ըրէ մեզ մահուան»: Կայսրը զրասեղանին առջեւ կեցած էր, խոր հիացումի մէջ ընկզմած: Քանի անգամ որ զրիչը ձեռք կ'առնէր եւ կ'ուզէր մահալծիւր ստորագրել, այնքան ալ կը կենար դարձեալ եւ վար կը զնէր զրիչը. «Քրիստոս է Ինքնակալը»: Այսպէս կ'արձապանդէր իր ներսիղին:

Դուրս դարնուեցաւ: Կայսրը ձայնեց: Քանի մը ականաւոր ծերակուտականներ ներս մտան եւ քիչ մը խոնարհեցան Կեսարին առջեւ: Իրենց ձերմակ պծղնաւորներուն վրայ կը կրէին կապոյտ նափորտ մը նրբահիւս ոստայնանկուած: Հանրային հաղորդակցութեան եւ վաճառականութեան պատգամաւորներ էին՝ որոնց ասկէց առաջուան բարձր զիրքը եւ եկամուտները ջնջած էր Դիոկղետիանոս իր կառավարութեան սկզբնաւորութենէն քիչ վերջը: Պատգամաւորութեան պետը խօսք խնդրեց: Բայց հազիւ կայսրը հասկցած էր թէ խնդիրը ինչ բանի վրայ է, սաստիկ բարկացաւ: «Կը համարձակիք դարձեալ իմ առջեւ երևնալ: Կը հաւատա՞ք թէ վերջ ի վերջոյ ես զղջացած եմ, եւ ձեզ դարձեալ պիտի արտօնեմ պալատ դալ: Դուրս, կ'ըսեմ ձեզի: Հիմա կ'ուզէք տեսնել թէ ով է Ինքնակալը: — Ո՛չ: Լուէ՛: Ոչ մէկ բառ: Ոչ մէկ առարկութիւն: — Ձեմ ուզեր լսել: Ձեմ կրնար եւ չեմ ուզեր որ այսուհետեւ այս գծուձ շողոքորթութիւնները ըլլան հոս պալատին մէջ: Այս գձութիւններուն նպատակը բարի չի կրնար ըլլալ երբեք: Ո՞վ կրնայ ստուգել թէ դուք ամէն բանի մէջ ճշմարտութիւնը կը հաղորդէք եւ չէք կաշառուիր հարուստներէն: Ձեր բնչաքաղցութեան երեսէն քանի քանի անմեղներ գետնի տակ դացին: Ձեր կոչումը ամէնէն լաւ մարդը անգամ անպատիւ կ'ընէ: Վայ, ամօթ անոր որ իր կեանքը պիտի գործածէ մարդոց սխալներէն օգտուելու եւ անոնց քիթէն բռնած հոս կայսեր բերելու — Անպատիւ տրամի, վատթար փառասիրութեան, բնչաքաղցութեան սիրոյն համար: Ո՛չ, ո՛չ, ես չեմ կրնար, կարող չեմ միջնորդներու, առկուսառուներու, վաշխառուներու այս պաշտօնը կրկին հաստատել արքու-

նիբիս մէջ եւ հանդուրժել: — Ի՞նչ»: — «Միակ բառ մը, Ինքնակալ»: — «Եղիցի»: — «Մեր կոշուձին կամ պաշտօնին վրայ ձեր վճիռը պատիւ կը բերէ ձեզի, ո՛վ ամէն իմաստուն, ամենակարող, ամենաբարի ինքնակալ: Ինչպէս ամէն ինչ, զոր դուք ըրիք ձեր տիրապետութեան կարծատեւ շրջանին մէջ: Ամէն ինչ կ'ապացուցանէ միմիայն ձեր իմաստութիւնը, որ հաւատար է ձեր արդարասիրութեան եւ ճշմարտախօսութեան»: Դիտկեցիս ինչ որ հաւատար է ձեր արդարասիրութեան եւ ճշմարտախօսութեան»: — «Ըսէք»: — «Ճիշտ ձեր արդարադատութիւնը, այո, ձեր բարեպաշտութիւնը, որ հանրածանօթ է, ճիշտ այս է որ մեզ հոս մղած է: Ամէնքն ալ դիտեն, թէ դուք ինչպէս կ'ուզէք ամէն բանի մէջ արդարացի ըլլալ: Այս պատճառաւ դուք բարեկարգեցիք զբարձրագոյն ապականեալ զրուսիւնը, եւ ոսկին ու արծաթը դարձեալ յարդի եղան: Այս պատճառաւ դուք, իբրեւ հայր բովանդակ մարդկային սեփն, կ'իններուն, այրիներուն, որբերուն, նոյնիսկ գերիներուն հայր հանդիսացաք ճշմարտապէս, նմանը չլսուած պետական իմաստութեան հիանալի օրէնքներով: Քրիստոնեաները անգամ կը համբաւեն ձեր քաղցրարարողութիւնը եւ կը յուսան ձեր արդարադատութեան»: — «Շնորհակալ եմ քեզի, ատենարան, քու զովեստիդ համար», ընդմիջեց կայսրը եւ ոտքի ելաւ: «Եւ ահա», շարունակեց զգուշաւոր կերպով, առեւտրականներուն փոխանորդը, «ճիշտ ձեր բարութիւնը, ձեր արդարադատութիւնը, այո՛, որ այսօր մեզ ձեզի կը բերէ երկար ճամբորդութենէ մը վերջ: Որովհետեւ — հաւատացէք մեզի շատ ճամբորդող մարդոցս, որ շատ մարդիկ եւ պաշտօնատարներ կը ճանչնանք, հաւատացէք մեզի — մարդիկ — դէժ են: Մարդիկ սուտ են»: Վարժուած զպիրներու պէս միւս վեցն ալ միաձայն. — «Հաւատացէք, ո՛վ Ինքնակալ, աստուածամանդ Օդոստափառ, մարդիկ դէժ են — մարդիկ սուտ են»: Դիտկեցիս ինչ որ հաւատար է մտահոգ խումբին նայեցաւ, անվստահ: Բանախօսը շարունակեց. «Այս պատճառաւ չենք կարծեր որ մէկ ինքնակալ կամ երկու, նոյնիսկ եթէ անոնք ձեր երկուքին չափ իմաստուն ըլլան — եթէ սակայն այս ալ հնարաւոր ըլլայ — չենք կարծեր որ Ինքնակալը միլիոնաւոր մարդոց պետութիւն մը ինք կարենայ վարել եւ հսկել»: — «Կարելի չէ ասիկա», հաստատեց կայսրը: — «Անկարելի է», հաստատեց խումբը: Ատենարանը շարունակեց. «Այս պատճառաւ կը կարծենք որ ինքնակալը պէտք չէ — եթէ մեր այլապէս ամենախոնարհ խորհուրդը նեղութիւն չի պատճառեր իրեն, բոլորովին ջնջէ հազորդակցութեան եւ վաճառականութեան հնաւանդ հաստատութիւնը: Մենք, իբրեւ վերին պաշտօնատարներ ամբողջ վաճառականութեան եւ հա-

զորդակցութեան, կայսրութեան մէջ, զացինք, անակնկալ կերպով եւ յանկարծակի, ձեր կայսրութեան ամէնէն մէկուսի վայրերը: Կը ճանչնանք բոլոր պաշտօնատարները, ունինք ձեր գաղտնի ունկնդիրները եւ տեղեկատուները, որոնք ձեր գաղտնի աչքերն ու ականջներն են, եւ կը քննեն պաշտօնատարներուն հնազանդութիւնն ու հաւատարմութիւնը ձեր հրամաններուն հանդէպ: Ինքնակալը թոյլ կուտայ հարցում մը»: — «Հարցուցէք»: — «Ի՞նչպէս կ'ուզէք դուք անձամբ քննել հասկնալ բոլոր պաշտօնատարներն ու մարդիկը: Ո՞վ պիտի հակադէպ դանոնք, երբ դուք մեզմէ բառնաք հին պաշտօնն ու իրաւունքը»: Կեսարը լուռ: Բանախօսը շարունակեց. «Այո՛, մենք զիտենք թէ ձեր սպասարկութեան պատկանողներուն մեծ մասը արժանի է ձեր սաստին, որովհետեւ անոնք իրենց լուրջ, սուրբ պաշտօնը շարաչար դորձածած են կաշառակերութեամբ, ընչաքաղցութեամբ, վրէժխնդրութեամբ եւ թալանով: Բայց թոյլ տուէք, ո՛վ բարձր ինքնակալ, մեզմէ մէկը իր պաշտօնը շարաչար դորձածած է միթէ: Կարելի է՞ մեզմէ մէկը ամբաստանել իբրեւ կաշառակեր, թալանող, ստախօս կամ անարդար»: — «Ո՛չ, որքան որ դիտեմ», հաստատեց կայսրը: «Ուստի կը համարձակինք, ո՛վ ամենարդար Ինքնակալ, ձեր արդարադատութեան եւ իմաստութեան զիմել եւ սա առաջարկութիւնը ընել ձեզի. կայսերական հրովարտակով մեզ վեցս դոնէ, իբրեւ որեւէ ամբաստանութենէ զերծ առեւտրական միջնորդներ, կը հաստատէք դարձեալ մեր առաջուան իրաւունքին եւ պաշտօնին մէջ, եւ դարձեալ կանոնական ունկնդրութիւններ շնորհ կ'ընէք ընդունելու մեր տեղեկատուութիւնները ժողովուրդին եւ պաշտօնատարներուն վրայ»: — «Ուրեմն կա՞ն միշտ ամբաստանեալ առեւտրականներ», յարեց կայսրը բարկութեամբ, միջանկեալ: Մերակուտականները ծիծաղեցան միաձայնութեամբ: Կայսրը չփոթած, շուարած էր: Ատենախօսը պատասխանեց անուշակ համեստութեամբ մը եւ դաշն ձայնով. «Ձարհուրելի վաշխառուն իրաւ է որ դադրած է, ո՛վ աստուածակերպ Օդոստափառ, բայց կան առեւտրականներ որոնք նախամեծար կը համարին քու հաւատարիմ դիտողները եւ հպատակները, Հոռոմի եւ Աթէնքի զլխաւոր քաղաքներուն ազգատ դասակարգը բոլոր անմեղ մանուկներով — անօթի ձգել, փոխանակ ուտեստեղէններուն եւ ամէնէն առաջ հացարոյսերուն համար այն դինը որոշելու ի՞նչ կերպով եւ ի՞նչ չափով որ դուք, ո՛վ ամենաբարի հայրդ պետութեան, պաշտօնական յայտարարութեամբ սահմանած էք իբրեւ ամենարարձր դին»: Կայսրը սրտմտելով աթոռէն ցատկեց եւ խոշոր քայլերով չափեց սրահը: Մովուն ալեկոծուձը եւ շատ մը ճանճերու զղղիւնը միայն կ'ընդմիջէր վայրկեաններ տեւող լուսութիւնը: Եօթը

մարդիկը իրենց նայուածքներով կը հետեւէին կայսեր մէջ մի դիմադիծին, մէջ մի շարժումին, մինչ անոր ներսիդին կատաղութենէն թունդ ելած էր: Դարձաւ կեցաւ եօթնին առջեւ, դունաթափ: Իր կապոյտ աչքերը կարգով մէջ մին կը դնէր:

«Ճշմարտութիւնը խօսեցէք: Կ'երդուրեցնեմ ձեզ: Կենաց եւ մահու խնդիր է սա: Ճշտիւ ամէն ապահովութեամբ կը ճանչնա՞ք մեծ կամ փոքր առևտրական մը, որ հրամանս ոտնակոխ ըրած է»: Եօթը ծերակուտականներուն խումբը հանդիսաւորապէս ձայնեց, կարծես իրրեւ միակ դատաւորի մը վճիռը. «Ասեր՝ Աթէնքէն, Հըրեան»: Կայսեր վճիռը, այնքան կարճ եւ խուլ լսուեցաւ դահիճին տապարին իյնալուն նման: «Թող մեռնի»:

Քանի մը վայրկեան վերջ միջնորդներուն ատենարանը մազաղաթեայ թուղթ մը կը կրէր ձեռքը: Կայսեր ստորագրութիւնը եօթը ծերակուտականները կրկին կը վերահաստատէր իրենց նախկին արքունական պաշտօնին մէջ:

Լայն բաց պատուհաններուն սենեակը երթալով կը դիտէր մըտախոհ ծովը: Ափունքը կեանք կը վիտար: Մըջիւններու պէս հեռուէն կը տեսնուէին մարդիկ, որոնք կը փափաքէին սպասել նաւուն գալուն, որուն բարձր կայմերը սպիտակ առագաստներով դեռ հազիւ տեսանելի էին կապոյտ, չոզելից հեռաւորութենէ մը կայսեր աչքերուն: Ազօտ կերպով Ինքնակալին ականջին դարկաւ խուռն բազմութեան բարի գալուստի ազդակը: Անոր նայուածքները կը տատանէին անձկազին խոր կապոյտ ծովուն վրայ, որուն ջուրը կը կայծկլտար մեղմ վէտ վէտումով մը հեռուէն կէսօրուան արեւուն լոյսին մէջ: Անվերջանալի ուրախութիւն մը ծովուն եւ ցամաքին վրայ: Ծովեզերքին երկայնքը կամ դուրսը հեռուն ծովուն մէջ ջուրին վերեւ ճերմակ թիթեռնիկներու նման կը ճօճէին մեծ ու փոքր դրօսանաւերու եւ մակոյկներու բազմադիմի առագաստները: Կայսրը իր նայուածքներուն մէջ խորասոյզ, չէր լսած որ ահա երեք անգամ, ամէն անգամուն ալ աւելի զօրաւոր, սենեակին դուռը կը զարնուէր: Բայց դուրսի աշխարհը այնքան գեղեցիկ եւ կեանքը այնքան դուարթ էր որ: Աւելի ուժով զարնուեցաւ:

«Ա՛յ, իրաւ: Բայց վայրկեան մըն ալ միայն: — Ահա նաւը կը հասնի»: Հզօր ազդակ մը թափով խուժեց մինչեւ իսկ կայսեր մօտ, յաճախ իրարու վրայ: Դրօշներ կը տատանէին կայմերու վրայ: Եւ ահա չէր դիտեր ուրկէց պատահեցաւ — կայսրը հոտաւէտ, կապոյտ, ողկուզածեւ ծաղիկներով լեցուն մեծ ճիւղ մը փրցուց իր պատուհանին տակէն, քանիցս վեր երբեցուց օդին մէջ նաւուն կողմը, եւ բոլոր ուժովը պոռաց նաւուն գալուստը ողջունելու համար: Դուռը ա՛լ աւելի ուժով կը զարնուէր: Կայսեր «մտէք» կոչը հնչեց, քիչ մը

զրգոռած: Դրան փեղկերը բացուեցան: Յուզիթ, Աթէնքի հրէուհին, ներս մտաւ անրարբառ եւ ինկաւ կայսեր առջեւ: Կուպրի պէս սեւ իր գոռու մազերը կը ծածկէին կայսեր ճերմակ սնդուսէ կիտակօշիկները: Յուզիթին ներս մտնելը եւ սաքը իյնալը այնքան շուտ եղաւ որ կայսրը բոլորովին յանկարծակիի գալով կեցաւ, եւ շուարումով մը քանի մը վայրկեան դիտեց ճերմակ, թանձր քօղով ծածկուած կերպարանքը: Այնպէս մնաց գետնամած եւ չէր շարժեր, մինչեւ որ կայսրը իրեն ըսաւ փոքր ինչ անապահով ձայնով մը. «Ոտքի ելի՛ր, ո՞վ ես դուն: Ի՞նչ կ'ուզես»: Յուզիթ գլուխը նետեց ետեւ ծոծրակին, եւ կորովի շարժումով մը երեսին վրայէն անդին տարաւ մտղերը եւ հիմա ուղղակի կայսեր ուղղած կ'ըլլար իր դէմքը: Երկու խոշոր, սեւաչոզ աչքեր կ'որոնէին կայսեր նայուածքը, սիրտը: Դեռ ոչ մէկ բառ չէր ըսած Յուզիթ: Անոր ազուր երեսը դունատած էր: Դեղին գիծեր աչքերուն շուրջ, չրթունքը անդոյն ձեռքերը կարծես մեռած, արտակարգ հակապատկեր մը ականջի օղբուն եւ ձեռքի մտանիններուն կարմիր սեւ կանանչ աղամանդին, զմրուխտին, կարկեսանին եւ տպագիրոնին: Երկու բոլորչի, սպիտակ, ճախարակեայ բազուկներ բարձրացան հիմա դէպի կայսեր երեսը: Թրթռուն չըրթունքները կը հծծէին յայտնապէս լսելի. «Ես եմ Յուզիթ, Ասերի կինը: Կը փափաքեմ անոր թշնամիներուն հարուածին առաջք առնել: Ինքնակալ, դեռ ժամանակ կա՞յ պաղատելու անոր կեանքին համար»: — «Ան մահուան դատապարտուած է»: Կարմիրին յետին շունչը անհետացաւ Յուզիթի երեսին: Զիւնասպիտակ չրթունքը իրարու վրայ սեղմուեցան, սեւ աչքերը կկոցեցան եւ կոպերը բացուեցան, կարծես կ'ուզէին դուրս հանել նետել աչքերը: Քրտինքի չիթեր կը մարդրտէին Յուզիթի ճակատին վրայ, մինչեւ մազերուն արմատը: «Անո՞նք էին, Ինքնակալ», հծծեց հրէուհին: — «Ո՞վ» — «Առևտրական միջէին, Ինքնակալ», հծծեց հրէուհին: — «Ո՞վ» — «Առևտրական միջնորդները»: — «Այո՛, անոնք էին: Բայց ոտքի ելի՛ր, Յուզիթ: Յաւելգ հիւանդ կ'ըլլաս: Նստէ՛, հոս»: Յուզիթ ոտքի ելաւ, կայսրը քաղաքավարօրէն թեւը մտաւ, եւ ան տատանելով դնաց դէպի բազմութիւնը դրասեղանին առջեւ: Ուժաթափ ինկաւ աթոռին մէջ, գլուխն ու թեւերը վար ձգած: Կարծես անկենդան իրմէ վար կ'իյնային ոտքերը ոսկեհիւս մուճակներուն մէջ, մատներուն եւ սրունքներուն շուրջ ծիրանի ժապակեններով եւ խաչածեւ կապերով: «Զիս ալ կը մեռցնէք, Ինքնակալ», հծծեց ան, առանց վեր նայելու: «Ես դանոնք միայն կը պատժեմ որոնք կ'անաստեն հրամաններուս եւ կ'անարդեն զիս»: — «Իմ մարդս ատանկ բան չէ ըրած: Ընդհակառակն: Զգուշաւոր առևտրական մըն է, որ ոչ միայն իր շահուն վրայ կը մտածէ, այլ միշտ ժողովուրդին եւ կայսրերուն օգուտն ալ կը փնտռէ»: — «Անշուշտ, իր դրամը ինքնակալներուն եւ շատ իշխաններու պատուա-

կան ծառայութիւններ մատուցած է: Բայց — » — «Եւ որքան պարտական մնացած են անոր եւ չէ կրցած սննտ առնել իր տուածները, ասիկա դիտէ՞ արդեօք Ինքնակալը»: — «Ատիկա ինձի հետ ի՞նչ վերաբերութիւն ունի, Յուզիթ: Ես անոր սչինչ կը պարտիմ»: Յուզիթ անկոյն ծիծաղեցաւ: «Թէ արդեօք մտցած եմ, Յուզիթ: Ի՞նչ պիտի ըլլայ քու թաղուն, նկուած ծիծաղ, քու խոտովալ յութիւնդ»: Այս անգամ Յուզիթ սիրուն ժպիտ մը ունեցաւ, իր այտերը շիկնեցան քիչ մը, իր սին նայուածքները քիչ մը փայլ ու կեանք ստացան: Զայնը եղաւ աւելի ապահով. «Ինքնակալը ամէնուրեք կը դժուարանուի իրրեւ մեծ ճարտարագետ, իրրեւ քաջալիրիչ արուեստի եւ գիտութեան, իրրեւ հիմնադիր հոյակապ մատենագրարաններու եւ ահաղեմիաներու: Անմահ պիտի ըլլայ իր անունը, որովհետեւ Արամազդին եւ Միհրիւն բոլոր մեհեանները, կրկէսը, յոյարանները, ամէն բանէ առաջ տաք բաղնիքները դոր ինքնակալը Հոռոմի պարզեցեց, բոլոր այս շինութիւնները ապագայ սերունդներուն պիտի ցուցնեն թէ Դիոկղետիանոս ինչ տեսակ խաղաղութեան Օղոստոս մը եղած է»: — «Եթէ միւս քաղաքները ինձի աւելի երախտագէտ չըլլան քան Հոռոմ, իմ համբաւ աւելի հեռուները պիտի չհասնի»: — «Աստուածարեալ Աւգոստոսը դիտէ՞ արդեօք, թէ ինչո՞ւ Հոռոմայեցիք զինքը չեն սիրեր»: — «Ճշտիւ չեմ գիտեր, բսէ, ըսէ, Յուզիթ: Մեծ հաճոյք կը պատճառես ինձի: Ըսէ ինձի», խնդրեց Դիոկղետիանոս, ցանկութեամբ մօտենալով Յուզիթին: «Այն պատճառաւ որ մենք երկուքս, ես եւ Մարքսիմիանոս չենք փափաքիր որ անխտահայի Պրետորեան դունդերը այլեւս կայսերական անձնագահ չըլլան, այլ աւելի ապահով կը զգանք շրջապատուիլ տասներու հազար Իլլիրիացիներէ եւ Դակիաններէ, որոնք իրրեւ մեր ցեղակից բնակները աւելի փտահայի են հաւատարմութեան մասին»: — «Նաեւ սա, ինքնակալ» — «Կամ, որովհետեւ ես այլեւս չեմ ուզեր բնակիլ Հոռոմի շարաշուք պալատներուն մէջ, չեմ ուզեր բնակիլ կոյսնոց դարձած Հոռոմի մէջ, ուր ամէն փողոց, ամէն պարտ, Կուիրինայի եւ Պալատինի վրայ մէն մի քար մարդասպանութիւն եւ աւաղակութիւն կը յիշեցնէ»: — «Նաեւ չենք ալ սիրեր որ կայսրը հոս բնակի: Բայց աւելին կայ»: — «Ուրեմ մըն, Յուզիթ, — այսինքն այլեւս չեմ հալածեր քրիստոնեաները»: — «Այդ ալ անշուշտ: Բայց Հոռոմի մէջ աւելի քիչ»: — «Ուրեմն ի՞նչ»: Յուզիթ կարմրեցաւ եւ դրաւիչ քաղցրութեամբ մը ծեփեցեցաւ: Պարանոցը երկարեց առաջ եւ դուրսը մեղմով ծոցը կայսեր դէմ. «Հոռոմի ծերակուտականները — եւ ոչ միայն Հոռոմի — Աթէնքի մէջ ալ շատ դժգոհ են ծանր տուրքերուն պատճառաւ, որոնց բեռը իրենց վրայ է միայն, մինչդեռ հարուստներէն շատ շատերը, չխօսելով ժողովուրդին վրայ, կը վայելեն ուղածնուն չափ, ինչ որ դուն

աստուածարեալը Աւգոստոս կը պարզեւս իրենց իրրեւ պատիւ եւ իրրեւ դիւրութիւններ»: — «Գիտեմ, գիտեմ, իմ իշխանակիցներս անգութ են եւ անկուշտ, միշտ շատ բանի աչք կը տնկեն»: — «Այսպիսի կառավարութիւն մը շատ սուղ կը նստի, ամէն մարդ չ'արբոններ ասիկա», գիտել տուաւ Յուզիթ խորամանկօրէն, միջանկեալ: «Եւ Ինքնակալ մը որ տրամադրութեան տակ չունի բուսական դրամ, կէս իշխանութիւն միայն կ'ունենայ»: — «Ճշմարիտ է Յուզիթ, շատ ճշմարիտ»: — «Եւ կայսր մը որ իր պարտաւորիք կամ աննկարողութիւն արհիւն մէջ է, աւելի վէշ է, մանաւանդ երբ, ինչպէս ձեզի պէս կայսեր մը համար, ո՞վ արդարապատ Ինքնակալ, իրաւունքը ուժէն առաջ է: Գիտենք, թէ ինչպէս պարզ կ'ապրիս դուն, գիտենք քու հայրական հոգածութիւնդ, եւ քեզ սիրողները մանաւանդ շատ աւելի կը ցաւին քեզ քու աննկարողութեանդ ձեռքին յանձնուած տեսնելով: Խորհէ նաեւ, աստուածարեալ Աւգոստոս, թէ մեր օրերուն մարդոց ձեռքը դրամը ի՞նչ ոյժ եւ ապականութիւն է: Դրամով մարդ կը զնէ մարդասպան եւ դաշոյն: Առեւտրական միջնորդները ահարկու ոյժ մըն են, Աւգոստոս: Իրենց թաղուն ցանցերը կը հիւսեն ամբողջ կայսրութեան մէջ ամէն կողմ իրենց զաղտնի գործակալները ունին հարուստներուն եւ աղքատներուն մէջ, իրենց լրտեսները հանրային վաճառանոցներուն, նաւահանդիսաներուն մէջ, գործարաններուն եւ աշխատանոցներուն մէջ գիտեն ամէն ինչ, Ինքնակալ, գիտեն ամենայնորին եւ ամենափոքր դրամը դոր դուն կը պարտիս»: — «Այդ պատճառաւս կ'ուզէի դանոնք, այս՛, մէջտեղէն վերցնել», հատաչեց կայսրը: «Բայց քիչ առաջ հոս եղող ծերակուտականները լաւ տրամադրուած են իմ մասին, անոնք իմ ձեռքին մէջ են, որոշակի ապացոյցներով յայտնեցին»: — «Դուն անոնց ձեռքին մէջ, Աւգոստոս: Դուն անոնց գերի ես, անոնց ցանցին մէջ բռնուած ես եւ վերջ ի վերջոյ հեղձամահ պիտի ըլլաս»: Յուզիթի կայծկլտուն աչքերը, խորհրդաւոր եւ ազդարար, կը հանդէպին կայսեր վրայ, որ սկսած էր դարձեալ մտահոգուիլ: Յուզիթի առջեւ խոտովալ քայլեր կ'առնէր հոս ու հոն: Յետոյ եկաւ կեցաւ առջեւ, թափով նայեցաւ անթարթ իր պողպատեայ կապոյտ աչքերով, եւ յետոյ ըսաւ յանկարծ ցասկոտ. «Այս ամէնը դուն կ'ըսես հաղորդակցութեան եւ վաճառականութեան արքունիքնիչներուն դէմ, որովհետեւ անոնք քու մարդը ամբաստանեցին»: Յուզիթ դարձեալ ժպտեցաւ, յաղթութեան մասին ապահով. «Օրհնեալ ըլլայ Եհովա», ձայնեց, «անոնք քու թշնամիներդ էին մինչեւ: որ իմ մարդս ձերբակալել տուին: Ահա, կարգա, Ինքնակալ»: Պարեգօտին տակ, պօտիէն վեր, ծոցէն դուրս քաչեց կնքուած մազաղաթ մը եւ երկարեց զայն կայսեր: Զուգեց ընդունիլ, եւ սաստիկ յուզուած սենեակին շրջանը կ'ընէր: «Ըսէ, ի՞նչ է: Աղէտք կը նշանակէ: Կան-

չեմ քուրմերը, որ նշանները հարցնեն հասկանան: Աղէտք մը, մօտալուտ է, կը նախապահման: — «Յանուն Եհովայի, որ Երկինքն ու Երկիրը ստեղծեց, քու Երջանկութեանդ ի նպատակն նշանները, աստուածայինդ Աւոյնոստոս»: — «Երգութիւնդ, Յուրիթ, Երգութիւնդ յանուն քու Աստուծոյդ Եհովայի»: — «Ես կ'երգնում», բառ Յուրիթ ոտքի ելլելով եւ հանդիսաւորապէս, «Ես կ'երգնում յանուն Եհովայի, միայն միայնոյ Աստուծոյ Երկինք եւ Երկիր, կ'երգնում յանուն Երկինքին, կ'երգնում յանուն Սրբոյ քաղաքին Երուսաղէմի, կ'երգնում յանուն Երկրի. քու Երջանկութիւնդ է այս աստուածարեալը Աւոյնոստոս: Առ, կարգա, Ինքնակալ»: Դիտելիտիանոս ձեռքերը մխրձեց ոսկեղէն բաժակի մը մէջ, որ անկիւն մը մոյթի մը վրայ դրուած էր: Օրհնեալ ջուրով թաց ձեռքերովը, աղօթքներ մը մնջելով, բացաւ կայսրը եւ կարգաց: Յուրիթ կը դիտէր զայն ոտքերէն զուլար: Արդահատանք եւ արհամարհանք կը փոխանակուէին իր դէմքին վրայ: Դիտելիտիանոս կը կարգար սեղանին շատ մը վաւերաթուղթերուն վրայ փռուած գրութիւնը: Ոչ մէկ ձայն իր շրթունքներէն: Իր արդէն ձեռմկած զուլար Երթալով աւելի խորունկ կը ծռէր: Ձեռքերը սեղանին եղբրքը դրած ոյժ կուտար ծռած մարմինին: Կարմիր էր իր դէմքը, շուրթած իր նայուածքը, աղօտ իր ձայնը, երբ վերջապէս Յուրիթին դառնալով բառ. «Ուրեմն: Հոռմի պանքան իմ աւանդ ոյժքերս քու մարդուդ փոխանցած է: Աղէկ ըրիք, Յուրիթ, որ եկար: Քու մարդը պիտի ապրի: Պատրաստ եմ զինքը իբրեւ առնելիքուր ճանչնալու, եւ նաեւ իր սղնիւ շարժուձեւը քսան տաղանդ ոսկի տալու ինծի ճիշտ յարմար ատենին կուզայ: Ետտ դրամի պէտք ունիմ մօտերս: Կը խորհիմ Սալօնայի մէջ պարտա մը շինել ձերութիւնս հանդիստ հոն անցրնելու համար, որուն քով այս պարտա խլուրդի ծակի մը պիտի նմանի: Կ'ուզէք օյնել ինծի»: — «Կրկինը, Ետապատիկը կրնաս շինել, աստուածարեալը Աւոյնոստոս, առանց սոկոսի»: — «Առանց տոկոսի», կրկնեց կայսրը զարմանքով: — «Առանց ստորադրութեան»: — «Առանց ստորադրութեան»: — Միմիայն կտոր մը թուղթ, բառ մը, անունի նշան մը քու կողմէ, աստուածարեալը Աւոյնոստոս, որպէսզի իմ մարդս քու պաշտպանութեանդ տակ մնայ եւ ազատ ձգուի, տուն դարձածիս պէս»: Կայսերական կնքեալ նամակը ձեռքը Յուրիթ անոր ոտքը ինկաւ եւ ուղեց երթալ: Դրան տակէն ետ դարձաւ եւ ձայնեց, «Իսկ մեր փոխատուութիւնը: Կրնամ ես դրել ամուսինիս անունով»: Դիտելիտիանոս զուլար Երեքոց մերժողական ձեւով: «Ոչ, Յուրիթ»: Առաջնորդեց պատուով զայն դէպի պատուհան, որպէս թէ Երկուքը միասին մեհեան մը կը մտնէին: Արեւը զենիթին վրայ էր, եւ Նիկիմիդիոյ ձերմակ ամարանոցներուն եւ տուններուն վերեւ, այգիներով, թղենիներով, նոճիներով հեղձ մար-

մանդներուն եւ դեռ հանդարտ, շողողուն ծովուն վերեւ կը դարէր միջօրէի ժամուն հանդիսաւոր, անրջային հայեացքը: Ո՛չ մէկ շունչ հովի: Ո՛չ մէկ շեշտ ձայնի: Աղօթող քուրմի մը պէս յամբօրէն խօսեցաւ կայսրը. «Յուրիթ: Կը հաւատամ, թէ Երգութիւնդ հարկեցուցիչ ոյժ մը ունի: Թէ անոր մէջ կայ անտեսանելի մէկ ոյժ սղնիներուն, կամ աստուածութեան մը: Օրհնութիւն իրենց Երգութիւնը բոնողներուն համար, անկէք եւ կործանում Երգութիւնը գրծողներուն համար»: — «Ես ալ կը հաւատամ», հաստատեց Յուրիթ լրջօրէն: «Ուրեմն», շարունակեց կայսրը աւելի հանդիսաւոր կերպով, «ուրեմն ստորադրութեան հարկ չկայ: Երգութիւնդ մը մեր անձերը աւանդ կը ձգենք բարի կամ չար ողիններուն, Երկինք կամ դժոխք»: — «Ես ալ այդպէս կը հաւատամ, եւ այդպէս կը հաւատայ նաեւ իմ ամուսինս»: — «Յանուն որո՞ւն կ'ուզես դուն Երգնուլ, Յուրիթ»: — «Քտիր չկայ մեր բնորութեան մէջ: Մենք կը հաւատանք միմիայն մէկ Աստուծոյ, Արրահամին, Իսահակին եւ Յակոբին Աստուծոյն: Ան է մէկ եւ միակը, որ Երկինքն ու Երկիրը ստեղծեց: Անոր յոյսը արեւուն լոյսէն աւելի պայծառ է: Ան դիտէ, թէ ի՞նչ կը մտածենք եւ ոչ ոք կրնայ անոր թեւէն փախչիլ: Պէտք չէ շարաշար գործածես Տիրոջ Աստուծոյն անունը: Պէտք է քու Տիրոջ հաստուցանես քու Երգութիւնդ, այսպէս կ'ըսէ մեր օրէնքը»: — «Ի՞նչ կը նշանակէ ձեր Աստուծոյն անունը», հարցուց կայսրը կամաց ձայնով: «Յաւիտենական»ը: — «Երգութիւնդ անոր անունով, Յուրիթ»: Եւ արդէն հրէուհին իր հոլանի բազուկը բարձրացուց եւ ձեռքը բռնեց արեւուն առջեւ: «Կ'երգնում քեզի օյնութիւնը զոր խոստացայ ընկ թեզի: Կ'երգնում յանուն Եհովայի, Յաւիտենականին»: Այդ միջոցին դիտեց Յուրիթ որ սարսուռ կ'անցնէր կայսեր վրայէն: Դող մը կը շարժէր զինքը: «Շնորհակալ եմ քեզի եւ քու մարդուդ: Եհովա օրհնէ ձեզ»: — «Եւ քեզ, բարեպաշտ Ինքնակալ», վերջացուց Յուրիթ խորին խոնարհութեամբ մը: Կայսրը կեցած էր պատուհանին առջեւ եւ կը նայէր հրէուհին Ետեւէն, թէ ինչպէս կամաց կամաց, բայց ծանրախօհ, ետին նայելով, աներեւոյթ կ'ըլլար: Յետոյ ետ դարձաւ Դիտելիտիանոս, միաքովը ակնարկներ արձակեց կայսրութեան վրայ եւ իր շրթունքները յամալայ կը կրկնէին աղօթքի մը պէս. «Եհովա, Յաւիտենականը»: Նորէն կայծակի արագութեամբ ետ դարձաւ եւ դուրս ցատկեց: ձեպրնթաց սուրհանգակ մը, կամ պնդողեպան մը ճամբայ ելաւ հասնելու համար առեւտրական միջնորդներուն Ետեւէն:

Կայսրը կարճ ժամանակի մը համար ընդհատեց իր ունկնդրութիւնները: Ճաշարահին մէջ կը պատուասիրէին զինքը սենեկապետները Ղուկիանոս եւ Դորոթէոս, միտով, զինիով եւ պտուղներով: Պրիսկա եւ Վալերիա, մայր եւ դուստր, մէջտեղ ելան, ընկերութիւն

ընկելու համար իրեն հետ : Բայց երբ անորմէ բառ մը չստացան, դարձեալ քաշուեցան : Սենեկապետներն ալ, մասնաւորապէս Ղուկիանոս մէն միակ բառ մը չիմացան կայսրէն, որ կ'ուռէր կը խմէր կարծես անպիտակցարար եւ չուրջր անպամ չէր նայեր : Երբ կարճ ճաշէ մը վերջ ելաւ եւ գրան վարպետըին մէջէն քայլ առաւ, թաղր ճակատին վրայ, Ղուկիանոս որ իրեն կ'ընկերանար բաւաւ . «Մեր Աստուածը իմաստութեամբ եւ խորագութեամբ լեցնէ Ինքնակալը» : — «Շնորհակալութիւն քեզի, Ղուկիանոս : Ի՞նչ անուն կուտայք արդէն ձեր Աստուծոյն» : — Հայր Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ինքնակալը : «Այս այն Աստուածն է ինչպէս Հրէից Յնոսիան» : — «Միեւնոյնը, Ինքնակալը» : Յաւիտենականը : Բայց սարսափ մըն է ան Հրէից, իսկ մեզի Հայր մը ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» : Կայսրը լսեց պահ մը, զգուշութեամբ ետեւը նայեցաւ եւ երկու կողմերը եւ ղէպի առաջ, յետոյ գլուխը մտակցուց Ղուկիանոսին եւ հծծեց . «Ես զիտեմ որ դուն, Պետրոս, Դորոթէոս, Գորգիոս քրիստոնեայ էք, ձեզի աւելի կը վստահիմ քան բոլոր միւսներուն : Ես կը վստահեմ Քրիստոսէն : Կրնաք, ազատ էք ձեր հաւատքը հանդարտօրէն ապրիլ իմ մօտ, բայց զգուշաւոր եղէք : Միւս իշխանակիցները Կոստանդիանոս Քլարոսէն դատ կ'տան ձեզ գտնապէս : Ձեր գլխուն որեւէ փորձանք չի գար, ցորչափ իշխանութիւնս ձեռքս է : Ազօթեցէք ինծի համար ձեր Աստուծոյն» : Ղուկիանոս շնորհապարտութեամբ սեղմեց կայսեր ձեռքը : «Մենք քրիստոնեաներս ոչ մէկէ կը վստահանք, նոյնիսկ չենք վստահար Քրիստոսէն, այլ կը սիրենք դոյն եւ կը մեռնինք իրեն համար : Կրնա՞ս դուն մեզ պահպանել, Ինքնակալ, իշխանութեամբ որ Աստուծմէ տրուած է քեզի, ուրեմն բրէ դոյն քու բարութեանդ համաձայն, ինչ կերպով որ կը կամենաս : Շնորհակալ ենք քեզի, եւ քեզի համար կ'ազօթենք եւ քու կայսրութեանդ համար» : Կայսրը պահիկ մը վարանոտ կեցաւ եւ գետինը կը նայէր : Արդէն քայլ մը առած էր ղէպ առաջ, երբ նորէն ետեւը նայեցաւ : Սենեկապետը շատ մօտեցաւ կայսեր բերանին : «Բացէն ըսէ ինծի», փափաց կայսրը, կայսրուհին եւ աղջիկս ժամանակէ մը ի վեր դարձեալ կը յաճախե՞ն քրիստոնէից հաւաքումներուն» : Ղուկիանոս վարանեցաւ մնաց եւ աղաչական աչքերով յառեցաւ կայսեր : «Արդէն կը բաւէ», մրմոց կայսրը : Բայց իր ղէմքը մտահոգութիւն ցոյց կուտար միայն, ոչ բնաւ դայրոյթ : Սաստիկ տաք մը կը դարէր Նիկոմիդիոյ վերեւ : Կայսրը մեծ գծուարութեամբ միայն կը կարողանար ունկնդրութիւն շնորհել բարոյութիւն աղերսարկուններու, որոնք կամ իրաւունք, կամ շնորհք, կամ օժանդակութիւն կամ խորհուրդ մը կը բաղձային «կայսրութեան հօրմէն» : Իր կոչումին բարձր լոբոնումին համաձայն բարեացակամ վեհապետը բոլորովին նուերուած էր ժողովուրդին :

Առանց անձի կամ աստիճանի խորութեան ամէն ոք մուտք կը գրտնէր կայսեր մօտ եւ ամէն ոք իրաւունք կը գտնէր առանց որեւէ մէկուն տրտունջին թէ Ինքնակալը անիրաւ ըլլալ ուղեց կամ անարդար գործ տեսաւ :

Մինչ այս մինչ այն կուգային կ'երթային զիւանազայիները : Որեւէ պաշտօնական թուղթ հասցէի մը չէր զբիւրեւ մինչեւ որ կայսրը համբերութեամբ չկարդար դոյն : Պնդակետանր որ պաշտօն ստացաւ առեւտրական միջնորդներուն ետեւէն երթալ հասնելու, արիւն քրտինք եկաւ յետ միջօրէի հինգերորդ ժամու միջոցին, եւ հազօրդեց . Անոնց հետքը կարելի չէ այլեւս գտնել : Մոյկեղբոր նաւու մարդիկը, երկար եւ ապարդիւն խուզարկութիւններէ վերջ միայն, կրցան իրեն լսել սա չափը, թէ ձերակուտականները արդէն առաւօտուն նաւով ճամբայ ելած են : «Ո՛ւր, ի՞նչ ուղղութեամբ», ձայնեց Դիոկղետիանոս, սաստիկ զրգուռած : Մարմարայէն ղէպի վար, Ինքնակալը : — «Դէպի Աթէնք», զոչեց կայսրը, դեփ դեղին : «Անմիջապէս ցատկէ նորէն, հետո առ քանի մը երազափաղներ, ասդին անդին փողոցները խուզարկէ, մտիւր բոլոր առաջնակարգ հիւրանոցները, բոլոր փողոցներուն մէջ, շուկային վրայ Յուդիթին, Աթենացի հրեայ Ասերին անունը տուր : Աճապարեցէք, շուտ փութացէք : Դժբախտութիւն մը կը սպառնայ ինծի» :

Ճեպընթաց արդէն դուրսն էր, եւ իր «սրսորդութիւնը» նորէն սկսաւ օղնութեամբ քանի մը երազափաղներու : Կայսրը նստաւ իր պաղ մարմարեայ աթոռին վրայ, ձեռքերը դրաւ քանդակուած բաց երախներով կենդանիներուն գլուխներուն վրայ : Աչքերը կը թափառէին թափանցիկ կանանց ծառերով երամին, եւ աղբիւրներով, մամուռով, պտերներով գայարագուարճ ովախին կողմ : Աւելորդապաշտութեամբ, անվստահութեամբ եւ չար նախազգացումներով իր մշտաշարժար զիւրապրդիւ հողին այսօր մանաւանդ բոլորովին ծանրապէս կը տառապէր իր անապահովութեան եւ տկարութեան տակ : «Որո՞նք պէտք է որ վստահիմ : Ո՛ւր է հաւատարմութիւնը եւ երախտագիտութիւնը : Կրնա՞մ միթէ հաշուել Մաքսիմիանոսի վրայ : Ախ, այո՛, երգումները : Նախանշանները : Բայց շատ կոշտ է, շատ անկիրթ, եւ բնաւ յարմար մարդը չէ իմ կառավարութեանս եղանակին : Ան պատերազմ կ'ուղէ, ես՝ խորագութիւն : Ան ճատրակ խաղալ եւ կերուխում բնել կ'ուղէ, ես՝ զիտութիւն : Ան մէկ կրօնք միայն կ'ուղէ, կամ կը նախանարէ բնաւ կրօնք չունենալ, ես կը փափաքիմ որ իմ կայսրութեանս բոլոր կրօնները յօժար կամքով իրարու մօտ գան եւ կնքեն պետական մեծ կրօնք մը, ուր ամէնքը իրենց եղանակին կամ ձեւին համաձայն ծառայեն իրենց հաւատքին, տօնախմբեն իրենց պաշտամունքը, ունենան իրենց տաճարները, եւ սակայն մէկ կայս-

րութիւն, մէկ պաշտամունք, մէկ անտեսանելի տաճար, ուր ամէնքը իրենց ձեւովը դարձեալ պաշտեն վերին Լուսինն, զոր իրենց բոլոր կրօնքներուն եւ լեզուներուն մէջ կ'անուանեն լոյս կամ Երկինք, եւ որուն տեսանելի մէկ պատկերն եւ միայն դուն, ո՛վ զեղեցիկ, բոցա-վառ արեգակ, քու ամենալիբ լուսովը»:

Կայսրը, խորայայտ, կը յառէր մտանամուտ արեւին: Նիկի-միդիա եւ շատ բացը հեռուն ծովը շուրհրու մէջ դարած դադարած: Ծով ու երկինք համանդամայն մութ կապոյտ, արմաւենիներու եւ նոճիներու կատարներու վերեւ ալ աւելի կապոյտ, — անկրական կապուտակութիւնը: Ծանրահող Ինքնակայր կը կենար ու կը կենար եւ կը մոռնար ունկնդրութիւնները, կը մոռնար պաշտօն ու ժամանակ եւ երկիր ու աշխարհ, եւ իր միտքին առջեւ կ'աճէր կ'ուճանար տա-ճար մը, կը տեսնէր հետզհետէ անոր աճումնաճիւլ խոյանքը, տա-կաւ, հանդիսափառ, շքեղ, քար քարի վրայ, աղոյցք աղոյցքի վրայ, եւ վերջապէս առաստաղը, որուն սայրը շօշափէր լաղուարթ Երկնա-կամարը: Բայց քիչ մը հեռուն ահա իր պալատին առջեւ քիւի պա-տին վրայ վերօք կը շողար ոսկեճամուկ խաչ մը, որ Երկինքէն կը փրթէր սուր նախապիծերով: Դեռ չզղացուած նուիրական երանու-թեան դրացում մը եկաւ կայսեր վրայ: Մէկ պետութիւն — Մէկ կրօնք — Մէկ հաւատք — Մէկ խաղաղութիւն — Մէկ Լուսինն բազ-մանուն — Ենօփա — Յաւիտենականը — Հայր Յիսուսի Քրիստոսի —, ահա այսօր այսպէս կը պտուտկէին դարձեալ գաղափարները Վեհա-պետին միտքին մէջ: Երբ իր աշխատութեան սենեակին առջեւ խօսե-լու եւ վաղելու սովորական բարձր ձայներէն արթնցաւ, անոյշ երա-ղէ մը արթննալու պէս, այն ատեն միայն զիտակցեցաւ, թէ իր նայ-ուածքները երկար ատենէ ի վեր սեւեռած մնացած էին քրիստոնեա-ներուն շքեղ ճերմակ եկեղեցիին եւ անոր քիւին ոսկեղօծ խաչին վը-րայ: Ասիկա զիպուած չէր նախազգացումներու, զգացմունքներու հաւատացող կայսեր համար: Նախանշա՞ն մը արդեօք: Յայտնու-թի՞ւն մը: Արդեօք այս եկեղեցի՞ն պիտի աճի բովանդակ պետութեան վերեւ եւ դուրսը համօրէն աշխարհի մէջ: Եւ ձայն մը կը պատաս-խանէր իր սիրտին մէջ. Հայր Յիսուսի Քրիստոսի:

Դուռները մղուեցան իրենց փեղկերուն վրայ: Մաքսիմիանոս իր ծանր, անապահով քալուածքով ներս ճորճորայ: Ամբողջ երեսէն քրտինք կը վաղէր: Ձեռքերն ալ քրտնաթաթախ: Անուա խնդացող մանր աչքեր: Խոզանացած խոպան մազեր: Թոթովախօս ողջոյնէ մը վերջ, որմէ ըսն մը չհասկցաւ Ինքնակայր, Մաքսիմիանոս իր բա-րեկամին բարակ ձեռքերը իր թաց ձեռքերուն մէջ, եւ ճմլեց զանոնք արջանման ուժով մը, այնպէս որ կայսրը ցաւէն պոռայ: «Այսպէս», կակաղեց Մաքսիմիանոս, «հիմա կ'ունենանք ունկնդրութիւն եւ ի-

րաւունք: Մէկզի դրէք սա վաւերաթուղթերը»: Եւ արդէն մագա-ղաթները դրասեղանին կեղրունէն դէզերով կը թռչափէին աջ ու ձախ: Այդ միջոցին Դիոկղետիանոս, որուն խիստ յոգնած ըլլալը դէմքէն յայտնի էր, ողջունեց ներս մտնող հիւրերը զոր Մաքսիմիանոս սպաս-ման սրտահին մէջ նախապէս դատած էր, եւ պարզապէս, առանց ան-պատճառ ամէնքը ճանչնալու, ներկայացուցած էր կայսեր: Քանի մը պատրիկներ եւ ձեռակուտականներ, բանաստեղծներ եւ հռետորներ, փիլիսոփաներ եւ առեւարականներ, ընկ Նիկիմիդիացի: Դուրսէն նաւով եկած էին հիւրեր կամ բարձրաստիճան անձեր, որոնք ուն-կընդրութիւն կը խնդրէին, եւ որոնց ժամանումը կայսրը պալատին պատուհանէն ողջունած էր: Անոնց մէջ — Լիկինիանոս եւ Տրդատ բարձրաստիճան սպաներու համազղեստով: Կայսեր աչքերը դարձան-քով կը հանդէպին Տրդատի հուժկու կերպարանքին եւ յանկարծակիի բերող զեղեցկութեան վրայ: Տրդատ հաճելի լրջութեամբ մը, նոյն-խակ տեսակ մը տիրութեամբ խնդրեց կայսրէն քանի մը օր իրեն մօտ մնալ եւ խօսակցութիւն ունենալ իրեն հետ: Կայսրը այդ պահուն անտես եղաւ, եւ խրախճանքի իրիկուան սեղանին կրկին մէջտեղ ե-լաւ կայսերական լրիւ արդուզարդով — ծիրանազղեստ եւ խոյրով: Մաքսիմիանոս եւ ծիրանի եւ խոյր կը կրէր եւ այդ խակ պատճառաւ առաջին անգամ ըլլալով նշաւակ կամ թիրախ եղաւ կատակարանու-թիւններու եւ ծիծաղի: Գաղերիոս զեռ մէջտեղ չկար: Բայց ներ-կայիս ան ալ իր աներոջ Դիոկղետիանոսի պալատը կը դտնուէր: Գլխաւորարար այրերէ բաղկացած ընկերութեան մէջ աչքի դարնող լուսեթեամբ կը շարժէին կայսրուհին Պրիսկա եւ դուստրը Վալերիա, որ հիմա Տիկին Գաղերիոս էր: Առաջին կնոջմէն բաժնուած էր: Կի-ն՝րը ճերմակ մետաքսէ հին յոնիական զգեստներով էին, որոնք, մէկ կտոր ըլլալով, պարանոցէն մինչեւ ոտքերուն պճեղները կը հաս-նէին: Վերի մասը ծոծրակէն մինչեւ մէջքը եւ առջեւօք կուրծքին վրայէն մինչեւ գոտին: Թեւերը հոլանի մինչեւ ուսերուն բերանը կրելով նրբարուեստ օճաճեւ ոսկի ապարանջաններ եւ ճարմանդներ: Կօշիկները ճերմակ սնդուսէ ոսկեհուռ: Գեղակերտ ոսկեայ հիւսկէն ցանց մը մաղրը կը ծածկէր, հաւաքելով զանոնք իրեն մէջ: Նստած էին հոյակապ սպաններով եւ տունկերով ծանրարեռնուած սեղանի մը առջեւ: Առաջին շրջանէն վերջ խօսակցութիւնը աւելի ողբերուե-ցաւ: Մաքսիմիանոս համակ ժայթքում մը կեանքի եւ կատակարանու-թեան: Ո՛րքան քիչ իրեն մտիկ ընէին, այնքան բարձր կը խօսէր ու կը պատմէր իր առօրեայ հաճոյքներն ու դրօսանքները անհաճոյ ման-րամասնութիւններով: Հակառակ մութին մէջ մնացած ըլլալուն իր աչքէն չէր վրիպեր, թէ ի՞նչպէս Պրիսկա եւ Վալերիա իր կոշտ սրա-խօսութիւններէն ոչ մէկուն վրայ կը խնդային, այլ վերջապէս նոյն-

իսկ ակնարկ մը չէին շնորհեր անոր: Ամառնային օրուան չբեղբեթեան, Նիկոմիդիոյ հոյակապ դիրքին, տեղի ունեցած պտոյտներուն եւ ապրումներուն, համաշխարհային կայութեան օրուան նորութիւններու մասին խօսակցութիւններէ վերջ, կայսրը պարտաւորուեցաւ իր օրուան ամէնէն կարեւոր դէպքերուն վրայ տեղեկութիւններ տալ հակառակ իր ներքին զոլուանքին եւ անախորժութեան: Բաւական ժամանակ այրերուն մէջ յուզեալ վիճաբանութեան նիւթ կաղմեցին առեւտրական գործերու արքունի միջնորդները, եւ այս վիճաբանութեան միջոցին կիները քաջուած էին արմաւենիներով եւ ամէն տեսակ անդրուան տունկերով ու ծաղիկներով պծնազարդուած կաղմա-կի սրահ մը: Մինչ Մաքսիմիանոս հայտնուելով եւ ձեռքերը գրասեղանին ու ստեղծող գետնին վարներով կը խօսէր, եւ ոմանք ոյժ կուտային, թէ եւ չափաւոր կերպով, ուրիշներ իրաւունք կուտային Դիոկղետիանոսի եւ այդ միջնորդական կաղմակերպութեան մէջ անհրաժեշտ — թէ եւ տիրուր — հարկ մը կը տեսնէին կառավարողներուն համար, որոնք ամէն բան իրենց աչքերով տեսնելու անհնարութիւններուն առջեւ պարտաւորուած էին քննիչներ գործածել, թէ եւ ցաւալի է որ անոնք ալ յաճախ զեղծանող կ'ըլլան: Մաքսիմիանոս շատ իրար կ'անցնէր, թէ իրօք ի՞նչ էր, ի՞նչ բան գիտէր դեռ Դիոկղետիանոս: Բայց այս վերջինը կը խուսափէր իրմէ կրցածին չափ: Բայց արարողապետը ետեւէն անոր ականջին բան մը փափսաց եւ կայսրը աճապարանքով դուրս ելաւ: Քանի մը վայրկեան յայտնի եւ դժուարաւ ծածկած հանդարտութեամբ մը լռելէ վերջ, սկսաւ հին արջը հիւրերուն մէջ սողին անդին մտապրալ շրջիլ, եւ քիչ վերջ իր աւելի մանրցած աչքերը շատ մօտէն կը սեւեռէին Դիոկղետիանոսի վրայ: Չափ կողմէն կուզար Գաղերիոս փափկութեամբ մը, իսկ աչքն շիւրտկոյտ, Բիւթանիոյ կուսակալը, եւ ամէնքն ալ կ'ուզէին ստանձնել բաժնել կայսեր մտահոգութիւնները: Դիոկղետիանոս տարաւ դանոնք պատուհանի մը անկիւնը, ուր մնացին մէկ տեղ: Եւ իր գլխուն եկածը պատմեց ի մասին յայտնի քննիչներուն եւ Յուլիթին: Պնդաղեսպանները աներեւակայելի դժուարութիւններէ վերջ իմացած էին որ քննիչները Աթէնք գացած են, բայց Յուլիթը ոչ մէկ կարելի եղած է գտնել:

Մինչ դուրսը Նիկոմիդիա իր ամառնային դիրքերը կը տօնէր, ծովուն ալիքները լիալուսինին ոսկի շողերուն մէջ վեր ի վայր կուգային, տկափողներու եւ սրինդներու սլուրլիւններ, մարդոցմով վրտապան ծովափէն դէպի քաղաք թափ տուող ցուցքեր ու ցնծապին ազաղակներ, ամառանոցներու պարտէզներէն եւ դէպի վերերը բլրակներու վրայ սողոսկ պալարող այգիներէն նոյն նման թնդիւններ, ժխոր ու աղխատրոյ ճիւղեր դէպի Լիբիսա լեռան խարակները որոնք

խեղորէն ծովուն մէջ ինկած էին — եւ երբ այս ամէնուն արձագանգը ետ կը դարնէր կուզար պալատին պատուհաններուն, հոս մարդիկ շատ լուրջ կերպարանքներով խորհրդակցութիւն կ'ընէին, զլիսահակ, թէ ինչպէս կարելի կրնայ ըլլալ Ասերի կեանքը մահէ աղատել: Ամէնուն համար անկասկած էր, թէ անոր կեանքը մահուան վտանգին մէջ կը տատանէր, եթէ քննիչները Յուլիթէն առաջ Աթէնք հասած ըլլային: Եօթը հողի վկայ կար Դիոկղետիանոսի սա կանչին. «Ան մահուան դատապարտուած է»: Որոշուեցաւ սպասել մինչեւ վաղ առաւօտ: Ամբողջ դիշերը Յուլիթը պէտք էր փնտռել, նոյնիսկ հարկ է սրնթիաց առաջատանու մը ճամբայ հանել, ետ կանչել քննիչները կամ, եթէ ծովուն վրայ բռնել կարելի չըլլայ, Աթէնք հասնիլ կարելի եղածին չափ շուտ: Գաղերիոս դնաց այս հրամանը հաղորդելու: Հիմա Դիոկղետիանոս քիչ մը հանդարտած էր: Խօսակցութիւնը դադար առաւ քանի մը վայրկեան: Շատ չանցած, լսուեցաւ դարձեալ Մաքսիմիանոսի պատճառաբանելը: Իր քննադատողի մարմաջը Դիոկղետիանոսին ալ շէր ինայեր: Իր հին բողոքները նորէն դուրս կը թափէին անոր գինի հոտող շրթունքներէն. Աւղոստոսը չափազանց բարի է: Այնպիսի բարեսիրութիւն մը քուրմի մը կը վայլէ, բայց ոչ թէ կայսեր մը: Ասկէց դատ ալ չափազանց ալ ջերմեանդ է եւ աւելորդապաշտ: Մաքսիմիանոս դժբախտաբար Բաղդոններու գործն ալ յիշեց, եւ կ'ուզէր գիտնալ, թէ Դիոկղետիանոս մահալծիւր տուած է: Կայսրը զլուրը երեքուց, ժխտական: «Նայեցէք նորէն անոր, մեր բարի Ինքնակալին: Ասանք բարի Արամաղը մը Ողիմպոսի կը վայլէ: Այդ սրիկաները քանի մը անգամ քիչ մնաց զիս պիտի կախէին Հոննոսի վրայ այն սարսափելի կոխիներու միջոցին — եւ ահա մարդկային գաւակներու սա դորովադու չայրը կ'ուզէ որ անոնք բանտէն ալ փախչին: Բայց, Դիոկղետիանոս, անոնք պիտի չփախչին, այլեւս անոնց սրունքները փոռած պառկած են»: Գաղերիոս քրքիջ մըն է փրցուց: Միւսները կը լռէին: Դիոկղետիանոս բարեկամին կը նայէր ակնպիշ, գունաթափ, զոլուանքով մը: «Դուն կ'երեւի —», — «Հրաման տուի, եւ պետութեան քեզի վիճակած մասին մէջ ալ իմ խօսքս պիտի լսուի:

Առանց բառ մը ըսելու, Դիոկղետիանոս կը պտրտէր, իրեն մէջ թաղուած: Քրիստոնեաներու եկեղեցիէն դէպի հոս կը թնդար ձայնը հանդիսաւոր երգեցողութեան մը: Դիոկղետիանոս ականջ տուաւ եւ մօտեցաւ պատուհանին: Կարծես քրիստոնեաներուն շարականներուն շնորհիւ չար ողիները եկան մտան Գաղերիոսի, Մաքսիմիանոսի եւ ներկայ քուրմերուն մէջ: Պրիսկա, Վալերիա եւ միւս տիկիները անմիջապէս առաջին բողոքներուն վրայ դուռնէ մը կծիկը դրին եւ փութացին դարաստան: Լուսաշող ուղիներէն պարտէզին շրջանը ըրին



մինչև բարձր ցանկապատը, որ դարաստանն ու եկեղեցին կը բաժնէր: Կեցան հոն մայր եւ դուստր, թեւերը կռնակնին: Անոնց ետեւը կը կենային հիւրերը եւ կայսրուհին զերիններէն ոմանք: Քրիստոնեաներու հրարորոք, սրտնեղած օրհներգութիւնները հեղեղի պէս կը յորդէին անոնց վրայ եւ յայտնի կերպով կ'իմանային:

Ընդէ՞ր խռովեցան հեքանոս, եւ ժողովուրդք խորհեցան ի սնտիս: Յանդիման եղեմ քազաւորք երկրի, եւ ի շիւթք ժողովեցան ի միասին Վասն Տեառն եւ վասն օծելոյ նորա: Խզնացուք գկապանս նոցա, եւ ընկեցուք ի մէնջ գլուծ նոցա: Բնակեալս յերկինս ծիծաղեսցի գնոփօք, եւ Տէր արեամբս հեցէ գնոսս: Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ Իւրով, եւ սրտտուքեամբ Իւրով խռովեսցուցէ գնոսս: Ես կացի քազաւոր ի նմանէ, ի վերայ Սիոնի լեռին սրբոյ նորա՝ ի պատմել գերամանս Տեառն: Տէր ասաց ցիս. Որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ գգեգ: Խնդրեա յինէն եւ տաց քեզ գեքանասս ի ժառանգութիւն, եւ իշխանութիւն քեզ գամենայն ծագս երկրի: Հովուեսցես գնոսա գաւազանաւ երկաթեալ, Որպէս գանօթ բրտի փշրեսցես գնոսա: Արդ, քազաւորք, գայս ի միտ առէք, Խրատեսցուք ամենեքեան ոյք դատէք գերկիր: Ծառայեցէք Տեառն երկիւղիւ, եւ ցնծացէք առաջի նորա դռուքեամբ:

Ընկալարուք գլխատ նորա զի մի բարկացի Տէր, եւ կորնչիցիք ի նանապարհացն արդարութեան, ի ժամանակի յորժամ բորբոքեսցի բարկութիւն նորա երանի ամենեցուն՝ ոյք յուսացեալ եմ ի Տէր:

### ՍԱՂՄՈՍ Բ.:

Գաղերիոսի կատարութիւնը չափ ու սահման չունէր, երբ գիտցաւ որ Վալերիա աճապարեք դացեր է: Վերը դաճլիծին մէջ սաստիկ վէճ մը: Դիոկղետիանոս անգամ մըն ալ կը լսէր ամէնէն սաստիկ մեղադրանքները: Մաքսիմիանոս, Թերական լէդէոնին պատճառաւ այս ատուան զխաղութիւնները նորէն երեսը դարկաւ կայ-

սեր: Գաղերիոս, աջակցութեամբ քուրմերուն, ամէնքէն առաջ՝ արքունի քրմապետ Տակիսի յայտարարեց. Ոչ մէկ դո՛հ այլևս կարելի է ուղղութեամբ կատարել: Աստուածներուն կամքը կարելի չէ այլևս կենդանիներուն խորտաբէն ճանչնալ, որովհետեւ անոնք զայրացած են, որ մինչև վերը կայսեր ննջարահին մէջ թոյլ կը տրուի քրիստոնեաներուն սպասարկութիւնը: Աժօթ եւ նախատինք, եւ ոճիր մըն է ասիկա աստուածներուն, պետութեան եւ կայսրութեան դէմ: Այս է պատճառը ամէն կողմ պատահած աղէտներուն: Ամէն կողմէ ոյք տրուեցաւ Գաղերիոսի: Քուրմերը նշանակալից կերպով ճակատնին խոթողով կայսեր կը նայէին: Հետտրոնները ընդմիջեցին Գաղերիոսը ուսուցիկ դրուատիքներ հրահարով կայսեր համար՝ իրբեւ հրամանատար, յաղթական ձեռնարկու շինութեանց, իրբեւ քաջալերիչ զիտութեան եւ իրաւունքի, ամէնէն առաջ կրօնքի: «Ձենք կըրնար ըմբռնել, ով աստուածարեալը Աւղոստոս», խօսեցաւ Մամերտինոս, երգեցիկ շէշտով, ի՞նչպէս տակաւին կրնաս վարանիլ վերջին քայլը առնելու, եւ Աւղոստոս կայսրէն ոչ մէկ բանի մէջ ետ մնալով, քեզի համար ցանկալու եւ ընդունելու աստուածային պաշտելութիւն»: — «Ատիկա կը պակսէր միայն, զիս աւելի ատելի դարձնելու համար Հոռոմայեցիներուն», ձայնեց ամէն կողմէ շրջապատուած կայսրը: «Նոյնիսկ ներողամիտ պիտի չըլլան Տէր տիտղոսին»: — «Ի՞նչ ունին քեզի հետ Հոռոմայեցիները», պոռաց Մաքսիմիանոս, «ամբողջ Արեւելեան քու աստուածութեանդ կը բաղձայ»: — «Դուն աւելի՞ փոքր ես քան Սասանեանները, աւելի փոքր քան փարաւոնները: Երբ Պարսկաստանի եւ Եգիպտոսի թաղաւորները երկրի վրայ լոյսին մարդացեալ աստուածները կ'ըլլան, ի՞նչու դուն ալ, ով ինքնակալ, քու երեք անգամ աւելի մեծ կայսրութեան մէջ»: — «Երբ հպարտ Հոռոմայեցիք խոնարհեցան Ներոնի աստուածութեան առջեւ, երբ անոնք իրբեւ Աստուած պաշտեցին Եղակարողիցին, ի՞նչու քու մէջդ պիտի չպաշտեն մարդացեալ աստուածութիւնը»: — «Դուն ըստ ամենայնի մատչելի ես ամէնուն եւ չափին աւելի: Այս է պատճառը որ կառավարութիւնը քեզի այսպիսի տառապանքներ եւ վրդովումներ կ'առթէ: Աստուած մը եղիր: Ապրէ լոյսի մէջ, խրոխտ առանձնութեան մէջ: Ունկնդրութիւնները քու պաշտօնատարներուդ թողուր, եւ դուն կառավարէ միմիայն քու սքողուած կամքով եւ հրամանով քու անմատչելի գահոյքէն»: — «Ատիկա ի՞նչպէս կրնայ քալել», ծիծաղեցաւ կայսրը: «Այդ հողը մեղի թողուր, աստուածակերպդ Աւղոստոս: Կամաց կամաց պէտք է հասկցուի ժողովուրդէն: Քու պալատիդ սպասարկները կը սկսին Աստուածութիւնը ըստ այնմ պաշտել, քու առջեւ կը ծոեն իրենց ծունկերը, քու առջեւդ հողին վրայ կը նետուին, ինչպէս կը պատշաճի քու շնորհքովդ ապրող եւ

քու առջև փոշի եղող արարածներուն: Ընդհուպ ամբողջ ժողովուրդը պիտի իմանայ եւ ըստ այնմ պիտի հետեւի ինք ալ, երբ երեւնաս մեծ տօներուն»: — «Իմ ժողովուրդիս մէկ մասը զիս երբեք պիտի չճանչնայ իբրեւ Աստուածութիւն», ձայնեց կայսրը միջանկեալ: «Քրիստոնէաները» — միաձայն հեղինակը այս միջոցին ամէն հոն դտնուողներու կողմէ — «Դարձեալ քրիստոնէաները», խօսք առաւ Գաղերիոս: Կայսրութեան այս ժանտախտը, որ երկար ատենէ ի վեր մեր բանակը կը քայքայէ, լաւազոյն զինուորները կ'օտարացնէ եւ կնամարդի կ'ընէ»: — «Ասիկա ինծի համար նոր է», նետեց կայսրը, միջանկեալ, «Մինչև հիմա ես սաչափը միայն զիտէի թէ անոնք իմ ամէնէն քաջ ու հաւատարիմ պատերազմիկներն են»: — «Եւ հիմա կը սկսին ապստամբիլ», զոչեց Գաղերիոս կատաղարար: — «Ինչպէս Թերացիները», ձայնեց Մաքսիմիանոս ոտքը զետնը դարնելով: «Ի՞նչպէս», հարցուց Դիոկղետիանոս զարմանքով, «անոնք կ'ապստամբի՞ն: Կը մերժեն հնազանդութիւն, հաւատարմութիւն»: — «Ամբողջ զունդեր կը փախչին», պոռաց Գաղերիոս, ուրիշներ կը մնան, բայց կը յայտարարեն որ նախամեծար կը համարին մեռնիլ, քան այլեւս պատերազմի ծառայութիւն բնել, որ մեղք է, իրենց հաւատքի մէջ ուրացումն է: Այսպէս կը վարդապետեն իրենց եպիսկոպոսները»: — «Ասիկա նոր է ինծի համար: Ասիկա շատ հեռուններ կը տանի: Յանուն երկիրքի լոյսին», ձայնեց կայսրը յուզուած: «Եւ հին բոլոր սպաները կը բողոքեն, եւ ես ամէնէն առաջ, Աւգոստոս, իբրեւ քու կեսարդ: Բանակը վարակող այս ախտին զէմ պէտք է միջոցներ ձեռք առնել: Զինուորներուն պէտք է արգիլուի քրիստոնէական հաւատքը»: — «Գաղիանոսէն ի վեր քրիստոնէաները իրաւունք եւ ազատութիւն ունին»: — «Ի՞նչ կարեւորութիւն ունի մեզի համար նոր օրէնք մը — հրամանադիր մը կը հրատարակուի, եւ նոյնիսկ վաղը, թէ բոլոր զինուորները պարտաւորեալ են քու արձանիդ խօսնի ծիւղի եւ պաշտել զայն իբրեւ աստուածութիւն, ապա թէ ոչ —» — «Պէտք չէ որ մէկու մը արիւնը թափուի: Ասոր աղէկ ուշադրութիւն ըրէ, Գաղերիոս»: Այս հրամանին վրայ՝ կայսեր զլխահակ կերպարանքը աչքի դարնելու աստիճան բարձրացաւ զէպի վեր: Իր զունատ այտերը մութ կարմիր եղան, կապոյտ աչքերը շողացին դարձեալ, ինչպէս երբեմն լէպէտնին առջև, եւ սրահը թնդաց, երբ ըսաւ բարձրաձայն. «Ոչ մէկ կաթիլ, կը լսե՞ս, կապիկ»: Գաղերիոսի պատասխանը եղան իր աչքերուն կայծերը: Բայց լոնց: Միւսները տակաւ ու տակաւ իրարմէ բաժնուեցան: Կայսրը ձայնեց. «Լիկիւնիանոս, ի վեր մատիւր»: Մօտեցաւ խոնարհելով կայսեր առջև: «Կրնա՞ս զուն հաստատել իշխանակցիս Մաքսիմիանոսի քրիստոնէայ զինուորներուն մասին ը-

սածը քու յունական լէպէտնիդ փորձառութենէն»: — «Կը հաստատեմ, Աւգոստոս: Քրիստոնէաները սկսած են պատերազմական ծառայութենէ խուսափիլ»: — «Վաղը Իլլիրիացիներուն սպաները կանչել պիտի տամ: Վաղը ժամը տասնին ատենները հաւաքուեցէք»:

Բարեկացած էր կայսրը, եւ առանց բարեւելու դուրս գնաց: Մնացողներէն ոմանք խաղացին եւ խմեցին: Միւսները մէկ կողմ քաշուեցան եւ կը խորհրդակցէին դարձեալ, թէ ինչպէս համոզեն կայսրը, որպէսզի քրիստոնէաներուն ամբողջական փճացումը արտօնէ:

Դուրսը երկար ատենէ ի վեր լռութիւն էր: Ծովու հարուածները միայն կը շառաչէին խարակներուն դէմ: Դարաստանին բոլոր ուղիներուն մէջ ժուռ կուզային ծերակուտականուհիները եւ կը խօսէին Վալերիայի տխուր ճակատագրին վրայ կայսերական կամքէն վերջ, որովհետեւ կայսրութեան շահը կը պահանջէ կապուած մնալ Գաղերիոսի: Ամէնքը կանխաւ կը տեսնէին թէ ինչ կը սպասէր իրենց բարեկամուհիին:

Կայսրն ալ ինք հեռուն քարէ նստարանի մը վրայ նստած էր խոշոր թղենիի մը տակ: Գլուխը, աջ կողմին վրայ ծոած, միշտ կը հակէր զէպի կուրծքը: Հառաչանք հառաչանքի վրայ կը խուռէր իր սիրտէն: Կնոջական զղեստներու շրջիւն կար: Պրիսկա եւ Վալերիա կեցած էին իրեն առջև: «Ամուսինս»: — «Հայրս», մեղմիկ թինդ մը եւ մտերմիկ, հանդէպ կայսեր: Վեր չէր նայեր: Գլուխը ալ աւելի խորացաւ: «Զիս արժանի չե՞ս համարիւր այլեւս ոչ մէկ խօսք բանլու ինքնակալ», հարցուց Պրիսկա յանքթիթ ու եպերող: Կայսրը նորէն աչքերը վեր չառաւ, բայց ձախ ձեռքը երկնցուց անոր, եւ կայսրուհին կամացուկ մը բռնեց զայն եւ սեղմեց: Նստաւ ոտքի քարէ պատանդանի մը վրայ, կայսեր ձեռքը միշտ բռնած լուռ: Վալերիա կը կենար կայսեր ետեւը՝ թեւը դնելով անոր աջ ուսին վրայ: Զեռքը կայսեր կուրծքին վրայէն վար կը կախուէր: Գլուխը վեր առաւ ինքնակալը, աջով բռնեց Վալերիայի ձեռքը եւ քանիցս սեղմեց զայն անխօս: «Վերջապէս, վերջապէս անգամ մըն ալ մինակ: Դուն եւ մենք, հայր», ըսաւ ան: «Այսօր ծանր օր մը ունեցար, ամուսինս»: — «Այսօր»: Այսօր», հարցուց կայսրը զարմացած, երկարած շեշտով մը: «Ամէն օր ծանր է: Մէկը միւսէն աւելի ծանր: Ո՞րը աւելի ծանր կ'երեւայ, սիրելի Պրիսկա, թա՞նքս թէ անդին ահա ծովը»: — «Նետէ զայն հոն ուր ամէնէն աւելի խորունկ է», զոչեց Վալերիա յուզուած սաստիկ: «Առ մեզ քեզ հետ, եւ եկուր ամէնքս երթանք փախչինք քու խաղաղ ծննդավայրդ, Դիոկղէս: Օ՛ր, որքան լաւ պիտի ըլլայ քեզի եւ մեզի համար»: — Դիոկղետիանոս աղջկան ձեռքը աւելի ուժով սեղմեց ի նշան շնորհակալութեան: «Անմիջապէս որ Սալոնէն շինուի,

աղջիկս» : — «Օ, դարձեալ պալատ, դարձեալ արքունի, դրանիկ կեանք», հառաչեց Պրիսկա սարսափով : «Հողիւի խրճիթ մը, հայրիկ, արօտավայր մը, ախոռ մը կենդանիներով լեցուն, արեւոտ արօտավայր մը» : — «Լուռ, լուռ, աղջիկ, սիրտս մի ճմլեր այլեւս անուշիկ, լուռ խաղաղութեան պատկերներով, սակայն ինձի այլեւս բնաւ չի շնորհուիր» : — «Եւ սակայն ան ատեն մը քուկը էր, այդ խաղաղութիւնը : Քուկը եւ Գաղերիոսին : Եւ այն ատեն երջանիկ էիր, այն ատեն, հայր, առանց մականի եւ կայսրութեան» : — «Ապուշը ահա էր անձը այսպիսի սնտոի բաներու համար կը ծախէ» : — Բարկացատ ճանկով մը կայսրը քաշեց թաղը գլուխէն եւ նետեց մարզին մէջ, որուն մութ յատակէն դուրս կը շողային աղամանդները աստղերու պէս : Պրիսկա անտարբեր ելաւ նստած սեղէն, վեր առաւ զայն նոյն անտարբերութեամբ եւ ծոցը դրաւ : «Ո՞րչափ ատենէն չէնքը կը լրանայ, հայր» : — «Դեռ երկու տարի կայ, Վալերիա, Մինչեւ այն ատեն ինձի հետ դիմացէք : Չեմ ուզեր վատ, վախկոտ ըլլալ : Առանց աստուածութեան կամքին չէր որ ես Ինքնակալ եղայ, եւ առանց անոր կամքին ալ պէտք չէ վրայէս հանեմ նետեմ ծիրանին» : — «Ախ, նոյնը միշտ, ամուսինս, նորէն այդ բաներուն կը հաւատաս : Ո՞վ է Աստուածութիւնը : Այն Գօթացի գուշակուհիին (դրուիդ) քեզի տիրապետութիւն գուշակելէն ի վեր, սկսար հաւատալ Աստուածութեան ձայնին, սպաննեցիր քու «կինճ»ը (Ապէս), քու մաքուր, սուրբ ձեռքերդ արիւնով աղարտեցիր, եւ քու հողիդ, մեր ամուսնական երջանկութիւնը, մեր աղջկան երջանկութիւնը ծախեցիր քու սնափառութեանդ — ահա քու աստուածդ, իմ սիրելի ամուսինս» :

Կայսրը, լուռ գլխահակ, թողուց որ խօսի կինը որ իր սիրտին ազատ ընթացք տալով շարունակեց դողահար, տենդապին եւ ուժգին պոռթկալով. «Օ, կը ճանչնամ քեզ, ինքնակալ : Գիտեմ — ինչպէս ոչ ոք այլապէս — թէ ի՞նչ ես դուն, դուն մաքուր, բարեսիրտ մարդ : Դուն պատերազմիկ եւ երբեք կայսր ըլլալիք մարդ չէիր դուն : Քուրմ մը ծածկուած է քու մէջդ : Քրիստոնեայ մըն ես սիրտիդ խորը : Բայց բան մը կը պակսի քեզի : Արիութիւն, ցոյց տալու թէ ի՞նչ ես դուն, քաջալերելու ինչ որ ուղիղ կը համարիս : Տեղի կուտաս հոն ուր պէտք էիր յամառիլ. եւ կը վախնաս որեւէ քայլափոխէ : Քու կախարդական նշաններուդ եւ մեկնիչներուդ աւելի կը հաւատաս քան մեզի, եւ մեզ անզամ պիտի դո՛հես, եթէ պալատական կուսակցութիւնը փափաքի ու պահանջէ» : — «Երբեք», ձայնեց կայսրը : «Հայր», գգուշացուց Վալերիա : Նորէն լուց եւ կը դողար ներսէն դարձեալ, մտածելով թէ ինչ պարտաւորեալ էր արդէն դո՛հել Գաղերիոսի. այս ձեռքը : Այս սիրտը : Ախ : Վալերիա :

«Գոնէ ձեր նոր հաւատքէն կարենայիք հրաժարիլ : Զիս կը տա-

նիք սաստիկ պայքարի մէջ : Անոնք զիս կը պարտաւորեն բնաջնջել քրիստոնեաները եւ...» — «Մեզի համար աներկիւղ եղիր, հայր : Յանուն Աստուծոյ, Հօր Տեսնեմ մերոյ Յիսուսի Քրիստոսի, կը յայտարարենք ահա քեզի. եթէ քրիստոնեաները հալածես, կը հալածես նաեւ մեզ : Միայն թէ մի հուար մեզի համար : Քու թաղաւորութեանց հետ ոչ մէկ կապ ունինք, եթէ դուն Աստուծոյ թաղաւորութեան գէժ կուրիս : Ամուր եղիր : Ցոյց տուր իշխանութիւնդ : Ամուր բռնէ ճշմարտութեան կողմը : Մենք գիտենք որ դուն կը ճանչնաս դայն : Ապաղոյ սերունդները քեզի երախտապարտ պիտի ըլլան : Դուն կընաս արդիւլ անմեղ արիւնի հեղեղներ : Վայ քեզի, Ինքնակալ, եթէ տկարանաս : Քրիստոս սակայն ինքնակալ պիտի ըլլայ, եւ անոր թաղաւորութիւնը պիտի յաղթէ : Հաւատա մեզի այս մտաին, հայր» :

Մարդու ձայներու ժխորը ընդմիջեց Վալերիան : Կարծես սաստիկ անձկութենէ մը զրաւուած, հօրը ձեռքը բռնեց : Պրիսկա ոտքի կանգնած Դիոկղետիանոսի ճակատին վրայ ամբացուցած էր թաղը, երբ Մաքսիմիանոս, Գաղերիոս, Լիկինիանոս եւ Տրդատ շուքերէն ներս մտան :

«Ահա հոս է : Կնոջ ու զաւակին մօտ», թոթովեց Մաքսիմիանոս, եւ Գաղերիոս արդէն իսկ փաթթուած էր Վալերիայի : Լիկինիանոս եւ Տրդատ չափաւոր հեռաւորութեան մը վրայ կը մնային, եւ երբ դիտեցին որ կայսրը խիստ բառերով կը կշտամբէ պինով խառնակիչները, դարձեալ առանց նշմարուելու քաշուեցան անկէց : Դիոկղետիանոս անզօր էր : Գիտէր թէ իր բարեկամը տամարդի կոչուութեան ինչ պոռթկումի մը պատճառ կուտայ, երբ այս վիճակի մէջ ինք անուանարկուի : Լուց եւ խնդրեց որ կինն ու աղջիկն ալ լուեն : Եւ այսպէս կայսրուհին պարտաւորուեցաւ ենթարկուիլ դիմով իշխանակցին փայփայանքներուն, եւ իր ցոյց տուած փոխադարձ պաղ վերապահումին համար իրեն վրայ հրաւիրեց հայհուհներու եւ ծաղրաբանութեան հեղեղ մը, որ իր ետեւէն կը յորդէր, մինչեւ որ թեթեւ քայլերով ծառերու շուքին մէջ եւ յետոյ պալատին մէջ աներկույթ եղաւ : Քանիցս շուրջը նայեցաւ : Միայն Դիոկղետիանոս կը հետեւէր, անոր ալ ետեւէն Մաքսիմիանոս : Միասին պալատ մտան : Վալերիա առանձին կը մնար Գաղերիոսի ձեռքը : Կը սկսէր լուսնալ, երբ ան ալ վերջապէս մինակ ձգուելով, ինկաւ յողնած իր սրկապանին մէջ :

Քուն չէր դար կայսեր աչքերուն մէջ : Գիշերուան մէկ-երկու ժամերուն մէջ ինչեր կ'անցնէին կը դառնային իր հոգիին մէջէն : Փառամոլութիւն եւ զգուանք ամէն բանի դէմ. աշխարհէ հրաժարում եւ փախուստ եւ աշխարհակալութիւն. հոգեր Վալերիայի շուրջ, վախ Գաղերիոսէն — երկար շարքը աստուածներուն, որոնց անունները,

երևք հարիւր կամ աւելի, կայսրը աւելորդապաշտ արհաւիրքի մէջ ինկած, յետոյ Բաղդադընուն մեռած պարագլուխները իրենց իշխան Քրիստոսի հետ, յետոյ առեւտրական քննիչները — Յուզիթ — անոր ամուսինը — անձկութիւնը հանդէպ Եհովայի եւ անոր բարուկին — երդումին — ահա այս էր կայսեր գիշերը: Ի վերջոյ, երբ արդէն գիտակցութիւնը կորսնցնելու կէտին հասած էր, սեւաչուի, սեւահեր, նիհար հրէուհի մը դեղին դէմքով եւ տեսանողութիւնի ակնարկով իր առջեւ կ'երթար կուզար եւ կը կարկաջէր. «Երբ դուն կայսր ըլլաս, երբ դուն կայսր ըլլաս»: — Նորէն իրեն վրայ եկաւ սարսափը հին մարգարէութեան խորհրդաւոր կատարումին, եւ — նորէն հաւատաց թէ ինք իրօք ներկայացուցիչն է Աստուածութեան, որ զինք ինքնակալ բրած էր: Կ'ուզէր այդ մարգարէութիւնն այ ապրիլ, ճաշակել վայելել նաեւ, թէ ինչպէս պիտի երկրպագեն իրեն եւ պիտի ծնրադրեն եւ ամէն ոք պիտի փսփսայ. «Մեր կայսրը: Աստուածը»: Պիտի ուզէր ապրիլ այդ կեանքն ալ եւ այնուհետեւ միայն հրաժարիլ ծիրանիէն:

Եւ ասոր վրայ լուսցաւ: Յուզիթ չէր գտնուած: Ճեպրնթաց առապաստանաւը ճամբայ ելած էր: Այդ առտուն Տրդատ երկար տեսակցութեան մը միջոցին կայսեր հաղորդեց իր գժրախտութիւնը Բրիսանոյչին պատճառաւ եւ լացաւ անոր առջեւ: Իր հօր մահէն ի վեր Լիկինիոս իշխանէն դուրս ոչ ոք ինքնակալին չափ զրաւած էր իր վստահութիւնը եւ սէրը: Կայսեր վեհ, ազնուական կերպարանքը, բնամոյն զուլթն ու զորովը, հետապօտող խնամարկութիւնը, հոգածութիւնը շատ դիւր կուզային հոգիովը ծանրապէս հիւանդացած հայ գահաժառանգին: Աթէնքի կուսակալը, Աթենակորաս եպիսկոպոսին բողոքին վրայ դատական քննութեան վաւերաթուղթերը կայսեր զրկած էր եւ վճիռը անոր յանձնած: Ուրախ եղաւ կայսրը որ իր շըրջանակին մէջ մարդ մը գտաւ որուն հետ — վերջապէս անգամ մը — սիրտէ սիրտ, ոչ թէ միայն պետական պատճառներով, կրնար խօսիլ կրօնքին եւ հոգեկան փրկութեան վրայ: Տրդատ զղջացած էր, այս մասին տարակոյս չկար: Ազաթանյեղոս այդ չափին մէջ յաջողած էր: Յանչափս անմաքրութեան եւ յանցապարտութեան իր ճանաչումը ունեցած էր վերջապէս Տրդատ: Բրիսանոյչի մահը յուսահատութեան անդունդը տարած էր դայն, իր առողջութիւնը խանդարած, իր քաջութիւնը խորտակած: Շարաթներով լուծեցէ, պահեցողութիւններէ եւ իր սենեակին մէջ միս միսակ առանձնութեանէ վերջ Լիկինիանոսի հետ Նիկոմիդիա երթալու համար նաև առած էր: Գիտկդիտիանոս ամէն ինչ բրաւ մխիթարելու եւ վերականգնելու համար զայն: Ան որ խաղաղութեան համար ինք անձամբ պայքարեցաւ, հիմա պատրաստ էր խաղաղութեան համար օժանդակել հոգեկան ազա-

տութիւն եւ փրկութիւն աղաղակող անձի մը: Տրդատի փնտռածը ա՛յլ էր — աղատութիւն: Գիւանաղպիր մը Գիտկդեաթիանոսի հրամանովը զացած էր կանչելու Միհրի քրմապետը Տապիս: Որ եկաւ: Իր հազուատ — կապուստը եւ մագերու կտրուած ձեւը ճիշտ Մովպետինը, բայց այդ հազուատին տակ կար մարդ մը որուն մէջ մի զիմացիծը կը ցուցնէր լըջութիւնը պաշտօնին շուրջ: Նայուածք, խօսք ու կայք պատկառելի էին: Անշարժ անդորրութեամբ ստանձնեց կայսեր կոչը Տրդատի բաղձանքը կատարելու: Յետոյ խօսեցաւ միւսնոյն անդորրութեամբ. «Յանցանքը քաւութիւն կ'ուզէ: Աղատութիւնը արիւն կ'ուզէ: Խաղաղութիւն կուտանք անոնց որոնք ընդունած են Միհրի պատարայր եւ սուրբ ցուլին արիւնը: Ով որ կը բաղձայ աղատութեան, պէտք է ըմբռնի պաշտամունքին խորհուրդները եւ անոնց շարչարանքները, ընդունուելու համար սուրբերուն թիւին մէջ: Երիտասարդը պէտք է ուխտի երթայ եւ հետուր Հոռոմի մէջ կրէ համբերութեամբ խորհուրդներուն նահատակութիւնը: Ոչ ոք պէտք է ճանչնայ զինքը: Ինքը ոչ ոք պէտք է ճանչնայ: Հոն Միհրի քահանաները պիտի ըսեն իրեն, թէ ի՞նչ պէտք է ընէ: Նախ եւ առաջ պէտք չէ որեւէ թաղ կրէ: Աստուածներուն անկէ՞քը զլխուն կուզայ»: Խոնարհեցաւ կայսեր առջեւ եւ պատկառելի կերպով քայլ առաւ մեկնելու, առանց անգամ մը Տրդատի երեսը նայելու: «Կ'ուզե՞ս Հոռոմ չուել եւ խորհուրդներուն պատիժը կրել» հարցուց կայսրը Տրդատին: Կ'ուզէր զիտնալ. «Ի՞նչ պատիժ, ի՞նչ շարչարանք, ինքնակալ»: Կայսրը ձեռքը բերանին առջեւ դրած եւ ալ աւելի հողածու ակնարկ մը արձակեց Տրդատին, որ բաւ. «Կ'ուզե՞մ երթալ եւ Լիկինիոսի: Չարչարանքը որքան աւելի ըլլայ, այնքան լաւ»: — «Կը վստահիս կեանքիդ»: — «Կը վստահիմ, ինքնակալ»: — «Կուզաս դարձեալ», ըսաւ կայսրը, «փրկուած եւ մաքրուած, յետոյ լէզլսնով մը հայրենիք կը չուես եւ Հոռոմկական գաւառ Հայաստանը իմ անունովս կը կառավարես»: Տրդատ կայսեր երկու ձեռքերը համբուրեց: Ինքնակալը զայն համբուրեց ճակատէն: Տրդատ դուրս ելաւ, իր զէպի Հոռոմ մեկնումը Լիկինիանոսի իմացնելու:

Մինչ կայսրը իր վերջին ուժը զործածելով կ'ընդունէր յաջորդ աղերսարկունները, եւ երկարօրէն ալ Լիկինիանոսի հետ խօսելով անոր կը պարզէր հեռանկարը մօտաւոր իշխանակցութեան (կեսարական պատիւ) մը հնարաւորութեան մասին, ընդարձակ դարաստանին մէկուտի մէկ անկիւնը Գաղերիոս, քուրմերը եւ քրմապետը կնոջ մը հետ խորհրդաւոր խօսակցութեան մը բռնուած էին ցած ճայնով: Բարձր թուփեր կը ծածկէին զինքը: Այդ կինը Գաղերիոսի մայրն էր Հոռոմուլա, քրմուհի: Ամէնքն ալ անոր բերանէն կախուած էին, որ դժուարաւ կը բացուէր, միայն թէ անդադար շարժումի մէջ էր եւ

ուծյին ու տաք բառեր կը խօսէր, մինչ բուռի իր խոշոր ու մութ աչքերը բոցավառ կը թաւալէին ակնակապիճներուն մէջ դժուարակիր: Մինչև ոտքերը տատանող մութ զգեստի մը մէջ ծածկուած անոր խոշոր վտիտ կերպարանքս բոլորովին անշարժ կը կենար: Թանկագին մատանիներով օժտուած ծիրամ ձեռքերս արծիւի մազիկներունման հետզհետէ աւելի վայրագօրէն կը կտռէին կը բռնուին ոսկի գօտիին մէջ, որ կը պարփակէր զսրչ սնդուսէ պարեպօտ մը: Վերարկուին զգակին տակ ծածկուած էր զլուխը, որ խոուացած անզղի մը ահարկու տպաւորութիւնը կ'ընէր կկոցեալ աչքերովը, թառամած այտերովը և կարճ գոռու մազերովը, որոնց մէջէն սակայն տեսանլի էր ճերմակ գանկը: Իր բոցակիճ աչքերը կ'արձակէին ատելավառ նայուածքներ զէպի քրիստոնէաներուն եկեղեցին որ ցանկապատին վրայէն կը տեսնուէր: յետոյ դարձեալ զէպի երկինք ցից, զոպցես վրէժխնդիր: Հորիցոնին վրայ ծովուն վերեւ կը բարձրանային փոթորկայոյց ամպեր: Արևը կը խայթէր խուլ տապով: Փոթորիկէն առաջ արամազրութիւնը թախճոտ կը տարածուէր քաղաքին և զաշտավայրին վերեւ: Բովանդակ կեանքը կը թուէր բնագրամացած: Որքան վեր բարձրանային ամպերը, այնքան աւելի մութ կ'ըլլային, և նոյնքան աւելի վիրացի նայուածքներ և շարժումներ կ'ունենար Հոռոմուլա: Երբ առաջին կայծակը հրակերպեան ծամածուռ մանուածովը պատուց սեւաթորմի ամպրոպին պատր, հեռուէն լսուեցաւ մեծաթիկնդ ծիծաղ մը, խոնդանոտ, որ յանկարծ զաղբեցաւ: Ծովը լուռ լուռ կը շառաչէր, և կոհակուէա շարժումներուն բախումը կ'որոտար մինչև վերը դարաստանն ու պալատը: Դիոկղետիանոս առաջին իսկ որոտումին ճամբեց իսկոյն իր աղբսարկուները և հրամայեց քրմապետը կանչել: Մինչև որ ան դանուեցաւ դարաստանին ծանօթ անկիւնը, Ինքնակայր արդէն սպող քրտինքով շաղախուած էր: Դողդոջուն կթոտ ծունկերով կը չափէր վեհապետական գահիճը ամէն ուղղութիւններով: Կայծակ կայծակի վրայ կը շանթէր գիշերանման երկինքին մէջ: Արդէն աւելի արայ կ'որոտար երկինքը: Կայսրը հառաչակուլ ձայնով մը կանչեց զուրսը նորանցքին մէջ, թէ, է՛յ, ո՞ւր է քրմապետը: Բոլոր զրապիւրները անոր ետեւէն ինկած էին: Պրիսկա և Վալերիա կը հասկնային ինքնակային դժուարակիր ժամը և երկուքն ալ վաղեցին եկան: Կայսրը, զեփ գեղին ու խաթարուած, նրատած էր բաղմոցի մը վրայ, կոնակը պատուհանին դարձուցած, զոց աչքերով զէմքը զիմացի մութ անկիւնը ուղղուած: Տիկին և զուստը նստան անոր մօտիկը և բռնեցին անոր զողողուն, քրտնաթոր, պայծառքերը:

«Կապերդ կ'ուզե՞ս, հայր», հարցուց մտերմիկ շեշտով Պրիսկա: «Ո՛չ, ո՛չ, կեցիք», կայսրը կառչեցաւ տիկինին ձեռքին և սեղմեց

զայն որ նստաւ: «Պատարաղը», կը հառաչէր Դիոկղետիանոս, կարճ հատկած: «Բայց, յանուն բոլոր աստուածներուն, ո՞ւր մնաց սա Տաղիսը — վայ, վայ —» սղաղակեց, երբ կայծակը լուսցուց սրահը և երկարատես որոտում մը սասանեցուց գահիճին կհեայ յատակը կայսեր ստերուն տակ: «Կը լքեն զիս ծառաներս», հեծեծեց կայսրը խորապէս: «Ու մենք միայն կը մնանք քեզի հաւատարիմ, մենք, քրիստոնէաներս», բաւ Վալերիա: Կայսրը լուս և սնդուները վեր առաւ, բացաւ օդի համար: Մուծակները կը ճոնչէին յատակին վրայ: Դրան փեղկերը ըացուեցան: Քրմապետ Տաղիս կանդնած է սեմին վրայ, միւս քուրմերը, ամէնքը ճերմակ կտուէ զգեստներով անոր ետեւը, Գաղերիոս ամէնէն ետեւը: Քրմապետ Տաղիս պատարաղէն կուզար: Հոն բաց երկինքին և հեղեղասաստ անձրեւին տակ քարէրակներն վրայ պառկած է դեռ ողջ, զողողջուն զուարակը, որուն փորտիքներուն մէջ Տաղիս փնտռած քննած էր, թէ Աստուածները հա՞շտ են և այս ահարկու փոթորիկը անփնաս պիտի անցնի՞: Աստուածները լուռ մնացին: Ընդերկները չյայտնարեցին Աստուածներուն կամքը: Որքան որ քուրմը կը հրամայէր աղիքներուն, կը հարցափորձէր զանոնք, — շարչարուած կենդանիին զարհուրելի պոչիւնը, թաւաղոր որոտումը, թալ թալ խաղացող կայծակները միայն պատասխան կուտային: Հոռոմուլայի հետ զաղտնի տեսակցութեան նպատակը իրապօրծուած էր: Կարմիր թեւերով որոնց փակչած էր կենդանիին արիւնը, Տաղիս փութացած էր զալ Դիոկղետիանոսին մօտ: «Աստուածները ի՞նչ ըսին, Տաղիս», աղաղակեց անոր Դիոկղետիանոս: «Ոչինչ Ինքնակայ»: — «Ոչի՞նչ: Վայ, վայ ինձի»: — «Ինչո՞վ, կը կարծես զուն, թէ բարկացուցինք զանոնք: Ի՞նչու լուռ կը մնան»: — «Քրիստոնէաներուն համար, Ինքնակալ»: — «Քրիստոնէաներուն համար», կրկնեցին սպող, հանդիսաւոր անդորրութեամբ քուրմերն ու Գաղերիոս: «Քրիստոնէաներուն համար», հարցուցին նոյն հանդարտութեամբ Պրիսկա և Վալերիա իրարու ետեւ: Ու ահա ահրնկէց շանթ մը մութ սրահին մէջ ճայթեց ուժգին: Որոտումը զոտած, կարծես հարիւրեակ մը կաղնիներ կը ճարձատէին իրարմէ: «Չարնուած, բռնկած», կարծես միարեան ձայնեցին քուրմերն ու Գաղերիոս: Բայց քրմապետին բերանէն, կարծես անդիտակցարար, զուրս եկաւ սա կանչը: «Հոռոմուլա»: Դիոկղետիանոս վեր ցատկեց: Աստուածները պատասխանած էին: Անոնց զայրոյթը իջած: Ահա դժբախտութիւնը: Միշտ, երբ անստուգութիւնը կը խուսափի և ստուգութիւնը մէջտեղ կը հանէ պայծառ կացութիւն մը, թէկուզ փտանկաւոր ըլլայ այդ կացութիւնը, ինքնակային տաղնապն ալ անցաւ, և պէտքը արթնցուց անոր օյժը: «Ո՞ւր բռնկեցաւ կայծակը», զոչեց և դրան առջև խոնուած մարդիկը իրարմէ զա-

տեց: Բակին եւ պալատին մէջ ամէն ինչ շարժումի մէջ էր: Կայծակը տանիքին զարկած էր եւ հրդեհը արդէն կը կայծակաւ լեզուաձեւ ոսկի գեղին բոցերով: Բայց անձրեւը կը տեղար, եւ մարեցաւ աւելի մեծ վնաս չհասցուցած: Դիտկղետիանոս ինք անձամբ առաջնորդեց ջրհանկիրները, եւ արքունիքն ու պալատ կը թնդային անոր հուժկու ձայնէն: Երբ իր վեհապետական սրահը նստաւ եւ քիչ մը հանգստանալ կ'ուզէր, նորէն դուռը դարնուեցաւ: Արարողապետը իմացուց թէ Տաղիսն է: Ներս մտաւ, քուրճերը ետեւէն, անոնց ետեւէն ալ Գաղերիոս եւ իր մայրը Հոռոմուլա, որ կոթողի մը պէս կեցաւ դրան առջեւ: Ոչ մէկ անգամը տեսնելի: Միմիայն ոսկրուտ գէմքը, դուռնաթափ, կը նայէր զլիսանոցէն դուրս: Ճակատին եւ քունքերուն շուրջ քանի մը ճերմակ խոպոպներ կը տեսնուէին: Երկու սեւ գունդ աչքեր քուրճերուն վրայէն կը նայէին Դիտկղետիանոսին: Այդ նայուածքներուն տակ Դիտկղետիանոս կորսնցուց զիմացրութեան որեւէ ոյժ: Տաղիս, Հիերոկղէս, Գաղերիոս այնքան մեծ զժուարութիւն չունեցան կայսեր սպացուցանելու, թէ այս գժբախտութիւնը բարկացող աստուածներուն առաջին ազգարարութիւնն է: Ուստի անկցին քրիստոնեաները: «Թող կորսուին բանակէն», պահանջեց Գաղերիոս: «Թող կորսուին կայսրութեանէն», պահանջեցին քուրճերը: Եւ ուղիներու ձայնի մը պէս, խորունկ ու խուլ թնդաց վերջապէս դուռնէն աստիճանի ամէնուն վերեւ թող կորսուին աշխարհէն»:

Քանի մը շարժելն պիտի տօնուէր տասներորդերորդ տարեկարծը Մաքսիմիանոսի իշխանակից անուանումին: Չոհեր եւ պաշտօնական խրախճանքներ նախատեսուած էին: Բոլոր այն զինուորները, որոնք իրենց քրիստոնէական հաւատքին պատճառաւ կայսեր պատկերին խունկ չծխեն եւ անոր համար կոչ չընեն աստուածներուն շնորհքին եւ զթութեան, անմիջապէս պիտի վտարուին: Հոռոմուլայի նայուածքներուն տակ Դիտկղետիանոս ստորագրեց Գաղերիոսի խրամբարած հրամանագիրը: Եւ մեկնեցան: Ընդարձակ սրահներուն մէջէն անցնելու ատեն Վալերիայի հանդիպեցան: Հոռոմուլա խորիտաբար քալեց անոր քովէն, տակէն վեր չափեց անպատմելի արհամարհոտ նայուածքներով, վրան թքաւ եւ վհուկի իր ձայնը զրրոց բարձր սրահին մէջ: «Մա նայէ, դատապարտեալ, Ահրիմանի բող, ինկած, մանկակեր, կախարհ»: — Սրահը ձայնէն կը ճարճատէր: Հոռոմուլա քանիցս Վալերիային երեսին դարկաւ մազազաթին պատառ: «Շատ սիրուն, շատ շնորհալի, կեսուր մայր», գիտել տուաւ Վալերիա մտերմական ծիծաղով մը եւ քալեց գնաց անկէջ:

Երբ հիւրերը կայսերական ամոլին հետ իրիկուան ճաշասեղանին նստած էին, արարողապետը օրուան վերջին լուրը բերաւ: Կայսրը պէտք է շուտով դուրս գայ: Գնաց: Վերադարձաւ մտահոյ:

«Պատերազմ», յայտնեց ասդին անդին նայելով տխուր կերպով եւ նստաւ: Գործը Մաքսիմիանոսին զլիսուն կը դառնար: Իր արջաթաթի նմանող ձեռքերը դարձեալ կտոչեցան Դիտկղետիանոսի ուսերուն վրայ, եւ երեսը կարելի եղածին չափ անոր մօտեցնելով, հետաքրքրութեամբ հարցուց. «Պատերազմ: Որո՞ւ հետ սակայն, բռն, որո՞ւ հետ»: — «Փոթերուն հետ: Պատուիրակ մը դուրսն է եւ իր թաղաւորին կողմէ գիտ կը հրաւիրէ մենամարտի իր հերոսներէն մէկուն հետ: Եթէ ես յաղթուիմ, անոնք ազատ անցք պիտի ունենան եւ երկրամաս իրրեւ զաղթական հաստատուելու համար: Եթէ ես յաղթեմ, յաղթուած պիտի նկատուին իրենք եւ պիտի մնան իրենց հիմա եղած տեղերը: Այս կերպով իրենց եւ մեր միջեւ կ'ուզեն ճակատամարտ մը խնայել»: — «Ներս կանչէ դայն», զուցեց Մաքսիմիանոս: Գաղերիոս արդէն դուրսն էր: Փոթացի հսկայ մը, պատերազմական մազոտ մօրթը վայրի եղան եղջիւրներով ուսերուն շուրջ, կայսերական սրահին մէջ կեցաւ շրջած, ուր աչքի կը դարնէր իր լուրթիւնը: Ամբողջ ժամ մը անցաւ մինչեւ որ ըլլոր հարցումներուն պատասխանեց, եւ մինչեւ որ վերջապէս խոստովանեցաւ, թէ ինք պիտի ըլլայ մենամարտողը: Հարիւրապետներու պաշտպանութեան տակ, անձնապահ գունդին մէջէն անցնելով, տարուեցաւ բանակատեղին, սպասելու համար, որպէսզի Դիտկղետիանոս իր որոշումը տայ: Իրիկունը անցաւ մեծ անհանգստութեամբ: Դիտկղետիանոս անմիջապէս պատրաստ էր մենամարտը ընդունելու: Բայց յիտէր որ կեանքը վրայ պիտի տայ: Իր ոյժը այլեւս չէր բաւեր: Ասկէց զատ, աստուածներն ալ բարկացած էին իրեն դէմ, եւ իրենց կամքը հիմա չեն ուզեր յայտնել: Մաքսիմիանոս յօժարութեամբ կ'ուզէր ինքզինքը տրամադրել, բայց կը վախնար որ զօրանալու համար շափոտանց գինի խմելով կոխուին առջեւ ակարանայ: «Ե՛, Իշխան Լիկինիանոս», ձայնեց Դիտկղետիանոս, սեղանի վրայէն աչքերը անոր ուղղելով: Ամէնքն ալ անոր նայեցան: Լիկինիանոս ձայնեց գունաթափ եղած. «Կ'ըլլայ, բայց վրաս մտերիք կուզայ»: Եւ ահա մէջտեղ ցատկեց Տրդատ եւ աջ ծունկը կայսեր առջեւ խոնարհեցուց, ազուր մը կարմրած. «Ես կ'ուզեմ թու տեղը կոտիլ, Ինքնակալ: Եթէ իյնամ, այն ատեն — դուն պիտես, Ինքնակալ»: Դիտկղետիանոս մերժեց: Տրդատ մնաց ծրարողի, խոչոր, աղաչող աչքերով կայսեր նայեցաւ, մինչեւ որ ամէն կողմ լուրթիւն տիրեց, եւ ամբողջ ներկաները ոտքի ելլելով, Տրդատին կը նայէին: Դիտկղետիանոս կը շարժէր իր աղերեկ գլուխը: Տրդատ իր թուխ գոռոզ գլուխով նշանացի կը խնդրէր կայսրէն, եւ ի վերջոյ բռնեց անոր աջ ձեռքը եւ այնքան սեղմեց որ Ինքնակալը դուր ջանքեր ըրաւ Տրդատին ճիրանէն ազատուելու համար, եւ սկսաւ ցաւէն տքալ բարձրաձայն: Ամէնքն ալ խնդալէն կը մարէին, եւ Դիտկ-

ղևտիանոս պարտաւորուեցաւ խոստանալ ցաւատանջ դէմքով, որ պիտի ձղէ Տրդատը կռուել իրեն տեղը:

Ահաւոր լուսթեան օր մը անցաւ Նիկոմիդիոյ պալատին մէջ: Բայց երեկոյան Տրդատ շքեղափառ սեղանին վրայ եւ բոլոր լապտերներուն հանդիսաւոր շոգերուն մէջ աօնուեցաւ իրրեւ պատարար կայսեր, կայսրութեան եւ — Իրրեւ թագաւոր Հայաստանի: Այլ միջոցին խոշոր պղնձէ սկաւառակի մը վրայ Գոթացիի գլուխը, աչքերը զոց, բազեղով ու գափնիով ծածկուած, կը հանդէժը պալատին գաւիթին մէջ, ի տես ամէնուն: Ամբողջ գիշերը հոռոմայեցի զինուորները թափօրով անցան անմարմին գլուխին աջեւէն, զոր Տրդատ հըսկային հետ դարհուրելի դօտեմարտէն վերջ ծոծրակին վրայ կոխած ճնշած եւ թուրովը իրանէն բաժնած էր:

ԳԼՈՒԽ ԺԵ.

## ՄԻՅՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Ազաթանդեղոս հաստատ կը մնար իր ուխտին վրայ: Երբ Տըրդատ հաւատայ փրկութիւն գտնել Միհրի պաշտամունքին խորհուրդներուն մէջ, ինք պիտի ընկերանայ իրեն, բոլոր վտանգներուն մէջ, մինչեւ իսկ ի գին իր կեանքին: 303-ի ձմրան սկիզբը, երկուքն ալ Ասպական պողոտայէն անցնելով կ'երթային Հոռոմ: Երկուքն ալ լռիկ մնջիկ: Հոռոմ մթնշաղի մէջ: Հոռոմ իր անուններով — իր պատմութեամբ — Հոռոմ իր եօթը բլուրներուն վրայ — Հոռոմ կը ճնշէր երիտասարդներուն հողիները: Եւ, ասկէց դատ, սա պարագան ալ, որ հոս կրնան կեանքէ զբաւել ահաւոր, խորհրդաւոր չարչարանքներու մէջ, որոնց պիտի ենթարկուին իրենց հողիները, քաւութիւն ստանալու համար Աստուածութենէ մը, որուն երկուքն ալ կը հաւատան եւ զոր կը պաշտեն իրրեւ խորհրդանշան լոյսի: Օթեւան փնտուեցին քաղաքին անուանի մէկ պանդոկին մէջ:

Նոյն այն իրիկունը բաց կառքով դացին Միհրական հասարակութեան քրմապետին բնակարանը Պաղատինեան լերան վրայ: Առաջնորդուեցան ընդարձակ ճերմակ սրահ մը: Յատակը ծածկուած խորունկ կակուղ բուրդէ դորդով մը: Բարձր կամարածեւ պատուհաններ, որոնք աղօտ երկինքը միայն կը տեսցնեն, եւ լոյս կուտան: Երկայն, բարակ, ոսկիէ օղակներու վրայ կը կախուին երեք ոսկի, բոլորովին անշուք ջահեր ձեղունէն վար համաչափ միջոցներով: Բազմոցներուն եւ աթոռներուն վրայ շողջողուն ճերմակ կաշի կամ սնդուս անցուած: Երիտասարդները անխօս նստան դէմ առ դէմ: Քանի մը մոմ լոյս կուտային վերէն վար, եւ դուրսէն ներս կը շողար օրուան յետին լոյսը: Տրդատի այնպէս եկաւ որ դատասրահի մը

մէջ կը գտնուի: Կը սպասէր իր դատաւորին: Ազաթանդեղոս անպարտօրէն կ'ուզէր վշտակրիլ անոր հետ եւ պարտաւոր էր հիմա անոր հետ սպասել քրմութեան որոշումը: Դիտկղետիանոս կայսրը քրմական խորհուրդին հաղորդած էր Տրդատի յանցանքը եւ երկուքին ցանկութիւնը, եւ խնդրած էր որ ընդունուին Միհրի պաշտամունքին խորհուրդներուն մէջ:

Քրմապետը երեւցաւ: Ճշմարիտ քահանայապետ մը: Ազաթանդեղոս եւս զդացուեցաւ բարձր, նրբաւարտ, յազթ հասակով այս ծերունիին դէմքին եւ բոլոր կերպարանքին վեհութենէն: Գլուխն ու երեսը բոլոր ինչ հարգանքով: Անոր հարգանքով մէջ, ամբարտակ բերանէն չուրջ, բոլոր գիմադիծերուն վրայ կը դարէր մտահոգութիւն, կարեկցութիւն, լրջութիւն: Կը կրէր երկար, փայլուն կտաւէ պճղաւոր, ոսկի գօտի, ճերմակ կիսակօշիկ: Աջին մէջ Դիտկղետիանոսի շրջութիւնը, զոր կարճ ու անխօս ողջոյնէ մը վերջ կարդաց երկու այցելուներուն:

Դիտկղետիանոս ինքնակալ, Միհրի քուրմերուն Հոռմ. խաղաղութիւն եւ ողջոյն նախ եւ առաջ:

Տրդատէս, Արքայազուն Իշխան Հայաստանի, ազատ կամքովը, կը փափաքի քաւել ծանր յանցանք մը, անմաքուր եւ մեղաւոր կեանքէ մը յառնել երկինքի լոյսին եւ ասկէց դատ, Միհրի պաշտամունքի խորհուրդներուն համաձայն տառապել: Ոչ մէկ շարչարանք եւ անձկութիւն պէտք է խնայել եւ իր անձը ըստ ամենայնի պէտք է մաքրադործուի: Եթէ վտանգներէն զերծ դուրս դայ իր կեանքը, Կայսերական Բարձրութենէն ալ շնորհ պիտի ստանայ եւ իր յանցանքին պիտի ներուի: Եթէ ան արժանի ըլլայ արդարներուն թիւին մէջ ընդունուելու — իցիւ — ձեր Միհրանութիւնը Փէքուրա սուրբ հօգիի առաջնորդութեամբ հարկ եղած վճիռը տայ: Տրդատ խնդրեց ինձմէ որ արտօնուի բնիկ Կապադովկիացի փիլիսոփայ մը Ազաթանդեղոս, իր բարեկամը, բնկերանալ իրեն: Խնդրեմ որ ընդունիք իր աղաչանքը: Բայց ձեր կամքը թող ըլլայ: Այս առթիւ հաւաստի եղէք իմ կայսերական մեծարանքիս եւ հովանաւորութեան մասին: Յիշեցէք զիս ձեր պատարագներուն եւ մաղթանքներուն մէջ:

Դիտկղետիանոս ինքնակալ

Երկու բարեկամներուն առջև կեցած էր քրմապետը: Հաղիւ կը շարժէին իր շրթունքները, երբ խուզարկու նայուածքներով, Ազաթանդեղոսին կը նայէր, եւ ապա հնչուն ձայնով ըսաւ. «Տրդատէս, Ազաթանդեղոս, կ'ուզէք ընդունիլ Միհրի սուրբ խորհուրդները եւ անոր երկնաւոր լոյսին մասնակցիլ»: Երկուքը իրարու հետ ըսին «այո»:  
«Ով որ կ'ուզէ բարձրանալ Միհրի փառքին, պարտի նախ եւ առաջ զանձն խոնարհեցուցանել եւ բազում շարչարիլ, պէտք է կարենայ

մեռնիլ. ո՛չ բողոք, ո՛չ հառաչանք իր բերնէն պէտք չէ դուրս ելլէ. ոչ բնաւ մատնել խորհուրդներու դաղտնիքը, այլապէս մահը անկասկած է անոր համար: Կրնա՞ք եւ կ'ուզէ՞ք շարչարուիլ ու լռել»: Տրդատ եւ Ազաթանդեղոս. «Կրնանք եւ կ'ուզենք»: — «Տուեալ է ձեզ միասին շարչարուիլ: Պէտք է մին շարչարուի, վշտակրի միւսին համար, մին օդնէ միւսին: Բայց — յանուն բոլոր երկինքին եւ բոլոր աստուածներուն. ոչ մէկ բառ խօսեցէք միասին: Մտիկ ըրէք: Այս իրիկուն առատ ճաշով մ'ը կազդուրուեցէք: Ձեր անձերը պատրաստեցէք մահուան: Ազոթեցէք եւ զօրացուցէք ձեր հօգիները: Միհրի շարչարանքները ահաւոր են: Վաղը այս միջոցին եղէք Պաղատինեան լեռը: Հոն երկաթէ դուռ մը կայ: Պիտի բացուի ձեզի եւ պիտի գոցուի ձեր ետեւը: Եթէ մեռնիք, Միհր կը կանչէ ձեզի եւ պիտի ապրիք: Եթէ զիմանաք շարչարանքներուն, կը սպասէ ձեզի հրաշալին: Գացէք բարեաւ, Միհր ընդ ձեզ»:

Քրմապետը աջը անոնց զլուխներուն վրայ տարաւ բերաւ օրհնելով եւ անբարբառ սահեցաւ դնաց անկէց: Գերի մը դուրս տարաւ բարեկամները: Եւ էր զիշեր: Կառքը կը թաւալէր: Իշխանական սենեակ մը օթեւանեցին երկու մարդիկը, որոնք զիշեր մը, մերթ լռելով, մերթ խօսելով, մերթ ազօթելով արթուն հսկեցին եւ այս կեանքէն հրաժարեցան, ի դէպս մահու:

Որոշեալ ժամուն, մթնշաղով կամ կիսալոյսով սքողուած, բարեկամները կեցան պատուիրուած վրայ — զլուխով երկաթեայ դրան առջև: Տրդատ չհամարձակեցաւ դարնել: Պատի մը պէս ձեփ ձերմակ դարձաւ, երբ Ազաթանդեղոս հանդարտօրէն դարկաւ երեք անգամ մեղմով: Արձապանդանման թնդիւն մը զզրգեցաւ ներսը երկար ատեն: Անձայն, անչուկ, կարծես խորհրդաւոր ձեռքերու կողմէ փոքրիկ դուռը, ժայռերուն մէջ շինուած խոշոր թեւով մը, ինքնին բացուեցաւ: Ազաթանդեղոս յառաջացաւ: Տրդատ անգամ մըն ալ նայեցաւ լայն շրկինքին, վարը յաւիտենական քաղաքին, լայնափեռեկ ոնդունքով անգամ մըն ալ վեր քաշեց ազատ, արձակ օդը, յետոյ կարծես ինքնահաճ բաժանումով մը կեանքէն, ... ներս: Դուռը զոցուեցաւ ինքնիրեն: Չարչարանքի ուղին սկսաւ: Երկու, երեք քայլեր նեղ զնացքին մէջ, եւ ահա կատարեալ մութ: Ձեռքերնին իրարու տուին, նախ քով քովի, յետոյ իրարու ետեւէ: Կրունկ կրունկի: Ամէն արհաւիրքի տրամագիր, դանդաղօրէն կը յառաջանային: Ականներնին սեղմած, որպէսզի որեւէ բառ չփախչի իրենցմէ: Մղլտած օդ, ապառաժի հոտ: Պարտաւորուեցան լեբան ներսը պտրտիլ: Ազաթանդեղոս յանկարծ կեցաւ, ետ ետ քալեց, եւ քիչ մնաց Տրդատին վրայ պիտի իյնար: Ազաթանդեղոս պատի մը դէմ առած էր մութին մէջ: Պատը, հանած ձայնին նայելով, փայտէ ըլ-



լալու էր: Ազաթանդեղոս դարկաւ: Կիսաբողոքաձեւ եւ ժայռի մը մէջ կոփածոյ միջոցի մը մէջ, պատերուն վրայ մոմերու տոմոյն լոյսով լուսաւորուած, պատերուն երկայնքը կը նստէին կենդանիի զլուխով մարդիկ, բու, կոռնկ, ազուա, արծիւ, վազր, առիւծ, շուն: Նըււիբուսի Եօթը աստիճանները կը ներկայացնէին, Միհրի անխօս նուիրեալները. օծեալները յետ նուիրումի: Արամազդի պատգամաբերը. արեւուն սուրհանդակը. պատերազմիկը. Թաղաւորը. Միհրի ուղեկիցը: — Եւ ասիկա կը նշանակէ դարձեալ, կեանքի հետ առնչութեամբ. Խորհրդապահութիւն կամ Լուսիրութիւն. աստուածանուէր Սրբութիւն. Խոհմութիւն, Վեհութիւն միտքի եւ Զգտում գէպի լոյս, Քաջութիւն եւ Իշխանութիւն եւ Բարձրութիւն, Հաւատարմութիւն: — Եօթը դիմակները նստած էին սեւ պատառով ու ճերմակ եզերքներով սեղանի մը ետեւ: Տրդատի եւ Ազաթանդեղոսի բերաններն ու աչքերը եկաւ զոցեց այդ դիմակներուն աջ կողմը կեցող մէկը, եւ այդ վայրէն հանդիպակաց պատին ուղղութեամբ տարուեցան շատ ցած փոքր դրան մը առջեւ: Այլեւս ոչ մէկ խորհուրդ, ոչ մէկ հրաման: Հիմա իրենք պիտի գուշակէին թէ ինչ պէտք է ընել, ի՞նչ բան փորձել, ի՞նչ բան շօշափել: Տրդատ ամենամեծ ուշադրութեամբ եւ հետաքրքրութեամբ կ'ըմբռնէր երկիւղի եւ արկածախրնդրութեան այս բոլորովին ցարդ անձանօթ կացութիւնը, եւ մեծ հաճոյք կը զգար վայելքի այս զոյգումէն: «Ահա ճիշտ կեանքը» — կ'ուզէր պոռալ կանչել, բայց կապը ճնշեց թեթեւ մը եւ յիշեցուց անոր, ճիշտ ժամանակին, պատուէրն ու ուխտը: Փորի վրայ սողալով անցան այդ նեղուկ բացուածքէն, եւ նորէն սողացին, Տրդատ կարծես բարեկամին դարչապարին վրայ պիտի կոխէր, այնքան մէկը միւսին ետեւէն: Տրդատ կանգ առաւ, ձեռքերովը շօշափեց առջևօք եւ վերօք: Ոչ մէկ արդեւ: Բարձրացան կամաց կամաց, թեւերնին գէպի վեր առաջ տնկած: Շիփ շիտակ կը կենային, բայց երկու կողմերուն վրայ կը զգային պաղ, թաց պատեր: Երկուքին վրայ ալ սոսկում մը եկաւ: Ո՞ւր պիտի երթան, ո՞ւր կրնային ըլլալ: Ի՞նչպէս դարձեալ լոյսի պիտի դան: Ճամբան ի՞նչ ծուղակներ կան: Անդ՞ուզ, Վի՞հ, անասուննե՞ր, մարդի՞կ: Ազաթանդեղոս, միշտ անխօս, կը շարժէր գէպ առաջ: Միշտ թեւատարած շօշափելով: Մէկ ձեռքովը կը բռնէր Տրդատին ձեռքը: Աչքերը նոյնքան խիստ կապուած էին որ կարելի չէր որեւէ ծակէ մը բան տեսնել: Երկուքին ալ ուղեղը կը շարժարուէր այս առաջին քննութեան իմաստը հասկնալու համար: Պիտի գուշակե՞ն զայն, կամ թէ այս հանելուկը այնքան երկար պիտի տեւէ մինչեւ որ իրենք գտնեն լուծումը: Դէպի անստոյգը, գէպի տաղնապը, շունչին տուր եւ առ չեղձամղձուկ կը դառնար միշտ խուլ ու խոնաւ դարձած օդին մէջ: Ժամանակի գաղափարը ջնջուած

էր անոնց զոյգումէն ու գիտակցութենէն: Կրնար ցերեկ, կրնար դիշեր ըլլալ: Եւ բոռ մըն ալ չըսել: — Եւ իրարու ալ այնքան մօտ ըլլալով հանդերձ: Եւ ասիկա զեռ սիւրբն երկանց: Քաղց ու տկարութիւն մէջտեղ ելան: Ուտելիքին տեղը կը բռնէ կամքին ոյժը: Լեռան բոլորափերը, այդ այրին մէջ խաչաձեւ ու շեղուկ ժամերով խարխափումէ վերջ, յաճախ շիփ շիտակ, յաճախ ետեւ, մերթ ձախ, մերթ աջ, մերթ նոր, մերթ արդէն իսկ ըստ երեւոյթին փորձուած ափափաններ ու առջեւէն, վրայէն — Երկուքն ալ յանկարծ թարմ օդ զլացին իրենց գէպքին շուրջ: Առաւօտեան սուր, պաղ հով մըն էր: Արտահոսումներէ, զոլորչիւնրէ եւ ամէն կարգի երկիւղէ թաց խխումեղած էին եւ կը սարսոտային այս յանկարծական օդի հոսանքին առջեւ: Իրարու սեղմուեցան եւ լուռ կը խորհրդակցէին, թէ ուր կրնային ըլլալ: Իրարու մօտ քովերնին տեղ կար: Իրենց ետեւը ժայռերուն ընթացքը: Իրենց առջեւ ազատ օդը պէտք էր ըլլար: Թեւերնին կրնային անխափան տարածել գէպի վեր եւ գէպի երկու կողմերը: Ազաթանդեղոս մէկ ոտքովը խորքը փորձեց: Այլեւս ո՛չ մէկ յատակ կամ գետին: Ոտքը ետ քաշեց զգուշաւոր արագութեամբ մը: Նոյնը ըրաւ Տրդատ: Բայց անոր ոտքը չուանի մը զպաւ: Յոյսի ձայն մը փախաւ բերանէն: Բայց Ազաթանդեղոս հրեց զայն սաստիկ, որ չիտօսի: Եւ հիմա ինք ալ ոտքերուն սլճեղներովը զլաց պարապին մէջ այդ կախուած չուանը: Ոտքին ծայրովը կամաց կամաց վեր հանեց զայն եւ բռնեց: Ո՞ւր կ'երթար այսպէս այս չուանը: Ո՞րքան երկայն է: Բաւական ուժով: Փրկութեամբ թէ մահուան համար: Ազաթանդեղոս, մունջ, ձեռքը հասցուց բարեկամին: Տրդատինն ալ պաղ էր եւ թաց: Վայրկեանները յաւիտենականութիւններ կ'ըլլային: Երկուքն ալ ցուրտէն կը դողզոյային: Տրդատին սկսաներ իրար կը ձեծէին: Բռնեց Ազաթանդեղոսին ձեռքը եւ գէպի ետեւ ուղղեց: Ի՞նչ կը նշանակէր այս շարժումը — Ե՞տ: Միեւնոյն ուղղութիւնը: Տրդատ կը սկսի նահանջը: Ազաթանդեղոս ետեւէն: Խարխափումի շարժումները կը կենան: Տրդատ ճար չունի առաջ երթալու: Նստան իրարու ետեւ երկաթէ պատի մը առջեւ: Պէտք է, կ'երեւի, ետեւօք հրելով անցնել այդ պատը: Բայց բոլորովին զոյգուած: Ուրեմն նահանջ կարելի չէ: Յանդուրի կամ մեռնիլ: Տրդատ աճապարանքով մղուեցաւ գէպի առաջ: Ո՞վ պիտի սահի ամէնէն առաջ խորքին մէջ: Ազաթանդեղոս կ'ուզէ ծառայութիւն ընել Տրդատին: Իր ստուերամած գաղտնիքը կը մղէ զինքը, Երկրորդ անգամ ըլլալով, կեանքը վտանգել Տրդատին համար: Տրդատ սահմանուած է թաղաւոր ըլլալու: Տրդատ պէտք է սպրի: Բայց ի՞նչպէս: Եթէ Ազաթանդեղոս իյնայ, չուանը կը փրթի, վիճը զայն կուլ կուտայ: Յետոյ — Գաղտնիք: Այն ատեն Տրդատ կը պարտաւորուի սպասել որեւէ տեղէ ազատութիւն մը: Կամ արդեօք

սովամահ կ'ըլլայ: Կամ իմ ետեւէս կը ցատկէ՞: Ո՞ւր:

Ազաթանդեղոս կամաց կամաց աներևոյթ կ'ըլլար վիհին մէջ: Խանդակաթ սիրով Տրդատ տակաւին կառչած էր բարեկամին զլուխին: Շնորհակալութիւն ամէն բանի համար, ներողութիւն իր բոլոր ըրածներուն, հօրը, մօրը, Խոսրովիդուխտին, Բրիսանոյշին — ամէնուն յիշատակը միտքն է — այս ամէնը մէկ վայրկեան մըն էր: Երկու բարեկամներուն հողիները, անձերը կը տատանէին կեանքի եւ մահուան միջև: Երկուքին ալ ուժով մարմինները իրարու վրայ կը կախուին ոչ այնքան հաստ չուանէն: Պիտի բռնէ՞: Դեռ ո՞րքան վար: Ամէն պարապայի մէջ կենալ չկայ: Վիհէն վեր կը խուժեն զանդակներու ձայներ: Փողերու դռնչիւններ: Կանչեր, ինչպէս վաճառորդները կ'ընեն փողոցները: Կառքերու շաշիւններ: Տրդատին զլուխը կը դառնայ: Իր ձեռքերը խելայեղ անձկութեամբ կը կառչին չուանին: Տաշնապի ճիշ մը փրթաւ անկէց: Երկուքն ալ կ'երերան երկինքի ու երկրի միջև: Կ'երերան Հոսովի վերեւ: Չուանը հաստատուած էր վերը յառաջակարկառ ժայռին եւ կը կախուէր վար ըստ երևոյթին անձայր խորութիւն մը: Երբ, երկրորդ անգամ ըլլալով, Տրդատին խելքը դառնալու վրայ էր եւ անոր մահագոյն չրթունքներէն դարձեալ թռաւ նուազումի ճիշ մը, յանկարծ վարէն Ազաթանդեղոսի ոտքերուն տակէն չուանը քաշուեցաւ: Երկուքն ալ փաթթուած կը սպասէին վախճանին, զրեթէ անպայ զպայարանքներով: Ազաթանդեղոս յանկարծ ձեռք մը զպայ իր ճակատին վրայ: Յետոյ ետեւէն քակուեցան իր աչքերու կապերը: Նոյնը Տրդատ: Հարիւրաւոր մէթը կը տատանէին Պաղատինոսի ափափային վրայ: Իրենց տակը խորը քաղաքը: Տիբերիս կը խայտար լուսափողփող, մինչ առաւօտը փարփառ կը ձեմէր: Կապուտակ հեռաւոր զլուրջի մը կը դարէր կը դազարէր քաղաքին վերեւ: Կիսադէմքերու պէս կ'աշտանակէին մեհեաններ, եւ աշտարակներ եւ զմրէթներ տուններու ծովէն դուրս: Պահ մըն ալ, եւ այնուհետեւ արդէն Տրդատ պիտի սահեցնէր չուանը ձեռքերէն: Երկուքը սակայն պատուհանէ մը ներս քաշուեցան, որ կը տանէր փոքր տախտակաշէն սենեակ մը: Միհրի քուրմը կտաւէ զզեստով, որուն վրայ շան զլուխի զիմակ մը կար, առանց բարեւ տալու անոնց առջև զրաւ սեւ սեղան մը: Ասոր վրայ պէտք էր զրեւ առաջին քննութեան իմաստը: Եթէ պատասխանը ճիշտ չըլլար, նոյն ճամբան նորէն պիտի սկսէին: Ազաթանդեղոս անսասան ձեռքով զրեց Հաւատք: Տրդատ զրեց Վստահութիւն:

Քուրմը նշանացի ըրաւ, հաստատական, եւ ականարկեց որ իրեն հետեւին: Դարձգարձիկ անթիւ աստիճաններով մուտք սանդուխէ մը տարաւ զանոնք առաջ: Սպասեցին զրան մը առջև: Ներսէն կը դռնչէին շեփորներ: Դուռը բացուեցաւ ինքնիրեն, եւ լուսաշող

զգեստներով եւ ոսկեճամուկ զօտիներով կիսարոլորակի ձեւով կեցան եւ կենդանիի զլուխներով զիմակաւոր քուրմերու երկայնափող, արծաթեայ շեփորներու զոտում զոչումին մէջ, բարեկամները մտան այն սենեակը, ուրկէց մէկ իրիկուն առաջ զուրս ելած էին: Երբ Տրդատ եւ Ազաթանդեղոս քուրմերուն շրջանակին մէջ կեցան, շեփորները զաղբեցան եւ քուրմերը տեղ բռնեցին անոնց քով ոտքի: Առիւծի զլուխով քուրմը առաւ տախտակը եւ պատասխանները կարգաց: Այնուհետեւ քուրմերը բարձրացուցին շեփորները, խրախ, զուարթ ճօճեցին եւ դռնչեցին երեք ուժով, միօրինակ տօնական եղանակներ: Յետոյ բարեկամները ստացան — միշտ անխօս — իւրաքանչիւրը ցանց մը հացով ու պանիրով եւ սրուակիկի մը զինի: Չարի եւ շեփորածայն: Մէջտեղ եկաւ շան զլուխով քուրմը, որ զանոնք հոս առաջնորդած էր: Լուռ զնաց առաջ: Անոնք ալ ետեւէն: Երկրորդ քննութիւնը սկսաւ: Ո՞չ մէկ բառ, խստիւ արգիլուած դարձեալ: Բայց անոնց աչքերն ու անդամները ազատ էին: Դարձեալ աղջամղջին զիշեր մը քուրմին զացած զուռներէն մէկուն ետեւը: Մոլորումը եւ խարխալումը սկսաւ: Ազաթանդեղոս շատ շանցած այն մտածումին եկաւ որ իրենց հետ տրուած ուտեստեղէնը պէտք է յատուկ նշանակութիւն մը ունենայ: Ուստի քանի մը պատառ հաց ու պանիր կերաւ եւ պուտ մըն ալ զինի խմեց: Շօշափեց Տրդատի բերանն ու ձեռքը: Եւ իրաւ ալ խոշոր պատասխանով լեցուն էին: Ազաթանդեղոս անոր ձեռքերուն զարկաւ իրրեւ աղղարարութիւն եւ ձեռքովը բերանը զոցեց: Իսկոյն հասկցաւ Տրդատ, եւ մնացեալը խնամով զրաւ զօտիէն կախուած ցանցին մէջ: Բայց Ազաթանդեղոս Տրդատը կը ճանչնար: Ո՞րքան աւելի կը զուշակէր, թէ ինչ կրնայ ըլլալ այս երկրորդ քննութեան կամ փորձանքի իմաստը, այնքան աւելի հող կ'ընէր Տրդատին համար: Ուստի միշտ ետ կը դառնար եւ կը շօշափէր Տրդատին ձեռքերն ու բերանը, այն աստիճան որ անգամ մը Տրդատին բարձր ձայնով խնդալը եկաւ: Երկուքն ալ կեցան: Տրդատին ծիծաղը, այնքան բուռն, այնքան հոծ, ստորերկրեայ երկայն արձագանգ մը առաջ բերաւ, կարծես շատ մը մեծ խոշոր փապարներու մէջէն: Լարիւրինթոս մը: Աստուածները ողորմին մեղի, հառաչեց Տրդատ մեղմով: Ազաթանդեղոսի վրայ սարսուռ մը եկաւ: Օձեր: Մզլոտած կմախքներ սովամահ նուիրեալներու, այս կամարակապ զահանդական գետնափորին մէջ: Իսկ Տրդատ: Տրդատ իր քաղցով եւ ուտեստեղէն լեցուն ցանցովը: Ազաթանդեղոս դարձեալ կը շօշափէ բարեկամը: Ի՞նչ տեսակ մարդ է ասիկա: Բերանը կ'որոճայ: Մէկ ձեռքը հացով, միւսը պանիրով: Ուժով մը կը զարնէ ձեռքին: Պանիրը կ'իյնայ Տրդատին ձեռքէն: Կատաղի հաշուէ մը կ'որոտայ կամարակապին մէջ, մէկ ձայրէն միւսը, եւ բազմաձայն արձագանգը կ'երթայ կը բախի տեղ

մը Տրդատին մոլեղնութեան յետին շունչը անդամ տալով: Տրդատ գետինը կը նետուի: Շուտահաստի մը պէս կ'աճապարէ եւ մութին մէջ կը շօշափէ պանիրը: Հոյհուչի խուլ շունչներ կը հասկցնեն Աղաթանգեղոսի, թէ Տրդատ չի դաններ դայն եւ այս պատճառաւ ալ կը կատարի եւ կը հայհոյէ: Ինք ալ կը ծնրադրէ եւ կ'օգնէ փնտռութիւն: Տրդատի աչքերը կը ջանան ծակել խաւարը: Երկուքն ալ փոքի վրայ, հեռուները երկնցուցած ձեռքերով հոս ու հոն յատակին վրայ կ'որոնեն: Դարձեալ Տրդատի սարսափելի մէկ հայհուչը: Զեռքը շօշափած է մուշտակաւոր պող կենդանի մը, զոր կը խղզէ, եւ բարկութենէն կը նետէ վրայէն, որ կ'երթայ կտոր կտոր կ'ըլլայ մօտակայ թաց ժայռին վրայ: Նոր — բարեկամական կանչ մը: Պանիրին կտորը զտնուած է եւ արդէն երկրորդ րօպէին Տրդատին կողմէ կուլ տրուած: Ոտքի կ'ելլեն եւ նորէն կը խարխափեն: Մերթ ձախ հակելով, բոլորակ մը սփռելով, մերթ ալ մանելով ու նորէն դուրս գալով: Միշտ զգացումի, բնագոյնի համեմատ, կամաց կամաց եւ աւելի խոր բարձրանալով: Ժամեր կ'անցնին: Լո՞յս է, ցերե՞կ է: Գիշե՞ր է: Ժամանակի եւ միջոցի զաղափարները ջնջուած: Ժամանակ առ ժամանակ Աղաթանգեղոս կրկին կը շօշափէ Տրդատի ձեռքերն ու բերանը: Տրդատին մէկ հարուածը կը զգացնէ Աղաթանգեղոսին, թէ անօթութեան աստիճանին զրգոտմը զաղրած է Տրդատին մէջ: Պազ սարսուռ մը Աղաթանգեղոսի վրայ: Արդեօք շո՞տ ուշ սողաբարած էր: Արդեօք Տրդատ ամէն բան կերաւ սպառե՞ց: Զեռքը կը խոթէ իր ցանցին մէջ, եւ Տրդատին կ'երկնցնէ փոքր պատառ մը հաց: Անյաղօրէն կը խլէ գայն ձեռքէն: Թափուր ձեռքը կը բռնէ Աղաթանգեղոսի ձեռքէն եւ կը հասկցնէ թէ պէտք է նորէն լեցնէ: Աղաթանգեղոս դէպ առաջ շարժում մը կ'ընէ ձեռքը քաշելով, Տրդատ կը զբոզբոզայ, անոր դարձապարէն չի հեռանար: Հիմա խեղճ Աղաթանգեղոս վախնալով կը սպասէ որ Տրդատ իր ցանցին վրայ յարձակում պիտի դործէ եւ պիտի թալանէ գայն: Ժամանակ մը վերջ երբ Աղաթանգեղոս դարձեալ դէպի Տրդատը կը շօշափէր, ձեռքը պարապութեան մէջ մնաց: Քանի մը քայլ ետ դնաց: Կը շօշափէր, ամէն կողմ կը բռնէր ձեռքով: Սիրտը կը բարախէր պայթելու աստիճան: Գիտակցութիւնը կը մոլորէր, խելքը կը դառնար: Կը մոռնայ լուսութեան ուխտը: «Տրդատ», կ'աղաղակէ միջոցին մէջ, տազնապալի: «Տրդատ», կը թնդայ ձայնը ետ: Երեք անգամ, մէկ անգամ եղածի պէս, հեծեծիւն դարձեալ ու միշտ անողոր էտ կուլայ Աղաթանգեղոսին հնչումը խորափիա միհէն: Տրդատ, Տրդատ, Տրդատ: Ժամեր: Յաւիտենականութիւններ: Այսպէս կուլար Աղաթանգեղոսի, շօշափելու, փնտռելու, լալու, աղօթելու ատեն, վեր, վար, ձախ, աջ, յառաջ, ետ: Խելացնորութիւնը կը սպառնայ: Նուաղումը անօթութենէն առաջ:

Միշտ, միշտ կուլարի պէս սեւ դիշեր: Գիտէ. Տրդատ կերաւ ամէն ինչ, նոյնիսկ իր մթերքը: Երկուքն ալ անօթի պիտի մեռնին, ծարաւէ պիտի հիւծին, եթէ օդնութիւն չգայ: Աղաթանգեղոս երերալով կ'ելլէ կ'իջնէ: Յաւիտենականութիւններ դէպի վար: Ներքնաշխարհ, դժոխք: Աս պէտք է բլլայ: Կը խարխափէ դէպի նոր բարձր բացուածք մը: Հոն կը մտնէ: Կը զպչի կակուղ, սեպի տուող մարմինի մը: Մուռն, սարսափահար, կը սահի գետինը, զգուշութեամբ կը շօշափէ մատնեւուն ծայրովը կարծր աստիճան, կը զպի անոր: Կօշիկի ձեւով բան մը: Ոտք: Սրունք — «Տրդատ», պոտալ կուլայ Աղաթանգեղոսի շրթութեանը: Հոս ոչ արձապանց: Ո՞չ մէկ ձայն Տրդատէն: Տրդատ զո՞ւն ես: Աղաթանգեղոս ականջը կը դնէ Տրդատի սիրտին վրայ, կը շօշափէ բարկերակը: Ահ, ս՞'ըր մնաց լուսութեան ուխտը: Տրդատ կը մեռնի եւ ուխտին հաւատարիմ չ'ըլլար: «Տրդատ»: Կամ օտա՞ր մը: Աղաթանգեղոս կը շօշափէ ամբողջ մարմինը, ձեռքերը, զլուխը, անգամ առ անգամ: Տրդատն է: Մարած կեանք մը: Յետին, թեթեւ շունչ մը իր բերնէն: Աչքե՞րը: — Գոցուած են: Միայն թէ չխօսիլ: Բոլոր տառապանքները անգամ մըն ալ: Եթէ Տրդատ կ'ապրի, անգամ մըն ալ պիտի դործադրէ: Տրդատ, Տրդատ, զլուսե՞ս, ի՞նչ յանցանքի համար ես կը քաւեմ — օտար յարգանք: «Հայր, հայր, հայր», ձայն մը կը դողայ Աղաթանգեղոսի մէջ: Առանց դիտնալու կը բռնէ Տրդատին ձեռքերը: Կը շարժէ կամաց մը: Յոյսի ցնորք մը Աղաթանգեղոսը կը նետէ բարեկամին վրայ: Կը շիւղ անոր մարմինն ու անգամները, մինչեւ որ ուժասպառութենէն այլեւ չի կրնար: Շրթունքները կը հծծեն. «Աղաթանգեղոս»: Ան. «Տրդատ, Տրդատ»: Ան. «Կը մեռնիմ»: Աղաթանգեղոս. «Կ'ըսեմ քեզի յանուն մեր մէկ Աստուծոյն. դուն պիտի ապրիս: Բայց հիմա — լուր»: Ան. «Լուր»: Մարտի եմ: Զուր»: Աղաթանգեղոսի հոյիին մէջ կրակը բուն բառն է: «Զուր», կը հառաչէ դարձեալ Տրդատ: Զայնը կը ճշայ, կը հեծէ շրթութենէն: Գաղափար մը: Յայնութիւն: Աղաթանգեղոս ձեռքը կ'երկնցնէ դէպի պատը: Շատ հեռու է պատը: Կը ցատկէ Աղաթանգեղոս: «Սպասէ, Տրդատ»: — Պատը չոր է, միջօրէի արեւուն մէջ եղածին նման: Անտանելի նեղութիւն մը, խղղուութիւն մը փապարին մէջ: Աղաթանգեղոս, առանց տեսնուելու, կը ծնրադրէ եւ կ'աղօթէ իր Աստուծոյն: Մօտ է մահը: Օդնութիւնը կը փութայ: Ո՞վ Աստուծոյ իմաստութիւն, անքննելի ես դուն: Դարձեալ յայնութիւնը. «Փոխանորդական տառապանք»: Արիւնին մէջ է կեանքը: «Խմեցէք արիւնս — կերէք մարմինս —» Խորհուրդ Քրիստոսի: Յիսուս, օդնէ: Գաղափարները շանթեւանդն թունդ կը հանեն իր ուղեղը: Աղաթանգեղոս կը մերկացնէ թեր: Ակոսները անձայն կը փորեն միտին մէջ: Շուտ, Տրդատին բերանին: Խնդալով եւ ոռնալով ծարաւահիւծը կը

ծծէ Հոսող արիւնը և ևր խմէ ու ևր խմէ: Չգայութիւնը կուղայ: Տկար ուժով մը ևր փաթթուի բարեկամին վիզին և իրեն ևր քաշէ զայն զէպի վար: Բերան բերնի ևր սեղմուն: Արցունքներ իրարու ևր միանան, և Այաթանդեղոս կ'իմանայ Տրդատի մեղմիկ ձայնը. «Չարմանալի Սէր»: Ըմպելին հրաշք ևր գործէ: Սէրը ալ աւելի ևր ներգործէ ըմպելիով: Գնաց փապարին առջև: Ուրախունակ հիացումի կոչ մը ևր փախչի անորմէ: Տրդատ ևր փորձէ ստրի կլլի, բայց փատոյժ կ'իյնայ ետև: Կը փութայ զայ Այաթանդեղոս և վեր ևր հանէ զայն, որ իր բարեկամին առողջ թեւին կրթնած ճորճորայով կուղայ փապարին նեղանցքը, որ մարդու բարձրութեամբ վեր կէտիկ մը լոյս ևր պլլայ: Չորս կողմը խաւար: Բայց նոյն կէտիկը ևր տատանէր զէպ առաջ: Եւ ևր սպասէր ուր որ Տրդատ պարտաւորուած էր սպասել, նստիլ և հանդէպ: Կը հակէր ամէն անկիւններու, վեր կ'ելլէր, վար կ'իջնէր, անձայր ուղիներ, այդ կէտիկին ուղիներ: Դարձեալ նուազումի նուայ մը Տրդատին վրայ: Կապերը ևր քակուին, Այաթանդեղոսի կողմէ սեղմում մը, և Տրդատ նորէն ևր խմէ բարեկամին արիւնը: Ոչ ոք կրնայ նկարագրել այդ շորս աչքերուն և Երեսներուն տպաւորութիւնը, երբ լոյսիկին ետևէն կ'երթային: Երբ կենար ստիկա, — բարեկամները այնպէս ևր կարծէին թէ օրական ճամբորդութիւն մը լրացուցած են —, և ահա կեցան զրան առջև որ ևր առնէր կիսարորը վայրը: Լոյսիկը անհետացաւ: Երբ ներսը սկսան զոտալ շեփորները, Տրդատ ուրախութենէն խելայեղ ևր դաւ: Դուր բացուեցաւ ներսէն: Անասունի կերպարանքներով քուրմերը, առաջուրն աւելի ուրախ, ևր փշէին նուազարանները: Այաթանդեղոս իր հուսկ յետին ուժովը նուազած բարեկամը կոնակը առած ներս տարաւ քուրմերուն գտնուած կիսարորը վայրը, և մեղմօրէն վար դրաւ զայն: Դուրդուացող շեփորները համրացան: Առիւծի զլուխով քուրմը, որ կեղորնը կեցած էր, տախտակը երկնցուց: Այաթանդեղոս իրեն և բարեկամին համար զրեց սա բառերը իրարու տակ.

Փորձութիւն:

Սէր:

Յոյս:

Փողերը կրկին զործի սկսան: Երեք հանդիսական զարկ աւետեցին երեք ուղիղ յուժումները: Տրդատ ևր քնանար խոր նուազումի մէջ: Քուրմերէն մին բժիշկ էր: Երկուքին այ պատուիրեց հանդիստ երեք օր երեք զիշեր, բաւարար սնունդ և ըմպելիք: Կրնային խօսիլ: Բայց լրջութեամբ և միմիայն իրենց փնտած փրկութեան, իրարու տեղ մեռնելու պատրաստակամութեան, և մինչև մահէն իսկ անդին

իրարու հանդէպ հաւատարմութեան մասին: Տրդատ հանդէպ Այաթանդեղոսի ևր զգար որոշակի աւելի մեծ ձգտում մը: Ամէն առեկաւելի ևր զգար իր բարեկամին ահազին զերազանցութիւնը նկարագրով, կամքի կորովով, համբերութեամբ, անդորրութեամբ և բացարձակ անվահերութեամբ: Բայց բան մը չէր հասկնար բնաւ. այն թէ Այաթանդեղոս ինչպէս կրնար ըլլալ այդքան աներկիւղ և փրկութեան մասին անկասկած ու սպասով, և սակայն որքան ինք Տրդատ պաշտամունքի այս խորհուրդները ևր զնահատէր իրրեւ մեղսասպան ոյժ և փրկութեան երաշխիք, ինք Այաթանդեղոս ևր համարէր զանոնք իրրեւ զուտ հետաքրքրաւոր, իրրեւ զուտ զուարճալի, իրրեւ զերազանց առիթ մը ծագրի, զիստայով որ կան բոլորովին տարրեր երաշխիք, բոլորովին տարրեր փրկութիւն: Կը հարցնէր Տրդատ. «Բայց ևր հաւատո՞ւս զոնէ այդ արիւնին ոյժին մեղքերէ մաքրուելու համար»: Եւ Այաթանդեղոս. «Տրդատ, հաւատքը ևր զործէ, ոչ թէ արիւնը: Հաւատքը ևր մաքրէ, երբ ճշմարտութենէն կուղայ: Բոլոր ժողովուրդները արիւնին մէջ փրկութիւն ևր փնտռեն: Միշտ արիւնով հարկ եղած է աստուածները հաշտեցնել, կենդանական և մարդկային արիւն: Նոյնիսկ ընդունուած է որ կեանքը արիւնի մէջ է: Մարդիկ իրենց սեփական արիւնը իրենց ձեռքով չէին կրնար զոհել աստուածներուն բարկութեան, ուստի կենդանիներ և ուրիշ մարդիկ պարտաւորուեցան փոխանորդարար տատապիլ, շարժարուիլ: Բայց և ևր հաւատամ որ արիւնը բոլոր պատարազներէն սուրբ է, որքան աւելի սուրբ ըլլայ զհարերող կեանքը: ... Բայց, Տրդատ, ինչ հրաշալի լուսաւորուած է քաղաքը»: Բարեբախտաբար համակերպեցաւ Տրդատ այս մասին, և երկուքը ևր զիտէին հոն զէպի վար յաւիտենական քաղաքը, մինչև որ ան խորասուզուեցաւ զիշերուան մէջ:



Միւս փորձերը սկսան: Կ'անցնէին ժամեր, օրեր, զիշերներ: Երկուքին պաշարը սպառած էր, և սակայն բարակ աւազի մեծ կոյտերուն մէջ ոչ մէկ բան կրնային գտնել: Երբ նուիրեալ քուրմը իրենց ետևէն զուր փականքով զոցեց, Տրդատ և Այաթանդեղոս կեցան աւազի այդ մեծ կոյտերուն առջև, հարցական նայուածքներ փոխանակելով: Յետոյ, կարծես իրարու նայուածք հասկցած ըլլային, երկուքն ալ ինկան աւազակոյտերուն վրայ, հատիկները հոսեցնելով իրենց ձեռքերով: Այաթանդեղոս աւազին մէջէն մատովը սահմանադիժ մը քաշեց: Տրդատ հասկցաւ և սկսաւ անյազօրէն բան փնտռել իր կէսին մէջ: Ամէն անգամին աւելի քիչ աւազ կ'առնէին: Երկուքն ալ

իրենց հոսած մաղած հատիկներով դէպ կը շինէին ուրիշ տեղ մը: Այս կերպով երկու դէպեր կամ կոյտեր գոյացան: Բայց բան մը չգտնուեցաւ: Երկուքն ալ ժամերով աշխատանք տարած էին, եւ առանց ձաշն ձուռն հանելու: Դէպերը երբեմն աջ, երբեմն ձախ կը կենային: Տրդատի մէջ սկսաւ եփիլ: Ազաթանդեղոսի թափանցող նայուածքները կարողացան նախ եւ առաջ հանդարտեցնել զինքը: Նոյնիսկ խնայողութեամբ կը գործածէր պարէնը: Գիշեր եղաւ: Գէպի վեր կը նշողէին յախտնական քաղաքին ճրագները, որ երթալով կը մարէին: Առաւօտուն նորէն սկսաւ աշխատութիւնը: Տրդատ զրդուած էր: Ազաթանդեղոս հանդարտ: Իր նայուածքներուն եւ զիմացիծերուն խաղը ամէն բան կ'ընէր Տրդատը շախտութեամբ համար: Սկսան յորանջել, պատուհանին առջեւ նստիլ, եւ դուրս նայիլ խորէն: Նորէն եկաւ եւ կ'աշխատէր: Նորէն ետ գնաց եւ կը զիտէր իր բարեկամին անխոնջ համբարութիւնը, վրդոված: Նորէն կը փնտռէր: Զեռք մը լեցուն աւազ զայրոյթով նետեց անդին, եւ դէպի վրայ պառկելով սկսաւ մրափել: Ազաթանդեղոս անդին գլորեց զայն դէպէն, անոր մասն ալ քրքրելու քննելու համար: Գիշեր: Յերեկ: Գիշեր: Յերեկ: Պաշարին ծայրը գալու վրայ էր: Ազաթանդեղոս նորէն տուաւ ունեցածէն: Տրդատին գոյնը կը նետէր եւ կը տկարանար: Միշտ աւելի ջղային, աւելի զրգրուած: Տրդատին նուազումը, սիրտին մարուքը նորէն եկաւ: Երբ մասնամուտ արեւուն վերջին լոյսին մէջ, անկարող պառկած Տրդատին մօտ, Ազաթանդեղոսի մասները կրկին կը պրպտէին քարէ յատակին վրայ մեկուսի փռուած աւազին մէջ, զարնուեցան կարծր կուտի մը: Ինչպէս յաճախ արդէն: Կասկածով մը վերցուց եւ դէպի պատուհանը գնաց: Կարմիրի կարնող գոյն մը ունէր կուտը: Զկուտըրուելու աստիճան կարծր էր: Ոսկի էր: Ազաթանդեղոս զուտը վաղեց եւ զարկաւ ուժով: Նորընծան բացաւ: «Ճշմարտութիւն», պոռոպ Ազաթանդեղոս: «Ճշմարտութիւն», կրկին նորընծան: Տրդատ արթնցաւ եւ կ'երերար երազ տեսածի պէս, տեսաւ Ազաթանդեղոսը նորընծայ ջուրմին ետեւ մատուռին բակը: Եւ ահա փողերը սթափեցին Տրդատը թմրութենէն, եւ Ազաթանդեղոս ոսկի կուտը անոր ձեռքին մէջ դրաւ: Իրենց նայուածքները իրարու հանդիպած էին: Ազաթանդեղոս կը հասկնար Տրդատը. «Դարձեալ ինձի համար»:

\*\*\*

Հազիւ թէ վերջացուցած էին իրենց կուշտ ու կուռ ճաշը, չարչարանքի ուրիշ սենեակի մը մէջ իրենց համար սկսաւ նոր աշխատանքը: Ի՞նչ կրնար ըլլալ այս: Ճերմակ ասուի մը քարէ յատակին վրայ: Ասկէց դուրս ժայռերու պատ միայն ամէն կողմ: Մարդաչափ

բարձրութեամբ բացուածք մը: Երկինքը տեսանելի, մէկ քառակուսի երկինք: Պաշար չկայ: Զեղուներ աղօտ զրեթէ սեւ փայտէ: Հանելուկը կը կազմէ սա ասուին: Ճիշտ բիծ մը գահեկոսին մեծութեամբ: Ձնջե՞լ գայն: Ի՞նչպէս: Ի՞նչով: Ի՞նչ փոսնոյնը կը սպասանան: Արդէն, կ'ընելի, ձեռք անցած է: Եփուած: Նախ դուռ, Ազաթանդեղոս: Ի դուր կը շփէր: Տրդատ նմանապէս: Անդին նետեց ասուին, եւ քառակուսի ծակէն կը զիտէր խոր կապոյտ երկինքին կտորը: Գէպի փրկութիւն եւ ազատութիւն իր ցանկալի հեծիւններուն միջոցին Ազաթանդեղոս կը շփէր ու կը շփէր: Լորձուներ հատաւ: Հիմա Տրդատ կը թըջէր երկար եւ լաւ: Բայց բիծը կը մնար: Երկուքին ալ կոկորդները չորացած ծարաւէն կը մարէին: Ծուռի վրայ եկած սկսան հիմա իրարու մատներ շփել տաք տաք, փոփոխակի, եւ բիծը կը մնար: Բայց Ազաթանդեղոս հիմա կը զիտէր որ ձեղուներ իրենց գլուխներուն վրայէն քիչ մը աւելի ցած իջած էր: Առանց նշմարուելու իջեր է: Տրդատին բան մը չըսաւ այս մասին, եւ ցնորածի մը պէս կը շփէր ու կը շփէր զարձեալ: Բիծը կը մնար: Զեղուներ իջաւ: Ազաթանդեղոսի նոր մէկ տաշնապալի նայուածքը մատնեց զայն: Տրդատ վախէն պոռչտելով ցատկեց, վաղեց դիւահարի պէս պատուհանը, եւ տանիքը կործանելէն առաջ կարծես կ'ուզէր անդամ մըն ալ դիտել կապոյտ երկինքը: Անթութիւնն ու խեղճութիւնը եկաւ տիրեց երկուքին: Այս անգամ Տրդատ ուղեց ինք ըլլալ ազատարարը: Հարկը ստիպողական էր, որովհետեւ ձեղուներ միշտ կը մօտենար իրենց վրայ փլչելու: Ասուին բիծին մէկ ծայրէն բերանը առաւ, եւ աշխատեցաւ իր մէկ շնատամով ճնշել եւ բիծը ջնջել: Ազաթանդեղոս անոր ձեռքերուն զարկաւ, դուռ զարնելու պէս եւ անձկալից աչքերով հասկցուց, թէ այս կերպ լուծումը հանելուկին բնաւ չի յարմարիր: Աս ալ անկարելի եղաւ: Որովհետեւ ասուին այնպիսի ամուր, ուժով նիւթէ մըն էր որ ձեռքերով կամ սկոսներով պատառում մը անկարելի էր: Զեղուներ իրենց զլխուն վերեւ մէկ ձեռքի բարձրութեան վրայ կը կենար միայն: Ահա մօտալուտ ամէնէն զարհուրելի մահը: Աւելի լաւ է պատուհանէն դուրս ցատկել: Եւ Տրդատ քիւն կողմը քաշուեցաւ արդէն: Առջևը անդունդ մը զարհուրելի բերանաբաց: Անդունդ, վիճ, միայն տեսանելի էր եւ քառակուսի երկինքը, արդէն կանանչցած: Ազաթանդեղոս բռնեց վար քաշեց Տրդատը: Գոյն չէր մնացած վրան: Ազաթանդեղոս եւս սկսաւ հանդիստ եւ ապահովութիւն կորսնցնել: Զեղուներ պատուհանին վրայ կը կենար: Օդը կտրուեցաւ եւ ճնշուեցաւ: Երնշատութիւնը դժուարացաւ: Տրդատի աչքերէն դուրս կը յորդէր Յուսահատութիւն: Ազաթանդեղոս պառկեցաւ, կարծես մեռնելու համար: Ամէն տեսակ զաղափարներ կը վխտան Տրդատի ուղեղին մէջ: Այս մահը կարծես անոնց մէջ ինքնապահպանումի բնազդին յետին

մնացորդին կոչ կ'ուզողէր: Բայց — ահա — ձեզունը պատուհանները  
զոցած էր: Գիշեր էր խաւար: Նստան իրարու քոյ եւ իրարու երկա-  
րեցին իրենց ցուրտ ձեռքերը: Ձեզունը ահա իրենց գլուխներուն կը  
զպչի: Տրդատին մէկ ստակայի ճիչը եւ սահեցաւ Ազաթանդեղոսի  
կուրծքին վրայ որ հազիւ կրնար այլևս շունչ առնել: Իրենց գլուխ-  
ները ճնշուած էին: Երկուքն ալ իրենց երկայնքով կոնակի վրայ կը  
պտակէին եւ ամուր կը բռնէին իրարու ձեռքէ: Կարծես զայգաղի մէջ  
էին: Երկուքն ալ խելակորոյս: Կը գլուխին թէ ինչպէս յամբօրէն ահա  
կը խորատուցուն, վար կ'իջնեն, կ'իջնեն վար, եւ ահա կուրաւ զի-  
տակցութիւնն ալ: — Երբ արթնցան, ինքզինքնին պտակած գտան  
քրմական խորհուրդին տոջեւ նոյն կիսարայր սենեակին մէջ պատ-  
զարակներու վրայ: Շեփորներու զարկերը արթնցուցին երկուքն ալ:  
Ըմպանակ մը զինի կեանք տուաւ անոնց: Սեւ տախտակին վրայ Ա-  
զաթանդեղոս զրեց տձեւ տառերով սա բառը. Մեղք:

\*\*\*

Հինգերորդ պատիժը: Նորընծայ քուրմին առաջնորդութեամբ,  
սենեակ մը մտան: Իրենց առջեւ կային երկու խոշոր պարկ կենդանիի  
հաստ մորթերով լեցուն: Ի՞նչ ընել: Փոխադարձ զիրար հարցափոր-  
ձող աչքերուն, զիմպիծերուն խաղին, շարժուձեւերուն, ձեռքերու  
եւ ոտքերու շարժումներուն մնջկատակը տեսակ մը հեղնական, զա-  
ւելչտական բան մը ունէր, հակառակ գայիք տառապանքին, շարժա-  
բանքին բոլոր նախազայցումներուն: Սրկէ նրկէ կը զուշակէին, կը  
հետեւեցնէին, գլուխ երերցնելով կը շափէին հոս ու հոն, կը կենային  
մորթերու պարանոցներուն առջեւ, որոնք կը բացուէին իրենց առ-  
ջեւ, կարծես աչքերնին իրենց տնկած: Յանկարծ որեւէ տեղէ մը շե-  
փոր մը գոռաց: Բարեկամները սարսուռացին: Խորունկ ձայն մը կը  
պոռար. «Ներս»:

Բարեկամները հնազանդութեամբ սողացին իւրաքանչիւրը  
պարկերէն մէկուն մէջ: Գլուխով ու ձեռքով, որքան որ կրնային,  
կաշիները իրարմէ բաժնեցին, եւ մարմինը տեղ կը բռնէր: Երբ ոտ-  
քերն ալ տեղաւորուեցան, առանց նշմարուելու թէ ինչպէս, զուրսէն  
զոցուեցաւ բացուածքը: Ազաթանդեղոս Տրդատին շարժարանքները  
կը զուշակէր անոր խուլ եւ քնզատ ձայներէն: Եւ ահա ծանր առար-  
կայ մը պարհուրելի ընդհարումով մը բաղխեցաւ Ազաթանդեղոսի  
պարկին: Տրդատ շնչապառ կը պայտէր ցնորածի ձեւով քարէ սեն-  
եակին մէջ: Ազաթանդեղոս հանդարտ կը մնար: Իրեն համար բացա-  
յայտ էր, թէ նորընծայ քուրմերը տակաւին բոլորովին որոշած չէին  
իրենց մահը, եւ թէ բոլոր փորձութիւններուն գլխաւոր պահանջը  
հաւատքը պէտք է ըլլայ: Հանդարտօրէն կը շնչէր, եւ յամբօրէն, եւ

պատրաստ մնացած օդով կ'աշխատէր դուրս գալ: Նայէ՛: Միշտ  
զարձեւալ օդ կը դռնէ եւ շունչ, մինչ Տրդատ հառաչելով հեծեծելով,  
հայհուցներ արձակելով, պոռալով կանչելով գետինը կը թաւալի կը  
տապալտի: Ի՞նչպէս պիտի կրնայ միւս տառապանքներուն հանդուր-  
ժել, խեղճ Տրդատը, եւ տակաւին այս ճամբաներուն վրայ փրկու-  
թիւն կը փնտռէ — կը խորհէր Ազաթանդեղոս: Հազիւ այս բաները  
միտքէն կ'անցընէր, ահա զժողովին սարսուռները շղթայակերձ կը  
յարձակին: Ի՞նչ կրնայ ըլլալ տակաւ: Ի՞նչպէս ալ կրնան առաջ բերել  
այս ձայները: Ի՞նչպէս կարելի է որ փայտատակէ այս պարկին ներսը,  
որոտում ըլլայ այս սենեակին մէջ: Հիմա փոթորիկ, ձմրա՞ն մէջ:  
Յերե՞կ է, զիշէ՞ր է: Իրօք փոթորի՞կ: Առի՞ծներ կան պարկին վե-  
րեւ: Իրօք կը մոնչէ՞ն: Իրենց թաթերով մեր բոլորտիքը կը թաւալին:  
Միշտ զարձեւալ Տրդատին հառաչանքը: Հիմա, դուն հերոս, մի վախ-  
նար: Հանդուրժել ամէն բանի: Ամէն ինչ ոչի՞նչ է, խա՞ղ է այս ե-  
ղածը: Ո՛չ, առի՞ծին թաթերը չեն կրնար պարկ ու մարմին նետել  
բեմին վրայ եւ զարձեւալ մոնչելով ձգել քարէ յատակին վրայ: Բայց  
ինչո՞ւ կը դոփեն, կը կոխեն անոնց բոլորտիքը, գլուխ, մարմին,  
անդամներ ճմբելով, մոնչելով հանդերձ կարծես եղջերափողերով:  
Սուրբ ցուր: «Միածին ցուր»: «Փառք ցուրին: Փառք սուրբ երին-  
ջին», ինդաց Ադամեմնոն դարձրէն, եւ Տրդատէն ալ կը հնչէին խուլ,  
քրթմնջող ձայնը, յետոյ խելոյն սղբայի ճիչը հէք բաժնուածին եւ  
փտարուածին կողմէ, որ Տրդատն է: Եւ նորէն լուց: Արդեօք զարձ-  
եա՞լ կորսնցուց զիտակցութիւնը: Տրդատին մեղաւոր կեանքը ի՞նչ-  
պէս կըզոյժէ այսքան խորտակել անոր կորոյր, որ անկարող է տո-  
կալու: Ե՞րբ պիտի վերջանայ այս ամէնը: Ի՞նչ է այս տանջանքին  
իմաստը: Աս ալ անշուշտ տանջանքն է խորհուրդներուն, բայց Ազա-  
թանդեղոս ալ տակաւին զոյգն զաղափար մը շունչը այս մասին թէ  
ինչու: Ինք ալ սկսած էր զէջ ըլլալ: Տեղէ մը եկած էր անշուշտ այս  
հոյր, բայց ո՞ր կէտ, անկարելի էր զիտնալը: Պարկին մէջ շուրջը  
զառնալ հնար չէր: Արդեօք խեղդելու համար էր այս օդը: Միշտ ա-  
ւելի մղձկուտ: Չզայտութիւնը փոփոխակի կը բթանար եւ կը վերա-  
զառնար: Կը փսխէին: Անտանելի կը դառնար կացութիւնը: Բայց  
ահա — գետինը տեղի կուտայ — Տրդատին քոտմնելի, խելացնոր  
մէկ ճիչը — զէպի վար գլտորում մը, պատերուն, անկիւններուն,  
կեռերուն, գամերուն զարնուիլ, որոնք կաշիներու մէջէն միտք կը  
ծակեն, տաք արիւն կը հոսի անոնց դէմքին ու ձեռքերուն վրայ —  
ուրիտեանկանութիւն, սա դէպի վար ոյրորիւր — ջուրին մէջ զար-  
նուիլը եւ վեր ցայտելը: Բան մը դէպի ներս կը ճնչէ. պաղ, մոլո-  
տած, հոտած ջուր մը քիթիդ կուտայ օդը — կը լեցնէ պարկը: Տրդ-  
ատէն ձայն չկայ: Բարեկամին համար մահասարսուռ տաղնապ մը

կը ցնցէ Ազաթանդեղոսը: Կ'ուզէ կանչել, կ'ուզէր ջուրով լեցուն է, ձայնը անգոր: Գիտակցութիւնը անհետ ըլլալու վրայ: Բայց ո՛չ, միայն հիմա ոչ: Յիսո՛ւս, Յիսո՛ւս, Յիսո՛ւս ազադակ մը երեք անգամ Ազաթանդեղոսի մէջ, զժտիքին խորերէն կուզայ այս ազադակը: Պայքար մը կը սկսի, սրուն մէջ երկու բարեկամները կը պարզեն ոչ թէ իրենցը, այլ զիսկան ուժեր: ծնունդ մը, ահաւոր քան սրեւէ ծնունդ երկրի վրայ: Գանկը կը ճնշէ բացուածքին գէժ այնքան սր փոխելու զգացումը կուզայ, ծունկերը, ոտքերը, արմուկները, ձեռքերը, մատները — ամէն ինչ կը պտիկի, կը ճնշէ, կը ցայտէ, կը ձգտի զէպի կեանք, լոյս, փրկութիւն — ամէն ինչ այսպէս քանի մը բուռ — մէն մի բուռ մէկ յախտենականութիւն — բայց ի զուր, դարձեալ ի զուր: Ահա կրկին նոյն թուրացումը, տեղի տալը, — փոքր ինչ, բայց աւելի, աւելի: Տրդատ կը պոռայ, կը խնդայ, կ'ոռնայ, սխալ բառեր կ'ըսէ: Ազաթանդեղոս կը քստմնի եւ կը թոթովէ պարկին մէջ — Տրդատին խելքը: Աստուած, Աստուած իմ, շո՞տ ունէր միթէ անկէ: Կրկին ծիծաղող, քրթմնջող ձայներ, Տրդատին մոլոր, շրճորած ծիծաղիլը: Ազաթանդեղոս կը լսէ անոր ձայնը ճիշտ մօտը իր պարկին ելքին: Դուրսէն ոյժ մը քաշեց հանց դայն, եւ Ազաթանդեղոսի աչքերուն առջեւ Տրդատ մոլորացած նայուածքներով դունաթափ, կեցած էր: Մայերը թաց ու ամուր կը կառչէին ճակատին, քունքերուն, զիպին եւ ծոճրակին: Պատաղիճներ կը փաթթուէին անոր: Զուրը մինչեւ ծնօտը կ'ելլէր: Ժայռի մը վրայ կեցած կ'օղնէր որ բարեկամը զուրս ելլէ: Ազաթանդեղոս խկոյն խորը սուզուեցաւ, բայց անմիջապէս դարձեալ երեսը ելաւ, խոտով ու ցեխով ծածկուած, եւ շորս կողմը կը լողար կարծր գետին փնտռելով: Վերէն շատ հեռուն կանաչարակ լոյսի մը միջոցաւ պայծառացած էր խաւարը, այնպէս որ բարեկամները կրցան ճանչնալ բոլորակաձեւ խոտաշուր ժայռ իր ցցուած ահրնկէց պատերով, սրունցմէ շարունակ ջուր կը հոսէր շիթ առ շիթ: Զուրը ածուխի պէս սև էր: Եւ ամանակ առ ժամանակ ժայռին պատերուն վրայէն կենդանի մը ջուրը կը ցատկէր, կամ ջուրէն վեր ժայռին կարկառուն մասին վրայ: Ահա հիմա օձ մը: Ահա հսկայ առնէտ մը: Նմանը չտեսնուած մեծութեամբ զորտ մը: Բարեկամները այս տեսարանէն սահմոկած կեցած էին նոյն քարին վրայ խորը, եւ մարմինով զիրար կը բռնէին ամուր: Վարանոտ կը յառէին շուրջը ժայռին բոլորակին, պատերուն երկայնքն ի վեր: Վերէն ահա կը զոռար փող մը: Գլուխնին վեր տընկեցին: Երեք անգամ դռնէն փողը ահաւոր զոռումով զէպի վար: Բարեկամները, կարծես անծայրածիր քարձունքէ մը կ'իմանային խորունկ, հանդարտ ձայն մը. «Որդիք մարդկան, կ'ապրիք տակաւին»: Զայնեցին անոնք կարծես միաբերան. «Կ'ապրինք: Փրկեցէք

մեր հողիները: Մենք մօտ ենք վախճանին»: Զայնը. «Ի՞նչ է պարկին նշանակութիւնը»: — «Նորոգ ծնիլ — Վերածնունդ», ձայնեցին երկուքը միաժամանակ: Պատասխանը բարձունքէն. «այս է, այո: Մերձ է փրկութիւնը մեր: Եւ զօրութիւնը բարձունքէն կուզայ: Եւ օչնականութիւնը վերէն կուզայ: Կերէք եւ խմեցէք նախ ոյժը բարձունքէն: Բայց սուրբ մնացող մը պահեցէք, այո: Զօրացէք վերջին կոխին համար: Ոյսանայի նշանով բարձրացէք պատ մը վեր: Նայեցէք զէպի վեր, բնա՛ւ վար: Հաւատացէք եւ մի երկմտիք: Զեր պաշտպանութիւնը թող ըլլայ սա ազադակը. Արրակազարբա: Մի մոռնաք: Ապա թէ ոչ կը մեռնիք: Ամէն ոք ջուրէն կը քաշէ զորտ մը եւ օձ մը եւ կը տանի դանսնք վեր արեւուն եւ լուսնթաղին: Ահուրայի ողին ձեզի հետ»: — Փողը զոռաց երիցս: Երրորդ անգամուն հոսեցաւ զէպի վրէժը պայծառ, կանանչ լոյս մը: Իւրաքանչիւրը միւսին երեսը կը տեսնէր կանանչ ճերմակ ինչպէս մահուան մէջ: Սակայն նայուածքները խանդավառ էին եւ յուզեալ: Դէպի փրկութիւն հարսուն ցանկութիւն մը կը բռնկէր իրենցմէ զուրս: Զարչարանքին վախճանը մօտ էր: Երբ վեր կը նայէին, կողով մը, երկու սուր եւ երկու զօտի պարանի մը կապուած կը տատանէին զէպի վար: Կ'ուտէին կը խմէին: Իւրաքանչիւրին սրուակ մը բնաւ չըմբոյնուած ըմպելիք: Արիւթեան, ոյժի, եւ Երանութեան դերերկրային զգացում մը կը յորդէր եւ կը տաքցնէր դանսնք: Տրդատ արդէն մոռցած էր սուրբ մնացողի մասին հրահանգը: Արդէն իր ձեռքը բերանը կը տանէր բարեհամ հացին վերջին մեծ պատտօր, Երբ Ազաթանդեղոս սարսափահար նայուածքներով ձեռքը անոր դէմ բռնեց իրրեւ նշան արդելքի: Տրդատ մաս մըն ալ խածաւ անկէց, եւ սրուակին մէջ ալ հաղիւ թողուց տակը ծածկելու չափ բան: Աչքերը կը բռնկէին: Կանանչ զէպը կարմրեցաւ: Բերանը քաշուելով ձեւացուց անոյժ ծիծաղը, բացուեցաւ եւ նոյնհետայն տակը բանտին մէջ անշոք ծիծաղով մը թնդացուց իր «ա-ի, ա-ի, ա-ին»:

Հաղիւ դազրած էր, եւ ահա զոռաց չեփորը երեք անգամ: Ազաթանդեղոս իր ունեցածները դրաւ իր ետեւը ժայռին ամէնէն մօտաւոր յառաջակարկառ մասին վրայ: Տրդատ նոյնը ըրաւ: Եւ սկսաւ որսորդութիւն մը զորտի եւ օձի ետեւէ: Մինչեւ ծունկերը բարձր ցեխով ու եղէցով լեցուն խորը սուզուելով, վեր ելլել դարձեալ, սառկորիլ ցուրտէն ու սարսափէն, ժայռերն ի վեր մաղցիլ, ծակերուն ու պատառուածքներուն մէջ սայրիլ, ճշել մերթ Տրդատ, մերթ Ազաթանդեղոս, հոս փախէն, հոն սահելէն, եւ ջուրերուն մէջ զլիխփայր թակալելէն: Տրդատ կը պոռար միշտ: Զրուելի զորտ մը թաթերուն ետեւը ձեռքերուն մէջ կը թայրտայ: Գօտիովը կը կապէ եւ կը դնէ իր ունեցածներուն մէջ: Եւ կարող եկաւ օձերուն, եւ հոս Տրդատ օչնեց իր բարեկամին, մինչեւ որ երկուքն ալ իրենց կենդանի-

ները ունեցան: Աջ թեւին ըթամատը կը կոխէ անոնց ծոծրակին վըրայ: Անոնք օղակի պէս կը փաթթուին իրենց թեւին: Տրդատ կը խայտայ կեանքով: Գօտիէն կապ մը կը կրէ, օձին զլուխը ու զորտին ոտքերը կը կախուին արդէն կապէն վար: Աղաթանդեղոսի ալ կ'օգնէ: Երկուքն ալ իրենց աւարը կ'ամրացնեն գօտիին վրայ: Օձերը կը շէնն ու կ'օղակուին: Գորտերը իրենց առջեւի սրունքները երկարելով տարածելով, կարծես ազօթելու համար բաղկատարած, կ'աշխատին օդին մէջ մնալ: Տրդատ կը բարձրանայ գէպի լեր: Աղաթանդեղոս ետեւէն: Վերելք մը գէպի մահ եւ կեանք: Դէպի հաւատք: Կը փնտռեն եւ իրարու ցոյց կուտան լուստան չալուածքը այդ անկէն մէջէն: Տրդատ ազգարար ձայնը կ'արձակէ: Մաղլցում մը կը սկսի, կարծես Ալպեաններուն նեղանցքին մէջ: Գրեթէ անհնարին քայլերով ցատկել միջոցէ միջոց: Եարունակ սահել: Կօշիկները ինչ մեծ արելք են: Ձեռքերնին իրարու կուտան: Տրդատ կը քաշէ բարեկամը: Աղաթանդեղոս տակէն կը կրթին ոյժ կուտայ Տրդատի: Քրտինքի եւ արիւնի կաթիլներ կ'իյնան իրենց ոտքերուն տակ դեռ պահ մը սեւ սեփ շողացող լիճին մէջ, որ ահա անհետ կ'ըլլայ իրենց նայուածքներէն: Կորովը կը թույնայ: Տեսակ մը գիւնովութիւն կը յաջորդէ ուժասպառութեան: Ու կը կառչին քարէ պատերուն, որոնք ուղղաձիգ կը ձգտին գէպի անձանթ բարձունքներ եւ անշափելի սուղումով կ'անհետին վիճերուն մէջ: Երբեք գէպի վար չնայիլ: Հանելուկի լուծումի սկզբունքը չհոռնայ: Միշտ յառաջ, միշտ գէպի վեր, գէպի լոյս: Զղջիկներ կը ատկոտեն իրենց երեսին վրայ: Տրդատ կը փշէ այնքան զարհուրելի կերպով որ անասունները իրենք ալ կ'անձապարեն փախչիլ: Անոնցմէ մին, բացառաբար յամառ եւ թշնամի, Տրդատին ազատ մնացած ձախ բռունցքէն կ'ընդունի մահասարսուռ հարուած մը, որ այդ կենդանին կ'իջեցնէ ուղղակի անկենդան, խոնաւ փոսին մէջ, իր գերեզմանը: Խուլ կը թնդայ անկումը: Տրդատ քիչ մը կը արտոնայ ուրախութենէն եւ իր զործը լմնցնելէն վերջ կը շարունակէ իր վերելքը: Այսպէս բաւական ատեն լուրջ աշխատանք: Իրենց հասած մէկ պատուանդանը կը քննեն կը փորձեն եւ անոր վրայ ծռելով կը կառչին կը շարժեն թեւերով, կուրծքով ու ծնօտով վերի ցցուածքին կողմը, եւ ահա շրջիւն մը կարծես թեւերու, թռիչներու, բայց շրջիւն մը ահարկու: Կը սկսի նոզկայի կռիւ մը, անասուն ու մարդիկ տեղի անձկութեան եւ տաղնապի նոպայով իրարու դէմ իրարու վրայ մղուած: Ամէն տեսակ շող, շառաշող, վանող, ահարկող ձայներ անօդուտ, ոչ աչքերու սպառնալիքը, ոչ ալ մոռնիւնը օդուտ ունի: Բուն շուարած կատղած է, կռիւր աչք առած մոլեկնորէն, կը թրվոյս գէպի վեր ու յանկարծ գէպի վար, եւ նորէն վեր: Կարծես կախարդուած, կարծես վհուկ մը կայ բուրն մարմինին մէջ: Աղաթանդեղոս երեսը կը ծածկէ

Տրդատի յետոյքին ներքեւ եւ ճակատովը կը բռնէ դայն, ոյժ կուտայ անոր: Տրդատ կ'աշխատի ամուր բռնել սուրը մինչ թռչունը կը քերթէ երեսն ու ձեռքերը եւ կ'արիւնէ: Ամենամեծ նախազուշուրիւն պէտք է սուրը ամուր բռնելու: Գարշելի շարաղէպ հարուածով մը կը յաջողի դարձեալ կտոր մը միս փրցնել Տրդատին թեւէն եւ կը թաղուի խորասոյգ: Արիւնի առուակ մը մանր մանր կ'անձրեւէ ժայռէն վար: Վայրկեաններ տեւեց սուրին տեղաւորումը ապահով կերպով: Տրդատի այդ արիւնլուայ վիճակին մէջ: Կռիւի միջոցին քարերը իրենց ոտքերուն տակ խախտած էին: Երկու բարեկամները հաղիւ թէ դանոնք շտկած էին, ահա նորէն փլան, վար թափեցան, երկու կողմի վրայ պատերուն զարնուելով: Կարճորակ լոյս մը ճառագայթեց վերէն, աղու եւ միթթարիչ: Բարեկամները վեր նայեցան եւ քիչ մը հեռուն իրենց վերեւ միւս պատին վրայ տեսան լոյսի կամար մը, որուն կիսարժուրակին մէջ թեւաւոր հրեշտակ մը կեցած է ճառագայթող սպիտակութեամբ: Բարձր գեղեցիկ պատանեկան կերպարանք մը ոսկեղէն սուրով ոսկի գօտիին վրայ: Մաքուր դէմքը անմօրուս, վար նայող աչքերով, կարճ խոսքայիկներ ճակատին եւ քունքերուն շուրջ: Անշարժ, ինչպէս արձան մը, ձեռքերը գէպի ետեւը բռնած, վարդակարմիր մակերեսը բարեկամներուն զարձուցած իրեւ հրաւիրակ: Տրդատ եւ Աղաթանդեղոս իրենց դանուած տեղը կեցած էին, հաղիւ մէկ ոտք լայն աստիճանով մը միայն բաժնուած հրեշտակէն: Զարհուրելի ապառաժուտ վիճին եւ այս տեսարանին միջեւ հակապատկերը հզօրապէս ներշնչեց Աղաթանդեղոսի վրայ: Աստիճանը թանձր, ողորկ, միշտ թաց գերան մըն էր, կէս գերան մը, որուն կտրուած մակերեսը իրեւ հետք կը ծառայէր յառաջանալու, բոլորչի մաստիւն ալ վիճին վրայ կախուած: Անկարելի էր ձեռքերով բռնել եւ գէպի վեր շարժիլ անպատանգ: Հրեշտակը շէր նայել խի: Բայց իր ետեւը եւ բոլորտիքը միեւնոյն լուսաւորութիւնը աւելի աղու, աւելի սպիտակ: Յաւիտենականութիւն տեսող անձկութեան այս ըստ ինքեան կարճ պահերը: Երկուքէն ոչ մին կը նայէր վիճը, որ բերանարաց կը մողգայէր (անյագաբար ուտել) իրենց առջեւ: Միշտ միմիայն կամուրջին վրայ, թէ կը դիմանայ, թէ ամէնէն լուսնայք որ կողմէն է անոր վրայ: Ծամբայ չկայ, այլ միայն տ'յն որ ուղղակի կ'երթայ ոտքով, անյայտ յատակի մը վրայէն: Տրդատ յաւէտ անմոռանալի նայուածքով մը իր բարեկամին նայեցաւ, կարծես իրեւ հրաժեշտ: Իսկ Աղաթանդեղոս զլուխը ձախ թեւին մէջ սուղած դրած էր ապառաժին ցից մասին վրայ, որ ճիշտ իր կուրծքին առջեւ կը կենար: Սուրը սարսուռ մը սասանեցուց Հայաստանի դահաժառանգը: Աղաթանդեղոս կ'աղօթէ: Եւ Տրդատն ալ կ'աղօթէ, առաջին անգամ ըլլալով կ'աղօթէր դարձեալ Տրդատ Միհրին, իր մանկութեան



Աստուածին: Անրացատրելի նշանակութեամբ կարճաբառ փոխանակութիւն մը նայուածքներու, առլի սիրով, երախտապիտութեամբ, ակադճուն յոյսով, երկուքին ալ պահպանութեան համար: Ու Տրդատս պնայ, օն, յառաջ:

Երկու թեւերը կշիռ շարժումով ճօճելով զնայ մինչև մէջտեղը — ճիշ մը յանկարծ, կարծես ժայռերը կը պայթէին — Տրդատին ոտքը սահած էր, բայց Տրդատին միայն յատուկ հսկային արագութեամբ մը ծունկերը կառչեցուց զերանին շուրջ եւ բոլոր մկանունքը, նկարողերը յարեց կառչած մնալու համար այդ գրեթէ անհնարին վիճակին մէջ: Գոհարի մը զէպի վար վիճը կախուցան Տրդատին գլուխը, թեւերը եւ ձեռքերը, մինչ երկու ծունկերն էին միայն սր կառչած էին զերանին: Գուրտը կը ցատկուտէր երեսին վրայ, օճը օղակ կը շինէր վիղին շուրջ: Անդիտակցաբար զոցեց աչքերը, մտրելիք կուգար: Բայց Ազաթանդեղոս սարսափի մէջ ալ կը նայէր անդիտակից իր բարեկամին եւ իր ներքեւ քիչ մը խորը կը տեսնէր, թէ ինչպէս պատէ պատ լայն, ամուր ցանց մը պիտի կը լարուէր իրենց առջև: Քիչ մնաց Ազաթանդեղոս պիտի մոռնար լուսթեան պատուէրը եւ այս նախախնամական դիւտին սոթած ցնծութեանը մէջ պիտի կանչէր իր բարեկամին: Բայց այլևս ասոր հարկ չկար: Տրդատ ինքզինքը դուրս հանած էր յետին ճիգով մը եւ խաչածեւուած թեւերով եւ ոտքերով ետեւի կողմին վրայ առաջ կը տեղափոխուէր: Նստած էր արդէն հրեշտակին առջև, երբ Ազաթանդեղոս բազկատարած հանգարտ ու ապահով զէպ ուղիղ քալեց զերանին վրայէն եւ արդէն երկրորդ բուլկին ժպտուն զէմքով անոր քով կը կենար: Հրեշտակը դետին կը նայէր: Երեսը ճերմակ մոմի պէս, եւ ահա՛նկէց վեհ լրջութեամբ մը տողորուած: Չէին շարժեր շրթունքը, կամ հազիւ, երբ կտրուկ կերպով ձայնեց. «Լուծումը տուէք»: Տրդատ սարսուտ մը ունեցաւ եւ զարկաւ ճակատին շառաչիւնով մը: — Սակայն Ազաթանդեղոս վերելքի միջոցին արդէն լուծումի բառը կը կրկնէր եւ ձայնեց. «Արախադարբա»: Հրեշտակը հիմա իր նայուածքը բարձրացուց անոնց ուրախութեամբ: Եւ իրբեւ երգեցողութիւն կը հնչէին սա հանդիսաւոր բառերը:

Ողջոյն ձեզ երկուքիդ, որ եկաք  
Մեծ վիշտէ մը:  
Դուք կ'ուզէք մաքրուիլ:  
Ուրեմն, բարձրացէք,  
Եւ թողուցէք աշխարհիւն  
Ինչ որ իրեմն է.—  
Հեշտասիրութիւնը:

Շուարած կեցած էին երկուքը եւ չէին դիտեր թէ ինչ ընեն: Բայց հրեշտակը ըսաւ. «Ինձի տուէք երկրին սնունդը»: Հացի եւ դինի մնացորդը հրեշտակին ձեռքը տուին, եւ հրեշտակը զայն վիճը նետեց, առանց աչքը վեր առնելու, առանց որեւէ շարժումի: Սրուակները շառաչելով կտոր կտոր եղան վիճին մէջ: Երբ ասիկա վերջացաւ, բարձրացան յամբարէն հրեշտակին կողերը եւ իր շրթունքները կ'աւետէին.—

Հոգը պիտի վերածուի հողի,  
Մեր հոգին ազատուած է  
Նիւթէն եւ երկրային բնութեանէն:  
Հոգին հարկ է սնանի հոգիով:  
Հոգին իր բժշկութիւնը պիտի  
գտնէ միայն Աստուծոյ մէջ,  
Լոյսով ու կեանքով երկնային:

Ոսկի գօտիին ետեւը պարեպօտին մէջէն հրեշտակը հանեց երկու սղարիկ կլոր հացեր եւ բարեկամներուն բերանը դրաւ: Յետոյ վեհօրէն բարձրացուց իր արծուեթռիչները, որոնք շօշափեցին կիսաբոլորակ սենեակին կամարը եւ երկու քովնտի կողմերը: Նոյն թռիչքը սրսփաց զէպ առաջ բարեկամներուն զլիսուն վերեւ, եւ միաժամանակ հրեշտակին թեւերն ու ձեռքերը անոնց երեսներուն դէմ օրհնելու ձեւ մը առին: Տեսարան մը մաքրութեան եւ վեհութեան, որ կը յուզէր երկուքն ալ: Իր հայուստէն եւ ձեռքերէն կը տարածուէր անուշահոտութեան հոսանք մը: Եւ քիչ առաջ հրեշտակի կողմէ իրենց բերանը դրուած երկնային կերակուրը անոնց մէջ արթնցուց հրապառարիութիւն, ամէն ինչ թափանցող ոյժ: Բայց երբ անոնք կեցած կը խորհէին, թէ ինչ նոր ընան պիտի պատահի, ճերմակ շրայիկ լոյսը տակաւ կը շիջանէր: Հրեշտակը հոն կեցեր էր ճերմակ կանանչ զլեստովը նոյն զոյն զէմքով ու ձեռքերով: Թռիչքը վար կը կախուէին: Աչքերը զոց: Բայց աջ թեւը յամբարէն բոլորովին բարձրացաւ, ցուցամտոր զէպի երկինք: Բարեկամները կեցած էին երազային դիրքի մը մէջ: Աննկարապրելի ցանկութիւն մը դրաւեց զիրենք, ցանկութիւն զէպի վեր, զէպի լոյս, եւ մարմին ու անդամները փետուրի պէս թեւեղան: Անդունդին վերեւ զերանին վրայ կը տատանէին: Կատուներու պէս պատն ի վեր կը մազլցէին: Շեփորի գոռումներ երեք անգամ անձանօթ նշան մը տուին: Նարինջի պէս զեղին լոյս մը յորդեց յանկարծ բարեկամներուն վերեւ: Առանց նոր դժուարութեան եւ վրտանդի զէպի վեր կուգային: Քիչ ժամանակ վերջ տեսան միեւնոյն պատին վրայ, ոչ այնքան բարձր իրենց վերեւ, նոյն լոյսէն կամար մը: Մէջտեղը կար հրեշտակ մը: Բոլոր իր շարժումները, արտա-

յայտութիւնը, նայուածքը, նայնր ինչպէս տառջ: «Աբրակադաբրա»,  
զոչեցին երկու բարեկամները միարեւան: Հրեշտակը բացաւ աչքե-  
րը, զէմքը պայծառացաւ, ձայնը հնչեց սիրազեղ:—

Ողջոյն ձեզ երկուքիդ, որ եկաք  
Մեծ վիշտէ մը:  
Դուք կ'ուզէք մաքրուիլ:  
Ուրեմն բարձրացէք  
Եւ թողուցէք Հերմէսի  
Ինչ որ իրն է,  
Մամոնան եւ ոսկին:

Տուին իրենց քսակը: Առանց զիմպիծի որեւէ փոփոխութեան  
ան իր մասներուն վրայէն խորը սահեցուց նոյն քսակը, մէջը գրու-  
նուած ոսկիով: Հրեշտակը յաղթապանձ գէպի վեր մասնացոյց ըրու-  
եւ ամբողջ երևուցիւր զունտակեաց: Վեր բարձրացան, եւ շրջիկ լոյ-  
սին լրութեան մէջ անոնք գտան երբորդ զուտը: Ճերմակ զեղին խրո-  
ղրատդ լոյս մը սղուցեց դանոնք: Շեփորները կը գոռային անզազար:  
Շառաչին մը կար իրբեւ մեծամեծ ջուրերու: Բարեկամները չէին  
կարող նայիլ ելլել վեր, եւ հրեշտակին առջև ինկան խորատոյզ, որ  
կարծես կեցած էր ջուրին վրայ տրեւային մեծ շրջանակի մը մէջ:  
Կրակի պէս կարմիր ու բոց, հարած ոսկիի նման. ձերմակ — ոսկի —  
զեղին զղեսա, երես, թեւեր, ձեռքեր հրեշտակին եւ անոր հսկայ  
թոխքը: Բարեկամները բարձրաձայն կը ձայնեն լուծումի բառը: Եւ  
հրեշտակին ձայնը կը թնդար սաղմոսարանի մը պէս:—

Ողջոյն ձեզ երկուքիդ, որ եկաք  
Մեծ վիշտէ մը:  
Դուք կ'ուզէք մաքրուիլ:  
Ուրեմն բարձրացէք  
Եւ թողուցէք լուսինին  
Ինչ որ իրենն է.—  
Ցանկութիւնը:

Հասան օձերուն: Հրեշտակը գանդաղ շարժումով կարծես բո-  
ցավառ սուրով կենդանիները իրարմէ կտրեց եւ կէսերը նետեց խորը:  
Լոյսը մարեցաւ, հրեշտակը տփուունեցաւ: Անոնք վեր բարձ-  
րացան: Կարմիր լոյս հեղեղատեց զէպի վար: Հրեշտակը կը կենայ  
կարմիր դրանդիի մը վրայ եւ կ'ըսէ:—

Ողջոյն ձեզ երկուքիդ, որ եկաք  
Մեծ վիշտէ մը:

Դուք կ'ուզէք մաքրուիլ:  
Ուրեմն բարձրացէք  
Եւ թողուցէք Արէսին  
Ինչ որ իրենն է.—  
Բարկութիւնը:

Հասան իրենց սուրերուն: Հրեշտակը բոնեց երկու երախակալ-  
ները երկու ձեռքերով: Պահիկ մը անոնք կախուեցան անզունդին վե-  
րեւ, յետոյ սուղուեցան, խարակներուն զարնուելով:

Դեղին շրջանակի մէջ կը կենայ հրեշտակ մը եւ բարեկամներուն  
խողովներու կը ցանկայ սա բառերով:—

Ողջոյն ձեզ երկուքիդ, որ եկաք  
Մեծ վիշտէ մը:  
Դուք կ'ուզէք մաքրուիլ:  
Ուրեմն բարձրացէք  
Եւ թողուցէք Արամազդին  
Ինչ որ իրենն է.—  
Հպարտութիւնը:

Երկնցուցին իրենց զլուխները: Սոպոպիները հրեշտակին սու-  
րով անձայն անշուկ կտրուեցան եւ ինկան անզունդը:

Շեփորները կը գոռան շատ մօտէն: Թմրուկներ ու փողեր կը  
ճայթին կը ճարձատեն: Վիհը կը յորդի զեղին կանանչ լոյսով: Սա-  
տուռնոսին հրեշտակը կեցած է սուսերամերկ: Եւ ճառագայթուն  
մտերմութեամբ մը, բարեկամներուն Աբրակադաբրայէն վերջ կը խօ-  
սի հրեշտակի բառերը:—

Ողջոյն ձեզ երկուքիդ, որ եկաք  
Մեծ վիշտէ մը:  
Դուք կ'ուզէք մաքրուիլ:  
Ուրեմն բարձրացէք  
Եւ թողուցէք Սատուռնոսին,  
Ինչ որ իրենն է.—  
Ծուլութիւնը:

Բարեկամները իրենք իրենցմէ կ'երկնցնեն իրենց գորտերը:  
Հրեշտակին սուրը երկայնքէն երկուքի կը բաժնէ դանոնք, որ ցնցու-  
լով կ'իջան խորը: Յանկարծ կը գոռան շեփորները եւ կը ճարձատեն  
փողերը: Երկու պատանիներ ձերմակ զղեսաներով կ'երեւան հրեշ-  
տակի ետեւէն, կարծես լոյսէն բխած, կը սկսին, հրեշտակին աջ ու  
ձախ կողմը անցած, անձայն լրջութեամբ մերկացնել բարեկամները:

Մուճակները անդունդ կ'իյնան, դօտիներն ալ անոնց ետեւէն: Պարե-  
զօտները, վերարկունները, սոնապանները, շապիկները — ամէն ինչ  
կուլ կուտայ անդունդը: Պատանիները զանոնք կը տանին, այդպէս  
մերկ եւ մազաթափ, հրեշտակին ետեւը, մինչ կը գոռան փողերն ու  
թմրուկները: Կը մտնեն լայնութեամբ ու խորութեամբ գերեզմանի  
նմանող ժայռէ փոքր սենեակ մը: Կուպրի պէս սեւ զիշեր: Բոլոր ան-  
դամներով կը դողդղան: Փողերն ու շեփոքները դաղրեցան: Կը սկսի  
հանդիսական աննման երաժշտութիւն մը մաղթողական շեշտերով:  
Փչողական եւ լարաւոր նուազարաններ եւ խորունկ, բազմաձայն առ-  
նական երգչախումբ մը, եւ բարեկամները փոսին մէջ կը գուշակեն.  
կուզայ սուրբ քաւութիւնը, սուրբ ցուլին արիւնով սրսկումը: Իրենց  
վերեւ կափարիչ մը: Շատ մը կլոր, պղտիկ ծակերէ, կարծես խոչոր  
մաղի մը մէջէն կը խուժեն լոյս եւ եղանակներ, այնքան հանդիսաւոր  
ծանրախոհ, որ նոյնիսկ Ազգաթանգեղոս չէ իմացած զանոնք բնաւ:

Ի՞նչ կուզայ: Երաժշտութիւն եւ երգեցողութիւն: Մեռելական  
լուծութիւն: Սարսափելի հարուած մը, բախիւն: Ահազին եւ հսկայ  
բան մը կոտորեցաւ եւ ահա սրտաճմրիկ մահասարսուռ աղաղակ մը:  
Մակոտկէն ծածկոյթին վրայ ոտքի ձայներ, դփրդոցներ, հրմշտուք-  
ներ, խորդայրւ ձայներ: — Դարձեալ երաժշտութիւն եւ երգեցողու-  
թիւն, անկրօրէն հանդիսաւոր, սրբանուէր մաղթողական: Տրդատ  
եւ Ազգաթանգեղոս կը յուզուին, կը յառին անթարթ իրենց այդ փո-  
սին մէջ: Տրդատ կը կթուտի, կը դողդոջէ, իր ձեռքերը կը ծալուին  
Ազգաթանգեղոսի դիտուն ետեւ, եւ երեսը կը ծածկուի, տաք ար-  
ցունքներով ողողուած, իր բարեկամին կուրծքին վրայ: Ազգաթան-  
գեղոս իր թեւերը կը փաթթէ Տրդատին մարմինին շուրջ, որ կը դող-  
զրզայ կարծես տենդաճար եւ ցաւատանջ: Տրդատ կ'աղաղակէ հե-  
ծութեամբ եւ երանութեամբ: Եւ վերէն, ծածկոյթին կամ կափարիչին  
ծակերէն, կը սկսի կաթկթիլ, անձրեւել, վերջապէս հոսիլ — միածին  
ցուլին սուրբ արիւնը: Քաւութեան սուրբ արիւն մը յորդի բարեկամ-  
ներուն վրայ: Մարմինին ոչ մէկ անդամը, ոչ մէկ տեղը կը մնայ չոր:  
Տաք, կենդանի արիւն: Եւ երգչախումբը կ'երգէ. —

Առէ՛ք եւ խմեցէ՛ք արիւնն ու կեանքը  
Այն ցուլին, որ ծնաւ այս երկրին մէջ:  
Ձեր հոգին եւ էութիւնը  
Պիտի վերամաքուիմ եւ անմեղանաւ  
Ինչպէս մանկան մը հոգին:  
Պէտք է ապաշխարել, —  
Ունեմալ լման եւ հաստատ կամք  
Հեռանալ չարէն  
Եւ ձերբազատուելու զգայարանքներէն,

Նախքան Տիրոջ մարմինն ու կեանքը,  
Լքել ատելութիւն ու մախամք,  
Վրէժ, անյագութիւն, ցոփութիւն, փառամոլութիւն:  
Արեւուն պայծառութիւնը ցայտեցնող,  
Ճշմարտութեամբն ու ջուրին յստակութեամբն է  
Որ ձեր հոգին պիտի ցոլացնէ  
Միեւնի աչքերը, Մագդէի երկինքը:  
Եթէ կ'ուզէ՛ք խաբել իր աչքերը,  
Դուք ձեր հոգին է որ պիտի խաբէ՛ք.  
Եւ արիւնը որ հոսեցաւ ձեր վրայ  
Պիտի չբաժնուի ձեր հոգիէն,  
Պիտի վերածուի ապականութեան,  
Եւ անասող մահուան:  
Առէ՛ք եւ խմեցէ՛ք:  
Լուացէ՛ք եւ ցոյցեցէ՛ք, Ու մաքրեցէ՛ք ձեր մարմինն  
ու հոգին արեան մէջ:

Ճշմարտութեանն անդին է՛ք դուք,  
հոգիներ...

Եւ երկինքը, ձեր վրայ,  
Կը բանայ իր անհունութիւնը կապոյտ  
Եւ վերէն, քաղցրօրէն կը թափին  
Քարճարգոյն մաքրութիւնն ու փրկութիւնը,  
Միսիթարութիւն եւ խաղաղութիւն,  
Զօրութիւն ու կեանք:  
Աստուածութիւնը կը բնակի ապրողին արեան մէջ,  
Խմեցէ՛ք աստուածութիւնը, —  
Աստուծոյ ոգին...

Առաջին բառերուն յաջորդեց խորունկ, երկար լուծութիւն: Յե-  
տոյ իրրեւ տրուած նշանի մը վրայ, երկինք կը պատասի եւ տեղ մը  
պատ մը կը պայթի, որ մինչեւ այն ատեն ամէնէն մեղմ ձայնը կ'անց-  
նէր միւս կողմը: Նուազարաններու ահազին ցնցում մը բարձր եւ  
խորունկ, սուր, հակիրճ, երկար, խուլ եղանակներու, փողերու,  
թմրուկներու, շեփոքներու, դափերու, սրինդներու, ժխոր՝ որո-  
տումներու պէս, քառասային դոռում դոչում, կարծես վայրի ու ըն-  
տանի կենդանիներէ կը բարձրանայ — արջերու եւ առիւծներու մը-  
ուրնչիւններ, սուլում մը՝ սիրախանձ եղջերուներու, կատաղ փիղե-  
րու, մլախիւն, բուր, բուրհակի կանչ, գեղզեղ սոխակներու, արտոյտ-  
ներու, սրնգում կեռնեխներու, կափկափում՝ սաղերու, ճայերու:

Դուրը բացուեցաւ: Սպիտակազգեստ պատանիներ դուրս կը

տանին արիւնի պէս կարմիր բարեկամները: Իշխանավայել շքեղութեամբ վայր մը, մարմարեայ լուսարաններով յատակին խորութիւններուն մէջ: Մարբուած, օծուած, անարատ, ճերմակ զգեստներով, վերջապէս անա կեցած՝ կը դիտեն մօտաւոր դրասանդը, սրմէ իրենք հազիւ գուռով մը կրնային բաժնուած ըլլալ: Հիմա սա ալ բացուցաւ: Երկու կերպարանքներ ներս կը մտնեն, որոնցմէ մին կը կրէր ազաւի զլուխ մը մարդկային խոշորութեամբ, միւսը օձի զլուխ մը, որ լայն բոյրակումով մը կը հակէր զէպ առաջ: Առաջինը ձեռքերուն մէջ կը կրէր անապին առիւծի զլուխ մը բաշերով եւ խոշոր ակնակապիճներով: Միւսը կը կրէր անապին շունի զլուխ մը: Տրդատ իրեն անցուց առիւծի զլուխը, Ազաթանդեղոս՝ շունին զլուխը: Դիմակները փոկերով կուրծքերուն շուրջ կապուեցան: Հիմա նոյն բացուած գուռնէն սրտաթունդ զեղեցկութեամբ կը գոռար երաժշտութիւնը: Ամէն զգայականութիւն, մարմնասիրութիւն հեռի էր այդ նուազներէն: Ամենահրաշալի զեղարուեստը նուիրուած Ահուրա աստուածին, երկինքին: Բարեկամները առաջնորդուեցան կարծ, մութ նրբանցքի մը մէջէն: Ազաուր երեք անգամ զարկաւ փոքր դրան մը, որ բացուցաւ: Մանուկի մը բարձրութեամբ գուռ, հաւիթաձեւ ծակ մը, սրմէ գուրս կը հասէր հեղեղ մը սոկեծոյլ լոյսի եւ երկնային եղանակներու զեռ մը, որոնք ամէնքն ալ իրարու ետեւէ կ'իջնային կը սողոսկէին «սոկի գուռն»էն «արեւուն թաղաւորութեան» մէջ: Տրդատ եւ Ազաթանդեղոս չէին դիտեր թէ ուր էին: Բաց թէ զոց վայրի մը մէջ: Իրենց զլուխներուն վերեւ շատ բարձր կը նշողէր աստղային երկինքը: Լիալուսինը սրմէ խորհրդաւոր ճառագայթներ կը հոսէին, վայրին մէջ բոլոր առարկաները տեսանելի դարձնելով: Եւ լուսինը նոյն մարդ — կենդանիներով կ'ընթանար ամէն կողմ: Ինչ անապիտակ վայր: Անհամար բազմութիւններ կը ձեմեն իրենց կենդանիի զլուխներով, իրարու քովէն կամ իրարու ետեւէն, զարաստանի յատուկ զեղեցիկ, նուրբ ուղիներէ ամէն տեսակ փառաւոր ծաղիկներու ահօններու միջեւ: ամէնքն ալ ճերմակ, դիակնային, զոց, բայց զինովցընող բոլոր մը անոնցմէ գուրս կը խուժէր հոսանքի մը նման: Կիպարիաներու, շոճիներու կամ արժաւենիներու բարձր, ծանր պուրակ մը: Կարկաջուն ջուրերով ուխտիսներ՝ որոնք կ'ոռոզէին մամուռով, պտերով, ծաղիկներով ծածկուած ժայռի խուճեր: Պարտէզը կը թուէր անտեսանելիօրէն ընդարձակ ըլլալ: Եւ վարը շատ հեռուն բարձր վարադոյր մը՝ կարծես բոբրօքած կրակով մը կը փակէր ամբողջ հեռապատկերը: Հոն համակ լուռ: Ոչ մէկ երաժշտութիւն: Ոչ մէկ մարդ-կենդանի մօտակալը: Ոչ ոք կ'արդիւլէր մուտքը: Ոչ ոք կ'երթար հոն: Երկու բարեկամները, Տրդատ եւ Ազաթանդեղոս, միշտ դբած իրենց առիւծի եւ շունի զլուխները, ձեռք ձեռքի ժուռ

կուղային մինչեւ իրենց մերկ ոտքերը հասնող սպիտակափայլ վերարկուներով: Ազաթանդեղոս, Տրդատի ձեռքը սեղմելով, կը զգար թէ որքան խորապէս ապուած էր ան: Ոչ ոք կը խօսէր հոս: Գաղափար, զգացում եւ աշխարհայեացք ամէն ինչ դարձած է: Իմացականութիւն եւ խորհուրդ թօթափած են զանոնք ամէնքը՝ որոնք արեւուն էլքին կը սպասեն: Ամէն բանի վրայ կարծես կը դարի խոշոր, սուրը սպասում մը աւելի մեծապոյնի մը: Տախիլներուն ու կիթառներուն երաժշտութիւնը կամ հետաւոր անտես երգիչներու եւ երգչուհիներու նուագները կը սասնային յաճախ լրիւ աշխարհի զեղեցկութիւն եւ յորդհոսան կերպով, որ Տրդատ անգամ մը, մերկացած ամէն բանէ, պատկեցաւ զեպինը, եւ բոլոր մարմինովը կը զոգար այս սրբութեան պատճառած հեշտանքին սարսուռով: Այս վայրին բոլոր շնչուորները իրենց մարմինին վրայ կը կրէին կոտակ, արծաթէ կամ ոսկիէ նեղ-կուկ զգեստ, որ համակ կը պտուղար: Ոտքերը, հոլանի թեւերն ու ձեռքերը միայն, զոցցես դիակնակերպ՝ լուսինին կանանչ լոյսին մէջ, կը ճանչցնէին թէ ով իրական եւ ով արական սեռէ էր: Մարմիններուն բարձրութենէն եւ լայնութենէն միայն փոքր ինչ կը հասկըցուէր տարիքը: Այլապէս լուծուած, քայքայուած էին բոլոր տարբերութիւնները: Խաղաղութեան թաղաւորութիւն մը: Թաղաւորութիւն մը սիրոյ: Ներդաշնակութիւն մը զոյներու, շեշտերու, եղանակներու, մարդոց, կենդանիներու: Ամէն ինչ արիւնի միջոցաւ մաքրուած: Ամէն ինչ առաջ եկած՝ մեծ նեղութենէ եւ ծանր կռիւէ: Ամէնքն ալ նորազգեստ: Ոչ ոք զիտէ ուրիշին յանցանքն ու տառապանքը: Ամէնքը կը սպասեն լոյսին յայտնութեան, մեծ արշալոյսին: Ամէնքը զիրար կ'ողջունեն զլուխով եւ ձեռքերով, իրարու մօտէն անցած ատեն:

Լուսինը զէպի արեւմուտք յատաջացած էր աստեղային երկինքին վրայ: Աստղ աստղի վրայ տվուեցաւ: Լուսինն ալ: Միհրի նորրնձաները տակաւ եւ կը շաշուին կրակէ վարապոյրին կողմը: Երաժշտութիւն եւ երգեցողութիւն երթալով տկարացան: Ամէնքը ծունկի եկած: Ամէնքը թեւերին վեր բարձրացուցած, եւ մեռելական լուսնի մը կը տարածուի այս կարծես մեռած ամբողջ շքեղութեան վրայ: Շատուանները կը սուղուին կը թաղուին: Ազրիւրները կը զագրին զգրչիլ: — Յաւիտենականութիւնը կը խօսի:

Կայծակ մը: Որոտում մը: Խրոջուցիչ կափկափում մը զալարափողերու: Նշաններ բոլոր բարձունքներու, խորութիւններու եւ ճայնի երանդներուն մէջ: Դարձեալ կայծակներ, որոտումներ, զոցցես պիտի պայթին երկիր ու երկինք: Նորրնձաները կը ցատկեն վեր, կուլան, կը ճչեն, կը ժպտին, զիրար կ'ողջապուրեն, դարձեալ վար կը նետուին, կ'աղաղակեն, կ'ոստնուն կը սողան, դարձադարձիկ շրթ-

ջան կ'ընեն, կը պալարին, կը ցնցունին կենդանիներու պէս: Ազրիւրները ահա կարկաջասահ եւ փրփրազայր, շատրուանները կը բարձրանան, կը պտուտկին, կ'եռան, կը պղպջակեն, լուտասի ծաղիկները, չուշանները, աստղածաղիկները, մեխակները, վարդերը, շահոքրամները, ամէնքը կը սկսին բողբոջել, բուրել, շողալ — որովհետեւ ամէն ինչ, ամէն ինչ կը յորդի բոցակարմիր լոյսով: Վարագոյրը վերցած է: Ահուրա կիսաբոլոր լայն շրջանակի մը մէջ մէջտեղը կը բազմի ոսկի գահոյքի վրայ, զգեստ, ոսկեշող, որ իր ուսերէն վար կ'իյնայ գահոյքին վրայէն գետինը եւ ամբողջ վայրը կը դրուողէ զորչի մը պէս: Ոչ մական: Ոչ շքանշաններ: Նորածին մանուկի մը երկայնութեամբ ձեռքերը կը հանդէսն ծոցին վրայ: Անթերի, յախտեալան անդորրութիւն: Անժամանակութիւն: Ահալնատեսիլ զլուխը՝ որ կարծես կը դպի իր նստած շրջանակին առաստաղին, հրաշակերտ մըն է, զլուխ զործոց մը քանդակազործի զրոցին, որ անբարոնելի միութեան մը մէջ կը յայտնարերէ Վեհութիւն եւ Սրբութիւն, Անդորրութիւն եւ Կեանք, Դատաստան եւ Շնորհք: Երթունքին ուղիղ դիժը կը յայտնէ տիեզերքին թաքուն ոյժը: Հեռահայեաց աչքերը որոնք, լուսարձակներու հանդոյն, լոյս կը ճառագայթեն, ցոյց կուտան ամենագիտութիւն, ամենուրեքութիւն: Ահաուր գեղեցկութիւն: Շնորհքի աւետարներ սրբութիւն: Իր ետեւը, շրջանակին կոնակի պատին երկայնքէն, կիսաշրջանակի մը մէջ աջէն ձախ. — Կոռնոս, ժամանակ, առիւծազլուխ հրէշ մը, օձերէ մարմինով մը պարուրուած: Չախը կը կրէ բանալի մը, աջը՝ օձաձեւ դիժ մը, իրրեւ կայծակ: Ուսերուն վրայ թռիչներ կը նշանակեն ժամանակին խոյանքը: Կոռնոսին կը կաշին հրեշտակները, որոնք վիհէն վեր բարձրացած էին. նաեւ խորհրդանիշ կերպարանքներ, որոնք կը ներկայացնեն տարին, ամիսը, ցերեկն ու գիշերը, եղանակները: Երանելիներուն ուրախութիւնը, կոչը, երգը, ժպիտը, արցունքը սուրբ զմայլանքի մը կը վերանան, որովհետեւ «հազնալուր մոնչիւններու եւ դոփիւններու մէջ անընդհատ կայծակներով եւ որոտումներով ահա յուշիկ կուզայ Ահուրայի գահոյքին ետեւէն Միհրի կառքը, բարձրաթռիչ աղեղնաձեւ կարծես լուսակերտ կամուրջի մը վրայ: Իրական նժոյզներ՝ են արդեօք: Անոնց ոտքերը չեն տեսնուիր, այլ կերպարանքները միայն զուրջին մէջ, եւ Միհր վեհափառ, ուղղաբերձիկ կը բազմի, սանձը բռնած, եւ վերանալով կը վերանայ հետզհետէ մինչեւ բարձունքը երկնակամարին: Եւ ահա կ'իջնէ կառքէն, արդէն հեռուէն կը համբուրէ Ահուրան, եւ մինչ բոլոր նորընծաներուն թեւերը անոր կը բարձրանան, եւ ամէնքը ծնրաբեր կ'ընդունին դայն, ինք յամբօրէն կը տատանի վար անոնց կողմը: Անդրուվարը կը թաւալի արագ: Վարագոյրը կ'ամփոփուի: Ահուրայի փառքը կ'աներեւութանայ: Միհր, Աստուած

լուսոյ, ահա: Վսեմաբերձ, հոյակապ կերպարանք մը, զլուխը միշտ թեթեւ առաջ հակած: Արքայափառ զնացք մը: Երեսը ծածկուած գեղեցիկ, ոսկեցնդուղ դիմակով մը, բերունը, ակառները, աչքերը միայն տեսանելի: Երկար, խորկապուտակ վերարկու մը ուսերէն վար կ'իջնէ եւ աւելի քան մէկ մէթը երկայն պոչ մը կը կազմէ: Վերարկուն բաց է առջևօք եւ կը ցուցնէ աղամանդակուռ ոսկի զրահ մը: Սոնապաններ եւ կօշիկներ նոյն արծաթ ու ոսկի խառն զրուսպուած նիթէն են, ինչպէս նորընծաներուն: Ոսկեձոյլ խոյրին զլուխին վրայ, բոլորովին ծածկուած աղամանդներով, որոնք այնպէս մը յետուած են որ թաղին, զրահին եւ վերարկուին վրայ, անթիւ քանակութեամբ, Միհրի հազար աչքերու տպաւորութիւնը կ'ընեն: Ուր որ քայլեն, հասնին, նորընծաները ծունկի կուզան եւ Միհր կ'օրհնէ զանոնք: Իր դիմակէն լոյսեր կը թափին արեւու շողերուն պէս, եւ իր աչքերը կապիճներուն մէջէն խուզարկու կը դիտեն շուրջ բոլոր: Ամէն հնարաւոր նշաններով աչքի կը զարնէ նորընծաներուն կամ նուիրակներուն հետաքրքրութիւնը: Ո՞վ կրնայ ըլլալ: Գարնանային խորհրդատօներուն ատեն մեծ մէկը միշտ Միհր կ'ընկալայցնէր: Նուիրակներէ, շուներէ, ալուաներէ, առիւծներէ շրջապատուած, պարտէզին բոլորտիքը ժուռ կուզար: Հիմա երանաւէտ թափառում մը, խօսքեր կը սկսին դիմակաւորներուն կողմէ: Ոչ մէկը միւսը կը մատնէ, թէ ով կամ ուրիշն է: Ծառերէն պտուղ կը քաղէին, միրգ, ամէն տեսակ քաղցր բաներ, եւ կամ այս ամէնը կ'առնէին նաեւ արծաթահիւս ոսկեման սիրուն սակառներէ, որոնք կը հրամցուէին թոչունի կամ կուզրի զլուխներով աղուոր աղջիկներու կողմէ: — Պատանիներ եւ կոյսեր դէմ առ դէմ, կուզային եւ կարծես կրկին զոռացող երաժշտութիւնը երկնային պարի մը կը հրաւիրէր զանոնք: Եւ այսպէս քիչ ատենէն Միհրի շուրջ կը շողար կը շողողար պաղարիւն, զեղեցիկ շարժումներով պարակցութիւն մը: Տրդատ կը հծծէր Ազաթանդեղոսի ահանջն ի վար. «Ես ալ պարե՞մ»: — «Մի ըներ», աղաբարեց բարեկամը: Տրդատ. «Բեղի կը հետեւիմ, բարի հրեշտակ, բայց չես գիտեր թէ որքան մաքուր եւ բարի դարձած եմ: Ահա այս է փրկութիւնը: Կը զգամ դայն: Մաքրուեցայ, սրբուեցայ: Մարմնասիրութենէ, հեշտախտութենէ ձեռնթափ եղած եմ: Հոս ոչ մէկ անսուրբ մտածում, ոչ քնազոլում եկած է վրաս»: Ազաթանդեղոս. «Ուրախ եմ: Իցիւ այդպէս մնայ, բայց — մի պարեր»: — «Այսպէս: Ոչ ուրեմն»:

Ժուռ կուզային եւ կ'ուտէին եւ կը խմէին վճիտ աղբիւրներէ, որոնց առջև մարդ կոնակը կը ծռէր: «Ունի՞ս նախազգացում մը, թէ դուրսը աշխարհի մէջ ցերեկ է թէ գիշեր, ձմե՞ռ թէ գարուն, Տրդատ»: — «Կարծեմ, շարաթներէ, օրերէ ի վեր մենք խորհրդատօնին

մէջ ենք: Օ, երանի թէ հոս կարենայինք ըլլալ յաւէտ»: — «Պիտի յափրանաս այն տուն, Տրդատ»: — «Երբեք»:

Արժաւենիներու տարմի մը առջեւ եկած էին, կարճ, թաւա- նման մարդակերպ մը վրայ, եւ կը հանդէշին կարկաջուն ջուրերով ժայռերու խուճրի մը տակ: Տրդատ բազմաթիւ բռնութիւններով կը յեղձե- դէր, թէ ինչպէս անրիժ ու երջանիկ եղած է: Ամէն շարժարանքներու մէջէն անցաւ եւ շնորհակալ է միշտ իր բարեկամին ցոյց տուած բո- վանդակ սիրոյն համար: «Այս ամէնը դուն քու անձիդ համար միայն պիտի ուզէի՞ր կրել, փարձել», փափաքեցաւ զիտնալ: «Ոչ: Երբեք», պատասխանեց Ալաթանդեղոս, կարուկ կերպով: «Ուստի, ամէն ինչ իմ սիրոյս, իմ փրկութեան համար» — «Բու փրկութեանդ համար»: — «Կը հասկնամ. քու հին սկզբունքդ. փոխանորդարար շարժարուի: Դուն գրեթէ մեղք չունիս. միշտ մաքուր ես եւ բարի եւ սրելէ յան- ցանք վրադ հրաւիրած չես»: — «Ոչ ոք բռնութիւն մաքուր եւ ան- պարտ է», յայտնեց Ալաթանդեղոս: «Հոս ուրեմն դ՞ու՞ն ալ դտար փրկութիւն եւ թողութիւն»: Ալաթանդեղոս կը վարանէր. յետոյ ը- սաւ գոհութեամբ. «Ես ալ գտայ թողութիւն եւ փրկութիւն»: — «Հո՞ս գտար», կրկնեց Տրդատ պնդելով, «հո՞ս գտար»: Ալաթան- դեղոս լուռ մնաց: «Ինչո՞ւ չես խօսիր: Ինչո՞ւ չես ըսեր՝ հոս գտայ», սրտնեց Տրդատ առիւծի աչքերով, եւ փոքր ինչ զրգուռած: «Թողուր այդ կէտը, Տրդատ, խնդրեմ»: Տրդատ աւելի զրգուռած, «Բայց խօսէ»: «Ի՞նչ պիտի ըլլայ աս, միշտ պաղտնիք ունիս ինձի հանդէպ: Ինձի չես փտաճիր—գուն—ի՞նչ կը ծածկես դուն: Դուն — դուն—» եւ զլուխը երկնցուց Ալաթանդեղոսին: Ալաթանդեղոս կը տեսնէր Տրդատին աչքերը սր փաղածանօթ կտտալութեամբ կը փողփողէին իրեն դէմ, կը լսէր անոր խրխնջելը, եւ տաք շունչի շոյի մը կը թա- փանցէր Ալաթանդեղոսի երեսին մէջ: «Սոսկ ուրեմն: Ի՞նչու լուս կը մնաս»: — «Բեզի հետ շարժարուեցայ քու սիրոյդ համար Տրդատ: Թող այսուհետեւ բարի ըլլաս, կը խնդրեմ: Չեմ կրնար հիմա աւելի բաւլ քեզի»: Տրդատ աւելի մօտեցաւ: Սարսափելի փայլեկան մը կը սպառնար: Չայրոյթը կը փակէր Ալաթանդեղոսի դէմ: Տրդատի բռունցքը կը գնդանար: «Տրդատ, կը կարծէի թէ դուն փրկուեցար, Տրդատ ... Ահուրայի երկինքն ես»: Բռունցքը քսկուեցաւ: Նայ- ուածքները մեղմացան, բայց անժպիտ մնացին: Տրդատ չէր խօսեր եւ պառկելու ձեռով կը կրթնէր անոր աջ թեւին վրայ: «Ի՞նչպէս կ'ըլ- լայ Ալաթանդեղոս»: — «Ի՞նչը»: — «Դեռ ի՞նչ պիտի ըլլայ — Դեռ ի՞նչ խաղեր պիտի խաղցուին»: — «Ես ի՞նչպէս կրնամ զիտնալ Տըր- դատ»: — «Ես կրնամ օգնել», հարցուց կնոջական լեցուն ձայն մը: Հոյակապ մեծութեամբ իզական կերպարանք մը, ճախարակեայ յոյր անդամներով եւ լայնշի լանջքով, դորտի սիրուն կանանչ դիմակով,

առանց նշմարելու Լուսին անոնց մօտ եկած էր: Եւ խանդավառ կը նկարագրէր զայիքը: Ընդ հուպ պիտի ներկայացուէր Միհրի ծնուն- դը: Յետոյ ցուին պայքարը: Յետոյ դատաստանը: Յետոյ — զիշերը: մոմերու լոյսով սուրբ բնթրիքը եւ Միհրի հրաժեշտը — յետոյ անոր համբառնայր երկինք եւ վերջին օրհնութիւնը: — «Յետո՞յ», հարցուց Տրդատ հետազրբութեամբ: — «Յետոյ» — կինը հառաչեց խորունկ — «յետոյ ամէն շրջութեան փախճանը — եւ — նորէն պիտի դառ- նանք շար, մեղաւոր աշխարհը»:

Եւ ուղեց երթալ: Բայց Տրդատ խնդրեց սր մնայ եւ իրենց հետ նստի: Այնպէս բրտ, եւ Տրդատի փափաքին վրայ մանրամասնօրէն պատմեց, թէ ինչպէս պիտի ըլլայ ամէն ինչ, եւ ի՞նչ է այս ամէն բաներուն նշանակութիւնը: Իրենցմէ քիչ մը վերօք շարունակ կը հնչէր կը թնդար մաքուր, երանաւէտ պարական երաժշտութիւնը: Ա- ղաթանդեղոս երկար ատենէ ի վեր դիտած էր, թէ ինչպէս Տրդատի աչքերը հեշտապին կը շափէին անձանօթ կնոջ փառաւոր մարմնեղու- թիւնը, եւ թէ ինչպէս Տրդատ ձեռքերով ու ոտքերով կը ցնցուէր այդ երաժշտութեան եղանակին վրայ: Ծիշտ: Արդէն ընդմիջեց Տրդատ պատմող կինը եւ ըսաւ ըստ երեւոյթին անտարբեր. «Տեսէ՛ք, հոն փառաւորապէս իրարու կը փաթթուին պարօրդները, առանց յոյնե- լու»: — «Չե՞ս ուղեր պարել, Միհրի ի պատիւ», հարցուց կինը ա- ռանց խանդավառութեան: Տրդատի մէկ նայուածքը բարեկամին վր- րայ, յետոյ վեր ցատկեց եւ այն մեծղի կնոջ հետ հեռանայր՝ հազիւ մէկ փայրկեան եղաւ: Ալաթանդեղոս Լուսին մնաց եւ սաստիկ յոյնած ու տխուր երկնցաւ մարդակերպին վրայ: Իր շունչ դիմակին ծակե- րուն մէջէն արցունքներ արցունքներու վրայ կը հոսէին խոնաւ, չո- պելից խոտին մէջ: Պուրակին Լուսին, Հոսմի ամենարարձը բնկերու- թեան պատկանող կենդանի դիմակաւորեայ մարդոց երկնաշունչ պարը կը թրթորար Միհրի առջեւ, փար ու վեր, որ իր բանակեղոր ունէր դարաստանի մէջտեղը շատրուանին քով, եւ բազմոցի մը վրայ ընկղմած՝ շարունակ կը դիտէր դրախտափայլ պարածփանքը: Ալա- թանդեղոս ընկողմանած էր՝ անուշապիր ամէն բանի: Ու կը մրափէր: Կ'երազէր. մատղաչ, տակաւին ոչ քսանամեայ կին մը, նրբաւարտ աճումով ու նորարոգորով կերպարանքով, հրարուն խոշոր աչքերով եւ ձուածեւ զեղեցիկ դէմքով, երկու փոքրիկ գոուզ մանկիկներ թե- ւերուն մէջ, կը ներկայանար իր առջեւ: Կը ճանչնար զայն: Բայց ան զինքը ոչ: Չայնեց դողող ձայնով. «Մարիա»: — Ան որ անքթիթ կը յառէր, ճերմկեցաւ կաւիճի պէս եւ ցատկեց դուրս անոր դիմակին առջեւէն, կարծես դիւահայած: Ալաթանդեղոս պոռաց անոր, եւ դէմքն ու ձեռքերը թաղեց խորը խոտին: — Տրդատ եւ անձանօթու- հին կաքաւեցին ու կաքաւեցին: Եւ Տրդատ իր անդորրութիւնը չէր

կորսնցուցած, զերծ ամէն շուշուրութենէ: Երաժշտութիւնը սուրբ, նոյնպէս եւ պարը: Ընկերուհին ալ նայուածքով, խօսքով ու շարժումով մաքուր կը նայէր Տրդատին: Միհր կը տիրապետէր: Լոյսին դադափարը: Ինչ որ Տրդատը կը նեղէր կը տանջէր, արդարեւ հետրդհետէ մեծցած հետաքրքրութիւն էր, թէ ով էր այս անծանօթուհին եւ ինչ էր իր ծաղումը, քան թէ հեշտակտ հիացումը անոր դիցանման կերպարանքին, անոր անդամներու կորովին ու յղփութեան, թեւերուն ու ձեռքերուն զեղեցկութեան մասին: Յաճախ իրենց հանդարտարարոյ պտոյտներու միջոցին քնացող Ալպթանդեղոսի քովէն կ'անցնէին, կը ձգէին որ քնանայ եւ ձեռք ձեռքի տուած կ'երթային յառաջ: Տրդատ կը պատմէր ինչ որ գիտէր Ալպթանդեղոսի կեանքէն: Այնուհետեւ լուս մնաց անծանօթուհին, եւ յայտնի էր որ ան Ալպթանդեղոսի մասին աւելի բան կ'ուզէր գիտնալ: Տրդատ կը պատմէր ու կը պատմէր, թէ ինք ալ չի գիտեր, թէ ինչպէս եղաւ որ իր սեփական ճակատադիրը եւ այս քարեկամին խորհրդաւոր երեւոյթը դէպք մը եղաւ զինքը խաւարէն լոյսի բերելու: Բայց կը կարծէ որ Ալպթանդեղոսի կեանքին վրայ եւս մութ գաղտնիք մը կայ: Տրդատ կը խօսէր ու կը խօսէր, եւ կը ճեմէին ու կը ճեմէին: Ձէր դիտած որ ընկերուհին ձեռքը հետզհետէ կը պաղէր եւ անոր քալուածքը դանդաղ ու վարանոտ կ'ըլլար:

«Պէտք է բաժնուինք — մեկի կը նային — եթէ մենք մեկ ճանչցընենք — կը դրժեն Միհրական երգումը եւ մահուան կը դատապարտուինք — հոս մէկը միւսը պէտք չէ ճանչնայ: — Ես Իսիսի քրմուհին եմ: Վաղը Հոռոմի մէջ անոր տօնն է: — Փնտոէ զիս — կ'երգունցեն մքեզ — իշխան»: Ու հեռացաւ դնաց: — Յանկարծական ցաւ մը ցնցեց Տրդատի կուրծքը, երբ ինքզինքը միմիակ տեսաւ: Կորսուած էր: Առիւծի զլուխով թափառեցաւ շուրջը, եւ ի զուր փնտոեց անոր հետքը: Ինչպէս անհետ եղած էր ան: Ոչ ուրեք այլեւս այդ սիրուն, անբջային գորտաղլուխը: Ալպթանդեղոս զժուարութեամբ ստքի հանուցաւ եւ անոր պատմուեցաւ ամէն ինչ: «Սէր, սէր — հոս երկիրքին մէջ ալ», հառաչեց Տրդատին բարեկամը, եւ անոր հետ դնաց տեսնելու Միհրին ժայռէն ծնելուն ներկայացումը՝ որ ահա կը սկսէր: Նաւակատիք մը կախարդական, կիսալոյս թատերաբեմի մը վրայ. բեմական հանդերձանքի փառահեղ ցուցադրութիւն մը մեծ, արձակ զլխաւոր հրապարակին վրայ, ժայռէն ցայտող մարմինին խորհրդաւոր շնչելը, ներս ու դուրս քաշելը, քաշուելը — նաեւ երաժշտութիւնը, երկունքը, անձկութիւնը, յոյսը, յետին ու ահարկու պատառուածքը, ճեղքուածը եւ նորածնեալին ճիշդ, վնվնկոցը — յամբաշարժ կազմութիւնը արշալոյսին, մթնշաղը. հուսկ ուրեմն՝ լոյսին յաղթութիւնը — խորհրդանշանական գեղարուեստի վսեմ արդիւնքը:

Բայց չզղացուեցաւ Տրդատ, հազիւ թէ երբեմն պաղ կերպով բեմին կը նայէր, անոր մտածումն էր միայն՝ անխօս հանդիսականներուն մէջ փնտոել զորտաղլուխը: — Նոյնը նաեւ խաղին շարունակութեան միջոցին, այսինքն ցուլին սուրբ պատարալին ներկայացումի առթիւ, աննկարադրելի շքեղութեամբ եւ ներդրութեամբ կենդանի պատկեր մը, որուն ամէնքը ծնրադրած հանդիսատես էին, եւ որուն միջոցին երզչախումբն ալ կը բերէր իր տօնական աջակցութիւնը:

Անսովոր խանդավառ տրամադրութիւն մը առաջ եկած էր: Երաժշտութիւնը կը մնար միեւնոյն վսեմ ծանրութեան վրայ: Փրկութիւն, Խաղաղութիւն, Սէր, Մաքրութիւն կը շնչէր ամէն ինչ. — օղ — թատերաբեմ — մարդիկ — ամբողջ պարտէզը: Սիրոյ ամէնէն ներքին կուրծքը կը զգար մարդ: Ամէնքը զիրենք ազատ կը զգային որեւէ մարմնասիրութենէ: Ամէնքը ներքնապէս ազատ, քաւեալ, մաքուր եւ անդորր ըստ բաւականին, թափանցելու տօնական վսեմութեան, երեւնալու Միհրին ոսկեղէն կշիռքին առջեւ եւ տոկալու անոր դատաստանին: Անծայր շարքեր կազմուեցան: Հրեղէն վարպետը նորէն կը բացուի: Սեւ գիշեր է դարաստանին մէջ: Բարձր ոսկի մոմեր ոսկի աշտանակներուն վրայ կը փողփողեն մեղմախառն: Հայր Աստուած — Ահուրա կը դահակալէ յաւիտենական անդորրութեան մէջ: Խոններ, հրեշտակներ անոր ետեւը: Տակը, բեմին յառաջակողմին վրայ, Միհրին սեւաշուք մարմարեայ սեղանին եւ ոսկի կշիռքին առջեւ, իր աջ կողմը Սրաօշա, ձախ կողմը Բասնու: Բոլոր հողիները կուգան եւ կը խոստովանին իրենց մեղքերը: Նժարները կը ներկայացնեն անոց ծանրութիւնը, եւ կը զետեղուի ձախակողմ, Միհրի առջեւ: Ենորհն ու զթութիւնն ալ միեւնոյն ծանր ոսկիէն շինուած են: Ո՛վ որ դատաստանին միջոցաւ պիտի դայ տէրունական ընթրիքի ընկերակիցներուն ընտրեալ հօտին քով, կը հաւաքուի Միհրին շուրջ եւ կը բարձրանայ «երկինք», որ հոս Միհրի խոցն է, ուր ահրատ մը պատրաստուած է: Մութ կանանչ մետաքսէ բազմոց մը, մէջտեղը Լոռսանին նուիրական հացով լեցուն ամանով եւ խոշոր ոսկի բաժակով, շուշանբրանդ սկիհով, աստղապսակ, որուն աչքերուն պէս յեռուած ազամանները կը վառին բոցի պէս: Սակաւներ միայն կը ժամանեն հոն: Ամենամեծ մասը իր ուզելովը դուրս կը մնայ, ենթարկուելու համար Միհրի քննութեան, որ իր արեւ դիմակին բացուած քներուն մէջէն թափանցիկ նայուածքով հողիները կը քննէր կը խուզարկէր, եւ կը հարցնէր անոց, թէ նուիրեալներուն բոլոր պարտականութիւնները կատարած են հաւատքի, սիրոյ, մաքրութեան, ճշմարտութեան, արդարադատութեան մասին, թէ հաւատարմութեամբ կը վճարեն իրենց տուրքը եւ կը գործադրեն օրէնքները հանդէպ կայսեր, պետութեան եւ համայնքին: Միհրի կշիռքին առջև:

ներկայանալու համարձակութիւն ունեցողներու մէջ կ'ին նաեւ Տրդատ եւ Ազաթանդեղոս: Ազաթանդեղոս Տրդատի հետաքրքրութենէն պարտաւորուած, ոչ թէ սիրայօժար: «Տրդատ», փսփսաց անոր ազանջին, կարգ մտնելէ առաջ, «դուն իրաւունք չունիս Միհրի տէրունական ճաշը ընդունելու»: — «Ինչո՞ւ չէ», ձայնեց Տրդատ անոր: «Դուն չես ներած: Դուն կ'ատես տակաւին»: — «Զո՞վ: Ես կ'ատեմ միայն — հօրս սպանիչը — ուստի կ'երթամ —» — «Մի՛ երթար: Միայն կ'ընես»: — «Ո՛չ: Ոչ ոք զիտէ ատիկա»: — «Բայց: Լոյսին Աստուածը»: — Տրդատ այլեւս մտիկ չըրաւ եւ քալեց առաջ բազմութեան մէջ: Իրեցաւ իր կար չին, Միհրի առջեւ: Դող մը եկաւ դրան, երբ Միհր կապոյտ աչքերովը անոր նայեցաւ եւ ծանօթ ձայն մը խօսեցաւ: «Քու մեղքերդ շատ են եւ պարաքղ խոշոր: Քու քաւութիւնդ ընդունուած է: Քու պարտքդ թողուած, ներուած: Բայց Միհրի բնութիւնն ներկայ բլլալ տրուած է միայն անոր որ սիրտէն ալ կը ներէ պարտապաններուն: Դուն չես ներած հօրդ սպանիչին: Կ'ատես: Ներէ եւ եկո՛ւր: Կամ ատէ ու ասկէջ հեռացիր»: Միհրին ձեռքերը բարձրացան ինքնին մերժողական ձեւով, եւ նոյնը ըրին Սրաօջա եւ Բասնու, Միհրին աջ ու ձախ կողմը: Անտեսանելի ուժերու առջեւէն քըշուածի պէս Տրդատ ետ ետ դնաց եւ Ազաթանդեղոսը քաշեց իրեն հետ: Անոնք ուրիշ շատերու հետ կեցան ետեւօք արմաւենիի մը քով եւ կը զիտէին Միհրի բնութիւնը: Սկսաւ երաժշտութիւնը: Միհր եւ երկու աստուածները յամբարար բարձրացան զէպի ոսկի խուցը: Նուիրեալները ծնրազրեցին Միհրի, Սրաօջայի եւ Բասնուի շուրջ եւ Միհր սկսաւ: —

Դուք, աշկերտներս եւ ընկերներս, մաքրուած էք,  
Ձեզի բաժին ինկաւ փրկութիւնը:  
Ընդմէջ մարտին ու վիշտին,  
Ընդմէջ զատաստանին ու շնորհիւնին,  
Եկաք Միհրի ընթրիքին:  
Մեկնումը կը մօտեցայ: Ընդունեցէք վերջին խօսքերը,  
Եւ քող ձեր հոգին երբեք չմոռնայ զանոնք:  
Սիրտս կը տրոփէ, մտածելով ձեզի, եղբայրներս...  
Խալ եւ տխուր երաժշտութիւն մը տրամօրէն կ'ընկերանայ Միհրի  
խօսքերուն:  
Կը քողում ձեզ, մինչ կը բարձրանամ  
Երկինքի արքայութեան,  
Հոն, ուր չկան ոչ մեղք եւ ոչ պայքար  
Արարածներուն ղէմ. ոչ Ահրիմանի ոգիներն ու դեւերը,  
Ոչ իր նետերը պիտի կարենան մեզ հարուածել գիշերը,

Ոչ հիւանդութիւնը, ոչ թշուառութիւնը, ոչ մահը եւ ոչ մէկ արգելիք:  
Ձեզի կը մնան երկիրն ու իր տանջանքները,  
Ձեզի կը մնան տառապանքն ու իր արցունքները,  
Ձեզի կը մնան փորձութիւնը եւ չարին խորամանկութիւնը.  
Կը բարձրանամ: Բայց գիտցէք, մնալով երկինք  
Միշտ ձեր մօտն եմ սակայն:  
Ամէն անգամ որ կը մտածէք իմ մասին կը մտածեմ ձեզի:  
Ան որ ազօրեղով իր աչքերը կը բարձրացնէ  
Ուր իմ ոսկեգօծ քառածի կառքս կը սուրայ երկինքն ի վեր,  
Ուր գիշերը աստղային իմ շրջագոյնս քիւր աստղերը կը ցոլանան,  
Թող գիտնայ, թէ Միհր քովս է, Միհր գիտնայ եւ տեսնէ,  
Միհրին վերաբերուն գիտնայ ձեռքէ, Միհրին սուրն ու վահանը  
Ձիւ կը պահեն: Ան իմ բարի հովիւս է:  
Մեր քովն է ան: Ան մեր միջեւ է եւ մեր մէջ:  
Երբ խմբուիք,  
Երբ ուրախութիւնը ձեզ կը լեցնէ, երբ միտքարութիւնը ձեզ կը  
միտքարէ,  
Երբ հանդարտ, ինչպէս իրիկուան գեփիւրը,  
Հոգիս կը շնչէ ձեր հոգիներէն ու խօսքերէն,  
Երբ ոտքի էք, դուք մարտիկներ մեր յայտի Աստուածին,  
Ընդմէջ մարտի շոխողներուն, առաջին գիծի վրայ,  
Երբ նաւարկէք ծովերու լեռնակուտակ ալիքներուն եւ նեղքերուն  
ընդմէջ,  
Ճոնչող ցոկանաւին վրայ,  
Մտածեցէք որ Միհր ձեզի հետ է... մի երկնչիք:

Ազդու եւ խորհրդաւոր, Միհրի ձայնը կը տիրէ երաժշտութեան, որ տակաւ զօրանալով կը յիշեցնէ մերթկը ծովուն վրայ:  
Մերիկն ու ժամանակը կը հնազանդին իր խօսքին.  
Իր խօսքին առջեւ պիտի ընկրկին ալիքները,  
Արեւը պիտի քափանցէ մշուշի պարիսպներէն,  
Կրնայ ծածկուիլ օրուան եւ շաբթուան մէջ:  
Գիտցէք, Միհր կը ծածկուի ինչպէս արեւը միայն.  
Բայց հոն է ան, եւ կ'ուզէ իրենները փորձել,  
Տեսնելու թէ խաւարին ու գիշերուան մէջ, սրունք ստուերն են  
մահուան,  
Տառապանքին, — վտանգներուն, հազարումէկ արգելիքներու եւ  
դժկամութիւններու մէջ.  
Տեսնելու թէ կը վստահինք իրեն, թէ կը հնազանդինք իր խօսքին,  
Թէ յուսալիք կը դիտենք իր աչքերը քիւրաւոր:



Անմոռնչ, պատկառազու լռութիւն մը: Միհր ոտքի ելաւ: Երաժշտութիւնը հնչեցուց ծանր, մեղամաղձիկ եղանակներ: Մեղմ կարմիր լոյս մը կը հոսէր բարձրէն դարաստանին մէջ: Աստղեր կը յառէին: Խունկի ամպեր կը տատանէին վար եւ կը լեցնէին ամբողջ դարաստանը: Կը թուէին զարիւ մէջտեղը եւ կը կազմէին աչքով անթափանց խիտ ամպ մը: Միհր քայլ առաւ դէպի աջ, եւ իր ետեւէն ամբողջ թափօրը հաղորդուողներուն: Ծնրազրեցին ամպին շուրջ: Միհր օրհնեց զանոնք բազկատարած, յետոյ իւրաքանչիւրը իրեն մօտեցաւ եւ համբուրեց զայն: Երաժշտութիւնը սրտապին, խանդակաթ եղանակն՝ կ'աձկնէր: Գլուրհորային զեղեցկութեան, եւ Միհր կ'ամբողջացնէր իր հրաժեշտի ճառը, մինչ զալարափողեր կը դռնչէին եւ կառքի մը թաւալումը լսելի կ'ըլլար: Միհր սկսաւ բարձրաձայն սրբ-տաշարժ հանդիսաւորութեամբ եւ սիրով:—

Հաւատացեալներ, եկէ՛ք որ օրհնեմ ձեզ:  
Առջեւ ծնրադիր ընդունեցէ՛ք վերջին օրհնութիւնս:  
Հացով կերա՛ք լոյսս եւ էութիւնս:  
Սրբազան ըմպելիով ընդունեցա՛ք հոգիս:  
Տեսեցէ՛ք զանոնք մինչեւ յաւիտեանակաւորութիւն:

— փողահարութիւն —

Ժամը ծանր է ... Աշխարհի վերջին օրերը  
Կ'իյնան երկինքէն, ժամանակին մէջ, խլացուցիչ քաւ-  
լումով:

Լոյսը խաւարին դէմ, հոգին մարմնին  
Ահուրայի ոգիները դեւերուն դէմ:  
Միհր — Ապագոն նագովրեցի Քրիստոսին դէմ,  
վերջին մարտին համար: Այս աշխարհի իշխանութիւնները  
Կ'իյնան: Զրադաշտը կը հասնի...

Ծովուն մէջ ալիքները  
Կը ծփան խորհրդաւոր:

Կը փսփսան ու շնչեն  
Կեանքին մասին որ կը կազմուի ծովուն յատակը:  
Հոգիին մասին, որ կը ցայտէ կապոյտ եթերէն,  
Ու կ'իջնէ մանկամարդուհիին բով որ հոն կը լոգնայ:  
Այս իսկ պատճառով հսկեցէ՛ք, ծով բռնեցէ՛ք, նուիրագոր-  
ծեցէ՛ք կեանքը...

Զգեցէ՛ք լոյսին գէնքերը եւ կերտեցէ՛ք,  
Յազթանակն ու տիրապետութիւնը Ահուրայի  
Աշխարհին վրայ համայն:

Որ լռութիւն: Մեծ յուզում:

Ուր ալ երբամ, մնացէ՛ք հաւատարիմ:  
Թող ձեր աչքերը չափեն շքեղութիւնը  
Անբացատրելիօրէն անհուն ու կապոյտ երկինքին:  
Այս իսկ վայրկեանին պիտի ուզէ՛ք հետս երկինք բարձրանալ:  
Բայց ասոր համար տակաւին բաւականաչափ մաքրուած չեմ ձեր  
հոգիները:

Ըրէ՛ք այնպէս որ տակաւ մաքրուին  
Եւ դառնան արժանի մտնելու Հօր յաւիտեանական աշխարհին մէջ:  
Ով դուք, բրէ՛ք այնպէս որ փրկէ՛ք ձեր հոգիները:  
Զէ՛ք գիտեր երբ պիտի գայ վերջաւորութիւնը:  
Հսկեցէ՛ք, աղօթեցէ՛ք եւ մտածեցէ՛ք իմ մասին  
Երբ ձեր միջեւ կը մատուցանէ՛ք Միհրի ընթրիքը:  
Մնացէ՛ք բարով: Կ'օրհնեմ ձեզ...  
Առէ՛ք խաղաղութիւնս:  
Թող Ահուրայի խաղաղութիւնը ձեզի հետ ըլլայ...

Երկեցողութեան միջոցին Միհր յամբարար տատանեցաւ դէպի  
բարձունքը եւ աներեւոյթ եղաւ ստաղերուն միջեւ: Հրեղէն վարա-  
դոյրը տակաւ զոցուեցաւ եւ վերէն վար նոյնքան յամբարար ինկաւ  
երկաթեայ վարադոյր մը, որ զոցեց ամբողջ թատերաբեմը: Լոյսը կը  
նուազէր: Բարձր դուռ մը բացաւ իր երկու թեւերը՝ դարաստանին  
մէջ: Վայրը տակաւ պարպուեցաւ: Տրդատ շատերուն հետ դէպի  
դուռը կը սպրդէր երազներու մէջ ընկղմածի ձեւով, եւ պարապու-  
թեան ու պարտասուծի ցուաղին զղացումով մը: Իր ետեւէն Ազա-  
թանդեղոս: Տրդատ զրան ետեւ տեսաւ կանանչ զորտաղլուխը: Ամ-  
բոխին մէջ փութաց մտնել: Ազաթանդեղոս զժուարաւ կրնար իրեն  
հասնիլ: Երկար, մութ նրբանցքի մը մէջէն դարձեալ երկաթեայ զրան  
մը մօտ եկաւ: Երկուքն ալ որոշակի ճանչցան մուտքը ուրկէց նա-  
խապէս ներս անցած էին: Բազմութիւնը իրենց ետեւէն կը հրէր զի-  
րենք եւ կ'ընդհարէր: Յաւիտեանական Քաղաքը խորը կը զարէր լիա-  
լուսինին կանաչորակ լոյսին մէջ: Տիրերիս կը փայլատակէր ահա-  
յին արծաթէ օձի մը պէս իր մանուածներուն մէջ: Մեղմ, կակուղ  
հով մը կը փչէր: Նախապարնանային օդ: Յարութիւն: Զատիկ: Շատ  
մը լապտերներ կը չօղային ու դարձեալ աներեւոյթ կ'ըլլային: Ու-  
րիչներ կուզային անոնց տեղ: Շատ շատ հետեւէն կը հնչէին եղջե-  
րափողեր, բոժոժներ, սրինգներ, մարդկային ձայներ, որոնք կ'եր-  
կնէին, կը կանչէին, կը ճչէին: Տրդատ լիաթոք կը շնչէր զիշերային  
կազուրիչ օդը: Բոլոր նուիրեալները կը պահէին իրենց զլիտն վը-

րայ իրենց դիմակները: Տրդատ մուկդին առիւծի մը պէս կը խոյսնար գէպի գորտը: Ազաթանդեղոս ետեւ մնաց: «Ինձի սպասէ պանդոկը», պրտաց Տրդատ ետեւ դառնալով: Գիշերը երթալով սպասեցաւ: Օրն ալ նմանապէս: Բայց Տրդատ չեկաւ: Ազաթանդեղոս կը թափառէր քաղաքին մէջ, դիմակը հանած: Ահագին կեանք մը կը տիրապետէր: Գարնանային սկիզբ, մահը եւ յարութիւնը Ատոիս եւ Ոսիրիս աստուածներուն տօնուեցաւ: Ամէն տեսակ կենդանական կերպարանքներով, դիմակներով, քուրմերով, ջահակիրներով, հանդիսատեսներով, երաժիշտներով, լուրջ պաղարիւն, զինով մարդոցմով կը վխտային փողոցները: Յերեկուան պէս լուսաւոր Մարտի գիշերը, Տիրերիսի երկայնքը կը խայտայ Իսիս մաղերը քակած, եւ սաստիկ կանչիւններով եւ արդանդախեղջ պողտուքներով կը փնտռէ ու կը փնտռէ ամուսինը Ոսիրիս, որուն կտոր կտոր եղած մարմինին մասերը շար աստուած Սէթ սահած է սաղին անդին, անտառին, դետին, փապարներուն եւ ժայռերուն մէջ: Իր ետեւէն կը վազէ խելայեղ մարդկութիւնը եւ կ'ողբայ կ'ոտնայ, եւ կը սուչէ եւ կ'ածէ յուսահատ եղանակներ: Ամէն ոք կը պոտայ գէպի կեանք եւ յարութիւն, գէպի թողութիւն եւ փրկութիւն: Եւ ժամերով: Ամբողջ օրը: Մինչեւ որ պտուեցան Ոսիրիսի բոլոր մասերը եւ ցնորեցնող ահաւոր ժխորի մը մէջ զզլիւի խրախճանքներով տօնախմբուեցաւ Ոսիրիսի վերկենցաղումն ու յարութիւնը: Ու աստուածային ամուր, Իսիս եւ Ոսիրիս, առիւծադիմակ մարդոցմէ քաշուած կառքով չըջնար կ'ընէր Հոռմի փողոցներէն գէպի Իսիսի մեհեանը, անոնց խորհրդատօնին եւ պատարազին, մինչեւ որ մարդկեղէն բնութիւնը այլեւս չի կրնար տոկալ հսկայական հանդիսաւորութեան, մինչեւ որ մարմնական եւ հոգեկան ոյժը խորտակուի եւ ամէն ոք քաշուի ու ծածկուի, ամբողջ օր մը հանդստանալու եւ ըմբռնելու փրկութեան ծանր արցասիքը: Այսպէս Իսիս ինք ալ կը հանդէի Տիրերիսի վրայ մեհեանին մէջ իր քրմական բնակութեան իշխանապայել շուքով: Տարուէ տարի բարձրաստիճան այցելուներ կ'ունենայ, անոնք որոնց ինք աստուածութիւն փոխանցած է իրրեւ կեանքի ամենարարձր ոյժ եւ ուրախութիւն: Օրերով եւ գիշերներով իրեն կ'այցելէ հիմա Հայաստանի պահածառանդը: Բայց ինչ ալ Տրդատ բռէ, աղաչէ, խոստանայ, սպառնայ, Իսիս իր գաղտնիքը դուրս չի հաներ: Տրդատ հիմա մէկ բան միայն գիտէ. — այս կնոջ ու իր եւ Ազաթանդեղոսի ճակատագրին միջեւ գաղտնի առընչութիւն մը կայ: Երկուքն ալ, Իսիս եւ Ազաթանդեղոս, կ'ուզեն ծառայել իրեն, երկուքն ալ կը ստուապին օտարին ճակատագրով: Երկուքն ալ կ'ուզեն օտարին յանցանքը քաւել եւ փոխանորդարար վշտակրիլ: Ազաթանդեղոս կը վշտակրի, Իսիս ալ աւելի, եւ Տրդատ կը դրայ միայն, թէ անոնք երկուքը որեւէ ձեւով իր սիրոյն

համար կ'ուզեն վշտակրիլ: Երկուքն ալ կ'ուզեն Բարին, Մաքուրը, Լուսաւորը, Աստուածայինը, բայց ինչ տարբեր ճամբաներով: Ահա կը խօսին Իսիս եւ Տրդատ, վճիտ կապոյտ սնուակ բաղձոցներու վերայ բնկողմանած, կը խօսին խորհրդատօներուն վրայ: Ազաթանդեղոսի կ'իմացնեն եւ կուզայ: Այս երեք խորհրդատու մարդոց ժամերով տեսակցութեան պտուղն է. այն թէ Իսիս, Ազաթանդեղոսի եւ անոր խօսքերուն տպաւորութենէն ընկճուած, կը նուազի, երեսը ձեռքերուն մէջ կը ծածկէ եւ իր ամբողջ մարմինը կը ցնցուի ջգախեղջ: Ազաթանդեղոս կնոջական պատիւի մասին խօսած էր: Իսիսի ճամբան խոտորանկ է: Ան մարդարէի աշխարհի նայած էր քրմուհիին կեանքին եւ հոգիին մէջ: Իր ճակատագիրը ալ աւելի ահաւոր պիտի բլլար — սխալ ճամբայ սխալ խիղճով — բայց Ազաթանդեղոս ճիշտ առնելն տեսաւ թէ այս սիրտը մաքուր էր իր բոլոր արտաքին անմաքութեան մէջ: Տրդատ չի կրնար ներել: Իսիս կը հառաչէ եւ կը գոչէ. «Իշխան Տրդատէս, մի լքեր դիս: Թող որ ես միայն ծառայեմ քեզի: Թո՛ղ որ ետեւէդ դամ քու թագաւորութեանդ մէջ: Պէտք է ես քեզի ծառայեմ միայն»: Այս «պէտք է»ն կ'արտասանէր իր բոլոր ուժէն ալ աւելի: Այդ միջոցին շունի մը պէս կը պառկէր Տրդատին ոտքերուն առջեւ, արտասուաթոր երեսը Տրդատին ոտքերուն վրայ կը գնէր եւ կը ծածկէր ամէն ինչ, Տրդատին երեսը, գլուխը, ձեռքերը եւ ոտքերը իր աղուոր շէկ մաղերով: Ի վերջոյ Տրդատին աջ ոտքը առաւ եւ իր ծոծրակին վրայ դրաւ: Տրդատ, կարծես կախարդուած ու գրաւուած, կը թողուր որ ընէ: Յետոյ խոստացաւ անոր՝ կանչել զինքը երբ Հայաստանի թագաւոր բլլար: Անահիտի լիճին քով պիտի մխիթարուի ան: Ազաթանդեղոս երկար առնել ի վեր դուրս փողոցն էր: Նախադրացումը սաստիկ ուժով վրան եկած էր: Երկու գաղտնիքներ իրրեւ միջնորմ էին հիմա երկու բարեկամներուն միջեւ: Ազաթանդեղոսին սեփական կրօնքը եւ Իսիսին գաղտնիքը, որ Ազաթանդեղոսին պէս կ'ուզէ վշտակրիլ ուրիշին յանցանքին համար:

## «ՄԵՐ ԿԱՅՍՐԸ — ՄԵՐ ԱՍՏՈՒԱԾԸ»

Սուրբիոյ մէջ Անտիոք լուսաղարդուած էր: Որոնդէս կը ցոլացնէ սեւաշող ծածանումներով տօնի համար պճնաղարդուած քաղաքին լապտերները: Ժողովուրդը կը ծփայ փողոցներուն եւ հրապարակներուն վրայ: Ոչ մէկ մարդ կը քնանայ: Ամէնքն ալ կը սպասեն ձիարձակարանին բացումին: Անտիոքեան խաղերը ահային չքեղութեամբ պէտք է տօնուին: Նոյն ինքն ինքնակալ Դիոկղետիանոս երեցած է անձամբ, եւ պիտի ընդունի իրբեւ «Արամազդ» ամէնիշխանի դիրքը: Հոն բաց երկինքին տակ անձածկոյթ կնիւններու բանակետղին մէջ կը պտնուի ասպարէզներու, ձի ընթացքի յատուկ մարզարաններու կեդրոնը, քաղաքին ելքի մեծ դրան եւ ընթացարաններուն ծայրը երեք կոթողներու միջեւ, ուր մրցորդները վերադարձի միջոցին վտանգաւոր շրջանը կ'ընեն: Տօնի միջոցին ամէնիշխանը պէտք չէ որեւէ տուն մտնէ: Պէտք է ընակի բացօթեայ: Ոչ մէկ մարդու հետ պէտք է խօսի: Գրապիրտ եւ արձակարանին տեսուչը միայն իրեն մօտ պէտք է դտնուին: Եւ անոնց միջեւ ալ որեւէ խօսք պիտի չփոխանակուի: Ինքնակալը այս մասին բացատուութիւն մը միայն թոյլ տուաւ ինք իրեն: Տրդատէս, որ Հռոմէն հոս իրեն ընկերացած էր, եւ հիւանդ ինկած ինքնակալին օժանդակած էր այնքան սիրով երկար ճամբորդութեան միջոցին, զիշերը պիտի անցընէր անոր հետ, ինչ որ Տրդատին ալ անհաճոյ չէր: Ան մոռցած էր իր հոգեկան յուզումը, զոր իր բոլոր կամքին ուժովը չէր կարողացած մեղմացնել: Բոլոր նշանները բարի էին իրեն համար: Ամէն ինչ որ ողիմպական մրցորդէ մը կը պահանջուի իրբեւ մարզանք, իրբեւ ժուժկալութիւն, մարմնական եւ հոգեկան նախապատրաստութեան համար, պակաս չէր: Աստ-

ուածները հաշուած էին: Ո՛չ մէկ պատարազ չէր մոռցուած: Մի՛հրը իր աստուածն էր եւ բարեկամը: Սուրբ կրակը կը վառէր Գափնիի պուրակին մէջ: Իր բարեկամը չէր ձգեր որ կրակը մարի: Ինք Տրդատ ալ անպաղար կ'ազօթէ հաղարակներն Մի՛հրի, որուն աստեղագարդ վերարկուն անոնց վերեւ կը պսպրայ: Բացառիկ փայլով մը կը շողայ Տիտերա աստղը: Տրդատ ինքնակալին մօտ կ'անցրնէ զիշերը: Երկուքն ալ տաքուի վերարկուներու մէջ ծածկուած: Քուեն չկար անոնց աչքերուն մէջ: Իրարու հետ կը խօսին հօտիւնի ձեւով: Ահաւոր խորհրդատուներն մէջ իր ապրումներն ու քաջածները պէտք չէ բնագան Տրդատի շրթունքին վրայ: Մի՛հրի ոչ մէկ նորբնծայ պէտք չէ խօսի այդ մասին: Ապա թէ ոչ կը փճանար Տրդատին յաղթութիւնը: Անոնք կը խօսին հոռոմէական կայսրութեան ապագային վրայ: Ինքնակալը անոր անկումը կը գուշակէ: Ո՞վ կրնայ ըլլալ յանցաւորը: Ինքը միթէ ամէն բան փորձած եւ աշխատած չէ՞ անկումը արդիւրու համար: Ամէն բան չէ՞ գոհած ինքը, զրամ, ժամանակ, ոյժ: Կին եւ սղջիկ, որ հիմա իր քօլէն ալ փախած են: Եւ աստուածները զիտեն թէ ո՞ւր ժամանակ կ'անցրնէին: Բայց Ինքնակալը չուզեր փնտռել զանոնք, ոչ ալ բռնի ետ բերել, քանի որ լքեցին զինքը առանց հրաժեշտի, զինքը ձերբութեան մէջ, հիւանդ, խեղճ: — Ու երկար տակն լռեց Ինքնակալը: Օ՛ր, սա պինդ լուրս քրիստոնեաները ինչեր պատրաստեցին իր զփրախտութեան համար: Ինք անձամբ փորձառու է հիմա: Մինչեւ իր պայտախն մէջ, մինչեւ իր աժուստութեան միջոցին փորձառու էր այդ մասին: Եւ — տպահարաւոր, քանի մը շարաթ առաջ նիկոմիդիոս իր պայտախն հրդեհն ալ անոնց գործն է: Այլապէս ո՞վ: Անշուշտ շար ուժերու հետ կապակցութեան մէջ են: «Աղօթեցին իրենց Աստուծոյն որ զիս հիւանդացնէ: Կայծակը տունիս վրայ իջեցուցին ոչինքուն կանչելով: Անոնք — օ, արդարեւ, Տրդատ, միայն անոնք այսօր ամէն կողմ զիս պիտի շարաշտեն իրրեւ Արամազդ եւ պիտի շանուանեն զիս Տէր եւ պիտի շորհեն արձանիս»: «Քրիստոնեաները քու եւ իմ թշնամիներն են, Ինքնակալ: Հայրս անոնց ձեռքով մեռաւ: Կեանքս փտանդի մէջ է անոնց ձեռքով, Ինքնակալ: Սակայն ինչպէ՞ս կրնաս դուն քրիստոնեաներուն յանձնել քու մարմինդ արթուն եւ քնացած վիճակիդ մէջ, եւ հանդուրժել քրիստոնեայ սենեկապետներու եւ պահակներու»: Ինքնակալը կամաց մը փսփսաց. «Չես զիտեր, որքան հաւատարիմ են»: — «Հաւատարիմ: Դանակով եւ թոյնով»: — «Ոչ այդպէս»: — «պիտի հասկնաս, Տէր»: — «Այդպէս մի բեր ինձ ի», շնչեց Ինքնակալը: «Ինչո՞ւ չէ»: — «Ես չեմ խորթիւր ամենարարժեքեալ Աստուած խաղալ: Ժողովուրդը կը հաւատայ հիմա որ ես մարդացեալ Աստուածութիւն եմ: Ախ, Տրդատ, — դուն կը հաւատա՞ս այս բանին»: — «Ոչ դուն անձամբ

Աստուած եւ, Ինքնակալ: Այլ քու կայսերական աստիճանդ, որ կայ քու մէջ, փրկութեան սեւինը, Հալարէնոն»: — «Արդ այսօր իսկ, Տրդատէս, այս հաւատքը, յետոյ» — բարձր, խորունկ հառաչանք մը փրթաւ կայսեր կուրծքէն: Գիշերային անուշակ քամին տաւ տաւ հառաչանքը, որ այնքան ծանրօրէն թնդաց ձիարձակարանին ընդարձակ եւ անմարդարնակ նստարաններուն շարքերուն մէջ, որոնք կը բարձրանային ահային սեւ լեռնապատներու պէս ասպարէզին աջ ու ձախ կողմը:

Կայսրը կը քնանար: Տրդատ քիչ տակն մըն ալ զիտեց անոր անհանդիստ զիմայիճերը, յետոյ զինք ալ ընկճեց քունը: Քիչ մը հետուն կը քնանար զրազիրը: Արձակարանին պետը միայն կը հսկէր: Տաներկու տարեկան տղայ մը պէտք էր ըլլար, որուն հայրն ու մայրը զեռ սղջ էին: Ոսկի դմելիով մը ձիթենիէն ճիւղեր կտրել իրրեւ պսակ յաղթութեան, այս էր այդ տղուն գործը: Ան միայն չէր քնանար: Հանդէսին աթիլ իրեն վիճակած զերը շատ մեծ չէր իր մանկական անձին համար: Բայց այս չէ միայն: Հոն, անոր մէջ էր Ինքնակալը: Մարմնացեալ Աստուածը: Տէրը: Ուստի անոր մօտ պէտք էր գտնուեր: Միշտ անոր շուրջ ըլլալ: Շատ մտերիմ էր: քանի քանի անգամ ան կայսեր մատանիներով ծանրացած ձեռքը կը տանէր իր ծիփփուն մաշերուն եւ զէմքին վրայ, որ շոյէ: Բայց Կայսր — Աստուածը երջանիկ չէր երեւնար: Շատ տխուր, յաճախ վախկոտ: Եւ միշտ ահա քունին մէջ, կը նայի շուրջը եւ ետեւը, — ճիշտ այնպէս, որպէս թէ մէկը իր ետեւէն ինկած է: Ոչ ոք ողորմելի Ինքնակալ: Բայց երբ Աստուած մըն է, երբ Արամազդ է: Այն ատեն ի՞նչ վախ կրնայ ունենալ: Պէտք է անշուշտ զիտնայ իր զլխուն զալիք որեւէ ցաւը: Ինչո՞ւ այնքան խորունկ հառաչեց — Ահա դարձեալ հառաչեց — Աս է Տէրը, Ինքնակալը: «Ու-այ-ու-ու-ու-ու-ու», կը հեծէր Ինքնակալը նորէն: Քնացողներէն ոչ մին կ'արթննար: Հաղարածայն մարդկային ամբոխին ժխորը, որ հեղհեղ կը հաւաքուէր ձիարձակարանին առջեւ, կուլ կուտար բնականաբար զէջ երազ մը տառապող զիցատիկ կայսեր մը հառաչանքի ահաւոր ձայնը: Տղան կը դողար բոլոր անգամներովը: «Երազ կը տեսնէ: Անշուշտ քրիստոնեաներուն վրայ»: — Որոշ կանչ մը. «տղայ», թափանցեց իր ականջին: Ճատկեց: Վերարկուով ու զլխանոցով քողարկուած պղտիկ կերպարանքը կանգնած էր Ինքնակալին առջեւ: Գլխանոցը փրցուց հանեց զլուխէն, ծունկի եկաւ, մաղերը ծուփ ի ծուփ կախուած ճակատը դրաւ պող հողին վրայ վեհապետին առջեւ եւ դողդոջուն ձայնով ու հինինացող շունչով բաւ. «Ինքնակալ-Աստուած մեր»: Ինքնակալը, կարծես երազի մէջ, թաց ձեռքերովը բռնեց տղուն ձեռքերը եւ անոր ոսկի դօտին: Տղեկը կը դողար բոլոր մարմինովը, բարտի տերեւի

մը պէս: Ինքնակալը, միշտ կէս ջուրնի մէջ, ածապարանքով տղուն  
զօտիկն դուրս կը քաշէր սակի գմելին եւ կը փսփար, քնաթաթախ,  
բայց հանդարտած. «Այսպէս»: Տղան չորս սոքով գետինէն սողաց  
զէպի իր անկողինը եւ անքուն կը սպասէր մեծ օրուան ծագումին:

Երբ մարդկային գանդուածները գլուխ գլխի լեցուցին հրա-  
պարակները, եւ ամբոխին խօսքերուն հետուոր այլե՛ծփու՛մը միայն  
կ'իմացուէր դեռ, ահա մոնչեցին պայրափողերը: Մուտքերուն եր-  
ջերուն առջև պարանները ինկան: Զուտ մետաքսէ սպիտակաթոյր  
պարեգօտով, երկայնքի բոլոր եղբերը եւ ծաղերը սակեցօծուած,  
սպիտակ կիսակօշիկներով, խոյրը ճակատին շուրջ, սակեթել պսակը  
մաղերուն վրայ — այսպէս հետիտան, Արամազդ — Ինքնակալը բազ-  
մամասն սրահին մէջէն, յամբ ու չափուած քայլերով յառաջացաւ  
մտաւ ներս ընթացարանը: Աջ ձեռքը կը կրէր երկար ճերմակ դաւա-  
զանք. քիչ մը հեռուէն իրեն կը հետեւէին զրազիրը եւ սիրուն ման-  
չը: Ինքնակալին առաջին նայուածքէն մինչեւ այն բոլորն ան իր տե-  
սութեան առջև կը պարփակէր ամբողջ միջոցը, միշտ նոյն համա-  
չափ քայլերով, միշտ սուղաճայեաց, զլուխը թեթեւակի առջևօք  
հակած, — սկսաւ կանչը բուն, եւ կ'աւելնար ու կ'ըլլար ծովածը-  
փանք մը մոլեկնածայն. «Ինքնակալ — Արամազդ: Տէրն մեր»: Պառ-  
տառներ կը տատանին, կը ծածանին եւ կը շողան երփներանդ: Վար-  
դեր եւ ամենազգի ծաղիկներ կ'իջնային շեղջ շեղջ Ինքնակալին առջև:  
Մայրսեան արեւուն այգածին շողին մէջ ձիարձակարանին պատերէն  
բարձր մարդարիտի պէս կը փայլին քաղաքին ջրվէժները: Գիւկ-  
ղետիանոս իր ամէնէն փսեմ ժամը կ'ապրէր: Սառուցիկ սարսուռի  
զգացում մը կը սրսփար իրեն մէջ: Բանականութիւն եւ ցնորք դեռ  
պահիկ մը կը պայքարին անոր պայծառ միտքին շուրջ: Լըջութիւնն  
ու խելագարութիւնն ալ անոր հողիին շուրջ: Եւ ահա միտքն ու հո-  
զին կը յափշտակուին ժիւղին: Մէկ անգամ, մէկ անգամ միայն —  
զիտնալ թէ Աստուած մը ինչպէս, ինչ ձեւով, ինչ տրամազրութեամբ  
կրնայ ըլլալ: — Մէկ անգամ Աստուած, Արամազդ — Տէրն մեր ըլլալ:  
Եւ ծովածին կատաղի կոհակներու պէս ահա կը թնդար իր սկանչին.  
«Տէրն մեր: Աստուած մեծ, բարձրեայ»:

Շրջափակը տեղ ձգելու տեղ չկար: Ամէնիշխանը կը բարձրա-  
նայ զէպի ամպհոփանին, հանդիսականներու մէկ կողմին մէջտեղը,  
պատուոյ տեղը ծերակուտականներուն, հիւպատոսներուն, քաղաքին  
եւ կայսրութեան բարձր պաշտօնատարներուն եւ ազնուականներուն  
համար: Ինքնակալը ոչ մէկուն կը բարեւէ, բոլորտիքը չի նայիր ան,  
ինչպէս կը պահանջէ օրէնքին խաղը: Երկար ճերմակ մականը կը  
տարածէ հանդիսական եւ արդարեւ աստուածակերպ դիրքով հորի-  
զոնական ձեւով ձիարձակարանին վերեւ: Գիտէ, կը զգայ — ամենա-

մեծ բողբոջն է այս իր կեանքին մէջ: Իր կապոյտ աչքերը խոնաւցան,  
ազնուական զէմքին զիծերը քաշուեցան, կարծես լալու համար:  
Բարձր, վեհ կերպարանքը ալ աւելի առջևօք կը խոնարհէ: Ալ աւելի  
յուզիչ կ'ազգէ անձայրածիւր խոստամբութիւն վրայ, որ խանդափա-  
տութեան խելայեղութեան մը մէջ, անպալ կանչով ու ճիշտով, ծաղ-  
կրնկեցութեամբ եւ զրօշածուփով կը յեղյեղէ. «Տէրն մեր Ինքնակալ  
Գիւկղետիանոս»:

Մտկանք վեր կ'ըլլէ: Նայուածքները կը թռչտին զէպի Լըքի  
դաւիթը, եւ մտկային խոյանքով կը սրանան արշաւի մրցորդները,  
կարճ, կապոյտ բարդէ վերարկուներ հագած, քովէ քով չորս: Գրա-  
ւազիր հանդիսականներուն մէջ բոլոր սկիւղալութիւնները Տրդատին  
եւ իր հակառակորդներուն վրայ էին:

Կանաչները կը հրահրէին Տրդատը: Կապոյտները՝ անոր սօ-  
սիները:

Միւս երկուքը շատ չանցած ետ մնացին: Տրդատ եւ իր համ-  
հարգը ամբողջ միջոցը, տարածութիւնը վաղեցին ուս ուսի ցկէտ:  
Նպատակին շուրջ բոլոր դառնալու ստեն Տրդատ ետ մնաց: Շշել եւ  
սուրի վերէն կողմնակի խուցերէն քաջալերանքներ Տրդատին համար  
փոփոխակի: Անոր աչքերը պղտորեցան, սիրտը կը նետէր կարծես  
պիտի կենար, եւ սակայն — սահմանէն քանի մը մէթը առաջ կեցուց  
հակառակորդը: Տղան սակի գմելիով Լըքի դրան առջև ձիթէնիկն  
կտրեց ճիւղեր եւ պսակաձեւ դրաւ Կանանչներուն սրտորնոցստ ծա-  
փերուն տակ Տրդատի խոնարհած գլուխին վրայ: Յաջորդեցին միւս  
մրցումները, որոնց միջոցին Տրդատ ինքզինքը օձեց իւզով նախա-  
պատրաստական սրահին մէջ, իր հսկայ անդամները ջրզեղեց եւ  
կարչնեղ ձգտեց երկնցուց: Կը յաջորդէր մենամարտը:

Իր ժամանակի ամէնէն զօրաւոր գօտեմարտիկներէն մին վար-  
ձրած էր Կապոյտներէն: Կանանչներուն յոյսը դարձեալ Տրդատին  
վրայ էր: Հետաքրքրական ձգտում մը բոլոր երեսներու վրայ: Ամէն-  
քին ալ զրաւուած վայրկեաններ տեսող մահաչառու լուսութեան մէջ:  
Յետոյ դարձեալ անմիջական ցոյցեր կատարութեան, պատրանքի,  
նենդ ուրախութեան մը ուրիշներուն կրած վնասին վրայ, մէկ կամ  
միւս մրցորդին դիմանալուն կամ իյնալուն վրայ: — Հանդիսափայ-  
լին մէջ բնաւ այսպիսի յուզում ու զրպում տեսնուած չէր: Նաեւ  
շատ քիչ անգամ արքայազուն իշխան մը մենամարտի մասնակցած  
էր, եւ ոչ բնաւ Տրդատի կերպարանքով եւ ուժով իշխան մը: Կոի-  
ւէն շարաթներ առաջ կուսակցութիւնները դժտած էին իրարու հետ:  
Մրցումները այսքան յուզում պատճառած չէին: Կոուողներէն իւրա-  
քանչիւրը գիտէր, թէ իր կուսակցութեան շատ բան կը պարտի եւ,  
ուստի, հերակլեան աշխատանքի կ'ենթարկուէր: Երբ Տրդատ, աւելի

բան կէս ժամ տեւող դարանակալ, անորոշ ուղորւմներէ եւ քանի մը փոխադարձ ի դերեւ ելած յարձակումներէ վերջ վճռական յարձակումի անցաւ, արդէն իսկ սրտորնդոստ ծափահարութիւններ շահեցաւ, որոնք խելայել պոռչաւ քներու եւ ոտքերու զփրտոցի բարձրացան, էրբ Տրդատ ստրափելի եւ յամար հեծմունքներով իր հակառակորդը երկու թեւերովը կուրծքին վրայէն օդը հանեց եւ կամացուկ մը կոնակին վրայ վար դրաւ: Հակառակորդէն այլեւս որեւէ ընդդիմութիւն չէր յուսացուեր: Անոր բերնէն ու քիթէն սեւ արիւնի հեղեղ մը կը հոսէր: Պարտուած կուսակցութեան հայհուհներուն, սուլումներուն եւ ափիւնին տակ պարտեալը երերալով ճորճորալով զնաց զէպի սահմանակէտը: Տրդատ խլացուցիչ ժխորի մը մէջ, ծաղիկներու եւ պտակներու զէպի մը տակ Դիոկղետիանոսի մանչէն ալ ընդունեց իր երկրորդ պսակը:

Մինչեւ որ մնացեալ մրցումներն ու կէս օրուան մեծ դադարը վերջացան, Տրդատ կը քնանար խիստ յողնած, մեծ սրահին պատրաստութեան սենեակներէն մէկուն մէջ: Երբ վերջապէս արթնցաւ, Դիոկղետիանոս, Մաքսիմիանոս, Գաղերիոս եւ Մաքսիմինոս Դաղա, Ալաթանդեղոս եւ Աթէնքէն շատ մը բարեկամներ իր շուրջ կեցած էին, եւ երկար առենէ ի վեր կը զիտէին անոր կուրծքին սաստիկ կերպով վեր վար ծփալը: Բայց ամէնէն զժուարին եւ վտանգաւոր կոխը կը սպասէր իրեն. — կառարչուի մրցումը, որուն կը մասնակցէին կայսրութեան ամէնէն համբաւուոր ձիավարները եւ ողիմպական խաղերուն մէջ յաճախ յաղթական ելլողները: Ամենաբարձր պատիւներ եւ ամենամեծ շահ կը սպասէին իրեն, եթէ այս անգամ ալ յաղթէր: Տրդատ ելաւ կեցաւ: Ամէն ինչ ինք իր աչքով ու ձեռքովը կը տեսնէր կը հոգար կառքին եւ նժոյցներուն վրայ, եւ չէր մոռնար իր ցլալուխ ձիուն ականջին միշտ ձայնել դարձեալ սա թեւաւոր բառը. «Աքրակադաքրա»: Եւ այս աղաղակին վրայ ամէն անգամ Տրդատ զժուարաւ կրնար գտակ իր ցլալուխը: Երբ սուր նայուածքներովը ամէն բան քննեց փորձեց վերջացուց — մէն մի պահուրց, մէն մի կապ, մէն մի փոկ, մէն մի սասանդակ, մէն մի անիւ, մէն մի շրջանակ — իր նայուածքը ինկաւ հաղիւ յայանի կարմրորակ բիծի մը վրայ: Պահ մը կեցաւ քննեց եւ նոյնիսկ ուղեց Ալաթանդեղոսը կանչել, ցուցնել անոր: Բայց յանկարծ զոտացին շփորները: Նժոյցները կը վռնէին: Ամէնիշխանին մականը բարձրացաւ օդին մէջ, շատ հեռուն տեսանելի: Արշաւը սկսաւ: Չորս լուծք քով քովի կը վազէին: Կուսակցութիւններուն յուզումը վայրկեանէ վայրկեան կ'աճէր: Իրականին մէջ կուսակցական պայքար էր այս, եւ մինչեւ իսկ առիթ կուտար մերթ փոխադարձ հայհուհներու, նախատինքներու եւ հարուածներու: Առ մէն մի շրջան կ'աճի սաստկութիւնը: Կապոյտները

կը զփրզան: Կանանչները կը ցնծան: Շատեր ձեռքերով կը խարազանեն օդին մէջ, ոտքերնին կը վերցնեն կը հակին առաջ, ետ, ձախ, աջ եւ իրենց յուզումէն բնաւ չեն նշմարեր, թէ ինչպէս իրենք ամէնքը Տրդատի շարժումներուն կը հետեւին, որ երբոր անգամ ըլլալով կոթողներուն կը մօտենայ, բոլոր միւսներէն շատ առաջ, միմիայն մրցորդներէն մին երկրորդ ըլլալով անմիջապէս իր ետեւէն կուգայ: Կանանչներուն հետաքրքրութիւնը խելայել յուզումի կը բարձրանայ, երբ Տրդատ ձախ ձեռքի կոթողին շուրջ վտանգաւոր դարձուածքը բրաւ: Բայց իր անմիջական յաջորդը պարտաւորեց զինքը այդ դարձուածքը բնել ամենամեծ յանդգնութեամբ: Եւ ահա — հետունները լսելի ձարձատիւն մը — կատաղի եւ միւսնոյն տակն ցաւալին ճիւղ մը ընթացարանին մէջ, զփրզոց մը, հայհուհներ, հալածում, յարձակում, բայց այս ամէնուն վերեւ ցնծալին, խանդալառ աղաղակներ, ճշմարիտ որոտումի մը նմանող յաղթական ժխորը կապոյտներուն, որոնք իրենց հերոսին վրայ կը նետեն ծաղիկներ, պտակներ, պտուղներ, պաստառներ, այնպէս որ պարտաւորուեցաւ սահմանէն զեռ քանի մը աստիճան հեռու կենալ: Երբ Դիոկղետիանոսի մանչը ձիթեւիին ճիւղերէն կտրեց եւ պսակը յաղթականին ձակատին վրայ դրաւ, ձիարձակարանին յատակը կը թնդար: Յորդահոսան հեղեղի մը պէս հանդիսականները նստարաններէն վար կրկէսին մէջ թափեցան եւ յաղթականին հետեւեցան, որ ահալին վահանի մը վրայ սպաններէն ձեռամբարձ տարուեցաւ:

Տրդատ, քանիցս իր մարմինին փաթթած էր փոկը, փրփրացալա ձիերուն ետեւ սահելով զետին ինկաւ: Քիչ մնաց անկումէն խելքը զլուխէն պիտի կորսնցնէր, բայց կրցաւ պիւրկ քաշուած սանձին վրայ բարձրանալ եւ զերմարդկային ուժով նժոյցները կեցնել, իր բարեկամներուն իրեն օչնութեան հասնիլ կարենալէն առաջ: Աստնցմէ առաջինը, որ ցատկած էր իրեն մօտ, Ալաթանդեղոսն էր: Անիստ երկնցուց ձեռքը եւ տարաւ զայն գաւիթ զէպի ելքը: Միւս բարեկամները նժոյցները հանդարտեցուցին: Տրդատ ուժասպառ ինկաւ չոր խոտի զէպերուն վրայ եւ աչքերը զոցուեցան: Երկար առէ: այնպէս պտոկած մնաց մէկ կողմին վրայ, արմուկին կրթնած: Ամէն հարցում եւ խօսք ի դուր էր: Այնպէս մնաց Տրդատ, մինչեւ որ իջաւ ամբոխին ժխորը եւ ձիարձակարանը պարպուեցաւ: Ալաթանդեղոս միայն մնացած էր իրեն մօտ: Միւս բոլոր ծանօթները խուսափեցան շփոթած, իւրաքանչիւրը զսճ որ շարտաւորուեցան ներկայ ըլլալ Տրդատին կատաղութեան մօտայութեան նուազին: Կանանչները կորսնցուցած էին: Դիոկղետիանոս իր ամպսօլանիով ակնաւոր ձեռալուտականներուն եւ սպաններուն կողմէ ուսամբարձ տարուեցաւ քաղաքին մէջէն անծայր հանդիսական թափօրով: Իրեն քով նստած

էր երջանկաւէտ մանչուկը սակի զմելիւր: Կայսրը յայտնապէս զգացուած էր: Ամէն կողմ ուղղուելով կ'օրհնէր ժողովուրդն ու քաղաքը: Այս շարժումին հանդիսաւորութիւնը ցոյց կուտար, թէ իր զերը հիմա այլեւս անյօժար չէր խաղար: Գիտակից էր թէ հիմա արդարեւ Աստուածութեան յայտնութիւնն էր: Եւ եթէ պահ մը մոռցած էր սա, բայց պարտաւորուեցաւ շուտ յիշել, թէ Արամազդ ինքն իսկ է, որովհետեւ անզապար կը վճար իր ականջին. «Տէրն մեր, Աստուած մեր Աւգոստոս, Ինքնակալ Գիտկեախանոս»: Ուր որ կ'երևար ամպհոփանին, ամէն ոք ծունկի կուզար եւ կ'ընդունէր «մարմնացեալ Աստուած»ին օրհնութիւնը: Այս, երբ արդէն շատնց Ամէնիշխանը կը քնանար իր կնիւնէ անկողինն մէջ, զրապիրն ու Տրդատը իրեն մօտ, մանչն ալ աւելի մօտ — հիմա տակաւին, այս ուշ ժամերուն, ուր այլեւս ոչ ամպհոփանի կար մէջտեղը եւ ոչ աստուածութիւն, ամբոխը իր խանդավառութիւնը կը գոռար, ճրագներով կիսովի լուսազարդուած փողոցներուն, զոխններուն մէջ թափառելով մինչեւ ատուան մթնշաղկը. «Աստուած մեր, Տէր մեր»: Գինով մուրացկաններ, զինով հարուստները կ'ողջագուրէին, զինով բոզեր ալ զինով պարոնները: Ով որ կրնար խնդալ խնդաց, եւ փողոցներուն մէջ, բաց պատուհաններէն դուրս, տանիքներէն վար կը գոռար. «Մեր Տէրը, մեր Աստուածը»:

Մինչ այդ անդին կը ննջէր Տէր Աստուած: Ան չէր մոռցած, պայծառադէմ մանչուն դօտիկն սակի զմելին առնել: «Արամազդ» կը քնանար, եւ իր աջը ամբապէս կը պնդէր սակի զմելին:

Հազիւ օրը կ'այլանար, քնացողները արթնցան ժողովրդային անկարգ իրարանցումի մը վրայ, որ տեղի կ'ունենար ձիարձակարանին մուտքին առջեւ: Ահադին բազմութիւն մը կը թուէր ըլլալ, նայելով այն խառնակ ձայներուն, որոնցմով անզապար Ինքնակալին ու Տրդատին կը կանչէին: Ամէնէն վերջը իրենց սուրբերուն գունդերով երկաթ գրան դարկին սղիմպական խաղերու տեսարաններով: Երբ վերջապէս երեւցան Տրդատ եւ Ինքնակալը, ամբողջ ամբոխը, պահ մը անխօս, ծնրագիր, ճակատնին հողին վրայ դրին եւ ձայնեցին. «Աստուած մեր Ինքնակալ Աւգոստոս»: Գիտկեախանոս հանդիսաւորապէս զգեստաւորուած, անոնց առջեւ, Տրդատ քրթմնջող զէմքով եւ ահուելի նայուածքներով իրեն մօտը: Մերագորոշներուն մէջտեղ ուղղարբձ կեցած էին քանի մը տարիքոտ եւ երիտասարդ մարդիկ, ո՞րանք շքեղ պարեգօտներով, ամենամեծ մասը գերիի կամ բանուորի խեղճ վերարկուներով: Անշարժօրէն հանդարտ կեցած էին: Ոչ ոք կը խորհէր փախչել: Ոչ ոք կապուած էր: Բայց զանազան ուռեցքներ, արիւն քալած աչքեր, կոշկոտ կապած թեւեր ու ձեռքեր ունէին: Գաղերիոսի մայրը Հոռոմուլա դիւահարի պէս ասդին անդին կը ցատկէր.

Կարձեալ միեւնոյն դոյն մատաքսէ վերարկուով եւ գլխանոցով: Նոյն անզապարան կերպարանքը, արիւնոտաւ, խօլ նայուածքը, ճանկուած ձեռքերը, լայն ոտուամները, անկարգ անկանոն ցատկոտութիւնը, այնպէս որ իր հապած վերարկուն հովին մէջ կը խաղայ կը թռչի: — Հոռոմուլա կը թաւալի գետինը Ինքնակալին ոտքերուն առջեւ. «Ողջոյն, ողջոյն Աւգոստոս, ողջոյն Աստուած, Տէր, մենք կը ծնրագրենք — իսկ անոնք հոն կեցեր են. մենք կը պաշտենք — անոնք հոն կը նախատեն քեզ. մենք քու թաղաւորութիւնդ կը շինենք — անոնք զայն կը կործանեն. մենք ոյժեր կը ստեղծենք ծաղիկներէն եւ խոտերէն ու անասուններէն, քու օլուտիդ եւ արեւշատութեանդ համար — անոնք հոն կեցեր զժոխային արուեստներ ի դորձ կը զնեն — Գոխային արուեստներ — քու աստուածային անունդ կը զրեն տախտակներու վրայ եւ կը ծածկեն զանոնք գետինը. այս պատճառաւ հիւանդ ես դուն, աստուածարեալ Աւգոստոս: Այս պատճառաւ կը մեռնիս դուն, Տէրդ աստուած կերպեան»:

«Աստուածութիւն մը ի՞նչպէս կրնայ մեռնիլ», թնդաց սուր ձայն մը զսպուած զայրոյթով ամբոխին մէջէն, որ ոտքի կանգնած էր Գիտկեախանոսի մարդասիրական ձեռքի նշաններուն վրայ: Հոռոմուլա կը շարունակէր որպէս թէ բան մը չէր իմանար: Ամբոխին ձայնը աւելի վայրագօրէն կը մոնչէր. «Պիտի մեռնիս, պիտի մեռնիս դուն, Աւգոստոս — երբ անոնք ապրին դուն պիտի մեռնիս: Անոնք քու մահուանդ համար կ'աղօթեն, Տէր: Կ'աղօթեն որպէսզի վերջը զայ, Տէր: Գիտե՞մ»: Հոռոմուլա դիւահարի պէս կը վազէր կայսեր եւ քրիստոնէաներու միջեւ: Իր նայուածքները միշտ աւելի արագ կ'արձակուէին եւ շատ չանցած Տէրը անոր կախարդանքին տակ գերի եղած էր: Գիտկեախանոսի խաթարուած, պարտասած երեսէն մահասարսուռ երկիւղ մը կը յորդէր: Չայրապին մօտեցաւ քրիստոնէաներուն. «Ինչո՞ւ չէք ծոբեր ձեր ծունկերը իմ առջեւ, ինչպէս բոլոր միւսները»: Քրիստոնէաները ազաղակեցին խմբովին. «Գուն մարդ ես, Ինքնակալ, ո՛չ Աստուած: Մենք Աստուածը կը պաշտենք միայն»: Հոռոմուլա թրթռուն վերարկուով թռաւ դէպի ամէնէն մօտը կեցող քրիստոնէան պատկառելի ձերուսի մը երկայն սպիտակ մօրուքով: Հոռոմուլայի անզգի մազիկները փոս բացին արդէն քրիստոնէային մազին եւ մօրուքին մէջ եւ կը քերթէին, քրիստոնէան ձայն անզամ չէր հաներ կամ մատը անզամ վեր չէր առնէր պաշտպանուելու համար: Հոռոմուլա նորէն ցատկեց կայսեր առջեւ եւ ինկաւ անոր ոտքը. «Մեռցուր զանոնք, մեռցուր զանոնք»: Յետոյ իժի մը պէս թաւալելով ցատկեց Տրդատին առջեւ. «Գիտե՞ս, զիտե՞ս դուն, զեղեցիկ հերոս, աստուածարեալ իշխան, ի՞նչու դուն երէկ կորսնցուցիր»: Տրդատին շուարած նայուածքները բոցափառեցան: «Ի՞նչու համար: Ի՞նչպէս

կրնամ գիտնալ» : Կը խորհրդածէր եւ կը զարմանար, մինչ Հոռոմուլա անոր ետեւէն նենդամիտ ուրախութեամբ մը քիթին կը խնդար : «Դուն չես գիտեր տակաւին : Ի՞նչպէս : Չե՞ս գիտեր բան մը անիւին վրայ կարմիր բիծի մը մասին : Ի՞նչպէս : — Ուայ — Ուայ — Ու — այ : Ուշադրութիւն բրէ, — Հայ թաղաւոր : Հայրդ սպաննուած քրիստոնեաներուն զխառնութեամբ, զաւակն ալ, Աստուած մի արասցէ, պիտի մեռցնեն յոռաջիկային — Ուայ — Ուայ : Ուշադրութիւն» : Տրդատ Հոռոմուլային թեւէն բոնեց, այնքան ուժով որ պոռայ ան, եւ ի զուր փորձեց Տրդատին երկաթեայ կալանքէն ազատուելու : «Սոսկ : Սոստոյանէ : Կարա՞յ : Կարա՞յ : Երդատն զաշոյնը նշան առաւ Հոռոմուլայի կուրծքին : Հոռոմուլա խնդաց պոռայով հանդերձ, բոնեց Տրդատին զաշունդէն ձեւքէն եւ ուզեց զայն զրիստոնեաներուն զէմ : «Ահա անոնք, անոնք ահա», կը պոռար : Տրդատ զայն աւելի ամուր բոնեց : «Ույ, ույ», շնչեց ամենարարձր շեշտերով : «Ահա հոն, ահա հոն», եւ մտանանիչ բրաւ երիտասարդ քրիստոնեայ մը, որ իր ձեռքերէն ու հարուստէն նորադարձ զերի մը բլլալ կը թուէր : Քրիստոնեան, պայծառակերպ, կեցած էր անոնց մէջ եւ անշարժ կը գիտէր զէպի վճիտ երկինքը : Հոռոմուլա նետի արադութեամբ յարձակեցաւ անոր վրայ, եւ անոր միտերը կը փետէր լորձունքոտ կատաղութեամբ Տրդատին առջև : «Դուն, խոստովանէ, ի՞նչ բրիր» : — «Ես երգուրնցուցի քու անիւզ Յիսուս Քրիստոսի անունով եւ Տիրոջ արիւնը թափեցի վրան» : — «Դուն խնթ ես, ո՞ր բոլոր սատանաներէն զիւսհար», պոռաց Տրդատ : «Ի՞նչ արիւնով : Ո՞ր Տիրոջ» : — «Հաղորդութեան նուիրեալ զինիով, որ իր քուրմին օրհնութեամբն ու ազօթքովը կը փոխարկուի Տէր Յիսուս Քրիստոսի սուրբ արիւնին» : — «Եյդ արիւնին մէջ կախարդական ո՞ւժ կը գտնուի» : — «Մեծ ուժ, ի խան» : «Կր ստէ, ո՞վ իշխան», ձայնեցին քրիստոնեաները իրար անցած : «Մենք զայն չենք ձանշնար : Ան քրիստոնեայ չէ, որովհետեւ կը ստէ : Տիրոջը արիւնը մեղքերէն միայն կը սրբէ եւ մեղ կը փրկէ Աստուծոյ բարկութենէն : Ան ոչ կախարդանք ունի, ոչ չարիք» : Ապա թանկեղոս Տրդատին եւ Կայսեր մօտենալով, բոլոր ժողովուրդին առջև բարձրաձայն բաւ Հոռոմուլային : «Դուն այդ մարդը սուտ վրկայութեան յորդորեցիր : Դուն սուտ խօսեցար կայսեր : Կամբաստանեմ քեզ, եւ այս ամէնուն համար փաստ ու ապացոյց կը բերեմ կայսեր եւ դատաստանին առջև : Ինքնակալը արդարադատութիւն կուզէ, ես գիտեմ» : — «Արդարադատութիւն», ազազակեց կայսրը «Դատարանին առջև եկէք, երբ տօնը վերջանայ» : Եւ ահա ընդհանուր իրարանցում : Հեթանոսները կը պոռային, կարծես ի նշան հաւանութեան : «Ի՞նչ արդարադատութիւն : Ա՞յս շուներուն համար : Քեզ նախատողներուն համար : Անկցին» : Սուրբը զուրս քաշուեցան

դօտիներէն : Տէպեր եւ նիզակներ փայլատակեցին : Կոռուփներ զնդացան անպաշտպան զրիստոնեաներու զլուխներուն վերեւ : Ապաթանգեղոս իր բոլոր ուժովը կը պոռար : «Արդարութիւն : Դատաստանին առջև : Արդիւրեցէք» : Ինքնակալը տկար ձայնով մը : «Հանդիսա : Լոռութիւն» : Տրդատ կեցած էր վարանտ, եւ աչքերը խոշոր բացած կը նայէր, իրբեւ անդիտակից, մարդակոյտին : Արդեօք իրա՞ւ էր որ ինք իր ձախողուածը կը պարտի Քրիստոսի արիւնին կախարդանքին եւ, եթէ այդպէս է, պէտք է ամէնքն ալ մեռնին : Յնօրք է արդեօք : — Անոնց ամբողջ հաւատքը ցնորք է, եւ բոլոր քրիստոնեաները պէտք է Ահրիման անուանել : Այսպէս կը մտածէր Տրդատ եւ կը սպասէր, մինչեւ որ մարդակոյտէն զուրս լսեց Ապաթանգեղոսի ձայնը, որ միշտ տակաւին, բայց յուսահատական կերպով կը ձայնէր ոչ այնքան բարձր : «Արդարադատութիւն» : Ահա Տրդատ վազեց մտախուռնամբօխին մէջ : Առջև գտնուողները ձախ ու աջ թոսն, եւ Հոռոմուլա եւս ինկաւ քանի մը ինկողներու վրայ : Տրդատի տեղ տրուեցաւ առանց դիմակալութեան, եւ Ապաթանգեղոս սկիթուած, արիւնլուայ դէմքով Տրդատին հետ քաշուեցաւ բազմութեան մէջէն : Բայց հեթանոսները հիմա, անոնց կոնակէն, կատաղի Հոռոմուլային զրգուած, քրիստոնեաներու վրայ ինկան, որոնք արդէն իսկ գրեթէ անկենդան, միշտ ստուարացող բազմութեան ձեռքով քշուեցան մօտակայ կամուրջը, եւ հայհուհներու, հեղանքներու եւ ծիծաղներու տարափին տակ իրարու ետեւէ Որոնդէս զետր նետուեցան : Հոռոմուլա զիւսհարի մը պէս կը պարէր կամուրջին վրայ սողին անդին, վեր վեր նետելով փայտի պէս շոր երկար թեւերը, ինքզինքը կը ձանկրտէր, զետին վանդակապատին կրթնած եւ զժրախտ քրիստոնեաներու հասցէին կ'արձակէր անէմքներ, արհամարհանքներ, մինչեւ որ խեղդուողներէն վերջինին զլուխը անյայտ եղաւ կանանց ալիքներուն մէջ : Մինչ զինովցած Անտիօք դեռ ամբողջ օրը կը տօնէր Ինքնակալին Աստուածութիւնը, ինք Դիոկղետիանոս իր հետեւորդներով վերադարձաւ Նիկիոսիցա :

\*  
\*\*

Տրդատ եւ Ապաթանգեղոս քանի մը օր վերջ կրկին Աթէնք էին, եւ քիչ առեւնէն ամբողջ քաղաքը համոզուած էր, թէ հրաշալի բան մը պատահած էր Տրդատի միջոցաւ : «Ընդ միշտ նորածին» է ան : Միհրի մէկ հաւատացեալը : Նաեւ Ապաթանգեղոս : Եւ ամէն ժամանակ աւելի սկսաւ մեծ հետաքրքրութիւն մը Միհրի պաշտամունքին շուրջ : Բայց ուղղակի ոչ ոք բան մը կ'իմանար այդ երկու նոր նուիրակներէն : Կր պահէին ահաւոր երզումը եւ միմիայն իրենց միջև կը խօ-



սէին այն մասին, երբ բոլորովին մինակ կ'ըլլային: Արսինէ եւ Սոս-  
րովիզուխտ, Պաւղա, Յուզիթ, Ասէրի այրին որ հիմա քրիստոնեայ  
եղած էր, Լիկինիա, ամէնքն ալ քրիստոնեայ դարձած, ասոնք միայն  
որեւէ պատրանք չունէին եղածներուն վրայ: Վստահ էին թէ Միհրա-  
կանութեան նման կարկտան, թէեւ բարեմիտ, կրօնք մը արդարեւ չի  
կրնար փրկագործել: Ո՛վ որ պարտաւոր է ինքն իսկ ստեղծել իր  
Աստուածը, անոր մէջ կը զանէ ինչ որ կայ բուն իսկ մարդուն մէջ --  
իր բաղձանքները, իր կամքը, իր տկարութիւնը, իր մեղքերը: Եւ  
սակայն, ինչ տեսակ մարդ էր Աղաթանդեղոս: Ի՞նչու զինքը այնքան  
կը ս'ընէին ա՛յսօր չազաբէն յընտանեաները: Եսկանստար զինքը  
միշտ քրիստոնեաներուն Աղաթանդեղոսը կ'անուանէր եւ յաճախ կը  
միտիթարէր Սոսրովիզուխտ, թէ վստահ էլ իր որ Աղաթանդեղոս պի-  
տի ուղղէ քու եղբայրդ: Ինչ խուժում դարձեալ միշտ իր բանախո-  
սութիւնները լսելու համար: Ամէն մարդ ոտքի վրայ կը մնար, ամէն  
մարդ աչքը անոր տնկած էր, երբ երկու բարեկամները թեւ թեւի  
քաղաքին մէջէն կ'անցնէին: Ճշմարիտ արթնութիւն մը կը թափան-  
ցէր քաղաքացիներուն մէջ: Շատերը կը յիշէին Մովսէսը եւ անոր  
գործունէութեան սկզբնաւորութիւնը: Բայց Աղաթանդեղոսին համար  
նման վերջաւորութիւն մը ո՛չ մէկուն միտքէն կ'անցնէր: Սոսրահելու  
այս շարժումին վախճանը անակնկալ կերպով շուտ եկաւ: Նիկոմի-  
դիայէն նամակ մը — եւ Տրդատ կը խայտար, տունին մէջ ցատկելով  
ուրախութենէն. «Սոսրովիզուխտ, իշխան Լիկինիոս, Լիկինիա — ես  
թաղաւոր եղայ»: Կողջապետէր զամէնքը: Երկար ատեն, երեսը Լի-  
կինիոս իշխանին ուսին վրայ ծածկած, կը մնար անոր վիզին փաթ-  
թրւած: Իշխանը իր կարգին, թեւ Տրդատին կռնակին անցուցած,  
զողողուն բերանով կը նայէր անոր: Աչքերը թաց: Լիկինիա կ'ար-  
տասուէր: Սոսրովիզուխտ եւ Արսինէ շուտաւ կեցած էին: Արսինէի  
աչքերը վախկոտ ձեւով մը, կարծես օգնութիւն կը փնտռէին: Ամէնքն  
ալ կը կարգային Դիոկղետիանոսի պատգամագրով եւ ստորագրու-  
թեամբ կնքուած մաղաղաթը, որով Տրդատ Հայաստանի թաղաւոր  
կ'անուանուի հոռմէական կայսեր զերիշխանութեան տակ: Տրդատ  
առաւ մաղաղաթը եւ փութաց Աղաթանդեղոսի մօտ: Դիւրագոյացու-  
թիւն մը եկաւ վրան, որովհետեւ բարեկամը յայտնի ստակում մը ու-  
նեցաւ եւ նոյնիսկ իր դիմադիծերը ցոյց կուտային վախ մը: Լուս կե-  
ցած էր եւ զուրսը գարունը կը դիտէր: «Ուրե՞մն, Աղաթանդեղոս,  
իմ երջանկութեանս հանդէպ այսքան պաղ ու տխուր բնուենելութի՞ւն  
մը», ըսաւ Տրդատ զուսպ բարկութեամբ մը: «Ներողութիւն, յան-  
կարծակիի բերաւ զիս: Ուրախ եմ քեզի համար»: — «Ինձի՞ համար:  
Ի՞նչու նաեւ ոչ քեզի համար, սիրելի բարեկամ, երիտասարդութեանս  
ազատարար, հրեշտակ, որ զիս խաւարէ լոյսի բերաւ, դուն քրմապետ

պիտի ըլլաս, պիտի վարդապետես, պատարադես, օրհնես, ժողո-  
վուրդը ազատութեան եւ լոյսի պիտի բերես: Եկուր, հետեւէ ինձի  
ուրախութեամբ գէպի իմ թաղաւորութիւնս: Իմ թաղաւորութիւնս  
եւ Միհրը մեզի Աստուած եւ Արեւ պիտի ըլլան: Ամէն ինչ, ամէն ինչ  
պիտի հասուցանեմ քեզի: Անշուշտ դժուար է քեզի համար բաժնուիլ  
ասկէց: Կ'ըմբռնեմ շատ լաւ: Այսքան յաջողութենէն եւ համակրու-  
թենէ վերջ: Կամ արդեօք կը փափաքի՞ս վերադառնալ քու կիներուդ  
մօտ Կապադովկիա»: Աղաթանդեղոս ձեռքովը հերքեց եւ հիմա աւելի  
վարանոտ երեւոյթ մը ունեցաւ: «Երկուքս միասին կ'երթանք, դուն  
կը ցուցնես ինձի քու հայրենիքը եւ քու կիներդ հրաժեշտ կ'առնես»: —  
«Մի՛ հայրենիքս քուին է, քուկը իմս», յարեց Աղաթանդեղոս, ա-  
ւելի բուն հերքելով: «Ի՞նչ պիտի ըլլայ այս Աղաթանդեղոս: Չեմ  
հասկնար միտքդ: Քու հայրենիքդ ի՞մա է: Ուրեմն դուն ալ արդեօք  
Հայաստանէն ես: Ա՞յս է քու գաղտնիքդ: Արդեօք Հայաստանէն Կա-  
պադովկիա՞ գաղթած էք»: — «Թող որ ետեւէդ գամ, Տրդատ: Թո-  
ղուր ինձի իմ գաղտնիքս, եւ թող որ ես քու ծառայ ըլլամ»: — «Դուն  
իմ բարեկամս կը մնաս, ինչ գաղտնիք ալ ունեցած ըլլաս: Ոչինչ պի-  
տի անջատէ մեզ իրարմէ»: — «Ոչի՞նչ», յարեց Աղաթանդեղոս հար-  
ցական շեշտով, եւ երկար արտասանուած: Տրդատ հարցումը չէր  
լսած, այլ հաստատական մը միայն, եւ արդէն դուրս ելած էր, երբ  
Աղաթանդեղոս իր բազմոցին առջեւ ինկաւ նուազած, երեսը թաղած  
բազմոցին մէջ եւ երկու ձեռքերովը զուլսը կը ծածկէր, որպէս թէ  
պարտաւորուած ըլլար ինքզինքը պաշտպանել վերահաս դժբախտու-  
թեան առջեւ:

Տրդատ բարեկամէ բարեկամ կը վազէր: Ապեղէս, Վիզիլիոս  
եւ ուրիշ արուեստագէտներ ուրախութեամբ հաստատ կը մնային ի-  
րենց հին խոստումին մէջ — Հայաստանի մէջ պալատ շինել Տրդատին  
եւ ներսէն ու դուրսէն պարզարեւ զայն իրենց արուեստին գործերով:  
Տրդատ շխարհացաւ երթալ բժիշկ Վալերիոսին: Ճշտիւ պիտէր որ  
Սոսրովիզուխտին բաժանումը Վալերիոսի գժրախտութիւն պիտի բը-  
լար: Շատ շանցած Աթէնք քաղաքը զիտցաւ արքայորդիներուն մօտա-  
լուս համբարդութիւնը: Ամէն ոք կը հետաքրքրուէր Տրդատի համար  
խառն զգացումներով: Սոսրովիզուխտին համար բնականուր ցաւով:  
Օրէ որ հրաժեշտի այցելութիւններ կամ գաղտնի բնուենելութիւններ:  
Շարաթներով նախապատրաստութիւններ, կարգադրութիւն նոյն այն  
նաւուն հետ, որ նաւապետ Յուլիոսի առաջնորդութեամբ, հիմակ ալ  
թաղաւոր Տրդատէսը եւ իր քոյրը Միջերկրական ծովուն վրայէն  
պիտի տանէր գէպի Անտիօք: Տրդատ սարսափելի բարկութիւն զգաց  
իմանալով որ Արսինէ ընտրած է Աթէնք մնալ իրրեւ քրիստոնեայ, եւ  
առ այժմ նոյն Լիկինեան զղեակին մէջ: Սոսրովիզուխտ եւ Արսինէ

իրարմէ հրաժեշտ առին վերը Արսինէի սենեակին մէջ: Հոս կը մնայ Արսինէ, մինչեւ որ ամէն ինչ վերջանայ, եւ Լիկինիա անոր մօտ զնայց զայն մխիթարելու: Յետոյ իշխանն ու իշխանուհին քաջուեցան իրենց սենեակները: Գերիները կարգով շարուած էին: Հուսկ յետին ողջոյններ ձեռամբարձի: Բարձրաձայն լալ: Երկար ատեն կանչել, պտտալ մեկնողներուն ետեւէն եւ փոխադարձաբար: Ժողովրդային արդարեւ խուռն բաղմութիւն մը քաղաքէն մինչեւ Պիրէոն: Աթէնք թեթեւ մշուշի մը մէջ պարուրուած: Անգամ մըն ալ ահա կիսազէժքերով վեր, վեր կը բարձրանան Ակրոպոլիսի աստուածներն ու մեհակները: Աւելի հանդարտ տեղի կ'ունենայ բեռներուն տեղաւորումը նաւուն մէջ եւ յարակից բոլոր դրաղումը: Ամէն ինչ անդորր: Ափունքը լուռ, անխօս, անմոռնչ բաղմութիւն մը: Տրդատ, Խոսրովիդուխտ, Աղաթանգեղոս շատ շատ բարեկամներ շահած են: Ու շատ շատ ապրումներ ունեցան այս քաղաքին մէջ — Տրդատ Լիկինիոս իշխանին կողմէ իրեն բաժանումի նուէր արուած ոսկի խոշոր բաժակէն ծովը թափեց ծիրանափառ զինիի հոսանք մը, սաղաւարտը ձախ ձեռքը բռնած: Ահա կեցեր է հոն, տէգին վրայ կրթնած: Երկար ատեն վերջ տակաւին կը պտտուէր Աթէնքի մէջ, թէ Տրդատ նախ ծովեղերքը լուռ անձայն եւ տժոյնի զէժքով զխտեր է ամբողջ ժողովուրդը, յետոյ խոր ակնարկներ արձակեր է զէպի Լիկինեան զղեակը, ապա զէպի Ակրոպոլիս, բայց ամէնէն աւելի եւ մինչեւ վերջին բոպէն զէպի այն բարձունքը, ուր կանդապուած էր քրիստոնէական եկեղեցին, քովն ալ գերեզմանը, Բրիսանոյշի փոսով:

\*\*

«Կրնայի՞նք մեր խիղճին հակառակ ինքնակալին պատկերին խունկ ծխել, Լալիսկոպոս: Կը ստիպէին մեզ այնպէս ընել: Հատիկ մը աղով կրնայինք ուրանալ մեր հաւատքը: Պիտի պարտաւորուէինք կուռքի զոհի միս ուտել եւ զինի խմել: Մեր հայրը անկարող է, եւ անկարողութեամբ մատնեց մեզ հեթանոսներուն ձեռքը: Աղջիկս, Վալերիա, կրնայ թաղի իր քաջածնները Գաղերիոսի ձեռքէն, եթէ ուզես: Ան ալ բոխանդակ իրաւունքով լքեց իր հայրն ու արքունիքը: Ըրէ հիմա ինչ որ իրտապի կը թուի քեզի, հոս պահէ մեզ կամ հեռացուր, պատրաստ ենք անթի մեռնելու, միայն թէ մեզ նորէն Դիոկղետիանոսին մի գարձներ»: Այսպէս յուրմտով խօսեցաւ Աւկուստոս Պրիսկա, Դիոկղետիանոսի կողակիցը, որ արդարեւ Վալերիայի հետ քանի մը ամիս առաջ Նիկիոմիդիայէն Աթէնք փախած էր: Սկիզբները վերջին ծայր յարապից բնդունելութիւն մը գտան Լիկինեան զղեակին մէջ Լիկինիոսին եւ իր տիկնոջ կողմէ: Բայց յետոյ

իր որդին Լիկինիանոս, երկարատեւ զինուորական արշաւանքէ մը վերադարձած էր: Արսինէ, Մովսէսին փախուստէն ի վեր, ինքզինքը եւ իր մարմինը ապահով շտեմելով Լիկինիանոսի մօտ, Պաւլոսի տունը ապաստանած էր: Կեսարնէրու, այսինքն բուն ինքնակալին մօտ երկրորդական աստիճանի վրայ իշխանակիցներու ապագայ նոր ընտրութեան ատեն երկրորդ ձախողուածի մը վրայ մահուազափ վըշտակրած, Լիկինիանոս հիմակ ալ այն հաւատքը ունէր որ Դիոկղետիանոսի աղջիկը Վալերիա իրբեւ պտտանոյ պահած կ'ըլլայ, անոր միջոցով ինքնակալին վրայ ազդեցութիւն ձեռք բերելու համար: Այս պատճառաւ իր ձեռքը առաջորդիկ ապաստանող Վալերիայի, իրբեւ թէ միայն կայսերապուն աղջկան զժրախտութենէն զղացուած, եւ ջանաց թէ՛ անոր եւ թէ՛ անոր մօրը պարզել ամէն կերպով այս ամուսնութենէն յառաջ զալիք օյուտար իրեն Վալերիայի եւ մօրը Պրիսկայի համար: Սակայն ի դուր: Արդէն իսկ Գաղերիոսէն զղացած սարսափը եւ յետին զժողահանքը այս աղջկան աչքին զուռելի դարձուցած էին ամուսին եւ ամուսնութիւն: Իր մերժումը ա՛յնքան ազդու էր որ Լիկինիանոս օր մը արտօտարով ջրթմնջելով առաւ քալեց տունէն եւ մնաց բանակին մէջ: Պրիսկա եւ Վալերիա, հակառակ իշխանական ամուսին անխախտ եւ անպակաս մնացած բարեկամութեան, թողուցին տունը եւ ՅՈՒ տարւոյն զարնան օր մը Լալիսկոպոսին մօտ գացին խորհուրդ հարցնելու: Որքան որ ծանր էր իրեն համար համուսնութիւն յայտնել երկու բարձրաստիճանի տիկիններուն կայսերական տունէն փախուստին — բայց ի՞նչ կարող էր ընել անոնց խիղճին դէմ, երբ այդ խիղճը կը պարտաւորէր զանոնք, եւ երբ աստուածացած կայսրը չէր իսկ կարող իր կինն ու աղջիկը պաշտպանել հալածիչներէն: Պարզուկ ճաշէ մը վերջ Պաւլոս, Յուդիթ, բոլորովին խորունկ սեւեր մտած, բժիշկ Վալերիոս եւ քրիստոնեայ հասարակութեան երիցազոյնները մէջտեղ կ'ըլլէին, եւ ամէնքն ալ փախստականներու բերնէն լսեցին Նիկիոմիդիոյ մէջ անցած դարձածը:

Քրիստոնեայ զինուորներն ու սպաները որեւէ սպառնալիքով կամ սիրաշահութեամբ չէին հրաւիրուեր զոհելու կամ նոյնիսկ զոհելուն մասնակցելու: Քրիստոնեայ սենեկապետները, Ղուկիանոս, Դորոթէոս, մանաւանդ Լակտանտիոս, որ վերջ ի վերջոյ ամենամեծ ազդեցութիւնը ունէր կայսեր վրայ, համոզած էին ինքնակայր աղաչանքով եւ յորդորներով, այս, մինչեւ իսկ սպառնալով թէ իրեն վրայ կը հրաւիրէ Աստուծոյ բարկութիւնը — որ Դիոկղետիանոսի վարանոտ դարձած հոգիին ազդող ամենամեծ շարժառիթն էր — ինչպէ՛ք քրիստոնեաներուն, քաղցրութեամբ վարուիլ անոնց հետ, բայց միւսնոյն ժամանակ կամ նոյնիսկ միւսնոյն օրը Հոռոմուլա, որուն մէկ ոտքը կայսերական պալատն էր եւ որ Դիոկղետիանոսի շուրջը կը

դառնար, կատաղութենէն կը փրփրէր, և անոր միտքը կը չարչարէր սպառնալիքներով և աւարի աչք անկող անդլի նայուածքներով: Իր ետեւէն կուզային Գաղերիոս «նոյնիմի հուսմուլայի որդին», Տազիս «քրմապետը», Հիերոկլէս, կուսակալը, փիլիսոփաներ, ներքիններ — ամէնքն ալ կը ծնրադրէին Ինքնակալին առջեւ, ամէնքն ալ կը յորջորջէին զայն Աստուածութիւն, Տէր: Ամէն ոք ըստ կարգի և ըստ աստիճանի, կը սպառնայ, կ'աղաչէ, կը շնորհակցի, կը ստէ: 303, Փետրուար 23-ին, հեթանոսներու զլխաւոր տօնին, հալածանքը ծայր տուաւ:

«Այս մասին նախապէս բան մը չիմացա՞ք», հարցուց Աթենակորաս: «Ոչինչ», պատասխանեցին Պրիսկա և Վալերիա, «որքան սիրով և յօժարակամ կանխաւ պիտի իմացնէինք զբիստոնեաներուն»: — «Ի՞նչ պատահեցաւ», ձայնեցին ամէնքը: «Աստուծոն կանուխ, տակաւին մթնշաղին» — պատմեց Պրիսկա — պահակազօրքի պետը ջուր կատ մը զինուորներով եկաւ մեր մեծ, ղեկեցիկ եկեղեցիին առջեւ: Ներս մտան, կողոպտեցին սուրբ զիրքերը և այրեցին զանոնք եկեղեցիի մէջ: Քանի մը ժամէն նոյն ինքն եկեղեցին ծխաշունչ կոյս մըն էր քարերու և աւերակներու»: Քրիստոնեաները կախկոպտին տունին մէջ լուսեթեամբ իմացան այս լուրը:

Վալերիա մօրը բերնէն առաւ խօսքը և ինք պատմեց իր դիտցածը. «Քրիստոնեաները ամէն տունեքէ զուրս կը փախէին: Մեր ննջարանին պատուհանը կեցած էի, և սկիզբէն ախրնատես եղայ զողորով կործանումին: Իմ ետեւ կեցած էին Գաղերիոս և Հոսմուլա և երկուքն ալ կը խնդային զիստամբ այնքան բարձր և զրուսիկ կերպով որ ես կարենամ իմանալ: Կը հայճոյճին Քրիստոսի, և Հոսմուլա կը պարէր իմ անկողնին բոլորաբար, երբ կը տեսնէր բոցերուն բարձրանալը տանիքէն: Եկեղեցիէն ասդին կը լսուէր սաստիկ ազատակներ լեզապատառ մարդոց, կարծես կռիւ կար: Խեղճ, դժբախտ Հոսմուլոս ճիշտ այն միջոցին պատուր է կուսակալին կողմէ տակաւին կանդուն պատին վրայ փակցուած հրովարտակը: Հոսմուլոս, յիմար յանդուզն, ինչպէս միշտ էր, հեղուղ գէմքով մը պատին առջեւ դացեր և պոսացեր կանչէր է, թէ Ինքնակալին ո՞ր նոր յաղթութեան ծանուցումը փակցուած է: Եւ իրաւ ալ այդ հրովարտակը կը ծանուցանէր Սարմատացիներու վրայ յաղթութիւն մը: Հոսմուլոս խսկոյն փրցուցեր և կտոր կտոր բրեր է»: — «Ատիկա ի չարէն է: Յոռի, վատթար արարք մը», վճռեց կախկոպտը կտրուի կերպով: «Բայց, Աթենակորաս», ձայնեց Արսինէ, «Ի՞նչպէս կրնաս այդ վճիռը տալ, բայց փառաւոր ղեկեցիկ, վեհ որո՞ծ մըն էր այն: Ի՞նչ արիւթիւն: Ի՞նչ հաւատարմութիւն»: — Հապճեպ, անխորհուրդ արարք մը», յարեց Աթենակորաս լրջօրէն: Վալերիա վրայ բերաւ:

«Քիտե՞ս, կախկոպտ, ի՞նչ կը պարունակէր այդ հրովարտակը»: — «Ի՞նչ ալ պարունակէր, կայսեր խօսքն էր»: — «Ոչ թէ կայսեր այլ Հոսմուլայի», ձայնեց Վալերիա, ա՛լ աւելի յուզուած, և կախկոպտին խօսքը կարեց: «Հրովարտակը կը հրամայէր. բոլոր քրիստոնէական եկեղեցիները պէտք է խորտակուին, բոլոր սուրբ զիրքերը կրակի արուին: Քրիստոնեաներու արդիւրած է որեւէ հաւաքոյթ: Բոլոր այն սրաշոճատարներն ու երեւելիները որոնք չեն ուրանար քրիստոնէական հաւատքը, պէտք է կորսնցնեն իրենց աստիճանը, զիրքը, գոյքերը, և անպատիւ ու իրաւազուրկ ըլլան: Քրիստոնեայ մնացող քրիստոնեայ ղեկները ազատ պիտի չարձակուին»: Եպիսկոպոսը վեր ցաակեց և զարձայ իր սոփարութեան համաձայն հաճկու քայլերով շփեց սենեակը: «Հոսմուլոսի ի՞նչ եղաւ», հարցուցին շատեր: Վալերիա պատմեց, թէ ինչպէս խսկոյն ձերբակալուեցաւ, զանախոսուեցաւ և չղթաչախաղ կայսեր առջեւ տարուեցաւ: Իր հերոսութիւնը և իր յանդուզն պատասխանները ազահոփարար պիտի մղէին կայսրը ազատ արձակել զայն, բայց Հոսմուլայի աչքերը — «Օ, կախկոպտ, անպատ մը տեսնելու ես այդ աչքերը — կը սարսափի մարդ»: Բայց Հոսմուլոս խնդաց Հոսմուլայի երեսն ի վեր: Ան, ինչպէս միշտ, հաղած էր իր հովիտի մորթը և այդ կաշիին մէջ հակայի պէս կ'երեւնար: Քրիստոնեաները չնորճք ազադակեցին Հոսմուլոսի համար, արդարութիւն: Իսկ զինուորները ու արքունական հեթանոս կուսակցութիւնը կը պոսային. «Անկցին քրիստոնեաները: Քրիստոնեաները տախտակներուն առջեւ»: Տակաւին կայսրը չէր կրցած վճել, և ահա զինուորները, և խուժանը, Հոսմուլա խուժանին զլուխը, բոնեցին Հոսմուլոսը և չարչարելով մեղացուցին: «Ի՞նչ բրին անոր»: «Ի՞նչ որ արդէն բրին շատերուն, կախկոպտ: Լեզուն փրցուցին և կախեցին զայն ձեռնին տակ կիսամեռ բնելէ վերջ»: — «Մնա՞ց անասան»: — «Իր չրթունքէն ձայն մը չեկաւ: Իր աչքերը ազահոփարար երկինքը բաց տեսան»: Ամէնքը այդ պահուն միտք բերին նահատակը լուս հիացումով: Յետոյ կրկնեց Վալերիա կորովի. «Չենք կրնար այլեւս ետ դառնալ, անկարելի»: — «Խեղճ Ինքնակալ», հառաչեց Աթենակորաս զարձեւալ խորապէս: «Այսպէս առանց պատուութեան հեթանոսներուն և մարդասպաններուն ձեռքը ինկած է: Ես զիտեմ, անոր միտքը միւսներէն շատ աւելի բարի է: Բայց զինքը խորոզներուն ծախուած է: Աստուած ողորմի իր հողիին: Քոյզք որ պատմեմ նաեւ ինչ որ այսօր իմացայ Փոքր Ասիայէն փախչող և Աթենքի ճամբով եկող կախկոպտներէն: Արդէն առաջ պայտած է հալածանքը և սարսափելի բաներ կը պատահին: Կայսրը արդարեւ չ'ուզեր այսքան առաջ երթալ, ինչպէս փախստականներն ալ կ'ըսեն: Պէտք է արիւն թափուի — բարի Ինքնակալը,

կուզենք դնել ասոր համար Երախտազէտ ըլլալ իրեն — բայց ասոր վրայ քիչ էաքը Հոռոմուլա, Գաղերիոս եւ պալատակաճները սա՛ հաւատքը զիտցան ներարկել կայսեր, թէ ամբողջ Արեւելք ապստամբութեան մէջ է: Հայաստանի եւ Սուրբոյ մէջ զարձեալ խռովութիւն ծագած է: Բնականաբար ապստամբութիւնները զբողոքը քրիստոնեաներն են: Կարճ ժամանակի մէջ իրարու ետեւէ երկու անգամ հրդեհ ծագեցաւ Նիկիոմիդիոյ պալատին մէջ, արքունի քրիստոնեայ պաշտօնատարները, խոհանոցի ամէնէն սուրակարգ գերիներէն սկսեալ մինչեւ քրիստոնեայ սենեկապետները բարկացող կայսեր առջեւէն քաշուեցան, որուն հաւատացուցած էին թէ քրիստոնեաները կ'ուզէին զինքը թունաւորել: Հիմա այնպէս կ'երեւի որ բոլորովին հեթանոսական կուսակցութեան կը վստահ ժիւղին: Որովհետեւ քրիստոնեայ գերիներն ու պալատական պաշտօնատարները, ամէնքը...

«Ի՞նչ: Սպաննուած: Մեռցուած: Պետրո՞ս: Ղուկիանո՞ս: Գործիչո՞ւ, զոչեցին Պրիսկա եւ Վալերիա:

Աթենակորաս միշտ միեւնոյն անդորրութեամբ. «Պետրոս խաբաղանուած, վերքերը քացախով ու աղով շփուած, անդամները կտոր կտոր աչրուած, բոլոր միւսները տանջանքի ենթարկուած, զո՛հ ընելու պարտաւորուած կամ կախուած»: — «Աստուած ողորմի, ողորմի ամէնուն», ձայնեց Պաւղա սրտաշարժ շեշտով: «Եւ մանուանող անոնց, որոնք տկարացան եւ ուրացան», յարեց Աթենակորաս: Եւ շարունակեց. «Ամուր բոնեցէք ձեր սիրտը, համբերեցէք: Աւելի գէշը կուգայ: Հրովարտակր ամէնուրեք զործադրուեցաւ: Ամէն տեղ զաւառներուն մէջ եկեղեցիները քանդուեցան, քրիստոնեաներուն տուններուն մէջէն սուրը զիրքերը աւարի տրուեցան եւ շեղջ առ շեղջ կրակի տրուեցան: Կարճեղոսի մէջ բնիկ Արիտինացի քառասուն քրիստոնեաներ կախաղան հանուեցան, որովհետեւ ի հեճուկս օրէնքին անոնք աստուածային պաշտամունք եւ հաղորդութիւն կը կատարէին»: — «Պատիւ, փառք ճշմարիտ հաւատացեալներուն», ձայնեց Արսինէ: «Տասներկու տարեկան մանչ մը կար քառասուն հաւատացեալներուն մէջ, հիւրբիոս անունով: Հիւպատոսի փոխանորդը ուղեց վախցնել զայն եւ սպանաց. «Կը կտրեմ քու երկար մազերդ, քու քիթդ, եւ ականջներդ»: — «Ըրէ ինչ որ կ'ուզես», ձայնեց մանչը, «ես քրիստոնեայ եմ»: — «Տասներկու տարեկան», ձայնեց Արսինէ, «օ, զուն հերոս մանուկ»: — Երբ իր մահուան վճիռը իմացաւ, պոռաց. «Օրհնեալ է Աստուած»: — «Ինչ փառաւոր բան», ձայնեցին ոմանք: «Աստուծոյ մէկ հրաշքը, այսպիսի յոմատութիւն»: — «Աստուծոյ պարգեւը միայն», փակեց եպիսկոպոսը: «Ի՞նչ պիտի ըլլայ տակաւին», հառաչելով հարցուցին ոմանք: «Այդ մասին ալ լուր ունիմ: Անշուշտ

կինս այս մասին թունդ պիտի շնչէ: Ամենավերջին հրովարտակր եւ պիսկոպոսներուն զէմ ուղղուած է, կ'ուզեն հովիւները բռնել, եւ կը յուսան թէ ոչխարները իրենք իրենցմէ պիտի դան, առանց բռնութեան, եւ արինահեղութեան: Բայց — կը սխալին: Հիմա զիտցեք ինչ որ ես զիտեմ եւ — թէ ինչ պիտի գայ մեր գլխուն»: — «Ոչ հոս», մխիթարեց Արսինէ զինքը եւ իր կինը, «Լիկիոնիոս չի ձգեր որ ձեզից աւ գայ»: Տխուր լուծիւն: Գործը զիշեր եղած էր: Մահիկը սակէ նաւակի մը պէս կը կենար ամպի խաւերուն միջեւ, եւ տժուոյն լոյս մը կը սփռէր քրիստոնեաներու փոքրիկ շարքին վրայ, որոնք ծունկի եկած կ'աղօթէին բարեկամներու եւ թշնամիներու համար, եւ պատրաստ էին իրենց կեանքը նահատակել Յիսուսի Քրիստոսի համար, որովհետեւ ան իրենց Տէրն էր: Աղօթքը դեռ չէին վերջացուցած, երբ բաց պատուհանէն եպիսկոպոսին կանչեցին: Յատկեց զէպի պատուհանը: «Դուն, Սեքստոս, դեռ հիմա, այսքան շնչասպառ: Ի՞նչ կայ: Ներս եկուր»: — «Ձեմ կրնար: — Մահուան դատապարտուած եմ — երբ իմ — բացակայութիւնս — նշմարուի — դուք ամէնքդ կորսուած էք»: Ամէնքն ալ ոտքի ելած էին սենեակին մէջ եւ պատուհանը վազած էին: «Ի՞նչ կայ: Բժիշկը պիտի դա՞յ»: — «Մեր իշխանը եւ որդին — Գաղերիոսն ստիպողական նամակ մը ստացան: — Անհնազանդութեան համար մահապատիժի առթիւ իսկոյն Պրիսկան եւ Վալերիան պիտի յանձնեն եւ զինուորական հսկողութեան տակ Նիկոմիդիա պիտի զրկուին: Մեծ յուզում կը տիրէ զղեակին մէջ: Ազատեցէք զանոնք»: — «Աստուած կը խօսի ձեզի, Պրիսկա եւ Վալերիա: Գացէք ձեր յօժար կամքով, շարժարուեցէք եւ մեռէք, ինչպէս մենք»: — «Երբեք», պոռաց Վալերիոս: «Ի՞նչպէս կրնաս փափաքիլ այդպէս, Աթենակորաս: Վալերիան ետ դարձնել յանձնել Գաղերիոսին»: — «Ետ դարձնել իր պարտականութեան», ձայնեց եպիսկոպոսը վեհօրէն: «Եկէք», հրամայեց Վալերիոս, «ես կ'աղատեմ ձեզ: Այս զիշեր ոչ ոք ձեզ կը փնտռէ իմ քով: Առտուն կանուխ — առաջին նաւով — Աստուծոյ անունով եւ պաշտպանութեամբ»:

Բժիշկին ետեւէն դացին լուռ եւ թախծոտ հրաժեշտէ մը վերջ: Պաւղա եւ Արսինէ եւս բաժնուեցան միասին: Եպիսկոպոսը երկարօրէն բռնեց վերջիններուն ձեռքը եւ խորունկ մը նայեցաւ անոնց աչքերուն մէջ, որոնք կը փայլէին հաստատուն անդորրութեամբ եւ երանութեամբ: Անահիտի երբեմնի քրմուհիին ձեռքին վրայ նայելով ըսաւ լրջօրէն. «Ոչ մէկ մատանի այլեւս մատներուն վրայ. ոչ մէկ վզնոց, ոչ ապարանջան այլեւս: Ոչ մէկ լուսնակ, ոչ արեւակ այլեւս դօտիներուն վրայ, Արսինէ: Մի զղջաք, մի ցաւիք Տիրոջը խոնարհ ծառան, մեր հիւանդներուն համեստ սպասուհին ըլլալէն»: Կայծակի պէս շողացին թուխ, չքեղ աչքերը եւ եպիսկոպոսին երեսն ի վեր

ամուր շեշտով ձայնեց Առաքեալին բառերը, զոր ինք հայածանքին սկիզբէն ի վեր ամէն օր, ամէն ժամ կը կրկնէ. «Ես պատրաստ եմ ոչ միայն կապանքի ենթարկուելու, այլ նաև մեռնելու Տէր Յիսուսի անունով, որ իմ բնթացքը աւարտեմ ուրախութեամբ, եւ պաշտօնը՝ զոր ես բնդունեցայ Տէր Յիսուսէն»։ Եւ ինքնարեւարար խմորակեցաւ Լպիսկոստոսին առջեւ, որ իր ձեռքը զրաւ անոր զլիստն վրայ։ Եւ իրրեւ փոխադարձ խոստովանութիւն՝ Լպիսկոստոսը ձայնեց հանդիտական շեշտով։ «Եւ ես կը համարեմ որ այս ժամանակի շարչարանքները բան մը չեն արժեք հանդէպ այն փառքին՝ որ մեզի պիտի յայտնուի»։



Նիկիմիդիա Դիսկիւտիանոսի արքունիքին մէջ ունկնդրութիւն խնդրողները եւ պաշտօնատարները, մինչեւ իսկ բարձր սենեկապետները միշտ դարձեալ աստուածապատիւ Աւգոստոսին ոտքերը կ'իյնային։ Բայց իրենց բրածին վրայ իրենք ալ կը խնդային, կամ Ինքնակալին կոնակէն կը հեղնէին, կամ անոր անցած պահուն։ Նոյնը նաև ինք Ինքնակալը, այս տարիքը առած, ճեփ ճերմակ եղած մարդը, այտերը թառամած, տրոմութենէն ճակատը խորշմած, տաղանապալից, անհանդարտ նայուածքներով, կասկածամիտ, հետախոյզ, զիտէր ամէն բան, զիտէր թէ կը խնդային, բայց կը ձեւացնէր թէ չի լսեր։ Այլևս չէր կրնար վերցնել «Աստուած — կայսր» պաշտամունքը։ Անզգը կը հսկէր իր բոլոր քայլերուն եւ արարքներուն վրայ։ Թաղաւորը Հոռոմուսն էր։ Հոռոմուսը կը սպաննուէին, բայց հօտը նոր հովիտներ կը գտնէր — Հոռոմուս կը կատղէր, եւ իր կուսակցութիւնը իրեն հետ կը խորձէր, թէ ինչպէս կարելի է փառահամբաւ քրիստոնեաները աշխարհէն վերցնել։ Ինքնակալին սեղանակիցները յայտնի շարչարանք դարձած էին իրեն։ Դուեր կը նիւթէին անոր զէմ։ Կայսեր յետին զիմադրական ոյժը խորտակուած էր, եւ անոնք սկսած էին լուրջ մտածումի ձեւով, կէս մըն ալ թաղուն շարութեամբ եւ կատակով հասկցնել, թէ շատ չանցած կը լրանայ իր կառավարութեան քսաներորդ տարին, եւ թէ յօգուտ կայսրութեան պէտք է տարի մը առաջ հրաժարի։ Պալատին մէջ քրիստոնեաներուն թշնամիներուն թիւին վրայ աւելցած էր կատաղի մէկն ալ՝ Եմիլիանոս անունով։ Այս ճերակուտականը այն պատճառաւ նաև կայսեր մասնաւոր բարեկամութեան իրաւունք ունենալ կը կարծէր, իր կիմն ու աղջիկն ալ քրիստոնէական հաւատքին համար ոչ միայն լքած էր, այլ պատրաստ էր մահուան դատապարտել զանոնք յառաջիկայ դատական նիստին, Եթէ ուղէին յամառիլ նոր հաւատքին իրենց խենթութեան մէջ։ Հոռոմուս եւ Գաղերիոս, ինչպէս նաև հեթանոսական կուսակ-

ցութեան միւս վարիչները, շատ դիւրութեամբ կրցած էին տկարամիտ ու վարանոտ կայսեր մօտ տկարացնել Եմիլիանոսի հին հոռոմական, կատոնական հոգեկան կորոյր, սրովհետեւ իրենց համար փառասիրութիւնն ու հեղնութիւնը իրական բաւարար միջոցներ էին կայսեր կամքին յողթելու։ Ունկնդրութիւնը տեղի ունեցաւ Նիկիմիդիոյ գատարանին մէջ խոսն բազմութեան առջեւ։ Եմիլիանոս ծիրանկար ճերմակ ճերակուտականի պարեկօտով, ինք անձամբ ամբաստանեց իր կիմն, Յուլիա, Պրիսկայի երիտասարդական բարեկամուհին, եւ Պեղապիա, իր աղջիկը, որոնք առեւտինն առջեւ վայտէ անհարթ նստարաններու վրայ, թեւ թեւի, մտիկ կ'ընէին ճերակուտականին ծանր ամբաստանութիւնները, ամբոխին սպառնալից քրթմրնջիւնը եւ Հոռոմուսի միջանկեալ ոտնոմները։ Բայց ժողովուրդը լուսութեամբ լսեց, թէ քանի մը շարաթ առաջ զիշեր առեն նուազեալ Դոնատոսի նաւը, որ Եմիլիանոսը եւ իր բնտանիքը կը բերէր, ահաւոր փոթորիկի մը բռնուելով պարտաւորուեցաւ ցամաք ելլել Լիբիոս։ Նաւուն մէջ կար Փլաւիոս անունով երիտասարդ պատրիկ մը եւ ճերմակ մագերտով ու մօրուքով տարիքոտ մարդ մը, ուխտաւորի պէս հալուած։ «Ասոնք երկուքը քրիստոնեայ են, ու երբ փտանաւոր պարագաներու մէջ ցամաք ելան ապառաժուտ ծովափ մը, ուր ճրկնորսներու խրճիթներ կային, անոնք ծաղրեցին ու շամանակեցան մեր գոհերուն, եւ զացին անդին ծնրաղիւր աղօթեցին իրենց Աստուծոյն։ Ես իրրեւ Հոռոմայեցի կը պատուեմ ճշմարտութիւնը — Դոնատոս, Փլաւիոս եւ ճերմակ բարիք ցոյց տուին իմ նուազած կնոջս եւ աղջկանս, տիկինը տարին ամէնէն մօտ ձկնորսներու խրճիթը, եւ տաք վերմակներ եւ ուտելիքներ բերին անոնց։ Այս մասին զովելի են։ Բայց կ'ամբաստանեմ զանոնք որ զոհարահարահարեցին, կ'ամբաստանեմ զանոնք իրրեւ քրիստոնեայ, որոնք կայսրը իրրեւ Աստուած չեն ճանչնար եւ արդիւրեւ սուրբ զիրքերը կը կարգան» — «Ու — այ — Ու — այ — Ու — այ», այսպիսի շփոթ մը լսուեցաւ լուս հաւաքոյթին մէջ, եւ Հոռոմուս իսկոյն իրարանցում առաջ բերաւ, արձակելով աղաղակ մը, մասնակցութեամբ Եմիլիանոսի, ինչ որ բնդհանուր կանչի մը վերածուեցաւ։ «Քրիստոնեաները առեւտներուն առջեւ։ Անկցի Դոնատոս։ Ո՞ւր է Փլաւիոս, ո՞ւր է ճերմակ»։

Անզգը սակայն Յուլիայի եւ Պեղապիայի շուրջ կը դառնար, զպետր հովին տուած, բոցանուտ նայուածքներով մագիլներու պէս տնկած մասները օղին մէջ բարձրացնելով անոնց երեսն ի վեր, այնպէս ցոյց տալ ուղիով որ պատրաստ է փորել իրենց երեսները։ Երկու քրիստոնեաները որքան հանդարտ եւ մեղմ նայուածքներով իրեն կը նայէին, անլրդով, այնքան աւելի կատաղած Հոռոմուս կիմներու բոլորտիքը կը դառնար, եւ յանկարծ զարհուրեցի մոնչիւն մը օղին

մէջ, ամբողջին բոլոր ժխտքն ալ բարձր, քանիցս եւ ամէն անգամուն ալ աւելի թափանցիկ, մինչեւ որ բոլոր ճիշերը մէկ ձայն եղան, խնայար Հոռոմուլայի մաղիւնները օղբ կը ծեծեն, վեր կ'ըլլեն վար կ'իջնեն, եւ ահա միահամուռ դոս գոչումը. «Անկցի Յուլիա, մահ Պեղապի: Բզկտեցէք գանոնք, յօշտեցէք գանոնք»:

Եմիլիանոս գեփ գեղին կտրեցաւ: Ժխտրը կը սաստկանար իր ուղածէն շատ աւելի: Եւ իր աչքերուն առջեւ իր կնոջ ու աղջկան այս վախճանը...:

Իր թորերուն ոչ մէկ ոյժը այլևս չէր բաւեր — իր ձայնը յաղթահարուեցաւ: Ամբոխը ձիւնակոյտի նման կը տեղափոխուէր: Առջևեկները պէտք էր աւելի յառաջանային: Կրկին կ'ոտնար անդղին կանչը, եւ ահա սուր մը շողաց Հոռոմուլայի աչքերուն առջեւ: Իր կայծկատուն նայուածքները կը դամէր Ինքնակալին վրայ, որպէս թէ պէտք էր նախ համոզուեր, թէ իրօք ան է: Ան էր: Ինքնակալի անթերի հազուստ կապուստով, ծիրանազգեստ: Անգամ մըն ալ զօրավար, Ինքնակալ: Որպէս թէ կայծակ ինկաւ, ամէն բան լռեց: Յետոյ ամէն ոք, Հոռոմուլային օրինակին հետեւելով ծնրադիր, հողը կը ծածկէր ձակատով, եւ գոցեա խմբերդ, բայց խուլ, հեռաւոր որոտումի նման, ամբողջ պալատին մէջ կը հնչէր. «Ողջոյն, Աստուած, Ինքնակալ մեր»: Ինքնակալին աչքերը, հետաքննին, կը հանդէժին բարեացակամ հայտաբերով Յուլիայի եւ Պեղապի վրայ: Մէկէ աւելի սիրաւորու մէջ կը բարձրանար սա մտածումը. Ինքնակալը Պրիսկայի եւ Վալերիայի վրայ կը մտածէ: Կը վշտակիր:

«Ո՛վ որ ամբաստանութիւն ունի, թող ամբաստանէ», ձայնեց ինքնակալը: «Ո՛վ որ դատարանը կը խանդարէ, կը մեռցուի: Եմիլիանոս, շարունակէ»:

«Կ'ամբաստանեմ նաւապետ Դոնատոսը իրբեւ գողաթաքոյց: Դիտէր որ Փլաւիոս եւ ծերը քրիստոնէայ են եւ օղնած է անոնց փախուստին»: — «Ո՞ր»: — «Լիբիսայի կիրճին մէջ: Անկէց կը լսուէր քրիստոնէաներուն երգեցողութիւնը, Ինքնակալ»: Օղին մէջ կրկին շեց անդղին Ու — այր: Սաստիկ գրգռում մը գրաւեց ամբոխը կրկին: «Դոնատոս, խօսէ», ձայնեց Ինքնակալը: Դարձեալ ընդհանուր լուսթիւն: «Դուն քրիստոնէա՞յ ես», հարցուց Դիոկղետիանոս: «Ոչ տակաւին»: — «Դո՞ւն ազատեցիր Փլաւիոսը եւ ծերը»: — «Ձեզի որ երթան, Ինքնակալ»: — «Ըսէ՛՛ Տէր», սիրամարդի պէս շեց Հոռոմուլա: «Աստուած միայն Տէր է»: — «Ու — այ, Ու — այ»: Եւ ամբոխը. «Անկցի Դոնատոս: Ան կ'ուրանայ քու Աստուածութիւնդ, Ինքնակալ: Քրիստոնէայ է: Պատասխան տուր, Դոնատոս, ո՞ւր են անոնք: Ո՞ւր է Փլաւիոս, ո՞ւր ծերը»:

Փոթորիկը կրկին պայթեցաւ եւ ժողովուրդին մէջ ցրուած հե-

թանոսական կուսակցութեան հալածանքին եւ գրգռումին տակ վիշապահողմի փոխուեցաւ, զոր ոչ Ինքնակալը, ոչ Եմիլիանոս չկարողացան այլևս մեղմել: Մարմինով եւ սուրով ծածկեցին երկու կիները, որոնք ձեփ ձերմակ եւ գողահար անոնց կը հետեւին ամայացած փողոցներէն: Չտեսան այլևս թէ Դոնատոս ինչպէս հարցաքննուեցաւ եւ տանջանքներու ենթարկուեցաւ, թէ ինչպէս յանկարծ երիտասարդ մը պատրիկի գեղեցիկ պարեգոտով, վաղակաւորը կախած մէկ քովէն, ցատկեց եկաւ ոտքերը գետին գարնոց մարդակոյտին մէջ: «Փլաւիոս, Փլաւիոս», ձայնուեցաւ բարձրէն: Երբ վերջապէս ետեւ գտնուողները խուժեղին դատարանին առջև, Դոնատոս ազատ արձակուած էր: Փլաւիոսի մարմինը երկաթէ կեռերով կտոր կտոր եղած էր, արիւնաշաղախ: Հոռոմուլա դիւահարի պէս կը պարէր դիակին շուրջ, կը ծռէր — վեր, վար — վար, վեր, ձեռքերը կը լեցնէր մեռելներուն միտով եւ նորէն գետինը կը նետէր, արիւնով կը լեցնէր եւ ջղապար ծիծաղներով թող կուտար որ կաթիլթի մատներուն մէջէն: Երբ հուսկ ուրեմն խելքը գլուխը եկաւ դիւահար կնոջ, աչքերը վեր առաւ բոլորաբար նայեցաւ, մինակ էր ամայացած դատարանին մէջ: Մեռելին բաց, մարած աչքերը միայն քարի պէս կը նայէին իրեն, Երբ անոր գլուխը իր կուրծքին վրայ մաղիւններուն մէջ կ'ըլլանէր եւ արիւնը իր վրան գլուխը կը կարմրեցնէր շիթ առ շիթ իյնալով Փլաւիոսի մազերէն վար:

Իրիկուան սեղանին վրայ խօսքի նիւթ էր այս դէպքը: Դիոկղետիանոս, Ինքնակալ Տէրը, Գաղերիոսի, Տաղիսի, Հիերոկղէսի եւ ամբողջ կուսակցութեան միջոցաւ իմացաւ թէ ժամանակը եկած է իրեն համար հրաժարիլ ծիրանիէն: Ո՛վ որ կարող չէ այսպիսի խռովալից կացութեան մը ապստամբութեան առաջըր առնելու, պէտք չէ այլևս Ինքնակալ կամ Տէր Աստուած կոչուի: Յայտնապէս բախտը լքած է զինքը եւ Գաղերիոսի կողմը անցած է: Քրիստոնէութիւնը ահա անգամ մըն ալ կայսրութեան պատուհասը կ'ըլլայ, բոլոր դրժբախտութիւնը յառաջ կուգայ այն վարանումէն, որով Դիոկղետիանոս չի փութար արմատախիլ ընել զայն: Նախ պէտք է այս երրորդ սեռը — քրիստոնէութիւնը — աշխարհէն վերնայ, որպէսզի աստուածները կրկին խօսին եւ ողորմին կայսրութեան:

Ինչ որ այս ամէնուն դէմ խօսեցաւ Դիոկղետիանոս, յողնած ու հիւանդոտ, նպատակաւոր ժխտրի մը միայն արձագանդը առաւ: Ի վերջոյ կեցաւ Դիոկղետիանոս եւ դուրս ելաւ: Կոտորած, քամակարեկ մարդ մ': Եւ, իր մեկնելէն վերջ, պալատական կուսակցութիւնը որոշեց Գաղերիոսը Ինքնակալ անուանել եւ քրիստոնէաները ամբողջովին բնաջնջել: Կ'ուզէին Դիոկղետիանոսը Սալոնա զրկել եւ մանկամարդ գեղանի կին մը փնտռել իրեն համար:

## ԱՌԻԻԹԱՐՔԱՅՆ ՏՐԴԱՏԷՍ

Վաղարշապատ կրկին իր աւերակներէն վեր կանգնած էր իր սպիտակ տուներով եւ առկախ պարտէզներով: Փառաւոր պալատ մը հինին տեղ: Յազթ աշտարակներ արքունի բնակավայրին չորս անկիւնասիւներուն վրայ հզօր եւ պատերազմական դրոշմ կուտային անոր: Քրիստոնէութեան վերջին հետքը կը թուէր ջնջուած ըլլալ Հայաստանի մէջ: Վաղարշապատ Ահուրայի գահոյքն էր: Անահիտ կրկին իր սրբավայրը ունէր լիճով, քրմուհիով, իր աղանիւններով, իր ձուկերով, եւ Հայաստանի թագաւորը ունէր իր սուրբ ուտիւնը փրկութեան — Հովարէնո: Աստուածութիւն կար ուրեմն անոր մէջ, եւ Անահիտի նոր քրմուհին կը հաղորդէր զայն սուրբ սիրով: Տրդատէս իր խոստումը չէր մոռցած եւ պալատին ու սրբավայրին աւարտումէն քիչ վերջը Հոռմէն կանչած էր Աշխէնը՝ Իսիսի քրմուհին: Հասած էր Տրդատ իր նպատակին: Պարսիկները յաղթահարուած էին, հօրը եւ մօրը վրէժը ահաւոր կերպով լուծուած էր: Անոնց սակրտին կը հանդէկին զգեակին տակը օժեալ ու նուիրական դամբարանի մը մէջ: Խոսրովիզուխտ Տրդատին քոյ էր եւ հակառակ իր անձնական քրիստոնէական հաւատքին այնքան սիրելի էր իրեն եւ ոչինչ կը խրնայէր, որ բնաւ չարզիլեց եւ թողուց որ պահէ զայն իրբեւ իր մանկութեան հաւատքը: Գարնան առաւօտ մը նստած էին զգեակին յարկարածին մէջ բաց պատուհանին առջեւ եւ կը դիտէին դուրսը, վարը Վաղարշապատը, շողջողուն լիճը, շուրջը ծաղկեալ հրաշալի դաշտապատներ, որուն խորքէն, հարթավայրէն հեռուն կ'աշտարակէր Արարատ գէպի երկինք սասնակոյտերու ճածանջին մէջ: Եզրայր քոյր լուս ու սահմոկած, երկար երկար կը նայէին այն ուղղութեամբ:

«Ի՞նչ կը մտածես, Խոսրովիդուխտ» — «Յունաստանը: Ախ, եթէ Արսինէ մեր քով ըլլար»: — «Ինչո՞ւ մէկտեղ չեկաւ: Ես իր հաւատքին պիտի ներէի, ինչպէս քեզի: Ես ալ անոր պէտք ունիմ: Ո՞ւր կրնայ ըլլալ: Լիկինիանոսէն ալ որեւէ լուր չկայ: Արդեօք վերջապէս կեսօր — իշխանակից — եղա՞ւ, կամ ծիրանի կը կրէ՞»: — «Ներքեք, ան Աւգոստոս չ'ըլլար», ձայնեց Խոսրովիդուխտ: «Իսկ Ագաթանգեղո՞ս, անոր ալ պէտք չունի՞ս»: — «Լո՛ւ», պոռաց Տրդատ քրոջը: «Քեզի արցիլած եմ այդ անունը իմ առջեւ արտասանելը: Կը յուսամ, անիկա գտած է իրեն արժանի վախճանը: Խաբերան, ստախօսք, չարտխօսք: Ան երկինքը խարեց, ի՞նչպէս կրնայի ես այդ տեսակ մարդու մը կրկին մտածել: Երեք տարի կրցաւ ան ինքզինքը ծածկել, ինծի հետ խօսիլ երկինքի, Աստուծոյ, Միհրի, Լոյսի վրայ, իմ փրկութիւնս փնտռել եւ սակայն ներքնապէս ստախօս մը ըլլալ: Ան դեւ մըն է, Ահրիմանը անոր մէջ պահուցած է, ան բուն իսկ սատանան է...: Երեք տարի ինծի հետ ապրել, խորհրդատօնի փորձութիւնները միասին վերապրել, եւ շարունակ ինծի հաւատացնել թէ ինք նուիրեալ մըն է, Միհրի սպասարկու աշակերտ մը եւ սակայն — քրիստոնէայ է եղեր: Քրիստոնէայ: Արդարեւ — եթէ ժամանակին, մեր այս կողմը պալու միջոցին, Աթէնք Անահիտի նուիրական պուրակին մէջ իրեն պէտք չունենայի զոհելու եւ աստուածուհիին օրհնութիւնը խնդրելու մեր հայրենիք վերադարձին առթիւ, — այն խարդախ սատանան այսօր իսկ իմ շուրջս պիտի ըլլար եւ զիս պիտի խաբէր: Բայց հիմա, կը խորհիմ թէ ան բաւական մը առաւ իր վարձքը անդին Արտաշատի դմբէթին տակ: Հոն հիմա այլեւս մէկը չէ մնացած: — Կիսամեռ էր շնորհքով, փոսը նետուելէ առաջ»: «Լո՛ւ, կ'աղաչեմ, եղբայր, կը պաղատիմ, ականջներուս առջեւ ոչ բնաւ, — չեմ կրնար լսել, Տրդատ, կ'աղաչեմ — կը պոռամ»: — Խոսրովիդուխտ ցատկեց եւ ականջները բռնեց ծածկեց, մինչ Տրդատ զիւային շարամիտ ուրախութեամբ եւ հաճոյքով բարձրաձայն միտքը կր բերէր դարձեալ բարեկամին բոլոր շարժարանքները եւ մասնաւորապէս ամէնէն զարհուրելի պահերուն ալ ամէնէն պէշ կերպով կր խնդար:

«... Ինչպէս ան կը վազէր ատրաշէկ երկաթներուն, գամերուն, սրածայր քարերուն եւ ապակիի կտորուանքներուն վրայէն. — ինչպէս ան ուռեցաւ մորթին տակէն փրօցներով փշուելով: Գլուխը մոխիրով լեցուն սլարկի մէջ: — Ժամերով պատէն վեր չուանին վրայ: — Քարի կտորուանքներ մարմինին մէջ, մորթի տարածին չափ, այ — այ»: — Այսպէս կ'երթար Տրդատ — խնդարով մրթմրրթալով: «Եւ յետոյ» — յանկարծ կեցաւ: Տրդատ, գլուխը կախ, բան մը կը մտմտար: «Չի կրնար ուրիշ կերպ ըլլալ...: Ախ ... բայց — անկարելի: Մեռած է ան»: — «Գիտես, եղբայրս, որ ես այս

անիրաւութեան չեմ կրնար հաւանիլ: Ասիկա կը մնայ նշան քու անիրաւութեանդ, եւ խայթ մը խիղճիդ մէջ: Այս պատճառաւ երջանիկ ալ չես չու բոլոր պայծառութեան, շէնութեան եւ համբուելի մէջ: Թշնամիներուն յաղթեցիր, արիւնոտա յաղթանակ մը: Բայց սակաւին չես կրնար դուն քու անձիդ տիրել: Օ՛ր, եղբայր, ես շատ լաւ գիտեմ որ դուն երջանիկ չես, դուն երջանկութիւն կը փնտռես եւ չես գտնիր: Խաղաղութիւնը կը պակսի քեզի, կը պակսի, այո՛, խաղաղութիւնը քեզի, սէր, խիղճի հանդստութիւն, այս ամէնը կը պակսի քեզի — եւ — կը զղջաս Ագաթանգեղոսին բրածիղ վրայ: Կը պակսի քեզի անոր ողին, անոր իմաստութիւնը եւ խօսակցութիւնը: Քու պաշտօնատարներէդ ոչ մէկուն վրայ կրնաս այնքան փտածել, որքան կրնայիր անոր փտահանալ: Դուն ինծի կը յիշեցնես Մեծն Աղեքսանդրը, որ իր զղջումէն կը զինովնար ու կը զինովնար մինչեւ որ մեռաւ ալ խմելէն, որովհետեւ իր ամենասիրելի բարեկամը սպաննեց: Դուն ալ կը խմես զղջալէդ: Դուն, ինչ ալ ըլլար Ագաթանգեղոսի պէտք ունիս: Ան քեզի կը հալածէ»: Երկար ատեն Տրդատին առիւծի աչքերը ճերմկուցր միայն ցոյց կուտային, եւ գլուխը երթալով ծոճրակին մէջ կը թաղուէր: Հիմա փոթորիկը պիտի պայթէր քրոջը գլխուն: Խոսրովիդուխտ, անձայն, իր ձեռնադօրծը կը շարունակէր հիւսել: Եղբայրը անոր կը նայէր, բարկութեանէն զեփ զեղին կտրած, առանց խօսելու, քրոջը կը նայէր միշտ վերէն վար շափելով զայն: Ձեռքերը զիստերուն կրթնցուցած, այնպէս որ ծիրանի վերաբերուն կը ծածկէր կոնակն ու թեւերուն վերի մասը եւ հակա լայնութեամբ մէջտեղ կը հանէր թագաւորին կեցուածքը: Խոսրովիդուխտ վրան չէր նայեր եւ կ'ասեղնադործէր հանդարտօրէն: «Ինչո՞ւ բառ մը չես խօսիր ինծի հետ, ապերախտ»: Խոսրովիդուխտ լուռ: Տրդատ, աւելի զրպուած. «Ինչո՞ւ բառ մը չես խօսիր հետս»: Միւսնոյն հանդարտութեամբ, առանց վեր նայելու, բաւ Խոսրովիդուխտ. «Նորէն կը խօսիմ, եթէ դուն իբրեւ եղբայր խօսիս ինծի հետ: Հիմա դուն իմ եղբայրս չես, այլ օտար եւ անարկու»: Ան. «Օտար եւ անարկու — Ահարկու — այո, եմ այդպէս յօժարակամ»: Խոսրովիդուխտ. «Եւ անիրաւ — եւ պիղծ — եւ — գերի, ո՛չ թագաւոր: — Քու Միհրի պաշտամունքի խորհրդատօնները այնքան միայն փրկիւր են քեզ: — Օ՛ր, Տրդատ, սորթնելի դժբախտ Տրդատ — մարդասպանի ձեռքերով»: Խոսրովիդուխտ ձեռքերուն մէջ առաւ գլուխը սեղանին վրայ եւ կր հեկեկար բարձրաձայն:

Կատարութիւնէն զուճաթափ, Տրդատ Խոսրովիդուխտի քովէն դուրս ելաւ եւ մտաւ արքայական սրահ: Մականք — երկար, ճերմակ փղոսկրեայ ցուպ մը — որ սակի ճարմանդով մը կը վերջանար, ճարճատեց զետիներն վրայ, որ շքեղ խճանկարով լայնքէն ու երկայն-



քէն կը ներկայացնէր լիճով դարաստան մը, արմաւենիներու պուրակ մը, տունկեր ու ծաղիկներ: Թագաւորը քայլ առաւ դէպի դահուղը, ոսկիէ եւ արծաթէ բաղաժուտ մը, ողորկ, յղկուած սեւ մարմարեայ պատուանդանով, քանի մը աստիճան վար դահուղէն: Թագաւորին առջեւ ելլողը պատուանդանին առջեւ կը նետուէր եւ այն ատեն միայն կը կանգնէր երբ ան իրեն դէմ երկարէր ոսկի մականին ծայրը: Պաշտօնատարներուն եւ քուրմերուն բերանն ու քիթը թագաւորին առջեւ գոցուած էին ճերմակ ծածկոցով մը: Իր աստուածայնութիւնը պէտք չէ պղծուի պիղծ շունչէ: Թագաւորը իր հպատակները եւ նոյնիսկ իր հէլ: րը սրբան աւելի կարենար հետի պահել իրմէ խիստ արարողական հանգչաններու միջոցաւ, այնքան աւելի կը վախնային անոնք իր քմահաճոյններէն եւ բարկութեան նոպաներէն, այնքան աւելի դանոնք իրեն կը կապէր նպատաներով, շնորհներով, կատակարանութիւններով եւ ընկերակցական մտերմութեամբ, նաև յաճախ գիշերային խնջոյքներու ատեն ընտանեկան ձեւերու անիրութեամբ, բայց շրջուցիչ շքեղութիւններ պարզելով միանգամայն: Անոնք որ իրեն շատ մօտ կը գտնուէին, ինչպէս Աղեքսանդր, երբեմն քրիստոնեայ եւ եղիպտացի վանական, նախարար Օտա, գորավարներ Արտաւազդ, Մովկ, Մանակ եւ ուրիշներ, գիտէին, Սոսրովիդուխտի շափլաւ, թէ ան յաճախ ժամերով չէր կրնար բան մը բսել եւ թախծոտ ու կնճոտ ճակատով կը մտմտար, կ'որոճար, առջեւը նայելով: Եւ ոչ մէկ մարդ կը համարձակէր անոր մօտենալ, եւ անցից անցելոց խօսք մը ընել:

Այսօր առաւօտուն ունկնդրութիւն ունկնդրութեան յաջորդեց: Թագաւորը ձանձրացած եւ նեղուած կը պտրտէր սրահին մէջ եւ որեւէ հարցումի այլևս հաղիւ պատասխան մը կուտար: Հո՞նք է հատեր որ այսօր հարիւր հիւրերու ժամանումն ալ ծանուցուած է, եւ թէ այլևս բոտ ղաւականի ոսկի ղաւաթ չկայ իւրաքանչիւրին համար: Եկաւ նախարար Օտա եւ ծնրադիր, յանձնեց թագաւորին կնքուած նամակ մը: Ատիկա փոփոխութիւն մը առաջ բերաւ: Եւ ինչ տեսակ: Դիտկեւտիանոսէն, Ինքնակալէն, կուշար: Տրդատ կարգաց.—

«Ինքնակալ Դիտկեւտիանոս մեր պաշտօնակից Տրդատէսին, ողջոյն եւ խաղաղութիւն:

Քու եզրայութիւնդ պէտք է հասկնայ, թէ որքան մնաս կը հասնի մեզի նորէն քրիստոնեաներուն խորամանկ հերձուածին միջոցաւ, քանի որ ամէն բանի մէջ անոնց եւ իրենց կրօնքին ձեւքով կը նախատուին մեր Վեհափառութիւնը եւ մեր կառավարութիւնը: Որեւէ վերապահում, գոյուշաւորութիւն չեն ճանչնար: Սաջեալի մը կ'երկրպագեն: Կը պաշտեն փայտ մը եւ կը պաշտեն նոյնպէս կմախքը անոնց սրտնք իրենց մէջէն սպաննուած են: Կը հաւատան թէ պատիւ-

եւ փառք է մեռնիլ իրենց Աստուծոյն համար: Անոնք մեր օրէնքներու սրահանջքին համեմատ դատարարութեամբ են, որովհետեւ անոնք կ'անուանարկեն մեր նախահայրը եւ նախորդները այս կայսրութեան մէջ: Մեր նիղակին սայլը ըթացած է, եւ չեն վախնար մահէն: Սաջեալ շրեայի մը կողմէ մոլորուած անոնք կը վարդապետեն նախատել թագաւորները եւ քնաւ հոգ չեն տանիր Աստուածներու արձաններուն: Բնաւ կարեւորութիւն չեն տար համաստեղութեան, արեւուն, լուսինին կամ աստղերուն աղղեցութեան, եւ կ'ըսեն թէ զանոնք ամէնքը սակզած է իրենց խաջեալ շրեան: Կը վարդապետեն նաև արհամարհել, անարդել գիցական պատկերները, զոր վտարած են արդէն իրենց պաշտամունքին: Կը խրատեն կիները թողուլ իրենց այրերը, եւ այրերը թողուլ իրենց կիները:

Եւ, թէ պէտեւ մենք ենթարկւած ենք զանոնք տանջանքներու եւ մահալծիւններու, անոնք ա'լ աւելի բոցավառուած են, եւ անոնց հերձուածը կը սարածուի ամէն կողմ:

Գեղանի կոյս մը տեսայ անոնց հերձուածէն: Ուզեցի զայն ինձի կողակից բնարել: Եւ անոնք քրիստոնեաները, համարձակեցան ձեռքէս յափշտակել զայն: Ոչ միայն որ ան չէր բաղձար իմ կիներս ըլլալ — Ինքնակալի մը կիին — ս'չ, այլ եւ շփախցաւ նաև իմ բոլոր սպանակներէս: Եւ սրովհետեւ ես իրենց հերձուածին չեմ պատկանիր, զիս կը նկատեն իբրև պիղծ կակ մը, աղարտուած, զրուելի, եւ զայն փախցուցին քու տիրապետութեանդ երկիրները: Արդ, եղբայր իմ, ամենուրեք փնտռել տուր զայն, սր որ կրնայ քրիստոնեայ գտնուիլ, եւ հրամայէ վրէժ լուծել անոնցմէ, որոնք այն կոյսին քով են, ինչպէս նաև անոր վերակացու կնճմէն: Գալով այն գեղանի, աստուածանման փախստականին, ինձի զրկէ զայն: Որովհետեւ յոյներուն մէջ անանկ գեղեցկութիւն գտնուած չէ երբեք, որ բաղդատուի անոր հետ:

Ապրէ խաղաղութեամբ, օրհնութեամբ աստուածներուն եւ համայն երջանկութեամբ»:

Նամակին առաջին աղղեցութիւնը եղաւ Տրդատին անդուսպ մէկ քրքիջը, այն աստիճան որ արքայական զահլիճը կը թնդար: Յետոյ լուռ եւ մտածկոտ սրահին շրջանը բրաւ: Բոլոր հիւրերը կէս օրուան սեղանին գիտեցին որ բացառիկ պարագայ մը կը գրադեցնէր զինքը: Իրարու կը հարցնէին, նշանացի կ'ընէին, միտքերնին կը շարձարէին: Իրիկունը սեւ ատեն սրբալայրին մէջ առաջին իմացողը եւ զաւ Աշխէն քրմուհին: Որքան զարմացաւ Տրդատ որ Աշխէն քնաւ չքաջարեց զինքը: Հետեւանք տալու նամակին, ընդհակառակն խորհուրդ տուաւ հետապնդում չկատարել: Երբ Տրդատ կատակելով հարցուց Աշխէնի, թէ պիտի չնախանձի՞ արդեօք, իր գիրքին համար պիտի չվախնա՞յ, եթէ պատուի այդ անօրինակ գեղեցկութիւնը եւ

իր Տրդատին սիրուհին ըլլայ: Եւ ահա իրեն առջեւ ծնրազրոզ քըր-  
մուհին իր բերանը թաղաւորին ծունկին ձուլելով ըսաւ. «Ո՛վ թա-  
ղաւոր, տակաւին չե՞ս գիտեր որ ես միշտ լաւը կը կամենամ քեզի»: —  
«Այդ քրիստոնէութիւնն զտնելը ի՞նչպէս կրնայ լաւ ըլլալ ինձի:  
Պօսէ, Աշխէն»: Տրդատի աչքերը վառեցան եւ այս հարցումին վրայ  
յառեցան քրմուհիին, որ ըսաւ. «Թաղաւորս, եթէ փախստականը  
ճշմարիտ քրիստոնէութիւն մըն է, չի կրնար զէջ բան մը ընել: Ու եթէ  
զեզանի է եւ բարեպաշտ թաղաւորին կը կամենամ»: Աշխէն այս  
բառերուն միջոցին դունաթափ եղած էր: Եունչը կը դժուարանար:  
Տրդատ բռնեց անոր ուսերէն, երբ կ'ուզէր կանգնիլ եւ դուրս ելլել,  
եւ կամացուկ մը ըսաւ. «զեզանի ու բարեպաշտ — դուն այդպէս ես,  
եւ գիտես որ քու անխելք զաղտնապահութիւնդ եւ ուխտդ զիս կ'ար-  
զիլէ քեզ թաղուհի ընելէ»: — «Երբեք», փսփոսց Աշխէն: «Վերջա-  
պէս պիտի չըսե՞ս ինձի քու ծագումդ»: — «Երբեք»: — «Գիտեմ,  
դուն բարձր զիրքի մը կը վերաբերիս»: — «Ես կ'ուզեմ քու Անա-  
հիտի աղախինը ըլլալ եւ օտարի մեղքերը կրել»: — «Միշտ նոյն հա-  
նելուկը», հառաչեց Տրդատ եւ մեղմիկ շոյեց քրմուհիին զլուին ու  
երեսը: Յետոյ զնաց: Աշխէն եւս փութով իր ննջասենեակը զնաց,  
ինկաւ իր անկողինն վրայ, լացաւ, զլուխը թեւերուն մէջ թաղած,  
մինչեւ որ մութ գիշեր եղաւ իր շուրջ: Տրդատ դարաստանին մէջէն  
զացած էր: Բնազդը կը մղէր զինքը Սոսրոյի դուխտին մօտ եւ նամա-  
կը կարգաւ անոր: Սոսրոյի դուխտի սենեակը պարաս էր: Ետտ ուշ  
դարձաւ արտասուակին աչքերով: Հիմա գիտէր Սոսրոյի դուխտ Աշ-  
խէնի զաղտնիքը, եւ քրոջ մը պէս եղած էր անոր:

Յառաջիկայ շաբաթները Տրդատի եւ իր պարագաներուն հա-  
մար դժուրք մը եղան: Եթէ նոր հնարաւորութիւն մը ըլլար փախըս-  
տականը դտնելու, երջանիկ օրը կ'ըլլար Տրդատին, առատօրէն կը  
վարձատրէր որեւէ նոր հետք, եւ շատ կը տխրէր կամ կը բարկանար  
եթէ այդ հետքը նորէն անյաջող ելլէր: Տրդատի զերազրգուած  
մարմնասիրութիւնը եւ երեւակայութիւնը իր միտքին մէջ կը ստեղ-  
ծէին միշտ աւելի զեզանի կնոջական կերպարանքներ, եւ այնքան ալ  
աւելի կը փափաքէր իր երեւակայած կերպարանքը նմանցնել փա-  
խստականին իրական զեզեցիկութեան հետ, յուսալով որ իրականին  
մէջ աւելի զեզեցիկ պիտի գտնէ: Յետոյ պարտականութիւն մը կա-  
տարելու ցաւառիթ զպացումն ալ կար — ան Ինքնակալին կը պատ-  
կանի: Պէ՞տք է որ զեզանի կնոջ մը համար նորէն կուի ծագի երկու  
երկիրներուն միջեւ: Վաղարշապատ պաշարուի՞, ինչո՞ւ: Տրդատը  
կայսեր կառքին լծուելով իրրեւ ապստամբ Հոռոմ կամ Նիկոմիդիա  
տարո՞ւի: Ծերուկը — Դիոկղետիանոս — կ'երևի երիտասարդացեր  
է, նորէն սիրել եւ կարգուել կ'ուզէ: Հա-ի-հա-ի: Փառք մեր Տիրոջ

— Դիոկղետիանոսի — երբ իր աստուածականութիւնը նորէն կը սի-  
րահարուի, տարիքը տոնելէն վերջ: — Ո՞ր քարայրներուն, ո՞ր ա-  
նապատներուն մէջ կը հիւժին Պրչնիկա, բարի կայսրուհին, եւ Վալեր-  
իա, խորտիչահար հրեշտակը, այդ գժբախտ կակը: Ետտ լաւ ըրաւ  
փախաւ: Կամ անասրտին մէջ սողամահ ըլլալ կամ զանելով մեռնիլ  
Գաղբիւսի մօտ — հաւասար է —: Բայց Դիոկղետիանոսի ձեռքէն  
փախչող աղջիկը քրիստոնեայ է: Ան ալ: Ասկէց զատ, երբ զիս տեսնէ  
եւ այս փառքը, չքեզութիւնը Տրդատ արքունական սրահին պատին  
վրայ արծաթեայ հսկոյ հայելիին մէջ զիսեց ինքզինքը ոտքերէն  
մինչեւ զլուխը, մաղերը հոսեւ տարաւ շտկելով, գիծերը շինելով  
մարդարտայեւ օձաձեւ թաղը դրաւ, կոնակը առաւ ծիրանի վերար-  
կուն, բռնեց Երկ:սր ոսկի մականը, եւ արդարեւ — հայելին ցոյց  
կուտար վհասպանձ զօրութեան եւ զեզեցիկութեան պատկեր մը:  
Միայն զիմպիւրը — արասայտութիւնը — իրօք, խիստ բիրտ բե-  
րանին եւ քիթին շուրջ — արդեօք չափազանց հեշտասէր: — Ախ,  
սա զառնէրն ու ոչխարները, սպուշ քրիստոնեաները կ'առնէ ինչ որ  
ճշտիւ տոնական է: Բէ՛հ, կրնը կրն է, ըլլայ քրիստոնուհի, ըլլայ  
հեթանոսուհի — պարտաւոր են սիրել, եւ զօրութիւնն ու հեշտանքը  
իրենց ալ հաճելի են ամենամեծ մտամբ:

Պատուհանին մօտեցաւ: Գարունը զացած էր: Ամառը կը ծի-  
ծաղէր երկնակապոյտին վրայ, լիճէն դուրս, կանանչ պարաէզներէն  
դուրս, Վաղարշապատի ամարանոցներէն ու ճերմակ տուներէն  
դուրս: — «Անխելքին մէկը կ'ըլլաս, զեզանի սրբուհի: Այս ամէնը  
քուկը պիտի ըլլայ, եթէ դուն իմս ըլլաս: Երբ — ի՞նչ կ'ըսեմ —  
ե՞րբ: Ո՛չ, այլ պարտաւոր ես»: Սրահին մէջ որոտաց սա «պարտա-  
ւոր ես»ը: «Ես, Տրդատ, այսպէս կ'ուզեմ»: Մականին ոսկի ճար-  
մանը ճարձատեց զեզանը եւ փառաւոր լուսասածաղիկի մը շողջո-  
ղուն խճաքարէ զլուխը դուրս ցատկեց հարուածին տակ: Տրդատ  
չզիտեց ասիկա: Ալ աւելի ուժով զարկաւ բարձր դրան: Տրդատի  
կանչելուն վրայ ցատկեց ներս եկաւ արարողապետ Օտա, Տրդատին  
ոտքերուն առջեւ խոնարհեցաւ եւ կակաղեց, ուրախութենէն զինով-  
ցած. «Թաղաւոր եւ Տէր: Գտնուեցան»: Տրդատ դունաթափ եղաւ:  
«Ի՞նչ, ի՞նչպէս, գտնուեցան»: «Գտնուեցան, Տէր իմ»: — «Ի՞նչ-  
պէս: Ըսէ: Ոտքի ելիր»: — «Աղեքսանդր, քու հաւատարիմ ու խո-  
րամանիկ ծառայ գտած է հետքերը»: — «Ան: Անիկա անմոռանալի  
պիտի ըլլայ իրեն համար»: Բազմահարիւր ձայներով կանչը ժողո-  
վրդային ամբոխին կը գոտար բաց պատուհանէն ներս: «Ի՞նչ է  
այս»: — «Կուզան ահա, Տէր»: — «Ո՛վ ուրեմն, յանուն Ահրիմանի»: —  
«Անոնք, եւ քառասուն կոյսեր անոր հետ, Տէր: Ամէնքն ալ սե-  
ւազղեստ, ամօթխած, անինչ, զլուխները ճերմակ լաթով ծածկուած,

Լրեսները քողարկուած : Իսկ ան, Տէր, Տէր, այդպիսի զեղեցիութիւն տեսած չես : Ինտու : — «Շուա բւէ — Ինչ կերպարանքով է — Գէ՞ր» — «Գէր, Տէր» : — «Նրբաւոր» : — «Նրբաւարա, նուրբ ու երկայն, Տէր, եղեւինի մը պէս» : — «Մաղե՞րը» : — «Շիկադոյն թել թել ոսկիի պէս, յորդատատ, Տէր : Հեղեղի մը պէս կոնակին ի վար» : — «Երե՞սը» : — «Օ, նուրբ, քնքոյշ, քնքոյշ, կարծես մարմարիտնէ կոփածոյ» : — «Տժպոյն» : — «Շատ տժպոյն, յոյնած» : — «Շուա պատդարակս, աճապարէ, հրամայէ : Ներս բերէք հոս : Կանչէ սե- նեկապետներուն» :

Մինչեւ որ Հոփսիմէ պատդարակով պալատ ժամանեց, թա- վաւորը ոտքէն զլուրը նոր հաղուեցաւ, մազերը իւզոտեց, շտկեց եւ իր գահուն ջով կեցաւ քրքմադոյն կօշիկներով, կապոյտ սնդուսէ ներքնազկեստով, ճերմակ մետաքսէ վերարկուով, որ կը փայլէր ձիւնաչոյ : Միրանի գօտին կը վառէր թանկագին քարերով, ծիրանե- վառ լայն շրջափրկոյ ժապաւէնով պարսկական ճերմակ զլխանոցը զլուրը, ժապաւէնին Երկայն լայն ծայրերը կը վաղէին ծոծրակին ու կոնակին վրայ : Ճիշտ Մեծին Ազեքսանդրի երևոյթը : Ոչ ոք ախա- նատես պիտի ըլլար Հոփսիմէի հետ իր առաջին հանդիպումին : Քա- ռասուն կոյսերը եւ անոնց վերակացուէին Գայիանէ Տրդատին հրա- մանին համաձայն բերուեցան պալատին թեւերէն մէկուն մէջ եւ ա- ռարկայ կդան մեծ հողածութեան :

Հոփսիմէ երկու բարձրատիճան պաշտօնատարներու կողմէ գահոյքին առջեւ առաջնորդուեցաւ : Արքունիքին արարողական ձե- ւերը նախապէս ըսուեցան եւ պարզուեցան անոնց, նոյնիսկ փորձեր եղան մանրամասնօրէն : Բայց թագաւորը որ արոյրէ կօփածոյ ար- ձանի մը պէս կեցած էր ահա, պէտք չունեցաւ իր մականը դէպի Հոփսիմէն երկարելու : Պաշտօնատարները գահոյքին առջեւ իրենց երեսներուն վրայ փոռած կին, իսկ Հոփսիմէ ոտքի կեցած հան- գարտօրէն կը նայէր թագաւորին, կարծես հիացումով կը դիտէր արձանագործութեան զեղարուեստական ձեռակերտ մը : «Մնրադրէ՛, երեսիդ վրայ ինկիր», փոփոսցին պաշտօնատարները անձկութեամբ : Հոփսիմէ այնպէս ձեւացուց թէ բան մը չէր լսեր : Տրդատ երկարեց մականը դէպի պաշտօնատարները եւ աչք բրու անոնց որ երթան :

— «Ձեռ ուզեր թագաւորին առջեւ ծունկի գալ» : Առաջին հրն- չումը քնքոյշ, լեցուն ձայնին Հոփսիմէի, ներդաշնակ եւ անդորր, սրտային եւ անկեղծ, թնդաց ընդարձակ սրահին մէջ, որուն ար- ձաթէ եւ ոսկիէ առարկաները, զէնքերն ու դարդերը կը պսպղային իրիկնամուտի արեւուն շողին մէջ, որ ծիրաներանց կը յորդէր նաեւ հեռուն : Արարատի ձիւնապատ կատարները : Հոփսիմէ զողցես այ- լակերպեալ, կը կանդնէր թագաւորին առջեւ, մտոցած էր թագաւոր,

պալատ, ինքզինքն ու իր կացութիւնը եւ վճիտ զմայլանքով մը ձայ- նեց : «Արարատ, Արարատ» : Տրդատ կը սարսուար Հոփսիմէի յու- զումին եւ ուրախութեան առջեւ : Պօսքի սկսելու համար այսքան պատշաճ կապակցութեան կէտ մը գտնելուն վրայ ուրախ եւ զուարթ, մեղմօրէն հարցուց, որպէս թէ չէր ուզեր վրդովել անոր ջերմեռան- զութիւնը : «Արարատը ուրախութիւն կը պատճառէ քեզի» : — «Ինչպէս չպատճառէ : Աստուծոյ լիտը որուն վրայ տապանը հանդէ- ցաւ» : «Ձե՞ռ ուզեր արդեօք հոս մնալ եւ դայն միշտ կրկին տեսնել» : — «Ո՛չ : Երուսաղէմ ուխտի կը փափաքինք երթալ եւ տեսնել Գող- գոթան եւ հոն մեանիլ ժամանակին» : — «Պէտք է հոս մնալ, կամ Ինքնակալ Դիոկղետիանոսի կինը ըլլալ» : — «Ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը, թագաւոր» : Տրդատ մտկանին սակի ծայրովը մեղմօրէն զարկաւ իր գահոյքի պատուանդանին կէտայ յատակը : «Ուրեմն որո՞ւ կը վերա- բերիս դուն» : — «Յիսուսի» : — «Քրիստոսնե՞ս» : — «Այո» : — «Լսէ, ինչ կը զրէ ինձի ինքնակալը : Ես անոր ստորագաստեալն եմ եւ պարտաւոր եմ մտիկ ընել, անսալ անոր» : Առանց թարթիչ մը ան- գամ շարժելու, Հոփսիմէ իմացաւ Դիոկղետիանոսի նամակը : «Ա- սոր ինչ կ'ըսես, Հոփսիմէ», հարցուց Տրդատ վարանոտ, մտած- կոտ : «Մենք ենք ու կը մնանք քրիստոնէայ : Դիոկղետիանոս կրնայ մեղ մեոցնել, կամ դուն : Մենք պարտաւոր ենք Աստուծոյ եւ Քրիս- տոսի աւելի անսալ քան մարդոց» : — «Լսէ՛, Հոփսիմէ՛ : Քեզի ու ջու ընկերուէիներուդ առջեւ դեռ ջոյց ձամբայ մը կայ : Ես քեզի համար բարեհաճ տրամադրուած եմ» : Վարանեցաւ աւելի խօսելու : Հոփսիմէի անդորրութիւնը եւ հետախոյ յայտնածքները շփոթե- ցուցին Տրդատը ... «Լսէ» — «Կր լսեմ, թագաւոր» : — «Դուն ... դուն կրնաս նաեւ — իմ կինս եւ թագուհի ըլլալ» : Տրդատ երկնցուց իր խոշոր զլուրը որուն վրայ թաղը կը շողար, եւ խոշոր նայուածք- ներով զիտեց կոյսը, որպէսզի կարենայ ստուղի իր առաջարկու- թեան լրիւ տպաւորութիւնը : Հաճութեամբ նշմարեց երկիւղի եւ վա- րանումի ստուեր մը անար զէմքին վրայ, որ իր կանոնաւոր գիծերով եւ աննիւթականացած զեղեցիութեամբ աննկարազրկի տպաւորու- թիւն գործեց թագաւորին վրայ : Թեթեւ փախ մը կար գորշ նշակերպ աչքերուն մէջ, օյնութիւն ինդրողի թեթեւ վարանում, հետաքննու- թիւն, հարցում մը, եւ այսպէս, անոր տժպոյն, փոքր ինչ վճիտ դէմ- քը մեղմ վարդապոյնէն մութ կարմիրի բարձրացող երանց մը ստա- ցաւ : «Անակնկալի եկած ես, Հոփսիմէ : Պէտք է խորհիս, որչափ ստեն որ կրնաս, օրեր, շարաթներ : Բայց դուք մինչեւ այն ստեն իմ հիւրերս կըք» : — «Քու գերիներդ, թագաւոր : Ծնմարտութիւնը խօսէ միայն : Եւ ես խորհրդածութեան պէտք չունիմ մեր մէջ : Մենք ամէնքս ալ կուսութեան ուխտը ըրած ենք : Յիսուս է մեր փեսան,

մեր թաղաւորը եւ տէրը»։ Տրդատ միշտ նոյն ձեւով, զլուխը առաջ ծոած, կեցած էր։ Հոփսիմէ տակաւին բնաւ այսպիսի աչքերու մէջ նայած չէր։ Բոցափառ արեւներու պէս այդ աչքերը կուզային իրեն վրայ, եւ դարձեալ սոխուծի մը աչքերու պէս։ Կը տփուենէր եւ իր շրթունքները կը շարժէին։ «Ի՞նչ կ'ը խօսիս, Հոփսիմէ», հարցուց Տրդատ բարեկամարար։ «Կաղօթեմ Տիրոջս. Տէր, քովս մնացիր։ Ի՞նչ աղջիկդ տկար է»։ Տրդատ խնդաց, միեւնոյն ատեն յուզուած։ «Մի վախնար։ Վաղը նորէն միասին կը խօսինք։ — Այսօր քովս կը ճաշես իմ սեղանիս վրայ։ Իմ սպասուհիներս քեզ կը հապուեցնեն եւ կը դարդարեն, ինչպէս որ դուն վախաքիս, ամէնէն աղուորը»։ — «Եթէ իմ գլխատս իմ երկնաւոր թաղաւորիս համար բաւականին չափ լաւ է, քեզի ալ բաւական պիտի ըլլայ, թաղաւոր։ Բայց կը խնդրեմ, թող որ քնկերուհիներուս հետ սպրիմ»։ Այսպէս Տրդատ տեղի տուաւ։ Ինչ որ կարելի էր գործածել իբրեւ արծաթ, իբրեւ ոսկի, սպաս, դաւաթ, ծաղիկ եւ տունկ, պէտք էր պճնել անոնցմով ամենաճոխ ճաշասեղանը։ Իբրեւ հաւատաւոր կուսան հագուած Հոփսիմէ երեւցաւ, բնաւ միս չկերաւ, զինի չխմեց, խաչակնքեց, երբ հեթանոսական ուտելիքի եւ խմելիքի զենյի բերուեցաւ, եւ ոչ ոք արդելը կ'ուտ իրեն։ Չեղբորը, երեսը եւ զիբորը, իր խօսքերը, լուսթիւնը, դարդացումը եւ զխոսթիւնը, ամէն ինչ կը մատնէր իր աղնուական բարձր ծագումը։ Եւ ճիշտ ասիկա ալ աւելի կը զրգոէր կը հմայէր Տրդատը։ Ընդհանուր զուարթութեան մէջ իմացան ամէնքը Հոփսիմէ մէջի համով հոտով ու միամիտ պատմութիւնը իրենց այս կողմերը վախճելուն վրայ։ Տօնական զգեստներով ձօխացող ամբողջ սեղանակիցները երկար ատեն անձայն հետաքրքրութեամբ կախուած մնացին անոր բերնէն։ Կարծես մարդ ականատես կ'ըլլար իր պատմածներուն, այնքան յաւ զիտէր նկարագրել իր պատմածներուն տեղն ու անձերը — կուսանաց փանքը Հոտի մէջ, կանանչ ըլլուներու սիրուն շրջապատի մը մէջ, դարդարուած յակինթներով ու շահաբրամներով, պատաղիճներով ու վարդերով։ Իրենց առջեւ կ'ուտէր պէս կը տեսնէին բնդարձակ վայրերը, աղբերակով պարտկոյր բաղկով շրջապատուած, փանքին երկար նրբանցքը։ Եւ կոյսերը կամ մայրապետները կը ծնրապրեն, կ'աղօթեն, կ'երգեն եւ կ'աշխատին դարձեալ պարտէզին եւ տունին մէջ։ Առատ մը նոյնիսկ երկու քոյրեր իրարու հետ փեճեցան։ Թէ երկուքէն որս'ն կարգն էր փանքին երկար նրբանցքը աւելլ։

Գայլանէ մեր պատուական մայրը յորդորեց զիրենք խոնարհութիւն ըլլալ եւ ազդարարեց. այսպիսի դժուարին ժամանակի մը մէջ, ուր գայլը ամէն վայրկեան կրնայ հօտին վրայ յարձակիլ, պէտք չէ վիճին կռուին եւ սէրը մոռնան։ Հազիւ այս խօսքը ըսած էր, ահա

գայլը հոն էր։ Գայլանէ կանչուեցաւ տունին առջեւ, ուր կային երկու նկարիչներ Նիկոմիդիական ծերունի Դիոկղեաթանոս կայսեր կողմէ զրկուած։ Իրենց վրայ ունէին կայսեր եւ անոր կամքին անտուս նշանները։ Կայսրը ծերացած է եւ կը մօտի շատ։ Իր տիկինը եւ իր աղջիկը զինքը միմեակ ձգելով վախան։ Իր բարեկամները սակայն քաջալերեր են զինքը անդամ մըն ալ ամուսնանայ։ Եւ արդարեւ, ծերունի Տէրը դարձեալ փափաք ունեցաւ նոր երջանկութիւն փնտռելու։ Բայց շատ տարիքոտ եւ հիւանդոտ ըլլալուն համար չկրնալով ինք անձամբ նոր կին մը փնտռել, իր ամէնէն ճարտար նկարիչները հրաւիրեց իրեն մօտ եւ ճշգրեց անոնց, թէ իր սպալոյ կնոջ վրայ ի՞նչ բաներ անուէք պէտք էր փնտռէին։ Չեմ գիտեր թէ ո՞վ մեր մօտ մայրապետանոց զրկեց նկարիչները։ Խնդիրը այն է թէ անոնք եկան եւ փափաք յայտնեցին մեզ ամէնքս տեսնել կայսերական հրամանին համաձայն։ Մեզի պէս խեղճ ողորմելիները ի՞նչ կրնային ընել։ Իրարու ետեւէ գացին, եւ ուղեցին զազանի ծածկել պահել զիս։ Բայց որովհետեւ նկարիչները կայսեր սուրով ու կրակով կը սպառնային, եւ Գայլանէին խիղճին դիմելով կը հարցնէին թէ արդեօք բոլոր կոյսերը տեսա՞նք, բնականարար Գայլանէ զիս ալ կանչեց։ Օր մը օրանց զեղեցկութիւն ըսուած բանը միտքէս անդամ չէր անցած։ Բայց այսօր պարտաւոր եմ հաւատալ, թէ Աստուած ինձի այդ ձիրքն ալ տուած է, որովհետեւ նկարիչները խիստ յաճախ ըսին եւ պնդեցին, թէ որ զիս նկարեն, որովհետեւ ես ճիշտ կայսեր փափաքածին պէս էի։ Ուղեցի ընդդիմանալ։ Անոնք ըսին. «Աղջիկ, Ինքնակալն է։ Խորհէ՛... Ինքնակալին կինը պիտի ըլլաս դուն»։ Վրանին խնդացի եւ ձայնեցի. «Իմ ինքնակալս Յիսուս Քրիստոս է։ Այսպէս ըսէք կայսեր»։ Հարցուցին թէ իմ անհնազանդութեամբս կ'ուզե՞մ արդեօք վճարեն ըստ իմ բարեկամութեանս։ Այդ միջոցին կանչեց զիս Գայլանէ որ նկարուիմ։ Եւ զիս նկարեցին այս հապուստովս, բայց պարտաւորուեցայ երեսու բաց թողուլ, որպէսզի, ինչպէս իրենք կ'ըսէին, կարենան տալ իմ զեղեցկութեանս մարմնացեալ պատկերը։ Երբ նկարիչները մեկնեցան, քոյրերը բոլոր իրար անցան, ժխոր մըն է վերթաւ, ճիշտ ինչպէս որ երբ մըջնակոյտ մը կը քանդուի։ Ոմանք կը խնդային, ոմանք կուրային։ Գայլանէ կը զոչէր. «Եկեղեցի երթանք եւ հանդարտինք Աստուծոյ առջեւ»։ Ամէնքս ալ գացինք եւ ծնրապրեցինք։ Իրիկուն էր։ Ամբողջ զիշերը խորհորդ ըրինք, թէ ինչ պէտք է ընել։ Ոչ ոք կ'ուզէր բաժնուիլ ինձմէ։ Բայց Գայլանէ եւ ես չէինք ուզեր որ ամէնքն ալ ինձի համար փճանան։ Ուստի փաթթեցինք ծրարեցինք ամէնէն կարեւոր բաները, եւ լուս զիշերուան մէջ մակոյկով մը Տիրերիսն ի վար նաւեցինք, ծովափ իջանք։ Տէրը որքան ողորմած էր մեզի համար։ Պատրաստ նաւ մը կար, որ արդէն

խարիսխ վերցուցած էր: Կանչեցինք ու մէջը ցատկեցինք և Աստուած  
ի դուժ շարժեց նաւապետին սիրտը, սպասեց մինչև որ մեր քոյրե-  
րէն վերջինը նաւ մտաւ: Տրդատ հետզհետէ աւելի կը զրզուէր  
Հոփսիմէն գիտելով, և տեսնելով թէ ինչ զմայլելի ձևով, ինչ-  
պէս կարճ բայց ամէն ինչ տեղն ի տեղը կը նկարագրէր — ծովային  
ճամբորդութիւնը, ծովն ու կղզիները, Գանտիա և Կիպրոս: Լիա-  
չուրթն կը գոյգր նաւապետն ու բոլոր նաւաստիները: Վճարար կը  
հաւատար թէ այդ նաւապետը լռելեայն քրիստոնեայ էր կամ բլա-  
յու շատ մօտ: Տրդատ հարցուց անոր արտաքին կերպարանքին մա-  
սին: Անոր անունն ալ գիտնալու շատ հետաքրքիր էր: Բնականաբար  
նոյն տարիքոտ, աբհեր նաւապետն էր իր բայ կապույտ, խորը ին-  
կամ աչքերով և կարօյի միանգամայն բարի թառամած զէմքով,  
նաւապետ Յուլիոս, որ նոյն ինքն Անտիոքէն Աթէնք և Աթէնքէն Ան-  
տիոք տարած էր Տրդատը: Նուրբ հեղնութեամբ մը Հոփսիմէն գիտ-  
ցաւ թաղաւորին մօտ պարզել նաւապետին բոլոր քաղաքայարական  
ձևերը, ասպետական փափկանկատ վարմունքը, այն աստիճան որ  
Տրդատ կասկածի անգամ զնաց: Երբ Հոփսիմէն իր նոր նկարագրու-  
թիւններուն ընթացքին իր հաւատքին սեփական զաւանթութեան վրայ  
խօսք բերաւ և ուրախութեամբ և լիւրջ սկսաւ զօրհանել Քրիս-  
տոսը, Տրդատ խօսքին մէջ մտաւ և ձայնեց կտրուկ. «Իմ սեղանիս  
վրայ Քրիստոսի խօսք պէտք չէ բլլայ: Հոս է Միհր Աստուած և ան  
միայն կը պաշտուի»: Հոփսիմէն բոլորովին անվախ. «Իրաւ է որ,  
ո՛վ թաղաւոր, Տէրը մեր ճամբան քեզի ուղղեց, որպէսզի դուն իմա-  
նաս, թէ ո՛վ է Քրիստոս»: — «Երկար ստեղծ է վեր գիտեմ», ծաղ-  
րեց Տրդատ: «Ձեմ կարծեր թաղաւոր: Եթէ դուն զայն ճանչնայիր,  
պիտի հաւատայիր անոր»: Սեղանին վրայ բոլոր եղողները ափ ի բե-  
րան մնացին: Ամէնէն աւելի լուռ մնացողը սակայն եղաւ նախկին  
ճղնաւոր Աղեքսանդր, որ հիմա թաղաւորին անձնապահ զունդին մէջ  
ստլայ է, սենեկապան, նաև Տրդատին ամէնէն փտասհելի պաշտօնա-  
տարը: Հողին կը փռէր Հոփսիմէնի ներկայութեանը, ինչպէս երբ  
այն հատիկ մը աղը կրկին կը ներդրածէր և կայրէր իր ներսիդին,  
այն հատիկը զոր քրիստոնէական հաւատքը ստանալով, հեթանոսա-  
կան զոհին մէջ նետեց ժամանակին: Ամէն ոք լուռ, մունջ, սեղանի  
վրայ: Ընդարձակ սեղանին վրայ խօսք մը բող անգամ չկար: Տրդ-  
ատին աչքերը, զմայլանքով արբշիտ կը հանդէսէին Հոփսիմէնի վր-  
բայ: Օ՛, սա քրիստոնեաներուն հաւատքը: Ասիկա պիտի չուրանայ  
զայն, ասիկա իր ուխտը պիտի չխոջ: Արդէն իսկ այս գիշեր բնաւ  
տուն չեկաւ Տրդատի աչքերուն: Սուրբ կոյսին պատկերը այլևս չէր  
ձգեր զինքը: Բրիսանոյզ դարձեալ մէջտեղ կ'ելլէր իր հողիին խոր-  
քէն, բայց Հոփսիմէնի պատկերին առջև կ'անյալաւոր ինչպէս

չողիլից մշուշի կազմ մը նորածաղ արեւուն առջև: Աստուած հաղի  
կը լուսանար, Տրդատ իրեն մօտ կանչեց իր խորհրդականներն ու  
չուրմերը:

Չուհեր մորթուեցան և նշանները քննուեցան: Փորոտիքները  
նպաստաւոր կը ցուցնէին: Սուրբ հացին (ծառ) հարցաքննուեցաւ, և  
սողարթները շարժեցան փափաքուածին պէս: Ժամերով տեսող խոր-  
հրդակցութիւն այն մասին, թէ թաղաւորը ինչ կերպով շարժի: Բո-  
լոր նախարարները համամիտ էին, թէ այս կիներ պիտի չկրնայ թա-  
ղաւորին ձեռքէն վերհուրլ: Ընկերակցութեամբ իր առջին պաշտօնա-  
տարներուն Տրդատ կէս օրէ վերջ Հոփսիմէն և Գայիանէի ցոյց  
տուաւ ամբողջ արքայական տունը, բոլոր գանձերը, պատկերներն  
ու արձանները, Միհրի մեհեանը, և բացատրեց անոնց իր կրօնքին  
բոլոր խորհրդանշաններն ու սովորոյթները: Օրերով, միշտ Հոփսի-  
մէն ընկերակցութեամբ կ'անցնէր երբեմն մատենագարանին սրահը  
զետնայարկին վրայ, երբեմն վերջ արքայական գահիճին մէջ, եր-  
բեմն դարաստանը, խոր խօսակցութիւններու բոնուելով երկու  
կրօնքներու մասին, բայց միշտ կը յաղթահարուէր Հոփսիմէնի միա-  
քին անսեթեւեթ պայծառութենէն և ջերմեռանդութենէն: Որքան  
երկար ստեղծ որ թաղաւորը տեսակցէր անոր հետ, այնքան աւելի կը  
զգար Հոփսիմէն բխող ազատարար մաքրագործող սղին: Ահազին,  
հսկայ վճռականութիւն մը կը թափանցէր անոր խիղճէն ներս —  
քրիստոնէայ բլլալ և կնիկը ձեռք բերել, թէ թաղ ու պետութիւն  
կորսնցնել: Գլուխը կը գոհնար: Կը զգար բոտ ամենայնի, թէ Հոփ-  
սիմէն իր վերջին տպատարար ճամբան, միջոցն էր: Հոփսիմէն ինքն  
ալ գիտէր տսիկա: Բայց ոչ մէկ բոպէ իսկ կը չեղէր իր սեփական  
ճամբէն ու նպատակէն: Աստուտուն նոր ոյժ ստացած էր, Գայիանէի  
և քառասուն ընկերո՞հիներուն ոյժը միարան աղօթքով և գոյարա-  
նութիւններով անոր վրայ եկած էր: Սոսրովիդուխտ կը տառապէր  
անպատմելի կերպով, նմանապէս Աշխէն: Կը ճանչնային Տրդատը և  
կը նախատեսէին փախճանը: Բայց տունին ճառաները պաղանի հըր-  
ճուանքով կը հետեւէին, ամէնէն բարձրէն մինչև յետինը, թաղա-  
ւորին կոխին, որ ամբողջ տունը հետզհետէ ջղապրկիտ խողի մը  
վերածեց, որուն ահաւոր վախճանին վերահասու էր իւրաքանչիւր  
ոք կանխաւ, և հեշտասէր զողով մը համակուած էին ամէնքը: Ար-  
քունիքին մէջ այնքան մեծ եղաւ հետաքրքրութիւնն ու զրպուժը այս  
արտակարգ կոխին, որ նոյնիսկ գերիները երկու մասի բաժնուած  
էին, մէկ մասը կոյսերուն ի նպաստ, միւսը թաղաւորին: Քառասու-  
նը իրենց հաւատքը չէին ուրանար ոչ բանիւ և ոչ գործով: Երբ քա-  
նի մը շաքարներ վերջ կոյսերուն սուրբ շարականները արգիլուեցան  
թաղաւորին կողմէ, ամէն առաւօտ և երեկոյ բանտարկեալ կոյսե-

բուն յատկացում՝ հասարակաց սրահէն կը թնդային բարեպաշտիկ երգերուն եղանակները, և ասով արդէն շատերուն սիրտը իրենց զարձուցած էին: Քառասունին ուտելիք ասնող և միւս ծառայութիւնները կատարող զերուհիները ամէն տեսակ զիւրութիւններ կուտային և յայտնի էր թէ որքան խանդավառութեամբ սիրահարուած էին սրբուհիներուն:

Տրդատին պալատին մէջ մոլերուն և հոկտորներուն կուսակցութիւնը ևս կը գիտէր թէ իր ազդեցութիւնը Տրդատին վրայ հետադարձեալ կը սրտիկնար որքան մեծնար Հոսիսիմէի: Հոսիսիմէի յազմութեամբ պիտի իյնար պայտասական կուսակցութեան զիրքը: Ուտի պէտք էր վերցնել զայն մէջտեղէն: Սկսաւ ստախոսութեան և խարդախութեան միւսնայն ահաւոր խաղը, ինչպէս էր Գիտիզետիանոսի արքունիքին մէջ: Մոլերը առանձինն իրար զալով խորհուրդ բրին, թէ ինչպէս կրնային Տրդատը համոզել որ Հոսիսիմէն գլխատէ: Ուտի սկսան թաղաւորին քով էրթալ մի առ մի, երկ-երկու, խմբովին: Կարգացած, կերած միջոցին, ննջասենեակին մէջ, ուր որ երթար ու կենար, ուր որ մինակը ըլլար, — կը պարզէին կը բացարձէին, թէ՛ իրեն, թէ՛ պետութեան կամքը և իրաւունքը այն է որ այս անհայրենիք, անպատիւ կնձմէն հրաժարի ինքը: Ի՞նչ կ'արժէ զեղանի կին մը, երբ նորահաստատ պետութիւնը կրկին պատերազմի բռնուի հոռմէական կայսրութեան հետ և կործանի: Թաղաւորը իրօք ա՞յնպէս կը կարծէ թէ ամբողջ Հայաստանի մէջ կարելի չըլլայ կին մը գտնել, որ հաւասարի այդ յամառ, խստապարանոց աղջիկին: Հայաստանի ազնուականութիւնը երբեք այս օտարուհին իրբեւ թաղուհի պիտի չճանչնայ: Եւ ինքը, իրենց թաղաւորը իրօք չ'ամէնար թաղուհին բարձին հասցնել մէկը՝ որ երբեք չ'ուզեր իր անցեալը մէջտեղ հանել: Աղեքսանդրի կարծիքը այն է որ հաւանաբար թաղաւորին համար կար ուրիշ միջոց մը իր կիրքը զոհացնելու: Ի՞նչ բանի համար կը կրէ այդ մականը: Ի՞նչ բանի համար թաղաւոր է, Աստուած է: Անիկա իր սպառնալից պէտք է բռնադատէ, հրամայէ, պարտաւորէ: Այս իսկ է թաղաւոր ըլլալը: Բայց երբ անձնապահ գունդին պետերը՝ Աղեքսանդր և Արտաւազ, խոր գիշերուան մէջ պայտասին դրան առջև գիբար կը փոխանակէին, վերջինը առաջինին ահանջին փսփոսաց. «Աստուածները ողորմին մեզի: Թաղաւորը խելքը թռնցնելու վրայ է: Տեսա՞ր անոր փոխուած նայուածքը»: — «Ոչ», դիտել տուաւ Աղեքսանդր, «բայց լսեցի՞ր դուն անոր հեծեծելը և հառաչելը»: — «Ոչ»: — «Ուրեմն ահանջ տուր, լսէ քիչ մը»: Երկուքն ալ ահանջ կը կախէին: Երկար ատեն լուռ բոլորովին: Եւ ահա երկուքը սարսափեցան: Թաղաւորին ննջասենեակէն ձայն մը, արտառոց շեշտով, դուրս կը խուժէր, ճիշտ այնպէս երբ առիւծ մը հեռուէն հեւայ:

Քանիցս նոյնը կ'իմանային: «Ճանրապէս կ'երազէ»: — «Պիտի աւանես, մեր սիրելի թաղաւորը հիւանդ պիտի ըլլայ այդ վհուկին պատճառաւ: Կախարդած է զայն: Անոր գերին եղած է և այլևս չի կըրնար փրկուիլ», փսփոսաց Աղեքսանդր: «Թղնէ իրեն», ըսաւ ցած ձայնով Արտաւազը, նշանակալից նայուածքով մը: «Ի՞նչպէս»: — «Ինչպէսը կա՞յ: Առաջին դործը պիտի ըլլայ ասիկա»: — «Թաղաւորին վրէժէն կը վախնամ», ըսաւ Աղեքսանդր կամացուկ մը: «Բայց» շէնց խկոյն, վրայ բերելով: «Աղաթանգեղոս հոս չէ: Ան ալ մեկնած ըլլալու է»: — «Սարսափելի մարդ», ըսաւ Արտաւազը, առջևը նայելով: «Երէկ ճշմարտ, այսօր ստատանայ: Ես քեզ սենեկապան չեմ ուզեր»:

Վերջապէս սրտոյմ մը հարկ էր տալ: Թաղաւորը հիւանդ էր: Ամէնքն ալ կը տեսնէին ասիկա: Ամէնքն ալ կը վշտակրէին և կը դւային, թէ ինչպէս ամէնքն ալ իրենց հոգիին խորքէն կը սիրէին թաղաւորը: Բայց Հոսիսիմէն ալ զաղտնի կերպով դրաւած էր շատերուն սիրտը: Պարտաւորեալ էր իյնալ, դո՛ւ ըլլալ: Ուրիշ ճամբայ չկար բաց: Քրիստոնէականներու Աստուածը հրաշք մը պիտի լնէ՞ արդեօք: Հոսիսիմէն փախցնէ՞լ: Թաղաւորին սիրտը փոխէ՞լ, որպէսպի ճգէ որ քաջուի երթայ այդ աղջիկը և քառասունը: Ինչպէս ամէնքն ալ կ'ապօթէին: Խոսրովիզուխա կ'ազօթէ, Աշխէն կ'ազօթէ: Տրդատ կ'ազօթէ: Քուրմերը կ'ազօթեն: Բայց ո՞ր Աստուածը պիտի լսէ: Գերինը այս հարցումը կ'ընէին իրարու: Խոսրովիզուխա և Հոսիսիմէն բոլորովին անձատուած էին: Հիւր ալ չէր զար այլևս: Թաղաւորը իր գիտցածներն ալ մոռցած էր, ոչ համբերութիւն ունէր, ոչ փափկութիւն: Սրբուհին — Հոսիսիմէն — չմանակցեցաւ թաղաւորին յանձնարարած վերջին հեթանոսական դո՛ւին: Իր հաւատքին ու խիղճին համեմատ չէր կրնար անոր կինը և թաղուհի ըլլալ, նոյնիսկ երբ արտօնէ զաղտնի կերպով քրիստոնէայ մնալ և զոհերու միջոցին միայն, ի զոյցս մարդկան, ներկայ ըլլալ, մանաւանդ որ զոհի կամ պատարարի Միհրաբիան արարողութիւնը այնքան ալ կը նմանի իր կրօնքին նմանօրինակ պատարարին: Սակայն Տրդատ միշտ կը բախէր անոր ընդդիմութեան: Հոսիսիմէն միշտ կ'ըսէ միւսնայն սիրուն, բարի, բայց ամուր ձայնով. «Իմ թաղաւորս — Քրիստոս — այսպէս կ'ուզէ»:

Մինչ հիւժիճ սիրոյ յորդարորը բոցը այլևս ոչ ուտել կուտար թաղաւորին և ոչ ալ քնանայ, և ան բոլորովին ջլատած տկարացած էր, Հոսիսիմէն իր հաւատքին ուժին մէջ այնքան տպահով և մխիթարուած կը մնար, որ մինչև այն ատեն հանդարտ կ'ապրէր ու կը քնանար, և նոյնիսկ աւելի զօրաւոր կը զգար ինքզինքը: Մօտալուտ ահաւոր վախճանի մը վճիտ ճանաչումը կ'աւելցնէր իրեն մէջ կրօ-

նույն ուժերն ու իր կույթան նուիրումը ղեկի հրաշային: Քառասունէն բոլորովին անջատուած, ան կը զլար անոնց ազօթքին ու կարեկցութեան սյօր իրբեւ իրական կարողութիւն իր հոգիին վրայ: Իր մարտիրոսութիւնը անով կը սկսէր որ Տրդատ այլեւս օձիքը չէր ձրղեր, եւ նաեւ առաջին անգամ ըլլալով կը պարտաւորուէր զիշերը անոր քով անցնել: Արքայական ննջարանին եւ անկողինն նրբարուեստ եւ ճարտարամիտ յարգարումը խելք թոցնելիք պերճանք մը կը ցուցադրէր: ամէնէն թանկագին մետաքսը, ամէնէն նուրբ ասեղնապարծուութիւնը, հիւսուածաները, նպատակ ունէին անոր հիացումը զրգուէր: Վարդեր ու շահօքրամներ, ամէնէն մեծարժէք նարգեան ջուրերու մէջ ստուգուած, ամբողջ անկողինն վրայ ցիրուցան, որպէսզի Հոփսիմէի գրայութիւնը պինովնայ: Թաղաւորը կ'ընդունէր գոյն Մեծին Աղեքսանդրի նման հաղուած: Մոծրակին եւ ուսերուն վրայ հասող երկայն մագերը կը շողային, անուշահոտ իւրով օծուած: Գօտիքն, թագին, ճակատի ժապուէնին եւ մատանիններուն վրայ ազամանքները կը ցոլային փոքր, կարմիր ու կանանչ ճրագներուն մթնշաղին մէջ: Սրակապանին մթութեանէն դուրս, ուրուականաձեւ կը ցցուէին ճերմակ, մերկ արձանները: Հոփսիմէի բռնի հազցուցին աննկարագրելի չքեղութեամբ սնուու եւ շողշողուն սակեճամուկ: Հայ — պարսկական հարսնցուի հանդերձանք: Իր վրայէն ալ կը հոսէր հոտ անուշից, որ կը սպասնար Հոփսիմէին իսկ զինովցնել: Ամէն բնոյզիմութիւն ապարդիւն էր: Երբ թաղաւորին մօտ տարուեցաւ ներս, քիչ մնաց պիտի նուաղէր: Թաղաւորին աչքերուն մէջ նայուածք մը հասկցուց իրեն թէ ի՞նչ դալիք կար:

Անոր խոշոր, լայնարոց աչքերը անրնտանի, արտակարգ շոգով մը կը փողփողէին: Խորհրդաւոր ծիծաղ մը կը խաղար անոր բերնին շուրջ, որ բացուեցաւ յայտնի հիացումով մը իր ներս մտնելուն վրայ, եւ զեղնած, բոցափառ երեսէն կը ծիծաղէր -- նոյն ինքն վաւաչոտութիւնը: Մենեկապանները Հոփսիմէին տարին անկողինին առջեւ, որու վրայ բազմած էր Տրդատ, անոր առջեւ նետուեցան ծրնրադիր, եւ Տրդատին կողմէ ճամբուեցան տարօրինակ անհանգարտ նայուածքով: Աղեքսանդր եւ Արտաւոսիկ կը հսկէին անհաշիւ գարգերով պճնուած ստուար կաղնեփայտեայ մեծ դրան առջեւ: Նախ եւ առաջ անոնք իմացան թաղաւորին երկար կրակոտ խօսքերը, առանց բռտերը հասկնալու: Համոզումի ամէն արուեստ, համօրէն սէր, բոփանդակ բարութիւն կը շաղկէր ան: Հոփսիմէին որեւէ ձայն չէին իմանար: Թաղաւորին վերջին բարձր հարցումէ մը ետքը միայն արձագանդեց հուժկու եւ սուրը յուզումով մը տողորուած. «Երբեք» մը: Յետոյ դարձեալ թաղաւորին քանի մը սուր խօսքերէն վերջ, որոնք անհար սպաննալիք կը յայտնէին անշուշտ, երկիցս սա միեւ-

նոյն կանչը Հոփսիմէին. «Երբե՛ք: Երբե՛ք»: Ու այլեւս ոչինչ իմացան: Մեռելական լուսիւն: Բայց անոնք անհար սպաննալի մը սոսաջին, թեթեւ շրջինը — մետաքսէ զլեւաններուն շրջինը, կ'երպասի քարշում մը, յետոյ հեծութիւն մը, արտակարգ հաստաճանք մը, հեւալ մը, շնչել մը, անդամներու ճարձատիւն մը, մարմինի մը ծանր ու խուլ իյնալը, տակն ու վրայ եղած կարտախնէրու գլորիցը, կոտորած արձաններու եւ բիւրեղներու ճայթումը: Մենեկապանները դրան առջեւ կը գոգոգոյային: Բայց որեւէ կանչ, որեւէ խանդարում արդիւրուած էր սարսափելի մահապատիժով: Անձնապահ զինուորն'ըր սուրբնին քաշեցին, կուսելու պատրաստ: Շատերը կը գոգոգոյային կարծելով թէ զեւեր կան ներսը: Վերջապէս ամէնքը պտտացին. «Օղնութիւն թաղաւորին»: — «Հանդարտ: Լուռ: Յանուն Աստուածնէրուն», հրամայեց Աղեքսանդր: «Մտիկ բըժք»: Կատաղի կոխի մը հեղահեղ զօրաւոր նշաններուն միջեւ որոշակի կը լսուէր սրբուհիին յաղթական ցնձաղին ձայնը. «Օն, Սուրբ Հոյին, Հայր — Որդի: Ըբէ նշաններ եւ հրաշք, Տէր, քու աղախինիդ վրայ: Օն, պարութիւն Տիրոջ»: Նորէն լուսիւն, եւ պահակները, յուզուած, տկանջ կուտային երկեցողութեան. —

Որդին կը գգայ արդէն երկնային ուժը,  
Ուտի, Տիրոջ հոգի, աւար գօրութիւն բնո գօրութեան...  
Դեբորա, Եսթեր, սպաննեցին մարդիկ,  
Բայց իրենց հաւատքով ու անմեղութեամբ դարձան հերոսուհիներ,  
Եւ յաղթեցին լաւագոյնս զինուած մարդոց:

Յանկարծ ներսէն ճարձատեց փականքը: Գուռը վեր ցատկեց եւ Հոփսիմէ Լրեցաւ պատտոտուն հարսանեկան հարսուով, խառնափնթոր մագերով, որոնք զբեթէ ամբողջութեամբ կը ծածկէին անոր բոցափառ զէմքը: Աչքերէն ու Լրեւէն սակայն կը ցոլար լըջութիւն մը եւ յաղթական ուրախութիւն մը մխանդամայն, այնպէս որ պահակները անոր նայուածքին առջեւ ետ քաշուեցան: Իսկ ինք թաղուհի մը պէս նրբանցքին երկայնքին կ'երթար եւ անխափան կը գտնար քառասուն բնիկուհիներուն կողմը: Ամէնքն ալ ծնրադրած էն: Եւ այս միճակին մէջ Հոփսիմէի հեռանալէն ի վեր: Միտերեան ճիշ մը զարմացումի: Ամէնքը վեր ցատկելով յարձակեցան անոր վրայ, տեսնելու համար թէ ի՞նչն է իրօք անձամբ, թէ իր սղին: Ան ձայնեց. «Պաշտեցէք եւ պահութիւն տուէք: Տէրը յաղթութիւն տուաւ ինձի»: Յետոյ ամէնէն մօտի անկողինն վրայ տարուելով ինկու քնապու այնպիսի քուն մը, որմէ այն ստեղծ միայն արթնցաւ, էրր սենեկապանները եկան կրկին հաղուեցնելու զինքը իրբեւ հարս: Նոյնիսկ Գայիտանէ պարտաւորուեցաւ վերջ գրան առջեւ կենալ երկու սպաններուն մէջտեղ: Իր պաշտօնն էր դուռնէն Հոփսիմէին անունը տալով քա-

Նախերեւել զայն, սրտապնդել եւ անձնատուր ըլլալու յորդորել, կռիւին նշանները լսելուն պէս: Գայիանէ պահ մը կարծեց թէ թաղաւորին պահակներէն ոչ մին լատիններէն կը հասկնայ եւ բարձր ձայնով զոչեց. «Անյվեհեր եղիր»: Ներսէն զոտաց ուրախ աղաղակ մը. «Մինչեւ ցմահ»: Գայիանէ վերջացուց. «Եւ ես տաց քեզ զպսակ կենաց»: Ներսէն երեք անգամ, բարձր, հզօրապէս, ցնծապէս. «Ալէլուիա, Ալէլուիա, Ալէլուիա, Յիսուս կը յաղթէ»:

Կռիւր կրկին սկսած էր եւ բոլոր նշաններուն նայելով աւելի զէջ քան առաջին անգամ: Գայիանէ կարճ կտրուկ բառերով ձայնեց. «Աղջիկս, -- մի՛ վախճար: Մի՛ թուլանար: Աստուած քեզի հետ է -- Յիսուս կը մարանչի քու միջոցաւ -- Մահը կեանք է: -- Տառապանքը՝ բերկրութիւն»: Զինուոր մը Աղեքսանդրի մօտ ցատկեց զնաց եւ զոչեց. «Պետ, այս պառաւը կը քաջալերէ ներսի վհուկը, որպէսզի դիմադրէ, ոչ թէ հնազանդի: Լատիններէն կը խօսի: Ես լաւ կը հասկընամ»: Գայիանէ շիմացաւ ըսածը, այնքան լեցուած էր եռանդով, զինուորին պարսէներէն ալ չհասկցաւ ուստի շարունակեց հետզհետէ աւելի խանդավառ. «Չըլլայ որ տկարանաս: Յարատեւէ: Յաղթութիւնը քուկը է»: Եւ հուսկ ուրեմն երգեց սա բառերը. —

«Երանի որ սուրբք եմ սրտիւք,  
Զի նոքա զԱստուած տեսցեմ:  
Երանի որ հալածեալ եմ վասն արդարութեան,  
Զի նոքա է արքայութիւն երկնից»:

Բայց չըրացուց օրհնարանութիւնը: Սաստիկ հարուած մը բերանին վրայ ետ դիմացը ցատկեցուց զինքը: Գայիանէ քիչ մը ինքզինքը ժողովեց եւ ահա կ'իմանար Տրդատին առիւծաման գարհուրելի շնչիւնը եւ անոր սարսուռիւն հեծութիւնը, յետոյ ահա խորունկ, ծանր անկում մը եւ ոտնոց մը իբրեւ կենդանի: Եւ այս ամէնուն վերեւ սակայն աղաղակ մը զուարթապէս: Նորէն հատ մը: Հատ մըն ալ: Եւ յաղթութեան ցնծութեամբ տողորուած հրահոսան փառարանութիւն մը:

Անձնապահ զուգորին սպաները ներս մտան զուռնէն որ զոչուած չէր, եւ Գայիանէն ծոծրակէն բռնած տարին Տրդատին առջեւ: Բայց ան ամբողջ իր երկայնքովր մարմինին վրայ փոռուած էր գետիներ, գլուխը խաչածեւ ըրած թեւին մէջ եւ ձեռքը մաղերուն մէջ թաղած եւ կր հեծեծէր բարձրաձայն: Զուսանները պատտաւած, որոնց կտորուանքը Հոսիսիսի ձեռքն էին, ան կեցած էր աներկիւզ եւ ուզիլ միտին մարմինին վերեւ, ծիփուն մաղերը երեսն զուրս եւ կը զոչէր լատիններէն, Գայիանէի կողմը. «Յիսուս յաղթական մնաց»: Գայիանէ կարող չէր խօսիլ, բայց իր նայուածքները կը հանդիպէին

սրբուհիին եւ երկուքն ալ զիտէին. «Ժամն է հասած մարտիրոսական մահուան: Զօրացիր: Անյվեհեր եղիր»:

Տրդատ վեր ցատկեց, բայց զինուորի պէս թարթափեցաւ: Այնքան տկարացած էր, որ նորէն գետինը պիտի իյնար, եթէ Աղեքսանդր զինքը չրոնէր: Երբ Տրդատ իմացաւ Գայիանէի արարքը, բոլորովին կատղեցաւ: Սորունկ վայրազ, խեղդ ձայնով մը, թաւալուն աչքերով, որոնց առջեւ նոյնիսկ կը տակային սպաները յայտնապէս, կիներուն վրայ թափեց ամէնէն աւելի զրուելի նախատակոծ խօսքերէն հեղեղ մը, կ'ուզէր ալ իյնալ յարձակիլ անոնց վրայ, բայց ամէն անգամուն ալ ետ ետ կ'երթար սոսկալով Հոսիսիսի նայուածքէն, զսպուած առիւծի մը պէս: Հիմա, ահա կը պոտար. «Քոնեցէք զայն, տարէք, թող կորսուի: Սպաննեցէք զայն»: Գուրբ վայրազ կանչը ընտուք մը ատելալառ եւ սպաննելու ցանկութեամբ արբէի մարդոց: «Հապա քոտասունը», զոչեց Աղեքսանդր փութով, Տրդատին ուղղուելով: «Ամէնքն ալ պէտք է սպաննուին արեւածաղէն առաջ»: Սարսափելի հրամանը բերանէ բերան թռաւ պալատին մէջ: Սուրբօրովի զիսախօսի վաղեց եղբորը վրայ, կ'ուզէր խօսիլ, բայց անոր շուրջ եւ անոր առջեւ տալանալը այնքան զարհուրելի էր որ՝ կողորդը բռնուեցաւ եւ բառ մը չէր կրնար արտասանել, եւ անոր ահարկու, նմանը չտեսնուած նայուածքին առջեւ փութաց փախչիլ, կարծես ուրուականներէ հալածուած, եւ զնաց փակուեցաւ վերը աշտարակին մէջ, ուր սկանչները բռնելով եւ աղօթելով եւ լալով կ'ընկերանար իր հաւատակից բնկերուհիներուն մարտիրոսական մահուան: Ինք ալ չէր զիտեր թէ որքան տառն այդ մտամփոփ յիծակին մէջ պառկած մնաց իր անկողինին առջեւ, բուրդէ թանձր զորդին մէջ զլուիւր թաղելով: Գողալով սթափեցաւ եւ նայեցաւ որ մթնցեր է: Երեւեալ տատանեալ զնաց աշտարակին առջեւները շինուած անկիւն մը, որուն երեք ձուածեւ զմբէթաւոր պատուհաններէն զուրս տակաւին աղօտ կերպով կը նշմարուէին շրջակայ երկրամասը, լիճը եւ անտառները, լեռներն ու Արարատը արդէն իսկ մառնամուտ արեւուն հուսկ յետին լոյսին մէջ: Վերօք Վաղարշապատի տունները ճերմակ գառնուկներու պէս կը պլպլային: Լուռ զիշեր կը դարէր աշխարհին վերեւ: Հեթանոսներուն ահաւոր ճիշերէն եւ վրէժխնդրական ոտնոցներէն ալ բան չէր լսուեր: Սուրբօրովի զուրս աչքը կը անկէր կը լրտեսէր զէպի վեր, զէպի վար: Հոն ուր հին քաղաքին գերկաման է, միջին կամուրջին մօտերը, հոն ալ ամայի լուռ էր: Հոն էր ատենօք զլիսատումներու հին սարսափելի վայրը: Ահա հոն կը շարժի մթաստուեր զանդուած մը: Սուրբօրովի զուրս մութին մէջէն նայելով նայելով, կը յողնի: Հոն մարդ կայ: Շատ մարդ: Ի՞նչ պիտի տեսնեն, պիտի հանդուրժեն: Ո՛չ, ընդհակառակն, ուրախ են կը ցնծան: Անոնք



լրիւ կատարեցին իրենց ընթացքը, իրենց Քրիստոսին թաղաւորութիւնը եւ սիրելիները գտնելու համար: Լրիւ աւարտեցին: Սուր ցիցերու որժափակ մը կանգներ են: Քառասուն կոյսերը մարմինով, ձեռքերով ու ստքերով կախուած են անոր վրայ եւ աղօթելով իրենց հոգիները կ'աւանդեն:

Թաղաւորին ննջասենեակին առջեւ հաւաքուած էին իր պաշտօնատարները, միշտ թիւով աւելի: Սենեկապանները Օտա, Արտաւաղ, Աղեքսանդր, երկար առնել ի վեր կը սպասէին ներս կանչուելու ձայնին: Անձնապահ զուճիկն սպաները ետ կը դառնային, զինւորներն ալ: Ոչ մէկ ձայն կ'իմացուէր: Դուրսը գտնուողները ահագոյի մտանուած էին: Թաղաւորը մեռա՞ւ արդեօք: Անձնապահ՞ն եղաւ: Ականջ կը կախէին: Իրարու ետեւէ: Խոր լուսթիւն, մինչեւ կէս զիշեր: Եւ ահա կը սկսի առիւծին շունչը: Դրան զէմ խուլ անկում մը: Դուրս կը ցատկէ: Թաղաւորը, Մեծին Աղեքսանդրի ձեռով հաղուած, բայց պատաստուն, մաղերը քաշուած փետուած վիճակի մէջ, կ'երեւի զրան առջեւ, եւ վեհափառութիւն կը հրամայէ սարսափահար անձնապահ զուճիկին. «Ինձի բերէք սիրուհին: Ինձի բերէք զեղանի հարսը»: Ո՛չ մէկ անգամ կը շարժի: Ո՛չ մէկ ձայն կը լսուի: Թաղաւորը նոյն վեհութեամբ իր ննջասենեակը կը դառնայ եւ կը սպասէ պահ մը: Յետոյ դարձեալ մէջտեղ կ'ելլէ ողորկ բիրեղէ իւզի ամանով մը: Արծաթէ թոշուն մը իր ճիրաններուն մէջ կը բռնէ աճանք եւ կը պատրաստուի թոշիլ վրայէն: Անոր բաց կտուցէն դուրս կ'այլի պատրոյրը, որուն ծայրը իւզին մէջ: Հիմա ամէնքը կը տեսնեն թաղաւորին երեսը, տակէն լուսաւորուած: Դեփ զեղին կիտրոնի մը պէս: Աչքերուն ճերմակը կարմրած: Բիբերը սեւ կեռասներու պէս: Չայնը բոյրովին փոխուած: Սպաններն ու զինուորները զուճիկով: Ետեւ մնացողներէն մէկ քանին կը հեռանան կը քաշուին:

«Բերէք հարսը, զեղանի, շքնաղ, անուշիկ հարսը: Տեսա՞՞մ էք դուք այսպիսի հարս: Իմ հարսս — իմ»: Թաղաւորը այլ յայլմէ եղած, կը խնդար անոյշ մը: Չինուորներուն աչքերը կը ճարձատկին զեղանի: «Կուզա՞յ ան», գոչեց թաղաւորը եւ քանի մը քայլ առաւ զեղի դուրս, զինուորներուն քովէն, որոնք պատի պէս կեցած էին, մինչ իրենց ակասները իրարու կը զարնուէին:

«Ձի գար»: Թաղաւորը ետ դնաց: Տալնապալից նայեցաւ զինուորներուն, յետոյ սպաններուն: «Ի՞նչպէս է ժամը»: — «Կէս զիշերը անգամ, թաղաւոր», գոչեց Աղեքսանդր ուժով, բայց անոր ձայնին մէջ զլուրի էր պող արհաւիրքը: «Կէս զիշեր», թնդաց արտաստիւր ձայն մը թաղաւորին տմուկնա՞ծ շրթունքներէն երկարաձիգ: «Կէս զիշեր: Ուրեմն հանդիստ կը քաննա՞յ ան», հանդարտեցուց ինքզինքը թաղաւորը: «Կը քաննայ», ձայնեցին շատեր պահակներէն, կարծես

ապատ շունչ առնելով: «Կ'ուզեմ որ թողուի քնանայ»: — «Եւ կը քնանայ արդէն, թաղաւոր», ձայնեց նախարար Օտա, անոր առջեւ իյնալով, եւ ամէնքը իրենց երեսն'ըրը դրին հողին վրայ: Թաղաւորը, երայ ակասա՞ծի պէս, դանդաղութիւն իր նրաւորը ննջատրահ գարձաւ: Պատարը պատեց զինուորները: Հծծելով կը խորհէին կը խորհողակցէին սրտատրոփ, բայց զիշերուան մութը անյայտ ըրաւ դանտեք, մին միւսին ետեւէն: Քանի մը հոգիներ միայն պատրաստ էին սպաներու հետ, երբ աւաւտեան մթնշաղին սենեակէն դուրս խուժեց սարսափելի ձայն մը, որ կրկին զոգացուց բոլոր զինուորները:

«Իշխան Օտա»: Ամէն կողմէ կ'իմացուէր այս կանչը: Օտա հոս հոն կը կրթնէր, կը սպասէր, գոտին կը քաշէր որպէս թէ ամբարջնելու համար, հասցուստին եւ վրան զլուսին կը նայէր, եւ ահա կանչը կրկին մոնչեց. «Իշխան Օտա: Ո՞ւր մնացիր»: — Օտա զրան դանդակը բռնեց, նորէն ձգեց: Դարձեալ ձեռք առաւ: Երբորդ կոչը խուժեց դուրս, այնքան սարսափելի, այնքան արտասոց, որ ամէնքն ալ կը մեղքնային սենեկապետը, անոր ետեւէն մտան եւ խոստացան պաշտպանել զինքը: Օտա յատուցեցաւ: Չինուորները ամէն բառ կը լսէին. — «Ո՞ւր է Հոբիսիմէն»: — «Թաղաւորս»: — «Ո՞ւր է ան», որոտաց արքան, բառ երեսոյթին յատակամիտ: Իշխան Օտա եւս այնպէս դրաց եւ քաջալերուեցաւ: Չայնեց հանդարտ եւ ամուր: «Տէքս ե. թաղաւոր, բայց զուճ հրամայեցիր...» — «Բերել զայն»: «Ո՛չ: Այս — Ո՛չ, զայն, զայն —» — «Ի՞նչ, օ, օ, ի՞նչ — ի՞նչ հասկնամ տակէց — զայն —» — «Չայն սպաննել, թաղաւոր»: — Օ — Հ»: Երկարաձիգ քստմնելի Ո՛հ մը — եւ հետզհետէ խոշորցած նայուածքը որոշակի ցոյց կուտար, թէ ինչպէս պայծառ զիտակցութիւնը կը վերադառնար: Յոյս մը կը պլլլար հատած մաշած երեսին վրայ: — «Բայց տակաւին չսպաննեցիք, չէ՞»: — «Տէր իմ, հրամանդ շատ խիստ էր»: Կարծես թաղաւորին աչքերը զետինը պիտի իյնային: Անձանաշիլի բլլալու աստիճան արուեցան զիմադիծերը, ակոսները իրար կը ծեծէր: «Յնորք, ցնորք, զիտեցիք անշուշտ որ ես ցնորած եմ — ուստի ան կ'այլի տակաւին, կ'այլի —» — «Կ'այլի, կը յուսանք, լաւագոյն աշխարհի մը մէջ —» — «Կրցա՞ք մեռցնել Հոբիսիմէն: Համարձակեցաք այդ բանին — ձեռքերնիդ զնել անոր մարմինին վրայ: — Ո՛հ: Ո՛հ: Ան մեռա՞ւ»: — «Քու հրամանովդ, թաղաւոր: Լսէ, թաղաւորս —»: Բայց այլևս մտիկ չէր ընէր: Իր լայնափեռեկ բերանէն փրփուրը կը վժար լայն պղպղակներով: Իր բուրովին խաթարուած զէմքը առջեւ ինկաւ վար, եւ ծանր, խուլ անկումով տախտապարուեցաւ զետինը անզայն:

Ոչ ոք, նոյնիսկ բժիշկը, քաջութիւնը ունեցաւ անոր մօտենալու: Ամէնքն ալ քաշուեցան: Երբ Տրդատ պայծառ կէսօրին խորունկ

նուաղումէն արթնցաւ, բոլոր անդամներովը կը դողար: Անդիտակ-  
ցարար ձեւց որ հանուեցնեն զինքը եւ անկողին տանին: Աշխէն եւ  
Պոսրովիդուխտ շհուսցան այլևս անկողինին քովէն, եւ իշխան  
Օտա, զօրավար Արտաւազը եւ Աղեքսանդր սասնձնեցին կառավարա-  
կան ամենակարեւոր գործերը, թաղաւորը այլևս ոչ ոք կը ճանչնար:  
Տենդայոյց անհնարին երազներու մէջ կը ցնցուէր, կը ծառանար եւ  
կ'իշխար դարձեալ անկողինին վրայ: Կը բարբառնէր ամէն սպրուածք,  
Աթէնքի մէջ անցուցած ամբողջ ժամանակը մինչեւ յետին դէպքերը,  
չփոթ խառնափնդոր կերպով, բայց խօսքերը եւ անուանները միայն  
կը մատնէր, որոնց հետ իր միտքը ցնորքի այս բողջներուն կը գրա-  
ղէր: Զուտելի ծիծաղ մը երբեմն, որ վայրկեան մը վերջ անասնաման  
ոտնոցի մը կը փոխակերպուէր դարձեալ: Բժիշկը մարմնական որեւէ  
հիւանդութիւն չէր գտներ, բայց կը վախնար որ թաղաւորը յիմար  
կը մնայ: Ի վերջոյ Տրդատ իր ամբողջ ուշադրութիւնը դարձուց մի-  
այն Ազաթանգեղոսին եւ Հոսթի մէջ Միհրի դարհուրելի խորհրդա-  
տօնին առթիւ քաջածնեւուն: Բժիշկը հետզհետէ հաստատեց թէ կարճ  
չունչ առնելուն, արագ արագ հեւալուն այս փիճակը կապ ունի այն  
արտայայտութիւններուն հետ, զոր խելացարած թաղաւորը կ'ընէր,  
երբ Հոսթի մէջ իր սպրուածներուն խառնափնդոր յիշատակներով կը  
զբաղէր միտքը, երբ իրբեւ առիւծ սպրեցաւ կամ թռչուն եւ կամ  
իրբեւ տարբեր անասուն, Միհրի այն խորհրդաւոր փարձութիւններու  
միջոցին: Իրաւ է թէ խորհրդաւոր արարողութիւնները անկէց ի վեր  
հոս իր արքունիքին մէջ ալ կը կատարուին, բայց իր միտքը հիմա  
Հոսթի մէջ այն ստաջին սպրուածներուն տարուած է բոլորովին: Ի  
վերջոյ արտաստօր բայց վեհ զէմք մը ստացաւ: Երբ անդամ մը  
Աշխէն սենեակ դարձաւ, տեսաւ որ Տրդատ բոլորովին մերկանդամ  
պառկած էր փորին վրայ զետիւր եւ իրեն կը նայէր սպառնական  
նայուածքներով: Իր կերպարանքէն եւ անդամներուն ձեւէն ու շար-  
ժումներէն այնպէս կ'երեւնար որ առիւծի մը պէս ահա պիտի ցատկէ:  
Սելադարութեան մէջ աւելցած ուժով խոշոր մարմինը ամէնուն սոս-  
կումով գուշակել կուտար մօտալուտ զժրախտութիւն մը: Աշխէն,  
զեփ զեղին կտրած, այդ կերպարանքը եւ փիճակը զիտելով. «Թա-  
ղաւորս», բաւ, անոր ձախ կողմին վրայ ծունկի գալով եւ շատ  
փայփայանքով, իր թեւերով փաթթուելով անոր վրային: Յետոյ ստա-  
տիկ կսկիծով անոր ճակատին ու շրթունքներուն կը զրոյժէր համ-  
բոյր համբոյրի վրայ եւ բարձրածայն կը հռոտէր, երես մաղերուն  
մէջ ծածկելով: «Տրդատ, թաղաւորս: Զիս չե՞ս ճանչնար այլևս»: Առիւծարքայն զլուխը Աշխէնին կը ձուլէր եւ կը սկսէր յիզել անոր  
երեսը, վիզը եւ ձեռքերը: Երբ ներս մտաւ Պոսրովիդուխտ եւ կղ-  
բօրը նայեցաւ, քիչ մնաց նուաղելով զետիւր պիտի իշխար: Պոսրով

կանչելով ցատկեց դուրս ելաւ: Տրդատ սարսափելի ոստումով մը  
մէկ կողմ նետեց Աշխէնը եւ վայրենի վազքով Պոսրովիդուխտը  
սկսաւ հալածել: Պոսրովիդուխտին օյնութեան կանչերը պալատը կը  
լեցնէին: Գերիններ եւ անձնագրահ գունդին զինուորները ամէն կողմէ  
վաղեցին հասան: Պատմափնդոր կերպով փախչող փախչողի: Թաղա-  
ւորը սենեակէ սենեակ կը վազէր կատաղօրէն, արքայական սրահէն  
պալատին սանդուխներն ի վար եւ ելաւ բացօթեայ: Գիսախտիւ եւ  
փրփրատ բերանով, քաղաք վաղեց: Մարդիկ տուները կը փախչէին,  
աղաք լեզապատտո եղան մնացին մինչեւ որ թաղաւորը վաղեց զնաց  
իրենց մօտերէն: Կը սուրբար գաշտապետին վրայ, շուներ, ոչխարներ,  
կոյներ կը փախչէին իր ստջեւէն: Գիւղացիները իրենց աղարակները  
կը փակեն: Ոչ ոք կը կեցնէ թաղաւորը: Ոչ ոք կ'ընայ անոր հետեւի:  
Բայց մթնշաղին երբ վերադարձան զայն փնտտելու դացող մարդոցմէ  
ոմանք, յանկարծ գտան զայն պալատին բարձր մարմարեայ սանդու-  
խին վերեւ տափարակի մը վրայ, երկու առիւծներու միջեւ պառկած,  
որոնք զեղին մարմարինէ կ'ափածոյ, զլուխը հանդարտ, կենսափայտ  
զիրքով եւ վեհաշուք արտայայտութեամբ կը կրեն ստուար զեղին  
սիւները որոնց վրայ կը հանդէպ նախադաւիթին տանիքը իր կանանչ  
բասալեայ կզմիւտներով: Տրդատ պառկած էր հոն ահա եւ ան-  
շարժ կը յատէր զէպի քաղաքը: Ծառաները սաղիէն անդիէն հաւաք-  
ուեցան լալով եւ կը պոռային: Աշխէն յամբօրէն մօտեցաւ թաղա-  
ւորին: Թողուց որ առաջ զայ զէպի ինքը եւ պոռաց կանչեց ուրա-  
խութենէն: Մատակ առիւծի մը նման պառկեցաւ անոր մօտ, որ  
սկսաւ դարձեալ լիզել զայն եւ զլուխովը զգուել: Պոսրովիդուխտ իր  
եղբոր հիւանդութենէն ի վեր սենեակէն դուրս ելած չէր: Սենեակ  
կը տանէին իր ուտելիքն ու խմելիքը: Բայց ոչ մէկ բանի ձեռք կը  
զարնէր: Անդադար կ'ազօթէր եղբօրը համար: Բայց զժրախտութիւ-  
նը աւելի մեծ եղաւ: Թաղաւորին խելադարութիւնը վարակեց անոր  
ամէնէն հաւատարիմ ծառաները, եւ մին միւսին ետեւէն կը սկսէր  
ունենալ Տրդատին լուտ, քարացած, ալեծուփ նայուածքները, կամ  
անոր պէս հեւալ, չնչնէլ:

Վերջ ի վերջոյ պալատին ծառաները ուղղակի չէին յարաբեր-  
ուեր, այլ իրենց, թաղաւորին եւ Աշխէնին միջեւ պարապութիւն մը  
կը ձգէին: Ամէնքն ալ խելացնորքէ բոնուած էին, եւ որպէս թէ եր-  
կար առեն այդ սարսափելի գերին համար կը մարդուէին, ծառանե-  
րէն իւրաքանչիւրը կրնար հիմա բնականին պէս ձեւացնել կենդանիի  
նայուածք, ձայն եւ հանդամանք, ինչ որ Տրդատ ներկայացուցած էր  
Հոսթ Միհրի պաշտամունքին խորհուրդներուն մէջ եւ հիմա խելա-  
ցրնորութեան միջոցին կը կարծէր թէ իրօք ինք իր երբեմնի ձեւա-  
ցուցած կենդանին է: Ծառաներէն ոմանք հաղուած էին, ուրիշներ

կիսազգեստ, կային ալ որ թաղաւորին պէս մերկ էին: Կարծես ընազդէ մը մղուած, անրաժան էին թաղաւորէն, որքան յաճախ որ ան իրենց անտեսանելի կ'ըլլար կատաղի ոստումներով եւ անհաշուելի վազերով:

Օր մը տեսան անոնք, թէ ինչպէս առիւծարքայն ցատկելով բռնեց ոչխար մը, ահուաներովն ու մաղլաւոր ձեռքերովը պատուց եւ հուժ միսը կերաւ: Անոնք ալ յարձակեցան հօտին վրայ զիւզացիին ազարակին մէջ եւ խեղդեցին, պատառեցին ու կերան ոչխարներու, հաւերու, բազերու եւ սաղերու արիւնով միսը:

Հետզհետէ այդ ծառաները թաղաւորին քովէն չէին դատուեր ընաւ, թռչուններու պէս կը ցատկէին, թեւերնին կ'երբեցնէին, որպէս թէ չըջակայքը կը թռչին, բարձրաձայն կը ճողուողեն կամ կը կաղկանձեն արծիւի կամ սղոսաւի պէս: Ուրիշներ օձ կամ որդ կ'ըլլային եւ փորի վրայ սողալով թաղաւորին մօտ կ'երթային: Աշխէն միայն կը պահէր իր յտակամտութիւնը: Ան զիտէր, թէ հիմա ժամանակն է որ ինք աստուածութեան կամքին համաձայն անտանելի տառապանքներով հօրը յանցանքը քաւէ եւ անոր անզնական աղաւտութեանը օժանդակէ այս կերպով: Հօրը սիրոյն համար Աշխէն այսպէս կէս-օրուան արեւուն բոցին կը հանդուրժէր բացօթեայ, ժամերով մնալով Տրդատին մօտ ազարակի մը մէջ կամ պատին քով պառկած: Տրդատին մարմինը մոխրագոյն եղաւ առիւծի մը մարմինին պէս: Մազերը աւելի երկնցան, խոռուցան, եղունգները մազիւններու կամ ճանկերու փոխուեցան: Արդէն հուժիւ ձայնը դարձաւ եղաւ որոտաղին, այնպէս որ երբ լուռ կէս օրին կամ զիշերը մոնչէր, շատ հեռուէն շուները կ'ոռնային եւ զայլերը կը կաղկանձէին: Ամէնէն հեռուոր ազարակներու վերեւ ճրագներ կը վառէին, կենդանիները փախցնելու համար: Ժամանակէ մը ի վեր թաղաւորը լիճի մը եզերքը կ'անցընէր, Վաղարշապատէն մէկ օրուան ճամբայ հետի: Խելազարներուն շարքը հաւատարմօրէն իրեն կը հետեւէր: Ամբոն կէսն էր: Ծաբաթներով անձրեւ չէր եկած: Թաղաւորը սաստիկ կը տառապէր տաքէն, խիստ զրզուած էր, իրեն մօտեցողներուն կ'իջեցընէր խարաղանովը, նոյնիսկ Աշխէնին, կը ճանկրտէր զայն եւ վէրքերէն արիւնը կը խմէր: Բայց աղէտքին չափը յորդեց, երբ առիւծարքայն սկսաւ իր սեռական հեշտանքը դոհացնել Աշխէնին վրայ, եւ Աշխէն բոլոր այն ցնորածներուն զիշեր ցերեկ հանած ժխորին, տեւական ոռնոցներուն, բոլոր զրկումներու, մարմնական եւ հոգեկան տառապանքներու մէջ մայր եղաւ: Խոսքով իրուխտ եւ արքունի կիները Աշխէնը հոգացին հաղուսաներով, պաստառներով եւ ամէն տեսակ միսով եւ պտուղներով: Ծառաներ բաւական հեռու կը տանէին այս բաները, արմաւենիներու եւ բարձր թուփերու տակ կ'ծկտած

սարսափահար կը նայէին դէպի լճափը, ուր եղէգներուն մէջ թաղաւորը եւ իր հիւանդ ընկերը անձանաչելի դարձած կը հանգչէին: Աշխէն չէր իսկ կրնար շարժիլ հիւանդ թաղաւորը ձգելու համար: Մէկ պաղափարով միայն տակաւին կեանքին կը կապուէր: Կոչ մը միայն մերթ իր շրթունքէն կը փախչէր մեղմիկ շրջող եղէգներուն մէջէն լուսնաչոյ լիճին մկանունքէն զէպի վեր աստեղազարդ ճաճանչաւտ երկինքը: «Հա՛յր, ո՛վ հայր»: Այսպէս կը հեծեծէր առանձին, ցաւատանջ երկունքին մէջ: Այսպէս կ'աղաղակէր զիշերուան մէջ, երբ քիչ մը վերջ, տեղէ մը դարձին, այլեւս տղայ չգտաւ, եւ առիւծարքայն իր սարսափելի ճաշին վերջին մնացորդները լեզուովը կը լիզէր բերանէն եւ շրթունքներէն: Աշխէն ինկաւ ափ ի բերան նուաղկոտ անոր մօտ, փաթթուեցաւ գլուխին եւ իր մարմինը ժամերով կը ցընցընէր ու կը սարսէր: Իսկ առիւծը կը մշմշար եւ կը լափլիզէր իր կարծեցեակ մատակ առիւծը:

## DIE STARTEN ZUM RAUBE

Պալատական պաշտօնատարները եւ սպաները, Սոսրովիզուխտ եւ արքունի տիկիները մինչեւ վար ամէնէն ստորակարգ զերիները, ամէն օր խորհուրդ կ'ընէին, թէ ի՞նչպէս կրնային թագաւորը ներս պալատ բերել: Ո՞վ պիտի համարձակէր ձեռք դնել անոր վրայ: Սոսրովիզուխտ զիշեր մը Երազին մէջ տեսաւ քարայր մը, եւ մէջն ալ գունատ, ծերուկ, բարեպաշտ մարդ մը, եւ հրեշտակ մը կը յանձնարարէր իրեն Սոսրովիզուխտին, այդ մարդը կանչել, ան պիտի փրկէ թագաւորը: Երազը կրկնուեցաւ յաջորդ զիշերներուն: Սոսրովիզուխտ Երազը պատմեց նախարարներուն եւ տիկիներուն, եւ կը պնդէր այն մասին, թէ այս Երազը Աստուծոյ կուգայ եւ ծերունին պէտք է փնտռուի: «Ո՞վ զիտէ, թէրեւս Ազաթանդեղոս տակաւին կ'ապրի»: Բայց միւսները ամէնքն ալ ըսին իրեն թէ ասիկա անկարելի է: Որեւէ ոճրագործ որ հոն ձգուի կը մեռնի անօթի կամ օձերէն: Բայց Սոսրովիզուխտ կը պնդէր ու կը պնդէր:

Այդ այրը կամ անձաւոր վաղարշապատէն քանի մը օրուան ճամբայ հետի էր: Օտա, Աղեքսանդր, Արտաւազդ նախարարները, եւ սպաներ զունդ մը զօրքով ճամբայ ելան զէպի Արտաշատ, հին մայրաքաղաքի մը եւ միհրական մեհեմնին աւերակները, ուր կային շատ մը խորունկ քարայրներ: Էշերով տարին ուտելիք, թանկագին զգեստներ, ոսկի եւ պատուական քարեր Ազաթանդեղոսի համար, էթէ դեռ կ'ապրի: Կէսօրուան միջոցները հասան քարայրը եւ վար հակելով կանչեցին. «Ազաթանդեղոս, ո՞ղջ ես դեռ»: Կարծես խորունկ կամարակապ նկուղէ մը զուրս եկաւ զօրաւոր ձայն մը. «Ողջ եմ: Եւ Քրիստոս կ'ապրի իմ մէջս»:

Պոստոփիղոսի կուրծքէն թաւ ուրախութեան ազազակ մը: Յետոյ սա բարձր կանչը. «Ազաթանդեղոս», որ երկար արձազանլոյ վարը կամարին մէջ թրթոց, եւ Ազաթանդեղոս ձայնեց երեքազին ձայնով. «Պոստոփիղոս»:

Իշխանները դունաթափ կեցած կը գողզալին այրին եղերքը եւ ուրախ էին որ Պոստոփիղոս իրենց կողմէ բանակցութիւնը պետի վարէ սուրբին հետ: Չէր կրնար տեսնել դոյն, բայց հատիկ հատիկ եւ շափուած ձեւուած բառերով զէպի քարայրն ի վար բրաւ անոր Տրդատի ճակատադրին ամբողջ տխուր պտտութիւնը: Պարտաւորուեցաւ կրկնել ոչ սակաւ բառեր, որովհետեւ արձազանդը կուլ կուտար զանոնք: Եւ որքան մեծ եղաւ զարմանքը վերը ամէնուն, երբ Ազաթանդեղոս ձայնեց զէպի վեր, թէ արդէն պիտէ ամէն բան: Պոստոփիղոս պաղատեցաւ անոր, վեր դալ կամ օդնել իրեն վար իջնել քովը: Եւ չորս կողմը կը վազէր այրին բերանը, անկարող ըլլալով աւելի երկար հանգարտ մնալու: Մէկ ոտքը արդէն վար կը կախէր եւ կը փորձէր առաջարին վրայ քաշել, բայց բաց օդին մէջ միայն կրցաւ մտնել եւ հազիւ ինքզինքը դուրս քաշեց, երբ արդէն Ազաթանդեղոս տապանապալից ձայնով կը գոչէր խորունկէն. «Պոստոփիղոս, քու կեանքիդ սիրոյն ըլլայ, մնացիր: Կր մեռնիս փոսր իշխարով, եւ օձերը կը մեռնեն քեզ»: Պոստոց ու ետ քաշուեցաւ Պոստոփիղոս: Ազաթանդեղոս զարձեալ կանչեց խորքէն թափանցիկ լըրջութեամբ. «Փախէք, փախէք, ահա մեծ օձը վեր կ'ելլէ»: Եւ յաջորդեց լուսիւն անրարբաւ: Հարուստ ժամ մը Ազաթանդեղոս այլեւս ոչինչ լսեց: Եւ յետոյ վերը զարձեալ սուսաւիւն մը լուսեցաւ Պոստոփիղոսի ոտքերուն տակ, եւ միակ յոյսին ճառագայթը որ կար ազատեցաւ: Պոստոփիղոս չկրցաւ այլեւս ինքզինքը բռնել, կուլար կը հեծեծէր, կը պաղտակէր, կ'երգունցնէր Ազաթանդեղոսը, որ ներքէ Տրդատին եւ իշխաններուն: Հիմա պիտէ ինքը ահա որ Աստուած պինքը բնարած է ազատարար թաղաւորին, քանի զեւ կ'ապրի: Իշխաններն ալ սրտածմոյիկ կանչեր կ'ուղղէին վար. «Ազաթանդեղոս, ներքէ մեզի, ադատէ թաղաւորը»: Ազաթանդեղոս ձայնեց զէպի վեր. «Ո՞վ եմ եւ որ բժշկեմ թաղաւորին խեղացնորութիւնը: Քրիստոս զարկաւ անոր: Քրիստոս պէտք է բուժէ դոյն»: — «Ուստի խնդրէ Քրիստոսն որ բուժէ դոյն», պաղատեցաւ Պոստոփիղոս: «Ոնդրեցէք մեզի եւ պետութեան համար», ձայնեցին իշխանները: «Քրիստոս այն ատեն միայն կ'ուղորմի, երբ թաղաւորն ու իշխանները, ժողովուրդն ու պետութիւնը ընդունին անոր տիրապետութիւնը, Տէր Աստուած ըլլալը»: — «Այնպէս պիտի ընեն, սպառնումարար այդպէս պիտի ընեն», ձայնեց Պոստոփիղոս: «Եւ իշխանները», արձազանդեց խորքէն: «Ես պիտի հաւատամ Քրիստոսի, երբ ան քու մի-

ջոցաւ թաղաւորը փրկէ», գոչեց Օտա: «Ես ալ», գոչեց Արտաւազդ: «Ես ալ»: «Մենք ամէնքս ալ», այսպէս ձայնեցին ամէնքը իրարու հետ ետանդապին զէպի այր վար: «Իցի Տէր օդնէ թաղաւորին: Գիշերանց եկէք ամէնքդ զարձեալ եւ սպասեցէք հոս, ինչ պիտի պատահի», հրամայեց Ազաթանդեղոս:

Երբ խոր լուսիւն կը տիրէր այրին չորս կողմը, Պոստոփիղոս եւ իշխանները կրկին եկան իրենց վրաններէն զէպի այրը: Որքան մեծ եղաւ իրենց զարմանքը, երբ մուտքի նեղ ծակէն շիկորակ յոյս մը երեցաւ իրենց կողմը, նաեւ իրական եւ արական ձայնակցութեամբ հանդիսաւոր շարական մը կը հնչէր: Կեցան հիպարոսոս, եւ ահա յանկարծ սեւ վերարկուի մը մէջ փաթթուած եւ քոյածածուկ կին մը վեր ելաւ խորքէն եւ խօսեցաւ հայերէն խեցրեկ լեզուով մը. «Ազաթանդեղոս ձեզմէ կը խնդրէ ներկայ ըլլալ Քրիստոսնաներուն ժողովին: Ահա պարանը, անոր կառչեցէք, եւ ահա սանդուխը: Ուշադրութիւն բրէք»:

Իշխանները, վարանոտ, վախնալով վտանդէ մը, ոտքի ելան եւ իրարու երես կը նայէին հետախոյզ, երբ արդէն անյայտ եղած էր Պոստոփիղոս խորքին մէջ: Մանկամարդ կինը բարեկամարար կը ձայնէր իրենց. «Ոչ մէկ վտանդէ վախեցէք: Քրիստոսնաներու մօտ կուգաք: Աստուած իր սուրբին իշխանութիւն ալ տուաւ օձերուն վըրայ: Ահոնք մտիկ կ'ընեն իրեն երբ կանչէ եւ մեզմէ ոչ մէկուն վնաս չեն հասցնէր»: — «Բարի հաւատք մը, յանուն բոլոր աստուածներուն: Ես կը նախընտրեմ հոս վերը սպասել», հծծեց Աղեքսանդր: «Առանց քեզի եւ չեմ երթար», բաւ Օտա: «Հոս սուրբը չի պաշտպաներ ձեզ: Եկէք: Վարը ձեզի սրեւէ զժրախտութիւն չի պատահիր: Բայց աճապարեցէք: Երգը կը վերջանայ ահա: Պաշտամունքը կը սկսի: Ան կ'ազօթէ»:

Իշխանները սանդուխէն վար իջան: Մութ վերարկուներ հազած էին ազուամագոտ ձերմակ բուրդէ եղերքներով: Վերարկուներուն տակ կ'երեւային վերտ զրահներ յանձապահ, զիստերէն վար թուրեր եւ շողակնայեռ գօտիներ: Ոչ մին կը նայէր յատակին վրայ ծնրադրող Քրիստոսնաներուն: Ազօթոյ Ազաթանդեղոսի պատկառանքը բոլոր հետաքրքիրները հետի կը պահէր: Փայտերու պատերուն վրայ, սեւեւաւոր թանձր տախտակներ, երկաթեայ օղակներով նոյն պատերուն զէմ հաստատուած, երբուն յոյսով կը լուսաւորէին ընդարձակ այրը, ամէն կողմ լեցուած սեւիւնի ընդրով: Պատին վրայ, վերի բացուածքին զէմ, կը կանդնէր փայտէ անտաշ սեղան մը վրան խոր խաչով մը: Դիմացի պատին վրայ ալ անողորկ եղեւնափայտէ անկողնակ մը խորտուրտ ծածկոցով: Ասոր վրայ կը հանդէսէին խաղաղիկ եւ հուժկու գալարներով ամփոփուած, քանի մը օձեր:

Երբ իշխանները կը կոխէին ամէնէն վարի սանդխամատներուն վրայ, օձերը իրենց քնթոնոցները դուրս հանեցին իրենց գալարքին ամէնէն վերի սլորաներէն եւ լեզու կը խաղցնէին անոնց դէմ: Սարսափահար կեցան սանդուխին վրայ, իրենց թուրերուն երախակալներէն բռնած: Եւ ահա հօր «Ամէն» մը թնդաց այրին ամէն կողմը: Ազաթանկեղոս ոտքի ելաւ եւ նշան բրաւ իշխաններուն առաջ գալ: Անոնք իրենց աչքերը օձերուն վրայ անկած քաջութիւն չունէին գետինը կոխելու: Ազաթանկեղոս դէպի օձերը քայլ առաւ, եւ անմիջապէս պառկեցան անոր սոյլին վրայ, գլուխնին Ազաթանկեղոսին ուղղած: Որ բոնեց անոնց թեւերէն, եւ անոնք այ Ազաթանկեղոսը համբուրելու ձեւով օղակ կապեցին անոր թեւերուն եւ ձեռքերուն շուրջ: Այս միջոցին իշխանները առաջ դացին եւ շփոթ ու շուարուն մտան քրիստոնեաներուն մէջ: Աւետարանին ընթերցումէն եւ քանի մը շինիչ եւ յորդորական խօսքերէ վերջ, Ազաթանկեղոս խնդրեց Խոսրովի դուխտէն եւ իշխաններէն, ամբողջ համայնքին առջեւ պատմել, թէ ինչո՞ւ համար եկած են: Երբ համայնքը թաղաւորին եւ ծառաներուն զխուսն եկած ահաւոր աղէտքին լուրը առաւ եւ իմացաւ, թէ իշխանները քրիստոնեայ ըլլալ կ'ուզէին, եթէ թաղաւորը փրկուէր, ամէնքն ալ արտասուեցին բարձրաձայն: Խոսրովի դուխտ սուրբին ոտքերը ինկաւ եւ քանիցս զոչեց սրտածմլիկ. «Ազատէ դայն, ազատէ, Ազաթանկեղոս»: Ընդարձակ կամարակապը կ'արձայանդէր անոր կանչէն եւ քրիստոնեաներուն լացէն:

«Ով դուք իշխաններ, Օտա, Արտաւաղդ, Աղեքսանդր, Մովկ, Գորտուկ, այս համայնքին առջեւ եթէ կ'ուզէք ուխտել տիրոջը ընդունիլ Քրիստոսն ու անոր վերին իշխանութիւնը, տիրակալութիւնը, ուխտեցէք իմ ձեռքերուն մէջ»:

Գոյնը թափած վերաբերուն մէջէն Երկնցուց վտիտ, փրալից թեւերն ու ձեռքերը, իշխաններուն դէմ բռնելով: Ամէնէն առաջ բռնեց զանոնք Խոսրովի դուխտ, սուրբին առջեւ նետուեցաւ եւ անոր ձեռքերը հեկեկալով առաւ տարաւ իր զխուսն վրայ: Ազաթանկեղոս յուզուած, յիշատակներով եւ ցաւերով զբաւուած, զոչեց. «Ով Խոսրովի դուխտ, լուսեցան մեր աղօթքները: Մեր թաղաւորն ու տէրը պիտի ստանայ իր առողջութիւնը: Քու եղբայրդ պիտի ազատուի: Տիրոջը հոգին այսպէս կ'ըսէ ինձի»:

Եւ իշխանները մօտեցան Ազաթանկեղոսի առջեւ: Սուրբին նայուածքները երկարօրէն հետախոյզ հանդէսեցան անոնց դէմքերուն վրայ: Տոկացին անոր նայուածքին եւ իրենց ուխտը աւանդեցին Ազաթանկեղոսի ձեռքերուն մէջ: Ան բաւ Օտա նախարարին. «Գիտեմ, դուն հաւատարիմ ես եւ պիտի բռնես քու ուխտդ: Դուն հաւան չէիր իմ շարժարանքներու: Տէրը, արդար դատաւորը, պիտի վարձպարէ

քեզ: Ինչպէս քու մարմինդ ծածկուած է Խոսրովին համար քու կրած վէրքերէդ — անոր երկնաւոր թաղաւորին համար ալ պիտի տառապիս»: Օտա եւս ինկաւ Ազաթանկեղոսի առջեւ որ օրհնեց զայն:

Թեթեւ սարսուռ մը զբաւեց ամէնքը, երբ սուրբը, համայնքին խոր լուսթեան մէջ, երկար հետախոյզ սեւեռուն նայուածքներ արձակելով Աղեքսանդրին վրայ, բաւ անոր վերջապէս. «Աղեքսանդր, սիրաս անհանդիստ է քու առջեւ: Փառք տուր Աստուծոյ եւ անկեղծ եղիր: Կ'ուզե՞ս սպաշխարել: Կ'ուզե՞ս դարձեալ քրիստոնեայ ըլլալ»: Աղեքսանդր եւս բաւ բարձրաձայն. «Այո»: Եւ սուրբը օրհնեց զայն: Այնուհետեւ ամէնքը Ազաթանկեղոսին հետ ծնրադրեցին, եւ ան ետանդապին աղօթեց թաղաւորին բժշկութեան համար: Եւ ահա կամարակապին տակ զորդեցաւ հրարուն օրհնարանութիւնը բովանդակ յուզումնալից համայնքին:

Իւրաքանչիւրը կը մօտենար սուրբին, անոր օրհնութիւնը բնդունելու, եւ սանդուխէն վեր ելլելով անյայտ կ'ըլլար: Բայց մինչեւ կէս զիշեր իրարու քով մնացին Ազաթանկեղոս, նոյն մանկամարդ կիներ, Խոսրովի դուխտ եւ իշխանները, խորհրդակցելով թաղաւորին փրկութեան մասին: Իշխաններն ու Խոսրովի դուխտ հիմա դարձանքով իմացան թէ ինչպէս Մարիամ՝ Ազաթանկեղոսի մանկամարդ կիներ, դուստր Կապազովիտի Կեսարիայի քրիստոնեայ Դաւիթ Իշխանին, բաժանումի օրէն սկսեալ Ազաթանկեղոսի ճամբուն կը հետեւէր: Աթէնքի մէջ էր ան եւ հետուէն զերար կը տեսնէին: Հոռմի մէջ էր ան, եւ հետուէն զիրար կը տեսնէին: Յետոյ Հայաստան ճամբորդած էր: Ան տեսաւ Ազաթանկեղոսի շարժարանքները եւ այրին այցելութիւն տուաւ: Կրցաւ շարժել պահապաններու սիրտը եւ ամէն օր հաց կը սահեցնէր վարը, երթալով ալ սնունդ, յետոյ ծածկոյթ, մաղաղաթ, զրիչ եւ սուրբ զիրք մը: Քրիստոնեաները հետզհետէ համարձակութիւն կ'առնէին: Պահապանները քրիստոնեայ եղան եւ կ'օյնէին բանտարկեալներուն կեանքը պահապանելու: Այդ չուանէ սանդուխտ հաստատուեցաւ: Այրը պարպուեցաւ, մաքրուեցաւ եւ հետզհետէ բազմացող քրիստոնեաներուն եկեղեցի դարձաւ: Աստուածային պաշտամունք կատարուեցաւ: Աղօթքներ, շարականներ կը թնդային վարը: Պատարագ կը մատուցուէր եւ զիշերը նուիրական ժամու մը օտարազգի վաճառորդուհին սուրբին ոտքը ինկաւ: «Գրիգոր», կը կակաղէ ան: «Մարիամ», կը հեկեկայ Ազաթանկեղոս եւ կը փաթթուի իր հաւատարիմ կնոջ: Արիստակէս եւ Վրթանէս երկու զաւակներուն մասին կ'իմանայ, թէ խոշոր գեղեցիկ պատանիներ եղած են հիմա եւ Դաւիթ իշխանին տունին մէջ քրիստոնէական դաստիարակութիւն կ'առնեն: — Այս եւ դեռ ասոր նման շատ բաներ իմացան իշխաններն ու Խոսրովի դուխտ եւ չէին կրնար բռնել իրենց զարմանքը:

Վաղարշապատին եւ աւելի հեռաւոր կողմերէն առաւօտ մը հազարաւորներ անտառին մէջ լիճէն քիչ մը հեռի եւ անտառին առջեւ կեցած էին տաղնապալի հեռաքրքրութեամբ մը, սպասելով լուս եւ յուսալով: Վախն ալ կը լեցնէր դանտնք: Եթէ անբուժելի մնար թաղաւորը: Եթէ պատու սպաննէ՞ սուրբը: Եթէ ամբոխին մէջ յարձակի՞: Սուրբը կ'ուշանայ սակայն, ամէն մարդ անոր կը սպասէ: Այսօր բացատիկ ոյժ մը անհրաժեշտ է: Ուստի երկար աղօթք: Ամբոխը բանակ յարդարածի պէս կը կենար եւ տակաւին իրարու կը պատմէին սուրբին շարժարանքներն ու վէրքերը, անոր կեանքը, ինչ որ զիտէր ժողովուրդը, եւ անոր բժշկող սիրոյն բազմապատիկ գործերը: Քստմենյի հեռաքրքրութիւնը կը մղէր մէկ քանին պաղտազողի առաջ երթալու միշտ քիչ մը աւելի հեռու դէպի լիճը, նոյնիսկ փոքի վրայ սողալով, ճիւղերը ձեռքերով անշուղձ վանելով, առաջ եղէզներուն մէջ պահուրտիլ, որպէսզի կարենան խեղճ թաղաւորը նշմարել: Ի դուր: Աներեւոյթ եղած էր, եւ անշուշտ լիճին միւս կողմը խիտ եղէզնուտին մէջ պահուրտած: Կէս օր եղաւ: Լիճը կը ցուրար շրջիկ, ակնախտից, ուղղահայեաց կեցող արեւուն լոյսին մէջ: Ծառատան եւ թփատան, աշնանային երանդաւորման հակառակ, խէժ եւ համեմ կը բուրէին յորդառատ: Բարունակները իրենց խիղբերով փաթթուած էին բարձր ընկուզներէն, մէկ ոստէն, մէկ ծառնէն միւսը, համակ քիւր կազմած, որոնցմէ վար կը կախուէին պղզտիկ տղու մը խոշորութեամբ ողկոյզներ: Բուններուն շուրջ պալարուած, դէպի գետին կը քաշուէին, հուժկու, ստուար, սակեղեղին կամ զինեկարմիր սաղարթներով կիսաաքօղ: Ամբողջ առաւօտը մինչեւ կէս օր ժողովուրդը կերած էր անոյշ հատապտուղ եւ ընկոյզ, եւ յետոյ շատերը քնացան, միւսներն ալ իրենց գտնուած տեղը ընկողմանեցան: Կր հսկէին, ուրախ սարսափով մը, Վաղարշապատի կողմը նայելով անընդհատ, եւ ահա ձայնեցին թէ ուղտերու զայլ կը տեսնեն: Եւ ահա առջեւ գտնուողները ինքնարեւարար վայելցին ժամանողներուն դէմ, ետեւներն ալ կուզային խմբովին: Ոչ ոք կը համարձակէր ետեւ մնալ, վախնալով որ յանկարծ մէջտեղ կ'ելլէ կը յարձակի թաղաւորը: Անտառը ամալի էր, երբ «Արիւժ» հզօր գորութեամբ իր հողագոյն, երկայնամազ մարմինը թեւերուն եւ սրունքներուն հուժկու ձգտումով, զլուխը ցցած, դէպի լիճը կը մղէր: Ժամանակ առ ժամանակ շուրին մէջ կը թաղէր բաշերով շրջանակուած զլուխը, եւ քանի մը վայրկեան վերջ դուրս կը հանէր գոյն ջրաթաթախ: Եզերքը աւաղին վրայ կը նստէր, մարմինը հողը կը ծածկէր, կուրծքը կը հանդէս ուղղանկիւն իրարու վրայ դրած թե-

ւերուն դէմ: Հանդարտ նայուածքով մը կը դիտէր անտառին ներսերը, մինչ արեւը կը շորցնէր շուրի շատ մը կաթիլները, որոնք անոր ահազին ջրացող կոնակէն վար կը վազէին երկու կողմին վրայ: Լեզուով ճիշտ ու ճիշտ առիւծի պէս կը լիզէր փոփոխակի բերանին անկիւնները, շրթունքներուն վերի ու վարի մասերը, միշտ հանդարտօրէն ականելով անտառին խորը: Յանկարծ լայնցան ձգտուեցան անոր զիմպիժերն ու նայուածքը: Գլուխն ու ծոծրակը աւելի բարձր: Շատ մը հեռաւոր ձայներու խուլ շեշար բոցիւն խոյանքներով իր ականջներուն թափանցեց: Տրդատ ծունկերը քաշեց եւ իրարու վրայ դրաւ: Ահազին արեւակէզ մարմինը կը հանդէս ծունկերուն եւ արմուկներուն վրայ, պատրաստ ցատկելու, դարանելու: Մեղմ, քրթմընջող եղանակներ նախ եւ առաջ առիւծաման, դարհուրելի մորնչիւնը շսկաւած, որ քիչ առեւնէն դոնչեց միշտ զրոյուած, հետզհետէ վայրագօրէն, Էղեզնուտին եւ անտառին մէջ, մինչեւ որ հեռաւոր լզղիւնը դաղբեցաւ եւ ամէն ինչ լուս մնաց անտառին առջեւ, ահաբեկ: Տրդատ հոն պառկեցաւ հանդարտած, եւ զլուխը կրթնցուց իրարու վրայ դրած ձեռքերուն դէմ: Մրափեց: Բոցիւնն ու տղիւնը ամբոխին կ'աւելնար, կը մօտենար: Ան այլեւ ոչինչ կ'իմանար: Ամբոխը դամի պէս խոնուած էր խճուղուած էր անտառին առջեւ: Ամէնէն քաջերը կը հետեւէին իշխաններուն, որոնք համակ դրահապատ զինուած էին պարաններով եւ խեղդկապերով: Իրենց առջեւէն կ'երթար խոշոր, վախ մարդ մը երկայն ձեւակ մաղերով ու մօրուքով մինչեւ ոտքերը ծփացող ուխտաւորի պիւտի մէջ ծածկուած, որ վարի եզերքէն ձեղքուած ու պատտած էր, գոյնը նետած: Այս ձերը անասճամանելի անհասկնալի մէկն էր, իրեն շուրջ կը տարածուէր մղլոտած հոտ մը, կարծես պերկամանէն կամ գնամանէն կուզար: Երեսը գոյն չկար: Ոսկրները կմախքի պէս տնկուած: Սակայն խորունկ կապիճներէն կը փայլէին երկու մութ աչքեր վեհ անդորրութեամբ եւ սուր սիրով: Ողորմութիւն, սէր, ջերմիկ իղձեր կը դարէին սուրբին դէմքին վրայ: Բոլոր մկանունքը խիստ ու ամուր, նեղ ու անարիւն շրթունքը իրարու սեղմուած: Ձեռքերը կուրծքին վրայ ծալուած: Աչքերը սեւեռուն, կրակի պէս կը նայէին քնացող առիւծարքային վրայ: Գրիպոր ձեռքով նշան բրաւ հետեւորդներուն առաջ չլալ: Եւ ինք յամբօրէն քայլ կ'առնէր: Տրդատ կը խորհար: Ժողովուրդը հեռաքրքրութեամբ առաջ կը խուժէր: Կ'ուզէր հրաշք տեսնել: Ծառերու բուններուն եւ թուփերուն միջեւ բաժնուեցան, անոնց ետեւը ծածկուեցան կամ կնիւններուն մէջ, եւ իրենք զիրենք սուրբին պաշտպանութեան տակը կը հաւատային: Հերոսներուն, ինչպէս պարզ ամբոխին սիրտերը թունդ կ'ելլէին, երբ տեսան թէ ինչպէս ան կը ծնրազրէր յուշիկ քնացող թաղաւորին առջեւ, իր

աղերեկ գլուխը ծռած Տրդատին վրայ, և դողդոջուն ձևաքերով ուղեց անոր գլուխը կամացուկ բարձրացնել: Որքան տկար պէտք էր եղած ըլլալ սուրբը, և որչափ ծանր էր Տրդատին գլուխը: Յաճախ Տրդատին գլուխը կ'իյնար իր ձեռքերուն վրայ: Գրիգոր նորէն վեր կը հանէր զայն: Այնուհետև սեղմեց զայն իր սիրտին վրայ, արցունքով ոռոպեց անոր ճակատը: Հեռուէն կը տեսնուէր, ինչպէս Գրիգոր սարսափէն ու ցաւէն կը ցնցուէր: Հիմա մօտը եղողները կը տեսնէին, թէ ինչպէս սուրբը Թաղաւորին աջ ախանջէն բան մը կը փսփսար: Անպամ մըն ալ: Քանի մը անպամ ալ: Կը խօսէր անոր հետ, մինչ Տրդատ տակաւին կը քնանար: Ոչինչ կ'իմացուէր: Բայց քիչ վերջը խորազգաց, գեղեցիկ երգ մը, աշխոյժ տաղ մը, պանդուխտի ողբի մը պէս: Հծծիւն մը անտառի և եղեգնուտին մէջ: Եւ ապա բանաւոր և յիշատակներով լեցուն զսհունակ խանչիւն մը, զօրաւոր յօրանջում մը: «Առիւծը» արթնցաւ և անշարժ քանի մը վայրկեան ահաւոր ձեւով նայեցաւ Գրիգորին, իր բարեկամին աչքերուն: Գրիգոր եղեգնուտին և անտառին մէջէն ամբօխին լացն ու աղօթքը կ'իմանար: Օդը կը դողար տաղնապի աղաղակէն, ևրբ Տրդատ յանկարծ վեր ցատկեց սարսափազդու, դղրդալից ոռնոցով, առիւծի մազիլնեւրուն նմանող երկու ձեռքերովը բռնեց Գրիգորի ուսերէն, և կոնակին վրայ գետինը փռեց ու ինք ալ ինկաւ անոր վրայ: Բայց երբ իր մարմինովը ծածկեց զայն և իր բերնովն ալ կը հեւար, դարձեալ իմացուեցաւ երգը և յայտնապէս կանչը. «Տրդատ, Տրդատ»: Ամէնքն ալ կը տեսնէին Թաղաւորը, որ գլուխը աջ կը ծռէր և աչքերը կը տընկէր մտախոհ: Իր տակը պառկող զոհին կը յառէր պինդ: Վերջին ծայր խոշոր բերբերը ալ աւելի կը լայննային: Տեսակ մը հիացում, տեսակ մը հեռաւոր յիշողութիւն մը կը սահէր առիւծին երեսին վերեւ: Վայրկեաններ, կարծես ժամեր կուզային կ'անցնէին պահուրտած դիտողներուն վրայէն, որոնք սրտատրոփ, և կթոտ ծունկերով ծառի ու մացառի ետև կեցած կը խորհէին ամէն վայրկեան սուրբին փրկուիթեան վրայ, զուշակութիւններ կ'ընէին: Պայքար անհրաժեշտ չէր: Տրդատ Գրիգորին աչքերէն բնաւ չէր հեռացներ իր նայուածքը: Առիւծը զպսուեցաւ: Ինչ պակուցիչ ոյժ մը կար անոր աչքերուն մէջ, սուրբն ալ չէր գիտեր ասիկա: Ինքնին հասկցուող ստուգութեամբ մը գիտէր միայն, թէ Աստուած զայն պիտի պահէ պահպանէ և իր աղօթքին պիտի լսէ: Ուրիշ բանի պէտք չունեցաւ այնուհետև, այլ միշտ նոյն «Տրդատ» կանչին, բայց միշտ այնպէս ինչպէս ժամանակին երբ այնքան մտերիմ էին իրարու: Բոլորովին հին հնչումով «Տրդատ»: Միևնոյն հինաւորց խանդակաթ սէրը, և կաթողին բարեկորով մտերմութիւնը: Եւ միևնոյն ատեն, սա աղագարար, ծանրախոհ կանչը. «Տրդատ, Տրդատ, հանդարտ կեցիր: Տրդատ, ևս քեզ

կը սիրեմ»: Տրդատ չզրացուեցաւ Գրիգորի նայուածքէն: Իր ոռնոցը երկարաձիգ, սրտաճմլիկ շեշտերով կը գոռար, և ալ աւելի կը յուղէին բոլորին սիրտերը: Հոգիին խորքերուն ալքէն, եկող այս ողբաձայն և հեծեծադին եղանակներէն, ինչպէս նաև մերթ հանդարտած ու մտախոհ կերպարանքէն բացորոշ կը հասկցուէր, թէ անոր միտքին շփոթութենէն, խառնակութենէն և աղջամուզէն առաջ կուզային թախծոտ նախազրացումներ, անդիտակից զրացումներ և յիշատակներ: Ընդհանուր հեկեկանք մը անտառին և եղեգնուտին մէջ կը բարձրանար, ևրբ առիւծարքայն կը սկսէր մշմշալ իր տակը գտնուած երիտասարդական բարեկամին վրայ, կը հոտոտէր զայն, և կը լիզէր անոր երեսը, լիզը և ձեռքերը, և վերջապէս միշտ անոր աչքերը, իր նայուածքով կը ծածկէր, և հաստ ձեռքերը բարեկամին կուրծքին վրայ խաշաձեւեց, իր թեւերովն ալ ինկաւ անոր կուրծքին վրայ, ծնօտը դնելով խաշաձեւած ձեռքերուն վրայ: Գրիգոր նախ կրեց բնուր անշարժօրէն: Բայց երբ Տրդատ իր ծանրութեամբ կը սպառնար շնչահեղձ բնել զինքը, երկու ձեռքերը վեր առաւ, շոյեց քանի մը անպամ Տրդատին բաշը, երեսը և ձեռքերը, միշտ անոր անունը անուանելով. «Տրդատ, վեր ելի՛ր»: Եւ Տրդատ վեր ելաւ: Յամբօրէն, իր սևեռուն նայուածքը Գրիգորի աչքերուն ուղղած, բարձրացաւ հսկայ կերպարանքը և բարեկամի ուսերուն վրայ դրաւ կարճնեղ թեւերով երկու ձեռքերը: Տրդատի գլուխը աւելի խոր իջաւ կուրծքին վրայ և կարծես փապարէ մը գէպի Գրիգոր կը յածկէին հետախոյզ, արտակարգ և լուռ տխուր նայուածքներ: Գրիգոր միշտ կը ձայնէր յիշատակներ արթնցնող Թափանցիկ ձեռովը. «Տրդատ, իմ Տրդատ»: — Յետոյ ընդհատուեցով. «Բեր-սա-նոյշ — Ազաթ-անպեղոս — Արբա-կա-դարբա»: Մինչ այս Տրդատը թեթեւ մը թեւէն քաշեց և քանի մը քայլ ետ գնաց գէպի անտառը: Բայց իսկոյն սկսաւ առիւծանման քրթմնջիւն մը, և Տրդատի նայուածքները եղան անհանդարտ, երկչոտ և ահրնկէց: Իր ձեռքերը, աւելի ամուր կառչեցան Գրիգորի ուսերուն: Կեցաւ, և Տրդատ դարձեալ շոյեց և համբուրեց և սպասեց, մինչև որ կրկին հանդարտեցաւ: Քանիցս կրկնուեցաւ այս գէպը: Միշտ աւելի յայտնապէս կը տեսնէր Գրիգոր, թէ ինչպէս աւելի կարուկ եղան խոշոր, ամայի, շփոթ նայուածքները: Սևութեամբ և մաղերու ծայրայեղ աճումով խանդարուած գէպին վերև կը շնչէին կայծակնանման շարժումներ, որոնք որոշակի կը մատնէին հետզհետէ դիտակցական դարձած յիշողութիւններ, զրացումներ, պատկերացումներ: Իր գէպին վրայ կը տեսնուէր հոգիին պայքարը, զօտեմարտը անդիտակցականէն, երազային շփոթ կեանքէն անձկութենէն ու տառապանքէն դուրս գէպի մճիտ դիտակցութիւն, գէպի լոյս: Իր նայուածքները երթալով աւելի խոր



կը թաղուին Գրիգորին աչքերուն մէջ: Միշտ աւելի խորաքնին, հետախոյզ, աւելի ծանրախոհ եղան զիմապիծերը: Ահլնկէց զլուխը մերթ կը հակէր աջ, մերթ ձախ, ամէն կողմերէ Գրիգորը կը դիտէր, կրկին կը հոտտէր անոր վիզը, դէմքը մաղերը, զլուխը նորէն ետեծո՞ճրակին կը նետէր եւ լայնատարած ձեռքերով բարեկամին ուսերուն դէմ կը հաստատուէր: Աղօթող ժողովուրդին մրմունջը կը կապուէր հողմատատան կնիւններուն հծծիւնին եւ ամուսնիքին դէմ ջուրին կարկաղիւնին հետ: Այլապէս ամէն բանի վրայ սրտառուչ հանդիսական լուսիւն մը կար: Յանկարծ հեկեկանքի եւ հառաչանքի վերելք մը, որ սարսուտ առթեց ամէնուն: Այդ վարհուրելի, շեշտ, զսպուած գոռումբ կուզար Տրդատէն որ յանկարծ Գրիգորին ոտքերուն առջեւինկած էր եւ փորին վրայ պատկած դէմքը կը ճնշէր սուրբին բոկ ոտքերուն վրայ, եւ հեղեղանման արցունք թափելով կը շփուէր այս ուսան կողմը, Գրիգորի ոտքերը կը լիզէր, ձեռքերով կը սեղմէր, կը փայփայէր, եւ վերջապէս զարմանալի շարժառիթներով ամբողջ մարմինը կ'երերցնէր աւազին վրայ ու տակը, այս կամ այն կողմը: Նոյն միջոցին բերանէն ալ ջուրի պէս կը վազէին սոսկում պատճառող, հետզհետէ ուժովցած ձայնի շեշտեր, եղանակներ, որոնք եղեգնուտէն ու անտառէն ալ անդին, լիճին վրայէն ալ հեռի ամբողջ ամբոխը կը տոյգորէր այնպիսի սոսկումով, որ մեծ մասը կը բռնուէր տեսակ մը ցնորակոծ անձկութեամբ, եւ իրենց պտուած տեղերէն կը ցատկէին, ետեւինները առջեւինները հրելով հրմշակելով: Ամէնքն ալ կը հաւատային թէ դեւերը իրենց ետեւէն ինկած են, եւ սուրբին հետ կը պայքարին կը կոռուին թաղաւորին եւ անոր հոգիին տէր ըլլալու համար: Իշխաններն ու սպաները միայն ետեւ կը մնային եւ լայնափնոկ աչքերով եւ բերանարաց թուփերուն ետեւէն կը դիտէին սուրբին պայքարը առիւծին հետ: Գրիգոր քանիցս, բարձրաձայն աղօթելով, իրարու ետեւէ եւ միշտ դարձեալ կը խաչակնքէր իր ոտքերուն առջեւ պտուած բարեկամին վրայ եւ կը գոչէր բարձրաբարբառ. «Յանուն Յիսուսի Քրիստոսի, Որդւոյն Աստուծոյ, կորսուցէք, շար ողիններ: Փախէք, դուք դեւեր: Բարի, սուրբ հոգի, իջիր վար թաղաւորին վրայ: Լոյս երկնից, անոր հոգիէն վանէ գիշերն ու մտադարութիւնը: Հայր լուսոյ, թող ճանչնայ ան ճշմարտութիւնը, եւ ապառ արձակէ զայն»: Ջերմեռանդորէն ականջ կը կախէր «Առիւծը», եւ փրկութեան ցանկութեամբ լի սրտաճմրիկ արտայայտութեամբ Գրիգորին կը նայէր: Տրդատի դէմքին մաղերուն եւ մինչեւ լանջքը հասնող թուխ լայն մօրուքին վրայ եւ մէջը կը հոսէին անդադար արցունքներ: Գրիգոր չէր կրնար այլեւս ինքզինքը զսպել: Գրիգորի սիրտը կը ճմլուէր տեսնելով տառապանքը իր բարեկամին, ոչուն հոգին, ջուրին մէջ խեղդուողի մը նման, միշտ կը ձգտէր վեր

դալ դէպի լոյս, եւ ստեղծան ճամբան չէր գտներ եւ դարձեալ կը սուզուէր կիսամութին վարհուրելի կայսութեան մէջ: Կ'իջնէր, բուր մարմինովը կը հակէր բարեկամին վրայ, եւ երկուքն ալ կուլային զլուխ զլիւի: Տրդատ կը կորսնցնէր հանդարտութիւնը եւ արագօրէն կը լիզէր Գրիգորին երեսէն ու ձեռքերէն վազած արցունքները: Պառկած տեղէն կ'ելլէր, կը վազէր վեր վար, Գրիգորին շուրջ կը դառնար կը պալարէր, որ շուարած, շփոթած, ձախ թեւին վրայ կը թնամ, նստած կը հետեւէր շարունակ Տրդատին: Բայց ան միշտ աւելի կը զրկուէր: Բլուրին եւ ամուսնիքին բարձր ծառերուն շուքերը ահա կը նետուէին լիճին մէջ, եւ բուր ծիրերով կը դժուէին լիճին մութ կապոյտ, մանիշակապոյնի զարձող մկանունքին վրայ: Խաղաղութիւն կը դարէր կը զսպարէր լիճին եւ զաշտապետինին վերեւ: Այլիքները խոպոպ առ խոպոպ զիրարուած կը խաղային դաշն ու անլսելի: Գեղին սաղարթին ու երկայն սկզբուն մէջէն կը հծծէր քամիին շունչը, եւ ամենամիւր քարուտքին պարնուող ջուրերը անշամ հաղիւ լսելի կը կարկաղէին: Բայց միշտապէս կ'հաւանդէր հիւանդը: Բարեկամին՝ Գրիգորի կերպարանքը մութին մէջ դարձեալ անհետեւ կ'ըլլար իր աչքին: Անասելի տառապանքէն դուրս կը խուժէին ահա կրկին այն երկարածից զահանգական սղրական կեղերջները, որոնք սանոցներու կը փոխարկուէին, բայց առանց առաջուն շափ անձկութիւն պատճառելու: Այն բոլոր սրտակեղք աղաղակներէն կը հասկցուէր նաեւ Տրդատին անձկութիւնը, ցանկութիւնը փրկութեան համար: Եղեգնուտին մէջ յանկարծ սրտիանք մը: Յօղունները իրարմէ անջատուեցան, ծոկեցան: «Տրդատ թաղաւորս, առիւծս», կը գոչէր կնոջական ձայն մը: Տրդատ պոռաց ուրախութենէն եւ ոստումներով վազեց դէպի Աշխէնը, կը պարէր կը ցատկուէր անոր բոլորտիքը, զլուխովը երբեմն կը հրէր կուրծքը, երբեմն ալ թեւին ու ոտքին կը դարնէր, ձեռքերը անոր ուսերուն վրայ կը դնէր, եւ ուրախութենէն ոռնալով սկսու լիզել թեւերը, ձեռքերը, դէմքը եւ հուսկ ոտքերը: Միջոցով էր ամէն կողմ, աստղ աստղի ետեւէն կուզար: Արծաթէ դերանդի մը պէս լուսինը կը բարձրանար, եւ լիճը ոսկեմառ շողերով գոռող այլիքներու վրայ կ'արձակէր երկինքին լոյսերը: Անծայր տրամութիւն մը ինկաւ սուրբին վրայ: Միշտ միեւնոյն տեղը նստած, աջին կը թնամ, որ կողմնակի իր ետեւը աւազին մէջ իրած կը հանդէս: Սպառազէն մարդիկը անյայտ եղած էին: Երեք միմտակէին: Գրիգոր ուղեց ինք ալ ելլել երթալ: Բայց Տրդատ մօլեղին ցատկեց անոր վրայ եւ դեպի վազուց: Բայց Գրիգորին առաջին կոչը «Տրդատ» բաւեց, ցերեկուան յիշատակը արթնցնելու համար Տրդատին մէջ: Աշխէն վազեց անոր ետեւէն եւ զգուշացուց զայն կանչելով. «Տրդատ, թող, Տրդատ, հանդարտ եղիր»: Տրդատ հնապանգելով

նստաւ Աշխէնին եւ Գրիգորին մէջտեղ, իր մատակին ծունկին վրայ զնկով զլուխը: «Հանդարտ կեցիր, սուրբ մարդ: Կ'աղաչեմ քեզի, կեցիր: Մեռած օրդ է, եթէ ստքի ելլես»: — «Կը կենամ այսպէս», պատասխանեց Գրիգոր մեղմիկ, եւ սկսաւ շոյել Տրդատին զլուխին մագերը: Երկար, մտատանջ լուսթիւն մը: Օղը տաք էր ամառնային գիշերուան մը մէջ Եղածին նման: Լուսնկան կը բաւէր որ մարմիններուն ղէմքերն ու շրջագիծերը սրոշակի ճանչցուէին: Գրիգոր հեռաքրքիր կը գիտէր Աշխէնին ամբողջն վշտահոծ ղէմքը, որ մագերուն առատութենէն շրջանակուած էր: Մութ վերաբերուի մը մէջ ծածկուած: Ան ալ մերթ րնդ մերթ քաշուելով երկչոտ ակնարկ մը կը նետէր Գրիգորին վրայ:

«Ինձի կը թուի թէ ես քեզ արդէն անգամ մը տեսած եմ, տիկին», վերջապէս խղից Գրիգոր հեղձամղձուկ լուսթիւնը: Աշխէն պատասխանեց արտակարգ ճշտութեամբ մը. «Սուրբ մարդ, քեզ Հոռոմի մէջ տեսած եմ»: Յետոյ ծոց զլուխը, իրբեւ գիտակից իր յանցանքին, եւ ճակատը զեռեղեց Տրդատին զլուխին վրայ: Տրդատ անոր կը շփուէր եւ մարմինը շափազանց կը մօտեցնէր Աշխէնին: «Խիստ քրքումուհի՞ն ես դուն»: — «Մտառայած եմ անոր եւ ծառայած թագաւորին Վաղարշապատ: Կ'ուզեմ անոր ծառայել մինչեւ մեռած օրս»: — «Գիտե՞ս որ ես ալ ցմահ անոր պիտի ծառայեմ»: — «Գիտեմ, եւ թագաւորէն շատ բան լսած եմ քու մասիդ, եւ գիտեմ թէ որքան տառապած ես անոր համար, սուրբ դու»: — «Այդպէս մի անուաներ գիս», հրամայեց Գրիգոր, «Աստուած միայն սուրբ է: Ըսէ ինձի, կ'աղաչեմ, ինչո՞ւ կը ծառայես թագաւորին: Միմիայն սէրէ՞ն գրողըւած: Միմիայն Խիստի եւ Անահիտի հանդէպ հնազանդութեան ու պիտի՞ն: Ի՞նչպէս կրցար դուն գիշեր ցերեկ մարմնական եւ հոգեկան այս ցաւերը կրել չոս առանձնութեան մէջ»: — «Ուխտ մը ունիմ»: — Սուրբին նայուածքը միշտ աւելի հեռաքրքիր կ'ուզուէին անոր վրայ: Աւելի թախանձագին կը փոփոսար անոր: «Կ'աղաչեմ քեզի, բռն ինձի, ի՞նչ ուխտ: Ի՞նչու կը ծառայես թագաւորին»: — «Ասիկա մեծ պաղանիք մըն է, Խիստի, եւ Ոսիրիսի միայն ծանօթ», Գրիգոր քոփնոթ Տրդատին զլուխին վրայէն իր երեսը այնքան մօտիկ երկրնցոց Աշխէնին, որ շունչը անոր կը հպէր, եւ անգամ մըն ալ սաստիկ կը թախանձէր հծծելով. «Բարձրեալն Աստուծոյ սիրոյն ըլլայ, ըսէ, Աշխէն»: — Լոց սակայն, եւ զլուխը ալ աւելի խորը թաղեց Տրդատին վրայ: Քնքալի առատութեամբ կը հոսէին մաղերը ուսերուն եւ կոնակին վրայ: Վերաբերուին մէկ մասովը, առանց վեր նայելու, կը ծածկէր Աշխէն Տրդատին կոնակը: Գրիգոր նորէն փոփոսաց. «Ըսէ, ըսէ: Չես զլար, թէ ի՞նչու այսքան կը ստիպեմ քեզ»: Աշխէն կամաց կամաց վեր առաւ տաքուկ երեսը: «Թագաւորը կը քնանայ: Հիմա

կրնամ ըսել: Իմ անունս Աչքա — Աշխէն — չէ»: — «Անունդ ի՞նչ է ուրեմն», շնչեց Գրիգոր թափանցիկ նայուածքով մը: «Ես կը կոչուիմ Եւթաղիա: Ես հայ իշխանի մը աղջիկն եմ»: — Անունը ի՞նչ է անոր»: — «Ննակ է անոր անունը»: Գրիգոր ակնյայտնի կը զողար բովանդակ մարմինովը: Բերանը կը բացուէր անզիտակցարար: Դէմք՝ ճեղք ճերմակ Եղաս: Մարմինը կը տարուրերուէր: Չեղբերը աւազին մէջ կը մխուէին:

Աշխէն պատմեց կամացուկ, կամացուկ, առանց դեղեւելու, «Հայրս սղաննեց Հայոց Ասորով թագաւորը: Ես եւ կրտսերայոյն Եղբայրս հայրանուն Անակ փախանք արքայական ազգականներուն արբիւնուշտ վրէժխնդրութենէն: Եղբայրս զնաց Փոքր Ասիա: Այլեւս անոր մասին բան մը չլսեցի: Ես տարուեցայ Աղեքսանդրիա: Երբ տասնը ութ տարեկան Եղայ, իմ հոգեծնուք Կուրտասէն եւ Սոփիայէն իմացայ ահաւոր պաղանիքը, թէ ես իրենց աղջիկը չեմ, այլ արքայատան Անակի դուստրը: Հոռոմ փախայ եւ Խիստ քրքումուհի Եղայ: Ոչ ոք իմացաւ ծաղուծս: Չարհուրելի տառապանքներով եւ զրկումներով քաւեցի զժրախտ հօր մը յանցանքը, եւ զժոխքի տանջանքներէն անոր ազատուիմ ձեռք բերելու համար: Հոռոմի մէջ արքայորդին պառ զիս, եւ անկէց ի վեր կը ծառայեմ իրեն, զժրախտ Տրդատէսին»: — Աշխէն կրկին խոնարհեցաւ յամբարար, երեսը գրաւ անոր կոնակին վրայ, իր ձեռքերուն մէջ առնելով զայն: Ամբողջ մարմինը այս կերպով Տրդատի մարմինին վրայ կը զողար լալէն ու հեկեկալէն: Յանկարծ իր զլուխին երկու կողմէն կամաց մը բռնուիլը զզայ եւ իր աջ ակունջին վրայ տաք շունչը մարդկային բերանի մը: Յուզումէն սարսուղ ձայն մը ըսաւ անոր. «Եւթաղիա, Եւթաղիա, եւ Անակն եմ, քու Եղբայրդ»:

Ուժգին ճիչ մը թռաւ իրմէ: Քոյր ու Եղբայր գիրար կ'ողջագործէին անբարբառ: Կը լուսանար լիճին վրայ, եւ Արարատը վերէն իրենց վրայ կը ճառագայթէր, երբ անոնք գիրար բռնած կը պատմէին, կը հարցնէին, կը պատասխանէին: Այլեւս տարակոյս չկար: Այաթանդեղոս գիտէր Եւթաղիայի մանկութեան բոլոր ապրումները մինչեւ յանկարծական բաժանումը եւ փախուստը Վաղարշապատէն, արբիւնուշտ վրէժխնդրութեան երկիւղով: Այաթանդեղոս Կեսարիոյ Գրիգորն էր, քրիստոնեայ հոգեպաւսիր Դաւիթին, եւ ինքն ալ, երբ Դաւիթին իմացաւ իր բուն ծագումը եւ հօրը յանցանքը, չկրցաւ այլեւս մնալ, այլ պարապուրուեցաւ երթալ եւ Տրդատին Այաթանդեղոսը — բարի հրեշտակ — ըլլալ, հօրը յանցանքը քաւելու համար:

Կեանքը սկսաւ գետալ եղեկնուտին եւ թուփերուն: Անտառին մէկ ծայրէն միւսը, լայնքէն երկայնքէն, թռչուններուն այգածին սլըլըներ կը ճոռուղէր: Այերքին մէջ ցնծութիւնն ու բերկրանքը ար-

տոյաներուն: Գորտաղիները կը կափկափեն ափունքը: Երէն կը խոյանար անտառին մէջ քուններուն միջեւ: Այժմամբ կ'ըմպէր լիճին մէջ: Հրաշապարզ խաղաղութիւն մը համատեխու այս հաղամտին վրայ, որ նուիրապործուած էր արիւնով ու ջուրով, երկու մարդոց տասնպանքի ու միաքի մկրտութեամբը, որոնց երկուքն ալ չարչարանքներով սեղեր են փրկել իրենց հօրը հողին անդնդախոր դժոխքէն:

Աշխէն — Եւթաղիա իր թագաւորը կը կերակրէր հացի եւ տապակած միսի հսկայ պատաններով: Իրենց բացթեւոյ բնակութեան սկիզբէն ի վեր մօտերը փախար մը հազարդակցութեան մէջ գրուած էր մթերանոցին հետ, որ միշտ կը հոգացուէր արքունիքէն: Գրիգոր ստակումով կը նայէր կերակուրին, ինք եւ քոյրն ալ կ'ուտէին, արցունքոտ աչքերով իրարու նայելով շարունակ: Այդ միջոցին դարձեալ Տրդատ դատամած էր նոյն քրթմնջող ու բազմադրազ խոսկումներով միճակի մէջ, տակէն մինչեւ վեր վայրկեաններով կը նայէր բարեկամին եւ թոյց աչքերով կը խորհէր վայրահակ: Գրիգոր եւ Աշխէն իրարու հետ կը մրցէին բարձրագոյն աղօթքներով, անոր փրկութեան համար: Հետզհետէ հիւանդին դէմքին վրայ կը տեսուէր գիտակցութեան արթննալը: Դեռ արտակարգօրէն կը գիտէր իր բոյրտիքը: Միշտ աւելի սուր կը նայէին իր աչքերը: Սուրբը աւելի բարձր եւ աւելի ուժով կ'աղօթէր եւ կ'երգուրնցնէր գեւերը: Յաճախ հիւանդին մարմինին վրայ կը սրտկէր նաեւ ջուր, նախապէս խաշտակներով վրան: Գրիգորի շնորհումով էր այն ստուգութիւնը, թէ բարեկամին աղատումը մօտալուտ է: Ուրախ էր եւ ուժեղացած: Եւ յանկարծ — չէր դիտեր թէ ինչպէս կ'ըլլար — ցատկեց գէպի Տրդատը, գրկեց զայն եւ կը սրտէր անդադար. «Տրդատ, Տրդատ — ռեւիւնը, ռեւիւնը — ահա կուգայ բուն ռեւիւնը — Հալաբիւս —: Տրդատ, յանուն Աստուծոյ, յանուն Նաղովրեցի Յիսուսին, արթնցիր: Փախէք չար ուղիներ, փախէք: Փախիր, գիշեր խաւարակուտ, փախիր: Էանց գիշերն: Ահա ծագէ այդ: Պայծառ այր»:

Գրիգորի փայտայանքներուն եւ կոշերուն տակ Տրդատ ստքի էլաւ կանգնեցաւ: Մերկ կեցած ահա լճին քով. մարմինը տիտանեան, տիտանեան է՛ւ իր անդամները. անարգիլ, ահաղին կակ մը մարդու եւ կենդանիի մէջտեղ: Անխօս, աչքեր ու բերան լայնափետեկ, անքթիթ յոտած սուրբին: Յետոյ, անմոտանալի տեսարան մը քոյր եւ եղբոր համար — որոշակի կը տեսնէին, թէ ինչպէս պայծառ գիտակցութիւնը կը ցաթէր: Նայուածքը բոյրութիւն սարբեր կաւ — երկշտ, վեհերտ, նեղուած: Ամօթի կարմիր մը շպարուեցաւ գէմքին վրայ մինչեւ ճակատը: Երկար, հետախոյզ, տաղնապալից ակնարկ մը եւս. ահարկու, երկարածիղ ճիչ մը, բայց արդէն մարդափայլ, մարդկային կանչ մը տառապալած — յետոյ Տրդատ տարածեց հզօր թեւերը, Գրիգորի ստքերը ին-

կաւ եւ իր երեսովը ծածկեց զանոնք: Իր ամբողջ մարմինը կը զոզար ցնցումներով: Վաղածանօթ բարեկամին ծունկին փաթթուեցաւ, ստքերն ու ձեռքերը համբուրեց եւ յետոյ անոր առջեւ պառկած մնաց անշարժ: Գրիգոր ծնրադրեց անոր մօտ, գրկեց անոր գլուխը եւ հեկեկալով ձայնեց. «Տրդատ, Տրդատ, էլ կանայն: Տրդատ, կը ճանչնաս՞ զիս գարձեալ»: — «Կը ճանչնամ քեզ», ձայնեց Տրդատ մարդկային համբույր ձայնով: «Ներէ, ներէ, կրնաս՞ ներել»: — «Նլ կանայն, Տրդատ», կրկնեց Գրիգոր: «Աստուած թաղութիւն շնորհեցէ, աղատեցէ գրեց Աստուած: Ի՞նչպէս շնորհեմ քեզի: Նլ կանայն, բարեկամս»: Տրդատ պառկած կը մնար: Բարեկամին Գրիգորի ստքերուն, սրունքներուն, ձեռքերուն եւ թեւերուն, միզին ու երեսին վրայ կը տեսնէր անոր մարտիրոսութեան վէրքերու բոյր սպիները: Տրդատ ձեռքերը երկնցուց, արտաքոյ կարգի փափկութեամբ շօշափեց, շփեց կարմիր խաշածեւ, խաւորնակ գիծերով, գէշ բուժուած սպիները: «Ներէ, ներէ, Ազաթանգեղոս», կը հատուցէր Տրդատ գարձեալ: Ան նշան բրաւ իր քոյրը որ ստաջ պայ, բունց ձեռքը եւ Տրդատին մօտ քաշեց: «Թագաւոր Տրդատէս: Ասիկա քու կինդ, մատակ առիւծը, որ քեզի հետ ամէն շարչարանք կրեց, սա իմ քոյրս է: Երկուքս ալ առանց ճանչցուելու քեզի ծառայած ենք, քու սկզբը բարոյնամ ենք երախտապիտութեամբ, քու իշխանութիւնդ եւ անդթութիւնդ յօժարակամ կրած ենք: Դուն գիտես, ո՞վ թագաւոր, մեր քաշածները: Հիմա գիտցիր, թագաւոր, ամէն ինչ կրեցինք, որպէսզի կարենայիր ներել Անակ իշխանին, որ քու հայրդ սպաննեց: Ան մեր հայրն էր: Ան կը մնայ դժոխքին բոցերուն մէջ: Ազաթէ՛ զայն, թագաւոր, ինչպէս Քրիստոս քեզ ազատեց եւ քեզի ներեց: Բաւական արիւն զոհեցիր քու հօրդ համար: Մեր արիւնը եւ կեանքը առ քաւութեան համար»: — «Ներէ, ներէ», ձայնեցին եղբայր եւ քոյր միասին, Տրդատին առջեւ նեղուեցան, որ զոզ կրած, շուարած, ծունկի եկած էր, եւ փոփոխակի երկուքին կը նայէր, գէմքը ետին նետած, վախ ազոզ նայուածքներով, կարծես քարացած: Իր դիմադիժերուն եւ նայուածքներուն մէջ որոշակի կը խաղար իր հօգիին վերջին ծանր պայքարը, ստեղծութեան եւ երախտապիտութեան, պատրաստակամութեան ներուժի համար, եւ դարձեալ ստեղծութիւն: Բարկութիւն եւ թախիժ կը շարժին միտսին եւ կը սահին անոր գէմքին վրայ արեւաշողի եւ փոթորկալից ամպի պէս: Սառն ու անդոհուկան լուծիւն: Գրիգոր վերարկուն եւ պարեկօտը հանեց մինչեւ ազոզը վար, Տրդատին ցոյց տուաւ լուծեամբ կուրծքն ու կոնակը — ահագին սպիներով ծածկուած, տէգի, կեռի վէրքերէն զոյսցած, եւ երկուքն ալ դարձեալ ձայնեցին, կարծես միաբերան. «Ներէ մեր հօրը, ո՞վ թագաւոր: Ներէ, ներէ»: Տրդատին ձայնը կը թնդար ամուր եւ ար-

քենի, ինչպէս երբեմն. «Կը ներեմ, ինչպէս դուք ինձի ներեցիք: Իցի քու Աստուածդ եւ քու Քրիստոսդ ալ ներեն ինձի: Ել կանչնէ, Ազաթանդեղոս, ել կանչնէ, Աշխէն: Օն, արիք, զկպի Վաղարշապատ: Նոր կեանք մը, նոր պետութիւն մը նորարարող կը ծագի: Հիմա կուզայ բուն սեռինը: Ես կուզեմ քրիստոնեայ բլրայ եւ իմ թագաւորութիւնն Քրիստոսի թագաւորութիւնը պէտք է բլրայ»:

Հազիւ թագաւորին այս բառերը շիջան անտառին մէջ, ահա անկէջ բարձրացաւ բազմաձայն ուրախութեան ճիշ մը որ փոխանցուեցաւ հետուն անտառին մէջէն մինչեւ ելքը եւ աւելի առաջ զկպի գաշոր, եւ քիչ յետոյ բարձրացաւ հազարձայնեան ցնծութեան եւ բերկրանքի: Երբեմն ալ հիացումով զկպի լիճը կը նայէին: Նշմարած չէին որ առաւօտուն մթնշաղին կենդանացած էր անտառը եւ ահա-դին բազմութիւն մը հաւաքուած էր լուռ ու մունջ: Անտառին եւ կղզւոյնուտին մէջ ամէնէն առաջ կեցողները հծծիւններով իրարու կը հաղորդէին տեսածնին ու յաճոյնին, եւ ահա ուրախութեան որոտումը թնդաց, օզը զղրղեցաւ, գետինը կը զոզար եւ քրիստոնեաներ ու հեթանոսներ, այլ, կին եւ սղայ կը ձայնէին. «Թագաւորը փրկուեցաւ: Ողջոյն, սղջոյն արքային Տրդատէսի»: Թագաւորը ելաւ կանպնեցաւ այլ այլմէ կգած: Գերազօր երախտագիտութեան, ուրախութեան եւ խաղաղութեան բնու ցարդ շապրուած զղացում մը սղողեց զայն: Սուրբին վերաբերին մէջ մտած ընդունեցաւ վերին սպաները եւ քաղաքական բարձր պաշտօնատարները եւ երկարեց անոնց, անխօսօրէն, յուզումի արցունքներով, իր երկու ձեռքերը: Մինչեւ իրիկուն տեւեցին զկպի Վաղարշապատ վերադարձի պատրաստութիւնները: Արմաւենիներով եւ կղզիի բարձր ցօղուններով շրջապատուած լուռ լլճածոցի մը մէջ սենեկապան ծառան իր փրկուած թագաւորին կը ծառայէր բոտ առաջնումն: Անձօրոս, ինչպէս ասկէց առաջ, երկար, խորտեաչ մայերը յարգարուած, սանարուած, նարպեան հոտեղենով սշակուած, թանկագին քարերով եւ շոգացիկ օձաձեւ թաղով, Մեծի Աղեքսանդրի հանդուստիպ զգեստաւորուած ու ծիրանեփառ վերաբերուն կանակը, երկար դաւապանը ձեռքը — թագաւորը անտպատէն աչպէս երեցաւ իր ժողովուրդին առջեւ, որ խոկոյն ծաւնիկ եկաւ եւ բոլոր ճակատները գետինը: Արքայական պատգարակը տարուեցաւ առաջ: Թագաւորին եւ Գրիգորին միջեւ բազմած էր Աշխէն, զորչ արծաթէ լօլիկով, շողակնաձեւ գօտիով եւ խոյրը մագերուն մէջ: Բայց Գրիգոր կը կրէր այրին մէջ իր հազած վերաբերուն: Ամբողջ ժողովուրդը տօնական զգեստով: Պատգարակը մինչեւ ժողովուրդին մէջտեղը տարուեցաւ: Արմաւենիի ճիւղերու, նոճիներու, կնիւնի ծղօտներու, ծաղիկներու շրջուն անտառ մը կը հետեւէր դեսպակին: Զիւաւոր ասպետներ զեսպակին շուրջ: Շեփորներու, դափե-

րու, թմբուկներու զոռ զոչումին մէջ Միհրի քարմերը կ'երգէին եւ նուիրեալներու պարը եւ բոլոր հեթանոս ժողովուրդը կը զովարանէին. «Փառք ցույն, սուրբին, միածինին: Փառք եւ պատիւ եւ օրհնութիւն Ահարայի, Միհրի, Անահիտի: Փառք թագաւորին որդւոյն Ահարայի, օրհնութիւն անոր, խաղաղութիւն անոր բոլոր ժամանակներուն մէջ: Ո՛վ Վաղարշապատ, բարձր ամուր բունէ թագաւորիդ թաղը եւ յաւիտեանս»: Բայց բոլոր այս ժխտէն զուրս Գրիգոր կը լսէր քրիստոնեաներուն երգը, որ անխափան կը ձայնակցէին եւ կ'երգէին. —

«Ամբարձէք, իշխանք, զդրուսն ան ի վեր

Եւ մտցէ քաղաւոր փառաց:

Ո՞վ է սա քաղաւոր փառաց. Տէր գօրութեանց,

Սա ինքն է քաղաւոր փառաց»:

Կրակներ կը բորբոքին բլուրներու եւ լեռներու վրայ: Քաղաք ու պալատ օր ցերեկով յուսադարդուածի պէս, երբ ազատուած թագաւորը թափօրով կուզար — թագաւորը քրիստոնեայ: Քաղաքին մէջ թափօրի միջոցին, երբ քրմապետներէն մին ակնյայտնի յուզուած ու մտատանջ պատգարակին կը մօտենար, եւ կամացուկ մը թագաւորին ականջին կը հարցնէր, թէ ո՞վ է թագաւորը որուն մասին քրիստոնեաները կ'երգէին, Տրդատ պատասխանեց բարձրաբարբառ. «Յիսուս Քրիստոս Նազովրեցի»:

## ԴԻՈՎՂԵՍ ԵՒ ԲԱՍՈՍ

312 տարուան ամառը դանդաղօրէն քաշուեցաւ Ագրիական ծովուն ափնաձիւր երկիրներէն: Դադմատիոյ ծովափունքին մէջտեղ կը հանդէի Սալօնէ, որ յանկարծ բազմացելու քաղաք մը դարձած էր: Կայսերական սպալատին շինութիւնը աւարտած էր: Ծովուն մօտ, Սալօնէի թերակղզիին վրայ հսկայ պատեր բարձրացած էին, որոնք հռոմէական բանակատեղիին քառակուսի ձեւովը վերամբարձ, կը փակէին Դիոկղետիանոսի սպալատը ընդարձակ շրջապիծով: Պատերուն վրայ հաւասար հեռաւորութեամբ տեղ տեղ տասնութեց բարձր բուրձաձեւ աշտարակներ կը կանգնէին եւ ամբողջին կուտային մթաւքօղ, տխրամած բերդանման նկարապիւր մը, դրոշմ մը: Գմբէթաւոր ու սրածայր կատարներով մեհակներ ներքսամասէն ղէպի վեր կը ցցուէին: Հոս կը բնակէր երբեմնի Ինքնակալ Դիոկղետիանոս: Եւ հիմա կը փափաքէր միայն որ Դիոկղէս յորջորջուի: Որովհետեւ Սալօնէն ոչ շատ հեռի կը գտնուէր Դիոկղէս, զիւղակը, ուրկէց կը սերէին ինք եւ Մաքսիմիանոս, եւ ուր իրենք երկուքը, դեռ տղայ, իրենց ծնողքին արջառը կ'արածէին: Ագրիական ծովուն յաւերժական զարնան մէջ, մշտադալար կղզեպսակով Սալօնէի անդորը շրջանակին մէջ, վերջապէս կ'ուզէր Դիոկղէս հանդիստ ու խաղաղութիւն գտնել:

Այն օրերուն իրիկուն մը ծովեզերքը նստած էր Մամբրոսիանոս նոր Պղատնական Դպրոցի Դիոկղէսի աշակերտակիցներէն մին: Փիլիսոփայի գղեստով էր, փայտէ նստարանի մը վրայ լայնատերեւ սօսիի մը տակ, որ ժամանակ առ ժամանակ դեղին տերեւ մը կը նետէր փիլիսոփային մոխրագոյն վերարկուին վրայ: Լայնեզր գլխարկ մը կը ծածկէր երկար, ճերմակ մազերը, որ կը խճպուէր ճակատին, ա-

կանջներուն եւ ծոծրակին շուրջ: Ոտքերը, լաշն բացուած դէպի առաջ, իրարու վրայ գետեղուած էին: Հողաթափ հազած էր: Մամեր-աինոս մտահոգ կ'երեւնար: Իր նայուածքը մտախոհ կը յատկին դէպի լաշն, անդորր, խոր կապոյտ ծովը եւ անկէջ անդին անտառախիտ կղզիները, եւ յետոյ զարձեւոյ ինք իր առջեւ: Կը թուէր կարեւոր բանի մը վրայ խորհրդածել: Միջակ մեծութեամբ մարդ մը բազմա-կոխ ամուսնիքն երկայնքէն եկաւ Մամերտինոսի աջ կողմը: Այս օտա-րականն ալ կը կրէր ուսումնական մտխորոյցն վերաբերուն, լաշն զըլ-խարկը, եւ հոգաթափ: Գունատ, բոյրութիւն լերկ, լաշնաճակատ, աչ-քերը իրարմէ լաշնօրէն անջատուած, կանանչ, ինչպէս ծովուն շուրջ առաւօտուն: Քիթը արծուեւունդն, դէպի ձախ սուր աղեղուած: Լաշն բերանը ամբափակ: Շրթունքը բարակ, թեթեւալար դիժով մը սեղմուած: Բոյրը շի, յսր ծնօտը ուժեղ ցից: Ամբողջ դէմքը հետուէն կը յայտնէր արտասույր ուշիմութիւն: Դիմադիժ, քայուածք, կեց-ուածք կը մասնէին ինքնազիտակից փտահոգութիւն մը եւ աշխարհ-հային իրերու քաջամտութիւն եւ ճարտարութիւն: Երկար առնէկ ի վեր դիտած էր որ Մամերտինոս զինքը կը դիտէր: Ուստի իր քայլերը դանդաղեցուցած էր, ետեւ գտնալով վրան զյուխը շտկած էր, վե-րսրկուն վրան քաշած, զլխարկը վար առած եւ ամէն ուղղութեամբ ու դիրքերով վաշտուէ շարժումներ ցոյց կուտար: Երբ քանի մը քայլ միայն հետի էր Մամերտինոսէն, օտարականը յանկարծ իր խոշոր ջուրի պէս կանանչ նայուածքը ուղղեց փիլիսոփայ Մամերտինոսի վրայ: Քանի մը նայուածք բաւական եղան, եւ Մամերտինոս իր աչ-քերով օտարականին դամուեցաւ եւ շէր կրնար այլեւս ետ քաշել նայուածքը: Օտարականը սղջոյն տուաւ խորունկ, լեցուն ձայնով: Մամերտինոս սաքի ելաւ եւ սղջունեց փոխադարձ: Օտարականը վե-րէն վար շափեց գաշն պոպ եւ կարծես հաշուուած անդորրութեամբ մը: Մամերտինոս ինքզինքը ներկայացուց իրրեւ հետտը Դիոկղէսի պայտախն մէջ, օտարականն ալ իրրեւ Բարկոնացի մոյ մը, որ Յու-նաստան եւ Իտալիա ճամբորդութեան մը ձեռնարկած է: Կը փափաքի ծանօթանալ անուանի վարժապետներուն, բանաստեղծներուն եւ ար-ուեստագէտներուն, եւ կ'ուզէ ինք անձամբ ներկայանալ կայսերական եւ իշխանական արքունիքները, ակադեմիաները եւ թատրոնները իր-րեւ արտասանող իր յօրինած քերթուածներուն: Մամերտինոս շատ ուրախ եղաւ, հրաւիրեց օտարականը նստիլ, եւ շատ շանցած ինք-զինքը հմայուած զղաց օտարականին նայուածքէն եւ ուրիշէն, որ այնքան կարճ ժամանակի մէջ այսքան հմտութիւն ցոյց կուտար ի մասին աստղաբաշխութեան, աշխարհագրութեան, անտեսագիտու-թեան, ի մասին բանաստեղծութեան եւ փիլիսոփայութեան, արդի համաշխարհային կացութեան, Դիոկղէսի անուանի կառավարութեան:

Ի մասին Սալոնէի եւ աշխարհագրական, կլիմայական վիճակին Ադ-րիականի երկրամասին, եւ այնքան շատ հարցումներ կ'ուղղէր Մա-մերտինոսին, որ ստիկա ափ ի բերան կը մնար, եւ յաճախ առանց խօսելու կ'ապշէր կը մնար օտարականին վրայ: Կը դիտէր թէ ինչ-պէս ան շարունակ իրեն կը նայէր եւ շէր կրնար հետանալ երբեք ա-նոր նայուածքէն: Երբ սկսաւ բառերը իրար խառնել եւ այլեւս կարող չէր ուղիղ դատել, օտարականը սաքի ելաւ, յոյնութիւն չպատճա-ռելու մտահոգութեամբ, եւ լրութեամբ սկսաւ գիտել աննկարողելի տեսարանը մտնամուտին Ադրիական ծովուն վրայ: Երկինք ու ծով ձոյլ սակի: Ամէն ինչ տակաւ եղաւ կապոյտ, աւելի կապոյտ, մանի-շակապոյն: Կղզիները աներեւոյթ եղան: Քամին փչեց սաստիկ, աւել-լով շոր, զեղնած տերեւները լաշնատերեւ սօսիներէն, որոնք ափուն-քը կը պճնադարձէին երկայն պողոտայի մը վրայ: Սա հարցումին, թէ զիշէր չեղած ո'ւր կ'ուղչէր երթալ, պատասխանեց օտարականը. «Քաղաքը բարեկամներուն»: Երէկ եկեր է, եւ կ'աշխատի կայսեր մօտ ունկնդրութիւն մը ձեռք բերել: Անպամ մ'ըն ալ Մամերտինոսի վրայ շեշտուեցան օտարականին նայուածքները: Պարտաւորիչ, ան-ընտանի ոյժ մը կար սա հարցումին մէջ. «Կը հաճի՞ս արդեօք զիս ներկայացնել Դիոկղէսին մօտ: Ես դիտեմ թէ զժուարութիւն ունիս քու դիրքը պահպանելու: Թերեւս կարենամ քեզի օգտակար բլլալ»: Մամերտինոս թեթեւ սոսկումէ մը բռնուած զղաց ինքզինքը: Միւս-նոյն առնէ մէկէն ի մէկ յոյս մը եկաւ իրեն մէջ. «Պիտի ներկայա-ցրեմ քեզ որքան որ կրնամ»: — «Լաւ: Ուստի բէ իրեն, իմ անունս է Բասոս, եւ եթէ փափաքի ամենավերջին լուրը ունիմ իր կնոջ աղ-ջրկան, Պրիսկայի եւ Վալերիայի մասին: Հոռմի կացութեան մասին ալ ամենանոր լուրերը ունիմ»: — «Լաւ եւ սքանչելի: Անտարակոյս իշխանը քեզ պիտի հրաւիրէ: Խեղճ սղորմելին շատ կը տառապի կնոջը եւ գաւկին կարօտէն»: — «Կրնաս զիս գտնել Ուրսինոսի հիւ-րանոցը, անմիջապէս որ Դիոկղէս փափաքի տեսնել զիս»: Բաժնուե-ցան:

Գիշերը ծածկեց ծով ու ցամաք: Պայտախն բարձրագիւր ճաշա-սրահին մէջ նստած էին Դիոկղէս եւ իր բարեկամները պարզ ճաշի մը առջեւ: Ոչ սք այլեւս պէտք էր ինքնակալ բէր, ոչ սք այլեւս առ-ջեւ պէտք էր ծունկի պար, ինար: Պարզ անհատ մը կ'ուղչէր բլլալ, որ երբեմն բանջարեղէն, մանաւանդ ամենազգի կաղամբներ մշակէ, երբեմն ալ զրազի ծաղկամշակութեամբ եւ ծառեր տնկելով, երբեմն ալ դարձեալ ուսումնասիրելով, կարդալով եւ երկար դիշերները իր հիւրերուն եւ բարեկամներուն հետ ամենալուրջ խօսակցութիւններով անցընէ: Ընդարձակ սրահը շափաւոր կերպով միայն լուսաւորուած էր քանի մը բարձր շքեղ աշտանակներով: Դիոկղէսի բանջարեղէնն-

րը կ'ուտէին, զոր այս տոտու ան փրցուցած էր իր իսկ ձեռքերով ճաշին հասցնելու համար: Դիտկղէս պէտք չունէր հարցնելու թէ բարեկամները ճաշին կը հաւնէին: Մամերտինոս ոչ մէկ առիթ կը փախցնէր քերթողական լեզուով դովեսա հիւսելու եւ ասով Դիտկղէսի քով իր դիրքը պահելու համար: Ի մէջ այլոց ըսաւ, թէ Երեմանի ինքնակալը ի՞նչպէս ալ կրնայ հարցնել թէ կը հաւնէ՞ն իր ճաշին: Ամէնուն զխոցած բանն է թէ բանջարանոցը արդաւանդ է: Իշխանին ոտքերը միշտ անպակաս են անկէջ ամէն օր, անոր քրտինքին կաթիլները, անոր աստուածարեայ ճակատէն կ'իջնան պարտէզին մէջ: Իր ձեռքերուն ճարտարութիւնը ու ճարպիկութիւնը, եւ ամէն տեսակ տունկերու եւ կաղամբներու իր ծանօթութեան շի հաւասարիք աշխարհի մէջ որեւէ պարտիզպան: Իր աստուածայնութիւնը կը հրամայէ արեւին, անձրեւին, ցօղին: Որով կը մեռնի անոր նախաձեռն տակ: Ճճիները, թռչունները, կարկուտը, ստանամանիքը — ամէն ինչ փախ կուտայ անոր յանդիմանութենէն: Մժեղները անոր առջեւ պար մը կը պարեն ի յիշատակ անոր իշխանութեան: Արեւը Սալօնէի վրայ աւելի երկար կը մնայ քան այլուր, երբ Դիտկղէս ուղի աշխատել: Հիւրերուն քաղցը թէ իսկ սոսկալի բլրայ, բմբռնելի է սակայն, որովհետեւ երբեմն Աստուած եղող Ինքնակալին սուրբ ձեռքերէն կուգայ կերակուրը, ինքնակալին օր իր հիւրերուն սիրոյն համար կը խոնարհի համեստօրէն հողին վրայ, կոնակը կը ծռէ, իր ոտքերը եւ ձեռքերը կ'ազատէ եւ անոնց ամէնուն այս կերպով կուտայ սպասարկող համեստութեան օրինակ մը: — Հեղինակն անդուստի ծիծաղ մը դամէնքը սողորեց ի միաս Մամերտինոսի, երբ Դիտկղէս անոր ճառէն վերջ ձայնեց. «Բան մը մոռցար իմ դովաւանքին մէջ, բարեմիտ Մամերտինոս»: — Ամէնքն ալ հետաքրքրութեամբ ականջ կախած էին. «Դիտկղէս այն տանն ալ կը ծաղկեցնէ իր կաղամբը, երբ հողը Մամերտինոսի ճառովը աղբէ»: Ուրիշ զրուստալից ճառեր ալ յաջորդեցին լուսալոյն մասամբ իրօք հանձարեղ առակներով, բազում ակնարկութիւններով ի մասին Դիտկղէսի կառավարութեան:

Դիտկղէս ճանճրացած բաց պատահանէն դուրս կը նայէր, որպէս թէ կը սպասէր որ զովաբանողները վերջացնեն իրենց առածները: Յոգնած կ'երեւէր: Իր ոյժը կրկին դարձած էր: Դիմապիծերը աւելի թարմ եւ աշխոյժ դարձած էին, այտերը թխացած, բայց մարմինին կայքը աւելի ծռած, իր հանգամանքը աւելի լուռ, քաշուած, նախաձեռքը աւելի տխուր, վեհերոտ. ամբողջ էութեամբը վերջապէս, երկչոտ, խրտչող: Ձեռքերը արեւէն սեւցած էին, հողի գոյնով, շատ մը սպիներով եւ ճեղքերով ծածկուած: Ասիկա իր հպարտութիւնն էր: Իր զգեստները իր զբաղումին համապատասխան էին: Կապոյտ բուրդէ պարեգօտին վրայէն ճերմակ ժապաւէններով թուխ վերար-

կու մը կը կրէր: Բարեկամները իրենց վերարկունքը նեղուցած էին քաշելով իրենց մարմինին վրայ: Ճաշը վերջացած էր: Աղանդերը յաջորդեց, եւ խօսակցութիւնը սկսու աւելի սահուն եւ աւելի յուրջ ըլլալ: Եւ նիւթ ալ կար: Հստակահան կայսրութեան մէջ զէպքերը Դիտկղէսին հետոնային ի վեր աւելի սպասուական եղած էին: Բայց Դիտկղէս Սալօնէի մէջ այլեւս չէր ուզեր որեւէ բան զիտնայ պետութեան հոգերուն նկատմամբ, ոչ մէկ լուր կամ տեղեկութիւն չէր սպասեր լրարեւներէ կամ սուրհանդակներէ: Ոչ նամակ կը գրէր ոչ կ'առնէր: Բայց հիմա երբ ամէն կողմ միտքերու մէջ յուզում կը տիրէր, օրէ օր խոշոր վճռական զէպքերու կը սպասէին, Դիտկղէս եւս չէր կրնար ծածկել իր վրդովումը, ոչ ալ յաղթել իր հետաքրքրութեան: Այս իրիկուն, երկար ժամանակ ի վեր առաջին անգամ ըլլալով հարցուց թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ կայսրութեան մէջ: ոչ ոք լուր մը ունէր: Բարեկամները, զիրար լրացնելով, զխոցածնին բախն հաղորդեցին: Ինքնակալը, Գաղերիտո հիւանդացիք է: Դիտկղէսի սա անտարբեր հարցումին, թէ ի՞նչ է արդեօք իր աներձաղին հիւանդութիւնը, սմանք տրհամարհանքով երեսնին կը խոստէին, ուրիշներ լուր կը մնային: «Վէ՛րք մը — տեղ մը», բայց Մամերտինոս զիթին տակէն: Ամէնքն ալ խնդացին: Դուրսիտնուս եւ Դորթիլոս ծանրախոշ կը մնային: Իսկ Դիտկղէս զլուրը կախած կը խորհէր:

«Ճերմակ մազերով այդ Մարտիմիտնոսը վերջապէս հանդատութիւն դատ՞ է»: — «Բարբոսին ոչ, Դիտկղէս: Անիկա հանդատութիւնը մահուան մէջ կը դտնէ», ձայնեց եւտրոպիտո: «Այն ատենն ալ ոչ», ծաղրեց ուրիշ մը: «Գիտէ՞ք որ ան իր խորթ աղջիկը Փաուստա Կոստանդիանոսի կտակէր է»: — «Այո», ձայնեցին բարեկամները: «Ասիկա իր պատճառը ունի», զիտել տուաւ Դիտկղէս, ուշադիր ըլլալով: «Ուրիշն առաջ եկաւ ասիկա: Սխալ մըն էր որ Կոստանդիանոս իշխանակիցներու ընտրութեան մէջ մեր կայսրութեան շրջանակին մէջ մտաւ: Սխալմունքը հիմա իր զէջ հետեւանքը կ'ունենայ: Կոստանդիանոս ժողովուրդին մարդն է, ժամանակին մարդը, կ'ըսեմ ձեզի: Քրիստոնէաները իր կողմն են, ինչպէս իր հանգուցեալ հօր Կոստանդիոս Քլարոսի կողմն էին: Հիմա ո՞ր է Կոստանդիանոս»: — «Գալլիոյ մէջ»: — «Եթէ Հոռոմ երթալու համար ճամբայ ելած չէ»: — «Ինչո՞ւ համար», ձայնեցին անոնք: «Չէք գիտեր որ խոսովութիւններ ծաղած են Իտալիոյ մէջ: Մարսենտիոս Հոռոմ կանչուած է իրրեւ կեսար»: — «Որո՞ւ կողմէն: Խրտուիլակ ինքնակալ»: «Տես, Դիտկղէս, քու մականդ տակաւին որքան անհրաժեշտ էր»: — «Մերակուտականներուն, աղնուականներուն եւ պրետորեաններուն մէկ մեծ մասը կանչած են զինքը»: «Ի՞նչ, Մարսենտիոսը: Սա զինի տակա՞նք, ցլաչո՞ւնը: Ինչու համար ստիկա»: — «Կ'իմանանք թէ Գա-

ղերիսի մէկ նոր խիստ հրամանագիրը տուրքերու մասին ամբողջ քաղաքը ոտքի հանած է, եւ ճիշտ այն շրջանակները աւելի զրզուռած են, որովհետեւ իրաւ ալ անիրաւութիւն եղած է անոնց դէմ»։ — «Հասկնալի է, արդէն ինձի համար պարտաւորութեան բաւական զոհողութիւն ընել, եւ հիմակ ալ իմ շինել տուած շէնքերուս համար պարտաւոր են վճարում ընել», խնդաց Դիոկղէս, իբր հեղնութիւն իր իսկ անձին դէմ։ «Եւ հիմա ի՞նչ կ'ըլլայ»։ — «Իմացայ թէ Մաքսիմիանոս դարձեալ իբրեւ Կայսր հրաւիրուած է։ Հայր եւ որդի Իտալիոյ մէջ տիրակալութիւնը պիտի վարեն»։ — «Հայր եւ որդի» — հեղնեց Դիոկղէս դառնապէս։ «Կոստանդիանոս կրնայ ուրախանալ այս մասին»։ — «Գաղերիոս եւ Սելվերոս արդէն գայն առաջարկած են Մաքսենտիոսի դէմ։ Անոնք սա տիտղոսը կուտան Կոստանդիանոսի։ Որդի Աւգոստոսայ»։ — «Որքան գեղեցիկ», կատակեց Դիոկղէս, «Հայրերը չեն արժեր իրենց դաւակը։ Մեծ բաներ պիտի ըլլան։ Իմ դուշակածս — բարեկամներ, պիտի ըլլայ։ Կոստանդիանոս Ինքնակալ պիտի ըլլայ, եւ Կոստանդիանոսի միջոցաւ Քրիստոս»։ — «Աստուածները չընեն, քաւ լիցի», ձայնեցին ամէնքը, քրիստոնեաներէն դուրս։ «Թող կամենայ Աստուած» ձայնեցին Ղուկիանոս, Գորգոնիոս, Դորոթէոս, քրիստոնեայ պալատականները, որոնք Նիկոմիդիայէն հոս Դիոկղէսի հետ եկած էին։ «Կոստանդիանոս յաջող եղած է պատերազմի դաշտին վրայ, ինչպէս կ'ըսուի։ Բատարայի մէջ Փրանքները վերջապէս պարտուեցան։ Ասկարիոս եւ Բոգասիոս սպաստամբները կախաղան հանուեցան»։ — «Կոստանդիանոսի կողմէն։ Ա՞ն ալ կրնայ արիւնահոս վճիռներ տալ», հարցուց Դիոկղէս դարմացած։ «Անիկա՞», նոյն դարմանքը յայտնուեցաւ ուրիշներէն ալ — ան որ զիտէ թէ մարդ երբ պէտք է քրիստոնեայ եւ երբ պէտք է հեթանոս ըլլայ։ Ան մկրտուած քրիստոնեայ է»։ — «Ոչ տակաւին», յայտնեցին Դորոթէոս, Գորգոնիոս, Ղուկիանոս։ «Ձեւոր պահէ պահպանէ գայն մարդասպանութենէ», խոր հռուս զարձակեց Դիոկղէս, եւ իր աչքերը յղնութենէն զոցուեցան պահիկ մը, որպէս թէ չէր ուզեր տեսնել տիրամած ազիտարեր պատկերները որոնք իր հոգիին առջեւ կուգային։ Այլեւս հոգ չէր բնի նոր բառակրթներուն, թէ Կոստանդիանոս Բրուկաներուն երկիրը մտած է, թէ Հռենոսեան տորմրդիկը խոշորցած է, թէ Հռենոսի ձախ սահմանը ամբողջուցիկ են, թէ Քէօյի վրայ քարէ կամուրջ մը շինուած է, թէ մինչեւ իսկ ան (Կոստանդիանոս) նոր յաղթութիւններ տարած է Բրիտանիոյ մէջ եւ Ալամաններուն դէմ։

«Բայց ես կը փափաքիմ գիտնայ», ձայնեց Դիոկղէս ոտքի ելլելով եւ յորանջելով, «թէ անկէց ի վեր ի՞նչ եղած է»։ Մամերտինոսի համար ճիշտ առիթը եկած էր, այն տարօրինակ օտարականին յանձ-

նարարութիւնը կատարելու։ Եւ երկարօրէն պատմեց իր զլխուն եկածը։ Միտքը դրաւ համբերել, տակալ որ Դիոկղէս, ինչպէս կ'ընէր սովորաբար, իրեն նայի, արդահատելով կամ բաժնի վրայ տարակուսելով, եւ այս առթիւ ալ իր բարեկամները, Դիոկղէսի վարմունքէն քաջալիրուած, հեղնական սկիսարկութիւններ բնէին իրեն նրկատմամբ։ Դժուար չէ բմբունելը, թէ Մամերտինոսի հաւու նայուածքը շփոթած էր օտարականին նայուածքին։ Իր զիտցածները այն միւսին զիտցածներէն ոտնակոխ եղած էին։ Շփոթած իսկ չըլլար միւսէն, Մամերտինոս կարող էր Ազրիական ծովը շփոթել եղեականին հետ եւ Հոմար Աթէնքի հետ։

Բայց, յամենայն դէպս, Դիոկղէս եւ ամէնքը հետաքրքրուած էին այդ իմաստուն օտարականը տեսնելու եւ անոր հետաքրքրական լուրերը լսելու։ Դիոկղէս հրամայեց Մամերտինոսին, գայն վազը իրիկուն ճաշի հրաւիրել։ Ոտքի ելան եւ ման գալով սրահին մէջ սրկէ նրկէ կը խօսէին։ Երբէ մը տաւիկ կ'ածէր։ Բանաստեղծ մը իր նոր քերթուածներէն կ'արտասանէր, մինչեւ որ տանկով կէս գիշեր ըլլար, եւ Դիոկղէս իրեն միշտ սիրելի գարձած սենեկապան Ղուկիանոսէն խնդրէր իրեն բնկերանայ ննջարան։ Եւ բարեկամները կը բաժնրկուածներէն կ'արտասանէր, մինչեւ որ տանկով կէս գիշեր ըլլար, եւ Դիոկղէս իրեն միշտ սիրելի գարձած սենեկապան Ղուկիանոսէն ննջարան էլլելու վրայ էր, Մամերտինոս արայօրէն անոր մօտ գրնաց եւ ախանջէն փափսաց. «Օտարականը քեզի պատրաստ է հաղորդել, եթէ կը փափաքիս, լուրեր Պրիսկայի եւ Վալերիայի մասին, ան շատ բան զիտէ անոնց վրայ, եւ թէ ո՞ր են հիմա»։

Այս անգամ շինդաց Դիոկղէս։ Թախիճի ու կասկածի ստուեր մը եւ միաժամանակ, յոյս եւ ուրախութիւն կը պայքարէին իր ահա դունատած երեսին վրայ։ «Թող գայ։ Թող գայ», ձայնեց ան, վեր ելլելով հանդերձ երեսը դարձնելով Մամերտինոսի։ Ինչպէս տիրապետութեան ժամանակ, հիմակ ալ Ղուկիանոս կ'ընէր Դիոկղէսի սենեակին ծառայութիւնը։ Ընտանեկան կեանքով զժրախտ եղած վեհապետը ամէն ժամանակէ աւելի մտխոյտ գարձած էր։ Ննջարահը յայն էր եւ ընդարձակ, ուր լեցուն էին թանկագին փայտազրուպներով փառուոր զեղարուեստական զօրձեր կամ մարմարէ պատկերներ, հին, Նիկոմիդիայէն բերուած, եւ նոր։ Սեւ, նուրբ կճեայ պատուանդաններու վրայ գարդիճին մօտ կանգնած էին կայսրուհիին եւ աղջկանը՝ Պրիսկային եւ Վալերիային ճերմակ կիսարձանները։ Դիոկղէս զիշերները իր ժամերով անքնութեան միջոցին այդ երկու արձանները կը քաշէր կը մօտեցնէր իր գարդիճին։ Այսպէս Ղուկիանոս յաճախ զիշեր ատեն այսպէս կը զանէր գայն եւ առուօտուն Դիոկղէսի բարձր արցունքէն թաց խիտմ կ'ըլլար։ Ղուկիանոս հիմա այլեւս իր լաւազոյն ճամբուն վրայ էր, նպատակին



ժամանելու: Դիտած էր որ իր անոր առջեւ կարգացած բոլոր դրահանութենէն ամէնէն աւելի Նոր Կտակարանն էր որ ամէնէն մեծ տրպաւորութիւնը կը դործէր անոր վրայ: Բայց միշտ տակաւին վստահութենէն աւելի վախն էր որ Դիոկղէսը կը մղէր այդ գիրքը կարգաւ տալու: Այս գիշեր Ղուկիանոս աւելի երկար կեցաւ իշխանին անկողինին զլուխը: Շարաթներէ ի վեր անոնց երկուքին միջեւ ուրիշ խօսակցութիւն չէր եղած, այլ այն թէ Պրիսկա եւ Վալերիա ո՛ւր կըրնան եղած ըլլալ, թէ անոնք ի՞նչ վիճակի մէջ են, թէ կարելի չէ՞ արդեօք դանոնք Սալօնէ բերել: Եւ հիմա ահա լուր պիտի դայ: Օտարականը այդ մտտին տեղեկութիւններ ունէր: Դիոկղէս մանկական յուզումով իր ուրախութիւնը ցոյց կուտար եւ չէր կրնար լուսնայուն սպասել: Ղուկիանոս այդ գիշեր քանիցս ննջասրահ եկաւ Դիոկղէսը տեսնելու: Միշտ արթուն կը գտնէր զայն: Միշտ իր պառկած քովի սենեակին մէջ կը լսէր կայսեր մրթմրթալը, հազալը, ինքնիրեն խօսիլը: Երբ Ղուկիանոս, արդէն իսկ առաւօտեան մթնշաղին նորէն ներս մտաւ, Դիոկղէս կեցած էր Վալերիայի արձանին առջեւ, աղուոր զլուխը թեւերուն մէջ առած, եւ իր գունատ, յուլնած երեսը աղջկանը արձանին վրայ դրած: Ղուկիանոս անոր ձեռքէն բռնած անկողինը դարձուց: Այնուհետեւ քնացաւ Դիոկղէս խորունկ առաւօտեան ժամերուն: Յետոյ սկսաւ պարտէզին աշխատանքը: Դիոկղէս կ'ուզէր սպասուած հիւրը մեծարել իր ամենայաւ բանջարեղէններով: Ընտիր ճաշ մը պատրաստ էր, բարեկամները, միւս հիւրերը եւ ծառաները տօնական զգեստներով էին, երբ խորհրդաւոր օտարականը, Մամերտինոսի առաջնորդութեամբ մտաւ շքեղ տօնասրահը: Մամերտինոս կախարդուածի, գիւհահարի պէս էր: Շարունակ սխալ քայլ կ'առնէր, չէր կրնար կառավարել իր սեփական ոտքերը, կ'ուզէր իրեն ընկերացողը ներկայացնել եւ շատախօս ու ճամբարտակ ճառով մը ներածել զայն Դիոկղէսի բարեկամական շրջանակին մէջ, բայց լեզուն կը բռնուէր, լեզուն չէր ուզեր իրեն հնազանդիլ: Շարունակ բաներ կ'ըսէր կը կենար: Ներկայացուցած ատենը անձերը իրար կը խառնէր, նաեւ իր բարեկամին ծաղումը, ճամբորդութիւնը եւ ապրումները, — այս բոլորը կը շփոթէր, օտարականին անունը տուած ատենը ծիծաղ մը կ'ունենար, զլուխը կը կախէր, աչքերը վեր չէր առներ, այնպէս որ իր այս օտար բարեկամը անգամ խիստ նեղուիլ սկսաւ, եւ առանց սպասելու ինք խօսք առաւ եւ ինք ներկայացուց ինքզինքը: Եւ այնպիսի պաղարիւնով ու վայելչութեամբ, նայուածքի, գիմադիծի, ձայնի այնպիսի ներդաշնակութեամբ, նուրբ, երկար մատանեկարգ ձեռքերուն այնքան գեղեցիկ շարժումով, որ ամէնքը առանց բացառութեան իրարու ետեւէ հմայուած մնացին տեղն ի տեղը, եւ չէին կրնար յայտնալ գիտելով այս ազնուական

ճերունին սպիտակափայլ սնդուսեայ զգեստովը, շողակնայեռ ծիրանի գօտիովը: Քրմական երեւոյթ մը, պատկառելի, որ կը յիշեցնէր պարսիկ կամ եգիպտական քուրմերը: Նաեւ ամիլուած խոշոր գլուխը, լըջախոս գէմքը, կը վկայէին իր մասին: Ուտելու, խմելու, դովելու, երախասողէս ըլլալու, դատելու մէջ — միշտ նոյն չափաւոր կշիռքը, ամէն բանի մէջ ազնուախոհ, զգուշաւոր, մտացի, բարեսիրտ վարմունքը: Ո՞ւր չէր եղած: Ի՞նչքան կարգացած, ուսումնասիրած չէր: Ինչ բան որ Դիոկղէս, Ղուկիանոս, Դորոթէոս, Գորգոնիոս — կարծես իրենց միջեւ կանխաւ համաձայնութեամբ — հարցնէին իրեն, փորձի համար, Բասոս — այս անունը կուտար իրեն — կը տոկար ամէն խօսքի, հարցումի եւ պատասխանի: Որքան երկար այնքան աւելի կը տիրէր կ'աղղէր միտքերուն: Երբ աղանդերը սկսաւ, մէն միակ խօսողը ինք էր: Ոչ ոք այլեւս կը համարձակէր ընդմիջել զինքը: Չարմանք պատճառող շրջահայեցողութեամբ կը պարզարանէր հոռմէական կայսրութեան կացութիւնը, եւ առանց սրեւէ երկչտութեան կը դատէր Դիոկղէտիանոսի եւ իր կայսերակիցներուն կառավարութիւնը, կ'անուանէր լաւ կողմը, ցոյց կուտար սխալները, եւ մինչեւ իսկ ներկայ քրիստոնեաներուն այնքան յայտնի եւ անվրդով հիացում կը պատճառէր քրիստոնէութեան մասին անոր հմտութիւնը, որ անոնք ալ սկսան հետզհետէ մտաշիլ այս նշանակալից մարդուն: Եւ ճիշտ հիմա, երբ Բասոս տեսաւ, որ իր տպաւորութիւնը կը տիրէ ամէնուն վրայ, կը ձգէր որ խնդրեն իրմէ, թախանձեն զինքը տեղեկութիւն տալու ամենանոր գէպքերուն մասին, որոնք այդ օրերուն տեղի կ'ունենային Իտալիոյ մէջ: Որովհետեւ, իր բաժին նայելով, ինք ուղղակի նոր եկած է Հռոմէն: Ինչ չափով որ գէպքերուն վրայ բան մը գիտէին երէկ իրիկուան ունկընդիրները, ցոյց կուտան ամէն տեսակ հաւանութեան նշաններով, — գիմադիծ, շարժուածեւ կամ բացաղանջութիւն: Բայց շատ չանցած ամէն մարդ ձայնը վար քաշեց եւ Բասոս կը պատմէր ամենանորը որ ոչ ոք գիտէր: Մաքսենտիոս քանդած էր Կոստանդիանոսի հօրը արձանները Հռոմի մէջ, նաեւ անոր պատկերները կամ փոքր արձանները որոնք բանակին մէջ ցոյց կը տրուէին ամէն կողմ եւ զինուորներէն կը յարգուէին: Ասիկա պատերազմի յայտարարութիւն մը եղաւ: Մաքսենտիոս, իր գործերուն թիւին եւ ուժին նայելով, պիտի կրնար յաղթել, եթէ Կոստանդիանոսի պէս զինուորական հրամանատար մը եղած ըլլար: Մաքսենտիոս քանի մը օրուան մէջ 190.000 հողինոց բանակ մը մէջտեղ հանեց ափրիկեցի ձիաւորներէն եւ Մէօզի շրջանի հետեւակներէն, իր հօրը Մաքսիմիանոսի ռազմավարական զպրօցէն, բայց շատ վէջ ջուր մը: — «Բայց — զինուոր վերջապէս», մէջտեղ նետեց Դիոկղէս, հին բաներ յիշելով: «Բայց Մաքսենտիոս երկար

ժամանակ վերին Իտալիոյ մէջ պէտք ունեցաւ այդ զօրքերուն, այնպէս որ Կոստանդիանոս Ալքլաններէն առաջ գալով, 10·000 հոգիով յանկարծակի ըրաւ զայն: Մաքսենտիոսի նախադրանքները բռնած էին Սեպուսին»: — «Շիտակ ոսպմադիտութիւն», զիտել տուաւ Դիոկղէս, «Իտալիոյ համար բանալին»: — «Շիտակ», կրկնեց Բասոս, «Բայց զուրը զոցելու համար բանալին ճիշտ ժամանակին ներս մղելու է: Կոստանդիանոս կտարեց այդ բանալին — յարձակեցաւ Սեպուսի վրայ, եւ անոր բանակներուն զանուածները փոթորիկի մը պէս զոտարով նետեց Տուրինոյի դէմ: Եւ ահա հոս դէմ առ դէմ եկաւ Մաքսենտիոսի մեծագոյն ուժերուն: Կոնիւր սարսափելի պէտք է եղած ըլլայ: Կոստանդիանոս ինք անձամբ կը վարէր իր պաշտական ձիաւորները Մաքսենտիոսի զրահապատ հեծեակներուն դէմ եւ զարկաւ յաղթեց»: — «Բայց զէպի Միլան ճամբան բաց կը մնար», ձայնեց Դիոկղէս, յուզուած: — «Այդպէս ալ եղաւ, Ինքնակալ: Պրէշիտ անձնատուր եղաւ առանց զիմադրութեան եւ առանց որեւէ միտաբ: Բայց Վերոնա զիմադրութիւն ցոյց տուաւ: Հրամանատար Բուրիկիոս արժանի է ամէն պատիւի»: — «Քաջ զինուոր մը: Կը ճանչնամ զայն: Իմ ժամանակ իրբեւ պարզ զինուոր կը ծառայէր: Ի՞նչ բրաւ»: — «Գաղանի կերպով քաղաքէն զուրս զրկեց սուրհանդակ սուրհանդակի ետեւէ, որպէսզի ամենամօտ քաղաքներէն օգնութիւն փութացնեն: Ինք ափ մը հաւատարիմներով բռնեց Վերոնան Կոստանդիանոսի ամենասատիկ յարձակումներուն դէմ, մինչեւ որ զային Մաքսենտիոսի զլիաւոր ուժերը»: — «Բայց, յանուն բոլոր աստուածներուն, ո՞ւր էր այդ միջոցներուն սա Մաքսենտիոսը», ընդմիջեց Դիոկղէս, բարկացած: — «Ապահով Հոռոմի մէջ», պատասխանեց Բասոս, ընդհանուրին սիրտերը թունդ հանելով: «Բուրիկիոս յանդիմնեցաւ սակայն յարձակիլ: Կոռեցաւ ինք ամէնէն առաջին շարքին վրայ եւ ենթարկուեցաւ Կոստանդիանոսի սուրին որ տապալեց զայն»: — «Փառք քաջին: Աստուածները Բուրիկիոսի հոգին լուսաւորեն», ձայնեց Դիոկղէս, յուզուած: «Եւ յետո՞յ: Վերոնա ինկա՞ւ»: — «Վերոնա ինկաւ եւ ենթարկուեցաւ յաղթականին խիստ բարկութեան: Ինկաւ Մօսենա: Մաքսենտիոսի բանակը փախաւ: Կոստանդիանոս կ'երթայ Լաւեէն զէպի միջին Իտալիա: Մաքսենտիոս զլուխն ու սիրտը կորսնցուցած է: Հոռոմի մէջ ապստամբութիւն կը ծագի Պրետորեան զինուորներուն կողմէ, որոնց քաղաքացիներն ալ կը մասնակցին: Կրցողը Հոռոմէն կը փախչի»: — «Իսկ Մաքսենտիոս» — «Ա՞ն ի՞նչ կ'ընէ»: — «Այս միջոցին կը հաւաքէ հաւատարիմներուն մնացորդները, կը լքէ անպաշտպան, զողահար Հոռոմը եւ Կոստանդիանոսի դէմ կ'երթայ»: — «Սեւրպարը: Սատանան», ձայնեց բարկութենէն կատաղած, բոլորովին նորէն Ինքնակալ զարձող Դիոկղէսը: «Այո, մը-

տիկ ըրէ միայն, իշխան, աւելի լաւը կայ: Փլամական պողոտային վրայ, խուճը խուճը մարդիկ կեցուցեր էր, ամբողջ ալ թեւը Տիրերիսի վերեւ ցից բլուրին վրայ, իեղծ ժողովուրդը զլուխ զլիս սեղսուած ժայռերուն եւ Տիրերիսի միջեւ զամի պէս մխուած»: — «Աստուաներ, մարդիկ, դեւեր», պոռայ Դիոկղէս սրահին մէջ վեր վար ընթանալով: «Նե քաջ լեզնակները այդ ոչինչ մարդուն, այդ մասնիչի՞ն կը հետեւին: Անոնց արիւնը զլուխը ըլլայ զժոխքի ծրնունը, սատանայի քաք»: Դիոկղէս ոտքերը գետին կը զարնէր, կը գափէր: Բասոս կը սպասէր հանդարտ, եւ ընդհանուր հետաքրքրութեան մէջ շարունակեց. «Ափրիկեցի հեծեակները հերոսարար կոռեցան Կոստանդիանոսի ձիաւորներուն դէմ եւ — պարտաւորուեցան փախչիլ: Հետեւակներն ալ փախան նեղ պողոտայէն վար զէպի Հոռոմ, եւ Մալվական կամուրջէն քաղաք»: Դիոկղէս զունաթափ երեսով, իրանը շատ առաջ ծած, բերանը ձեռքովը բռնած, կը հետեւէր պատմողին մէն մի բտոին, մէն մի շարժումին, որ յաջորդ զէպերը կը պատմէր այնպիսի ճշտութեամբ եւ տեղական ծանօթութիւններով, որ ոչ ոք կը կասկածէր այլեւս, թէ Բասոս ականատես միայն մըն է: «Մաքսենտիոս ալ փախաւ»: — «Ինքնակալը կը փախչի», պոռայ Դիոկղէս, ինքնիրմէ ելած: «Կը փախչի ու կը փախչի, մինչեւ որ այլեւս չկրնայ փախչիլ: Փայտէ Մալվական կամուրջին վրայ կեցած է ամբողջ: Արովհետեւ աղնուական Պրետորեանները — որոնք չեն կրնար հանդուրժել Հոռոմի անպատուութեան եւ իրենց ինքնակալին խայտառակ ըլլալուն, փախստականներուն առջեւ կ'ելլէին, կը կեցընէին զանոնք, եւ կը կոռէին խուճող ոտիսին դէմ: Առիւծներու պէս կը կոռին: Մաքսենտիոս չի կրնար փախչիլ այլեւս: Հիմա ինք ալ կը կոռի: Կամուրջը — փլաւ: Ժողովուրդը, կոռողները կը պոռան, Աստուածները ողորմին: Բայց Պրետորեաններէն ամէն մէկը կ'իյնար լուս Տիրերիսի հոսանքներուն մէջ, որ արիւնի հեղեղներէն կը կարմրի»: Բոլոր հիւրերը ոտքի ելած էին եւ անպիտակցարար նեղ օդակ մը կազմած էին պատմողին շուրջ: Դիոկղէս աղանդերի սեղանին յատուկ բաղմոցի մը մէջ թաղուած էր Բասոսի առջեւ, երկու ձեռքերովը երեսը ծածկած: Ամէնքն ալ յուզուած կ'իմանային դժբախտութեան ելքը: «Մաքսենտիոսի զիական ալ գերի բռնեցին, զլուխը իրանէն բաժնեցին, եւ երբ Կոստանդիանոս փառաւոր մուտք մը կը գործէր քաղաքին մէջ, բաց սեղանի մը վրայ զրուած ներկայացուցին յաղթականին»: — «Փառք ցուին անոր վախճանին համար», հեծեծեց Դիոկղէս: Ղուկիանոս բաւ հանդարտօրէն. «Իմ է վրէժ-խրնդրութիւն: Ես հատուցից, ասէ Տէր»: — «Բայց իմ նախկին կայսերակից Մաքսիմիանոսի, իմ երբեմնի Հերակլէսի մասին քան մը զիտցող չկա՞յ, նաեւ այդ Մաքսենտիոսի հօրը մասին», հարցուց

Դիտկողնս մեծապէս հետաքրքրուած : «Այդ մասին ալ դուք հոս Մալոնի մէջ բան մը չէք գիտեր», ձայնեց Բատոս զարմացումով : «Արդարեւ, կը թուի ինձի թէ ճիշտ ժամուն եկեր եմ հոս ձեզի» : — «Սոսկ, ըսէ», ձայնեց Դիտկողնս, անհամբերութեամբ : Ամէնքն ալ հետաքրքիր մտիկ կ'ընէին : «Դիտէք սակայն որ ան երկրորդ անգամ ծիրանին ձեռք ձգեց : Երբ կայր Սեվերոս զերի բռնուեցաւ Թրէս Թապէրնայի մէջ եւ սպաննուեցաւ, եւ Պրետորեանները ինքնակալ անուանեցին Մաքսենտիոսը, անոր հայրը Մաքսիմիանոս, ինչպէս նաև Գաղերիոս Բոայլոյէն փախան» : — «Ճիշտ — Դանուրի վրայ Կայնուտուսի մէջ հինգ տարի առաջ եւ Մալոնէէն անգամ մը վերջնականապէս արտաքսեցի Մաքսենտիոսը, եւ Վալերիոս Լիկինիոսը Աթէնքէն կանչելով կայսերակից բրի Յունաստանի, Բոայլոյ, Հուստան եւ Դանուրեան երկիրներու վրայ, եւ Մաքսիմիանոս անգամ մըն ալ փառուորապէս վրայէն հանեց ծիրանին : Չմոռնամ ըսել թէ եւ Մալոնէ կը գանուէր, որ ինձի պէտք ունեցան բարեկարգութիւնը վերահաստատելու համար այդ կողմերը», — այսպէս պատմեց Դիտկողնս ետանդով — «եւ — հիմա — Ի՞նչ» : Բատոս բարձրաձայն խնդաց . «ձերուկը երրորդ անգամ բլլալով առաւ ծիրանին, իր ազլկան Փաուստայի հետ ձիւն ձմեռ եղանակին կը ճամբորդէ Գաղիա, աղջիկը սէր կապած Կոստանդիանոսին, որ գործունեայ բլլալով առաւ պայն արդէն : Մերունի քաջ սուսերամարտիկը իրբև օժիտ տուաւ անոր Սպանիան, վերադարձան Բոայլոյ, եւ միաժամանակ կը ջանայ կրկին կապուել իր Մաքսենտիոս որդիին հետ : Բայց ստիկա մերժեց : Հայրիկը Գաղերիոսէն օգնութիւն կը խնդրէ իր հարազատ դաւակին դէմ : Բայց Գաղերիոս Մաքսիմիանոսի անուէր ըսել չ'ուզեր : Ուստի հայր Մաքսիմիանոս կը ճամբորդէ կրկին Գաղիա Փաուստայի մօտ : Ճիշտ այդ միջոցին փեսան Կոստանդիանոս Փրանկներուն հետ կը կոտի, հայր Մաքսիմիանոս երրորդ անգամ բլլալով ծիրանին կը ստանձնէ, պետական գանձը եւ շատ մը մթերք կը վերցնէ Առլ քաղաքէն . բայց Կոստանդիանոսի առջեւէն կը փախչի Կուպերիոս — Շալոն-սիւն-Սոն —, անկից ալ Մարսիլիա եւ կը յուսայ Սպանիայէն օգնութիւն իր փեսային դէմ : Խեղճ —» : «Ի՞նչ : Ի՞նչպէս եղաւ ստիկա» : — «Վերջապէս հանդարտեցաւ : Բայց մահուան մէջ ալ չձանձրացաւ ծիրանին : Փետան հրամայեց իրեն, ինքզինքը կախել : Մերուկ ինքնակալը իրեն համար շինեց ծիրանի խնդրկապ մը, տաք տաք համբուրեց զայն եւ ինքզինքը անկէց կախեց» : Դիտկողնս սարսափահար, լեզուստտու եղաւ : «Ես աչքսիս տեսայ», վերջացուց Բատոս, ի պատիւ Կոստանդիանոսի յաղթական կամարին հիմնարկէք, յետոյ ճամբայ ելայ մեկնեցայ» :

Կէս գիշեր եղած էր : Աչտանակներու եւ վերէն վար կախուած

ջահերուն լոյսերը պղտոր, առկայժ կը փռէին : Երկինքին վրայ կը կանոնէր լուսնկային տոնոյն մէկ երկրը, եւ լոյս կ'արձակէր հետուն մինչեւ Մալոնէ եւ Ազրիական ծովը, այնպէս որ կարելի էր դանազանէր երկինքն ու ծովը, կողմներն ու տունները :

Ամէնքն ալ ելած էին լոյս պատուհանները, սրտեք կ'ձեայ ճերմակ սիրուն սրտերէ եւ ալլարանական դէմքերէ ու սաղարթաձեւ պատկերներէ զմրէթաւոր շրջանակներով դրուսուած էին : Երբեմն ինքնակալը ամէնքէն առաջ պատուհանին մօտ կը կենար խոր կորացած : Կր մակը : Պարեգօտը իրեն վրայ կը քաշէր նեղցնելով : «Ըսած եմ, նորէն կ'ըսեմ, Կոստանդիանոս ինքնակալ պիտի բլլայ : Անոր չընորհի Քրիստոս պիտի շահի այս աշխարհը» : Դիտկողնս շատ կամաց, հայրե լսելի բառ այս խօսքը, եւ անպիտակցարար ձեռքը պատուհանէն գուրս երկնցուց, իր թէ աշխարհը մասնանիչ ընելու համար . Քրիստոս պիտի շահի այս աշխարհը : Եւ «Երախանն լուծաւ» — ժողովը ցրուեցաւ — լուսեթեամբ : Որքան մեծ եղաւ Դուկիանոսի զարմանքը, երբ Դիտկողնս, Բատոսի ձեռքը բռնելով, հրամայեց անոր ինքնակալական շեշտով . «Իմ մօտ մնացիր : Անկողինդ իմինին մօտ պիտի պատրաստեն» : Առանց բնդղիմութեան եւ անխարան Բատոս Դիտկողնի ետեւէն գնաց անոր ննջաւանակը : Մինչեւ տոտու, մթնշաղին, իրարու հետ խօսեցան : Դիտկողնս հիմա կը գիտնար որ Պրիսկա եւ Վալերիա Նիկամիդիայէն փախչելէն վերջ ապաստան փնտոած էին Աթէնք Լիկինեան զգեակին մէջ : Լիկինիանոս հրապոյրներով ու սպանալիքներով կ'ուզէր կնութեան ստիպել Վալերիան : Կրկնըր ապաստանեցան Մաքսիմիանոս Դապայի՝ Դանուրի վրայ : Աս ալ ուզեց Վալերիան հրապուրել, եւ մայր ու աղջիկ փախան սուրիական անապատը : Այն կողմերը պէտք է թափառին այս միջոցիս, որովհետեւ անկէց ի վեր անոնց մասին սրելէ հետք չի գիտցուիր :

Երբ աշնանային արեւը ողորկ չբեղափառ սրահը, այն առեւ միայն յաջողեցաւ Բատոս հանդարտեցնել Դիտկողնսը, եւ օտարականի նայուածքին տակ քունը տարաւ : Օտարականը չքնացաւ : Մինչեւ որ Դիտկողնս արթնցաւ, անիկա աչքէ անցուցած էր ամբողջ դահլիճը, դիտած մէն մի առարկայ, քննած, իր արժէքի համեմատ, եւ Դիտկողնի բանալիներն ալ գանելով, բացած էր անոր ոսկի դրամի եւ թանկագին առարկաներուն արկղիները, մէջակց հանած էր զպատնի գրգրոցները, աչքէ անցուցած էր նամակները, ծանօթագրութիւնները, մինչեւ իսկ գտած էր պաղանի դուռները փայտէ պատին մէջ եւ դարձգարձիկ ստեղծելները : Պալատին յատակագիծը հիմա ջուրի պէս գիտէր : Գաղտնի ելքը պէտք է տանէր պարտէզ եւ սիւնագարդ ձեւելիքը, որ կ'երկարէր մինչեւ արի ծովուն, եւ ուր ամէն օր մէկ երկու անգամ մինակ կամ ընկերովի կը ձեւէր :

Այս առաւօտ, մինչ կը քնանար Դիոկղէս, եւ արթուն կը հսկէր Բաստս, խորապէս մտաւանջուած վեր վար կը ճեմէին Ղուկիանոս, Գորոթէոս եւ Գորգոնիոս սենեկապետները: Մինչեւ ծովը երկարող սինապարզ պողոտային ծայրը կար բոլորչի քարէ գարատափ մը ծակոտէն մարմարեայ պատերով դուռապատ, եւ հետուէն խոկ նըշմարելի քանի մը զիցական արձաններով զարդարուած: Հոն կեցած էին բոլորովին լուռ եւ կը զիտէին արեգնաչոյ ծովը: Հետուն կը սլալար ճերմակ առաղաստ մը, պղտիկ, թափանցիկ, առաւօտեան հովէն ու ալիքներէն մէկ կողմէն միւսը տարուեր: Ղուկիանոս մրտահոգ ըսաւ իր բնկերներուն. «Տեսէք — հոն մեր ձեռքէն կը փախչի մեր բարի կայսեր անձը»: «Մեր նպատակը հոս — վերջացած է»: Գորգոնիոս ըսաւ. «Թերեւս օտարականը քրիստոնեայ մըն է, կամ Դիոկղէսի համար բարի հողի մը»: Գորոթէոս եւս այն կարծիքէն էր թէ Ղուկիանոս չափազանց սեւ կը տեսնէ, եւ չափազանց կանուխ կը դատէ: Ղուկիանոս մտախոհ: Երկու ձեռքերովը ուժով մը բռնեց բարեկամներուն ձեռքերը եւ զանոնք շատ մօտեցուց իրեն, մտահոգութեամբ նայեցաւ խորը պողոտային եւ փոփոսաց. «Յիսուսի բարեկամներ, եւ իմ բարեկամներս, այս զիշեր բան մը չտեսայ: Դիոկղէս պատուիրեց ինձի որ իրեն քով չերթամ այս զիշեր: Բայց ուզածէս աւելի բաներ իմացայ: Լսեցի անոնց խօսիլը, խօսիլը, ծայրը չէր զար, իմացայ Դիոկղէսի հատաչիւր, պոռալ կանչիւր, հեկեկալը, յետոյ իր քնանալու շունչը զոր հաղարներու մէջէն կրնամ ճանչնայ — յետոյ — բանալիներու շարտոց, արկղներու եւ դուռներու ճարձատիւն, դարձրագարձիկ սանդուխին ճանչելը, դրամի թիւը: — Յանկարծ թեթեւ մը, շատ թեթեւ դուռն քայտեցաւ: Սորունկ, հանդարտ շնչատութիւն ձեւացուցի: Լոյսի մը տմոյն չողր արտեւանունքիս զպաւ: Քանի մը բոյլ կեցաւ: Օտարականը հարկաւ զիս կը քննէր եւ իմ սենեկիս աչքէ կ'անցրնէր: Գուրը նորէն կամացուկ մը գոցուեցաւ եւ — զոցուեցաւ գուրսէն: Ինչո՞վ, բարեկամներ: Ասիկա ամենազէտ Աստուածը զիտէ: Դիոկղէս ըսնայի շունի: Ես ալ չունիմ»:

Գորոթէոսի զոյնը մոխիր դարձաւ, Գորոթէոս սարսափէն ճեփ ճերմակ դարձաւ: Անիտս ու անմուտնջ եւ իրարու վրայ ձեռքերով կը նայէին անթարթ Ղուկիանոսին: Զարհուրելի լուսիւրներ կը խղուէր միայն դարատափին ժայռէ պատին զարնուած ալիքներուն կանոնաւոր մոնչիւնէն: Ղուկիանոս աւելի ուժով բռնեց բարեկամներուն ձեռքերը: Կարծես ողբհարցական ձայնով մերթ մէկուէն, մերթ միւսին ահանջին կը հծծէր. «Գորոթէոս, Գորգոնիոս, մեր կայսեր անձը մեզմէ կը պահանջուի: Եկէք ուխտ ընենք չբաժնուի մեր աչքէն, եւ եթէ Աստուած ուզէ, անոր հողին փրկենք խաւարին իշխա-

նութենէն»: Բարեկամները ամուր մը սեղմեցին Ղուկիանոսի ձեռքերը: Երկուքն ալ բոխն. «Կուխտներ ցիւտանս կամ ցմահ»: Յետոյ խորհուրդ բրին, փայտէ կըսը նստարանին վրայ նստած, թէ ինչպէս կրնային հետապնդել օտարականին ճամբաները, անոր արարքը զիտել պարտաին մէջ կամ գուրսը: Եւ արդարեւ, ամէն պարագայի մէջ ալ, սէ՞տք է որ մնան թէ ելլեն երթան:

Ղուկիանոսի սեղեկութիւններուն իր բնկերներուն վրայ բրած սպառնութիւնը մեղմացաւ դարձեալ յաջորդ օրերուն եւ շարաթիւնքուն: Գաղտնի ստակումով մը կը տեսնէին անոնք խոշոր սնտուկները և շատ մը աւելի պղտիկ փայտէ կամ արծաթէ արկղիկները, զոր զերինները Դիոկղէսի հրամանով Սալոնեցի Ուրսինոսի հիւրանոցէն կը բերէին պալատին ամենաչքեղ հիւրասենեակներէն մէկուն մէջ, Դիոկղէսի ննջափայլին մօտ: Երեւելի հիւրին ստաջին սպաւորութիւնը կը գործնար օրէ օր: Անոր յորդառատ դիտութիւնը երթալով կը յայտնուէր: Ամէնէն ուշիմ հիւրերը անշամ կը խուսափէին անոր թափանցիկ իմացականութեան առջեւէն: Իր երգիծանքը ալ աւելի խայթող էր, որքան վախլուց եւ սիրուն ըլլար: Սալոնէի երեւելիներն ու զարդացածները Դիոկղէսի պալատը կը զիտէին: Արուեստագէտներու, քերթողներու, դիւանականներու, երամիչաներու ժամադրափայլ մը: Ոչ ոք զիտէր թէ ինչու այսպէս կ'ըլլար: Դիոկղէս ահնայտի կ'ողբուրուէր: Նոր վարձապետներու առաջնորդութեան տակ, որպէս թէ ցարդ առաջին անգամ ըլլալով, նոր հարցումներ եւ պատասխաններ, ծանօթութիւններ եւ կարողութիւններ կը յայտնուէին, եւ այս կերպով կ'անցընէր ժամանակը, տրամութիւնը բնասանկան կարօտը, գէշ տրամադրութիւնները, փախը, չէր զիտէր թէ ինչպէս: Ինքզինքը կը զգար իրրեւ նորածին եւ դարձեալ փառասուր հազուի սկսաւ, իրրեւ երիտասարդ. կէս օրէն սկսեալ միշտ փիլիսոփայի պէտտով: Պարակցին եւ ջերանոցին մէջ Բաստս ամէն տեսակ ծանօթութիւններ կուտար, Դիոկղէսին ծաղիկներու, բոյսերու անուններ կուտար, որոնց մասին բնաւ չէր յամ. օտարածին տունկեր, որոնց հունտերը խոտոտեցաւ բերել տալ: Յատաջիկայ զարնան Դիոկղէս իր պարակցին մէջ հրաշալի սաներ պիտի տեսնէր: Բայց ինչ որ Դիոկղէսի փախկոտ բնաւորութիւնը չէր համակերպած, Բաստսի ծանօթութիւններն էին բժշկական եւ զեղադորձական մարդին մէջ: Մէկ խօսքով, Բաստս տունին դարձանալի բժիշկը դարձաւ, այս, շատ չանցած Սալոնէի եւ շրջակայքին ալ բժիշկը, որուն մասին, քանի ժամանակ անցնէր, այնքան աւելի չլսուած բաներ կը պատմուէին: Ո՞ր հիւանդութիւնը կամ ո՞ր ախտը չիախաւ անոր տուած փոշիներուն, դեղահատներուն, խոտերուն, խառնուրդներուն առջեւէն, ո՞ր հիւանդութիւնը կրցաւ տոկալ անոր նշարակին եւ գործիք-

ներուն դէմ: Բասոս պալատին եւ քաղաքին մէջ, ուր որ երթար կենար, կը շրջապատուէր մարդոցմէ, որոնք իր օգնութիւնը կը խնդրէին: Երբ Դիոկղէս կրօնական հարցերու մասին ախտածէտ վիճակ մը պարզէր, մէկ գաղափարէն միւսը անտնար, Բասոս սուանց ինքզինքը որոշ կրօնքի մը հետ կապելու, բոլոր կրօնքներէն զիտէր ընտրել գեղեցկագոյնը, եւ խորիմաստ խորհրդաւոր հանձարով իրարու հետ կապակցութեան կը դնէր, մանաւանդ ի ներկայութեան քրիստոնէականներուն, մէջտեղ կը հանէր բացատրիկ գեղեցկութիւնը քրիստոնէական կրօնքին, եւ անոր հուսարին, Միհրի կրօնքին գեղեցկութիւնը: Ան, Բասոս, կրօնքին մէջ կը տեսնէր մարդկային ոյժին խորհրդաւոր կապը Աստուածութեան գերբնական թաքուն ոյժերուն հետ: Ո՛վ որ զիտէր կապակցութեան մէջ դնել ինքզինքը բովանդակ կեանքի առհասարակ, սկզբնական աղբիւրին հետ, անկարող է հրաշք գործել, ստանալ զիտութիւն եւ ծանօթութիւն, զոր ոչ մէկ իմացականութիւն կրնայ գտնել, եւ ոյժեր որոնք այլապէս բնաւ պատրաստ չեն աշխարհի մէջ: Ահա մարդը ճիշտ Դիոկղէսի սիրտին համաձայն, անոր բուն ուզած մարդը, այն է Բասոս: Այլեւս հանդիստ չէր ձգեր զայն: Որքան Դիոկղէս վերջինը վարանէր որեւէ բանի մասին, խմատուն բժիշկը այնքան նախընտրար խորհուրդ կուտար անոր, կը խրատէր զայն մոլորութեան զրգոխը զբազումներով շփտանդել իր հոգեկան հանդարտութիւնը եւ առողջութիւնը: Որքան որ ան իր բոլոր մտպական նշանները եւ խորհրդաւոր զգրոցները ձեւացնէր թաքուն պահել Դիոկղէսէն, այնքան աւելի Բասոս կը հասնէր իր նպատակին — Դիոկղէս սաստիկ կը տենչար վերահասու ըլլալ մոլորութեան գաղտնիքներուն եւ իր բարեկամին թաքուն արուեստին: Բայց անշուշտ սկզբնական հիմերը շատ դժուար կը հասկցուին: Ժամերով խեղճ Դիոկղէս ինքզինքը կը շարշարէր բանաձեւերով, թուանշաններով, անուններով, հաշիւներով, որոնք Բասոսի հրահանգին համաձայն անպայման կը պահանջուին, անհրաժեշտ են սովորելու այս մտպական արուեստին տարերքը: Եւ անկէջ վերջը անգամ տակաւին յայտնի չէ թէ կոչում ունի՞, բնդունա՞կ է, որովհետեւ այդ արուեստին համար բացառիկ կարողութիւն մը, վեցերորդ զգայարանք մը, պէտք է ունենալ, ներքին աչք եւ ներքին ականջ: Դիոկղէս ծայրը չէր բերեր: Բասոս խոստացաւ անոր, այս մասին յետագային շարունակել զննութիւնը:

ԳԼՈՒԽ ԻԲ.

### ԳԱՂԵՐԻՈՍԻ ՄԱՅՈ

Գարձեալ զարուն մը Մարմարա ծովուն վրայ: Նիկիոմիդիա կարծես հարստանկան հալաւով: Բարձրարեւծ ամարանոցները, զրդեակները, տուները ակնախտիկ սպիտակութեամբ, այգեստաններու, կիտարիսներու, յայտատերու սօսիներու, թղենիներու միջեւ: Մաղկափթթումի ծով մը, կարծես նորատեղաց ձիւն խնձորենիներու, տանձենիներու, մամուլի եւ սրիչ թուփերու վրայ: Ամէնուն վերեւ երկինքը կապտաւուն, ծովուն պէս, եւ զուրսը ծովուն վրայ, նաւահանդիստին տողեւ, կարծես փթթում մը ծովափարզերու, արծաթ ուրուրներու — առապաստ առապաստի վրայ: 311 տարուան ապրիլի վերջն էր: Կայսերական պալատին մէջ, որ միաժամանակ կը ծաղկէր Մարմարայի գարունին բոլոր գոյներով, հոգեւորք պատկած էր կայսր Գաղերիոս: Ոչ մէկ տուն, ոչ մէկ ամարանոց, ոչ մէկ հրապարակ, ոչ մէկ սրահ քաղաքին մէջ, ոչ մէկ մակրոյկ, ոչ մէկ նաւ, ուր այս օրերուս առհասարակ քրիստոնէականներուն եւ հեթանոսներուն կողմէ կայսեր կեանքին եւ մահուան վրայ չիօսուի: Անիկա քրիստոնէականներուն համար անդնդային վիշտայն էր, զոր Աստուած դարկաւ տախտապարեց, նոյնինքն ստտանը որ քրիստոնէականներուն արիւնը ծծեց եւ ետ դարձաւ դժոխք զնաց: Ուրիշներու աչքին այն անարարակորով, խստաբարոյ, պարզասէր, բարեպաշտ մարդն էր, որ կը վախնար հինաւուրց աստուածներէն եւ կ'ուզէր անոնց տիրակալութիւնը փրկել, անոնց բարկութիւնը քաւել զանոնք նախատող քրիստոնէականներու արիւնով: Կուսակալները եւ սպաները շատ քիչ միայն օժանդակեցին անոր, շատերը անոր հրովարտակներուն ականջ չկախեցին եւ հանդուրժեցին քրիստոնէականներուն: Իր հիւանդութեան մա-

սին քաղաքին մէջ ամէնէն կասկածելի լուրեր շրջան կ'ընէին: Կարելի չէր շիտակ բան մը իմանալ: Միայն սաշափը գիտէին որ ան սարսափելի ցուեր կը քաշէ, թէ ոչ ոք այլևս կրնայ իր գոտանքը բռնել, ոչ բժիշկ ոչ հիւանդապահ այլևս քոյր չի կրնար կենալ: Սարսափ եւ կարեկցութիւն, ատելութիւն եւ նենգամիտ ուրախութիւն գանազաններու մէջ: Գաղերիտի վրայ խօսակցութիւնը պանդոկներու մէջ եւ հանրային հրատարակներու վրայ վէճի եւ կռիւի կը փոխուէր:

Երկար ատենէ ի վեր Նիկոմիդիայ մէջ գաղբած էր քրիստոնեաներու հարձանքը: Լիբիսա լերան վրայէն գէպի ծովը կախուած ապառաժ կատերուն տակի արօտափայերէն քրիստոնեաները հետըճեակ համարձակութիւն ատած էին գլուխութեամբ, մանաւանդ կայսեր հիւանդութենէն ի վեր, քաղաք իջնելու, եւ ատանց արգիլուելու դիշերանց, ջահի եւ ճրպի լոյսերով, եկեղեցին կը վերաշինէին պալատին մօտ: Գեանայարկին խորը իրենց ժողովները կը գումարէին: Հեթանոսները, զիմակաւս կերպարանքները կը տեսնէին որոնք շնչելով կ'անցնէին դիշերուան շաքին մէջէն: Կը յուսէր անոնց մեղմօրօք երգը: Անտիմոս եպիսկոպոսը կ'ազօթէր եւ կը քարոզէր, եւ զարուհնէ ի վեր Ապրիլեան տաք դիշերներուն յաճախ հեթանոսներու ամբողջ խումբեր զարան կը լարէին եկեղեցիին մօտերը: Որովհետեւ մերթ քնդ մերթ անոր գեանայարկէն զուրս կը թափանցէր ձայն մը բազմարձազանց ուժով եւ սրտաշարժ գեղեցկութեամբ: Բարեպաշտիկ, սիրապեղ շեշտ մը կար այդ ձայնին մէջ, գովեստ եւ գոհարանութիւն, որ կ'ուզէր երկինքն ի վեր սլանալ. ցանկութիւն մը, նուիրում մը, որ շատ մը հեթանոսներ կը յուզէր լացնելու ատիճան, եւ միշտ աւելի մարդ կը քաշէր կը տանէր եկեղեցիին մօտ: Երբեւ երգեցողութիւն կը թնդային մերթ լիաթօք, գեղեցիկ պաշտակութիւններ, մերթ թրթուուն խոյանքներ, մերթ կարծես թռչունի վճիտ գեղեցկանք, յաճախ միաձայն, յաճախ բնկերակցութեամբ երգչուհիին: Այս իրիկուն երգերն ու շարականները բացառիկ ուժգնութիւն մը ունէին: Զայնի թրթուումներուն մէջ կարծես յիշատակներ կային հին ժամանակներու զարուհներէն, հին երջանկութենէն. կարօտ կը թնդար մէն մի հնչիւնէ, թախիժ մը, որ սակայն անմիջապէս զարձեայ կը փոխակերպուէր ցնձադին գովարանութեան, զմայլելի խնդութեան եւ յոյսի շեշտերու: Ամէնքն ալ ի սրտէ կը սիրէին երգչուհին: Տարուան սկիզբէն ի վեր ան Նիկոմիդիա էր, կ'այցելէր քրիստոնեաներուն, եւ Աթենագորաս եպիսկոպոսին յանձնարարութիւնները հաղորդած էր Անտիմոս եպիսկոպոսին: Իր անուան էր Կորնելիա:

Անտիմոս եպիսկոպոս իրիկուն ժողովը փակեց սովորական օրհնութեամբ: Քրիստոնեաները զիրար համբուրեցին եւ երթալու

վրայ էին: «Տէրը իր աշակերտներուն եւ աշակերտուհիներուն ամէնէն քաջատիրաները կը պահանջէ: Պարտէն ինձի լուր կը տրուի, թէ կայսրը անյոյս հիւանդ ինկած է: Ստեփանի ցուերով կը տառապի: Իր վէրքերուն տեսարանը ստեղծ կը պատճառէ: Ապականութեան ժանտահատութիւնը ամէն ինչ կը լեցնէ: Ոսկի եւ արծաթ կը խոստանայ, որչափ որ ուզէ ան որ կարենայ գործանել զինքը. բայց ոչ բժիշկ գացող կայ ոչ հիւանդապահ: Ան մեզ քրիստոնեաներս հարձած է, մեր եղբայրներէն եւ քոյրերէն հաղարարները սպաննելու ատած է: Աստուած զայն կը պատժէ ծանրապէս: Բայց ո՞վ»:

Երկար, երկար լուսութիւն, տաղնապայտոյ լուսութիւն: Ամէնքը գետին կը նայէին, կարծես վախնալով եպիսկոպոսին սա ձեւ հարցումէն. «Ո՞վ կ'ուզէ օրհնել, ո՞վ կ'ուզէ բարեկործել, ո՞վ կ'ուզէ բոցափառ խանձող հաւաքել թշնամիին դուռին վրայ»:

Բոլոր բոխնդակ շրջակայքը լուսութիւն: Հարցուց եպիսկոպոսը աւելի թախանձապիւն. «Ո՞վ կ'ուզէ ուրանալ ինչպիսիք: Կորնելիա իր կեանքը, եւ — ո՞վ սխտէ, կորուսելին հօգին փրկել»: Գարձեալ բնդհանուր լուսութիւն, քանի մը ծանր հառաչանքներէ միայն բնդհատուած: «Ո՞վ կ'ուզէ բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն կրկին տալ հաւատքի ապաստութիւն, կեանքի հանդիստ եւ ապահովութիւն: Ո՞վ: Ո՞վ»: — Եպիսկոպոսին աչքերը արցունքով կը լեցուէին: Անոր խորիմաստ նայումները շրջան կ'ընէին շարքերուն մէջ: Կորնելիային վրայ կ'երթային կը կառչէին, եւ եպիսկոպոսին շրթունքները կ'երևալին. «Ուրեմն եւ կ'ուզեմ երթալ եւ անձս զնել առիժին ճիրաններուն մէջ: Ախ, իցիւ երիտասարդ բլրայի, եւ ոչոս հասնէր ծանրակիր հոյատարութեան»: Բայց արդէն Կորնելիա ծնրադրած էր եպիսկոպոսին առջեւ: «Ես կ'երթամ: Օրհնէլ զեւ, հայր»: Եպիսկոպոսին ձայնը եւ ձեռքերը կը գոզային, երբ անոր գլուխին վրայ կեցած ձայնը. «Ո՞վ որ իր անձը կը կորսնցնէ իմ սիրոյս համար, պիտի գանձ զայն: Գնա Աստուծոյ պաշտպանութեամբ եւ հօգիւրդ»: Միւս քրիստոնեաները քաշուեցան լուս հիացումով: Կորնելիա տակաւին երկար խօսակցութեան մէջ մնաց Անտիմոսի հետ: Գիշերը շատ անցած էր, երբ Կորնելիա կայսերական պալատին մօտեցաւ: Այնպէս խորհած էր, թէ պարտէզին դրան պահակը, ինչպէս նաեւ մարմարեայ մեծ սանդուխին քովի մեծ դրան պահակը զինքը պիտի շարժուին: Նախ եւ ատաջ շատրուաններով ու արձակներով, շատ մը արձաններով բնդարձակ պառիթին մէջ ներսը սպասաւորներն ու սպասուհիները շփոթած շուարած հոս հոն կը վազէին: Կոչ մը, որ կը բխէր տառապալից ցաւէ մ', սաստկակոծ հարկէ մը, անձկութենէ, եւ ահա միջանկեալ կոչ մըն ալ, կատաղութեամբ այս անգամ: Ոմանք համարձակեցան վախն ի վախը կէս սանդուխը դռնէ սահել

վար, այդ սանդուխտը թանկադիրն զորդերով ծածկուած, մահամերձ կայսեր սենեակը կը տանէր: Յետոյ բռնեցին իրենց քիթն ու բերանը, ջանացին շունչ առնել, երերալով, խեղդուելով եւ սանդուխտն ի վար ոստամբ բնելով, իջան կրկին: Կայսրը կը պոտար դարձուրելի, յուսահատական ձայնով. «Օգնութիւն, օգնութիւն, սրեմն՝ գթութիւն: Արիւն կ'երթայ: Անբիւս պիտի դայ: — Ո՛վ Զեւ: Աստուածք համօրէն: Մահ, մահ, սպառէ զիս: Ա՞յս է իմ վարձքս: Անիծեալ ծառաներ: — Անտիրտ ջուրը, լիտմակ: — Դուք, ստամաններ: Ջուր — ջուր, կ'այրիմ»: Գերուհիները կը պոտան կը կանչեն գաւիթին մէջ: Ո՛չ ոք կը համարձակէր ներս երթալ: Երկիւղ եւ ամօթ չէին ձգեր զիրենք:

Կայսերական ննջատրասին զուտը ճանչեց, եւ ահաւոր ձայնին խորունկ թնդիւնէն ամէնքն ալ հասկցան. կայսրը անկողինէն ելաւ. — ինչ ցատկով եւ ինչ անուժութեամբ — զուտը բացաւ եւ կը պոտար մերթ պազաւելով, մերթ սպառնալով. «Ո՛չ մէկը ձեզմէ կ'ուզէ օգնել ինձի: Ա՞յս է կեդր իմ վարձքս: Օ, ամօթ ամէնուղ: Ես որս՞ւ եմ ինչ բրած եմ: Կ'ուտէիք կը խմէիք ուղածնիւղ: Ո՛վ Վալերիա, ո՛վ Կղաւգիւս: Իմ առաջին կինս, ո՞ւր ես դուն արդեօք: Մէկը չի՞ վար վէրքս կապելու: Դրան առջեւ ջուր զրէք: Կայսրը շունչ տեղ անգամ զնոյ չկայ»:

Սրտածմբիկ, աղկտարչ Տեճեճանքներով Գաղերիոս կրկին քաշուեցաւ: Կոտնելիա գաւիթին մուտքին առջեւ ամէն ինչ լսած եւ ամէն ինչ տեսած էր: Կամաց կամաց գերուհիներուն մէջ մտած էր: Անոնցմէ ամանք յանկարծ բարձրաձայն դարձանքով զիտեցին զայն եւ վարէն վեր շափեցին: Պարզուկ, սեւ անուղեւտ մը կը կրէր, աջ թևէն վրայ ճերմակ կտուէ սիւսածանելի մը: Անդարդ, հաստ ծոպերով մայերը ձգուած գլուխին ետեր: Երկու կողմերէն ձակատին եւ քունքերուն վրայ կ'իյնային նրբահիւս խոպոպիկներ: Այտերը զուտատ, շրթունքները ճերմկած, մութ, խոշոր աչքերը լուրջ հայեցուածքով, բայց քաղցրահայեաց սպասուհիներու շարքին մէջ: Ըսաւ մեղմիկ. «Հոս գրկեցին զիս, կայսրը հոգայու: Ես հիւանդապահուհի եմ»: Ամէնքն ալ մեծ շունչ առին: Եւ անոր մօտիկը եկան: «Աստուածները կը զրկեն քեզ: Ո՛վ ես դուն: Ո՞ւր կէջ կուզաս: Ո՛վ զրկեց քեզ: Ո՞ւր կէջ սիրտ կ'առնես: Քրիստոնէութի՞ն էս: Կրնա՞ս մնալ: Կ'աղաչենք, մեր քով կեցիր: Զարձուրելի կը տառապի: Ի՞նչպէս պիտի դարձանես, հոգաս: Գիտե՞ս ունեցածք: Եթէ զիտնայի՞ր: Շատ լաւ կը վարուէր մեզի հետ, քրիստոնեաներու զէմ միայն սարսափելի էր: — Հիմա կը զղջայ, կը շարձարուի — երազներ, ողիներ կը հարածեն զինքը — յաճախ սոսկալի քայլեր կ'առնէ, կարծես, ետեւէն ինկած կը հալածեն զինքը»:

Այսպէս կը հծծէին երկչոտ շաղակրատ խառնակութեամբ մը

Կոտնելիայի ականջին: Լուսն ու մուսջ կեցած կը զիտէր հանդարտօրէն աղջիկներուն գէմքերը: Այս միջոցին նորէն վերէն կը փրթէին սարսափելի հայհուհներ, ահաւոր սպառնալիքներ, բուռնցքի խուլ զարկուածներ տախտակորմին վրայ, յետոյ նորէն հառաչանքներ, աստուածներու անուներ եւ վերջապէս անբնական սրտածմբիկ լացուկոճ, որ սոնոցէ մը աւելի բարձր էր եւ սաստիկ: «Կ'ուզեմ վեր երթալ եւ կայսրը հոգայ», ըսաւ Կոտնելիա կարուկ կերպով: Զուսպ շունչով եւ անդիտակցօրէն բարձրացած թևերով, բերանարաց կամ շրթունքնին խածած հոն վարը կեցած կը նայէին Կոտնելիայի ետեւէն, թէ ինչպէս հանդարտօրէն կը բարձրանար քարէ, ուղղաձիգ սանդուխտն կ'ձեռայ բարբիքն բռնած: Վերը երկար առնն անշարժ կեցաւ: Աղջիկները քանի մը աստիճան վեր ելած էին սանդուխտն անոր ետեւէն: Մանդուխտն մէջտեղը անոնք խմացան հիւանդապահուհիին ծանր խորունկ շնչառութիւնը, որ պայթար մը կը մղէր օդին գէմ, որ կ'ուզէր կարծես զղալաղիւրի բնել զինքը: Այսպէս կեցաւ հիւանդին սենեակին սեմին վրայ: Աղջիկները զեռ կը լսէին կայսեր բտուրը. «Վերջապէս, վերջապէս մէկը սիրտ բրաւ եւ ողորմեցաւ: Գոհութիւն աստուածներուն: Բայց — ո՛վ ես դուն — Ես քեզ չեմ ճանչնար»: — Դուրս մեղմիկ զոցուեցաւ: Անբարբառ եւ սրտակոտոր, կարծես ամօթահար եւ դատապարտեալ, գերուհիները զացին հանդէլու: Երկու հոգի մնացին: Գերիները երկար առնէ ի վեր կը քնանային: Ո՛չ ոք կը վախնար այլևս յանկարձակի զայէ Գաղերիոսին կամ ուրիշ վերակացուի մը կողմէ: Ամէնքն ալ կը սպասէին տիրոջ մահուան եւ արդէն կը վայելէին առատօրէն ցանկայի ազատութիւնը:

Վերը հիւանդին քով կ'երկարէր զիշերը: Կարմիր ապակիով ջահ մը կը հոսեցնէր չէկ, աղօտ լոյս մը հիւանդին, եւ անոր գեղաքանդակ փողոսկրեայ տարդիծին վերեւ, զիցական շատ մը արձաններու, փաւսնաներու, սատիրաներու վերեւ, եւ կարմիր մարմարէ պատերուն վերեւ, որոնց մէջ հաստատուած խորշերը լեցուն են յաճախ մարդկային մեծութեամբ կերպարանքներով: Գետինը զրուսպուտած է ամենազրի զուսպեղ տունկի նմոյշներ ներկայացնող խճանկարով: Արիւնով եւ թարախով ծածկուած էր ամբողջ մէկ մասը անկողինին մինչեւ կարուիան մարմարէ Զեւսի փառաւոր արձանը որ հաստատուած էր լայն պատուհանին խորշին մէջ: Զեւսի գլուխին այտերը արիւնի հետքեր ցոյց կուտային: Գաղերիոս կ'երեւի ցաւին մէջ իր անմաքուր ձեռքերը Զեւսի գլուխին վրայ զրէր է: Մերկ Փաւստայ մը, որ այսպէս խարդախ ու ստահակ, ծիծաղկոտ գէմքով ու բաց բերանով կը նայէր զէպի կայսեր ամուսնական անկողինը, հիմարոյրովին ծածկուած էր արիւնոտ թարախոտ կապերով ու լաթերով: Քանի մը վայրկեանի մէջ Կորնելիա սարսափահար հասկցաւ թէ ի՞նչ

չարչարանքներ քաշեր է կայսրը: Ամէնէն աւելի այս բանը ցոյց կուտային անոր թառամած քաշուած այտերը, կկոցեալ աչքերը, անհանդարտ, անձկալից, վեհերոտ նայուածքները, որոնք կը մատնէին անոր ամբողջ անկարողութիւնն ու յուսահատութիւնը: Գաղերիոսի առաջին խօսքին պատասխանած չէր Կորնելիա: Իր արտասուայեղձ աչքերը միայն կ'ուզուէին հիւանդին եւ անծայր արզահատանք կը խօսէին անոր: Կայսրը եւս այդ մասին լուռ կը մնար: Իր տենդայոյզ, աղօտ աչքերը կը կառչէին կնոջական հոյակապ, յոյր կերպարանքին: Անոր դիմադիծերը կարծես ծանօթ էին իրեն: Յիշելու ճիշդ մը ընելը կը տեսնուէր յիշուէն: Այս պեղեցիկ զէմքին վրայ անդորրութիւնը, խաղաղութիւնը, կեցուածքին պատկառանքը, անդորր իշխանաւայել զնացքը, բարեկազմիկ ձայնը, զեղեցիկ յունարէնը, այս ամէնը ցոյց կուտար, թէ Գաղերիոս պէտք է տեսած ըլլայ այս կինը: Կորնելիա առանց խօսելու գետինէն եւ արձաններէն վեր առաւ զլուսնի լաթերն ու կապերը, մաքուր ծայրերովը գետինը շորցուց, տխուր ժպիտով մը Զեւսին այտերն ալ մաքուր մը լուաց: Յետոյ արագ ընթացաւ զէպի դուռը եւ ետեւէն զօցեց: Երեցաւ նոր լաթերով, կապերով եւ ամաններով: Իր ետեւէն գերիններ կը բերէին խոշոր աման մը տաք ջուր: Մէկ թևին վրայ կը կրէր սեւաշող արկղիկ մը արծաթեայ կափարիչներով, միւսին մէջ լաթով փաթթուած առարկայ մը, որ տաւիղի մը ձևը ունէր: Երկուքն ալ զրաւ երեսնայ սեղանին վրայ, որուն չորս ոտքերը թռչունի չորս արծաթաձոյլ ճիրաններ էին: Գարնանային հրաշալի օրուան մը լոյսը կը թափանցէր պատուհաններէն եւ նորարողորջ կակիաներու բոյրը պատուհաններուն առջեւ եւ ուրիշ անուշահոտութիւններ ներս կը հոսէին եւ կը մեղմացնէին հիւանդին սարսափազուրկ զարշիւ արտաշնչումը, զոնէ տանելի ընելու շափով: Հիւանդապահուէն ծունկի եկած կը լուար գետինը, նորէն ջուր կ'ուզէր, եւ դարձեալ կը լուար, բուրեան ծաղիկներ կը բերէր կը գետեղէր սեղանին վրայ: Եւ այս ամէնը Գաղերիոսի քնացած ատենը: Երբ ան, նորանոր ցաւերով կ'արթննար, Կորնելիա կեցած էր անկողինին առջեւ, որուն կանեփեայ ծածկոյթին մէջէն կրկին արգէն կը խուժէր արիւնը ազրիւրի պէս եւ կապերը այլևս չէին կրնար մնալ գարհուրելի վերքերուն վրայ: Հիւանդին ճակատին վրայ կը շողար քրտինքը շողի կաթիլներու պէս: Թեւերն ու ձեռքերը, ամբողջ մարմինը քրտինքէն թաց էին: Եւ սակայն ցուրտէն կը զոզար: Սաստիկ տկարութիւններ, անձուկ ու տապնապ իրբեւ նստայ կուտային վրան: Մոռցած ըլլալ կը թուէր, թէ տեսած ըլլայ Կորնելիան, որովհետեւ ազուրկեամբ կը նայէր անոր: Կորնելիա լայն ճերմակ սփածանելի մը կը կրէր մթադոյն պարզ լօղիկին վրայ, որ հոլանի պարանոցէն վար լանջքին վրայէն երկար ծանր ծալքերով կ'իջնէր

մինչեւ ոլոքները ոտքին: Երկուքն ալ իրարու կը նայէին լուռ: Կորնելիա մատանի չէր կրեր: Ոչ մէկը կը համարձակէր վճռական բառին: Մին կը սպասէր միւսէն: Կորնելիա կը զգար թէ ինք տակաւ առ տակաւ կը կարմրէր եւ վերջապէս ծիրանեփառ դոյն մը կ'առնէր: Հարկ եղաւ վերջապէս խօսք փոխանակել: «Եթիշկ եւ հիւանդապահ չունի՞ք այլևս, Ինքնակալ», հարցուց: Գաղերիոս զլուսը երերցուց տխրութեամբ: «Ներբ ըթիշկը ինձի կը յայտարարէ, թէ ինքը եւ ոչ ալ ուրիշ մը կրնայ այլևս օգնել ինձի, ի՞նչ պէտք ունիմ այլևս այդպիսի խարերաներ եւ շաղակրատներ առջևս տեսնելու: Յուսացի զոնէ գերիններու մէջ մէկը գտնել, որ չգանի իր Ինքնակալին վերջին ծառայութիւնն ալ րնելու: Բայց ոչ ոք — ոչ ոք գտնուեցաւ: Գերինները քրիստոնեաներէն աւելի վատթար են, կ'ըսեմ քեզի: Որքան լաւ վարուիս գերիններու ճեւ, այնքան զէջ կը վարուին անոնք քեզի ճեւ»: — «Իսկ քրիստոնեանե՞րը», հարցուց Կորնելիա անտարբեր արտայայտութեամբ մը: Գաղերիոս մըթմըթաց, փոքր ինչ շփոթած. «Եթէ անոնց մասին բոլոր ըսուածը ճիշտ է, անոնց մօտ բոլորովին ասոր հակառակն է որ կ'ըլլայ. այսինքն որքան հայածես դանոնք, այնքան աւելի սուրբ եւ բարեպետ կ'ըլլան»: — «Տարօրինակ մարդիկ են այդ քրիստոնեաները», բայց Կորնելիա ապշութեամբ: «Աստուածներուն թշնամի, սուրբ Հոռմին եւ կայսրութեան զլուսն պատահած բոլոր դժբախտութեան պատճառ եւ պարագլուխ, կայսերական վերին իշխանութեան, հնօրեայ դօրաւոր բանակին եւ անոր ոյժին կործանարար: Ես զիտեմ, որքան կը պարտիմ անոնց այս ահաւոր շարչարանքները: Կանչեցին իրենց աստուծոյն եւ շար ոգիներուն որ վրաս դան իջնեն: Մոլորեցուցին վարիւրան եւ առեւանդեցին, կայսեր ազջիկը եւ կայսեր կինը հիմա կը բնակին դայլերու եւ շնագայլերու մէջ, կը թափառին Սուրիոյ անապատին մէջ անօթի, ցրտասարսուռ: Հոս ամէն ինչ պատրաստ էր իրենց համար, եւ ահա առաջին անգամ ըլլալով հիւանդ մը պիտի ունենային, որուն կարենային մը վայրկեան վերջ, դարձեալ ակնարկելով Կորնելիային, «Կղաւղիա կը կոչուէր, Իլլիրուհի մը, ուղիղ եւ հաւատարիմ: Զուտակ մըն ալ ծնաւ ինձի, Կանդիդիանոս: Արդարեւ զեղեցիկ պատանի մը: Ան ալ լքեց զիս»: — «Ո՞ր է Կղաւղիան, քու առաջին կինը», հարցուց Կորնելիա դարձանքով: Գաղերիոս, շուարած ու շփոթած, շարժեց ուսերը, բերանն ու ճակատը: «Երկուքն ալ իրենց ուղեւոր ճեւ ճեւսան քեզմէ»: Գաղերիոս, անխօս, պատուհանէն դուրս նայեցաւ, իր թառամած գեղնած այտերը կարմրեցան եւ առջեւի իր երկայն ակունները անհանդարտօրէն վարի շրթունքը կը ծամծամէին: Կորնելիա այլևս չհարցուց: Ծածկոցը նորէն մութ կարմիր եղաւ: Կորնելիա



Հիմա առաջուրն է աւելի սրտոտ, հարցուց մեղմօրէն. «Կրնամ օգնել քեզի, Ինքնակալ: Անհրաժեշտ է: Արիւնը կը խուժէ»: Ինքնակալը ինքնիրեն կը հծծէր մութ կարմիր երեսով, աչքերը վար կախած: «Կրնա՞ս օգնել ինձի: Փորձառութիւն ունի՞ս: Մի գուցէ աւելի մեծ շարժարանք պատճառես ինձի»: — «Ո՛չ: Քեզի կ'օգնեմ կարելի եղածին շափ: Թոյլ տուր որ ընեմ: Հանդուրժէ ցաւերուն, աւելի լաւ պիտի ըլլայ: Վերջը իմ մասին քեզի տեղեկութիւն կուտամ»: Գաղերիս թողուց որ ուզածը ընէ, և ամբողջ դարմանումի միջոցին երեսը ծածկեց երկու ձեռքերովը: Կորնելիա զարմանքով կը դիտէր բարոյական զիրարդարութեան փափկութիւնը մարդու մը քով, որ քրիստոնեաներուն զատկովը ամէնէն անբարոյական մարդն է և իր մարմինին վրայ կը կրէ իր վաւաչոտ շուայտ կեանքին պտուղը: Կորնելիա սեւ արկղիկէն առաւ փոքրիկ սրուակներ, տփիկներ, զմելի, մկրատ: Կտրել, մաքրել, այրել, տաղել, փակցնել, կարել: Գործողութիւնը սկսաւ այսպէս: Գաղերիսի շրթունքէն ո՛չ մէկ ձայն: Միայն վերի ակոսները քիչ մը աւելի ուժով կը փորէին վարի շրթունքին մէջ, և այդ ճնշումը նաեւ հիւանդին մահասարսուռ նայուածքը ու ձիւնի պէս ճերմակ երեսը ըստ բաւականին ապացոյց մըն էին Կորնելիային, թէ իր ձեռքերը ինչ ազդեցութիւն կ'ընէին: Ոչ մէկ բառ չխօսուեցաւ անոնց միջեւ: Կորնելիայի դէմքը բոցավառեցաւ, երբ ամէն ինչ վերջացաւ և Գաղերիս կապուած էր չորս կողմէն վերակապերով: Հիւանդը զօրացուցիչ ըմպելի մը առաւ և քնացաւ: Սարսափ մը բռնեց բոլոր գերիներն ու գերուհիները, որոնք Կորնելիային հանդիպեցան, անոր վար իջնելու միջոցին: Ճերմակ սիւնաններն լեցուած էր խոչոր, մութ կարմիր, թաց բիծերով: Խոհանոցին մէջ լուաց զործիքները և մաքրեց զարձեալ: Կորնելիայի շուրջ ինքնարեարար բխեցաւ կարդ կանոն մը և հնազանդութիւն: Կը հրամայէր, յանդէս իրեն, բոլոր ծառաներուն, որոնք մինչև իսկ փերատեսուչը, կը հրատարակէին անոր առանց որեւէ առարկութեան: Ամէն ոք սաստիկ վախի մէջ էր ինքնակալին մահուան կասկածով, բայց Կորնելիա անոնց համար մօր մը պէս եղաւ: Զարմանքով կը նայէին անոր ետեւէն, ամէն ատիթով կազմ ու պատրաստ էին իրեն առջև: Երբ բարձր այցելուներ գային Գաղերիսի օրպիսութիւնը հարցնելու, Կորնելիան կը կանչուէր: Ամէնքն ալ ուրախ էին նոր կարգ ու կանոնը տեսնելով, և պարտին մէջ ոչ ոք չիտէր տակաւին թէ ո՛վ է Կորնելիա, ուրկէց կուգայ, ինչ զիրքի և ինչ կրօնքի կը պատկանի:

Հիւանդը մահատիպ նայուածքով ուժասպառ և լուռ կը յառէր մտնամտ տրեւուն, որ աննկարագրելի շքեղութեամբ կ'ոսկեղօժէր Երկինք ու ծով: Ծով, երկինք ու ցամաք, մէկտեղած, կը լիւզէին մէն միակ լուսաշողի մէջ: Մօտի ծառերէն կը ճուռողէին և կը սու-

լէին սրտոյտներ և կեռնիներ: Երգեր ու ցնծութեան աղաղակներ կը լսուէին ծովափունքէն, մակույկներէն, որոնք կը վխտային եղերքը: Մտաւայքէն մանկական ձայներ մինչև հիւանդին սենեակը կը թափանցէին: Գաղերիս յուզում կ'երեւար, և յիշատակներով հիւսուած ծիծաղ մը թախծալից կը խաղար անոր սպիտակ շրթունքին շուրջ: «Երջանիկ մարդիկ: Երջանիկ տղաք: Ես ալ մամանակին երջանիկ էի ... Կորնելիա: Գիտե՞ս երբ, և ո՞ւր»: — «Իրբեւ Գիտե՞ցէ՞ք ի՞նչ չէր զուտակ»: — «Գիտե՞ս ատիկա»: Կորնելիա խնդալով անոր մօտ եկաւ. «Աւելի ալ զիտեմ: Գիտեմ, թէ դուն նախորդ Գիտեղեարանոս կայսեր քեռորդին ու փեսան ես, թէ դուն բարեկամն ես Լիկինիանոս իշխանին, որ հիմակ ալ կայսր եղած է»: — «Կը ճանչնա՞ս զինքը», ձայնեց Գաղերիս զարմանքով: Ու իր աչքերը զարձեալ խուզարկեցին Կորնելիայի զիմադիծերուն մէջ: «Ինձի կը թուի թէ ես արգէն քեզ տեսած պիտի ըլլամ, Կորնելիա: Բայց միայն թէ ո՞ւր»: Ու սկսաւ նորէն խորհիլ: «Ինչ տարի առաջ Աթէնք Լիկինեան զգեակին մէջ, Ինքնակալ: Հիւր եկած էիր Լիկինիանոսին և ...» — «Եւ —», զոչեց Գաղերիս ցաւատանջ զէմքով խնդալով — «զիչէրային լողանք մը ատի, Միհրի մէկ սուրբ քրմուհին փրկելու համար քուրմի մը խարերայութիւններէն: Գուն ա՞յն կիսն ևս: Գուն Ահուրայի այն աղուոր, ազնուուհի քրմուհի՞ն ևս, ըսէ»: — «Ես ան ևմ»:

Գաղերիս չէր կրնար զսպելի ուրախութենէն: Իր կիսցած աչքերը լուսափայլեցան, զէմքը պայծառակերպեցաւ, ձեռքերը երկարեցան զէպի ան, կը սեղմէր զայն աչքերովը, շարժուածներովը, աղաչանքներովը որ իրեն մօտիկը երթայ, և բռնեց անոր երկու ձեռքերը: Իր յիշողութեան մէջ միշտ աւելի որոշակի կը պայծառանար այդ պատկերը: — Անահիտի քրմուհին կարմիր կամ կանանչ, կամ շողշողուն սպիտակ զգեստով, ծուփ ի ծուփ մազերով, շողակնածեւ, մարդարտաղարդ խոյրով, արեւակներով, լուսակներով, աստղիկներով ակաղճուն զօտին, քրմուհին, դաստիարակուհին երկու հայազգի սպաստանակներու, Արսինէ, կաթողին ցանկալին, պաշտելին, որով միայն կ'ուզէր Լիկինիանոս բարի և հոգոր բլլալ, և որուն սիրոյն համար ան կ'ուզէր վրայ տալ — համբաւ —, հարստութիւն, սպայութեան ստտիճան, պալատ, աշխարհ: — Ու այն վատանուն խարերան, այն անքննելի, անչափելի ճարպիկ ու վատ Մովսէս, ան կարողացաւ տատնակ մը տարիներով տիրապետել այդ քրմուհիին վճիռ միաքին, մանկական սիրտին, այնպէս որ վրայ տուաւ զոչեց Լիկինիանոսը:

Նոյն պահուն այդ յիշատակները շարան շարան կուգային կը յատուանային նաեւ Կորնելիայի մէջ: Այս երկու այնքան տարբեր

մարդոց միջև հիմա կը հիմնուէր կացութիւն մը, որուն մտերմիկ հանդամանքը այս պիտի կը սկսէր եւ որուն սեփական գեղեցիկութիւնը ահա պիտի շիջանէր այս հոգորայցին անձին մահուամբբ: Միասին իրիկուան կարճատեւ ճաշին եւ յետոյ մինչեւ պիտի բուսնայ խոտեցան Լիկինիանոսի, Լիկինեան գլխակի եւ այն տեղի բոլոր ապրուանքուն մասին: Գաղերիոսն ահա կ'իմանար թէ Լիկինիանոս որքան կը սիրէր զինքը: Երբ Գաղերիոս ուժասպաս գրաց ինքզինքը, ձեռքի անդօր շարժումով մը նշան բրաւ Կորնելիային որ իրեն մօտենայ, եւ շնչարգելութեամբ բնդհատուած զժուարին բառերով յայտնեց անոր, թէ հոն պատին մէջ հաստատուած զարակի մէջ, տուփի մը մէջ, դու նկարագրեց մանրամասն, Լիկինիանոսի նամակները կան: Բանալին ալ անոր տուաւ: Կորնելիա գտաւ նամակները: Ինքնակալը կը մտափէր կարմիր լոյսին ցոլքին տակ: Կորնելիա, սրտաթուռնոյ, նստաւ հիւանդին քով, տակաւին երկար տանն զիտեց անոր զուճատ թարչամած գէմքը, յետոյ մաղաղաթեայ թերթերուն ծալքը քակեց, զբաւ ծոցին վրայ, աչքերը զոցեց: Թերթերը կը գողային, կը ճէլին իր ձեռքերուն մէջ: Միտին դարկը կը գոյար զիպին վրայ: Կարգաց, թէ ինչպէս Լիկինիանոս իր բարեկամին կը զբէր մտերմիկ, անկեղծ, անարուեստակեայ բառերով, թէ վերջապէս ինք կին մը գտած է, որ ամէն կերպով իր փնտած կակն է, հրաշապեղ, անհամեմատ. զեղանի, մարմնեղ, պինդ: Ճակատ — այտեր — քիթ — բերան — ծնօտ, ճշտիւ ամէնքը իր սիրածը: Հապա ճայր: Հապա տաւիղ ածելու իր արուեստը: Հապա ջերմեռանդութիւնը: Հապա հոգիին մաքրութիւնը: Ամէն բան կուզէր զոհել իրեն համար: Այլեւս ոչ մէկ կնոջ պիտի հպի, այլ միայն այս մէկին, իր միակ յայր. Արսինէ, Արսինէ, Արսինէ: «Պիտի խենթեամբ, Գաղերիոս, եթէ Արսինէն ձեռք չձգեմ»: Յետոյ առաջին ապաւորութիւնները Մոսկովի վրայ — հիացումով լեցուն, անոր արտաքին կերպարանքին, կենցաղախարութեան եւ անհաստատի բնդունակութիւններուն վրայ: — «Սարսափելի ճարպիկ մարդ մը — տունէ տեղէ հետի — միշտ ինծի հանդէպ կամակատար — նոյնիսկ չափազանց երախտագէտ: Ինծի շարունակ կ'օգնէ Արսինէի հետ հանդիպումներու եւ խօսակցութիւններու: Անդիմադրելի ճշտութեամբ կը գուշակէ ինծի ապագայ ինքնակալութիւնը: Օ, Գաղերիոս — ինծի ծիրանին: Վաղերիոս Լիկինիանոս Լիկինիոս Ինքնակալ Աւգոստոս: Եւ Արսինէ Աւգոստոս: Օ, Գաղերիոս: Յետոյ կուզային նկարագրութիւններ մտերմական ժամադրութիւններու, խօսակցութիւններու, խաղերու: Երբեմնի Արսինէն կարծես հիմա արձագանդէ մը կը լսէր այս տաք ապրիլեան գիշերուն մէջ քնացող Ինքնակալին մահուան անկողին վրայ իր հարազատ բառերը կրկին. «Նախ զօրաւոր եղիր, ինքնակալ եղիր, իշխան

Լիկինիանոս — մաքուր եւ հաւատարիմ եղիր — Լիկինիանոս — համբերէ, Լիկինիանոս — երբ Ահուրան կամենայ, այո — երբ Ահուրա փրկութիւն, սղջոյն տայ — երբ Ինքնակալ բլրաս: — «Ո՛չ — ո՛չ մէկ պարագայի տակ — ոչ», կ'որոտար Արսինէ: — Արսինէ նամակը մէկ կողմ զբաւ: Ուրեմն Գաղերիոս այսքան մօտէն ծանօթ է եղեր իր բոլոր փորձութիւններուն եւ ցաւերուն, Լիկինիանոսի հանդէպ իր սիրոյն: Նորէն շարունակեց: Կարծես հայելիի մը մէջէն կը տեսնէր հեռաւոր անցեալին մէջ այն ստեղծուած իր սեփական պատկերը դարձեալ. — «Կ'ողջունէր աչքերովը, — օ, այս աչքերը — կը ծրար տէր ինծի, Գաղերիոս — ժպիտով մը որ ան միայն կրնայ, Գաղերիոս — աչքերը զոցեց: Իր կոպերը, — զիտես, բարեկամ, ծոխալարդի թերթերու պէս են անոնք: — Գաղերիոս, բարեկամ, համհարց, սրտակից եղբայր — ան — ան թեւ ինծի անցուց — օ, այդ թեւը — այդ փափկութիւնը, քանիտն առատ, — որքան յայր — հիմա զեռ կը զլամ անոր անոյճ, զիրոյ, տաքուկ սեղմումը եւ վարդամասն ձեռքը իմ աջ այտի վրայ — փառասուր ուտին կը բուրէր — օ, Գաղերիոս — եղբայր — մի ինչպէս — ես կ'երգուրնցնեմ քեզ — լաց ինծի հետ իմ երջանկութեամբս — ես զեռ զինով եմ անոր նախընծայ — մէկ հատիկ համբուրէն: Կորնելիա սաքի ելաւ, նամակը զեռին նետեց: Գիմացի պատին վրայ սենեակին բարձրութեամբ մեծ հայելիին մէջ ինքզինքը կը զիտէր: Աչքերը կը շողային: Այտերը հրաշէկ: Ամօթէն էր, թէ կը զղջար, թէ կ'ապաշխարէր, ամէն պարագայի մէջ կը վախնա՞ր արդեօք Քրիստոսը ուրացած — Սուրբ Հոգին ցաւցուցած կ'ըլլայ: Արդեօք Լիկինիանոսի հանդէպ յանկարծ նորէն ծայր տուող հին սէ՞րն էր: Արդեօք կը զղջա՞ր հետեւած բլրալուն համար ազգատ Նաղովրեցիին, չուսուածեան, տկարութեան, մահուան մէջ — ծիրանին մերժած, Աւգոստայի զիրքը, շքեղութիւնը մերժած բլրալուն համար, կը զղջա՞ր արդեօք: Հիմա Լիկինիանոսի տատը կը բարձրանայ: Կեսար է ան, Լիկինիանոս Ինքնակալ պիտի բլրայ: Իսկ զո՞ւն, զո՞ւն:

Երկար մտածութեան վերջ աչքերը հեռացան հայելիէն, եւ դարձան ինքնակալին կողմը: Շատ կամաց մօտեցաւ անոր անկողինին, կեցաւ սաքերուն տակ եւ թեւ կրթնցուցած երկու սիւսածեւ փոսկրեայ սիւները միացնող սոսի յենարանին: Գաղերիոս երկնցած պատկած էր: Կորնելիա բաւական փորձառու էր. Ինքնակալին երեսին վրայ մահուան ստուերները կը դարէին: Տեղը ետ դարձած պէտք է բլրայ: Ծնչառութիւնը կը զժուարանար եւ դարձեալ տաղնապալի արագութեամբ շունչը շո՛ւնչը կը փանէր: Աչքերը թաղուած կապիճներուն մէջ խոշոր կապոյտ գիծերէ պաշարուած: Երթունքները ձեւակամ, զիրար սեղմած: Բայց բնդհանուրին մէջ, տակաւին

պատկեր մը իշխանութեան, կամքի: Եւ հիմա Գաղերիո՞ս: Քու ծի-  
րանի՞ր: Քու թա՞ղղ: Քու մտկա՞նդ: Քու կայսրութի՞ւնդ: Հար-  
ցումներ եւ հարցումներ — մտածումներ, զգացումներ, զոչ երկիւզ,  
կարեկցութիւն, գթութիւն, եւ հիացումի պէս բան մը — զիրար կը  
հալածեն Կորնելիայի հոգիին մէջ: Գաղերիոս քրիստոնեաներու զա-  
տաստանո՞ւմ: Գաղերիոս Լիկինիանոսի զատաստանով, նամակի մի-  
ջոցաւ: Գաղերիոս այնպէս, ինչպէս ժամանակին յորդոր կը կարողար  
Լիկինիանոսի, մղելով զայն պարտաւորութեան, համբերութեան,  
ոյժի, բարոյականութեան, Գաղերիոսը այնպէս, ինչպէս երբ կը  
սիրէր Ձեւսը, կը պաղատէր Ձեւսին, եւ արիւնտա ձեռքերով անոր  
զլուխը կը շաղապատէր: Ինչպէս ահա կ'աղօթէ, ինչպէս կը սիրէ  
Հոռմն ու իր կայսրութիւնը — Գաղերիոս — ինչպէս կը տառապի,  
ինչպէս կը մեռնի: Կ'ուզէ տակաւին սպասել եւ հոգալ: Հեթանոս-  
ները կը վախնան մահէն. — յոյս չունին անոնք — ոչ ալ միւթա-  
բութիւն — պիտի յուսահատ չունեն զժոխք: — Այսպէս կը վարդա-  
պետեն քրիստոնեաները: Այսպէս պէտք է հաւատամ ես, Կորնելիա,  
քրիստոնուհի: — Այսպէս կը խորհէր եւ անքթիթ կը յատէր հիւան-  
դին հանդարտ զիմպիւսերուն: Որքան երկար կը յատէր, այնքան  
աւելի ակնյայտնի կ'ըլլար իրեն, թէ ահա Գաղերիոսի անկողինին  
չուրջը կը հաւաքուէին կերպարանքներ ամէն տարիքէ, սեռէ եւ տա-  
րապէ, ահա կուզային անոնք հոռմեական կայսրութեան բոլոր զա-  
ւատներէն: Ամէնքն ալ կը կրէին արիւնահոտ վէրքեր, հերձուտած ան-  
դամներ եւ պատաստած մարմիններ, ճեփ ճերմակ գէմքեր, որոնց-  
մէ զուրս սակայն սուրբ բոցով եւ գերեզմանային երանութեամբ կը  
փայլին աչքերը համակ: Ամէնքը ահա իբր թէ կը կանդնին օրհասա-  
կան կայսեր անկողինին շուրջ: Ո՛չ բնաւ տակաւութիւն կը ծլէր անոնց-  
մէ: Ո՛չ մէկ մեղադրանք անոնց շրթունքներուն վրայ: Բոլոր շր-  
թունքները կը թուին շարժիլ: Կորնելիա կ'ուզէր մտիկ ընել: Բայց  
սա բտուր կը հասկնար. «Ամէնքը եկած են մեծ տխրութեամբ հա-  
մակուած եւ իրենց զգեստները պայծառացուցած գտնուելին արիւ-  
նով»: — Կորնելիա զլուխը վեր առաւ եւ բացաւ աչքերը: Ո՞րչափ  
ժամանակ յենարանին կրթնած, քնացած եւ երպոյց էր: Գաղերիոս  
ո՞րքան ժամանակ ունեցած էր զինքը զիտելու լուրթեամբ: Լոյսերը  
ամոյն կը վառէին: Կարմիր յոյս անոյն վախ գարձած էր: Գուրսը  
կը մարտնչէին յոյս եւ խաւար: Մթնշաղկ տակաւ յոյս կուտար ճա-  
ճանչաւտ աչքէն: Երկրորդ գիշերը անցած էր: Գաղերիոս ձեռքը  
անոր երկնցուց եւ ըստ. «Շնորհակալ եմ քեզի, Կորնելիա, որ իմ  
քով մնացիր: Շատ զժրախտ եմ ես»:

Գաղերիոս իր արիւնին մէջ պատկած էր: Քստմնելի գործու-  
ղութիւնը նորէն սկսաւ: Գաղերիոս անմոռունջ կը հանդուրժէր ցա-

ւերուն. անգամ մը հարցուց վէրքին վիճակը եւ Կորնելիայի պատաս-  
խանին վրայ ինչպէս խոր նուազումի մէջ: Հիւանդութիւնը սրընթաց  
կը յառաջդիմէր: Քաղցկեղը կ'ուռէր կը կրծէր զինքը, միշտ աւելի  
խորը հիւանդին միտին մէջ: Դեռ ինչ չարչարանք կը սպասեն քեզի,  
խեղճ Ինքնակալ: Հոս ալ կրնա՞ն հրամայել, իցիւ թէ կարենայիր:  
Իցիւ հոս բլլար Վալերիոս: Ո՞վ զիտէ, կուզայ: Խենթ յոյս: Մահը  
արդէն աւելի արագընթաց է քան նաւը Աթէնքէն: Կապը պատրաստ  
էր: Պէտք է լմնցնէ զուրս ելլէ: Աչքերը զուրս կ'իջնան հեկեկալով,  
սրճկաւայն: Իրեն անանկ կուզար որ պիտի խեղզուէր: Կապերը  
կարգի գրաւ, փաթթեց ու զուրս փութաց: Վարը զոպալով կը սպա-  
սեն գերեզմանը եւ անոր կը նայէին, թէ ինչպէս ձեռքի լաթերը տեղ  
մը դնելով, գաւթի մէջէն անցնելով պարակց վաղեց. «Մի՛հր —  
Քրիստոս: Ողջոյն Ինքնակալ Վալերիոս Լիկինիանոս Լիկինիոս: Ող-  
ջոյն Յիսուսի Քրիստոսի, քեզ կ'ողջունեն գէպի մահ գացողները»: —  
Ինչեր կրնայ ընել մէկ գիշերը: Որքան զօրաւոր եղած էր իր քրիս-  
տոնեական հաւատքը: Որքան ատեն մը կրակոտ նաժիշտն էր Անա-  
հիտի, հիմա նոյնքան կրակոտ էր քրիստոնուհին: Քրիստոս ուզեց  
որ երթայ ծառայէ Գաղերիոսին, եւ դարձեալ Լիկինիանոսը կը գտնէ,  
եւ հիմա կ'իմանայ բոլորովին, թէ որչափ կը սիրէ ան զինքը, եւ  
անոր հանդէպ իր սէրն ալ որքան զօրաւոր է տակաւին: Հիմա ո՞ւր  
է ան: Ի՞նչ եղած է արդեօք իր սէրը: Դեռ ամուրի՞ է, մաքո՞ւր է  
գեռ, թէ ուրիշ կնոջ մը վրայ նետուած է — նորափթիթ եւ բուրում-  
նաւէտ թանթրուենիի մը տակ, տունկերու եւ ծաղիկներու անբացատ-  
րելի շքեղութեան մը մէջտեղ, Կորնելիա կը պատերազմէր հուսկ,  
կարճ պատերազմը:

Գերուհիներուն օգնութեան աղապակները զինքը արթնցուցին  
իր մտածողութենէն: Վեր ցատկեց: Գաղերիոս լուռ եւ անբարբառ  
իրեն կ'երկարէր արիւնէն կարմրած ձեռքերը: Բոլորովին տկար ին-  
կած էր: «Այլեւս ո՞չ մէկ յոյս»: — «Այս կեանքին համար ո՛չ ես,  
Ինքնակալ»: Կայսրը, անբարբառ եւ անշարժ, ընդունեց այս պատ-  
գամը եւ հանդարտօրէն նայեցաւ կանանց կապոյտ աչքերիկներին: Իր  
աչքերը կառչած կը մնային Լիբիսա լեռնաշղթային ժայռերուն եւ  
կը զիտէին հեղեղամաները, որոնք անձին զարձած ափափաներուն  
բարձունքէն սղոխի ու շողի մէջէն, կարծես նուրբ մշուշի ձեւով  
վար կը ջրվիժէին, գէպի ծով: Կատարներուն շուրջ ծովային թռչուն-  
ներ հօլի պէս կը պարուրուէին: Զով ու թարմ ծովու օդը կը կազու-  
րէր հիւանդը: Կորնելիա զգայով կաթնապուր տուաւ անոր: Գաղեր-  
իոս երախտապէտ ակնարկով կը հետեւէր անոր ձեռքի մէջ մի շար-  
ժումին: Կորնելիայի ձեռքերուն օգնութեամբ յոյնած զլուխը նորէն  
զրաւ բարձին վրայ: Նստաւ անձայն անոր մօտ: Հիւանդը իրեն կ'եր-

կրնցնէր ձեռքը, զոր ան պարտաւորեա՞ծ էր բռնել եւ ընդունիլ երկու ձեռքերուն մէջ: Երկար ատեն բառ մը չխօսեցան: Իրենց մտածումները կը հետապնդէին, մին եւ միւսը: Բայց երկուքն ալ նոյնը: Որովհետեւ երբ Գաղերիոս յանկարծ ընդմիջեց մտախոհ լռութիւնը, եւ հարցուց. «Կը սիրէ՞ր Լիկինիանոսը, Կորնելիա, շատ կը սիրէ՞ր զայն», այնքան սարսուց որ կարմրելով գլուխը վար ծռեց: Պատասխանը տրուած եղաւ: Եւ ասիկա կը բաւէր Գաղերիոսի: Մեզմով նոր հարցում մը. «Ինչո՞ւ ձեռքդ անոր շատիր: Դուն գիտես, այդպէս ընելով, անոր տուած կ'ըլլայիր կայր ու սյժ, յժան մարդ մը կ'ըլլար քու շնորհիւ, ձեռքերու վրայ պիտի տանէին քեզ եւ ց'իւրջ պիտի հողացուէիր»: Կորնելիա լուռ կը մնար եւ գլուխը ասելի խորը կը թողէր: «Ինչո՞ւ չընդունեցիր անոր բնորութիւնը»: Պատասխանեց մեզմիկ. «Չէի կրնար»: — «Ինչո՞ւ չէ: Սրիկայ Մովսէտի՞ն համար: Չէ»: Կորնելիա, լուռ: «Իրացնէ քեզ եւ ամէնքն ալ խարեց ան»: — «Այս պատճառաւ է որ այլեւս մարդու վրայ հաւատք չունիմ: Նոյնիսկ ոչ եւս Միհրի վրայ: Ամէն, ամէն ինչ փրած է ինծի համար: Լքուեցայ աստուածներէն ու մարդոցմէ: Տրդատէս երթալով ինկաւ: Ապեղէս եւ Լիկինիանոսի բարեկամները ամէնքը — ինկան, ինկան այնքան խորը — ս'ի Ինքնակալ: Ասոնք եղան իմ կեանքիս ամէնէն ահաւոր օրերը: Մէկն ալ գէմս ելաւ, որուն կոչը երկար ատեն լսեցի, իր ճշմարտութիւնը ճանչցայ երկար ատենէ ի վեր, իր խօսքերը այլեւս բնաւ չլքեցին զիս եւ իր փեշ պատկերը հետեւեցաւ ինծի գիշեր ցերեկ: Ան ալ թաղուոր մըն էր — նոյնիսկ Ինքնակալ մը —» — «Որ... էր Ո՞վ» ընդմիջեց Գաղերիոս ակնկալութեամբ լեցուած նայուածքով մը: — «Ան ալ հաղաւ ծիրանի, ան ալ ունի թաղ, ան ալ կը հրամայէ եւ իր խօսքին կը վստահին իր բոլոր աշակերտները, ինչ որ ունին կուտան եւ անոր ետեւէն կ'երթան: Նախ քիչեր, յետոյ շատեր: Հիմա հարիւր հարարներ — նաեւ ես—» — «Աստուածներ, Չեւս, Միհր: Այ, դժոխք եւ սատանայ», զոչեց Ինքնակալը, «Կորնելիա, դո՞ւն ալ — դուն ե՞ս» — «Քրիստոնեայ, ս'ի Ինքնակալ»: — «Քրիստոնեայ մը», կրկնեց Գաղերիոս երկարածիղ փանկերով: Բառ մը: Եւ այդ բառին մէջ կար հեղնութիւն, ոխ, գտնուութիւն եւ վերջապէս ամէնուն ետեւը, յանչափս զարմացում: «Քրիստոնուհի մը»: — «Մովսէտին փախչելէն ի վեր»: — «Ի՞նչպէս հաս եկար»: — «Աթէնք մնացի, երբ Տրդատ եւ Պոսրովիդուխտ Հայաստան դացին: Որովհետեւ Տրդատ ալ հակակիր էր ինծի իմ հաւատքիս պատճառաւ: Պոսրովիդուխտ երկար ատենէ ի վեր քրիստոնեայ էր: Ես Աթենակորաս եպիսկոպոսին քով մնացի, յետոյ հիւանդապահուհի եղայ, եւ աղնուամիտ, թէեւ տակաւին չեթանոս բժիշկ Վալերիոս ինծի սովբեցուց շատ մը բժշկական ծանօթութիւններ եւ վէրքերու

զարմանում»: — «Ինչ որ ինծի օգտակար եղաւ», մրմնջեց Գաղերիոս: «Բայց եթէ ասիկա գիտցած ըլլայի — կը նախընտրէի արիւնս տալ»: — «Կրնաս տակաւին ընտրութիւն ընել, Ինքնակալ», պատասխանեց Կորնելիա մեղմօրէն: «Կը հաւատամ թէ արիւնը կը հոսի զարձակ: Կը սովորենիս, Ինքնակալ: Ծրթունքներդ կը զողզղան: Եկուր խմէ»: Կայսրը վայրկեան մը վարանեցաւ, եւ երբեմն գաւաթին, երբեմն հիւանդապահուհիին կը նայէր: «Ո՞՞՞՞ հանդարտ, Ինքնակալ, մենք քրիստոնեաներս բնաւ գինին թոյնով չենք խառներ»: Եւ ինք նախ խմեց եւ ատուաւ կայսեր: Նորէն ոչժ եկաւ վրան: Բայց արիւնը կը հոսէր ու կը հոսէր եւ վերջապէս կայսեր վրայ եկաւ ծանրացաւ խորունկ, ակուական նուազում մը: Երբ կէսօրէ վերջ սթափեցաւ, կրկին վիրակապ: Կորնելիա անբարբառ մտախոհութեամբ նստաւ անոր քով եւ կը գիտէր գայն անվախ, կարեկից եւ բարեկորով: Երբ ան, զարձակ շփոթած, նայեցաւ Կորնելիային, այս վերջինը գիտել տուաւ կարճատեւ. «Ինքնակալ, վէրքը ստակալէ է: Պէտք է բժիշկները կանչել զարձակ, որպէսզի բան մը բնեն արիւնը զողբեցնելու համար»: Գաղերիոս, վստուած, գլուխը մէկ կողմէն միւսը կը տարուրերէր: «Հարկ չկայ: Կը զգամ ես: Դուն կեցիր իմ մօտ: Սօսք տուր ինծի: Չեռքդ տուր: Մի քաշուիր ինձմէ»: — «Պէ՛՛՛՛ կը զգաս ինքզինքդ, Ինքնակալ»: — «Ես, տալնապը, անձկութիւնը ի՞նչ է, չեմ գիտեր: Բայց արտակարգ բան մը կայ վրաս: Բոլորովին արտասովոր: Ասիկա մահը պիտի ըլլայ: Կը զգամ անոր գալը: Եկուր կեցիր շատ մօտ: Դուն քրիստոնուհի ես: Գիտե՞ս, Կորնելիա, ինչո՞ւ ես քրիստոնեաները ատեցի, օ, ատեցի, ինչպէս գիտեր, ինչպէս Ահրիմանը»: — «Ինչո՞ւ, Ինքնակալ»: — «Թող ասիկա բնեմ քեզի: Կը գիտեմ. ճամբաս սխալ է: Քրիստոս պիտի տիրէ: Քրիստոս իմ թշնամիս էր, իմ սխերիմ թշնամիս: Մայրս Հոռմուրա իր կաթին հետ ինծի ջամբեց Քրիստոսի զէմ ատելութիւն: Ան քրմուհի էր Դիսկիլայի մէջ: Անոր մեծապոյն բազմանքը իմ երջանկութիւնն էր — իմ սիրոյն համար քրմուհի եղաւ ան, ինծի համար մուրաց, մարդարկացաւ, ստեց ու խորեց: Օ՛, մայրական այս ողին, իմ մէջս փռուեցաւ սպառող փառասիրութեամբ եւ ընչաքաղցութեամբ զրամի եւ իշխանութեան: Հաւատացի թէ աստուածները միայն կրնային օղնել ինծի այս նպատակին համար, եւ օղնեցին ալ ինծի, ինչպէս հաւատացած էի: Գիտես, ինչպէս յաջողութիւն ունեցայ մարտի գաշտին վրայ եւ իմ մօրեղբայր Դիսկիլեոսիանոսի շնորհիւ փեշապետութեան հասայ: Անոր շնորհիւ կեսար եմ եւ իր փեսան: Միայն մէկ փոսնդ կը տեսնէի միշտ իմ առջև գիշեր ցերեկ. Քրիստոս: Պաշտեցի աստուածները ինչպէս կը հասկնայի: Անոնք ինծի համար անտեսանելի զօրութիւններ էին, սրտնք զիս կը մղէին,

ինձի կ'աղղկին, ինձի յաղթութիւն կուտային ևւ ինքնակալութիւն, որովհետեւ միշտ կ'աղօթէի անոնց: Այս Զեւսին առջև ամէն օր ծնրազրեցի: Պաղատեցայ իրեն ճակատամարտէն առաջ, շնորհապարտութեան արցունքներ զոհեցի յաղթութեան համար: Միհր, Ահուրա սրբիչ անուններ էին միայն նոյն դարութեան, նոյնիսկ հրեաներուն աստուածը Եհովան կարող էի պաշտել, որովհետեւ ան ալ դորութեան ևւ իշխանութեան, պատերազմի ևւ յաղթութեան աստուած մըն է: — Միայն այդ Յիսուս Քրիստոսը պարտաւորուեցայ ատել, ատել: Գլխէի որ, եթէ անոր փարգապետութիւնը յաղթէ, ճամբաս ու նպատակս փճացած է: Զեւս, բոլոր երջանկութեան, համօրէն փառքի իմ Աստուածս ևւ պարգևելիչը, ոչինչ է: Հոսմէական սուրբ կայսրութիւնը կը կործանի: Լեզնիները կ'ապստամբին ևւ կը մերժեն հնազանդութիւն, որովհետեւ իրբեւ քրիստոնեայ պարտաւոր չեն այլևս պատերազմական ծառայութիւն կատարել: Վայերիս զազանի քրիստոնեայ կը դառնայ ևւ կը մերժէ հնազանդիլ ինձի ևւ ճանչնալ իմ ամուսնական իրաւունքս — ևւ հիմա» — «Հիմա, կը տեսնես, Ինքնակալ, որ Քրիստոս քու Ինքնակալը եղած է: Ո՛ւր է Զեւս: Ո՛ւր Ահուրա, Միհր: Զօյնեցին քեզի: Զկրցան լսել քեզի: Քրիստոս կ'ընթանայ յաղթութենէ յաղթութիւն: Մարտնետիտս մեռած: Գաղերիտս —» — «մեռած» — ամբողջացուց հանդարտօրէն օրհասական Ինքնակալը: «Քու խեղճ, առաջին կինը, ո՛ւր է: Ո՛ւր է քու զաւակը, Կանդիդանոս»: Գաղերիտս, իր յանցանքին պիտակցող մէկու մը պէս, խոնարհեցուց նայուածքները: «Զեմ գիտեր»: — «Եւ Վալերիոս, Պրիսկոս»: — «Անպատը: Զեմ գիտեր ո՛ւր»: — «Կուղէի՞ր որ հոս ըլլային հիմա ամէնքը, քու շուրջը, Ինքնակալ»: — Երկու ձեռքերը ծածկեց վերմակով ևւ շղատասխանեց: Կորնելիա հարցուց պահ մը վերջ, «Ինքնակալ, տակաւին միշտ կը հաւատա՞ս քրիստոնեաներուն շարութեան»: — «Դուն բարի ես», պատասխանեց քաղցրութեամբ, «կը փափաքէի մեծ վարձատրութիւն հրամայել քեզի համար: Ի՞նչ կը փափաքիս ինձմէ» — «Ոչինչ, Ինքնակալ: Մտածէ դուն միմիայն քու ևւ հոգիիդ վրայ: Կը սիրենք, մենք չենք ծառայեր վարձքի համար, միմիայն սիրոյ համար»: — «Այսպիսի ծառայութիւն, առանց վարձքի», զոչեց Գաղերիտս զարմանքով, չհաւատալով, «առանց վարձքի, առանց վարձքի», կը հեղնէր օրհասականը չհաւատալով: «Ի՞նչ մը ոսկի, Վալերիայի բոլոր զգեստները, պէտք է ունենաս»: Հիմա ինք ալ ինչպէս Կորնելիա. «Լաւ: Ի՞նչ կը մտածես, Ինքնակալ, քու կնոջդ հազուատնե՞րը: Ոսկի՞ սիրոյ համար: Շատ քիչ կը ճանչնաս մեկ, որ իբրեւ անկարելի կը համարիս այսպիսի ծառայութիւն մը ձրի կատարել, որ քեզ ամէնքս սիրենք, ամէնքս քեզի համար աղօթենք: Կը հարցնես, թէ զիս ո՞վ զրկեց քե-

զի: Ո՞վ ըսաւ ինձի քու կարիքը: Նիկամիդիոյ եպիսկոպոսը, Անտիմոս: Համայնքը անդադար կ'աղօթէ քեզի համար: Աճապարհ, ինքնակալ: Քու գիմաղիծերը կը փոխուին: Ինձի կը թուի թէ մահը մտալուտ է»: — «Զիս դժբախտ կը զգամ: — Թող զինի խմեմ: — Զեռք տուր»: Կորնելիա անոր մօտը եկաւ, երկու ձեռքերը անոր տուաւ: Ան բոնեց գանձեք փափկօրէն ու բաւ: «Զրի: Դուն ասիկա լրջօրէն չես կրնար բսել: Աս անկեց մաշապոթ, զրիչ, մեղան ևւ կնիք ևւ բեր հոս»: Կորնելիա զնայ առաւ ամէնքը գրտակոտնէն: Գաղերիտս կ'ուզէր թելազրել, տուն տալ: «Ինձի համար ես բան չեմ գրէր», պնդեց Կորնելիա: «Ուրեմն չե՞մ կրնար քու բարեսրտութիւնը որեւէ բանով մը վարձատրել», բաւ յամբօրէն, ևւ սխուր կերպով Գաղ'րիտս: «Օ, սակայն, ինքնակալ: Դուն տեսար հասկցար, թէ քու աստուածներդ քեզի ոչինչ կ'օյնեն, քրիստոնեաներուն զէմ քու հրամանապիտեանը ի դուր եղան: Անմեկ արեան հեղեղներ թափեցիր, բայց Քրիստոս կը յաղթէ ևւ սխալ կառախարհ աշխարհը: Փառք տուր կենդանի Աստուծոյ, թող որ զբեմ թէ դուն կը խոստովանիս Քրիստոսի իշխանութիւնը, դուն սխալած ես, ևւ քու բոլոր հեռուորդներուդ ևւ հեռուորդուհիներուդ արտօնութիւն կուտաս պաշտելու գայն, ո՛ւր ևւ ինչպէս որ կ'ուզեն»:

Գաղերիտս աչքերը զոգ պատկած էր: Մահատիպ երեսին զիմաղիծերը ակնյայտնի կը ցուցնէին հուսկ յետին պայքարը այս յանդուզն, բուռն ուրիշն, որ մահուան մէջ իսկ չի կրնար բաժնուիլ իր հաւատքին ևւ իր հպարտութեան: Արդեօք ա՞յս պէտք էր ըլլայ իր բովանդակ կեանքին պտուղը — իր կեանքին ամենամեծ պարտութիւնը, քրիստոնեաներուն հեղնութիւնը: Հեթանոսներուն անէ՞ծքը: Հին Հռոմին ու բանակին անկումը, ո՛չ — Գաղերիտս քանիցս զլուխը կը շարժէր բացասական ձեռով: «Գաղերիտս Ինքնակալ», ձայնեց Կորնելիա ծանրախոհ լրջութեամբ. «Քու վայրկեանները կ'աճապարեն: Անոնք քեզ կը տանին դատաստանին ու վճիռին միոյ միայնոյ ամենազէտ Աստուծոյ ևւ անոր Որդւոյն: Ամբացուր հողիդ, զարմանէ ինչ որ պտտութեամբ կամ անդիտութեամբ սխալ գործեցիր: Դուն կրնայիր հասկնալ ճանչնալ, թէ աստուածները ոչինչ են, Աստուած քեզի բաւական իմացականութիւն չնորհեց, քեզի պարպեցեց Վայերիան, դուն իմացած ես քրիստոնեաներուն հաւատքին ևւ հաւատարմութեան մասին, մահուան մասին, իմացած լսած ես անոնց յոյսն ու կեանքը — դուն ընդունեցիր իմ սէրս, ո՛վ Ինքնակալ, փրկէ հոգիդ, փրկէ քեզ, ապատութիւն ևւ իրաւունք տուր քրիստոնեաներուն, ևւ անոնք ամէնքը պիտի պաղատին իրենց Տիրոջ ու Աստուծոյն. Տէր, ողորձէ անոր հոգիին, ևւ քու զաւակներուդ արիւնք մի զրեւ անոր: Աճապարհ — թելազրէ, տուն տուր, Ինքնակալ, երբ տակաւին ուշ չէ»:

Յոգնած աչքերը տակաւ բացուեցան դարձեալ եւ անասելի տառապանքով մը երկար առեն յառեցան Զեւտի սրտակերին, յետոյ հեղնող սատիրաներուն. «ծածկէլ գանսնք, Կորնելիա, ծածկէլ գանսնք տմէնք», փափսաց կայսրը անձկութեամբ: «Ծածկէլ գանսնք», կ'ըսէր օրհասականին վերջին շարժումները: Կորնելիա ծածկոցներ առաւ եւ ծածկեց արձանները: Հիմա Գաղերիոս բաւ Կորնելիային որ իրեն քոյ երթայ: Հազիւ սյժ գտաւ այլեւս խօսելու: Բայց Կորնելիա սրտազակի կ'իմանար օրհասականին խօսքերը եւ կը գրէր գանսնք:

«Երկար առենէլ ի վեր Ինքնակայները իրենց համար մասնաւոր պարտք համարած են բոլոր մարդոց հոգիները դարձնելու բարեպաշտ կեանքի ճամբան, որ ուզիլ է, նպատակ ունենալով որ Հոռոմայեցիներուն համար օտար, այլակրօն սոփորութիւններու հետեւողները արամազիլը բլլան անկ եղած յարդանքն ու պաշտօնը մատուցանելու Անմահ տառուածներուն: Բայց ոչ սակաւ մարդոց յամառութիւնը այն աստիճանին հասաւ, որ կայսերական հրամաններու հանդէպ բանաւոր հնազանդութեամբ ո'չ իրենց նախապաշարումներէն եւ դիտարութիւններէն ետ կեցան, ոչ ալ պատիժներու սպառնալիքէն ստակացին: Այնուհետեւ կայսերական վեհափառութիւնները բարեհաճեցան նկատի առնել, թէ իրենց քաղցրարարոյութեան հակառակ է այնքան մարդոց կեանքը վաճառելու Ենթարկել, ուստի այսուհետեւ ոչ մէկ քրիստոսնեայ իր կրօնքին պատճառաւ պիտի չպատժուի կամ անհանդիստ պիտի չըլլայ, որովհետեւ երկարատեւ ժամանակամիջոցի մը փորձառութեան շնորհիւ ապացուցուած է որ անկարելի է սրեւէ կերպով գանսնք ետ կեցնել, հեռացնել իրենց յամառութենէն: Ուստի անսնք հիմա իրենց հանդէպ ցոյց տրուած այս կայսերական շնորհին համաձայն կրնան աղօթել իրենց Աստուծոյն վասն բարօրութեան ինքնակայներուն, վասն բարօրութեան կայսրութեան եւ իրենց իսկ, որպէսզի պետութիւնը բոտ ամենայնի բարգաւաճի, եւ իրենք ալ կարենան հանդիստ ապրիլ իրենց գտնուած տեղերը»:

Երբ կայսրը կնիքը կը գրոշմէր ասոր վրայ, Կորնելիա օգնեց անոր, որովհետեւ չափազանց տկար ինկած էր: Կոնակէն կրթնեցաւ ապա: Արիւն եւ թարախ կը հոսէին: Կայսրը պառկած էր անշարժ: Անոր առջեւ ծնրադրեց Կորնելիա, բռնեց անոր ձեռքերը եւ կ'աղօթէր, մինչեւ որ սառեցան: Սեւ լման մօրուքով շրջանակուած մոմի պէս գեղին դէմքը ահարկու լըջութեամբ մը եւ երբեմնի հօր հրամանատարին յատուկ եղող մարտական վճռականութիւնը կը հանդիսադրէր: Ո'չ մէկ հետք երկիրի եւ մտատանջութեան: Իշխանութիւն, ոյժ մահուան վրայ: Բայց յոյսի ո'չ մէկ նշոյլ:

ԳԼՈՒԽ ԻԳ.

## ՄԱՔՍԻՄԻՆՈՍ ԴԱԶԱ ԻՆՔՆԱԿԱԼ

Երկու տարի աւելի ուշ: 313: Դարձեալ դարնանապայր շքեզութիւն Մարմարայի վրայ: Կայսր Գաղերիոս Վալերիոս Մաքսիմիանոս Դազա, մեծած Գաղերիոս կայսեր եղբորորդին, Նիկոմիդիա մուտք գործեց: Սուրիա, Փրինիկէ, Պարսկաստան, Հայաստան, Եգիպտոս իրեն բաժին ինկած են: Որով նաեւ անշարիլի հարստութիւններ: Իր բնակութեան կեդրոնն է Նիկոմիդիա: Սոսկումով մտաւ Գաղերիոսի մեռելաբանակր: Ամբողջ սրայատր մաքրուած, խունկով լեցուած, եւ նուիրապարձուած է բայմաթիւ քուրմերու կողմէ անթիւ անհամար գոհերով, աղօթքներով, խնդրուածքներով: Անօրինակ շքեզութիւն մը պարգուած:

Մովկերքին դէմ դարաստանին մէջ առաւ մը կը ճեմեն Ինքնակալ Մաքսիմիանոս եւ կեսար Լիկինիոս: Այս վերջինը քանի մը օրէ ի վեր հիւր եկած է Նիկոմիդիա: Երկուքն ալ կը կրէին սպիտակ պարեպօտր, ծիրանին, թագր: Մաքսիմիանոս բարձրահասակ, նիհար, սկզ կեցուածքով: Երկայն պարանոցը կը կրէ բարակ, բարձր գլուխը, փափուկ, խարտեաշ մազով ծածկուած, որ անոյշ իւր կը հոտի: Կանոնաւոր դիմադիժերով տժղոյն երեսը կը թուի պաղ, խտարարոյ, ցանկասէր, ինչպէս նաեւ անրնտանի, միշտ դարանակալ գորշ աչքերը: Կայսր Լիկինիոս աւելի տարիքոտ, իր սեւ գանդուր մազերը աւելի բարակցած են եւ յայն, պատկառելի ճակատը աւելի բաց ձգած: Դիմադիժերը ամէն ժամանակէ աւելի սրկուած էին եւ ապու: Երեսոր նիհար էր, արժիւի քիթը առաջ անկուած էր ուժով: Ամբապինդ բերանը մեծ կամք մը ցոյց կուտար: Կեցուածքը, քալուածքը հպարտ, բայց վայելուէ, պատկառալից: Ամբողջ կութիւնը կը ցուցնէր. Լի-

կիրնիս նպատակին հասած էր: Ողջոյն Լիկիրնիս կեսար: «Հիմա կը պակսի քեզի կայսրութիւն եւ պալատ, Լիկիրնիս, նաեւ գերիներ եւ կիրներ: Աննշան բանի մը փոխարէն եւ քեզի պիտի յատկացնեմ իմ սիրելի Լուկանիան Գանուրի վրայ: Աքանչելի վայր մը, ասկէց սկսելու համար»: — «Յայց Իտալիայէն եւ Յունաստանէն շատ հետի է: Կամ Հոտոմ կամ Աթէնք», յարեց Լիկիրնիս: «Տարւոյն սկիզբը Կոստանդիանոսի հետ Միլան էի»: — «Կոստանդիանոսի հետ: Միլան», կրկնեց Մաքսիմիանոս զարմացած: «Առանց իմ գիտնալու, առանց իմ անձի: Ինչե՞ր խօսեցաք», հարցուց, թեթեւակի յուզուած եւ կարմրած, բայց վերջին աստիճան սիրով բարեկամութեան, ձախ թեւր Լիկիրնիոսի ձախ ուսին վրայ դրաւ եւ քալած առենը թեթեւ մը իր հիւրին կը ծռէր: «Իր կայսրութենէն քեզի բան մը չ'ուզե՞ր յատկացնել»: — «Այո եւ ո՛չ», պատասխանեց Լիկիրնիս: «Դուն կը ծանշես զայն, աղուէս: Եթէ Մաքսիմիանոս չկրնար իր կտրուկ որոշումը տալ — այո, հիմա կ'ուզէ տեսնել»: — «Ես — իմ կայսրութենէն հրաժարիլ — ինչեր ալ կ'անցրնէ միտքէն այդ խարդախը — ե՞ս: — Ի՞նչ կը խորհիս այդ մասին Լիկիրնիոս — Ըսէ, խօսէ բացէն»: — «Որոշումը քու ձեռքդ է, Մաքսիմիանոս: Ես կրնամ սպասել, — ես իմ դորքերուս կրնամ կայսրութեան բաժինս գրաւել, եւ ասիկա աւելի լաւ կը թուի ինձի, եւ Աթէնքի մէջ իմ հայրական տունս պատերազմի դաշտէն դուրս եղած միջոցիս կը բաւէ ինձի: Դուն հանգիստ եղիւր միայն: Այսքան բարկացող եւ դունաթափ մի երեւնար նախանձէզ ու վախէզ: Անհոյ եղիւր»:

Լիկիրնիոս այսպէս կը ջանար Մաքսիմիանոսը հանդարտեցնել: Բայց ի դուր: Մաքսիմիանոս երեսը Լիկիրնիոսին դարձուց եւ ամպորոտ ձայնով մը, որպէս թէ դժբախտութիւն մը պատահած ըլլար, գոչեց. «Գերիներ, հոս»: Գետնին տակէն կանչուածի պէս, մի քանի գերիներ բաց սրունքներով եւ բոկոտն ցատկեցին եկան կապոյտ մետաքսէ կարծ վերարկուներով: Առանց տեսնուելու եւ առանց լսուելու զացին իրենց տիրոջը ետեւէն, ուր որ երթար ու կենար ան: «Անմիջապէս քրմապետին Տաղիսին գացէք, բսէք որ պէտք է մորթէ եւ փորոտիքը նայիլ տայ»: Գերիները իրենց ծռած քամակները վեր առնելով, աջ թեւերին ետ քաշեցին ու անհետ եղան: «Օրը աղիտալի է, Լիկիրնիոս: Ես անհանգիստ եմ, ես — ես կը վախնամ Կոստանդիանոսէն — ես — ես քեզմէ կը վախնամ Լիկիրնիոս»: Մաքսիմիանոս երբեմն ետ, երբեմն առջեւ կը վազէր, կողմնակի ճամբայ մը կ'առնէր ցրդիներուն երկայնքէն, նորէն ետ կուգար: Աչքերէն բոց կը ցայտէր: «Լիկիրնիոս», ըսաւ շունչը կտրած, «չէ՞, մենք բարեկամներ ենք: Մտերիմ բարեկամներ: Զեռքդ տուր»: Լիկիրնիոս այնքան ամուր սեղմեց որ Մաքսիմիանոս ցաւէն երեսը թթուեցուց ու «օ՛Փ» ըսաւ: «Բաւական, բաւ-

ւական է: Կը հաւատամ անկեղծութեանդ: Ես Կոստանդիանոսէն կը վախնամ: Ըսէ ինձի Լիկիրնիոս, կը խնդրեմ, բսէ ամէն ինչ բացէն — քեզի կը խոստանամ անոյց զազանիք մը այս իրիկուան համար — Եթէ ամէն բան բոս ինձի: — Ի՞նչ կ'ըսէ ան ինձի համար»: — «Դուն մեծ կայսրութիւն մը ունիս: Փառաւոր եկամուտներ — ըսաւ»: Մաքսիմիանոս պարեգօտին քղանցքովը քրտինքը ճակատէն սրբեց: «Դեռ ի՞նչ»: — «Զի հասկնար իմաստը որ դուն տակաւին այնքան ահաւոր հալածանքի կ'ենթարկես քրիստոնեաները, մինչ Գաղերիոս իր մահուան անկողինին մէջ կ'ըսէր եւ հաւատքի բնոյհանուր ապաստութիւն հրամայեց մասնաւոր հրովարտակով»: — «Այդ մեռնող Գաղերիոսը ինչ իրաւունք ունի հրաման արձակելու կայսրութեան իմ բաժինիս մէջ: Ես ընաւ իր սղջութեանը իրմով չէի հետաքրքրուեր, ուր մնաց որ հիմա մեռած է: Հիւանդութեան նոպային քրիստոնուհի մը ետեւէն ինկեր է, ես կ'ըսեմ քեզի: Այդ քրիստոնեայ կիրն ձեռով մը սպրդեր է հոս եւ զարմաներ է զայն, որովհետեւ իր շատ գէշ հոտելուն պատճառաւ շուն մը անգամ չէ կրցեր մօտենալ իրեն»: Այս բոպէին Մաքսիմիանոսի խնդալը եկաւ, բայց սպեղ ծիծաղ մը: «Արդ, այդ կիրն մահուան ու զժոխքի դուռ բացեր է անոր գլխուն վրայ, եւ ինքն ալ տեղի տուեր է, սա մեր հինէն զիտցած Գաղերիոս հօրեղբայրը: Հա, հա, հա, նոյնիսկ աղաչել տուեր որ քրիստոնեաները իրեն համար աղօթք ընեն իրենց Աստուածին — հա, հա: Այս կիրն ինձի յանձնուած է, եւ հիմա բանտին կամարին տակ «Դորմի Պիղատոսի» (\*) կ'ուսուսմասիրէ, սա վերը քանդուած քրիստոնէական եկեղեցիին նկուզին մէջ, ուր շատ ուրիշ բանտարկեալներ ալ կան — ամբողջ ջուրը մը այդ զոռելի, գանելիք բաներէն — այս էջերէն — ե. իշու գլուխ պաշտօններէն — այդ վատասերած մարդոցմէ — օ, չեմ գիտեր, զեռ ինչ անպատիւ անուններ տամ այդ խաւարի վիժածներուն, Լիկիրնիոս: Ճիշտ այս պատճառով վատահոթիւն չունիմ Կոստանդիանոսի վրայ, որովհետեւ ան կը պաշտպանէ այդ վոհմակը — կը ձգէ որ անոնք եկեղեցիներ շինեն, հաւաքուին, ժողով գումարեն, ինչպէս ան իր ծեր հայրը, Քյորոս արդէն ըրաւ: Լիկիրնիոս ուշադրութիւն բրէ: Ամէն ինչ նենդութիւն — Ամէն ինչ յատուկ գիտաւորութեամբ զործեր: Կոստանդիանոս կը կարծէ թէ քրիստոնեաները պիտի յաղթեն, ուստի կ'ուզէ անոնց աչքը մտնել: Զինուորները իր քովը կը մնան, նոյնիսկ իրրեւ քրիստոնեայ: Անոր կը հաւատան ա-

(\*) Անվանք գրուածք մը: Լուսնալիմոսի կը վերագրուի այդ «Դորմի Պիղատոսի» գրուածքը, որուն նպատակն է Յիսուսի յանցաբարտութեան ապացոյցները սուս քերել: Այդ գործը Քրիստոսի հասցէին կը պարունակէ հեզմութիւններ եւ ամէն տեսակ արհամարհանք եւ հայտնաբերումներ:

նոնք, իբրև Աստուծոյ մը, Լիկինիոս: Մենք պէտք է քրիստոնեաները հարածենք, որովհետեւ ան կը պաշտպանէ զանոնք — մենք պէտք է հեթանոսները բռնենք եւ անոնք աւելի ալ են թրւով»: — «Շատ կը բաղձանան, սա քրիստոնեաները», յարեց Լիկինիոս, կասկածով: «Այո, բայց շարունակէ, Լիկինիոս, դեռ ի՞նչ ըսաւ»: — «Թէ ան» — «Թէ ան» — «Թէ՞»: — «Ախ, աղէկ կողմէն առ, Մաքսիմինոս: Միշտ կը զրդուիս, շատ կարեւորութիւն կուտաս ամէն բանի»: — Այդ միջոցին գերիները եկան եւ զսչեցին. «Ընքնակալ Մաքսիմինոս, աստուած մեր մեծ, զո՞հր պատրաստ է»: Մաքսիմինոս ցատկեց, որչափ որ թոյլ կուտար իր սրբաբար, եւ երկու թեւերը տատանելով մերժողական շարժումներու ձեւով, թուփերուն մէջտեղ անյայտ եղաւ հսկայ ու փարփուն ամառնային թռչունի մը պէս:

Լիկինիոս վայրկեան մը կեցաւ, անոր ետեւէն նայեցաւ զուխը երեքնելով: «Իրաւունք ունիս, Կոստանդիանոս — սա Մաքսիմինոս բտուածը ինքնահաւան, դատարկամիտին մէկը վաւաշտուութեան եւ անարտօթեան հրէջ մը: Աստուածներէն, սատանաներէն, ողիններէն, մարդոցմէ, կենդանիներէն հաւասարապէս վախոցող գերի մը կը կոտաւարէ հոմէական կայսրութեան կէսը — տախտակալ ըլլալիք բան չէ: Մաքսիմինոս զինուոր մըն է — բայց ոչ վեհապետ — ո՛չ: Կոստանդիանոս եւ Լիկինիոս, մենք երկուքս —»:

Լիկինիոս հրաշալի դարաստանին մէջ բոլորտիքը նայեցաւ եւ կողմնակի ճամբայ մը դարկաւ, որ դարաստանին ձախ կողմը կը տանէր, բարակ եւ շատ ամուր զլանուած աւաղին վրայէն, միջին մեծութեամբ տօսարներու միջեւ, ծովէն հեռի խոշոր լայն աղեղնածեւ կորութիւն մը կտրելով: Պուրակի մը ետեւի մասին մէջ բացավայրի մը վրայ կը բարձրանար բոլորչի շինուածք մը, որ անակնկալ մը եղաւ Լիկինիոսի համար: Ի՛նչպի հոն ուղղեց քայլերը: Անասուններու սուր հոտ մը դարկաւ քիթին: Պահապաններ, անընտանի, խոշոր, ոսկրուտ սղաք, թխաղէմ, սևադուրկ մտղերով, մութ աչքերով, ծուռ քիթերով, կարկառուն շրթունքներով, կոշտ, աղոտ, անթեւ պարեկօտով, Լիկինիոսի հանդիպեցան, եւ ճամբուն վրայ շուներու պէս յարձակեցան, բայց Լիկինիոս նշան բրաւ որ կենան: Անոնք հարկ եղած տեղեկութիւնը տուին եւ տարին զինքը Գաղերիոսի արջանոցը, ուր արդէն զոհերը կը մեռնէին, եւ Մաքսիմինոսի գայլն ի վեր դարձեալ զրեթէ ամէն օր կիսամեռ մորթուած արջեր կը կերցնէին քրիստոնեաներուն: Լիկինիոս արջնոցին եւ արջադուստրին առջեւ էր արդէն: Վանդակներուն ետեւը կը կենային կամ կը վազէին արջերը այս ու այն կողմ, արջնոցին մէջ չորսական արջ: Հուժկու, խոշոր անասուններ: Իւրաքանչիւրը իր անունը ունէր: «Երեք ամէնէն մեծերը Ինքնակալին սիրականներն են», պատմեցին պահապանները. «Աւոյոս-

տոս, Յուլիոս, Ուրսուլա: Ամէն օր կ'այցելէ անոնց եւ յաճախ երկարօրէն ալ կը խօսի անոնց հետ: Ամէնէն լաւ պատասները կը խոստանայ անոնց եւ կուտայ անունները այն քրիստոնեաներուն որոնք ճարակ պիտի ըլլան արջերուն»: — «Աւոյոստոս, այս առտու կանուխ լաւ կերեր ես, չէ՞», ըսաւ պահապաններէն մէկը խնդալով եւ բերանը լայն բացած ծամառութիւններ բրաւ արջուն: «Բերնիդ հա՞մ տուաւ, կեսար»: Կեսար արջը սպուշ սպուշ կը նայէր պահապանին, ահագին զուխը կ'օրօրէր տառալով եւ երախը կը լիզէր լեզուովը ամէն կողմ: «Համը բերա՞նք մնաց, Ուրսուլա», խնդալով ըսաւ դարձեալ պահապանը: Լիկինիոս կը զգար որ պող սարսուռ մը կ'ընթանար կոնակին մէջ: Բնաւ մինչեւ այն ատեն չիմացած զող մը բրտնէ խօսք կտրելով, գտնուելով, ձեւեր բնելով, խառնակօրէն կը պատմէին ձեր կիներու մասին, որոնք բնականաբար այլեւս չէին կրնար արջերուն հետ պարել, մատաղատի ազդիկներու մասին, որոնք պարտաւորուած էին սրբել Աւոյոստոսին հետ, այնքան դառնալ ու դառնալ, մինչեւ որ իրենց մտղերը անիւի մը ձեւը ստնէին: — «Բայց ի՞նչպէս ալ խնդալով կրնան պատմել այս վարձուրելի բաները, ի՞նչպէս կրնան խնդալ երբ արջերը չէք պառաւնեւուն եւ ազդիկներուն գանկերն ու կուրծքերը կը խորտակեն, ու անբան կենդանիներուն տակ անոնց ոսկորները կը ճարճաւին: — Սա մարդկային կերպարանքով սատանաներուն նայէ — սա՛, չեմ զիտեր ինչպէս որակեմ —» — բայց ի՞նչ պատահեցաւ որ ահա լեզապատտ կը փախչին բոլոր պահապանները: — Լիկինիոս, ամբողջ կութեամբը սարսափահար, շրթէ անդիտակցարար, այս մարդոց հանդէպ զայրոյթով ու զրուանքով յանկարծ սոսորուած, ամէնէն մօտը գանուողին որ բերանն ու ակոսները բացած հեղեղով ու ծիծաղելով կը պատմէր, թէ ինչպէս ինքը ամէն անգամ զժուտը կը զսպէր իր տոփանքը երբ արջը կանացի զոհերը կ'ուտէր, բունեցքի փառաւոր հարուած մը իջնուց որ արեւնը քիթէն ազրիւրի պէս սկսաւ վազել: Լիկինիոս մէկէն ի մէկ միմեակ կեցած էր արջանոցին առջեւ, փախող փախողի միւսները: Եթէ իր տէգը քոյր եղած ըլլար: Արջերէն ո՛չ մէկը այսօր այլեւս կ'ապրէր: Այդ բոլորին կ'ուզէր ետ դառնալ միեւնոյն ճամբէն, երբ Մաքսիմինոս բնկերակցութեամբ մէկ քանի քուրմերու զիմացը ելաւ: «Օ, զո՞ւն ես զո՞ւն — ջերմեռանդութիւնդ բռնէր է — սիրեցեալս — Ասիկա իմ ամէնէն սիրած բնակավայրս է, իմ զրօսական սիրուն պարակը», զուրեց Մաքսիմինոս, Լիկինիոսի կողմը դարով: Իր հետեւորդները ձերմակ շողողուն պարեկօտներով քուրմերը, ետեւ մնացին Մաքսիմինոսի նշանին վրայ, եւ կամաց կամաց ալ կը հեռանային: Մաքսիմինոս շատ զոհ եւ ուրախ էր: Բարձրահայեաց կեր-



պարանքը իրօք աստուածանման: Հսկայ քայլերով փութաց մօտենալ  
Լիկինիոսին: «Նշանները անպիտան են, բնակիք չկայ: Կոստանդիանոս  
բարեմիտ ու անկեղծ է, նմանապէս Լիկինիոս»: Այս վերջինը չէր  
կրնար արդիւիւ որ ուրախութենէն ճատագայթող Ինքնակալը իրեն  
վրայ նետուէր, վարէն վեր գրկէր զինքը եւ ծոծրակը համբուրէր:  
Լիկինիոս կը զգար անոր տաք շունչը որ պարանոցէն մինչեւ կոնակը  
կը փչէր: Զմայլելի անուշահոտութիւն մը կը բուրէր Մաքսիմինոսի  
մազերէն ու մորթէն եւ հաղուստներէն, ամէնէն առաջ ձեռքերէն,  
որոնք գրեթէ Լիկինիոսի ամբողջ դէմքը կը ծածկէին: Զարհուրելի  
զարշանջի մը զգացումը տիրեց Լիկինիոսի: Ոչ մեղմ ստուսմով մը  
հրեց իրմէ Մաքսիմինոսը եւ բաւ բրտորէն. «Ձեզ, հեռանամ աս-  
կէց»: -- «Բայց Ի՞նչու, սիրելիս: Թող հոս կենանք քիչ մը մինչեւ որ  
ուտելու ժամանակը գայ: Պահապանները բազմոց կը բերեն արջնո-  
ցէն: Ներսէն գացիր այցելեցի՞ր, տեսա՞ր մեր արջնոցը: Եկուր»: Լի-  
կինիոս կտեսնէր զնոց սկիւմայ: Օղբ, արջերուն եւ իրենց քաղերուն  
հոտէն լեցում, Մաքսիմինոսի ալ բուրմունքով խառնուած, կարծես  
պիտի խեղդէր Լիկինիոսը: Փսխելու պէս բաներ մը եղաւ: Աչքերուն  
արցունք եկան: Զուրբ բերնին մէջ շատնալով չէր կրնար խօսիլ:  
Կուզէր ուժով բլլալ եւ դիմանալ: Լսեց իր բարեկամին քանի մը աղ-  
տեղի կատակարանութիւնները, տեսաւ, թէ ինչպէս ան այս սո-  
տըան գոհերուն պարեկօտներն ու շապիկները մատներուն ամենա-  
յետին ծայրով վեր տաւ, հոտոտեց, յետոյ թուրք կլլեց համով  
հոտով, տեսաւ, թէ ինչպէս ան Ուրսույան, իր սիրական մատակ ար-  
ջը, կը շօշափէր անխայիւ, անպարկեշտ ձեւով, եւ կը հոտուրտար  
ձեռքը արմատէն սկսեալ մինչեւ սոփորականէն աւելի երկայն միջնա-  
մատին ծայրը — անկարելի էր որ դիմանար Լիկինիոս այս տեսարա-  
նին: Մէկ ցատկելով դուրս ափ առնելը չյաջողեցաւ: Փսխեց, եւ  
դուրս տալու ատեն իր արձակած ձայներուն մէջ կը լսուէր նաեւ  
Մաքսիմինոսին բարձր, գրեթէ կնոջական ծիծաղը: Սոյլ մը անոր  
կողմէ — եւ ահա պահապանները պոչ խաղցնող կատուներու պէս ան-  
կիւններէն ցատկեցին եկան: Լիկինիոս, ինք ալ չզիտցաւ ինչպէս  
արայօրէն, պատշարակ մը գրուեցաւ եւ փոխադրուեցաւ: Գարատ-  
տանին հրաշալոյս ծաղկաւէտ աշխարհին մէջ առաջին խորունկ շրն-  
չառութիւնը նուարումէ պահպանեց զինքը: Պատգարակին կտեւր ան  
կը լսէր շարունակ Մաքսիմինոսին խնդալու ձայնը: Այ անկարելի էր  
ինչզիները գոպել եւ անյայտ եղաւ:

Պարզուի ճաշ մը կը միտցնէր զանոնք եւ ուրիշ բազմականներ,  
քուրմ, խորհրդական եւ սպայ: Լիկինիոս յանջափա արհամարհանքով  
կը տեսնէր այս «կապիկ»ին յոխորտար, իր սեղանին հանդերձանքը,  
պնակները, գատաթները — ամէն ինչ գուտ, ծանր սակիւ: Լիկինիոսի

բնական ու ճշմարիտ մնացող ճաշակը, հուրկան տրամադրութիւնը  
հիմա ամէնէն աւելի կ'ըմբռնէր այս բացարձակապէս ապականեալ,  
վատթարացած մարդուն եւ վախի ու անխտահութեան վրայ հիմ-  
նուած անոր կրօնէին միջեւ գտնուած հակասութիւնը: Որեւէ պատա-  
ռի ձեռք զպցնելէ առաջ, Մաքսիմինոսի կտեւր կեցող ներքինին պէտք  
էր Ինքնակալին ձեռքերուն վրայ թափէր զո՜հին զինին, մէջը պատառ  
մը միտով: Նաեւ սակեկուռ եւ մարդարտայեռ բաժակէն ուժայ մը  
կուլ շտուած, մատուակը պէտք էր աստուածներուն համար զո՜հի  
ըմպելին թափէր նոյն բաժակէն ետտանիի մը վրայ գտնուած փա-  
ռայեղ շքեղ ամանի մը մէջ: Լիկինիոսի որքան զուանք կը պատճա-  
ռէին այս ներքինները, կիսամերկ, թափանցիկ շղարչէ շապիկներով,  
իւզոտուած զլուխով, յարգարուած, օծուն գանդուրներով շարուած  
աղջիկներու վայել զէմբերով, Երկայն թարթիչ կեղծաւոր վայրա-  
հակ աչքերով, քածի կամ օձի հանդուսաւոր շարժումներով, երբ  
ուտելիք եւ խմելիք կը հասցնեն, Մաքսիմինոսէ կը գրկախառնուին,  
կը զգուեն կը համբուրեն զայն, անոր առջեւ կը քնին, կը ձգեն որ  
ան շօշափէ գրեներք, փայփայէ, կամթէ, ճնշէ, եւ Երախտադէտ ու  
Եղջանիկ կը նային վեր անոր, կամ խողտանքէն, հեշտանքէն կուլան,  
Երբ ան իր մերկ ոտքերը անոնց երաստանին վրայ դնէ եւ ուտելէն  
հանդիլ: Բոյրը հիւրերը հաճոյք կը զգան խողտումներէն, զզուանք-  
նէրէն: Լիկինիոս պատկառելի շարժումով մը նշան բրաւ իրեն մօտե-  
ցող առաջին ներքինին որ չմօտենայ իրեն:

Կէս օրէ վերջ Մաքսիմինոս քնացաւ, յոյնած, երկար: Լիկին-  
իոս ալ իր հիւրասենեակին մէջ ինկաւ բազմոց անկողինի մը վրայ:  
Բայց քունը չէր գար: Իրեն այնպէս կուզար թէ ցուրտէն կը դողայ:  
Յաճախ, պահ մը ամբողջ տունը կարծես կը բարձրանար, կամաց  
կամաց կ'իջնէր, դարաստանը կը ճնշէր եւ դէպի ծովը երթալով կ'ըն-  
կրզէր մէջը: Պատուհանին առջեւ երթալը բռնեց: Նիկոմիդիա կի-  
սաւորի մէջ կը դարէր, նմանապէս ծովը: Երկինքը ամպոտ էր: Մեկ-  
նումի փափաք մը եկաւ իրեն: Տեսակ մը անձկութիւն կը ճնշէր զին-  
քը: Ի՞նչի կարող չէր Մաքսիմինոս, որպէսզի իր պետութենէն եւ  
եկամուսներէն բան մը շանցնի ուրիշին: Կոստանդիանոսէն կը վախ-  
նար, բայց այդ վեհապետին անձը մօտէն ճանչնալով, Լիկինիոս իր  
վախը կ'ըմբռնէր թէ ինչէն առաջ կուզայ: Միբանի մէջ առիթ ունե-  
ցած էր ճանչնալու Կոստանդիանոսի մեծամեծ առաւելութիւնները  
միտքի, կամքի, զիտութեան, ինչպէս նաեւ խորամանկութեան եւ  
ճարտարամտութեան տեսակետով: Անոր հետ հոն ունեցած հանդի-  
պումը բոտ բաւականին առատօրէն յայտնած էր այս պարագան: Լի-  
կինիոսի միակ յոյսն էր իր զինուորական ձիրքը եւ կրնար հաշուել  
նաեւ իրեն հաւատարիմ մնացող քաջամարտիկ լեղէններուն վրայ:

Մաքսիմիանոս անբարոյական զղուելի մըն էր, պայթելու չափ անմէջ: Երկուքին միջև ընտրութիւն ընելը խնդիր անպամ չէր արժեր: Ուստի վերադարձ, զէպի տուն: Եւ կարելի եղածին չափ շուտ: Այս իրիկուն զբօսանաւով ծրարուած ծովային ճամբորդութիւնը — Ատիկա չըլլար այլեւ: Գինի՞ն արդեօք — թէ ուտելիքը: Լիկինիոս բազկերակը բռնեց: Գլուխը կը դառնար: Խորունկ շունչ առնելով ներս կը քաշէր դուրսի օդը: Գարատանին մէջ, անդին հեռուն, ժուռ կուզային երկու կիներ, իրենց մէջտեղը երիտասարդ մը: Գունատ, նիհար, տարիքատ, թուոված կը թուէին: Երիտասարդը ձերմակ մաղերով կինը կ'առաջնորդէր, թեւը մտած: Եռանդով կը խօսէին, յաճախ կը կենային, ծառերու եւ մացառոններու ծակերէն դէպի ծովը կը նայէին, կարծես կարօտով, նաեւ մը ժամանումին սպասողներու ձեւով: Լիկինիոսի աչքերը երթալով աւելի հետաքրքրութեամբ կը դիտէին այդ երեք կերպարանքները: Ձերմակ պարեգօտներով սեւամորթ զերիներ հեռուէն անոնց կը հետեւէին, երբեմն տեսանելի, երբեմն թուփերուն մէջ, երբեմն ալ ծառերուն ետեւը պահուրտած: Ասիկա ի՞նչ կրնար ըլլալ: Կրկէ՞ս: Չո՛հ — Լիկինիոս աչքերը բռնեց — Մաքսիմիանոսի ցանկական կիրքին զոհէ՞ր:

Լիկինիոս հանդարտեցաւ նորէն: Եկան կանչեցին զինքը ծովային ճամբորդութեան համար: Ու զնաց: Այս մարդէն լի լինալ: Արդէն կ'ուզէր նաւը աչքէ անցընել: Ղեկավարին մէն մի շարժումը դիտել: Մաքսիմիանոս չէր կրնար մեռցնել զինքը: Աս ճիշտ է: Իր վախը Կոստանդիանոսն է: Լեռ, ծով, ցամաք, երկինք, ամէն ինչ մութ, ծանր մանիշակագոյն, երբ թեթեւաշարժ առադասաներով փառաւոր նաւուն ճամբորդները հանդարտ ծովով մը ներս մտան: Շատ խմեցին, շատ կերան, շատ խնդացին, շաղակրատեցին, զղուելի բաներ ալ ըսին ու ըրին Լրիկ մարդիկ, աղջիկներ եւ ներքինիներ — բայց աստուածները նորէն ողորմած էին: Մաքսիմիանոս իր իսկ ձեռքով նաւուն ծայրէն ամէնէն աղէկ զինիէն ծովը թափեց ի պատիւ Պոսիդոնի եւ բոլոր աստուածներուն իր, Լիկինիոսի եւ նոյնիսկ Կոստանդիանոսի անունով: Լայն, երկայն իրիկուն սեղանը պատրաստուեցաւ հանդիսական սրահին մէջ: Սենեակները քաշուեցան եւ հագան տօնի յատուկ պարեգօտները: Հետզհետէ սրահը լեցուող հիւրերուն մէջ Լիկինիոս, որուն ի պատիւ էր այդ երեկոյթը, նշմարեց, շատ չանցած, երեք հոգի, իսկոյն ճանչցաւ թէ ասոնք պարտէյին մէջ տեսածներն էին: Մարդկօրէն սակայն կարելի՞ էր այս: Գաղտնիքը այս՞ էր արդեօք: Մաքսիմիանոս ասո՞ր ալ պիտի յանդգնի եղեր: Բայց իրօք անո՞նք են: Լիկինիոսի ներսէն եկաւ այնպէս մը ընել որ անոնց հետ դէմ առ դէմ դայ: Ուստի բրաւ չըրաւ, իրեն հետ եղող ընկերներուն հետ քանիցս սրահին շրջանը ըրաւ այն ուղղութեամբ, ուր պիտի

կրնար հանդիպել երեքին: Իրարու մօտ եկան: Իրարու խոնարհութիւն ըրին աչնուական ողջոյնով, բայց ոչ զերիներուն ըրածին պէս, ոչ ալ բացառիկ բարեկամական ձեւով, աւելի իշխանաբար, եւ դարձան զացին իրարու քոյլ: Անոնք էին: Լիկինիոս խոսիութեան ծփանքի մէջ ինկաւ: Դիտելուախոնարհ կիներ ու աղջիկը Պրիսկա եւ Վալերիա, եւ Գաղերիոսի առաջին ամուսնութենէն սենեցած զաւակը Կանդիղիանոս: Ճիշտ այդ միջոցին դուրսը բարձր դուռներուն առջև, կը գոռային փողեր, տափեր, թմբուկներ, ծնձղաներ: Ներքինիներն էին, մանկական ձայներով կ'երգէին սրբանուէր երգ մը իրրեւ ընդունելութիւն աստուածներուն: Իրարու ետեւէ ներս կուզային թափանցիկ, սպիտակաշող շղարչէ շաղկիններով, սեղանին դարձած բաց կիսաբլուրակ մը կազմեցին եւ միշտ երգ ի բերան նետուեցան զետին: Մաքսիմիանոս անոնց ետեւէն մտաւ կայսերական լիուլի տարադով, ճերմակ մետաքսէ պարեգօտով, որ ուսերէն վար բաց կը ձգէր թեւերը: Պարանոց, կուրծք ոսկիապատ, շողակնայեռ, մարդարտաղարդ: Քունքերուն շուրջ ապարօջը, կոնակին վրայ մինչև սրունքը վար ծիրանին բուրբան փետուրէ ճերմակ երիզներով: Սպիտակ սնդուսէ կիսախօշիկները ոսկեման խրացներով մարդարտաղարդ: Իր ետեւէն քրմապետը, քուրմերը մետաքսեայ նախորտներով եւ յարակից ոսկի զօտիներով, ամէնքն ալ ճարատ, անձօրուս, եւ ամէնէն վերջը բարձրաստիճան սպաները: Խլացուցիչ ցնձաղին ժխոր մը հիւրերուն մէջ: Ամէնքն ալ կուզային, ծնբարդութիւն կ'ընէին ճակատրնկէց խոնարհութեամբ կ'ուղջունէին կայսեր ստրիքը եւ կ'ողաղակէին. «Կողջունենք քեզ, Կայսր Գաղերիոս Վալերիոս Մաքսիմիանոս, Ինքնակալ մեր, Աստուած մեր»: Պրիսկա, Վալերիա, Կանդիղիանոս միայն չըրին այդպէս: Բայց ոչ մէկուն միտքէն կ'անցնէր կամ աչքի կը դարնէր, որովհետեւ ներկաներուն ամենամեծ մասը զիտէին անոնց ճակատագիրը: Մաքսիմիանոս անպամ պահանջուող չեղաւ այդ մասին: Կայսրը երեք անգամ իր բոլոր հիւրերով սեղանին թափօրը բրաւ: Յետոյ բազմեցաւ կարմիր սնդուսէ բարձրով գահոյքին վրայ: Խոր կապոյտ մետաքսէ աստեղապարզ երկինքով ամպնօվանի մը անոր վերեւ կր ստուերանար ոսկի ձողերով: Ներքինիները բոլորակ կը կազմէին գահոյքին շուրջ հանդիսաւորապէս երգելով, եւ սկսաւ սեղանը: Բրնականարար Մաքսիմիանոս այնպէս կարգադրած էր, որ Լիկինիոս Վալերիայի մօտ եկաւ նստիլ, եւ ճիշտ ալ գահոյքին ամէնէն մօտը: Աս ալ գաղտնիք էր: Տասր տարիներ անցած էին, յորմէ հետէ Վալերիա եւ Պրիսկա Նիկիմիդիայէն Աթէնք իրենց փախուստէն վերջ ապաստան գտած էին Հայր Լիկինիոսի մօտ, եւ Լիկինիանոսի կողմէ ամուսնական հետապնդումին վրայ փախած էին Մաքսիմիանոսի մօտ Լուկանիա, անկէց ալ սուրբական անապատը, անկէց ալ սովէն ու

կարօտէն մղուած քայքայուած, նիկոմիդիա եկած էին քրիստոնեաներուն մօտ, եւ իրենց զալը մէջտեղ ելլելով բռնեւ, յանձներ էին դանոնք Մաքսիմիոսի: Իրենց համար ցաւառիթ այս հանդիպումին հակառակ, Վալերիայի եւ Լիկինիոսի այս իրարու մօտ ըլլալը բարբի մըն էր դարձեալ: Լիկինիոսի լրջութիւնը եւ բնական բարեարտութիւնը քաջութիւն տուին Վալերիայի որ խօսի: Թէ ինչեր քաջեցին անպատին մէջ, սով, հիւանդութիւն, մահուան վտանդներ աւաղակներու եւ անասուններու կողմէ, թէ իրենց ազատութեան համար ի՞նչ հրաշալի ճամբաներ բացուեցան, թէ ինչ փափաքներով կարօտցան Հայր Գիովղէտիանոսը, թէ ինչպէս Կանդիլիանոս գիրենք փնտնեց գտաւ գրեթէ անօթի վիճակի մէջ գիշեր ատեն, եւ զարհուրելի փոթորիկի մը ատեն եւ անձրեւի տակ, թիչ մնաց պիտի խեղդուէին անպատի աւաղին մէջ — այս ամէնը Լիկինիոսի միտքին առջեւ այնքան կենդանի պատկերացաւ, որ հաղիւ կը լսէր ու կը տեսնէր իրեն շուրջ անցած դարձածը: Ոչ ոք կը համարձակէր խանդարել զայն: Եւ Մաքսիմիոս ուրախ էր իր նպատակին հասած ըլլալուն համար: Ի՞նչպէս: Այս մարդը այլեւս աչք չունի Վալերիայի համար, ձեռքն ալ անոր զպցուցած է: Քրիստոնեաներուն այս արիւնարբու ոտիին պալատին մէջ Պրիսկայի եւ Կանդիլիանոսի հետ կրնայ ան ազատօրէն եւ անարդել իր հաւատքը ապրիլ: Ոչ ոք կը պարտաւորէ զանոնք աստուածներուն եւ կայսեր համար զհասարակել: «Ըսածիս պէս է», ըսաւ Վալերիա կամացուկ մը: Լիկինիոս զլուրը վեր առաւ — չէր գիտեր ինչպէս եղաւ, — եւ երախտապէտ նայուածքով մը Մաքսիմիոսին նայեցաւ: Որ չհասկցաւ եւ խմեց այն միջոցին ի պատիւ հիւրի մը, որ զուսթ պարպած էր աստուած կայսեր համար, զովաբանութենէ մը վերջ: Այս առիթով էր որ անոր ծփուն նայուածքները կը յառէին հանդէսին վլլուքին, երփներանգ արդուարդերուն չքեղութեան, այն լուսացնուղ, պսպլուն, աղմկայոյց, ծիծղուն, ջերմազին կեանքին, ուր բաց է բաց գիւրար կը գրկէին, կը սիրէին, կը համբուրէին: Եւ կայսեր սպնդանման, անմիտ, անբանացած երեսին մէջ բոյն դրած էր վաւաչտութիւնը ինքնին, ծուղակ լարող կանխապիտութիւն մը կը ցուցադրէր ան: «Ամէնէն աղկը կուղայ հիմա»: Ատենն էր աղանգերի սեղանին: Ճաշասեղանը վերցուեցաւ, սեղանը մասերու բաժնեցին եւ առին տարին: Աղանգերի յատուկ բաղմոցները բնական անկարգութեամբ մը սրահին մէջ տեղաւորուեցան, մէն մի երկուքի համար մէկ եռոտանի սեղանիկ գաւաթներով, սրուակներով, բիւրեղներով, ոսկի եւ արծաթ սրուակներով, որոնց մէջ կային չամիչ, նուշ, արմաւ, կարկանդակ եւ բաղմազի շաքարեղէններ, քաղցրաւենիներ: Երաժշտութիւնը երթալով աւելի մտերմական, դաշն, օրօրուն, զգուանոյշ, յատկապէս հեշտազին կ'ըլլար: Այլեւս չէնց-

ուեցան լոյսերուն յատուկ իւզի ամանները: Մեծ ջահերուն սնունդը սպառելով՝ մարելու վրայ էին: Բարձր աշտանակները միայն կը դարմանուէին, իրենց փողփողենէջ լոյսերը կանանչ, կապոյտ, կարմիր, դեղին կամ բազմերան, ամօյն արդեւակներով բարեխառնուած:

Լիկինիոս եւ երեք քրիստոնեաները բան մը չէին տեսներ սկսող կերութեամբ: Անոնք թեթեւ վերարկուններով ծածկուած ման կուգային այդ միջոցին զարաստանին մէջ: Լիկինիոս եւ Վալերիա առջեւն: Պրիսկա եւ Կանդիլիանոս անոնց հետեւն: Եւ ասոնց հետեւն աննշմար պահապանները իրենց սովորական դադանի ճամբաներէն: Կիսապայծատ, գազ վիշեր մը զարնանային: Արծաթագորշ երկարակոյտ ամպերու երկյներու միջեւ կանդնած էր կէս լուսինը: Գաղջ հովեր կը շնչէին ծառերուն եւ թուփերուն մէջէն: Հանդիսարահէն արձագանգող ծիծաղներ, լարուսր նուագարաններու եւ սրինդներու զուսպ ու մեղմ խաղեր: Երբեմնակի կ'երեւան կիսադիմային կերպարանքներ բաց պատուհաններու առջեւ: Հիւրեր որոնք կ'ուզեն զովանալ գիւնիէն ու պարէն: Լիկինիոս եւ Վալերիա ահա արդարեւ երկու ժամերէ ի վեր խաչածեւ ու շեղ ման կուգան զարաստանին մէջ, մեկուսացուած ճամբաներէ, հրապարակներէ եւ սրուակներէ: Անոնց կը հետեւին հաւատարմօրէն մայր եւ խորթ որդի, հաւատարմօրէն նաեւ պահապանները: Սիրոյ սաստիկ կիրքը չէր որ Լիկինիոսը կը տողորէր Վալերիայի հանդէպ, այլ աւելի, բուն ցանկութիւն մը գէպի մաքուր, բարի կին մը, գէպի անոյշ, անաղմուկ քնտանեկանութիւնը, եւ նոյնքան ալ լուրջ հոգածութիւնը Վալերիայի եւ անոր մօրը ապագային համար: Այս պատճառաւ իր այս ահա երկրորդ հետապնդումը կամ տեսակ մը թեկնածութիւնը Վալերիայի շուրջ խօսքով թէ կայջով, բոլորովին հանգարտ ու անխոտ էր եւ խոհական ու զոռչաւոր: Հանգարտօրէն մաշի կ'ընէր անոր ատորկութիւններուն եւ կը ջանար ջրել զանոնք: Վալերիա Մալօնէի մէջ մինակ մնացած հայրիկին տխուր վիճակին իրազեկ էր: Իրենց ապագային վրայ մտածումը ստրտափ կ'աղկը իրեն: Կը հաւատար Լիկինիոսի հաւաստիքներուն, թէ պիտի մնայ քրիստոնուհի, նմանապէս մայրը եւ որդին, եւ կը հաւատար թէ Լիկինիոս ամէն բան պիտի բնէր իրենց ազատութեան համար: Մէկ արդեւայ կար միայն. Լիկինիոս չէր կրնար քրիստոնեայ ըլլալ: Կատանդիանոս քրիստոնեաներուն բարեկամն էր: Լիկինիոս եւ Մաքսիմիոս պէտք է հեթանոսները շահին: Եւ նորէն սկսաւ թեր ու գէմը Քրիստոսի, Վալերիայի խանդավառ հրախառնուածութիւնը, այնպէս որ Լիկինիոս զմուսարաւ կրնար խօսիլ քրիստոնապաշտպան այդ խանդին առջեւ, եւ ի վերջոյ անբարբառ, անձուէր, աւելի մտահոգ քան բարկացող, անոր մօտէն կը քալէր: Դարաստանին մէջէն դարձգարձիկ քնացքով եկան կրկին մօտը բազեղով, թուփերով,

տօսախններով եւ մոռաններով աճումնաձիգ բարձր պատին, որ դա-  
րաստանը ներսէն կը փակէր: Անկէջ շատ քիչ հետի, պատին միւս  
կողմը քրիստոնէայ եկեղեցիին աւերակները: Վալերիա կեցաւ գիտեց  
ուշադիր: Ամէնքն ալ իրեն պէս բրին: «Ի՞նչ կը լսես, Վալերիա»,  
հարցուց Լիկինիոս հետաքրքրութեամբ: «Ազէկ մտիկ բրէ: Կը լսե՞ս»:  
Դաչն ու մեղմ, կարծես հետուէն եկող երգ մը կ'իմացուէր: Անձայր-  
օրէն հանդիսաւոր, սրտատու: Թաւարուն, ալեծածան, վեր ու վայր:  
Անձնուրացութեամբ, խաղաղութեամբ զեզուն, մերթ վերքմբերձիկ,  
հզօր, խաղաղաւէտ: Հիմա խորունկ, մրմնջող ձայներ: «Քրիստոն-  
եաները», հօժեց Վալերիա, զգացում: «Ո, տայր, հոն բլլայի: Արդ-  
եօք կուզա՞յ Լախոպոս կամ քրիստոնեաներէն մէկը»: — «Ո՞ւր»:  
— «Հոն, սա եղեւինին մօտ փանդակապատին քով, հոն: Կը սպա-  
սենք: Օ, Լիկինիոս, բարի եղիր, թող սպասենք հոս, կ'ազաշենք քե-  
զի, թող մենք առնենք Լախոպոսին միւթաբութիւնն ու օրհնու-  
թիւնը: Մի մտաներ մեզ: Պահապանները գիտեն եւ թոյլ կուտան»: —  
«Այդպէս թող բլլայ: Ի՞նչ փնտս կայ ինձի: Ես ձեզի համար կը վախ-  
նամ, Լա հոս կը սպասեմ»:

Երեք քրիստոնեաները ձեռք ձեռքի խիտ թուփերուն մէջէն ու-  
րոշուած տեղը քաշուեցան, հոն կեցան սրտաաւրտի եւ կը սպասէին  
աղօթելով: Ի՞ գուր: Ոչ Լախոպոս կ'երեւնայ ոչ եղբայր մը, վերը  
փանդակափեղկին առջեւ: Լիկինիոս վեր վար քայլեր կ'առնէր, ու-  
ժովցած, յանդէս իրեն: Հիմա, մինակ թողուած, ինքզինքը դարձ-  
եալ շատ նեղուած կը զգար: Քրիստոս կ'ատէր ու կը ցանկար Վա-  
լերիայի: Արդէն իր սէրը — խորունկ, հուժկու սէրը խորտակած էր  
Քրիստոս: Յետոյ ան ո՞ւր մնաց: Ո՞վ կրնար գայն ապատել, երբ ան  
անապատ, թշուառութիւն եւ մահ կը փնտսէր: Արտինձն արդեօք  
ուր մնաց: Ա՞ն ալ քրիստոնէի: Ա՞ն ալ այդ Քրիստոսէն գիւհար:  
Ա՞ն ալ փճած է մերձեկ Ինքնակային ձեռքը եւ բոլոր երջանկութիւնը  
զոր Ինքնակայը հիմա կրնայ բնձայել իրեն, այս՛, մերձեկ, որպէսզի  
կարենայ մեռնիլ այդ խեղճ ողորմելի նազովբեցիին համար: Լիկին-  
իոսի մտածումները ծովէն անդին կը շուէին: Լիկինեան զգեակին  
մէջ ինք Լիկինիոս (երբեմնի անունով Լիկինիանոս, այժմ հօրը ա-  
նունովը յորջորջուած Լիկինիոս) կը տեսնէ անոր ճեմելը պարտկզին  
մէջ, տաւիղ ածելն ու երգելը: Հին մտածումներու մէջ խորասուզ-  
ուած, կը կենար հիմա ճամբուն վրայ, նոճի մը կրթնած: Չէր տես-  
ներ, ինչպէս պատին վրայէն ճեմակի գլուխ մը երեւցաւ, խօսիլը չէր  
լսեր, որովհետեւ հանդիսարահէն եկող նուազի ու տաւիղի մրմունջ-  
ները, եւ քրիստոնեաներուն աղօթելն ու երգելը կուլ կուտային ծե-  
րունազարդ Անդիմոսի տկար ձայնը: Նիկոմիդիոյ Լախոպոսն էր  
ան: Անոր ոտքերը կը կենային պատին առջեւ մեծ քարի մը վրայ:

Կուրծքն ու զլուխը միայն կը ցցուէին վանդակապատին վերեւ:  
Չայնը կը զողար. «Քրիստոս բնդ ձեզ, հաւատացեալք եւ խաղաղու-  
թիւն նորա»: — «Ամէն, ամէն», հօժեցին երեք քրիստոնեաները:  
«Ամէնքս ալ կազմ եւ պատրաստ ենք մեանելու: Հանդիսաւ եղէք: Մի  
լաք: Մենք ամէնքս ուրախ ենք: Կ'երթանք զէպի յաւիտենական  
կեանք: Մերիններուն մէկ կէսը այս իրիկուն կանչուեցան, չենք դի-  
տեր ինչ պիտի գայ անոնց գլխուն: Մենք ամէնքս ճարակ պիտի բլ-  
լանք կենդանիներուն»: — «Աստուած, Քրիստոս, ողորմի քեզի»,  
զոչեց Վալերիա: Լիկինիոս բուրբաբը նայեցաւ ուշադիր: Մերի մը  
խօսքը կ'ընէր Անդիմոս աճապարանքով: Չիտուրները այդ ճերանիին  
զացեր են, մտեր են անոր պատիկ պարտկզը, տնակը, եւ հարցուցեր  
են քրիստոնէայ Փոկոս մը: Փոկոս ներս առեր է զանոնք, պատուա-  
սիրեր է եւ խնդրեր է որ զիշերեն: Մինչ այն, ինքն ալ պարտկզին  
մէջ իր փոսը փորեր է եւ առաւօտուն խնդրեր է զինուորներէն որ  
սպաննեն զինքը կայսեր հրամանին համաձայն եւ իր փորած փոսին  
մէջ զնեն զինքը: Անանկ ալ բրին, որովհետեւ Փոկոս հարկադրեց  
զանոնք հարատակիլ կայսեր հրամանին: Լիկինիոս աւելի մօտեցաւ ան-  
նչմար եւ թուփի մը ետեւ սրահուրեցաւ, երբ Անդիմոս Փոկոս ծե-  
րունիին այս բրածը կը պատմէր երեք քրիստոնեաներուն:

Եպիսկոպոսը կը շարունակէր պատմութիւնը. «Հաղա խեղճ,  
խեղճ Դուկիտը: Դուք զիտէք, երիտասարդ զիւղացին, ամբուսինը  
Յուլիայի, որ քանի մը օր տուջ կրկնսին մէջ կտոր կտոր եղաւ կեն-  
դանիներէն: Տիրոջը յանկարծական երեւումին կը սպասէր եւ ամ-  
բողջ զիշերը շարունակ վեր երկինք նայելով աչքերը տկարացան:  
Միշտ կը զոչէր. «Եկուր, եկուր, Տէր Յիսուս»: Հիմա ան ալ Տիրոջը  
պիտի երթայ եւ կրկին պիտի զանէ իր կինը, նաեւ յաւիտենական  
կեանքը»: — «Օ, ինչո՞ւ ուրեմն Տէրը չի գար, Անդիմոս: Ինչո՞ւ ու-  
րեմն այս շարշարանքները: Ո՞ւր կը մնայ ուրեմն իր խոստումը: Օ,  
Լախոպոս, եթէ գայ սակայն: Եկուր ուրեմն: Եկուր ուրեմն, Տէր  
Յիսուս: Եկուր ի գատատան այս գարշելի աշխարհին վրայ», զոչեց  
Վալերիա, աի ի բերան բնելով ամէնքը: «Յիսուս, եկուր, Տէր Յի-  
սուս Քրիստոս, ալ բաւական է, եկուր ուրեմն, պատու կրկինքը, վար  
իջիր քու երկնաւոր լեզուններով: Գոչեցէք, ուսաննա ի բարձունս»: —  
Վալերիա բովանդակ ուժովը կը պոռար զիշերուան մէջ, Լիկինիոս  
կը զողար հաւատալով որ Վալերիա խելագարած է: — «Հնչեցէք  
ուրեմն ձեր նուազարանները, զուք գատաստանի հրեշտակներ: Ե-  
րեւցէք: Աստուածային բարկութեան բաժակները պարպեցէք: Երե-  
ւեցարուք, զուք հեծեալներ, զուք հնձոցներ — ահա կուգայ, կու-  
գայ ահա վախճանը — Ես գիտեմ»: — «Հանդարտէ — լուռ կեցիր  
Վալերիա», ձայնեցին միւսները: «Ան կուգայ: Ան պէտք է գայ»: —

«Ատրկա Աստուած միայն զիտէ, եւ ոչ ոք, Հայրը զիտէ», ըսաւ հանդարտօրէն Եպիսկոպոսը, միջանկեալ: «Ան կուզայ», կը ցնծար կը բերկրէր Վալերիա: Յետոյ յանկարծ Եպիսկոպոսին դառնալով: «Եւ տաւիդով հոյակապ երգչուհին, որ Գաղերիոսը զարմանեց, ո՞ր է ան: Ի՞նչ վիճակի մէջ է: Կորնելիա՞»: — «Այս իրիկուն ուրիշներու հետ կանչուեցաւ», հաղորդեց ծերունին, տխրութեամբ: «Ամէնքն ալ քաջալերեց: Նուազ անց եւ երգեց, մինչեւ որ կանչուեցաւ: Անբժշկուելի ուրախութեամբ կը ցնծար: Երկինքը բացուած կը տեսնէր: Նայուածքը եւ երեսը այլակերպուած: Ամէնքը կ'ըսէին. Այսպէս երգած, նուազած չէր բնաւ: Քաղաքին կէսը տխրեցաւ անոր համար»: — «Քրիստոս, Երեւոյր, Երեւոյր: Փրկէ զայն», զոչեց Վալերիա: «Լիկինիոս, այր Եղիբ, քրիստոնեայ Եղիբ: Փրկէ մեզ ամէնքս»: — «Ո՞ր է երգչուհին: Ո՞վ է ան: Ուրկեց կուզայ»: Երեք, չորս ոստումով Լիկինիոս թաւառաքին մէջէն դուրս եկաւ: Բայց կը շարունակէր Վալերիա. «Լիկինիոս, Ինքնակալ Եղիբ, այդ մարմնացեալ սատանան զահէն վար կործանէ: Փառք տուր Աստուծոյ: Քրիստոնեայ Եղիբ — Լիկինիոս: Օ, Լիկինիոս, քրիստոնեայ Եղիբ, փրկէ մեզ ամէնքս»: Եպիսկոպոսը սարսափահար եղաւ, երբ Լիկինիոսին անունը լսեց եւ Ինքնակալը տեսաւ: «Մնացիբ, ծեր, կեցիբ», որոտաց Լիկինիոս: «Ինձմէ որեւէ վտանդ չկայ: Պօսէ, աստուածներուն, ձեր Քրիստոսին սիրոյն ըլլայ, ըսէ. ո՞վ է երգչուհին: Ո՞ւրկեց եկաւ հոս: Ո՞ր է ան»:

Ծովեղբերքէն հոս մարդկային ձայներ լսելի եղան: Միշտ աւելի: Միշտ աւելի բարձր: Մեծէն սլաքիկէն կը թնդար խաղաղութեան ահալին աղաղակ: Եպիսկոպոսը փութով սլաքասխան տուաւ Լիկինիոսի. «Կորնելիա է անոր քրիստոնէական անունը: Նախապէս կը կոչուէր Արսինէ»: — «Արսինէ», զոչեց Լիկինիոս բարձրաձայն, «եւ կը բնակէր», «Կը բնակէր Աթէնք»: — «Աթէնք»: — «Ի՞նչ էր ան: Ի՞նչ կ'ընէր ան»: — «Հայ արքայորդիները կը նայէր ան եւ Միհրի քրմուհին էր»: — «Արսինէ, Արսինէ», զոչեց Լիկինիոս, ցնորածի նման: «Ազատէ Արսինէն, ազատէ զայն, Եպիսկոպոս»: — «Ե՞ս ազատեմ: Ի՞նչպէս: Ո՞ր: Քրիստոս թող ազատէ զայն եւ ամենակարող Աստուածը»: — «Եթէ Քրիստոս ազատէ զայն...» ձայնեց Լիկինիոս, եւ առանց այլեւս զիտնալու թէ ի՞նչ իստեցաւ, վաղեց հեռացաւ անկէց, առանց զիտնալու, ո՛ր:

Արջերը սկսան զոռալ մօտակայ արջնոցին մէջ: Քաղաքէն դուրս կրկեսէն հոս կը լսուէին առիւծներուն մոնչիւնը: Ծովափունքը մարդկային այիբը միշտ աւելի կ'աճէր, տիրող ժխորին նայելով: Եւ հիմա — միջանկեալ — հեռի, ինչպէս ծովէն հոս, բարձր երգեցողութիւն: Ձայն մը կը թափանցէր ջուրին վրայէն, կը թափանցէր

դարաստանին մէջ: Վալերիայի ծանօթ էր Երրը, վճիռ ձայնով մը ինքն ալ սկսաւ. —

Երբ Տէրը պիտի ազատէ Սիոնի գերիները,  
Մեզի երագ մը պիտի քուի:

Երկրորդ հատուածին Երզակից եղան բոլոր բանասերուած չքրիստոնեաները. —

Այն ատեն մեր ռէմբերը պիտի խնդան  
Եւ պիտի ուրախանան մեր լեզուները:  
Այն ատեն, հեքիանոսները պիտի բսեն,  
Թէ Եհովան մեծ բան մը ըրաւ իրեց,  
Եհովան մեծ գործ մը ըրաւ մեզի,  
Եւ այս իսկ պատմառով գոհ եմք մեմք:

Պալատին պատուհաններուն առջեւ, մինչեւ վերը տափարակ տանիքը, որ շատրուանով հանդերձ արմաւենիի պարտէզ մը կը ներկայացնէր, ամէն ինչ կը շողար պայծառօրէն: Գինով հիւրերը պատուհանները խուժեցին, տանիքի դարաստիկին Եղբը: Մաքսիմիոս մակոյկ մը հապուեցուցած էր լոյսերու, զոյներու, ծաղիկներու, պսակներու, արձաններու, դիցական պատկերներու ամենազղի հոյակապ շքեղութեամբ: Առջեւի կողմը կը բարձրանար բարձր, ճերմակ լսաչ մը, որ սեւ ծովին վրայէն ալ անդին կը շողար: Պաշտեցաւ մը կախուած էր վրան: Նաւը լսեցուն էր քրիստոնեաներով, ձեռքերնին ստրկերնին կապուած, ծանր քարեր կամ երկաթներ կը կախուէին անոնց մարմիններուն շուրջ եւ կ'իջնէին նաւուն յատակը: Մաքսիմիոս իր արբիւտ երանութեան մէջ կ'ընդունէր ամէն կողմէ զօրութեան աղաղակներ, երախտապիտութեան կեցցէներ: Ամէնքն ալ կը սպասէին ահաւոր զոռում զոչումի վայրկեանին, երբ յանկարծ, շատ հեռուն դուրսը ծովուն վրայ, քակուեցաւ նաւուն յատակը, եւ հեղձմահ եղան քրիստոնեաները: Նաւը միշտ կը յառաջանար: Լոյսերը կը կաշաւէին, բացխափիկ կը խաղային զիշերային ցոլացիկ սեւութեամբ ալիքներուն վրայ: Ծուխը կը պտուտակէր, զոչցես բարկացած, նաւուն ջահերէն զէպի վեր: Բաղմութիւնը անմտունջ կեցած ծովափը: Այլ աւելի լուս էին հիւրերը պատուհաններուն առջեւ, պատշգամներուն վրայ, տանիքին վրայ: Քրիստոնեաներուն Երզեցողութիւնը մէկէն ի մէկ վերջ գտաւ: Կորնելիա եւ իր տաւիգը վերջին անգամ յուած էր: Յանկարծուստ բեկուած հուսկ յետին շէտ մը ջուրին 'երեւ ցնցուած էր: Ո՛չ ճիգ, ոչ ճիգ: Լոռութիւն կը տիրէր, առիւծները միայն կը մոնչէին դեռ մերթ ընդ մերթ: Արջերը կը քրթմնջէին: Բայց անդին, դարաստանին մէկ ձայրէն միւսը, կը թնդային յու-

սախարուած Ինքնակալ Մաքսիմիանոսի սարսափելի հայհուռները: Լիկինիոս այս պահուն նստած էր փոքր մակույկի մը մէջ և թիափաբել կուտար այս կամ այն կողմը, ուր քրիստոնեաները ծովամոյն եղած էին: Բայց արդէն իսկ Կորնելիոս կը հանդէպ ծովուն յառակը, և ասուիլը փայտացած ձեռքերուն մէջ: Լիկինիոս ևս կը թիափարէ: Մէն մի վայրկեան կը կարծէ ջրասոյլ ըլլալ: Բայց, բացառոյն հեռատանէն կը հնչեն յետին թնդիւնները բանտարկեալ քրիստոնեաներուն թեթեաշարժ ջուրին վրայէն.—

Տէր, վերադարձուր մեր գերիները  
ինչպէս կը տանիս գետերը հարաւի երկիրը,  
Անոնք որ կը ցանեն արցունքով ուրախութեամբ պիտի  
հնձնեն:

Կը մեկնին և կուլան  
Եւ ազնիւ սերմեր կը տանին,  
Եւ կուգան ուրախութեամբ  
Եւ կը բերեն իրենց խորձը:

313 Ապրիլ 30 էր: Կիլիկիոյ ծովուն և ծովեզերքին վրայ, Միջերկրականի հիւսիսային արևելեան անկիւնը, ծովէն մինչև Տաւրոսի ահաղին պատր տարածուող ընդարձակ ցած գետինին, սակաւ ծառերով բայց արմտիքի և բուրդի բազմաթիւ արտերով Կիլիկեան դաշտադեղինին, արածող եզներու, կովերու և գոմէշներու լայնարձակ արօտներուն, մինչև հեռուները ցիրուցան փոքր զիւղերուն, զլիսաւոր քաղաք Տարսոսի վերև, իրիկուան զէմ տակաւ առ տակաւ ծովէն կը բարձրանայ մշուշը: Արևը կը մտնէր և կը ծածկուէր: Անտես կ'ըլլային հսկայ սարերը Տաւրոսի, Կասիոս լեռան և Ամանոսի ձիւնապատ բարձունքը Սուրբոյ մէջ: Կիւղնոս անշողարձակ կը հոսէր: Նորափթիթ նարնջենիներն ու կիարսնիները կանգուն կը հսկէին պող, թաց մշուշէն սքողուած: Կազամախիները ծանրորէն կը ցցուէին մշուշէն վեր, և ընկույթի ու ածալի ահաղին ծառերը իրենց ձիւղերը կախ կը ձգեն տխրազին: Պարիսպներէն ու անկիւններէն կը կախուին վարդերու զորդեր և փունջեր, և կը թողուն որ մշուշը վճիտ չիթերով երթայ նոյնանայ փոքր հեղեղատին, կոկոններուն մէջէն գետին կաթկթելով:

Բնութեան արամազրութիւնը կը համապատասխանէր Տարսոսցիներուն արամազրութեան: Անձկուտ փութով, լուրդելով, կանչելով, հայհուռելով և ի հարկին վարներով, էնկիւրիի այծերու և ոչխարներու հովիւները իրենց թրջած հօտերը արօտավայրէն կը քշէին դուրսը քաղաքին առջև փարախներուն և ախոռներուն մէջ: Լաստավարները, կիսամերկ անուպայ մարդիկ կապիկի ու դոմէշի երես-

ներով, սև մազերու և թաւաղէս կուրծքերու բաշերով, երկար ծանր թիակները վարող կիլիպեան ձեռքերով, մէկ անշամ ըլլալով այսօր իրենց հանդիսար վրդոված կը տեսնէին: Կանուխ այս առաւօտ կայտերական սուրհանդակներ, փոշելից, ջրանաթաթախ, թասուն նժույղներու վրայ, Տարսոսի դուռնէն դուրս կը ցատկէին ձեպրնթաց, եղջերափողեր փշելով, Ինքնակալ Մաքսիմիանոս Գաղայի անունը հրօշակելով բարձրագոտ, և կայտեր անունին վրայ յանկարծ գետնամած բնակիչներուն աւետելով, թէ Մաքսիմիանոս իր բանակով այս իրիկուն, զիշեր չեղած պիտի մտնէ Տարսոս: Բոլոր տուններն ու ախոռները, բոլոր նոյարեղէններն ու բմպելիները պէտք է կազմ ու պատրաստ ըլլան մինչև իրիկուն: Եթեմանասուն հազար հօգի հարկ պիտի ըլլայ կերակրել: Մանրակրկիտ շարշարանքներով մահապատիժ վարանողներուն և ևս մնացողներուն համար: Պատերն ու դուռները պէտք է լինուին, մաքրուին և բանակումի ամուր վիճակի մէջ դրուին: Լիկինիոս իր բանակով կը հետևի առտուածակերպ Մաքսիմիանոսին: Տարսոս պաշարման վիճակի մէջ:

Եւ ահա Տարսոս գարձաւ եղաւ մըջլիւննոց մը: Անբացատրելի է վաղքն ու սրարչար բնակիչներուն, խորհրդակալներուն, ստորակարգ պաշտօնատարներուն, սուրհանդակներուն. երթուղարձը, հրմըշտուքը, պոտայ կանչելը, նախատակած բառերը, հայհուռութիւնները զէզերով արմտիք բեռցած սայլերուն, պոտոյ ու խոտ բերող կառքերուն, որոնք իրարու մօտ կը բրգանան հեղեղատէ շուկան ու բոլոր բաց վայրերուն մէջ: Եւ ահա պատերուն, պարիսպներուն վրայ, դուռներուն առջև, որմնադիրներ, կահապործներ, քաղաքացիներ — հեթանոս թէ քրիստոնեայ — սմէն ինչ, սմէն սք, մշուշով պարածածուկ, հօգի պիտի տեսնելու կարող, խաժամուժ ամբարիտն պատճառու յաճախ գործելէ արդիւրած, և վերջապէս մինչև մտրթը հեղեղաման անձրևէն թաց խոտով գարձած: Ասիկա բաւական էր: Ստանալիս թիւն մը, բմրաստութեան պէս բան մը յանկարծ ծայր տուաւ սմէն կողմ և միաժամանակ: Քրիստոնեաները կը վախնային որ իրենց վերջին ժամը եկած է: Մաքսիմիանոս հետը կը բերէ ամբողջ արքունիքը, Պրիսկա, Վալերիա, Դիոկղէսի կինն ու աղջիկը, և Գաղերիոսի սրղին Կանդիգիանոս. առիւծներ և արջեր, իր սիրակալները: Որոնք պիտի փորձեն, թէ ինչ համ ունի Տարսոսի միտը: Այսպէս ըսեր է Մաքսիմիանոս — սմանց բերանը այս խօսքը կար: Ուրիշներ այ թէ կայսրը պիտի ինչայէ քրիստոնեաներուն, Քրիստոսէն վախնալով: Ամէն մարդ զիտէր որ Մաքսիմիանոս, Բիւզանդիոն, Հերակլէա, Պերինթոս քաղաքներուն փայլուն ցրաւումէն վերջ, Լիկինիոսի հետ զէմ առ զէմ եկած էր Պերինթի և Ազրիանապոլսոյ միջև: Լիկինիոս 30.000 հոգի միայն կը արամազրէր

Մաքսիմիլիան 70-000-ին դէմ: Բայց Լիկինիոս յաղթեց: Մաքսիմիլիանոս Նիկիոմիդիա փախաւ: Կապադոկիոյ եւ բոլոր արեւելեան դաւառներուն մէջ նոր զօրածողով եղաւ: Բայց Լիկինիոս շարունակ անոր ետեւէն ինկած էր: Ուր որ երթար, ամէն կողմ հաւատքի, կրօնքի կատարեալ ազատութիւն կուտար: Քրիստոնեաները կը պանծացնէին զայն իրրեւ ազատարար, եւ զացած տեղերը մեծ հանդիսութիւններով կ'ընդունէին զինքը: Մաքսիմիլիանոսի այլեւս ուրիշ բան ընել չէր մնար եթէ ոչ իր երկրամասերուն մէջ կրօնքի ազատութիւն տալ: Տարսնի մէջ զիտցուածը այսչափ էր: Այսօր խօսակցութեան նիւթ է եւ զատուցութիւնները ստանք էին: Տարսնոցի հեթանոսներուն համարանքը հանդէպ քրիստոնեաներուն շատ մեծ էր, այնպէս որ կայսեր հալածանքը ընդհանուր զիմադրութեան պիտի բախէր: Արդէն կէսօրէ վերջ շատ շանցած զիւզացիներ հեռուէն իրենց ուտեստեղէնի կառքերով եկած էին: Հեռուէն հեռու լսած էին թէ Մաքսիմիլիանոս կուզայ — սրտակտոր: Իր լեզէսնները կ'ապստամբէին եւ Լիկինիոսի կողմը կ'անցնէին: Փոքրիկ բանակ մը միայն կուզայ Նիկիոմիդիայէն: Թէ Մաքսիմիլիանոս հիւանդ է եւ պատգարակով պիտի բերուի եղեր: Ամբողջ քաղաքը լարուած սպասումի մը մէջ էր, թելի վրայ էր: Եթէ Լիկինիոս ետեւէն զայ յարձակի, անոր հետ պիտի ըլլան եւ Մաքսիմիլիանոս անոր պիտի յանձնեն: Ամէն մարդ անքուն կը հսկէր: Տղաքը թաց խիտմ կը սպասէին ըլլաւոր փողոցները, քաղաքին մուտքի դրան առջեւ, պարիսպին վրայ: Կէս զիշեր եղաւ, երբ երթալով շատ աւելի դաւառացիներ եւ զիւզացիներ քաղաքին առջեւ կուզային եւ կը խնդրէին ներս մտնել: Աստնք փախչողներ էին, ծեր, կին, տղայ, պատերազմի պատճառաւ փախչողներ, Լիկինիոսի եւ անոր բանակին առջեւէն: Լուր բերին թէ Մաքսիմիլիանոս մտերն է:

Սրտաթունդ բնակչութեան անմոռուն լուծեան մէջ Մաքսիմիլիանոս կէս զիշերէն վերջ զեւսպակով քաղաք բերուեցաւ սպաներուն կողմէ: Ամէնէն առաջ, երկու կողմի վրայ, զեւսպակին ետեւը կայսերական ձիաւոր, անձնապահ զունդը: Ասոր ետեւը, բարձրաստիճան սպաներու ընկերակցութեամբ Պրիսկան, Վալերիան, Կանդիդիանոսը, յետոյ կայսեր սիրական կիներն ու ներքինիները բերող կառքերը: Աստնք ալ ետեւէն — ինչ որ զգուանք ու բարկութիւն պատճառեց տանիքներուն, ծառերուն, պարիսպներուն, աշտարակներուն վրայ ցանկապատ կազմող հանդիսատես ամբոխին — արջերը քիթերինն օղակ անցուցած, որոնց վարիչներն էին ահազնատեսիլ Նումիդացիներ, բիրբերով տէգերով ու խարաղաններով զինուած: Ո՛չ մէկ արջ չէր մտածեր փախչիլ կամ ապստամբիլ: Սաստիկ անօթեցած եւ յողնած կ'երեւնային: Դժուարաւ կրնային թափօրին հետեւիլ իրենց շարքին, եւ ժամանակ առ ժամանակ կը ցատկէին ցաւէն պոռալով եւ վարիչ-

ներուն ետեւէն ճորճորալով, չուանին քաշուելէն առաջ եկած տաւապանքին ապառկու համար: Հեթանոս եւ քրիստոնեայ սրտաթունդ կեցած էին եւ անձրեւին տակ էրերեալ աատանեալ արջներուն ետեւէն կ'երթային: Թափօրին վերջաւորութիւնը կը կաղմէր պարտուած, անօթի, քաւելէն ու յուտալէն յողնած բանակը, որուն անկարգ շարքերուն մէջ շատ մը հիւանդ զինուորներ զժուարաւ կրնային սուրի վրայ մնալ: Թէ հեթանոսներուն եւ թէ քրիստոնեաներուն կողմէ պող ընդունելութիւն կը դանկին, ըլլայ բանակումի, ըլլայ հոգածութեան համար: Լուսցաւ, եւ տխուր, ցուրտ, առաջին Մայիսի օրը ծագեցաւ եւ վերջապէս լուծիւնը կոխեց հրատարակներն ու փողոցները: Արդէն իսկ բոլոր տուններուն մէջ լուր կը տարածուէր, թէ Ինքնակալը մահամերձ հիւանդ է եւ քանի մը շարաթներէ ի վեր ալ խելքը թոցուցեր է: Մինչեւ առաւօտ մէկը բան մը չէր զիտեր, թէ ի՞նչ է հիւանդութիւնը, թէ ի՞նչու — անանկ ստակալի կը պոռայ մինչեւ հետունքը լուծելու շափ: Եւ իրիկունը Ինքնակալը մեռած էր: Սարդ մը բանակեալին վերեւը ծածկոցին վրայ սկսած էր իր ոստայնը հիւսել: Վեր կ'ըլլէր վար կ'իջնէր: Ինքնակալը այլեւս չէր կրնար խօսիլ: Կաթուածը անխօս բրած էր զայն: Ակնակապիճներէն զուրս բխող աչքերուն տաղնապալից նայուածքները միայն, ինչպէս նաեւ խելապարութեան սարսափելի պոռչուտը, յանկարծական ցատկելը եւ նորէն իսկոյն վար նետուիլը, մահուան քրտինքով լեցուն ձեռքերով երեսը ծածկելը — միմիայն այս արտայայտութիւնները, որոնք բոլոր շուրջը զանուարներուն ահ ու սարսափ կը պատճառէին, ցոյց կուտային անոր նոր նոսրան հալածանքի ախտին: Չտարածայնրեցաւ սա պարազան որ կայսրը սարդը տեսնելուն յայտարարեր է թէ ինք ճանճն է, եւ սարդը զարանակալ իրեն կը սպասէ եւ յանկարծ պիտի բռնէ զինքը եւ վեր քաշէ, պիտի փաթթէ ոստայնը եւ կամաց կամաց պիտի ծծէ: Ասիկա կը նախազգային կիներն ու տղաքը, անձնապահ զօրքերը, հետեւորդ իշխանները, երբ սարդը քանի մը ժամ վերջ մեռելին մողերուն մէջէն վազեց անոր երեսին վրայ, որ ահաւոր տաղնապալին հետեւանքով արդէն երթեացած ընդարմացած էր: Հեթանոսներուն ստակում պատճառեց այս դէպքը: Արդէն պարտութենէն վերջ իր սարսափահար փախուստին վրայ եւ անկէց ալ առաջները Նիկիոմիդիոյ պալատին եւ պարակղին մէջ, կը տեսնէին որ Ինքնակալը սաստիկ կը փախնայ, կը զողայ որեւէ թիթեռնիկէ եւ կը փախչի իսկոյն: Իմացուած էր նաեւ որ Ինքնակալը ինքզինքը ցորենահատ մը կը համարէր, զոր թիթեռնիկը կ'ուղէ ճարակել: Հաղիւ յուսցած էր, Ինքնակալին մահուան լուրը տարածուեցաւ բոլոր տուններուն մէջ: Քրիստոնեայ եւ հեթանոս լեղապատառ եղան անձնապահ զունդին զինուորներէն եւ ծառաներէն իմանալով Ինքնակալին

քաջած չարչարանքները: Ամէնքն ալ, հեթանոս թէ քրիստոնէայ,  
լուս սոսկումով մը կ'ըսէին իրարու, թէ տարօրինակ է որ իր խե-  
լացութեան միջոցին հաւատացեր է թէ ցորենահատի մը չափ սղտիկ  
է ինքը, եւ թէ արիւնն ալ պիտի ծծուի, նաեւ թէ ինք պիտի մեռնէր  
հոն ուր Պողոս, Տարսոնցի Առաքեալը ծնած է:

ԳԼՈՒԽ ԻԴ.

## Ս Ա Լ Օ Ն Ա

Նիկոմիդիոյ եւ Կիլիկեան Տարսոնի մէջ այս դէպքերուն միջո-  
ցին Դիոկղէս կ'ապրէր Սալօնա, Ադրիականի եղերքը, Պրիսկայի եւ  
Վալերիայի շուրջ աւելի մեծ անձկութեան մէջ: Իմացած էր որ տի-  
կինն ու աղջիկը վար դրուած էին Մաքսիմինոս Դադայի կողմէ: Չա-  
նոնք իրեն զրկելու ազաւանքները անպատասխանի թողուեցան, Մաք-  
սիմինոս երկտող մը անդամ չզրկեց: Պատգամաւորները չարածուե-  
ցան եւ ամէն անդամ ձեռնունայն ետ գարձան: Դիոկղէս միշտ նոյն  
Բաստի ազդեցութեան տակ կը գտնուէր: Անասմանօրէն կը տիրէր  
ամէն բանի վրայ: Դիոկղէս աշակերտական հաւատարմութեամբ եւ  
հնազանդութեամբ կը զրազէր մոպակոն բանաձեւերով ու նշաններով  
առաւօտէն մինչեւ իրիկուն: Երբեմն այնչափ առաջ կ'երթար, որ  
Բասոս կ'ապահովցնէր զայն, թէ ինք կարող է ողիները կանչել բե-  
րել եւ գերբնական ուժերու հրամայել: ՅՅ տարուան Ապրիլին իրի-  
կուն մըն էր, Դիոկղէս եւ Բասոս գարձեալ միս մինակ մատենադա-  
րանին մէջ միասին նստած էին եւ զիշերը մինչեւ ուշ առտն մոպակոն  
արուեստ կը բանէին: Ծովուն առջեւ, հոն սիւնադարդ ճամբուն ծայ-  
րը, զարատափին վրայ կեցած էին Դորոթէոս, Ղուկիանոս, Գոր-  
գոնիոս, քրիստոնէայ սենեկապետները: Միշտ տակաւին արքունիքին  
մէջ, բայց Դիոկղէսի վրայ այլեւս առանց որեւէ ազդեցութեան, ա-  
սոնք իրենց երզումին հաւատարիմ ամէն ինչ աչք առած էին, Դիոկ-  
ղէսը ազատելու այդ մոպին խեղդկապէն: Արքունիքին եւ քաղաքին  
մէջ մինչեւ իսկ քաղաքէն դուրս հսկողութեան տակ առած էին Բա-  
սոսի ըրածը թողածը: Այս երեքին դաշնակցութեան վրայ մէկն ալ  
աւելցաւ, Ալրինոս անունով: Միւսնոյն երզումը ըրած էր, եւ երկար



ատեն զիշեր ցերեկ Բաստսի ետեւէ ինկած էր գաղտազողի Սալօնէի մէջ եւ քաղաքին շրջակայքը: Երբեմն իբրեւ զիւղացի, երբեմն իբրեւ կովարած, երբեմն իբրեւ արհեստաւոր կամ սայլորդ, Ալբինոս քաղաքին եւ շրջակայ զիւղերուն շրջանը կ'ընէր: Գոց ըրած էր բոլոր գաղտնի անկիւնները, թաքստոցները, զիւղերուն մեկուսի կապելաները, եւ կը ճանչնար շատերը որոնք Բաստսի ծառայութեան մէջ կը գտնուէին: Մուղակը լաւ լարուած էր անոր համար:

Գիշեր էր խաւար: Գաշտաղետին ու ծով անտես: Ալբինոսը միօրինակ, խուլխուլ մտնչիւնը միայն եւ գարատափին խարակներուն դէմ ու ծովի զերքին երկայնքը անոնց խորտակումի ճարձատիւնը կը հասկնայէին, թէ ծովը ուր կը գտնուէր: Ոչ մէկ աստղ երկինքը: Գիտիչէսի հաւատարիմները այլեւս զիրար չէին տեսներ: Ձայներէն միայն զիրար կը ճանչնային: Վախն ի վախը կը հծծէին եւ իրենց շրջանակը միշտ կը նեղցնէին: «Հիմա ճիշտ հոն ըլլալու է»: — «Իրաւ: Ծամբան կարելի է հանդիստ հանդիստ երկու ժամէն կտրել»: — «Գիշերը ոչ: — Սպասենք հանդարտ»: — «Աղօթենք, աղօթենք Ալբինոսի համար», փսփսացին Ղուկիանոս եւ միւսները: Լուսթիւն: Ամէնքն ալ կ'աղօթէին անոր համար որ Աստուած պահէ զայն: Յետոյ սկսաւ դարձեալ փսփսուքը մեղմ, հետզհետէ աւելի ուժով, վարանոտ եւ առաջուրնէ աւելի նեղացուցիչ. «բոլորովին վատա՞հ ես որ հոն, Գիտիչէսի մէջ (Սալօնէի մօտ, Գիտիչէսիանոսի ծննդավայրը) ընկերներ կը հաւաքուին, Ղուկիանոս»: «Բոլորովին ճիշտ»: — «Ոչ մէկը տակաւին հետք մը չէ՞ դտած, թէ ի՞նչպէս այդ անիծեալ սատանան կայսեր տեսանելի կ'ընէ կայսրուհին ու իր աղջիկը»: — «Ո՛չ», եղաւ փսփսուքը: — «Հապա բոժոժնե՞րը, ի՞նչպէս կրնան անոնք ձայն հանել իր ձեռքին մէջ, առանց անոնց լեզուները շարժելու»: — «Թերեւս երէկ լաւ շտեսանք»: — «Բայց, շիտակը բսելով: Այո, ան մեր ձեռքն է»: «Հապա օձե՞րը, ուրկէ՞ց կուզան անոնք իր սուլումին վրայ յանկարծ սենեակ, եւ կը գալարին հնազանդութեամբ անոր ձեռքերուն շուրջ, վրդին ալ կը փաթթուին»: — «Աչքին դարկած է որ անոնք, ինչպէս նաեւ ճերմակ առնկաներն ու մուկերը, միշտ կ'երեւան հոն ուր վերջապէս կեցած է»: Ամէնքը նորէն սկսան որոճալ մտախոհ: «Եւ նաեւ ուրկէ՞ց կուզայ ձայնը երբ Բաստս կամ Մամերտինոս մեռելին զլուսին բան կը հարցնեն: — Եթէ Բաստսի սենեակը, անտուկներն ու արկղիկները մանրամասնօրէն քննէինք, եւ աչքէ անցնէինք, շատ մեծ խելացութիւն պիտի բլլար մեզի համար, կ'ըսեմ ձեզի»: — «Ատիկա չենք կրնար, Գորդոնիոս, երբեք առանց կայսեր հաճութեան»: «Այդ հաճութիւնը բնաւ չենք ունենար»: — «Կայսրը լեղապատառ բլլալու չափ կը հաւատայ որ կը մեռնին ամէն անոնք, որ Բաստսի գաղտնիքներուն կը դպչին»: — «Բայց միջնորմը, որ

պէտք է անգամ աչքէ անցուի, Ղուկիանոս, կրնայ մեր կեանքը արժեւել»: — «Բոլորովին անկարելի, Գորոթէոս, ո՛չ մէկ մարդ կրնայ մէջէն անցնել»: — «Ո՛վ զիտէ — կան որ կրնան երկար մարդանքով տախտակնալ ձեզքերէն սպրդող մուկերու պէս»:

Որոշեցին վերջապէս ուշադրութեան ասնել միջնորմը, այն վայրը որ ձեռքը սենեակը տաքցնելու կը ծառայէ: Այսպէս սրկէ նրկէ փսփսուքները բրին հաւատարիմ սենեակապետները եւ նկատի առին Գիտիչէսի ազատումը այդ մարդուն ձեռքէն: Գլուխ զլսի կեցած միտսին խորհուրդ կ'առնէին խորհուրդ կուտային: Բերան ախանջին: Գիշեր անասող, սեւաթորմի իրենց շուրջ: Ոչ մէկ ձայն, այլ ծովուն բնոջարուժը խարակին: Եւ ահա ծովուն կողմէ կեցած կարծր առարկայ մը ներսը սենեակապետներուն շրջանակին մէջ: Գնաց ծանրապէս դպաւ Գորդոնիոսի զլուսին, եւ ինկաւ գետինը լեղապատառ ճիշով իրարմէ բամբուռող մարդոց մէջտեղ: Գորդոնիոս գետին տապալեցաւ, առարկային բնոջարուժէն թմբած: Ձեռքը դպաւ, նեցուկ փնտռելու միջոցին, կակուղ, պաղ բանի մը: Պոռաց, եւ շօշափեց մարմինը, ու նորէն պոռաց լեղապատառ: Միւսները վաղեցին, վրան ինկան, պատուիրեցին որ լռէ եւ ինքզինքը բռնէ, Աստուծոյ սիրոյն: Ամէնքն ալ կը շօշափէին երես մը զլուսի մը: Կարծես գերեզմանէն կը թնդար Ղուկիանոսի ձայնը. «եղբայրներ, Ալբինոսի զլուսին է: Տէրը անոր պարգևեր է կեանքին պահար»: Առաւ մեռեալին ծանր, պաղ զլուսիը եւ առաջ գնաց: Միւսներն ալ իր ետեւէն: Իշխանին մատենադարանին մէջ լոյսը մարած էր: Ամէն ինչ պալատին մէջ լուռ էր եւ խաւար: Բակին մէջ իրարու մօտ մնացին, զլուսիը հողին վրայ իրենց ոտքերուն առջև: Աստուան կը սպասէին: Մարտափելի իրարանցում մը ահա: Գերիները սոսկումով կեցած էին իրենց գերեկից եղբոր, խոշոր Ալբինոսին զլուսին շուրջ: Ունոց մը ծայր տուաւ: Մածկարար տրուեցաւ Բաստսի անունը եւ բնոջանուր կասկած ներդործեց վտառ գիմաղիծերու վրայ: Երբ Ղուկիանոս վերջապէս համարձակեցաւ գարնել իշխանին ննջատենեակին դուռը եւ մուտք խնդրել, Բաստս արդէն դացած էր եւ Գիտիչէս միմակ: Մերժեց զլուսիը տեսնել: Հրաման տուաւ թաղել, եւ խոստացաւ աչքի դարնող պաղութեամբ մը գործը քննել: Երբ իմացաւ որ Ալբինոս Գիտիչէս գացեր է Բաստսը եւ անոր գործակիցները փնտռելու համար, Գիտիչէս քրթմնջեց եւ քննութիւնը բնոջանուր սա կոշտ աղագակով, թէ աղկէ կզեր է իրեն, ինչո՞ւ ծուգակ լարեր է անանկ մարդու մը դէմ, որ միշտ ազդարարած է իր լոյսը կը մեռցնէ:

Այս ահարկու գէպը Գիտիչէսի մէջ սոսկում եւ վախ յառաջացուցած էր հանդէպ Բաստսի: Երբ զիշեր եղաւ, եւ Բաստս իր ճամբորդութենէն շղարձաւ, Ղուկիանոս եւ Գորոթէոս, երկուքն ալ իշ-

խանին ննջատրահին մէջ անոր հետ անցուցին զիշերը, և շատ չանցած յաջողեցան ձեռով մը շահիլ անոր հին վատահոթիւնը: Յօժարահամ ան մտիկ կ'ընէր, միշտ աւելի լուս և աւելի յարջ, անոնց կասկածանքները Բատոսին ու անոր արուեստին դէմ: Այս՛, իրեն ալ շատ մը անոր բաները արտակարգ կ'երեւնային: Ի՞նչ է պատճառը որ ինք — Դիոկղէս — հակառակ իր առաջուան սովորութեան, հիմա առաւօտները այնքան երկար և խորունկ կը քնանար, և առիկա ալ ոչ ամէն ատեն, այլ երբեմն երբեմն — այս, ճիշտ — սովորաբար այն ատեն, երբ Բատոս պառաթ մը յատակ ջուր մը կուտար իրեն. չքնացած: Հիմա ուրիշ բաներու վրայ կասկածի կ'երթար: Դիոկղէս այս պատճառով քննուրէն վրայ անկողինին մէջ կը ցնցուէր անձկութենէն, և Ղուկիանոս և Դորոթէոս չէին կրնար հետանալ իր քովէն: Կատարեալ իրաւասութիւն տուաւ իրենց Բատոսի բոլոր վարձուներէն, բրածին թողածին, զացածին եկածին վրայ հսկողութիւն ի դարձ զնեւ, և ինք Դիոկղէս ալ կ'ուզէ անոր սարսափելի ծուղակ մը լարել: Վաղը առաւօտ արդէն իսկ պիտի պահանջէ Բատոսէն որ կախարդական նրպատակներու համար պալատին մէջ գեղեցւած մեռելական զանկէն զուշակէ և բռն իրեն, թէ ո՞վ է Ալբինոսի մարդասպանը: Իրենք ալ կ'ուզէին ուշադիր ըլլալ միջնորմին: Առտուան դէմ կայսրը կը մրափէր: Դեռ մութ էր, երբ երկու սենեկապանները, սրտնք կայսեր անկողինին կը հսկէին անքուն, համաձայն իրենց խոստումին, սանդուխին վրայ ճարձատիւն մը իմացան, և յոյսի չող մը զարձկարձիկ սանդուխին զաղանի մէկ զուտնէն սրահին մէջ կը թափանցէր և կը լուսաւորէր քնացող իշխանը: Յանկարծ այդ չողը մարեցաւ և անյայտ եղաւ: Անշուշտ լուսութիւնը միայն կը մնար: Սենեկապանները պաղ քրտինքի մը մէջ մտած կը սպասէին որ առտու ըլլայ բոլորովին: Նախաճաշին հասաւ եկաւ Բատոս, կարծես անակնկալօրէն, իր ճամբորդութենէն:

Հագուեցաւ և կ'ուզէր սրտաղին ողջոյնէն վերջ սպասուորել կայսեր: Դիոկղէս ալ շատ սիրալիր վարուեցաւ, բայց իր կապոյտ աչքերուն մէջ դարանակայ հեղնութիւն մը կը պլլալար, արհամարհանք մը կը պահուրտէր, կորուկ որոշում մը, որ ձերտնի իշխանը ահարկու կ'ընէր: Ճաշի միջոցին պատմել տուաւ Բատոսի ճամբորդութիւնը, բայց իր նայածքը բնաւ չէր հետացներ պատմողէն, երբ ան իր սովորական համարձակութեամբ և թարմութեամբ երկկի դէպքերը կը պարզէր: Բայց իշխանին նայածքը և անոր ամբողջ կերպարանքը կը հասկցնէին իրեն թէ ի՞նչ կացութեան մէջ էր: Ստոյիկեան հանդարտութեամբ իմացաւ Ալբինոսի մահը, նաև պաղարիւնութիւն ցոյց տուաւ իշխանին սա հարցումին հանդէպ, թէ արդեօք մեռելի զանկէն կրնայ այս իրիկուն իմանալ թէ ո՞վ և ո՞ր է մար-

դասպանը: «Եթէ աստուածները բարեհաճին, իշխան», պատասխանը տուաւ Բատոս, ուսերը թօթուելով և ձակատը կնձռելով: «Պիտի տեսնենք», ըսաւ Դիոկղէս: «Կանչէ Մամերտինոսին: Անոր ըսելիք ունի»: Բատոսին գոյնը նեղաց: Դիոկղէս հասկցաւ, նոյնպէս հասկրցան Ղուկիանոս և Դորոթէոս: Մամերտինոս եկաւ: Բատոս և սենեկապանները բաժնուեցան: Մամերտինոս պատուէր ստացաւ մատենագրանին մէջ իշխանին հետ երթալ նոր ի նորոյ կարգի զնել զերբերուն և գրութիւններուն մէկ բաժանումը: Դիոկղէս վերջին աստիճան սիրալիր էր: Ամբողջ օրը աշխատեցան սաստիկ: Անձնապահ զինուորները պաշարած էին Մամերտինոսը, որ որ երթար ու կ'նար: Բատոս խոստացած էր իրիկունը մեռելի գլուխը հարցաքննել: Դիոկղէս անտարբեր այս բաժնէր. ո՞ր ատեն որ աստուածները ուզեն, թող այն ատեն փորձը սկսի: Բայց միայն թէ կը փափաքէր որ հարցաւորածը տեղի ունենայ վերը մատենագրանին մէջ, որովհետեւ պիտի չուզէ որ ուրիշ տեղ բացուին երկար բարակ շատ մը նամակներ և արժէքաւոր թուղթեր, և անոնց ցուցակագրութիւնը խանդարտի: Դարձեալ սկիսեցան զուտնութեամբ եղաւ Բատոս և ցայայտեց որ երազներու մեկնիչ աստուածը քեզի պատասխան պիտի տայ միայն անոր համար նուիրապարծուած վայրին մէջ, այն է բնակութեան սենեակին մէջ: Ինչպէս որ կ'ուզէ, ըսաւ Դիոկղէս բարեմտութեամբ, բայց այս իրիկուն կ'ուզեմ պատասխանը ունենալ: Եւ իրիկունը, բնակութեան սոփրական սենեակին մէջ կեցած էին Դիոկղէս, քրիստոնեայ սենեկապանները, սպաներ, հետաորներ, քուրմեր և քրմապետներ: Սեղանին վրայ զանկեր, սրուն շնորհիւ արդէն Բատոս յաճախ զուշակութիւններ բրած էր Դիոկղէսի, և իրր թէ զանկէն մէջէն խօսող ձայնին մէջ մի զուշակութիւնը կ'իրազործուէր, որեւէ կորսուած առարկայ կը զանուէր, որեւէ փոթորկալից ազիտաբեր եղանակ անվստան կ'անցնէր, որովհետեւ զանկին մէջ զանուած ուղին այնպէս անօրինած էր: Բատոս բոլորովին անվրդով ու հանգարտ կը թուէր ըլլալ: Ողորդ ամիրուած երեսը անդոյն էր, բայց կանանչ աչքերը և զէմքին լարուածութիւնը կը մտանէին թէ Բատոս կը սպասէ իր բոլոր կորոյր և ինքնապաշտման, այս գործին մէջէն ելլելու համար: Մրմունջներով և նշաններով սկսաւ երգութիւններ ուղիւ և հրախրել զինքը զալ զանկին մէջ: Պէտք է զբաւէ հմայել ուղին նուիրական շողիներով և անուշահոտութեամբ, յայտարարեց բանի մը վայրկեան վերջ: Շողին արդէն սկսած էր բարձրանալ զանկին վերեւ, երբ Ղուկիանոս զուշեց հուժկու ձայնով. «Իշխան, արդիվ անոր այս շողիները, անոնք մեկ ամէնքս պիտի թմբեցնեն, և մեր նուագումին կամ մեր մահուան միջոցին Բատոս պիտի փախչի»: Դիոկղէս ծիծաղեցաւ շարձածի ուրախութեամբ. «Դրան առջեւ և

բակին մէջ իմ թիկնապահներս կը հսկեն եւ ձեր մէջէն ոչ ոք կրնայ փախչիլ Բասոս, պէտք է մեռնիս, եթէ խարեցիր զիս: Եւ զուք, քրիստոնեաներ, նմանապէս, երբ Բասոս անմեղ է: Բասոս»: — Դիոկղէսի աչքերը մոմի ցանցառ լոյսի կիսամութին մէջ բոցի պէս կը վառէին — «Արիւնդ եւ կեանքդ վկայ, միտքդ շա՞ր է մեզի համար»: Բասոսի երեսը անմեղութեամբ կը փայլէր: Կարեկցութեան եւ բարութեան մեղմ ծիծաղ մը տարածուած էր դէմքին վրայ, ձեռքերը խաչաձեւ եղած էին մարմինին առջեւ, երբ տխուր շեշտով մը փափսաց. «Իշխան Դիոկղէս, պէ՞տք էր որ այդ հարցումը ընէիր ինձի, քու մտերիմ բակամիդ: Պէ՞տք էր այսպէս վարուէիր»:

Անդամ մը եւս Բասոսի նայուածքը առաւ նոյն ահարկու եւ ամէն ինչ ճնշող ուժը: Բայց շատ ուշ էր: Դիոկղէս անդամ մըն ալ նախորդ տարիներուն հրամայողը, մեծազօրը եղած էր: Իր կապոյտ աչքերը նոյն ահաւոր իշխանութիւնը ստացան, հիմա տեղի չէին տար, տիրացան Բասոսի աչքերուն, որոնք խոնարհեցան Դիոկղէսի նայուածքին բարձրութեան եւ տարիքին առջեւ: Հիմա զիտէր իշխանը, թէ ինք խարուած մըն է: Տեսարանը տեսակ մը ահաւոր վայրկեաններու դատաստան դարձաւ, Դիոկղէս վեհափառ անդորրութեամբ դաշոյնը քաշեց մէջքէն եւ տնկուեցաւ Բասոսի առջեւ: «Հարցուր դանկին, ո՞վ է Ալբինոսի սպաննիչը»:

«Կամքիդ համաձայն, տէր»: Բասոս խոնարհեցաւ մեռելադանկին առջեւ եւ ձայնեց. «յանուն Ահուրայի, Ամենազէտին, յանուն հաղորակնեան եւ հաղորունկնեան Միհրի, քեզի, երազաստուածիդ, կը հարցնեմ. ո՞վ մեռցուց Ալբինոսը»: Բասոս երկու երեք անգամ կրկնեց հանդարտօրէն նոյն հարցումը: Մեռելական լուսութիւնը, որ քանի մը վայրկեան տեսեց եւ կը թուէր յաւիտենականութիւն մը ըլլալ, ընդհատուեցաւ իրարու վրայ երեք անգամ խուլ դարնուածքով, որ սարսուռ ազդեց Դիոկղէսի եւ ներկաներուն մեծ մասին: «Վերջապէս, վերջապէս, երազաստուած», ձայնեց Բասոս մեղադրանքով, խոնարհելով դանկին առջեւ, եւ նորէն հարցուց. «քեզի եմ, ո՞վ մեռցուց Ալբինոսը»: Դարձեալ երեք անգամ դարնուածքը, յետոյ որեւէ տեղէ մը խորունկ ձայն մը. «Քրիստոնեաներ Ղուկիանոս»: — «Ղուկիանոս: Ուրիշ ո՞վ տակաւին, քեզի եմ, քեզի»: — «Դորոթէոս»: — «Դորոթէոս: Ուրիշ ո՞վ»: — «Գորգոնիոս»: — «Գորգոնիոս: Ուրիշ —»:

Տախտակորմին մէկ քառակուսին կրկնակ պատին միջին մասէն դէպի զուրս սրահին մէջ մղուեցաւ, եւ ճարճատելով ինկաւ դետին: Բոլորովին ուրիշ, բնական, մարդկային ձայն մը զրջեց դատարանական փողի մը պէս. «Բասոս մեռցնել տուաւ Ալբինոսը»: Եւ միաժամանակ կրկնակ պատին մէջ բարձրացաւ սարսափելի, անա-

զորոյն, անյօղաւոր ազադակ մը, որ անմիջապէս սարսուռի լուսութեան մը փոխակերպուեցաւ: Դիոկղէս արձանի պէս քար կտրած կեցած էր: Առանց իր հրամանին սպասելու, անձնապահ գունդին սղանները յարձակեցան Բասոսի վրայ, եւ շղթայակապ բրին: Բոլոր միւսները աճապարեցին զուրս ելլել, եւ ճիշտ այս պահուս Դիոկղէսի գերիններէն մին, որ օձի կերպարանք մտած օղնականն էր Բասոսի, կրկնակ պատէն զուրս քաշեցին եւ շղթայի զարնելով բանտ տարին:

Երբ սպանները բազմոցի մը վրայ սարսափահար ինկած իշխանին հարցուցին, թէ ի՞նչ պէտք է ընել Բասոսին, Դիոկղէս անպատմելի վրդովումով եւ արհամարհանքով երկար տտեն նայեցաւ Բասոսին: Բասոս, հանդարտ, իրրեւ թէ այս ելքին երկար տտենէ ի վեր կը սպասէր, Դիոկղէսին կը նայէր, երբ ան ձեռքի յողնած շարժումով մը սուրով զլխատելու նշան տուաւ:

Քանի մը ժամ վերջ Մամերտինոս Բասոսին դանկը կ'երգուընցընէր լալալին եւ անձկալից ձայնով մը: Մինչդեռ ինք Դիոկղէսի եւ ամբողջ ընկերութեան խուզարկու նայուածքներուն առջեւ իր խոնարհութիւնները եւ նշանները կ'ընէր զողոյսուն ծունկերով այդ իրեն դէմ ցցուած թարմ եւ արտակարգ դանկին դէմ, եւ քանիցս, միշտ մեծապոյն անձկութեամբ կը ձայնէր. «Երազաստուած Տիր ո՞վ մեռցուց Ալբինոսը», Բասոսի անդուլտ զիակը խոր լուսութեան մէջ դադարի մը մէջ զրուեցաւ եւ ծածկոցով մը զոցուեցաւ: Երբ դարձեալ որեւէ պատասխան չճշեց Տիրէն, Դիոկղէս կամաց կամաց անցաւ Մամերտինոսի ետեւը եւ յանկարծ սկսաւ, ամէնուն սոսկում պատճառելով, սաստիկ բարձր եւ անբնական կերպով ինդալ: Վրէժխընդրութեան եւ յուսահատութեան վայրազ, շարանիթ, զարհուրելի ծիծաղ մը կը թուէր, կարծես մէկու մը որ ամէն բան կորսնցուցած է եւ պարզապէս պարտաւորուած է խնդալ աղէտքի մը առջեւ: «Առ — չ'երթար — Մա — մեր — տինոս — չ'երթար: — Ոյին — չի գիտեր — ո՞վ մեռցուց Ալբինոսը: — Եկուր սիրելի Մամերտինոս — ես — հա, հա, հա — ես կ'ուզեմ քեզի ցուցնել, ո՞վ մեռցուց զայն եւ դանկը որունն է»: Մամերտինոս, նուազումէ բռնուած, իյնալու վրայ էր, սպայի մը կրթնեցաւ նախ եւ ապա իշխանին թեւը մտաւ: Սարսափելի կատաղութենէ մը բռնուած, Դիոկղէս երկու ծանր վարադոյրները իրարմէ բաժնեց, լաթը վեր առաւ դադարէն եւ որոտադոյ. «նայէ՛, Մամերտինոս, մարդասպանը եւ խաբեբան», եւ սաստիկ ուժով նուազկոտ Մամերտինոսը նետեց զինքը մուրթեցնողին դիակին: Ամբողջ օրը մանրամասնօրէն քննուեցաւ զուրկի մարդուն Բասոսի թողուցածը — սնտուկներ, տուփեր, ծրարներ, որոնք քանդուեցան, կտորուեցան, ինչպէս նաեւ շատ մը փոշիներ, խառնուրդներ, գործիքներ, սնտուկի մը մէջ եղած օձերը սպաննուեցան, նաեւ

կարգացուցան նամակները, մեծապոյն մասը զազտնի լեզուով զբրուած: Բայց քրիստոնեայ սենեկապանները քիչ շատ իմացան որ ոճրապործական ուշիմութեան տեսակէտով այս արտասույթը մարդը ամբողջ սճրապործներու ջոխրի մը հետ յարարութեան մէջ էր, նախ Աթէնք գացած եւ հոն «սուրբ մովսէս» անունով ճանչցուած:

Դիտկէս հանդիստ չունէր այլեւս: Սիրտը կտրուած էր, միտքն ալ խանդարուելու մօտ: Զինքը զբաւոյն անձկութենէն զուրս գալու անկարող, ամբողջ զիշերը պալատին մէջ, էրբեմն դարաստանին մէջ վաղելով կ'երթար կուզար, էրբեմն ալ միտքն անկողնէն զիջարաց: Ոչ ոք կը համարձակէր բնկերանալ իրեն: Հետուին միայն իրեն կը հետեւէին քանի մը հաւատարիմ զերուհիներ եւ կուլային: Դիտկէսի միակ ուզածը, պտտիլ, պտտիլ: Լուսթենէն եւ ինք իրեն մէջ խորատուութիւն ճանձրացած, առտուն շատ կանուխ ծոխեղերեայ գարատակն պարտէզ կ'երթար սիւներու ճամբէն, անկէջ ալ ննջասենեակը: Կ'ուզէր ներս մտնել եւ չէր համարձակեր: Բաստի կերպարանքը կը հայածէր զինքը: Կը կարծէր թէ անոր հոգին իրեն կը հետեւի գացած երան տեղը: «Արրակազարար, Արրակազարար, Արրակազարար», կը զոչէր եւ օդին մէջ ամէն տեսակ նշաններով կ'երգարնցնէր օդին: «Անգորութիւն, հանդիստ իմ խեղճ սիրտիս: Օ — հանդիստ», կը հառաչէր ծերունին: Այս կանչը կ'արձագանդէր բոլոր անցքերուն մէջ եւ ողորձայն կը փշրուէր բարձր սիւներուն վերայ: Խուլ անկում մը. Դիտկէս, քունը զլուխը, իր ննջասարահին առջեւ ամբողջ հասակովը ինկեր էր առիւծի մորթին վրայ: Գլուխը ինկած յարդով լեցուած կենդանիին զլուխին վրայ: Դիտկէս այդ առիւծը զարկած էր երիտասարդութեանը: Ծերուկը քնաթաթախ, ձեռքերովը կտուցած էր առիւծին յայնափետեկ երախին անային ակոսաներուն: Գերուհիները եկան եւ տաք մերմակ մը զետեղեցին Դիտկէսի վրայ: Ուշ լուսցաւ պալատին մէջ: Արեւ չէր տեսնուեր: Աղօտ, թանձր մշուշ եւ ցուրտ քամի, որ ծովէն կուզար եւ տեսական անձրեւ կը գուժէր: Դիտկէսի պառկած եւ միշտ դեռ քնացած տեղը զրեթէ տակաւին զիշեր էր: Սիւներուն ու սանդուխներուն բազրիքները աննշան կերպով հազիւ մտթէն զուրս կուզային: Ու Դիտկէս կը քնանար ու կը քնանար: Մերթ ընդ մերթ սոսկալի ու երկարաձիգ «Օ՛»-ը կը խուժէր ընդարձակ վայրին մէջ եւ արձագանդի մը պէս կը թնդար պալատին բարձր անցքերուն մէջ: Առտուան ժամը հինգր պէտք էր բլլար, էրբ արթնցաւ, չիտթած չիմորած եւ իր բոլորտիքը եւ նաւթ սարսափահար, ամօթահար մեր կո ցատկէր, եւ վերմակս 'րալէն նետելով ննջասենեակ փութագ: Ծառաները, վարանոտ ու երկչոտ, ծակամուտ կ'ըլլային պալատին, բակին եւ պարտէզին մէջ: Ամէնքն ալ կը սպասէին Պրիսկան եւ Վալերիան բերելու զացող պատ-

գամաւորներուն վերադարձին: Յունաստանէն սլիտի դային: Որովհետեւ վերջապէս իմացուած էր, թէ Լիլիւրիտա Մաքսիմիլիանի վրայ յաղթութենէն եւ անոր մահէն վերջ, Տարսանէն ճամբայ ելլելով Յունաստան գարձեր է, հետք տանելով Պրիսկան եւ Վալերիան, Կանդիլիանոսը եւ Մաքսիմիլիանի եւ Գալերիանի բոլոր սերունդը:

Գերիներուն վերակացունները կը խորհրդակցէին խոռոչեայ վիճակի մէջ թէ պէ՞տք է Դիտկէսը արթնցնեն եւ հարցնեն թէ ի՞նչ հրամաններ ունի եւ ի՞նչ պէտք է ընել իրեն համար: Որքան յաճախ որ զորդով ծածկուած սանդուխներէն վեր կ'ըլլէին վեհերոտ եւ տիրոջը զբան առջեւ ականջ տնկած մտիկ կ'ընէին, կը լսէին միայն լալ, հառաչել եւ միշտ դարձեալ, էրբեմն մեղմ, հեծեծելով, էրբեմն բարձր, հոգիին խորերէն. «Պրիսկա, Վալերիա, զաւակա Վալերիա»: — Վերջապէս Դուկիանոս եւ Դորոթէոս սիրտ առին եւ թեթեւօրէն զարկին փառաւոր զբաւոյնով պճնազարգուած զբան: Դիտկէս սիրով բացաւ եւ հարցուց թէ ի՞նչ կ'ուզեն: «Մեր տիրոջ ծառայել մեր հոգիներուն մինչեւ վերջին շունչը: Օ՛, Տէր, վստահացիր մեզի, մեզի սակայն վստահացիր, միմիայն մեզի»: — «Այլեւս ոչ մէկուն կը վստահիմ, ոչ մէկուն այլեւս: Ամէնքը դիտ լեցին, ամէնքը խարեցին: Եւ ես, ես ամէնուն համար ալ բարիք կը կամենայի»:

Դիտկէս տակաւ կ'ըսէր խորունկ տխրութեամբ եւ անաւարբեր ձայնով: Աչքերը պարպուած, ամայի, կը յառէին զետիւր, եւ ճերմակ զլուխը, անդարձան երկար մազերովը, տխուր կ'օրօրուէր աստիճանները: «Մեր տէրը տաք բան մը կ'ուզէ՞ արդեօք անել: Կը մտիս, Տէր»: — «Հօ, հօ, հօ... հօ» — կը խնդար Դիտկէս հեղձօրէն — «տաք բան մը անել — եւ զիակի նման զէմք ունենալ — ոչ, աւելի լաւ է անձամբ հոգալ այս պէտքը: Հօ, հօ, հօ» անոր կոնակին ետեւէն այսպէս կը թնդար, եւ Դիտկէս անյայտ եղաւ զբան ետին զոր կրկնեց ամուր մը: Սենեկապանները կարծես արմատ բռնած կեցած էին հոն, եւ վերջապէս իրարու երես նայեցան: Երկուքին ալ զոյնը նետած էր եւ կուլային: Գերիները կը վարուէին սենեկապաններուն կարգադրութեան համաձայն, եւ ամէնքն ալ ննջուած վիճակի մէջ էին: Ամէնքն ալ կը հաւատային թէ Դիտկէս զիւհահարած է: Անդին, զուռներուն եւ սիւններուն ետեւ, սենեակներէն, խոհանոցէն զուրս պարտէզին մէջ պարտիզպանները ծառերուն եւ թուփերուն ետին — ամէն կողմ ծառաները կը զողզային իրենց հետաքրքրութենէն եւ վախէն, երբ ան կ'անցնէր իրենց առջեւէն, միշտ այն ձեւով իրը թէ կորսնցուցած բան մը կը փնտռէ: Կէս օրին ատենները սասափիկ տաք հով մը սկսաւ: Ծովը կը բարձրանար: Քամին հետզհետէ զէպի երկինք կը քշէր զմնեայ, հերձուտած սեւ ամպեր, որոնցմէ առջեւինները փոթորկարբեր թռչուններու պէս երկար պարանոցնե-

րոյ ևւ վարազանման թուիչքով: Սալօնէի ափը Դիոկղէս կը ձեմէր արագօրէն իր զինուորական հին վերարկուին մէջ վաթթուած: Ալեհեր զլուխը ամէն ատենէ ի վեր աւելի ասջեւ ծոած, անձրեւը կը կաթկթէր իր վրայէն, և խարակներուն զարնող ծոխուն զրգուած ջուրերն ալ կը զպշէին իրեն: Ոչ այս շափ միայն: Այլ այնքան կը գտար ծովը որ ոչ ոք, ոչ իսկ ինք Դիոկղէս կը լսէր թէ ինչպէս ժամերով, շառաչող կոհակներուն վրայէն բարձրաձայն կը կանչէր իր կիներն ու ազջիկը, ձայնին քիչ մը զազար տալով միայն այն ատեն երբ ստիպուած կ'ըլլար կենալ յոյնութենէն կամ շունչը համոնկէն: Ո՛չ ոք կը համարձակէր մօտենալ իրեն: Վաղախաւորով ու զաշոյնով զինուած վիճակը աւելի Լըկիւզալի կ'ընէին զինքը: Ծոխափին բուր ընակիչները, համօրէն Սալօնէ սարսափով ու կարեկցութեամբ կը հետեւէին իշխանին այս շարշարանքներուն: Ժամերով կ'երթար կը նստէր ծովուն ճիշտ մօտ խութի մը վրայ: Մայրեր կը ծփային հովէն, հեռուէն կը տեսնուէր անոր կերպարանքը վար ծոած սեղմըւած ջուրին վերեւ, այն աստիճան որ ամէն վայրկեան կը սպառուէր թէ ծովը պիտի իյնայ: Ամէնքն ալ հաշուած էին իր մահը, եթէ պատգամաւորները ձեռնունայն գային: Երթալով կը մթննար: Դիոկղէս այլեւս չէր համարձակեր դուրսը մնալ: Իր աչքը ամէն ջանք թափած էր մշուշն ու մութը ձեղքել թափանցել, կայմի ծայր տեսնելու համար: Բայց ալիքները կ'ուզէին գայն բամնէ իր նստած ժայռէն և նոյնիսկ ապահով ափունքէն: Որովհետեւ մինչեւ ներսը ցամաքին մէջ կը նստէր ծովը իր փրփրացայտ և զիրար հալածող գանակոծող կոհակները: Ոչ մէկ նաւ կը վերադառնար: Դիոկղէս տուն վազեց: Տակաւին Լըկար կեցաւ դարստափին վրայ, անկէջ հեռուն լրտեսելով: Ծովը մինչեւ իսկ հոս կը վազցնէր իր ետեւէն և իր Լըկարին վրայ աղի սրբազանը, և զիշերուան պէս սեւցած երկինքին վրայ առաջին ծամածուռ կայծակը կը վալլատակէր Լըկար, ատրաշէկ ազից մը զծելով: Դիոկղէս քար կտրած էր: Որստամը հեռուն սկսած էր մեղմով: Դիոկղէս ոտքերը ժողովեց սիւներուն ձամբուն, զարստանին Լըկայնքէն, զարձգարձիկ սանդուխն ի վեր: Թացէն, ցուրտէն և անձկութենէն կ'ծկտած, Լըկարայ, տատանեալ, և զնաց ինկաւ ննջասենեակին մէկ անկիւնը: Մերթ ընդ մերթ կը պոսար, ամէն անգամ որ կայծակը լուսաւորէր սենեակը կը հաւատար որ Բասոս պատուհանը կեցած կը մեկնէ կայծակներուն և ամպերուն բոլոր նշանները: Դողդոջուն ձերք յակամայս այդ նշանները կը ձեւացնէր ձեռքերովը, վախն ի վախը բոլորտիքը կը նստէր, թէ արգօք մինա՞կ է: Դուրսը դարկին: Լեզապատտո կանչ մը փրթաւ հաղապէն: Հաւատարիմ սենեակապանները չէին կրնար հանդուրժել որ իրենց տէրը սովամահ ըլլայ կամ սառի: Նորէն զարկին, կը զարնէին, մինչեւ որ

վերջապէս — արդէն նոր օր մըն ալ կը լուսնար, — Դիոկղէս բացաւ և հարցոյց թէ Պրիսկա և Վալերիա Լեոս<sup>ժ</sup> էին: «Ո՛չ, տէր մեր» ին վրայ գուտը գոցեց և վախանքը կրկին ճանչեց: Ետեւորտայ այլը մէկն էր անանցիկ, որոնք աշխարհը աշխարհ ըլլալէն ի վեր, տակաւին այսօր սա տպաւորութիւնը կ'արթնցնեն մարդոց վրայ, թէ աշխարհը պիտի կ'արձանի: Փոթորիկը վարապայցած, մուկոյնած էր, Լըկար իրիկուրնէ շատ աւելի ծանր: Կայծակները ոչ այնքան, բայց սլեմփանքը Լարակներուն զէմ և ափունքէն ալ հետի, աւելի զէջ էր: Քամին ալիքները ցամաք կը նստէր պարոզ լերան պէս և կը ջախջախէր գանձ մեծաշատոյ զզրուածով սպառածներուն և պարիսպներուն զէմ, սղոյկելով փոսոցը, նորաւորոջ կասիաները, պարտկոյնները: Մարդ մարդասանք չկար: Բայց Դիոկղէս զինուորի իր վերարկուով, զլիւսանոցով, նորէն նստած էր, լուսցածին պէս, ժայռին վրայ, ոտքերով ու ձեռքերով անոր զամուսած մաղիլու համար, և մշուշին ու ալիքներուն փոշիին մէջէն կայմի ծայրին կը յատէր սահմանէն դուրս Լըկար աչքերով:

«Ոչ մէկ նաւ չի կրնար այսպէս գայ: Արդարեւ ոչ: Կր սպասեն տեղ մը Լըկարը, փոթորիկը իջնելուն: Բայց Լթէ զիտանան թէ ինչպէս կը սպասեմ, կուզային, ինչ որ ալ ըլլայ: Արդարեւ, կուզան ահա: Օ, ևս կը զգամ, կուզան ահա, կուզան կը մօտենան: — Հէ, ս'ի գուն անի՞ծեալ փոթորիկ — գուն անամօթ Պոսիգան: Զիս չես տանիր ջուրին մէջ»: Եւ զինուորի ու պարտիպանի յատուկ հին կուտ կօշիկներով անկուցաւ սպառածին զէմ, կոնակով սեղմուցաւ տափակ քարին զէմ: Փոթորիկը հոս ու հոն կը տանէր գայն և ծովը իր ջուրերուն տակ կ'առնէր գայն: Բայց զիմազրեց ջրազրգիտ, թեւերը ժայռին փակցուցած, ձեռքերն ալ խորը Լըկար ցցուած մասեր բռնած: «Այսպէս ահա, այսպէս, Պոսիգան: Տեսնենք, ս'ի պիտի յաղթէ: Այսպէս — նորէն ահա բերան մը լեցուն — առ քեզի նորէն փթիկ բերնից: Ոչինչ ունիս գուն, ծովու աստուած — ոչ իսկ մական, զոր սակայն ևս կրեցի, ոչինչ ըլլաք դուք ամէնքդ աստուածներ, ոչինչ, ոչինչ ընաւ: Զեւս — ոչինչ — Եհօփա — ոչինչ: Քրիստոս ոչինչ: Յիսուս Քրիստոսի հայր ոչինչ: Հայր, հօ, հօ, հօ, հայր: Ուղեցի հայր ըլլալ ևս, Աւգոստոս Դիոկղետիանոս: Ուղեցի հայր ըլլալ կայսրութեան ամէնէն ողորմելի գաւակին — բարի և հաւատարիմ էր միտքս, բայց աստուածները ոչինչ են, մարդիկ սատանայ են կամ յուն, ոչինչ է կեանքը — տառապանք, խարէութիւն — սատանան և ուրերը ունին ամէն իշխանութիւն»: — Ալիք մը եկաւ լուսաց իշխանը և լեցուց անէ՞ծքի և ամբաստանութեան բացուած անոր բերանը: Նորէն ինքզինքը թոթովի ջուրէն լօլիկ զարձած գանդրահերի մը պէս, և ծովու աստուածին երեսին թքաւ աղի ջուրը: Յետոյ կ'տամբանք»

ներէն հանդստացաւ եւ անշարժ պառկեցաւ կոնսիլը ապառաժին վը-  
րայ, եւ անձրեւը կը տեղար երեսին վրայ, ու փոքրիկ հեղեղատներ  
անոր մարմինին երկու կողմերէն վար կը վազէին ազրիւրի պէս զէպի  
ծովը: Նորէն վեր ցատկեց եւ զէպի Պրիսկա եւ Վալերիա կանչը նո-  
րէն սկսաւ, փոթորիկին հետ պայքարի միջոցին: Ու զիշերը եկաւ:  
Սալօնէ ջուրերու մէջ պառկած էր: Ծառ շատերը կը հաւատային թէ  
վերջին դատաստանը եկած է, եւ մեհեաններուն ու տուններուն մէջ  
կ'ազօթէին իրենց հայրներուն փրկութեան համար: Անդադար շա-  
ռաչին, զղղղին, զոռ զոչում փոթորիկի եւ ծովու, անտեղիտալի  
անձրեւին խարշափիւնը, խորտակուած ծառերու, փլչող տուներու  
ճարձատիւներ, ամբողջ զիշերը: Դիտողէս, այս երբորդ զիշերը նորէն  
անքուն, առանց բան մը ուտելու, կեցած էր պատուհանին առջեւ,  
տենդին ու ցուրտէն զողահար, տաղնապի քրտինքներու մէջ: Վրան  
կարողութիւն չէր մնացած: Իշխանական զիտակցութիւնը փախ  
տուած էր իրմէ: Նոյնիսկ իր բոլորտիքը այլեւս ծառայ չէր տեսներ:  
Մեծ բնդարձակ պալատին, Ձեւի եւ Ասկղեպիտի մեհեաններուն,  
ատրուանին (Միքստուս) մէջ, սանդուխներուն վրայ, զուրք կամ  
նէրսը, ամենուրեք ան կ'անցրնէր զիշերուան մէկ մասը: Առաւօտուն  
կ'անձրեւէր, ծոյր միշտ նոյն վիճակին մէջ կ'որոտար կը խարշա-  
փէր: Մշուշը միայն քիչ մը ցանցատած էր: Դիտողէս կրցաւ պատու-  
հանէն տեսնել, թէ ինչպէս արմաւենիներուն եւ եղեւիններուն կա-  
տարները Սալօնէէն վեր կողմներու անտառին կոնսիլը փոթորիկին  
մէջ կը դառնան կը դալարին եւ տեղատարափին տակ կը խարաղան-  
ուին: Երկար, երկար սպասումէ վերջ սենեկապանները եւ ծառաները  
հուսկ ուրեմն կրկին տեսան իրենց տէրը: Կնոջը եւ աղջկանը մասին  
իր անհանդատութիւնը այնպիսի աստիճանի մը հասած էր, որ Դիտո-  
ղէս զինքը սպառող, քայքայող տառապանքին ազատ աստարէզ կու-  
տար զոտում զոչում արձակելով, կանչելով, երկարատեւ խուլ ինք-  
նախօսութիւններով, երբեմն ալ խելացնորութեան յայտարար վառն-  
ջող ծիծաղ մը, քրքիչ մը բարձրացնելով: Մերթ վայրկեաններով,  
աչքը գետինը դամած, կը կենար երբեմն ալ յանակնկալս, հանդիսա-  
ւոր կայսերական զնայքով, կ'երթար, մերթ կը ցատկէր անցքերուն,  
սրահներուն մէջ, սանդուխներէն վեր վար: Մերթ կը կծկտէր եւ  
յանկարծ վեր կ'ելլէր գլուխը տնկած, թեւերը կ'երկնցնէր ձիւղ, որ-  
պէս թէ մէկը կ'ուզէր զրկել — կուրար կը խնդար միտամանակ, յե-  
տոյ ահաւոր ինքնախաբէութեան վայրկեանէ մը վերջ, նորէն յու-  
սահատական ճիւղ մը լեղատատու ձեւով, ամբողջ մարմինը մինչեւ  
ծուծը թունդ ելած նորէն սոնոց մը, որ փոթորիկին հետ զուգուե-  
րով, կը լեցնէր պալատին ձեմելիքները: Հիմա — անէճքներու, հայ-  
հուչներու, սպառնալիքներու յարձանք մը աստուածներուն եւ մար-

դոց զէմ — Դիտողէս կը զնդացնէ տկար կոռւփները, մէջքէն կը քա-  
շէ կը հանէ վաղակաւորը եւ կը յարձակի իրը թէ թշնամիի մը զէմ:  
— Լիկինիս — Պրիսկա — Վալերիա տակաւին միակ անուններն են  
որ մարդ կը յսէ: Իր թաւարուն աչքերուն առջեւ, սրոնք յայտարիւր  
սրուած, միշտ ծովուն վրայէն անդին լրտեսելով, յաճախ ձերմկուցը  
միայն կը տեսնէին. — ամէնքը կը փախչէին անոր հայրմաշ զրեթէ  
անձանաշ դարձած զիմպիծերուն առջեւէն: Տունը լեցուն է զեւե-  
րով, սրոնք Դիտողէսը կը հայածեն: Քրիստոնեաները կ'ազօթեն, հե-  
թանոսները կը զոհեն: Եւ «Ինքնակալ»ը կը փնտռէ ու կը փնտռէ կին  
ու դաւակ: Ասոնք այլեւս չէին ապրեր: Պատգամաւոր — սուրհան-  
դակները, ցմահ իրենց տիրոջը հաւատարիմ, զարհուրելի փոթորի-  
կին քշուած, ամէն բոլոր մահուան սպասելով, ծովեզերք մը հասած  
էին, բայց Սալօնէէն հեռի:

Նաւուն հրամանատարները ցամաք ելլելէն անմիջապէս վերջ  
առաւօտուն պալատ եկած էին: Թաց խխում պարեպօտներով կեցած  
էին վարը բակը, երբ Դիտողէս յանկարծ անոնց կողմը յառաջացաւ:  
Բերանը լայն բացած, եւ աչքերով սրոնց տաղնապալից նայուածք-  
ները կը թուէին աղէտքի մը նախապուշակ ըլլալ, Դիտողէս արդէն  
հեռուէն պոռայ. «Ո՞ւր, ո՞ւր, ո՞ւր»: Արքունի բոլոր ծառաները յա-  
ւիտեան պիտի չմոտնան այդ նայուածքը, այդ երիցս «Ո՞ւր»ը, իր  
սրտակեղեք տաղնապուր, իր սարսաղողեցիկ զուշակութեամբը: Նա-  
ւապետները ծունկի եկած էին, եւ իրենց երեսները թաց սալալատա-  
կին վրայ, չէին համարձակեր վեր նայիլ: Դիտողէս զողող ձայնով  
հրամայեց, այլ լի անակնկալ կորովով. «Ոտքի ելէք: Ո՞ւր է Վալերի-  
ա — ո՞ւր է Պրիսկա»: Ինքնակալին կապոյտ աչքերը դարձաւ փայ-  
լատակեցին: Ձեռքը ընկեց վաղակաւորը, եւ ետ ցատկեց կարծես  
թիւնը զուշակելով նաւուն մարդոց խոստացած էին իրենց օյնութիւ-  
նը: Առանց Դիտողէսի հրամանին ջոկատ մը բերած էին, սրոնք եր-  
կարելով իրենց տէրերը մտան կայսեր եւ նաւապետներուն միջեւ —  
կենդանի պատուար մը: Դիտողէս կեցած էր կարծես քարացած: Բա-  
կը լեցուեցաւ զիմուտներով, զերիներով, նոյնիսկ քաղաքէն եկող  
մարդոցմով: Ամէնքը կ'ուզէին տեսնել, թէ Դիտողէս ինչպէս պիտի  
ընդունէր սարսափելի յուրը, թէ ինքնակալ Լիկինիսս, Թեսաղոնիկէի  
մէջ կախել տուեր է Պրիսկան, Վալերիան, Կանդիլիոնոսը եւ Մաք-  
սիմինոսի բոլոր սերունդը: Գլխաւոր նաւապետը, Իլլիրիացիներուն  
կենդանի պատուարին ետեւը ծածկուած, քաջութիւն դատա իր եր-  
բեմնի ամենակարող տիրոջը հողորդելու զարհուրելի պատգամը:  
Սպասուածին հակառակ, հանդարտօրէն ընդունեցաւ յուրը Դիտողէս:  
Վերջին յոյսը վերջին իշխանութեան հետ մարեցաւ: Ո՛չ մէկ պոռթ-

կում բարկութեան, ո՛չ մէկ կսկծալի ոռնոց Դիսկոլէսի շուրջը զլստնրուողները աւելի կրնար սարսափեցնել քան այն նախածքը, զոր ծերունին ծունկերը կթատած, ստփերուն վրայ կենալու գրեթէ անկարող, գոզգոզալով, վաղակաւորին կրթնած, ուղղեց զէպի միշտ զորչ երկինքը, յետոյ զէպի պալատ, յետոյ տակաւ առ տակաւ շրջակայքի մարդոց: Յուսահատութիւնը ինքն իսկ էր այս: Անդունդին անյուսութիւնը: Թախծալից, անմոռնջ, ամէնքը փախ տունին իրմէ, դուրս էլան: Անոնց մէջէն Երեքեալ տատանեալ պալատ դնաց, պահ մը վերջ նորէն մէջտեղ ելաւ եւ նաւապետներուն կուրծքէն կախեց ոսկի շղթաները զոր ինքն իսկ կրած էր, երբ Ինքնակալ էր: Յետոյ պալատ վերադարձաւ: Ո՛չ մէկ մարդ այնուհետեւ լսեց կամ տեսաւ բան մը իրմէ: Երկրորդ օրը, իրիկուան, Դիսկոլէացի երկու զիւղացիներ, Դիսկոլէտիանոսի ծննդավայրէն, ոչ շատ հեռի Սալօնէէն, յանկարծ հանդիպեցան ձիւնապատ արտի մը մէջ ճերմակ պատանքի տեղ ձիւնով քողարկուած կերպարանքի մը: Ձեռքերով ձիւնը անդին տարին: Ճերմակ զլուխ մը ելաւ մէջտեղ: Հոյաչէն ապարօշ մը շողակնայեռ կը պառկէր ճակտին վրայ: Երեսը կապուտցած, սեւ: Աչքերը խորափակ: Մառները տրցակ մը խոտի մէջ միտուած մազիւններու պէս: Երթունքը արիւնէն կարմրած, յայտնի էր որ սկոռներով խածած էր մէջը: Գիւղացիները, սարսափահար եւ կարեւոյոյ, իրարու երես կը նայէին: Ո՛չ մին կը յանդիմէր խօսիլ: «Նորէն նայէ, Տորիաս»: — «Դուն: Ո՛չ ես, Յուստոս»: — «Օյնէ ինձի, Տորիաս: Կատարէ քու քրիստոնեայի պարտականութիւնդ»: — «Ո՞վ կրնայ ըլլալ ասիկա»: — «Կը դուռակեմ»: — «Ո՞վ»: — «Եկուր, գործ տեսիր»:

Թացէն ծանրացած ձիւնը փորեցին դիակին վրայէն: Նիհար, հիւսած ձեռուկ մը պառկած էր, փորը քստմնելի կերպով ուռեցած թոյնէն, ինչպէս նաեւ կապուտցած սեւ ձեռքերը: Մեծարժէք տօնական պարեգօտ մը հասած, կռնակն ու ուսերը պառկած ճերմակ երիզով ծիրանի վերարկուի մը վրայ: Գիւղացիները դիակը ձիւնէն դուրս հանած ատեն կը դողողային իրենց բոլոր մարմինով, առանց բառ մը խօսելու: Երկուքն ալ դիտցան. Դիսկոլէան է, որ Դիսկոլէտիանոս Ինքնակալ էր, եւ քրիստոնեաները կը հալածէր:

Յուստոս դնաց Դիսկոլէա կառք եւ ձի բերելու, որոնք մեռելը տարին իր դամբարանը Սալօնէի պալատին մէջ:

ԳԼՈՒԽ ԻԵ.

## ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆԱԿԱԼ

Վաղարչապատ պառկած էր արեւուն ճաճանչներուն մէջ: Պալատին ճաշարահին մէջ կէս օրուան ճաշէ վերջ աղանդերի սեղանի մը առջեւ իշխանական ակումբ մը բազմած էր. Տրդատ Թաղաւորը, Եւթաղիա Թաղուհին, Եպիսկոպոսը Գրիգոր, Մարիա անոր տիկինը, Արիստակէս, Վրթանէս անոր զաւակները, — Լիկինիոս Ինքնակալը, Կոստանդիա անոր Տիկինը, Կոստանդիանոսի խորթ քոյրը, եւ իրենց հազիւ տասնամեայ մանուկը. Լիկինիանոս Լիկինիոս: Ինքնակալը առաւօտուն ժամանած էր եւ իր զիրքին պատշաճ մեծ պատիւներով ընդունուած: Բաւական ժամանակ առաջ ծանուցած էր իր այցելութիւնը: Ուրախութիւն եւ կրկիւղ պաշարած էին Թաղաւորն ու իր տունը: Ամէնէն աւելի Գրիգոր Եպիսկոպոս մտահոյ էր: Այսօր երեսը ծանրախոհ եւ մտատանջ: Քրիստոնեաները կը զղային, թէ այս բարձր այցելութեամբ տունին մէջ իրենց համար օտարոտի եղանակ մը եկած էր: Լիկինիոս ի՞նչ կրնար փափաքիլ: Արդեօք իր կանխաւ դրածին պէս միմիայն հին բարեկամութիւնը նորոգել կ'ուզէր, Տրդատի պետութիւնն ու շքեղութիւնը տեսնել, եւ անգամ մըն այ դարձեալ կառավարութեան հողերէն աղստ ըլլալ: Տրդատ եւ Գրիգոր վերջին ծայր լարուած, հետաքրքրուած էին: Գրիգոր զաղանի վախով մը կը զիտէր հիւրը, Դիսկոլէտիանոսի եւ Գաղերիոսի սերունդին սպանիչը, աշխարհի արդի ամէնէն հոգի մարդը, որուն կը հպատակէր ամբողջ Արեւելք, ցորչափ տարածուէր Հռոմէական Ինքնակալութիւնը: Լիկինեան զղեակին ժառանգորդը, Լիկինիանոս — այժմ Լիկինիոս — աւելի տարածած էր կայսրութեան սահմանները:

Եւ — Հեթանոս մնացած էր: Տրդատ — Քրիստոնեայ: Այդ վեհապետին մէկ աւատառուն:

Լիկինիոս պատմութիւններ կ'ընէր: Բայց խօսելէն շիտակը բան չէր հասկցուեր, կամ նպատաւոր բան մը չէր պուշակուեր: Գինին ալ չօղնեց: «Սա քրիստոնեաները: Ինչպէս լուրջ կ'ուզեն երեւնալ: — Սա թաղուհին, սղասուհիի մը պէս հաղուած — տափակ մազերով, անդարդ, բացի ուրբմելի մատանեակէ նիհար մատներուն վրայ: Սա Գրիգորը, իր խեղճ ու կրակ վերարկուովը, — անառապին մարդը իր անխնամ մազերով ու մօրուքով որ ահա նստեր է իրբեւաշխարհագրատուոր, իրբեւ համր կուռք մը: Ինչպէս պաղ, ինչպէս անհամակրակամ, որբան տարբեր, ամէն պարագայի մէջ, Գաղերիոսի կամ Մաքսիմինոսի մօտ եղածէն»: Լիկինիոս այսպէս կը մտածէր խօսած ատենը եւ շարունակեց. —

«Երկար ատենէ ի վեր միտքս զրած էի Կոստանդիանոսի հետ զարնուիլ: Աղբականի վրայ վստահիլ — ո՛չ: Ո՛չ Աստուած եւ ոչ սատանան ատիկա չեն կրնար մեղք գրել ինձի»: Գրիգոր ծանր հառաչ մը արձակեց — եւ կարմրելով սպիտակահեր գլուխը իջեցուց կուրծքին վրայ, այնպէս որ կուրծքը ծածկուեցաւ երկայն ձիւնի պէս ձերմակ մօրուքէն: Կոստանդիա եւս կարմրեցաւ եւ անձայն ու անխօս սեղմեց Լիկինիոսի ձեռքը: Բայց միւսը այնքան խանդավառուած էր որ կարեւորութիւն չտուաւ եւ նորէն շարունակեց իր զիտցածը. «Երկար ատենէ ի վեր կրցաւ լուրջել զիս խոստումներով եւ քաղաքական հնարքներով: Ալ չեմ խարուիր: Եթէ չուզեր զո՛հ բլլալ Արեւմուտքով, եւ Արեւմուտքն այ կրնամ կոտորարել: Ես բարեկամ եմ Ձեւոսի եւ անոր արձիւնձերը ինձի կ'ընկերանան բոլոր ճամբաներուս վրայ»: — «Այդպէ՞ս կը մեկնես զուն Սիպալէի առջեւ եւ Մարդբերու հետ մղուած ճակատամարտները, Լիկինիոս», ընդհատեց Գրիգոր հանդարտ չեչտով եւ համեստ ալ ժպիտով մը: «Կր խորհիմ որ բրածներուս եւ տեսածներուս մեկնութիւնը ինձի կը վերարբերի, ուրիշին հաշիւ պարտական չեմ»: — «Արեւմտին մէջ անցուցած զիշերդ միտքդ բեր», փափսաց Կոստանդիա, յիշելով այն տաղանապալից օրը: «Ա՛խ, այս», ձայնեց Լիկինիոս, «ուր զուն եւ քու սղախիկդ կը զողայիք անձկութեամբ»: — «Դուն ան բա՛, Լիկինիոս, թէ ինչո՞ւ համար վեց տարի առաջ, ՅԱ-ին, կոտեցար իրարու հետ», հարցուց հիմա Տրդատ: «Ինչո՞ւ համար: Ասիկա կնճօտա խնդիր մըն է, չէ՞: Այո, աշխարհի վրայ զաղանի բան չկայ: Կոստանդիանոս վրաս վրատահութիւն չունէր: Ուստի փափաքեցաւ, պահանջեց որ իմ եւ իր երկրամասերուն միջեւ միջանկեայ պետութիւն մը կազմուի Իտալիայէն եւ Իլլիրիայէն: Կոստանդիանոսի խորթ քոյր Անաստասիայի ամուսինը Բասիանոս, իշխանակցութեան բարձրացաւ: Թաղ ալ ա-

նաւ: Բայց զայն բռնելու համար ամուր զլուխ չունէր: Կոստանդիանոս զիտէ արդէն հետացնել այնպիսի գլուխները, որոնք կ'ուզեն եւ կրնան թաղերը կրել: Հա, հա, Բասիանոս կախաղան հանուեցաւ: Հա, հա»: «Ես չեմ հասկնար ատիկա», բաւ Գրիգոր մտախոհ, մինչդեռ ամէնքը շուարած շփթած յուս կը կենային: «Եթէ նոյնիսկ Ինքնակալ Կոստանդիանոս փափաքեցաւ իր եւ քու արքայապետութեանը միջեւ միջանկեայ իշխանակցութիւն մը, ո՛վ Ինքնակալ, եւ Բասիանոսը բնարեց իրբեւ իշխանակից — ինչո՞ւ առանց որեւէ պատճառի կամ հիմունքի կախել սալ զայն»: — «Իսկապէս ոչ առանց հիմունքի», յարեց Լիկինիոս վարանոտ: «Բասիանոս երազեց ինք առանձին տիրապետութիւն մը եւ Կոստանդիանոսի զէմ զաւարական ծրագիրները զարբնեց: Իր եղբոր Աննեկիօսի զրգուութեամբ: Ես չկրցայ Բասիանոսը փրկել, բայց փրկեցի Աննեկիօն: Պարտաւոր էի զայն ալ յանձնել Կոստանդիանոսին: Ան ինձի ապախնամ էր: Պէ՞տք էր որ յանձնէի: Յանուն աստուածներուն, ո՛չ: Միբլի աներոջն համար պատերազմի յայտարարութեան բաւարար պատճառ մը պիտի բլլար ատիկա: Բայց Հոկտեմբեր 8-ին հանդիպում մը ունեցանք: Ան 70.000 հօգի Իլլիրիայի վրայ զրկած էր: Կիպալէի մօտ, Սալ վետին վրայ, — զիտես զուն, Տրդատ, հոն ուր զիրար կը խաչածեւեն հիւսիս — արեւելեան — եւ արեւմտեան ճամբաները —, ատիկա խորհելիք կէտ մըն էր»: Լիկինիոս ծամածուց զէմքը, կուլ տուաւ իրբեւ թէ լիզի բան մը առած բլլար: «Ո՞վ յագթեց խկապէս», հարցուց Տրդատ, «հոս մարդ չիմացաւ կոխիւն ելքը ի՞նչ կզու»: — «Անորոջ», պատասխանեց Լիկինիոս: «Ամէն պարագայի մէջ, Սերմիամ զբաւուեցաւ: Ես Յունաստան զացի: Իմ ամէնէն լաւ սպաս Վաղար իշխանակցութեան բարձրացուցի: Ան նոր բանակ մը հաւաքեց Ատրիանապոլսոյ շուրջ: Իմ ետեւէս եկաւ Կոստանդիանոս: Պարտաւորուեցայ Թրակիոյ մէջ զարձեւալ անոր ճակատիլ»: — «Մարդը կոչուած ցեղին զաշտականին մէջ, չէ՞»: — «Ճիշտ հոն ահարկու կոխ մը եկաւ: Կը խոստովանիմ. Կոստանդիանոս տէր մնաց: Ես 20.000 հօգի կորսնցուցի: Բայց Արէսին ինձի զլացածը Բախար պարպեւեց: Իմ Իլլիրիացիները, Բերօսի մօտ տեղաւորուած, կոնակէն բռնեցին զայն, երբ ան կուրարար իր յագթութեան փստահելով, իմ ետեւէս զիս հալածեց մինչեւ Թրակիա: Իր բոլոր ուսեստեղէնի կառքերը զբաւուեցան: Հրամարեցաւ կոխէն եւ հաշտութեան բանադնացներ զրկեց»: — «Ինչ յաջողութիւն», ձայնեց Տրդատ խանդավառ: «Ասիկա Աստուծոյ շնորհն է, անոր անօրինութիւնն է, որ կ'ուզէր ձեզ խաղաղութեան մղել», մեկնեց Գրիգոր լրջօրէն: «Պաղաղութիւն: Հօ — հօ հօ», անհարճ ծիծաղ մը փրցուց Լիկինիոս: «Էյ բարեմիտ ծերունի, կը կարճե՞ս որ մեր մէջ խաղաղութիւն կ'ըլլայ այնքան զի-



բաւ ինչպէս վաճառականներուն կամ ճշմարտներուն մէջ: Կոստանդիանոսի եւ իմ միջեւ այնքան քիչ խաղաղութիւն կ'ըլլայ որքան զայլին ու դատնուկին միջեւ: Քաղաքականութեան մէջ աւելի բանականութիւնն է, ոյժն է, զօրաւորը կը հրամայէ խաղաղութիւն, եւ տկարը կը հպատակի: Ամէնքը լուռ կը մնային: Տրդատ հարց դրաւ այն ատեն. «Բայց հիմա իրարու հետ խաղաղութիւն ունի՞ք»: — «Դուն կ'ըսես ատիկա, Տրդատ, խաղաղութիւն, այո, եթէ վեց տարիներու զինադադարը այդպէս անուանել կ'ուզես: Քիչ ատենէն վեց տարի պիտի ըլլայ, մինչեւ այն ատեն երկուքն ալ նորէն պիտի սպառազինուին: Եւ յետոյ նորէն պիտի սկսի: Կ'ըմբռնես որ ես չեմ կրնար զոհ ըլլալ խաղաղութենէ մը կամ հաշտութենէ մը, որ ինծի կը ձգէ միմիայն քանի մը մասերը Հայաստանի, Պարսկաստանի, Ալիքիէի, Թրակիոյ, Մէսոպոտիայի եւ Փոքր Ասիայի — եւ Ուրարտոյ: Կոստանդիանոս ինք միայն կը ճարակի ամբողջ Արեւմուտքը»: Դրեզոն ոտքի ելաւ, եւ կամացուկ մը սրահէն մեկնեցաւ: Միւսները նըստած մնացին, բայց անհաճոյ ձգտում մը առաջ եկած էր: Ո՛չ ոք իրաւունք կուտար Լիկինիոսի: Ո՛չ ոք կը համարձակէր բնոյժի մէջ: Սարգիստիան քանի մը շարք առաջ ինծի զրկեց սա անիծեալ ջնջոց, որուն պէտք է եղեր հաւանութիւն յայտնեմ ստորագրելով: Պէտք է նախ եւ առաջ ճանչնամ, թէ 317 Մարտին ասոյն իրեն յաջորդ պիտի ըլլան իր զաւակները Փլաւիոս, Յուլիոս Կրիսպոս — հարձի մը պտուղը — եւ Փլաւիոս Կղազիոս Կոստանդիանոսը: Ինք ալ իրբեւ իմ յաջորդս պիտի ճանչնայ իմ Լիկինիանոսս, տանաճեալ մանուկը: Հօժօժօժօ: — Ինչ ալ հոս կը տանի իրեններուն: Եւ յարմար ժամանակին: Ասիկա պէտք է ըսեմ: — Դուն բարի փոքրիկ Ինքնակալ», եւ Լիկինիոս, սա բսկով, գարձաւ առ Երեսոյթս յուզումով իր տրդուն, որ անձայն ու անմիտ նստած էր իրեն քով եւ անզորար արմաւ կը սպառէր: «Ես պիտի հողամ ջու տիրապետութեանդ համար, երբ ժամանակը դայ: Հիմա ատենդ է որ արմաւ ուսես եւ զինի խմես, որպէսզի մօրեղբորդ հպատակիս եւ կարենաս պետութիւնդ պահել, դուն ով խեղճ ճղճիմ պրտիկ: Կեր ուզածիդ պէս. խմէ ուզածիդ պէս: Խորհէ, սա Տրդատ թաղաւորն ալ ատենօք իմ քով կերաւ եւ շատ խմեց եւ շատ յանուզն վրան — բայց զործեր ալ բրաւ, խելքը փշածին պէս: Մեզի պիտի օյնէ կռիւի ժամանակ, երբ ջու պետութիւնդ ձեռքդ առնեն. սն չէ մոռցած, թէ մենք ինչեր բրինք իրեն եւ իր քրոջը, երբ խեղճ ու պրտիկ սպաստանեցան մեր քով, դուն ալ զիտե՞ս այս բաները, հէ»: Լիկինիոսին այս տանաճեալ ըթամտորէն նշաններ կ'ընէր, բայց ոսկի բաժակէն խմելը կը նայէր: Լիկինիոս

բերանը բաց կը խնդար. «Հիմակուրնէ պիտես. լաւ ճնկող, լաւ Ինքնակալ»:

Ասով ինք իր ձեռքով նորէն լեցուց պրտիկին բաժակը, եւ այնքան ուժով գրաւ տնոր առջեւը որ կարծիք զինի հեղեղ մը թափեցաւ դաւաթին եղերքէն սեղանի ծածկոցին սնդուսէ ծաղիկներուն կաղապարին վրայ: «Ո՛չինչ, բոլորովին ոչինչ», միթիթարեց սն իր լեզուստաւ մանչը: «Աս բան մը չէ. Տրդատ թաղաւորը շատ աւելին թափեց մեր տունը եւ անոր արածը միայն զորդ ալ չէր»: Խոսքով զուրաւ երկար ատենէ ի վեր կրակի պէս կարմրած էր, եւ եզրօրը ազդարար մէկ տկնարկին մտիկ բնելով միայն բերանը չէր բացած, հանդուրժած էր: Բայց հիմա իրեն այնպէս Էկաւ որ Լիկինիոս «Երբեմնի Լիկինիանոսը» շափը անցուց: Հանդարտ մը ոտքի ելաւ եւ ըսաւ. «Հրաշալի է զուրաւ գարստանին մէջ, կզբիններն ու զափնեփարդերը կը ծաղիկին եւ վարդերը հրաշալի կը հոտին, Լիկինիանոս, չե՞ս սպեր զալ մեզի հետ եւ ատենէլ զանոնք, կամ կենդանիները եւ ձուկերը եւ կարասները ձկնատանին մէջ»: Մանչը այս խօսքերուն վրայ աչքը անշամ վեր շատաւ, խոշոր խոշոր պտտանները վար կը հրէր եւ դաւաթը կը պարպէր մինչեւ վերջին ուժով: «Հօժօժօ, բայց շատ կ'ըլլայ», ահային քրքիչով մը ըսաւ Լիկինիոս: «Ես ալ արդէն կը վախնայի որ շատ կ'ըլլայ եւ երկար ատենէ ի վեր», զիտել տուաւ մեղմօրէն Կոստանդիոս, Լիկինիոսի կինը: «Յիմարութիւն եւ ըթամիտ կնիկ, երկուքն ալ նոյնը: Կիները քաղաքականութենէն եւ միանգամայն աղանդերի սեղանէն քիչ բան կը հասկնան: Դուն զարատտան դնա: Չես ալ վնասեր հնդկահաւի զլուխով: Ինծի կուզայ որ շատ խմեցիր: Կամ սիրելի եզրօրդ ամօթալի զործերուն համար արիւնդ զլուխդ ցատկեց, հօժօժօ: — Խմէ, աղայ, խմէ»: Կոստանդիոս բերանը չբացաւ: Շատ բան հասկնող նայուածքով մը մոխրազոյն աչքերը Խոսքով զուրաւ իր լեզուով, ոտքի կեցաւ եւ անոր հետ զլուխը ծրուած դուրս ելաւ: Եւ թաղիա չբաշուեցաւ իր ամուսինէն: Իր առաջին նայուածքը Լիկինիոսի անախորժ եղաւ: Լիկինիոս ուզեց որ սա ալ շաշուի երթայ, եւ սկսաւ աղիկ խօսքեր ընել, եւ իր կեանքէն այնպիսի բաներ պատմել, որոնք շատով իր նպատակին հասցուցին զինքը: Եւ թաղիա կամացուկ առաւ քայից եւ զնաց միւսները փնտռեց պարտէզին մէջ: Հիմա Լիկինիոս գարձաւ իր այցելութեան զլիսաւոր նպատակին եւ սկսաւ գարձալ Կոստանդիանոսի հետ իր յարաբերութիւններէն: Խօսակցութիւնը անցած մըն ալ ընդհատուեցաւ իրիկուան շատ ճոխ ճաշին պատճառաւ, եւ այնուհետեւ իշխանները քաշուեցան արքայական դահլիճը եւ Լիկինիոս գարձալ սկսաւ իր մտազրած ծրարէն: Իր գաղափարը այն էր որ Տրդատը Կոստանդիանոսի դէմ

դաշնակցութեան մը քաշէ եւ անոր հետ դործակցութեամբ պատերազմական յատակադիժ մը պատրաստէ :

Կէս դիշերը մօտ էր : Տակաւին կը խօսէր ու կը խօսէր Լիկինիոս : Տրդատ վարանստ էր : Փայլուն քրտինքը կը շողար ճակատին վրայ : Լիկինիոս հեղնութեամբ կը մերժէր բոլոր անոր առարկութիւնները, եւ կը պնդէր սա կէտին վրայ, թէ Տրդատ անհաւատարիմ է, ապերախտ է, վատ ու խեղճ : Ի՞նչպէս կրնար ենթադրել, յաւակնիլ թէ Կոստանդիանոս հիմնովին, իրօք քրիստոնէայ է, պատուաւոր մարդ մըն է, որ իր խօսքին աչրն է, եւ որեւէ զէշ զիտումնէ՛ր չունի Լիկինիոսի դէմ : Ըսել է Տրդատ չի ճանչնար Կոստանդիանոսը : Ազուէս մը, կեղծաւոր մը, խառնակիչ մը եւ ստախօս մըն է ան : Մնափառութիւն եւ ընչաքաղցութիւն անոր բոլոր դործերուն շարժառիթն են : Քրիստոնէաներուն հետ անոր նպատաւոր երթալը ուրիշ բան չէ, եթէ ոչ նենդութիւն, անոնց նպատան ու օգնութիւնը ձեռք բերելու համար : Տրդատ ինք կրնայ կրօնասէր, ջերմեռանդ բլլալ : Եւ ասիկա հասկնալի է այնքան ցոփութիւններէ, անառակութիւններէ վերջ : Բայց երբ կը յաւակնի կը պնդէ, թէ ինք իրրեւ քրիստոնէայ թաղաւոր այլեւս չի կրնար պատերազմ մղել եւ օտարին դործերուն միջամուխ բլլալ, ասոյ ինքզինքը ապիկար կը հանդիսացնէ տիրապետելու, եւ Հայաստանը իրրեւ հռոմէական աւատական երկիր կառավարելու : Ի՞նչպէս կրնար ուրեմն Լիկինիոս հանդիսա բլլալ եւ իր սեփական նպատակը հետապնդել, եթէ չկարենայ վատահ բլլալ սո՛ւ մասին, թէ Տրդատ դորաւոր բազուկոյ մը անխախտ պիտի պահէ կարգը Արեւելքի մէջ եւ պիտի դապէ ամէն վտարանջութիւն : Կամ ինք լրջօրէն կը հաւատա՞յ արդեօք որ պարսիկները պիտի յարդեն իր քրիստոնէական քաղցրարարողութիւնը եւ խաղաղասիրութիւնը : «Դուն անխելք», պոռայ Լիկինիոս սաստիօրէն, «դուն շատ չանցած պիտի իմանաս, թէ ես որքան շիտակ կը խօսիմ եւ կը տեսնեմ որ քրիստոնէական հաւատքն ու ինքնակալութիւնը միասին չեն երթար : Կամ պարզ քրիստոնէայ մը եղիր եւ նեւէ ծիրանին, կամ հազիր ծիրանին եւ վարէ քու սուրդ դարձեալ, ինչպէս սովորեցար դուն իմ տունիս մէջ» :

Տրդատ, անձայն ու անխօս, պատուհանին առջեւ բարձրած էր փառաւոր աթոռի մը վրայ, եւ անդիտակցարար կը յառէր մերթ դուրսը ամառնային ճաճանչաւտ դիշերուան, մերթ Լիկինիոսի զինիոյ ու գայրոյթոյ կարմիր երեսին, որ ճիշտ հիմա սարսափազդու էր իր տեսանելի առելութեան եւ սրտմտութեան մէջ : Իր նայուածքները կը փայլատակէին : Ծարունակ հոս ու հոն կ'ընթանար, նորէն կուզար կը կենար Տրդատին առջեւ, յետոյ պատուհանը : Միշտ սկսելով անկէց դր տասը անգամ կրկնած էր արդէն, միշտ աւելի կը

սաստկացնէր շեշտը այն մասին, որ Տրդատ անոր ձեռքերուն մէջ ճմրթկուած թուղթը անէ եւ պայմանադրութիւն ստորագրէ : Տրդատ գլուխը երկու ձեռքերուն մէջ դրած կը հեծեծէր. «Ձեմ կրնար : Ձեմ կրնար, Լիկինիոս» : — «Ի՞նչո՞ւ չես կրնար : Ապերախտ, վատ» : — «Ո՛չ, ասիկա ոչ», պոռայ Տրդատ եւ վեր ցատկեց : «Ո՛չ, յանուն իմ արքայական պատիւին, ո՛չ, չեմ կրնար, չեմ ուզեր ապերախտ բլլալ, ես վատ չեմ, օ Լիկինիոս» : — Տրդատ թեւերուն մէջ առաւ ինքնակալը : — «Հաւատա ուրեմն ինձի, — հաւատա ուրեմն — ես վատ չեմ, ո՛չ, միայն թէ ասիկա չեմ կրնար, նաեւ իրրեւ քրիստոնէայ ոչ : Եթէ սակայն պատահի — ո՛վ Լիկինիոս, եթէ բլլայ որ դուն գտնուիս կարօտութեան մէջ, որուն դուն չես պատասխանատուն, եթէ բլլայ որ դուն կարենաս ինձի ապացոյցներով հաստատել, թէ Կոստանդիանոս առանց իբրաւունքի եւ առանց բանաւոր պատճառի քու դրաց յարձակած է, այն ատեն, Լիկինիոս» — «Հօհօհօ», պոռայ Լիկինիոս անոր երեսն ի վեր, «այսինքն պէտք է սպասեմ եղեր մինչէ՛ս որ ան իմ վրաս յարձակի, այս, մինչեւ որ ան իմ գլուխը քեզի դրկէ Վաղարշապատ, ինչպէս ատենօք Մաքսնտիոսինը Ասիրիկէ — այն ատեն, այն ատեն, սիրելի երախտագէտ պարտապան, այն ատեն կ'ուզես դուն քու վաղեմի առօրնջականիդ եւ զինալարժողիդ օգնութեան դալ : Ծատ բարեսիրտ : Ծատ» : Հեղնական, դառն քրքիջ մը ետեւէն : Առաւ քալեց Տրդատին քովէն, եւ սրահին մէջէն ոտքերը գետինը դարնելով կատաղարար երթալու ատեն, զոչեց. «Լաւ, լաւ, այսպէս թողուր դիս հիմա, ապերախտ, ես ալ զիտեմ, երբ ժամանակը դայ, թէ ի՞նչ պիտի խորհիմ քու մասիդ, եւ դո՞վ պիտի կարգեմ թաղաւոր Հայաստանի, երբ յաղթութիւնը եւ աշխարհի տիրապետութիւնը ինձի վիճակի» : — «Լիկինիոս», պոռայ Տրդատ ցաւով : «Այդպէս պէտք չէ բսն : Ձիս կը շարժարես : Ի՞նչպէս կրնամ քեզի ապացուցանել թէ ես ապերախտ եւ վատ չեմ» : — «Միայն այս կերպով, Տրդատ» : — Լիկինիոս անգամ մըն ալ թուղթին ծալքը բացաւ եւ անոր երեսին բռնեց պայմանադրութիւնը : Տրդատ սարսափեցաւ : Կարծես կենդանի պատկերներու շարքի մը մէջ աչքին առջեւէն կուրային կ'անցնէին իր երիտասարդութեան ժամանակի ապրումները Լիկինիոսի զղեակին մէջ : Առաջին ընդունելութիւնը. հայրական, մայրական, եղբայրական — նորէն պակաս բոսած կ'ըլլայ : Թաղաւորի պէս նայուելը : Ծատ տարիքոտ Լիկինիոսի — հօրը — վարժունքը, իրրեւ թէ իր տարեկից բնկերը բլլար : Ինչպէս ամէն բան կը բոստնէր ինձի հետ, ի՞նչպէս կը ջանար դրօսցնել դիս եւ զուարճացնել, ինչ բնէր ինձի, ինչ տար ինձի, այն տարիքը սոսած եղբայրը : Ինչեր կը պահէր կը ծածկէր ինձմէ եւ կը իննայր պատիժը, ինչպէս կը պատուէր դիս ամէն տեսական մարդոց առջեւ եւ զինուորներուն

առջև: Յլաղոււր նժոյգը, Բրիստոնոյը: — Յիշատակներու այս ծոփուն մէջ Տրդատ երեսը կը թաղէր: Իրեն մէջ ձայն մը կը զոտար. «Ո՛վ Լիկինիոս, ի՛նչպէս իրբեւ հաւատարմութիւն եւ բարութիւն կը նկատես բան մը որուն համար ես պարտաւոր ըլլամ Երախտապէս ըլլալ քեզի, երբ այդ քու առաջարկած բանը ես Քրիստոսի միջոցաւ սովորած եմ մեզք եւ ազականութիւն ճանչնալ: Չեմ կրնար, չեմ կրնար, Լիկինիոս», զոչեց: «Ներէ ինձի: Վստահ ինձի: Քու զիտցածէդ, պահանջածէդ աւելի հաւատարիմ եմ ես: Ես կապուած եմ, Լիկինիոս»: — «Կապուած», հարցուց Լիկինիոս, զարմանքի երկաբաշունչ կանչով մը: «Ի՞նչպէս: Կապուած: Որո՞ւն: Որմէ՞ն: Թաղաւոր մը — կապուած: Տարօրինակ թաղաւոր»: — «Կապուած թաղաւորի մը, որ մեր երկուքն է աշխարհի բոլոր թաղաւորներէն ալ մեծ է: Քրիստոսի կապուած: Ան իմ Ինքնակալն է: Ես պէտք է անոր ծառայեմ: Իմ անձս անոր նուիրուած է, Լիկինոս: Ան զիս փրկեց մըտազարութենէ եւ դժոխային տաղնապներէ: Երզուրնցայ անոր հաւատարմութիւն, Լիկինիոս, հոգիս, կեանքս յախանականութեան մէջ սա կէտէն կախուած են, թէ ես անոր մտիկ կ'ընեմ: Չեմ կրնար օգնել քեզի: Դուն կը փնտռես իշխանութիւն, պատիւ, համբաւ, հարբատութիւն: Միշտ սա եղած է քու փնտածներդ: Աս փնտած են քեզմէ առաջ բոլոր ինքնակալները եւ դատած: Ո՞րք են անոնք, քրիստոնեաները սպաննողներն ու հարածողները: Մաքսիմիանոս կախաղանի վրայ մեռաւ: Գաղերիոս — զուն զիտես: Մաքսենտիոսի զուլը: Մաքսիմիանոս Դադայի վախճանը: Դիոկղետիանոս — Օ, Լիկինիոս, որեմն այսպէ՞ս պէտք է ըլլայ: Պէ՞տք է միթէ որ զուն ալ ահեղ Քրիստոսի դատաստանին ենթարկուիս: Չե՞ս նշմարեր, ան հիմա արդէն յաղթող է եւ տակաւին աւելի պիտի ըլլայ: Սիրեցեալդ իմ Լիկինիոս, ուստի քրիստոնեայ եղիր: Դուն ալ ստանձնէ իսաչք փոխանակ սուրին եւ հաւատաւ, թէ ամենալաւ Ինքնակալը ան է որ Քրիստոսով կը կառավարէ: Իմ պետութեանս ամէն կողմերը զնա: Հարցուր ժողովուրդին: Տես, քննէ բոլոր հարստութիւններն ու եկեղեցիները, զպրօնները, հիւանդանոցները, հիւրանոցները, պատասպարաններ, բանակը, կ'ըսեմ քեզի, Լիկինիոս: Երբեք իմ ժողովուրդս այսքան երջանիկ, հարուստ, ապահով չէր եղած»: Տրդատ բաց պատուհանին առջև զնաց: Խաղաղութեան աննկարագրելի պատկեր մը կը փռուէր անոր արտասուազին աչքերուն առջև: Քաղաքին տուները սպիտակաչոզ կը փայլատակէին ականակիտ լուսնկային տակ: Արաքս զետր արծաթափայլ կը շողար: Բլուրները կը ցուցնէին իրենց մեղմ դարեւանդները: Արարատ ափաշկարայ կ'աշտարակէր վերքմբերձիկ, եւ անոր ճերմակականանչ սառնակոյտերը կարծես երկինքին կը շփուէին: Տրդատի հողին կը յորդէր: Որովհետեւ անոր աչքերը կը

հաւատային հայկազն երկրին մէջ Քրիստոսը տեսնել, որ արտերէն կ'անցնէր: Անոր ետեւը կեցած, Լիկինիոս կը խնդար, կը հեղնէր, կը հայհոյէր, որ չէր կրնար այլեւս զսպել ինքզինքը եւ կը պնդէր զարձեալ թէ Տրդատին բոլոր պատուականները ապերախտութիւն եւ դաւաճանութիւն էին: Ալ յոյնեցաւ Տրդատ. «Լաւ, պիտի ապացուցանեմ քեզի, թէ ես քու ճանչցած մարդը չեմ, այնպէս ինչպէս կը կարծես: Քեզի կը հատուցանեմ ձեր տունին մէջ կերածս եւ խմածս: Պէտք է այսպէս ըլլայ — ես քեզի օգնութեան կուգամ, եթէ կարենաս ուրտել ինձի, թէ զուն անձամբ որեւէ պատերազմի պիտի չձեռնարկես Կոստանդիանոսի դէմ: Անիրաւութեան դէմ քեզ պաշտպանել — պարտական եմ»: — «Լաւ այդպէս: Կր մնա՞ս բսածիզ վրայ», հարցուց Լիկինիոս խուզարկու նայուածքով: «Եթէ պէտք է այդպէս ըլլայ»: — Եւ Տրդատ ստորապրեց իր անունը:

\*\*\*

Հաղիւ պատահած էր ասիկա, զոչուր ու տազնապ եկան վրան: Խարուած էր: Իրմէն վարպետ փրթաւ այն միւսը: Որովհետեւ երբեք հաստատուած է միթէ ապահովարար, թէ ո՞վ կը սկսի պատերազմը: Ո՞վ պիտի հաստատէ ստիկա: Ոչ որ կ'ուղէ յանցանքը վրան առնել: Ո՞ր պատերազմին սկիզբը, առաջին քայլը որ անոր կը տանի: Հապա Գրիգորը: Ի՞նչ պիտի բռնէ հիմա անիկա: — Դուն ուրացար քրիստոնէութիւնը: Դուն օգնութիւն խստացար հեթանոսին, քրիստոնեաներուն հալածիչին քրիստոնեաներու յայտնի բարեկամին դէմ: Գրիգորի մասին անձկութիւնը զրուած էր Տրդատը: Բաց պատուհանը վազեց: Օղ տոնելու կ'աշխատէր: Բարձր, վախ կերպարանք մը ժուռ կուզար պարտէզին երկար ճամբաներէն մէկուն մէջ, որոնց մաքուր զայսխաղէ յատակը որոշակի կը ճշդուէր զիչերէն դուրս:

Կերպարանքը մերթ կ'երթար յամբօրէն, մերթ արաղ, դարձեալ երկար առն կը կենար, կը կծկակէր տօսախներու պողոտայի մը վըրայ եւ երկար առն կը մնար անշարժ. նորէն կը ցատկէր, ժուռ կուզար, կը վազէր, կ'իջնար: Գլուխն ու ձեռքերը կը շարժէին սաստիկ անձկութեամբ, այնքան բարձր կը շտկուէր որ պարեկօտին ծալքերը ետեւ կ'իջնային եւ երկու երկայն ճերմակ թեւեր երկինք կը բարձրանային: — Տրդատ յակամայս աղաղակ մը արձակեց, դարձաւ պատուհանէն, անցաւ Լիկինիոսին քովէն, եւ անոր հեղնական ծիծաղը միայն կը լսէր. «Դեռ անձկութի՞ւն, թաղաւոր: Կոստանդիանոսի դէմերը, հօհօհօ: Ես անկողին կ'երթամ»:

— Ասոր վրայ քանի մը վայրկեան վերջ, Տրդատ իր մտերիմ Գրիգորին մօտ էր, եւ իմացաւ թէ Գրիգոր, անձկութենէն հոս ու

հոն նետուած, այլևս չէր կրնար մնալ իր անկողինը: Գժբախտութիւն մը մօտալուտ կը զգար: Քրտնաթաթախ դուրս չ'ապեց արձակ օշին, անդադար կ'աղօթէր և ուղիէն մղուած երբեմն կէս զիշերէն վերջ արքայական դարաստանը կ'երթար: Երկու իշխանները տեսաւ բաց պատուհանին առջև, լսեց և զիտեց որ երկուքին միջև պայքար մը ծայր տուած էր և կը սուշակէր թէ ի՞նչ բանի վրայ է: Տրդատ բացէն խոստովանեցաւ իր բրտը: Գրիգոր սոսկաց: Բայց մեղազրանքի բոտ մը չեկաւ իր բերանէն: Երկար լուռութենէ վերջ իր միակ զիտողութիւնը եղաւ. «Եղածը եղած է: Տէրը գարձեալ պիտի օշնէ և պիտի սղորմի մեզի: Սուր անողոր սուրով կ'իշնայ»: Գրիգոր պալատին մէջ այլևս չէր երեւնար, մինչև որ Լիկինիոս և իր հետեւորդները գարձեալ մեկնեցան պալատէն և Վաղարշապատէն, սուրբութիւն պատճառելով ամէնուն:

Արտաքնապէս հանդարտ անցան 320 տարւոյն աշունն ու ձմեռը: Տրդատ թագաւոր հանդարտած էր և շատ աշխատութիւններու և ճամբորդութիւններու մէջ Լիկինիոսի հետ կնքած զժբախտ պայմանագրութիւնը մոռցած: Բայց ոչ Գրիգոր: Ան ալ կը ճամբորդէր համայնքէ համայնք: Եւ իր սիրտը ամէն ժամանակ աւելի կը ծանրանար հիմա: Կը զգար սապանիին մէկ ընդդիմութիւնը պետութեան մէջ, մասնաւորապէս Տարօն զուտոնէն մէջ: Չէր ալ կրնար յատուկ պատճառներ տեսնել աճող վրդովութիւն, խմորումին համար: Ամէն կողմ նոյն պատիւներով կ'ընդունուէր: Իր հրամանները և փափաքները միեւնոյն ճշտութեամբ կը զործադրուէին: Միշտ մեծադոյն հոգ կը պատճառէր իրեն երբեմնի եղիպտացի ձգնուոր Աղեքսանդր: Անխոնջ արթնութեամբ կը հսկէր անոր վրայ: Եւ միշտ կը խրատէր թագաւորը որ մեծ փտասնութիւն չունենայ անոր վրայ: Ինչո՞ւ Տրդատ անոր հազորդէր է Լիկինիոսի հետ պայմանագրութիւնը և ամբողջ բանակցութիւնը: Աղեքսանդրի երզումը ի՞նչ արժէք ունէր Գրիգորին համար, թէ ամենափոքր կէտ մը անգամ պիտի չհազորդէր իշխաններուն: Բայց Տրդատ փտասնութիւն ունէր անոր վրայ, և հանդարտեցուց Գրիգորը, թէ խիստ յոռետես է, թէ կ'ուրանայ հաւատքը, թէ այլևս անիկա հաւատքով զօրաւոր այն հին Աստուծոյ մարդը չէ, որ ամէն ինչ Աստուծակէ միայն կը սպասէ, և ոչինչ սուրէն, բանականութենէն, ուժէն: Ճիշտ այս էր որ աւելի կը ծանրացընէր Գրիգորի տառապանքը: Ճշմարտութիւնը այս կէտի մէջ չէ՞ր կայանար միթէ: Չէ՞ որ Տրդատ հիմա չափազանց շատ կը նայի մարդոց, փոխանակ Աստուծոյ և անոր հրաշալի ճամբաներուն, միջոցներուն նայելու:

Այս պատճառաւ 321-ի դարնան Տրդատի համար երկինքէն կայծիկի պէս իջած եղաւ պետութեան սուրհանդակներուն բերած սա

լուրը, թէ հիւսիսի իշխանները կը մերժէին տուրք վճարել, և կը յայտնէին, թէ թագաւորը ի մօտոյ պիտի խմանայ որ Հայաստանի մէջ հին հաւատքը տակաւին չիջած չէ: Հայաստանի մէջ Ահուրայի իշխանութիւնը բոնութեամբ բանդուէր է, անոր քարմէրը և հիւսիսային իշխանները գարձեալ բոնութեամբ պիտի օժանդակեն անոր կրկին տիրապետութեան: Արշակունեաց տիրապետութիւնը փախճան պիտի ունենայ: Պետութեան կէսին ալ աչքը ուրիշ թագաւորի մը վրայ է, որ հին թագաւորներուն սղին իրեն մէջ կը կրէ, ախճին ոչ թէ գտնուելին սղին: — Այս լուրին վրայ քիչ ժամանակ վերջ Վաղարշապատի արքայական գահիճին մէջ սրբան սիրտերնին կտորած իրարու մօտ եկած էին Տրդատ, Գրիգոր, Եպիսկոպոսները, իշխանները և զօրափարները: Պիտի կրնայինք խուսափիլ սուրէն, Եթէ բաւական կանուխ մտիկ բրտը բլլայիք իմ խօսքիս, և սուրով կոխ մղած չըլլայինք Աւետարանին հաւար: Նոյնիսկ հիմա — փրկութիւնը պատերազմ չընէն է: Ուխտաւորի իր հազուստով, աղքատ, հիւանդ, զուտառ, ինչպէս որ է, արքունիքէ արքունիք պիտի ճամբորդէ: Նախ պէտք է իր արիւնը հոսի, ուրիշ արիւն թափուելէ առաջ: Իշխաններու խորհուրդը երկու մասի բաժնուած էր: Ի վերջոյ սրտուեցաւ որ Գրիգորը զրկուի բոլոր ապստամբ արքունիքները, — առանց որեւէ գինուորական ընկերակցութեան, ինչպէս Գրիգոր կը պահանջէր, բայց — հակառակ Գրիգորի բոլոր ընդդիմութեան — սրտուեցաւ լուռութեամբ սպառապիւնուիլ, հաւատարիմ իշխաններուն և լեզուններուն փտասնել, անոնց մասին հարկ եղած ապահովութիւնը ձեռք բերել և ամէն կերպով հսկողութիւն կատարել և ուղարկութիւն ընել պատրաստ բլլալու համար:

Երբ Տրդատ և Գրիգոր միեւնոյն մնացին, Տրդատ յոյնած ընկողմեցաւ գահճոյրին աթոռին վրայ սոկեցնցուղ ամպհոփանիին տակ: Ընդարձակ, հոյակապ սրահը Արարատի վրայօք մարը մտնող արեւուն շողովը ողորուած էր: «Գրիգոր, հիմա զիշեր կ'ըլլայ: Մեր լոյսը պիտի ալօտանայ երկրի վրայ: Արդեօք դեռ հնար չէ՞ — «և յերկրի խաղաղութիւն»»: Ուրեմն պէ՞տք է որ սուրը միշտ ուտէ: Ո՞վ իմ չար, տկար ժամս, իմ փախս: Հիմա — ի՞նչ ընկու է»: — «Ապասել: Աստուած պիտի ըտէ: Հաւատա ինձի, բարեկամ: Սուր սուրի դէմ աշխարհի մեծերուն թաղաւորութեան մէջ: Իսկ խաղաղութիւն Տիրոջը թաղաւորութեան մէջ: Թող անոնք ընեն, ապստամբները: Աստուած իրենց այնքան միայն ոյժ կը ձգէ որ արդէլք ըլլան քեզի քու ուխտը կատարելու»: — «Իցիւ», հառաչեց Տրդատ խորապէս: «Բայց երբ թշնամիներս աւելի առաջ երթան, — այն առեն ի՞նչ պիտի բնենք, Գրիգոր»: — «Հաւատք»: Յետոյ Գրիգորի ձայնը առաւ կրկին իր մարգարէական և յաղթութեան մասին ապահով շեշտը, և իր

չրթունքներէն հնչեցին զօրեղապէս սա բառերը: «Երանի այն ժողովուրդին, որուն Աստուածը իր Տէրն է որ ժառանգ բնաբան է զայն իրեն: Տէրը կը նայի երկինքէն եւ կը տեսնէ բոլոր մարդոց սրբիները: Իր հաստատուն դասէն ան կը դիտէ զամէնքը, որ երկրի վրայ կը բնակին: Անոնց ամէնուն սիրտը կ'ուզուի կը վարէ, կը դիտէ անոնց բոլոր գործերը: Արեւէ թաշաւորի օգուտ չունի իր մեծ իշխանութիւնը, զօրութիւնը: Հսկայ մը չի կրնար իր մեծ ուժով ինքզինք ազատել: Տես Տիրոջը աչքը կը տեսնէ իրմէ վախճանները: Կը տեսնէ իր բարութեան յատկանքները, թէ ան, Տէրը, իրենց անձերը պիտի փրկէ մահաւանկ եւ պիտի կերակրէ զիրենք սովի տան: Մեր անձերը Տիրոջ կը յարին: Ան մեր ապաւէնն է եւ վաճանք: Արտօճեալն է՛ր սիրտը կ'ուրախանայ անոյ եւ կը վառահանք անոր սուրբ անունին: Քու բարութիւնդ, ս'ի Տէր, մեր վրայ թող բլրայ, ինչպէս մենք կը յուսանք քեզի»: (ՍՍՂՄ · 33):

Մէկ ժամ վերջ, երբ իրիկուան սեղանի նստած էին, զերին ներս մտաւ նոր ժամանած նամակներով: Քանի մը վայրկեան — եւ Տրդատ ձեռք առաւ նեղսրտութեամբ Լիկինիոսի պատգամադիրը: «Հիմա՞: Ո՞վ սկսաւ: Ո՞վ է յանցաւորը: Ո՞վ է պարտաւորեալը: Լիկինիոս ապացոյցներ ունի՞, թէ Կոստանդիանոսի արքունիքին մօտ պարսկական զեւպանութիւնը, իրեն օգնութիւն առաջարկած կ'ըլլայ Լիկինիոսի դէմ»: — «Մի հաւատար, Տրդատ», բնգմիջեց Գրիգորը: «Կոստանդիանոս իրօք հրաւիրե՞ց Պարսիկները օգնելու իրեն: Նախապէս զեւպան զրկե՞ց Պարսկաստան: Լիկինիոս պէտք է լրտեսներ ունեցած ըլլայ Կոստանդիանոսի արքունիքին մէջ թրխելը, կամ Եօջի արքունիքին մէջ, կամ երկու արքունիքներուն մէջ ալ: Ես կը նկատեմ որ այս բոլոր բաները կը նախադար ան երբ հոս էր, եւ ասոր համար կ'ուզէ իմ օգնութիւնս: Խարդախը, չ'ուզեր որ ես իրեն օգնութեան երթամ, այլ իր կոնակը ապահովեմ եւ Պարսիկները զսպեմ: Նորէն պատերազմ Պարսկաստանի, Հայաստանի հին ժառանգական թշնամիին դէմ»: Տրդատ երկար եւ հետախօսյալ ակնարկ մը նետեց զահոյքին մօտ պատէն կախուած եւ իրիկնամուտի լոյսին մէջ փայլող իր զէնքերուն վրայ: Սարսուռ մը զգաց իր ամբողջ մարմինին մէջ: Նոր, երկար, հետախօսյալ նայուածք մը սուրին վրայ, եւ Տրդատին այնպէս կուգար որ այդ սուրէն հիմա իրեն մէջ կը հոսէր երկար առեւնէ ի վեր վարժութիւնը կորսնցուցած ոյժին եւ քաջութեան զգացումը:

«Ի՞նչ կը դրէ ուրեմն», հարցուց Գրիգորը: «Կոստանդիանոս յանցաւոր կը հանէ զայն, թէ հակառակ իր խոստումին Դանուբի բերանը գտնուող Գոթացիները չի զսպեր: Եւ ինք պարտաւորուած է անոնց դէմ քաշել եւ ետ մղել, եւ ասկէց կը վնասուի Լիկինիոսի

Լիկրամատը»: — «Հիմա տեսի՛ր, Տրդատ, աշխարհային իշխանները ի՞նչպէս կը տիրեն: Ի՞նչպէս վնասեր է Լիկինիոսի սահմանը: Այդ մասին բան մը չի գրեր: Կոստանդիանոս այդ մարդուն սահմանները կտրեր անցե՞ր է, ի՞նչ բերք է, բան մը չ'ըներ: Քանի մը չիւզ խոստանակե՞ր բերք է, սահմանէն երկու մղոն հեռուէն: Օ, վայ իշխանական ոյժին, պատուախնդրութեան եւ բնչաբարկութեան: Տրդատ, այսպիսիներու հետ խոսք մի խոսար: Լիկինիոս քեզ խորել կ'ուզէ»: — «Կը գրէ նաեւ թէ պիտի արգելի իր պետութեան մէջ Կոստանդիանոսի պատկերով զբաններուն շրջաբերութիւնը»: — «Գրածը նետէ, թաղաւորն այ նետած կ'ըլլաս: Եւ անա պատերազմ: Կոստանդիանոս ստիկա պիտի անէ իրբեւ պատերազմի յայտարարութիւն: Այդ, ո՞վ սկսած եղաւ: Ո՞վ է յանցաւորը: Աստուած որս՞ու օգնէ: Ես ի՞նչ պէտք է ընեմ»:



Քանի մը շարաթներ անցան նեղիչ, խորհրդաւոր լուծեան մէջ: Կարծես ժամանակը դժբախտութիւն մը կ'որոշար: Օգոստոսի իրիկուն մը Տրդատ եւ Գրիգոր պալատին տանիքին վրայ բազմած էին արձակներու, տունկերու եւ ծաղիկներու առատ կեդրոնի մը մէջ: Կ'ազդարիչ գովութիւն եւ բարոյական շրջանակ: Տանիքի մը վրայ հաստատուած այս հոյակապ պարտէզը ախորժ խոնարութիւն մը կը ստանար բարձրացայտ շարուանէ մը: Բարեկամները բնկողմանած էին բարձր — աթոռներու վրայ եւ լուռ ու մունջ կը նայէին վար լիճերուն, զետին, անառիւն եւ պողպարեղ զաշտերուն, եւ վեր զէպի երկու կատարները Այրարատի, որուն ձիւնապատ սարերը տակաւ կը շիկնէին այդայդային մասնորոն տակ: Տրդատ անձնատուր կ'ըլլար այն յոյսին, թէ Ինքնակալ Լիկինիոս զերժ պիտի նկատէ զինքը որեւէ յանձնառութենէ, եւ ստորագրուած այն գժբախտ պայմանագրութիւնը չեղեալ պիտի համարուի Աստուծոյ սպորմութեամբ: «Ամէն բանի մէջ վստահէ Աստուծոյ, քու բոլոր գործերդ անոր յանձնէ, եւ ան խաւարէն քեզ պիտի կանչէ իր սքանչելի լոյսին: Իրիկուան դէմ լոյս պիտի բլրայ: Բարեկամս, սիրելի Տրդատ, հիմա ամէն ինչ պայծառ ու զեղեցիկ եղաւ մեր միջեւ, եւ մեր ու Աստուծոյ միջեւ: Թող վստահինք անոր: Եկուր, թողունք հիմա ամէն հող ու մտառանջութիւն, եւ յառեւնք սեւեռներ մեր նայուածքները Տիրոջը պարզած սա բնական փառայեղ հրաշալիքին: Աղաղակէ, կանչէ ինչպէս Դաւիթ Նաթանի առջեւ, Տէր, ո՞վ եմ ես եւ իմ տունս, որ Դուն զիս այսքան առաջ տարիր: Հեռուէն, ապագայէն ան արդէն քեզի խօսած է, Տրդատ»: Անկարագրելի զեղեցիկութեան պատկեր

մը. երկու բարեկամները, այս շրջակայքին և ամառնային իրիկուան մը այս հրաշագեղ լուսաւորութեան մէջտեղ: Գրիգոր, ձերացած, կորաքամակ, արծաթի պէս ձերմկած, գլուխը Տրդատին սիրտին վրայ դրած էր: Տրդատ ուղիղ կը նստէր, կոնակը կը թնայուցած, թեթեւ վերարկու մը հագած, և կը գլխէր ծանրախոհ, նաև շնորհապարտ ու երջանիկ, շուրջը բոլոր իր թաղաւորական երկիրներուն:

ՏՅ տարւոյն Յունիսի վերջերը գարձեայ Տրդատի և Գրիգորի շուրջ հաւատուած էին իշխանները: Թաղաւորը բազմած գահոյքին վրայ: Իրեն շուրջ իշխանները խորհրդականի աթոռներուն վրայ: մէջտեղը Գրիգոր իր անբաժանելի վերարկուին մէջ, աջ ձեռքը ջղախորէն կը թնայուած ուխտաւորի անտաշ ցուպին: Ինչպէս ալ ձերացած էր: Երեսները թարշածած մար կախուած, աչքերը ալ աւելի խորը սուղուած փորսքներուն: Անպատմելի թախծութիւն մը կը խօսէր անոր մէջ մի նայուածքէն, մէջ մի գլխաւորէն և ամբողջ կորաքամակ կայքէն: Գծուարաշունչ կը պատմէր իր ճամբորդութիւնը ապառամը իշխաններուն արքունիքները: Յաճախ, խօսքը ընդմիջելով, կը կոսէր արքունիքին հետ: Բերան և շրթունք կը գողային ցաւէն: Ո՛չ մէկ ծանր խօսք, ոչ մէկ բարկութիւն, հակառակ անոր որ այդ իշխանները ծաղրանքով, հայհուակներով և կշտամբանքներով մերժած էին, նոյնիսկ քար նետեր, թրեր ևն, ծեծեր ևն, խօցեր ևն գինքը: Բայց Տրդատի աչքերուն մէջ կրկին կը մտնէր հին ժամանակներուն այն ահեղ կրակը, իր սնուցանքը, շրթունքները, բերանը — ամբողջ գլխքը կը գողար, և իր փայլատակող աչքերը միշտ հոն պատին գէժ իր սուրբին վրայ: Բայց չփրաւորելու համար սուրբին համեստութիւնը և անոր սրտաշարժ պաղատանքները սրակպի կուտակել չուենանայ, և իր պատճառաւ վրէժխնդրութիւն չգործադրուի, Տրդատ և իր իշխանները գայրոյթի վերջին պոսթիկուսէն կը գլուշանային, միմիայն այս նկատումով կը քաշուէին: Բայց երբ Տրդատ յանկարծ ցատկեց, իր սուրը պատէն յափշտակեց և գարձուրելի լրջութեամբ մը երեք անգամ օդին մէջ երկրցուց և պոսայ. «Աստուած վկայ, սուրս պիտի լուծէ այս անիրաւութեան վրէժը», և ահա, բոլոր իշխանները, կարծես ողի՛ մը բռնուած, իրենց սուրբը քաշեցին պատեաններէն, և հանդիսաւորապէս խոնարհեցուցին զանոնք թաղաւորին առջև: Եւ իրբեւ մէկ բերանէ արձագանցեց սա հանդիսաւոր, հօր կանչը. վրէժ, վրէժ: Տրդատի ոտքերը ինկաւ Գրիգոր, փաթթուեցաւ ոտքերուն, երեսը դրաւ անոր շողակնայեա մուսակներուն վրայ, որոնք սուրբին ճերմակ մաղերէն ու մօրուքէն բոլորովին ծածկուած էին: Հեկեկախառն արցունքներ, ջղախական շարժումներ կը տատանէին սուրբին կմախք գարձած մարմինը: Կրցնցուէր ինչպէս երբեմնի իր մարտիրոսական շարժարանքներուն մէջ:

Կարծես փաղարէ մը կը թնայար սա անդադար կանչը. «Սաղաղու-թիւն, խաղաղութիւն, շնորհք, շնորհք: Ո՛չ վրէժ: Դուք մի լուծէք ձեր վրէժը»: — «Աստուծոյ է վրէժխնդրութիւնը»: Չայնեց Տրդատ «Ոտքի եյ, սիրելի բարեկամ, ոտքի եյ, ճշմարիտ սուրբ, կը պաղա-տի՛ք քեզի, ոտքի եյ»: Գրիգոր իր վերարկուն և պարեկօտը ևս ևս տարաւ, միշտ Տրդատի ոտքերուն առջև ըլլալով հանդերձ նաև մերկացուց թեկերը և կոնակը: Չարշարանքներուն ահուկի սպիները իր բառերէն աւելի սրտաշարժ և պերճախօս էին: Բոլոր սուրբը միակ ճարձատիւնով մը իրենց պատեանները գրուեցան: Թաղաւորը իրենը գլխին ձեռք և խոնարհութիւն բրաւ Գրիգորի առջև, հեծե-ծելով: Ջերմայինս ողջագուրեց զայն և գոչեց հատկեալ ձայնով. «Բարեկամս, շեմ կրնար ընդգիծմանալ քեզի, բայց ի՞նչեր պիտի պատահին, ի՞նչ պիտի գայ մեր ամէնուն գլխուն»: — Իշխանները անխօս նստան իրենց աթոռներուն վրայ: Ոմանք, մտառանջ ու անդի-տակից, իրենց գլուխը ձեռքերուն մէջ առած կամ կուրծքին վրայ խոնարհեցուցած: Այս հանդիսաւոր վայրկեաններուն լուսթիւնը ընդհատուեցաւ սուրբին կողմէ, որ քանիցս ձայնեց պաղատապին. «Հաւատք, հաւատք»: Այն առեւ միայն ոտքի ելաւ, երբ իրեն խոստացուեցաւ, անգամ մըն ալ սպասել յարձակում գործելէ առաջ, մինչև անհրաժեշտ գարձած բոլքէն: Իշխանները ակամայ ձղեցին սրահը: Քանի մը օրեր անցան խոսքի լուսթեան մէջ: Փոխարկէն առաջ լուսթիւն: Աստուած մը գերին գարձեայ եկաւ թաղաւորին աշխատութեան սենեակը, ուր միշտ մտահոյ կը խորհէր Լիկինիոսի վրայ: Անոր և Կոստանդիանոսի հետ անոր յարարեական վիճակին մասին շարաթներէ ի վեր բան մը չէր խմայուած: Լիկինիոսի ծանօթ գիրը կը նկատուէր ծայրայեղ փութիստութիւն և յուզումի քայլ մը: Գերիին բերած պատգամագիրը Բիւզանդիանէն կուգար, և կարելի եղածին շափ շատ և կարելի եղածին շափ մեծ բանակ մը օգնութեան կը կանչէր: Կոստանդիանոսի բանակը 130.000 հօգի էր: Նաւատորմիցը, 200 պատերազմական և 1.000 բեռնանաւ, հրաժա-նատարութեամբ Կոստանդիանոսի երկրագոյնը գաւկէն Կրիսպոսի կը նուէր գէպի եղակական ծով, Աթէնք ցամաք պիտի հանէ, ցամաքային բանակին կոնակը ծածկելու համար: Լիկինիոս Ելլեսպոլոսոսի մէջ ունէր Կրիսպոսի գէժ 350 մարտանաւ Ամանտոսի հրամանատարութեամբ: Ան, Լիկինիոս, 165.000 հօգիով քաշուեց և գէպի Ալբրիանա-պոլիս: Կոստանդիանոս Ալբանիկէն եկեր է Եբրոսի հովիտէն անց-նելով: Ճակատամարտ Յուլիս 23-ին, Կոստանդիանոս վերաւորուած, իմ կորուստս այ 34.000 հօգի: Կացութիւն անորոջ: Յամաքին կողմէն կամբացուի Բիւզանդիոն: Ամանտոս պիտի յայթէ ծովու վրայ: Մարտիանոս իշխանակից անուանուած Կոստանդիանոսէն զբաւուած

Երկրամասին վրայ: Յամաքի ճամբով առանց ժամանակ կորսնցնելու, եկուր դէպի Բիւրանդիոն: Եթէ պայմանապարտութիւնը խղես, ծանր հետեւանքներ տեղի պիտի ունենան քեզի համար: — Ստորագրութիւն Լիկիմիոս Ինֆնակալ —:

Միեւնոյն առաւօտ, պնդաղեսպաններ ճամբայ հանուցան Լիկիմիոսի, որոնք նամակով անոր կը տանէին լուրը, թէ անկարելի է որ իր խոստումը կարենայ կատարել, որովհետեւ իր սեփական երկրին մէջ ժամէ ժամ կոխի կը սպասէ:

Ահաւոր անստուգութեամբ լեցուն քանի մը շարաթներ անյան: Բանակը ի վէն կոչուած էր: Մեր, կին, տղայ կը հնձէին պրտուզները, որաները կը կապէին, տուն կը տանէին սայլերով, որովհետեւ հայրեր ու գաւակներ թաղաւորին բանակին մէջ էին, որ երկրին դանազան կողմերը կ'երթար չորս մասերու բաժնուած եւ ժամանակ մը դեռ թշնամիները կ'ահարեկէր: Յետոյ եկան աղետալի օրեր: Թշնամին կրակի կուտար զիւղեր, ամառնային զիւղները այրեցան արայ զիւղերուն հրդեհովը կը լուսաւորուէին: Բարձրագիւր արբունական գահիճին պատուհանէն զիւղեր ցերեկ Եւթաղիա եւ Խոսրովիցու իստ կը զիտէին հրդեհն խուրճերը բոցերու, դէպի երկինք հրդեհակէզ, մերթ քամիին շունչէն դէպի վար սուզուած, նոյն տեղը կամ մօտերը դարձեալ աւելի ուժով պայթելու, ցայտելու համար, մանաւանդ երբ հասուն հասկերու, խոտերու եւ պտուղի շեղջակոյտի, յարգանոցներու, ախոռներու եւ շտեմարաններու վրայ իյնալով նորանոր սնունդ կը գտնէին: Երթալով կը սաստկանար կոխը: Պայտին մէջ կիներուն անձկութիւնը միշտ կը մեծնար, որովհետեւ երկու անգամ լուր եկած էր, թէ թաղաւորը վիրաւորուած եւ գերի ինկած է իր դորքերովը: Մինչ այն զիւղեր, ախոռներ կ'այրէին, պտուղը կ'եփէր ծառերուն վրայ: Թաղաւորը երկու անգամուն ալ անդամադրելի ուժգնութեամբ թշնամի դորքերուն մէջէն ճամբայ բացած էր կոռուելով եւ ազատուած էր, կ'ըսէր լուրը:

Վերը, բարձունքը Արածանի բլուրին վրայ, այգիներէն մէկուն մէջ, ուր լայնօտտ, բարձրաձաղկ թղենիներ կը կանդնին, եւ վարէն դիտուելով կարծես իրենց կատարներով երկինքը կը շօշափեն, եւ բոցավառ կէսօրին ատենը շքեղ կանաչութեամբ անամպ, խոր կապոյտին ոչմ կը վերանան, նստած էր սուրբը, Աստուծոյ մարդուն Մովսէսի նման: Անդու կ'աղօթէր թագաւորին յաղթութեան համար: Անոր յաղթութիւնը Քրիստոսի յաղթութիւնը կը նշանակէր: Անոր պարտութիւնը հեթանոսութեան յաղթանակը, Գրիգորի բոլոր աշխատանքին պարտութիւնը կը նշանակէր: Մինչեւ առաջին ճակատամարտին մոնչիւնը, որ յանկարծակիի բերաւ զինքը եւ նստած տեղէն վեր ցատկեցուց, Գրիգոր հաւատացած էր, թէ Աստուած հրաշք մը

կ'ընէ, թշնամիներուն սիրտերը կը լուսաւորէ, անոնց նիզակները խաղաղութեան կը դարձնէ, կամ ինքը Տէրը, իր սուրբ պատերազմը կը մղէ իր թշնամիներուն դէմ իր թաղաւորին Տրդատին միջոցաւ: Բայց հրաշքը չեղաւ: Երկինքէն կրակ չտեղաց: Քրիստոս չեկաւ: Հրեշտակներու բանակ չերեցաւ: Կապոյտ երկինքին վրայ որստուծ չթաւալեցաւ: Ոչ մէկ կայծակ: Ո՛չ մէկ ձայն վերէն: Եւ թշնամին կը յառաջանար, կը յարձակէր: Անդունդները կը գոռային թաւաւորի փրփրացայտ առուններէն: Հովիտին մէջէն օձաձեւ պալարող արձաթաղոյն հեղեղատներու ծուփ ի ծուփ շարքեր կը շողային դէս ու դէն: Սուրբ, նիզակներ, սաղաւարտներ կը փայլատակէին, հետուէն տեսնուած, հնձողներուն զերանդիներուն եւ մահակներուն ոչն: Պատաղիճներէ ու բարունակներէ գրաւուած զարեւանդներ, բնդարձակ հովիտին, երկու կողմերը, կ'արձանան պատերազմիկներով, կազմ ու պատրաստ վար խոյանալու պարտաւորներուն եւ ի փախուստ խուճապողներուն դէմ: Ո՞վ տեղի կուտար: Ո՞վ կը փախչէր: Ճակատամարտի դոռում գոչումը, խորափեա ընդերքներէ պայթացկոտ վազքով, սր՞ուն վրայ կ'աղչէր: Գրիգորի աչքերը իրենց փորոքներէն դուրս կը ցատկէին: Քրտինքը վճիռ խոչոր շիթելով ճակատին վար կ'ողողէր դէմքը: Ձեռքերը վերը աչքերին մէջ կը պայքարէին: Մերթ կը կենար, մերթ կը պտուկէր, մերթ կը ծնրաղչէր: Բանակը յօժարակամ կը կոռէր թաղաւորին միանգամայն եպիսկոպոսին համար: Անոնք կը հաւատային թէ պիտի յաղթեն, որովհետեւ սուրբը վերը իրենց համար կ'աղօթէ: Ու հիմա պարտուած են: Առաջին բանբերները հետուէն կ'ըսէին շնչասպառ. «Հայր սուրբ, աղօթէ, աղօթէ: Առաջին յարձակումը կորսուած է: Մերիները կը փախչին: Թաղաւորը կը կոռի մոլեկնարար: Անոր առջեւէն ամէն ինչ փախ կուտայ: Բայց Միւնեաց եւ Մոկաց իշխաններուն գորքերը կը փախչին»:

«Պէտք է կենան, կոռին, յաղթեն կամ մեռնին: Ես կ'աղօթեմ: Դուք պիտի յաղթէք: Գնա, աւետէ»: Գրիգոր այս բառերը կը ձայնէ մարգարէարար, նախաձայնօրէն: Եւ ահա Տրդատի բանակը կ'ոտնու վար: Սուրբը կրկին գետին կը խոնարհի, երեսը կը սեղմէ ցուրտ հողին եւ կ'աղօթէ անդու: Կ'աղօթէ այնքան սրտազինա, որ շլեց, թէ որքան ահա կը մօտենայ ճակատամարտին, խաղմին զննդիւնը, աղխատորոյ ժխորը, հայկական հեճելապօրին ու հետեւակին: Կոխը կը գոփէր վարը այգեստանին ստորոտը: Քրիստոնէաները մինչեւ հիմա կը պարտուէին: Բայց այգեստանի քաջերը տակաւին հանդարտ կը մնան եւ անձնատուր չեն ըլլար: Ամէնէն ուժովներն ու հաւատարիմներն են: Իրենց պետր Աղեքսանդր: Սրտակէզ անհամբերութեամբ կը սպասեն թաղաւորին ծանօթ նշանին: Կր տեսնէին ու կը լսէին ճակատամարտին անյաջող շարունակութիւնը: Նշանը չէր հնչէր: Ի՞նչ»:

պէս, արդեօք ինկա՞ւ թագաւորը: Բազում տոնական ձայներու խղրրրորուն ընդարձակ այլեստանին բարունակներուն միջև. «Ո՞ւր է Աղեքսանդր: Ինչո՞ւ մարդ չի զրկեր թագաւորին: Այն տե՞ն պիտի զրկէ, էրը ճակատամարտը կորսուի, և այլևս չկրնանք յարձակիլ: Յանուն մեր պատիւին»: — «Յանուն Աստուծոյ, օն, արիք, օղնութիւն արքային և սուրբին», կ'աղաղակեն հիմա կը զոչեն կը ձայնարկեն Այլեստանի քաղերը: «Ո՞ւր է մեր զօրավարը»: — «Թըշնամին շարժումները կը զիտէ»: — «Ինչո՞ւ հոս չէ: Եթէ հնչէ նշանը — ո՞վ պիտի հրամայէ: Ո՞վ պիտի առաջնորդէ: Անաստուած վարիչ: Դաւաճանութիւն, դաւաճանութիւն»:

Շնչասպառ, արիւնազեղ մարտիկներ կ'ելլեն կ'իջնեն Այլեստանին շուրջ և վրայ: «Աստուծոյ — Տէր Քրիստոսի սիրոյն, ինչո՞ւ օղնութեան չէք վար: Թագաւորին եղջերափողը կորսուած է: Բանբեր բանբերի ետեւէ կը զրկէ Աղեքսանդրին, ո՞ւր է ան»: — «Ո՞ւր է, Աղեքսանդր», ամէն ձայնէ վեր լսելի կ'ըլլայ այս բոպէին այս գերհրօր կանչը, որ կը տիրէ միւս բլուրին: Թագաւորն է: Գունատ շնչասպառ: Այտեր, ճակատ, ձեռքեր արիւնաշագախ, կիսարայ վէրքերէ: Ճակատամարտի բաց, լայն թուրէն արիւն կը կաթկթի: Աղեքսանդր ցատկելով կուգար: Այլեստանին ամէնէն հեռուոր ծայրէն: Թագաւորին սրտազոչ կանչը տինյայտնի սորսափով լեզու պատառ բրաւ դայն: Բոպէ մը կեցաւ, ձեռքը, շրջումին պատճառաւ, աչքերուն դէմ բռնած: Յետոյ որթատունկերուն և մարտիկներուն շարքերուն մէջէն դուրս ցատկեց: Ամէն կողմէ կը թնդար անոր դէմ. «Դաւաճան: — Դաւաճան»:

Շուարած չփոթած կեցաւ թագաւորին առջև: Այս վերջինը սուրբ վեր առաւ: Շուրջը սանուղ օղմիկները կը զողային անոր նայուածքներուն առջև: «Ո՞ւր է իր գուն»: — «Թագաւորը կը փրնաբռնէ: Որովհետեւ քու նշանդ չէր հնչեր, աչքերովս հետեւեցայ ճակատամարտին, ճիշտ ժամանակին իմ կողմէ յարձակում գործելու համար»: — «Հոս վարն էի ճիշտ: Հոն կը բանակի թշնամին հրամանատարութեամբ Գեղրեհնոնի, որ զիս բռնել կ'ուզէր: Յանուն ամենակարողին Աստուծոյ»: Թագաւորը մէկէն ի մէկ վար իջեցուց սուրը: Ուրիշ օտարտաի նշան մը կ'ը թնդար և զիմացի այլեստանէն յայտնապէս կը տեսնուէր փոքր փայլատակում մը կանանց սողարթներուն մէջէն, պլպլուն, երազ, զոզունի ցուցանք մը, որ կարծես անթիւ անհամար փայլող լոյսերուն մէջէն կը սահէր կողմնակի: Շուրջը որթատունկերը կը կթէին: Այլեստանին մէջ երթալով մարդ չէր մնար: Բայց առաջին շարքերը հազիւ շարժման մէջ մտան, թագաւորին ձայնը զոռաց. «Իմ ետեւէս»: Թագաւորին թեւն ու սուրը վերը,

բարձրը, կարծես զէպի կէսօրուան անամպ երկինքը կը թուէին շոգալ թեւն ու սուրը:

\*\*\*

Երբ Տրդատ բաւական հեռացած էր առանձին կարգալ կարճանալու շափ, և կեանքին վասնդ ալ չկար այլևս, Գրիգորիոս խորհրդաւոր զիմացիներով անոր յանձնեց նամակը, որ ճակատամարտին օրը պալատ յանձնուած էր: Լիկինիոսի ստիպողական մէկ նամակը:

«Ամէն ինչ կորսուած: Կոստանդիանոսի սրբին Կրիստոս ծովու վրայ յաղթեց Ամանտոսի: Փոթորիկ և ճակատազիր ինձի դէմ: Նաւերուն մեծազոյն մասը ընկղմած եղէական ծովուն մէջ: Բիւզանդիոն ցամաքէն ու ծովէն պաշարուած: Կէս զիշերին ևս ծովու ճամբով Քաղկեդոն փախայ: Մարտինոս կը հսկէ Ելլեսպոնտոսի Լամպուկոսի մօտ: Կոստանդիանոս կը քաշուի Քրիստոպոլիս: Կը սպասեմ Փոթերուն զալուն Ալիբուակայի հրամանատարութեամբ և քու ստիպողական օղնութեան: Յիշէ իմ հին ծառայութիւններս: Քու կամքդ իմ ազատութիւնս: — Ստորագրուիլ Լիկինիոս Ինֆնակալ —»:

Թագաւորը անձայն զբաւ նամակը իրեն քով անկողինին վրայ: Անծայրօրէն յոյնած էր: ձեւի ձերմակ կտրեցաւ: Եւթաղիա և Սորոփիդուխտ, Գրիգոր և Մարիա կը կենային անխօս իր անկողինին շուրջ: Յոյնած ծիծաղով մը, խօսելու հազիւ կարող, բաւ թագաւորը. «Դուք ամէնքդ, սիրելիներս և հաւատարիմներս — վիայ եղէք ինձի — որ ևս — Ինքնակալ Լիկինիոսի — հիմա — ոչ — օղնել —»: Սոր նուազում մը կտրեց անոր «կրնամ»ը:

Հարուած հարուածի վրայ Փոքր Ասիոյ մէջ խոշոր զէպեր տեղի ունեցեր էին: Քանի մը օր վերջ արդէն հասաւ Լիկինիոսի ստիպողական մէկ նոր նամակը. —

«Բոլոր աստուածներուն և սատանաներուն անէծքն ու դատապարտութիւնը բեզի և քու տունիդ հիմա և յաւիտեանս: Յաղթահարուեցայ ևս: Իմ վերջին 30.000 հոգին անձնատուր եղան յաղթականին: Քաղկեդոն և Բիւզանդիոն կորսուած: Ես փախստական ինկայ Նիկիոմիդիա: Կոստանդիա եղբորը Կոստանդիանոսէն խնդրեց շնորհել իմ կեանքս: Կը մնայ քաշուիլ Թեսաղոնիկէ: Իմ ինքնակալութիւնս է տակաւին — կինս և սղաս: Կը վերադառնանք Լիկինեան զղեակը և աշխարհը կը թողունք ձեր Քրիստոսին «Ինքնակալութեան»:

Տրդատ թագաւորին նամակը, որով հրաւիրեց Լիկինիոսը իր



մօտ երթալ անմիջապէս որ կարենայ, կնոջը եւ դաւակին հետ պաշտպանութիւն եւ ցկեանս ասպնջականութիւն վայելելու, տխուր պատասխան մը գտաւ: Անձրեւոտ, կանուխ միջնցող Հակեմբերեան լրիկուն մը Վազարչապատ: Թաղաւորը միշտ տակաւին վիրակապերու մէջ եւ տկար, բաց ախտի զէմ նստած էր մատենադարանի սենեակին մէջ: Գրիգոր իրեն քով: Ամառուան զէպերուն եւ պետութեան կացութեան մասին կը խօսէին ծանրախոհ եւ տխուր: Յիշեցին Լիկինիսար: Արդեօք դեռ Լիկինեան զգեա՞կն է: Ինչէր անցան զլիսէն, ինչ ճամբայ թողոյց ետեր, բոլոր ինքնակալներուն ամէնէն վերջին ճամբան: Սրբէօք հանդիստ պիտի մնա՞յ: Քրիստոսնեայ պիտի բլլա՞յ: Երանելի պիտի մեռնի՞, ոչ թէ ուրիշներուն պէս: «Ո՛վ Ազաթանդեղոս»: — «Օ Տրդատ»: — Գերին իմացոյց թէ սուրհանդակը եկած է: «Թեազոնիկէն», ձայնեց Տրդատ իր բարեկամ Գրիգորին: «Աթէնք ալ ոչ գեո»: — «Բաց, Տրդատ»: — «Սեւքիս կուզայ հիմա, դուն բաց: Ես ազէտք կը նախազգամ»: Տրդատ մօտեցաւ ախտիին, արմուկը անոր կրթնցոյց եւ ծնօտը ձեռքին մէջ: Բոցին կը յառէր: Գրիգոր բացաւ ու կարդաց: Փոքրիկ պահարանը կը զողզար ձեռքին մէջ: Կաւիճի պէս ճերմկած երեսը կարմրեցաւ կրակին շողէն: «Արդար Աստուած, սուրբ Աստուած: Կրնա՞ս կարդալ»: Տրդատ առաւ նամակը, ընկողմանեցաւ իր բազմոց աթոռին վրայ եւ կարդաց:—

«Ստիպողական: Կոստանդիանոս — «Քրիստոնեան» — իր խօսքը դրժեց: Թեազոնիկէի մէջ ապստամբութիւնը իմ վրաս կը նետուի: Ես անմեղ եմ: Բայց սարսուռով կը ճանչնամ կ'ընդունիմ ճակատադրին արգարագատութիւնը: Հոս իմ հրամանիս վրայ մեռան Պրիսկա, Վալերիա եւ Կանդիդիանոս: Հոս Կոստանդիանոսի հրամանին վրայ մէկ ժամէն կը մեռնին չուանոյ — Լիկինիոս ինքնակալ, Լիկինիանոս Լիկինիոս զուակա: — Ծնորհակալութիւն քու ասպնջականութեանդ համար: Այլեւս հարկաւոր չէ: Ողջ եղիր: Մի մոռնար քու մանկութեանդ բարեկամը Լիկինեան զգեակին մէջ: Անիկա քու կն է իմ կտակովս»:

«Լիկինիոս»

ԳԼՈՒԽ ԻԶ.

## Ն Ի Կ Ի Ա

Մարմարա ծովուն ափերուն մօտիկ, Ասկանիոս լիճին վրայ, Բիթանական Նիկոմիդիոյ կայսերական բնակութենէն ոչ շատ հեռի, կար Նիկիա քաղաքը: 325 Մայիսին էր: Անտոյոր կեանք կը տիրէր: Բայց այս անգամ Մարմարա ծովուն ափերուն Ասկանեան լիճին եւ նորարողը մրդաստաններու հսկայ պսակով շրջապատուած այդ միջավայրին զարնանային հրապոյրը չէր որ այցելուներու բազմութիւնը ետին կը քաշէր, այլ կայսրութեան եւ Եկեղեցիին քրիստոնեայ պետերուն կողմը: Կոստանդիանոս Արեւելքի եւ Արեւմուտքի եւ պիսկոպոսները Նիկիա հրաւիրած էր: Երեք հարիւր տասն եւ ութ եւ պիսկոպոսներ պատասխանեցին հրաւերին: Բայց ոչ մին առանձինն: Իւրաքանչիւրը խումբ մը ծառաներով, քարտուղարներով մինչեւ կօշիկ մաքրողը: Կառքերու ահազին զէղ մը Նիկիոյ առջեւ: Մայիսի սկիզբէն արդէն իսկ ինքնակալը Նիկիա հասած էր: Բայց ոչ ոք կրնար տեսնել զայն: Հեռաւոր Արեւելքէն ալ թաղաւոր մըն ալ տեսնուեցաւ պահ մը: Կոստանդիանոս եւ Տրդատ իրարու քով գալու համար շատ նիւթեր ունէին: Հիմա երկուքն ալ հասած էին իրենց նպատակակէտին: Երկուքն ալ վեհապետ, երկուքն ալ քրիստոնեայ: Իրաւունք ունէր Կատոնի անուն պատանին, երբ ատենօք Նիկոմիդիոյ մէջ գօտեմարտութեան եւ Լիկինիոս իշխանին նաւով փախուստի միջոցին, կ'ըսէր: Քրիստոս պիտի դրաւէ աշխարհը: Մինչ վեհապետները կայսերական զգեակին աջ թեւին մէջ իրարու հետ իրենց յիշատակները կը քրքրէին յուզեալ տրամադրութեամբ, եւ իւրաքանչիւրը միւսին կը պատմէր իր անձնական սպրուանները, միջին շէնքին ահազին սրահին մէջ կը հաւաքուէին եպիսկոպոսները եւ կը սկսէին բա-

նակցութիւնները: Ասկանիոս լիճին վրայ կը բանակէին եպիսկոպոսներուն ծառաներն ու ընկերացողները, պալատին առջեւ կը կենայ ժողովուրդը օրերէ ի վեր, առաջին հիւրերուն ժամանումէն ի վեր, մեծ ու պզտիկ, հարուստ եւ աղքատ, բարձր ու խոնարհ, հիւանդ եւ առողջ, եւ լուռ է, եւ կը դիտէ հիացումով, ձեռքերը վեր կ'առնէ, յաճախ աղօթելու ձեռով, դէպի եպիսկոպոսները որոնք իր առջեւն կ'անցնին, քամակը կը ծոէ, զլուխը դրեթէ մինչեւ հողը կ'ըջնցնէ. կան որ կը ծնրաղրեն, ճամբուն վրայ կը պառկին, երբ բոլորովին ծեր կամ շատ դէր, կամ մասնաւորապէս զեղեցիկ, փառաւոր եպիսկոպոս մը մէջտեղ կ'ելլէ: Եւ ահա շարքերուն մէջէն կանչ մը. «Ո՞վ է աս: Ի՞նչ է անունը: Իսկ սա անդիլի՞նք»: Այս կերպով հետզհետէ անունները կը ծանօթանային. Աղեքսանդր Աղեքսանդրացի, Եւստաթիոս Անտիոքացի, Մակարիոս Երուսաղէմացի — այս վերջինը բացառիկ հիացումով կը դիտուէր, այն պատճառով որ Երուսաղէմէն կուգար — Եւսեբիոս Նիկոմիդացի քիչ ուշադրութիւն դրուեց, որովհետեւ խիստ շատ մ'օտէն ծանօթ էր արդէն: Նիկիոյ Եւսեբիոսը ի հարկէ ա'լ աւելի քիչ: Ատոր մասին ամբողջ եւ տղաքը անպամ կը ձայնէին. «Ասիկա կը ճանչնանք արդէն, մերն է: Երուսաղէմիներ աւելի զեղեցիկ եւ աւելի խոշոր է»: — «Իրաւ: Եւ արտաքին փառաւոր կերպարանքով»: — «Շատ ալ երջանիկ կը թուի ըլլալ»: — «Աւելի քան երջանիկ — ինչպէս իր անունը կ'ըսէ — երանելի «Մակարիոս»»: Բայց յանկարծ սուրբ սարսուռ մը կը սպրդէր բազմութեան մէջ, երբ մէջտեղ կ'ելլէին սուրբ Մարտիրոսները կամ նահատակները, խոստովանողները, արիւնով վկայողները որոնք կը կոչուէին Վկայք Քրիստոսի, որոնք Աստուծոյ հրաշքովը ազատուած էին վերջին հալածանքներէն. — Պատման եպիսկոպոս Հերակլիոյ, միականի: Պաղոս Նոր Կեսարիայէն, ատրաչէկ երկաթներով այրուած թեւերէն ու ձեռքերէն, եւ կաղացած: Ուրիշ շատեր անթացուպերով կամ ոտնացուպերով, փոխանակ ականջի եւ քիթի սարսափելի սպիւներով. վտիտ, նիհար, երիթացած, զնայուն կմախքներ, բոցավառ աչքերով կը դիտուէին ամբոխին կողմէ, կամ այլ յայմէ եղած, երբ, զոր օրինակ, եպիսկոպոս մը իր սպիացած աջը վեր կ'առնէր, օրհնութիւն կուտար: Բոլորովին յամբացած լեզուն կտրուած, կային որ զիմպիծերով, նայուածքներով ձեռքերով կը խօսէին եւ հաւատացեալներուն միտքը դէպի երկինք կը բարձրացնէին: Բայց ալ աւելի ստուարացաւ յուզումը սպասողներուն, երբ ամբոխին մէջ սա կանչը կը լսուէր, մեծ հրաշագործը Յակոբ Մծբնացի եւ Պափնուտիոս Եգիպտացի, Սպիրիդիոն Կիպրացի: Ահա այդ պահուն անդորրութիւնը կը վերջանար: Խուլեր, կաղեր, կոյրեր, ջղազարեր, ամէն տեսակ հիւանդներ կ'ընդունէին կեանք, պայքարի ընդունակ կ'ըլլային,

կարելի եղածին չափ անոնց մօտ երթալու, որպէսզի հրաշք մը դործուի իրենց վրայ, զպզելով անոնց. խոսում մը, յուզում մը, հրմըտուք մը, իյնալ, պոռալ եւ դարնել, անթացուպերը օղին մէջ կը բարձրանան, ուրիշներուն զլուխներուն վրայ կ'ըջնեն որպէսզի ճամբայ տան: Երեք հրաշագործները այս խոսումին եւ վտանդին մէջէն անսով միայն կրցան իրենց օձիքը փրկել, որ օղնութիւն ազադակել ստիպուեցան, որչափ որ կրնային առաջ կ'երթային եւ զինուորական շրթայի տակ առնուած արքայական զղեակին մէջ անյայտ կ'ըլլային: Բայց քիչ վերջը հասնող խոստովանող մը կը պարտաւորուէր տակալ բարձրագոյ զրուատիքներուն, հողեւոր երգերուն, աղօթքներուն եւ պաղատանքներուն, կօշիկի կամ ձեռքի վրայ զրոշմուած համբոյրներուն: Ուշ ժամանողները, զոր օրինակ այս առաւօտ միայն քաղաքին մէջ երեւցող եպիսկոպոսները աժան կ'ազատուէին: Պատկառելի ծերունի մը, որ սակայն բոլորովին ծոած էր մէջքին վրայ, գրեթէ աննշմար անցաւ: Խեղճը գրեթէ ուղղանկիւն քայլող, ատենօք աջ ձեռքը այրուած եւ հիմա սպիւներով, կոշկոտներով լեցուած. 'ր պատմուէր թէ զահիճները պարտաւորեր են ձերուկը որ այդ թեւը զնէ բնական փայտէ բունի մը վրայ, որ առաջուրէն ալ տատակներով ծածկուած էր: Անձանաչ զոյնով վերարկու մը, կարմիրի եւ սևի մէջտեղ, բրդղլուած, ծոպերը տակէն կախուած, նմանապէս թեւերուն ծայրերէն կտորուանքները դուրս ինկած, — իրզն մինչեւ ոտքերը ասով ծածկուած, ինքզինքը կը քաշքշէր, քիթը զետինը քսուելու չափ ծոած: Յաճախ կը ստիպուէր կենալ, շունչ առնել: Ամէնքը հետաքրքիր անոր շուրջը կը հաւաքուէին եւ լուռ պատկառանքով կը դիտէին զայն: Ան ալ զանոնք: Իր խոշոր աչքերուն մէջ կը դարէր սիրոյ, խորազուծեան եւ երջանկութեան շող մը, ցամքած երիթացած Լեւոնի զիմպիծերուն մէջ մերթ այնպիսի վեհութիւն մը կը փայլատակէր, որ ոչ ոք միաքէն կրնար անցրնել, թէ այդ մարդը սոյնորական քրիստոնեայ մուրացիաններէն մէկը կ'ըլլայ, որ իր քաշածները եւ Քրիստոսի սիրոյն համար կրած վէրքերը պատմելով ու ցուցնելով կ'ուզէ նպաստ մը խնդրել: Ոչ ոք կը համարձակէր խօսք ուղղել անոր: Քանի մը հիւանդներ միայն երկիւղածութեամբ իրենց մանրցած ձեռքերը դէպի ան կ'երկնցնէին. զղեակին ճիշտ մօտիկը մայր մը դուստր թեւին վրայ: Խեղճ պղտիկը հիւանդ է եւ գրեթէ ահա պիտի մեռնի: Փոքրիկը իր մօրը խնդրանքին վրայ շատ զժուարութեամբ ձեռքը վեր կ'առնէ դէպի ձերունին: Անիկա կը նայի վեր շատ վարէն: Քիչ քիչ զժուարութեամբ կը շտկուի, եւ հիմա կ'ըլլայ բարձրահասակ, լայն կերպարանք մը, զինքը ամուր կը բռնէ ձախովը ցուպին կրթնած, աջը կը զնէ տղուն զլուխին վրայ, եւ կ'աղօթէ: Մայրը կը համբուրէր, մինչ այն, նահատակին ձեռքը ան-

ճայն շնորհակալութեամբ, եւ տղուն հետ կ'աճապարէր մեկնել: Ծե-  
րունին ալ քայլ առաւ, կամաց կամաց բնական ծած ուղղութիւնը  
ձեռք բերելով, եւ եկաւ դանդաղօրէն մինչեւ մեծ դրան առջեւ շրջ-  
թայ կապած զինուորներուն շարքը: Դղեակին բարձր, յսնիական  
սիւններուն միջեւ կենտրով կարելի էր իմանալ վիճաբանող ճայներու  
վէտովէտամբ վերը ածներու յատուկ ահագին սրահին մէջ, ուր ե-  
պիսկոպոսները խումբ խումբ, կամ առանձինն եր - երկու սրահին  
չուրջ կամ վեր վար կը դառնային, կամ յանկարծ կը կենային կը  
խօսէին, կը շարժէին: Քանի մը զինուոր շարքէն դուրս առաջ դա-  
լուով տէգ ներկայացուցին ծերին որ առաջ շերթայ, հեռանայ: Բայց  
կեցաւ, տեղէն չշարժեցաւ: «Ասիկա քու մտնելիք տեղդ չէ, ծեր:  
Ետ: Հոս մուրալիք տեղ չկայ: Ետ: Եկեղեցիին սուրբ եւ զիտնական  
հայրերն են որ ներսը, հոն, Արիոս Հերետիկոսը պիտի դատապար-  
տեն եւ յետոյ պիտի բռնն իւրաքանչիւրին թէ ի՞նչ բանի պէտք է  
հաւատայ»: — Ծերուկը քչիկ մը երեսը վեր առաւ, տակէն վեր նա-  
յեցաւ սիրով մպտելով զինուորներուն եւ բոսւ խոնարհամիտ ծառա-  
յական ճայնով. «Ամէն մարդ պէտք է հպատակի իշխանութեան, որ  
կը տիրէ իրեն վրայ»: Եւ աջ գառնալով կամաց կամաց քալեց պա-  
կը տիրէ իրեն վրայ»: Եւ աջ գառնալով կամաց կամաց քալեց պա-  
լատին աջ թևին շուրջ: Ժողովուրդէն շատեր անոր ետեւէն գացին:  
Ծուցաւ Ասկանիոս լիճին կողմը: Հոն եղերքը բարձր եւ նոր հասակ  
նետած թուփերու շուքին տակ նստած էին կարգ մը մարդիկ, որոնք  
իրենց պարեպօտները հանած ճաշ կ'ուտէին: Ուժով, նետարդոտ մար-  
դիկ, տարիքոտ թէ երիտասարդ: Ծերուկը կեցաւ քիչ մը հեռուն,  
այնպիսի ձեւով մը որ կը դիտէ փառասոր աշխարհը, ծովը, ցամա-  
քը, լեռը: Բայց իր ականջը կ'իմանար զրեթէ խօսող մարդոց մէջ մի  
բառը: Արդեօք սա իրենց մեծերը եպիսկոպոսները, այնպէ՞ս կը կար-  
ծէին որ մենք իրենց հլու հպատակ եւ առանց կամքի շունքը կամ  
զրատներն ենք: Հոն մենք նստեր ենք — բոսւ մէկը բարձրաճայն,  
այո, հոս վարը նստեր ենք, եւ կ'ուտենք չորցած ճարպը, զինին զե-  
նի չէ, այլ քացախ: Եւ սա ըսելով, ճարպը դարկաւ իր կարծր եւ գա-  
մերով պնդուած կօշիկներուն, կակուղցուց, փխրեց, յետոյ փորձեց  
խածնել, եւ նորէն դարկաւ կօշիկին առջեւի լայն մասին, եւ այս-  
պէս քանիցս, եւ միւսներն ալ քահ քահ մըն է կը փրցնէին: Գինին  
թափեց խոտին մէջ, ըսելով որ երբ չորնայ, հոս շատ լաւ պիտի աճի  
մարդոց ու կենդանիներու համար ցանուած հունտը: Իր վիճակին  
եպիսկոպոսը կայսեր սեղանին վրայ արդէն լաւ մը կերեր խմեր էր  
եւ իր թեմը դառնալու առեն սրբազանը շատ աւելի ծանրացեր էր  
քան ինչ որ էր մեկնած առենը — բայց աղօթքի եւ ծոմապահութեան  
խօսք չէր եղած — «Քուկինդ կը խմէ»: — «Ո՛հ, այլեւս չի խմեր»: —  
«Լո՛կ», ըսաւ անդիէն ուրիշ մը, «մեղք մի մաներ: Ամէն ոք իր

Տիրոջը միայն հաշիւ տալու պարտական է»: — «Մերինը շատոնց  
պաղրած է հաշիւ տալ: Կուսակրօնութիւնը անոր համար շատ ուշ  
սկսաւ»: — «Մերինին համար ալ»: — «Մերինին համար ալ», ճայնե-  
ցին ուրիշներ: «Մարդիկ ի՞նչ ընեն, շատ ալ չիտակ է բրածնին:  
Մէկ կնոջ այրը պէտք է եպիսկոպոս ըլլայ, պատուիրած է Պօղոս,  
ինչպէս զիտէր»: — Եւ սակայն եպիսկոպոսները հոս՝ վերը կ'ուզեն  
հաստատել կուսակրօնութիւն: «Ասիկա շատ զիշ հետեւանքներ պիտի  
ունենայ: Մէկի տեղ տասը պիտի ունենան: Քահանաներու պէս պիտի  
ընեն»: — «Հասցա սարկաւազներ»: — «Եւ կիսասարկաւազներ»: —  
«Եւ փոս փորոցներ»: — «Եւ փոքրաւորներ»: — «Գոնապանները եւ  
երկոցները»: — «Երկոցներուցիւնները», այսպէս կը ճայնէին, մին  
միւսին ետեւէն, իրրեւ ներկայացուցիչ վիճակի մը: Ամէնքն ալ կրակ  
ու բոց, վեր ցատկեցին այդ փոխառացութեան ազդեցութեան տակ եւ  
իրարու փոխադարձարար ծառայութիւն ընել կ'ուզէին, իրենց մտեր-  
մութիւնը յայտնի ընելու համար: Յաղթանդամ, հօլանի բազուկնե-  
րով գանդան հասակէ բոլոր այս թանձրամարմին, լայն մարդիկը  
այսպէս իրենց շարքին մէջ ունէին խեղկատակ մը, Հոնի կերպարան-  
քով մէկը, բայց նիհար, գունատ, չար ու դառնացած զիմպիճերով:  
«Մենք ալ տիտղոս եւ կարդ ունինք»: — «Հօյ, Պետրոս, չըլլայ դուն  
ալ վերջ ի վերջոյ եպիսկոպոս ըլլաս»: — «Արդէն եմ, եւ եպիսկո-  
պոսէն աւելի պատկառանք ունիմ, քան ան իր համայնքին վրայ: Եւ  
իմ շնեածս, մարդուկը ինձի կ'ըսէ, երբ զինին ոչին լեզուն քակէ:  
Իմ աշխատութիւնս ալ զրեթէ իրենին հետ նոյն է. եւ իրական մե-  
տեղափոխ եմ, եպիսկոպոսը ողջերը իրրեւ մեռած կը քարոզէ: Իմ  
մեռելներս մեռել կը մնան, բայց անոր մեռելները միշտ կ'ողջնան»: —  
«Բայց ուրիշ ինչո՞ք մը. կ'երեւի ճիշտ առիթը եկած է ժողովին  
առջեւ հանելու մեր վարձքին պահանջքը արժեքներու եւ յուժում մը  
ձեռք բերելու համար: Եւ կ'առաջարկեմ որ եկեղեցիի պաշտօնականե-  
րուն ներկայացուցիչները հոս հաւաքուին եւ խորհրդակցութիւն կա-  
տարեն, թէ ինչպէս կրնան մեր պահանջումներուն ոյժ տալ: Պէտք է  
զիրար բռնենք եւ միաբան ըլլանք, թէ ի՞նչ կ'ուզենք իրրեւ վարձք  
պահանջել մեր աշխատութեան փոխարէն»: — Պաշտօնականներէն ոմանք  
ոտքի երան եւ ուզեցին առնել քալել: Երկչոտ նայուածք մը ուղղե-  
ցին կորաքամակ ծերունի խոստովանողին, որ միշտ լիճին ու դաշտա-  
դետինին կողմը կը դիտէր, բարեպաշտութեան մէջ ընկզմելու ձե-  
ւով: Պետրոս, մեռելաթաղը, բարկացաւ եւ կանչեց անոնց ետեւէն.  
«Հէյ, դուք սուրբեր, կ'ուզէք բերաննիդ սրբե՞լ եւ խաղի բերել մեզ:  
Զըլլայ թէ մեզ ալ մասնէք ի վերջոյ: Ի՞նչ: Վատեր, ողորմելիներ:  
Դուք պացէք փորերնիդ կշտացուցէք սուրբ հոգիով եւ օրհնաբանու-  
թիւններով: Գացէք: Մենք հացի եւ միսի եւ զինի պէտք ունինք —

մենք կնիկ ունինք, դուստրներ ունինք: — Բայց կեցեք, մտիկ բրեք»: — Անոնք գացին առանց խօսելու: Միւսները նստան կանանց խոտին վրայ, քիթ քիթի, իրարու այնքան մօտ եւ սրկէ նրկէ խորհուրդ ըրին, թէ ի՛նչ կ'ուզէին պահանջել իրենց եկեղեցական ծառայութիւններուն համար: Նախագահ եղաւ մեռելաթաղ Պետիկը — Պետրոսը, — նիհար բայց ուժով, գեղին երեսով եւ փարփուն կկոցեալ աչքերով: Հրամայեց ճմրուած ճնշուած ձայնով մը. «Թող նախ սարկաւաղները ըսեն թէ ի՛նչ կը պահանջեն»: Անոնցմէ մէկը ոտքի ելաւ եւ պահանջեց առ նուազն կէս տաղանդի — 3.000 ֆրանք — տարեկան հասոյթ մը: Թող որ ասանկ սուղ ժամանակներուն մէջ ստով ալ կարելի չէ ապրիլ: Յետոյ կը պահանջեն որ եկեղեցին իրենց բնակութեան սենեակ տայ: Ճիշտ եպիսկոպոսին քով, որպէսզի չպարտաւորուին ամէն մէկ ծառայութեան համար մինչեւ կէս ժամ հետի տեղէ տալ: Սենեակը պէտք է բլրայ ընդարձակ, օդաւէտ, արեւոտ եւ առողջութեան բոլոր պահանջներուն բաւարար: Լոպարան ալ կ'ուզեն, որպէսզի ժամանակ ժամանակ կարենան երթալ մաքրել իրենց վրայէն ժամուն փոշիները: Տակը նկուզին մէջ ջերոց մը պէտք է ըլլայ, որպէսզի ամբողջ տնակը տաքուի բլրայ ազուտը մը եւ ամէն աշխատութեան շտապուելին տուն երթալ եւ կրակ վառելու գործով զբաղել, ինչ որ իրենց արժանապատուութեան ալ զէմ է: Կ'արժէ որ ունենան նաեւ թաւիչ կահույր բազմոց աթոս մը: Ասկէց զատ, համայնքէն վճարուած գերի մը, որ պարտէզին գործով զբաղի, որովհետեւ եպիսկոպոսի մը սարկաւաղներուն չի վայելէր գետներ աղբիլ եւ յետոյ երթալ սրբապան անոթները կրել: Հազարգութեան զինիին ու հացին վարչութիւնը մի միայն գործը եւ իրաւունքը պէտք է ըլլայ սարկաւաղներուն: Հազարգութեան մնացորդն ալ մի միայն սարկաւաղներուն պէտք է տրամադրուի: Որպէսզի կարելի եղածին չափ երկար առեն իրրեւ մարցումս սարկաւաղ եւ օդնական, գործի եկող ըլլան, կ'առաջարկէ յատուկ պաշտօնեաներու կամ սարկաւաղներուն ստորակարգեալ ծառաներու յանձնել ժամուն փոշիները մաքրելու, ժամը լուալու, ինչպէս նաեւ զանցակ դարներու աշխատութիւնը, — բնականաբար համապատասխան հատուցումով, որովհետեւ ժամուն փոշին, ուրիշ ամէն փոշիի չափ վտանգաւոր, կը վնասէ սարկաւաղներուն շնչարական գործարաններուն, եւ զանցակ դարները եւ երկաթ ձեծելը եւս կը վնասէ սարկաւաղներուն սիրտին: Ասկէց զուրս, իրենք կը պահանջեն, ամէն անգամ որ մկրտութեան աւագանը եւ մկրտութեան պետար պատրաստեն, ինչպէս նաեւ մկրտիչ քահանային չափիկը մաքրելու եւ չորցնելու համար, երկու տրախմի — 2 ֆրանք: Նմանապէս երկու տրախմի մէն մի յուղարկաւորութեան համար, իսկ չորս տրախմի եթէ թափօրի ճամբան աւելի եր-

կար ըլլայ: Աղքատներու հարսնիքին համար երկու, հարուստներուն համար հինգ տրախմի, որոնք սակայն աւելի ալ կրնան տալ: Այս ամէնը իրար բերելով հարբերորդ մասն անգամ չի կազմեր այն եկամուտին, զոր իրենց ամսականն զուրս կը ստանան եպիսկոպոսները սպաւորներէն եւ հարսնետրներէն: — «Լմնցուցի՞ր, Կատար», ձայնեց Պետիկ լուրջ կերպով: Կատար. «Ես խօսեցայ, նախագահ: Լմնցուցի — մէկ մասը»: — Պետիկ. «Կը խորհիմ, յարգելի պաշտօնակիցներ, թէ մենք ամէնքս, բոլորովին արդարացի եւ անհրաժեշտ նկատելով սարկաւաղներուն պահանջումները, կատարելապէս համաձայն ենք: Բայց պէտք է զիրար ուժով բռնենք զանոնք գործադրել տալու համար: Ես կը փափաքիմ ճիշտ հիմա իմ եւ պաշտօնակիցներուս, փոս փորոզներուն կողմէ մեր պահանջները ներկայանել: Մենք պատահական աշխատատեղեր ենք եւ չենք կրնար տարեկան որոշ թոշակի յուսակնութիւն ունենալ: Կ'ընդունիմ որ կենդանիներուն թրքելը եւ աղբիլը աւելի փոս փորոզներու գործին հետ անձութիւն ունի քան սարկաւաղներուն հետ: Ուստի փոս փորոզը պէտք ունի սրագի, թիթ, մամուտը հաղուստներու: Ասոնց հոգը համայնքին կը վերաբերի: Կ'ընդունուի նաեւ որ մենք շատ զինիի եւ տոկուն սնունդի պէտք ունինք, սրովհետեւ փոսին ջուրը հիւժիւ է եւ հոն վարը կենալը կը պատճառէ յօղացաւ, աղբի եւ երկիւմունքի ցաւ: Նաեւ օդը հոն վարը, հակառակ եպիսկոպոսին կողմէն օրհնուելուն, իրացնէ կարելի չէ երկնային անուանել, հետեւարար, անկէց է իմ նիհարութիւնս եւ պանիթի նմանող զէմքս: Ուստի մենք մէն մի փոսի համար կը պահանջենք հինգ տրախմի — 5 ֆրանք — եւ փոսին վրայ իւրաքանչիւր սպաւորէ չորս նաքարակիտ — 60 սէնթ —: Յարգելի պաշտօնակիցներ, կը խորհիմ որ զուրս մեզի ամէն բանի մէջ պիտի օժանդակէք»: — «Ոյժ պիտի տանք, ոյժ պիտի տանք», պոռացին ամէն կողմէ: Պետիկ կանչեց երդեցիկներն ու երաժիշտները: Իրենց խօսողներուն բերնով պահանջեցին մէն մի պատարապէ կամ որեւէ երդեցողութեան կամ զպրութեան համար տասը տրախմի, որովհետեւ արուեստը պէտք է վարձատրուի: Բայց որովհետեւ թեւերը կրնան աւրուել կամ փրթիլ եւ զպիրներն ալ ժամանակ անցնելով կը կորսնցնեն իրենց ազուտը ձայնը եւ կրնան ալ խռատիողի հիւանդութենէ բռնուիլ, ուստի համայնքը պէտք է աջակցի մէն մի լարի, մէն մի գործիքի ծախքին, պէտք է վճարէ ծախքը երդեցիկին ի հարկէ առած զեղերուն, զոր օրինակ պարանոցը իւղտուելու համար, եւ բոլոր բժշկական զեղերուն, նաեւ եթէ ուրիշ մը զայ փոխանորդէ միւսին: Դպիր մը, կամ քնարահար մը, կամ մինչեւ իսկ տաւաղահար, քառասուն տարի, ըլլայ ցաւի, ըլլայ ուրախութեան առիթով իր համայնքին ծառայութիւն մատուցած է, սիրտերուն ըն-

ծայելով մխիթարութիւն, խնդութիւն, շէնութիւն եւ խաղաղութիւն, իրաւունք ունի պահանջելու, որ իր գերեզմանին վրայ փոքրիկ յիշատակարան մը դրուի, վրան տաւիլ մը դրուադուած, անունն ալ վրան, եւ թէ որքան ստեն ծառայած է համայնքին: Տակն ալ արձանագրուի: «Երախտապարտ համայնքը»: — Միթէ շա՞տ բան մըն է տախի: Հաշուելով համայնքին բոլոր հարուստները: Թէ մենք ալ իրրեւ սպասուոր Բանին Ատուծոյ, պէտք է թողունք եպիսկոպոսներուն քով — տախի չենք պահանջեր: Անոնց յիշատակարանը կը խեղդէ մերինք եւ Սրբազանները — պէտք է որ շարժելու տեղ ունենան փոսին մէջ»: Պետիկ ձայնեց. «Ձեզի պիտի օգնենք մեր բոլոր ուժերով: Պիտի գայ ժամանակ, ուր մեզի փոս փորողներուս համար յիշատակարաններ պիտի շինուին, որոնց մօտ եպիսկոպոսներուն եւ պատրիարքներուն յիշատակարանները խլուրդի բլուրներ պիտի բլրան»: — «Ոյժ պիտի տանք, ոյժ պիտի տանք», ձայնեց պարր: Պետրոս նշանացի շնորհակալութիւն յայտնեց ամէն կողմի վրայ եւ խոնարհութիւն բրաւ: «Կոչ կ'ընեմ երգմանցիչներուն»: Սատանայ եւ գեւ հալածողներէն մէկը ստքի կանգնեցաւ: Եկեղեցիին այս մարմնեղ սպասուորը, միջակ մեծութեամբ մարդ մը ձուածեւ, մստտ, անմօբուս գէմքով, կարմիր ծաղկեալ առողջութեամբ դեղուն, սկսաւ հանգիստը կերպով: Սեւ գուռը մաղերով: Բարեպաշտիկ նայուածքով: Իր բանախօսութեան կ'ընկերացնէր անոյժ ծիծաղ մը: Ձայնը իւրի պէս կակուղ: «Գիտէք յարգելի պաշտօնակիցներս, սարկաւազներ, կիսասարկաւազներ, դպիրներ, փոս փորողներ, փոքրաւորներ եւ դռնապաններ, մեր ծառայութիւնը անտարակոյս ամէնէն դժուարն է: Ս — Ս — Ստանայ, Դ — Դ — Դեւ հայածել: Ձարհուրելի բան: Պարզապէս զարհուրելի: Սորհեցէք, ինչ ուսումնասիրութեան պէտք կոյ ձանշնայու համար այն հապարտոր, այն լեզուներով ուղիները, Բեհեզգերուզէն սկսեալ, ինչպէս նաեւ Սանդարապետ ստանայէն սկսեալ, մինչեւ ամէնէն վարը, անոր ամէնէն աննշան ծառաները, ամէնքն ալ իրենց տարիքին, ծաղումին, սեռին, ցեղապրութեան, կարգին, պաշտօնական զիստին, գործունէութեան, ազդեցութեան, ուժին, եւ — եւ գործիքներուն համաձայն»: Երգմանցիչը պարտաւորուեցաւ երկար գողարով մը հանդիլ: «Տեսէք, սիրտս — արդէն, իմ աշխատութեանս ներքեւ — ծանրապէս ցուցեցաւ: — Մէկ արհնակ միայն: Ասկէց ժամանակ մը առաջ գիւհարի մը քով կանչուեցայ, շատ չանցած, հասկցայ որ մէկ դեւի մէջ կը կայանայ ինդիրը եւ դարձայ իմ դարմանիս: Ծշմարիտ հալածանք մը, որսորդութիւն մը, կ'ըսեմ քեզի, կանչեցի, ազօթեցի, երգուրնցուցի, խոնկարկեցի, սպառնացայ, պոռացի. տեղէն չշարժեցաւ: Հիւանդ կիներ անմխիթար ինծի կը նայէր, աչքերը դուրս տնկած, առանց բառ մը

բսկու: Նախապէս այնքան ուրախ, այնքան հեղաբարոյ կիներ, որ իր կեանքին մէջ հաւուն տնկած քիչտ չէր ըսած, յանկարծ — ոչ ոք տեսած էր կնոջ շարժելը — քիթիս ոսկորին բիրտ հարուած մը ստացայ: Սրբունը հոսեցաւ, եւ հարկ եղաւ երգմանցուցչութիւնը պահ մը մէկ կողմ թողուլ: Ուրիչ օր մը սակայն հետս բերի բաւարար դարմաններ: Կրակին վրայ պտուկիս մէջ գեղ մը խառնեցի, անոր սարսափելի հոտէն գեւը պարտաւորուեցաւ խոյս տայ: Տեսայ գինքը որ տառջին անգամ ցատկեց հիւանդին քիթէն դուրս անոր աջ, յետոյ ձախ սկանջին վրայ, յետոյ՝ աջ եւ սպա ձախ ուսին վրայ եւ ահա աջ եւ սպա ձախ ազդրին, յետոյ երկու ծունկերուն վրայ, եւ վերջապէս ցատկեց ստքին ձախ բթամառէն եւ աներեւոյթ եղաւ»: — Ամէնքն ալ լեզուին կարած սկանջ կը կախէին երգմանցուցիչին: Շարունակեց. «Հիմա ըմբռնեցէք, յարգելի պաշտօնակիցներ, այսպիսի ծանօթութիւններ եւ մարզանքներ կը պահանջեն շատ մեծ հանձար, խորհուրդ, գիտութիւն եւ ամէն շանչ առաջ մեծ համբերութիւն: Յաճախ ժամեր կը տեւեն, մինչեւ որ գեւը շարժի եւ իր տեղը յայտնէ: Այս պատճառաւ կը պահանջենք թուակ, աւելիով: Գիշերուան համար չինդ տրախմի կրկին սակ, ետապատիկը եթէ գեւերուն թիւը հարիւրէն աւելի բլրայ: Մեզի հարկաւոր եղած դարչահատ փոնդախտը եւ ուրիշ արժատներ ու խոտեր պէտք է պատրաստուին մեզի համար համայնքէն բնորուած սպասուորի մը կողմէ, սրպէսի մեր բոլոր միւս վտանգներէն դուրս ալ շարտաւորութիւնք արժատ ու խոտ վնասելու համար անտատ երթալ, պաղ առնել կամ մինչեւ իսկ մեռնիլ: Նոյնիսկ այն ժամանակ երբ գեւին կամ գեւերուն վտարումը չյաջողի, պէտք է նորէն վճարուի սակը, որովհետեւ աշխատանքը նոյնն է»: — «Համակարծիք ենք», ձայնեց պարր, եւ Պետիկ շնորհալի նշան մը բրաւ երգմանցուցիչին որ նստի: «Փոքրաւորները տակաւին չխօսեցան»: Անոնց վարիչը ցատկեց եկաւ: «Վերջապէս լաւ է որ մենք ալ խօսք տանենք: Վերջապէս մենք դոնապան չենք»: — «Ազատութենէն կամ անապարծութենէն բան մը չ'ըլլեր», ձայնեց Պետիկ, սեթեւեթեալ ձեւով մը: «Գլխաւորը պահանջքն է: Ի՞նչ հարկ կայ դռնապան եւ ուրիշներ իրար խոտնել: Ի՞նչ կը պահանջէք»: Փոքրաւորներու ատենախօսք անխոտ կը գլուխով, կարմիր երեսով եւ ձուկի աչքերով, սկսաւ. «Սարկաւազներուն պէս մենք ալ պէտք է տարեկան որոշ վճարում մը պահանջենք: Որովհետեւ եպիսկոպոսներուն պէտքերը ծայր աստիճան կ'աւելնան: Անոնք կը գրաւեն մեր բոլոր ժամանակն ու ոյժը: Իրենց երջեմակի անձնական փոխարինութիւնները, — նուէրի ձեւով, — ամուրի եղբոր մը անգամ չեն բաւեր, ուր մնաց ընտանիքով եղողներուն: Հազիւ անոնց ձէթին դրամը կ'ըլլէ: Համայնքը պէտք է մեզի տարին 10 մնաս — 1.000

Ֆրանսի — տայ, և Եպիսկոպոսն ալ, ամէն մէկ զինքը պատգարակով կրկնուս ժամը Երկու տրախմի՝ զինքը լուալու համար չորս նաքարակիտ — 60 սէկը —, մաղերը ամէն մէկ շտկելուս և անխելնուս համար ալ Երեք նաքարակիտ, մօրուքը խնամելնուս համար ալ մէկ տրախմի, ձեռքերը, մատները, Եղուցները խնամելնուս համար մէկ տրախմի, մօրուքը պատեանի մէջ զնկնուս ամէն մէկ զիշերուան համար Երկու նաքարակիտ: Եպիսկոպոսը պարտաւոր է նաև բան մը տալ զգետներուն, կօշիկներուն, զործիքներուն, ճամբորդութեան ծախքերուն համար: Մերութեան ատեն պէտք է մեկ հողան համայնքն ու Եպիսկոպոսը միասին: Պիտի աջակցի՞ք մեզի»: Պետիկ ամէնուն անունովը. «Մեր օգնութեան և զօրութեան վրայ մտահ եղէք, փոքրաւորներ: Եւ զուք, վերջապէս, զուք ծերերդ հող, զրու նապաններ: Դուք զո՞՛հ էք»: Երկու տարիքոս, աղերեկ մաղերով, չորցած ցամքած մարդուկներ հինցած վերաբերուներով ստքի ելան: Մէկը խօսեցաւ մեղմ ձայնով. «Կր նախընտրեմ զուսը պահպանել իմ Աստուծոյս տունին մէջ, քան ընակիլ ամբարիշտներուն խրճիթներուն մէջ»: Ամէնքը խնդացին այս խօսքին վրայ: Իրարու հետ սկսան բարձրաձայն խօսիլ նստողները և բտօրէն ծիծաղիլ, Երբ Պետիկ ձայնեց Երկու ծերերուն. «Յայտնի է որ զուք զո՞՛հ էք: Մերութեան ատեն մարդ քարոզութենէ կշտացած կ'ըլլայ: Բայց ձմեռը, ձեր վիճակը չէ՞ք խորհիր, Երկար ատեն իրրեւ դոնապան զուսը պիտի կենաք — Երբ Եպիսկոպոսը բեմի վրայ քարոզ կուտայ և Ամէնը չի գտներ, այսինքն քարոզին ծայրը չի կրնար բերել: Գտնէ, այս պարագային, լա կ'ըլլայ որ համայնքը իր կողմէն տարուկ բաճկոն մը ձարէ տայ ձեզի»: Խեղճ ծերերը ի նշան հաւանութեան խնդալու պէս բաներ մը բրին իրարու իրենց չորցած երեսներով, և ամօթանար տղոց պէս հոս ու հոն նայեցան: Ամէնքն ալ կր մարէին խնդալէն, և Պետիկ ձայնեց մեղհնալու շարժութեամբ. «Այսինքն տարուկ բաճկոն, անդրափարտիք, և բուրդէ պլանտոցով վերաբերու մը, շատ աղէկ կ'երթայ փոթորիկի, անձրևի և ձիւնի ժամանակ, չէ՞ ծերուկներ: Մենք ձեզի համար ստիկա պիտի պահանջենք համայնքէն»: Միւս ծերը ի՞նչ բռն կը հաւանիք: Կեցած տեղէն սրտաց բարձրէն. «Երանի, թէ շատ, շատ տարիներ Եղբայր Կղեմէսի հետ դեռ Տիրոջը տունին մէջ ըլլանք»:

— Յանկարծ թափանցիկ սուր սոյլ մը հնչեց, ինչպէս Երբ մատներուդ մէջէն սուլելով կը կանչես շունի մը: Պետիկ յանկարծակի ստքի ելաւ. «Եպիսկոպոսը» — Արդէն Երկու ոտքը մէկ հողաթափի մէջ Եղածի պէս ցատկեց, և խոչոր շունի մը պէս գլուխը խորունկ զէպի տակը ծռած, վաղեց Եպիսկոպոսը զիմաւորելու: Ասիկա կարճահասակ, բայց յոյժ մարմնեղ, իւղի պէս դեղին գոյնով, սեւ

մաղերով, բարկութենէն կարմրած դէմքով, անոր կը սպասէր: Պետիկ անոր ոտքերը ինկաւ և համբուրեց: Սա կանչին վրայ. «Օն, Պետիկ», Պետիկ ցատկեց, և հրաման ստացաւ Եպիսկոպոսէն, որ շատ շնորհալի այս տեղէն, և քանի մը ուժով պաշտօնակիցներ պատրաստ պահէ, որովհետեւ ներսը սրահին մէջ բնակուող աշխատանք պիտի ըլլայ իրենց համար: Հերետիկոս Արիոս և իր բնակերները խարազանի հարուածներ պիտի ուտեն նորէն, Եթէ տեղի չտային: Պետիկ շնորհակալ եղաւ Եպիսկոպոսին իր մտահանութեան համար և խոստացաւ յարմարագոյն ուժերով պատրաստ գտնուիլ: Եպիսկոպոսը դարձաւ իր բանակցութիւններուն: Պետիկ իր բնակերներուն: Մերուկ մարտիրոսը, որ միշտ հոն մօտն էր, դարձաւ մէկուսի լիճին Երկայնքէն, շատ տխուր, Երբ իմացաւ արդէն, թէ ինչպէս ամէնքը կազմ ու պատրաստ էին հերետիկոսը պատմելու և վերջին ծայր ուրախ էին անոր համար:

Մերուկը խուճար մը մարդոց հանդիպեցաւ, Երկու խոստովանողներու շուրջ, որոնք անթացուպերով և հաստ ոտնացուպերով կը քալէին: Երկուքն ալ խրատ, մխիթարութիւն տալով և սուրբ զերքէն ստակներ բսելով կ'ընդունէին փոխարէն զրամ կամ հաց, արմաւ, չոր պտուղ, միսի կտորուանք կամ շաքարեղէն և պարջիմատ: Երկուքն ալ կր պատմէին իրենց կեանքը, իրենց շարժարանքները, և կարելի եղածին չափ իրրեւ սպայոց կը մերկացնէին մարմնական մասեր իրենց սպիներով: Բայց Երբ Փիղոս տեսաւ որ Պերպետոս տակի կողմնակից և նուէր կը գտնէ, սկսաւ հեղհեղ ձայնը բարձրացնելով իր մարմինին վրայ Քրիստոսի վերքերը պատմել և հեղհեղալով լալ քրիստոնեաներու անհաւատութեան և սպառնալու թեան վրայ, որոնք հիմա կրօնական հալածանքի ճնշումէն դերձ աշխարհային գործերու անձնատուր եղած են, և ըստ արժանւոյն չեն յարդեր գանձը, որ իրենց հաւատքին համար և օրինակ ըլլալու համար պարտաւորուեցան այնքան զարհուրելի շարժարանքներու ենթարկուիլ: Եւ ահա կուլային ծերեր և մտաղաշ աղջիկներ: Տղաքը ապուշ ապուշ անոր Երեսոյ կը նայէին: Ծառերն ալ խուզարկու տկնարկներ կ'արձակէին անոր վրայ: Պերպետոս նշմարեց որ Փիղոսի այս միջամտութեան վրայ սկսան պակսել նուէրները և իր մասին ուշադրութիւնը, ուստի ինք ալ հիմա ձայնը բարձրացուց, սկսաւ նոր բաներ պատմել իր կեանքին և շարժարանքներուն վրայ և լալ քրիստոնեաներուն անապաշտ ընթացքին համար, որոնք չպարտաւորուեցան հալածանքի կրակին վրայէն քալել: Երբ այս Պերպետոս տակի սրտաշարժ կը խօսէր և աւելի կը ստանար, Փիղոս աւելի բարձր սկսաւ լալ և շեշտել, թէ ինք Պերպետոսէն աւելի շարժարուած էր: Այս վերջինը սակայն չուղեց հանդուրժել և սկսաւ իր մարմինին

վրայ վերքերը համբել: Ֆիզոս ալ նոյնը բրաւ, եւ երկուքն ալ իրա-  
բու հետ մրցելով իրենց վերքերը զատ զատ կը համբէին խնդուք  
պատճառելով ժողովուրդին, կարգով կը բանային իրենց մարմինին  
զանազան մասերը, վերքերը զոյց տալու համար: Գլխաւոր խնդիրը  
այն էր թէ Պերպետուս իրօք մէկ հատ վերք իսկ ստացա՞ծ էր հե-  
թանոս կուսակալին դատարանին առջեւ, կը պոսար Փիզոս բարկու-  
թեամբ, թէ այդ բոլոր վերքերը ինք շինած էր մարմինին վրայ խոս-  
տոխանոց կամ վկայ եւ ի վերջոյ կախկոպոս բլլալու համար, մինչ-  
դեռ ուտելէն եւ զինոյնալէն զատ ոչ շատ մը կրնար կարգալ եւ ոչ  
ոչինչ: «Քոսկ դու, Փիզոս, Քրիստոսի բերնին յորձանքը, կատարեալ  
խարերայ մըն եւս զուն: Քու սրունքդ խմինիս պէս ստոզղ է: Կը սով-  
բեցնեմ եւ քեզի»: Պերպետուս խեղճ վերաբերուին տակէն փակ մը  
քաշեց հանեց բարկութեամբ: Կապուած սրունքը վար ինկաւ եւ մէկ  
անթացուպով ցատկեց նետուեցաւ Փիզոսի վրայ, որ Պերպետուսի  
հուճկու հարուածներուն տակ քակեց ինք ալ իր կապուած սրունքը  
եւ իր անթացուպովը, իր կարգին, կը հարուածէր Պերպետուսը,  
մինչեւ որ այս խղճալի տեսարանին վրայ բոլոր հոն զանուոց կիներն  
ու այրերը խարպաններով յորձակեցան եւ փոնտեցին զանոնք, այդ  
երկու խարերաները: Մերը կեցած էր քիչ մը հեռուն լիճին մօտ: Ի-  
րիկուն էր: Մտտերն ու երկինք կը ցոլանային հայելանման, ոգորկ  
ջուրին մէջ: Ուխտաւորը երկու ձեռքերովը կը կրթնէր իր ցուպին  
վրայ: Եւ մարդն ու ցուպը առ հասարակ կը տատանէին: Յանկարծ  
նոր կեանք մը եկաւ խուժանին վրայ: Տղուն մայրը որուն զաւակին  
զլխուն վրայ ազօթած էր ձերք, մէջտեղ ելաւ եւ ցատկելով նետուե-  
ցաւ խոստոխանոցին ստեբրուն տակ, եւ դեղեցիկ զլուխը շարժեց  
զկպի ետ: Երկայն մտաբեր ծոճրակէն քակուելով յայն ժապաւէնի մը  
պէս ուղղահայեաց ինկան հողին վրայ: Հոլանի բաղուկները բարձ-  
րացուց զկպի ձերք եւ ծայեց զանոնք անոր երեսին առջեւ ի նշան ե-  
րախտապիտական ազօթքի: Աչքերը կը փայլէին, եւ ամբողջ զէմքը  
կը ճառագայթէր, եւ զոչեց. «Այրդ Աստուծոյ, զաւակս կ'ապրի:  
Փրկուեցաւ: Երախտապէտ եմ: Երախտապէտ եմ, խոստովանողդ  
Քրիստոսի»: Շատեր այս տեսարանին կողմը վազեցին: Հետզհետէ  
աւելի շատ: Եւ ահա արդէն սուրբը հարիւրի չափ մարդոցմէ շրջա-  
պատուած էր. հիւանդներէ իրենք ալ օղնութիւն կը հայցէին, կամ  
հիւանդներու ազգականներէն, հետաքրքիրներէ եւ դեռ այնպիսիներէ,  
որոնք կը յուսային թէ խոստովանողը բաներ պիտի պատմէ իր կեան-  
քէն եւ իր քաջածներէն: Եւ ահա ինքնարեւարար, պարզուեցաւ նը-  
կարչակեց, երպնեւանդ, զուարթ պատկեր մը, որ ամէնուն յիշե-  
ցուց Յիսուսի քարոզութիւնը Գեննեսարէթի լիճին ափունքը: Հետըզ-  
հետէ ստուարացող ամբողջը մինչեւ լիճին հեռաւոր ափունքին ծայրը

ափուած, իրօք պաշարած էր սուրբը, որ պարտաւորուեցաւ խօսիլ,  
խուսափիլ կարելի չէր: Նստաւ եղերքը կապուած լայն մակոյկի մը  
մէջ եւ սկսաւ քարոզել: Լիճին վրայ կերպարանք մը կար, որ  
ձեռքերու մէջ մի շարժումով նշաններ կուտար: Ափնամիր սէզերուն  
եւ եղէզներուն մէջ իրիկնամուտի հովը կը հովահարէր: Լորամար-  
գիներ թեւաբախ, արտոյտներ ճոռուղուն: Սուրբը իր կեանքին վրայ  
կը խօսէր, իսկ քաջածներուն վրայ ոչինչ: Երկար առեւ շարժումներ  
բրած էր առանց բառ մը խօսելու: Բերան ու ծնօտ կ'երերային, եւ  
ամբողջ կերպարանքը վարակուտ ըրին կրթնած կը տարուրերէր  
մերթ մէկ մերթ միւս կողմը: Լուսթիւնը երթալով կը տիրէր: Սուր-  
բը բազմութեան զլուխներէն կը յառէր, կարծես դառնակոծ, խորա-  
պէս զգացուած, այնքան որ չէր կրնար հաւատալ, չէր կրնար լմ-  
բրոնել, թէ ինչ տեսաւ ու լսեց: Իր խոշոր լայնարաց աչքերէն սկսան  
ահա արցունքներ հոսիլ երեսին վրայ եւ արծաթափայլ մօրուքն ի  
վար: Երբ ամբոխին տիրող շարժումը տեսաւ, բերանը բացաւ կա-  
մաց կամաց, կուրծքը ակնյայտնի կ'ելլէր կ'իջնէր, նաեւ համօրէն  
կերպարանքը, եւ մարդը կարծես կ'աճէր: Աչքերը կրակ առին եւ  
հիմա որոտումի մը պէս կ'արձագանդէր զլուխներուն վերեւ, նախ եւ  
առաջ, սա երկարածիդ բառը. «Նիկիա»: Յաջորդեց երկար զազար  
մը: Փողովուրդին իմացած այս մէկ բառին մէջ կար վիշտ մը, թա-  
խիծ մը, որ յուզեց բոլոր սիրտերը: Յետոյ փոթորիկի մը պէս կար-  
ծես սուրբին բերանէն պայթեցաւ. «Այս տեղը կը կոչուի Նիկիա:  
Անտիպոնոս կայսրը այս անունը տուած էր քաղաքին ի յիշատակ իր  
յաղթութեան: Նիկիա հեթանոսական քաղաքը զարձաւ եզաւ քրիս-  
տոնէական քաղաք մը, որովհետեւ Յիսուս Քրիստոս յաղթեց ամբողջ  
հեթանոս աշխարհին: Ինքնակալը Տիրոջը խաչով յաղթեց քրիստոն-  
եաներու թշնամի բոլոր ինքնակալներուն, կետարներուն, քուրմերուն,  
կախարդներուն, եւ Նիկիա եզաւ քաղաքը Տիրոջ: Արեւ աստուածը  
ինկաւ իր պատուանդանէն, իր անդամները փչուեցան զեախնը, եւ  
արեւուն օրուան տեղ Կոստանդիանոս Ինքնակալը զբաւ Տիրոջը օրը:  
Այսօր Տիրոջը օրն է, որ կ'աւետէ, թէ Տէր Յիսուս Քրիստոս ճշմա-  
րիտ լոյսն է աշխարհի: Օ, տեսէք ոսկի արեւը, տեսէք խաղաղու-  
թիւնը լիճին, լերան եւ դաշտադեպիներն վերեւ, զլացեք հողին որ կը  
շնչէ անոնց շուրջ, ո'վ դուք, որդիք լուսոյ: Հողին է Աստուծոյ եւ  
անոր մերձաւորութեան: Ահա ան է, հոն է: Մեր մէջ է: Չղացեք  
զայն, չօշակեցէք զայն, լսեցէք, լսեցէք ժողովուրդ Նիկիոյ, ինչ որ  
ան ունի բնէ ձեզի իմ միջոցաւ: Նիկիա մը պէտք էր ըլլար սուրբ ե-  
պիսկոպոսներուն ժողովը. Աւետարանին համար յաղթութեան օր:  
Բայց ի՞նչ տեսայ: Եպիսկոպոսներու սպասաւորներ, որոնք իրենց  
հողերու տէրերը կը հեղնեն եւ գէշ կատակներով անոնց տկարու-

թիւնները կը պարզեն: Սպասաւորներ, որոնք իրենց ծառայութիւններուն համար, զոր սիրով ու փափաքով պէտք էր, այո, ճրի իսկ կատարէին ի նպատակ համայնքին, խորհրդակցեցան վարձքի յաւակնութիւններու մասին, նախանձելով եպիսկոպոսներուն որոնք աւելի եկամուտ ունին: Տաճարը ահա դարձեալ կ'ըլլայ «այլ աւազակաց», տուն վաճառի: Աղքատ էր ան, որ ժամանակին մաքրեց իր հօրը տունը: Ան ոչինչ ունէր, ուր զնէր իր զլուխը, — եպիսկոպոսները կ'ապրին պալատներու մէջ: Աշակերտներ, իրենց վարդապետին պէս, կ'ուսէին ինչ խրճիթներուն մէջ իրենց առջեւ կը դրուէին, հարուստի տուներուն մէջ եղածի նման: Եպիսկոպոսները հարուստներու տունները կը փնտռեն եւ կ'անարդէն սղքատներուն հիւղակները: Կը քծնին աշխարհային տիրոջ, հոն, եւ որուն կուտան Ինքնակալ անունը — մարդ մը, մեղաւոր, մահկանացու, մեր ամէնուս պէս — կը կոչեն զայն Տէր, կը ծնրադրեն անոր առջեւ, կը նետուին անոր առջեւ, ճիշտ ինչպէս հեթանոսները կ'ընէին ինքնակալներուն առջեւ, որոնք կ'աստուածացնէին զիրենք, երկրպագութիւն կը պահանջէին, մինչեւ որ որդերը ուսէին զանոնք: Հիմա եպիսկոպոսները կը ծնրադրեն քրիստոնէայ Ինքնակալին առջեւ եւ կը պաղատին կը խնդրեն որ դատապարտուին եւ հալածուին այլահաւատները եւ զրամ ու նոր կալուածներ տրամադրուին նոր եկեղեցիներ եւ եպիսկոպոսական պալատներ շինելու համար: Խոստովանողները զրամի եւ շաքարեղէնի համար իրենց վէրքերը կը ցուցադրեն եւ զիրար կը խարազանեն անթացուպերով: Աղքատները խումբ խումբ կը խումեն Ինքնակալին պալատին առջեւ եւ հաց կը մուրան, ինչպէս հեթանոսները կը հայցէին հաց եւ կրկէսի խողեր: Կը կարծէ՞ք զուք որ քրիստոնէայ ըլլաք, որովհետեւ Քրիստոսի անունով կը մուրաք, փոխանակ աշխատելու եւ օրինաւոր վարձք պահանջելու: Դուք հիւանդներ, ինչո՞ւ եպիսկոպոսներուն ճամբան կը կտրէք: Կը կարծէ՞ք թէ եպիսկոպոսներուն նախորտին լայն թեղանիքներուն մէջ կը բնակի հրաշքը, կը բնակի հաւատքը, որուն մասին Տէրը խօսեցաւ, թէ մամանեթի հատիկի չափ հաւատք ունեցողները Տիրոջը չափ մեծ հրաշքներ պիտի գործեն: Ի՞նչ է որ պալատներու պէս եկեղեցիներ կը շինէք: Մենք, ճշմարիտ դաւանողներս, ի՞նչ պէտք ունինք չարչարուելու որ զուք չքեղ եկեղեցիներու մէջ կոտց պաշտամունք կատարէք, քանաք, ուսէք, խմէք, որովհետեւ զուք չէք ծախսողը, որ զուք կեղծաւոր էք, չրթունքով պաշտէք Հայրը, Որդին եւ Հոգին եւ կեանքի մէջ ալ աւելի ուրանաք զայն: Ո՞վ Նիկիա, ի՞նչ եղար դուն: Ո՞չ մէկ յաղթութիւն, այլ պարտութիւն, ուրացում, անկում: Մինչ առաջին աշակերտներն ու աշակերտուհիները զոք զուսներու ետեւ կ'աղօթէին, մինչ անոնք այրերու եւ գետնազամբաններու մէջ կը տօնախմբէին

իրենց ժողովները, մինչ անոնք զենլի ոչխարներ կը նկատուէին, այն ատեն, այո, Սատանային իշխանութիւնը խորտակուեցաւ, աշխարհի հին կայսրութիւնը, Հռոմի իշխանութիւնը քանդուեցաւ, նշաններ եւ հրաշքներ պատահեցան: Աստուած իր ծառաներուն արիւնին վրէժ-խընդիր եղաւ եւ Ինքնակալ Ինքնակալի ետեւ փճացուց վերցուց մէջտեղէն, կոյրերը տեսան, խուլները լսեցին, կաղերը քալեցին, բորտները սրբուեցան, մեռելները յարութիւն առին, աղքատներուն Աւետարան քարոզուեցաւ, Քրիստոս մեր մէջ եղաւ: Երկինք բաց էր, եւ պիտի դար Աստուծոյ թաղաւորութիւնը եւ փառքը: Վայ, վայ քեզի, Նիկիա: Հիմա զուք կ'ուզէք վարդապետութեամբ փոխանակել կեանքը: Հիմա զուք կ'ուզէք Աստուածը խարել, զուք եպիսկոպոսներ, զուն քրիստոնէայ ինքնակալ: Հիմա զուք կ'ուզէք զիրար դատապարտել, որովհետեւ սէր եւ կեանք կը պակսի ձեզի, նաեւ կենդանի Աստուածը: Ի՞նչ պէտք ունիք եկեղեցիի: Դուք պարտաւոր էք արածել Մեծ Հոգիին հօտը, եւ կ'ուզէք սակայն տիրել: Դուք կը բաղձաք ունենալ զրամ եւ ոսկի: Վայ, վայ, վայ ձեզի, ոչխարի մորթով զայլեր, զուք պատասուզ զայլեր, որոնք հօտին շէն խնայեր: Դուք պարտաւոր էք երկնաւոր թաղաւորութիւն մը ստեղծել, եւ զարձեալ կը շինէք եկեղեցիի համաշխարհային իշխանութիւն մը եւ կը տիրէք եւ բռնութիւն կը զործածէք եւ իրարմէ փառք ու պատիւ կը փնտռէք, եւ կը դատէք ու կը դատապարտէք: Վայ, վայ, Նիկիա: — Պարտութիւն, ձախողուած: Տէրը համայնք կ'ուզէ ո՛չ թէ եկեղեցի: անոր համար է որ ըսուած է. Դժոխքին դուռները պիտի չյաղթահարեն զայն: Բայց ձեր եկեղեցին, ո՞վ զուք տէրեր ու տիրողներ, երկար ատենէ ի վեր պարտուած է զժողովէն, եւ սատանան ձեզ զերազանցած է նենդութեամբ եւ խարդախութեամբ: Վայ, վայ, Նիկիա: — Պարտութիւն, մահ: Ի զուր չարչարուեցաւ, Տէր Յիսուս Քրիստոս: Ի զուր թափեցիք արիւն, ո՞վ ըսողը զարերու սուրբ նահատակներ, Տիրոջը Խաչէն մինչեւ այսօր: Վայ, վայ, Նիկիա: Քու լոյսը քեզմէ ետ պիտի առնուի եւ խաւարը կրկին պիտի դառնայ երկրի վրայ»:

— Ժողովուրդին կողմէ խորապաշտ յուզումով լսուած խոստովանողին այս ճառին միջոցին, շատ շատերէն աննշմար մէկէ աւելի եպիսկոպոսներ պալատէն եկած էին անձայն անշուղի եւ ամբոխին ետեւ անցած մտիկ կ'ընէին զաղտաղտի: Բայց երթալով աւելցան եպիսկոպոսներ, քահանաներ եւ խոստովանողներ, նոյնիսկ ճգնաւորներ եւ վանականներ: Ամէնէն անուանի եպիսկոպոսներէն ոմանք սկսած էին արդէն վրդովիլ, խռովիլ, եւ շատերուն զլուխը կտրած: Բայց խոստովանողին բանախօսութեան տպաւորութիւնը այնքան հրգոր եւ ընդհանուր լուծութիւնը այնքան լուրջ էր որ եպիսկոպոսներէն



եւ քահանաներէն ոչ մէկը պիտի համարձակէր ընդմիջել բանախօսը : Բայց ի վերջոյ, եկաւ բոպէ մը, որ անոնցմէ անուանինները չկարողացան զսպել իրենք զիրենք : Մեղմ քրթմնջիւնէն եւ կշտամբանքէն մինչեւ սկսան աղաղակել, թէ խոստովանողը պէտք է լռէ եւ իրենց ալ խօսք տրուի : Ոոստովանողը շարունակեց եւ այնպէս ձեւացուց թէ չի լսեր զանոնք :

Յանկարծ լռեցին : Կայսրը, ոսկեճածանց, շողակնայեռ պըճնաղարդուած, ծիրանին թիկունքը, կը յառաջանար, հիւրը իրեն քով : Տրդատ : Անբարբառ, նեղացուցիչ լռութիւն մը յայտնի նշան էր թէ ինչ կը մտածէր ժողովուրդը : Արդեօք ծերունին պիտի զողբեցնէ՞ քարոզութիւնը կայսեր եւ թաղաւորին առջեւ : — Ո՛չ : Լուռ հիացում, ընդհանուր սարսուռ : Մերունին այնքան ծանրախոճ նայուածքներով եւ անասան զէմքով նայեցաւ, կայսեր եւ թաղաւորին աննրկատ, որ ամբողջ ժողովուրդը զարմացաւ եւ եպիսկոպոսները այնքան չբարկացան, քանի որ ինչոյնք փոխուած էր այսպէս : Նախ քրթմնջեցին զլիսահակ, յետոյ մին միւսը զրդեց որ պէտք է բերանը գոցէ այդ անպատկառ մարդուն, հրամայէ անոր լռել, քանի որ կայսրը հոն է եւ այնքան բարձր հիւր մը : Վերջապէս Սպանիայէն կորդուբայի Յովսիոս եպիսկոպոսը զորժը շատ կնճոռտ դտաւ : Մերունը կրակ կտրած, ուժգնութեամբ կ'աղաղակէր կայսեր եւ թաղաւորին . «Դուք եւս, ինքնակալներ, կայսր եւ թաղաւոր, տակաւին չէք հասկըցած ամբողջ Աւետարանը եւ չէք ներածած զայն կայսրութեան մէջ : Բռնութիւն ի զորժ դրած էք : Ձեր ձեռքերը արլւնով շաղախուած են : Տակաւին սուրը չէք հանդարտեցներ ձեր պատեանին մէջ : Տակաւին ձեր տիրակալութեան նեցուկ կ'ունէք բռնութիւնը, փոխանակ հաւատքի եւ սիրոյ վրայ կրթնելու : Այս պատճառաւ անադատ էք դուք : Այս պատճառաւ քուրմերը շրիտոնէական քահանաներուն չափ իրաւունք ունին, եւ կրնան տակաւին շինել իրենց մեհեանները, հարցնել իրենց վճուկներուն, եւ զոհել, ինչպէս միշտ : Դուն, Կոստանդիանոս, քու հաւատքդ բանականութեան վրայ կը հաստատես : Դուն կ'աշխատիս մարդոց հաճոյանալ, կէս քրիստոնեայ եւ կէս հեթանոս եւ, հանդիստ չունիս եւ կը վախնաս, արիւն թափողի յանցանքներ կը ծանրանան քու վրայ, ինքնակալ : Այս պատճառաւ չես ուզեր մկրտուիլ, կը վախնաս, որպէսզի մկրտուելով աւելի մեղանշած չըլլաս : Գիտես, ես կը դուշակեմ մտածումներդ : Անկեղծ եղիր, ինքնակալ, եւ քու մեղքերդ խոստովանէ քու ինքնակալիդ Յիսուսի Քրիստոսի, ապաշխարութիւն ըրէ բոլոր ժողովուրդին առջեւ, այսօր թող մկրտուիս, թող զիս մկրտեմ քեզ» :

«Ի՞նչ : Ի՞նչեր ալ կ'ըսէ կը խորհի այս մարդը : Ո՞վ է իսկապէս այս մարդը : Ուրկէ՞ց կուգայ : Ի՞նչ իրաւունքով մէջտեղ ինկած է եւ

կեցած կը նախատէ մեզ եւ Աւգոստոսը, բոլոր վեհապետներուն ամենաբրիտանեան, մեր եկեղեցիին Տէրը : Սելուզա՞ր է այս մարդը : Ենկեցի ան : Լռէ — լռէ դուն, ծերուկ, ապա թէ ոչ քու մօրուքդ փեթթել կուտամ» : Այս կանչը կը դուսար եպիսկոպոսներէն, քահանաներէն, սարկաւադներէն, փոս փորողներէն : Իսկ ամէնէն բարձր ճշատողը ո՞վ էր, զիտէ՞ք, — Պետիկը, մեռելի փոս փորողը . «Լռէ, հիմա, դուն կ'մտխք, ապա թէ ոչ քովդ կուգամ կը փշրեմ քեզ» :

Նահատակը բոլորտիքը անշամ շէր նայեր, եւ բարձրացնելով ձայնը կ'ուզէր շարունակել : Բայց խառնաչփոթութեան պատճառաւ բսածը շէր հասկցուեր այլեւս : Պետիկ զգուշութեամբ քանի մը քայլ աւելի մօտեցաւ բանախօսին, եւ յայտնեց թէ պատրաստ է յանկարծ բռնել զայն եւ հեռացնել ասկէջ : Բայց հսկայական կանչ մը զոտաց ամպի մը նման . «Լռութիւն, մտիկ ըրէք» : Ամէնքը իրենք զիրենք ամփոփեցին եւ կոնակ ծոցեցին, կարծես թէ կայծակ մը կ'իյնար : Կայսրն էր, որ սկսաւ իր ժողովրդային ճառերէն մին . «Ճամարիտ է խոստովանողին ողոր բսածը : Փոխանակ քրթմնջելու եւ ամբարտաւանութեամբ յոխորտալու, դուք եպիսկոպոսներդ եւ քահանաներդ պէտք է խոնարհիք եւ փառք տաք ճամարտութեան : Սոր վիշտով կը տեսնեմ երկար ատենէ ի վեր, թէ ինչպէս ձեր փառքը եւ ձեր առաւելութիւնը կը փնտոէք եկեղեցիին մէջ, թէ դուք ինչպէս հետամուտ էք իմ շնորհներուս եւ պարսկեաներուս, ինչպէս դուք ձեզ կը դատէք եւ կը դատապարտէք, մէկզմէկ, իմ քով միայն : Ճամարտութիւն է, որ դուք արդէն էք Տիրոջ ոչ թէ սպասաւոր : Վկայ կը կանչեմ ատեղապարզ երկինքը, լեռները, ծովը, թէ ես բովանդակ սիրտովս ծառայել կ'ուզէի Տիրոջ, որ ինձի երեւցաւ, եւ որ երկինքին վրայ յայտնեց ինձի խաչին նշանը : Այս նշանով, խաչանիչ դրօշով, շըրջանը բրի ամբողջ կայսրութեան, խորտակեցի խաչին թշնամիներուն բոլոր ընդդիմութիւնը : Դիւրին էր ինձի համար, իմ լեզուներովս, նախկին ինքնակալներուն նման, քրիստոնեայ ժողովուրդը ցրուել եւ ջարդել, իրենց եկեղեցիները կործանել եւ բոլոր իրենց ժողովները արդիւլել : Բայց զիտէի, այո, թէ Քրիստոս ինքնակալ պիտի ըլլայ : Իր ողին չի միտիր սպաննելու : Նահատակներուն արիւնը միշտ նոր շարքեր կը ծնին, եւ Քրիստոս ինձի համար ալ կը պատրաստէր մեկնոյն վախճանը ինչպէս անոնց, որոնց ես յաղթեցի : Ասոր համար ես խոնարհեցայ իրեն առջեւ : Ճանչցայ իր ճամարտութիւնը : Ինք, ինք միայն Որդի է Աստուծոյ, ինքն է Լոյս աշխարհի : Ես ուզեցի թաղաւորութիւն խաղաղութեան եւ ուղղութեան, այո՛, ուղղութիւն եւ խաղաղութիւն ուղեցի ես : Այս պատճառաւ հեթանոսներուն արտօնեցի իրենց մեհեանները, զոհերը եւ վճուկները, որովհետեւ ես հաւատացի որ ոչ ոք կրնայ բռնի ընդունիլ սալ Քրիստոսը : Հա-

ւատքը, այո, Սուրբ Հոգիին մէկ գործն է, և ոչ ոք կրնայ Քրիստոսը իր Տէրը անուանել առանց Սուրբ Հոգիին: Այս պատճառաւ հանդուրժեցի չեթանոսներուն, սրպէսպի անոնք քրիստոնեաներուն համբերութենէն և թշնամիներուն հանդէպ անոնց սէրէն ամօթահար ըլլան և կտրենան ճանչնալ անոնց սիրոյն փառքը: Այս պատճառաւ ես մահապատիժներ տուի, որովհետեւ Մաքսենտիոս, Լիկինիոս և իր որդին, Կրիսպոս իմ որդին և իմ ասաջին կինս Փաուստա, առաջինները իրենց իշխանասիրութեամբ և վերջինները ցտիութեամբ և ցանկասիրութեամբ զիմազրեցին Աստուծոյ և իմ տիրակալութեան: Իմ ձեռքերս Աստուծոյ կամքը միայն զործազրեցին: Հաղարաւոր քրիստոնեաներու արիւնը, բազում կիներու և մաքուր կոյսերու արիւնը, զոր պղծած էր Լիկինիոս, իրմէ պահանջուեցաւ: Ես թշնամի եմ Քրիստոսի թշնամիներուն: Ահաւոր եմ դասատանի մէջ և Տիրոջ իրէժին համար: Ես վերին իշխանութիւնն եմ, Աստուծոյ կողմէ ձեր վրայ հաստատուած, և Տիրոջը սուրբ կը կրեմ, ոչ ի դուր: Սաւուղի սուրբ, Սամուէլի սուրբ, Իսրայէլի սուրբ Աստուծոյ թշնամիներուն դէմ վկայ ըլլան ինձի, թէ ևս կոչ կ'ուզեմ ձեզի եպիսկոպոսներու: զուշացէք: Ըրէք որ զուք հոս խաղաղութեան մէջ ձեր վարդապետութիւնը բանաձեւէք և պաւստութիւն մը զըտնէք ձեր հաւատքին — ապա թէ ոչ, կ'երզնում Աստուծոյ վրայ — զուք ալ իմ բարկութիւնս պիտի զգաք եթէ զուք, Քրիստոսի եկեղեցիին վարդապետները, կասյութիւնս երկարտակէք և խաղաղութեան իմ գործս աղարտէք: Տակաւին զուք չմիարանած և տակաւին զիրար սրտանց չսիրած, ևս սիրտովս քրիստոնեայ կը մնամ, բայց ոչ մկրտութիւն կը բաղձամ ձեզմէ: Ինչու երբեք: — Արդ տեսէք, ահա անձայն անխոտ վիշերը կը մօտենայ: Իցիւ Աստուծոյ հոգին մեր սիրտերուն մէջ դայ և մեր սիրտերուն մէջ բերէ նաեւ ընդհանուր աշխարհի խաղաղութիւնը: Իմ սպասաւորներուս հրամայեցի կերակուր տալ ժողովուրդին: Բանակեցէք, բաղմեցէք երախան երախան, և հրամայեցէք խաղաղութեան ճաշը»:

— Կայսեր սպասաւորները և սպասուհիները պնակներով և սկաւառակներով բերին ամէն տեսակ ուտելիք, միս, ձուկ, բանջար: Գինին վրայէն կը վաղէր: Ժողովուրդը երախան երախան բաղմեցաւ լիճին ափը, պալատին շուրջ, և կերաւ ու խմեց, մինչ պալատին ճաշարահին մէջ երկար սեղաններու ճաշ հրամայուեցաւ եպիսկոպոսներուն: Կոստանդիանոս և Տրդատ առանձին կերան: Ծերուկը ժողովուրդին հետ կերաւ, անոր շարքերուն մէջէն քալից ամէն կողմ պնաց, և իրեն մօտեցողներուն ամէնուն հետ ալ խօսեցաւ: Լիճին եզերքը կը ձեւէին քանի մը հոգի ճնշուած տրամազրութեամբ: Ծերուկը անոնց մօտեցաւ: Յարգանքով ողջունեցին զինքը և իր սրտոս

խօսքերուն համար ջերմապէս շնորհակալ եղան: Խեղճ ու կրակ վերարկուներով և ծանր ու գամապատ կօշիկներով այս մարդոցմէն իմացաւ սուրբը — ինչ որ մեծ ցաւ պատճառեց իրեն — թէ ի՞նչպէս իրենք պաւստային կամ պաւստարնակ եպիսկոպոսները ամէն իրաւունքէ զրչուած էին քաղաքարնակ եպիսկոպոսներուն ձեռքով, և Եկեղեցիին անարժէք պաշտօնեաները կը նկատուէին: Ներսը պալատին մէջ հազիւ կը զիջանէին ողջունել զիրենք, չէին արտօներ որ իրենց հետ խօսին, չէին ուզեր որ Սինոզներու զուժարուժներուն մէջ իրենցմէ ներկայացուցիչներ պանուին: Իրենք աղքատ են և հազիւ կրնային սպրիլ հանդերձ ընտանեօք, բայց քաղաքարնակ եպիսկոպոսները հորի կղած տեղերը յայտարարեն և, թէ շատ պարզ կեանք մը կը վարեն, և իրենց աղքատութեան իրրեւ ապացոյց ըսեր են թէ Աւետարանին վկայութիւնը, այսինքն Աւետարանին համար ամէն բան քաշելը իրենց համար աւելի է քան որեւէ վարձք: Յիսուս ըսաւ, այո. Զրի առիք և ձրի տուէք: Գաւառարնակ եպիսկոպոսները առաջարկեր են, որ հասարակաց դրամատուն մը հաստատուի, հոն պէտք է աւանդ դրուի հաստացեալներուն ըստը պարգեւները, և Եկեղեցի իւրաքանչիւր պաշտօնեայ, որ հաստարիմ ու արժանաւոր է, իր կարօտութեան պարագային բնուոյնի պէտք ունեցածը, իրեն և իրեններուն համար: «Ի՞նչ բոնն ասոր համար քաղաքարնակ եպիսկոպոսները», հարցուց ձերը հեղինակը: «Բոնն թէ այդ պարագային այլեւս չեն ուզեր եպիսկոպոս մնալ»: — «Արդէն չեն», ըսաւ ձերուկը և զեռ երկար տակն խօսակցեցաւ Տիրոջ խօսքին պաւստարնակ պաշտօնեաներուն հետ:

Յաջորդ առաւօտ բանակցութիւնները ամէնէն եռանդուն տատիճանին զրայ էին և եպիսկոպոսներուն մասնակցութիւնը ընդհանուր կղած էր: Տաքը սաստիկ էր ներսն ու դուրսը: Զայները հետըհետէ կը բարձրանային: Փեթակի պէս կը բզբար ոսկի և արծաթ ձուլածոյ ջահերով ձերմակ սրահը, զարդարուած փառաւոր որմանկարներով և բազում արձաններով: Աջ կողմը, բարձր դուռնով մը միայն բաժնուած յարակից սենեակի մը մէջ կը գտնուէին Ինքնակալը, Տրդատ և — ձերը միասին: Առանց խօսելու նախաճաշ կ'ընէին, և Երեքն ալ շատ մտահոգ ըլլալ կը թուէին, որովհետեւ անդին վերը յուզումը կը սաստկանար: Մերթ ընդ մերթ, ձայներուն Երեւէջի ծփանքին մէջէն յանկարծ կ'որոտար, Երեմն հայհուցի պէս, Երեմն սուլումի, հեղանքի և խայտանքի պէս ձայն մը: Ասոր վրայ ծրփանքը, ալեկոծութիւնը կը սաստկանար, և բազմաթիւ մարդոց միարեւան զոջումը աւազ դուռնէն ներս կը խուժէր անրացատրելի կերպով շքեղ կայսերական սենեակին մէջ բազմող երեքին կողմը: Ծերուկը նախաճաշը թողուց և կեցաւ զուլը կրթնուցած ծիրա-

ներփեան մետաքսէ իր բաղմոցին վրայ: Իր ուխտաւորի գունաթափ գլխատը, հինցած ու տղեղ, բնաւ յարմար չէր միջնախայրին: Բայց իր մաքուր անդամները, լաւ խնամուած մօրուքը եւ գլխուն մաղը, որ արծաթի խոպոպիկներով կը հոսէր քունքերուն շուրջ եւ ուսերուն վրայ, նաեւ աղնուական շարժումները, իր խօսուածքին եւ վարմունքին համարձակ ու անկեղծ եղանակը, այս ամէնը միանգամայն ցոյց կուտար, թէ ինք բոլորովին կայսեր ու թաղաւորին կը պատկանէր: Մասնաւորապէս մտերիմ էր վերջինին: Բայց այդ միջոցին լուս ու լուրջ, ահա հոն, կարծես ներքին ցուէ մը հիւժած: Աչքերը դետինը, մինչ ականջները լարուած կը թուէին մտիկ ընել: Ինքնակալը եւ Տրդատն ալ ընդհատեցին իրենց խօսակցութիւնը եւ իրենք ալ լարուած ականջ կուտային: Չայներու ալեւփանքը խոռոնդանճ ճիչերու փոխուեցաւ: Դոնապան գերինները ներս մտնելով ծնրադրեցին Ինքնակալին առջեւ, եւ ծանուցին թէ եպիսկոպոսներու պատուիրակութիւն մը կ'ուզէր խօսիլ իրեն հետ: Քիչ ետքը երեք եպիսկոպոսներ շքեղ հաղուստներով խորին խոնարհութիւն ըրին Կոստանդիանոսի առջեւ, փոփոխակի համբուրեցին անոր ոտքերը, եւ կրկին անոր ուղղեցին վարէն պաղատողին, համբ նայուածքներ, մինչեւ որ Կոստանդիանոս ձայնեց. «Ելէք ուրեմն եւ խօսեցէք»: Հաստափոր, իւղոտուած Յովսիոս սկսաւ. «Գերազնուականապոյնդ: Օ, մեր ամենաքրիստոնեայ Տէր եւ Ինքնակալ: Որքան յօժարակամ պիտի հնարանդէինք մենք քու երէկի սուր խրատականին եւ պիտի պահանջէինք խաղաղութիւնը, եթէ Արիոս երէց ահաւոր հայհոյութիւններ չընէ: Պէտք չէ, չէ կարելի, պիտի չըլլայ որ դուն, ամենարարձր Տէր եկեղեցիին, ուղես պարտաւորել մեզ ուղղափառ եպիսկոպոսներս եւ քրիստոնեաները, համամիտ դոնուիլ այդ հերետիկոսին վարդապետութեան: Այնպիսի խաղաղութիւն մը եկեղեցիին վախճանը կը նշանակէ, քու եւ մեր ամէնուն սարսափելի եւ աններելի յանցանքը: Դատապարտէ զայն: Ինքնակալ, անիծէ զայն: — Մեռցուր զայն, Ինքնակալ: — Պէտք է արմատախիլ ընել զայն, զայն եւ իր կուսակիցները, դաւաճան Կորնիլին նման»:

Երբ Յովսիոս դժուարութեամբ ոտքի ելաւ ծնրադրութենէն եւ ճակատէն քրտինքը կը սրէր, միեւնոյն տեղը ծնրադրեց Եւստաթիոս Անտիոքացի եւ խոնարհամիտ, հծծող բառերով ինքն ալ խնդրեց Արիոս հերետիկոսապետին դատապարտութիւնը եւ փճացումը: Եւ ասիկա ուշանալու չէ, փափաքեցաւ երրորդը միեւնոյն տեղը, Աղեքսանդր Աղեքսանդրացի, որովհետեւ երէկ հերետիկոսը, եկեղեցիի այդ կործանարարը, Տիրոջ Աստուածութեան ուրացողը, քաղաքին մէկ ատաղձարանին մէջ ատաղձադործներու, նաւաստիներու, ջաղացականներու, սափրիչներու խումբի մը քերթողական շափով եւ

ծրծաղաչարժ եղանակով բացատրեր է իր հերձուածը, եւ հիմա արդէն մակոյկներուն, տուններուն, խանութներուն եւ կապելաներուն մէջ Արիոսի հերձուածողական երգը կ'երգեն: Դատապարտէ, փճացուր զայն, Ինքնակալ, այն ատեն միայն կրնայ խաղաղութիւն ըլլալ»:

«Իր կուսակիցները գեո շատ են», հարցուց Կոստանդիանոս: «Գեո բաւական շատ եկեղեցին քանդելու համար»: Երեք եպիսկոպոսները այսպէս ձայնեցին, սուրբ Ջերմեոսնոյութեամբ փարելով կայսեր ծիրանին: «Արիոսի կեանքէն անարդար բան մը գիտէ՞ք»: — «Անարդար», ձայնեցին երեքը միասին, մին միւսէն տակի դարմացած ձեւով, ամէնէն տակի բարձր ձայնը Յովսիոսինն էր. — «Անարդար: Ի՞նչպէս կրնաս այդ հարցումը ընել, բարձրասուրբը դու Աստուածամարդ, ապաւնդ մեր եկեղեցիին, ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ անոր կեանքը, քան միակ եւ միմիայն անարդար, երբ քահանայ մը կ'ուրանայ Աստուծոյ Որդին»: — «Իրօք այդպէ՞ս կ'ընէ», միջամտեց հին խոստովանող վկան: «Այդպէս կ'ընէ: Բայց Ինքնակալին հետ մեր խօսակցութեան ի՞նչ կը խառնուիս դուն»: — «Ոչ շատ, յամենայն զէպս», բաւ ձերուկը մեղմարար: «Բայց ուր որ խնդիրը պատիւի եւ կեանքի վրայ է, կարեւորը ճշմարտութիւնն է»: — «Ճշմարտութիւնը կը փնտռենք մենք», ձայնեցին երեք եպիսկոպոսները, երկնցուցին իրենց հաստ վիզերը եւ մատանիներով ծանրացած ձեռքերնին զրին իրենց կուրծքին վրայ: «Ո՞վ ես դուն իսկապէս, խոստովանող»: — «Ինքնակալին մէկ հիւրը», խնդաց ծերը: Կոստանդիանոսի եւ Տրդատի լուծիւնը նշանակալից էր: Կայսրը մինչ այդ, կ'ամփոփէր իր միտքն ու յիշողութիւնը եւ ձայնեց բարկութենէն կարմրած. «Չեր գործը դուք տեսէք, իմ խառնուելիք գործս չէ, այդ մասին չեմ կրնար վճռել»: — Նայուածք մը շարժուած մը, զէպի դուրը, եւ արդէն ծանրաչարժ եպիսկոպոսները ծանրաքայլ կը դռթէին ետ ետ զէպի դուրը, կայսեր առջեւ միշտ գետինը նայելով խոնարհարար, մինչեւ որ սրահէն դուրս ելան: Ինքնակալը քանիցս ուժով քիթը խնջեց եւ հրամայեց դոնապանին սա քովի միւս պատուհաններն ալ բանալ:

«Ասկից ժամանակ մը առաջ, ես այդ Եւստաթիոսէն զրուցիւն մը ստացայ, բնականաբար սարսափելի համեստութեամբ ինձի նւերուած, — ահա» — Ինքնակալը քաշեց հանեց մատենադարանէն — Տրդատ կարդաց, բարձրաձայն խնդալով, զրուցեան տիտղոսին վրայ. «Ենդորի հերձուածին վրայ կամ որովայնախօսուհին: Գրուած Անտիոքի աստուածարեալ եպիսկոպոսին Եւստաթիոսի կողմէ»:

Կայսրը եւ իր հիւրերը ոտքի ելան: Այնպիսի մեծ դայթակղութիւն մը ծագած էր մօտը հոն: Ինքնակալը զէպի դուրը վազեց, գե-

րինէրը երկու փեղկերը բացին, և սեմին վրայ բոցանուտ նայուածք-  
նէրով կեցաւ Ինքնակալը, սակեռոյ, չորակնայեւ ճաճանչաւէտ, ծի-  
բանապղեատ, բաց, դանդաղահեր, արդէն ճերմկամ գլուխով: Այնքան  
երկար նայեցաւ եպիսկոպոսներուն և բաճանաներուն սրտաձայն  
բացմութեան, մինչև որ կամաց կամաց միտքը հանդարտեցաւ և  
հոգիով մը պէս հեռացաւ: Ահա թէ ինչ բառ Ինքնակալը. «Այս-  
պէս դուք նկատի առիք երկկի իմ խօսքս: Ամչցէք դուք, որ եպիս-  
կոպոս և հաւատքի խոստովանող բոլոր կ'ուզէք: Շատ շանցած բա-  
ցէն պիտի պայքարիք դուք ձեր մէջ: Չուզեցի ևս խոսնուիլ ձեր յա-  
րարերութիւններուն և բանակցութիւններուն: Ինքնակալը հաւատք  
չունի բանադատելու: Ճշմարտութիւնը պէտք է յայթէ»: — «Ճշ-  
մարտութիւնը մեր կողմն է»: — «Ո՛ր, մեր կողմն է»: — «Աստու-  
ծոյ որդին մենք ունինք»: — «Մենք ալ»: — «Քրիստոսնեայ մենք ենք  
— դուք հայհոյիչ էք»: — «Դուք անմիտ է՞ք, որ չեն կրնար խոր-  
հիլ»: — «Դուք երկղիմիներ էք, որոնք կը թիրեան Աստուծոյ խօս-  
քը»: — «Դուք կը թիրեք Աստուծոյ խօսքը»: — «Ո՛ր գրուած է թէ  
Որդին յախտենական է, թէ ի յախտենից անտի ան ամէն բանի մէջ  
հաւասար է Հօր, բնէք ո՛ր գրուած է ասանկ բան»: — «Ան փայ-  
ուած է Աստուծմէ, ինչպէս ամէն ինչ որ Աստուծմէ է»: — «Վայ,  
վայ, վայ, ո՞վ կ'ըսէ թէ ժամանակ եղաւ ուր չկար որդին — այդպէս  
բողբ անիծեալ ըլլայ»: — «Ինքնակալ, Տէր ճշմարիտ եկեղեցիի,  
անիծէ, դատապարտէ զայն, Կոստանդիանոս»: Եւ ուղղափառներուն  
երեք առաջնորդները նորէն նետուեցան Ինքնակալին առջև: Կոստան-  
դիանոս պոռաց անոնց որ ոտքի ելլեն, և անարկու ձայնով մը  
վայրկենական լուսեան մէջ գոչեց. «Արիս, խօսէ»:

Արիս ըսաւ կոկիկ ու հանդարտ. «Ես կը պնդեմ բաժնի վը-  
րայ. Յիսուս մարդ եղած է ինչպէս մենք ամէնքս, կը կոչուի Որդի  
Աստուծոյ, որովհետեւ իր ժողովուրդին Մեսիան ըլլալ ուզեց, և  
Հրեաներուն մէջ Մեսիան կը կոչուի Աստուածորդի: Յիսուս երբեք  
չըսաւ, թէ ինք ի յախտենից անտի եղած է, թէ ինք անսերմն ծնած  
է, և անսկիզբն է, կատարելապէս Հօր նման իշխանութեամբ, սրբ-  
ութեամբ և երանութեամբ: Ան չէ ըսած, թէ ինքը Բանն է, յախ-  
տենական իմաստութիւնը, որ ի յախտենից անտի Աստուծոյ քով էր  
և Աստուծոյ հետ աշխարհը ստեղծեց: Որ իջած ըլլայ երկինքէն  
մարդիկը փրկելու և շարժարուել, մեռնել, և յարութիւն առնել  
վերջ Աստուծոյ պիտի գտնայ նորէն: Ասիկա Պօղոս ըսած է Յիսու-  
սի համար, և մի միայն Յովհաննէսն է որ սա խօսքը կը զնէ Յի-  
սուսի բերանը. «Յառաջ քան զինն Արրահամու եմ ես»: Յիսուս  
ի՞նչպէս կրնայ Աստուծոյ հաւասար ըլլալ իշխանութեամբ, երբ ան  
բոլոր հիւանդներն ալ չէր կրնար բժշկել: Կամ իմաստութեամբ, հա-

ւասար երբ հետզհետէ կ'աճէր տարիքով, իմաստութեամբ և շնոր-  
հով: Կամ սրբութեամբ հաւասար, երբ կրցաւ հարցնել. ինչո՞ւ գիս  
բայի կ'անուամեք, մի միայն մէկ Աստուածը բարի է: Մէն միակ  
Աստուածը կայ, կ'ըսէ Յիսուս: Դուք, Աթանասեաններդ, երկու  
Աստուած կը ստեղծէք և մէկ Աստուծոյ միայն կը հաւատաք: Յի-  
սուս սխալներ գործած է և շատ բաներ չէ գիտցած», — աջակողմի  
բնոյգիմարները յայտնապէս վրդովեցան —, «ան յայտնեց թէ աշ-  
խարհի վերջը, վերջին գատաստանը և ինքն ալ անձամբ պիտի գայ  
նորէն երկինքէն, նոյնիսկ երբ տակաւին կ'ապրին իր աշակերտները  
և այն ստեղծուած մարդկային ցեղս: Բայց աշխարհը կը կենայ տա-  
կաւին և Քրիստոս տակաւին չէ եկած»: — Աջակողմեանք — այն է  
ուղղափառները կամ Աթանասի հետևողները — ահ ու գողով և  
ճեփ ճերմակ կտրած կը տեսնէին, թէ Կոստանդիանոս ինչպէս խան-  
դափառութեամբ և երթալով ալ աւելի ուղղորութեամբ կը հետեւէր  
Արիսի շատ որոշ յայտարարութիւններուն, և հարկ եղաւ որ կայսրը  
նոր և սաստիկ հրաման մը արձակէ, որ կարենայ Արիսո շարունակել.  
«Քրիստոս տեսէք իր ամենարարձը իշխանութեան և զօրութեան  
մէջ, հոն ուր հիւանդներ կը բժշկէ և մեռեալներ կը յարուցանէ, —  
ինք չէ որ կ'ընէ անձամբ, կ'աղաչէ Աստուծոյ և Աստուած իրեն ոյժ  
կուտայ: Եւ յետոյ, երբ աշխարհի բոլոր թաղաքորութիւնները իրեն  
հպատակին, ինք Որդին ամէն ինչ դարձեալ Հօր պիտի յանձնէ, որ-  
պէսպիսի Աստուած բոլոր «ամենայն յամենայն»: Այս նաղարկեցի Յի-  
սուսին և կ'ուզեմ հետևել, իր վարդապետութիւնը կ'ուզեմ ապրիլ,  
և երբ ևս այսօր դատապարտուիմ առանց արդարութեան և առանց  
հերքուելու, իմ Տիրոջ օրինակին համաձայն թշնամիներս ալ պիտի  
սիրեմ, և անձայն անշուղ պիտի երթամ աքսոր: Եթէ սպառնաք  
մեռցնել զիս, պիտի բոլոր առանց ստեղծութեան և առանց երկիւղի,  
բռնակեալ ևս ալ կը հաւատամ յարութեան և յախտենական կեանքի  
մը»: Կարծես նախապէս համաձայնած էին, անմիջապէս որ Արիս  
իր բանախօսութիւնը վերջացուց, դուրսը պալատին առջև նաւաս-  
տիները և ամբողջ հետևողները, ամբողջ ժողովուրդէն քաջալեր-  
ուած ուժովն յանկերգով, սկսան Արիսի երգը երգել. —

Ան որ կ'ընդունի քէ Որդին Աստուծոյ  
Յախտենական էր, միշտ ինչպէս Աստուած,  
Կր ծիծաղի հշմարտութեան վրայ իսկ.  
Դեռ երբեք չէ կարդացած Սուրբ Գիրքը,  
Եւ կամ ալ խեղաքիրած է անոր խօսքը:  
Որովհետեւ Սաղմոսարանին մէջ գրուած է  
Ահաւասիկ որդի իմ սիրելի,

Այսօր ծնայ քեզ:

Ուրեմն ո՞վ կարող է կոչել Քրիստոսը  
Միաժամանակ Աստուած եւ Որդի,  
Մինչ ձեզմէ իւրաքանչիւրը  
Կ'ուզէ ցանցնալ մէկ Աստուած միայն:  
Այն ատեն, ուրեմն, Քրիստոս ըլլալով Աստուած  
Ի՞նչպէս կրնայ տառապիլ եւ փորձուիլ:  
Պայտարին մէջ եւ կեանքի անհրաժեշտութեան  
Մարդս երեւակայած է միմուսութիւններ:  
Ո՛չ, իրականութեան մէջ մարդ մըն է,  
Բայց ընտրուած Աստուծմէ,  
Որպէսզի իր կեանքով հրաշալի մեզ փրկէ չարէն:  
Իր մաքուր կեանքով,  
Քրիստոս մեզ կ'առաջնորդէ նոր կեանքի մը,  
Քրիստոս, մեր բարի հովիւր,  
Մեզի կ'ուզէ տալ յաւիտեանական կեանք:  
Կը բաւէ ջանալ նմանիլ իրեն  
Եւ հրաժարիլ հեթանոսներու վարդապետութենէն,  
Որովհետեւ Արիստ միայն իրաւունք ունի.  
Թող գայն դատապարտէ կայսրը:  
Եթէ վատ էր իր վարդապետութիւնը,  
Զէր կրնար Քրիստոսէն գալ:

Փողոպոսը կը գոռար, հուժկու շեշտերով կը հնչէր երգը,  
ամէնէն առաջ տղաքը, խանդավառ սա յանկերգը: «Քանի իրաւունքը  
Արիստինն է միայն...»: Կը խնդային կը ծափահարէին եւ երգը  
լսնալէն վերջ նորէն կը սկսէին, ինչ որ այն ատենուան սոխորու-  
թիւնն էր ստիպողական փրօփականտի համար:

Իր բանախօսութեան միջոցին Արիստ քանիցս սուլումներով,  
չչումներով, ատելութեամբ լի սպառնալիքներով եւ անէծքներով  
ընդմիջուեցաւ հակառակորդ եպիսկոպոսներուն եւ քահանաներուն  
կողմէ, բայց Կոստանդիանոս իր ստուար զուգար կը դարձնէր այն  
կողմը, եւ խոշոր աչքերը կը բանար պոռացողներուն դէմ: Բերանը  
դրեթէ զոց մնաց: Բարկաճայթ Ինքնակային կարծես արոյրէ քան-  
դակուած դէմքը կը բաւէր լուեցնելու համար, բայց Արիստ երբ իր  
վերջարանը կը դռէր սրահին մէջ, կարծես դժուոհութեան փոթորիկը  
կրկնակի ուժով փրթաւ: Հիմա այլեւս չէին դորեք Ինքնակային նայ-  
ո՞ւածքներն ու դիմադիծերը: Ոստում մը — եւ ահա անոնց մէջ էր,  
ոսկի մականը սպառնալից ճօճելով անոնց զլուխներուն վերեւ, կան-  
չեց այն ձայնով որ սովորաբար կուզայ ճակատամարտի տաք միջո-

ցին պատերազմի ժամանակ. «Կրկին եւ կրկին կը հրամայեմ հան-  
դարտութիւն: Եթէ իմ խօսքս բաւական չըլլայ, անմիջապէս, առա-  
ջին բու՛շին իսկ, անձնապահ զուեզս տիտի պարպէ սրահը եւ ժողովը  
կը լուծուի: Եւ այն ատեն Արիստ իրաւունք ստացած կ'ըլլայ: Կը  
խոստովանիմ որ ես հաւնեցայ անոր»: — Կայսրը կը դիտէր աջա-  
կողմի բարկաճայթ եւ զուեզս զէմքերուն կրակ կտրած աչքերը իրեն  
մրայ ուղղուած, բայց հանդարտ կը մնար: Աղեքսանդրիոյ Աղեք-  
սանդը եպիսկոպոսին երիտասարդ սարկաւազ Աթանասիոս պապատե-  
ցաւ բարձրաճայն որ կայսրը արտօնէ զինքն խօսիլ ուղղախօսնե-  
րուն կուսակցութեան անունով: Կոստանդիանոս մականը անոր կողմը  
երկարեց եւ ձայնեղ «Արտօնեալ»: Աթանասիոս հաղիւ քան տարե-  
կանէն աւելի էր: Անտօսը, զրաւիչ, հրապուրիչ երեւոյթով մարդ  
մը, բարձրահասակ, լայնի մարմինով, խարտիչահար, ճակատին  
տակ երկու լուսայրոյ, խորափրօ, մութ աչքեր արեւաշող: Փեղե-  
ցիկ, կանոնաւոր ամբողջ զէմքին մրայ սրտազրաւ մաքրութեան եւ  
բարութեան, պատկառելի լրջութեան եւ սպառիչ եռանդի արտա-  
յայտութիւն մը: Իր երեւումը համայնքին տոջեւ պարզ էր եւ խո-  
նարհ, իր շարժումները նախ հանդարտ, խօսուածքն ալ հանդարտ  
եւ զրական: Արդէն մէջտեղ ըստին եւ խօսելու ձեւովը թոյլեց զա-  
մէնքը: Խորունկ ուշադրութեամբ կ'սենկնդրուէր: Արիստի բանա-  
խօսութեան մրայ բնու շճանրագաւ, այլ իսկ եւ իսկ յայտարարեց,  
թէ իրեն համար Քրիստոս այն ատեն միայն կրնայ պատարար եւ  
փրկիչ ըլլալ, երբ Յիսուս ի յաւիտենից անտի հաւատար Աստուած-  
ծորդին կ'ըլլայ Հօրը: Աթանասիոս մէջտեղ բերաւ Աւետարաններուն  
բոլոր այն հատուածները, որ ըստուած է թէ Յիսուս Աստուծոյ որ-  
դին է, եւ որ Յիսուս ինքնին այս հաւատքը կը սպասէր իր աշա-  
կերանէն: Բայց թէ Յիսուս ինք Աստուածորդի տիպոսին տակ  
ի՞նչ հասկնայ կամ հասկցնել կը փափաքէր, այս մասին Աթանասիոս  
ոչինչ խօսեցաւ: Թէ մարդկայինն ու աստուածայինը Տիրոջը մէկ ան-  
ձին մէջ ինչպէս պիտի բժրանուի, թէ ինչպէս ան ճշմարիտ մարդ  
եւ ճշմարիտ Աստուած կրնայ ըլլալ, ասիկա անքննելի մեծ զազանիք  
մըն է, զոր ոչ ոք կրնայ փորել եւ որուն ամէնքը պէտք է հաւատան  
երկրպագութեամբ եւ պաշտելով: Բայց Յիսուս մարդկային բնու-  
թեամբ Աստուածորդի ըլլալով միայն առանց մեղքի եղած է, եւ  
կրցած է Աստուածը հաշտեցնել մարդոց հետ եւ փրկագործել, եւ  
իշխանութիւն ունեցած է աշխարհի մրայ մեղքերուն ներելու եւ  
նշաններ ու հրաշքներ դործելու: Այս պատճառաւ աղաղակած է Պետ-  
րոս. «Տէր, ո՞ր կրնանք երթալ մենք, դուն յաւիտենական կեանքի  
խօսք ունիս, եւ մենք ճանչցանք որ դուն Քրիստոսն ես, կենդանի  
Աստուծոյ որդին»: Այս պատճառաւ կ'աղաղակէ ինք Աթանասիոս եւ

բարբ Իր բնկերակիցները Թովմասին հետ «Տէր իմ և Աստուած իմ» : — Ոչ թէ բաժնի, այլ թէ ինչպէս կ'ըսէր և թէ ինչպէս այդ առթիւ անոր պատանեկան զէմքը երթալով կը ամբողջէր Քրիստոսի և անոր պատիւի շուրջ իր գլացած վիշտէն, և թէ ինչպէս իր աչքերը կայսեր կը յատկին, կարծես անկէջ օյնութիւն խնդրելով . — այս էր պատճառը որ իր խօսքերը մեծ և յուս ապաստութիւն մը գործեցին : Արիտս վերջին ծայր յարգանքի և սիրոյ շեշտով մը բառ . «Ո՛վ Աթանասիոս, Էթէ ևս փափաքէի քու բոլոր համամիտներէդ մէկը շահիլ, դուն պիտի բլրայիր ան, ո՛վ բարեպաշտիկ սիրտ» : — «Զիս չշահած, Արիտս, իցիւ Աստուած քեզ գատէր և փճացնէր Աստուածորդուն փառքին համար» : Այսպէս ձայնեց, ցաւէն ու բարկութենէն հատկելով : Ամէնքն ալ յուզուած էին : Յետոյ սկսաւ Եպիսկոպոսներուն աղաղակը դարձեալ զէպի Կոստանդիանոս . «Դատէլ զայն, զատապարտէլ զայն, Կոստանդիանոս, Տէր Եկեղեցւոյ, Աստուած այնպէս կը կամենայ» :

Կոստանդիանոս բազմած էր հոն վարանոտ և անորոշ և կարծես պարատութեան մէջէն օդնութիւն կը խնդրէր : Իր Լուսեր բարձր բունները նորէն բացուեցան : Տրդատ Երեցաւ Մեծին Աղեքսանդրի աւարտով, Երկայն ձիւնասպիտակ նախորտ, և նոյն ձևով ու գոյով կօշիկներ : Ոսկի գօտին աղբերուն շուրջ, ծիրանին թիկունքը և իր քոյր, սանացուպին վրայ կը թնամ, խորապէս ծոած, գրեթէ գետինը ինկած, ձեր խոստովանողը ուխտաւորի պատաստունն զգեստով : Ընդհանուր յուսութիւն : Ամէնքն ալ զէպ առաջ Երկարած, զլուսի զլուսի, ուղղութիւններ, այսինքն աջ ու ձախ կարծիքներ — բաժանումներ — թշնամութիւն մոռցուած կը թուէին : Հծծիւն մը բոլոր շարքերուն մէջ : Տեւական հարցում մը . «Ան ո՛վ է» : — «Մեր Եպիսկոպոսներուն մէջ հոս ներսը ո՛վ կրնայ բլրալ առիկա» : — «Պէտք է կայսեր սիրելին Էղած բլրայ և Հայոց թաղաւորին ծանօթը» : — «Ասորը Գրիգորը, Հայաստանի Եպիսկոպոսն ալ պիտի գար, կ'ըսուէր կանխաւ» : — Ուրիշ հարցումներու և կատակներու վերջը չէր գար, մարդուն խորին ձերութիւնը դիտուելով : Կատակներէն մին այն էր, թէ արդեօք այս ձերը նոյն ինքն Սուրբ Գրիգորին ներկայացուցի՞ն է : Մերունին, Կոստանդիանոսէն հրաւիրուելով, սկսաւ մեղմ, հազիւ լսելի ձայնով «Ներեցէք Ինքնակալ, թաղաւոր, Եպիսկոպոսներ և բոլոր սպասաւորներ Եկեղեցւոյ, ներեցէք հինաւուրց նահատակին, որ համարձակի խօսիլ հոս : Թէև Տէր Յիսուսի վերքերը իմ մարմինիս, ձեռքերուս և ոտքերուս վրայ կ'այրեն զիս, պէտք է խօսիմ, իմ Երկնաւոր Տէրս հրամայեց ինձի, և Ինքնակալը ևս արտօնեց : Ուստի մտիկ բրէք : Այս իմ բարեկամս, Տրդատէս թաղաւոր Հայաստանի, էր Երբեմն անազորոյն հեթանոս մը : Զիս չարչա-

րէլ և այլր մէջ նետել տուաւ, զիս սպաննելու համար : Աստուած զիս ապառեց իմ հաւատարիմ կնոջս միջոցաւ : Ես Էմ — Գրիգորիտս, Հայաստանի Եպիսկոպոսը» : — Թանձր ձայն մը գոչեց . «Նրաւունք չունի ինչքինքը Եպիսկոպոս անուանելու : Ան Հայաստանի Եպիսկոպոս անուանուած չէ սուրբ Եպիսկոպոսներուն ժողովին կողմէ» : — «Զայնդ վար քաշէ, Յովսիոս», հրամայեց կայսրը խօսի : Գրիգոր շարունակեց «Այրին մէջ Աստուած զիս լուսաւորեց և իմ սրբիս իր շարունակներուն մէջ հրահանչեց : Չեր պայքարը ի շարէն : Չէր վէճը կ'անպատուէ Տէրը, որ շատ . «Անկէջ պիտի ճանչան մարդիկ, թէ զուր իմ աշակերտներս էք, Էթէ իրարու հանդէպ սէր ունենաք : Ո՛վ որ կ'ուզէ իմ Լուսէս զալ, ան պէտք է ինչքինքը ուրանայ և ասն իր խաչը իրեն վրայ և գոյ իմ Լուսէս : Ուստի Յիսուսի նայեցէք : Ուստի նոյն ինքն Յիսուսի վերադարձէք : Ի՞նչ է Աւետարանը : Բարի լուրը : Աստուած աշխարհը այնչափ սիրեց որ իր միածին որդիս տուաւ, որպէսզի ամէնքը որ իրեն կը հաւատան չկոչուիին, այլ յաւիտեակալ կեանքի ունենան» : Ի՞նչ է յախաճանկան կեանքը : «Ո՛ր անոնք քեզ, որ զու միայն ճշմարիտ Աստուած Էս, և գայն գոր դունն զրկեցիր, Յիսուս Քրիստոսը անցնան ուղիղ» : Մտիկ բրէք իմ գաւանդութիւնս Աստուածորդուն մասին . իրբև վարդապետ, որուն նշան բնու որեւէ մարդ չլսուեցաւ, և իրբև մարդարէ, Յիսուս մարդոց բերաւ Աստուծոյ ամէնէն վերջին կատարեալ ծանօթութիւնը : Աստուած — մեր հայրը Երկինքին մէջ : Աստուած — Սէրը : Տեսէք ի՞նչ սէր զոչ տուաւ մեզի Հայրը որ մենք պէտք է իր գաւանդները կոչուինք : Եւ կրնայինք ալ բլրալ, Էթէ հեղահամբոյր, քաղցրաբարոյ բլրայինք : Յիսուս իր նշաններուն և հրաշքերուն մէջ յայտնարեալ է Աստուծոյ ամենամեծ կարողութիւնը և այսպէս բանիւ և գործով, ամէնէն առաջ իր շարժարեւելովը և մեռնելովը, մարդոց փրկիչն է մորթութենէ, մեղքէ, պարտապանութենէ, գատապարտութենէ, կաբոտութենէ և մահուանէ : Յիսուս բարձրացած է վեր բոլոր մարդոց վրայ, ո՛չ միայն աստուածածանօթութեամբ և կարողութեամբ, այլ նաև, ի վեր քան դամենայն, կատարեալ անմեղութեամբ և սրբութեամբ : Այս պատճառաւ ևս զինքը կը կոչեմ նաև Միածին ի Հօրէ, ի շնորհօք և ճշմարտութեամբ, պատկեր նմանութեան անասանի Աստուծոյ և անոր ճաճանչը, ցոլացումը Երկրի վրայ : Ոչ սք իրմէ առաջ, ոչ սք իրմէ վերջ կրնայ հաւատարիլ իրեն : Անճամեմատելի է : Ոչ մէկ ուրիշ մէջ կայ փրկութիւն . նաև ոչ մէկ ուրիշ անուն տրուած է մարդոց, որով փրկուին, այլ միայն անունով Յիսուսի Քրիստոսի : — Մենք աստուածածանօթութիւն և աստուածազօրութիւն, անոր անմեղանշականութիւն և սրբութիւնը սակայն միայն հնարաւոր եղան, որովհետև Աստուած Քրիստոսի մէջ էր, որովհետև Աս-

տուժոյ հոյին եւ զօրութիւնը մինչեւ հիմա եւ այսուհետեւ եւս անբաղդատելի կերպով մարմնաւորուեցան, մարդացան նազովրեցի Յիսուսին մէջ: Աստուած Յիսուսի մէջ մարդացաւ: Աստուած Քրիստոսի մէջ էր եւ ինքն ինքեամբ քաւեց աշխարհի մեղքերը: Անոր Յիսուս Քրիստոս մարդուն մէջ կը հանդէի, մարմնաւորեալ, Աստուածութեան յրութիւնը: Անոր մէջ թաղուած են իմաստութեան եւ հանճարի բոլոր գանձերը: Որովհետեւ Աստուած Յիսուսի մէջ այնպէս յայտնադարձուած է, որ Յիսուս ճանչցաւ Աստուածը այնպէս, ինչպէս որ մէկ սրբի կը ճանչնայ իր հայրը, որովհետեւ Աստուած նազովրեցի մարդ Յիսուսին յայտնեց փրկութեան եւ խաղաղութեան բոլոր իր մտածումները Սուրբ Հոյին միջոցաւ, եւ այսպէս տուաւ ամէն իշխանութիւն, զոր հայր մը միայն կը յայտնէ եւ կուտայ իր դաւակին — ասոր համար է Յիսուս կը կոչուի Որդի Աստուծոյ եւ Աստուած իրեն հայր: Ամէն ինչ սրբիին տրուած յանձնուած է, եւ ոչ ոք կուգայ հօրս, այլ սրբիին միջոցաւ միայն: Եւ սակայն Յիսուս եւս ճիշտ մեկի պէս կատարեալ չափով մարդ եղած է: — Բայց առանց մեղքի: Իր մարդութեան եւ աղքատութեան համաձայն Յիսուս ինքզինքը յորջորջած է սրբի մարդոյ: Աստուած զայն իր խոնարհագոյն աստիճանէն բարձրացուց իր յարութեամբ եւ երկինք համբառնալովը, եւ զայն ըրաւ բարեխօս քահանայապետ մարդկութեան, ամենայն ուրեք փրկիչ հաւատացեալոց, Տէր իր եկեղեցիին եւ համայնքին, գտաւոր կենդանեաց եւ մեռելոց, թաղաւոր Աստուծոյ արքայութեան մէջ»:

Կոստանդիանոս ցնձաց, խայտաց եւ զոչեց բարձրադազակ. «Ահա իսկ եւ իսկ ճշմարիտ դաւանութիւնը: Ահա իմ հաւատքս: Նաեւ քուկդ, Տրդատ»։ Հայոց թաղաւորը զոչեց առիւծաձայն. «Նաեւ իմս»։ Ետա եպիսկոպոսներ ոտքի կեցած էին յուզումով, մեծագոյն թիւով կողմնակիցներ հաւաքուեցան հետզհետէ Գրիգորի շուրջ: Բայց Յովսիոս, Եւստաթիոս, Աղեքսանդր եւ Աթանաս փութանակի հոս ու հոն ինկած էին եւ եպիսկոպոսներուն ակամջին գաղանի բառեր կը հօժէին:

«Եկուր, Արիոս, եկուր Աթանասիոս», ձայնեց Գրիգոր պաղատողին շեշտով, «եկէք ուրեմն հոս: Չէ՞ք նշմարեր միթէ — ԻՄ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ ԿԸ ՀԱՆԳՉԻ ՆԱԵՒ ՁԵՐ ՀԱՒԱՏՔԸ: ԱՅՍ ՀԻՄԻՆ ՎՐԱՅ ԿՐՆԱՅ ՇԻՆՈՒԻԼ ՍՈՒՐԲ ԸՆԴՀԱՆՐԱՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ: ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՄԱՐԴՈՒՆ ՈՐԴԻՆ Է ՀԻՄԸ, ԱՆԿԻՒՆԻՆ ԳԼՈՒԽԸ: ԲԱԲԷ ՇԻՆԵՑԻՔ ԱՆՈՐ ՎՐԱՅ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ, ԸՆԴԱՐՁԱԿ, ԱՉԱՏ, ԳԵՂԵՑԻԿ, ՀԱՄԱՅՆՔԸ, ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ ՄԷԿ ՀԱՒԱՏՔ ՄԻԱՅՆ ԿԸ ՃԱՆՁՆԱՅ. ՀԱՅՐԸ ԵՐԿԻՆՔԻՆ ՄԷՋ, ԵՒ ՄԻՄԻԱՅՆ ՄԷԿ ՃԱՄԲԱՅ ԱՌ ՀԱՅՐ. ՅԻՍՈՒՍ: — ԵԿԷՔ ՈՒՐԵՄՆ», գոչեց ծերունին եւ անոր ձայնը կը դողար սուրբ ա-

կրնկալութեամբ, իր աչքերը կ'աղերսէին, կը փայլէին արտասուալից: «Ուստի եկէք, թողէք վէճը: Քրիստոս սրբելը, այս, լուսագոյն է քան որեւէ սխալութիւն: Ո՛յ որ կ'ուզէ կատարել կամքը անոր որ զիս զրկեց, ան պիտի գիտնայ թէ իմ վարդապետութիւնս Աստուծէ է, թէ ես ինձմէ կը խօսիմ: — Դարձէք Յիսուսին: Դարձէք միամիտ մանկական ուրախ Աւետարանին: Դարձէք հաւատքին, որ ոչ այլ ինչ է եւ ոչինչ կ'ուզէ, այլ միայն վստահել, Աստուծոյ եւ Քրիստոսի վստահել: Աստուած — հայր հաւատքին մէջ բոլոր մարդիկ պէտք է միաբանին: Ամէնքը պէտք է սրբեն Աստուածը բոլոր սիրտով, բոլոր անձով, բոլոր միտքով, բովանդակ զօրութեամբ, նաեւ ընկերները, մտաւոր թէ հեռաւոր, հեթանոս եւ հրեայ, անձիդ պէս: Մէկ հօտ եւ մէկ հովիւ: Բոլոր ժողովուրդները մէկ հօտ, եւ Քրիստոս Յիսուս անոնց թաղաւորը, անոնց Տէրը, Տէր Յիսուս Քրիստոս եւ անորմէ ու ամէնքէն ալ վեր կենդանի Աստուածը: Դուք ալ այսպէս չէ՞ք նկատեր միթէ, զուք ամբարտաւաններ: Ինձի պէս հէք ուխտաւորի մը բերանով Սուրբ Հոյին կը ձայնէ. նիկիա, յաղթութիւն: Յաղթութիւն: Ընդունեցէք իմ դաւանութիւնս եւ կնքեցէք խաղաղութիւն: Հաղարմեաներ, յախտենականութիւններ ձեզ պիտի օրհնեն»: — Ծերունազարդ Գրիգոր, յոյնած, կեցաւ եւ իր մարմինին վերի մասը խորհակ կոր զիրքի մը մէջ: Ենչառութեան համար կը մարանչէր:

Դուրսը հետզհետէ կիցիչ տաք մը կը տարածուէր: Եւ ներսը արքայական սրահին մէջ ճնշիչ, լուռ տրամադրութիւն մը ծայր տուած էր: Կէս օրուան մօտ էր: Ոչ ոք այլեւս կը համարձակէր կարծիք յայտնել: Ամէնքն ալ զրացուած, ամօթապարտ էին, իրենց ազդեցութիւնը փճացած կը համարէին: Կայսրը եւ թաղաւորը, ծանրախոհ եւ լուռ, կը խորհրդածէին առանձինն, իրարու Լընս նայելով միայն, Գրիգորի ձառին եւ անձնաւորութեան զործած տպաւորութեան վրայ: Եւ ահա պատահեցաւ յոյժ նկատելի դէպք մը, որ բնականաբար իրրեւ աստուածային հրահանգ մը ճանչցուեցաւ եւ անմոռաց մնաց ամէնուն միտքին մէջ: Անրնդհատ տիրող խոր լռութեան միջոցին ձիւնապիտակ աղանի մը անշուշտ թեւաբախումով, խոյանքով բարձր ձուածեւ պատուհաններուն մէջէն ներս թուաւ սրահին մէջ, ժողովականներուն զլուխներուն վերեւ քանի մը անոյամ շրջան ըրաւ, եւ վերջին անգամ, շատ յուշիկ, կողմնակի հեղանաղ ճախրանքով մը նստաւ Գրիգորի ուսին վրայ: Գրիգոր բացարձակապէս պահեց իր հանդարտութիւնը, թէեւ յուզուած էր: Ինքնակալը սակայն այնքան զրացուեցաւ այս միջադէպին վրայ, որ երեսին զոյնը նետած, դողողով ձայնով մը զոչեց. «Օ, նայեցէք, դարձեալ իրրեւ Յորդանանի մէջ հոն Յովհաննէսի եւ Քրիստոսի վերեւ. Սուրբ Հո-

դին» : Կանչը խրտչեցուց աղաւնին, որ փութաց պատուհանէն դուրս թեւ առնել :

Ասիկա միտքերու տեսակ մը լարուածութիւն տալով բերաւ : Եւ վիճատէր եպիսկոպոսներէն ոմանք օլուտ քաղցեցին աւարացեալու Գրիգորի ճատին տպաւորութիւնը եւ ոյժ տալու կրկին իրենց վարդապետութեան յաղթանակին :

Երիտասարդ Աթանասիոսի պերճախօսութիւնը եւ խանդը առանց ազդեցութեան շմանցին Կոստանդիանոսի վրայ : Արիոսի եւ իր կողմնակիցներուն դատապարտութիւնը հետզհետէ աւելի բարձր ձայնով պահանջող եպիսկոպոսներուն սպառնական զիրքը տարտամ կացութեան մը մտանած էր Կոստանդիանոսը : Ան խաղաղութիւն կ'ուզէր : Ամէն պարագայի առկ խաղաղութիւն : Այս հերձուածով պէտք չէր բաժնուեր իր կայսրութիւնը, պէտք չէր որ վնասուեր իր կեանքին գործը : Արիոս զեռ երկու հաւատարիմներ ունի : Բոլոր միւսները միաբանած են դաւանանքի մը վրայ : Ամէնքն ալ հիմա անդուլ անդադար կուշերով կանչերով, զօրեւով երեք արիոսեան եպիսկոպոսներուն հրամարեցումը եւ դատապարտութիւնը կը պահանջեն : Ամէնքն ալ իրենց սեփական կարծիքները այնպէս մը փոխակերպեցին, այնպէս մը պահանջեցին, այնպէս մը տեղի տուին, որ հաւատոյ դաւանութիւն մը դուրս եկաւ, եւ կարելի եղածին շափանհասկնայի եւ անբացատրելի բարձր եւ հանդիսաւոր ուսուցիչ բառերու մէջ բերեկացաւ, թէ սրղին հօրը բուրբովին նման է յաւիտեանս յաւիտենից : Յաղթականները արդէն հանդանակ մը պատրաստած էին, դատապարտութեան վճիռն ալ զրուած : Կոստանդիանոս պէտք է ստորագրէ : Զինքը կը շրջապատեն, զինքը կը նեղեն միշտ աւելի խիստ ու պահանջկատ եղող եպիսկոպոսները Յովսիոս, Եւսեթիոս, Եւստաթիոս, Աղեքսանդր : Գրիգոր սակայն կը կենար Ինքնակալին ետեւը եւ կը ձայնէր միշտ աւելի բարձր. «Շնորհք, շնորհք, Ինքնակալ : Անիրաւութիւն մի ընէր : Մի դատեր ինչ որ Աստուծոյ միայն կ'իյնայ դատել : Հոգեւոր բաները պէտք է հոգեւորապէս դատուին : Սաղաղութիւն, խաղաղութիւն : Յիսուս, օն, յաղթէ ուրեմն : Սաղաղութիւն Տեառն : Ախ — Արդ, տեղի կուտայ Ինքնակալը : — Տրդատ, եկուր : Իրիկուն պիտի ըլլայ, եւ օրը տարածամած է : Չեմ գիտեր . . . ուր եմ — Ի՞նչ կ'ըլլայ ինձի : — Ահազին փոս մը կը փորուի : Հաղարաւորներ — եպիսկոպոս, քահանայ, սարկաւազ, փոս փորողներ կը փորեն ու կը փորեն — հոն պիտի գրուի յարուցեալը : — Կը կանչէ — կ'աղաղակէ, կենդանի Յիսուսը — չէ՞ք իմանար, սուրբ հայրեր», կը գոչէ Գրիգոր, կարծես խելայեղ : — «Լսեցէք, կենդանի Քրիստոսը պիտի թաղուի, այս : Ի՞նչ անուն պիտի կրէ այն հսկայ տունը, որ ահա կը շինուի ողջ թաղուող Տիրոջը վրայ» :

— Ամէնէն բարձր ձայնը կը հանէ Գրիգոր մոլեղնած, եւ սարսափազուհու հեղնութեամբ. «Քրիստոնէական եկեղեցին. վայ, վայ, վայ, Նիկիա : — Պարտութիւն : Մահ կեանքին : Թաղում յարուցելոյն : Քարէ տաճար, իսկ ներսը — սարսափ մահ : — Խնկարկութիւն քրիստոնէաներուն բոքրոսած ոսկրներուն վրայ, անոնք իրենց նման քրիստոնէաներէ սպաննուեցան վարդապետութեան տարրերութեան պատճառաւ : Օ, օ, օ, անագորոյն մահ — օ, վերքեր : — Օ, վերքեր, Տէր Յիսուս Քրիստոս : — Օ — Ինչնակալը կը տկարանայ — ան — կը ստորագրէ — Արիոս կը դատապարտուի — օ — ահա կը փախչի երկինքի թաղուորութիւնը : — Տեսէք ինչպէս կը խաւարի : — Նիկիա — Պարտութիւն : Արքայութիւն Էրկինից, Տրդատ — ո՞ւր մնաց, ահա Նիկիոյ վրայօք կը փախչի կ'երթայ — եւ անդունդէն վեր կ'ելլէ անոր տեղը — քրիստոնէական եկեղեցին : — Տրդատ, զժողովրդ, քրիստոնէական եկեղեցին» :

Մինչ Ինքնակալը ժողովին արձանագրութիւնը կը ստորագրէր, ծերունին երեւալ տատանեալ կը հոտաչէր, կը հեծեծէր, դուրս կ'երէր, երեսը ձեռքերով բռնած : Տրդատ թաղուոր անոր ետեւէն կ'երթար : Նիկիոյ քրիստոնէական ժողովին մասնակցողներէն մէկ ջանին, որոնք իրենց պաշտօններն հաւատարիմ մնացած էին, հերետիկոսապետ Արիոս եւ իր բարեկամներէն երկուքը, իսկոյն ժողովը ձգեցին եւ ճամբայ հանուեցան աքսորի համար :

Դուրսը կեցած էր ահազին ժողովրդային ամբոխ մը, որ արդէն ժամերէ ի վեր կը սպասէին վճիռին միջօրէկէն վերջ տալին : Շատերը կը պոռային Արիոսի եւ իր բարեկամներուն ետեւէն, ոմանք ալ քար կը նետէին : Այսպէս պատուիրած էին եպիսկոպոսները : Այդ պատճառաւ Նիկիոյ քրիստոնէայ ժողովուրդին յետոյ բաժնուեցաւ, միս, կարկանդակ, սինի, որքան որ փախաքէին : Լիճին վրայ այս զինարբուքի ընթացքին քանի մը նաւաներ Արիոսի հեղինակած երգը երգեցին, եւ ահա խարաղանուեցան զինովցած ուղղափառներէն եւ լճամոյն եղան : Երբ ժողովուրդը կ'ուտէր կը խմէր, ուղղափառները ճաշի միջոցին կայսերական պալատին մէջ կը վիճէին Չատկական տօնին բուն ժամանակամիջոցին վրայ եւ նաեւ թէ պատկուան օրը ճշտելու իրաւունքը որո՞ւ կը վերաբերի : Երբ այս վէճը լմնցաւ, սկսան վիճիլ սա կէտին շուրջ, թէ պէ՞տք էր նորէն եկեղեցիին ծոցին մէջ ընդունիլ զանոնք, որ տասնրհինյ տարի առաջ հալածանքի խիստ շրջանին, շարժարանքէ ու մահէ փախնալով, կամ ազահուութեան եւ աշխարհային ցանկութեան պատճառաւ իրենց հաւատքը ուռացած եւ հեթանոս կայսրերու կիսանդրիններուն տօջեւ խունկ ծխած էին : Կոստանդիանոս, Գրիգորիոս, Տրդատ այլեւս հոն ներկայ չէին : Տրդատ ճամբու գրուեցաւ ճոխ պարզեաներով, լաւագոյն բա-



րեկամութեան նշաններով: Կոստանդիանոս խոնարհեցաւ Գրիգորի առջև, ծոկց իր ծունկերը անոր առջև, պալատին անձնական սենեակին լուսթեան մէջ, եւ սուրբը կայսեր աղերսկ զլուսին վրայ աղօթեց, որ Աստուած թողութիւն շնորհէ իր թափած արիւնին յանցանքներուն, եւ կարողութիւն պարզեւէ իրեն քրիստոնէական հաւատքը անխափան դաւանելու համար իշխանակիցներուն առջև եւ կայսրութեան մէջ, յօժարելով մկրտուիլ:



Քանի մը շարաթ վերջ ետակայմ ցոկանաւ մը Պիրէոն մտաւ: Ուխտաւորի հազուատներով, անձանօթ ու օտար, դուրս ելան Տըրքատ եւ Գրիգոր:

Ահա հոն էր Աթէնք: Քրիստոնէական Աթէնքը: Ոչ մէկ հեթանոս կը հալածուէր իր հաւատքին համար, բայց բնակիչներուն ամենամեծ մասը Կոստանդիանոսի կայսրութեան տակ քրիստոնեայ դարձած էին: Հոս, Պիրէոնի նաւահանգիստը, Տըրքատ, գրեթէ 45 տարիներ առաջ դեռ տղայ, ցամաք ելած էր Խոսրովիդուխտի հետ: Այն իրիկունն ալ, ինչպէս հիմա, առասպելական շքեղութիւն երկինքի, ցամաքի եւ ծովու վրայ: Տաքը մեղմացած էր: Ծովուն հովը դով կը փշէր գկպի ներս ցամաք: Երկու բարեկամները ճամբորդութեան թեթեւ վերարկուներով կը ճեմէին Պիրէոնի փողոցը: Գրիգոր իր ցուպին կրթնած: Քաղաքը կը տեսնուէր: Գիշերը պայծառ էր: Երկինք աստղերով լեցուն: Սենեակներ վարձեցին, լաւադոյն հիւրանոցին մէջ ճաշեցին եւ խոյն իջան քաղաք: Տըրքատ իր բոլոր յիշատակները կը վերակոչէր: Գիշերային լուսթեան մէջ ահա իրենց առջև կը կանդնի Լիկինեան ղղեակը: Ան Տըրքատի կը վերաբերի Լիկինիոսի կտակով: Բայց Տըրքատ փափաք չունի անոր: «Ո՞վ կը բնակի արգեօք Ներսը: Ո՞չ ոք: Մեռելները: Հայր Լիկինիոս: Մայր Լիկինիա: Երկուքն ալ ժանտախտէն մեռա՞ծ: Երկուքին ալ աճիւնի սափորները ներսը — ո՞վ գիտէ: Առաւօտուն կը տեսնենք, Գրիգոր»:

Կիսապայծառ լուսնակ գիշեր: Տակաւին հոն են ամէնքը, Զեւս, Աթենաս եւ մեհակներուն անտառը, արձաններ եւ բալկոններ հոն վերը Ակրոպոլիսի վրայ: Արիսպադոսի վրայ կը կենան երկու բարեկամները եւ կը նային ձիոյ հայեցումներով բովանդակ մեռեալ հինաւորաց փառքերուն վրայ: Զեւսի արձանը հակայարքեճ կանդաղուած գիշերուան մէջ: Պալլաս, ոսկի զլուխը եւ տէգը ձեռքը կը փայլատակ եւ վեհապանծ կը գահակալէ հոն վերը տակաւին եւ կը նայի իր քաղաքին վրայ: Բարեկամները չեն կարող բառ մը իսկ արտասանելու:

Քիչ մը աւելի հեռուն: Վարը քաղաքին մէջ, փողոցներուն, գոհհներուն մէջէն: Տըրքատ, յիշատակներով ողորուած, ճնշուած, ամօթապարտ եւ զլխիկոր, անձայն անխօս, ցրտահար, կը հասնի քրիստոնէական եկեղեցին: Քրիստոնեաներուն Աստուծոյ աշարակը: Կը մտի, կը բռնէ Գրիգորի ձեռքը, ինքը Հայաստանի թաղաւորը: Կը քաշէ կը տանի Գրիգորը, պատանեկան տարիներուն Աղաթանգեղոսը փոսէ փոս: Որքան ծանօթ անուններ առաջնակարգ շրջանակներու, իր ժամանակին ամէնն ալ հեթանոս, հիմա ի հող մահու: Մեծազոյն մասը կը հանդէն քրիստոնեաներուն գերեզմանը, սպասելով իրենց յարութեան: Տըրքատ կը կարգայ ու կը կարգայ: Ժամանակներ եւ թուանշաններ ակնյայտի ծանօթ: Ծարք վեր, շարք վար, խաչածեւ եւ շեղ, Տըրքատ կը փնտոէ Բրիսանոյշի փոսը: Գրիգոր, պարտասած, յոգնալատակ, կը հանդէն գերեզմանաքարի մը վրայ եւ կռնակով կը կրթնի, արձանադրութիւնը ծածկելով: Քիչ մը հեռուն, գերեզմանին մէկ ծայրէն կը ճարձատին թիւր եւ բահեր, քարերուն դարնուելով: Փոս փորողը: Ան նոր փոս մը կը սանդէ: Գուրս կը հանէ հոն ուր ամէն ինչ կը հանդէ: Գիշերը շատ ցուրտ, ցերեկն ալ շատ տաք: Տըրքատ կ'երթայ հոն, եւ ընդհուպ շնորհքով դրամ կուտայ մարդուկին, որ Տըրքատին տեսնել ուղած փոսերը ցուցնէ: Հոս ահա եղիսիսպոս Աթենակոորաս եւ իր կինը, ժանտախտէն մեռած, հովիւ ոչխարներու, երկուքն ալ ժանտախտէն բռնուած հիւանդներուն եւ օրհասականներուն անարքին վերեւ, անոնց տարած խնամքին հետեսներով իրենք ալ վարակուած, մեռած: Ահա հոս մայրիկ Պաւլա, ժանտախտէն մեռած: Ամուսինն ալ՝ շատ չանցած: Ծատեր ալ վերը եւ նոյնպէս վարը հեթանոսներու գերեզմաններուն մէջ: Հոս, աղնուական բժիշկը Վալերիոս: Ծերուկ գերեզմանափորը հետզհետէ պերճախօս կը դառնայ եւ չի կրնար դադրիլ պատմելէ այդ պատուական մարդուն սէրն ու օգնութիւնը, եւ մեղք որ ինք այնքան դժբախտ եղաւ, որովհետեւ շատ տարիներ առաջ Հայ գեղանի իշխանուհին չկրցաւ իրեն կին առնել: Միտոյ կոտորեցաւ: Գիշեր ցերեկ կ'աշխատէր, որովհետեւ մեռնիլ կ'ուզէր: Ժանտախտի ժամանակ օրերով, շարաթներով հաշուատ չհանեց, կերածն ալ ոչինչ գրեթէ: Իր դարձանամ վերջին հիւանդն էր խեղճուկ, տարիքոտ հեթանոս մը յարգէ ողորմելի անկողինի մը վրայ, սենեակի մը մէջ վերը Ակրոպոլիսի մօտ: Երբ հոգեվարք էր, բժիշկը երկար ատեն անոր վրայ ծուլով ծծեց հիւանդին շունչը: Կը կարծէր թէ ոչ ոք տեսած էր գինքը, բայց դրոցները զտոտադոցի սպրդած ու տեսած էին: Երկու օրէն մեռաւ Վալերիոս: Հոս թաղուած է: Իրաւ, քրիստոնեայ չէր, բայց մեր ամէնքէն լաւ էր: «Աթէնքի մէջ տակաւին Հայ իշխանուհին մասին բան մը գիտցող կա՞յ», հարցուց Տըրքատ: Փոս փորողը պատ-

մեց. Անշուշտ: Ես ալ լաւ կը յիշեմ այն աղնուական զեղանի կոյսը: Արդէն այն ատենները սրտանց քրիստոնէութի կը, մենք ասիկա ամէնքս զիտէինք, բացի իր եղբորմէն, Հայաստանի հիմակուան թաղաւորէն»: Ան ալ կը յիշէ՞ս արդեօք»: — «Շատ ազկկ կը յիշեմ: Եւ Աթէնքի մէջ շատերն ալ: Տակաւին ծերերը շէն մտոցած այն մատաղատի քրիստոնէութի Բրիսանոյշը, քրիստոնէական անունով ԳլարաՊայծառ: Պարտաւորուեցաւ իր մատղաշ կեանքը զոհել խնթով իշխանին պատճառաւ»: — «Աստուած ներած է արդեօք այդ իշխանին»: — «Ներած է: Իշխանը քրիստոնէայ եղաւ, առաջին քրիստոնէայ թաղաւորը Հայաստանի: Ապաշխարութիւնը սրաւ եւ մեծ չարանքներ կրելով վերջապէս Աստուծոյ խաղաղութեան եկաւ»: — «Ցոյց տուր ինձի Բրիսանոյշի փոսն ալ, ծերուկ քրիստոնէայ»: Փոս փորոզը զէպ ուզիլ զնաց այն փոսին, սրուն վրայ կը հանուէր Գրիգոր: Կոնակովը կը ծածկէր Լիկինիոսի զերուհի Բրիսանոյշին, քրիստոնէական անունով Գլարայի անունին ոսկեղօծ տառերը եւ սնոր կեանքին տեղութեան թիւերը: Գրիգոր արթնցաւ եւ վեր ելաւ կեցաւ: Տրդատ ծունկի եկաւ եւ կ'աղօթէր: Ծերուկ զերեզմանափորը ափրբերան կանդնած կը զիտէր երկու օտարականները երկար ատեն անոնց ետեւէն, երբ անձայն հրաժեշտ առնելէ եւ ձեռքը սեղմելէ վերջ կ'աճապարէին թողուլ զերեզմանը: Ուրիշ օր մը, ամպամած, փոթորկայոյզ, անտանելի հեղձամղձուկ օդով օր մը, Յուլիսի մէջ, Տրդատ եւ Գրիգոր կը մտնէին Լիկինեան զղեակին դարաստանը: Ցանկապատը փրփլած էր: Նոճիներ, եղեւիններ, արմաւենիներ զանգուածաբար կտրուած էին: Ճամբաները, նոյնիսկ լայնարձակ զլլխաւոր պողոտան այդ երբեմնի շքեղ ու շէն անձայր պարտէզին զոր դարաստան անուանեցինք, խոտերով, տատասկներով լեցուած էին, աեղ տեղ մինչեւ մարդաշատ բարձրութեամբ: Շրջան մը ըրին ամայացած, խոպանացած դարաստանին: Գերիներու յարկը թափուր, ամայի: Ո՞ւր զացին, ինչ եղան Լիկինիոս իշխանին հարիւր եւ աւելի զերիները: Լուացարանը դատարկ, հաւնոցը եւ ասպաստան թափուր, ամայի: Բոլոր շէնքերը այդ փառաւոր զղեակին փուտ, խարխուլ, փլչելու մօտ: Հոն վերը Անահիտին մատուոր, ամէն ինչ փլատակ, աւերածոյ: Փառաւոր պուրակին բոլոր ծառերը տապաբահար կտրուած անզղամ, ոճրալործ ձեռքերէ: Ոչ մէկ կարապ, ոչ մէկ ազանի այլեւս: Այլ միայն աղաւաններ, կաշաղակներ, բուեր, ջղջիկներ: Վայրի նապաստակներու փոհմակ մը, սրունք ժամանակ առ ժամանակ, այցելուներուն ոտքի ձայներէն սարսափահար, զուրս կը ցատկէին իրենց թաքստոցներէն եւ բարեկամներու ոտքերուն առջեւ կ'ոտոտտէին: Գաւիթին շատրուանը ցամքած, ազազուն, ազրիւրները փախած, աւաղանը զօսացած քարքարուտ: Գրիգոր եւ Տրդատ,

յոյժ զղացուած, զղեակ մտան եւ սենեակէ սենեակ շրջան ըրին, մինչ զուրսը տեղատարափ անձրեւ մը կը զոռար եւ փոթորիկը կը մաղուէր չաղաքին վերեւ: Որոտումը խուլ կ'ոռնար այս մահաշուկ տուներէն՝ փոթորիկէն մտրակուած: Սենեակներուն եւ նրբանցքներուն մէջէն շարք շարք ջղջիկներ կը թրթոռային, շէլով օդը կը պատռէին: Մատենադարանի սենեակը ամայի, զիրքեր, արձաններ, պատի դարդեր, պատկերներ — ամէն ինչ վրցուած տարուած, յափշտակուած, պատառտուած: Փայտի կտորուանքներու, կիրի, քարի եւ ամէն տեսակ հնարաւոր ազտեղութիւններու անապատ մը երբեմնի փառաւոր սրահին մէջ, ուր հիմա ցերեկ ատեն զրեթէ զիշեր էր մերթ ընդ մերթ շանթերէ աղօտուած: Ուռուցիկ այտերով Տրիստոնը այլեւս ջուր չի փսխեր մատենադարանի սենեակին մէջ: Տրդատ, ներքին շարժումէ մը, զղացմունքէ զբաւուած, տախտապարուած արձանի մը կըրնակին վրայ նստաւ, երեսը երկու ձեռքերուն մէջ առնելով: Քանիցս իր ամբողջ մարմինը կը քրքրէր զետինը: Նայուածքը ինկաւ զլանի մը: Վեր առաւ զայն, կարգաց մեղմ, յետոյ բարձր. —

Մինչեւ ե՞րբ հոգիս պիտի վշտացնէք,  
 Ու զիս խօսքերով պիտի ճնշէք:  
 Արդէն տասը անգամ է որ զիս կը մեղադրէք.  
 Ձէք ամչնար սր զիս կ'ապշեցնէք:  
 Եւ եք է արդարեւ ես սխալք եմ,  
 Իմ սխալմունքս իմ բովս կը մնայ:  
 Երէ անպատեհաւ ամբարտաւանութեամբ խօսիլ կ'ուզէք  
 ինձի դէմ.

Ու ամօքս երեսս գարնել,  
 Գիտցէք ուրեմն որ զիս Աստուած կործանեց,  
 Ու իր ցանցը իմ վրաս դարձուց:  
 Ահա ինձի եղած անիրաւութեանը համար կ'աղաղակեմ, ու պատասխան տուող չկայ.  
 Կը բողբեմ, բայց դատաստան չկայ:  
 Անիկա իմ նամբաս գոցեց, այնպէս որ չեմ կրնար անցնիլ.  
 Իմ շախմատներու վրայ խաւար դրաւ:  
 Ձիս իմ փառքս մերկացուց,  
 Ու գլխէս քազը վերցուց:  
 Ձիս ամէն կողմէ արեց, ու ես գացի,  
 Ու իմ յոյս ծառի մը պէս արմատէն խլեց:  
 Անոր բարկութիւնը իմ վրաս բոքրեցցաւ,

Ու զիս իր քշնամիներուն կարգը դրաւ :  
Անոր գունդերը մէկտեղ եկան,  
Ու նամբանիս ինծի դէմ պատրաստեցին,  
Ու վրանիս բոլորտիքը բանակեցան :  
Անիկա իմ եղբայրներս ինձմէ հեռացուց,  
Ու արդարեւ ծանօթներս օտարացան ինձմէ :  
Ազգականներս զիս քողուցին,  
Ու իմ նանչուորներս զիս քողուցին,  
Իմ տունս բնակողները ու ազախիներս զիս անծանօթ մէկը  
սեպեցին,

Ու անոնց աչքին առջեւ օտարական եղայ :  
Ծառաս կանչեցի, ու անիկա պատասխան չտուաւ,  
Թէեւ բերնովս անոր աղաչեցի :  
Իմ շունչս ատելի եղաւ կնոջս,  
Ու իմ աղաչանքներս՝ իմ մօրս որովայնին որդիներուն :  
Փոքր տղաքն ալ զիս կ'անարգեն,  
Ու երբ կ'ելլեմ, ինծի դէմ կը խօսին :  
Բոլոր մտերիմ բարեկամներս ինձմէ զգուեցան,  
Ու իմ սիրականներս ինծի դէմ դարձան :  
Ոսկորներս մորթիս ու մարմնիս փական :  
Միայն ակռաներուս կաշիովը ազատեցայ :  
Ով իմ բարեկամներս, դուք, ողորմեցե՛ք ինծի,  
Ողորմեցե՛ք ինծի, քանզի Աստուծոյ ձեռքը դպաւ ինծի :  
Ինչո՞ւ Աստուծոյ պէս զիս կը հալածե՛ք,  
Ու մարմնէս չե՛ք կշտանար :  
Երանի թէ հիմա խօսեքս գրուէին :  
Երանի թէ գիրքի մը մէջ քանդակուէին :  
Երկաթ գրիչով կապարի վրայ  
Ու քարի վրայ յաւիտեան փորագրուէին :  
Վասնզի գիտեմ որ իմ Փրկիչս ողջ է,  
Ու անիկա վերջին ժամանակը պիտի ելլէ երկրի վրայ :  
Ու թէեւ մորթէս ետքը այս ալ փնանայ  
Բայց իմ մարմինովս զԱստուած պիտի տեսնեմ,  
Ջոր ես ինծի համար պիտի տեսնեմ,  
Ու իմ աչքերս պիտի դիտեն գանիկա, եւ ոչ թէ ուրիշը :  
Երկամունքներս իմ ներսիդիս կը հալին :  
Պէտք է ըսէիք, ինչո՞ւ կը հալածենք գանիկա :  
Որովհետեւ բանին արմատը իմ վրաս գտնուեցաւ :  
Սուրէն վախցե՛ք, վասն զի բարկութեան պատիժը սուրն է,  
Որպէսզի զիտնաք թէ դատաստան կայ :

ԳԻՐՔ ՅՈՒՍԵՒՆ ԳԼՈՒԽ ԺԹ. 2—29

Տրդատ լսեց զլուսը խորապէս ծոած : Գրիգոր եկաւ եւ բարեկամին թաց աչքերուն առջև բռնեց զեղնած եւ շատ կարդացուած թերթերը : Սուրբ տձեւ տատերով իշխանը պրած էր իր զիտողութիւնները յուսանցքին վրայ : «Ինծի չի յարմարիր : Ես աշխարհի ամենաբաւ կիներ ունեցայ, Լիկինիա, Լիկինիա : Հանդէկ խաղաղութեան մէջ» : «Ի՞մ վերջին յոյս» : Սա խօսքը. — «Կիտեմ թէ իմ Փրկիչս կ'ապրէ» : Ստորապրուած էր զողողջ գիծերով : Եւ զլուսին ներքեւ կար. «Ի՞մ ճակատագիրս : Լիկինիոս, Հայր» :

Բարեկամները լքուած տունին ամէն կողմը շրջեցան : Իրիկունը մեկնեցան քաղաքէն : Առաւօտուն Պիրէոնէն նաւ նստան զէպի Հայաստան :

## Ն Պ Ա Տ Ա Կ Ի Ն

Վաղարշապատի պալատին առանին փոքրիկ սենեակին մէջ դէմ առ դէմ նստած էին ծերացած եւ ճերմակ մօրուք եղած երկու բարեկամները Տրդատ եւ Գրիգոր, եւ կր խօսէին հին ժամանակներուն վրայ: Դուրսը սառուցիկ քամին ձիւնի հաստ բաղիւներ ծուկններու պէս աշերքին մէջ կր մղէր: Ակութին կրակը հաղիւ կրնար ըստ բաւականին տաքցնել սենեակը: Մուշտակներու օյնութիւնը հարկ եղած էր մարմինները տաք պահելու համար: Խորտոխդուխտ եւս, միշտ հաւատարիմ քոյրը, սր իր թագաւոր կորօրը պետութեան մէջ հիւանդներու եւ աղքատներու խնամածութեան նուիրած էր ինքզինքը բոլորովին, Եթաղիա Տրդատին կողակիցը եկան, եւ ահա ամէնքը մտերմիկ խօսակցութեան մը բռնուած, մինչ կրակը կր ճարճատէր ու կր շոտաչէր բաց ակութին մէջ, եւ թէյանման ըմպելի մը սանին մէջ կ'ետար բոցին վրայ: Ամէն ժամանակէ աւելի լաւ տրամադրուած էին ամէնքը: Որովհետեւ նոյն ինքն Գրիգոր պահիկ մը կը մոռնար եկեղեցիին հոգերը, հեթանոսական կուսակցութիւններուն զաղտնի տրարքներուն մասին երկիրօր, նոյնիսկ իր սոփորական ծանրախոհութիւնը, եւ կրնար պատանեկան կրակով մը ինքզինքը տալ հին յիշողութիւններու: Գրիգորի բարակ, երգիծական շրթունքներէն յաճախ նուրբ կատակներ ալ կը թռչէին, եւ ծերունին Տրդատ դարձեալ իր հին սոփորութեան պէս առանց քաշուելու կը խնդար իր երիտասարդութեան ինչ ինչ խենդ ու խելառ արարքներուն վրայ: Երկար առեն իրենց միտքովն ու յիշողութեամբ Աթէնքի մէջ կ'անցրնէին: Կէս օրէ վերջ խօսակցութիւնը քիչ մը տխուր անցաւ: Շատ ձիւն տեղացած էր: Ամէն ինչ ծածկուած էր զուրսը, լուռ ու ցուրտ, եւ կը կապու-

Նար, հետզհետեւ աւելի, եւ ի վերջոյ մանիչակի խորունկ գոյն մը կը յորդէր ամէն բանի վրայ: Եկաւ այդ միջոցին թաղաւորին համանուն որդին Տրդատ, հապիւ դեռ քսան տարիներ կը հաշուէր — ճիշտ հայրը, Աթէնքի Հայ արքայազունը Լիկինեան զղեակին մէջ, ուժով, զեղեցկութեամբ եւ արիւնակերպ կոթեամբ, բայց զուսպ եւ կարգապահ բռնուած, հօրը եւ սուրբ կնքահայրին կողմէ: Որսորդութիւն մը սարքուած էր: Նախարար Օտա, Արտաւազդ, Կորդուք, Մաուկ որսի պիտի երթան: «Ես ալ հետդ կ'երթամ, հայր: Իշխանները կը խնդրեն որ անդամ մըն ալ դուն իրենց հետ երթաս: Եկուր հայր»: Ընդհանուր եւ ժխտական ծիծաղ մը հնչեց: — «Ե՞ս — տակաւին որսա՞լ, զուսկ, ինչեր ալ կ'անցնի միտքէդ»: — «Ինչո՞ւ չէ, հայր: Այո, ճիշտ է որ այլեւս պէտք չունիս դոմէշներու կոտորներ փրցնել, ոչ ալ եփրատին մէկ կողմէն միւսը յողալ — Հետ եկուր — ազել լարելու համար քու ոյժդ դեռ մերինէն աւելի է»: Տրդատին խորհող նայումքէն, ծիծաղող բերանէն արզէն յայտնի եղաւ, թէ ինչպէս հին ցանկութիւնը կ'արթնար ծերունի թաղաւորին մէջ: Իր զուսկը այս պարագան հապիւ դիտած էր, արդէն դուրս վաղեց եւ գաւթի ռ սրահին մէջ կ'արձազանդէր սա կանչը. «Թաղաւորը կուզայ»:

Կիները կը հակառակէին, վախնալով որ հայր Տրդատի առողջութիւնը կրնայ մնաստիլ: Գրիգոր երթալով անհանդիստ կ'ըլլար եւ բերանը չէր քացուեր: Իրիկուն ճաշին տրամադրութիւնները ճշնշուած էին: Նախարարները, զահաժառանգը եւ հիւրերը միայն խանդավառ էին յառաջիկայ որսորդութեան համար: Գրիգոր չհակառակեցաւ: Արդեօք մե՞ղք կը համարէր իր այս որոշումը, հարցուց Տրդատ կամացուկ մը: «Ո՛չ, այդ մասին առանձին կը խօսինք ետքը, բարեկամ: Ես նեղուած եմ, մտահոգ եմ»: — Երբ մինակ մնացին, Գրիգոր ազատ ընթացք տուաւ իր սիրտին: Բաւական երկար ատեն է վեր դարձեալ տխուր նախազացումներ կը վրդովէին զինքը: Վերջին ատենները շատ ու շատ կը զրազեցնէր իր միտքը այն հաւատքը թէ ինչ ինչ ժամանակաշրջաններու մէջ յոյսը հին օրերը կարգաւ նորէն կը դառնան կուդան, ինչպէս հեթանոսները կը հաւատային: Այո, կարեւորութիւն տալ չ'ուզեր ասանկ քաներու: Աստուծոյ թաղաւորութիւնը պէտք է աճի եւ իր վախճանին հասնի եւ դայ փառքով իր ժամանակին, բայց իրեն այնպէս կուզար, որ հին, անցեալ բան մը նորէն ետ կը դառնար: Չի գիտեր ի՞նչ: Այո, որսալը մեղք չէ: Կենդանիներ եւս պէտք է փոխանորդարար տառապին, մինչեւ որ իրենց համար փրկութեան — մարդոջ համար մորթուելու — ժամը գարնէ: Բայց ո՞վ կը հաւատայ, թէ անոնք ալ պէտք է ազատ ձգուին Աստուծոյ զաւակներուն փառաւոր աղատութեան համար — բնաւ որսի երթալու չէ այն մարդը որ ուրախ է թէ կուզայ ժամանակ, երբ

կատարելութեան մեծ խաղաղութեան մէջ ոչ մարդ եւ ոչ անասուն պէտք չէ այլեւս իրարու համար տառապին, որովհետեւ ամէն ինչ փրկուած է, ոչ մարմին սպրիլ կայ ոչ ալ միտք կամ մարմինի միծակ: Հողին միտքն կամ մարմինն զէմ է. «Ուրախ եմ որ միտք կամ մարմինի վարժութիւնը կորսնցուցի — բայց այս պատճառաւ, ներք բարեկամ, եթէ անդամ մըն ալ պէտք է երթաս: — Ըսէ, խօսէ Տրդատ», — հարցուց Գրիգոր երկար դադարէ մը վերջ — վերջին ատեններս Աղեքսանդրի վրայ բնաւ բան մը աչքդ զարկած չէ՞»: — «Բնաւ, ոչինչ, բարեկամ: Ընդհակառակն, աւելի փայփայանք եւ ծառայելու պատրաստակամութիւն քան երբեք: Կր հաւատամ որ հակառակ իր ատենին Եղիպտոսի մէջ իմ մոլորութեան ան դարձեալ ամբողջական քրիստոնէայ մը եղած է: Զերմեոսանդութեամբ կ'աղօթէ եւ կր կարգայ իմ առջեւ Ս. Գիւրգ՝ պառկելէս առաջ — ես ոչ մէկ պատճառունիմ վախնալու: Թաղաւորութեան մէջ անդորրութիւն կա՞յ»: — «Թաղաւորութեան մէջ անդորրութիւն կայ» — հաստատեց Գրիգոր նշանակալից լրջութեամբ: «Ինձի այնպէս կուզայ որ ասիկա փոթորիկէն առաջ հանդարտութիւնն է: Անդորրութիւն կայ թաղաւորութեան մէջ: Անդորրութիւն — ինչպէս —» — «Ի՞նչպէս, բա՛կ ուրեմն, բարեկամ: Կր դուշակե՞ս, կր տեսնե՞ս արդեօք որ բան մը պիտի ըլլայ — պէ՞տք է որ հրամարիմ որսի երթալէ: Խօսէ: Ի՞նչպէս: — Ի՞նչ է, կամ ե՞րբ»: — «Ինչպէս քու հօրդ մահէն եւ իմ հօրս յանցանքէն առաջ — բայց ըրէ կամքին եւ հաւատքիդ համաձայն: Աստուծոյ կամքը կ'ըլլայ»:



Ի՞նչպէս: Տրդատ, թաղաւոր եւ քրիստոնէայ, պէ՞տք է որ նորէն կարեւորութիւն տայ նշաններու: Պէտք է անհիմն զգացումներու համեմատ շարժի: Աղեքսանդր դարձեալ հաւատարիմ մնացած է: Ուրեմն Վաղարշապատի ճակատամարտէն ի վեր կասկածելի նոր բան մը ապացուցուած չէ անոր մասին: Իր անձը, իր դործը այնքան բաց, այնքան վատահելի որ շարութիւն մը միտքէն չ'անցնիր: — Մանաւանդ որ ինք հոս պիտի մնայ —: Եղջերափողները, առաւօտուն կանուխ փչելով, թաղաւորը արթնցուցին իր ինքնախօսութիւններէն:

Օրը կ'անցնի: Զմեռնային պայծառ օր մը, բայց կտրող ցուրտ մը: Սաստիկ սառ կապած ձիւներ կը ճարճատի եւ կը շտապէ ձիերուն սմբակներուն տակ. ազամանդներու անսահման դաշտ մը սա սառի կտորուանքներուն տարածութիւնը: Անտառը կը սկսի: Եղեւիններն ու մայրիները սառով ձիւնով լիուլի քողարկուած: Ամէնէն դուրսի ճիւղերը կը կախուին վար մեռելի հսկայ ճերմակ ձեռքերու պէս: Ա-

Հայրին ոտներ բարձրերը զիրար կը չօշափեն եւ անտառին մուտքին առջեւ կը կադմեն բարձր սրտ մը: Վաղնջական ծառերը կը կանդնին տօնական երեւոյթով: «Ի՞նչ հետեւանք պիտի ունենայ դարձեալ այս բուժ բիրտ սարսուռ: Նախադրացումը, սա ապուշ, թանձրամիտ զգացումները: Բայց յառաջ»: Թաղաւորը կը խթանէ իր ձին եւ կը կանխէ զամէնքը անտառին մէջ, որ ողորդուած է առաւօտեան արեւով: Օտա նախարար եւ թաղաւորին զաւակը ճիշտ անոր ետեւէն կուզան: Որսը կը սկսի: Ընկերները կը ցրուին: Շուները կ'արձակուին: Անոնց կազկանձիւնը, եղջերափողերը, շեփարները, երիտասարդներու կանչը, խաչտանքը զրօսանք եւ յանդիմութիւն կ'արթնցնեն: Մեր թաղաւորը անդամ կը ցնծայ, բերկրալից ձայներ կ'արձակէ, եւ պատանեկան խանդավառութեամբ կը հալածէ երէն: Քանի մը ժամ վերջ առաջին անգամ բլլալով պատառ մը բան կ'առնեն: Ընդհանուր զուարթութիւն կը տիրէ, եւ թաղաւորը ինք առաջին կարգի լաւ տրամադրութեան մէջ է: Որսը այնուհետեւ կը տարածուի անտառին մէկ ուրիշ մասին ուղղութեամբ: Թաղաւորը տենդապին եռանդով մը տողորուած է: Իրեն կ'ընկերանան Օտա, Մոկ իշխանները եւ քանի մը լ'անկլաւիկներ նետի խուրձերով: Կէս օր էր: Այդ ժամուն ինկած էր Խոսրով թաղաւոր: Ո՞ւր արդեօք: Ազկի նայէ շուրջը, Տրդաթ թաղաւոր, որդիդ Խոսրովու: «Խոսր բաները կը թուին կրկնուիլ: Միեւնոյն յախտեական ժամանակաշրջաններու մէջ կը վերադառնան միեւնոյն զէպքերը, մարդոց մտածումները, գործերը: Նոյնիսկ մարդիկ կը վերադառնան, բարի եւ չար, եւ բարի ու չար կը գործեն դարձեալ ինչպէս առեւօք իրենց կենդանութեան միջոցին, տարիներ, տասնամեակներ, գարեր առաջ»: — Ինչո՞ւ համար ճիշտ այս միջոցիս թաղաւորին միտքը կ'իշխայ, ճիշտ հիմա իրօք, բարեկամին Գրիգորի հետ իր երկի իրիկունան խօսակցութիւնը: Եւ ահա թաղաւորը յանկարծ աչքը կը պտրտցնէ երկրամասին վրայ: Պաղ սարսուռ մը կը վազէ իր ներսիցին: — Մասունն վայրը, տեղը, ուր հայրը ինկաւ եւ մայրը ամուսինին յաջորդեց մասունն մէջ: — Այս, արդ, խորհեցաւ թաղաւորը, մէկ կողմ նետենք երկիւզն ու անապաշտութիւնը, մենք ջրիտանեայ ենք: Պետութիւն եւ մարդիկ հանդարտ են, ներկայիս: Ո՞չ մէկ նշան թշնամութեան եւ դաւադրութեան: — Ճիշտ նոյն բոպէին մազոտ աղուէս մը ցատկեց ծառին բուններուն մէջտեղուանքէն: Թաղաւորը ցատկեց ետեւէն, առաջ անցաւ, նշան առաւ, նետը չեց խոյսցաւ երկելով եւ ծակեց կենդանիին վիզը: Բայց մինչեւ հետուն լսելի եղող ցաւի ճիչով մը թաղաւորն այ ինկաւ եւ օգնութիւն պոռաց: Մանկլաւիկները վաղեցին այն կողմը, եղջերափողները իրարու կը պատասխանէին սառի պէս ցրտացած եւ մուրը կոխելու վրայ եղող անտառին մէջ: Դժբախտութիւն մը: Անմի-

Ջախան ընդհատուած սրտը թաղաւորին: Օգնութիւն զէպի հան ուր նշանը կը կանչէ. երեք հարուածներ զազարէ մը վերջ իրարու ետեւէ կրկնուած, սարսուռ ազդող շեշտով մը: Երբ ամէնքը իրարու մօտ էին, կը աւանդին արդէն թաղաւորը զունաթափ եղած, բայց բոլորովին հանդարտ եւ միտքը պայծառ, նստած իր նժույլին վրայ: Պատանի մանկլաւիկ մը թաղաւորին առջեւ ծնրազրեց ձիւնին մէջ, յուսահատորէն զէպի թաղաւորը բարձրացնելով բաց ձեռքերը կ'սոնար, կ'աղաղակէր, զթութիւն կը հայցէր, եւ կը ձայնէր շարունակ. «Շքնորհք, շնորհք, թաղաւորս»: Թաղաւորը զոչեց ձիւն վար. «Կը հրամայեմ, քեզի, ոտքի ելիք, խեղճ տղայ, կը ներեմ քեզի, վէրքը մտանդաւոր է: Եկուր, առաջնորդէ ձիւնս եւ մօտս կեցիք»: Տակաւին շատ մը սիրալիւր միթարական խօսքեր բաւ թաղաւորը իր միշտ արտասուող մանկլաւիկին զէպի Վաղարշապատի պալատը զիշերանց վերադարձի միջոցին: Լաւ կապուած վէրքը շատ ցաւ կը պատճառէր թաղաւորին: Չափազանց արիւն կորսնցնելով ուժասպառ եղած էր: Մտահոյ շրջապատեցին իրենները արքայական անկողինը: «Բան մը չէ: Անհոյ եղէք», կը կրկնէր միշտ թաղաւորը: Ամէնէն աւելի հոգ կ'ընէր Աղեքսանդր, եւ սիրով կը դառնար թաղաւորին բոլորաթիւր: Եւ թաղաւորն այ վաստահութեամբ յանձնած էր ինքզինքը անոր խնամքին: Մաքրողական, բուժիչ իւր մը կ'ուզէր թափել վէրքին մէջ, կապելէն առաջ: Եւ թաղաւորն այ ձեցեց: Իրիկունը ու՛ առեն եկաւ Գրիգոր, ամէն առեւտուան պէս հանդարտ, բայց շատ զրացուած եւ մտահոյ: «Քու նախադրացումներդ մասամբ կատարուեցան, Գրիգոր», բաւ Տրդատ իր բարեկամին, որ անկողինին կզերքը նստած, իր թարչամած ու կոնծած ձեռքերուն մէջ կը բռնէր թաղաւորին աջ ձեռքը անտօրը փայտալանջով մը: Մաղերը արծաթ շողով կ'իշխային վէտ ի վէտ երկար փունջերով ուսերուն եւ ծոծրակին վրայ: Միշտ իր մօտիկը ուխտաւորի ցուպը, միշտ այրին մէջ հազած զղեստով: Տեսանողի աչքերով զխեց իր բարեկամը եւ իր աչքերը կը փայլէին մեղմօրէն եւ խորազգած. «Տրդատ, նպատակին հասար: Սովրեցար» — «Ի՞նչ, Գրիգոր»: — «Ներումը»: Թաղաւորը մեղմօրէն հաստատական նշան բրաւ: Իր նայուածքները եղան անորոշ, սին, եւ իր աչքերը խոշորցան: Թաղուհին Եւթաղիա, Խոսրովիկուխտ եւ Գրիգոր սարսափահար եղան եւ ամէնքն այ միասին պոռացին, թէ պէտք է յժիշկ կանչել: Այնպէս այ բրին: Բժիշկը մտանդաւոր բան մը չպտաւ, միայն սիրտին զործունէութեան յայտնի տկարութիւն մը: Գրիգոր կը յատէր թաղաւորին թափանցիկ նայուածքով: Տրդատ նոյնը՝ Գրիգորին: Վերջապէս բաւ հանդարտօրէն. «Գրիգոր, զիտես մահա, ես քեզի կը նայեմ, բայ՛ հանդարտօրէն, ես պատրաստ եմ»: Առանց բառ մը ըսելու, ձերունին շտկուեցաւ եւ հրաման տուաւ

Աղեքսանդրը կանչել: Ներս մտաւ եւ գունաթափ եղաւ, երբ Գրիգորը տեսաւ կոնակը շտկած, մէկ ձեռքը ցուպին կրթնցուցած, կը կենար թաղաւորին անկողինին քով: Բայց Աղեքսանդր ինքզինքը շուտ մը բռնեց եւ կ'ուզէր թաղաւորին մօտենալ մտահոգութեամբ: «Բարեկամս, թաղաւորս», զոչեց տալնապալից, երկու ձեռքերը Տրդատին երկնցուցած: Բայց Գրիգոր մէկ ոտուամով նետուեցաւ թաղաւորին եւ Աղեքսանդրի միջև: «Կորիք, այլևս քայլ մը մի առնէր, թշուառական, կորիք յանուն Աստուծոյ եւ թաղաւորին»: — Ամէնքը լեզապատառ եղան եւ Տրդատ սրդին ձեռքը սուրին տարաւ: Եւ թաղիա ձեռքը Գրիգորին թեւին վրայ դրաւ պաշտպանուելու միտքով: Գրիգոր շոյեց զայն աջովը եւ բոլոր կարողութեամբը ձայնեց. «Կորիք, քայլ մըն ալ մի առնէր» — ձերունիին աչքերը կրակ կտրած էին: Նայուածքը սոսկալի էր: Կարծես նայելով պիտի ծակէր Աղեքսանդրը մէկ կողմէն միւսը: Նախ աչքերը կախեց, յետոյ դուրս աւելի խոր: Թաղաւորը երթալով աւելի տկար եւ գունաթափ եղած էր եւ դեռ իր բնատնիքը ոչինչ կը գուշակէր սենեկապան Աղեքսանդրի գաղտնի ոճիւրէն: Գրիգոր քայլ մը առաւ դէպի ան, քաշեց Աղեքսանդրի պարեգօտէն, մէջքէն բռնեց, զօտիին եւ իրանին մէջտեղէն քաշեց հանեց փոքրիկ սրուակ մը: Ամէնքն ալ կը տեսնէին, թէ ինչպէս Աղեքսանդրը, կարծես անտեսանելի ձեռքերէ ճնշուած, կամաց կամաց ծունկի կը խոնարհէր եւ կը սահէր դէպի գետինը անձայն անշշուկ: Դարձեալ միշտ անցուղարձէն ոչինչ կ'ըմբռնէին պատկանեալներն ու իշխանները, որոնք հետզհետէ կը լեցնէին օրհասականին սենեակը: «Պոստովանէ թաղաւորին, անոր մահատիպ ձեռքերուն մէջ, քու ըրածդ», պոռաց Գրիգոր: Իշխանները դաշոյնին քաշեցին եւ կարծես դատաստանի կարգի վրայ շրջանակ մը կաղմեցին ինկողին բոլորտիքը, որ ծունկի վրայ կը սահէր դէպի թաղաւորին անկողինը եւ առանց վեր նայելու շօյափեց Տրդատին ձեռքը: «Ի՞նչ — բրիք — դուն»: — «Ես թոյն թափեցի վէրքիդ մէջ»: Ընդհանուր ժխոր ազաղակի: Իշխանները խուժեցին Աղեքսանդրի վրայ: Քանի քանի զաշոյնի սայրեր մերկացան անոր մարմինին դէմ: Թաղաւորը ձայնեց յետին ուժով: «Կեցէք: — Ո՛չ բնաւ արիւն թափել: — Ես — կը մեռնիմ: — Յարգեցէք ... իմ ... վերջին ... հրամանը, — բարեկամս: — Ինչո՞ւ համար — ըրիք — ասիկա»: — «Կաշառուեցայ»: — «Որո՞նք կողմէ, բսէ, խոստովանէ»: — «Պարսից թաղաւոր Շապուհ Բ. ի կողմէ»: Ու ահա ամէնքը կը տեսնէին, թէ ինչպէս մահուան դողէն բռնուած, Տրդատ կը ցնցուէր ամբողջ մարմինովը: Նորէն բժիշկ կանչուեցաւ, որ յետ քննութեան յայտարարեց յուղումով, «Մեր թաղաւորը կը մեռնի»: Եւ ահա Տրդատ խոշոր ձեռքը, որուն վրայ կը փայլէր ծանր մատանին, դրաւ իր մարդասպանին գլխուն

վրայ եւ բարձր աղաղակեց. «Բարեկամս, կը ներեմ քեզի — եւ Աստուած ալ իցիւ ներէ քեզի: — Գնա խաղաղութեամբ — քու ճամբալ: — Իմ քոյս է — յանցանքը: — Քեզ — ատենօք հեղնութեամբ — մոլորեցուցի, զատեցի Քրիստոսէն, որուն դուն — կ'ուզէիր ծառայել գաղտնի: — Քեզի համար — պիտի — աղօթեմ — Տիրջը մօտ»: Աղեքսանդր կատաղի իշխաններուն մերկացուած սուրերուն մէջէն սարդեցաւ սրահէն դուրս: Իներել տուաւ վերարկուն եւ թրմբած ու բնդարմացած, ինքզինքը դուրս նետեց խաւարամած, սառնասառոյց զիշերուն մէջ: Իշխանները իրենց թուրերուն կամ դաշոյններուն կրթնած, կը շրջապատէին օրհասականին անկողինը: Եւ թաղիա եւ Պոստովիղուխտ կը ծնրազրէին լուռ լալալին երկու կողմը, մահամերձին ձեռքերը բռնած: Գրիգոր եւ Տրդատ սրդի կեցած էին թաղաւորին սնարքին վերեւ: Գրիգոր յարձր ձայնով կ'աղօթէր: Յետոյ լուց ամէն ինչ: Թաղաւորը անզամ մըն ալ վեր բարձրացուց իր խոշոր աչքերը, ամէնուն նայեցաւ դողցես հրաժեշտ առնելու, եւ ինք գոցեց զանոնք, կարծես քնանալու համար:



337-ի մէկ ամառնային օրը կ'երեկոյանար: Արաքսէն կը վերանային զով սղօխներ, զոլորէիններ եւ կը հովահրէին աղառածները, որոնք դարատափներու նման կը բարձրանային գետին վերեւ: Հարբերաւոր աղաներներ եւ խոլմուկներ, անթիւ անհամար խորշերէ եւ անկիւններէ դուրս խուժելով կը խոյանային եւ լայնալիճ աղեղներ ծրելով կը դառնային գետնի վերեւ: Մտնամուտի արեւուն մէջ կը պսպղային աղաներներուն փետուրները զուտ ոսկիի հանդուսակ: Արարատ կը փայլակէր ճաճանչաւուխտ երանդներով, որոնք ի վերջոյ բոցանուտ ծիրանիի կը փոխակերպուէին: Շատ բարձր վերօք, կ'ընկողմանէր Սուրբը, ժայռի մը փապարին մէջ, յարդալից անկողնարկրած, իր վերարկուով պարածածուկ: Հովիւ մը կար քովը: Կժիկ մը դինի, քիչ մը հաց եւ պանիր հուսկ յետին կենսանիւթն էին: Այսքան վերամբարձ, այսքան հեռու, տարակայ պարտաւորուեցաւ խոյտալ Սուրբը իր ժողովուրդէն եւ իր այցելուներէն, որպէսպի կարենար առանձին, ատոցովի մեռնիլ, իր կնոջ Մարիամի եւ իր բոլոր տարեկիցներուն մեռնելէն վերջ: Արարատի վերելքը սպասած էր անոր վերջին ոչօր: Ոչ բացուած քրիստոնեաներ միայն վարը հովիտին մէջ գիտէին տեղը: Հովիւր մերձաւոր փայրերէն քրիստոնեայ մըն էր եւ յօժարակամ թողած էր տուն ու հօտ, օժանդակելու համար մեծ սուրբին բաժանումին: Արդէն երեք օրեր կը տեսէր, մեռնիլը: «Ինչո՞ւ Տէրը կը սպասցնէ զիս — ինչո՞ւ համար»: — «Ինք պիտի յայտնէ

քեզի ասիկա, Հայր»։ — «Առաւօժ տ է»։ — «Իրիկուն Սուրբ Հայր»։ — «Երեկոյ։ Քնացեր եմ»։ — «Շատ անոյշ քնացար, եւ կազուրուած ես»։ — «Տեսայ զայն։ Հեռի չէ»։ Արեւուն վերջին ճառագայթը կ'ոսկեկոծէր այրը։ Սուրբը խնդրեց հովիւէն որ նստեցնէ զինքը, եւ ասա կմտաք զարձամ, հովիւին ձեռքին տուած կոնակը, այլակերպւած, դարձուց աչքերը զէպի Արարատ։ «Լեւանդ դու Աստուծոյ», բաւ հեղիկ ու դաշն, խորախոյզ խորագլած, «Լեւանդ դու Աստուծոյ։ Քանիօն զեղեցիկ ես դուն։ — Վասէ, Տէրը արդեօք զորձազրեօց նոյի բրած խոստումը»։ — «Ո՞րը, սուրբ Հայր»։ — «Տորչափ զոյոթիւն ունի աշխարհ, ցարչափ կայ ու կը մնայ, Հայաստանեայց աշխարհէն պիտի չզատրի սերմ ու հունձք, ցուրտ ու տաք, ամառ ու ձմեռ, օր եւ զիշեր»։ — «Կը խորհիմ, Հայր»։ — «Գործադրուած, այո։ Ո՛վ յաւերժական հաւատարմութիւն Աստուծոյ, օ, յաւիտենական կարգ իր բոլոր զօրձերուն մէջ։ Իսկ մարդիկ ալ պահպանեցին իրենց հաւատարմութիւնը առ Աստուած։ Արդէն երկար ատենէ ի վեր պէտք էր որ Աստուծոյ թաղաւորութիւնը ծայր տար երկրի վրայ, եւ ոչ ոք այնուհետեւ անօթի պիտի մնար։ Սերմ եւ հունձք պատրաստ պիտի ըլլայ ամէնուն համար, ժողովուրդ ժողովուրդի պիտի օղնէր, ամէն տունի մէջ, ամէն սեղանի վրայ հացը պիտի դանուէր լիալիբ։ Ո՛չ մէկ ողողում ջրհեղեղ պիտի ըլլար այլեւ։ Ոչ ցաւ, ոչ հիւանդ ըլլալ, ոչ դառն մահ պիտի ըլլար այլեւ երկրի վրայ։ Ո՛չ մէկ Յիսուս պիտի պարտաւորուէր այլեւ իր կեանքը տալու մեղաւորներու համար։ Ո՛չ մէկ սուրբ այլեւ պիտի չմեռնէր եզրայրներուն համար։ Բայց մարդոց խորհուրդներն ու արարքները շար մնացին ի մանկութենէ անտի։ Պիտի չզայ երկինքի արքայութիւնը, մինչեւ որ մարդոց միտքը եւ կամքը չզառնայ առ Աստուած եւ բոլոր մարդոց հոգիները օր մը չերթան շաղատանին Աստուծոյ կամքին մէջ, իբրեւ իրենց տունը։ Ոչ ոք կրնայ մարդոց սիրտերը ուղղել եւ բռնագատել, Աստուծոյ տիրապետութեան բաղձալու համար։ Ասոր համար է որ պարտաւոր ենք տառապիլ, շատ եւ զարհուրելի ցաւերու ենթարկուիլ, Վասէ։ Չարչարուելի եւ չարչարուելու ատեն զԱստուած փառարանել եւ պահել պահպանել հաւատք ու սէր։ Մարդիկ արդարներուն շարչարանքին եւ մահուան միայն կը հաւատան։ Գառնուկր ատիւն է։ Սաչը զօրաւոր է։ Ամպերուն մէջ ծիրանի գօտիին չեն հաւատար մարդիկ։ Ասիկա կ'ըմբռնեն կ'հասկնան անոնք իրենց խորհելովը։ Տիրոջ խաչը չեն բմբռներ, մինչ ծիրանի գօտիին զապտնիքը կը համարին լուծելի զխոտութեամբ, ուրեմն խորհելով։ Աստուծոյ անբացատրելի սէրը Որդիին վրայ, ամէնքը պիտի երկրպագեն անոր։ Քանիօն մեծ է Աստուծոյ սէրը։ Եւ ասա կը հանդատանայ սիրտը։ Եւ ասա կը ճշմարտուի յաւիտենական կեանքին եւ Աստուծոյ

փառքին իմ ըմբռնումս։ Ես կը հաւատայի թէ պիտի չտեսնեմ մահ, Վասէ։ Կը խորհէի թէ Տէրը պիտի զայ երկինքէն, պիտի զլեւտաւորուիմ նոր ի նորոյ, պիտի չմերկայուիմ եւ անկրական միջոցին մէջն պիտի փութամ Տիրոջն առջեւ։ Ես անմիտս։ Իմ ամբարտաւան սիրտս ի՞նչ բանի բաղձացեր է։ Բայց բարի է զարձեալ այսպէս։ Ի՞նչ է մահը։ Տուն երթալ։ — Վերանալ։ — Դիտել անքթիթ, տեսնել, տեսանողի աչքով տեսնել, հայեցողութեամբ ներքին, տեսնել, Վասէ, հրաշագան հայեցողութեամբ։ — Խրճիթը թողուլ։ Այրը, փաղարը փոխանակել երկինքի հետ։ Արթննալ եւ կշատպիւղ հայել Աստուծոյ երեսին . . . Վասէ, քարոյէ քաւ բոլոր եզրայրներուդ, մահ չկայ։ Կեանք է ամէն ինչ։ Աստուծոյ անդրաւ կեանքն ու սէրը»։

Մերունին քնայաւ խոտի, յաճախ բարձրականչ կը հատաչէր, եւ անդամ մը ասնային ճիշ մը արձակեց, հովիւը ցատկեց, լոյս գարկաւ եւ մոմին պատրոյրը բռնկուց պատին վրայ։ Սուրբը նստած էր ուղիւ։ Թարչամած աչքերը տեսնողին կը շողային եւ տաշնապէն խոշորցած այրին բացուածքէն կը յառէին զէպի վեր տատկապարդ երկինքը։ Կը թուի թէ Սուրբը հոն կը տեսնէ բաներ, զոր հովիւը չէր կրնար տեսնել։ Լեզապատտ ուղեց. «Հայր Գրիգորիոս։ Ի՞նչ կ'ըլլաւ։ Ինչէ՞ն կը վախնաս»։ — «Կը տեսնեմ մէկը, մարդու սրդիի պէս մէկը, կը թռչի այնքին մէջէն ծուփ ի ծուփ հազուատով։ Երեսը անարկու բարկութենէն եւ զայրոյթէն, աչքերէն կայծակներ կը ճայթեն, բերնէն շունչ մը կը բարբոթի, աջը հետուն երկնցուցած կը կրէ զարբինի խոշոր մուրճ մը։ Վասէ, ուշադիր եղիբ — ան երկրագունդին կը դարնէ։ Գունդը կը պայթի — օ, ի՞նչ որոտում, ինչ ազազակ։ Կը լսե՞ս, Վասէ, ի՞նչպէս կը կանչեն, ի՞նչպէս կը պոռան. — Լեռներ մեր վրայ ինկէք, բլուրներ, ծածկեցէք մեզ»։ — «Ես բան մը չեմ տեսնու։ Ես բան մը չեմ լսեր, Հայր», կ'ըսէր հովիւը անձկութեամբ։ «Երազ կը տեսնես, եկուր պոսիկ, քրտինքը ջուրի պէս կը վազէ։ Կը մտիս։ Եկուր, զլուխդ վար դիր»։ Սուրբը կը զոզզար բոլոր անդամներովը։ «Վայ, վայ, — դատաստանը աշխարհի վրայ։ Պիտի զայ։ Ես պիտի վերապրիմ։ Աստուած եւ Աստուածորդին, ոգորմի ձեր ամէնուն —»։ Ուժասպաս ինկաւ ետեւին վրայ եւ զարձեալ քնացաւ։ Արեւ բարի էր արդէն, ազանիններ կը մնջէին այրին առջեւ եւ մէջը, երբ ձերուկը քունին մէջ քանիցս խնդաց բարձրաձայն։ Իր խնդալէն ալ արթնացաւ։ Չարմանահար Վասէին կը պատմէր թէ երազ տեսած էր, բոլոր ժողովուրդը, մեծ ու պղտիկ, եպիսկոպոսի մը ետեւէն ինկած է, որուն կոնակին, փարին եւ ամբողջ զլեւտին վրայ փակցուած են եպիսկոպոսին պարտքին մուրհակները, բոլոր ինչ որ պարտք ունի իր զարդերուն, պարեկոտներուն, վերարկուներուն, շապիկներուն, անդրափարտիքներուն, կոշիկներուն, եր-



չիկներուն, զինիին, պանիրին եւ յաճախած տուներուն: — Սուրբը երբ արթնցաւ, ձեռքերը երեսին բռնեց, յարդին վրայ փռուեցաւ, եւ հեծեծեց: Նորէն ինկաւ անըջական վիճակի մը մէջ, քանի մը կաթիլ կաթ առնելէ վերջ, երկար ատեն պառկեցաւ աչքերը բաց: Շատ ատեն շանցաւ, նորէն ջղային անաղին տաղնապի մը ենթարկուեցաւ: Սուրբին ղէմքը անճանաչելի դարձած էր: Պայծառ օրուան լոյսին մէջ, որ կ'ողողէր այրը, հզօր մարդկային ձայնի մը շեշտերը կը դո՛ւռային, կարելի եղածին չափ հեռուները լսելի ընելու համար. «Մխիթարեցէք, մխիթարեցէք ժողովուրդս: — Փրկեցէք, փրկեցէք իմ ժողովուրդս: Հաւաքեցէք, հաւաքեցէք իմ ժողովուրդս, անոր մայրերը, անոր դաւակները — Ահա կը տեսնեմ այդ մարդիկը սպաննուած, ջարդուած են, — օ, այս սրբան եւ ինչպէս արին կը հոսի: Կարմիր է եփրատը, ինչպէս Արարատը երեկոյին. այրերու, կիներու, տղոց դիակները կը քշուին կը տարուին ղէպի ծով: Վահէ, եկուր ազատէ ինքզինքդ: Կին, եկուր դուն ալ կոյս, Հայուհի — եկուր ուրեմն, հոս — վերը, սա ժայռերուն մուտքին առջեւ — հոս — ոհ — դարհուրանքը, ջարդը կը հալածէ զիրենք: — Թողուր ձգէ զանոնք կ'ըսեմ քեզի, Չար» (Սուրբը կրկին կը զայարէ բռուցքը, երկուքն ալ, յարդ կը նետէ ջարդարարին ետեւէն — ): Նորէն կը պոռայ. «Կեցիր, այ վայրենի»: Գրիգոր իր ջղայնոտ շարժումներէն յուշած, այդ իրական երազին տեսարաններէն սարսափած, նորէն կ'իշխայ կռակին վրայ եւ մահուան անձկութեան մէջ եղող տղու մը պէս կը պոռայ. «Ժողովուրդ իմ, ժողովուրդ, Հայաստանդ իմ Հայաստան, դաւակներս — դառնուկներս, — զլուխները անթուելի համարներով կը լողան եփրատն ու Արաքսն ի վար: Կը պառկին անոնք խորունկ ակերուն մէջ ինչպէս կարկեսանները նկուզի մէջ — պղծուած մարմիններ — եաթազաններով պատառ պատառ եղած: Աղջնակներ, — տղաքներ, ասկէց բարձրէն վար նետուած — վայ — զլիւիկները ժայռերուն վրայ փչրած, — վայ — զոտոյ անհարթ մազերու ցանուցիք փունջերով ու տնկուն քիթերով, սեւ աչքերով, մարդկութենէ ելած դարհուրելի կերպարանքով — ո՞վ էն տանք: Սատանայ, սատանաներ, իմ ժողովուրդս ի՞նչ բրաւ քեզի, ձեզի: — Եկէք, փախէք, եկէք հոս — հոս իմ վերարկուիս տակը: Եկէք»: — Կուզէ վերարկուն փուլ — խոշոր խոշոր կտորներու կը վերածէ: «Ո՛հ — վերարկուն չի բռնէր»: — Աւելի երկար զազար մը: Օրհասականր այլեւս մեռնելու աստիճանին եկած էր ուժասպառութենէն: Հովիւր յուսոյ անոր երեսն ու ձեռքերը ջուրով եւ բերանը քանի մը չիթ կաթ կաթեցուց: «Ինչպէս կ'ու տառապիս դուն, բարի սուրբ հայր», բառ հովիւր: «Պէ՞տք էր որ այս ամէնը, այս ամէնը մեր հայր», բառ հովիւր: «Պէ՞տք էր որ այս ամէնը եւ տակաւին աւելի, Վահէ»: — «Եւ

ո՞չ ոք, ո՞չ թաղաւոր, ո՞չ ժողովուրդ, ոչ բոլոր քրիստոնեաները — ո՞չ ոք կը հեռացնէ կը փախցնէ հալածիչները, ո՞չ ոք կը փրկէ մեզ, հայր»: — «Ո՛հ ոք, Վահէ: Մենք մորթուելիք ոչխար նկատուած ենք»: Հովիւր պառկեցաւ յարդին վրայ, երեսը ծածկեց Գրիգորին կուրծքին վրայ, եւ երկուքը կուլային ու կը հեծեծէին, մինչ աղանդիները կը մնջէին, կը վնայնկային, ներս ու դուրս կը թռչտէին, եւ յաւիտենական ձիւնով Արարատը ղէպի երկինք կը բրգանար իր անդորրութեամբ:

Հիմա հանգիստ էր մահամերձը եւ կը քնանար: Ժամերով մնաց պառկած, չունչը անգամ հազիւ լսելի: Հովիւր քանիցս կարծեց, թէ սուրբը դադրած է քնանալէ: Վահէն իսկ, տաքէն ու յոգնութենէն յաղթահարուած, այրին ելքին առջեւ նստած տեղը կը քնանար, կռակը տուած ժայռին պատին: Անոր քնացած միջոցին, արտակարգ ձեւով հազուած երկու հոգի, կարճ պարեպօտներով, բոկոտրն, կը մաղկին ժայռերուն ելանելիքներն ի վեր, որոնք դարբերէ ի վեր մինչեւ խելքի պտոյտ պատճառող բարձունքները կազմուած էին վայրի աղանի սրասցողներուն դամբած դամբէն եւ ոտքի հեռքերէն: Մին կը կրէր, դոտիին վրայ հաստատուած, պզտիկ արծաթեայ ունկերով կժիկ մը, քանդակագործ զարդարուած: Կը պարտաւորուէին յաճախ կենալ, ճամբան փնտռել ու քննել փորձել, եւ իրարու օգնել: Երբ վերջապէս եկան բարձունքը եւ բարձրաձայն կ'ըսէին իրարու, թէ արդեօք ո՞ւր է այրը, կեցան առանց շարժելու: Բարձր կանչ մը արթնցուց հովիւր: Լեզուպատառ ոտքի ելաւ: Օտարականները վարը խորք հաւաքուած բազմաթիւ հովիւներուն հարցուցած էին, եւ տակաւին վարէն մեղմօրէն կը հասնէր սա կոչը. «Աւելի բարձր: Աւելի զգալի աջ»: Վահէ այրին առջեւ եկաւ: Լեզուպատառ եւ քաշուեցաւ: Յետոյ դուրս դատկեց. «Աստուծոյ սիրոյն ըլլայ, ի՞նչ կ'ուզէք դուք: Հոս մինչեւ վերը չէք կրնար դալ, վար կ'իշխաք»: Քստմնելի անպոնոր բերանաբաց կը յօրանջէր երկու օտարներուն ոտքերուն տակ: Կը հետեւէին հովիւին խորհուրդին եւ քայլ կ'առնէին, վերէն անոր պոռացած ձեւով: Երբ վեր եկան, արդէն իսկ ուժասպառ եղած էին եւ չէին կրնար բառ մը բսել: Հովիւր բերաւ դինին, կաթ, հաց, սյանիր: Մերժեցին եւ ձեռքերով ու թեղանիքներով քրտինքը սրբեցին: Երբ սկսան չունչ առնել, մէկը սկսաւ. «Մեզ կը զրկէ ինքնակայ Մեծն Կոստանդիանոս: Հիւանդ պառկած է եւ պիտի մեռնի: Իր մեղքերը զինքը կը տառապեցնեն: Իր ձեռքերը — անոր բաժին նայելով — արիւնով ծածկուած են: — Կը զղջայ բրածններուն վրայ: Իր որդին Կրիսպոս, — Ֆաուսթա, իր կինը, Լիկինիոս եւ իր դաւակը — եւ ուրիշ հոգիներ պաշարած են զինքը եւ կը դո՛ցեն անոր առջեւ երկինքի ճամբան: Կը փափաքի մկրտուել: Ո՛չ մէկ

Եպիսկոպոս կ'ուզէ մկրտել զայն: Այսպիսի մեղքերու համար թողու-  
թիւն չկայ, ըսեր են եպիսկոպոսները: Ինքնակալը սակայն մկրտու-  
թիւն կ'ուզէ, կը հաւատայ Քրիստոսի եւ թողութիւն մեղաց կը  
խնդրէ տաք արցունքներով: Գրիգորիոս, Հայաստանի սուրբը, պէտք  
է իրեն համար աղօթէ, մկրտութեան ջուր զրկէ իրեն, եւ նշան մը  
տայ, թէ կրնայ հաւատալ մեղքերու թողութեան եւ շնորհք գտնել,  
ինչպէս նաեւ յաւիտենական կեանք: — Բայց ստիպողական է: Ար-  
թրնցուր սուրբը: Օրերով փնտոնցինք զինքը: Ինքնակալը ժամերը  
կը հաշուէ, վայրկեաններն ալ: Կը դիմանայ, կեանքէն չի մեկնիր,  
մինչեւ որ երթանք, բայց եթէ դանդաղինք — օ, տես, սուրբը կ'ար-  
թրնայ: — Աչքերը աւելի խոշորցած եւ վարմանքով կը յատկ  
սուրբը օտարականներուն: Կմախքային մարմինով եւ երկար փայտա-  
նրման թևերով, երկար ճերմակ մաշկերով ու մօրուքով, ուրի, սէր  
եւ խաղաղութիւն ճառագայթող դէմքով ծերունիին նայուածքէն  
այնքան տակն ու վրայ եղան, որ ոչ մին կը համարձակէր խօսիլ:  
Հովիւր կ'ուզէր անոնց համար խօսիլ, բայց սուրբը մերժեց գլուխի  
թևիւ շարժումով եւ աջը վեր առնելով: Հովիւէն խնդրեց որ նե-  
ցուկ բլրայ կոնակին: Եւ սա բառերը եկան շրթունքին դանդաղօրէն  
եւ դժուարաւ: «Փացէք շուա ասկէց որքան արագ որ ձեր ստեղծը եւ  
ձիւրուն ոտքերը կրնան կրել ձեզ: Ինքնակալը պիտի ապրի, մինչեւ  
որ երթաք: Ըսէք իրեն, դուք Տիրոջ քահանաներ: Այսպէս կ'ըսէ ձեզի  
Գրիգորիոս: Ո՛վ որ ինծի հակառակ չէ, իմ կողմս է, կ'ըսէ Տէրը:  
Ո՛վ որ զիս կը դաւանի մարդոց առջեւ, ես ալ զինքը պիտի ճանչնամ  
իմ երկնաւոր հօրս առջեւ, կ'ըսէ Տէրը: Եթէ ձեր մեղքերը արեւնի  
պէս կարմիր ալ բլրան, ձիւնի պէս ճերմակի պիտի դառնան: —  
Տուէք կուժը: Ձուր տուէք»: Սուրբը դողողալով հովիւին խմած  
կուժէն ջուր յեցուց Կոստանդիանոսի զրկած արծաթ կուժին մէջ, եւ  
դոչեց բարձր ձայնով, ձեռքերը վրան տարածելով. «Հոգի տեսուն,  
Սուրբ Հոգի, Ինքնակալին անձր արժանացուր թողութեան եւ երա-  
նութեան, երբ այս երկրաւոր ջուրը լուսայ իր ճակատը»: Յետոյ եր-  
կու քահանաներուն. «Հիմա պացէք, աճապարեցէք, Ինքնակալը այս  
ջուրին պապակր ունի»: — «Եւ նշանը, սուրբ հայր», ձայնեցին քա-  
հանաները խոնարհաբար: «Ո՛չ մէկ նշան: — Միմիայն հաւատք —  
աճապարեցէք»: — Նմանը չտեսնուած տաք մը կը շողար մինչեւ ի-  
րիկուան դէմ ցամաքին ու ջուրին վրայ: Արարատ սքօղուած էր  
սգոխի եւ դռըրչի մէջ: Օդը կը խողտար հովիւին աչքերուն առ-  
ջեւ: Սուրբը պառկած էր զրտինքներու մէջ, շապիկով միայն ծած-  
կրած, յարդին վրայ: Կը տեսնուէր միմիայն օդ, եռացող, դողացող  
օդ: Աշխարհ կարծես անյայտ եղած էր այրին առջեւ: Ո՛չ մէկ շշուկ:  
Ո՛չ մէկ կենդանի էակ: Ոչ մէկ կեանքի նշան որեւէ մէկ արարածի,

բացի սուրբէն եւ հաւատարիմ հովիւէն: Երկուքն ալ կը քնանային  
տաքէն, եւ այն ատեն միայն արթնցան, երբ այրը շարժեցաւ անընդ-  
հատ, սարսափելի որոտումէ մը: Երկար ատենէ ի վեր այս քստմնելի  
փոթորիկը պայթած էր: Քամին սաստկաշունչ թափով դէպի այրը  
ներսը կը խարաղանէր անձրեւին տարափը: Վերէն պատերէն առ-  
ուակներ կը հոսէին, կայմելով ճահիճներ, մօրուքներ, կը թափէին  
յարդէ անկողինին վրայ եւ հովիւն ու Գրիգորը կը թրջէին մինչեւ  
իրենց մօրթը: Անկարելի էր լոյս զարնել եւ պլպլուքին մէջ զիրար  
տեսնել ըսպէ մը: Յերե՞կ էր, գիշե՞ր էր: Չէին գիտեր: Վիշապա-  
հողմը, թաթառը կը մոլեգնէր ժամերով: Կայծակին ատենը այրը  
ցերեկուան պէս լոյս կ'ըլլար: Հովիւը իր լայնչի ձեռքերով կը ծած-  
կէր սուրբին կոնակը:

«Հիմա մի մեռնիր, հայր», հծծեց հովիւը: «Մի վախնար: Ո՛չ  
փոթորիկին, ո՛չ կրակին, ո՛չ երկրաշարժին մէջ պիտի դայ ան. ան  
կուգայ, նաեւ ինծի, լուի, դաշն սրսփանքի մը մէջ: Ահա կուգայ:  
Մօտ է: Աշխարհի վախճանը չէ տակաւին: Տէրը պէտք է նախ թա-  
գաւոր ըլլայ համօրէն աշխարհի վրայ: Իմ վախճանս ահա հոս է:  
Առաւօտը կը լուսնայ: Տես, ահա հոն արեւը»: — «Բայց ո՛չ, սուրբ  
հայր, դուրսը բոլորովին գիշեր է: Քու տեսածներդ կայծակ են»:  
«Ո՛չ, ո՛չ, դուս լոյս է, ջինջ, հրակերպեան լոյս: — Կառք մը կը  
թաւալի»: — «Կ'որոտայ, ամպ կը դոռայ, հայր»: — «Ձեռքդ տուր  
ինծի, վահէ: — Օգնէ ինծի որ ելլեմ — Տէրը ահա»:

Վ Ե Ր Ջ

## ՎՐԻՊԱԿ ՄԸ, ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ

Թարգմանութեան ընթացքին, կարծեմ առաջին մասերուն մէջ սխալ մը սպրդած է, գոր կը փութամ շտկել հոս, ի գիտութիւն անոնց որոնք թերեւս ապագային հետաքրքրուին այս թարգմանութեան հրատարակութեամբ: — Schale գերմաներէն բառը փոխանակ ԲԱՃԱԿ, ՊՏՈՒԿ թարգմանելու, թարգմանեցի ՇԱԼ, ցփսի, մեր ծանօթ ՇԱԼԸ. որ ֆրանսերէնի մէջ ալ կը գործածուի այսպէս. Châle Աթէնֆի Լիկիւնիոս իշխանը — ինչպէս յայտնի է վէպէն. — ի վաղարշաւատ հոսորով թագաւորին մէկ այցելութեան առթիւ. կերուխումի միջոցին հոսորով թագաւոր գաւար մը կը կտորէ եւ կէսը իրեն ինչպէս պահելով միւս կէսը ի նշան բարեկամութեան կուտայ Լիկիւնիոսին. որպէսզի այս ձեր անխախտ բարեկամութեան նշան մը ըլլայ նաեւ զիրար նանչնալու: Այս պարագան երկուքը միայն — հոսորով եւ Լիկիւնիոս — գիտէին: Ուստի մահամերձ հոսորով. երբ իր գաւակը Տըրդատ եւ աղջիկը հոսորովի դուխտ Արսիւնէին կը յանձնէ որպէսզի գանձնէ Աթէնէն մոյն իշխանին մօտ տանի, կը պատուիրէ անոր կտորած գաւաթին կէսը հետը տանիլ, իբրեւ նշան հաւատարմութեան Արսիւնէի: Եւ արդարեւ Լիկիւնիոս կը փորձէ իր ինչպէս մնացած կտորին հետ. նիշտ յար եւ նման: Ես թարգմանութեան ընթացքին միայն կրցայ նշտել այս կէտը, եւ երկար բարակ ետ չդարձայ ՇԱԼԸ փոխելու բաժակի կամ պտուկի. բան մը որ այլեւս նշտուած է, բայց հինը սխալ մնաց:

— 0 —

— Կորնելիա, պէտք է ըլլայ Կորնելիա: